ՐԱՖՖԻ

ՍԱՄՎԵԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ
ՊՐՈՖ. Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ

3023
A II/30126

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1940

Կազմը, ձեվաճաթերրը,
գլխազարդերը յեվ գլխաշուռերը
Նկ. Կ. Տիրաշուրյանի

Պատ. խմբագրնեը՝
Հ. Դոնոյան յեվ Հր. Դբիգորյան
Ձեխ. խմբագիը՝
Ստ. ԱլՁունյան
Սբբագբիչներ՝
Հ. Մանուկյան
Վ. Ավագյան
Կոմպոզ. սբբագրիչ՝
Ձն. Ձեր Մինասյան

Դյավխոխ լիտոզբ՝ Ջ.—1085 Հբատ. 3103
Պատվեը 401. Տիբաժ 8060.
Հանձնված և արտագբության 17|XII 1939թ.
Սատբագբված և ստագբության 15.II 1940 թ.

Հայպետհբատի 1 տպագբան, Ձևբևան, Լենինի 65

Раффи

САМВЕЛ

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



Dudley B

ԲԱՖՖՈՒ «ՍԱՄՎԵԼ» ՊԱՏՄԱԿԱՆԸ Վ.ՏՊՐ

I

Բաֆֆին իր վիպքին պատմական վկայը դրել է մահվանից շատ առաջ։ «Սամվելը» առանձին գրքով լույս տեսնելուց մի քանի ամիս հետո հեղինակը մեռավ։ Դա անցյալ դարի ութսունական թվականներին վիպքին նոր, այլևս այլ տարբերակ, նրան վերջ տալ ուզող Բաստամանի վրա էր։ Բեռնել նոր վեպ պարբերականային մահաշունչ անհրաժեշտ։

Մի քանի կողմերով այդ անհրաժեշտ առանձնապես սուր արտահայտություններ էր առնում ծայրերիրենցից, ցարիզմի զազրելիներն մեջ, վերջնից մեկին էր կռվում։ Հայածվում էր ամեն ինչ, որ կյանքի, ինքնագիտության, քարոզության կոչը էր կրում։ Կասկածի տակ էր առնվում ինքնատիպը, անկախը, ազգայինը։ Մենաշնորհային քարոզչությունը շեշտ հանդուրժում ազգային փոքրամասնությունների լեզվի և դրականության, բառարանի և ոճերգների ծաղրումը։ Ցենզուրան հաճախ քաղում էր պատմական անցյալի և ժողովրդի կենցաղի ուսումնասիրությունը, ազգային արժանապատվության զգացումների հրահրման ու ամրապնդման հատվածների մեջ։ Այդ իմաստով ցարական անդրը խոշտանգում էր անխտիր բոլորին՝ քե վեպհասարին, քե ուիբրենացուն, քե բնդուսուն, քե կովկասցուն...

Ցարիզմը, ճորտատիրական այդ դիկտատուրան, իր զազրելի քաղաքականությամբ նպատակ ուներ ժողովուրդների բանակ դարձը ամեն տեսակ մտավորականին ոչնչության և տգիտության մեջ պահելու համար։ Այդ նպատակին նրան ծառայում նաև ազգամիջյան հարաբերությունների զրկումը, ծայրեկրների լուծարումն հողերի հափշտակումը, ժողովրդական խավերի իրարամերկումը, խավեր, վերնաք չնչաքակում էին անլուր զրկանքների, ստորացման և վիրավորանքների։ Ռազմա-ֆեոդալական իշխանությունը, ավատական-բյուրոկրատական մխոցնությունը այդպես էր մոլ մեծ իր ներքին, այլ և արտաքին քաղաքականության մեջ։ Նա արդեն դարձել էր յեվրոպական անհրաժեշտ հենապան։

Այդ բոլորը մի կողմից առնչում էր ութսունական թվականներին ծանր, անտանելի մթնոլորտը, ապա շնչելու անհնարինություններ, բռնության ոճը էր մեծ ազգային և մասյ հասկնիկ, անդորրության մի փոքր զգացումներ, անհանգստության և վշտի չդիմացող։ Բուրժուական ինտելիգենցիան ստիպված էր համակերպման իր տեսակետի քաղաքականության։

Բայց մյուս կողմից պատմության խղճուրդը իր քանդողական աշխատանքն էր առնում, ու արդեն նա զորեղել էր և իր պայքարն սկսել տերող հարցերի դեմ։ Հասարակության զիջումները պարզվում և մերթ իրեն բացահայտ քաղաքական-անհատական ընդվզումի ձևեր, մերթ իրեն զրծազուլ, մերթ նա հարձակում էր գրական-գեղարվեստական դրևում։

Բաֆֆու «Սամվելը» պատմական վկայը այս վերջին տիպի արտահայտության [illegible]

Հեղինակը ծանր հիասթափության, խեղդող հուսահատության այդ տարի[illegible]

Նրա մեծությունը և նույն իսկ մեր սրտերի համար նրա յերկրի ուսուցողական արժեքը ներկայանում է:

Բայց, ի հարկե, մի բան հիշում և, վոր քաղաքական պայմանները հանգես ստեղծում էին պատմական անցյալին դիմելու՝ ցնծությունից խուսափելու համար: Ֆ. Մերինգը խոսում է, վոր դեմոկրատական ռոմանտիկները նապոլեոնական բռնապետության սրերում դիմում էին միջնադարին, վորովհետև նույնքան ազատությամբ չէին կարող խոսել նեղկյաց մասին, վոր հնձում էր բռնապետիզմի կրունկները տակ:

Վո՛չ միայն դեղորիևատական դրությունը, այլ և հենց ուս հրապարակախոսության մեջ հայտնի յեն դեղքեր, յերբ ատաղձավոր մտածողները՝ ցնծությունի արգելքները նկատի առնելով՝ դիմել են ուսոր ազգերի պատմությանը և այնտեղից ընդհանրացումներ բերել, ցույց տալով իրենց բացատական վերաբերմունքը դեպի ցարական կառավարության այս կամ այն քայլը: Որինակ՝ Ջերնիշևսկու Փոուսկյանների պատկերը վերանորոգում է յուդոլիկ XVIII–ի և կարլ X–ի սրոջ հողվածն ամբողջովին ուղղված և բռնակալ Ալեքսանդր II–ի կողմից հոգալին հարցի հանդեպ ցուցաբերած դեմ:

Բաֆֆին ևս վո՛չ միայն դեղագետ, այլ և հրապարակախոս, քննադատ և պատմագետ դրյալ յերբեմն յելույթներ է ունեցել ցարական հանուհայ քաղաքականության դեմ: Որինակ. Շեմսադյի մեկնաբանություններին մեջ Բաֆֆին հարձակվում է կառավարության դեմ, նկատի առնելով այն, վոր նա հովանավորում է կալվածատերերին, Ընդհանրապես խանների: Ցնծի առջ Բաֆֆին դեմ է յեղել պարսկահայերի դաղթին, չի ուզել, ինչպես ինքն է ասում, վոր Հայաստանի ներդաստանները ընկնեն ուսաց խոշոր հողատիրության չղթաների մեջ, Շեմսադյի մեկնաբանությունների մեջ ցույց է տալիս կոնկրետ պատմական նյութի վրա այդ Հարցադրման քաղաքականության դատապարտելի ասպատը, այն հանգամանքը, վոր ճորտատիրական իրավահարաբերի կողմից պաշտպանություն են գտնում ծայրագավառի կալվածատերերը...

Վո՛չ միայն խոշոր վեպի և պատմագրական ուսումնասիրության մեջ, այլ և հենց Բաֆֆու պատմվածքների մեջ կան յելույթներ, թե պարսկական և թե ցարական բյուրոկրատության դեմ: Ուշադրության արժանի յե այն հանգամանքը, վոր հեղինակը շատ մասլ դեպքերով և նկարագրում մի բռնակալ հոր պատկերը Վռնջյալ մանճուհին նովելլայի մեջ: Այդ բռնակալը վոստիկանական պաշտոնյա յե: Բաֆֆու հետագործության շատ կողմերը մեզ համար պարզ չեն: Որինակ. հենց այդ փաստը. նրա հետագործական մի քանի յելույթներ: Ասա՝ դրանց հետևանքով նրա հալածվելը կառավարության կողմից, վոստիկանական հսկողության ասկ առնվելը, ստեղը խուզարկության յենթարկելը և այլն: Այդ բոլորից անմիջապես հետո Բաֆֆին նամակ և գրում իր բարեկամներից մեկին և աշխատում և ցույց տալ, վոր կառավարությունը թյուրիմացության մեջ և իր նկատմամբ: Բայց հենց այդ օրերում նա անդլիական մի թերթի կոթծիքն և հերքում այն մտքին, թե ռուսհայերը ցարական քաղաքականության կողմնակից են...

Նույնպես և շատ թնդերներ պարզ չեն Բաֆֆու Պարսկաստանում ունեցած դերձումների մեջ: Այդտեղ նա յելույթներ և ունեցել հարձակման կյանքի դեմ, տրամակ և բանաբյունից մի վոխեցրած աղջիկ, ազգերի համերաշխության պրոպագանդա յե մղել, մի նեղ ընկերական շրջան և կազմել և աշխատել և քաղաքական լրագիր հրատարակել: Բայց այդ բոլորը չի հաջողվել, վորովհետև մի հայ թշնամու նրան մատնել և կառավարության ձեռքը իրեն Հաբեմիի հեղինակին, և վերջինս փոխել և դնել Ռուստամին, հազիվ ազատվելով բանտարկությունից և նույնիսկ մահից: Նկատի առնելով այդ շրջանի դրական արդյունքը, պետք և նկատենք, վոր Բաֆֆու հալածվելը Պարսկաստանում ավելի խոր պատճառներ ուներ. նա քարոզողել և կալվածատերության և կղերի դեմ, դրել և պոմպեևս ֆեոդալական իր հայրենիքի անշարժության դեմ, իսկ հիշյան հայ բահանայի դերբությունն և շարժել վոխերը քաղաքականներ անվանելով, պատկի խոր

ուրդը, Քրիստոսի աստվածությունը ժխտելով և ծաղր Ջանդի մի քանի դավանաբանքը արդելով։ Այդ բոլորը Բաֆֆուն դրել են Գաբրիատանում այն վիճակի մեջ, երբ նա Նաթանյանի դրամքյանն էր Նոր Նախիջևանում և ապա ուսուցչությունը դնելի Մանկաց՝ հատուցաբերության և հղերի հետաքրքրություններից ազատվելու համար։

Բաֆֆու հակաեկեղեցականությունը շատ ցայտուն կերպով յերևում է հենց իր նոթատետրի վերայում. «Գաբրիատանի հողը,— ասում է Բաֆֆին «Վարդան» մեջ,— վոր շրջապատ էր խավարչության սիրտ բաժանված լիներ ժողովրդի մեջ, պատկանում է բնակիչներին և հայրենիքին»։ Այդ կարծիքը Բաֆֆին պահել է իր կյանքի վերջը։ Հնարավոր էր վերի մեջ ևս նա հույսը և հավատը դեպի ժողովրդի նշանավոր ազգային ուժերը. «Ճերը կրկնաժամերնի հարատևությունը կոչնչանա, կրա մշակ մարդու աշխատությունը»։ Վո՛չ միայն խոշոր վիպերի, այլ և պատմվածքների մեջ նա մնում է պատահական անձերի բշնամի։ Ըրինակ. «Ինքնասիրների մեջ Բաֆֆին ատելի և չբավարարության և յերևույթը անհատականության վրա հիմնված ապերանքների դեմ։ Այսպիսով, վո՛չ միայն ազգային խնդիրների, այլ և կովկասահայ գյուղացիական դասակարգերի դժգոհությունը արտահայտելու և դնել Բաֆֆու գրչի առակ։ «Մոտալ դասակարգերի և վճռական վամպիրների դեմ խիստ են արտահայտված մեր վիպասանի նկատողական չքավոր յուղացիները, որինակ՝ Ամեն ապրը...»

«Հարևանի մեջ հնոջ ատելության դեմ ծառանալով, Բաֆֆին կողմնակից չեր հնոջ ազգային վիճակին, նա կոչ եր անում՝ ներդրավելու հնոջը հասարակական աշխատանքի մեջ, բարոյականում եր դպրոցների հզոր զենքավորության դեմ, մեծ թափով պաշտպանելով յերկուսի իրավունքը։ Նրա սոցիալական ուսմունքի մեջ դպրոցը պատկանում է սակի լուծ դնելով և լավ յերկրագործ։

Հաշտ ապրելով ունենալով, Բաֆֆին բավական հաստատ կերպով արտացոլել է իր ամանակի իրականության մի քանի առանձին կողմերը։ Բայց դրանց հետ մեկտեղ նրա ուսումնասիրության առարկի վրա ազդել են նաև բուրժուա-դեմոկրատական աշխարհայացքի մի քանի սահմաններ, վորոնք վորոշ նպատակահարմարական չափերներ են մտցնում և պատճառում վիպասանի ընդհանուր ասումով ընդունելի դրական արդյունքների։

Լենինը ասում է՝ չի կարելի մոռանալ անցյալի այն հեղինակներին, վորոնք կռվել են ֆեոդալիզմի մնացուկների դեմ, հրահրել են յեվրոպական կյանքի խղճմտանքը և այդ ամի այն չափով պաշտպանել են աշխատավոր խավերին։ Այդ իմաստով շատ բնորոշ է Լենինի վերաբերմունքը Տուրգենևի նկատմամբ։ Նա կռվում է խոշոր վիպասանի լիբերալիզմի դեմ, բայց դռվում է նրա արվեստը, ոտտադրծում է նրա ուժերը մեծ նկատի դեմ բանակցել մղելիս։ Կրասոտկայան վկայում է, վոր Լենինը այնքան լավ դիտեր Տուրգենևի յերկերը, վոր նրանց քարգմանության մեջ ոտ ասար լեզուները։

Շատ բնորոշ և նաև Մարքսի Գերկու վերաբերմունքը Դոստոյևսկու նկատմամբ։ Ռոցիալիստական անալիզի մեծ կլասիկը իր ամբողջ կյանքում կռվել է նրա հետաքրքրական հայացքների դեմ։ Բայց դրանների համամիտ բնական ասոջին համարում Գերկին Դոստոյևսկուն անվանել ոուս դրականության Շեքսպիր...

Բաֆֆու վամպիրը նրա դրական ստեղծագործության գագաթակետն է, դրա մեջ բռնահայտում են նրա մեծ ատաղձի ոչն ու ավյակը։ Այժմ տեսնենք հայ դրականության այդ գլուխ գործոցի դիտական և դրական արժեքը։

II

Վամպիրի դիտական արժեքի խնդիրը դնելով, մենք պետք է տեսնենք, թե վո՛ր չափով հեղինակը կարողացել է իր այդ վեպում տալ պատմական անցյալին հարատևող նկատի ոչերը։ Այդ իմաստով մեզ համար մեծ նշանակություն են ստանում Բաֆֆու յերկուսից հետո կարևոր խոստովանությունը։

Նախ՝ հեղինակը խոստովանում է, որ «Մամվելը վաղուց իր մտածության առարկան է եղել, և ինքնրերդ նա ձգտել է մի մեզ դրել, որ ինչ պատմական նշանակություն ունենա: Բայց ինչ կարողացել է շրջապատել իրեն պատմական հարցերով, ամեն կերպ աշխատել է անդրադարձել այն դարաշրջանը, որը նա նկարագրում է: Գրա ապացույցներից մեկն էլ այն բազմաթիվ ծանոթագրություններն են, որը նա ձեռնարկել է դրել՝ դրանցով իր վիպի աղբյուրները հաստատելու համար: Այս բոլորը նկատի ունենալով, մենք չենք վերագրում Երեմյանցին, որ Բաֆֆին չեր կարող ասել թե՝ «Մամվելը» պատմական փաստերի համար չեմ դրել... Մինչդեռ պատմափիլիսոփան ցույց է տալիս մեզ բազմերանգ այդ փաստերի ուսումնասիրության համար և իր վիպի էջերում մեզ դարձնում է դատ պատմագիտական հետազոտության, որի մեջ ներթափանցում և դատ պատմա-քննական ընդհանրացումներ անելու կարողությունը:

«Մամվելի» դիտական արժեքը վերլուծելիս՝ կարևոր է նշել նախ՝ հեղինակի պատմական վիպի առաջադրանքը, ապա՝ նրա վերաբերմունքը պատմագրության հանդեպ: Բաֆֆին պատմական վիպը համարում է մի ժողովրդի պատմական կյանքի նկարագրություն: Այդ առնելով՝ նա ընդառաջ է գնում բազմ. ուշադիր և հասկացնել, որ մերկ փաստերը պետք է շաղախվեն, խրտնեն, ասոջ բերեն հանրային յեռ ու ղող, մեջտեղից վերացնելով չոր ու ցամաք տարեգրության մնալու վտանգը: Շարժուն կյանքն անհրաժեշտ համարելով հայ պատմագիրներին, նա դիմում է նրանցից, ամենից առաջ այն բանի համար, որ նրանց մեջ բացակայում են ժողովուրդը, կենցաղը և առկա են պալատը, վերնախավը, աշխարհի և կղերական տնօրինականությունը:

Բաֆֆիու դիմումները հայ հին պրոհանությունից չատ նման են Ա. Արամյանի դիմումներին նույն պրոհանության հանդեպ: «...Ցավալի է,— գրում է Արամյանը,— որ չենք կարողանում բացի պրկերատ քե հայ ազգը պետք է, որ սերտ չի' ունեցած բլի, որ ենքան բաներ դժվարը անց են կացել, մեկ մարդ ևլա չի' դուս եկել, որ մեկ տասի բան գրի, ինչ կա՝ յեկեղեցու վրա յա, տաճառ ու սրբերի, բայց հետևանս Հոմերի, Հերոդոտի, Վերգիլի, Սոֆոկլեսի պրծները' յերեխեքն էլ դիմատահներին ունենյին, չունեքի բոլոր աշխարհ բաները ևնձ:

Նույն միտքը, պրկին մինուճար բառերով արտահայտում է Բաֆֆին. «... Բայց մենք չունենք մոչ Եվրկլեսի ու Սոֆոկլեսի ժողովրդությունները, և մոչ Հոմերոսի և Վերգիլիոսի դյուցազնական հաղներությունները: Մեր հին պրոհանությունը զուրս չեհոսել յեկեղեցական շրջանակից... մոչ մի մեկ, մոչ մի պրոտա, կամ կոմեդիա չտվեցին մեզ»:

Հարմանվելով պատմական պրոհանության վրա, Արամյանը իր հոմանավորությունակ և ասում ժողովրդական բանասանդծությունը, Ֆոլկլորը, որի մեջ նա տեսնում է իր պահանջած շաշտարի բաները, Հարտ բաները: Այդ բաները հավաքելու համար Արամյանը անցնում է մի կուր հայի ապահովություն ունենալ, որ Ջեյհեր գերեկ ընկնի անդի դեղ և մեր ազգի արատ բաները հավաքի, գրեց:

Գաղափարներից դժգոհ լինելով՝ Բաֆֆին դժգոհ էր նաև հայ հնախոսություններից, որ չեր պրպտում մեր անցյալ կյանքը վերարտադրելու համար պատմագիտական ուսումնասիրություններով, կամ խոնարհաբանությամբ: Այդ խոսում է հայ հեղինակը նախանձում է յեվրոպացի պատմագիրներին, Վալտեր Սկոտին, Երեքսին և մյուսներին:

Ինչ է մնում հայ հեղինակին, որը ուզում է գրել պատմական վեպ: Նախ՝ իր ըստ ենդհատրծական յերևակայություններ, ապա՝ այն ամրյուներ, որը նա դնում է անցյալի գրական և կուլտուրական հաշվառմաններում, նաև մեր հարևան ժողովուրդների գրականության և նեղկա կյանքի մեջ:

Ինչպես վերաբերվել այդ աղբյուրներին: Պատմագրվեստական ուսհնդատրծության կարևոր խնդիրներից մեկն է դա: Շատ անգամ Բաֆֆուն մեղադրել են, որ նա

հավատարիմ չի մնում պատմական ապրյուրներին, որը նա փոխում է այս կամ այն պատմական անձի ավանդական բնութագիրը: Այս նույն խնդիրը դրված է նաև ուրիշ դրականությունների պատմության մեջ. հենց այսօր մեր խորհրդային դրականությանն առաջանալ ստրուկտիվներից մեկն է դա— ինչպե՞ս վերաբերվել պատմական ապրյուրներին դրական ստեղծագործական իրավունքներ: Հարցը կոնկրետացնելու համար վերցնենք օրինակ բերենք:

Նախ՝ Լևոն դժգոհ է Բաֆֆուց, որը նա ներկայացրել է Հայր Մարդպետի դեմքը ոչ ինչո՞վ է աղճատել պատմավիպասանը այդ քաղաքական դրվածքի բնութագիրը:— Նրանով, որ պատմագիրը դրան համարում է հայրենիքի պաշտպան, իսկ Բաֆֆին նրան դարձնում է— առաջնակարգ դավաճան: Ո՞ւմ կողմն է ճշմարտությունը առաջադրված վեճի մեջ— ի հարկե, Բաֆֆու:

Ցնծաք է նկատի առնել Սամվելի դեմքը իրենց: Բաֆֆին գտնում էր, որ արքունական միահեծանությունը հայ ազգային միաձույլ պետություն ստեղծելու նախապայմանն էր՝ հակառակ ֆեոդալների քայքայիչ ուժերի: Տվյալ պատմական դարաշրջանում դա առաջադիմական երևույթ էր: Ենգալիրն էլ նման մոտեցում է ունեցել անդրկովկասյան պատմության հանդեպ:

Հիմա ընդհանուր դաղափարից անցնենք կոնկրետ փաստին: Բոլոր ֆեոդալական տարրերի մեջ ամենից ուժեղը Հայր Մարդպետնն էր, հետևապես իրեն կենտրոնախույս ուժերի իրեն արքայական միահեծանության դեմ մղվող, նա ամենաուժանդակվող ուժն էր և միշտ պատրաստ դավաճանելու՝ իր պատենգիալ հզորության վրա հենված: Բաֆֆին վերցրել է վերջին հնարավորությունը, որը չատ ավելի պատմության վոգուն հավատարիմ է, քանի պատմագրի վրեժ առանձնապես, որ բնորոշ վիպասերիությունը:

Ներկրորդ փաստական առարկությունը Բաֆֆու դեմ անում է վրթանես Փափազյանը: Նախ՝ նա կրկնում է Լևոյին և դռնում, որը Բաֆֆին էհավելել է Հայր Մարդպետի նկատմամբ, և ապա՝ ինքը իր կողմից մի հավելյալ ցավ տալիս, որը իբր թե կատարելիս է Բաֆֆին: Պատմագիրը հիշատակում է, որ Սամվելը սպանել է իրեն իր հարազատ մորը, այլ մորացուին, այսինքն խորթ մորը, պարտավորել Վարդիդեսին: Բաֆֆին ավելացնում է նաև, Սամվելը սպանում է իրեն պարտկուհուն, այլ հարազատ մորը: Ինչն է դեմքին Բաֆֆուն մի այդպիսի հավելյալ գույներ: Ամենից առաջ այն, որ Տաճատուհին, Սամվելի մայրը, ամենախոշոր դեմքերից մեկն է Մամիկոնյան իշխանության մեջ: Հայաստանի քաղաքական որևէ նշանակություն նա մի հետևողական քաղաքական դեմ ուներ. ինչ դեմ ուզում է՝ պետք է խորհրդանիշ հայկական ինքնուրույն կենտրոնության և Հայաստանը դարձնել մի վասալական պետություն, որի մեջ իր ամուսինը— Վահան Մամիկոնյանը լինի գործերի ընթացքը հսկող հրամանատար: Սամվելը, լերի սկսում է իր հայրենասիրական գործունեությունը, առաջին մարդը, որը խոչընդոտներ է հարուցանում, արգելքներ է դնում նրան առաջ, ամեն կերպ աշխատում է խափանել գործու ձեռնարկները— դա նրա հարազատ մայրն է, մի ուժեղ, ամուր բնավորություն, մի դաժան, մեծոցների մեջ խորհրդային դրդող դրդչուհի, իսկական վիպերիա:

Իսկ մյուս կողմից Վարդիդեսը ևս իր տարբերով և ևս իր քաղաքական պատասխանատվությամբ մի հատարյալ չկերտած չի, որը չեր կարող չդժգոհ դեմքավորել, չնայած նրա ինչիկ ցանկանար: Այստեղ կարևոր է մի հանգամանք: Բաֆֆին հատատում է, որ

պարսկական արքունիքը իր կանանց շեր ասլիս ալեկան դաստիարակության, որ նրանք կարողանային դառնալ գիտակից դիվանագետներ։ Նրանց, այդ աղջիկներին պարսկական արքունիքը ուղարկում էր հարևան պետերին, խնամիական կապերով բարեկամական միությունը ամրացնելու համար։

Սամվելի առաջ կանգնած են չորս մարդ։ Մեկը սկզբունքային քննության, հայրենիքի կատարյալ զավակներ, իսկ մյուսը— պարսկական արքունիքի անդիտակից գործիքը։ Սամվելը սպանում է դիմադիկ քննության, և դա շատ արդարացնելի է, պատմության ընդհանուր վարդն ասելիան, մանավանդ մենք մեր վաղ պատմության մեջ շենք կարող ցույց տալ մարդի պարսկատիրություն, որ մեր քաղաքական կյանքի վրա հզոր ազդեցություն գործած լինի, մինչդեռ շատ կան նման ասլիս հայտնիներ։

Վրթ. Փափազյանը կարծում է, որ Բաֆիին ևիևիկի, ազգու լինելու, անդիմադրելի վնաս համար է Սամվելին դարձրել հարատև մոր ատելի։ Դա միանգամայն սխալ անտիկա է։ Բաֆիան ավելի խորը է թափանցել պատմության ասելիքին ուժերի մեջ իր առևտրագործական անհատականության հետևանքով։ Բաֆիին մյուս կողմից խուսափել է պատմական դեպքերը լուսաբանել զուտ այսօրվա տեսակետից, այն մոդեռնիզացիան, որը միանգամայն սխալ կերպով պահանջում էին Գիկորովները և նրա շողոքորթները։ Այդ շողոքորթների հետևողներից մեկն էլ Գերվեզուկին էր, որ պահանջում էր պատմությունը մի չորրորդ դարձնել և ասլ միայն և նի այսօրվա իրականության, ուրիշ խոսքով՝ ինչպես ասել է Վ. Հյուգոն՝ պատմությունը դարձնել մի մեծ և դրա վրա կանգել իր վերաբերմունքը։

Այդ սխալ կոնցեպցիային (վարքին, ինչպես երևում է, հավատարիմ է մնացել Շերվանզադեն) դեմ է ընդդիմացել Բաֆիին։ Նա պատմական վեպ գրելու ժամանակ լուսաբանել է անցյալը իր այսօրվա հասկացողությամբ, բայց միաժամանակ նա իրեն նպատակ է դրել հասկանալ և բացատրել անցյալը։ Ցնվ նրա վեպի դիտական արժեքը հենց այդ վերջին նպատակի իրագործման, հաջող կատարման մեջ պետք է փնտռել։

Հայկունաս դեմ վիճելիս Բաֆիին պաշտպանել է պատմական վեպի իր քննության, փաստարկել է պատմավիպասանի ազատ առևտրագործությունը և ըմբռնացել է այն առևտիկան դեմ, որ բանաստեղծին գրգռում է պատմագրության ասլուկ։ Այդ առևտիկան հիմնականում բղխում է Բելինսկու հեթանոսիզմից, որ այնքան տպավորել պաշտպանել է նաև Մուրացանը Լևոյի դեմ գրած իր բանավոքի մեջ, 1901 թվին...

Վո՞րն է Բաֆիու պատմական վեպի քննության դիտական-վերլուծության արժեքը։ Նախ՝ հետաքրքրական անցյալը պետք է դարձնել մեզ համար մտերիմ և հասկանալի։ Այսինքն պետք է մերկացնել փաստերը ծածկող ժամանակի քողը, պետք է դիմադարձել անել իրականությունը և տեսնել կյանքը ինչպես որ է։ Այդ նպատակի համար հեղինակը անպայման պետք ցույց տա առևտրագործական ազատ վերաբերմունք պատմական նյութի հանդեպ, ճիշտ այնպես, ինչպես ներկա կյանքից վեպ գրողը ազատ է վերցնում ժամանակակից մտերիմ հանդեպ— նույնիսկ երբեմն կռիվ է մղում իր նյութի հետ, ինչպես ասում է Շիլլերը· Kampf mit dem Stoffe.

Ներկրող՝ վերոհիշյալ պատմագրերին մոտ առհասարակ հետևյալ լուսաբանությունը բացակայում է, պատմավիպասանը պետք է ունենա մարդ մի վիճակ, որի բարձրությունից նա կարողանա տալ ոչ միայն կյանքը, այլ և լինելիքը, կարողանա անանձ դիտողիկան, պատմության առաջընթացը։

Այժմ մեզ հարկավոր է անանձ այն բարձրահասը, որի վրայից նայում է Բաֆիին պատմական պրոցեսին։ Հարկավոր է քննել նրա պատմահայեցողությունը, նրա դիտավոր աշխարհայացքը, նրա հերոսը։

Բաֆֆին ամփոփել է հայ պատմության շրջադարձի դարի անցքերի հետևանքը այդ դարի հիմնական պրոբլեմը համարում է քաղաքական ինքնուրույնության խնդիրը, Պարսկաստանի և Հնդկաստանի մեջ ընկած մի փոքրիկ պետության անկախության և, ինչպես ինքն է ասում, իմքնակայության ձգտումը: Այս վիրքին խնդիրը պատկերել էր ամբողջ մատծող հայաբնակ երկրները բռնակալները, քաղաքական տարբեր որինակներ, միմյանց նկատմամբ քշնամի հատակագծություններ: Ինքնակալության սիմվոլն էր դարձել Աբշերունյաց դիվանատունը, որի հանճնով հեղինակը կանգնեցնում է հարևան խոշոր պետություններին իրեն բնորոշ վերաբերմունքը, որոնք ձգտում են վերացնել հայկական ինքնուրույն պետականությունը:

Բաֆֆու ամբողջ համակրանքը վիրջինիս կողմն է. դրա դեմ կոչտոնների, քշնամի կողմն անցողներին նա իրավամբ անվանում է դավաճաններ: Հեղինակի պատմահայեցողության մեջ մի կետ խոսո ուսանելի է. նա անկախության խնդրի հիմնական պրոբլեմը համարում է ժողովրդական խավերին, դավաճաններ աջակից համարում է նախաթաթական կողմնակերպության մեջ, իսկ վերջինիս դերը և բերում մի քանի ժողովրդասեր անձեր (որոնց մեջ, ի միջի այլոց, դնում է նաև հայ պրոտեստանության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցին), որոնք պաշտպանում են ինքնուրույնության գաղափարը: Առանձնապես Մեսրոպը դնում է, որ տարոնց Թադիկը, ձեռնարկելով ամրոշանների հիմնել Հայաստանում, ո՛չ միայն և կրոնական, այլ միանգամայն քաղաքական մի ծանր խնդիր լուծելուն, հայկական կուլտուրայի վերնշանակությանը: Զարթոնք դարի այդ քաղաքական պայքարի մեջ Մեսրոպի հոգում հաստատում է հայ անկախության ամենահզոր հիմքը դնել, հայ գրերի գյուտն անելով, հայ դպրոցներ բաց անելով, հայ գրականություն ստեղծելով:

Ժողովրդի հետ միասին առաջին հերթին չատ ջնջում կերպով անկախ հայ պետականության խնդիրը պաշտպանում են այն փոքրիկ ավելականները, որոնք, ինչպես Բաֆֆին և ասում, իրենց անուշ ամրոցի կատարից կարող էին տանել իրենց կալվածքների լավ տեսությունը:

Նայր և առնում քաղաքական կռիվ, առնչվում և ռազմաճակատ, բաղխում են տարբեր շահեր, տարբեր տեսակներ և այդ բոլորի մեջ ևր քաղաքական այն ծանր խնդիրը, որի վրա իր մասր գրեց հայ գրականության հիմնադիր մեծ ներշնորհալը— Մեսրոպը: «Ոտանի խիր աչքով ևր նայում իր տերոջ վրա,— ասում է Բաֆֆին,— իսկ տերը վատահություն չուներ ծառայի վրա»:

Սկզբունքային այդ պայքարը ամիչի ևս ծանր կերպարանք և առանում, որովհետև պարեիկներն իրենց քաղաքականությունը իրրև ինտրիգանք ասոջ են տանում արյուն, և կերկրում, վոշնչացնելով, ավերելով, խորտակելով ամեն ինչ, որ հիշեցնում ևր հայկական քաղաքակրթության ինքնուրույնության: Ինչպես արտերներ նման քաղաքականության նկատմամբ հակակրանք և տածում Մուրացանը իր «Ծիծեռնդ Մարդկանուհու» մեջ, այդպես էլ պարսկական ինտրիգների դերծնչակիրքը բարբարոսական և համատում Բաֆֆին, տածելով խորին դարշանք դրա դեմ:

Շատուհի այդ քաղաքականության դեմ ծառանալով՝ Բաֆֆին ամչատ խնդրում մերձավոր ապագայական նախատեսություն հանդես չի բերում: Նա հիշում և Պարսկաստանի պատմության մեջ մի քանի նշանավոր մարդկանց անուններ, որոնք շատ արժեքավոր ղեկավար են կատարել, ցույց են տվել մեծահոգության ուրիշ տղերի նկատմամբ, պատմության մեջ մանելով իրրև դրական քաղաքագետներ:

Հին Պարսկաստանի մասին խոսելիս Բաֆֆին հիշատակում է մերձ ժողովրդական ավանդություններ, որոնց մեջ մեծարվում են մի քանի աչքառուչ քաղաքական դեմքեր: Հայոց պատմության ուսումնասիրության մեջ ևս նա մեծ արժեք և տալիս ժո-

ղավթյանի ավանդությունները և մեզ տրամ տալիս և դրանից։ Վոչ միայն իրբև պատմական, այլ և իրբև պատմական, նրբ ինքը իր կողմից ինքնուրույն հետազոտություն և կատարում, Բաֆֆին մեծապես աղավում և ժողովրդական բան ու բանից։ Այսպես օրինակ. իր վիպասանի մեկնաբանությունները դրելիս նա աղատորեն օգտվում և ժողովրդական ավանդություններից, մեզ ուղ տալով ժողովրդի միջից դուրս եկած հետևնեերին, ինչպիսիք են Դալի Մահտեսին, Թուլի Աբդուլլան, Ջալալան Բուդրաշին, Մկրտչ Վանին, և այլն։ Ժողովրդի միջից դուրս եկած այդ հետևնեերին Բաֆֆին ներկայացնում և, չխոցելով իր համակրանքը նրանց նկատմամբ։ Նույնպես և վարվել նա Ամիրխնի վիպական այն հետևնեերի նկատմամբ, վորնք դուրս են եկել ժողովրդի միջից և լծվել են քաղաքականական կոչին. այդպես են Մալխասը, Արրաիը, Հասինը, Նվարդը, Սաթենը և այլն։

Ամիրխնը գրելու ժամանակ Բաֆֆին ուսումնասիրում է Փավստոս Բյուզանդին, վոր խոսում է ժողովրդական-ավանդական աղբյուրներից և հյուսել իր պատմագրությունը։ Ներսիսի Պատկանյանը նրան անվանում է Ջորդանանոս։ Նա մնում է ազգաբանիս, չնայած իր բազմաթիվ շեղումներին, վորնք հենց մտանում են ժողովրդական առասպելաբանության էական հատկանիշները— հիպերբոլան և լիրիզմը։ Ինչ վոր պատմագրը հիշատակում է Աբշոհի, Փառանձեմի, Շավարսի և Մերուժանի մասին, դրվոքին ազդրված և ավանդություններ վարում։ Ճիվ այդ ավանդական, այնպես ժողովրդական պատմության մեջ էական հենց նույն ժողովրդի ազատասիրական վարին և, ինքնուրույնության, անկախ պետականության զգացմունքը, վորով ծայրահեղ ազդրված և մեր շնորհալի վիպասան պատմությունը։ Ներբ հայնքը և պարսիկները բաժանում են Հայաստանը, հարձնական պատմիչը զանազանությամբ նկատում է. Հնուստնոց, բաժանցաս, ցրուցաս քաղաքարիներն հայոց. պահանաց յերկմէ մեծութենէն յայնմ ժամանակի և յետոյ։

Բաֆֆու պատմահայեցողության մեջ մի բաց կա, վոր անպայման պետք է նշանա։ Դա նրա ճշմարտանքն է դեպ վերի մի հանգամանքյանն է։ Հասկանալով մեջ վիպասանը պժգոհում է ավանդական պատմագրության դեմ, վոր դա չի ավել, թե ինչպես է ապրել հայ ընտանիքը, ինչ տեսակ հարաբերություններ մեջ է ունել իր անդրի հետ, ինչ կր ուտում, ինչ կր հագնում և ինչ տեսակ ոլորտություններ ուներ։ Ներբ Բաֆֆին այդ բացը ամրողջովին չի կարողացել լցնել։ Ասում ենք՝ ամրողջովին, վորովհետև նա խոսում է վիրաչ հայ ընտանիքի կյանքի պատմական մասին, բայց մենք չենք տեսնում հայ ընտանիքի շահագործումը տերերի կողմից։ Կա պատերի քշնամին, բայց չկա ներքին պատերազմը, պատասխանը հայ աշխատավորը։ Ինչպես և Մուրացանը, Բաֆֆին ավել և մի լրիվ տեսնում նկարագրել, ներբ, տես, ներքին տարաձայնություններն առաջ լուսե են դասակարգել պատերի վտանգի դեմ, վոր ավելի հարկադրական է, քան ներքին հակասարություններ, դասակարգային ներհակություններն ու պայքարը...

Այնպես վոր Բաֆֆին, դժգոհելով հին պատմագրությունից, վոր ժողովրդի կյանք չի տալիս, հիմնականում դնացել և ավանդական ուղիով, իր վեպի մեջ գլխավորապես դուրս բերելով իշխանական դասի կյանքն ու կենցաղը։

Այդպես դեր և կատարել նրա պատմահայեցողության մի թերությունը, վոր մի հայտնի չափով պայմանավորված և լիրիզմի աղբյուրությամբ պատմավիպասանի մասնագիտության և աշխարհայացքի վրա։

Անհնար և մի հանգամանքյան ևս Բաֆֆու պատմահայեցողության մեջ։ Ընդհանրա ջնրա համակրանքին ժողովրդի նկատմամբ, այնուամենայնիվ նրա մոտ ժողովուրդը հանդես և դուրս իրբև պատմության կուրբ հիմնադրող անձ։ Ներբ ինքնուրույն հանդես և դուրս ժողովրդական զանգվածը, դա մի ամբողջական հասանք և, անկասկած, նույնիսկ անկասելի։ Այդ մասը հիրպարանք և առանում դեհամարնեի առաջնորդու-

քյան շնորհով, նրանց ձեռքում։ Այսուհետ Բաֆֆու աշխարհայացքի վրա նկատելի չի ազդում նարոդնիկության հունձը՝ անհատներն են պատմության առիթով նշանաբանով, «Աղնվեն դյուղացիք,— ասում է Բաֆֆին,— իրենց խրճիթները քաղաք, հավաքվել նյին նրանցի բարձրաբյուններին վրա, և ճանապարհից անցնողներին վրա քարեր նյին գլորում։ Քարերը գլորվում նյին վորպես փուլ յեկած լեռան մի մասը, և իրենց հաշվերին ներքո ծածկում նյին սիրողի կարավաններ։ Բայց ո՞ւմ վրա նյին գլորում,— իրենք էլ չգիտեյին։ Ամեն վոք նրանց համար ուրացող էր»։

Թե այդ սարերաբնակությունը և թե այն հանգամանքը, վոր Բաֆֆին ներքին սարերի դեմ ըմբոստացող ժողովուրդ չի տեսել, այլ ավել և ավելի քշնամու դեմ ըմբոստացողներ— դա հայ լիբերալիզմի հայտնի վերաբերմունքն է դեպի հայ պատմությունը, վոր այնքան ցայտուն արտահայտություն է ստացել բուրժուական պատմագրության մեջ։ Այսպես, օրինակ, հայ պատմությունը աղավաղելով՝ Լեոն գրում է, թե մեր ամբողջ պատմության ընթացքում հայ հասարակ ժողովուրդը յերբե՛ք չի ըմբոստացել իր իշխանների դեմ. «Այդպիսի փորձ մեզ հայտնի չե,— սիրում է Լեոն,— հասարակ ժողովուրդը յերբեք չկանգնեց ազնվականության դեմ իր իրավունքները պաշտպանելու համար, վո՛չ մի ծառանյակ խռովության, ապստամբության կամ մի այլ միջոցով չհայտնեց իր անբավականությունը, իր բողոքները» (ընդգծումները մերն են։ Ա. Տ.)։

Թե հայ և թե ռուս պատմությունից հայտնի յեն մի շարք հասարակական շարժումներ, վորոնք ուղղված են յեղել ավերակող իշխանության դեմ և դարի վախճան նկատի առնելով՝ կրել են վորոշ կրոնական յերանգավորում. այդպես են ուիթոմյանների, ռուսական աղանդները, Քոնդրակեցիները, և այլն։

Վերև մենք ասացինք, վոր Բաֆֆին մի քանի ժողովրդական ավերակներ և ավել իր վեպի մեջ։ Դրանք բուրջ են հետքերին, ավերակության և հնադարության ամրոցներ են։ Ցեղի Սամվելը նրանց ասի՝ դնացեք կրակի մեջ ընկնեք, դա ինձ վրեժ նպատակով հարկավոր է— նրանք անխոս կկատարեն նրա հրամանը։ Ցեղի ժողովուրդը ներքին քշնամու դեմ կռվում է, նրան համարում է ամեն ավերակի քշնամու դեմ ելնում է ըմբոստանում է՝ վորոշ դեկավարության առնելով բարձր խավերից. այդպես է, յերբ Մխոչյանի հպատակները յելնում են նրա դեմ՝ այդ դավաճանի մոր դեկավարությամբ և նեղչևյումով...

Բաֆֆին, իհարկե, չի ժխտում դասակարգերի դոյությունը կամ դասակարգային հակասությունը նրանց մեջ։ Նա իր մի շարք վիպերի և պատմվածքների մեջ, մանավանդ պարսկահայ կյանքից նյութ վերցրած մի շարք յերկերի մեջ, ինչպես են «Մի ավրավոր հողը», «Գեղեցիկ Վարթիկը», «Անբախտ Հռիփսիմեն», և այլն՝ ավել և ավելներ և աղքատների չահերի հակամարտությունը, պարտքերի ծանրության ընդհանուր պատկերության յերևույթի առաջ դալը, անտեսական դրության աղետությունը բարձրաստիճան վերի վրա, մարմնավաճառությունը և այլն։ Բայց խնդիրն այն է, վոր Բաֆֆին, արձանագրելով դյուղի և քաղաքի չքավոր խավերի քշվառ կյանքը, չառ մասյլ դասերով նկարագրելով նրանց կենցաղը, նա ուշքը և ուսկիս վորոշ կարևորության մարտավ, և այդ խավերի մեջ չի տեսնում այն ուժը, վոր պետք է առաջ բերի հասարակական յերկրաշարժ։ Հենց դա է այն կարևորության գաղափարիզմը, այն Mitleidsozialismus-ը, վորից լիբերալիզմի հետ և փչում և վորին ուշքը և ավել այս կամ այն չափով մեր մեծ վիպասանը։ Մի բնորոշ նմուշ. մենք դիտենք հին պատմությունից հայ դասաններին, իսկ նոր պատմությունից դիտենք հայ աշուղներին. դրանք հաճախ հանդիպացել են իրենց ժամանակի ժառանգականներ և յերբեմն ակնածության և վախ են առաջ բերել ավերակողների մեջ։ Բաֆֆին «Սամվելի» մեջ ասում է մի իշխանական խնդուքի նկարագիրը. «Ցեղերդիներին,— ասում է Բաֆֆին,— անդ հյին ավել անդանատան դասն մտա. նրանք անդելի ձայնով յերդում հյին և ածում։ Մեկը յերկու աչքերից կա հոմերոսի նման կույր էր, իսկ մյուսը՝ մեկ ոտքից կաղ։ Հաղը-

վան նրին ազատ կերպով։ Ժողովրդի սերերները ժողովրդի անշուք կերպարանքն էին դրան իշխանների անգամ մասն։— Ես, վերջ. այդ կաղ, կույր, ազատ հաղնված մարդին, իրոք, խղճալի չեն...

Այդ լիրբությունը ներնում է վիպի նաև այն մասերում, ուր Բաֆֆին պատիր և ժամանակի հոգեբարոյականության դրսին դրական բնութագրերը և չի կարողանում մերկացնել նախապատիան ինդիցյու չհաղորդական բնույթը։ Այս բանում ևս մի հակասություն կա. ավյալ դեպքում հակասությունը գտնվում է փաստերի և պատկերացման մեջ. առաջինում Բաֆֆին ինդիցյու հզորությունը դնում է իրեն հայ պետականության քայքայման պատճառը, իսկ պատկերացման մեջ, վիպի իրադարձություններին մեջ հոգեբարոյականությունը իր այդ հայրենապահ դերձանկությամբ հանդես չի գալիս։ Ներսեսը, կաթողիկոսը, Բաֆֆու մոտ հանդես և գալիս իրեն ինդիցյուների հայրը, ժիշխանների պատասխանը որդին, նույնիսկ իրեն վեհապետության հրեշտակը։ Մինչդեռ Բաֆֆին այդ խաղապետության հրեշտակին կամ դրա նմանները փաստերի մեջ ներկայացնում է իրեն իրենց չհաների համար արյան հեղեղներ քաշողներ...

Ժողովրդի սերտությունն և հղերն այդ դերեր դրական դերի հետ միասին Բաֆֆին փաստորեն և բարեկարգությունը իրեն ազգասիրական չարիքը մեղմացնող միջոց։ Մերսժանի մարը ժողովուրդը սերում է, վորովհետև ամեն որ նրա անունը բաժանում է չքավորներին ողորմության պարներ։ Ես այդ բարեկարգությունը, ասես, մեղմում է չհաղորդվորների դատերը. նրանք կարող են դատապարտել, բայց չերթ ազատել իրենց սերերին։ Վերջիններս, չերթ իրենց ծառաներին անունով են կոչում, դա լցնում է նրանց սիրտը սերտելի ղոգմանքով։ Բարեկարգությունը հավատարմություն և ծնում, հավատարմությունը դնահատում է. Մերսժանի մարդը հպատակներին սիրում էր ճշտապատ զավակների նման։

Բայց, ի հարկե, Բաֆֆին խոշոր վիպասան լինելով, արտացոլել և նաև իրական ճշմարտությունը։ Այժմ տեսնենք նրա պատմահայեցողության մի քանի արժեքավոր առանձնահատկությունները։

IV

Ինչպես իր ժամանակակից բնագրով դրած վիպերի մեջ Բաֆֆին խիստ քննադատեր և ազատական հուզուսության մասնակիցները, այդպես էլ վեպերի մեջ նա մնում է սկզբունքով փեդագոգիզմի բնագավառ։ Դա նրա վիպի մեջ այն կարևոր հատկանիշն է, որ մերսում հեղինակը ժամանակակից առաջավոր մարդու տեսանկյունից և նույնի պատմության վրա և այն գնահատում, խիստ դատավճիռ կարդում նրա վորոշ կողմերի դեմ։

Բաֆֆին քննադատում և փեդագոգական հուզուսության տեսակետից մարդը, այն հիմքը, վոր դա ժամանակության և թույլ նաև բարեկամական հատկությունները, յատկությունը, մի ուրիշին տանդուրք չինել և նրան իրե տալով բարեգամանալ, չտանել մարդու մեջ անհատին, այլ նրան համարել մի ինքնագանական միավոր։ Ջիլա (=Ամվիլի հայրը),— ասում է Բաֆֆին,— նույնպես էր իր վորդու վրա՝ մի՛ Քե իրեն մի ազատ, ինքնուրույն անհատ վրա, այլ վորպես մի հաղորդակ մեջոցի վրա, վորով միայն ինքը պիտի գտագործվեր... Ջեռնե մի նեղուց ձեռքդրվի ժամանակ տանում և մրցանակը, տեսնե և պարծենում և վաչ թե նեղություն։ Այս յնսական կեսից էր նայում նա վորդու վրա։ Մի այսպիսի հայացք կարծիք էր նրա մեջ ամենազորաբար, վոր ստացել էր նա իր սոցիալական ժամանակության հետ։

Ջեռնե ազնվականը վորդուն տանդուրք և համարում, նա, ի հարկե, հպատակին տե՛ղ միայն տանդուրք կհամարի, այլ և կոնա տալու արժանի հող։ Քանի լիրբությունը հարհայացքի տեսակետից Բաֆֆին տերոչ և ծառայի մեջ հաճախ հատկություն և

ցուցնում, բայց յերբեմն էլ նրա խոշոր տաղանդը մերկացնում է ճշմարտությունը, անդունդ փորում նրանց մեջ, անդունդ, վոր կարելի չի վերացնել միայն և յերբ սոցիալական տեղաշարժի միջոցով: Սամվելը հպատակները նրա անձնական մեղմությունը բացատրելի յերևույթ են համարում. զարմանում են, վոր նա մյուս իշխաններին պես վո՛չ ծեծում է, վո՛չ հայհոյում...

Հակադրվելով մինչնաշարյան բռնության իրավունքին, Րաֆֆին մի այլսիսի սկզբունք դնում դիմացը և դրել Մուշեղի և իր հնով՝ Սաքենիկի մեջև.— «Դու միշտ քո նետերով ես սրբել քո ճակատի քրտինքը... Միշտ կռիվ... միշտ արյուն... միշտ հատած... Ե՞րբը պետք է վերջ դրվի այդ արյունհեղություններին, հարցնում է ամուսնուն հինը: Մուշեղը պատասխանում է.— «Երբո՛ր, քանի վո՛ր մարդիկային իրավունքը միայն սրով կչափվի»:

Այդ կռվի մեջ Րաֆֆու համակրանքը զմարդկային իրավունքի համար աշխատողների, այդ իրավունքին պայքարով տիրանալու ձգտողների կողմն է: Ցնով այդ պատճառով նա ֆիզիկական զրկանք և զրկում բանտարկության դեմ, զոհամանության դեմ և. ընդհանուրակը, նվիրագործում և սպասելիքում է հայրենասերներին, նվիրում է հայ գինվորի հերոսությունը նույն խանդավառությամբ, ինչպես իր հիմնական պատմագրական աղբյուրի հեղինակը— Փավստոսը: Այս վերջինի պես Րաֆֆին էլ ծաղկում է պարսկական աշխարհակալության դեմ, յերբ վերջինս իրեն նպատակ է դնում հայերին ձուլել պարսիկների հետ, հայ ազգության անունը ընդհանուր չքնելից:

Պարսկական աշխարհակալության այդ ձգտումը Հայաստանում առել է բերում մի ամբողջ ժողովրդական շարժում, վորի նպատակն եր է ինք դարձնել այդ վտանգը: Ժողովրդական խավերի այդ վոգևորությունը մի տաք հատարկական մթնոլորտ և առեղծում, վորի մեջ անձնականը տեղի չի տալիս ընդհանրականին, մանավանդ զոհվում և հայրենիքի ընդհանուր բարօրության: Այդ կողմից մի պերճախոս վկատ է բերում Րաֆֆին, վոր բառացի կերպով նույնն է, ինչ վոր չեշտում է նաև Մուրացանը իր «Գնվոգ Մարզպետանոցի պատմական վեպի մեջ: Րաֆֆու վեպում ժողովրդի ծոցից դուրս գեկած մի չինական յերդումն է իր՝ ասո, իր հնով, իր զավակների կերևը չանանել, մինչև վոր վերջին թշնամին յերկրի յերեսից վանդված չլինի: Մուրացանի պատմավեպում նման յերդում ասլիս և կատարում է նրա զվարթ հերոսը—Գնվորդը...

Հայրենիքի համար զոհաբերությունը թե Րաֆֆին և թե Մուրացանը համարում են այն գերագույն առաքինությունը, վոր պետք է վողնվորի դարերում: Այդ առաքինության համար թափված արյունը ուռճացնում է հողը և ծնում նորանոր հերոսական ձևեր: Հայրենասերի մահը— անմահություն է, մինչդեռ դավաճանի կյանքը— բարոյական մահ: Հայրենասիրությունը, ասես, Րաֆֆին համարում է մարդու վեցերորդ զգայարանը. նույնիսկ անփորձ պատանուն դա ասլիս է ունակություն՝ փորձի և հմտության պակասը լրացնելու: Մինչդեռ դավաճանը մի հուլը է, վոր աչքերը փակում է արևվի դեմ, ճշմարտության դեմ: Րաֆֆուն և Մուրացանին կարդալով՝ դուք լսում եք բուռն առաքինության մեջ մեկայն բռնակալության դեմ, այլ և նրանց ձեռքին դրծիք դավաճանության դեմ:

Թե Մուրացանը և թե Րաֆֆին հայրենասիրությունը նեղ ազգայնական հիմքի վրա չեն խարսխում: Մուրացանը ատում է արտաքին բռնակալությունը, բայց համակրանքով է խոսում Հայաստանում ապրող և արդեն բնիկներ դարձած արտաքնեկ մասին: Մեծ համակրանքով է խոսում Րաֆֆին հրեա ազգի և Հայաստանում ապրող հրեաների մասին, վորոնք մեր յերկիրը համարում են նաև իրենց համար հարազատ, մի նոր Սիոն, նոր Գողգոթան: Այդ զգրծունյա և խնդացի ժողովուրդը, ասում է Րաֆֆին, իրեն ատար չեր զգում Հայաստանում, վորովհետև այդտեղ նա վայելում եր հավասար իրավունքներ հայերի հետ միասին:

Թե Բաֆֆին և Թե Մուրացանը հայրենասիրության հիմքը դնում են ժողովրդական շահերի վրա, իսկ դավանանությունը անպում են հակաժողովրդական յնքնույթ: Դրա- նով էլ նրանք դնահատում են բոլոր խավերին, թաղավարներին և իշխաններին: Մու- րացանի իշխան Դևիտրը— յնքնվելի հայրենասեր և, նաև մեծատուն ժողովրդասեր: Այդպես են նաև Բաֆֆու սրված հերոսները— Սամվելը, Մուշեղը, Մհերսոը և այլն: Նույնիսկ Աբշուհ II թաղավորին Բաֆֆին հանճարող և համարում, վերջինիս նա նա- խաբանների դեպոն ժողովրդին իր հավատարմության տակ է առել, դավում է նրա վերջի գեղի հակակղերական դրծունեության և այլն: Նույնիսկ հայ գրականու- թյան, հայ սրվնատի սրժեքը Թե Բաֆֆին և Թե Մուրացանը պայմանավորում են նրա- նով, Թե ո՛րշափով նրանց մեջ ազգային կյանքն և արտացոլված: Ոտարները ձգտելով այդ կյանքը խորտակել, նրանք ձևաք են բերթացնում հայ լեզվի և հայ գրականու- թյան դեմ: Դնա այն ժամանակ, յերբ հայերը դեր չունեյին, նրանք իրենց ազգային ինքնուրույնությունը պահում եյին լեզվի միջոցով. «Հայոց լեզուն,— ասում է Բաֆ- ֆին,— մնացել էր նույնիսկ ժողովրդի բերանում, վոր հալածում էր ատրապղի կղերը»: Այդ ժողովրդի լեզվի մեջ Բաֆֆին ամփոփված և տեսնում նույն ժողովրդի մտավոր կյանքը, նրա հոգու առանձնադրծական Թեքնիկները: Ի՛նչ միայն հայ, այլև պարսկա- կան ժողովրդի լեզվի մեջ նա տեսնում է նրա դարավոր փորձի և առանձնադրծական ջանքերի արդասիքը: Այդ նույն ժողովուրդը իր բանավոր դրականության մեջ դրել է մի բուռն հերոսական վոգի, վոր վառում է յերևակայությունը անձնազոհության դաղա- մաններով, սիրադործության մղող դաղափարներով:

Հայրենասիրության հիմքը ժողովրդական շահերից բղխեցնելով, դավանանությունը հայրենադավ դրծունեության անվելով՝ Բաֆֆին հայ դրականության մեջ դրեթե է Քաղաքացիական պատերազմի լավագույն յերգիչը: Թե Վահվելիք և Թե Փաուիք Բևկին մեջ նա ոչել է վերին աստիճանի դիտող մարդու. ճշմարտացաուած դրչով մինուլյն հայ անուն հրող մարդկանց մեջ պոյթարի և չահերի հակամարտության ակտյորչյու- նը, վոր հանդում է նույնիսկ դաժանության, անողոքության, կրքերի լրման աստի- ճանին: Նրա այդ վեպերի մեջ իշխում է Ցեղիչն պատմական ճշտությամբ ներկայացրած պոյքարը հարուստների մեջ, վորոնք կուլում են տարբեր դաղափարա- կան դրոշակների տակ, վորոնք դանվում են բարբիկոսի հակակիր կողմերում: Զնան Խդրոր հարուստի և մերձավոր իր լեզին սում է Ցեղիչն: Նույն անողոքությունը կուլ մեջ անհաշտդաղականությունը ցույց և տալիս Բաֆֆին, դրելով Թե՝ կյանքի մեջ լինում են պայմաններ, վորոնք յեդիրը բաժանում են քրոջից, մորը վորդուց:

Ցեվ վոր դլխավորն և՝ Բաֆֆին կուլ մեջ չհաշտ մեջոցների դրծադրման կողմնա- կից և և միշտ խորհում և հնդծակության, ստորաքարչության, դրանսակալու- թյունը: Սասունցի Դավիթը Մարահելիքի վրա յե հարձակվում, ասելով Թե՝ ալ քնած եք, վոտքի յելեք, դալիս եմ: Բաֆֆու մոտ Մհերսոի Մշեցուցը, հայ դրակա- նության մեծ հերոսները, վոր մասնակցում է կռվին, հայտնում և այն միտքը, Թե՝ վեպ բան չե քնած մարդու վրա հարձակվելը, քող դարթնանք:

Դավիթանին Բաֆֆին իրտումբ գրնասեր ածր և անմոռում, վորի Թուլը ավերածը և ասոլ բերում: Դավիթաններից բոլիցած բանակը նա ներկայացնում է իրրև բ- բոնակը մի հավաքույթ, վորից փախչում և ամեն մի հնդունակ չունչ: Մինչդես հայ- բնասեր բանակը ժողովրդի սիրտ և միսիտյանքի ասորական և: Ծողովրդական բա- նակը գործի յե կրնում, իր շուրջը անանելով համակրական մթնոլորտ, այն ազգա և գրկաբաց ընդունելությունը, վորով նա իր ներքին վայելչությունը խանում և հատ- բակաց բավականության հետ: «Գնչուզայլ աղջիկը, դյուղացի կինը,— ասում և Բաֆֆին,— վոտոտ, համարձակ, բերում են իրենց տղիներն ամենաբերիր պատղները այնպես վաճառելու: Շինականը իր անհետության ամենալավ բերքերը այնպես և ա- նում: Գաղաքացին իր բոլոր առևտրական վաճառքները մեծերը այնպես և ա-

բանակը մի հնդկական տոհմական կերպարանք է ստանում։ Սերվում է հարցասեր ամբոխը և լսում է գինվորների քաղցր յերաժշտությունը։

Ժողովրդական բանակի գործունեության հետ Բաֆֆին կապում է հաղթանակի լավատեսությունը, այն ջերմ հավատը, թե ժողովուրդը անմահ է, դրա հետ միասին անմահ է նաև ժողովրդական գործը։ Այդ լավատեսությունը և հաղթանակի գինդ համոզումը նույնիսկ այսօր վարակիչ, վոգևորող և կենսախինդ են զգացնում Բաֆֆու շատ գլխերը, վորոնք հայ գրականության հավերժական կապիտալն են ներկայացնում։

Ժողովրդական բանակի հետ Բաֆֆին կապում է նաև անմահական միջոցներով ազատվելու խնդիրը։ Նա դեմ արտահայտվելով Մուշեղին Բյուզանդիա ուղարկելուն, դրանով ուզում էր իր ժամանակակից լիբերալներին, հատկապես Արծրունու այն միտքը հերքել, վոր հայկական խնդրի լուծումը ամբողջովին կապում էր յեվրոպական խմբերի հետ։ Նա հիմնականում դեմ էր արտահայտվում հեռավոր ավանտյուրիստական շատ քայլերին, վորոնցով հայ բուրժուազիան վաճառքի յեր հանում ժողովրդի թե շահերը, թե կյանքը...

Ճիշտ խոսք չէ, վոր Բաֆֆին «Մամվելը» գրեց «Մշակից» և Արծրունուց հետանալուց հետո, վերաքննության և վերանայման յենթարկելով իր մի քանի նախապաշարմունքները, վոր նա արտահայտել էր անցյալներում ամենահայ խնդրի կապակցությամբ։

«Մշակի» ազդեցությամբ յեկեղեցական վորոշ գործիչներին, հատկապես Միքրիչ Արխմանին մեծարող Բաֆֆին՝ ճշմարտախոս պետպաշտ գրչով մերկացրել և հղկված կանոնությունը իրեն դատարկել, դրա հակաժողովրդական դեմքը ցույց տալ և պատել հնդկ ժողովրդասերության դիմակը։ Բաֆֆու գործերի մեջ հակահղերական նշեր կան, վորոնք հիշեցնում են Ե. Զալյի վեպերը։ Հայ վիպասանը մի ուշադրության նկարագրերի մեջ ցույց է տալիս Արխմանների գլխավորած հղկերի խարխափական, շահատակական գործունեությունը։ «Մամվելի» մեջ ևս Բաֆֆու աշխարհայացքի մեջ այդ ճնդքվածքը նկատելի յե։ Սակայն դեղգում Արխմանի դերը կատարում է Ներսեսը, իսկ ատհատարակ նախարարական յեկեղեցին ներկայանում է իրրև հայ ինքնուրույն պետականության քշնամին։ «Հայրապետական հարուստ տունը,— ասում է Բաֆֆին,— այնքան շատ կալվածներ, դյուղեր և ավաններ ուներ, վորքան չուներ մի մեծ նախարար»։ Բաֆֆին «Կայծերի» մեջ քրիստոնյա հրոսակորների առաստուն է նկարագրում։ Հեթանոս հրոսակորների առաստուն անվանի հին Հայաստանում նշել է նրանց, ապացուցելով, վոր այդ հրոսակորները կռապաշտներ են առաստուն սրբ. սրբ. Նահ՝ Անահիտի տաճարում գտնում էին կուռքերը անձնատվում, իսկ դրսում մնում էր տաճարի դանձարկղը հոգատար կղերի...

Ընդհանուր առումով պետք է նկատել, վոր Բաֆֆու վիպագրությունը դերծ է միտեղիզմից, հրոսնական նեղլատացնությից։ Հայ մեծ վիպասանը սկսյալ ինդրում գնացել և մեր ժողովրդի հետևից, վոր հայտնի յե իր հակահղերական անթիվ անհիդոտներով և խայթել ծտերի պատերով, վորոնց մեջ մերկացվում և կղերի հակաժողովրդական վարքն ու բարքը, խոսքն և գործի տարտնող հակասությունները։ Գոգոլին գրած նամակի մեջ Բելինսկին ուսա ժողովրդին աթեիստ և անվանում։ Զննք սխալվի, եթե մենք մեր ժողովրդին նման բաներ պետք ընծայելու լիննենք։

Բաֆֆին «Մամվելի» մեջ վերանայել և նաև իր աշխարհայացքի վորոշ նացիոնալիստական տարրերը։ Վերմիդրությունն ուշ համակրելի սիրտ գծագրելով, պարսկական ժողովրդական բանաստեղծությունը գովելով, Պարսկաստանի անցյալ պատմության մեջ հետաքրքրության և գովասանքի արժանի մեծագործություններ ցույց տալով, Բաֆֆին, անտարակույս, կանգնել է ուղիղ ճանապարհի վրա և իրրև անկասելի Շահումի քաղաքական գործունեությունը բուն պարսիկ ժողովրդի շահերից, վորոնք հիմնականում դեմ չեն հայ ժողովրդի շահերին, ինչպես այդ ցույց է տալիս նաև հայ ժողովրդական հանճարեղ եպոսը... Բաֆֆին միանգամայն դեմ է գնում «Մամվելի» մեջ գա-

մաս–Թաֆֆայի վերջ ստացայ հայացքներին և հայ հայրենասերներէ գործունեության լծակից և գործնական նաև Հայաստանում ապրող ստացներին, հրանաներին, հոգիներին և ստրիներին։ Նա չատ համակրանքով հիշատակում է Զվիթային, Ցնդիխանին և Շալխոյին։

Բաֆֆու նախկին գործերի մեջ, ի հարկե, յերևում են նացիոնալիզմի վորոշ տարրեր, պայմանավորված այն դարավոր ընդունելով, վորոնց յինքնաբվիլել և հայ ժողովուրդը և յերբեմն ընդող դասակարգի դեմ դժգոհությանը ավել ազդային դասավորության։ Բայց վերջի ի վերջո Բաֆֆին իրրև խոշոր դրող յեկավ այն յեղակացության, վոր ամեն մի ժամանակակից ազգի մեջ յերկու ազգ գոյություն ունի։ Ցնքն ասում ենք չահագործողների ազգը, Լննինի խոսքով ասենք՝ Բուրժուազիայի ազգը, բայց սերում և պաշտում ենք Ցնքնիշխանների ազգը։ Բաֆֆին իրրև պարտկահայ՝ գրամանային հայրենասեր էր։ Նա պարծենում էր Պարսկաստանի հերոսական անցյալով, բայց ծաղրում էր Շահուհների կոտորի և մարդատյաց աշխարհակալության դեմ։

Մաքսիմ Գորկին պատմական վեպի ամենամեծ արժանիքը համարում է այն, վոր այդտեղ հեղինակը կարողանա տալ պատմական անցյալի վճռական դնահատումը։ Բաֆֆու ամբողջը այդ իմաստով պետք է դնենք հայ դրականության լավագույն պատմական վեպերի շարքում, վորովհետև նրա մեջ հայ անցյալը վոչ միայն վերստեղծված է, այլ և դնահատված է։ Հենց դրանումն է Բաֆֆու պատմավեպի դիտական արժեքը, վոր ունի մեծ իմացական, ուսուցողական նշանակություն և հայ յերբեմն դրող պատմության մի ենթեկտեկտիվ յե։ Այդ դարաշրջանը ուսումնասիրողների համար նա կարող է ծառայել իրրև մի դեղատոմս պատմական ժամանակ ազգությը, ինչպես Մաուրացանի հայոյի պատմավեպը արտաքին չրջանի հայ պատմության համար։

Ամբողջի դիտական–մեթոդական արժեքի հետ միասին չատ մեծ և նաև դրական–դաստիարակական արժեքը, վորի քննարկմանը կանցնենք հետո հիմա։

V.

Պատմական վեպի դրական–դաստիարակական արժեքը վորոշելիս ամենակարևոր հարցն այն է, թե հեղինակը կարողանո՞ւմ է մեզ անգամփոխել իր նկարագրած դարաշրջանը, առանձնացրած կերևակայության ուժով տարո՞ւմ է մեզ իր պատկերացրած պատմաշրջանի վրայով, վերջապես, նրա ոլորտից բարո՞ւմ է դարի արտիստը, անցյալը հանդի՞ս է դալիս իր առանձնահատուկ կոլորիտով։

Վո՞րն էր Բաֆֆու նկարագրած դարաշրջանի մեծը— կալվածատիրությունը։ Հասարակական հարաբերությունների հիմքը հողն էր կազմում. ով չատ հող ուներ, նա և չատ ուժ ուներ թե անհատական և թե քաղաքական իմաստով։ Վերևից մինչև ներքև տանում ամենից առաջ իր ունեցած հողի ծավալի հետևանքով։ Չատ ունես— մեծ մարդ ես, քիչ ունես,— արհամարհանքի արժանի յես։ Հյուրեր ընդունելիս, դահլիճում նստելիս, իշխանի կամ արքայի ապարանքում՝ հյուպատոսը մեկ է. յերբ հող ունես, յերբ չատ և հողդ— դլխիս վրա, նստիր վերին բազմոցին, նույնիսկ նախ քան դալդ շնորհավորելը քեզ ուղղակի դալդ են ողջունում։

Բաֆֆին այդ հանգամանքը չատ բնորոշ գծերով է տալիս. Ցնայած Մնացական Մաշտոցի մեծ խելքին, քաջությանը և ճնշողներին, ամեն անդամ նրան դրել են տգետ մեկնակ, նախկին վոգը հոգատարության վասին։ Պատմավեպասանը խոսում է Տաճատուհու բարեպատվության մասին։ Ընդ որում մեջ,— ասում է Բաֆֆին,— խոսում էր Աբեղայից ենթանուն տհմի բարեպատվության։ Նա արդահատում էր նայում դեպի ամեն մի վոչ–հողատեր ազնվական, վոր իր անչուք ամրոցի լուսից հորդ էր անանել իր կալվածների բոլոր տաճանները։

Հողը ուժ լինելով՝ հողատերության համար հիմքները ուղղորդման յերևույթ էին։

թե դաստիարակությունը, թե կրթությունը նպատակ ունեին պատրաստել լավ ոստիկաններ։ Վարպետությունը չատ տարածված մի զբաղմունք էր ամենից առաջ հենց այն պատճառով, որ այդ ժամանակի զինքը լուրը ուսանողները կարելի էր պետք ածել յուրաքանչյուր դաստիարակության համար։ Գաստրոմ և ուրիշ— ահա դասագրքերի համար բնորոշ հատկությունները։ Այդպես լինելով՝ մի շարք ընտանի հիմնադիրներ դառնում են այդ զբաղմունքի հիմնադիրները։ Զին, չունը— մեկը պատերազմի, մյուսը՝ ուրիշ մի ընկեր էր։ Ցնծ ուրիշն խելոք են դրանք, ինչպես հասկանում են իրենց աշխարհին։ Դրանց ընկերությունը նրանց դաստիարակել և համախոհներ։ Հայ հեքիաթների մեջ այդ բնորոշ է խորապես նկատված և Բաֆֆին դնում է ժողովրդական բանահյուսության հանձնել։ Աղայանի մոտ էլ Աբեղի ձին մեկն է պատկերություն ունի՝ լեզու չունի, ուրիշ խոսի, բայց ամեն բան հասկանում է։ Շերբ ուրիշ ուրախ է, այդ ուրախությունը հաղորդվում է հիմնադանդ, ուրիշ խոսի է, ուրիշում է նաև նա։

Ցնծի դրամի, պատերազմող և վարպետող ոստիկանների նժույգները և բարեկիները են ուղեկիցը, հարեմական հինգ համար, նրա փակ հյանքին իրեն մեծ հանգիստ է դարձնում կատաղ։ Ելինում են բոլոները,— ասում է Բաֆֆին, վարժեցուցիչ մասին խոսելիս,— դա՛ն, հուսահատական բոլոները, ուրիշ մարդ իր ուրիշ մեծ ընկերության ժամանակ՝ ուրիշնք է դանում մինչև անդամ կատաղի մեջ, ուրիշ հանկարծ նեղ է մանում անձնյակը և կարեկցարար քաջալում է ստանալ վերջինին։ Վարժեցուցիչ և Հունան

չկար կերպարվեստ։ Այդ լռության մեջ Բաֆֆին կարողանում է տալ մեծ վարպետություն և այդտեղ է, որ փայլում է նրա քաղաքացիական հոգի կերպչի տաղանդը, որը այդ առումով մրցում է հանճարեղ Գեղիչեյի հետ։

Քաղաքական մթնոլորտի հետ մեկտեղ պատմավեպասացությունը դիտե առնչվել նաև կենցաղական վայրեր։ Տներ և հագուստներ փոխհարաբերությունը պատկերացնելու առումից շատ բնորոշ է Բաֆֆու այն նկարագրերը, որոնք մեզ նա տալիս է դրանց հանդիպումը մեծ հանապարհների մոտ. «...ձիանների կամ ջորիների վրա նստածները (= հայտնիները. Ա. Տ.) ցած եկին իրենց ձիերից, նույնպես դուրս եկին դռնից հանապարհից և խոնարհ գլխով կանգնում եկին իրենց զրաստների կողքին, մերը նա (= տերը. Ա. Տ.) մոտենում եր, գլուխ եկին տալիս»։

Նույնպես դարաշրջանին համար բնորոշ է այն հյուրասիրությունը, որին նկարագրերը հիշեցնում է բերքիական հին պատմություններ, որը կապված է նահապետների եղոթյան հետ։ Բնորոշ է նաև իշխանների մոտ հյուրերի այցելություններ, համհարզների և մեհենադպիրների նկարագիրը, պատմաբանների և կանանց արդուզարդը, թալխանները, համբիլները, և այլն։ Այդ բոլորը տանդում են մեզ միայն դարեր, այլ և արևելյան աշխարհի մի առանձնահատուկ կոլորիտ, որը կենդանի չի, խոսուն, մերամենակ չատ դեպքերում ուղղակիորեն է Բաֆֆու նոր պատմավեպերից առած նյութերին, որոնց մեջ չերեսում են հնարքի կյանքի հետքերը, թե ասեն, հակիրճասիրի և թե մերը ու բոլորի բնութագրման մեջ։

Այսանդ դրվում է Բաֆֆու առանձնատրծական մեթոդի խնդիրը։

Բաֆֆու «Սամվելը» դեմոկրատական գլուխ գործոց է հենց այն պատճառով, որ դրա մեջ հեղինակը կարողացել է արտացոլել իրական կյանքի բնորոշ հատկանիշները։ Պատմավեպասանի դիտողականությունը այսանդ հաղթանակ է տարել։ Նրա քան հանրային կյանքի փաստերին անցնելը, պետք է ասել, որ Բաֆֆու այդ հատկությանը փայլել է մանավանդ բնության նկարագրության մեջ։ Գրքերն գրել է, որ Վիկտոր Հյուգոյի դիշերային նկարագրությունները ճիշտ չեն։ Մինչդեռ Բաֆֆին ավելի բաժնում վարպետ է։ Նա դիտում է այնպիսի մանրամասներ, որոնք սուբ աչք են պահանջում։ Այդ իմաստով շատ հաջող է Աբուսանին փոթորկոտ դիշերը. կարելի չի նույնիսկ նկարել հստակ մրա, այնքան մանրամասները մորոշ են և կանկրետ։

Բաֆֆին հայ դրականության ամենախոշոր պեյզաժիստն է, և մ'չ միայն հայ դրականության... Նրա բնության նկարագրությունները հմտաստվում են, յերբեմն դերազանցում են Ալպիյանին, որը բոլ սրտի ճանապարհով ընթացել և պատմավեպասանը։ Բաֆֆու մոտ պեյզաժը նշանավոր փունկցիա ունի. ինչպես որ նշանավոր պեյզաժիստների մոտ, այնպես էլ Բաֆֆու նկարագրությունների մեջ դա հանապ արտահայտում է կամ որևէ բարոյական մտահղացում, կամ դրվածքի հիմնական միտքը. դա դեկորացիա չի, այլ կենդանի, շարժուն, դինամիկ կյանք։

«Սամվելը» դրելու ժամանակ Բաֆֆուն պետք է այն հանդամանքը, որ նա չդիտե և այն աշխարհագրական անդամանները, ուր կատարվել են վեպի անցքերը։ Բայց, ի հարկե, դա խոչընդոտ մի կողմն է. մյուս կողմից ծանոթ լինելը և նկատելը, այլ այդ անդի բնահանդությունը, որպես մեջն է պատմավեպասանի ուժը, այն հանդամանքը, որ նա բնության դարձնում է իր ինտիմ զգացմունքների քարտեզանը։ Հայ բնությունն պոեզիան մեծ թափով արտահայտություն է գտել մեր նշանավոր կլասիկի այս չդիտարանելի գործում։ Այդ բաժնում իսկական խոսքը վարպետը դառնում է էքսպերտ անձամարտող։ Գեղագիտական ունիվերսալներ են Տարոնի տասվոսը, Ծլուսնիքը, Արարատյան դաշտի տասվոսը, հին Արաքսը, և այլն։

Վերև մենք խոսացինք վարպետության մասին։ «Սամվելի» մեջ վերջին վարպետությունները դրվում վարպետության մի չատ հաջող նկարագրություն կա, որը հիշեցնում է

Տալտոյի վիպերի համապատասխան նկարագրիները։ Այդտեղ կենդանի չեն դուրս բերված վոչ միայն վերաբերության պրոցեսի հետ կապված մարդկային դրծողությունները, այլ և դրան զուգընթաց ֆիզիան և ֆաունան։ Բաֆֆու աչքից վոչինչ չի փախչում. վոչ ոչ-չիմ յեղևրուն իր ճապուկ պարանոցով, վոչ ամեհի վարազը իր տղմային անկողնում. վոչ յերկյուղ նապաստակը, վոչ վրդովված այծյամը... Ձի փախչում նրա աչքից նաև ֆլորան. վո՛չ յեղեգնաբույսը իր փնջաձև կատարով, վո՛չ ջրածաղիկը իր քրամաձև տերևներով, վոչ ջրաիւղ վարդը իր ծիրանագույն թերթիկներով...

Ցավ յերբ հեղինակը ասում է. այո՛, դեղեցիկ եր կախարդական կղզին, դուք համաձայնում եք խոսքի կախարդ վարպետի հետ։

Վայրենի բնության նկարագրի հետ մրցում և հուլտուրական մարդու մշակած բնության պատկերացումը։ Հայ մարդու առեղծվածային աշխատանքը, նրա կռիվը հողի, ջրի և քարի հետ՝ հանճին Բաֆֆու դուել և իր լավագույն պատկերացնողին։ Այդ վեպի մեջ դուք տեսնում եք մեր աքանչելի հայրենիքի նույնքան աքանչելի ընթեր խաղողը իր ծանր հյութալի վողկույզներով, տեսնում եք կարմիր խնձորը գնահատա աղկիա թշերի նման, տեսնում եք ծանրաբարո սոնձը, վոր գլուխը ծռած ձեղ և վողջունում, տեսնում եք համեստ դեղձենին, վոր թաղնվել և հակա ծերանիների հետևում... Նույնիսկ վո՛չ միայն տեսնում, այլ և խմում եք նրանց հյութն ու բուրմունքը, այն նեկտարն եք վայելում, վոր վողնվորել են մեր պապերին, մեր հոյակապ Գողթան յերդիչներին... Ամեն ինչ խոսում է, ամեն ինչ լեզու ունի Բաֆֆու մոտ։ Նույնիսկ մեր խաղողի այդիների հովիտն ցած պատերը, վորոնք բաժանում են մեկ այդին մյուսից. դա էլ այս պատմական վեպի մեջ գործող անձն է և զբաղել է արժանացել ղրվատների. ճշտա անդամ,— ասում է Բաֆֆին,— հայոց այդիների այդ ահագին լաբիրինթոսը կլանել եր քշնամիների ահագին զունդերը։

Քշնամու համար ահավոր մեր բնությունը իր հսկայական լերդիններով համար դիտում մի մայր է. բարեբաղդրեթ սարերի կատարները, վորոնք մրցում են ամպերի հետ, հաճախ կռվի պահ են դառնում հալածող ինավլինների համար։ Գեղեցիկ և մեր բնությունը, բայց քշնամին չի կարող տալիս վայելել նրա գեղեցկությունը։ Բաֆֆին իր վեպի գործողությունը բաց և անում լեռնային Հայաստանի գարնան հոյակապ նկարագրությամբ. և իրրև հակադրություն (ինչպես Արամյանը իր ուրախ բարեկենդանում) քաղաքային սխուր իրականությունն և ավելի չեշտում. Վ.Ուս և սխուր հասանդամ վարում եր Աբածանին,— դրում է Բաֆֆին,— կարծես չանհանգստ համար այն զազանային անդթություններ, վոր այս առավոտ պետք է կատարվելին նրա ակների մոտ։

Բաֆֆու մոտ դիտողականությունը վատատոմությունն չե. նա դիտած յերևույթը միշտ կապում է իրեն ծնող պատճառի հետ պատճառների հետ։ Այդտեղ արտահայտում և նրա ընդհանրացնելու տալանդը, վատից բարեբանալու և այն մի բարեր դեղարվեստական դիտակետից նայելու ընդունակությունը։ Ինչ դիտողականությունը տարբերվում է նատուրալիզմից իր այդ ընդհանրացնելու ուժով հետ, ինչպես Մաքսիմ Գորկին և ասում՝ ֆիտիկի մեջ թաղված սոցիալական կյանքի խմատոր պատկերացնելով։ Այդ հատկությամբ էլ առդրված է Բաֆֆու պատկերավորությունը, խոսքի կոնկրետացումը։

Բաֆֆու մոտ, ինչպես և Մուրացանի մոտ, խոսք զարդացած և տեսողություն, այդ զդայարանի արտահայտ հզորությունը լցրել է նրա յերկերը խոսուն պատկերներով։ Նա կարողանում է ցույց տալ իր նկարագրած առարկան, կարողանում է այդ առարկայի տեսիլքը առնդել, նրան հանելով սովորական վիճակից և վորոշ չափով արտահայտ դրության մեջ դնելով։ Այդ միջոցով նա կարողանում է առնդել ուժեղ տպավորություն, վորը հենց պատկերավորության հիմնական նպատակն է։

Ներվածի բնդրի նկարագրության մեջ Արամյանը տալիս է այն դարավոր սարսափը, վոր կրել է հայ շինականը, հայ մարդը տարերների իշխանության տրոք։ Դա վո՛չ միայն տեղի, բնության տակ պատկերացում է, այլև այդ տեղի, այդ բնության հետ կապ-

ման հանրային ըմբռնումները: Այդպես է պատմում նաև Բաֆֆին: Նրա հետևյալ կտոր խոսքը շատ լուրջ բովանդակություն ունի. «Այդ խոսում եր ամբոխը իր կրկեսյան, հաճարիս լեզվով»: Այսպես խոսել կարող եր միայն այն հեղինակը, որի մեջ մեկ պատմական դիտողությունը, այլ և ստորև փոքր խանգարի Գարեգինատանում և պոմպեյական Ռատատանում բավական պաշար եր ժողովել զննդելու համար ճարտարի տրամաբանություն:

Այժմ անցնենք Բաֆֆու առանձնահատկության պանեիկային այն կողմերը ուսումնասիրելու, որոնց հետ կապված են դրական ժամանակների մեջ ամենամեծ խնդիրները:

VI

Հայ նորագույն գրականության պատմության, անաչառության, ժամանակակից և Բաֆֆու առանձնահատկության ուժեղ և առաջ կողմերը: Հայ հյուսիսի գրականության այդ անմահաշատ դեմքերից մեկը մեզ ուշադրության և գրավում իր պատկերի յուրահատկություններով. նախ՝ նրանը հետաքրքրական դարձնելու իր չզեղեցկագույն գրքույթներով, և ապա՝ արվեստի նպատակասլաց ակտուալության այն համոզումով, որ իր հերթին Մայակովսկին ևս դավանել է.

...Чтоб к житку
Прировняли перо.



դարաշրջանի մեծագույն պահը հարձակվում է նրանց վրա, ովքեր ուզում են դեղատնին անջատել իր ժամանակի հրատապ քաղաքական խնդիրներից: Հասում են,— գրում է նա,— Մայակովսկին բանաստեղծ է, թե՛ր բանաստեղծ մնա, նախ իր բանաստեղծական խանութում... Թողել եմ իմ բանաստեղծ լինելու վրա: Ես բանաստեղծ չեմ, այլ ամենից առաջ մեկը, որը իր գրչի ծառայության է դրել, լսեցե՛ք, ծառայության է դրել այսօրվա պահին, ներկա իրականության...»:

Բաֆֆու առանձնահատկության ուժի ժամանակակիցներ լինելով, մենք պետք է ամենից առաջ ուսումնասիրենք պատմական վիճակը հետաքրքրական դարձնելու նրա արվեստը:

Ամավելքը մի հետաքրքրական, բովանդակալից վեպ է: Եպոխան տեղեկացված է բավական ընդարձակությամբ, իր բոլ քաղաքական և բն փիլիսոփայական հասանքներով: Հեղինակը առանձնել է մի բարդ իրադրություն, բայց նա կարողանում է ընթերցողին չհոգդրդել դրանով, սերնդի ղեկավար հասանքներից մեկը: Հայ ազգային դիտակցության ամենամեծ նպատակ նկատելով, հեղինակը կարողացել է լուսամ առանձնել, դնդքերի դրամատիզմը ուժեղացնել, ընթերցողին զնել ապատողական վիճակում: Բաֆֆին կարդացած է և կարմանվել իր պատմավեպի գրվածքությունը, կարդացած է դա դարձնել հրատարակի և ուշադրավ:

Գործողությունը— դնդքերի շրջակայքում է անմանում Արեւատանը: Բաֆֆին կարդացած է շրջակայքը իր վեպի վայրերը՝ հենց առաջին գլխից սկսելով իր աշխատանքը: Վեպի առաջին գլուխը վերնագրված է՝ Ճերմակ աստղանշանները, բայց այդ գլխի մեջ նա խոսում է միայն մեկ աստղանշանի մասին, դրանով վառելով մեր հետաքրքրությունը՝ լուսաբանելու համար: Այդպիսի հետաքրքրության վառելու ամենաբնական ուժն նաև Դոստոևսկուն: Ճերմակ կատարումների մեջ ընթերցողը գրվում համոզված է, որ հայրասպանը Դմիտրին է, բայց հետագայում է, և այդ կասկածը վառում է նրա ուշադրությունը և բավարարվում խնդիրան ապատողին գտնելով:

Այդ հնարում մատ լինելով Դոստոևսկուն, Բաֆֆին նրանից տարբերվում է իր պատմավեպը իմպրեսիոնիստ համամատարար պարզությամբ. նա դնդքերը երբ վրա չի հատկացնում. հատարկ տյուժետ մի ջոգով և տալիս պատմական մասերի հարաբե-

քյունը: Հայ ժողովրդական զորքի մի չորք հազիանակները նկարագրելով, Բաֆֆին կարողացել է հաղթանակը արդարացնել կոլի զրկել զորավարները մերկացնելով. այդպես են վարվել նշանավոր ռազմագրքի պատմավիպասանները, որինակ, Տոլստոյը իր «Պատերազմ և խաղաղություն» եպոպեայում:

Բաֆֆու մոտ շատ կարևոր է նաև կենցաղագրությունը. նա չի նկարագրում կենցաղը— կենցաղի համար. նրա մեջ կենցաղը անքակտելիորեն կապված է զորձողության հետ. որինակ, աշուղների կենցաղի նկարագիրը նա կապում է պատերազմական անցքերի հետ և նրանց կռվելու մեթոդների հետ: Կենցաղը և զորձողությունը միացնելով, հեղինակը կարողանում է առնձնել ամփոփ դրվագներ. նրա վեպի յուրաքանչյուր դլուխը մի միաձույլ կերպարանք է. ճիշտ է, մյուս դլուխների հետ կապված է, բայց դլուխը մի միասնություն է իր հատուկ ներքին միությունը և ամբողջությունը իրրև մի ամփոփ նկարագիր կամ պատմվածք: Այդպես են, որինակ, հռչակավոր «Անուշ բերդ» և «Պատմոտ դլուխները»:

Իր պատմավեպի առանձին, ամփոփ դլուխները իրար հետ կապելու մի առանձնություն ունի Բաֆֆին, վոր նա փոխ է առել արևմտյան վեպի ժանրից. դա հատվածը վարպետ հարցով կամ խորհրդավոր հանդիպումով վերջացնելն է, վոր ընթերցողի մեջ հետաքրքրություն և առաջ բերում՝ ընթերցանությունը լարված կերպով շարունակելու: Որինակ. Սամվելը մորը խարում է, թե վորսի չեմ գնում, վեպի այդ դլուխն էլ վերնագրված է «Վորսորդություն», բայց մի՛չ մի վորսորդություն տեղի չի ունենում. փոխանակ վորսի հանդիպելու, Սամվելը հանդիպում է Մալխասին: Ցավ ահա՛ Բաֆֆին այսպես և վերջացնում այդ առանձնակ դլուխը. «Վորսորդության պատրվակով դուրս դալով ամբողջ, այսոր ևս Սամվելը վորնէ չվորաց, բայց նա պատահմամբ վորսաց մի մարդ, վոր իրեն հարկավոր էր»:

Այդպիսի խոշորդրավոր ակնարկներ շատ է անում Բաֆֆին, վորոնք այնուհետև պարզվում են և ընթերցողը միանդամայն բավարարվում է: Մի յերկու որինակ ևս բերենք. «Ընթերց յերեսատարեղներ» դլխի մեջ հեղինակը դիտում է. «Ընթացք նասած էլին այն անցյակում, վորի հիշ անցյակը մի շատ սխուր հիշատակով կապված էր Սահակի (= Գարեգին. Ա. Տ.) առհամային պատմության հետ»: Բաֆֆին անմիջապես չի պարզում, թե դա ինչ շատաւոր հիշատակ է. այնուհետև մի քանի էջերից հետո պարզվում է, վոր այդ անցյակում յեղեռնագործություն է կատարվել. «Հուսիկին յերկու վորդիները՝ Գասպ և Աբգանուհին՝ ապրելիցան մեր անցյակին հիշ դահլիճում»: Ինչերը պարզվում և ատանելու հետո:— Այդպիսի մի ակնարկ կա նաև «Յերկու հարյոր փոքրադրքը» դլխի վերջում: Մուշեղը չի ուղում Բյուղանդիա դնալ, բայց Փառանձեմը պնդում է և հարկադրում նրան, վոր դնա. «Ես ընդունեց Քաղուհու առաջարկությունը և դնաց: Բայց Քաղուհին սուժեցը: Չի ատում ինչո՛ւ. դա պարզում է հետագայում...

Հետաքրքրություն շարժելու իր այդ պրիմներով Բաֆֆին շատ է նպատակ ս դարձավել մեզանում ընթերցանության դործին: Բայց դա նրա վաստակի մի մասն է, մյուսը— վեպը ակտուալ հասարակական բովանդակությամբ լցնելն է, վորի նշանակությունը ավել է հենց ինքը մեր պատմավիպասանը՝ դրելով. «Բանաստեղծը ստեղծում է բարձր հանրամարդկային դաղափարներ»:

Բանաստեղծին այդպիսի նշանակալից կոչում տալով, Բաֆֆին իր պատմավեպի մեջ իրագործել է իր այդ բնեը, առնչի դաբձնելով բանաբությունը, պաշտպանելով ազատ հայ հայրենիքի դաղափարը: Նա իր այդ վեպի մեջ հասել է իր ստեղծագործության ֆինալին, ասած աշխարհակալության հայ ժողովրդի առջև բոլոր վերջերին անմոռաց լեզու տալով: Հուլիոս Կեսարի դիակի առջև Մարկոս Անտոնիոսն ասում է. «Ձեռ հոգսոր չեմ,— յեթե յես իրաստոսի խոսքի ուժն ունենայի, կնասրի բոլոր վերջերին լեզու կտայի, և այն ժամանակ նույնիսկ Հռոմի քարերը վորի հիմնդնային, կոպտամրե-

յինից։ Բաֆֆին ուներ Բյուռոնի խոսքի ուժը. և նա կարողանում է վոտքի հանդնեցնել ժողովրդական Հայաստանի բոլոր ջոկերը դաժան ինաեքվինոների դեմ։

Հայ պրակտիկ քննադատության մի մասը աշխատել է Բաֆֆուն ամբողջապես տալ բուրժուազիային, նրան մեխանիզմից կտրելով հայ ժողովրդական պրակտիկայից։ Մի այնպիսի մեծ վիպասանի նկատմամբ, ինչպիսին Բաֆֆին է, դա, ի հարկե, անալ մոտեցում է. նրա ստեղծագործության մեջ բուրժուազիան ամբողջ կյանքի հետ միասին կան նաև իրականության ժամանակ ուռուցնաքերության և խորացնում արտացոլում։ Իր այս վերջին հատկությամբ Բաֆֆին անդնամում է հայ ռեակցիոն բուրժուազիայի ամեհամանափակությունից և բարձրանում մինչև արվեստ համաժողովրդական հնդերները։ Այդ իմաստով չատ նշանի ին Բաֆֆու բանի համակրանքը Արովյանի, Նալբանդյանի և Դուբյանի նկատմամբ, նշանի ին նաև, որ նրա պատմական լավագույն տրադիցիաները յուրացրել և մեր դեմոկրատ վիպասան Վ.Թ. Փափազյանը, առանձնապես, իր «Ավետիքը» և «Աթա պատմվածքներում»։

Նման մի տանիքով չատ լավ է նկատել Մաքսիմ Գորկին, գրելով. «Դիտողություններ յուրյանների յուրյանությունը, հետաքրքրել հետաքրքրությունները հանճար պիտի ուժով, որը հաղթահարում է նրա անձնական վերաբերմունքը փոխանցին, նրա սուբյեկտիվիզմը։ Բայց որը սուբյեկտիվիզմն կտրվանից էր բուրժուական կարգին, բայց իր վեպերի մեջ նա պատկերացրել և անչջանության դեմ հիվանդությունը և տարբերությունը տալ ցույց անտոր պատրաստությունը։ Նրա գրվածքը չեն կորցրել իրենց դաստիարակչական նշանակությունը. դրական յերիտասարդությունը կարող է այդ հեղինակից լավագույն սովրել դիալոգ, անկախության և իրականության ֆետիշության լուծումներին և Ամաններին Մ. Գորկին անվանում է բուրժուազիայի ամառակ վերդիմներ։ «Բուրժուազիայի այդ վերդիններ պրակտիկությունը,— շարունակում է Մ. Գորկին,— արժեքավոր է իր քննադատական մոտեցումով դեպի իրականությունը, սակայն նրանք յերբ չեն ցույց տալ այդ հեղուտ անաբեխության մեջից, որը առեղծում են նորատուտ և հոխոցած մեչչանների»։

Ուստ անհրկեն պրոֆեսորներից մեկը՝ Շեխտով իր արևմտաեվրոպական դրակտիկության պատմության մեջ դուրս չցնում է իր ուսանողներին, որ նրանք չկարդան Բալզակին, որովհետև նա ուսանելի վոչինչ չունի։ Այդպես էլ մեկանում ժողովրդի քննության պրակտիկանների մեկը հայտարարել է թե՝ ժամանակակից պրակտիկ ստեղծագործներից

ձայնը հնչում էր ինչպես լեռնային գնչուները, վոր զբոսնում և ապառաժներին, գրկվում և դարավոր կեղևներին, աստիճանում է, աստիճանում և և ապա փոքր առ փոքր՝ մեղմանալով, վերջը խուլ-խորհրդավոր հնչյուններով հանդչում և ձորերի հեռավոր խորության մեջ...»:

Այդպես և Բաֆֆու վոճը. դղրդումները և մրմունջը դրկում են իրար, առեղծվով մնայուն խոսքի ձևերը: Լեզվական տեսակետից նա տալիս է հայ լեզվի պոտենցիալ ուժը, նրա դեղնցկությունը և պոեզիան: Նա նման էր մեր այն նշանավոր դերասաններին, վորոնք վոչ միայն իրենց դերն են խաղում, այլ և, ասես, տվել վրա ցույց են տալիս հայ լեզվի հրապույրը, վորովհետև են հայերեն խոսելու և հայերեն մտածելու. այդպես էր անցյալում Սիրանույշը, այդպես և այժմ— Արուս Վոսկանյանը, վորոնց լեզվի մեջ լսում և հայերենի նվագախումբյունը, ներքինն՝ չառանչը:

Բարձր վոգևորությունը, վոր տերում և տարողջ վեպում, ամենուրեք՝ բնորոշում և նաև հեղինակի վոճը, նրա համեմատություններն ու պատկերները, վորոնք ուրիշ տրամաններ մեջ կհամարվեյին, թերևս, տեղեվեր, զարդարուն, ճոճուն:

Լեռնաշխարհին ասել և՝ դեղնցիկ խոսելու համար կա՛մ պետք է պատկերավոր խոսել, կա՛մ կրքով: Բաֆֆու մոտ կամ-կամ չկա, նա խոսում է միաժամանակ և՛ պատկերավոր և՛ կրքով: Ի հարկե, մենք չենք ժխտում նրա վոճի մեջ ռոմանտիզմի առկայությունը: Վոնի ռոմանտիզմը Բաֆֆու մոտ կերևում է բոլոր այն դեպքերում, յերբ բարձր տրամադրությունը և վոգևորությունը չեն արդարանում իրադրության համապատասխան դրամատիզմով. այդպիսի դեպքերում նրա վոճը մերթընդմեջ և՝ անհատականացված: Չի անհատականանում հեղինակի վոճը այն դեպքում, յերբ խոսողը հենդամն և ունալ մարդ չէ, ուստի և նրա ճառախոսությունը համողիչ չէ դառնում: Որինակ՝ դերի բռնված մի գյուղի հոգևոր ճամարտակում և այն մասին, թե ինչպես մեծ վարպետությամբ իրեն գերադի հորը մարթնդերն և սրել. դա ծայրեծայր չհնդուն մի սեսարան է, հղիացնողին անհամոզիչ, ուստի և վոճի մեջ դուք դղում եք ինչ-վոր ռոմանտիկական արհեստականություն...

Հղիացնողին համոզիչ է դառնում Բաֆֆու վոճը, յերբ վերջինս լրջում է իրադրությունից: Ենրբ Սամվելը հանդիպում է իր հորը, հայրը չգիտե նրա հետագիցությունը. զղուշությամբ և մոտենում առաջադիր խնդրին և նրա վոճն էլ համապատասխան յերանգավորում է առնում: Այդ վիճակին Բաֆֆին տվել և մեծ դրողին վայել պատկերացում. «Ինա (= Սամվելի հայրը) դանվում էր այն ծանր յերկրայական դրության մեջ, վորտեղ մի մարդ, վոր սպասում և մահացնող վերջու մասին մի լուր: Սառնում և նամակը, բայց չէ համարձակվում բաց անել: Նամակը գիտե ավելի ավելանը վերջու առաղության, գիտե գիտե դաժան նրա մահը...»:

Դժբախտաբար մենք չգիտենք, թե ինչպիսի հնչողություն ունեցել Բաֆֆու լեզուն, չենք ցույց տալ վոճը դրա բաղկացուցիչ տարրերը, բարբառները, դրարարի, յեկեղեցական լեզուների առկայությունը այդտեղ: Շերվանզտյանն Բաֆֆու լեզուն համարել և արհնակելի իր ժամանակի համար, բայց հետագայում դանում և վոչը ինչ հնացած:

Պետք է ասել, վոր այդ լեզուն արհնակելի յե, վորչափով հեղինակն աշխատել և իր կյանք ամուր պահել ժողովրդական առեղծագործության հետ, իսկ այն դեպքերում, յերբ նա մեծ չափով դրարարի ազդեցության տակ և ընկնում — լեզվից փչում և արհեստական: Ենրբեմն Բաֆֆին դրարար հայտնի դարձվածքը չի բանեցնում, այլ վերցնում և ժողովրդականը. որինակ՝ ասի ընդ ասին, և ասեմն ընդ ասեման ասելու փոխարեն, դրի և ասում հետևարնակին խոսորնակ սերուն ժողովրդական ասացվածքը:

Բաֆֆին ինքը խոստովանել և, վոր դեռ մանկությունից սիրել և ֆոլկլորը: Նրա ստացը, ինչպես և Մ. Գորկու ստացը, ասվորացրել և ժողովրդական բանահյուսությունը հանդչել: Իր «Ստատ» պատմի մեջ հեղինակը խոսել և այդ մասին: Բաֆֆին հավա-

քել և ժողովրդական բառ ու բանը, ոգեշնչվել և նվագելիս արվեստ։ Դյուլբերյանի ամենուրյունը ոգեշնչվել և վճռվելիս մեջ։ Այդ բոլորը անհնար չի անցել նրա լեզվի համար։ Կենսագիր Ավետ Ավետիսյանը խոստովանում է, որ Րաֆֆին մասնավորապես էր պահում և լուսե յերգերն ու պատմվածքները գրի առնելու համար։ Մի առիթով Րաֆֆին հանել է բազմաթիվ բառեր և դրական գրվածքներ ամենից առաջ դրանց։ արձնիկներ.— աբկել, ծամել, չափաուտ, ավելչել, քուխել, քաժ, և այլն։ ժողովրդական ասույթներն բառերանն ևս ոգեշնչվել և մեր պատմվածքներում։ արձնիկներ. փորցալ ունենալ (= հետին մեռք), ընթանալ միչ (= յեռակոն), մեռիկ անել (= չունչ), ծնկին նման քիվել (= ասիակիլ), խամից հանել, գլխի վրա նստեցնել, բերի վրա ունենալ, և այլն։ Րաֆֆին պահել և նաև ժողովրդական բանաստեղծության հիպերբոլիզմը։ արձնիկներ. չվառուբակներ լեռներ հավիտենից դարերով են ապրում և հաղիվ են ծերանում։— ջենքինքի աստղերը քիչ և համրորք ունեն, բայց նրա (= Մերուժանի) անասունները չունեն, և այլն։

Բայց դրա հետ միասին կա նաև մերոշ դրամաբերիմ։ Դրամերի մի հայացք ամենայն բնության Րաֆֆու պատմվածների մեջ— բնականոն յերևույթ է, դա հենց այն հատկություններից մեկն է, որ առնդում է գրքի կոլորիտը, յերանգավորումը։ Յոսոնների լեզվի մեջ դրամերի մերոշ հետքեր ընդունելի կին, բայց Րաֆֆին յերբեմն իր կողմից ստեղծների մեջ ավելորդ դրամաբանություններ և մտցնում։ արձնիկներ.— անկերծանելի, յանջաց (= յանջերի), սիրտանման, տարտիկ, հեղած (= քայած), ահյալ, մի բան մեկին, զոդաձևուր, աբջացալ, արտուտա, արտաքցալ, հարց (= հարցերի), համեցողություն (= զանդողիկություն), հորեւյալ, հանդերձյալ (= ապագա), ապաշխարություն, վառ (= դռնշակ), և այլն։ Րաֆֆին ունի այժմ մեր գրքում այլ ևս անդրծածանական լեզվական արտահայտություններ. արձնիկներ.— յուրնիվել մոր աչքին, մասնիր (= մասեր), վարաճմանց մեջ եր, ամեն մարդկան (= մարդու) մոտ, տարիքի գրվի և ածում տարբերի իմաստով, մինչդեռ այսօր տարբերը տարբեր իմաստ ունի մեր մոտ, մտանել (= մանել), և այլն։

Ի հարկե, այդ բոլորը չեն վերացնում Րաֆֆու աշխարհին, ժողովրդական մտածողությունը, նրա մոտ պարզությունները, չհավելությունները, որ նրա լեզուն դարձնում են միանգամայն մատչելի։ Առանց մատչելիության, ինչպես հայտնի է, չի ժողովրդական գրականություն։ Այդ մատչելիությունը ավելի ևս բնորոշում և Րաֆֆու սոցիալական արվեստի վրա, որի մասին մի քանի խոսք պիտի ասենք։

VII

Նախ քան վերամիավորը լույս ընծայելը՝ Րաֆֆին հոգ դրականությանը ավել եր մի շարք տեղեր, վորանք մեծ ժողովրդականություն կրեն վայելում։ Վորո՞նք կրեն այդ տեղերը.— Տեր Թադեի, Մատնյան, Թովմաս Աբենդի, Թավոր Գևորգ, և այլն։ Այդ տեղերի գծագրության մեջ հեղինակը ցույց եր տվել սոցիալական ընդդիմության բնույթը, դրա հետ միասին կռնկրետ, պատկերավոր մատնոցություն։ Բացատական տեղերը նկարագրելիս նա անձնական կապել եր վատ, հետևում մեկնաբերի հետ և դրանով նպատակ հետևել լավագույն ճանաչողությանը։

Րաֆֆու տեղերի ընդդիմության բնույթն և ունեվերաբերիմ նշանակից մեկն էլ այն է, որ նրա մի շարք դեմքերը ընդհատ բնոց տեղյանության, հայ մեկնաբերի ծնունդ լինելուն, յեվրոպական գրականության մեջ ունեն բնոց համապատասխանները. արձնիկ. Տեր Թադեի. այդ մանկասպան մանկավարժի տեսակը Դիկենսի մի շարք դեմքեր ունի. դրան համապատասխանում է Շեմալիի կոպեքինկի մեջ Կրիկլը, Ենիկոլայ Նիկոլեևի մեջ Սկվիրսը, Շեմրի և վորդուց մեջ Բլիմբերը...

Բաֆֆու Մասիսյանն ևս լայն դիապազոն ունեցող տիպ է։ Ժլատության մարմնացում լինելով, նա միևնույն ժամանակ բնորոշ է իր դարաշրջանի համար։ Մոլեռեռ Հարությունին լանտնը համարում է ժլատի վերացական տիպ։ դա սխալ է։ Մարքսը ցույց է տվել, որ կապիտալիստական հարաբերությունների սկզբում ժլատությունը հանդես է ուժեղ կրքի տեսքով։ Այդ կիրքը կա նաև մյուսներ, բայց ժամանակի ընթացքում վերջ կնրքով։ Նույնը կարելի է ասել Մասիսյանի մասին, որին Գոգոլի գլուխներին հետ են համեմատել։ Բաֆֆին չատ կարճ ժամանակ զբաղվել է այդ տիպով, տալով դրա մի քանի նախատիպերը իր մյուս կերկերի մեջ— Աղազարոնով, Ջանջուր Իլանիչ, և այլն։

Այդ բոլորը նկատի առնելով՝ մենք կարծում ենք, որ սխալվում է Լևին Մանվելյանը Բաֆֆուն սուբյեկտիվ դրող համարելով։ Բաֆֆու մեջ կա մեծ չափով սրտնեղելու կարողություն։ Ցավ հենց այդ հատկության պատճառով նա ուշադրություն է դարձնում ընկերության մահացնում է ժողովրդին այն ժամանակ, երբ իրերպական մեջլավորում վիրապրությունը սկսում է իր վայրկյանը։ դեկադանսը։ Հենց այդ դեկադանսի մեջ է տեսնում զրողները անհոգ սուբյեկտիվիզմը, որ արտահայտել է Սա. Ճեմյոը հետևյալ տողերով. «Իսկական արվեստը կատարյալ է, նա իրենից և իր կատարելությունից դատ ոչինչ չի ուզում. իսկական դեղդեղը պետք է մոռանի սոսկ իր կերկի մասին և վազ ըն այն մարդկության մասին, որին առաջադրում է իր կերկը։ Այդ տեսակետը հենց մի դիտողություն է այն բանի, որ դրականությունը արդեն հետանում է ժողովրդից, sich abkapsulen, այսինքն իրեն փակուսի մեջ է դնում, ինչպես ասում են գերմանացիք։

Այդ հետացումը շատ վարչ կերպով տեսնում է կանանց հարցում։ Դեկադանսը կնոջը համարում է սոսկ հաճույքի առարկա, մինչդեռ Բաֆֆին նրան կոնչում է արիության դրծերի համար։ Այդ իմաստով շատ բնորոշ է նաև Մ. Գորկու վերաբերմունքը կնոջ նկատմամբ. դա պատահական հինը չէ, Դյոթեյի հավերժ կանացիականը— Ewig-weiblich –ի ներկայացուցիչը. ա՛յ չ. նրա իդեալը ակտիվ կռվող կինն է։ Այդպես է նաև Բաֆֆու մատնությունը։ Սաֆենիկը Մուշեղին առաջարկում է մնասին կռվի դնալու, որպեսզի դարմանի ժողովրդի վերքերը։ Բայց դերության քրոջ հետ մնասին Բաֆֆին ավել է նաև ռազմիկ հինոջը— Աշխենին և նրա պահանջկոտ սերը։ Վա՛յ մնայն պատերազմի դաշտում, այլ և աշխատանքի ֆրոնտում Բաֆֆին նկատում է և յերդում է հայ աշխատավոր հինոջը։ Նա հատկապես խոսում է շինական աղջիկների աշխատանքի մասին, որը խոչընդոտում է ինտելիգենցիայի հետևանքով։ Ամեն առավոտ, յերբ ծագում էր ամենյան լուսատուն, նրա առաջին ճառագայթները վողջունում էին շինական աղջիկների աշխատանքը։ Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, վարպես կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներ, սիրուն էին լինում նրանք այդ դաշտերում, բանջարանոցներում և պտղատուներում։ Ցնծում էին և դրծում էին։ Ցավ նրանց ուրախությանը ձայնակից էր լինում յերգասեր սոխակը։ Իսկ այս առավոտ չէին յերևում անհոգ մշակուհիները այդ դեղեցիկ դարտերը։ Այդիները մնացել էին անխնամ, դարտերը կորցրել էին իրենց սիրուն բանվորներին»։

Մինչև «Ամոլները» լույս ընծայելը Բաֆֆին ցույց էր տվել իր առեղծադրծության մեջ արյեկտիվ կյանքի ճանաչողության բարձր աստիճան։ Նրա տիպական սրվեստը— իրականության դիմանկարը պատկերելու մի մեջոց էր։ դրա մեջոցով նա հասել էր իր ժամանակի խոսքը կողմերի դեմ։ Նրա ժողովրդականացած տիպերը հեղնականորեն ուղղված են կղերա-ֆեոդալական, բուրժուա-վաչխառուական հասարակության դեմ։ Այդ տիպերը մի կատարյալ հարձակում էին հետադիմության դեմ, հետևապես առաջավոր մի քայլ էին իր ժամանակի համար։ Այդ տիպերի միջոցով Բաֆֆին ցույց է տվել, թե ինչպես մտավոր անհատականության և անձնական շահի պայքարը պայմանավորում է

մարդուն, նրա մեջ ստաջ բերելով հրեշավոր գծեր: Այդ աշխարհն դեմ նա բանեցրել է նաև իր բրիծողի դիրքը:

Դժբախտաբար մինչև այսոր Բաֆֆին դեռ չի ուսումնասիրվել իրրև ֆելիետոնիստ: Իսկ այդ ժանրի մեջ նա մի շարք մերկացումներ է արել, բանեցրել է հումոր և սատիրա: Այդ իմաստով չատ բնորոշ է «Պատանավոյ վերնագրով նրա մի ֆելիետոնը: Պատանավոյը— դա Թիֆլիզի հիմնադանցներից մեկն է: Ընդհանրական ֆելիետոնների մեջ նա կռվել է իր հակառակորդներն դեմ, նրանց խոսուն անուններ տալով.— Բաբայան, կապիկյան, Լարվարով, Մատակյան, Քամբեռ, և այլն: Հետաքրքրական է նկատել, որ Բաֆֆին իր բրիծողական դրծերի մեջ մեծ հաջողությամբ բանեցրել է թիֆլիզյոց բարբառը...

«Ամմվելի» մեջ էլ վայլում է Բաֆֆու բրիծողական տաղանդը: Եվրի հումորական, բրիծոնգով և տալիս ծերունի Աբրահի մի քանի ամսորությունները, Մնարոյի ստացյությունները, դրա հակառակ այրող ամրիայի և բանեցնում, բերը Տանատուհու պարկամալությունն և ծաղրում, մանավանդ այն դեպքը, բերը կատուն ուտում է շարպատնը թուչունին...

Բաֆֆու սիրուհիների ուժեղ կողմերից մեկն էլ այն է, որ նա բերեմն ընթերցողի աչքի առաջ հառնացնում է փոքրիկ հերոսի. այդպես է մանուկն Արտավազդը վեպի սկզբում այդ անհող մանուկը վերջում արդեն դառնում է քաղաքական հասուն կռվող՝ իրատարծություններին մեջ հերոսանալուխովելով: Սա արդեն Շեքսպիրյան պրիսմ է. փչ թե պատրաստի ունկնդրատ, այլ դրծի ընթացքում համոզել: Արտավազդի պես չատ հինդանի չեն դուրս գալել նաև «Ամմվելի» մյուս փոքր մարդիկը — Աբրահը, Հուսիկը, Մալխասը: Առաջինի դինվորական պարզությունն ու չհասկությունը, երկիրդրի հինսամնդությունը, երբերդրի ժամքի պես արտդրությունը և դեի պես ճարպկությունը հինդանություն և պատկերացում են առացել: Նրա քան «Ամմվելը», իր տիպական դրծերի մեջ ևս Բաֆֆին կարողացել էր առել փոքր մարդկանց մի ամբողջ գալերա.— Մհհն, Ջալոն, Մսաոն, Սիմոն պատվելին, Հաջի Խանդին, հրեա վոսկերչը, և այլն: Բաֆֆու ժողովրդասիրությունը բուռն թափով յերևում է բոլոր այն դեպքերում, յերբ նա ժողովրդի մեջից դուրս գալած հերոսներին — վո՛ր ազգից ուզում է լինեն — ներկայացնում է արժանավոր և ատաքին. առանձնապես ցուրդ աշխատավորության ներկայացուցիչներն մասին նա խոսում է մեծ համակրանքով...

Տիպական արվեստի կողմից «Ամմվելին» դլխավոր արժանիքն այն է, որ այդտեղ ամեն մի մարդ միությունը, որ գալի բոլոր առանձին մասերն է թափանցվում: Դա հարցնասիրության պատքան և դալաճանության դեմ: Թե մեկը— հարցնասերը, և թե մյուսը— դալաճանը Բաֆֆու մոտ հանդես են դալիս իրրև պատմական հառնքի արտահայտիչ: Մարքսը լասսալի ֆիլոսոֆիա պատմական արտդեդեալի մասին նկատել է, թե այդտեղ ճիշտ են դծված դրծող անձերը. դրանք վերջ դասակարգի ներկայացուցիչներ են, նրանց դրծերի մղիչն և պատմական հառնքը. մի տասնյակ տարբերություն բան կա նրանց դրծերի մեջ. բայց դրա հետ միասին դրանք պիտի անհատներ լինեն, դեմք ունենան: Վո՛չ թե միայն հարևոր և, թե ինչ են անում, այլ թե ինչպես են անում. վերջինիս մեջ և անհատականությունը, վոր հարկավոր է դիտարվեստական դրծի մեջ:

Եվրի Մարքսի այդ ցուցմունքով մոտենում ենք «Ամմվելինդ, նկատում ենք, վոր դա մեր լսոտուն պատմադիտրվեստական առնդծագործություններն է:

Նախ՝ վերցնենք դալաճաններին տիպերը, ապա՝ հետևենք հարցնասերներին:

Տանատուհին, Վահան Մամիկոնյանը և Մերուժանը դալաճաններ են: Բաֆֆին կրողացել է նրանց դալաճանության հիմքում դնել վերջ առցիալ-քաղաքական դաղափարախոսություն: Բայց դրա հետ միասին ամեն մեկին ունի իր առանձին դիմքը:

Նախ՝ Տաճատուհին։ Ամենքը Սամվելի մոր մասին այն կարծիքն ունեին, որ նա չար կին է, մինչև անգամ հրեշ է։ Թեև նրա տարիքը հիսունի մոտ է, բայց ամեն հերթ ձգտում է մանկահասակ հարսի տպավորություն գործել։ Այդ հինը միշտ կամակից, միշտ համաբարև էր իր ամուսնու հետ, որովհետև ինքն էլ նրա պես փուռ ուներ և պարապմունք էր։ Բաֆֆին հալող և գծում հինով մանրակրկիտ հոդին այն հաղորդության ժամանակ, երբ Տաճատուհին պետք է պարսիկ բարձրաստիճան հյուրեր ունենար։ Նրանց բավականություն պատճառելու համար վորոշել է տալիս մի ոսկոր, վորովհետև վերջինս պարսիկների մոտ սրբազան կերակուր լինելու համբավն ուներ. հետո նրա ցավը, երբ կատաղ խնդրում է ոսկորին։ Փառասիրության հետ միասին Տաճատուհու մեջ կար և նախանձ դեպի սիրուն, քաղցրաբարո վորմիղուհաները. նա յերեխայի պես ուրախանում է, երբ այդ պարսկուհին դուրս չի գալիս հյուրերի առաջ, վորովհետև ինքը առջևի մեջ չի մնա, կդրավի ամենքի ուշադրությունը։ Նա ամուր բնավորություն ուներ, ուստի և դիտեր ամենամեծ ստինուվրայության ժամանակ պահել իրեն զուսպ և առանձնաբար։ Դրա հետ միասին նա հին էր և վորոշ կանանց զինքը— լացը՝ ուրախ ժամանակ պատրաստ էր ծառայելու նրան...

Ներկորդ դավաճանը— Վահան Մամիկոնյանն է։ Սա պարսկասիրական կուսակցության վո՛չ միայն պարսիկի դարձրին է, այլ և խղճմտանքը։ Նրա մեջ չատ վառ դիտակցություն կա վո՛չ միայն իր անելիքի, նպատակների, այլ և այդ բոլորին առնչություն ունեցող ուրիշների մասին։ Նրա անձնասիրությունը իր հարստությունների նկատմամբ, Մերուժանին ուշադրությունը, Արշակունիներին հոգով առնելը, պարսիկներին խրախուսելը,— այդ բոլորը նրա մեջ դիտավորյալ դիտակցական են, հշտապատրաստված են։ Նրա բնավորության մեջ հանդես չեն գալիս այն տատանումները, ինչ վոր հատկանշական են Մերուժանի համար։ Բաֆֆին նրա պատկերը հարմարեցրել է ներքինին։ Ենթա վորը ինչ խոսք դիմքը արտահայտում էր հատուկատիպ մարդու. Քե համառությունը, և Քե անձնասիրությունը, յերբ այդ պետք էր։ Բնական մարդը, իսկական հայրը հանդես է գալիս, յերբ Վահանը հայտնվում է նրա բանտում։ Ներկայ ժամանակ հայրը վորդուն չէր տեսել և այժմ հիանում էր նրանով. տեսնում էր, Քե ինչպես նա մեծացել, դիպչկացել, ուսուցացել էր, և մարդ մեջ հորինում է մի գլուխ ապագա իր վորդու համար. ազնվական հոր գլուխ մշակվելիական տենչն էր խոսում նրա մեջ, յերբ նա հավատացնում էր ինքն իրեն, Քե Շապուհը Սամվելին սեղանավոր։ Հայր ձեռքով հիմքում նրա համար մի հրապուրիչ, արժանավոր ապագա, վորով Մամիկոնյանների տոհմը կվառավորվի։

Ներքորդ դավաճանը և միևնույն ժամանակ դավաճանական ամբողջ շարժման դիմիսյորը— Մերուժան Արծրունին է։ Անձնասիրասեր, փառասեր, անզուսպ և անվախ մարդ է։ Նրա այդ բոլոր հատկությունները վճռել մեջ առցել են պատահեցրած։ Այդ մարդու մեջ, ասկայն, Բաֆֆին դրել է և՛ սիրո թուլություն, վոր ազդ չի գալիս նրան։ Մի յերկար մինամտության մեջ Մերուժանը խոստովանում է, վոր ինքը դավաճան է դարձել վո՛չ Քե սիրուհուց, այլ Վորմիղուհուի սիրո պատճառով։ Նա իր բոլոր արածներն ու անելիքները դատապարտում է. սկսում է լաց լինել, դժգոհել իր սիրուհուց, վոր այդքան ծանր զոհողություններին պատճառ դարձավ։ Այդ բոլորը միանգամայն անհամոզիչ է։ Այնպես, ինչպես վոր նա հանդես է գալիս վերում, վորքան էլ ցույց է տալիս դրծողություններով, այն կարծիքը, վոր ամենքը ունեն նրա մասին— այդ բոլորը վոչ մի հիմք չեն տալիս Մերուժանի ամբողջ դործը մի սիրային ճղճիմ տրիամ համարելու։ Մենք չենք ժխտում, վոր սերը կարող էր, հարկավ, նրան վարվել, նրա նպատակներից մեկին էլ կարող էր լինել գերազանց Վորմիղուհուին տիրանալը,— բայց դա իրեն յեղակի հիմք, անպայման խոչոր ու չինծու չի։ Ներեր այդպես լիներ, Վորմիղուհուի մերժումից հետո, յերբ վերջինս չի ուզում Մերուժանի յերանին անգամ տեսնել, վերջինս պետք է տատանվեր, մինչդեռ այդպիսի բան չենք տես-

նում է։ Նա հաբևանցիներին և ժառանգում և խորհում այդ դեպքի ժամին... Սերտորեն սերտ վեպի մեջ կարող էր բոլորովին ուրիշ բնույթ առանալ, եթե Մերուժանը վարժապետի հետ ծանոթ լիներ, եթե մեջտեղ փոխադրած մեր դպրոցական ներ, եթե վարժապետը մի հասուն աղջիկ լիներ և բարձրահասց, պայման դներ իր սերը ստանալու փոխարեն, եթե Մերուժանը քաղաք տերանար։ Այդ բոլոր հնարավորություններից մի՛ մեկը դպրոցական չունի։ Մերուժանը վարժապետին անծանոթ մեկն է։ Նա հայոց նախաարարին չի տեսել, չի էլ ճանաչում։ Ինքը պարտուհին մի միամիտ արարած է, կատարյալ յերեխա։ Այդ մի փաստը անել, մի՛ չէ մի բարձրահասցեություն չունի... Այդ սերային ռոմանտիզմը յեթե մի կողմ դնենք, պետք է ասենք, որ Մերուժանը հիմնականում հաջողված տիպ է։ անմոռաց է մնում ընթերցողի հիշողության մեջ նրա դառն ծիծաղը ամեն տեսակ տարնական բանականում։

Պետք է նկատի առնել մի հանգամանք։ Բոլոր պատմվածքի մեջ դեմքաններ պարզում են։ պարզում են վեչ քիչ իրենց անձնական թուլության հետ անշնորհքության պատճառով, վեչ։ այլ, վերջիվերջ նրանց ամ դրծի դեմ է բուն ժողովուրդը, որ ուզում է պահել իր ազգային պետությունը։ Դեմքաններին թուլությունը նրանց հաարեկական անկեմանության մեջ պետք է վերցնել...

Այդպես չեն հայրենասերները։ Սրանց ուժը իրենց դրծի ժողովրդականության մեջ է պայմանավորված։ Այստեղ էլ վերցնենք յերեք տիպ— Սամվել, Մուշեղ, Փառանձեմ։

— Սամվելը քաջության մի տիպար է։ Դեռ պատանեկության տարիներում աչքի յե ընկել, վարպետ հմուտ և անվախ վարորդ։ Նա ջնջոցին սերում է դեն ու գրած։ Այնուհետև իր հորեղբոր՝ Վասակի՝ ոդնակիններից մեկը լինելով, շատ անգամ մասնակցել է նրա հայրենասերական հեռվերին։ Այդ հեռվերը նրա մեջ ամրապնդել են հասատուն համոզմունք ինքնուրույն հայ պետականության ոգին։ Նա հակատակում է մոր և հոր պարկամոլության դեմ, մանավանդ ջնջոց հայրենասերության յերեսից։ Այդ ջնջոց հայրենասերությունը լրացնում էր նրա մեջ փորձի և համոզության քերին։ Ցերբ խորք մայրը մատնում է նրա ապահովության մասին, Սամվելը պատասխանում է. «Ինչ կամենում ես ինձ վատության սովրեցնել, և մի յերկչոտ դինվորի նման կամի մեջտեղն փախչել պատերազմի դաշտից։ «Ժամանակավոր կառավարության իշխան հռչակել է Սամվելը, պաշտպանելով նրան ամեն գաղտնի ժողովում, որ դումարված էր Տարոնում։ Այդպես դրծունեության ծրագիրը և մշակվում։ Սամվելն չատապում է հորն ընդառաջ գնալ և նրա հետ հաշիվները որ առաջ մաքրել։ Ճանապարհին նրան հանդիպում է իր սերած ազգիկը— Աշխենը։ Վերջինս կողմից էլ Սամվելը վոգևորիչ խրախուսա և առանում։ Ցեվ մինչ դուք ապասում եք, վոր Սամվելը կշտապի ամեհանալխին հորը հանդիպել, բայց և այնպես մեր հույսը մնում է ապարդյուն։ Իրիֆին դանդաղեցնում է նրա ընթացքը. մի տարի նրան ապասել է տալիս, այդ դանդաղեցությունը բացատրելով ամեն հանդամանքով, վոր իր հերսի հոգու մեջ կռիվ տեղի ուներ, մի կռիվ, վոր նրան հիվանդացրեց, մահին մոտ մի ինչ-վոր պատահական վանքում, ուր նա սկսեց ապաքինվել։ Այդ բացատրության հոգեբանական հիմքը սխալ է։ Աշխենի հետ տեսակցության մեջտեղն Սամվելը հատատ խոսք և տալիս դնել իր հոր մոտ, բանավիճություն է։ Գիտ դնում են քշնամու բանակը։ Իմում է, թե նեքքին կռիվը, յեթե յերկել է, պետք թե ամենա լուծվել, վոչ յերբ է ունեցել... Մի բան պարզ է, վոր Սամվելի նեքքին կռիվը և հիվանդությունը պատմվածքում վոչ չափով ձգձգել և կոմպոզիցիոն հանգամանքներից առիթված, վոր կարողանա վեպի մյուս իրադարձությունները հանդես բերել...

Սամվելի հետ համեմատած Մուշեղ Մամիկոնյանն ավելի հավատարակշիռ բնավորություն ունի։ Նա Սամվելից 6—7 տարով մեծ է։ Հայոնի Վասակ դրծավոր վորդին է, ինքն էլ արժանավոր հրամանատար է։ Թե տանը և թե դուրսը սերում է պահել դինվորական կյանքի խստակեցությունը։ Սամվելի հետ համեմատած ավելի ամուր

սերա ունի. կտրուկ և և վճռական: Առաջին անգամ նա չի Սամվելին ատամնամածիքից հանում և վերջնական խոսք առնում վահանի դեմ գործելու համար: Պարսիկները նրա մասին այն կարծիքն ունեն, որ ըստ հայրենասեր է, փոքրամած և հմուտ պատերազմի դործերում. բայց այդ՝ նա ուներ ահագին հեղինակություն թե ժողովրդի և թե զորք

նույնիսկ հատարակական, քաղաքական ամենաթուն հեղաշրջումներից ժամանակ: Սամվելը կանգնած և լուրջ-լուրջ առաջ. նրա առաջ դրված և լուրջ ու ահռ՝ անհատականը և հայրենականը, որի՞ն առաջնությունը տալ: «Այժմ դնակ ո՞րը դիմել,— ասում է Բաֆֆին,— դնակ սերած որի՞ոդը, թե դնակ ուխատած նպատակը: Ցերկուսն էլ թանգ էին նրա համար, լուրջ ու սուրբ էին նրա համար: Բայց սերը կրակը ավելի վառ էր լուրջ սրտի մեջ: Նա թևև չմոռանց իր ուխատը, բայց— հետաձգեց նրանց: Այդ հետաձգումը դարձավ հակատագրական. Սամվելը իր ուխատը կատարեց այն ժամանակ, լուրջ իր հայրը Մերուժանի հետ միացած՝ արդեն ավերել էին Հայաստանի մեծ մասը...

Հարհրդային պատմական վեպի հետ համեմատած բուրժուական պատմավեպի լուրջ հիմնական թերին նացիոնալիզմի ոտիայությունն է: Մերուժան Արծրունին պատկանում է պարսիկների հետ բարեկամ լինելը, Գարակատանին յենթարկվելը նա համարում է հայերի միակ փրկությունը: Նա այդ համոզման է յեկել՝ համեմատելով հարևաններին և պարսիկներին և դերպատությունը վերջիններին վերապահելով բոլոր կողմերից: Բայց Բաֆֆու պատմավեպը ըստ եյության պարսիկների դեմ մի մեղադրական ակտ է, և վիպական դրվագություններ մեջ այդ նույն պարսիկներն ամենամեծ քննադատությանն են ենթարկվում և հենց նրանց քաղաքական դաշնակից Մերուժանը. պարսից դերը վախկոտ է, նրանց զորավարը, նույնիսկ ամենանշանավոր զորավարը՝ Կաբինը ստախոս է, պարծենկոտ է, մի խոսքով վերջին հայը բարձր է ամենատաղանդավոր պարսիկից... Նա պարսիկներին փոշ է համարում այն ժամանակ միայն, լուրջ քշնամին նրանց տալիս է վախչում է: Մերուժանի հետ միասին պարսիկներ մասին այդ կարծիքն ունի նաև ամբողջ դավանանական շարժման իդեոլոգը՝ վահան Մամիկոնյանը: «Մամիկոնյան իշխոնը,— ասում է Բաֆֆին,— վաղուց հասկացած լինելով այն ճշմարտությունը, թե վաղնդի ժամանակ պարսիկ դինվորը վրա հուլա չի կարելի դնել,— նրանց քողել էր իրենց կամքին:

Հարհրդային պատմական վեպի հետ համեմատած բուրժուական պատմավեպի լուրջ թերին nհզոնյորի ոտիայությունն է, այսինքն իր նկարագրած անց ու դարձի, հերոսներ մասին հեղինակի կարծիքը, վոր չի բղխում իրերի ընթացքից, այլ մեջ է բերվում չնչին և անհամոզիչ կերպով: Բաֆֆին ամերիկան բուրժուական պատմավիպասաններից լուրջն տարբերվում է նրանով, վոր իր չոլրած հերոսի մեջ դնում է ոնդնյորական հատկություններ՝ խղճի տանջանքի փաստաբկությամբ: Այսպես, որինակ, նրա մոտ ամենամեծ դավանանքը իր դործը համարում է ջոնթոլիզ, ջրորթաբանությունը, ամենասովոտ ցանկությունը, և այլն: Կռվի ամենատաք պահուն այդպիսի կարծիք ունենալ իր դործի մասին, դա նշանակում է այն ասուլ ասլ նախապես հաղթվածներին, այնուհետև կդա իրական փլուզումը: Բայց այդ բոլորի մեջ հեղինակի շատ մեկնաբանությունը շատ ավելի ոտիա չէ, քան դեպքերի արձկտիվ և իրական ընթացքը. ասանց նեղբին խղճի տանջանքի էլ դավանանությունը ատաքկայական հող չուներ. փոխանակ այս վերջինի վրա շեշտը դնելու՝ Բաֆֆին ատքել է մի հոդերանական ինքնատատասան ամենաանկական ատմոսֆերություն առեղծելու համար:

Մենք վերև ասացինք, վոր Բաֆֆին արտասովոր ժամանակաշրջան է վերցրել: Այդ պահուն մարդկային հոդերանության մեջ էլ կարող են արտակարգ վիճակներ առեղծվել. արնակ, մահվան յերկյուղ չունենալ: Այդ բանը ասլիս է հեղինակը: Բայց նրա մոտ յերբեմն դուբ կարծում ենք, թե դործողները վոչ թե մահկանացուներ են, այլ դերբնական արարածներ: Կախաղանի դատապարտվածները մտնում են կախաղանին. «ասկալե մեքենային» զվարթությամբ: Զվարթ մտնողները կանայք են... Այդպիսի հրաչագործում լինելու և նաև Սամվելի դիմադրությունը Մերուժանի նկատմամբ. հարը ազանում է, խոկ քնուն փրկում, վոր ավելի կատաղի քշնամի յեր, քան հայրը: Ինչո՞ւ:— Չդիտեի չէ:

Այդ բոլորը վերաբերում է մեղրամատիկի հոգեբանական մեծ ուժին։ Հենց մեղրամատիկի հետևանքն է այն, որ Վարդանը կարողանում է իրեն զսպել, չնայած Վարդանի ներքին ամբողջ էությունը ապստամբում է Բաֆֆու դեմ։ Վարդանը ոչ միայն չի ատում Բաֆֆուն, այլև ընդհակառակը, նրա մեջ տեսնում է իր ուսուցչին, իր հոգևոր հոգաբարձուին, որի հանդեպ ինքն իրեն պարտավոր է զգում։ Վարդանը ոչ միայն չի ատում Բաֆֆուն, այլև ընդհակառակը, նրա մեջ տեսնում է իր ուսուցչին, իր հոգևոր հոգաբարձուին, որի հանդեպ ինքն իրեն պարտավոր է զգում։ Վարդանը ոչ միայն չի ատում Բաֆֆուն, այլև ընդհակառակը, նրա մեջ տեսնում է իր ուսուցչին, իր հոգևոր հոգաբարձուին, որի հանդեպ ինքն իրեն պարտավոր է զգում։

Բաֆֆու մոտ կրկնություն է և՛ ոճի, և՛ կառուցվածքի, և՛ ամեն ինչի մեջ։ Կրկնություն է և՛ ոճի, և՛ կառուցվածքի, և՛ ամեն ինչի մեջ։ Կրկնություն է և՛ ոճի, և՛ կառուցվածքի, և՛ ամեն ինչի մեջ։

Բաֆֆու մոտ կրկնությունը հաղթանակ է տանում հերոսի բնածին հատկությունը և վերացնում միջավայրի բոլոր տարրերը։ Իր անդրանիկ գործերից մինչև վերջին էջերը, Բաֆֆու հավատարիմ կերպարները մնում են միատոն։ Մեկը՝ սուրն դանակում է նշանավոր դերվիշ բեկի անունով, մյուսը՝ աղջիկը նշանավոր հարեմական կին Զեյնաբ խանում անունով։ Բայց նրանք վերջում աղջիկը նշանավոր հարեմական կին Զեյնաբ խանում անունով։ Բայց նրանք վերջում աղջիկը նշանավոր հարեմական կին Զեյնաբ խանում անունով։ Բայց նրանք վերջում

Հենց դրա մեջ էլ վերջ չտալով կրկնում է Բաֆֆու ռոմանտիզմի տակույթյունը։ Նա ջնջում էր պատմական Հայաստանում տերող դյուրյունից և դրան հակադրում է իր իդեալները։ Նրա դրական հերոսները մեծամասնությունը իդեալական տիպարներ են։ Հերոսները մեծամասնությունը իդեալական տիպարներ են։ Հերոսները մեծամասնությունը իդեալական տիպարներ են։

Հենց այս վերջին հատկությունը Բաֆֆու ռոմանտիզմը դարձնում է ակտիվ, քաղաքացիական և մեծ չափով ներհայաց և ուտոպիական, ինչպես Շատոբրիանի ռոմանտիզմն էր։

***

Բաֆֆու ռոմանտիզմի ուսուցիչը Վիկտոր Հյուգոն է եղել։ Վերջինս, իր մեջը այլոց, ռոմանտիզմի տարրերը էր համարում հիպերբոլիզմը, հոնարատոնները, ֆանտաստիկան։ Այդ հատկություններին դրժնդրության մեջ Բաֆֆին դնում է Հյուգոյի հետ միասին և բաժանվում Ալեքսանդր Դյումայից, այնինչ նա ավելի շուտ յուրացնում է առանձնահատկությունները և վիպ քո դրա արտաքին ևֆեկտները։ Բաֆֆու մոտ, ինչպես և Վիկտոր Հյուգոյի մոտ, հետևյան և ռոմանտիզմի լիրիկական և էպիկական պաթոսը, քան նրա նկարագրությունները, ևֆեկտները, բերելությունների անսանձությունները... Հերոսների հանկարծական կերպարանափոխությունը ևս կրկնում է Հյուգոյի մոտ ընդհանուր և առհասարակ այն հոգեբանական հիման վրա, որ մարդը ի բնե լավ է, և ինչքան էլ նա վատանա, լույսը սիրտ կրկնա դա մի որ և հաղթանակի։ Վիկտոր Հյուգոյի պես Բաֆֆին էլ իր վեպը կերպերին դարձնում է պատմագիտական դիտավորություն՝ իբր այս կամ այն թեզը ապացուցելու համար։ Այդպես է «Սամվելի» մեջ հայտնի հեթանոսական ժամանակների, որը, թերևս, մեջտեղից հեռացնելու, ելնել Արշակի ու Ներսեսի վրա քո տարբերելին, այլ ներկա լինելին և պայքարելին... Թե Վիկտոր Հյուգոն և թե Բաֆֆին սիրում են կրկնություններ անել, սիրում են իրենց պատկերները բացատրել, ասես, վախենալով, թե ընթերցողը կմոռանա կամ չի հասկանա։ Մինչդեռ հայտնի է, որ ընթերցողը համաչափակցում է դրողի հետ, իր հետևությամբ լրացնում է նրա պատմածը, կերպերին չափազանցնում։ Ուստի և կրկնությունը պահանջում ենք, որ հեղինակը ամեն բան չասի ընթերցողին և թույլ տա, որ վերջինս ևս ստեղծագործի...

Բաֆֆու մոտ կրկնությունը կամ կերպերին ավելորդ բացատրությունը ոչ թե ծագում է նրա պոետիկայից, այլ վեպի մշակման հանգամանքներից։

Բացի ռոմանտիզմի պոետիկայից՝ Բաֆֆու «Սամվելի» մեջ երևում է նաև հայ ժողովրդական բանահյուսության ազդեցությունը այն չափով, որքան հեղինակը հետևում է փոխառության։ Բեղհանրային հայ անցյալ բնութագրությունը ուշադրել է անջրպետ ստ-

բել Բաֆֆու և Փավստոսի մեջ, պնդելով, թե պատմվածքատուն չի հետևել նրան մի յերկու պատմական անձերի բնութագրման ժամանակ։ Այդ մասին մենք վերևում խոսել ենք։ Այժմ պետք է նկատենք, որ Բաֆֆին ոգեշնորհել է Փավստոսի պատմաբերության ընդհանուր վոգին, նրա մեջ ժողովրդական ավանդությունները և վիպասանության նիստուկացը։ Հրաշալին մի քանի տարբերը ամբիշնալու պատմաբերից են անցել պատմավիպասանին։ Բաֆֆու պատմաբերության մեջ— աղոչքին պետականության մեծությունը և ապրելիության ուժերի դեմ առելությունը— դա էլ առկա յե Փավստոսի մոտ, այնինչ՝ ուրիշ խոսքով՝ մեր ժողովրդական յերգերը, աշուղները, դուդուկները իր ժամանակի առաջավոր հայացքների կրողները են յեղել։ Փավստոսը, ժողովրդական պոեզիային հետևելով, ինքը ոգեշնորհվել և նրա անհնարինությունը։ դա յե պատճառը նրա պատմաբերությունը այսօր մեզ համար շատ կարևոր մի վավերաթուղթ։ Եվ դժվարանալի չե, որ Մովսես Խորենացու պես մի խոշոր մտածող իր ժամանակին դնահատել և փավստոսի այդ արժանիքը և նրան ձեռնպահ ոգեշնորհել իր հանճարեղ «Հայոց պատմության» III դրքում։ Նույնիսկ փավստոսի վոճի մի քանի առանձնահատկություններ արձագանքն են տեսնում Բաֆֆու վիպերի մեջ— հակադրություններ, կրկնություններ, բառերի կուտակումներ, չափազանցություններ, հայրենասիրական պաթոսիկա, ճառամոլություն և նկարագրություն։ Ամենուրդ չենք նկատել, որ Բաֆֆին իր «Խնկունց» (Ա. հատոր) մեջ վկայակոչում վերնագրով բալլադա յե դրել, ողովելով Մ. Խորենացու «Պատմության» մեջ առաջ բերված ժողովրդական առասպելից...

Ժողովրդական բանահյուսության պոետիկայի մի այլ առանձնահատկություն ևս շատ ազդանշանով կերպով ոգեշնորհել է Բաֆֆին իր պատմվածքի մեջ։ Դա պորտրետի ժանրն է։ Հայ ժողովրդական առեղծվածության մեջ նկատելի յե, որ մեր ժողովրդական առեղծվածը յերբեմն տալիս է դրծող անձի արտաքինը այնպես, որ այդ կերպով դյուրով պատկերացնել նրա ներքինը։ Դա դեղարվեստական բնորոշման մի ոլորում է, որի միջոցով առեղծվածողը ցույց է տալիս իր կանկրետ վերաբերմունքը հերոսի նկատմամբ։ Մի յերկու նման բերենք «Առվվելից»։ Նախ՝ «Այր Մարդկանի, ասող՝ ներքինն բաղասի բնութագրը։— «Այր Մարդկանին Բաֆֆին ներկայացնում է ահռելի, ծաղհարա դեմքով, որի աղյուսագույն կաշին սպունգի նմանություն ուներ։ Նա քառակ է, սաստիկ գորացած ձեռնաներ վրա դուրս յեկած մի քանի մազեր միայն։ Նրա ուսերը շրթունքները միշտ հևոնում են, դիմային աչքերը կատարյալ չեն։— «Այդպիսի դժվեմ արտաքին ունի նաև ներքինի բաղասը, որը Տաճատուհու լրտեսն է։ ... Ներս մտավ ներքինապետ Բաղասը,— պատմում է Բաֆֆին,— իր խորշոմած, լերկ դեմքով, իր սառնացրած թերթերունքների կոպերով, որոնք իրենց նեղ շրջանակի մեջ հազիվ կարողանում էին անցնել նրա դուրս ընկած՝ անհանգիստ բիբերը։ Նա քայլերով մոտեցավ տիկնոջ (= Տաճատուհու) դահավորակին, այնքան ուշիուշ քայլերով, որ ծանոթ վախենում էր, մի գուցե փոռները մոտենալին իրեն, և կոտանալով խոսում ձայնով մրմնջաց...»։

Գործածում ժանրը մեզ վարպետությամբ բանագրել է նաև Հակոբ Գաբրիելյանը իր «Ազգային ջոջերի» մեջ։ Ինչպես հայտնի յե, հերոսների արտաքինի նկարագրությունը նմանազության սրինքի վրա յե հիմնված։ ինչպես հերոսները, լացը և ծիծաղն է վարակիչ, այնպես և մեր մարդիկ համակրում ենք...

Հայ անցյալ քննադատությունը ուշադրել է ցույց տալ «Առվվելից» վրա Համբրոսի «Լիլիականի» և Շեքսպիրի «Համլետի» ազդեցությունը։ Այս խնդրի մեջ յերկու կողմ կա, որ պետք է իրարից առանձնել։ Եվրոպական քննադատությունը մասնակի դեպքեր է նշել և պնդել, որ իբր թե Բաֆֆին դրանք հետ-յեվ իր պատմվածքի մեջ է դրել— այդ ժամանակ ճիշտ չե։ Խոսք յերբե խնդրին մոտենանք սկզբունքով, Բաֆֆին դրել է մի պատմվածք, որ ամբողջ հայ դրավոր բանահյուսության մեջ «Լիլիականին» դրեթե համարյա մի դրծ է, ուստի և հայ վիպասանը քննադատին ոգեշնորհել և հունական կլասիկական

դրականության դլուխ դործոցը: Նա մի դարաշրջանի կյանքից և իր ստամավնակ նյութը վերցրել, վոր շատ մոտ եր մի կողմից հայ հեքիաթական կուլտուրային, մյուս կողմից՝ մոտալուտ դրական վոսկեդարին: Ցավ հասկանալի յե այդ պատճառով Բաֆֆու վոճի մեջ անակնկալ դարի և դիցաբանության բազան հետքերը. որինակ. Կիկլոպներ, Աստեմիաններ, Արգուդ, Ակրիսան, Արամազդ, և այլն: Այդ բոլորով, ինչպես ասել ենք, Բաֆֆին նպատակ ուներ դարաշրջանին կուլտուրաը հարազատությամբ վերարտադրել:

Գալով փաստական պնդումներին, վերևս որինակ պետք բերինք, ցույց տալով Բաֆֆու ինքնուրույնության: Լևոն Մանվելյանը ասում է, թե նախ՝ Մուշեղի և Սաթենիկի հրաժեշտը ՀՀամբարյա նույն տեսարանն է, ինչ վոր Համբարսի պատմում, և նույն խոսքերը, ինչ վոր ասում է Հեկտորը իր կնոջը, միայն հայ հեղինակը Մուշեղի խոսքերին հաղորդել է արևելյան դույներ: Ընդհակառակ՝ «... Սամվելը, վոր յերկար ժամանակ տատանվում եր— սպանել հորը թե վոչ,— անկասկած Շեքսպիրի Համլետի պատճառն եր:

Նախ՝ խոսենք Համբարսի, ապա՝ Շեքսպիրի մասին:

Հեկտորն իր կնոջը հրաժեշտ և տալիս անմիջապես կռվի մեկնելուց առաջ, իսկ Մուշեղը Սաթենիկի հետ խորհրդակցում է, թե վերանալ պետք և պատասխանին կինն ու զավակը, յերբ ինքը ռազմի դաշտը դնալու լինի: Ընտանեկան այդ ժողովում նա հանում է կնոջ խորհրդին: Հեկտորի և Մուշեղի, ինչպես և Անդրոմաքի և Սաթենիկի մեջև հիմնական նմանություն չենք դտնում: Մինչդեռ Հեկտորը կռվի յե դնում յուրայիններին հարկադրանքով, քե ինչո՞ւ պետք և նա պայքարի բաց ճակատ չեղնե, այլ պատսպարվի քաղաքի մեջ, ու նա դնում է անհրաժեշտով իր վողջ հույսը կապած ճակատագրին՝ ինչ լինելու յե, պետք լինի հավատքով,— Մուշեղը ռազմիկ լինելուց առաջ քաղաքական գործիչ է: Մինչդեռ Անդրոմաքը աշխատում հետ կանգնել ամուսնուն կռվի անմիջապես յուց դաշտում մասնակցելուց,— Սաթենիկն ինքն առաջարկում և ամուսնուն իրեն էլ հետը վերցնել՝ վիրավոր ռազմիկներին սպեղանի դնելու պաշտոնով: Մինչդեռ Հեկտորը հրաժեշտի ժամանակ վայելում է իր զավակին՝ վերջինս համբուրելով իրեն աջժանի հաջորդ, վոր ապագայում հոր պես կռվի մասնակցելով՝ վիրավոր ասած պետք բերվի մորը սիրտը լցնելով վտանգի հուզմունքով,— Մուշեղին ծանր մտահոգություն և պատճառում ասելվելուն իր զավակի ներկա անմասնակ կացությունը, քան նրա ապագա վտանգը, և այլն: Բուռ եյության նմանություն չունենալով՝ Համլետն և Բաֆֆու հասկածները մի ձևական մոտիկություն ունեն. Հեկտորին և Մուշեղին պատերազմի դաշտն և մղում այն սարսափն ու հետապտակները, վոր քշնամին կարող և հաղթանակի դեպքում դերի վարել իրենց ամուսիններին և դերեվարության վայրում տանջել ու տնարգել: Բայց, ինքն դա ազդեցություն է, զորմանալի յե, վոր մոտացել են հիշեցնել և մի ուրիշ ազդեցություն.— ինչո՞ւ չպնդել, վոր Մերուժան Արծրունու իր հավիմներն մոտ ապատանելը նման և նույն Համբարսի վադխավի և նրա խոստովանության հանդիպմանը: Այստեղ էլ ձևական նմանություն կա... կամ նույն Մերուժանի մոր նախատինքն իր վորդուն ուղղած՝ նման և Շեքսպիրի Կերտրյանի մոր նախատինքին, ուղղված վորդուն, վոր կռվում եր հայրենիքի դեմ... կամ, հայ հեղինակներին էլ հիշելու համար՝ ասել, վոր Բաֆֆին Անուշ բերդի նկարագրությունը տալիս և դրեթե նույն պաֆոսով, ինչ վոր Աբովյանն Ցերեսանի բերդի նկարագիրը. վերջապես մի այլաղակ հերձ, լի ամենայն զարհուրանքով, կանգնած եր Անուշ բերդը իր բարձր, քարեղեն առորոտի վրա: Նա տարածում եր իր չուրջը մահ և ավերած...» և այլ այսպիսի շատ որինակներ կարելի յե բերել, վորոնք վորևե լուրջ դրականագիտական արժեք չունեն... Նման որինակներ կարելի յե բերել նաև Բաֆֆու վոճի պատկերավորության բնագավառից: Ցերևու որինակ բերենք. նախ՝ շատ հավանական և, որինակ, վոր Բաֆֆին Ծատոնի չի յեղել Շեքսպիրի «Ջեր Անդրանիկ» վորերգության հետ: Սակայն հայ հեղինակը մի նմանություն ունի, վոր թաշքշելով կարելի յե անգլիացի դրամատուրգի վորերգու-

Բյան առաքեն Թարգմանությունից առնված համարել։ Բաֆֆին գրում է. «Բոլորը քաղցած նման մնացին իրենց տեղում... Նրանց դրությունը նման էր այն տեսարանին, երբ... ճնճղուկների հաղթարշավը բազմությունը... հավաքված ծառերի վտառների վրա նկատում են, չիչիում են և ամբողջ անտառը լցնում են կենդանի աղմուկով։ Հանկարծ նրանց մեջից պատում է բազեն և ամբողջ խորը միանգամից լռում է»։

Спокойно внемлет пенью малых птичек
Орел, что гордо вьется к небесам.
И знает он—от взмаха мощных крыльев
Замолкнет хор пернатых болтунов.

Ներկրող արձակ. Դաստայևսկին իր «Подросток» վեպում անում է մի այսպիսի նամանություն. «Այն ժամանակ նա նման էր մի մարդու, որ առանում է քանկագին, հնաոճրագրական և չափազ իրեն սպասել ամեն մի նամակ, բայց դիտմամբ չի շտապում բաց անել, այլ դնում է առաջը, ձևերքում չուռ ու մուռ է տալիս, նայում է ծրարին, կնքին, և ապա նամակը բողնում, անցնում է մյուս սենյակը ինչ-որ կարգադրություններ անելու, մի խոսքով՝ հետաձգում է նամակի բնթերցումը, լոլ իմանալով, որ ի վերջո պետք է վայելի հաճույքը։ Բաֆֆին «Մամվելից» մեջ մի նմանություն է անում (առ վերև, էջ XXVIII), երբոնդ առաջին նամակը հանդիսանում է մոչ քե բավականության պատրյուր, այլ առնչանքի խթան. ուրախ չափու նմանություններ գեղարվեստական առաջը նույնն է. նամակի պատճառած հուզմունքը՝ ուրախություն կամ տխրություն։ Այցիններ Համլետին։

Արևմտաեվրոպական քննադատական դրականությունը՝ գլխավորապես՝ Համլետի վարքերգական վիճակը բացատրել է հետևյալ հանգամանքներով։ Ամենից առաջ նա ընկել էր մի խորտակ միջավայրի մեջ, ուր ընդհանրը զրում էր բացարձակապես մենակ. ոչ ոք չուներ, վորի առաջ սիրտը բաց անել կարողանար։ Ներկրող՝ նա մի դատող, փիլիսոփայող հոգի էր, գրեթե մեր ժամանակակից խելքի տեր մի մարդ, սակայն ստիպված էր վրեժի դրծ կատարել, վոր կատարելապես խորթ էր իր մտածելակերպին. տպանել մեկին, ըստ. ամբողջ հատարակության էր փոած։ Գլխին ասում է՝ նա մի հատարան կոնիքի իր դրված փոքրիկ ծաղիկամանի մեջ... Ցավ, վիրջապես, ժամհման հրեշտակի պես խաղաղանք ձևերին նա վերադնահատում է այն բոլոր արժեքները, ինչ վոր չրջապատի համար արդյունքան արդյ էր (Գ. Բրանդես)։ Այս յերկը առումներով յեթե համեմատելու լինենք Մամվելին Համլետի հետ, կտեսնենք, վոր Բաֆֆու հերոսը վոչ մի նմանություն չունի Դանիայի արքայազնի հետ։ Այսինից առաջ՝ Մամվելի մեջ ավելացրը հայրենասիրական մի բարձր մթնոլորտ էր հաղիհանում, ուր նա բազմաթիվ համախոհներ ուներ, վորոնց հետ համամիտ ու համաղգաց էր։ Ներկրող՝ նրա ձևնադրկությունը խորթ չէր իր հոգուն, այլ բղխում էր անվհատ համոզմունքներից և աշխարհայացքից։ Ցավ, վիրջապես, Մամվելը վոչ քե իր մեջ ավելացրից բարձր մի հերոս էր, այլ, ընդհակառակը, այդպես կային մարդիկ, վորոնք մի գլուխ բարձր էին նրանից իրենց պատրաստությամբ և հասունությամբ. օրինակ՝ Մուշեղը և հայ դրականության հիմնադիրը՝ Մեսրոպը...

Մի խոսքով՝ ճիշտ այն է, ինչ վոր ասել են խոշոր դրողները գրած ստեղծագործությունների մասին ընդհանրապես.— ապրյուրը գնդապան հանգերի մեջով հոսելով՝ նրանց դուրն ու համն է առնում, բայց հիմնականում ջուրը իրենն է։ Այս նմանությունը սիրով գործ են ածել քե Լամնայասկին և քե Թումանյանը... Բաֆֆու մասին կարելի է ասել նույնը, ինչ վոր Կիրպոտինը իր «Классики» քննադատական աշխատությունների մեջ ասում է Գուշկինի մասին. «Գուշկինը յերբեք չի յեղել արտատհմանյան օրինակների հետևորդ. առաջավոր լուսավորության բարեբաստիկ ազդեցությունը նրա

մեծ միշտ որպանական կապված և յեղել ուս ազգային գծերի հետ, որոնք ամրացել և զարգացել են ժողովրդական բանաստեղծության և ուս պատմության ուսումնասիրությամբ:

Ամմվելին մեզ ասելիքը լուսավորությունը արտահայտվել է նրանով, որ Բաֆֆին փոխանակ պատմական վեպի մեջոցով ներկայից փոխչելու և անցյալի դերին ընկնելու, ընդհակառակը, իր նպատակն դարձրել է մի գեղեցիկ գաղութային քաղաքականության դեմ կռվելու համար, դրա հետ միասին պահելով պատմության ինքնահատկությունը, կոլորիտը և առհասարակ խոսքիմքը: Հենց այս վերջին թեքման մեջ են յերևացել պատմավիպասանի խոշտանգված հայ ազգային գծերը, որոնց նա վերարտադրել է հայ ժողովրդական ստեղծագործությունը ուսումնասիրելով և քափանցելով հայ ժողովրդի ձգտումների մեջ իր ազգային ինքնուրույն պետականության պաշտպանելու ուղղությամբ:

Այդպես լինելով Ամմվելը դառնում է իր դեմոկրատական արժեքով վեր մի պատմական արժեք ունեցող մի գործ, այլ և նույնիսկ խոսք այժմեական մի յերկ բոլոր գաղութային և կիսագաղութային այն ժողովուրդների համար, որոնք այսօր ստրկում են յեվրոպական դիշատիչ իմպերիալիզմի անարդ լծի տակ:

Հասարակական և դրական այդ բարձր արժեքները ունեցող վեպը Բաֆֆին գրել է իր ստեղծագործական ուժերի փթթման չքնաղում. գրել է մի վեպ, որի մեջ վեր միայն պլատոնական նկարագրերներ և ավել, որոնք յերկար ժամանակ հայ դասագրքերի գործն էլին կազմում, այլ և քարմացրել և հայ լեզուն, հանդիսանալով հայ դեմոկրատական գրության հիմնադիրներից մեկը: Հայ վեպի նշանավոր վարպետներից մեկը Բաֆֆուն նույնիսկ համարել և Հիսկական հիմնադիր արևելյան աշխարհաբար դրական լեզվի (Շերվանզադե): Ցավ դուբ չե, որ Ծուլ. Վևանդովսկին Բաֆֆուն անվանել է հայ ազգի պարծանքը:

Խորհրդային հայ դրականությունը շատ նվաճումներ ունի, բայց նրա մի ժանրը— պատմական վեպը դեռ սպասում է իր այն վիպագրին, որը կարողանար [redacted] դարաշրջանի հոյակապ լուսերի տակ մեր անցյալին նայել, հասկանալ և պատկերացնել:

Ո՞վ է այն գերմանացի բանաստեղծը, որը չի ձգտում գնաստատ դրել: Խորհրդային վիպասանը պետք է հասնի և անցնի Բաֆֆուց, հասնի նրա արվեստին և հաղթահարի նրա այն թերությունը, որի մասին խոսել է ուս նշանավոր վարպետը. «Անցյալ դարի հայ բուրժուազիայի խոշորագույն ռոմանտիկ Բաֆֆուն իրոք հասուկ են յեղել նացիոնալիստական հայացքներ, բայց նա քննադատության և ինքնաքրիկ ֆեոդալական մնացուկները և յեղել և խոսքի հոյակապ վարպետ» (Ա. Ֆադեև):

Պրոֆ. Ա. ՏԵՐՏԵՐՑԱՆ

1940, փետրվար, Ցերևան

ՀԱՅ ՌԱՋՍԲԱՆ

Գաղափարն վիպերգ մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է։ Նա պատկերացնում է յուր մեջ՝ թե ո՛րպես ապրել է և ո՛րպես դործել և մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարքը, վարքը, սովորութիւնները, պատկերացնում է նրա մասնաւոր ու բարոյական հատկութիւնները, մի խոսքով, ներկայացնում է հնադարեան մարդուն յուր բուն, նախնական դերպարանքով, որը ժամանակների ընթացքում փոխվել և ներկա սերնդի համար մոռացվել եր։

Դրելով «Սամվելը», դես նպատակ եմ ունեցել՝ ներկայացնել մի այդպիսի նկարագիր մեր պատմական անցյալից։

Գաղափարն վիպասանին նյութ և մտածակարաում ընդք պատմութիւնը և այն հիշատակարանները, որ պահել են իրանց մեջ անցյալի հիշատակները և ավանդել են ապագա սերնդին։

Բայց ի՞նչ և տալիս հայ վիպասանին հայոց պատմութիւնը։

Մենք կարդում ենք նրա մեջ մեր թագավորների, մեր իշխանների անունները, ծանոթանում ենք նրանց ներքին կռիվների ու արտաքին պատերազմների հետ, դիտենք, թե ո՛րը ո՛ր թագն ասրե տիրեց, դամ ի՞նչ յամ և ուստ գործեր կատարեց,— այդ բոլորը դիտենք մենք։ Բայց թե ի՞նչպես եր կազմակերպված նրանց ընտանեկան կյանքը, ի՞նչ սովորութիւններ ունեցին, ի՞նչպես նրանք հագնում, ի՞նչ տեսակ տներում ապրում, մի խոսքով, իրրև մարդ, նրանց ընտանեկան և հասարակական կենցաղավարութեան մասին՝ մեր պատմութիւնը, չեթե չասում խոպան, կարող եմ ասել մեծ մասամբ լռում է։

Բայց վիպի համար հարկավոր և ընթացիկ, չարժուն կյանքը յուր բոլոր յերևութիներով, և ոչ թագավորների կամ իշխանների աշխարհակալութեան կամ պարտութեան չոր ու ցամաք տարեգրութիւնը։

Մեր պատմութեան մեջ դրեթե բոլորովին մոռացված և ամրոխ. Մեր պատմագրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոդևորականներից և զինվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում եր, որ յուր կյանքն ուներ, որ յուր առնչը, հանդեսները և ցնծութիւններն ուներ, և որի հոդեկան և բարոյական հատկութիւնները արտահայտում էին այս և այն հասարակական յերևութիների մեջ։— Մեր պատմութեան մեջ ժողովուրդ չկա, կան միայն թերպետութիւններ։ Մենք չդիտենք, ի՞նչպես եր ապրում հայոց շինականը, ի՞նչ

տնական հարաբերությունների մեջ ևր յուր տերերի հետ, կամ ի՞նչ ևր ուսում և ի՞նչ ևր հաշնում, և ի՞նչ տնական զվարճություններ ուներ: Մենք չդիտենք, թե ի՞նչ ևր չինում հայոց արհեստավորը, վո՞ր յերկրների հետ առևտուր ուներ հայոց վաճառականը, կամ ի՞նչ տնասուն ևր սնուցանում հայոց խաշնարածը: Մեր պատմությունը լուռ և այդ բոլորի մասին: Բայց վնասի համար դրանք կարևոր են:

Մեր պատմության մեջ մոռացված և և մեր ժողովրդի մի նշանավոր տարրը—կինը: Մենք ծանոթ ենք մի քանի կանանց անուններին հետ միայն, իսկ նրանց կյանքը յուր բոլոր մանրամասներով մեզ անհայտ և: Ի՞նչ ևր հայ կինը, վորպես ամուսին, ի՞նչ ևր նա, վորպես մայր, ի՞նչ դեր ևր խաղում, վորպես ընտանիքի և հասարակության անդամ,— այդ մենք չդիտենք: Մենք չդիտենք նաև, թե ի՞նչպես ևր հայտնվում նա ժողովրդական տոների և հանդեսների մեջ, կամ վո՞ր աստիճան մասնակցում ևր նրա ուրախություններին և տրտմություններին: Իսկ առանց կնոջ վեպ կարող չե լինել· կինն և նրա վոգին և կենդանությունը:

Ճիվ այդպես, մեր պատմությունը, իրրև չոր ու ցամաք տարեգրություն, խիստ նվազ նյութ և տալիս մի վիպասանի, վորով կարող լիներ նա նկարել անցյալի ճիշտ պատկերը յուր բոլոր յերևույթներով:

Ինչ վոր թերի յե թողել պատմությունը, կարող եյին լրացնել բանաստեղծական գրվածքները, յեթե մեզ հասած լինեյին: Բայց մենք չունենք վո՛չ Եսքիլեսի և Սոֆոկլեսի վոդբերդությունները, և վո՛չ Հոմերոսի և Վիրգիլիոսի դյուցազնական հազնեդրություններ: Մեր հին դրականությունը դուրս չեկավ յեկեղեցական չրջանակից: Մեր հեղինակները գրեցին մեկնությանն ստվար գրքեր, հոմորական ճառընտիրներ, գրեցին փիլիսոփայական և աստվածաբանական աշխատություններ, բայց վո՛չ մի վեպ, վո՛չ մի գրամա կամ կոմեդիա չստեղծին մեզ:

Մեր հին գրականության մեջ, թեև կյանքի և սովորությունների, ընտանեկան և հասարակական կազմակերպության լիակատար նկարագիրներ չկան, բայց կան հազիվ նկատելի նշմարներ, վորոնցից կարելի յե մի ամփոփելով, պարզելով և դասավորելով, կարելի յեր, յեթե վոչ բոլորովին ամբողջական, գեթ մասնավոր դաղափար կազմել պատմական հայի կյանքի մասին:

Այդ աշխատանքը պետք և մեր արդի հնախոսության գործը լիներ: Բայց մեր հնախոսությունը այդ մասին դեռ շատ աննշան գործ և կատարել: Մեր հնախոսությունը դեռ չե դուրս յեկել այն նեղ, սահմանափակ շավիղից, վոր չավիղով վոր ընթացել և պատմությունը: Պատմությունը խոսում և միայն թագավորների, իշխանների և հոդևորականության մասին. հնախոսությունը նույնպես զբաղված և նրանցով: Մեր հնախոսության մեջ կյանքի քննաշատությունը, յուր բոլոր յերևույթներով, խիստ աննշան տեղ և բռնում: Կարգալով Ինճիճյանի յերեք պատկառելի հատորները, չե կարելի մի պարզ հասկացողություն կազմել նախնական հայի

կրոնի, պաշտամունքների, սովորությունների և ծեսերի մասին,— չի կարելի անդրադառնալ, քանի որ նշանակում է այդ ասպրում հայը յուր ասն մեջ և հասարակության մեջ:

Այդ բոլորից հետո, ինքն ըստ ինքյան հասկանալի չի, թե որքան դժվար և հայ վիպասանի համար պատմական վեպ գրել: Թե՛ հին և թե՛ նոր դրականությունը նրա համար բավականացուցիչ նյութ չի պատրաստել: Նա ինքը պետք է բոլորը ուսումնասիրի, նա ինքը պետք է բոլորը պատրաստե: Բայց որտեղից:

Արդյոք ունե՞նք մի մուղնում, որտեղ հայ վիպասանը մտնելով, տեսնի, թե ինչ տեսակ զգեստ ունեին նախնի հայերը, ինչ տեսակ զարդեր ու զենքեր ունեցին, կամ ինչ տեսակ տնային կարասիք և գործածում: Արդյոք մենք ունե՞նք մեր հին արձանները,— վոչինչ չունենք: Իսկ այդ բոլորը պետք են պատմական վեպի համար: Ցերեթելին և Սիսաքը և Երվանդը գրեցին դեղեցիկ պատմական վեպեր, որոնց մեջ յուր բոլոր մանրամասնություններով պատկերանում և վաղեմի մարդու կյանքը,— այդ հաջողությունը պետք է վերագրել որչ այնքան նրանց տաղանդին, որքան նյութերի այն ահագին պաշարին, որ պատրաստել էր նրանց համար նախընթաց գրականությունը: Այդ յերջանիկ վիպասաններին մնում էր միայն ոգուտ քաղել արդեն պատրաստի նյութերից: Բայց հայոց դժբախտ վիպասանը ինչ ունի: Նա պետք է ուժ տա յուր յերևակայությանը, իսկ լոկ յերևակայությունը մի ճիշտ պատմական վեպ նկարել չի կարող:

Մեր դրականության չքավորության մեջ, անհրաժեշտ նյութերի պակասության մեջ, խոստովանվում եմ, որ իմ կողմից մեծ վստահություն էր՝ ձեռնարկել մի վեպ գրելու, որ նա պատմական ճիշտ նշանակություն ունենար: Բայց «Սամվելը» վազուց իմ մտածությունների առարկան էր դարձել: Ուրախությամբ այն դադափարով, թե որքան մեծ կրթողական աղդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, յերբ նա տեսնում և յուր նախնյայց մեծագործությունները և աշխատում և հետևել նրանց առաքինություններին, անանում և և նրանց մոլությունները, աշխատում և հետու պահել իրան նրանց կատարած սխալներից,— այդ միտքը քաջալերեց ինձ: Ցնա սկսեցի գրել: Բայց թե ինչ աղբյուրներից եմ ոգուտ քաղել, ամենորդ չեմ համարում բացատրել իմ ընթերցողներին:

Նախ, յես ոգուտ եմ քաղել այն հիշատակարաններից, որքան հաջողվել և ինձ գտնել մեր ազգային և ուսերագրի գրականության մեջ: Ցերկրորդ, իմ ճանապարհորդությունների ժամանակ, յես ոգուտ եմ քաղել ներկա հայի կյանքից, այն չափով միայն, ինչ չափով պահպանվել և նա յուր նախնական ձևի մեջ: Ցերեթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Բանդուխտին 24 դար առաջ նկարագրած դեռնատիպ խրճիթները, յերեթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոդոտոսի 24 դար առաջ նկարագրած մաշկապատ նավակները Ցեփրատ գետի վրա, ինչու պետք է չհամա-

ձել, որ դեռ շատ բան չէ փոխվել հայոց աշխարհում։ Նոր քաղաքակրթությունը կարող եր վոչնչացնել, ինչ որ նախնական եր, ինչ որ հին դրոշմ եր կրում։ Բայց Հայաստանում դեռ մնացել են այնպիսի խուլ, առանձնացած տեղեր, ուր ժողովուրդը դեռ ապրում է յուր վաղեմի, ավանդական սովորություններով։ Այդ տեղերը յուր ատեք եմ ունեցել տեսնելու և նրանց կյանքը ուսումնասիրելու։

Համարելով հայերին մի ևնուչյն ցեղին պատկանող և վոչ այնքան տարբեր կյանքով ապրող մի ժողովուրդ, որպեսի հին պարսիկները և մեդացիները, յես աուել եմ շատ բան պարսիկների և մեդացիների կյանքից, ի հարկե, դանադանելով, ինչ որ աղգային առանձնահատկություն է և ինչ որ ուսարամուտ է։

Հայոց կյանքի և սովորությունների վրա վոչ սակավ աղդեցություն են դործել և այն մեծ դաղթականությունները, որ հին դարերում, կամ ինքնակամ յեկել են և կամ իրրև գերի բերվել են Հայաստան։ Դրանցից մեծ տեղ են բռնել քաղդեացիք, ասորեստանցիք, պարթևները, հնդիկները, ճենացիք և հրեաները։ Ցնո ի նկատի եմ ունեցել և դրանց սովորությունները։

Այդ բոլորը բացատրված և առանձին ծանոթություններով, որ կցված է դրքիս վերջում։

«Դավիթ-բեկից», և «Պարույր Հայկազնից» հետո, «Սամվելը» իմ յերրորդ պատմական դրական փորձն է։ Այդ վեպի դյուրը առնված է մեր պատմության Դ-րդ դարու անցքերից։

ՐԱՖՖԻ

ՍԱՄՎԵԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

«Այնուհետեւ Վահանն Մամիկոնեան եւ Մերուժանն Արծրունի, որք սիրելիքն արք պիղծք անօրէնք էին, ազատամբելք էին յուխտէ աստուածպաշտութեան, եւ դանաստուածն Մաղդեղանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետեւ յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զահիս ազօթից քրիստոնէից. . Աւերուշտն չինէին ի բազում տեղիս, եւ զմարդիկ հնազանդէին օրինացն Մաղդեղանց .. եւ զորդիս եւ զդուստերն իւրեանց տային յուսումն Մաղդեղանցն: Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, հնար առաւիւեաց զՎահան զհայր իւր, եւ զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զդոյր Շապհոյ Գաբեղց քաղաւորինն:

Փաւստ. Բիւզանդ. Դ. գլր. գլ. ՄԲ.

«Ցնա մահուանն Աբշահայ դումարեաց Շապուհ զօր բազում ի ձեռն Մերուժանա Ա թծրունւոյ) եւ արձակեաց ի Հայս... Եւ առեալ նմա կին զդոյր իւր զՈրմզդուխտ... եւ խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելովք զնն Մաղդեղանց դաշնաբեռն դարձուցէ: Որոյ յանձն առեալ եւ եկեալ... եւ զամենայն կարդ քրիստոնէութեան ջնջայր խափանել... Եւ զորս միանգամ դիպս գտանէր՝ այրեր եւ հրամայն սպր մի ուսանիլ գդպրութիւն յունաբէն, այլ պարսկի, եւ մի ոք իշխեսցի յոյն խոսել կամ թարգմանել... Զի յայնժամ դիպ դպրութեան հայոց չեւ եւս էր լեալ, եւ յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք»

Խորենացի Հատ. Գ. գլ. Ղ.

Ա.

ԳՐՔ





ՑԵՐԿՈՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ

ուռնի յեղյուրը ծածկվեցավ Քարքե լեռան յետևում և Տարոնը ընկղմվեցավ դիշերային խավարի մեջ: Վոչ մի ասող այդ դիշեր չեր յերևում: Ցերկինքը պատած եր մռայլ ամպերով, վորոնք մեղմ հոսանքով լողում եյին դեպի Կրկուս և Նեմրութ լեռների կողմերը և, այնտեղ կուտակվելով, թանձրանալով, մթացին-ևս կերպարանք եյին ուտանում: Այդ կողմից յերբեմն փայլատակում եր կայծակը և լսելի յեր լինում վորոտման խուլ դղրդյուն, վոր դուշակում եր հորդ անձրև:

Դիշերային այդ տաղնապալի պահուն յերկու ձիավորներ անցնում եյին Մուշի դաշտով: Նրանք դալիս եյին հեռվից, շատ հեռվից: Մի ամբողջ դուրս յեկան Տիգրոնի յերկաթյա քաղաքապետից, անցան Խուժխատաների անապատները, անցան արևակող Ասորեստանը, անցան հայկական Միջագետը և մի որ առաջ վոտք դրեցին Մուշի դաշտի վրա: Դրանք յերկու սուրհանդակներ եյին:

Ցերկու սուրհանդակներից մեկի ձին սևագույն եր, մյուսինը կապուտակ: Կապուտակ ձիավորը առաջինի ուղևորության մասին տեղեկություն ուներ, ամենայն զգուշությամբ հետևում եր նրան և յերբեք յուր նպատակությունից բաց չեր թողնում: Իսկ առաջինը չգիտեր, վոր իրան հետևում են: Այդ եր պատճառը, վոր նրանք, յերկու մոլորակների նման, թեև գնում եյին մեկնուն ուղղությամբ, բայց այնպիսի դուշահետական դծերով, վոր բնավ մեկյանց չեյին հանդիպում: Ցերկուսն ել ճանաչում եյին մեկյանց:

Նրանք արդեն հասել եյին Արածանիի ափերին:

Կապուտակ ձիավորը այտեղ կանդ առավ: Նա նայեց դեպի յերկինքը, նայեց դեպի յուր շուրջը: Կամենում եր դիտենալ, թե վո՛րքան ժամանակ

եր մնացել, մինչև լույսի բացվելը: Վոչ մի աստղ ցույց չտվեց Նրան ճշմարիտ ժամը: Ամեն ինչ խորասուզված եր անվերծանելի մթության մեջ:

Բայց պետք եր շտապել...

Երկու մտածություններ մի քանի րոպե պահեցին Նրան անվճռականության մեջ. դեռո՞վ անցնել, թե կամուրջով դնալ: Կամուրջով—դա շատ հեռու կտաներ և դուցե կհանդիպեր Նրան... և դուցե կբռնվեր կամուրջի դիշերային պահակներից...: Վճռից անցնել դեռով:

Հեղ և արծաթափայլ Արածանին դարնանային հեղեղներից կատաղել եր և պղտոր հորձանքներով ծածկել եր յուր ափերը: Բայց մեր ուղևորը ծանոթ եր նրա ծանծաղուտների հետ: Նա ցած իջավ ձիուց, ձեռքով փայփայեց յուր կապուտակի դեղեցիկ բաշը, փոքրիկ դլուխը, ասելով. «Դու քաջությամբ կտրեցիր Տիդրխի ահռելի ալիքները, այժմ հայրենի յերկրի Արածանին ինչո՞ւ պետք և վախեցնե քեզ»: Նա ձիու սանձը հանեց բերանից, վոր լողալու միջոցին աղատ շունչ առնե, նստեց և, յերեսը խաչակնքելով, քշեց դեպի դետը:

Դետը, մի ահարկու վիշապի նման, դոռում եր, դոչում եր: Դիշերային մթության մեջ՝ նրա պղտոր հոսանքը ավելի մռայլ կերպարանք եր ստացել: Ջին, ամբողջ մարմնով խորասուզված ջրի մեջ, միայն դլուխը վեր բարձրացրած, մռնչելով և փունդալով, պատերազմում եր ալիքների հետ: Նրա վոտները հատակին չեյին դիպչում, անցնում եր լողալով: Ջիավորը, սանձի փոխարեն բռնած ուներ նրա բաշից, և ձեռքով ուղղություն եր տալիս ընթացքին: Մի քանի պատյանների մեջ՝ թե՛ ձին, և թե՛ ձիավորը սրկեցին ջրի տակ: Կրկին դուրս հայտնվեցան: Յերրեմն անցնում եյին նրանց մոտով ծառի կոճղներ, գերանի կտորներ, վոր ծփալով տարվում եյին կոհակների հետ: Ձիավորը չտապում եր խույս տալ դրանցից: Բայց ահա՛ հեռվից մի ինչ-վոր վորոտում եր: Տաշնապը մոտենում եր: Ձիավորը չկորցրեց յուր սառնասրտությունը և խորին ուշադրությամբ նայեց դեպի այն կողմը: Մի մթին, անորոշ կույտ լողում եր ջրի յերեսին: Վորքան մերձենում եր, այնքան աճում եր նա, այնքան սոսկալի ձև եր ստանում: Կարծես, մի ամբողջ բլուր դանդաղ ընթացքով չրջում եր դետի վրա: Մերթ անհայտանում եր նա, մերթ յերևան եր դալիս, ավելի ահարկու կերպարանքով: Ձիավորը հասկացավ նրա ի՛նչ լինելը: Նա մի ակնթարթում ձիու թամբից սողաց դեպի դավակը, վոր նրա բերը թեթևացնե: Բռնեց ապիից, սկսեց չտապեցնել նրան: Որհասական ժամը մոտենում եր, քանի վոր թանձր, այլանդակ հրեշի նման մոտենում եր մթին կույտը: Նրա վորոտը խլացնում եր ամեն ձայն: Պետք եր փախչել նրանից, յերեք վոչ, մի թևթև տաշեղի նման յուր հետ կտաներ թե՛ ձիուն, թե՛ ձիավորին: Ջին անդամ դլաց մոտալուտ վտանգը և կրկնապատկեց յուր ուժերը: Անհնարին արագությամբ կտրում եր նա կոհակները: Հրեշը անցավ: Դա ուրիշ վոչինչ չեր, յերեք վոչ մերձակա անտառների մի

մասը, որ հեղեղը արմատախիլ անելով, յուր պատյանների մեջ կծկել եր, դալարել եր, և մի այնպիսի այլանդակ դունդ ձև եր տվել:

Ձիավորը կրկին անգամ դռհուճյամբ յերեսը խաչակնքեց, յերբ վտանգը ցամաքի վրա:

Նա յուր հագուստը քամեց, ցամաքացրեց, հետո սանձը դրեց ձիու բերանը, և շարունակեց ճանապարհը, լինքը պնալով վոտով, իսկ ձիուն յուր յետևից քաշ տալով, վոր վտքը լինչ հանդստանա: Բայց ձին դժվարությամբ եր հետևում նրան: Վորքան նա ջրի մեջ արադընթաց եր, այնքան ցամաքի վրա դանդաղկոտ դարձավ: Տերը վերաբերում եր այդ նրա հոգնածությանը:

Գետնղերքից բավական հեռանալով, այժմ մոտեցավ նա Ֆարքե լեռան բարձրավանդակներին: Ճանապարհը դառիվեր եր, վոլորվում եր սարերի լանջից վրայով, խշնում եր խորին ձորերի, փաղարներին մեջ, և դարձյալ բարձրանում եր բլուրների վրա: Նա ծանոթ եր այդ անտառապատ լեռների հետ, դիտեր նրանց դժվարին անցքերն ու շավիղները, յերեխայությունից անվել ու մեծացել եր այդ խոնավ ծմակների մթության մեջ, ուր ցերեկվ լույսը յերբեք չեր թափանցում: Նա ապառաժներն ու անտառները վորդի յեր:

Կայծակը չանթեց մոտակա ծառերի կատարներին և մերձակայքը լուսավորվեցավ բաց-վարդագույն փայլով: Վորոտի ձայնը ահեղ դղրդյունով տարածվեցավ մթին ձորերի մեջ: Ուղևորը նայեց դեպի ամպամած յերկինքը և շտապեցրեց յուր քայլերը: Նա չվախենալով դնաց, բայց վախենում եր փոթորիկից: Փոթորիկը մեծ արհավիրք և դործում այդ կուսական անտառների մեջ, մանավանդ դիշերային պահուն: Ծայրերի բարձրությունից խլում և նա վողողված, մերկարմատ ծառերը և ներում և ճանապարհի վրա: Ծառերի հետ փուլ են դալիս և քարերի ահագին բեկորներ: Ամեն մի ճանապարհորդ հանդիպելու:

Կրկին լսելի յեղավ վորոտման ահեղ դղրդյունը և նրա հետ անձրևի խոշոր կաթիլները սկսեցին մաղվել յերկնքից: Քամին մռնչում եր և անձրևային տարափը, կարկուտի դնդակների նման, դարկում եր նրա բորբոքված յերեսին: Բայց նա վոչինչ չեր դդում: Նրա միտքը, նրա դդացմունքները լցված եյին դեպի մի նպատակ, վոր կլանել եր նրա ամբողջ դոյությունը, վոր ամենայն յեռանդով առաջ եր մղում նրան, վորպես մի մարմնացած վութաջանություն: Նա չտատում եր մի քանի ժամ առաջ տեղ հասնել, քան կհասներ սև ձիավորը:

Բայց ձին դժվարությամբ եր հետևում նրան: Այժմ մխայն նկատեց, վոր յետևի վոտքից կաղում եր նա: Անշուշտ դեպի հոսանքի հետ տարվող հոճղներից մեկը դիպչելով, վնասել եր նրան: Այդ դեպքը սոսկալի վրդովեցրեց անվհեր ուղևորին: Նա չտատում եր: Իսկ այժմ դրկվեցավ յուր սրընթաց յերիվարից: Ի՞նչ պետք եր անել: Թողնե՞լ նրան և այնպես վոտ-

քով չարունակել ճանապարհը: Բայց ի՞նչպես թողնել այն սիրելի նժույգին, որը այնքան տարիներ թե՛ պատերազմի դաշտում, թե՛ յուր ճանապարհորդությունների ժամանակ, լավ ընկեր էր յուղել նրա հետ: Մի քանի րոպե մնաց նա մտածության մեջ: Հետո թողնց մեծ ճանապարհը, բռնեց մի չավիղ, որ տանում էր դեպի Աչոխչատի վանքը:

Վանքը շատ հեռու չէր այնտեղից. մեկ ժամից հետո հասավ նա: Դարևոր, նվիրական ծառատանկի խորքում, վաղեմի սրբազան բարձրությունների վրա, հանդչում էր Տարոնի այդ հին սրբավայրը, յուր վսեմ, մեծավառ վեհության մեջ: Պատապարսված բարձր չրջապարիսպներով և բրդաձև աշտարակներով դիշերային մթության մեջ, ներկայանում էր նա, որպես մի անմատչելի ամրոց: Կատաղի մրրիկը, քամու մռնչյունը, անձրևի տարափը չէր վրդովեցնում նրա խաղաղ բարեպաշտական նիրհը:

Շրջապարիսպներից դուրս, մի առանձին շինվածքի նեղ լուսամուտից լույս էր յերևում: Ուղևորը դիմեց դեպի այն կողմը, մոտեցավ փակ դռներին: Այստեղ, դռան մի կողմում, փայտյա սյունից քարշ էր ընկած մի տախտակ, իսկ սյունի պատվանդանի մոտ դրած էր նուչնակես փայտյա փոքրիկ ոթակ: Ուղևորը վերառնց ոթակը, յերեք անգամ զարկեց տախտակի վրա: Կոչնակի ձայնից լուսամուտը լցվեցավ, մեկը ներսից քննաթաթախ դլուխը դուրս մեկնեց և վերևից հարցրեց:

— Ո՞վ ես:

— Ճանապարհորդ եմ,— յեղավ պատասխանը:

Վանքի պարիսպներից դուրս, այդ շինվածքը տարաժամ ճանապարհորդների, ոտարականների և պանդուխտների ոթևան էր: Դռնապանը բավականացավ ուղևորի պատասխանով, բաց արեց դռները և ճրագը ձեռին հայտնվեցավ սյամի վրա:

— Դու բոլորովին թրջված ես,— ասաց նա մի առանձին հոգատարությամբ,— ներս համեցիր, յես խոհույն կրակ կվառեմ, քո հագուստը չորացրու:

— Շա՛տ չնորհակալ եմ քո բարեսրտության համար,— պատասխանեց ուղևորը,— բայց յես կվնդրեյի քեզանից ընդունել ձեզ մոտ, վորպես հյուր, իմ ձիուն միայն:

— Ինչո՞ւ քո ձիուն միայն,— հարցրեց դռնապանը զարմանալով:

— Նա կաղում է, վնասել է վոտքը... իսկ յես պետք է չարունակեմ իմ ճանապարհը:

— Գոնե ներս մտիր, մի վոտքդ տաքացիր, յես խոհույն կրակ կվառեմ:

— Չեմ կարող... յես չտապում եմ... պատասխանեց ուղևորը և մոտեցավ ճրագին:

Նա ծոցից հանեց յուր սանդրը, վոր կիսալուսնի ձև ուներ, շինված էր զոմշի յեղջյուրից, և, ցույց տալով դռնապանին, ասաց.

— Ճանաչի՛ր այդ սանդրը, մի կողմի յերկու ատամները կոտրած են.

յնքին յես չվերադարձա, ոչ մեր քեզ ցույց տալու լինեի, ձին նրան կհանձնես:

— Իսկ դու ո՞վ ես,— հարցրեց դռնապանը, միայն ինչ կասկածելով:

— Ես պիտակ եմ... պատասխանեց ուղևորը:

Դռնապանը բավականացավ ուղևորի անորոշ պատասխանով, միտքհետև այդ տաղնապալի ժամանակներում դիմելու հետ շատ հետևություն պետք միայն ինչ դժվար կը:

Ուղևորը բաց արեց ձիու թամբին կապած ճանապարհորդական թևքի խուրջինը, ձղեց յուր ուսին և, շրթերի դիշերց տալով, հեռացավ:

Դռնապանը, ճրագը ձեռին, դեռ կանգնած այտմի վրա, ապշությամբ նայում էր նրա յետևից մինչև անհայտացավ դիշերային խավարի մեջ: Քամու մռնչյունը խլացրեց նրա վերջին քայլերի ձայնը:

Հետանալով վանքից, ուղևորը բռնեց այն ճանապարհը, որ տանում էր դեպի Վաղարշապատ:

ՏԵՐՈՆԻ ԱՇԱԿԱՑԸ

Փոթորկային դիշերին հալածվելից զարհուրելին խաղաղ, հովասուն առավոտ: Վաղարշապատը շրջապատող ծառապարտ բլուրները մթում էին ձյունի սիրուն ճերմակ զոլորշիներով: Սար ու ձոր, դաշտ ու դաշտ պատած էր անթափանցիկ մառախուղով: Ոդի մեջ լողացող ջրային չնչերը, արեգակի առաջին ճառագայթներից, վառվում էին մխիթարական վառկյա ուրուրքների նման: Ծառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների նախշուն ծաղիկները, ցողված անձրևային կաթիլներով, կարծես ոսկեզօծված լինելին դուրեղուշ զոհարներով:

Այդ դեղեցիկ առավոտը հիշեցնում էր այն վաղեմի, հանդիսավոր առավոտները մեկը, յերբ Աստղիկը, Տարոնի դիցուհին, դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից և, շրջապատված յուր անթառամ նաժիշտներով, իջնում էր Քարքե լեռան բարձրությունները, Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու: Այդ մեջոցին հայոց յերիտասարդ դյուցազունները թաղչում էին Աշտիշատի դիցանոցը անառակ մեքին ծառատանի մեջ, հետևից դիտելու դեղեցիկ առավոտուց լողացողները: Բայց Աստղիկը Մուշի ամբողջ դաշտը վարազուրում էր մառախլապատ մշուշով և յուր լողացողները անտեսանելի յեր կացուցանում անհամեստ հետաքրքրությունից:

Վաղարշյան մառախուղը հետզհետե նոսրանում էր, նրբանում էր, մինչև արեգակը բարձրանում էր հորիզոնի վրա: Այժմ մշուշը մեջից, մորթես թափանցիկ շղարշե մեջից, սկսվեցան նկատվիլ հետևյալ պատկերները: Ցերեկում էր Սիմ լեռան կանաչազարդ շրթան, մեղմ ալիքներով և ծյունապատ գագաթներով, որոնք արևի ճառագայթների տակ վառվում էին վարդագույն ներկով: Իսկ ավելի հետու, դեպի հրվանդ և

Նեմրութ լեռների կողմերը, մանիշակագույն ժայռավենի նման, յերևում եր Բղնունյաց ծովակի միայն նեղ շերտը: Յերևում էին Ցաթքե լեռան բարձրությունները իրանց մթին ծմակներով և մռայլ անտառներով, վրան իրանց անմատչելի թավուտների մեջ անուցանում էին մի մռայլ ժողովուրդ: Հիշյալ լեռների հսկայական շրջանակի մեջ, որպես մի սքանչելի պատկեր, յերևում եր Մուշի ընդարձակ դաշտավայրը, հարթ, հավասար, իբրև մի լայնածավալ, նախշուն ղորդ: Այդ կանաչազարդ դաշտի վրա սփռված էին Տարոնի բազմաթիվ գյուղերը, ավանները, հոյակապ քաղաքները: Ահա՛ Մուշը խորին պատկառանքով բազմած է Տավրոսի լանջից վրա: Ահա՛ Մեղտի դեռ ոճապատուկ ափերի մոտ յերևում են ոճ քաղաքի բարձր աշտարակները: Ահա՛ Վիշապ քաղաքը, վիշապի լայն բերանի պես բացված, ահարկու ղռներով: Ահա՛ Կամկամ քաղաքը... ահա՛ ասլտանակ Զյունակերտը...:

Արածանին կես է կիսում Մուշի լայնատարած դաշտավայրը: Նրա արգավանդ ափերի մոտ, բացի բնիկներից, ապրում եր մի ժողովուրդ, որը ասպնջականություն եր գտել այստեղ Գանձեսի ափերից, և հնդիկ ժողովրդի արորի խոսքը փայլում եր հայոց արեգակից, և հնդիկ հերկավարի հայկական յերգը հնչեցնում եր Տարոնի լուսապայծառ առավոտի լռությունը

Արածանիի ափերի մոտ ապրում եր և մի այլ ժողովուրդ, որը հյուրասիրվել եր այստեղ Հռոմեղյի ափերից, և դեղնակաշի սինեպային, բոլորովին հայկական դեմք առանալով, մշակում եր հայոց յերկիրը: Նրանց բազմաթիվ անասունները արածում էին Արածանիի շամբուտ ափերի մոտ, նրանց դեղեցիկ կանայքը քորոցներով «վորդան կարմիր» էին հավաքում կանաչ, ցողազարդ մարգագետիններից, որը իրանց նուրբ ճնուածոցներով զարդարեն հայոց իշխանազուհիների ապարանքները:

Զայրացած է այս առավոտ Արածանին: Բայց նրա զայրույթը մարտական է, չէ վախեցնում հարազատ վորդուն: Ահա նրա որդիք կոհակները տանում են իրանց հետ մի ամրողջ նավատորմիղ— նախնական մարդու նավատորմիղը: Բարեկամները ափերի մոտ կանգնած. «Հաջողություն» են բարեմաղթում: Նավորդները դնում մեկմեկ «մնաք բարյավ» են ասում: Ցնվ թնթռ մաշկապատ նավակների խումբը, բեռնավորված հայոց յերկրի բարիքներով, լողում և դնալի հեռավոր աշխարհ, դեպի Բաբելոն: Նավորդների յերգը, նրանց ուրախաձայն աղաղակները, միախառնվելով դեմ խուլ վորոտման հետ, թնդեցնում են շրջակայքի խորին անդորրությունը:

Մուշի դաշտավայրը, չորեքկողմից շրջապատված լինելով բարձր լեռներով, այդ բնական ամրությունները, հսկայական շրջապարիսպի նման, պաշտպանում էին յերկիրը թշնամու հարձակմունքներից: Բացի բնական ամրություններից, նույն լեռների բարձրադիրքերի վրա դրած էին Տարոնի իշխանների անմատչելի բերդերը և նրանց ահռելի ամրոցները,

վորպիսիք էին՝ Ցեղնուաը, Մնծամոր ամրոցը, Աստղաբերդը, Այծից բնբդը և Վաղատանը:

Աշխեհատի վանքից շատ հեռու չեր Վաղատան ամրոցը. նա կանգնած եր Բարքե լեռան ապառաժների վրա, և խորհուրդ եմ տալիս նայում եր դեպի յուր սարսռատով հառող Արածանին: Ջանապան դաշտնի անցքեր, սարսեփիչյա ճանապարհներով, կշռում էին ամրոցի բարձրության նից կամ դեպի դնսը, պաշարման ժամանակ ջուր ստանալու համար, և կամ տանում էին դեպի անտառի խորքերը, դրսի հետ դաշտնի հաղորդակցություն ունենալու համար: Այդ անցքերի մուտքերը հայտնի էին միայն ամրոցի տերերին: Ամրոցի բարձր չրջապատները, տհաղին բուրդերը, բարձր աշտարակները դարերով մարտնչում էին բնության արհավիրքի և ժշնամու հարձակման դեմ, և միշտ մնում էին անպարտելի: Նա հովանավորված եր հին, հսկա կաղնիներով, վորոնց վերամբարձ կատարները մրցում էին ամպերի հետ:

Այդ ամրոցը ամենահին ժամանակներում, Քրիստոսից շատ դարեր առաջ, պատկանում եր Սիկունյաց իշխաններին, վորոնք Տարոնի նախկին տերերն էին: Իսկ վաղարշակ Ա.-ի օրերում, Քրիստոսից 150 տարի առաջ, Սիկունիները ավելի նշանակություն ստացան, վորովհետև վաղարշակը, հայոց բոլոր նախարարությունները կարգի դնելով, Սիկունիների քաջ և վարպետության մեջ հաջողակ իշխաններին ևս նախարարությանց կարգն անցուց և նրանց հանձնեց արքունի վարսպետության դիվանագործությունը: Բայց Տրդատի օրերում, 320 թվին Քրիստոսից հետո, Սիկունիները ապստամբվեցան թագավորի դեմ: Տրդատը խոստացավ, թե Սիկունիների ամբողջ ժառանգությունը, Տարոնը, նրան կնվիրեն, միայն մեկը կձերբակալեն ապստամբ Սլուկին: Ձննացի Մամգունի իշխանը հանձն առավ կատարել թագավորի ցանկությունը և դավաճանությամբ գտանեց Սլուկին: Նրա բոլոր տոհմը սրի ճարակ լինելով Վաղատան ամրոցի մեջ: Իսկ Մամգունը այդ ծառայության համար ստացավ, վորպես ժառանգություն, թե՛ Վաղատան ամրոցը, և թե՛ Տարոնը: Մամգունից առաջ կային Մամիկոնյան մեծ նախարարությունը, վորոնք վորդոց վորդի ժառանգեցին Տարոնը:

Այս առավոտ, դեռ լույսը չծագած, յերկու անձինք մուտք գործեցին Վաղատան ամրոցում: Մեկը ասկնի մեծ դռնից, մյուսը անտառի մեջ թաղնված դաշտնի անցքից: Առաջինը ուխ ձիավորն եր, իսկ յերկրորդը՝ հպատուտակ ձիավորը:

ԳՈՒԺԿԱՆ

Վաղատան ամրոցի ավերակներից մեկի մեջ, թանգագին գորգով պատած գահավորակի վրա, վորի յերկաք կողմը գրած եղեն չքեղ կերպարաններով պատած բարձեր, նստած եր մի յերկտասարդ: Նա, ինչպես յերևում եր

Նրա քնած դեմքից, դեռ նոր եր դուրս եկել յուր քնարանից և դուրս եր եկել յուր զարթնելու ժամից շատ վաղ: Վոչ հագնվել եր, վոչ լվացվել եր և վոչ սանդրվել եր: Մի լայն, սարյա, նուրբ վերարկուի մեջ սուզված եր նա, և բաց դլխի յերկար դիսակները, դագաթից իջնելով, մեղմ ալիքներով սփռվել եյին թիկունքի վրա, և յերբեմն աջողում եյին նրա դեղեցիկ, դունաթաղ դեմքը: Նրա անհանդիստ մատները անդադար վոլորում եյին՝ վոքր ինչ ուռած, կարմրագույն շրթունքի նորաբույս ընչացքը, թեև վոլորելու շատ պաշար չեյին դտնում: Այդ ցույց եր տալիս սրտի խորին խռովությունը: Իսկ սևորակ, նշաձև աչքերի մեջ նշմարվում եր մի անբացատրելի վրդովմունք: Քանի և հինդ տարեկան հաղիվ կլիներ նա, նուրբ կազմվածքով և վոքր ինչ մուդ-գնդնդուկ դեմքով, վոր պահպանվել եր նրա մեջ ժառանգական արյունից:

Յերիտասարդը վահան Մամիկոնյանն վորդի Սամվելն եր:

Սենյակը, վորտեղ նստած եր նա, ներկայացնում եր նրա ընդունարանը: Հատակը պատած եր նախշուն, բրդեղեն ոճոցներով. անկյուններում դրած եյին՝ դանազան ձևով, ծանր և թեթև նիզակներ, աեղեր, դեղարդներ, ջիդաններ, աշտեներ և յերկաթյա ահագին լախտեր, բոլորը դեղեցիկ քանդակներով զարդարած, բոլորը վոսկեհուռ դրվաղներով ապուդած: Իսկ սենյակի աչն ճակատի վրա, վոր կողմը դրած եր նրա դահավորակը; պատի վրա մեխած եր մի լայն վահրի մորթի: Այդ դաղանին նա ինքն եր սպանել վորսորդության ժամանակ, յերբ դեռ տասն և ութ տարեկան եր: Նրա վրայից քարշ եյին ընկած դանազան զենքեր. կապարճ՝ լի նետերով, աղեղ՝ լայնալիճ, տասպարներ՝ յերկաթյա յերկար կոթով, թեթև վահան՝ ուղղի թափանցիկ կաշուց պատրաստված, ծանր սապար՝ պողպատից շինված և խոշոր կոճակներով նման բևեռներով զարդված, սպատներ՝ կա՛մ տեղի սեռ սուր կատարներով, և կա՛մ մաղե ցցունքներով, դրահ՝ յերկաթյա մանր ողակներից դործված, պղնձյա հատ լանջապան, վորի մեջ տեղում բարձրաքանդակ դիրքով դուրս եր նայում մի դայլարված վիշապ, դանազան թրեր, դաշույններ, վաղրներ՝ յերկար և կարճ, ուղիղ և կեռ, միասայրի և յերկսայրի; վորոնց պատյանները պատած եյին վոսկով ու արծաթով, վորոնց կոթերը զարդարած եյին ականակուռ դոհարներով, և վորոնցից շատերը յերկաթահատ եյին ու դեղած:

Այդ սենյակը ավելի դինարանի նմանություն ուներ, քան թե ընդունարանի: Յերիտասարդ իշխանը սիրում եր իրան շրջապատել այն առարկաներով, վոր յուր սրտին շատ մոտ եյին: Միակ առարկաները, վոր հիշեցնում եյին, թե դա և հյուրանոց եր, եյին մի քանի փառավոր բազմոցներ, վոր դրած եյին պատերի մոտ, պատվավոր հյուրերի համար:

Սենյակի դռները ներսից փակած եյին և լուսամուտների ծիրանագույն վարագույրները, զարդարած ծանր, վոսկեթել ծոպերով, ցած եյին թողած: Մի դուռ միայն բաց եր մնացել, վոր տանում եր դեպի քնարանը: Այդ դռան մոտ կանդնած եր մի տղամարդ, յերկու ձեռքերը յուր

պաշտպանի կոթի վրա դրած: Նա հագած ուներ սուրհանդակի թևերն ու դեսա-մի կաթ մուշտակ, վորի մորթեղեն կողմը դեպի ներս, իսկ մաշկեղենը դեպի դուրս եր թողած. մեջքը պնդած եր կաշյա լայն գոտիով, վոր պահել եր կուրծքի մի մասը՝ մինչև վարի սառերին մասները, վորպեսզի ձիու սրաբշավ ցնցումներից փորոսիքը չխախտվեին: Կաշյա նեղ վարտիքը՝ սրունքները վրա՝ ամբացրած եր նույնպես կաշյա գանկապատներով: Վոտներին հագած ուներ մազե թանձր գուլպաներ, նույնպես մազե տակերով: Գլխին դրած ուներ թաղիքյա բոլորակ գլխարկ, վորի վրայի կերպարա փաթիթի ծայրերը ծածկում էին մերկ պարանոցը և ծածանվում էին լայն թիկունքի վրա: Նրա տարիքը դեռ չէին անցել յերեսուն ու հնգից, բայց կարճ զանգրահեր մորուքի մեջ արդեն նկատվում էին սպիտակ մազեր: Բնականից Թուխ դեմքը ավելի մոայլ դուրն եր առացել յերանականների խստությունից և յերկար ժամանակ արևի տակ այրվելուց: Բայց այդ այրական դեմքի մոայլ արտահայտությունը մեղմանում եր, պայծառանում եր յերկու լուսափայլ աչքերով:

— Ուրևէն քեզ նամակ չավի՞ն, Սուրեն,— ասաց իշխանը, շարունակելով ընդհատված հարց ու փորձը:

— Չավին, տեր իմ,— պատասխանեց սուրհանդակը.— ղրուչյան, վոր նամակը կարող եր բունվել ճանապարհին: Իսկ յես հաղիվ կարողացա հասցնել ինձ իմ տերոջ մոտ, վորպես կենդանի նամակ: Ամեն ինչ պատմեցի ձեզ, դուք այժմ դիտեք բոլորը...

— Բայց դու լավ չէրացատրեցիր ինձ, Սուրեն,— հարցրեց իշխանը խռովված ձայնով,— թե ի՞նչը հրապուրեց իմ հորը ուրանալ յուր կրոնը և հանձն առնել մի այդպիսի ամոթալի դերձ... Մինչև Մերուժան չարաղո՞րծը խելքից հանեց նրան... Եվս Արծրունիներին ճանաչում եմ... նրանք իմ քեռիներն են... փառքի, իշխանության և պատվի համար ամեն սրբություն կվաճառեն նրանք... Բայց իմ հա՛յրը... այդպես չեր իմ հայրը... մինչև նա՞ ել խաբվեցավ...

Վերջին խոսքերի միջոցին յերիտասարդի ձայնը սկսեց դողալ, ձեռքը սառած դեպի ճակատը, դլուխը խոնարհեցրեց և մի քանի րոպե մնաց ախուր մտախոհության մեջ: Սուրենը խորին ցավակցությամբ նայում եր նրա վրա: Ցերը կրկին դլուխը վեր բարձրացրեց նա, Սուրենը պատասխանեց:

— Չխաբվեցավ, տեր իմ: Այլ այն որից, վոր ձեր հորեղբորը բերեցին Տիզբոն, և այն որից, վոր Շապուհ արքան այնպիսի չարաչար մահով սպանել տվեց ձեր հորեղբորը,— ձեր հայրը հետամուտ կեղավ ստանալ հայոց սպարապետությունը. Շապուհը տվեց նրան այդ, և ձեր հայրը կատարեց Շապուհի կամքը...

— Այժմ հասկանում եմ... խոսեց յերիտասարդը ինքն իրան:— Պատմի՛ր, Սուրեն, ի՞նչպես կեղավ իմ հորեղբոր մահը:

Սուրհանդակը պժվարանում եր պատմել քաջ հերոսի մահը, վորի

Բաժին—Ամմա—2

թիկնապահներից մեկն եր յեղել ինքը, վորն կռիվներին մեջ այնքան յերկար տաբիներ մասնակցել եր ինքը: Բայց յերբ յերիտասարդը կրկին թախանձեց նրան, պատմեց:

— Ձեզ հայտնի յե, տեր իմ, թե վորպիսի՛ խաբկությամբ Շապուհ արքան մեր Արշակ Թագավորին և մեր հորեղբորը հրավիրեց Տիզբոն: Թագավորին յերկաթյա շղթաներով աքսորեց Նուժաստանի Անհուշ բերդը:— Այդ յես պատմեցի ձեզ:— Հետո բերել տվեց ձեր հորեղբորը դատելու: Այն որը Շապուհի դիվանի ամբողջ հրապարակը լի յեր բազմությամբ: Ներկա եյի և յես: Ցերբ կանչեցրին ձեր հորեղբորը դիվանի առջև, յերբ Շապուհը նայեց նրա վրա և, տեսնելով անձով փոքրիկ, արհամարհանքով հարցրեց.— «Դո՞ւ եյիր, վոր այդքան տարի կոտորում եյիր արքունիքին (պարսիկներին). դո՞ւ եյիր, վոր այդքան ժամանակ անհանգստացնում եյիր մեզ»: Ձեր հորեղբայրը համարձակությամբ պատասխանեց.— «Այո՛, յես եյի, արքա»:— «Ապշե՛ս, ասաց Շապուհը զայրանալով, հաղվեսի մահով սպանել կուտամ քեզ»: Ձեր հորեղբայրը այսպես պատասխանեց արքայի սպառնալիքին. «Այժմ դու տեսնելով ինձ անձով փոքրիկ, արհամարհում ես. մինչև այդքան ժամանակ չհասկացար իմ մեծության չափը: Մինչև այսօր յես քեզ համար առյուծ եյի, իսկ այժմ աղվե՞ս: Լսի՛ր, արքա, յես այն վառակն եմ, վոր մի հսկա եյի, մեկ վոտս մեկ լեռան վրա յեր դրած, մյուս վոտս մի այլ լեռան վրա. յերբ աջ վոտիս վրա եյի հենվում, ձախակողմյան լեռը դեռևս տակն եյի տանում, իսկ յերբ ձախ վոտիս վրա եյի հենվում, ձախակողմյան լեռը դեռևս տակն եյի տանում»: Շապուհը հարցրեց.— «Ասա՛ ինձ, վորո՞նք են այն յերկու լեռները, վոր դու դեռևս տակն եյիր տանում»: Նա պատասխանեց.— «Ցերկու լեռներից մեկը դու եյիր. մյուսը հռոմեացի Թագավորը»: Քանի վոր հայոց նախարարների մեջ մխիթարություն կար, քանի վոր նրանք կապված եյին իրանց Թագավորի հետ, և քանի վոր մենք պահում եյինք մեր հայր Ներսեսի խրատները,— այնքան ժամանակ ապրված մեզ հետ եր և մենք կարողանում եյինք խրատել մեր աշխարհի թշնամիներին, վորոնց թիվում և քե՛զ, արքա: Բայց յերբ մեր նախարարների յերկպառակությունը մատնեց մեր Թագավորին քո ձեռքը, այն որից մենք ինքներս մեր կործանումը պատրաստեցինք... Այժմ ինչ վոր կամենում ես արա՛, յես պատրաստ եմ, արքա»: Հրապարակի վրա հավաքված ամբողջ բազմությունը զարմանում եր ձեր հորեղբոր համարձակության վրա, զարմացավ և ինքը Շապուհ արքան, և դուրեց նրա քաջությունը: Բայց հետո հրամայեց մորթել նրան, կաշին տիկ հանել, լցնել խոտով և տանել Անհուշ բերդը: Այնտեղ դրված և նա, իբրև նախատինք, չղթայակապ Արշակ Թագավորի աչքի առջև, և դժբախտ Թագավորն աչքից արտասուքը չեր պակասում, քանի վոր նայում և յուր քաջ, հավատարիմ ազատպետի վրա:

Ներիսաասարդը, լսելով ցավալի պատմությունը, թաչկինակը տարավ դեպի լացած աչքերը և ծածկեց յուր արտասուքը:

— Հերո՛ս հերոսի նման մեռավ,— բացականչեց նա:— Նրա վորդին, Մուշեղը, կարող և պարծենալ հոր մահվամբ: Բայց յի՛ս... յես ինչո՞վ կարող եմ պարծենալ... յես պետք և հավիտենական նախատինքի տակ մնամ... Իմ հայրը յուր յեղբոր ապարատեությունը առանալու համար, դառնում և նրան սպանել ավող Շապուհի ձեռքում մի անարդ գործիք... և այժմ պարսից գործով դալիս վողողելու Հայաստանը արյունով... Թշվա՛ռ եմ յես, Թշվա՛ռ... ինչո՞վ պետք և քավեմ այդ նախատինքը...

Արեղակի առաջին ճառագայթները, ընկնելով Ծիրանեղուշն վարդերի վրա, լցրին սենյակը Ծիրանեղուշն լուսով: Ներիսաասարդը առակալով նկատեց, վոր որը լուսացել եր: Նա դարձավ դեպի սուրհանդակը, ասելով.

— Շնորհակալ եմ, Սուրեն, յես քո ծառայությունը չեմ մոռանա: Այժմ կարող ես դնալ, քանի վոր ամրոցում դեռ քնած են: Ցերը հարկավոր լինեա, կրկին կկանչեմ քեզ: Սուրենը, մինչև հառակը խոնարհվելով, դլուխ տվեց:

— Դու, ի հարկե, ձեր տա՞նը կմնաս,— հարցրեց Ներիսաասարդը:

— Վոչ, տեր իմ, յես յերդվել եմ իմ կնոջ, իմ զավակների յերեսը չտեսնել, մինչև...

Նա չավարտեց խոսքը, բայց Ներիսաասարդը հասկացավ, թե ինչ եր կամենում ասել: Բարի և քաջ դինվո՛ր. ամբողջ հինդ տարի հայրենիքից տարտակ յեր նա, ծառայում եր Պարսկաստանի հայկական հեծելազորքի մեջ, մասնակցել եր շատ արշավանքների քուչանաց դեմ, իսկ այժմ վերադարձել եր յուր հայրենիքը: Նրա հայրենի տվանը, Մոքնին, շատ հեռու չեր Վողական ամրոցից, նա չեր ցանկանում յուր տնակը տեսնել, վորովհետև նրան դրաղեցնում եր մի գործ, վոր ավելի մոտ եր նրա սրտին, քան թե կինը, վորդին, բարեկամը...

— Ուրեմն դու վո՞րտեղ կմնաս:

— Աշտիշատի վանքում,— պատասխանեց նա,— այնտեղ չեն ճանաչի ինձ, կմնամ, վորպես մի ուխտավոր: Յես իմ ձին այնտեղ եմ պահ տվել:

Ներիսաասարդը ցած իջավ դահավորակի վրայից և, ավելի պինդ փաթաթվելով յուր լայն վերարկուի մեջ, անցավ քնարանը: Սուրենը հետևեց նրան: Նա մոտեցավ յուր մահճակալին և ձեռքով մի կողմ ծալեց մահճակալի առջև փռած դորգը: Հետո մոտը սեղմեց յերկաթյա հաղիվ նըշմարվող դաղանակի վրա, խկուն հատակի տախտակամածը բարձրացավ և հայտնվեցավ մի քառակուսի ծակ:

— Դու ծանո՞թ ես այս անցքի հետ,— դարձավ նա դեպի Սուրենը:

— Ի՞նչպես ծանոթ չլինել, տեր իմ,— պատասխանեց Սուրենը մի տանձին դլացմունքով,— այդ սենյակը հանդուցյալ սպարապետի քնա-

բանն եր. յես դեռ պատանի էյի, իմ յերեսին մի մազի հետք անդամ չէր երեվում, յերբ այդ սենյակի հատակը ավելում էյի...

Սուրենը մանկությունից անվել, մեծացել եր այդ ամրոցում: Ամեն կոնյաննեերի դյուզացին լինելով, իրրև մի չնորհալի և մաքուր տղա, նրան բերեցին ամրոցը: Ցերբ բավական վարժվեցավ, սենեկապետի պաշտոն եր կատարում:

Ցերիտասարդը պատուհանից վեր առեց պողովատե կայծհանը, կայծքարը և արեթը, զարկեց միմյանց, կայծերը ցայտեցին, արեթը վառվեցավ, նրանով վառեց ծծումբի լուցկին, իսկ վերջինով վառեց մոմպատե կծիկը և տվեց Սուրենի ձեռքը, ասելով.

— Դե՛, անցի՛ր:

Սուրենը կրկին անդամ լուռթյամբ ղլուխ տվեց և, յուր սովորության համեմատ, յերեսը խաչակնքեց, հետո ցած լջալ քառակուսի նեղ ծակից, վորտեղից մի մարդ հազիվ կարող եր անցնել: Ցերիտասարդը ցած թողեց տախտակյա փոքրիկ դռնակը և անցքը ծածկեց դորդով:

Այդ ամրոցի հատակի տակ կային բազմաթիվ սորերկրյա անցքեր, վորոնք, ցանցատեսակ լաբյուրինթոսի նման, տանում էյին դեպի պատյան կողմեր: Գլխավոր սենյակները, վորոնց մեջ բնակվում էյին ամրոցի տերերը, ունեյին իրանց առանձին դաղտնի անցքերը, վորոնք հատակի խորքերում միանում էյին և այդպիսով պահպանում էյին հաղորդակցություն թե՛ միմյանց մեջ, և թե՛ դրսի հետ:

ՄԻ ՕՂՈՏ ՄԻՏՔ ԹՈՓՈՒՄ Ե ՆՐԱ ՄԵՋ

Սամվելը կրկին մտավ յուր ընդունարանը:

Այս առավոտ այդ կռվիկ, ընդարձակ սենյակը, կարծես, խեղդում եր նրան: Նա մոտեցավ լուսամուտին, հետ քաշեց ծանր կերպասյա վարագույրը և բաց արեց փեղկերից մեկը, վոր փոքր ինչ թարմ ոդ ներս թողնե: Հետո բաց արեց դռները սպասավորի համար: Սպասավորն վեհասրտեն ներս մտավ նրա դեղեցիկ, վոսկեզույն բարակը: Այդ խելացի անասունը, կարծես, նախասենյակում սպասում եր դռների բացվելուն: Նա այն առաքման քնքուշ և նրբակազմ եր, վոր դրանից կարելի յեր բոլոր կողքերը համարել: Ցերկար պարանոցի վրա կրում եր արծաթյա ոզամանյակ: Նա մոտեցավ և, կանդնելով յեռանի թաթիկների վրա, առջևի թաթիկները բարձրացրեց, դրեց յուր սիրոջ կուրծքի վրա, և մի առանձին քաղցրությամբ նայում եր նրա յերեսին, աշխատելով դուշակել, թե ինչու յեր նա այնքան տխուր: Ցերիտասարդը ձեռքով փայփայեց նրա սիրուն ղլուխը, յերկար ականջները, նուրբ դունչը, և բարակը մխիթարվելով այդ փաղաքշանքից, ցած թողեց թաթիկները, հետացավ սենյա-

կրկ մի անկյունում և աշխատել պատկից, շղարշելով յուր հետ աչքերով հետևել, թե ո՛րպես յուր սիրելի տերը՝ դանդաղ, անհամասար քայլերով՝ շարունակում էր անց ու դարձ անել սենյակի մեջ:

Նրա սիրտը ալեկոծության մեջ էր. յերիտասարդական ջերմ արյունը յեռն էր գալիս նրա մեջ: Վարքան մտածում էր դալոց տղետների մասին, այնքան չարչիը յուր բոլոր դարմանքներով մեծանում էր նրա աչքում: Հայաստանը մնացել էր բոլորովին անտեր և անպաշտպան: Հայոց Աբշակ թագավորը, յերիտքի չղթաների մեջ, հեծում էր Խուժաստանի Անհուշ բերդում: Հայոց թագաժառանգը, Գաղը, յուր կնոջ՝ Զարմանդուխտի և յերիտ. վորդիների՝ Աբշակի և Վաղարշակի հետ, պահված էին Կ. Պոլսում: Թագավորին աքսորել էր պարսից Շապուհ արքան, իսկ թագաժառանգին կալանավորել էր հունաց Վալես կայսրը: Հայաստանի քահանայապետը, հայրենիքի հզոր պաշտպանը, Ներսես մեծը, նույն կայսրի հրամանով աքսորված էր Պաոմոս անբնակ կղզում: Հայաստանը մնացել էր անտեր: Նրա յերիտ. պաշտպանները— թագավորը և քահանայապետը— չկային: Հունաց կայսրը մեկ կողմից, պարսից արքան մյուս կողմից, յերիտ. անհաղ վիշապների նման, բերանները բաց արած, մաքառում էին միմյանց հետ, թե ո՛րը ավելի շուտ կկլանե անտեր մնացած յերկիրը...

Այդ ցավալի մտածություններն էին, վոր ալեկոծում էին յերիտասարդի սիրտը և նա սոսկալով տեսնում էր յուր հայրենիքի մեծ տաղնապը— նրա մոտալուտ որհասը...

Մյուս կողմից, տեսնում էր նա հայոց նախարարների մեջ յերկպառակություն. վոմանք ցանկանում էին ընդունել հունաց դերիշխանությունը և հարկառու լինել հույներին, իսկ վոմանք ցանկանում էին ընդունել պարսից դերիշխանությունը և հարկառու լինել պարսիկներին: Հայրենիքի անվտանգությունը սիրող և նրա ինքնակալության նվիրված նախարարները տատանում էին անհնարին հուսահատության մեջ, թե ինչ միջոցով ազատեն հայրենիքը անդառնալի կորուստից: Զկար մեկը, վոր նրանց մեջ համաձայնություն կայացներ:— Զկար թագավորը, չկար քահանայապետը...

Կային դավաճաններ:

Ցեղ այդ դավաճաններից հայոց յերկու ամենահզոր նախարարությունների ներկայացուցիչներն էին՝— Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին: Մեկը յերիտասարդի հայրն էր, մյուսը յերիտասարդի մորեղբայրն էր... Ցերկուսն էլ ուրացել էին քրիստոնեությունը, յերկուսն էլ ընդունել էին պարսից կրոնը և Շապուհ արքայի ճնշումով դարձել էին մի սոսկալի զենք, վոչնչացնելու ամեն ինչ, վոր սուրբ էր, վոր նվիրական էր Հայաստանում...

Այդ սարսափեցնում էր յերիտասարդին և միևնույն ժամանակ նրան սիրտը լցնում էր մի անբացատրելի կատաղությամբ:— «Մոդերով ու մոդալանեերով է գալիս իմ հայրը»... մտածում էր նա խորին դառնությամբ,

— և յուր հետ բերում է, վորպես ոգնական պարսից դորուբյունը... դալիս է վոչնչացնելու մեր յեկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրությունը... դալիս է պարսկացնելու մեզ։... Նա դալիս ձեռք ձեռքի տված Մերուժանի հետ... Թագավորությունը սպանեցին, այժմ պետք է սպանեն ազդությունը, կրոնը... Մենք այսուհետև պետք է պարսկերեն խոսենք և պարսկերեն աղոթենք... Ցավ իմ հայրը մի այդպիսի յեղեռնագործության պետք է մասնակից լինի, հավիտենական նզովք դնելով Մամիկոնյանների տոհմի վրա...

Նրա վարդագույն շրթունքները բոլորովին դունաթափվեցան, ծնկները դողացին, աչքերի առջև մթնեց և հաղիվ-հաղ կարողացավ իրան հասցնել դահավորակի մոտ, և ծանրացած դլուխը բաց թողնել բարձերի վրա։ Ճերկար նա, յերկու ձեռքով դլուխը բռնած, դոնվում եր մի տեսակ տենդային չփոթության, մի տեսակ հիվանդոտ այլայլության մեջ։ Մթին մառախուղի նման՝ անորոշ մտքեր պտտվում եյին նրա բորբոքված յերեվակայության մեջ։ Հանկարծ ցնցվեցավ նա, և կրկին վեր թռավ պառկած տեղից, ինքն իրան խոսելով.

— «Մամիկոնյանը ծնում է դավաճաններ... Մամիկոնյանը ծնում է հերոսներ... Ցերը իմ հորեղբայր Վարդանը արքայադն Տիրիթի հետ ապստամբվեցան մեր Աբշակ Թագավորի դեմ և դիմեցին պարսից Շապուհ արքային,— դարձյալ իմ հորեղբայր Վասակն եր, վոր դնաց նրանց յետևից և, ճանապարհին բռնելով, սպանեց թե՛ Տիրիթին, և թե՛ յուր յեղբորը... Նրա ձեռքը չդողաց թափել յուր հարազատի արյունը, վոր դավաճանում եր յուր Թագավորին և յուր հայրենիքին... Իսկ յե՞ս»...

Վերջին խոսքը արտասանելու միջոցին, կարծես, նրա շրթունքները կըրակով այրեցին, նա չկարողացավ վերջացնել, կրկին ընկավ դահավորակի վրա և, աչքերը բռնելով, սկսեց դառն կերպով հեկեկալ։— «Ա՛խ, հայր իմ... ա՛խ, հայր իմ»... կրկնում եր նա և արտասուքը հեղեղի նման թափվում եր աչքերից։

Նա սիրում եր յուր հորը, սիրում եր վորդիական ջերմ, անկեղծ սիրով։ Բայց սիրում եր և յուր հայրենիքը։ Նրա կրթությունը այնպիսի անձանց խնամքով եր կատարվել, վոր պատրաստել եյին նրանից մի անձնանվեր վորդի՝ նախ հայրենիքի, և ապա ծնողաց։

Ընդունարանի դուռը բացվեցավ, ուշիկ քայլերով ներս մտավ մի պատանի, նայեց յերիտասարդի վրա և, սառածի նման, կանգնած մնաց պատի մոտ։

Պատանին լավ հագնված ասնեկային մանկլավիկի տպավորություն եր դործում։ Միածանի բոլոր դույները կային նրա հագուստների վրա. դունավոր եր գլխի թեթև ապարոշը, վոր թեք կերպով կապած եր թասակի վրա, ծածկում եր ալ կողմի հոնքը, իսկ ձախ կողմի հոնքը ճակատի մի մասի հետ բաց եր թողած. դունավոր եյին նրա յերկար, վոսկյա դանդուրները, վոր սփռված եյին ուսերի վրա. դունավոր եր բևե-

դյա դահլիճ, որը, խորշակոր վահանակներով մի քանի անգամ բաժակ մեջ-
քից անցնելուց հետո, անփութորեն վերջնականությամբ ծածանվում էր
ծնկների վրա. դունավոր էր նրա բռնկոնակը, հուրհրիկը, վարտիքը,
որը մանր ծալքերով իջնում էր մինչև ծնկները և այնտեղ կապված էր
նույնպես դունավոր առնապաններով, և յուր ծալքերի չարունակությամբ
ծածկում էր առնապանները, իջնելով մինչև սրունքները: Գունավոր էին
և նրա նախշուն տրեխները, որոր պատրաստված էին դույնզգույն մե-
ապաքայ թևերից, և կապվի թաթիկների նման, վոտքերը դետնին դնելու
ժամանակ ձայն չէին հանում: Զախ ականջին կրում էր արծաթյա ո-
ղակ. դա որդուն նշան էր, որը նա իշխանական սեռյակի սպասավոր է:

Նա դեռ ապշած նայում էր յուր տիրոջ վրա: Նրա զեղեցիկ, խոժ
աչքերը արտահայտում էին և՛ զարմացք և՛ հեդնություն: Զարմանում էր,
թե ինչ էր պատահել, որը նա այնպես շուտ էր զարթնել և, առանց լը-
վացվելու, առանց հագնվելու, դուրս էր եկել քնարանից: Նա յերբեք սո-
վորություն չուներ այդքան վաղ վեր կենալու յուր անկողնից: Յուր մըտ-
քում ծիծաղում էր, թե յուր միշտ ուրախ, միշտ զվարթ տերը անպատ-
ճառ մի «վերացական» կունենար, որը այդպես տխուր էր, և , ազավորի
նման, ընկած էր յերեսի վրա, գլուխը չէր բարձրացնում: Այդ բոլորը
բացատրում էր նա յուր տեսակետից:

Յերբ նկատեց, որը յուր վրա ուշադրություն չեն դարձնում, և յուր
ներկայությունը զգալ տալու խորամանկությամբ, կամաց մոտեցավ բա-
րակին և նրա վոտքը սկսեց կոխել: Շունը մի տարտոտ հառաչանք ար-
ձակեց, որը նշան էր առատիկ վիրավորանքի: Իշխանը դլուխը վեր բարձ-
րացրեց, նայեց դեպի այդ կողմը:

— Հուսիկ, այդ դո՞ւ կես:

— Այո՛, տեր իմ,— պատասխանեց սպասավորը, գլուխ տալով:

Ժամանակի սովորության համեմատ, սպասավորը մեծ ծառայու-
թյան համար պետք է յուր տիրոջ աչքին յերևնար մի այն. նա համարձա-
կություն չուներ յուր կողմից առաջարկություններ անելու, այլ պետք է
լուռ սպասեր տիրոջ հրամանին: Այժմ նրա լվացվելու և հագնվելու ժա-
մանակն էր: Սպասում էր, արդյոք յուր տերը կբարեհաճե՛ր ջուր պահան-
ջել: Այդ մասին վոչինչ պատվեր չտեսցավ պատանին. մտածեց փարատել
իշխանի տխրությունը:

— Գիտե՞ք, տեր իմ, այս դիշեր ի՛նչ և պատահել ամրոցում,— ա-
սաց նա խորամանկ ժպիտով:

— Ի՞նչ և պատահել,— հարցրեց իշխանը:

— Մկները պապիկի մորուքի մի կողմը կրծոտել են:

Ամբողջ ծերունին դունատանի մասին էր խոսքը:

— Ե՛րեկ յերեկոյան,— շարունակեց պատանին,— նա ոծվել էր,
յուղվել էր, դնացել էր յուր փեսային տեսնելու. այնտեղից հարբած յե-

հել ու պառկել եր, դիշերը միները մի լավ ընթրիք էլին անուշ արել նրա բարձերի վրա...

Իշխանը նայեց պատանու անհանդիստ, վառվռուն աչքերի մեջ և բարկությամբ ասաց.

— Զարացճի, այդ անպատճառ քո դործը կլինի:

— Չե՛, ասաված է վկա:

— Իմ դլխովը յերդվիր:

Պատանին կարմրելով կանդ առեց:

— Տեսնո՞ւմ ես, անպիտան. մյուս անդամ այդպիսի հիմարություն չանես:

Կատակը անհաջող անցավ:

— Ապա ի՞նչ անեյի... ամոթից դլուխը քարշ ձդած մրմնջաց պատանին,— այնպես հարբած յեկել, քնել եր, դիշերը մարդ և մտնում ամբոցը, նա չե զարթնում:

— Ի՞նչ մարդ,— հարցրեց իշխանը ավելի լուրջ կերպով:

— Մի սուրհանդակ. յես բաց արի նրա համար դուռը. նա ուղղակի դնաց սենյակը մոտ:

— Դու այդ ժամանակ արթո՞ւն եյիր:

— Ցես ամբողջ դիշերը չեմ քնել...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին պատանու դեմքը ավելի կարմրեցավ:

— Ցերեկի գնաց սենյակի շուրջը քծնելում եյիր... հարցրեց իշխանը ավելի մեղմ ձայնով:

— Ի՞նչպես իմ տիրոջ առջև մեղքս ծածկեմ... այդպես եր...

Պատանին սիրահարված եր իշխանի մոր աղախիններից մեկի վրա և այդ դիտեր նրա սերը: Ցեվ նրա վարմունքը ծերունի դռնապանի մորուքի հետ՝ այդ սիրահարության հետևանքներից մեկն եր, վորովհետև անհամբեր ծերունին շատ անդամ արդելք եր լինում պատանու դիշերային արշավանքներին... Բայց իշխանը թողեց այդ խնդիրը և, խոսքը փոխելով, հարցրեց նրանից.

— Դու ճանաչեցի՞ր սուրհանդակին:

— Սատանայի պես:

— Ո՞վ եր:

— Պարևխևցի Վոսկանն եր. նա վոր յուր կնոջը սպանեց և յուր յեղբոր կինն առեց. մեծ իշխանից նամակ եր բերել:

— Նա մնա՞ց տիկնոջ մոտ:

— Վոչ, նամակը հանձնեց, բավական խոսեցին, հետո էլի մթնով դուրս դնաց: Դուռը յես բաց արի:

— Այդ մասին լեզուդ լուռ կպահես:

— Մուլ ու մունջի պես:

Այդ ուրախ, պարզամիտ պատանին վոչ սակավ անդամ վանում եր

յուր սիրոջ թախծություններըը նրա սխրության բոլոներում, և վոչ սակավ անգամ յուր ծիծաղաշարժ բանաստեղծություններով, վոր սովորություն ուներ դրծ դնել ամբողջ հասարակության մեջ, դիմբճռելու նրան պատճառում նրան: Բայց այս առավոտ դեռ չմնաց յուր վարպետության նկատից: Նրա աչքը դարձյալ սխուր եր, դարձյալ դանդաղ եր մի անսովոր, մտալ մտախոհության մեջ:

Նա ապառավորից շատ բան չիմացավ աուրհանդակի մասին, վորքան ինքը դիտեր. միակ բանը, վոր հետաքրքիր եր նրա համար, այդ այն եր, թե ինչո՛ւ յուր մայրը հետացրել եր աուրհանդակին: Ամեն անգամ, յերբ պատահում եր աուրհանդակ ընդունել, նա սովորաբար կմնար ամբողջ, այնքան ժամանակ, մինչև բերած նամակի պատասխանը կատանար, հետ կդնար: Իսկ այժմ ի՞նչն եր ստիպել յուր մորը թաղցնել աուրհանդակին, և թաղցնել ամբողջ տարակա մի դյուղում:

Նա դարձավ դնալ ապառավորը այս խոսքերով.

— Հուսիկ, յեթե աուրհանդակը մյուս անգամ դալու լինի սիկնոջ մոտ, դու կարո՞ղ ես այդ իմանալ:

— կարող եմ,— պատասխանեց պատանին վստահությամբ:

— Ո՞ւմից:

— «Ներանից», «նա» ամեն բան կասե ինձ:

Աոսքը սիկնոջ աղախնի մասին եր, վոր ատատիկ սիրում եր պատանուն:

— կարո՞ղ ես իմանալ և ա՛յն, թե աուրհանդակը ի՞նչ կխոսի սիկնոջ հետ:

— Այդ էլ կարող եմ:

— Ի՞նչ միջոցով:

— «Ներանը» կասեմ, «նա» դևի նման կմտնե մի ծակուտ, ականջ կդնե, հետո կդա բոլորը կպատմե ինձ:

— Բայց «նա» չպիտի դիտենա, վոր դու ինձանից պատմեր ես ատացել:

— Հուսիկը յերեխա չե, նա այդ կարող և հասկանալ:

— Իսկ յեթե «նա» լեզուն չպահե՞:

— «նա» այնպիսի աղջիկ չե. յես «Ներանը» կասեմ՝ բերանդ փակ պահիր, և «նա» էլ չի բաց անի:

Տիկնոջ մոտ յեկած աուրհանդակը հասարակ մարդ չեր:

Նա Տարոնի տանուտերներից մեկն եր, նրա մասնավոր խոսակցությունը սիկնոջ հետ՝ շատ բան կարող եր պարզել իշխանի համար, և այդ եր, վոր հետաքրքրում եր նրան:

Աբեղայի արդեն բավական բարձրացել եր հորիզոնի վրա և իշխանի սենյակը լցրել եր ջերմ, վոսկեվարդ ճառագայթներով: Նա ցած իջավ պահակատնի վրայից և հրամայեց պատանուն, վոր յեկացվելու ջուր տա:

Նա մտավ քնարանը: Ամենակ, սենյակի մի կողմում, հատակի վրա տարածված եր փափուկ, թանդագին գորգ. պատանին վազեց նրա վրա մի

պատառաւ բամբակեայ մաքուր դրծվածքից, վորի վրա ծալապատիկ նստեց իշխանը: Այդ պատառաւը նրա համար էր, վոր ջուրը չորըկիվի ոթոցի վրա: Հետո պատանին տարածեց իշխանի ծնկների վրա կապկպած սպիտակ ղեն-ջակը և արծաթեայ լաստանը դրեց նրա առջև: Գեղաքանդակ լաստանը բոլ-րակ տաշտի ձև ուներ, անհավասար, ալիքաձեր չրթունքներով, վորոնք բուն աղոցի ատամների էլին նմանում: Իսկ չրթունքների մեջ տղուցած եր մի տափակ, ցանցատեսակ խուրձ, մանր ծակոտիքներով, վոր զանազան նը-կարներ էլին ներկայացնում: Հեղած ջուրը ծակոտիքներից մաղվում եր լա-ղանի մեջ և լվացվողը յուր անմաքրությունը չեր տեսնում: Պատանին ծնկների վրա չոքած եր յուր տիրոջ առջև, աջ ձեռքով ջուր եր ածում, իսկ ձախ ձեռքում բռնած ուներ մի փոքրիկ արծաթեայ թաս, վորի մեջ դրված եր անուշահոտ ոճառը: Արծաթեայ ջրածիկը, ադին լայն բաց ա-րած սիրամարգի ձև ուներ: Պատանին բռնել եր թևքերից և մաքուր ջուրը հոսում եր դեղեցիկ թռչունի կտուցից: Սիրամարգը Մամիկոնյան-ների սիրած թռչունն եր. այդ հիշատակը նրանք բերել էլին իրանց նախ-կին հայրենիքից—Չինաստանից:

Ցերբ իշխանը լվացվեցավ, պատանին ջրածիկը և լաւանը մի կողմ դրեց, հետո մաքուր անձեռոցիկով, վոր պատրաստ ուներ ուսի վրա, սկսեց սրբել յուր տիրոջ յերեսը, պարանոցը և ձեռքերը: Ցեվ ասյա վեր առեց փղոսկրյա սանդրը, սկսեց դլուխը սանդրել: Գլխի բոլորտիքը ասի-բած եր, միայն գագաթի վրա ճոխ յերկարությամբ աճել էլին սև գիսակ-ները: Գագաթի բոլորտիքին մեկտեղում, մի դրամի մեծությամբ, նուշ-պես ածիլած եր: Գիսակները սանդրելուց հետո, պատանին պատրաստ-վում եր ոծել անուշահոտություններով:

— Հարկավոր չէ,— ասաց իշխանը:

Պատանին զարմացավ: Այդ առաջին անգամն եր, վոր յուր տիրոջ մա-զերը սանդրելուց հետո, նա պետք է թողներ առանց ոծելու:

«Ցեթե պետք է թագցնեմ իմ տխրությունը»... մտածեց իշխանը և թուլլ տվեց պատանուն, վոր շարունակե սովորական պչրանքը:

Գլուխը ոծելուց հետո, նա գիսակները հատո հանդուցյալներով հավա-քեց գագաթի շուրջը, խիճ երանց ծայրերը արծաթի գանդուրներով բաց թողեց ականջների ու պարանոցի վրա: Հետո սկսեց կապել գլխի զարդե-րը: Դրանք բաղկացած էլին մի խուրձից, վոր բռնված եր գեղեցիկ անկ-վածներով, և դուրնդուրն մետաքսյա ապարոշից, վոր կապեց խուրձի վրա: Ապարոշի առջևի կողմում, ուղիղ ճակատի վրա, կապեց արծաթեայ մահիկը, վոր կիսալուսնի ձև ուներ և քանդակված եր զանազան խոր-հըրդավոր նշանագրերով: Ցերկու բարակ շղթաներ ամրացված էլին մա-հիկի յերկու յեղջյուրներից, և երանց ծայրերը, ապարոշի բոլորտիքով անցնելով դեպի ծոծրակը, այնտեղ փակվում էլին արծաթեայ ճարմանդնե-րով: Ճարմանդների յուրաքանչյուրի վրա փայլում եր մի խոշոր ակն: Մնում էլին աչքերը, վոր պետք եր ուռըմայել ծարբերի և փոշիով: Պա-

տանին դուրս հանեց յուր ծոցից մի մաշկեղեն փոքրիկ պարկ, որ լցված էր ոսկեմայրով: Հետո վեր առնց վոսկյա դեղդիրը, որ բարակ ճղի ձև ուներ, նախ մոտեցրնց յուր շրթունքներին, բնրանի դարոշիով փոքր ինչ խոնավություն շնչնց նրա վրա, և ապա թաթախնց պարկի մեջ: Դեղդիրը ընդունելց յուր վրա պարկի մեջի սև փոշինց նույն հոտով, որ չափ խոնավություն ուներ: Սկսնց նրանով սուրմայել աչքերը: Ամենայն զգուշությամբ և շնորհալի ձեռքով տանում էր նա դեղդիրը կոպերի մեջով, որոնց յուղերքը, ընդունելով իրանց վրա սև փոշին, այնպիսի տպավորություն էին գործում, կարծես, սև գծերով յուղերավորված լինելին:

Այժմ պետք էր հաղցնել իշխանին:

Նախ հաղավ մեսրոպյա, ծաղկավոր պատմուճանը, կողքերից ճղած փեշերով, որ իջնում էին մինչև սրունքները: Պատմուճանի լայն թևքերի վոսկյա կոճակները, որոնք տղից կախընկած կեռասի ձև ուներին, ծառայում էին ավելի երկար զարդ, քան թե բաղումները կոճկելու համար: Բայց կուրծքը կոճկնց նա նուշնակս վոսկյա կոճակներով, որոնք չախուրասանների ձև ուներին: Մեջքին կապնց ծանր, ականակուռ վոսկյա քամարը, որի ծայրերը, վակվելով միմյանց հետ, ներկայացնում էին մի բարձրաքանդակ աստղ՝ սփռված ճաճանչներով: Աստղի մեջտեղում վառվում էր մի խոշոր, վարդագույն գոհար, որ շրջապատված էր ավելի մանր գոհարներով: Քամարից, ձախ կողմի աղդրի վրա, քաշ ավնց յուր անթաժան նրանը, որի ծայրը հասնում էր մինչև ծունկը: Այդ յերկայրի դենքի թե՛ պատյանը, և թե՛ կոթը պատած էր վոսկով և զարդարած էր դեղեցիկ նկարներով: Պատմուճանի վրա հագավ սարյա կարճ, բիլինոցը, որ նախշած էր վոսկեթել անկվածներով: Կարմիր վարտիքի միայն սոսրին մասերն էին յերևում յերկար պատմուճանի տակից, և այդ մասները, տակից հավաքված լինելով դունավոր սրունքակապերով, ուռուցավոր ծալքերով իջնում էին կարմիր կոշիկների վրա: Նրա իշխանական պատուճանքը լրացրին յերկու վոսկյա դնդեր, որ քաշ ավնց ականջներից:

Նա այս առավոտ հակառակից այսպես հագնվնցավ: Նա դիտեր, որ յուր մայրը անպատճառ կկանչե նրան, հայտնելու հորից ստացած նորությունները: Այդ պատճառով կամեցավ յերևնալ մոր աչքին այնպես, որպես սովորաբար տեսել էր նրան, որպեսզի, նա առիթ չունենար կասկածելու, թե որոշին վատ տեղեկություններ է ստացել:

Նա կրկին դուրս յեկավ ընդունարանը, սկսնց մոլորված կերպով անցուդարձ տալ սենյակի մեջ: Նրան դրաղեցնում էր այն միտքը, թե ի՛նչպես պահե իրան մոր մոտ, յերբ նա կսկսե խոսել Տիդրոնից ստացված լուրերի մասին: Նա տարտամում էր, մտածելով, թե այնքան ուժ և կամքի զորություն կունենա՞ արդյոք, որ առանատարությամբ լսե մորից յուր հոր վարմունքները: Մի անզուսպ խոսք, մի անզուսպ շարժում կարող էր մատնել նրան...

Սպասավորը պատրաստվում էր նախաճաշիկ մատուցանել։ Այդ մինչեն դռները բացվեցան, ներս մտավ մի մարդ, վոր խորին կերպով գլուխ տալով, լուռ կանգնած մնաց վոտքերի վրա։ Նրա լերկ, անմորուս կերեսից, վոր պատած էր վաղահաս կնճիռներով, նրա հանդած, նեղ աչքերից, վոր սեղմված էին կարմիր կոպերի մեջ՝ առանց թերթերունքների և, վերջապես, նրա դեղին ատամներից, վոր դուրս էին ցցված անդուդ չրթունքների միջից, խնդուն յերևում էր, վոր այդ մարդը ներքինի յե։

— Ի՞նչ կա,— հարցրեց իշխանը։

Ներքինին կրկին անգամ գլուխ տվեց, ասելով.

— Տիկինը հրամայեց հայտնել իմ տիրոջը, վոր չնորհ բերե նրա մոտ։

Իշխանը ամբողջ մարմնով ցնցվեցավ, բայց զսպելով յուր տհաճությունը, պատասխանեց.

— Լավ, ասա՛, վոր կգամ։

Ներքինին դարձյալ գլուխ տվեց և հեռացավ։

Գատանի Հուսիկը մի առանձին զգվանքով նայեց նրա յետևից և, աջ ձեռքի մատները լայն բաց անելով, «մըճիկ հաննց»։ Այդ նկատեց իշխանը։

— Դու յի՞րբ պետք է խելոքանաս, Հուսիկ,— հանդիմանեց նրան։

— Ճշմարիտ, սուտ չեմ ասում,— պատասխանեց պատանին կիսահեղնական և կիսաերկչոտ ձայնով,— յերբ առավոտյան այդ մարդու յերեսը տեսնում եմ, դիտեմ, վոր այն որը բանս չի հաջողի, անպատճառ կա՛մ մի բան կկոտրեմ, կա՛մ մի բան կվիթեմ, և կա՛մ մի ուրիշ վատ բան կպատահի։

Իշխանը ժպտաց։

ՄԱՅՐ ՅԵՎ ՎՈՐԴԻ

Առավոտյան մատախուղը չքացել էր։ Դրսում տիրում էր ջերմ, լուռ տապալծատ որ։ Ողի մեջ բուրում էր շրջակա յեղևիններեի բալասանական խնկահոտությունը։ Ամեն ինչ ժպտում էր, ամեն ինչ ուրախություն էր շնչում, միայն Սամվելի սիրտը լցված էր խորին, անմխիթար տրտմությամբ։

Նա դուրս յեկավ յուր բնակարանից, անցնում էր ամրոցի ընդարձակ բակով։ Գատանի Հուսիկը, կանգնած սենյակի դռան մոտ, մի առանձին ցավակցությամբ նայում էր նրա յետևից։ Նրան հայտնի էին յուր տիրոջ վշտերը, նա չգիտեր, թե ինչու յեր նա այնքան տխուր, բայց նկատելով նրա տխրությունը, ինքը նույնպես տխրեց։ Ինձ պատանին սիրում էր յուր տիրոջը, յուր բարի և աղնիվ տիրոջը, վորը այնքան ներողամիտ էր դեպի նա, վորը յերբեք չէր վշտացրել նրան։

Սամվելը ծածկված էր դարնանային թեթև վերարկուով, առանց թևքերը հագնելու, վոր ծածանվում էին վերարկուի լայն ծալքերի հետ։

Սպիտակ վերարկուն՝ դունավոր հագուստի հետ՝ մի առանձին վայելչություն էին ընծայում բարձրահասակ յերիտասարդի դեղակազմ իրանին: Նա ամբոցի ուրախությունն էր, յերբ առավոտյան յուր սիևամորից դուրս էր գալիս և հայտնվում էր բակում: Ամեն կողմից ամեն աչքեր հետացած նայում էին նրա վրա:

Նա գնում էր առանց աչ ու ձախ նայելու,— գնում էր, դլուխը դեպի ցած խոնարհեցրած,— գնում էր, վորպես մի սրամիտ: Այսպես վոչ վոք չէր տեսել նրան: Ի՞նչ դիրք բռնել մոր մոտ... կեղծի՞լ, խաբի՞լ նրան... Թե բացարձակ կերպով դատապարտել հոր վարմունքը...— այդ վարանմանց մեջ էր նա, այդ մտքերն էին տանջում նրան:

Ամբոցում կյանքը արդեն դարձնել էր. ամեն ինչ չարժողության մեջ էր: Աղավնիները ցած էին իջել աշտարակների բարձրությունից, խումբերով պատռում էին բակում և սիրաբորբոք տարփանքով քծնվում էին միմյանց շուրջը: Իշխանական աղախինները, զույնզգույն հագուստներով, ուրախ, զվարթ, կատակներ էին անում միմյանց հետ, ծիծաղում էին, և կատ էին ցրվում սիրելի թռչուններին: Ներքինիները ծանր, հոգատար դեմքով, մի սենյակի դռնից դուրս էին գալիս և, լուռ ու մունջ ուրվականների նման, անցնում էին, մտնելով մի այլ սենյակ: Մի զվեցիկ աղա խաղում էր յեղջերվի ձագի հետ, վորի պարանոցը զարդարած էր արծաթյա ողամանյակով: Դա Սամվելի փոքր յեղբայրն էր:

Ցերեկվա լուսով ամբոցը ներկայանում էր յուր ահեղ, հսկայական կերպարանքով: Թանձր, քարաշեն շրջապարիսպը մրցում էր շրջակա ժայռերի և ապառաժների բարձրության հետ: Կարծես, կիկլոպների ձեռքը չարել էր այն ահագին քարերը միմյանց վրա և կազմել էր այդ վիթխարի շրջապարիսպը: Նրա մեջ զետեղված էին բոլոր շինվածքները, վոր ծառայում էին մի մեծ իշխանական տան բնակության համար: Նա այնքան ընդարձակ էր, վոր վաղնջի ժամանակ կարող էր այնտեղ պատսպարվել շրջակա դյուղացիների մեծ մասը: Այդ կեսից, Վոդականը ավելի մի բերդ էր, քան թե ամրոց: Դեպի ամեն կողմ, ուր վոր նայում էիր, աչքդ բախտեսում էր վոչ այնքան նրբություն և դեղեցկություն, վորքան սարդություն և անխորտակելի ամրություն: Նա ուներ այնքան շատ բաժանմունքներ, վորքան շատ պետքերի յեր ծառայում: Սամվելն անցնում էր այն բաժանմունքի բակով, վորտեղ զետեղված էր կանանոցը:

Մի քանի րոպե կանգ առավ նա, խոսում էր յեղջերվի ձագի հետ խաղացող յեղբոր հետ: Դեղեցիկ յերեխան ուրախանալով ցույց էր տալիս, թե վո՛րքան աճել էին յուր «սիրունիկի» յեղջյուրները: Այդ մինչդեռ մանկահասակ աղախինները շրջապատեցին նրան: Մի սևաչյա որիորդ մինչև անգամ համարձակվեցավ ձեռքը մեկնել և ուղղել նրա պատմուճանի ոճիքը:

— Շնորհակալ եմ, Եվարդ,— ասաց իշխանը ժպտելով.— իմ Հունիկը շատ անշնորհք է, չդիտե լավ հագցնել յուր սիրոջը:

— Այո՛, անչնորհք ե... տեր իմ,— կրկնեց որխորդը և ամոթխած-
ությունից նրա դունատ թշերը ներկվեցան վարդի գույնով:

Դա նույն աղջիկն էր, վորին սիրում էր պատանի Հուսիկը:

Մի քանի րոպե ևս Սամվելը զբաղված էր յուր յեղբորով, նրա սիրուն յեղջերվով, և լսում էր ուրախ, անհոգ որխորդների հանաքները: Դրանով աշխատում էր ժամանակ վաստակել, վորպեսզի լավ վորոշե յուր խաղալու դերը մոր մոտ:

Այդ մինոցին կանանոցի չքեղ դահլիճներից մեկում, մի կին կանգնած էր մեռոցյա հղկած հայելիի առջև, և ինքն յուր վրա սիրահարվածի նման, նայում էր, ժպտում էր, և մի առանձին հրճվանքով ուղղում էր գլխի զարդերը: Արդեն մի քանի անգամ նա մոտեցել էր այդ հայելուն և, չհավատալով յուր աչքերին, այդ վերջին փորձն էր անում, առուգելու համար, արդյոք այնքան սա՞ղ էին գալիս այդ նոր զարդերը, վորքան նա կարծում էր:

Նախասենյակում լսելի եղան վոտքի ձայները: Նա չտապալ թողից հայելին, անցավ դահավորակի վրա, նստեց և, թևին տալով թավիշյա բարձերին, լուրջ դեմք ընդունեց: Նա յուր հասակից ավելի թարմ և անթառամ էր մնացած: Նրա տարիքը վաղուց մոտեցել էին հիսունին, բայց դեռ մի մանկահասակ հարսի տպավորություն էր գործում: Ճերմակ դիրությունը և ճարպի անհամեմատ պարարտությունը կոչտացրած չէին նրա մարմինը ու դեմքը, նրան կարելի չէր մինչև անգամ դեղեցիկ համարել: Խոշոր աչքերի մեջ վառվում էր գոռոզություն և տոհմային հպարտություն, վորը բոլորովին անհետացնում էր նրանց մեջի քաղցրությունը:

Այդ փառահեղ տիկինը Սամվելի մայրն էր, վորին կոչում էին Տաճատուհի:

Ներս մտավ յերկտասարդը բռնի ժպիտը յերեսին:

— Բարի լո՛ւյս, սիրելի մայրիկ,— ասաց նա և, յուր սովորության համեմատ, մոտեցավ ձեռքը համբուրելու:

Բայց յերկու քայլ հեռավորության վրա կանգ առնց և կիսահնդնական ու կիսադարմացական ձայնով բացականչեց.

— Այդ ի՞նչ եմ տեսնում... Աստված ե վկա, առանց հարցնելու կարող եմ ասել, վոր հայրս գալիս ե:

— Ինչի՞ց իմացար,— հարցրեց մայրը, քաղցր կերպով ժպտելով:

— Այդպես զարդարվել ես... հոնքերդ ներկել ես... ձեռքերդ ներկել ես... Այդ բոլորը ո՞ւմ համար ե...

Մայրը գրկեց վորդուն, ճակատը համբուրեց և, նստեցնելով յուր մոտ՝ դահավորակի վրա, ասաց.

— Այո՛, գալիս ե, Սամվել: Հիմա տո՛ւր ավետիքդ:

Վերջին խոսքերի մինոցին մայրը ձախ ձեռքով գրկեց վորդու պարանոցը, իսկ աջ ձեռքով բռնեց նրա ականջից, կրկնելով.

— Ասա, ի՞նչ ես տալիս:

— Մի ղուշդ համբուր,— պատասխանեց վորդին, աշխատելով ականջը ազատել նրա ձեռքից:— Դրանից ավելի լա՞վ ավետիք: Եվ ի՞նչ ես ուզում:

— Հենց այդ եմ ուզում,— ասաց մայրը և, սեղմելով նրան յուր կուրծքի վրա, համբուրեց յերկու թշերից:

Վորդու վողջադուրանքը, մոր սերտելիր փաղաքշանքը բոլորովին անկեղծ եր: Մայրը ուներ սիրող սիրտ, մանավանդ դեպի յուր զավակները. իսկ վորդին հնազանդ, ծնողասեր զավակ եր: Այժմ այդ անարատ սիրտ մեջ մտել եր մի դև, մի չար միտք, վոր պիտի յերիտասարդներ ընտանեկան խաղաղությունը, վոր պիտի դժտություն, աներկություն և, դուցե ավելի ազետավոր թշնամանք սերմաներ վորդու և ծնողների մեջ: Սմեն անգամ, վոր այդ մտածությունները պաշարում եյին Սամվելին, նա ամբողջ մարմնով դողում եր:

Նույն մտածությունները վոչ սակավ սաստկությամբ հուզում եյին և մոր սիրտը: Նա պիտեր Սամվելի ամուր հավատը, պիտեր նրա կրոնական ջերմեռանդությունը, նրան ծանոթ եյին յուր վորդու հայրենասիրական ջերմ զղացմունքները: Այժմ ի՛նչպես հայտներ վորդուն, թե նրա հայրը ուրացել և յուր կրոնը և պարսից դրքերով գալիս և վոչնչացնելու ամեն ինչ, վոր հայկական և:

Մայրը դեռ շատ առաջ կռահելիք եր յուր ամուսնի հետ: Նրանք պատահում եյին հայոց ազնվականների այն խստասիրտ և պարսկամոլ կուսակցությանը, վոր առում եյին հուդեներին, առում եյին և բնիկ Արշակունի թագավորներին: Բայց մոր պարսկամոլությանը մինչև այնոր դեռ չեր արտահայտվել ազգային կամ քաղաքական խոշոր խնդիրների մեջ: Մայրը միայն սիրում եր ընտանիքի մեջ մացնել պարսկական լեզու, պարսկական սովորություններ, թեև այդ բոլորի համար մինչ հանդիպում եր վորդու խորին ատելությանը: Այդ ընտանեկան խուռ կռիվը վաղուց սկսվել եր նրանց մեջ, և վաղուց Սամվելը նախապատրաստված եր, վորպես մի ընդդիմադիր ուժ, արդելք դնելու մոր ձգտումներին: Բայց դեռ յերեսուներեն այնքան անմեղ եյին և առիթներն այնքան հեղմ եյին, վոր յերբեք պատճառ չեյին տվել ընտանեկան ծայրահեղ յերկպառակության: Իսկ ա՛յժմ. այժմ ի՞նչ պետք եր անել: Այժմ ներկայանում եր մի սարսափելի պատճառ, վոր կա՛մ մխանդամից պետք և խորտակվեր ընտանեկան բոլոր կապերը, կա՛մ վորդուն հնազանդեցներ ծնողաց կամքին: Մայրը այդ հույսը չուներ. նրան հայտնի յեր վորդու համառությունը, նրան հայտնի յեր վորդու և հասատատամտությունը: Սմբողջ գիշերը մտածում եր նա այդ մասին և վոչինչ յելք չեր գտնում: Վերջը վճռեց ազետավոր իրողության կնքը միայն հայտնել վորդուն, իսկ մնացած կնքը պահել ավելի բարենպաստ ժամանակի համար:

Այժմ սկսեց ավելի թեթև խոսակցություններով զրազեցնել վորդուն, վոր մի առանձին զվարճությամբ նայում եր նրա վրա:

— Ի՞նչպես ես դտնում այդ նոր զարդարանքը,— հարցրեց Սամվելից:

— Հորս դլուխը վկա, աքանչելի յե,— պատասխանեց Աբոյդին,— միայն դու մոռացել ես ներկել քո շրթունքները, այն ժամանակ կատարելապես մի պարսկական թագուհու նմանելիր:

— Դու հեդնում ես, Սամվել:

— Ի՞նչ հեդնելու բան կա,— ծիծաղելով ասաց Աբոյդին և, ձեռքը տանելով, մոր զարդարանքները մի առ մի շոշափելով, շարունակեց.

— Բոլո՛րը դեղեցիկ են, բոլո՛րը հրաշալի յե: Ահա այդ արծաթյա մահիկը, զարդարած խոշոր ալմաստներով, մոր կապել ես լայն ճակատիդ, դա վայելում է, մորպես նորածին կիսալուսինը վայելում է պարզ յերկնակամարի վրա. դա կթափե քո վրա այն բոլոր բարիքները, ինչ մոր լուսինը թափում է արարածների վրա: Իսկ այդ ալմաստները, մոր սիրած են մահիկիդ չուրջը, մշտական ուրախություն կշնչեն քո սրտին, հաղթող կհանդիսացնեն քեղ ամեն ձեռնարկության մեջ և թագավորների աչքում սիրելի կկացուցանեն: Ահա այդ սիրուն թանաք, մոր կրում ես քթիդ վրա, յուր մեխակի ձևով՝ միշտ անուշահոտությամբ կհրապուրե քո հոտառելիքը, իսկ յուր յերկնադույն փիրուզայի ակնով կլիացնե քո արկղները մոսկով ու արծաթով, քո խոսքը, քո խնդիրքը ընդունելի կանե ամենի մոտ և քեղ հեռու կպահե թագավորների պատուհասներից: Ահա այդ մոտկյա գնտերը, մոր սանդում են դուլնդզուն զմրուխտներով, կպահպանեն քո լսելիքը անախորժ ձայներից և միշտ ուրախալի համբավներով կդվաբաձացնեն քեղ: Իսկ այդ զմրուխտները կկուրացնեն ոձի ու վիշապի աչքերը և քո անձը անխոցելի կպահեն ամեն թունավոր գեղուններից ու միջատների խայթոցներից: Ահա այդ մարդարտաշար մանյակը յուր խորհրդավոր հատուկտիներով, դրանց մեջն և ամփոփված քո բախտը, քո թագիդ դրության և քո կախարդիչ հրապուրանքը, մորոնք կենդի համար անհրաժեշտ են...

Նա առեց մոր ձեռքերը յուր ափերի մեջ և շարունակեց.

— Այդ ոճաձև ապարանջանները, մո՛րքան դեղեցիկ են, մո՛րքան խորհուրդ կա դրանց մեջ... դրանք կտան քո բազուկներին հաղորդություն և ոձի իմաստություն, ինչպես տվեց ոձը մեր նախամայր Ձևավային... Իսկ այդ մարջանով (բուստ) և դուլնդզուն ուլունքներով յարդարած թևակապները, մորոնց մեջ պահվում են, ո՛վ դիտե, ի՛նչ ուժակ թալիսմաններ,— դրանք հեռու կպահեն քեղ չար աչքից և չար պատահարից, դրանք կպահպանեն քեղ դևերի, քաշքերի և բոլոր աներևույթ վտանգներից պատրանքներից: Ես համոզված եմ, մոր այդ թևակապների մեջ ամփոփված են մի մորևկից մոդի դրված քները...

Մայրը խոժոռ դեմք ընդունեց: Աբոյդին չարունակեց, ցույց տալով մատանիների նշանակությունը.

— Այդ մատանին կարմիր յաղուրի (հակինթ) քարով ամեն մարդկան մոտ հաճելի կանե քեղ: Այդ մյուսը՝ սարդիոնի (սեյլան) քարով՝ փարա-

տում և արյունհեղություններ։ Այդ չերրորդը՝ վարդագույն սուտակի (լալ) քարով՝ փարատում է վշտերը և հալածում է դևերին։ Այդ չորրորդը՝ խայտաճամուկ ագաթքարով՝ թուլներին ներդործությունը վոչնչացնում է։ Այդ հինգերորդը՝ հակինկի դեղնագույն քարով՝ վոչնչացնում է մարդկանց չար մտքերը...

Մայրը հասկացավ վոր վորդին ծաղրում ևր նրա անհավատությունը և հնթանոսական նախապաշարմունքները, այդ պատճառով, ընդհատեց նրա բացատրությունները խիստ և վիրավորված ձայնով.

— Բավակա՛ն և. չես դիտեմ քո թերահավատությունը... դու այդպիսի բաներին չես հավատում...

— Իզուր ևս այդպես կարծում, սիրելի մայրիկ,— պատասխանեց Սամվելը անվրդով կերպով.— չես կամենում եմ ցույց տալ, վոր այնքան տգետ չեմ, այլ բոլորի նշանակությունը հասկանում եմ...

— Մինչև չես տասը այդպիսի զարդեր չեկի՞ կրում, և մինչև մեր նախարարների բոլոր կանայքը այդպիսի զարդեր չե՞ն կրում։

— Ճշմարիտ և, դու կրում եկիր... այն ևս ճշմարիտ և, վոր մեր նախարարների կանայքը նույնպես կրում են, բայց ձևերն մեջ մեծ զանազանություն կա։ Քո կրածներդը կատարելապես նմանեցրած են պարսկական ձևերին...

— Ե՛ւ այդպես չինեի, ի՞նչ կա։

— Վոչինչ... չես միայն զարմանում եմ, թե ի՞նչպես շուտ դու պատրաստել սովորիր այդ բոլորը։

— Ճես վաղուց պատրաստել եկի սկսել... չես միայն սպասում եկի...

— Վոր հորս գլուխը լսածին պես կրե՛ս... Այդպես չե՞։

Մայրը վոչինչ չպատասխանեց և, նկատելով, վոր այդ խոսակցությունը անախորժ կերպարանք և առնում, խոսքը փոխեց.

— Գիտե՞ս, Սամվել, ընչո՛ւ համար կանչեցի։

— Ճես վոչինչ չգիտեմ...

— Հորիցդ նամակ առացա, կանչեցի, վոր հայտնեմ քեզ։

— Նամա՞կ առացար,— բացականչեց Սամվելը,— այդ ուրախալի չե... չա՛տ ուրախալի... Ե՞րբ առացար։

— Այս գիշեր։ Սուրհանդակ չկիավ։

Տիկինը ցած է իջել դահլիճակի վրայից, հաղավ կապտագույն մանիկները, վոր գրած ևյին դահլիճակի առջև, անցավ դահլիճի մեջով և մոտեցավ պատուհան։ Երից մեկին, վոր բարձրացրեց մետաքսյա վարագույրը։ Այդ ժամանակ միայն, չերբ նա չերևյա շուտ ավից, Սամվելը ուշադրություն դարձրեց մոր ծոմբաղի վրա, վորի մյուս զարդարանքների թվում նկատեց բոլոնու ճերմանից չինված մի հուռութք, վոր բռնված ևր արծաթի կանթի մեջ։

Տիկինը վերադարձավ, ձեռքում բերելով մագաղաթի մի գլորված

վաթսուն, վոր կապած եր մեսրոպյա, դուլնդուլն նարոտով։ Նա տվեց մադաղաթը վորդուն, ասելով.

— Հորդ նամակն է։

Սամվելը ուրախությամբ բաց արեց մադաղաթի փաթեթը և, նայելով նրա վրա, ասաց.

— Դա պարսկերեն է դրված...

Մայրը կիսախրատական և կիսահանդիմանական յեղանակով նկատեց նրան.

— Ա՛յ, քեզ վոր մի յա ասում. եյի, վորդի, ասվորի՛ր այդ լեզուն, դու ինձ ականջ չեյիր դնում, խնդրդ ու միտքդ տվել եյիր այն անիծված հունարենին և ասորերենին։ Հիմա տեսնո՞ւմ ես, հորդ նամակն էլ չես կարդանում կարդալ։ Դու մինչև անգամ աշխատում եյիր՝ քո վոսքր յեղբորը, Վահանին էս դժբախտացնել, արդելում եյիր նրան պարսկերեն ասվորել։ Բայց նա այժմ վո՛չ միայն վարժ խոսում է, այլև դրում է։

Մոր հանդիմանությունը ամաչեցրեց Սամվելին, բայց նա, դալարով իրան, ասաց.

— Դու, իհարկե, կարդացած կլինես, պատմի՛ր, ի՞նչ է դրում հայրս։

Տիկինը պատմեց այն, ինչ վոր արդեն դիտեր Սամվելը. թե Շապուհ արքան հնորհել է յուր ամուսնին հայոց սպարապետությունը, իսկ յուր յեղբորը, Մերուժանին, խոստացել է հայոց թագավորությունը, և յուր քույր Վարսիդուխտին արքան կհնությեան է տվել Մերուժանին։ Յեվ այժմ թե՛ Մերուժանը, և թե՛ յուր ամուսինը ճանապարհի վրա յեն, պարսից զորքերով գալիս են, մեկը հայոց թագավոր դառնալու համար, մյուսը՝ հայոց սպարապետ։

Այդ պատմության բոլոր ժամանակ տիկնոջ դեմքը վայլում եր անուսահման ուրախությամբ, իսկ Սամվելը խորին վրդովմունքով լսում եր նրան, ավելի և ավելի սկսդ գալարելով յուր ձեռքում մադաղաթի թերթը, վոր բերել եր աղետավոր լուրերը։ Բայց Սամվելը նախապատրաստված եր այդ բոլոր դառն և ամոթալի յեղելությունները լսելու, վորոնց մեջն եր տեսնում յուր հայրենիքի կործանումը։

Տիկինը յուր ստացած տեղեկությունների մի մասը միայն պատմեց, և նամակի մեջ այնքանը միայն դրված պետք և լիներ։ Բայց նա թաղցրեց Սամվելից, թե նրա հայրը և Մերուժանը ուրացել են քրիստոնեությունը, ընդունել են պարսից կրոնը և խոստացել են Շապուհին նույնը մացնել և Հայաստանում, և այդ մտքով բերում են իրանց հետ մոգերի ահագին բազմություն, վոր յեկեղեցիների փոխարեն աստուծոներ հիմնեն, և ամեն տեղ բաց անեն պարսից դպրոցներ, նախարարների և ազնվականների թե՛ աղաներին, և թե՛ աղջիկներին պարսկական վոգվով և պարսկական կրոնի հրահանգներով կրթություն տալու համար։ Նա ծանձկեց Սամվելից և նրա հորեղբոր, վասակի չարաչար մահը Շապուհից,— ծանձկեց և Արշակ թագավորի աքսորվիլը Անհուշ բերդում։ Այդ բոլորը, ի հարկե,

դիակը սենյակը,— այդ բոլորը, անտարակույս, բերանացի հաղորդած կլիներ նրան նամակը բերող սուրհանդակը:

Տիկինը նկատեց այն վատ ազդեցությունը, որ իր պատմությունը դրծնեց վորդու վրա, բայց իրան չդիտենալ ձևացնելուվ, դրկեց վորդուն և, սեղմելով իր կրծքի վրա, ասաց.

— Դու այժմ կարող ես չնորհավորել ինձ, սիրելի Սամվել,— իմ քույրս՝ հայոց թագավորը, իսկ քո հայրը՝ հայոց սպարապետ...

Սամվելի դրությունը աննախանձելի էր: Նա կա՛մ բացարձակ կերպով պետք և հայտներ իր ղղվանքը հոր և Մերուժանի վարմունքի դեմ, պատմելով բոլորը, ինչ վոր ինքը դիտեր նրանց դավաճանությունների մասին, և կա՛մ պետք և լռեր, վոր մի՛ դուցե իր անզգուշությամբ դործը վնասներ, և իր արդեն խորհած, վճռած նպատակները մնային անկատար: Բայց լռել չէր կարող նա, պետք եր մի բան՝ պատասխանել: Այդպիսի դժվարին բռնություններում նրան ոդնության եր հասնում իր սովորական թերահավատությունը մի կողմից, և իր կծու հեդնությունը, մյուս կողմից:

— Այդպես չուտ ուրախանա՛լ, դևս վաղ և, սիրելի մայր,— ծիծաղելով պատասխանեց նա, դուրս պրծնելով մոր դրկից:

— Ինչո՞ւ,— հարցրեց մայրը և նրա ձայնը դողաց սրտի հուդմունքից:

— Դևս հայոց թագավորը կենդանի չէ...

Տիկինը չկարողացավ իրան զսպել, հայտնեց այն, ինչ վոր ծածկել եր աչխատում.

— Հայոց թագավորը աքսորված և Անհուչ բերդում, վորտեղից մարդիկ այլ ևս չեն վերադառնում:

— Այդ չես դիտեր, վոր այնտեղից մարդիկ այլ ևս չեն վերադառնում, բայց հայոց թագաժառանգը կ. Պոլսումն է, քրիստոնյա կայսրի մոտ...

— Նրան ո՞վ կրևրև և իր հոր գահը կնստացնի:

— Հունաց զորքերը և հայոց նախարարները...

— Մինչև նրանց դալը, հայոց կերկիրը դրավված կլինի պարսից զորքերով, իսկ իմ կեղբայրը՝— թագավոր:

— Հաջողություն եմ ցանկանում...

— Դու չես հավատում, Սամվել, բայց շուտով կտեսնես, վոր այդ բոլորը կկատարվի,— ասաց մայրը, աչխատելով համոզել վորդուն:— Դու ասում ես, վոր հայոց թագաժառանգը կայսրի մոտ է, հունաց զորքերով կդա և իր հոր գահը կժառանգե: Բայց դիտե՞ս, ո՛վ է հունաց այժմյան կայսրը:— Հայկերի թշնամի Վաղևը: Նա արդեն հայոց քահանայապետ Ներսեսին, վոր դնացել եր կ. Պոլիս կայսրից ոդնություն խնդրելու, վոչ միայն մերժել է իր կերեսից, այլ աքսորել և Միջերկրականի Պատմոս կղզում: Այդ դու դիտե՞ս:

— Առաջին անդամն եմ լսում...

Բայց նա դիտեր հալածասեր վաղեմի անիրավ վարմունքը Ներսես Մեծի հետ: Նա ամենայն ուշադրությամբ հետևում եր բոլոր աղետավոր անցքերին, որ այդ ժամանակ կատարվում էին իր հայրենիքի վերաբերությամբ: Ցնել նրա զգայուն սիրտը բազմաթիվ վերքերով խոցված եր կատարվող չարիքներից:

Նա մտածեց կշտամբել մոր համակրությունը դեպի Վաղեսի վարմունքը: Նա մտածեց հայտնել իր խորին տհաճությունը դեպի իր հոր և Մերուժանի գործողությունները, բացատրելով, թե վորպեսի՛ աղղակործան հետևանքներ կարող էին ունենալ նրանց ձեռնարկությունները և, վերջապես, նա մտածեց, խոստովանվել մոր առջև, թե ինչը, վորքան կարող է, ամեն հնարներ գործ կդնե վոչնչացնելու հոր դիտավորությունները: Բայց նա դիտեր իր մոր անսահման միամտությունը: Նա ցանկանում եր հայոց սպարապետի սիրին լինել և հայոց թագավորի քույրը: Ամեն մի ապացույց այդ մոլեդին ցանկության առջև կկորցներ իր աղդեցությունը:

Լռեհամություն վեհանք գրեց նրա լեզվին:

ՑԵՐԿՈՒ ՑՆԳՐՈՒ ՎՈՐԴԻՆԵՐ

Մամիկոնյան նախարարները, վաղեմի ժամանակներից, վայելում էին հայոց սպարապետության արտոնությունը: Այդ բարձր պաշտոնավարության իրավունքը անցնում եր նրանց տոհմի մեջ ժառանգաբար, վորդին փոխարինում եր հորը, նրա վախճանից հետո: Թեև յեղել են բացառություններ, վոր հայոց մյուս նախարարական տներից ևս սպարապետներ են ընտրվել, բայց այդ յեղել է այն ժամանակ միայն, յերբ Բագրատունիների և Մամիկոնյանների մեջ վորևե թշնամություն է տեղի ունեցել:

Տարոնի ամբողջ դավառը Մամիկոնյանների ժառանգությունն եր: Այստեղ՝ Գյակա վանքում դրած էին նրանց տոհմային շիրիմները. այստեղ՝ Վողական ամրոցը ներկայացնում եր նրանց իշխանական վոստանը: Բայց Մամիկոնյաններից մի ճյուղ, բաժանվելով, ապրում եր Տայոց յերկրի ամրությունների մեջ, և այնտեղ ուներ իր անմատչելի լերդը, վոր կոչվում եր Ծերախանի:

Բացի սպարապետության պաշտոնից, իրրև քաջ, առաքինի, հայրենասեր և ամեն ազնիվ հատկություններով հայտնի մի տոհմ, դիտավորապես Մամիկոնյաններից էին ընտրվում հայոց թագաժառանգների դաստիարակները և նրանց անուցանող դայակները: Այնքան մեծ եր այդ տոհմի բարոյական աղդեցությունը, վոր հայոց մյուս նախարարները մեծ խորին հարգանքով էին վերաբերվում դեպի Մամիկոնյանները, և ինքը, թագավորն անգամ, մի առանձին ակնածություն ուներ նրանցից: Այդ եր

պատճառը, վոր Հայաստանում, ամեն մի դժվարին դեպքերում, վոչ մի դարձ հնարավոր չեր համարվում, եթե Մամիկոնյանները չմասնակցեին։ Անձնազոհությունը, բարձր առաքինությունը, հերոսական քաջաղնությունը այդ տոհմի հատկանիշն եր։

Արշակ թագավորի օրերում Մամիկոնյաններից հայտնի եյին յերկու յեղբայրներ՝ Վասակ և Վահան։ Վասակը, վոր Արշակի մանկության դայեկի յեղբայրն եր՝ Վասակ բագրատունյաց տոհմից սատիճան առացավ, իսկ Վահանը հարյուրապետ եր, հետո սպարապետ վարում։

Այդ յերկու յեղբայրներից Վաղարշապատում վոչ մեկը չեր մնացել։ Վերջին յերկու սպարհանդակները յերկու յեղբայրների մահվան բոթը բերեցին Տիգրոնից։ Վասակը սպանված եր պարսից Շապուհ թագավորից, իսկ Վահանը մահացել եր բարոյապես... Ամբողջում մնացել եյին յերկու յեղբոր վորդիները միայն՝

Սամվելը՝ Վահանի վորդին և

Մուշեղը՝ Վասակի վորդին։

Գիշեր եր։ Ամբողջ աշխարհ քնած եր, վորտեղ Վասակի ընտանիքն եր բնակվում, բոլոր անդամները ճրագները մարած եյին։ Միայն մի սենյակի լուսամուտների թանձր վարագույրների յետևից աղոտ լույս եր յերեվում։ Այստեղ դեռ չեյին քնել։ Մի տղամարդ, անհանգիստ կերպով, յերեսին անցուդարձ եր անում սենյակի մեջ, յերբեմն նստում եր բազմոցի վրա, և նրա անհամբեր աչքերը դառնում եյին դեպի դռները։ «Այդ ի՛նչ և նշանակում»... մտածում եր նա, «Սամվելը խնդրել և ինձանից դաղտնի անուրյուն... ի՞նչ և պատահել, ի՞նչ խոսելիք ունի... մենե դարձյալ վատ լուրե՞ր են առացվել... յեթե մի ուրախալի բան լիներ, ինչո՞ւ յեր նա դիշերով դալիս ինձ մոտ»...

Այդ տղամարդը Մամիկոնյան Վասակի վորդի Մուշեղն եր։ Վեց կամ յոթն տարով մեծ եյին նրանից Սամվելից։ Մի հոյակապ և բարեկազմ տղամարդ, վորի ամեն մի դծերից յերևում եր լավ պատերազմողի վեհությունը։

Սենյակը, վորի մեջ դնում եր նա, դուրկ եր առանձին գեղուրյունից։ Կոշտ մատե ոթոցներով ծածկված եր հատակը, և պատերի մոտ դրած եյին մի քանի բազմոցներ, վորոնք նույնպես պատած եյին կոշտ գորգերով։ Այստեղ և այնտեղ յերևում եյին զենքեր, վորոնք դուրկ եյին հարուստ զարդարանքներից։ Դեպի ամեն կողմ, ուր և նայում եյիր, աչքի յեր գարկում պարզություն և անխառնակրություն։ Յերևում եր, վոր այդ սենյակի բնակիչը, յուր խղճամտան տան մեջ անդամ, սիրում եր պահպանել զինվորական կյանքի խստակենցաղությունը։ Նրա հագուստի պարզությունը բոլորովին համապատասխանում եր յուր ոթևանի անշքությանը։ Նրանց մեջ նկատվում եր մեծ ազգություն և դիմացկուտություն, քան թե նրբություն կամ ճաշակ։

Նա մտնելով լուսամուտին, հետ քաշեց վարագույրը և դաց արեց

վիշտերից մեկը: Ցերկար, անշարժ կանգնած, նայում էր դեպի դուրսը: Ոչինչ չէր լսում, ոչինչ չէր լսում: Ամեն ինչ նիրհում էր խորին մթության մեջ: Նայում էր դեպի այդ մթությունը, և նրա սրաթափ միտքը սլանում էր հեռու և հեռու, դեպի Տիղրանի արքունիքը: Այնտեղ էր նրա սիրելի հայրը, այնտեղ էր և նրա սիրելի թագավորը: Այն որից, որ գնացել էին նրանք, ոչինչ տեղեկություն չուներ: Ի՞նչ էր այդ լռության պատճառը... միթե խաբե՞ց Շապուհը... միթե բոլոր ճանապարհները փակվա՞ծ էին... Նա ոչինչ չգիտեր, նրան ոչինչ հայտնի չէր: Ցեղ նրա տխուր մտածությունները նույնպես խավխափում էին անսահմանության մեջ, որպես նրա բարկությամբ լի աչքերը խարխափում էին դիվերային խավար մթության մեջ:

Այդ դրության մեջ դտավ նրան Սամվելը, երբ, սենյակի դուռը կամաց բաց անելով, ներս մտավ և, յուրաքանչյուր ձեռքը դնելով նրա ուսի վրա, սթափեցրեց խորին մտահոգությունից: Նա հետ նայեց, ասելով.

— Դու բավական տանջեցիր ինձ, Սամվել:

— Մորս լրտեսներով շրջապատված է իմ բնակարանը,— պատասխանեց Սամվելը զայրացած կերպով:— Հազիվ կարողացա դուրս սլրծնել:

— Ուրեմն մի բան կա, որ քո մայրը լրտեսներ է դնում,— ասաց Մուշեղը և նրա թախծալի դեմքը ընդունեց ավելի մռայլ կերպարանք:

— Նստենք, կպատմեմ բոլորը:

Ցերկու յեղբորորդիները նստեցին գահավորակի վրա, և Սամվելը մի քանի րոպե տատանվում էր, թե ո՛րտեղից և ի՛նչպես սկսե յուր պատմությունը, որ Մուշեղին մեծ ցավ չպատճառե: Նա սկսեց մի փոքրիկ հառաչանքով, թե ինքը համոզված է, որ Մուշեղը այնքան կամքի զորություն և սրտի ամրություն ունի, որ տառնությամբ կլսե բոլորը, և միասին կխորհեն աղետավոր պատահարների առաջը առնելու: Բայց Մուշեղը անհամբերությամբ ընդհատեց նրան, ասելով.

— Ի սեր աստուծո, առանց այդ ավելորդությունների, պատմի՛ր, ինչ որ ասելու ունես. դու կարող ես վստահ լինել, որ չես կինոջ նման արտասուք չեմ թափի:

Սամվելը պատմեց սուրհանդակի բերած լուրերը, թե ի՛նչպես յուր հայրը և Մերուժանը միաբանվել են, ուրացել են քրիստոնեությունը, ընդունել են պարսից կրոնը, և պարսից մոգերով ուղորքերով գալիս են նվաճելու Հայաստանը: Պատմեց և այն, որ Շապուհը յուր քույր Վռամշապուհին կնության է տվել Մերուժանին և խոստացել է նրան հայոց թագավորությունը, եթե նա կհաջողացնե հայոց նախարարներին ու նշանավոր հեղինականներին կաշառելով և պարսկաստան ուղարկելով, և այնուհետև տարածել հայոց յերկրում պարսից կրակապաշտությունը: Պատմեց և այն, որ յուր հայրը տասցել է հայոց սպարապետությունը, իսկ Արշակ թագավորը աքսորված է Անհուշ բերդում:

— Իսկ իմ հա՞յրը,— ընդհատեց Մուշեղը:

Սամվելը, չնորհակալությամբ կանգ առնց, և ապա պատասխանեց.
— Ձո հայրը նուիրեմ...
— Աքսորվա՞ծ է:
— Այո՛, աքսորված է...
— Թաշավորի՞ հետ:
— Այո՛, Թաշավորի հետ...

Սամվելը սուտ չխոսեց: Բայց այնտեղ, Ինհուշ բերդում, աքսորված էր, և չդիմայնալով Թաշավորի աչքի առջև դրել էին նրա հոր հարդով լցրած պատուճանապատանեքը միայն: Դեռ չտեսնված Մուշեղի հետ, Սամվելը ամբողջ որը տանջվում էր այն մտքով, թե ի՛նչպես հայտնե նրան հոր շարաչար մահը Շապուհից: Այդ կարող էր ապստիկ ծանր ներգործություն ունենալ նրա հայրասեր սրտի վրա և անմխիթար սուգի մեջ դնել նրան: Վերջը ընտրեց յերկու հարվածներից վնաբասությունը, հայտնելով, թե հայրը աքսորված է Թաշավորի հետ:

— Խաբեբա պարսի՛կ,— բացականչեց նա սրտմտությամբ լի ձայնով.— քեզ համար խոսքի և խոստումնքի արբություն չկա... Վարագադիր մատանիով աղ կնքեցիր դու, վոր քո կրոնի մեջ ամենամեծ յերդումն է, և ուղարկեցիր, կոչելով իմ հորը և նրա Թաշավորին քո մոտ, իբր հաշտության ուխտ դնելու, բայց տարար և վատությամբ աքսորեցիր: Անամո՛թ...

Այդ խոսքերը վերաբերում էին Շապուհ արքային, վոր նենգավոր խոստումներով հայոց Թաշավորին և հայոց սպարապետին Տիզբոն հրավիրեց:

Նա դարձավ դեպի Սամվելը:

— Իրավ է, իմ հայրը ամբողջ յերեսուն տարի անընդհատ պատերազմեց Շապուհի զորքերի հետ և ամեն անգամ ջարդեց նրանց: Բայց պատերազմից ազնիվ կերպով: Ցնծի Շապուհը միտք ի չատե մարդավարություն ունենար, նա չպիտի մոռանար այն մեծահոգությունը, վոր իմ հայրը ցույց տվեց նրան: Ցերբ նա հաղթված, խորտակված, փախչում էր իմ հոր առջևից, նրա ամբողջ բանակը և ամբողջ կանանոցը դարձ ընկավ իմ հոր ձեռքում: Բայց հայրս նրա կանանոցը պատվով և ժանավարներով հետ ուղարկեց պարսից արքունիքը: Այդ բոլորը մոռացավ նա: Դավաճանեց յուր յերդմանը և խաբեց... Վա՛ռ մարդ...

Այսպես, լի մաղձային դառնությամբ թափվում էին խոսքերը վրդովացած յերիտասարդի շրթունքներից և նրա սիրտը բորբոքվում էր վրեժխնդրության բոցով: Նա դայլայլած դեմքով վեր կացավ և, կանդնելով յուր հոբելբորդու առջև, ասաց.

— Լսիր, Սամվել, մենք մեր հայրերի պատվակը չենք լինի, մենք պատնեշորդի պիտի համարվինք, յեթե այդ բոլոր անիրավությունները կմնան անպատիժ: Համբերության բաժակը լցվեցավ. Թշնամին մինչև ծայրը հասցրեց յուր վատությունը...

Նա մի քանի քայլ անցավ սենյակի միջով, նկատեց, որ լուսամուտը բաց եր մնացած, փակեց և ցած թողեց վարագույրը: Անհնարին եր նայել այդ մարմնացած սրամտության վրա, որի խոշոր աչքերից կրակ եր ցայտում, որի շրթունքները դողում էին անեղային տապով: Գունաթափ եր այրական դեմքը, գունաթափ, որպես մարմարիոն: Նա կրկին կանգնեց Սամվելի առջև և, ուղիղ նրա թախծալի աչքերի մեջ նայելով, հարցրեց.

—Ինչո՞ւ կես լուռ, ինչո՞ւ չես պատասխանում:

— Դու ավելի բախտավոր ես, քան Թե կես, Մուշեղ,—ասաց Սամվելը,— քո հայրը մի հերոս եր և հերոսի վախճան ունեցավ... Նա յուր ամբողջ կյանքը անցկացրեց, պատերազմելով հայրենիքի թշնամիների հետ, և վերջը յուր անբախտ թագավորից չէաժանվեցավ... Սուրհանդակը պատմում եր ինձ, Թե ինչպես նա յուր բոլոր վհուկթյամբ կանգնած եր Շապուհի առյանում և հանդիմանում եր ուխտադրուժ թագավորի խաբեյությունը: Ամբողջ առյանը և ինքը թագավորը զարմացած էին մնացել նրա համարձակության վրա: Բայց կես անբախտ վորդի կեմ: Իմ հա՛յրը, արժանավոր հարազատի անարժան յեղբայրը, զավաճանեց յուր հայրենիքին, զավաճանեց յուր թագավորին: Այժմ, Շապուհի ձեռքում մի անարդ ոգծիք զարձած, դալիս և ծածկելու հայրենի յերկիրը հրով և արյունով... դալիս և վոչնչացնելու այն յեկեղեցիները, վորոնց մեջ ինքը մկրտված է և վորոնցից չատերը յուր նախնիքն են կառուցել... դալիս և մեզ ստիպելու, վոր պարսկերեն աղոթենք և պարսից աստվածներին յերկրպաղենք...

Արտասուքը Թույլ չտվեց նրան ավարտել յուր խոսքերը, յերկու ձեռքով բռնեց աչքերը և սկսեց դառն կերպով հեկեկալ: Նա չուներ Մուշեղի խստասրտությունը և վոչ նրա ամուր բնավորությունը: Նրա սիրտը այնքան քնքուշ եր և նրա զգացմունքները այնքան նուրբ էին, վոր ամենաթեթև պատահարներն անգամ սաստիկ ազդում էին նրա վրա: Բայց Մուշեղը ուշադրություն չդարձրեց նրա արտասուքի վրա և հատաղությամբ դրչեց.

— Այո՛, քո հայրը դավաճանեց... և Մամիկոնյանների տոհմի վրա մի մեծ բիծ դրեց... պետք է մաքրե՛լ այդ բիծը...

Նա յերեսը շուռ տվեց և նրա աչքերն ընկավ յուր պապի, Վաչեի, պատկերը, վոր քարշ եր ընկած պատից: Մի քանի րոպե կանգնեց պատկերի առջև, խորին պատկառանքով նայում եր նրա վրա: Հետո դարձավ դեպի Սամվելը և, ձեռքը մեկնելով դեպի պատկերը, խոսեց.

— Ցերբ այդ հերոսը ընկավ պատերազմի դաշտում, այն արյունահեղ կռվի մեջ, վոր մղում եր պարսիկների դեմ, այդ ժամանակ հայոց ամբողջ աշխարհը սուգի մեջ մտավ: Լաց եր լինում Թագավորը, լաց եր լինում զորքը, լացում էին և չինականները: Նրա Թաղման հանդիսում հա-

յոց մեծ քահանայապետ Վրթանեսը, Գրիգոր Լուսավորչի վրդովն, յուր հառի մեջ այդ խոսքերով մխիթարեց ժողովրդին.

«Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, դա մեռավ, բայց յուր մահվամբ անմահացավ: Վորովհետև դա յուր անձը զոհեց մեր աշխարհի, մեր եկեղեցիների և մեր սասլամեծաղոթ հրոնի համար: Դա մեռավ, վորպեսզի մեր աշխարհը, ղևրի դառնալով, չքանդվի, վորպեսզի սուրբ եկեղեցիների կարգը չխանգարվի և մեր տաճարների արարողությունները անոթիների ձևոքը չընկնին: Ցնծե՛ք մեր քշնամիները տեսնելու լինելին մեր աշխարհին, անչուչա իրանց անասելիք հրոնը հհասատուելին այստեղ: Իսկ այդ բարեպաշտ նահատակը դրա համար պատերազմեց, վոր չարությունը հալածե, հեռացնե մեր աշխարհից, և դրա համար ևս մեռավ, վոր մեր սասլամեծաներ եկեղեցում անօրենությունը մուտք չգործե: Դանի վոր կենդանի եր դա, միշտ արդար վաստակով պատերազմեց, իսկ յուր մեռնելու ժամանակ՝ յուր անձը զոհեց սևրի ճշմարտության համար և նրա հառի վերհասության համար: Նա՛, վոր յուր հայրենիքի, յուր եղբայրների և յուր սուրբ եկեղեցու համար յուր անձը չխնայեց, նա՛, կրկնում եմ, դասակից կլինի Հիսուս Քրիստոսի նահատակների հետ: Արդ, լաց չլինենք այդ մեծ կարուսաով, այլ հարգենք հանգուցյալի անձնազոհությունը, ընենք դնելով մեր աշխարհում, վոր դրա քաջության հիշատակը, հավիտենից հավիտյան, Քրիստոսի սուրբ նահատակների հետ, անխափան առնվի մեր եկեղեցիներում»:

Վերջացնելով այդ հառը, վոր Մամիկոնյանները անկիր դիտեցին, վոր նրանց ուխտի ամենազոհական հանդամանքն եր, Մուշեղը ավելացրեց.

— Հայոց եկեղեցին յուր սուրբ սեղանի վրա, պատարագի ժամանակ, յուր նահատակների թվում հիշում է և մեր պապին. բայց այսուհետև նույն եկեղեցին անձնդ կկարողա նրա անարժան թոռան վրա...

— Ցնե՛ղ դա իմ հա՛յրն է... զոչեց Սամվելը վողբալի ձայնով:

Մուշեղը պատասխանեց.

— Հայրենիքի թշնամին, հայրենիքի դավաճանը վո՛չ քո հայրը կարող է համարվել, և վո՛չ իմ հարևզատրը: Այսուհետև նա մեզ համար ոտար է, և ավելի ոտար, քան Քև մի պարսիկ:—Համաձա՞յն ես, Սամվել:

— Բոլորովին:

— Տո՛ւր ինձ ձևոքդ:

Սամվելը մեկնեց յուր դողդոջուն ձևոքը:

— Վճռված է... ասաց Մուշեղը և նստեց նրա մոտ:— Այժմ խոսենք, քեն ի՞նչ ունաք և անել:

Ցնծալոր եկեղեցու կողմից ևս տեղում եր լռություն:

— Լսի՛ր, Սամվել,— խոսեց Մուշեղը.— եկրենք Հայաստանը այսպիսի ճղնաժամի մեջ չեն գտնվել, վորպես այժմ: Թագավորը աքսորված է, հայրապետը աքսորված է, իմ հայրը՝ սպարապետը՝ աքսորված է: Թշնամիները այդ անհերության կարող են ամեն տեսակ ոճրագործներ գործել:

Ներքին յերկպառակությունը ավելի մեծ վտանգ և սպառնում, քան թե արտաքին թշնամին: Իմ ստացած տեղեկություններից համեմատ, մեր նահանգներից, մեր գավառներից շատերը ապստամբել են, մտածում են թոթափել հայոց թագավորի լուծը: Ապստամբել է Աղձնյաց բդեշխը և, Զորո կոչված ահագին սպարիսպը կատուցելով, յուր աշխարհը բաժանել է մեզ յերկրից: Ապստամբել է Նոր-Շերական բդեշխը: Ապստամբել են՝ Մահկանց տան, Նիհորական, Դասպրնարեյի բդեշխները: Ապստամբել է Գուգարաց բդեշխը: Ապստամբել են Զորոց գավառի տերը, Կողբա գավառի տերը և Գարամանուճորի տերը: Ապստամբել են՝ Արցախի ամուր գավառը, Տմորյայց ամուր գավառը, Կորճայց ամուր աշխարհը և Կորդվաց գավառի տերը: Ապստամբել են՝ ամբողջ Ատրպատականը, Մարաց ամուր աշխարհը և Կասպից աշխարհը: Ապստամբել են նաև Անձավայց և Մեծ Ծուխաց իշխանները: Գարսից սահմանակիցները բռնել են պարսից կողմը, իսկ հունաց սահմանակիցները բռնել են հունաց կողմը:

Սամվելը, վոր խորին վրդովմունքով լսում եր այդ թվերը, ընդհատեց Մուշեղի տեղեկությունները, բացականչելով.

— Անկարելի է, նրանք, վոր մեր հայրենիքի կողմնակալներն ու սահմանապահներն են, այժմյան ընդհանուր ընդհատակի ժամանակ, վոխանակ պաշտպանելու յերկիրը արտաքին թշնամիներից, նախ իրանք են լինում, վոր ապստամբվում են և բարեհամական ձեռք են մեկնում թշնամուն: Այլ ևս ինչ է մնում մեղ, յերբ զլխավոր ուժերը ապստամբել են...

— Մեզ մնում է ժողովուրդը,— պատասխանեց Մուշեղը խորհրդավոր ձայնով:— Թշնամին մի մեծ սխալ գործեց և մենք այդ սխալից կարող ենք օգուտ քաղել: Թշնամին դիտավ ժողովրդի ամենասրբազան զգացմունքներին—նրա յեկեղեցուն: Եթե քո հայրը և Մերուժան Արծրունին ճանաչած լինելին հայի սիրտն ու հոգին, նրանք պետք և ձեռնամուխ չլիներին դեպի յեկեղեցին. այն ժամանակ, դուք, կարող եյին նվաճել Հայաստանը: Իսկ այդ ձեռնարկության մեջ, յես վստահ եմ, վոր նրանք անպատճառ տանուլ կտան:

— Բայց ժողովուրդը դեռ վոչինչ չդիտե:

— Այդ դեպքում հոգևորականության մեր զորեղ դաշնակիցը կլինի: Դու, Սամվել, ավելի մոտ հարաբերություններ ունես Աշոտիշատի վանքի հետ. եղուց, առանց ժամանակ կորցնելու, կղնաս այնտեղ և ինչ վոր պետք և, կկարդադրես: Իսկ յես իմ կողմից բոլոր վանքերը մարդիկ կուղարկեմ:

— Բայց յես չդիտեմ՝ ինչպես վարվել իմ մոր հետ: Նա բոլորովին կաշկանդել և ինձ:

— Քո մայրը, Սամվել, մի սարսափելի կին և, նա կարող և շատ բան վնասացնել, յեթե նրա հետ զգուշությամբ չվարվես:

— Վորպիսի՞ զգուշությամբ:

— Դու պետք և քեզ այնպես ձևացնես, վոր կամակից ես նրա հետ:

— Ուրեմն չես պատք և հնդծաւորիմ: Դա շատ ծանր կլինի ինձ համար:

— Ա՛ւ այժմ ուրիշ հար չկա:

ՊԱՏՐԱՍԿ

Առավոտյան, չնայելով վոր որից բավական անցել եր, բայց Սամվելը դեռ չեր դուրս եկել յուր քնարանից: Գիշերը նա շատ ուշ վերադարձավ Մուշեղի մոտից և անկողնին մտավ համարյա լուսաբացին: Պատանի Հուսիկը արդեն մի քանի անգամ մոտեցել եր նրա քնարանի դռանը, ականջը անհամբերությամբ տարել եր հողմակի մոտ, և յերկար ղողանջությամբ լսել եր յուր սիրոջ շնչառության ծանր հառաչանքները: Զլինի թե հիվանդ եղ... մտածեց նա վերջին անգամ, և բարեսիրտ պատանու պայծառ դեմքը մառլվեցավ խորին սիրությամբ:

Նրա դուրս դնալուց հետո ընդունարանը ներս մտավ մի ծերունի, չոր ու ցամաք, վորպես կմախք: Մորուքի և գլխի ճերմակ մազերի միջից դուրս եր նայում նրա մաշտալեթի դունդակ սառն դեմքը, վոր յուր խոշոր գծերով արտահայտում եր մի ամուր բնավորություն: Թե ինչու համար մտավ նա, ինքն էլ չդիտեր, բայց չուտով յուր համար գործ դտավ: Մոտեցավ անկյանի այս և այն առարկային, նայեց, զննեց, մեկը վեր առեց մյուսի տեղը դրեց, մյուսը առաջինի տեղը դրեց: Մոտեցավ անկյուններում դրած նիզակներին, աշտաներին, մեկը վեր առեց այս անկյունից այն անկյունը տարավ, այնտեղինը այստեղ բերավ, դրեց, նայեց, տեսավ, վոր վոչը ինչ ծուռն եր կանգնած, ուղղեց, և դարձյալ շրջնակից նայել: Ահա այդ տեղափոխություններով եր զբաղված, յերբ պատանի Հուսիկը կրկին ներս մտավ, և նրա ձեռքը բռնելով, ասաց.

— Այդ ի՞նչ գո գործն է: Ելի յեկար ամեն բան խառնելու:

— Տո՛ւս, լակո՛տ,— պատասխանեց ծերունին և ձեռքով այնպես սաստիկ հրեց նրան, վոր յերեք Հուսիկը կատվի առաձգական ճարպկությունը չունենար, կարող եր ծնկի նման թխվել հատակի վրա:

— Կամա՛ց, սիրելի Աբրահ,— ղողանջեց պատանին,— մեր տերը քնած է:

— Քնա՛ծ է,— կրկնեց ծերունին ծաղրական ձայնով,— քնած է, ղազրքին, հիմա ո՞վ է քնում:

Ցավ իրավ, ընդունարանի տղմուկը զարթեցրեց Սամվելին:

Ծերունի Աբրահը Սամվելի դայակն եր. յերեխայությունից անուցել եր նրան յուր բաղուկների վրա. այդ եր պատճառը նրա չափազանց ընտանության: Նա մի հին ընկեր եր, ընկերոջ կոշտ և մաքուր սրտով: Մինչև այդ հատակը նա դեռ պահպանել եր յուր վաղեմի քաջազնական

հողու թարմությունը: Սամվելը հարգում էր այդ մարդուն, հարգում էր նրա ծերությունը, հարգում էր և նրա անձնվիրական աշխատությունը: Այդ հասակում էլ նրա նեռը յերբեք չէր վրիպում նպատակից. այդ հասակում էլ նա խիստ հաջողակ ձեռք ուներ: Դեռ պատանեկության հասակից կրթում էր նա Սամվելին վարպետության և պանդան գինվորական մարզությունների մեջ. սովորեցնում էր վազել, լայն վիհերի վրայից թռչել, ճիարշավ լինել և խստերախ նժույգներին սանձահարել: Սովորեցնում էր նետաձիգ լինել և նետերով յերկաթյա վահաններ պատռել: Այդ փորձերը նա անել էր տալիս պղնձյա տախտակների վրա: Սովորեցնում էր սրի մի հարվածով մարդկանց գլուխը թռցնել, կամ նրանց մեջտեղից կիսել: Այդ փորձերը նա անել էր տալիս անասունների վրա: Սովորեցնում էր քաղցի ու ծարավի դիմանալ և դիշերը առանց անկողնի բացօթյա տեղում պառկել: Մի խոսքով, սովորեցնում էր այն բոլոր մարզությունները, վոր այդ ժամանակ ընդունված էին նախարարների վորդիների կրթության համար, և վորոնք անհրաժեշտ էին լավ մարդ և լավ գինվոր լինելու համար: Սամվելի դայակի բարոյական կրթության ծրագիրը շատ սահմանափակ էր: Նա բովանդակում էր յուր մեջ մի քանի հիմնական խրատներ միայն. սուտ չխոսել, սովոր խոսքը կատարել, վողորմած լինել դեպի տկարները, հավատարիմ լինել Թագավորին և հայրենիքին, սիրալիր լինել և ժուժկալ: Իսկ ավելի ընդարձակ բարոյական և հոգևոր կրթությունը հանձնված էր առանձին վարժապետների, վոր միևնույն ժամանակ սովորեցնում էին նրան կրոն, լեզուներ և դպրություն: Այդ վարժապետները հրավիրում էին ամբողջ մերձակա Աշտիշատի վանքից:

Արբակը շատ համեստ մարդ էր, սիրում էր, վոր ուրիշները խոսեին յուր մասին, բայց յերբեմն, յերբ բարկացնում էին նրան, նա հարևանցի կերպով հիշեցնել դիտեր յուր տոհմային աղնվականությունը, ասելով. «Ինձ խո պատի տակից չեն դտել»... Նախ ճաշից ուշ սովորություն ուներ խոսել այն ճարտասանարանի մասին, թե ի՛նչպես պաթխիկները կարճին Ցնդրատի նավակամուրջը, արդելեցին Հուլիանոսի անցքը, իսկ իրանք պաթխիկներին վանելով, Հուլիանոսի համար ճանապարհ բաց արին: «Ա՛խ, յերեք յես դիտենայի, վոր Հուլիանոսը այնպես վատ մարդ էր»... միշտ այդ խոսքերով էր վերջացնում յուր պատմությունը:

Պատմիր Արբակին ամեն տեսակ պատերազմական հրաշալիքներ, նա քեղ կպատասխաներ. «Ա՛յ, այն ժամանակ, յերբ մենք կռվում էինք Ցնդրատի մոտ»... և կսկսեր նավակամուրջի պատմությունը: Նա մոռանալ չէր կարող ուրացող կայսրի վարմունքը յուր Թագավորի՝ Տիրանի հետ, վոր պատճառ դարձավ հայոց մի հզոր քահանայապետի մահվանը:

Սամվելը դուրս կհկավ քնարանից և, տեսնելով այնտեղ Արբակին, վողջունեց, ասելով.

— Բարով, Արբակ, ի՞նչ կա:

Ա 444 Ա 4

— Ինչ վողջույնը,— պատասխանեց Ներսունին, նստելով հատակին վրա տարածված ոչխարի վրա։

Նա չէր սիրում նստել բարձր բազմոցի կամ պահարանի վրա, համարելով այդ մի ծիծաղելի սովորություն։ «Փայտե ձի չէն նստում, որ չիրենք էլ չարժվում»— մի այդպիսի հանելուկի ձև էր ուտացել նրա բառանում այդ սովորությունը։

— Լավ և, որ կկար, Աբրահ,— ասաց Սամվելը.— կես ժամ առաջուց կամենում եմ վորոշ դնալ։

Ներսունին ժպտալով պատասխանեց.

— Վորոշ դնացողի՜ն նայենք... վորոշ դնացողը հիմա՞ կե վեր կենում... արեը հինդ կիզայից ավելի բարձրացել է։

Այսինքն հինդ կիրկարությամբ բարձրացել և հորիզոնի վրա։ Նիզակը մի չափ էր Աբրահի համար, որ սանն տարածություն անխոչընդոտ նրանով էր չափում։

Դայակի հանդիմանությունը իրավացի էր. նախ, որ Սամվելը իրենք սովորություն չուներ այնպես ուշ վեր կենալու. յերկրորդ, որ վորոշ նյին դնում դես արեը չծագած։

Նա արդարացրեց իրան, ասելով, որ դիշերը շատ ուշ քնեց, յերկար անհանգիստ եր, և լուսաբացին միայն քունը տարավ։ Բայց այդ բոլոր պատճառները վոչինչ համոզել Աբրահին չկարողացան։ Նա մնաց այն կարծիքի մնջ, թե յերբ մի յերկուսաարդ դիշերը քնել չի կարողանում, նա անպատճառ մի վոր և իցե հաստատություն կունենա, և այդ Աբրահի հայացքով, շատ անվայել եր։

Աբրահը սովորել եր նայել Սամվելի վրա, վորպես մի յերեխայի վրա, որը մի ժամանակ մոռանում եր մոր ուված թաշկինակով քիթը սրբել։ Նա բնավ հավանվել չեր կարողանում այն մտքի հետ, թե այն յերեխան աճել եր, մեծացել եր, և յուր կամքը ու ցանկություններն ուներ։ Թեև Սամվելը վաղուց դադար եր յեկել նրա հոդաբարձության տակից, բայց պահպանելով ծերունու պատիվը, յերբեմն նրա խորհրդին եր դիմում։ Բայց յերբ Աբրահի խորհրդին չյին դիմում, այդ մեջտեղում նա շատ խառապահանջ եր դառնում։

Վերջապես, դիջանելով յուր սանիկի թախանձանքին, ասաց նա.

— Հիմա վոր դնում ես, յես կպատուիրեմ՝ կա՛րմիր ձին պատրաստեն։

— Ինչո՞ւ կարմիրը, Աբրահ, դու դիտես, վոր յես ճերմակին եմ սիրում,— հակառակեց Սամվելը։

— Ճերմակը դես նստելու չե,— պատասխանեց Աբրահը դործածական մարդու յեղանակով.— այդ անիրավը, վորպես տեսնում եմ, խնդքի դալու միտք չունի. նա մի որ քեղ փորձանքի մեջ կձդե։

Սամվելը ընդունեց ծերունու խորհուրդը, միայն խնդրեց, վոր յերկու ծառայից և յերկու բարակից ավել չյինի յուր հետ։ Այդ ցանկությունը խիստ ատարած յերևաց Աբրահին, վորովհետև նա, ինչ վոր վորսորդու-

Թյան եր վերաբերում, այդ սովորություններին ու կարգերին սաստիկ նախանձախնդիր եր: Ամեն անգամ, յերբ Սամվելը վորսորդության եր դնում, նրան ուղեկցում եյին տասն-քսան ձիավորներ և նույնքան շներ: Մի քանի որ առաջ հարևան ազնվականների վորդիները հրավեր եյին ստանում մասնակցելու վորսորդությանը: Ցավ վերջապես, վորոշվում եր տեղը, ժամանակը, ուր կանխապես նախապատրաստություններ եյին տես-նում: Իսկ այս առավոտ հանկարծ Սամվելի խնդքին վչում եր վորսի գնալ, այն էս յերկու ձիավորով: Ինչ կմտածեյին տեսնողները: Դա ան-վայել չե՞ր լինի: Բայց Սամվելը հանդստացրեց ծերունուն, ասելով, թե ավելի մի թեթև ղրոսանք կատարելու ցանկություն ունի, քան թե վոր-սորդության, վորովհետև իրան վատ և ղղում, և կամենում և փոքր ինչ ղվարճանալ:

Սմբռցում արդեն դիտեյին սպարապետի վերադարձը Տիլբռնից, ի հարկե, վոչ այն մանրամասներով, վորպեսի լուրեր բերեցին վերջին յեր-կու սուրհանդակները: Սամվելը կամեցավ դիտենալ, թե ինչ տպավորու-թյուն եր գործել այդ համբավը ծերունու վրա:

— Դու դիտե՞ս, Աբրակ, վոր հայրս գալիս և, և գալիս և հայոց սպարապետի պաշտոնով:

Ծերունին վոխանակ պատասխանելու, ձեռքը տարավ դեպի գլուխը, ճակատը չվնեց, կարծես թե դժվարանում եր պատասխան տանել:

— Ինչո՞ւ չես խոսում:

— Այդ բանից լավ հոտ չե գալիս... պատասխանեց պարզախոս ծերունին, և այժմ ավելի պինդ կերպով սկսեց չվնել յուր ճակատը:

— Ինչո՞ւ, Աբրակ, այդ ի՞նչ ասելու բան և,— հարցրեց Սամվելը իրան վիրավորված ձևացնելով:

Ծերունին ձեռքը տարավ դեպի ճերմակ մորուքը և բունելով, ասաց.

— Այդ մազերից ամեն մեկը մի վորձանքի մեջ և սպիտակել, Սամ-վել... յես շատ բան եմ տեսել և շատ բան եմ վորձել...

Նա լռեց, այլ ևս վոչինչ չասաց, բայց նրա վշտալի դեմքը շատ բան ասաց Սամվելին: Ծերունին, ի հարկե, չդիտեր, թե վորպեսի՝ չար հանձ-նարարություններ ստացած ուներ Սամվելի հայրը Շապուհ արքայից, վոր պետք և կատարեր յուր հայրենիքում: Բայց նրան անհանդստացնում եր այն աղոտ կասկածանքը, թե ինչո՞ւ հայոց սպարապետությունը Սամվելի հորը տվեցին, քանի վոր այդ պաշտոնը տոհմային որենքով վայելում եր նրա յերեց յեղբայրը՝ Վասակը, կամ ինչ իրավունքով պարսից Շապուհ արքան ձեռնամուխ եր լինում այն կարգադրություններին մեջ, վոր հայոց թագավորի իրավունքից միայն կախումն ունեյին: Այդ կասկածները ար-տահայտեց ծերունին, յերբ վեր կացավ և, յուր քայլերը ուղղելով դեպի անկյակի դուռը, ասաց դառնացած ձայնով.

— Ցավս շատ ուրախ կլիներ, յերբ մեր տերը յուր թագավորի հետ կվերադառնար Տիլբռնից, և վոչ թե Մերուժան Արծրունու հետ...

Նա դուռը սառակի բախեց յուր յետևից և մրթմրթալով անցավ նախասենյակից:

Աբրահամի վրդովմունքը սառակի ազդեց Սամվելի վրա: «Վատպսխ-սուդ պետք է ասել ամրոցում, յերբ դարձի խնդությունը բոլորովին հայտնի կլինիս,— մտածում էր նա,— «վոհ վոք, բացի իմ մորից, գոհ չպիտի մնա իմ հոր վարմունքից... Նա կբերե յուր հետ ազմուկ, կռիվ, նախանձ, տանջություն յուր տան մեջ...

Բոլոր խոսակցության ժամանակ Հուսիկը, վոտքի վրա կանգնած, լսում էր: Նա վո՛չ Աբրահամի ճերմակ մորուքն ուներ, և վո՛չ նրա փորձերը: Բայց նա ևս մի բան զգում էր, թեև բացատրել չէր կարողանում, թե ինչո՞ւ յուր տերը, հոր դալուստը լսելով, վոխանակ ուրախանալու, միշտ տխուր էր:

Այս առավոտ, կարծես, կորցրել էր նա յուր սովորական զվարթությունը և դառնում էր մի տեսակ մելամաղձության մեջ: Սամվելը նկատեց այդ և կարեկցությամբ հարցրեց.

— Ի՞նչ կա, Հուսիկ, ինչո՞ւ չես այդպես լուռ:

Պատանին զգուշությամբ նայեց յուր շուրջը և, մի քանի քայլ մոտենալով Սամվելին, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Գիտե՞ս, տեր իմ, ի՛նչ խմացա...

— Ի՞նչ խմացար,— հետաքրքրությամբ հարցրեց Սամվելը:

— Այն մարդը այս գիշեր դարձյալ յեկել էր տիկնոջ մոտ:

— Վո՞ր մարդը:

— Սուրհանդակը, վոր մեծ տերից նամակ էր բերել:

— Քեզ ո՞վ ասաց:

— «Նա» ասաց:

— Նվարդը:

— Այո՛, Նվարդը: Ասաց, վոր գիշերից բավական անցել էր, յերբ նորից Բաղասը բերեց նրան տիկնոջ սենյակը: Մինչև այդ ժամանակ տիկինը նստած սպասում էր: Հետո սենյակի դռները կողպեցին, տանջանացան, սկսեցին յերկար ու յերկար խոսել:

— Ի՞նչ խոսեցին:

— Նվարդը բոլորը լսել չէր կարողացել. ասում էր, վոր շատ կամաց էին խոսում, միայն դռան ճեղքից տեսել էր, վոր տիկինը հանձնում էր նրան դանազան նամակներ: Նա պետք է շատ տեղեր գնար, շատ յերկրներից անցներ, շատ մարդկանց հետ տեսնվեր, և այն նամակները պետք է հասցներ նրանց:

— Այն տեղերի կամ այն մարդկանց անունները Նվարդը չասա՞ց քեզ:

— Ցնս հարցրի, Նվարդը չէր հիշում, ասում էր, վոր անծանոթ անուններ էին, չկարողացա մաքսում պահել: Միայն այսքանը լսել էր, վոր տիկինը խոսում պատվիրում էր սուրհանդակին, վոր առանց մի րոպե

կորցնելու, աշխատեր յերկու շաբաթվա ընթացքում բոլոր տեղերից անցնել և բոլոր նշանավոր մարդկանց հետ տեսնվել:

— Այդ մարդկանց և վո՞չ մեկի անունը չեր հիշում:

— Հա՛, մոռացա, մեկի անունը հիշում եր: Նա ասաց, վոր տիկինը պատմիրեց, վոր սուրհանդակը գնա ամենից առաջ «արևորդիներ» քրմապետ Վարազդատի մոտ:

Այդ անունը լսելով, Սամվելը խոպոտ դունչաձայնվեցավ: Միայն այդ անունը բավական եր Սամվելին զգաստիար տալու յուր մոր վտանգավոր ձեռնարկությունների մասին: Տարոնում մինչև այդ ժամանակ դեռ գոյություն ուներ հին արևապաշտությունը: Նրա հետևողներին նոր անունով կոչում եյին «արևորդիք»: Նրանք ազդով հայ եյին, բայց քրիստոնյա հայերի հալածանքից վախենալով, թեև առերես իրանց քրիստոնյա եյին ձևացնում, բայց գաղտնի կերպով պաշտում եյին հին կրոնը, և վորպես նեղված ու հալածված մի հասարակություն, միշտ մի հարմար առիթի եյին սպասում ապստամբվելու: Իսկ այժմ առիթը ներկայանում եր: Մամիկոնյան տիկինը, Տարոնի տերուհին, ամեհիս եր ուղարկում նրանց քրմապետին և հրավիրում եր ազնակցել իրան: Ցնել ո՞վքեր, յերթե վոչ «արևորդիները», ցույց կուտային ամեն պատրաստակամություն ընդունելու տիկնոջ հրավերը: Նրա մտածմունքը, Տարոնի տերը, դարձս եր Տիրոնից վոչնչացնելու քրիստոնեությունը, և բերում եր յուր հետ պարսից արևապաշտությունը: Ցնել ո՞վքեր, յերթե վոչ «արևորդիները». դրկարաց կընդունեին նրան: Իսկ «արևորդիների» թիվը Տարոնում, մանավանդ Միջնադեմ սահմաններում, փոքր չեր: Ուրեմն, հողը պատրաստ եր, վորի վրա Սամվելի մայրը արդեն սկսել եր սերմանել ներքին յերկպառակության սերմերը:

Այդ բոլորը պարզ եր Սամվելի համար:

Այդ առավոտ մոր սուրհանդակը ճանապարհ ընկավ դեպի «արևորդիների» քրմապետը: Իսկ ինքը, վորոշորդության պատրվակով, պատրաստվում եր ճանապարհ ընկնել դեպի Աշտիշատի վանքը — Հայաստանի Մայր յեկեղեցին: Այնտեղ եյին կենտրոնացած քրիստոնեության նշանավոր ուժերը: Գնում եր ազդարարելու տեղային հոգևորականությանը գալոց վտանգի մասին, գնում եր հորդորելու նրանց, վոր նրանք ևս իրանց կողմից պատրաստվին հուշելու քրիստոնյա ժողովուրդը: Ցնելու համար, համազգի հայ հասարակությունների կրոնական ներկայացուցիչները պետք և մրցեյին, պետք և մաքառեյին միմյանց հետ: Մեկի նախաձեռնությունը տալիս եր մայրը, մյուսինը—վորդին:

Ընդունարանից մի դուռ բացվում եր դեպի հանդերձատունը, վոր այլ անունով կոչվում եր «պատմուճանաց տուն»: Այնտեղ պատուհաններում, մեծ և փոքր կապոցների մեջ, դրած եյին Սամվելի զգեստները: Իսկ սամոյի մուշտակները և դանազան վերարկուները, հարմարեցրած տարվա յեղանակներին, քարշ եյին տված ավելի ընդարձակ պատուհաններում և

ծածկված էին վարագույրներով: Առանձին տեղ էին բռնում նրա դիմավորական և վերասորդական հագուստները: Բոլորը թանդագին, բոլորը պարզարած վառվող ու արծաթով: Սամվելը մտավ այնտեղ և հագավ յուր վերասորդական կարճ ու թեթև դգեստը: Այդ դգեստի մեջ նրա դեղակազմ իրանը ներկայանում էր յուր բոլոր շքեղությամբ:

Իսկ Հուսիկը այդ միջոցում պրպտված էր մի այլ սենյակում, որըն դուրը բացվում էր հանդերձատան միջից: Այդ սենյակը իշխանի դանձարանն էր: Այստեղ պահվում էին նրա՝ թե՛ յուր անձնական, և թե՛ յուր ձիանների թանդագին պարդերը: Բայց Հուսիկը ընտրեց ձիանների ասպարենից ամենահասարակը մինը, որովհետև յուր տերը վերասորդության էր դնում: Ամեն վարագույրները պահված էին հանդիսավոր օրերի համար:

Ճերը Սամվելը պատրաստ էր, Հուսիկը վեր առավ ասպաղենքը և յուր տիրոջ յետևից դնալով, յերկուսը մխաին դիմեցին դեպի իշխանական ասպատանը (սխոռատունը):

Ասպատանը դանվում էր ամրոցից դուրս, մի առանձին շինված քի մեջ, որը յուր դեղեցկությամբ համարյա մի պարանք էր, միայն նժույգների պարանք: Այնտեղ տղրում էր և իշխանական շների բազմությունը: Այնտեղ պահվում էին և վերասորդական բազեների դանազան տեսակները: Ճերը իշխանը ներս մտավ ասպատանի ընդարձակ, քարակուռ բակի մեծ դռնից, ծառաները հեռվից նկատեցին նրա դալուստը և շտապեցին սխոռատեսին իմացում տալու: Իսկույն հայտնվեցավ նա և, ընդառաջ դալով, մինչև մոտենալը, մի քանի տեղ կանդ առավ և հեռվից խորին կերպով դլուխ տվեց:

— Բարով, Զավեն,— վողջունեց իշխանը:

Սխոռատեսը կրկին լուսթյամբ դլուխ տվեց:

Բակում արդեն դուրս էին բերել կարմիր նժույգը, ծածկված դեղեցիկ չուլով, որի յեղերքը պարզարած էին դուշնդուշն, բրդեղեն ծոպերով: Մի ուժեղ ձիապան բռնած ուներ սանձից, բայց անհանդիստ, աշխուժով լի նժույգը չէր դադարում պանդան կատակներ անել յուր դարմանողի հետ. խրխնջում էր, հռհռում էր և, տռվևի վտանները բարձրացնելով, յետևի վտանների վրա ծառանալով, կարծես կամենում էր վեր նել յուր սանձահարողին ամբակներով աստիճ հարվածքի տակ: Բայց նա զարհուր ձեռքով զսպում էր ամեն մի անսովորություն: Ձիապանների խումբը, շրջապատած, ուրախ դեմքերով նայում էին այդ վտանդավոր մարդուժյան վրա: Իսկ ծերունի Աբրահը յերդնվեն մոտենում էր և, ձեռքով փայփայելով նժույգի դեղեցիկ պարանոցը, հայրական խրատներ էր կարդում, ասելով.

— Ջանդի՛ա, Ճեղնիկ, ինչքա՜ն խելոք չես կենում:

Սամվելը մոտեցավ և, նայելով նժույգի խաղերին, զարմանալ դնալի Աբրահը, ասելով.

— Դու արգելեցիր ինձ այսօր ճերմակը նսեմել, բայց Ցեղնիկը նրանից շատ խելացի չէ:

— Ուրախությունից է այդպես անում,— պատասխանեց Ծերունին և հրամայեց, որ ճեռքով փոքր ինչ մաքուր ածեն, մինչև հանդստանա, որ հետո թամբեն:

Աստաստանը բաժանված էր դանազան մասների. մի մասում դևտեղված էին իշխանական ջորինները, մյուս մասում՝ ավանակները, մի այլ տեղ՝ հայաբուկ ձիանները, իսկ այդ մասնում՝ ընտիր նժույգները: Սամվելը դնաց նժույգներին այցելելու: Ախոռապետը առաջնորդում էր նրան: Նրանք մտան յերկար աստաստանի մեջ, որի վերջը հազիվ էր յերևում: Մուրների վրա շարքով կապած էին նժույգները, մաքուր, առողջ, մինը մյուսից ավելի գեղեցիկ: Հարյուրից ավել կլինելին նրանք: Նրանց զսպելու համար, մուրների յերկու կողմերի վրա ամրացրած յերկաթյա հաստ ողակներից կապել էին յուրաքանչյուր նժույգի յերսատանակի յերկճղի ծայրերը: Զբաղվականանալով այդ զբաղությամբ, ավելի չար, ավելի անհանգիստ նժույգների յետևի ոտները շղթայել էին, որ չհարվածեն միմյանց, թեև յուրաքանչյուրը բաժանված էր յուր ընկերից միայտյա ամուր վանդակապատով:

Սամվելը անցնում էր նրանց յետևից և մի առ մի զննում էր: Նրան մի չատ մեծ բավականություն էր պատճառում, յերբ մանում էր այդ հարուստ ասպաստանը: Նա գիտեր բոլոր նժույգների անունները, ծագումը, տարիքը, և ծանոթ էր յուրաքանչյուրի բնավորության հետ: Ախոռապետը մի առանձին հաճություամբ պատասխանում էր յուր տիրոջ նկատողություններին, որ արտահայտում էին նրա խորին դոհունակությունը: Մի քանի նժույգների մոտեցավ նա և ձեռքով փայփայեց նրանց դլուխը: Այդ ավելի ուրախացրեց ախոռապետին, որպես ուրախանում է մի դիտուն մայր, յերբ նրա աչքի առջև դգվում են նրա սիրուն, հայտառ դավակները:

— Ժամանակ է, կարծեմ, Զավեն, «խամից հանել» ձիանները,— ասաց Սամվելը:— Գուցե չուտով հարկավոր կլինեն...

— Հասկանում եմ, տեր իմ,— պատասխանեց ախոռապետը և նրա մազոտ դեմքի վրա յերևաց մի բարեսիրտ ժպիտ:— Մեծ իշխանը դալիս է, յերևի, ընդառաջ պիտի դնաք:

— Այո՛, և մեծ խումբով...

— Այդ յես դիտեի, և դրա համար հենց այսօրից սկսեցինք ձիանները «խամից հանել»: Այսուհետև ամեն որ կտանեն և մի քանի ժամ կմաշեն:

Դուրս դալով աստաստանից, Սամվելը դտավ յուր ձին թամքած, պատրաստած, նստեց և ճանապարհ ընկավ:

ՎԱՐԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կապարճը թևկունքին, աղեղը ուսին, յերկար նիզակը ձեռին, նստած յուր սիրուն կարմիրի վրա, դնում էր Սամվելը այն ճանապարհով, որ տանում էր Վաղական ամրոցից դեպի Աշխշատի վանքը: Ուրախ նժույգը խաղում էր, վոտաչուններ էր դրծում, կրծոտում էր յուր սանձը, և մի քանի րոպեյում նրա բերանը պատվեցավ սպիտակ փրփուրով: Բայց չուստով մեղմացավ նա, կարծես մի առանձին ախորժությամբ ղալով, թե ինչո՞ւ յուր տերը չէ պատասխանում յուր դիարձություններին: Ամեն անգամ, յերբ պատահում էր նրան՝ յուր տիրոջ հետ վերադրության դնալ, նա հաղարումներ փաղաքշանքով խրախուսում էր, քաջալերում էր նրան: Բայց այսոր ինչո՞ւ նա այնպես լուռ էր, ինչո՞ւ վոչինչ չէր խոսում: Այդ էր, վոր տիրացրնից խելացի անասունին:

Նրա պչրանքից վոչինչ պակաս չէր, վոր պատճառ տար վշտանալ նրան: Գլուխը զարդարած էր վոսքրիկ, վարդադույն փունջերով, վոր բռնված էին արծաթյա, զանգակաձև կոճակների մեջ: Պարանոցին կապած ուներ նույնպես արծաթյա վոզայապսար (առչմա), վորի վոսքրիկ փուլիկները, դիպի սմանը մի չարժման մեջ ոգին, ախորժելի ձայներ էին հանում: Իսկ պարանոցի ներքին մասը զարդարած էր դույնզդույն ուլունքներով շարած մանյակով, վոր վերջանում էր յեռանկյունաձև թալիսմանով, վոր ընկած էր ուղիղ լայն կուրծքի վրա: Այդ ապահովացնում էր նրա կյանքը չար աչքից կամ չար պատահարից: Ասպանդակները և թամբի զարդը շինված էին դույն արծաթից, իսկ սմրոյլ թամբը պատած էր ընծու մորթով:

Ձևրկու միաղույն բարակներ, թանդաղին վղկապներով, վազում էին իշխանի առջևից, իսկ յետևից դալիս էին յիրկու պինակիներ, վորոնց յուրաքանչյուրի ձեռքի վրա նստած էր մի մի բազե:

Զինակիները նույնպես պարծանում էին իշխանի յուրության վրա, նկատելով, վոր նա խորին ինքնամոռացության մեջ քշում էր յուր ձին, առանց հետաքրքրվելու յուր շրջակայքով, առանց հետաքրքրվելու և դանապան յիրևներով, վոր ճանապարհին հաճախ հանդիպում էին նրանց: Ճանապարհը դնում էր մի ձորի միջով, վորի աջ և ձախ կողմերի լեռները պատած էին խիտ անտառով: Աջևի պայծառ ճառագայթները չէին թափանցում ծառերի սաղարթախիտ վոստերի միջով, վորոնք, ճանապարհի յերկու կողմից մոտենալով, դրկվել էին, հյուսվել էին միմյանց հետ և կազմել էին մի կենդանի, կանաչազարդ կամար: Ցեղ տեղ լայնանում էր ձորը և նրանց առջև բացվում էին կանաչ, թավիշապատ մարգեր, սփռված դույնզդույն ծաղիկներով:

Քա՛ղցր էր թռչուններին վաղորդյան ազմուկը, քա՛ղցր էր տերևների մեղմ սոսափյունը, և ավելի քաղցր մրմնջում էր լեռնային գետակը, վոր

շտապով վազում էր թվատպատ ափերի միջով: Ամեն ինչ ողջում էր բերկրություն, ամեն ինչ ընդում էր կյանք և ուրախություն, միայն Սամվելի սիրտը ալեկոծվում էր խորին դառնությամբ: Գիտեր վոր մտաբերում էր սա դալոց աղետները, չարիքը յուր բոլոր ընդարձակությամբ մնծանում էր նրա աչքում: «Վո՛ դիտե, մտածում էր նա, գուցե չուտով կհասնի այն որը, վոր այդ դեղեցիկ անտառների խաղաղությունը կվրդովվի անհնարին խռովությամբ, մահվան հոտ կբուրե այդ սիրուն ծաղիկների անուշհոտության փոխարեն, և հարազատը հարազատի արյունով կներկվի այդ կանաչազարդ հովիտները...

Կարծես յերեներն ևս հասկանում էին, վոր Սամվելը այսոր իրանց հետ դոլի չպիտի ունենա, և ազատ, համարձակ անցնում էին նրա աչքերի առջև: Ահա խորամանկ վիթը կայծակի արագությամբ դուրս սլլեր ընտանեկան թուփերի միջից, կտրեց ճանապարհը և, մտնելով ծառուղի մեջ, ցատկեց մամռապատ ապառաժի գլխին, և այնտեղից հեղնական հայացքով սկսեց նայել իշխանի վրա: Բարեհները նկատեցին նրա հանդգնությունը և հարցական դեմքով դարձան դեպի իրանց տերը: Ցերը մոչինչ հրահանդ չտուացան, վչտացած կերպով շարունակեցին իրանց թափառ դնացքը: Ահա կաքավների աղմկալի յերամը արտաքին թևքերով խռովեց սիրող լռությունը: Մուդ-կապտագույն վոճորևի նման, շատ մոտից անցավ նա և մի ակնթարթում անհետացավ մերձակա ժայռերի մեջ: Բազեները, վոր մինչև այդ րոպեն խաղաղ քառած էին գինակիրների ձեռքի վրա, տեսնելով այդ կարմրակուռց և կարմրոտիկ թռչունների համարձակությունը, իրանց լայն, սրածայր թևքերը թափահարեցին և, խիստ զայրագին ծուիչք դործելով, կամենում էին խլուզն հետամուտ լինել: Բայց նրանց վոտներից կապած մետաքսյա նարտոը թույլ չտվեց հարձակում դործել:

Արևը բավական բարձրացել էր. անտառի մեջ սիրում էր ախորժելի ջերմություն: Նախորդ որվա հորդ անձրևից ծառերը լվացվել էին, մաքրվել էին և աքանչելի պչրանքով վայելում էին իրանց կոկիկ տերևներով: Ծառերը ավելի կենդանի դույն էին առացել, խոլ կանաչ մամուռը ավելի աճել էր և, վիտուկ դորդի նման, ծածկում էր ծառերի, ժայռերի մերկությունը:

Անձրևը այդ անտառներում սաստիկ բարկացնում էր չինական կանանց: Նա լվանում էր տերևներից շաքարը, վոր բնությունը ընդում էր նրանց վրա: Նա վոչնչացնում էր յերկինքի աստվածապարգև մանանան: Բայց այս անդամ նրանք վաղորդ հավաքած ունեին իրանց պաշարը: Ահա այստեղ և այնտեղ ծառերի միջից յերևում են վոգքրիկ, ժամանակավոր տաղավարները, հյուսած թարմ վոստերից: Նրանց մոտ մուխ է բարձրանում և դանդաղ, համրընթաց ամպիկներով տարածվում է ոդի մեջ: Գեղջկուհի կարմրաչյա աղջիկները, կարմրաքող հարսիկները, նախշուն

քիթիանների նման, ժեր կերպով պատվում են կրակի շուրջը: Կրակի վրա դնվի և դալիս մի մեծ կաթսա: Նրա մեջ լցնում են շաքարապատ տերևները, շաքարը լուծվում և ջրի մեջ, հետո տերևները դուրս են ածում, իսկ մնացած ջուրը դնվի տալով՝ թանձրացնում են, և այդպես պատրաստում են բուսական մեղր կամ ռուպի: Բայց ավելի քնքուշ տերևները, վրանց վրա շաքարն ավելի հատ խառ և կապել, ընտրում են, և այնպես պարում են մեխանց վրա, հուն են տալիս, պատրաստելով այն անուշահամ և անուշահոտ քաղցրավենիքը, վոր կոչվում է գազպեհ: Այդ առատությունները չինականներին խնամ բարեբար կերակուր են մատակարարում, մանավանդ ձմեռնային պահոց որերում:

Սամվելն անցավ այդ առաջավարներից մեկի մոտով: Նկատելով իշխանին, մոտ վազեց մի մանկահասակ աղջիկ: Ցնեթե այդ անտառների անմահ պաշինները նրա նման կարմիր հաղնեյին, կնեթե նրա նման ծիածանի գույներով զոտի կապեյին, և կնեթե նրանց գլխի կերկար հյուսերը նրա նման պոկաձև կապեյին ճակատի վրա,— գարձյալ չեյին կարող այնքան սիրուն և այնքան գրավիչ լինել, վորպես այդ անմեղ գեղջկուհին: Տեսնելով նրան, Սամվելը ձիու գլուխը պահեց: Աղջիկը ամոթխած գնդալ մոտեցավ և ձեռքը մեկնելով, ասաց.

— Թող իմ տերը քաղցրացնե յուր բերանը:

Սամվելը ընդունեց գեղջկուհու ձեռքից գաղտնի պլիքը, վոր բոլորակ կարիանդակի ձև ուներ, և ճաշակից հարցնելով.

— Այդ քո՞ պատրաստածն է:

Պատասխանի փոխարեն մանուկ աղջիկ դեմքի վրա վայելեց մի քաղցր ժպիտ:

Սամվելը ընծայեց նրան մի քանի արծաթյա դրամներ, ասելով.

— Վարժվեհամե դու այդպիսի շնորհալի աղջիկ ես և այդպես լավ գաղտե յիս պատրաստում, ահա՛ քեզ:

Աղջիկը դժվարությամբ ընդունեց նվերը և, դլուխ տալով, վազեց յուր ընկերուհիների մոտ:

Տեղային սովորության համեմատ, այդ հյուրասիրությունը նրանք ցույց եյին տալիս ամեն մի ճանապարհորդի, վորոնց պատահում եր անցնել նրանց տաղավարի մոտով:

Սամվելը բաժանեց առացած նվերը յուր ղինակիրներին:

Վորքան արևը բարձրանում եր, այնքան ճանապարհի անցուդարձը ավելի կենդանություն եր առանում, այնքան հաճախ պատահում եյին քարավաններ, չինականներ, վորոնք դնում եյին դեպի զանազան կողմեր: Ուղտավաններ նստած եյին ձիանների կամ ջորիների վրա, իսկ գյուղացիք դնում եյին վոտով: Վոտով դնացողները, հենց վոր տեսնում եյին իշխանին, քաշվում եյին ճանապարհի մի կողմում, կաղնում եյին և, երբ նա մոտենում եր, խոնարհությամբ գլուխ եյին տալիս, և այնքան սպասում եյին, մինչև անցնում եր: Սամվելը բոլորի համար խոսք ուներ,

բոլորին վողջունում եր և բոլորի առողջությունը հարցնում եր: Իսկ ձիանների կամ ջորիների վրա նստածները ցած եյին իջնում յերիվարներից, նույնպես դուրս եյին գալիս ճանապարհից և խոնարհ գնդրուկ կանդնում եյին իրանց դրաստների կողքին, յերբ նա մոտենում եր, դլուխ եյին տալիս: Այդ սովորությունը սաստիկ ատում եր Սամվելը, և այդ եր պատճառը, վոր նա հեռվից ձեռքով նշան եր տալիս, վոր չանհանգստացնեն իրանց: Բայց նրանք չեյին դադարում արժանավոր հարգանքը մատուցանել իրանց յերիտասարդ իշխանին:

Սամվելը չատ սիրված եր ժողովրդից: Նրա քաղցր ու մեղմ բնավորությունը, նրա անսահման դուրն ու բարությունը՝ թե՛ դեպի չինականը, և թե՛ դեպի քաղաքացին՝ նրա անձը պաշտելի եյին կացուցել: Նա չուներ ուրիշ նախարարական տների մեծամիտ յերիտասարդների վո՛չ անզիությունը, և վո՛չ արհամարհանքը, վորոնց աչքում իրանց տիրությունն նժույդը, չունը, բաղեն ավելի արժանավորություն ունեյին, քան թե ռամիկը: Այդ եր պատճառը, վոր չինականների մեջ մի տեսակ ոտարոտի կարծիք եր կազմվել Սամվելի մասին. փարծես իշխան չեյին, ասում եյին նրանք, վոչ ծնծում և և վոչ հայհոյում եր:

Դուրս գալով ձորից, ճանապարհը թեքվեցավ դեպի լեռնային գագաթը, և այստեղից բացվեցավ Սամվելի առջև Մուշի լայնածավալ դաշտը: Ներքևում, մեջեն, նվիրական ծառաստանի մեջից, հազիվ յերևում եյին Աչոխշատի վանքի բարձր գմբեթները, իսկ վանքի մոտ տարածվում եր համանուն ավանը, վոր ավելի մի փոքրիկ քաղաքի տպավորություն եր գործում: Այդ ավանը Մամիկոնյանների սեփականություն եր:

Մի մարդ, յերկար ղերանդին ուսին դրած, դանդաղ քայլելով առջևից գնում եր դեպի ավանը: Նա յեղանակում եր մի յերգ, վորի բառերը կլանվում եյին ղաչմունքի և ուրախ հնչյունների խորին հոսանքի մեջ: Նա այն աստիճան դրավված եր յուր յերգով, վոր բնավ չեր լսում յուր յետևից տրոփող ամբոխների ձայնը, մինչև Սամվելը կոչեց նրան.

— Մալխա՛ս...

Գյուղացին հետ նայեց և, տեսնելով իշխանին, ուրախ դեմքով մոտեցավ, մտերմաբար բռնեց նժույդի սանձից և կանդնեց նրա մոտ: Նրա այրական դեմքը, ամուր կազմվածքը արտահայտում եյին մի անվախտակեր բնավորություն:

— Դու ինձ պետք ես, Մալխաս,— ասաց Սամվելը:

— Ես ծառան ահա յուր տիրոջ սպասումն է,— պատասխանեց գյուղացին:

— Այժմ վոչ, եղուց յերեկոյան կլաս ամրոցը, ուղիղ ինձ մոտ:

Գյուղացին լ նշան յուր խոնարհության գլուխը չարժեց:

Սամվելը անցավ: Գյուղացին դարձյալ չարունակեց յուր յերգը:

Վորսորդության պատրվակով դուրս գալով ամրոցից, այսոր ինչ

Սամվելը վոչինչ չվորսաց, բայց նա պատահմամբ վորսաց մի մարդ, վոր իրան հարիսավոր եր:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Տարո՜ն, սրբազան կրոնի և աստվածպաշտության: Տարո՜ն, բնադավառ հայոց աստվածների և աստվածուհիների: Ահա՛ երկին յերևաց վեհափառ Արածանին— հայոց սրբազան Գանգեսը: Ծոթանասուն տարի առաջ այդ դետի ափերի մոտ դեռ ազատ, համարձակ արածում եյին սպիտակ արջառները, վոր նվիրված եյին Աստղիկ աստվածուհուն: Ծոթանասուն տարի առաջ այդ դետի ափերի մոտ դեռ դրսնում եյին հայոց դիցուհու յեղջերուները, վորոնց պարանոցները զարդարած եյին վոսկյա ողամանյակներով: Այդ դետի ափերի մոտ մի ժամանակ տեսավ նրանց Լուկուլլոս հռոմեացին և աքանչացավ:

Սամվելի աչքի առջևն եր այդ դետը: Սամվելն անցնում եր Ջարքեի վրայով: Դեռ վաղեմի դիցանվեր անասունները հովանավորում եյին այդ լեռան դեղեցիկ բարձրավանդակները: Ցնվ Սամվելի մուտը հիշողություններ թռչում եյին դետի անցյալը, դետի վոչ այնքան հեռավոր անցյալը: Այդ անասունների մթության մեջ, այդ աքանչելի բարձրավանդակների վրա, կանգնած եյին հայոց Հաշտից տաճարները: Այնտեղ Հայաստանը հաշտության դռներ եր մատուցանում յուր աստվածներին: Կարծես, Սամվելը հենց այդ րոպեում տեսնում եր «Վիշապաբաղ» վահագնի տաճարը,— քաջության աստծո տաճարը, վոր լցված եր հայոց թագավորների դանձերով: Ներա մոտ բարձրանում եր «Վահագնի սեղյակը», վորի մեջ կանգնած եր հայոց անպարտելի դյուցազնի դեղեցկուհին՝— «Հոսկևճուկը» Աստղիկը: Տեսնում եր և «Հոսկևմայր— Հոսկեծին» Աստհան տաճարը, վորի մայրական խնամակալության ներքո Հայաստանը մի ժամանակ վայելում եր փառք և կենդանություն:

Այդ յերեք մեծադանձ տաճարների խումբը ներկայացնում եր հայոց «Հաշտից տեղերը»:

Այնտեղ, հայոց տարեմուտին, նավասարդ ամսի սկզբում, կատարվում եր ընդհանրական աշխարհնվիրումը տոնախմբության: Հայտնվում եր հայոց արքան, հայտնվում եր հայոց մեծ քրմապետը, հայտնվում եյին և հայոց նախարարները: Արքան յուր ձեռքով բաց եր անում դռնաբերության մեծ հանդեսը, հարյուր սպիտակ ցուլ, վառվռուն յեղջյուրներով, դոհ մատուցանվում յուր աստվածներին: Ներա որինակին հետևում եյին բոլոր մեծամեծները:

Նոր տարին բերում եր յուր հետ և նոր կյանք: Հայաստանը այդ տոնախմբության ժամանակ պետք և ցույց տար յուր աստվածներին յուր

անցյալ տարվա հաստատիմության պատուհանը: Վահագնը քաջության եր պահանջում, Անահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սեր և բանաստեղծություն:

Կատարվում էին հանճարի և քաջության մրցություններ: Բանաստեղծը յուր հոբինած յերգն եր յերգում, յերաժիշտը ածում եր յուր քամբիռի վրա, ըմբիշը յուր բազուկների ուժն եր ցույց տալիս, իսկ վարպետը՝ յուր դեղարվեստի արդյունքը: Լինում էին դինախաղներ, լինում էին մենամարտություններ, քաջը քաջի հետ և մարդը՝ կատաղի ցուլի կամ գազանի հետ: Լինում էին արշավանքներ՝ ձիանեքով, կառքերով, կամ վոտով՝ արագավազ յեղջերուների հետ: Հաղթողը ստանում եր այն վարդյա պսակներից մեկը, վորոնցով զարդարված եր լինում Աստղիկ վարդերով վառված տաճարը: Այդ պատճառով այդ տոնախմբությունը կոչվում եր Վարդավառի տոնախմբություն:

Նոր տարին բերում եր յուր հետ և նոր կյանք: Հին տարին անցնում եր: Պետք եր քավել հին մեղքերը և նորոգված մաքրությամբ մտնել նոր կյանքի մեջ: Կատարվում եր ընդհանրական մկրտություն: Մեծ քրմապետը առնում եր Սրածանկի ալիքներից սուրբ ջուրը և վոսկյա ցնցուղով սրսկում եր բազմության վրա: Նրա օրինակին հետևում էին բոլոր ուխտավորները. ամենքը միմյանց վրա ջուր էին սրսկում: Այդ միջոցին ոդը լցվում եր մխիթարելու սպիտակ աղավնիների բազմությամբ: Ուրաքանչյուր ուխտավոր մի մի աղավնի էր թողնում: Ցնծ սիրո աստվածուհու (Աստղիկ) նվիրական թռչունները, մաքուր, անբիծ, վրայից սիրո անարատ վոդիներ, սավառնում էին, սլանում էին, ճախր էին առնում նրա սպիտակ մարմարիոնյա տաճարի շուրջը:

Ջո՛հ, ջո՛ւր և աղավնի՛. վորքան մեծ խորհուրդ կա ձեր մեջ:— Հաշտության, քավության և սիրո սուրբ խորհուրդը:

Ամեն տարեմուտի սկզբում, Նավասարդ ամսում, Վարդավառի տոնախմբության ժամանակ, Հայաստանը այդ հաշտությունը կատարում եր յուր ճշմարիտ տեղերումն, Քարքեյի բարձրությունների վրա, յուր աշխարհախումբ դոհաբերության արյունով: Ամեն տարեմուտի սկզբում Հայաստանը կատարում եր այդ ճավությունը, մկրտվելով Արածանիի սուրբ ջրով: Ամեն տարեմուտի սկզբում Հայաստանը կատարում եր և սիրո այդ սուրբ խորհուրդը, Աստղիկ տաճարին աղավնիներ ճոնելով:

Բայց այդ ավանդությունը շատ հին եր, և ավելի հին, քան ըն ժամանակների սկիզբը:

Ցնծ աստված մաքրեց մեղավոր յերկիրը ջրհեղեղով— այդ համաշխարհական մկրտությունից հետո, Հայոց Նոյ Նահապետը առաջինը յեղավ, վոր Նավասարդի սկզբում Արարատ լեռան գագաթից Թագրևց աստվածային սիրո ավետաբեր աղավնին: Հետո, դուրս գալով տապանից, նույն լեռան ստորոտում մատույց հաշտության առաջին զոհը: Ծերունի Նահապետի ավանդապահ վորդին, Սեմը, Արարատից գալով Տարսն, և

գնահատել Սիմ լեռան առաքառում, նվիրագործեց խորհրդավոր ավանդությունը:

Անցան դարեր, անթվելի շատ դարեր, այդ ավանդությունը կատարվում էր հայոց աշխարհում, մինչև նույն աղավնին հայանվեցավ Հորդանանի ջրերի վրա:

Նույն ավանդությունը արդարացրեց հեթանոս Հայաստանը վարդավառի տոնախմբությամբ: Նույն ավանդությունը արդարացրեց և քրիստոնյա Հայաստանը դարձյալ վարդավառի տոնախմբությամբ:

Այդ բոլորը դիտեր Սամվելը, այդ բոլորն անցնում էր նրա մտքից, վորպես աղավնին անմոռանալի հիշողություն:

Այն որից, յերբ Սամվելը դնում էր Աշտիշատի վանքը, յոթանասուն տարի առաջ, յերկու ապիտակ ջորիներ Տարոնի միջով տանում էին մի ծածկված կառք: Հայոց յերկրի վեց նշանավոր իշխաններ, ձիանների վրա նստած, շրջապատել էին այդ կառքը: Դրանք էին՝ Հաշտենից իշխանը, Աբծրունյաց իշխանը, Անձևացյաց իշխանը, Անձևղ տան իշխանը, Սյունյաց իշխանը և Մոկաց իշխանը: Կառքի հակառակին, վորպես արքան դրոշակ, վեր էր մի արծաթյա խաչ: Նրա առջևից դնում էր Հայաստանի Լուսավորչիչը, յերկար սև և անթափանցիկ քղանչ ծածկած: Իսկ յետևից գալիս էին վեց իշխանների զորքերը՝ թվով 5080 հոգի: Այդ քրիստոնեական հոդևոր պետությունը՝ խորին արքային վոգևորությամբ՝ անցնում էր Տարոնի միջով, և վորտեղից անցնում էր, թողնում էր հեթանոս չրջակայքի վրա ահ և սարսափ: Կառքը տանում էր յուր մեջ այն արքունիքները, վոր Լուսավորիչը բերել էր յուր հետ կեսարիայից:

Դեռ առավոտը նոր էր լուսանում, յերբ կառքը անցավ Արածանին և մտնելով Բաբքենի բարձրությունները: Այստեղ յերկու ապիտակ ջորիները կանգ առին և այլ ևս առաջ չգնացին:

Բայց կառքի մոտենալը ահեղ աղմկումով ազդեց լեռների վրա և դիպանվեր անտառի խաղաղությունը վրդովվեցավ: Հայոց անհամային աստվածները դայլայլան և կատաղած քամիները խումբերով դուրս վազեցին տաճարներից: Մի քանի ժամվա մեջ Արման քրմապետի, նրա վորդի Դեմետրեսի և Մեսակես քրմապետի դրոշի տակ հավաքվեցան 6946 հոգի, վորոնք բոլորը քամիներ և մեհյաններն պաշտոնյաներ էին: Սկսվեցավ արշալույսահեղ կռիվը— քրիստոնեության և հեթանոսության կռիվը:

Սրբազան անտառի խորքերից, վորտես մի հսկայական մրջնանոցի մեջից, դուրս խուժեց թափված զորությունը և բռնեց լեռների բոլոր անցքերը ու բոլոր բարձր դիրքերը: Արման քրմապետը զինված էր, զինված էր և նրա վորդին: Հայր և վորդի դա՛ժան և նախասահման խոսքերով մեծամասնության էին հրավիրում հայոց իշխաններին, վոր կռվում էին հայրենի սահմանների դեմ: Շուտով քամիներն այնպիսի նեղ դրության մեջ դրեցին հայոց իշխաններին, վոր Մոկաց իշխանը սոսկալած յեղավ

Լուսավորչին փախցնել Մամիկոնյանների վաղական ամբոցը, որ թշնամուս ձեռքը չընկնի: Փախչելու միջոցին Լուսավորիչը յուր կեսարիայից բերած սրբությունները թաղցրեց անտառի մեջ, մի անհայտ տեղում:

Կռիվը տևեց մի քանի որ և մի քանի շաբաթ, մինչև հայոց իշխանները նոր զորություն ստացան: Հաղթությունը մնաց քրիստոնեության կողմը: Արձան քրմապետը, նրա վորդի Դեմետրեն և Մեսակես քրմապետը ընկան պատերազմի դաշտում, սուրը ձեռքում, հերոսի պես: Ընկան քուրմերից և 1038 քաջեր: Քարքե լեռան աքանչելի տաճարները կործանվեցան... Հայոց արհեստի և ճարտարության դեղեցիկ գործը վոչնչացավ... Եվ մեծագանձ մեհյանների հարստությունը հայոց նոր խաչակրների ավարառության առարկա դարձավ:

Վահեին, արծաթը, մարմարիոնը հեշտ եր կործանել. բայց այն դաշտմունքը, վոր միացած եր ժողովրդի սրտի և հոգու հետ, այն հավատը, վոր նա ուներ դեպի յուր հայրենական աստվածները,— դրանք դեռ մնում եյին և մնացին շատ դարեր այդ կործանումից հետո: Սուրը և հուրը չկարողացան վոչնչացնել նրանց: Կրոնը փոխվեցավ, բայց ժողովրդի վաղեմի սովորությունները մնացին:

Դրանք այն տաճարներն եյին, վորտեղ Նավասարդի սկզբում կատարվում եր Վարդավառի աշխարհախառն տոնախմբությունը: Այդ տոնախմբությունը հեթանոսական դարերում կատարվում եր տարվա մեջ յոթն անգամ, և ամեն անգամին թե' թագավորը, և թե' մեծ քրմապետը ներկա եյին դտնվում:

Լուսավորիչը նույն տաճարների տեղում հիմնեց առաջին սրբության տեղը և Հայաստանի առաջին Մայր յեկեղեցին, վոր, պահպանելով յուր հին անունը, կոչվում եր Աշտիշատի վանք: Վարդավառի տոնախմբությունը փոխեց Հիսուս Քրիստոսի այլակերպության տոնախմբությունով: Բայց «Վարդավառի» նախնական սովորությունները մնացին: Դարձյալ տարին յոթն անգամ հայտնվում եր այնտեղ հայոց քրիստոնյա թագավորը յուր նախարարների և հայոց մեծ քահանայապետի հետ և բաց եյին անում Աշտիշատի վանքի աշխարհախառն տոնախմբության հանդեսը: Դարձյալ զոհեր եյին մատուցանում, աղավնիներ եյին թռցնում, և ջուր եյին սրսկում միմյանց վրա: Դարձյալ կատարվում եյին նույն խաղերը, նույն մրցությունները և նույն պարզևաբաշխությունները, վոր լինում եյին հեթանոսական դարերում: Դարձյալ նույն վարդերը, վոր մի ժամանակ զարդարում եյին Աստղիկ տաճարը, հետո նույնպես զարդարում եյին Աշտիշատի վանքի սուրբ սեղանը: Եվ այդ տոնը դարձյալ կատարվում եր Նավասարդ ամսի սկզբում և կոչվում եր Վարդավառի տոնախմբություն:

Այդ բոլորը դիտեր Սամվելը, այդ բոլոր հանդեսներին մասնակցել եր նա: Վոչ սակավ անգամ խաղերի կամ մրցությունների ժամանակ

սասցել էր նա առաջին մրցանակը: Վոչ սակավ անդամ հայոց թագավորը համբուրել էր նրա ճակատը, կատարած քաջութիւնը տեսնելով:

Իսկ այժմ ներկայանում էր մի նոր կրօնական պատերազմ: Արդյոք ինչպես կմտանակցեր այդ պատերազմին ժողովուրդը, այն ժողովուրդը, որ տակավին մնացել էր յուր հին, ազգային նախապաշարմունքների մեջ:— Այդ մխիթը սարսափեցնում էր Սամվելին, յորը նա ցած իջալ ձիուց և վոտք դրեց Աշիշատի վանքի սյամի վրա:

ՑԵՐՆԵՔ ՑԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԺԵՐ

Աշիշատի վանքի խուցերից մեկում, դիշերային այն պահուն, յերբ բոլոր միաբանները քնած էին, ընդարձակ թախտի վրա նստել էին յերեք յերիտասարդներ: Պղնձյա աշտանակի վրա վառվում էր ճիթային ճրագը և յուր դունաթափ լուսով լուսավորում էր այդ յերեք բաղմահոգ դեմքերը: Ցերեկն էլ լուռ էին, յուրաքանչյուրը խորասուզված էր յուր մեջ: Ցերեկի դեմքերից ևս յերևում էր, վոր այդ լռութիւնը մի սեռակ դինադուլ էր, վոր վոչը ինչ չունչ առնին, հանդստանան, վորպեսզի նորից չարաբնակին ընդհատված վիճաբանութիւնը:

Ցերիտասարդներից մեկը՝ հաղթանդամ, բարձրահասակ, խոշոր կազմվածքով և փառահեղ դեմքով մի տղամարդ էր, վորի կերպարանքի մեջ մեծութիւնը այն աստիճան սերտ ներդաշնակութիւն էր կազմում վայելչութեան հետ, վոր ներկայացնում էր դեղեցկութիւնը յուր վսեմ, այրական ձևի մեջ: Ցերկրորդը, ընդհակառակն, ավելի կարճահասակ կարելի յեր համարել, քան թե մեջահասակ, և ավելի ներբակազմ, քան թե հաղթանդամ: Իսկ այդ քնքուշ կազմվածքի վրա բնութիւնը, կարծես, սխալմամբ դրել էր մի չնորհալի դլուխ, վորին մի հարուստ, հոյակապ մարմին ավելի պատշաճ կլիներ: Կրակոտ աչքերի մեջ նշմարվում էր յուռանդ և դյուրաբորբոք բնավորութիւն:

Առաջինը Սահակ պարթեն էր, յերկրորդը՝ Մեսրոպ Մաշտոցը: Իսկ յերրորդը՝ Սամվելը:

Սահակ պարթեւը Հայաստանի հզոր քահանայապետի՝ Ներսես մեծի՝ վորդին էր: Մանկութեան հասակում, վերջացնելով յուր ուսումը կենարանում և, ծանոթանալով հուն և ասորի լեզուների հետ, հետո դնաց Կ. Պոլիս, այնտեղ ավելի կատարելագործվեցավ հելլենական կրթութեան մեջ, սովորելով փիլիսոփայութիւն, յերաժշտութիւն, և ծանոթանալով հուն բանասաեղծների հետ: Կ. Պոլսում ամուսնացավ նա: Վերադառնալով յուր հայրենիքը, վորպես յերիտասարդական հասակում նրա հայրը, այնպես էլ և ինքը՝ զանազան պետական պաշտոններ էր վարում, բնավ չմասնակցելով, թե մի որ հայոց հայրապետական աթոռի ժառանգորդը

պետք է լինի: Սկսյալ այն օրից, յորում հայրապետական աուռը սկսաւ խնամութիւն անել արքունիքի և մեծ նախարարութեանց տներուն հետ, նա յուր վորդիներուն հոգևոր կրթութեան հետ միասրեց և դիվորական կրթութիւնը: Ցեղ այդ անհրաժեշտ եր, վորովհետև Հայաստանի քահանայապետը ներկայացնում եր՝ միևնույն ժամանակ՝ և Հայաստանի ամենաբարձր պետական անձը: Նա տիրոջ տուրը ոտղանի վրա պատարագ եր մատուցանում, բայց հարկը պահանջած ժամանակ՝ առաջնորդում եր զորքին դեպի պատերազմ: Նա յեկեղեցու բեմից քարոզում եր յուր ժողովրդին աստուծո խոսքը, բայց հարկը պահանջած ժամանակ՝ թագավորների հետ բանակցութիւններ եր անում յուր հայրենիքի գործերի վերաբերութեամբ:

Սահակ պարթեւը գործով յեկած եր Աշտիշատի վանքը և այնտեղ պատահմամբ տեսավ Սամվելին: Սամվելը պիտեր, վոր նա անցնելու յե Տարոնով, բայց չեր սպասում, վոր այսոր կհանդիպեր նրան Աշտիշատի վանքում: Ցերկու ամիս առաջ, Մեսրոպի հետ, նա դուրս եր յեկել այցելութիւններ անելու յուր հայրենական կալվածներին, վորոնք սկսյալ Արարատից, գտնվում եին Տարոնում, տարածվում մինչև Տարոն: Հայրապետական հարուստ տունը ուներ այնքան շատ կալվածներ, դյուղեր և ավաններ, վորքան չուներ մի մեծ նախարար:

Մեսրոպը բնիկ տարոնեցի (մշեցի) յեր՝ Հացեկ կոչված ավանից, վարդան անունով մի աղնվականի վորդի: Նրա հայրենական ավանը կես որվա ճանապարհով միայն հեռու յեր Աշտիշատի վանքից: Այդ պատճառով, յեռանդով լի յերիտասարդը, սկսյալ մանկութիւնից, նվիրել եր իրան ուսման և դիտութեան. սովորեց հունաց, ասորաց, պարսից լեզուները և այն բոլոր դիտութիւնները, վոր հայտնի եին յուր ժամանակում: Վորպես աղնվական, նա վարժված եր և դինվորական կրթութեան մեջ: Վարդապետի արքունիքում նա զանազան պաշտոններ եր կատարել, մի ժամանակ վորպես դինվորական, մի ժամանակ վորպես դիվանադիր: Իսկ հետո թողնց արքունիքը և Ներսես մեծի հայրապետանոցում նոտարի պաշտոն եր կատարում:

Նրանք նստած եին այն սենյակում, վորի կից սենյակը մի շատ արխուր հիշատակով կապված եր Սահակի տոհմակին պատմութեան հետ...

Սահակը հագնված եր այնպես շքեղ, այնպես թանդագին զարդարանքներով, վորպես հագնվում է մի մեծ արքայազն իշխան: Նա նստած եր ծալապատիկ և վոսկյա քամարից քարշընկած վոսկեպատյան սուրը դրած ուներ ծնկների վրա: Նրա մոտ նստած եր Սամվելը, իսկ նրանց հանդիպ՝ Մեսրոպը:

Սամվելն արդեն հայտնել եր նրանց Տիգրանից ստացված պատասխի տեղեկութիւնները, հայտնել եր և յուր հոր ու Մերուժանի շարժ դիտավորութիւնները,— և այդ եր նրանց վիճաբանութեան առարկան, թե ի՛նչ միջոցներով կարելի յեր մոտալուտ վտանգների առաջն առնել: Հայ-

բննիքի վերահաս դժբախտությունը այն ստիպեցին հուղել եր այդ յերկու յերիտասարդ սրտերը, վոր նրանք մինչև անգամ մոռացել էլին ամեն ցավ, ամեն պատշաճ, վոր վերաբերում եր մխիթարության։

— Վտանգը ավելի մեծ է, քան ես յերբեք յեղել է,— ընդհատեց Մեսրոպը ուրախ լուրթյունը։— Մենք ճաշակում ենք մեր հին սխալների դառն պտուղները...

— Ի՞նչ սխալներ,— հարցրեց Սահակը։

— Այն մեծ սխալները, վոր գործեցին քո մեծ պապերը, Սահակ...

Վերջին խոսքը այնպիսի մղձավանջ ձայնով արտասանեց վոգբրկված յերիտասարդը, վոր նրան նման ցցվեցավ մեծափառ պարթևի սրտում։ Նրա մեջ յեվ յեկավ քահանայապետական և արքայական արյունը, և խոշոր աչքերի մեջ վառվեցավ բարկության կրակը։ Նա մի անսովոր շարժում գործեց։ Այդ մինչդեռ վոգբրկված յերիտասարդը ձեռքը տարավ դեպի արծաթյա քամարը, վորից քաշ եր ընկած մի կարճ սուսերը։

Սահակը պատեց յուր վրդովմունքը և դայրացած կերպով հարցրեց։ (Նրա ձայնը խոսելու միջոցին վոգոտում եր)։

— Դո՛ւ այդ իմ պապերի սխալն ես համարում, Մեսրոպ, վոր նրանք բարբարոս Հայաստանը հեթանոսական տգիտից հանեցին և քրիստոնեական լույսի մեջ դրեցին։

— Ճիշտ այդ քո պապերի սխալը չեմ համարում,— պատասխանեց Մեսրոպը մի այնպիսի մեղմությամբ, վոր ավելի վհրավորական եր։— Բայց ասա՛ ինձ, Սահակ, ի՞նչ եր այդ լույսը առաջ, և ի՞նչ է նա այժմ։ Արդյոք նա դուրս յեկո՞ղ վանքերի չրջապարիսպներից։ արդյոք նա մատո՞վ չնչականի մոտյալ խրճիթը։ Ճիշ չեր ել կարող մանել։ Ի՞նչ միջոցով կարող եր մանել։ Այն որից, վոր այդ լույսը ընդունեցին Հայաստան, անցել և համարյա մի դար։ Բայց մինչև այսոր մեր յեկեղեցիներում սուրբ գիրքը կարդում են հունաց և ասորաց լեզուներով, մինչև այսոր մեր յեկեղեցիներում պարթում են ասոր լեզուներով։ Վո՞ր դյուղացին, վո՞ր քաղաքացին, վո՞ր հայը հասկանում է այդ լեզուները։ Ճիշ այդ դրության մեջ՝ ի՞նչ լույս, ի՞նչ բարոյական կամ հոգևոր ուղղություն կարող եր տալ յեկեղեցին ժողովրդին, յերբ նա անանում և մխայն ծեսեր և լսում է իրան անհասկանալի ձայներ։

— Դու կարծում ես, վոր ժողովուրդը ասիո՞վ ոգովվեցավ դրանից, Մեսրոպ։

— Ոգովվեցանք մենք, և վոչ թե ժողովուրդը։— Դու, յես և այդ նորելի յերիտասարդը, վոր լուռ նստած է այստեղ,— նա ձեռքը տարավ դեպի Սամվելը,— մենք ամենքս հունական կամ ասորական կրթության արդյունք ենք այո՛, վչչացնո՛ղ և ամեն ազգային դատողության սպանո՛ղ բյուզանդականության արդյունք։ Բայց ի՞նչ է խնդիր ժողովուրդը։— Նա հենը կոպրեց և նորից մեջ վազեց չուռաչ...

— Շա՛տ բան դուսավ, Մեսրոպ։

— Վոչինչ չդուսավ, Սահակ։ Դու մոռացո՞լ ես, յերբ քո սուրբ Վըրթանես պապը՝ հենց այդ Աշտիշատի վանքի տաճարի մեջ՝ հունաց լեզվով պատարագ էր մատուցանում, հանկարծ յերկու հազար հոգի պաշտպեցին վանքը, կամենում էլին քարկոծ առնել նրան։ Տաճարի ամրությունը հազիվ կարողացավ աղատել նրան կատաղի խուժանի բարկությունից։ Դու մոռացո՞լ ես, Սահակ, յերբ քո Պապ և Աթանագինես հայրերը՝ դարձյալ այդ Աշտիշատի վանքում՝ նստած էլին խրախուճյան սեղանի չուրջը, հանկարծ մեկը՝ հրեշտակի նման՝ սուրը ձեռին ներս նետվեցավ և յերկուսին էլ խողխողեց նստած տեղում։ Ամենեքով նրանց դիակները մնացին այնտեղ անթաղ, և վոչ վոք խուժանի յերկյուղից չէր համարձակվում մոտենալ։ Ահա այդ աննյակում կատարվեցավ հայանի յեղեռնագործությունը...

Նա ձեռքը տարավ դեպի կից դահլիճը, վոր վանքի եպիսկոպոսարանն էր, և շարունակեց.

— Այդ դժբախտ դեպքից անցել է ընդամենը՝ մոտ յերեսուն տարի։ Ի՞նչ է փոխվել։ Ժողովուրդը դեռ նույն բարբարոսն է մնացել։

— Յերեսուն տարվա մեջ չէր կարելի խլել ժողովրդից այն, ինչ վոր կազմվել էր նրա մեջ շատ դարերի ընթացքում, Մեսրոպ։

— Այդ յես դիտեմ, Սահակ։ Բայց դա դարձյալ չէ հերքում այն մտքերը, վոր մեր ժողովրդի կրթության դործը բոլորովին սխալ, և թույլ եմ տալիս ինձ ասել՝ բոլորովին վնասակար հիմքերի վրա դրվեցավ...

Նկատելով, վոր վիճաբանությունը հետզհետե ավելի սուր կերպարանք է ստանում, Սամվելը մեջ մտավ, ասելով.

— Ի՞նչ ոդուտ այդ հակաճառություններից, Մեսրոպ։ Ինչ վոր յեղել է, ինչ վոր կատարվել է, մենք այդ բոլորը պետք է անցած համարենք և մտածենք դործերի այժմյան դրության վրա, թե ինչ միջոցով կարող ենք հետացնել վերահաս վտանգը։

Փոքրիկ յերիտասարդի դունաթափ դեմքի վրա յերևաց մի դառն ժպիտ։ Նա նայում էր Սամվելի վրա, վորպես մի պարզամիտ յերեխայի վրա։

— Դու շատ ես, սիրելի Սամվել,— ասաց նա ծաղրական ձայնով։— Ձի՞ վոր դործերի այժմյան հիմնադրա դրությունը բոխում է մեր հին մեղքերից։ Առանց քննելու այդ մեղքերը, մենք չենք կարող դարման տանել ներկա չարիքներին, վոր մեր հայրենիքին մահ և սպառնում... Ցեղս համոզված եմ, վոր քո հայրը հիմար մարդ չէ։ Ցեղս համոզված եմ, վոր քո քեռի Մկրտիչ Արծրունուն նույնպես չէ կարելի խենթերի կարգը դնել։ Իսկ յես ավելի համոզված եմ, վոր այդ յերկու դավաճաններին վայելչորեն պարսից Շապուհ արքան կրոնասեր մարդ չէ։ Նա քո հորը և քո քեռուն ուղարկում է վերնչացնելու Հայաստանում քրիստոնեությունը և պարսից մոգերի ձեռքը տալու թե՛ մեր յեկեղեցիները, և

թե՛ մեր պատրոցները:— Դու կարող ես համաձայնած լինել, նաղելի Սամվել, որ Շապուհը այդ ձեռնարկության մեջ՝ մի՛շ յուր հոգու փրկությունն և վարոնում, և մի՛շ կամենում և հաճոյանալ յուր ասպվածներին, — այլ կամենում և ընդ միշտ վճռել մի բաղաքական ծանր խնդիր, որ նրան շատ անհանդստացնում է...

Սամվելն ամբողջ մարմնով դողաց. նա համարյա չլսեց վերջին խոսքերը: Նրան ծաղրում էին, նրա յերևակն նրա հարը դավաճան էին կոչում, և կոչում էր մի աղնվական, որը բարձով, պատվով իրանից շատ մեծ էր: Նա ձայն ավելց վշտացած կերպով.

— Ցնթե դո՛ւ, Մեսրոպ, քո յերկար լեզվի չարը քո կարճ հասակին հավասարեցնելիր, ավելի քաղաքավարի կլինելիր:

Փոքրիկ յերիտասարդը վեր կացավ նստած տեղից և, մի քանի անգամ անցնելով սենյակի միջով, կանգնեց Մամիկոնյան իշխանի առջև և անվըրդով կերպով ասաց.

— Ինչո՞ւ յես վիրավորվում, պղտիկ Սամվել, քո հորեղբայրը վատին էլ կարճահասակ մարդ էր, բայց ավելի մեծ մարդ էր, քան թե քո հսկայատիպ հայրը...

— Հոր մեղքը կթավվի վորդին...

— Այն ժամանակ յես ավելի կխրխմ նրան...

— Թողնենք այդ,— վորոտաց Սահակը յուր պարթևական ահարկու ձայնով: Կատակի և յերգիծանքի ժամանակ չէ: Նստի՛ր, Մեսրոպ:

Նա յեկավ և նստեց յուր առաջվա տեղում:

«Շապուհը կամենում է ընդմիշտ վճռել մի բաղաքական ծանր խնդիր. վոր նրան շատ անհանդստացնում է»...

Փոքրիկ յերիտասարդի այդ խոսքերի իմաստը լավ ըմբռնելու համար, հարկավոր է մեկն հիշել Հայաստանի հարյուր տարվա քաղաքական վիճակը, սկսյալ Տրդատից մինչև Արշակ Բ.-ի վերջին օրերը, այսինքն՝ քրիստոնեության մուտքից մինչև Շապուհի կրոնական հալածանքները:

Նախ քան քրիստոնեության մուտքը Հայաստանում՝ հայերը և պարսիկները ավելի հաշտ էին միմյանց հետ, վորովհետև կրոնով շատ նման էին և, բացի դրանից, թե՛ Հայաստանում, և թե՛ Պարսկաստանում թագավորող տները միևնույն պարթևական կամ Արշակունյաց տոհմից էին: Հայ և պարսիկ թագավորների մեջ յեղբայրություն կար:

Քրիստոնեության Հայաստանում մուտք գործելու ժամանակներում՝ թե՛ արևելքում, և թե՛ արևմուտքում պատահեցան յերկու մեծ փոխանություններ, վորոնք բոլորովին հեղաշրջեցին Հայաստանի քաղաքական դրությունը: Արևմուտքում կազմվեցավ Բյուզանդական կայսրությունը և Պարսկաստանում դարձավ. իսկ արևելքում կազմվեցավ Սասանյան պետությունը և Տիգրանը մայրաքաղաք դարձավ: Պարսից Արշակունիների թագավորությունը վերջացավ: Հայերը ազատվեցան իրանց լավ դաշնակիցներից:

Հայաստանը, վորպես դաշինակցության քար, մնաց այդ յերկու նոր հիմնված անհաշտ պետությունների մեջտեղում:

Նա այնքան ուժ չուներ, վոր ինքնակա դերը պահպաներ. ստիպված եր հակվել կա՛մ մեկի կա՛մ մյուսի կողմը:

Նույնիսկ Բյուզանդիայի և Տիգրանի արքունիքների չահերը պահանջում եյին դրավել Հայաստանի հակումները. վորովհետև այդ յերկիրը մի կամուրջ եր, վորտեղից պետք և անցնելին նրանք՝ մեկյանց հանդիպելու համար: Իսկ բյուզանդացոց և տիգրանցոց կռիվները և ընդհարումները վերջ չունեյին: Ճիշ այդպես, Հայաստանի թեկնածուները մեկի կամ մյուսի կողմը՝ միշտ հաղող վախճան եր տալիս պատերազմին:

Քրիստոնեությունը հեռացրեց հայերին պարթևներից և մոտեցրեց հնդկավոր բյուզանդացիներին: Այդ օրից պարթևները թշնամացան հայերի հետ:

Հայաստանը մնաց յերկու կրակի մեջտեղում, դեպի վո՛ր կողմը վոր մոտենում եր, այրվում եր:

Այդ դրությունը առաջ բերեց այն յերկդիմի դերը, վոր խաղում եյին հայոց թագավորները, և իրանց դերի մեջ պատժվողները նախ իրանք եյին լինում: Հանդամանքներին նայելով, նրանք իրանց դեմքը դարձնում եյին յերբեմն դեպի Բյուզանդիա, և յերբեմն դեպի Տիգրան: Դեպի մեկը յերեսը չուռ տալու ժամանակ՝ յեռևից մյուսը հարվածում եր...

Տրդատը, հայոց նորընծա քրիստոնյա թագավորը, առաջինը յեղավ, վոր բարեհամակամ դաշն կապեց հռոմայեցոց, նույնպես առաջինն քրիստոնյա կայսրի՝ Կոստանդիանոսի հետ: Այդ քաղաքականությանը պահ յեղան Տրդատի բոլոր հաջողությունները, և ինքը Տրդատը պատժվեցավ պարթևներից:

Տրդատի վորդի Խոսրով Բ.-ը Կոստանդ կայսրից թագ և ծիրանի ընդունելու համար, դրդռեց պարսից Շապուհ թագավորի բարկությունը, վորը յուր յեղբայր Ներսեհին ուղարկեց, վոր հայոց թագավորությունը վոչնչացնե և ինքը հայոց թագավոր դառնա:

Խոսրովի վորդի Տիրանը Հուլիանոս կայսրին պարսից դեմ ոգնելու համար, վնդրը Շապուհը նրան խաբեությամբ պարսկաստան հրավիրեց և, յերկու աչքերը խարելով, կուրացրեց:

Տիրանի վորդի Արշակ Բ.-ը, խրատվելով յուր նախորդների սխալներից, թողեց Բյուզանդիան և բարեհամացավ Տիգրանի արքունիքի հետ: Այդ մեջոցին Վալենտիանոս կայսրը Արշակի Տրդատ յեղբորը, վորը երբեք պատանդ պահված եր Կ. Պոլսում, սպանել տվեց:

Արշակը ամուսնացավ հաշտվել կայսրի հետ և նրա աղջկաններից վոևիմպիադա անունով ոբնորդը կնության առնե: Այդ բարեհամությանը դրդռեց Շապուհի բարկությունը, նա Տիգրանակերտը ավերակ դարձնեց և, Անիի ամրոցին տիրելով, թագավորական դանձերը կողոպտեց և մինչև անգամ Արշակունի թագավորների գերեզմանները քանդելով, վոսկորները

դեռևս տարակուսանքի մեջ էր, երբ նա տեսավ, որ Մերուժանը, որ ամենից առաջ պիտի ուրախանար, տխուր էր։ Նա հարցրեց նրան, թե ինչ է պատահել։ Մերուժանը պատասխանեց, որ Ասպետը հիվանդ է։ Ասպետը հիվանդ էր, ինչպես միշտ, երբ նրա հոգին տանջվում էր։ Նա ուզում էր ինքնուրույն լինել, ուզում էր ազատ լինել, ուզում էր ինքն իրեն տեր լինել, ուզում էր ինքն իրեն պատկանել։ Նա ուզում էր ապրել իր ուզածի պես, ինչպես ուզում էր

րինք: Մենք թողեցինք մեր նախնականը, մեր աղջայինը, և սկսեցինք ոտարինը սիրել: Ցավ մեր քրիստոնեական մոլեռանդությունը այն աստիճանին հասցրինք, վոր, իբրև մի սիղծ բան, սկսեցինք մերժել մեր հին դրությունը, մեր մեհենական սրբազան տառերը, և ընդունեցինք հունաց ու ասորոց տառեր: Այդ բոլորից հետո, շատ հասկանալի յե, վոր մենք չեր կարող զարգանալ վո՛չ աղջային կյանք, և վո՛չ բուն աղջային դրականություն: Մյուս կողմից, մենք հրավիրեցինք մեր վրա պարսիկների տեսլությունը: Պարսիկը սկսեց մտածել. քանի վոր հայերը հունաց լեզուն և հունաց դպրությունը սովորելով, սիրում են նրանց և սրտով կապված են Բյուզանդիայի հետ,— ինչո՞ւ չպիտի մոցնեմ և յես իմ լեզուն և իմ դպրությունը, վոր նրանք ինձ սիրեն և ինձ հետ դաշնակից լինեն: Այժմ, կարծեմ, պարզ է, վոր Շապուհի հալածանքները ամենևին կրոնական բնավորություն չունեն, այլ կատարյալ քաղաքական նպատակով են կատարվում: Հայաստանը, մի ամուր պատնեշի նման, ընկած է Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության մեջ: Նա ցանկանում է խորտակել այդ պատնեշը, վոր յուր համար ճանապարհը բաց լինի,— և խորտակել յուր քաղաքակրթության կուռնոլ: Հայաստանը, մի կոշտ վոսկրի նման, մնացել և նրա կոկորդում. նա աշխատում է ծամել, փշրել և կլանել այդ վոսկրը, վորպեսզի կարողանա ազատ շունչ առնել...

— Ցեթե մարսել կարողանա... ընդհատեց Սամվելը:

— Մարսել կարող է, յեթե դրծերի այժմյան դրությունը չվոխվի, — պատասխանեց զայրացած պարթևը:— Այդ թողնենք: Ցես կամենում եմ պատասխանել Մեսրոպի մի քանի ծանր ակնարկություններին, վորոնցով նա մեղադրանք բարդեց իմ նախահարց վրա:

Նա դարձավ դեպի Մեսրոպը, վոր մի առանձին անձկությամբ սպասում եր նրա պատասխանին: Ասաց.

— Գովում եմ քո զգոնությունը, գովում եմ և քո լրջմտությունը, Մեսրոպ. բայց չեմ կարող ներել քո ամբաստանություններին: Զաւիսպանց յեռանդը թույլ տվեց քեզ անպատշաճությունների մեջ ընկղմվել: Դու մեղադրում ես իմ հայրերին, վոր նրանք անխնա խորտակեցին, վոչնչացրին հինը, ավանդականը՝ նորը նրա տեղ հաստատելու համար: Այդ իրավ է: Բայց ամեն վերանորոգության սկիզբը այդպես է լինում: Մեր տեր Հիսուս Քրիստոսն էս այդպես վարվեց: Նա վոչ մի քար չթողնց քարի վրա: Դու մեղադրում ես իմ նախահորը, Լուսավորչին, վոր նա Հայաստանը լցրեց հուշն և ասորի վարդապետներով: Ուրիշ կերպ լինել չեր կարող: Նրան պետք եյին պատրաստի մարդիկ, և նա բերեց յուր հետ այդ մարդկանցը Կեսարիայից: Մի վարպետ, յերբ ցանկացած շենքը կառուցանելու համար՝ յուր տեղում մշակներ դտնելու հույս չունի, նա մշակները յուր հետ է տանում: Բայց իմ նախահոր նպատակը յերբեք այն չե յեղել, վոր ոտարների ձեռքը տար հայի հոգևոր և մտավոր կրթությունը: Այդ ոտարները ժամանակավոր վարձկաններ եյին, վոր պետք է

պահվելին այնքան ժամանակ, մինչև մեր աշխարհում բնիկներից նոր ուժեր պատրաստվելին: Եվ այդ մտքով նա հիմնեց այդ բազմաթիվ դպրոցները, որոնց մեջ մինչև անգամ քուրմերի որդիները պետք է քրիստոնեական կրթություն առանային: Բայց յերբ այդ դպրոցները գանկացած արդյունքը չտվեցին, և այդ ուսած հյուրերը մեր աշխարհում յերկար մնացին,— դա պետք է վերաբերել այն դժբախտ հանգամանքներին, որոնց զոհ դնացին իմ հայրերը և որոնք ժամանակ չտվին նրանց լիապես ի կատար ածելու հայոց լուսավորության գործը: Իմ նախահայրը, Մովսեսի նման, առիթվելցավ խուսափել ժողովրդի խառնաբուռթյունից, և յուր կյանքի վերջին տարիները թաղեց Սեպուհ լեռան այրերի անհայտության մեջ: Նրա որդի Վրթանեսի համար դու ինքդ ասեցիր, թե որպիսի՛ բարբարոսությամբ կամենում էին սպանել այդ վանքի ասացաբի մեջ: Իսկ նրա մյուս որդի Աբիսաակիոս սպանվեցավ Ծոփաց գավառում Արքեղայոս իշխանից: Աբիսաակիոսը կուսակրոն մնաց, որդի չթողնց, բայց նրա յեղբոր Վրթանեսի յերկու որդիներից մեկը, Գրիգորիսը, նահատակվեցավ Վասակյան դաշտում. իսկ մյուսը, Հուսիկը, սպանվեցավ յուր ամեր Տիրան Թագավորից: Հուսիկի յերկու որդիները, Պապ և Աթանագինես, սպանվեցան մեր աննշմարին կից դահլիճում: Աթանագինես որդի Ներսեսը, իմ հայրը, այժմ աքսորված և մի անբնակ կղզում... Տեսնո՞ւմ ես, Մեսրոպ, իմ պապերից և ո՛չ մեկը խաղաղ մահով չվախճանվեցավ: Ամենքը զոհ յեղան մեր թագավորներին, մեր նախարարներին և վայրենի խուժանի վայրագությանը: Սուրը ժամանակ չտվեց նրանց իրագործելու այն մեծ նպատակները, որ ունեին իրանց հայրենիքի համար: Իրանց ամբողջ կյանքում պատերազմեցին նրանք վայրենի նախապաշարմունքների դեմ, և նույն պատերազմի մեջ բնկան իրանք... Եվ այդ բոլորովին չե վշտացնում ինձ: Նրանց վախճանը պետք և այդպես լիներ, որպեսզի նրանց արյունով ծլեյին, աճեյին և ծաղկեյին այն սրբազան սերմերը, որ ցանեցին հայրենի հողի վրա...

Մեսրոպը լուռ թյամբ լսում եր, իսկ Սամվելի դեմքի վրա նշմարվում եր մի անսովոր անհանգստություն:

Մեծ քահանայապետի վհատած որդին այդ խոսքերով վերջացրեց յուր սխուր բացատրությունները.

— Եվ թե մի որ նախախնամողի կամքը՝ իմ նախահարց նման՝ ինձ էլ ինձ Հայաստանի հայրապետական աթոռի վրա, իմ առաջին հոգսը կլինի՝ հայոց յեկեղեցու ընթերցվածները մայրենի լեզվի վերածել և հայ ժողովրդի կրթության գործը ազգային բուն հիմունքների վրա դնել...

— Իսկ իմ գործը կլինի,— ավելացրեց Մեսրոպը,— վերստանդնել հայոց մոռացված տառերը և պատռել մեր հասարակության՝ մեզ համար խորթ՝ հույն, ասորի և պարսիկ դպրության:

Ո՞վ կարող եր մտածել, որ այդ դիշերվա ջերմ վիճաբանություններից քանի և յերկար տարի հետո, այդ յերկու նշանավոր տղաներից

տաբեյին իրանց ախտը և սկիզբ կզնեյին հայոց մեծ լուսավորության վոսկյա դարին...

Դուռը կամաց բացվեցավ, սենյակում հայտնվեցան յերկու արեղաները, վորոնք, կանգնելով առաջիններէ առջև, ասացին միաձայն.

— Խոլորը լսեցինք: Իսկ մենք պետք է ապացուցանենք, վոր հույնը և ասորին այնքան վատ չեն, վորքան դուք կարծում եք...

Յերկուսն էլ վանքի միաբաններից եյին. մեկը հույն եր ազգով՝ մյուսը՝ ասորի: Առաջինը Յեպիփանն եր, յերկրորդը՝ Շալիտան:

ԽՈՐԹ ՄԱՅՐ

Մյուս որը վողջական ամբոցը դռնվում եր արտակարգ ուրախության մեջ: Ծառաները սովորականից լավ եյին զարդարված, աղախինները վառվում եյին դունդդույն պչրանքներով և մինչև անգամ ներքինի Բաղոսը հագել եր յուր խայտաճամուկ պարեզոտը:

Ամբողջ ամբոցը սպասում եր մի հարզելի հյուրի— Սահակ պարթևին:

Սահակ պարթևը այդ տան մեջ ոտար չեր: Մամիկոնյանները նրա քեռիներն եյին: Նրա հայրը, Ներսես մեծը, Մամիկոնյաններէ վեհապն եր: Նրա մայրը, Սանդուխտ տիկինը, Սամվելի հորեղբոր՝ Վարդանի՝ դուստրն եր: Դեռ ուսանողության ժամանակ Ներսես մեծը կնաբարկություն ասլրում եր յուր կնոջ՝ Սանդուխտի հետ, վորից ծնվեցավ Սահակը: Յերեք տարուց հետո նույն քաղաքում վախճանվեցավ Սանդուխտը, վորի մարմինը հայրը, Վարդանը, բերեց Հայաստան և թաղեց Թիլ ավանի հայրապետական տան տոհմային գերեզմանատան մեջ: Յուր սիրելի մուսայինը կորցնելուց հետո, Ներսես մեծը յերկար չմնաց կնաբարկության, այլ յուր ուսումը կատարելագործելու նպատակով գնաց Կ. Պոլիս: Այնտեղ ամուսնացավ Ասլհոնի անունով մի հույն ազնվականի դստեր հետ:

Սամվելը, վաղ առավոտյան վերադառնալով Աչիշտոի վանքից, անմիջապես յուր մորը լմացում եր տվել Սահակի այցելության մասին: Այդ լուրը թեև սկզբում խռովություն պատճառեց տիկնոջը, բայց, ծածկելով յուր տհաճությունը, հրամայեց, վոր պատրաստություն տեսնեն: Տիկինը համբերել չեր կարող հայրապետական տան բոլոր անդամներին, մանավանդ Սահակին, վորի բարձր ազնվապետական վեհությունը սաստիկ վրդովեցնում եր նրան: Իսկ այսոր հայոց մեծ քահանայապետի վորդին հայտնվում եր մի այնպիսի անսպասելի ժամանակ, յերբ Մամիկոնյանների տան մեջ յեվ եր գալիս մի դաղտնի հակաղգային և հակաքրիստոնեական խմորում...

Դեռ մի քանի ժամ մնում եր մինչև ճաշը:

Տիկնոջ դահլիճը արդեն կազմ ու պատրաստ էր։ Պատուհաններուն և դռնակներուն մետաքսյա վարագույրները վեր էին բարձրացուած և նրանց միջից յստակում էին բոլոր քանդակին անոթները, որ զրված էին մեջտեղում։ Վահրիկը, արծաթը, պղինձը վառվում էր յուր պայծառ դեղերությամբ։ Նրանց մեջ կային զանազան տեսակ գեղագործական պնակներ, ափսեներ, թասեր, բաժակներ, դավաթներ, տարաներ և հայկական եւ ու կարմիր կավից չինված նկարակերտ սափորներ։ Դրանք՝ իրանց անշարժ դրութեան մեջ՝ ծառայում էին ավելի իբրև զարդ, քան թե սեղանի սպաս։

Ամբողջ դահլիճը բուրում էր վարդի անուշհոտութեամբ։ Բազմոցները, դրդիները, բարձերը՝ բոլորը ցողված էին վարդաջրով։ Լուսամուտների մեջ, մեծ ծաղկամաններով, դրված էին ամենաթարմ վուներ։

Տիկինը նստած էր յուր առօրեական փափուկ զահավորակի վրա և բաց լուսամուտից նայում էր դեպի յուր առջևը բացվող լայնածավալ հեռատեսանը։ Աչտեղից երևում էր, ծառերի խոութեան մեջ թաղնված, ճանապարհի մի մասը, որ բերում էր Աչտիշատի վանքից դեպի ամրոցը։ Տիկնոջ մտահոգ աչքերը հառած էին այդ ճանապարհի վրա։ Նա խորին վրդովմունքով սպասում էր Սահակի գալստյանը, որ պիտի անցներ այն տեղով։ Նա յերազում էր և այն յերջանիկ որը, յերբ այդ ճանապարհով կհայտնվեր սիրելի ամուսինը, յուր հետ բերելով նոր բախտ և միծութիւն...

Նրա մոտ նստած էր մի այլ կին, ավելի մանկահասակ, ավելի նազելի։ Անմեղութիւնը և հեզութիւնը կաթում էր այդ սիրուն կնոջ վարդագույն շրթունքներից։ Նրա խոշոր, սևորակ աչքերի մեջ այնքան քաղցրութիւն կար, որ, կարծես, բարութեան ծով լիներին։ Ճակատի վրա փայլում էր պարսից արքայական նշանը— մի կիսաթրիի վոսկյա ճաճանչներով։ Ճեմ իրավ, նա պարսից արքայական տոհմից՝ հղոր Շապուհի քույր Վարսիդուխտն էր։

Դա Վահան Մամիկոնյանի յերկրորդ կինն էր, իսկ Սամվելի՝ խորթ մայրը։

Այդ դեղեցիկ կինը դերից Սամվելի հոր սիրտը, այդ դեղեցիկ կինը կապեց Սամվելի հորը թե՛ պարսից արքունիքի, և թե՛ պարսից կրոնի հետ և, վերջապես, այդ դեղեցիկ կինով միջոցով Շապուհը վորսաց Մամիկոնյան նախարարներից մի հավատարիմ գործակից...

Բազմանուէթյունը հայոց նախարարների մեջ սովորական բան էր։ Բացի սրինավոր կանանցից, նրանք պահում էին և բազմաթիվ հարճեր։

Սամվելի հայրը ամուսնացավ Վարսիդուխտի հետ այն ժամանակ, յերբ Աբշահալանի դժբախտ վախճանից հետո Ներսես մեծը հաշտեցրեց Աբշակ Քաջաձորին յուր նախարարների հետ, բայց Սամվելի հայրը և Մերուժան Արծրունին չհաշտվեցան, այլ յերկուսն էլ բաժանվեցան նա-

խարիսխների մեխանութիւնից և, թողնելով Աբչախին, դիմեցին Տիզբոն և պարսից Շապուհ արքային անձնատուր եղան:

Այսօր միևնույն ընտանիքի երկու տանտիկինները նստած էին միասին, մի դահավորակի վրա: Վորմիզդուխտը— Սամվելի խորթ մայրը և Տաճատուհին— Սամվելի հարազատ մայրը: Դրանք երկու անհաշտ ախոյաններ էին: Ախոյաններ, վորպես միևնույն ամուսնի սիրուն բաժանորդ՝ երկու խանդոտ կանայք, ախոյաններ, վորպես բարձր ծագումի երկու հզոր ներկայացուցիչներ: Ավելի ճիշտ հաշվով, պետք է Սամվելի մայրը խոնարհվիր, տեղի տար արքայադստեր պահանջներին: Սամվելի մայրը Մերուժան Արծրունու քույրն էր, իսկ Վորմիզդուխտը՝ Շապուհ արքայի քույրը: Բայց, հանգամանքների չնորհիվ, այդ հաշվից բոլորովին հակառակ հետևանք էր դուրս գալիս: Սամվելի մայրը, այդ խստասիրտ և դառը Արծրունին, ուզում քաղելով Վորմիզդուխտի մեղմ և դյուրաթեք բնավորությունից, վոչ միայն կարողացել էր պահպանել յուր ինքնանձնուրության փառքն ու բարձրությունը, այլ մինչև անգամ հաջողեցրել էր Վորմիզդուխտին յուր ազդեցության տակ դնել: Այդ էր պատճառը, վոր այսօր Վորմիզդուխտի ներկայությունը համարյա մոռացված էր Սամվելի մոր համար, վոր դեռ ևս շարունակում էր լուսամուտից նայել դեպի Աշխէհատի ուղին, և նրա վրա ամենևին ուշադրություն չէր դարձնում:

Նրա ուշադրությունը գրավել էր մի մխոք, վոր սաստիկ հուզում էր նրան: Սահակի անակնկալ հայտնվիլը Տարոնում՝ զանազան մթին տարակուսանքների մեջ էր դրել նրան:—«Ձուր կալվածքներին տեսուչ անելու համար է յեկել»... մտածում էր նա,— «այդ ի՞նչ է նշանակում: Այդ բախտավոր մարդիկը՝ առանց սրի և առանց աբյունի՝ այնքան շատ կալվածքներ ունեն, վոր չեն էլ մտաբերում, թե վո՛րտեղ ունեն, և յերբեք նրանց յերեսը չեն տեսնում: Անտարակույս, մի այլ նպատակ պետք է թաքնված լինի Սահակի այցելության մեջ»...

Վորմիզդուխտը արդեն սկսել էր ձանձրանալ: Մի քանի րոպե նրան զբաղեցրեց ուրախ ծիծեռնակը, վոր բաց լուսամուտից ներս սլացավ, ճըլվլաց, ճըթճըթաց, մի քանի պտույտներ, մի քանի շրջաններ գծեց ընդարձակ դահլիճի մեջ և ապա նստեց պղնձյա կիսաթաղանի գլխին, վոր դրած էր մարմարիոնի պատվանդանի վրա: Դա Մամիկոնյաններին նախահոր, Մամգունի, անդրին էր: Մի առանձին հետաքրքրությամբ այդ բարձրությունից նայում էր բնության հարապատը դեպի յուր ճոխ և հարուստ շրջապատը, նայում էր և յերկու մտախոհ կանանց վրա: Ներք վոչինչ բավականություն չգտավ, կրկին թռավ նստած տեղից, կրկին մի քանի պտույտներ գործեց և ապա, շարունակելով յուր յերգը, դուրս նետվեցավ բաց լուսամուտից:

Վորմիզդուխտը այսօր հյուր էր կանչված Սամվելի մոր մոտ: Նա ուներ յուր առանձին քնակարանը: Ամբողջ համարյա քառորդ մասը բռնել էր նա յուր աղախիններին, ներքինիների և ծառաների թագմությամբ, վո-

բոլոր բլուրն էլ պարսիկներ էին: Ցեղապետը նրան Հայաստան ճանապարհ դնելու ժամանակ՝ դրեց նրա հետ, իբրև ոժիտ, այլ հարստության՝ ծիավոր և սպասավորներով մի ամբողջ կարավան: Իբրև ոժիտ ստացավ նա այգի և Աղբեանատնի սահմանի մոտ, Տիգրիսի ափ ափերի վրա, արդյունաբեր դաստակերանոցներ, դյուղեր և ամրոցներ:

Շուտ ճանճրությունը փարատելու համար, յերբեմն վեր էր առնում նա յուր մոտ դրված դեղեցիկ հավհաքը, վոր պատրաստված էր սերմարդի փետուրներից և բռնված էր փղոսկրյա հոլի մեջ, և նրանով զովացնում էր ահաճուքյունից բորբոքված դեմքը: Այդ գործողության միջոցին նրա հոլանի բազուկների վրա կապված մարջանի կարմիր շարքերը ախորժելի ձայներ էին հանում: Սամվելի մայրը դեռ շարունակում էր նայել լուսամուտից: Վարմիդուխտը յուր ներկայությունը հիշեցնելու համար, հարցրեց.

— Մխայնա՞կ է գալու Սահակը:

— Նրա հետ կլինի և յուր հոր քարտուղարը՝ Մեսրոպը,— պատասխանեց նա, դառնալով դեպի յուր մոտացված հյուրը:

— Ցնո Մեսրոպին չեմ սիրել,— ասաց Վարմիդուխտը:

— Շուտով կտեսնես. մի սիրի՛ր, նախապահակ է:

Վերջին յերկու բառերի վրա մի առանձին յեղանակով շեշտեց Տաճատուհին: Վարմիդուխտը ալլայլվեցավ:

Ներսում էին պարսիկները:

— Սահակը նույնպես սիրուն յերիտասարդ է,— նկատեց նա:

— Ցնով ավելի սիրուն, քան թե Մեսրոպը,— ավելացրեց Տաճատուհին դառն ժպիտով:

Նկատ մոտավ Սամվելը:

— Բարև, Վարմիդուխտ, բարև, մայր իմ,— ասաց նա և չնորհալի կերպով մոտեցավ, նախ մոր ձեռքը համբուրեց և ապա Վարմիդուխտի:

Սամվելի հայտնվելը փարատեց Վարմիդուխտի ճանճրությունը և նրա սիրուն դեմքի վրա նշմարվեցավ նկատելի ուրախություն:

— Ի՞նչ յեղան «քո» հյուրերը,— հարցրեց մայրը մի առանձին հանդով:

Սամվելը մոտեցավ լուսամուտին, այնտեղից նայեց դեպի հանդիպակաց աշտարակը, վորի կողքին ադուցած եր արևի քարյա ժամացույցը, և ասաց.

— Փոքր ինչ ուշացան, յերևի, շուտով կգան:— Հիմա հասկանում եմ,— խոսքը փոխեց նա,— թե դու վո՛րքան սիրում ես Սահակին:

— Ի՞նչպես,— հարցրեց մայրը թաղցնելով յուր դժկամակությունը:

— Դահլիճը բոլորովին նոր կերպով ես զարդարել, և այդքան անհամբեր ես Սահակի ուշանալու համար:

Մայրը ծիծաղեց:

— Բայց դիտե՞ս, Սամվել, մենք չուտով դուցե ուրիշ հյուրեր ևս կունենանք — ինչո՞ւ չես նստում:

Սամվելը նստեց Վորմիզդուխտի և մոր հանդեպ:

— Ի՞նչ հյուրեր, — հարցրեց նա:

— Դեռ ևս հարցնո՞ւմ ես, Սամվել, ասաց մայրը մի ակնհայտ հանդիմանական ձայնով, վորովհետև կշտամբել էր կամենում վորդու մոռացկոտությունը: — Դու խո դիտես, վոր հորդ հետ գալու են պարսից յերկու նշանավոր զորապետներ՝ Զիվ և Կարեն իշխանները. տարակույս չկա, վոր Տարոնով անցնելու միջոցին՝ նրանք մեր ամրոցում հյուր կլինեն:

— Այդ յես դիտեմ... սիրելի մայր, — պատասխանեց Սամվելը, վեր առնելով Վորմիզդուխտի հովհարը և պատացնելով մաների մեջ: — Դեռ վաղ է... դու շուտափույթ ես... պարսից զորապետներն այսպես շուտ չեն գալ... մինչև նրանց Տարոնի սահմանի մեջ մտնելը, մենք բավական ժամանակ ունենք այդ զերապատիվ հյուրերի ընդունելության համար արժանավոր պատրաստություններ տեսնելու...

Տիկինը վորդու վերևաբերական խոսքերն ընդունելով վորպես անկեղծություն, պատասխանեց.

— Ճես ել դիտեմ, վոր բավական ժամանակ ունենք պատրաստվելու. բայց դու չես իմանում, Սամվել, մեր ապստավորների կոպտությունը: Հաղար անգամ պատվիրում ես, դարձյալ մոռանում են, թե ի՛նչ բան վո՛րոնել պետք է գնել, կամ ի՛նչ բան վո՛րտեղից պետք է վեր առնել: Ճեվ յես ամեն անգամ, յերբ մի նշանավոր մարդ եմ ընդունում, առանց ամոթի չեմ մնում:

— Բայց Սահակը մերն է, սիրելի մայր, նա ոտար չէ, վոր այդքան խստապահանջ լինել քեզանից...

— Դու դարձյալ Սահակի մասին ես խոսում, — ընդհատեց մայրը վրդովվելով: — Սահակի մասին ո՛վ է մտածում...

— Հա՛ մոռացա... Զիվ և Կարեն զորապետները...

— Այո՛, Զիվ և Կարեն զորապետները: Գիտես, Սամվել, ո՛վքեր են դրանք, վո՛րքան մեծ աղղեցություն ունեն Շապուհի արքունիքում:

Այդ անունները հաճախ կրկնվելով, Վորմիզդուխտը միամտությամբ խոսակցության մեջ մտավ.

— Նրանք իմ յեղբոր հետին ծառաներն են, յերբ ապստեղ գալու լինեն, համարձակություն չպիտի ունենան իմ մոտ նստելու:

— Ճշմարիտ է, սիրելի Վորմիզդուխտ, — ասաց Սամվելը, մի առանձին համակրությամբ նայելով զեղեցիկ հնոջ յերեսին, — բայց յերբ պարսից արքունիքի հետին ծառաները մեզ մոտ են գալիս, մենք վոչ միայն նրանց ամենաբարձր բազմոցն ենք ցույց տալիս, այլ մեր գլխի վրա յենք նստացնում...

Այդ խոսքերը չվերամոլեցրին Վորմիզդուխտին, այլ վերամոլեցին

Սամվելի մորը: Նա մի խոժոռ հայացք ձգեց նախ վորդու վրա և ապա վարմիղուխանի վրա:

— Դու չես արդարացնում, Սամվել, իմ զանգատը մեր սպառազինությունների կոպտության մասին,— ասաց նա խռովված ձայնով,— այս առավոտ չորսին դուրս եմ արել: Ցնծությամբ մի այդպիսի հաստատակամ բան. մենք դժվարությամբ կես կարողացա վորսալ տալ մի սոխակ. մի առ մի պատվիրեցի, թե վանդակը վո՛րտեղից պետք է կախ տալ և ինչո՛վ պետք է կերակրել: Բայց ի՞նչ: Այս առավոտ մոռացա եմ դահլիճը, գոնում եմ խեղճ թռչունին յուր վանդակի մեջ սպանված: Բանից դուրս է գալիս, վոր վանդակը միանգամ վերևից կախ տալու, դնում են պատուհանում, կատուն դալիս է, թաթը կոխում է և սպանում սոխակին:

— Այդ վերին աստիճանի կոպտություն է,— ասաց Սամվելը, դյուխը ցավակցական կերպով շարժելով:— Դու իրավունք ունեիր մոչ մեկին չորսին, այլ բոլորին դուրս անելու: Բայց կատվին չպատժեցի՞ր:

— Դու ծաղրում ես, Սամվել, այդպիսի դեպքերում շատ անվայել է ծաղրը,— նկատեց մայրը:— Գնանք վարմիղուխանին մի վիրավորիր:

Սամվելը դարձավ դեպի վարմիղուխանը, հարցնելով.

— Դու քեզ վիրավորվա՞ծ ես համարում:

Նա ժպտաց և, թաղ հոնքերի տակից նայելով Սամվելի յերեսին, ասաց.

— Ոչ: Ձեր անասուններում սոխակներ շատ կան...

— Բայց այնպիսին, վոր ամբողջ որը անդադար յերգում եր, հազարից մի անգամ է պատահում,— ընդմիջեց Տաճատուհին դրդռված ձայնով:— Դու քո կրոնի խնամուն անդամ չես հավանում և Սամվելի ծաղրին համբերում ես... այդ լավ չէ...

Վարմիղուխանը չառարկեցավ:

Հարցը ինչո՞ւմն եր: Սամվելի մայրը այնքան նուրբ զգացմունքներ ունեցող կին չեր, վոր սիրեր սոխակի յերգը: Հարցը վորոշ ինչ կրոնական բնավորություն ուներ: Սոխակի մեջ, ըստ պարոհ հավատալոյց, բնակվում եր բարի հրեշտակներից մեկի վոգին, և ամեն մի պրոտեստանտ ավորություն ուներ յուր տան մեջ պահել մի սոխակ: Նրա յերգը հանապազորյա որհնություն եր համարվում այդ տան բախտավորության համար: Պարսիկների սրբազան թռչունը յուր տան մեջ մացնելով, Սամվելի մայրը կամեցել եր առաջին քայլը անել յուր համակրության դեպի պարսից հավատալիքները: Ցեղ այդ քայլը անհրաժեշտ եր, վորովհետև նա հույս ուներ շուտով ընդունել յուր տան մեջ Զիկի և կարեն պրոտեստանտներին:

Սամվելը կրկին դարձավ դեպի յուր խորթ մայրը.

— Իսկ դու ի՞նչ պատրաստություններ ես տեսնում, Վարմիղուխան:

— Ցես վոչինչ պատրաստություններ չեմ տեսնում,— պատասխանեց միամիտ պարսկուհին:

Նա չգիտեր Տիգրանից ստացած վերջին տեղեկությունները։ Սամվելի մայրը նրան վոչինչ չէր հայտնել։ Սամվելը մտածեց հայտնել, փորձելու համար, թե ի՛նչ ազդեցություն կգործեին նրա վրա։

— Դու նույնպես պետք է պատրաստություններ տեսնես, Վորմիղդուխտ,— ասաց նրան Սամվելը.— այժմ կհայտնեմ քեզ մի շա՛տ և շա՛տ ուրախալի նորություն։

Դեռ չլսած նորությունը, Վորմիղդուխտի դեմքը փայլեց ուրախությունից։

Մայրը աչքով, հոնքով նշան տվեց, վոր լուռ Սամվելը։ Բայց նա իբր թե չնկատեց և ասաց Վորմիղդուխտին.

— Ֆո յեղբայրը, Շապուհ արքան, քո կրտսեր քրոջը Վորմիղդուխտին կնության և տվել Մերուժան Արծրունուն. արդեն Տիգրոնից դուրս են յեկել, և հորս հետ դալիս են Հայաստան։

— Այդ լա՛վ է... խորին հրճվանքով բացականչեց Վորմիղդուխտը և բռնեց Սամվելի ձեռքից։— Ուրեմն յես չուտով կտեսնի՞մ քրոջս... ուրեմն նրանք չուտով այստեղ կլինո՞ւն...

— Ի հարկե, կտեսնես քո քրոջը... և քո նոր քենակալին... դուցե չուտով այստեղ կլինեն... պատասխանեց Սամվելը, յուր ձեռքը չբաժանելով վոգևորված պարսկուհու ձեռքից։— Մի այլ ուրախալի նորություն ևս...

— Այդ ի՞նչ ասելու բան է, մտածի՛ր, Սամվել,— ընդհատեց մայրը հայերեն լեզվով, վորը Վորմիղդուխտը չէր հասկանում։

— Ինչո՞ւ չասել. ինչո՞ւ նա չգիտեի դիտենա, վոր յուր ամուսինը (այսինքն և քո ամուսինը և իմ հայրը) դալիս է։ Ինչո՞ւ նա չգիտեի դիտենա, վոր յուր քույրը պսակված է Մերուժանի հետ։ Ի՞նչ հարկ կա թաղցնել նրանից,— խոսեց Սամվելը միևնույն ինչ վերոհվածձայնով։

— Նրա համար պետք է թաղցնել, վոր դա մի յերևակայի չափ խելք չունի. ինչ վոր դա գիտե, մի րոպեյից հետո ամբողջ ամբոցը կարող է գիտենալ...

— Բոլորովին սխալ է։ Վորմիղդուխտը, իրավ է, անմեղ յերևակայի սիրտ ունի, բայց մի լավ հնարջ խելք։

Վորմիղդուխտը թեև չէր հասկանում այդ վիճաբանությունը, բայց հասկացավ մոր և վորդու մեջ տեղի ունեցած անթավականությունը, և մեջ մտավ, ասելով.

— Մի՛ վշտացրու մորդ, Սամվել։

Հետո դարձավ դեպի մայրը, հարցնելով.

— Դու ուրախ չի՞ս, վոր իմ քույրը ամուսնացել է քո յեղբոր հետ։

— Ի՞նչպես ուրախ չլինել,— պատասխանեց տիկինը, վոքը ինչ մեղմանալով,— իմ ուրախությունը սահման չունի։ Միայն սակայն արտասուքներ արժանանում են պարսից հզոր արքայի վճռան լինելու բախտին։

— Ուրեմն Սամվելից պետք է չնորհակալ լինել, վոր խորհուրդ է տա-

ին պատրաստութիւններ տեսնել: Ցեղ կու արքայավայել պատրաստութիւններ պետք է տեսնեմ, քե՛ իմ քրոջ համար, և քե՛ իմ յեղերը նոր փեսայի համար: Ինչ ուրախութիւն կլլնի այն որը, կերը նրանք այստեղ կհասնեն...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին դեղեցիկ հնոջ պայծառ դեմքը ավելի հրապուրիչ փայլ առացավ: Բայց Սամվելի մայրը դեռ խոժոռված էր, դեռ մտածում էր մի՛ գուցե վորդին ավելի հեռու դնա յուր խառնվանութիւնների մեջ պարզամիտ Վարմիդուխտի առջև, վորին նա շատ անփորձ և անդուդչ կհին իր համարում:

Շապուհ արքայի բոլոր քույրերը կոչվում էին Վարմիդուխտ: Ինչպես հին հայերի մեջ, նույնպես պարսիկների մեջ, նույն սովորութիւնն էր տիրում. թեև աղջիկները տարբեր անուն ունէին, բայց այդ անունները չէին դործածվում, այլ սովորաբար կրում էին իրանց հոր անունը: Շապուհ արքայի հայրը Վարմիդն էր և նրա բոլոր աղջիկները կոչվում էին Վարմիդ-դուխտ, վոր նշանակում է Վարմիդի դուստր: Հայոց Սան-տրուկ արքայի դուստրը կոչվում էր Սան-դուխտ, սուրբ Վարդան Մամիկոնյանի դուստրը Վարդան-դուխտ, Սահակ պարթևի (քահանայապետի) դուստրը՝ Սահակա-ձուկ, Մեսրոպ Հադրատունու դուստրը՝ Մեսրո-ւհի:

Այսպես էլ Շապուհի յերկու քույրերը, վորոց մեկը հնութեան էր տված Սամվելի հորը, Վահան Մամիկոնյանին, իսկ մյուսը՝ Մերուժան Արծրունուն, կոչվում էին իրանց հոր, Վարմիդի անունով՝ Վարմիդուխտ:

Հայաստանը, յերեք վոչ կլանելու, դեմ յուր դերիշխանութեան ներքո պահելու համար, պարսից արքունիքը նույն քաղաքականութեանն էր հետևում, ինչ քաղաքականութիւն վոր դործ էր դնում հռոմեական կայսրութիւնը: Վալենտիանոս կայսրը, Հայաստանը դեմի յուր կողմը ձդելու համար, յուր աղդականներից Վալենտիանոս որիորդին հնութեան տվեց հայոց Արշակ թագավորին: Իսկ Շապուհ արքան, նրա հակառակ, յուր յերկու քույրերին հնութեան տվեց Արշակի յերկու նշանավոր նախարարներին—Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին— և նրանց ուղղակի թշնամացրեց իրանց թագավորի դեմ:

Արծրունյաց նախարարութեան յերկիրը ընդարձակ վասպուրականն էր, իսկ Մամիկոնյան նախարարութեան յերկիրը՝ Տարոնը: Վասպուրականը Աղձնեաց կողմից, իսկ Տարոնը Աղձնեաց կողմից, շատ մոտ էին պարսից սահմաններին: Շապուհ արքան յուր յերկու քույրերի միջոցով յերկու մեծ դռներ բաց արեց այդ կողմերից Հայաստան մտնելու:

— Մի այլ ուրախալի նորութիւն եմ, Վարմիդուխտ,— խոսեց Սամվելը, ուշադրութիւն չդարձնելով յուր մոր դժկամակութեան վրա.— քո քույրը շուտով հայոց թագուհի կդառնա...

— Ա՛խ, ինչ եմ ասում,— ձայն ավեց Վարմիդուխտը և ուրախու-

Թյունից այն առաքման չվերթվեցավ, վոր մուանալով յուր ամբիծու-
Թյունը, մի անմեղ թիթեռնիկի նման վեր ցատկեց նստած տեղից և,
փաթաթվելով Սամվելի պարանոցին, յերկար բաց չեր թողնում յուր դեր-
կից, անդադար հարցնելով.— Ճշմարի՞տ է... ճշմարի՞տ է... դու հանաք
ես անում, Սամվել...

— Հանաք չեմ անում... բոլորովին ճշմարիտ է... քո յեղբայրը խոս-
տացել է Մերուժանին հայտոց թագավորությունը... պատասխանեց Սամ-
վելը, ազատվելով նրա գրկից:

— Ա՛խ, վո՛րքան լավ կլինի,— ասաց Վորմիզդուխտը ծափահարելով
և, նստելով յուր տեղը, դարձավ դեպի Սամվելի մայրը, հարցրեց.

— Լավ չի՞ լինի:

— Ի հարկե, լավ կլինի,— պատասխանեց նա, ինքն էլ ուրախակից
լինելով նրա հրճվանքին:

Սամվելը վեր կացավ, մի քանի անգամ անցավ դահլճի միջով և ա-
պա կանգնեց Վորմիզդուխտի առջև, ասելով.

— Շա՛տ լավ կլինի, Վորմիզդուխտ. բայց դու յերևի, չգիտես, վոր
հայոց թագավորական գահին հասնելու համար՝ Մերուժանը դեռ շատ
գործեր պետք է կատարե...

— Ի՞նչ գործեր,— հետաքրքրությամբ հարցրեց Վորմիզդուխտը:

— Ես բոլորը կպատմեմ քեզ:

Մայրը կրկին ակնարկեց վորդուն, վոր լռե:

— Նա պետք է գիտենա, և կատարվելիք գործերի հանգուցքյունը պա-
հանջում է, վոր նա գիտենա, ասաց Սամվելը հայերեն լեզվով:— Ինչո՞ւ
չես արգելում ինձ:

Նա մոտեցավ մյուս լուսամուտին և կանգնեց նրա հանդեպ: Մի քա-
նի րոպե այդ ահեղ բարձրությունից լուռ նայում եր դեպի յուր առջև
բացվող տեսարանները: Ներքևում, մթին անդունդի մեջ, վորոտում եր
Արածանին, վոր սեղմվելով Վահեվանյան ձորի անձկության մեջ, մի
ղայրացած վիշապի նման, յուր պռուտյաներով զանակոծում եր ամրոցի
սոսրոտի ապառաժները: Նրա հանդեպ, դեռ մյուս կողմի բարձրության
վրա, յերևում եյին մի հին քաղաքի ավերակները, վորի մասին ավան-
դությունը ասում եր, թե չինված և յեղել Սանասարուկ թագավորից: Այդ
քաղաքը Սլկունիների, այսինքն Տարոնի նախկին տիրապետող իշխանների,
մայրաքաղաքն եր, վոր կործանեց Մամիկոնյանների նախնական Մամգու-
նը: Աչտառը ծածկել եր այդ խորհրդավոր քաղաքի հնակ վեյտասանները
և կիսավեր աշտարակների միջից աճել եյին դարավոր կաղնիներ: Կրակը
մի ժամանակ կատարել եր այնտեղ սարսափելի ավերմունք, և այդ պատ-
ճառով այդ քաղաքը կոչվում եր Մծուրք: Սամվելը նայում եր նրա վրա,
վորպես խորասկված միտքի և իշխանության մարած մոխրի վրա... Նա
աչքերը դարձրեց այդ սխոր տեսարանից և սկսեց նայել դեպի ավելի
հեռուն: Յերևում եր Ամետյաց բլուրը, յերևում եր այդ սրբազան բլուրի

լանջից վերա այն դեղեցիկ ծառաստանը, վորի մեջ թաղնված եր Գլակա հուշահամալը վանքը: Դեռ կենդանի յեր Լուսավորչի կաղ դևը, դեռ այդ վանքի վառարանների մոխիրը դեռևս տաքուկ տանում եր և ածում Արածանիի ալիքների մեջ: Գլակա վանքում դրած եյին Սամվելի պատկերի չրխմնները: Սամվելին այնպես եր թվում, վոր այդ պատկառելի չերխմներից դուրս եյին հայտնվում այն մեծ հանգուցյալների մռայլ ուրվականները և դալրացած դեմքով նայում եյին Վողական ամրոցի վրա, ուր սկսվել եր կառուցվել Մամիկոնյաններին առհմին անվայել մի դամբանություն... Տխուր դղրդմունքներով Սամվելը յերեսը շուռ տվեց Գլակա վանքից և սկսեց նայել դեպի յուր աջ կողմը: Ներևում եր Հացյաց դրախտը և հացի ծառերի աքանչելի թավուտները միջից հաղիվ նշմարվում եյին Սամվելի նախահարց կառուցած յեկեղեցու խաչատակ դմբեթները, վոր մոտ եր Աշխշատի վանքին:

Նա ձեռքը մեկնեց դեպի Հացյաց դրախտը:

— Ե՛ր, այտեղ, Վորմիզդուխտ:

Վորմիզդուխտը թեթև քայլերով վազեց նրա մոտ և անդավորվեցավ նրա կողքին, լուսամուտի պատուհանի մեջ: Սամվելի մայրը խորին ուհաճույքով նայում եր նրանց վրա:

— Հիմա կասեմ քեզ, Վորմիզդուխտ, թե ի՛նչ դործեր պետք է կատարի Մերուժանը հայոց թագավորական գահին հասնելու համար: Բայց այդ դործերի մեջ մենք պետք է ոդնենք նրան... մանավանդ դու, Վորմիզդուխտ...

Նա ձեռքը մեկնեց դեպի Հացյաց դրախտը:

— Տեսնո՞ւմ ես, սիրելի Վորմիզդուխտ, ինչպես դեղեցիկ լուսավորում են այնտեղ արեգակի պայծառ ճառագայթները: Արևին յուր առավածային ջերմությամբ կյանք և ներշնչում այդ հրաշալի դրախտին: Փչում և հովը և ծառերի ճաղուկ կատարները՝ մեղմ-կանաչազույն ալիքների նման՝ ծփում են, ծածանվում են, և վորպես մի կանաչազարդ ծով, տարածվում են մինչև հորիզոնի վերջը: Այդ ծառերի սակերախիտ լուսնյան մեջ կանդնած են Մամիկոնյաններին կառուցած տաճարները: Իմ պապերը սպառեցին այնտեղ իրանց դանձերը, աշխարհի բոլոր թանգագին իրեղեններով զարդարելով այդ տաճարները սուրբ տեղանը: Թվով մի քանի հարյուր արեղաներ կերակրվում են այնտեղ մեր հացով և աղոթում են իրանց բարեբարների հոդու համար: Այժմ մենք Մամիկոնյաններս կկործանենք այդ տաճարները, սիրելի Վորմիզդուխտ, ու նրանց տեղը պարսկական տարուբաններ կհիմնենք: Թո՛ղ ծուխով ու մուխով լցվի այդ նվիրական դրախտը... Թո՛ղ այդ դեղեցիկ ծառաստանը այրվի՛, մոխի՛ր դառնա վորմզդական կրակի մշտավառ բոցերի մեջ... Թո՛ղ քրիստոնեական խունկի ու կնդրուկի անուշհոտության փոխարեն՝ մոգերի մատուցած վողջակեղների ճենճերային հոտը բուրե այդ սրբազան անդերում... Թո՛ղ լուռ դանդաղի ու կոշնակի տաղտկալի ձայները... Թո՛ղ այդ հրաշալի բարձ-

ըութիւններէն վրա ամէն առավոտ, արեւի ծագման ժամանակ, և ամէն իրիկուն, արեւի մուտքի ժամանակ, թո՛ղ հնչէ մոլեռի թմբուկի ու շեփորի ձայնը... և թո՛ղ բարեպաշտ հայ չինականը, այդ ձայնը լսելով, դողդողջուն սրտով բարձրանա յուր կտուրի վրա և յերկրպագութիւն տա յերանող ու մանող արեգակին... Լսո՞ւմ ես, սիրելի Վորմիզդուխտ, ահա այդ է պահանջում քո յեղբայրը, և այդ պետք է կատարես Մերուժանը հայոց թագավոր դառնալու համար...

Բայց Վորմիզդուխտը վոչինչ չէր լսում: Նա մի քաղցր ինքնամոռացութեան մեջ, ձեռքը դրած վոգևորված յերիտասարդի ուսի վրա, և կպած նրա կողքին, զգում եր միայն սիրելի ձայնի մուղիկան, արբեցած եր նրա շնչով, և ամեն անգամ, յերբ նա մի փոքր շարժում եր դադրեցնում, ցուցց տալով այս և այն առարկան, դիղեցիկ կնոջ մանուկ սիրտը բարխում եր մրրկածուփ ջերմութեամբ...

Լսում եր Սամվելի մայրը:

— Բավակա՛ն է, Սամվել... դադրեց նա, և մոր սպառնալի ձայնը սթափեցրեց վորդուն յուր խորին հափշտակութեունից:

— Դու ծաղրո՞ւմ ես, Սամվել... կրկնեց նա:— Լա՛վ մտածիր քո վարմունքը... Վորմիզդուխտ, հեռացի՛ր այդ տեղից:

— Ա՛խ, ինչո՛ւ յես դու իմ վոգևորութիւնը ծաղրի տեղ ընդունում, սիրելի մայր,— ասաց Սամվելը և հեռացավ լուսամուտից:— Ցես բոլորովին չեմ ծաղրում:... Ցես ասում եմ այն, ինչ վոր դու յես ցանկանում...

Վորմիզդուխտը նույնպես ցավելով թողեց այդ խորչը և ցավելով բաժանվեցավ Սամվելի բոպեյական դրացութիւնից: Նա յուր դողդողջուն քայլերը ուղղեց դեպի դահլեի դուռը, առանց նայելու յուր հյուրընկալի վրա:

— Ո՞ւր, Վորմիզդուխտ, ձայն տվեց նա:

— Ցես ինձ վատ եմ զգում... գլուխս պտտյվում և... գնում եմ մի փոքր հանգստանալու...

Նա չտալով դուրս գնաց, մոռանալով յուր հովհարը, վոր դրած եր տիկնոջ գահավորակի վրա: Սամվելը առեց հովհարը և վազեց նրա յետևից: Նախասենյակում կանդնեցրեց նրան:

— Շնորհակալ եմ, Սամվել,— ասաց խորթ մայրը, ընդունելով հովհարը, և նրա տխրամած դեմքը կրկին փայլեց ուրախութեան ժպիտով:

— Դու այսոր ճաշին մեզ մոտ չի՞ս լինի,— հարցրեց Սամվելը:

— Վո՛չ...

— Սահակը շատ կցանկանար տեսնել քեզ:

— Իմ կողմից ներողութեան խնդրիր:

Նա դուրս յեկավ: Նախասենյակի դռանը յերկու սևամորթ ներքինիներ սպասում եյին նրան: Առաջ ընկան և տարան նրան դեպի յուր բնակարանը:

վերադառնալով դահլիճը, Սամվելը ասաց յուր մորը.

— Դու վերադարձիր վարմիդուխտին:

— Ցնո չեմ կարող համբերել իմ սենյակում այս տնական պարսկական վավաշոտությունների... պատասխանեց մայրը:

— Բայց դու այստեղ ես ամեն ինչ, վոր պարսկական է...

— Բայց մտածի՛ր, Սամվել, նա քո հոր կինն է...

— Ցնվ իմ հարգելի մայրն է... Ցնքե դու դարձյալ այդպես անխոհեմ կերպով կխոսես նրա վրա, ես խոհուն նրա նման դուրս կգնամ և մյուս անգամ չեմ մտնի այս դահլիճը:

Տիկինը վախենալ չպատասխանեց: Վարդու սպառնալիքը լռեցրեց նրան: Կնոջ արտասուքը, մանավանդ մոր արտասուքը, այդպիսի բռնակերտում ամենազորու պատասխանն է լինում: Մայրը թաշկինակը տարավ դեպի աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ:

Սամվելը անհնարին խռովության մեջ, բարկությունից ձեռքերը չփեշերով, մոլորվածի նման շրջում էր դահլճի մեջ և ուշադրություն չէր դարձնում մոր արտասուքի վրա: Նա դեռ զղում էր յուր կողքին նաղելի կնոջ հպարտության ախորժելի շոտափուքը, նրա ականջներին դեռ հընչում էր վերջին խոսքերի քաղցրությունը:

Այդ մանկահասակ կինը, վորի տարիքը քսանից չէլին անցնում, սիրելի էր Սամվելին, սիրելի՛, ավելի այն պատճառով, վոր այն դերը, վորի համար նա նշանակված էր և վորի պատճառով նրա հայրը մտցրել էր նրան այդ ընտանիքի մեջ, նա վոչ միայն բնավ չէր կատարում, այլ մինչև անգամ արհամարհում էր: Պարսից արքունիքը յուր կրթության բոլոր ուժը սպառելով միայն տղաների դաստիարակության վրա, աղջիկները մնում էին համարյա թե անկիրթ և սովորում էին զվարճալի հարուստ և չքնղ կանանոցի մեղկությունները, զվարճությունները ու բարձր աղնվատոհմական ծնողը միայն: Այդ էր պատճառը, վոր նրանք քաղաքական նպատակների դրծիք դառնալու մեջ բոլորովին անընդունակ էլին: Նրանք ծառայում էին ավելի իբրև մի մեքենական ոգակ իբրանց ամուսիններին արքունիքի հետ կապելու համար, իսկ իրանք անկախան դիտակցություն չունեին: Սամվելի յերկար բացատրությունները, վոր այնքան ղողջմունքով արտասանեց նա լուսամուտի հանդեպ կանգնած ժամանակ, ուրիշ վոչինչ չէլին, յեթե վոչ մի փորձ, հասկանալու համար վարմիդուխտի համակրությունը կամ հակակրությունը, թե ի՛նչպես կվերաբերվի նա դեպի յուր յեղբոր ձեռնարկությունները: Նրան, իբրև պարսկուհու և իբրև հեթանոսի, ավելի պետք և դրավչին կատարվելիք դործերը, բայց նա ուշադրություն անգամ չդարձրեց: Ցնվ ինչ վոր նրան ավելի պետք և հետաքրքրեր և ինչ բանի մեջ նա ավելի պետք և յուր ազդեցությունը դործ դներ, ընդհակառակն, դործ էր դնում Սամվելի հարազատ մայրը: Ցնվ այդ էր, վոր այնպես սաստիկ վրդովեցնում էր վարդուն:

Լսելի յեղավ շտապոր ձայն:

Սամվելը ցնծվեցավ։ Ծնցվեցավ և նրա մայրը։ Վերջինը աչքերը սրբեց և սկսեց նայել լուսամուտից։ Սամվելը նույնպես մոտեցավ մյուս լուսամուտին։

Աշակերտի վանքից դեպի ամրոցը բերող ճանապարհի վրա յերևաց մի սուվոր ասպահումբ։ Արևի առջև փայլում եյին նրանց զենքերն ու զրահները։ Ծերը մոտեցավ ամրոցին, հնչեցրին շեփորը։

Սամվելը դուրս դնաց ընդունելու յուր վիհապնյա հյուրին։

ԱՆՀԱՋՈՂ ԴԱՎԱՃՈՒԹՅՈՒՆ

Հյուրերի յերևնալը ընդմիջեց այն անակնկալ կռիվը, վոր տեղի ունեցավ մոր և վորդու մեջ։ Մամիկոնյան տիկինը դարձյալ ընդունեց յուր սովորական հպարտ դեմքը և, Սամվելի դուրս գալուց հետո, անհանգիստ կերպով շրջում եր դահլեճի մեջ, մինչև նրանք ներս կմտնեյին և կհամբուրեյին յուր ալը։

Բայց նրանք ուշացան։

Նա կանչել տվեց տաճարապետին։

Ներս մտավ մի միջահասակ վոստանիկ, վորը տան անուսը, մատակարարը և միևնույն ժամանակ սեղանատան կառավարիչն եր։ Նա խոնարհությամբ գլուխ տվեց և կանգնեց դռան մոտ։

— Ամեն ինչ պատրա՞ստ է, Արմենակ,— հարցրեց նրանից։

— Պատրաստ է, տիկին,— պատասխանեց տաճարապետը։

— Ծերաժիշտները կանչվա՞ծ են։

— Կանչված են, տիկին։

— Հրամայեա տակառապետին, վոր ամենահին և ամենաթունդ գինին բաց անե հյուրերի համար։

— Հրամայված է, տիկին։

— Իսկ ինձ համար՝ ամենաթուլը, հասկանո՞ւմ ես։

— Հասկանում եմ, տիկին...

— Մեյան դուչների մեջ դանազանություն չլինի...

— Չլինի, տիկին...

Ուրիշ մի քանի պատվերներ ևս տալով, ասաց նրան.

— Այժմ կարող ես դնալ։

Նա գլուխ տվեց և դուրս գնաց։

Տաճարապետի հեռանալուց հետո՝ ներս մտավ ներքինապետ Բաղդասը՝ յուր խոշորամարմ, լերկ դեմքով, յուր առանց թերթերուն քթերով կարմիր կոպերով, վորոնք երանց նեղ շրջանակի մեջ հազիվ կարողանում եյին աղջամուղ նրա՝ դորսի աչքերի նման դուրս ընկած անհանգիստ բիբերը։ Նա քաշվելով մոտեցավ տիկնոջ դահլորակին, այնքան ուշիկ քայլերով,

հարծեռ, վախենում եր, մի դուցե վոտները մատնեյին իրան, և կռանալով, խոպոռ ձայնով մրմնջաց.

— Դնացին նախ տիկին Զարուհիի ձեռքը համբուրելու...

Մամիկոնյան տիկնոջ դառոր աչքերը վառվեցան բարկության կրակով:

— Հետո՞,— հարցրեց նա խռովյալ ձայնով:

— Հետո դայու յեն այստեղ ճաշելու:

— Ե՞րբ:

— Ո՞վ և իմանում: Ցեթե տիկին Զարուհին չուշացնե, դուցե չուտ կդան: Բայց նրա սովորությունները հայտնի յեն. մինչև մի բան չուտացնե, մինչև մի բան չմաշցնե, բաց չի թողնի:

— Սամվե՞լն ել դնաց նրանց հետ:

— Սամվելը բոլորից առաջ եր ընկած...

Տիկինը ավելի վրդովվեցավ:

Ներքինապետը, արդեն իրան հասած համարելով յուր նպատակին, ավելի առաջ տարավ քաջությունը, ասելով.

— Սամվելը հրամայեց, վոր Մուշեղին ևս հրավիրեն ճաշի...

— Ցնվ Մուշեղը համաձայնվեցա՞վ դալու:

— Համաձայնվեցավ... Սամվելի հետ նա այդպես ե...

Վերջին խոսքերի մեջոցին բանտարկուն ձեռքերը մոտեցրեց և յերկու յուցամատները կցեց մեմյանց հետ, վոր միության նշան եր:

Մինչդուն ամբոցում ապրող Մամիկոնյան յերեք յեղբայրների—Վարդանի, Վասակի և Վահանի—ընտանիքները, թեև առերես բարեկամ եյին, բայց ի ներքուստ թշնամական հարաբերության մեջ եյին: Ցեվ այդ վոխբիմ թշնամությունը ուներ յուր աղետալի պատճառները. Վասակը սպասնել եր յուր հարազատ յեղբորը Վարդանին, իսկ Վահանը՝ Սամվելի հայրը՝ մատնելով յեղբայրասպան Վասակին Շապուհ արքայի ձեռքը՝ նույնպես սպասնել ուվեց: Այդ տան մեջ արյան թշնամություն կար,— ընտանեկան անմոռանալի վրեժխնդրության թշնամություն...

Բայց կեղծ-աղնվամտեսական քաղաքավարությունը պղտում եր այդ թշնամությունը: Տիկնոջը վրդովեցրեց՝ վոչ այնքան Սամվելի Մուշեղին ճաշի հրավիրելը, վոր նրա հորեղբայր Վասակի վորդին եր, վորքան Ներքինապետի հաղորդած այն տեղեկությունը՝ թե Սահակ պարթևը դնաց նախ տիկնին Զարուհիի ձեռքը համբուրելու: Այդ սովոր տիկինը սպանված Վարդան Մամիկոնյանի այրին եր: Իսկ Սահակը, վորպես նախընթաց դլխում յուրյ տվինք, այդ Վարդանի դաժան վորդին եր: Այդ եր պատճառը, վոր Սահակը սովորություն ուներ՝ ամեն անդամ, յերբ նրան պատահում եր յուր քեռիների ամբոցը դալ, նախ մտնել տիկին Զարուհիի մոտ, մխիթարել նրան և յուր հարազանքը հայտնել յուր սպասվոր քեռանկնոջը: Ցեվ այդ սառտիկ բարկացնում եր Սամվելի մորը: «Ամեն անդամ, յերբ այդ դառոր պարթևը հայտնվում է մեր ամբոցում, մեկտ մի առիթ է դտնում ինձ վիրավորելու»... մտածում եր նա և ուռած շրթունքները դողում եյին սրտի խռովությունից:

— Վորմիղղուխաի մասին մի բան չիմացար,— դարձավ նա դեպի ներքինապետը:

— Նա հիվանդ է...

— Ուրեմն ճաշի չի՞ գա:

— Ցերեկ առաջ էս լիներ, չէր գա... ասաց ներքինապետը և նրա յերեսի հինճռոտ կաշին, ավելի կծկվելով, ծիծաղի նման մի բան ձևացրեց խորամանկ դեմքի վրա:

Իսկ Սամվելի մոր դեմքը վայրկեց անկեղծ ուրախությամբ, յերբ լսեց, վոր Վորմիղղուխաը ճաշին չի լինի: Դեղնցկիկ, քաղցրաբարբ կինը, մանկահասակ հյուրերի շրջանում, կարող եր սուվեր ձգել նրա վրա: Նախանձը չափ չուներ այդ վիսասներ Աբծրուհու սրտում, թեև նա արդեն հասակը առած և թառամած կին եր:

Ներքինապետի և տիկնոջ խոսակցության միջոցին, յերբեմն դահլճի դուռը աննկատելի կերպով շարժվում եր և նրա նեղ բացվածքից նայում էին յերկու լուսափայլ աչքեր: Մեկը նախասենեկում լրտեսում եր:

Ներքինապետի հաղորդած տեղեկությունները վորքան ուրախություն պատճառեցին տիկնոջը, այնքան ավելի և տրամություն հարուցեցին նրա մեջ: Նրա սիրտը ալեկոծվում եր և տխրության գլխում պտտվում էին մթին խորհրդածություններ... Անպատեհ հյուրերի տարաժամ գալուստը այն աստիճան հանկարծակի և անակնկալ կերպով տեղի ունեցավ, վոր ժամանակ չտվեց նրան կարգի դնելու և մի վորոշ հեռանքի հասցնելու յուր խորհրդածությունները... Այժմ տատանվում եր նա սարսափելի ծայրահեղությունների մեջ...

Նա կրկին դարձավ դեպի բանասարկուն, հարցնելով.

— Դու հաստատ գիտե՞ս, վոր Մուշեղը գալու յե ճաշի:

Ներքինապետի դեմքի վրա կրկին հայտնվեցավ ղզվելի ժպիտը և նրա անհանգիստ բիբերը ավելի լայնացան:

— Ցերեկ քո խոնարհ ծառան մի բան հաստատ չգիտենա, չի ասի, — պատասխանեց նա և ձեռքը մտերմաբար տարավ ուղղելու դահավորակի վրա դրած բարձերից մեկը, վոր տեղը ինչ-վոր չհղվել եր յուր սովորական տեղից:

Դահլճի դուռը կրկին շարժվեցավ, յերկու փայլուն աչքերը կրկին շողացին բացվածք ից: Ցերևում եր, վոր այդ հետախույզ աչքերը դժվարանում էին դիտելու, թե ո՛վ եր տիկնոջ խոսակիցը, վորովհետև դահավորակը, վորի վրա նստած եր տիկինը, դրած եր դռան բոլորտիքին հակառակ կողմը, իսկ դահլիճը այնքան ընդարձակ եր, վոր ճանճերի մխաին անորոշ հնչյուններն էլին հասնում մինչև նախասենյակը:

Տիկինը մտահույզ կերպով վեր կացավ նստած տեղից և յուր քայլերը ուղղեց դեպի կից սենյակը:

— Ցեկ ինձ հետ, Բագրատ,— հրամայեց ներքինապետին:

Այդ կոկիկ սենյակը տիկնոջ առանձնարանն եր, վորից մի դուռ բաց-

վում էր դնել նրա քնարանը, իսկ մի այլ դուռ՝ դնել կանանոցի յուրաքանչյուր փոքրիկ բակը, որը զարդարած էր մշտադալար բույսերով:

Առանձնարանի դուռը ներսից կողպեցին: Դահլիճը մնաց դատարկ:

Այդ միջոցին դահլիճը մտավ նախասենյակի ունկնդիրը— որիորդ Նելարը: Վարպետ մի մարմնացած դյուցազնություն, ուշիկ քայլերով անցավ նա վարսուկ դարպասների վրայով և, ուշադրությամբ յուր շուրջը նայելով, մտավ լուսամուտներում դրած ծաղիկամաններին, հոտ քաշեց, մտավ մետաղյա հայելուն, նայեց յուր դունչիկի դեմքին վրա, և ապա մտավ այն դռանը, ուր ներս մտան տիկինն ու ներքինապետը: Մի խուլ քրթմնջոց լսելի չեր լինում ներսից: Որիորդը կամաց ականջը տարավ դնելի դռան փականքը: Շվարված աղջիկը շունչ անդամ չեր առնում, որ յուր լսողությանը չվտանգավե: Նրա ականջներին հասնում եյին այդտեղ շշնջյուններ միայն, որոնցից մի բառ որոշել չեր կարողանում: Տհաճություններ խեղդում եր նրան: Մի մթին, չարագուշակ բնաղդմամբ դղրդում եր նա մի ինչ-որ դավադրություն, որ սարսափեցնում եր նրան:

Նա հետացավ յուր բռնած դիրքից, վորոնում եր մի առարկա դնելի, որ յուրի տիկինը հանկարծ դուրս գալու լինի, իրան գործով զբաղված տեսնի: Այդ միջոցին դահլճի դռները չառաչմամբ հետ գնացին և ծանր նման ներս նետվեցավ փոքրիկ վահանը— Սամվելի կրասեր յեղբայրը: Շատ խաղալուց քրտնած, թշերը վարդ դարձած, ուրախ յերեխան վազեց, փաթաթվեցավ որիորդին և, նրանից մի համբույր ընդունելուց հետո, խուսն բաց թողեց նրան, և թռավ դահավորակի վրա: Մի ակնթարթում հավաքեց նա բարձերը, դրեց միմյանց վրա և, ժրու նման հնծնելով, սկսեց վոտներով խթահարել և ձեռներով մարակել յուր նժույգին, ուրախ-ուրախ կրկնելով՝ «չո՛ւ... չո՛ւ»... Ցերբ տեսավ, վոր յուր անշունչ նորհք նժույգը տեղից չեր շարժվում, ձանձրացավ, և վայր ցատկեց դահավորակի վրայից, մի այլ խաղալիք դտնելու համար: Զարտճճին խլեց ծաղիկամաններին մեջ դրած փունջերից մեկը: Այդ միջոցին վրա հասավ որիորդը և հաղիվ կարողացավ նրա ձեռքից ազատել փունջը: Բայց ծաղիկները բավական տրորվեցան: Նկատելով, վոր համառ յերեխան հանդիստ չեն մնալու, որիորդը բռնեց նրա ձեռքից, համարյա բռնությամբ դուրս քաշեց դահլճից և դուռը ներսից կողպեց: Նա մի քանի անդամ դայլայլեցած հեռվում վոտքով խփեց դռանը և հեռացավ:

Վահանի չարությունը թեև խլեց որիորդից մի քանի թանգագին րոպեներ, բայց նրա համար մի դրծ պատրաստեց, վորի մասին մտածում եր: Նա վեր առեց Վահանի ձին, այսինքն միմյանց վրա դրած յերկու բարձերը, մեկը նետեց դահլճի մի կողմը, մյուսը նետեց մյուս կողմը: Վեր առեց նրա տրորած փունջը, քրքրեց, տերևները արեց, և նուշնման ցրիվ տվեց դորմերի վրա: Այդ գործողություններից հետո, նա կրկին մոտեցավ առանձնարանի դռանը, ականջը տարավ դնելի փականքը:

Այժմ ավելի կամաց եյին խոսում: Խեղճ որիորդը ամբողջ մարմնով

լռելիք եր դարձել, բայց վոչինչ չեր լսում: Նրա սիրտը բաբախում եր հետաքրքրությունից և արյան ջերմությունը այրում եր թշերը: Բավական եր նրան դիտենալ, թե ո՛ւմ հետ եր խոսում յուր սիկինը. այդ շատ բան կպարզեր: Դռան վեղկը ներքևի կողմից բոլորովին սեղմ կերպով չեր հյված շրջանակի հետ, մնացել եր մի նեղ բացվածք: Նա կռացավ, սկսեց այդ բացվածքից նայել: Վոչինչ չեր յերևում: Մի քանի րոպեյից հետո լռելի յեղավ հազալու անընդհատ ձայն, վոր հետզհետե սաստկանալով և ապա աստիճանաբար նվազելով, վերջը հնղձուցիչ խոխոջի փոխվեցավ: Որիորդը ցնցվեցավ: Այդ ակամա հազը ծանոթ եր նրան, ծանոթ եր և ամբողջ ամրոցին: Նա դուրս եր վիժում խորտակված կուրծքից և փտած թոքերից: Այժմ դիտեր որիորդը, թե ո՛վ եր սիկինոջ խոսակիցը: «Մի բան կա»... մտածեց նա և լարեց յուր բոլոր ուշադրությունը:

Հանկարծ դունաթափվեցավ նա, վորպես դունաթափվում է մի մարդ, յերբ կայծակը չանթում և մերձակայքում և լսելի յե լինում վորոտման ահեղ դղրդյունը: Բայց նրա լսածը յերկու բառեր եյին միայն. մեկը Մուշեղի անունը, մյուսը՝ մի այլ սոսկալի բառ...

Առանձնարանում տիրեց խորին լռություն: Այժմ սասլվա չչնչյունն անգամ չեր լսվում: Ցերևում եր, վոր սիկինոջ խոսակիցը, վերջին պատվիրը ասանալուց հետո, դուրս գնաց մյուս դռնից, վոր բացվում եր դեպի կանանոցի փոքրիկ բակը:

Որիորդը հեռացավ յուր դարանից, մտածելով, վոր սիկինը կարող եր հանկարծ դուրս գալ և այնտեղ տեսնել իրան: Նա մտաբացավ դահլեզի դռանը, վոր ինքը կողպել եր, բայց արեց, հետո սկսեց դարվնրվի վրա ասիված տերևները և ծաղիկների թերթիկները հավաքել: Բարձերը դեռ ընկած եյին իրանց տեղում: Բավական գործ կար, վոր յերեք սիկինը դուրս գալու լիներ, նրան զբաղված տեսներ: Բայց նա ուշացավ: Ցերևում եր, վոր դեռ յերկար տանջվում եր նա այն անգութ պատվերի մասին, վոր տվեց յուր հավատարիմ ծառային... Մի քանի անգամ հավաքեց որիորդը ծաղիկների տերևները, ծղոտները և թերթիկները, մի քանի անգամ վերջացրեց այդ գործը, բայց դարձյալ, ավելի մանրացնելով, ցրիվ տվեց հատակի վրա: Այդ գործողությունը կրկնում եր նա, մինչև դուրս յեկավ սիկինը:

— Այդ ի՞նչ է, այդ ո՞վ արեց— հարցրեց նա, բարկացած աչքերով նայելով յուր շուրջը:

— Ո՞վ պետք է աներ,— պատասխանեց որիորդը, չարունակելով հավաքել յուր ցրիվ տված.— Ներս եմ մտնում, տեսնում եմ, վոր վահանը ամեն ինչ տակն ու վրա յե արել. հենց վոր ինձ տեսավ, խոսքն վախավ:

— Ա՛խ չարաճճի,— բացականչեց զայրացած մայրը,— քո՛րը պետք է խելքի գա այդ տղան: Հիմա կարող ես խնդրել հյուրերը և տեսնել այդ անկարգությունը:

— Ճա՛ խնդուն կհավաքեմ, տիկին,— ասաց որթորդը, շտապելով իր աշխատությունը:

— Մինչև դու կհավաքես, կնսոր կդառնա. գնա սպասավորներից մեկին, ասա, որ դա ավելն այստեղ, իսկ ինքդ վազիր պարտեզը, մի նոր վունջ պատրաստիր, դրա տեղը դնելու համար:

Նվարդը շտապով դուրս գնաց:

Սպասավորները խմբված էլին անդանատանը, ծիծաղում էլին, հռհռում էլին, կատակներ էլին անում և սեղանն էլին պատրաստում: Նրանց մեջում խառն էր և պատանի Հուսիկը— Նվարդի սիրելին: Նվարդը հեռվից կանչեց մեկին և հայտնեց տիկնոջ հրամանը, իսկ ինքը վազեց դեպի պարտեզը:

Նրան տեսնելով, Հուսիկի աչքերը վառվեցան: Նա հետևեց, թե դեպի ո՛ր կողմը գնաց որթորդը, մանավանդ յերբ նկատեց, որ խորամանկ աղջիկը մեկնելու միջոցին ձեռքը տարավ դեպի աչ ականջը: Այդ նրանց մեջ մի պայմանական նշան էր, որով իմացան այն էր, թե կանչում է նրան:

Հուսիկը բնակարանների աշխատությունը յուր վրա չդարձնելու համար՝ մի քանի րոպե սպասեց, հետո դղուշությամբ դուրս սկսավ սեղանատնից: Հեռվից տեսավ նա, որ որթորդը գնում էր դեպի պարտեզը: Ինքն էս պատրաստ ավեց մի այլ ճանապարհով, որ նույնպես դեպի պարտեզն էր տանում:

Նա դաշտ յուր սիրուհին վարդենիների թփերի մոտ, բայց ոչ այնպես ուրախ, որպես սովոր էր նրան հանդիպել այստեղ: Նա դեռ նոր էր սկսել տենչել յուր վունջը:

— Ցավեք, ինձ համար է,— ասաց պատանին և մոտեցավ դրկելու նրան:

— Դրա ժամանակը չէ, Հուսիկ,— արդելեց որթորդը:— Գնա քիչ կանչեցի մի շա՛տ կարևոր գործի համար:

— Ի՞նչ գործ,— հարցրեց պատանին վշտացած ձայնով. առաջին անդամ մի տղոլիսի սառնություն տեսնելով սիրած աղջկա կողմից:

— Գնա՛ Սամվելի մոտ, մի կերպով հասկացրու, որ իշխան Մուշեղին իմացում տա, որ նա այսօր մեր տիկնոջ մոտ ճաշի չգա... Գնա՛, մի՛ ուշացիր...

Այն ծանր կեղտանակը, որով արտասանեց որթորդը այդ խոսքերը, Հուսիկին մատնեց ավեց յուր սիրելին դուբդուբանքը, և նա զարմացած կերպով հարցրեց.

— Ինչո՞ւ Մուշեղ իշխանը չգա ճաշի, ի՞նչ կա...

— Բան կա... հետո կասեմ... դու մի՛ ուշացիր...

— Ձի՞ որ իմ տերը տեսաք և դիտեցիք, թե ի՞նչ բան կա, որ իմացում տա Մուշեղ իշխանին:

— Հիմա որ քո տերը դիտենա, լավ չի լինի, սիրելի Հուսիկ, կարե-

լի յե մ՛ի խռովութիյուն ծագէ,— ասաց որխորդը համոզիչ ձայնով.— Թո՛ղ հյուրերը դնան, յես բոլորը կպատմեմ քեզ և դու կհասկանաս քո սխրո-ՂԸ:— Դե՛ դնա, մի՛ ուշացիր:

— Թող տուր յերեսդ...

— Գնա՛...

— Գոնե այդ սիրուն մատներդ...

Հուսիկը խլեց որխորդի ձեռքը և, մատների ծայրերը համբուրելով, դուրս վազեց պարահրից:

«Ո՞ տայր ինձ գծուխ ծխանի
Եւ դառաւօտն Նաւասարդի,
Չվաղելն եղանց
Եւ ղվաղելն եղջերուաց.
Մեք վող հարուաք
Եւ Թմբիլի հարկանէաք»:

Հնչում եր վինը, հնչում եր բամբիռը և սեղանատնից լսելի յեր լի-նում Արատչոսի ըղձական յերգը: Ցերկու ժողովրդական յերգիչները, դառն մոռ կանդնած, յերգում եյին և ածում եյին իրանց հինավուրց նվագա-բաններրի վրա: Հին եր յերգը, հին եյին և յերգիչները: Արատչոսը մահ-վան անկողնի մեջ յերգից այդ յերգը: Հայրենասեր Թադեոսը, յուր կյանքի վերջին րոպեներում, խորին տենչանքով փափագում եր այն հան-դեսներին, վոր կատարվում եյին Նավասարդի առաջին առավոտը: Այն որից անցել եր մոտ յերեք հարյուր տարի: Ցեվ ահա մահվան անկողնի մեջ դրված հեթանոսության յերգիչը, քրիստոնեական դարում, յերգում եր նույն յերգը:

Տաճարի մեջտեղում դրած եր մարմարիոնի անշարժ սեղանը: Նա յերկայն ձև ուներ, այնքան յերկայն, վոր նրա յերկու կողմերում կարող եյին տեղավորվել ավելի քան հիսուն հոգի: Բայց դեղեցիկ, քանդա-կագործ նստարանների վրա նստած եյին հինգ հոգի միայն: Սեղանի դըլ-խում, փառավոր բազմոցի վրա, նստած եր Մամիկոնյան տիկինը. նրա աջ կողմում՝ Սահակ պարթեւը, իսկ ձախ կողմում՝ Մեսրոպ Մաշտոցը: Սահակից ներքև նստած եր Սամվելը, իսկ նրա հանդեպ՝ Ներսեհն Արքա-կը— Սամվելի ղայակը: Հյուրերի թվում պակաս եր Մուշեղ իշխանը— Սամվելի հորեղբոր վորդին: Պակաս եր և վրոմկղուխտ տիկինը:

Սեղանը լի յեր դանազան խորտիկներով: Արծաթյա բարձր ափսեն-ների մեջ դրած եյին պեսպես աղանդերներ— քաղցրավենիք՝ անուշեղեններ և չորացրած մրգեղիններ: Ամբողջ սեղանը զարդարած եր դույնզդույն ծաղիկներով և կանաչ տերևներով: Հյուրերի յուրաքանչյուրի յեսևում կանգնած եր մի մի ծաղկապսակ պատանի, չքեղ կերպով հագնված: Ներանք բռնած ունեյին մի ձեռքում դինիով լի արծաթյա կահույրները, իսկ մյուս

ձևերում՝ նույնիսկ արծաթյա դավաթը, որը փոքրիկ Թաի ձև ուներ: Դրանք հյուրերի մատուցիչներն էին, նույն քվով, ինչ քվով որ տեղան էին նստած: Իսկ ամեն հետո, յուրաքանչյուր հյուրի յետևում, կանգնած էին նրանց ղեկած քինհատահները և հրեշտակի նման հսկում էին նրանց տերերի վրա:

Ցերեկները տեղ էին ամեն տեղանատան դռան մոտ. նրանք անուն՝ ձայնով յերդում էին և ածում: Մեկը յերկու աչքերից էր Հոմերոսի նման կույր եր, իսկ մյուսը՝ մեկ վոտքից կաղ: Հագնված էին աղքատ կերպով: Ժողովրդի սիրելիները ժողովրդի անշուք կերպարանքն էին կրում իշխանների տեղակի մոտ...

Թանձրալի յերգի ձայնը, նվագարանների մեղեդին, վոսկյա պատուաքաղների ազդուրը, արծաթյա դավաթների լիահնչյուն ընդհարումները խլացնում էին խոսակցության ձայները, վոր սկսել էին հետզհետե կինդանանալ: Լուռ եր միայն Սամվելը: Դառն, հոգնեմաչ մտածություններ սևկածում էին նրա սիրտը: Ցերկու նրան սիրելի անձնավորություններ, զանազան պատճառներով, չմանակցեցին տեղանին. իշխան Մուշեղը և վարդիդուխտ: Ցերկուսի բացակայության պատճառներն էլ նրա համար խիստ ծանր էին:

Նստում եր լուռ մնծի մասին Մամիկոնյան տիկինը և խոսում եր ավելի Սահակ պարթևի հետ: Նա իրան առհասարակ լավ պահել դիտեր հյուրերի չրջանում, բայց այսոր նրա խոսքերը հյդհուր էին և, կարծես, չէին կապվում մեկմյանց հետ: Նա տանջվում եր այն մտքով, արդյոք Սամվելը հայտնի՞լ եր նրանց յուր հոր վերադառնալը Տիրդոնից, և յեթե հայտնել եր, արդյոք ի՞նչ ձևով եր հայտնել: Հյուրերը այդ մասին չէին խոսում և ինքը, տիկինը, աշխատում եր խուսս տալ այդ հարցից: Բայց թոլորովին լռելն էլ անպատշաճ եր: Նա դիտավորություն ուներ՝ մոտ ապերում Սամվելին ճանապարհ դնել հորը ընդառաջ յերթալու և դեմավորելու նրան՝ նախ քան Տարոնի սահմանից ներս մտնելը: Ի՞նչպես կարելի յեր, վոր այդ տան ամենամոտ բարեկամները չդիտենային այդ և, վորքան էլ վոր ինքը թաղցնելու լիներ, վերջապես Սամվելը կասեր նրանց: Իսկ ինքը Սամվելի հետ դեռ վորևե հպմաճայնություն չեր կայացրել, թե ո՛րպես պետք եր հրատարակել նրա հոր դատական համարվը կամ ի՞նչ ձև պետք եր տալ նրա ընդունելությանը: Մյուս կողմից տանջում եր նրան այն միտքը, թե ինչո՞ւ Մուշեղը ճամփ չեկավ: Միթե յուր տան մեջ լրտեսնե՞ր կային... միթե ներքինի բադասը դավաճանե՞ց նրան... նրան խոսք տվեց, իսկ ծածուկ խմացում տվեց Մուշեղին պատրաստված դավադրությունը... «Միթե նրան հայտնեցի՞ն, հետևաբար չատ վատ կարող է լինել»... մտածում եր նա և յուր կսկիծը թաղցնում եր արտաքին կեղծ ուրախության ներքո: Նա վոչ վորից այնքան յերկյուղ չուներ յուր ձեռնակուրծյունների խափանման մասին, վորքան այդ համարձակ և անվախ յերիտասարդից...

Տիկնոջ նման մի ամուր բնավորություն միայն կարող էր այդ բոլոր մթին տարակուսանքներից հետո՝ պահպանել յուր առնասրտությունը և իրան չմատնել հյուրերի առջև: Այսուամենայնիվ, նրա դրությունը խիստ դժվարին էր: Նա չգիտեր, թե ի՛նչպես պետք էր դուրս գալ իրերի այդ խառնաշփոթ հանգույցներից:

Նա աշխատում էր խոսել ավելի հեռավոր առարկաների վրա: Մի քանի անգամ, զանազան ձևերով, հիշեց յուր ցավակցությունը Սահակի հոր, Ներսես մեծի, աքսորանքի մասին:

— Այն որից,— ասում էր նա հեկեկալով,— վոր ինձ հասավ այդ տխուր լուրը, չես հանգստություն չունեմ. ամեն անգամ վոր մտաբերում եմ, աչքերս լցվում են արտասուքով... Հայոց յերկիրը առանց հովվապետի՛... ա՛խ, այդ ի՛նչ դժբախտություն է...

Ցավ իրավ, նա թաշկինակը տարավ դեպի աչքերը: Սահակը մխիթարեց նրան, ասելով.

— Ուրախ կա՛ց, տիկին, մի՛ տանջիր սիրտդ այդ դառն հիշողություններով: Իմ հայրը յուր կյանքում շատ փորձանքների մեջ է ընկել, և ամեն անգամ ամենավատ տերը աղատել է նրան: Այդ փորձանքից էլ, չես հավատացած եմ, կազատվի նա:

— Կազատվի՛,— կրկնեց տիկինը, ավելի մխիթարական ձևով ընդունելով:— Նրա սուրբ աղոթքը կազատե իրան...

Գարթևը փոխեց խոսքը, հարցնելով.

— Իսկ դու, քեռակին, ի՞նչ լուր ունես իմ քեռուց. չգիտեմ վո՛րտեղ՝ ականջիս հասավ, վոր այդ մոտ որերը գալու յե նա:

Տիկինը չփութվեցավ, բայց իսկույն դարձեց իրան, պատասխանելով.

— Ասում են՝ գալու յե... բայց ճիշտ տեղեկություններ չկան... Կարծես թե, մեր մեղքից, ճանապարհները փակված լինեն... Ամեն կողմից անհաղորդության ձայներ են լսվում... մխիթարական վոչինչ չկա... Ի՞նչ և կատարվում այնտեղ, Տիզբոնում, ի՞նչ յեղավ Թաղեոսորը,— հայտնի չե... Միայն այդ որերում Տիզբոնից մի յեկվոր, յերևի, փախստական դինվոր— լուր բերեց, թե քեռիդ գալիս է... Վո՛չ նամակ ուներ, և վո՛չ մի նշան... Կասկածում եմ, վոր ընծա առանալու համար՝ խաբեց ինձ... Դու ինչ ես կարծում, սիրելի Սահակ, չես այդ մասին բոլորովին չվարած եմ, չգիտեմ, թե ի՛նչ պետք է անել...

— Ցես չեմ կարծում, վոր յեկվորը համարձակվեր խաբել քեզ, սիրելի քեռակին: Վո՞ր տեղացի էր:

— Մեր գյուղացիներից մեկը...

— Ուրեմն կասկածելու վոչինչ չկա. ձեր գյուղացին քեզ չէ խաբի...

— Ցես էլ հակված եմ կարծել, թե դուցե ճշմարիտ լինի... և պատրաստվում եմ Սամվելին ընդառաջ ուղարկել...

— Անպատճառ, պետք է ուղարկել,— ասաց Սահակը, ուրախություն

ցույց տալով և դարձավ դեպի մյուսները, այդ հնգծ-մաթեմատիկան խոսակցությունը ընդհատեցնելով.

— Լա՛ր, Մնսրոպ, քեռիս գալիս է, Սամվելը պետք է ընդառաջ գնա, խմենք մի մի գավաթ, Սամվելին բարի ճանապարհ մաղթելով:

Մնսրոպը զրաղված էր դանազան կառակներով ծերունի Աբրահիմ հետ, իսկույն չլսեց Սահակի առաջարկությունը: Սահակը կրկնեց յուր առաջարկությունը:

— Համենք, խմենք,— ձայն տվեց Մնսրոպը և դարձավ դեպի յերդիչները.— Ցերդեցեք մի նոր յերդ:

Նրանք յերդեցին Վահագնի դիչերային այցելության յերդը դեպի Աստղիկ վոսկյա ապարանքը, վոր կանգնած էր Աստղոնից լեռան գագաթի վրա:

Մտավ Արփին, պատեց խավա՛ր,
Մութ խավարը դիշերին,
Ննջող ու թմբիր ցանց հոգնը
Լուռ և խաղաղ աշխարհին:

Լուռ և Նաղիկ, ալիքները
Նաղ-նազելով են ծըփում.
Վոր նազանի կյուսի նիրհը
Չխանգարին հառաչում:

Լուռ և գետը— Արածանին—
Ուշիկ հոսում և հոսում.
Վոր Ներհանգի ծանր քունը
Չըվրդովվի յուր խորքում:

Լուռ և անտառ, վոչ մի տերև
Չև սոսափում, չև շարժվում,
Չի Պարիկը ննջող և ննջում
Ցուր մահաստյատ անձայնում:

Լո՛ւռ և յերկինք, լո՛ւռ և գետնիք,—
Ամենուրեք լռության.
Աղաղական քաղցր քնով
Բնած և վողջ բնության:

Բայց Աստղոնից լեռան վրա
Դեռ հսկում և դիցուհին,
Քուն կամ հանգիստ մոտ չեն գալիս
Նրա կարոտ աչքերին:

Նա տանջվում է յուր անկողնում,
Անկողնումը լուսապատ,
Ցեխ տարփալի հուր-աչերը
Հառած են դեպ Աշխչատ:

Ահա՛ Տարոն սառանվեցավ,
Սառանվեցավ, դղրդաց,
Ամպրոպային ահեղ թնդմամբ
Լեռն ու անտառ վորոտաց:

Այդ հսկան է— չեկ վահաղնը—
Հսկայական ընթացքով
Տառանում է յերկինք, դետինք,
Տառանում է լեռ ու ծով:

Բայց Դիցուհու դողարիկ սիրտը
Անուշ դողով դողդոջաց,
Ցերբ Դյուցաղնի մերձենալը
Ցուր ամբոցին նա դգաց:

Կրկին տիրեց լռությունը—
Խորհրդավո՛ր լռություն,
Նա Դյուցաղնին հանդիստ ավեց,
Հանդիստ ավեց յուր գրկում:

ՀԱՆԳԱՄԱՆԴՆԵՐԸ ԲԱՐԳՎՈՒՄ ԵՆ

Ճաշը վերջանալուց հետո, հյուրերը կրկին հավաքվեցան դահլիճը: Այստեղ պատրաստված էին նրանց համար զանազան ոչխարկներ և զանազան դովացուցիչ ըմպելիքներ՝ դինու տապը մարելու համար: Սպասավորները անդադար յելումուտ էին անում, խմի դանների մոտ անչափ հանգնած էին Թե՛ Սահակի, և Թե՛ Մեսրոպի զինված թիկնապահները: Մամիկոնյան տիկինը այժմ ավելի ուրախ եր և ավելի սիրալիր քնքշությամբ դուրդուրում եր յուր հյուրերին: Նա մինչև անգամ խոստում եր, ծիծաղում եր Մեսրոպի հետ, վորի վրա առաջ առանձին ուշադրություն չեր դարձնում, համարելով նրան էմի փոքրիկ աղնվականց, վոր յուր անշուք ամրոցի կառուցից կարող եր տեսնել յուր կալվածքների բոլոր սահմանները:

Մերունի Արբակը հենց ճաշը վերջանալուց հետո, խնդուքն աննկա-

անել կերպով անհայտացավ։ Սամվելը դեռ ևս դանվում էր յուր առաջվա մտայղության մեջ։ Ցնծեն հյուրերի ներկայությունը էլներ, նա ևս, յուր դայակի նման, կիմողներ և կհեռանար յուր սենյակը, մի փոքր հանգստություն տալու բորբոքված սրտին։ Նա նստած էր դահլիճի մի հեռավոր բազմոցի վրա և, դլուխը խոնարհեցրած հենարանի վրա, կարծես թե ներհում էր։ Բայց այդ ծանրացած դլուխը սարսափելի խռովության մեջ էր։ Առանց նրա կամքը հարցնելու, դինու աղմկալի բաժակներով նրա համար բարի ճանապարհ մաղթեցին։ Նա պիտի դնար դիմավորելու յուր հորը. նա պիտի դնար ընդունելու հայրենիքի դավաճանին... Բայց ի՞նչ սրտով դնար, ի՞նչպես ընդուներ... Այդ դա՛ռն, հուսահատական մտքերը ալեկոծում էին նրան։

Տիկինը, չարունակելով յուր անսպառ հարցուփորձը, դարձավ դեպի Սահակը, հարցնելով թե ի՞նչպես դասավ նա յուր հայրենական կալվածքները։

— Վոչ բոլորովին դոհացուցիչ դրության մեջ, քեռակին,— պատասխանեց Սահակը, փոքր ինչ չխոթվելով այդ անակնկալ հարցից։— Ինչ հայտնի չեն մեր դործակալների անպիտանությունները, թե ի՞նչպես ուդում քաղել դիտեն հարմար դեպքերից։ Հորս հետ պատահած դժբախտության հետո, նրանցից վոմանք, համարյա իրանց տեր կարծելով իրանց կատարելության հանձնված կալվածքներին, մինչև անդամ դյուղացիքները յուր ժամանակին հասցնել։ Մեծ աշխատություններ եկն հարկավոր մինչև այդ բոլոր անկարդություններ հեռացնելի և դործերը կարդի դնելի։

Պարթևը խոսքերի մեջ չընկնվեցավ։ Փորձիչը առաջարկեց մի այլ հարց.

— Դարձյալ դոհություն ասածս, վոր կարողացել ես փոքր ի չատե կարդի դնել։ Հիմա պետք է քեռինորիդ տանը հանդստանաս և նրանց ուրախություն պատճառես, սիրելի Սահակ։

— Շատ կցանկանայի, սիրելի քեռակին, բայց ցավում եմ, վոր մի որից ավել մնալ չեմ կարող։ Սատկիկ չատպում եմ...

— Ինչո՞ւ, դոնե պետք է մնաս մինչև Սամվելի հոր դալը. դու դիտե՞ս, թե վո՛րքան կուրախանա նա, յերբ քեզ այստեղ կտեսնե։

— Բայց մեր տանը մեծ անհամբերությամբ սպասում են իմ վերադարձին։ Փոքրիկ Սահականուշը հիվանդ է։ Մայրը անմխիթար սրտմտության մեջ է և պահում. ուշանալ չեմ կարող, սիրելի քեռակին։

Տիկինը տխուր դեմք ընդունեց, թեև նա չէր հավատում վո՛չ փոքրիկ Սահականուշի հիվանդությանը, և վո՛չ նրա մոր անմխիթար սրտմտությանը, ինչպես չէր հավատում, վոր Սահակը յուր կալվածական դործերը կարդի դնելու համար եր յեկած Տարոն։

Նա դարձավ դեպի Մեսրոպը, վոր այդ միջոցին կանգնած եր պատու-

հանի առջև և, ձեռքում բռնած ունենալով այնտեղ դրած տրծաթյա առարկաներից մեկը, նայում էր դեղեցիկ քանդակների վրա։

— Ի՞նչպես վերջացավ ձեր վեճը ոճենեցոց հետ, Մեսրոպ։

— Ճես այդ մասին ամենևին չեմ էլ մտածում, տիկին,— պատասխանեց նա անփութի կերպով.— յես այդ հոդսերը թողել եմ հորս վրա։ Ոճերի հետ դործ ունենալը փոքր ինչ դժվար է...

— Բայց հացիկցիք էս պակաս չեն... նկատեց տիկինը ժպտելով։

— Դրա համար էլ նրանց «վարձապատներ» են կոչում... պատասխանեց Մեսրոպը ծիծաղելով։

Մեսրոպը Հացիկ ավանի տերը և միևնույն ժամանակ բնիկ այնտեղացի էր։ Ոճ քաղաքի բնակիչների հետ հողերի սահմաններ վորոշելու վեճ ունեյին։ Ոճենեցիք ճանաչված էյին վորպես ոճաքարոտ մարդիկ. իսկ հացիկցիք առաջին էյին «վարձապատ» մականունը, վոր նշանակում է կարիճի զավակ, կամ, փոխաբերական մտքով, չարաճճի, խայթող, թունավորող։ Տիկինը յուր ակնարկությամբ կամեցավ հեղնել յերիտասարդ «վարձապատի» խայթող լեզուն, վորովհետև ոճենեցիք վայելում էյին տիկնոջ առանձին խնամակալությունը և նրա անմիջական հովանավորության ներքո էյին դանվում։

Այդ փոքրիկ հանաքից հետո, վոր տիկնոջը շատ հաճելի չթվեցավ, խոսակցությունը կրկին դարձավ Սամվելի ճանապարհորդության վրա։ Դրան առիթ տվեց այն, վոր տիկինը, նկատելով վորդու խռովյալ դրությունը, ցած իջավ յուր դահլավորակից, մոտեցավ նրա բազմոցին և, ձեռքով փայփայելով նրա խիտ գանդուրները, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, սիրելիս, դու ճաշից հետո ինչ-վոր տխրության մեջ ես դանվում։

— Վոչինչ... պատասխանեց Սամվելը, գլուխը վեր բարձրացնելով։ — Այդ ինձ հետ շատ է պատահում... մանավանդ հյուպատոսական ուրախություններից հետո... Սեղանի վրա փոքր ինչ ավել խմեցի...

Տիկնոջ աչքերն ընկավ վորդու դունաթաւի դեմքը։ Նա առհասց։

— Ջո դեմքը քո մասին լավ վկայություն չէ տալիս, Սամվել,— ասաց նա դողդողուն ձայնով.— դու, յերևի, հիվանդ ես, քո յերեսին գույն չէ մնացել. քո աչքերը վառվում են ինչ-վոր տենդագին կրակով... յես սարսափում եմ քո վրա նայելիս։

— Ասում եմ, վոր այդ ինձ հետ շատ է պատահում... կրկնեց վորդին և վեր կացավ նստած տեղից։

Նա մի քանի անգամ մտահոգ կերպով անցավ դահլեճի միջով, հետո կանգնեց Մեսրոպի մոտ, վոր դեռ էս չարունակում էր նայել հնադարյան անոթների վրա։ Տիկինը դնաց նստեց յուր տեղը։

— Ցերիտասարդների հետ այդպիսի բոպեներ շատ են պատահում,— ասաց նրան Սահակը։ Ո՛վ դիտե, ի՛նչ է մտաբերել... յերևի, յուր նշանածին...

վերջին խոսքը լսելով, տիկնոջ վորդու մասին կրած ցավակցական զգացմունքները կատաղության փոխվեցան: Նա զայրացած կերպով գոչեց.

— Ինչքա՞ւմ եմ, Սահակ, մի՛ հիշեցրեք ինձ այդ անունը... Ինձ առնելի չեն բոլոր Ռշտունիները և ամբողջ Ռշտունիքը...

Սահակը այդպիսի պատասխան չէր սպասում: Այդ խոսքերը վոչ միայն նեղեցին Սամվելի սրտում, այլ և վիրավորեցին նաև Սահակին, և նա սրբջացավ, վոր միամտաբար այդ առարկայի վրա խոսքը բաց արավ:

— Ինչո՞ւ Ռշտունիքը, այդ քաջարանց յերկիրը, և ինչո՞ւ Ռշտուններըը, այդ քաջազուն իշխաններըը, առելի չեն քեզ, տիկին,— հարցրեց Նա սառն կերպով:

— Ձգիտեմ ինչո՛ւ,— պատասխանեց տիկինը առանձին վրդովմունքով: —Միայն այդ կոշտ, կոպիտ, վայրենի, արյունարբու լեռնականների դաւադրը չէ կարող իմ վորդու կինը լինել... Ես ինքս Արծրունի յեմ և Արծրունյաց տոհմից ընտրել եմ իմ վորդու համար արժանավոր հարսնացու... Այդ դիտե Սամվելը. յես հարյուր անգամ նրա հետ խոսացել եմ այդ մասին:

Սամվելը լսում էր այդ խոսքերը. նա մոտեցավ և, կանդնելով մորառջև, սաստ կիսահեղնական ձայնով.

— Դիտե՛մ, դիտե՛մ, վոչ թե հարյուր անգամ, այլ հազար անգամ դու ասել ես ինձ այդ, և իմ պատասխաններըը, կարծեմ, դու չես մոռացել...

— Իսկ յեթե քո հա՞յրը կատաղարկե քեզ մինուճարը, Սամվել,— ասաց մայրը կշտամբելով վորդու կամակորությունը,— դու, կարծեմ, այն ժամանակ չես համարձակվի հակառակել քո հոր կամքին...

— Դեռ ինձ հայտնի չէ, վոր իմ հոր կամքը այդ է... պատասխանեց Սամվելը խորին սառնությամբ:

— Բայց ինձ հայտնի է... ասաց մայրը խորին բարկությամբ:

Սահակը, նկատելով, վոր յուր անմեղ կատակով առիթ տվեց անտեղի և տարաժամ վիճաբանության մոր և վորդու մեջ, ընդմիջեց նրանց կռիվը, ասելով.

— Թողնենք այդ: Իրավ է, վոր այդ հարցում հոր կամքը ավելի մեծ նշանակություն ունի... Թողնենք մինչև հոր դալուստը... Ես հավատացած եմ, վոր Սամվելը հոր ցանկությունը կկատարի...

Հետո, կամենալով ավելի կարևոր առարկայի վրա դարձնել խոսակցությունը, դարձավ նա դեպի Սամվելը, ասելով.

— Իսկ դու, սիրելի Սամվել, պետք է պատրաստվես հորդ ընդառաջ գնալու:

Սամվելը վոչինչ չպատասխանեց: Մայրը չատ գոհ մնաց Սահակի առաջարկությունից և, բռնելով վորդու ձեռքից, նստացրեց յուր մոտ,

զահավորակի վրա, և մի առանձին սիրելությամբ նայելով նրա յերեսին, ասաց.

— Ցես ամեն ինչ պատրաստել կտամ քո ճանապարհորդության համար, թանգագին Սամվել: Ցես մոռանում եմ, բոլորը: Դու չգիտես, ինչ բան է մոր սիրտը: Դու չգիտես, թե վորպիսի՛ ջերմությամբ ամեն րոպե բարախում է նա վորդու բախտավորության համար: Ցես հենց այսօր կհրամայեմ, վոր պատրաստեն նժույգները: Արծաթյա առպաղենքով և թանգագին չալերով զարդարել կտամ նրանց: Ավելի քան հիսուն հետևակներով դու կդիմավորես քո հորը: Բեզ կուղեկցեն յերեսուսարդ համհարզների մի ստվար խումբ, ամենքը գեղեցիկ զարդերով զարդարված, ամենքը հարուստ զենքերով սպառազինված: Ցեվ ամեն մարդ, ով վոր կտեսնե քո փառավորությունը, յերանի կտա քո ծնողներին:

Սամվելի հոր դալուստը, վորի մասին տիկինը առաջ թեությամբ եր խոսում, և ավելի ծածկել եր աշխատում, քան թե յերևան հանել, այժմ, հակառակ նրա ցանկության, յուր բոլոր պարզությամբ խոսակցության առարկա դարձավ: Տիկինը մի առանձին վնաս չեր տեսնում, յեթե յուր հյուրերին հայտնի կլիներ նրա դալուստը միայն, բայց վոչ դալստյան նպատակները: Նպատակների մասին՝ նա կարծում եր, վոր յուր հյուրերը վոչինչ չգիտեն, յեթե գիտեննային, չեյին համբերի և վորևիցե կերպով կակնարկելին նրան: Այդ մտքով նա հրամայեց տաճարապետին, վոր սեղանի վրա ամենաթունդ գինին մատուցանե, վորպեսզի արբեցության ջերմության մեջ կարողանա նրանց գլուխները թափ տալ: Բայց վոչինչ չկտեց: Այստու ամենայնիվ, նրա կասկածը Սահակի և նրա հոր ծածկամիտ քարտուղարի այցելությունների մասին տակավին փարատված չեր:

Սամվելը հասկացավ Սահակի նպատակը, թե վորպիսի՛ վարպետությամբ նա խոսել տվեց յուր մորը այն բոլորը, ինչ վոր վերաբերում եր յուր ճանապարհորդությանը: Ցեվ յուր սովորական յերկմտանքի պատասխանով կամեցավ լրացնել նրա խոստացած պատրաստությունների թերին, ասելով.

— Այդ բոլորը հարկավոր և հորս արժանավոր ընդունելության համար, սիրելի մայր, բայց դու նրա մեծապատիվ ուղեկիցների ընդունելության մասին վոչինչ չասեցիր:

Վերջին խոսքերի միջոցին նա դարձավ դեպի Սահակը և դեպի Մեսրոպը, վոր նստած եր նրանց մոտ:

— Հորս հետ գալիս են պարսից յերկու նշանավոր զորապետները— Զիկ և Կարեն.— դրանք գալիս են մեր յերկիրը պահպանելու... վորովհետև թագավորը չկա, իսկ հայրապետը բացակա յե... Դրանց ընդունելության համար ևս հարկավոր են փառավոր պատրաստություններ...

Մոր սիրտը սկսեց դողալ: Ի՞նչ եր կամենում ասել Սամվելը: Մի՞թե նա բոլոր զաղտնիքը կամենում եր բա՞ց անել Սահակի և Մեսրոպի առջև: Սամվելը նկատեց մոր շփոթությունը և շարունակեց.

— Այո՛, հոգս հետ դալիս են Զիկի և Կարենի զորապետները։ Ցերը նրանք վռազ կղնեն Տարոնի հողի վրա և յերբ կմտանեն Արածանիին, այդ ժամանակ դու, սիրելի մայր, սկսյալ Արածանիի ափերից մինչև մեր ամբողջ, ճանապարհի ամբողջ տարածությունը պահել կուսս թանդատին դորվելով։ Ցետ պարսից զորապետները այդ փառավոր վիճանդաղի վրայով ընթանալով, կմտնեն մեր ամբողջը։ Այն ժամանակ կկատարե՛նք մեծահանդես խրախճանքը... Բայց չմոռանաս, սիրելի մայր, պատվիրել, վոր մինչև մեր ամբողջին հասնելը, ըստ պարսից սովորության, ճանապարհի վրա, բաղմաթիվ գոհերը մատուցվեն նրանց առջև... Թո՛ղ արյունով սրբվի այդ ճանապարհը... և Թո՛ղ գոհերի դիակները վրայով անցնեն այդ հարսնյալի հյուրերը...

Տիկինը վոչ բնչ չունչ ասեց, յերբ տեսավ, վոր Սամվելը կարճ կարեց յուր զառն ակնարկությունները։

Խոսակցությունը ընդհատվեցավ, վորովհետև Սահակը և Մեսրոպը վեր կացան և, հայտնելով իրանց շնորհակալությունը սիրալիր հյուրասիրության համար, սասցին, թե դնալու յեն Մուշեղ իշխանին ողջունելու։ Այդ այցելությունը ամենևին ախորժելի չթվեցավ սիրնոջը, մանավանդ յերբ իմացավ, վոր ընթրիքը նրա մոտ են ուտելու և դիշերը նրա մոտ են մնալու։

— Ինչո՞ւ այնտեղ,— թախանձում եր սիրինը,— ինչո՞ւ ինձ վիրավորում ինձ։ Խնդրում եմ, դիշերը մեղ մոտ յեկեք։

— Դու այնքան ղբաղմունք ունես, սիրելի քեռակին,— ասաց Սահակը,— վոր թե՛ յես թե՛ Մեսրոպը չեյինք ցանկանա խանդարել քեզ։ Բայց Մուշեղը ավելի անդորձ մարդ և այդ ամբողջում։

Տիկինը ամենաքնքուշ վողջագուրանքով ճանապարհ դրեց նրանց մինչև նախասենյակը, խոսք առնելով, վոր դնալու ժամանակ դարձյալ կտեսնվին յուր հետ։ Նա վերադարձավ դահլիճը, և յուր առնչված մարմինը բաց թողնելով դահավորակի վրա, ընկղմանեցավ և, յերկու ձեռքով բռնելով ծանրացած դլուխը, սկսեց լինքն իրան հաշիվ տալ յուր այնորվա կատարած դերի մասին։ Դերը անհաջող եր, խակ հաշիվը հուսահատական։ Անհաջող եր նա այն կետում, վոր նախադծել եր յուր համար, թե ի՛նչ դիրք պետք և բռներ յուր յերկու հյուրերի առջև՝ յուր ամուսնու դալստյան խորհրդի վերաբերությամբ։ Բայց նրանք շատ բան իմացան, քան թե հարկավոր եր վոր իմանային։ Անհաջող եր նա Մուշեղի մասին հղացած շար դիտավորության վերաբերությամբ... Նա մոռացում եր կանչել տալ ներքինապետին և նրանից հարցուփորձ անել։ Բայց քառորդ ժամից հետո, նա լինքը, յուր սիրնոջ նման թախծալի և վշտահար դիմքով, նկար մտավ։

Սամվելը դնաց Սահակի և Մեսրոպի հետ, նրանց ճանապարհ դնելու մինչև Մուշեղի ապարանքը։ Ցերկար նրանք անցնում եյին դանազան բակերի և դանազան շինվածքների միջով, մինչև դուրս յեկան ամրոցի այդ

վոլորապտույտ լաբյուրինթոսից և հասան ապարանքի մեծ, կամարակապ դռանը: Ցերկու քևատարած արծիվներ քարից դուրս էին բերված դռան կամարի վրա, վորոնք, յերկու արքունի վոգիների նման, կարծես, հսկում էին այդ իշխանական տան մուտքի վրա: Մուշեղի հայր Վասակը, բոլոր Մամիկոնյան յեղբայրների մեջ ամենահարուստն էր և նրա ապարանքը՝ ամենափառավորը: Բացի Տարոնից, վոր այդ տոհմի նախաբարեբերյան ժառանգությունն էր, Վասակին էր պատկանում Ցեկեղյաց գավառի մի մասը, ուր հիմնել էր նա յուր անունով մի քաղաք, վոր կոչվում էր Վասակաբերտ:

Մտնելով ապարանքի մեծ դռնից և անցնելով յերկար վողոցով առաջինը, վոր բացվեցավ նրանց առջև, դա մի ընդարձակ բակ էր, վոր զարդարած էր ծաղկավետ թփերով և մշտականաչ բույսերով: Բակի մեջտեղում մարմարյա շատրվանից բարձր ցայտում էր ջուրը, և մարգարտյա տարափի նման, զարձյալ ցողվում էր դեղեցիկ նհանդի գանգրահեր դլխի վրա, վորի բերանից դուրս էր վիժում նա: Այդ պարզ, թնթռուն ավազանի չուրջը՝ նազելով պտրտվում էին յերկու սիրամարգներ: Ջրի վրա ցրվել էին զանազան ծաղիկները, վորոնք, ալիքների մեղմ ծփանքից, մոտենալով ավազանի բոլորակ յեզերքին, կազմել էին մի գույնզգույն բոլորակ պսակ: Արեգակի ճառագայթները կորցնում էին իրանց ջերմությունը այդ անուշահոտ, հովասուն դրախտի մեջ, ուր ամբողջ տարին տիրում էր մշտադալար, անթառամ գարուն:

Նրանք դռան Մուշեղին մի հովանոցի մեջ, վոր մոտ էր ջրի ավազանին: Նա նստած էր այնտեղ միայնակ և լուռ նայում էր յերկու կայտառ պատանիների վրա, վորոնք նրա հանդեպի ճեմելիքում՝ նետով նշան էին խփում մի գնդակի, վոր դրած էր բարձր ձողի գլխին:

Տեսնելով յուր հարազատի այցելուներին, Մուշեղը դուրս վազեց հովանոցից և, դիմավորելով նրանց, գրկվեցավ նախ Սահակի հետ և ապա Մեսրոպի հետ:

— Ցերևի,— ասաց նա ծիծաղելով,— Սամվելի մայրը աստղիկ հղիացրել է ձեղ, վոր այդպես ուշ եք վերջացրել ճաշը: Ցես այստեղ յեր կար սպասում էի:

Նրանք մտան հովանոցը և նստեցին դալար ճյուղերից հյուսած աթոռների վրա: Սամվելը բաժանվեցավ:

— Դու գնո՞ւմ ես, Սամվել,— հարցրեց նրանից Մուշեղը:

— Ցես կդամ ձեզ մոտ դիշերը... յերևի, շատ ուշ... պատասխանեց նա և հեռացավ:

Հովանոցի մոտ, դրսում, վոտքի վրա կանգնած էին Սահակի և Մեսրոպի անբաժան թիկնապահները: Նրանք հրաման ստացան, վոր գնան և պարտեզի մի կողմում նստեն, հանդստանան, վորովհետև ամբողջ որը վոտքի վրա էին:

Ցերկու պատանիները տեսնելով Սահակին և Մեսրոպին, թողին իրանց

ուրախ մարդուքյունը և վազեցին դեպի հովանոցը: Սահակը յերկուսին ևս պրկեց և համբուրեց: Դրանցից մեկը Մամիկոնյան Վարդանի վոբդի Համազասպն եր, իսկ մյուսը Մամիկոնյան Վաչեյի վոբդի Արտավազդն եր:

Վերջինը, վոր մի խարտյաշ, կրակոտ պատանի յեր, մոտ տասն և յոթն տարեկան, յերկու ձեռքերը դրեց Սահակի ծնկների վրա և, ծիծաղկոտ դեմքով նայելով նրա յերեսին, ասաց.

— Դիտե՞ս, վորքան անգամ տարվեցավ Համազասպը,— քանի հարվածների մեջ՝ հինգ անգամ:

— Իսկ դու, պարծենկո՛տ, քանի՞ անգամ,— հարցրեց Սահակը, նրա յերկու ճարպիկ ձեռքերը առնելով յուր ուսերի մեջ:

— Ցնս մեկ անգամ:

— Իմ ձեռքը այսոր դողում է,— արդարացրեց իրան Համազասպը:

Այդ պանդրահար, վառվռուն աչքերով պատանին Սահակի ազատ վիճաբանը եր, նրա զեղեցիկ Սահականուշյի ամուսնացուն: Ինքը Մամիկոնյան տոհմից ծնված լինելով, յուր դաստերը նույնպես հարճանախոսել եր Մամիկոնյաններին, և նո՛ւյն տանը, վորտեղից դուրս եր յեկել յուր մայրը: Մեր ամուսնությունները այդ ժամանակ սովորական եյին Հայաստանում, մանավանդ բարձր շրջաններում: Սովորական եր նույնպես, վոչ միայն անչափահաս հասակում նշան դնել ամուսնացուներին, այլ որորոցի մեջ, և մինչև անգամ դեռ չծնված:

— Հիմա դնացեք, նորից փորձեցեք ձեր բախտը,— ասաց նրանց Սահակը:

Ցերկու պատանիները խլեցին իրանց ափերները և կրկին վազեցին դեպի բարձր ձորի գլխին դրած դնդակը:

Արևն արդեն սկսել եր թեքվել դեպի յուր յերեկոյան մուտքը: Նրա վերջին ճառագայթները, խաղալով շառավանից բարձրացած ճյունի պես սպիտակ ջրային փոշիների հետ, չողշողում եյին ծիածանի գույներով: Այդ գույները լուսավորում եյին հինավուրց ամրոցի մոտյլ ճակատը, վոր նայում եր դեպի պարտեզը:

Մուշեղը վեր կացավ:

— Գնանք,— ասաց նա, դառնալով դեպի Սահակը և Մեհրոպը,— խոսելու շատ բան ունենք...

Նրանք դիմեցին դեպի Մուշեղի բնակարանը, վորի լուսամուտները փայլում եյին այդ րոպեում ծիածանի գույներով:

Վերադառնալով յուր սենյակը, Սահակը չգիտեր թե ի՛նչ աներ: Զանազան մտածություններ ամբոխված եյին նրա գլխում: Զանազան մթին խորհուրդներ խռովում եյին նրան: Այդ ալեկոծության մեջ պատանին զգում եր նա, դժվարանալով վորոշել, թե նախ վորի՞ց պետք եր սկսել կամ վո՛րը թողնել:

Մի քանի անգամ անցավ նա սենյակի միջով, հետո մոտավ քնարանը, պատկից մահճակալի վրա: Աչքատում եր քնել, վոր փոքր ինչ հանգստություն տա հուզված սրտին: Բայց քնել չկարողացավ:

Մայրը խոստացավ, թե ինքը կկարմե նրա ասպախուժքը, վորպես վայել էր մի Մամիկոնյան իշխանաղնի, և ամենայն չքեղությամբ ճանապարհ կդնեն հորը դիմավորելու: Ուրեմն այդ հոգսից ազատ էր նա: Բայց հենց նրա մեջն էր դիմավոր հոգսը, վոր այդ րոպեյում նրա մտատանջության առարկան էր դարձել:— Մոր պատրաստած ասպախո՛ւմքը... մոր ընտրած մարդի՛կը... և ինքը պետք է դնար նրանց հետ... այսինքն նրանք պետք է տաներին Սամվելին... պետք է տաներին հորը ուրախացնելու համար... և, վորպես վոսկու և արծաթի մեջ դարդարված մի խրծիկ, պարսից բանակին ցույց տալու համար... և պարսից զորավարներին զարմացնելու համար... Այդ էր վտառսեր մոր նպատակը:

Բայց Սամվելն ուներ յուր առանձին նպատակները... Եթե մայրը առաջարկելու ևս չլիներ, նա դարձյալ կդնար հորը դիմավորելու: Բայց կդնար յուր մարդիկներով: Նա չէր կարող դնալ մոր ընտրած մարդկանց հետ, վորոնց հակոդության ներքո պետք և կաշկանդվեր նա: Նա ցանկանում էր ունենալ յուր մարդիկը, յուր հավատարիմները...

Հենց այն առավոտը, յերբ սուրհանդակը դուրս եկավ Տիգրանից բնած բոթը,— հենց այն առավոտը նրա գլխում ծագեց մի մտայլ խորհուրդ... Այդ խորհուրդը հետզհետե աճում էր և կերպարանագործվում էր նրա մեջ... Եվ այդ խորհուրդը կատարելու համար, անհրաժեշտ էր, վոր նա յուր հավատարիմ մարդիկն ունենար յուր հետ...

Բայց Սամվելը չհակառակեց մորը, յերբ նա հայտնեց, թե ինքը կկարմե նրա ասպախուժքը: Չհակառակեց, վորպեսզի մորը կասկածանքի առիթ չտա: Այժմ ինչպես պետք էր հաշտեցնել այդ յերկու ծայրահեղությունները, վոր թե՛ մոր ցանկությունները կատարված լինեին, և թե՛ ինքը յուր նպատակին հասած լիներ... Նա վոչինչ վճռել չկարողացավ: Եերկու ձեռքով սինդ բռնեց խռովահույզ գլուխը և աչքերը խփեց...

Նույն րոպեյում և մայրը, յուր դահավորակի վրա պառկած, յերկու ձեռքով սինդ բռնած ուներ յուր գլուխը և մտածում էր...

Բոլորովին մութն էր, յերբ Հուսիկը ճրագը ձեռին ներս մտավ, դարբեցրեց Սամվելին:

— Ի՞նչ կա,— հարցրեց նա, աչքերը տրորելով:

— Մի չինական խնդրում է տեսնել իմ տերոջը,— պատասխանեց պատասխանին:

Սամվելը հասկացավ, թե ո՛վ պետք է լիներ:

— Նրան այնպես կրերես ինձ մոտ, վոր վոչ վոք չտեսնե,— պատվիրեց Հուսիկին:

Պատասխանին ճրագը դրեց յուր տեղը և հեռացավ: Սամվելը քնարանեց շուրս յեկավ յուր ընդունարանը: Մի քանի րոպեյից հետո, Հուսիկին ուղեկցությամբ, ներս մտավ Մալխասը, թավամած կուրծքը բաց, պատվիները հալած և մի յերկայն նիզակ ձեռքում բռնած: Նա անվուշ կերպով գլուխ տվեց և հենվեցավ յուր նիզակի վրա:

Հուսիկը խոհեմությամբ հեռացավ, մոածելով, դուցե յուր տերը ա-ռանձին խոսելիք ունի այդ մարդու հետ, վորի ավազակային դեմքը նրան չատ հաճելի չթվեցավ:

— Դու վորեղեն ժամանակ յեղե՞լ ես Ռշտունյաց կողմերում, Մալխաս,— հարցրեց նրանից Սամվելը սպասավորի հեռանալուց հետո:

Ծիծաղի նման մի բան ցնցեց համարձակ չինականի խոշոր զծերը և նա արհամարհանքով պատասխանեց.

— Ռշտունյաց լեռներում մի քար չկա, վոր Մալխասը չճանաչե, տեր իմ:

— Իսկ Աղթամար կղզում յեղե՞լ ես:

— Մի քանի անգամ:

— Վո՞րքան ժամանակում կարող ես հասնել այնտեղ:

Չինականը բոլոքական մտածությունից հետո ասաց.

— Այդ իմ սերոջ կամքից և կախված, յեթե շուտ և հարկավոր, յես պիշերը ցերեկ կդարձնեմ և յերկու որում կհասանեմ:

— Շուտ և հարկավոր... ասաց Սամվելը և յուր թղթերի պահարանից դուրս բերեց մի նամակ, վոր այն առավոտ դրած, պատրաստած ուներ: Նամակը հանձնեց նրան, ասելով.

— Այդ նամակը, վորքան կարելի յե շուտ, հասցնես Ռշտունյաց Գարեգին իշխանին:

Մալխասը ընդունեց նամակը և խնամքով թաղցրեց յուր դլխի ապարոշի վաթոմի մեջ:

— Եվ ուրիշ հրաման չունի՞ իմ տերը,— հարցրեց նա:

— Ուրիշ վոչինչ: Բարի ճանապարհ ես ցանկանում:

Նա խոնարհությամբ դլուխ տվից և հեռացավ:

Նախասենյակի դռան մոտ սպասում եր Հուսիկը: Նա այդ ուսարանին՝ վորպես աննկատելի կերպով ներս եր բերել, նույնպես աննկատելի կերպով դուրս հանեց ամրոցից:

Այդ համարձակ, անձնավստահ տղամարդը նույն չինականն եր, վորին մի որ առաջ հանդիպեց Սամվելը ճանապարհի վրա, Աշոհյատի վանքը դնալու ժամանակ: Նամակը տարավ նա Ռշտունյաց Գարեգին իշխանին, վորի Աշխեն անունով դուստրը Սամվելի սիրո և քաղցր մտածությունների առարկան եր: Իսկ նրա մոր առելությունը— չար հրեշտակը...

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թղթատարին ճանապարհ դնելուց հետո, Սամվելը դարձավ դեպի յուր մտերիմ աննկատելը, ասելով.

— Հուսիկ, այս պիշեր պետք և Մուշեղ իշխանի մոտ դնամ, հավա-

քի՛ր քո բոլոր ճարպկություններդ, հետաքրքրի՛ր բոլոր անցքերը, վորպեսզի իմ այնտեղ դնալը վոչ վոքը չտեսնե:

— Իմ սիրոջ հրամանը կատարված կլինի— ասաց պատանին ինքնավստահությամբ և դուրս դնաց, յուր մեջ մտածելով. «Ես մի այնպիսի բան կսարքեմ, վոր սատանան էլ չի տեսնի...

Սամվելը մնաց յուր սենյակում միայնակ:

Ներքնք նա այնպես հափշտակված չէր յեղել, վորպես այս դիշերը, յերբեք նրա զգացմունքները այնպես վառված չեյին յեղել, վորպես այս դիշեր: Թղթատարի տարած ծրարի մեջ ուղարկեց նա յուր սիրտը, յուր միտքը, յուր հոգեկան բոլոր ընդունակությունները: Այժմ նրա դատարկ ուղեղը միայն չրջում եր այդ ամայի սենյակի մեջ, վոր յուր հարուստ չրջապատով խեղդում եր նրան:

Նա մտքով սլացել եր այնտե՛ղ, դեպի այն ահարկու լեռները, ուր սրաթռիչ արծիվն անդամ չեր համարձակվում վերամբառնալ մինչև ամպամաժների կատարները, ուր ամպերի հետ համբուրվում և մշտականաչ յեղևինը, ուր արծաթյա կամարներով վայրում են լեռնային ջրվեժները, ուր վագրը, ինձը, բորենին մշայն ազմկում են մեկին անտառների հավերժական լռությունը:

Այնտե՛ղ, այն քարեղեն աշխարհում, վեհափառ Արտոսը, վորպես մի պատրիարք, յուր ալեղարդ դաշտով իշխում և չրջակա բարձրությունների վրա: Այնտե՛ղ, այն սքանչելի աշխարհում, Ընծակա սրտանվեր սերը յուր դեղեցիկ ալիքներով նկարվում և վանա ծովակի պարզ և պայծառ հայելվո մեջ: Այնտե՛ղ լեռնային մարդը, դեռ յուր նախնական մոթեղեն հագուստով, յերկար նիզակը ձեռին, թռչում և մի քարից դեպի մյուսը և հետամուտ և լինում արագավազ յեղջերվին:

Այնտե՛ղ ծովակի ալեծուփ ղրկում հանդչում և ահնչալի կղզին— անմատչելի Աղթամարը, և այդ կղզու խաղաղ, մեղիկ առանձնության մեջ, վորպես ծովակի դիցուհին, իշխում և Սամվելի նազելին:

«Սիրելի՛ Աշխեն,— բացականչեց նա խորին զմայլմունքով.— յես քոնն եմ. հավիտյան... յես քեզ եմ պատկանում իմ սրտի, իմ հոգու բոլոր զորությամբ... Ծնողաց վայրենի խստասրտությունը, աշխարհի անգութ արդելքները չեն կարող քեզանից խլել այն, ինչ վոր իմ սիրո բոլոր ջերմությամբ նվիրեցի քեզ: Վոչինչ չեն կարող փոխարինել քեզ, վո՛չ փառք, վո՛չ մենություն և վո՛չ արքաների թագը: Դու ինձ համար ամեն ինչ ես, թանգագին Աշխեն: Քո մեջն եմ դտնում իմ սրտի խաղաղությունը, քո մեջն եմ դտնում իմ վշտերի մխիթարությունը, քո անունը հիշելիս, լռում և հոգսը, անհետանում և մռայլը, և իմ հոգու մեջ ծաղում և ուրախության լուսապայծառ արեգակը: Ձերբ թախծալի հուսահատությունը պաշարում և ինձ, յերբ կանխահաս արհավիրքը թուլացնում և իմ ուժերը,— դո՛ւ յես վոգևորում ինձ քո առավածային ներշնչությամբ, դո՛ւ յես կենդանացնում մեռած յեռանդը և լքած հավատը: Ձեվ այս բո-

պիտում, իբր իմ հայրենիքը մեծ տաղնապի մեջ է, իբր ամեն սրբություն, ամեն հատատաուբյուն կործանվելու վրա է, իբր Աշնամին յուր բոլոր անզթությամբ կանգնած է մեր դիմին,— ա՛յդ որհատական բոպեյում քո սիրը, նազելի Աշխեն, վորպես մի պահապան հրեշտակ, վառում է իմ սիրտը անձնազոհության հրով, մղում և ինձ դնդի վտանգը... դնդի կատորածը... դնդի արյունը... կանցնի՛ փոթորիկը, կլռե՛ զենքի շառաչյունը, կլա՛ իրիջանիկ որը, և վտատահած գինվորը կհանդչի սիրած կուրծքի վրա.....

Յուր խորին հափշտակության մեջ, չնկատեց Սամվելը, թե ի՛նչպես դուռը կամաց բացվեցավ, և մեկը, վոտքից ցդլուխ վտիտ ածած սևազուն լայն ոլոծանելիքի մեջ, հայտնվեցավ ննյակում: Մի մթին ուրվականի նման, հաղիվ հաղ շարժվելով, անցավ նա պատերի մոտով և կանգնեց մի անկյունում: Անկյունի կիսամռայլից իրիկար նայում էր նա հուղված իրիտասարդի վրա և լսում էր նրա զրազմունքներով լի մենախոսությունը: Գիրկը ծածկված էր մետաքսյա սև դիմակով: Սամվելը դեռ արթնի նման կանգնած էր լուսամուտի հանդեպ և դեմքը դարձած ուներ դեպի այն աշխարհը, վորի մասին խոսում էր: Գիրը վերջացրեց, գլուխը խոնարհեցրած կուրծքի վրա, թևքերը խաչաձև վտակած, վորպես մի ուշացնող իրեպատմող, մի քանի անդամ անցավ սենյակի միջով, և ապա մոտեցավ մի բազկոցի, հենվեցավ նրա վրա: Այդ խոովյալ դրության մեջ մորմոքում էր նա, իբր հանկարծ դղաց, վոր յերկու սառույցային ձեռքեր բռնեցին յուր ձեռքը: Նա ոտկաց: Մթին ուրվականը խկուշն մի կողմ ձգեց յուր դիմակը և ոլոծանելիքը: Սամվելի սարսափը ավելի մեծ յեղավ, իբր յուր դիմացը տեսավ դունաթափ Վորմիզդուխտին:

— Մի՛ շփոթվիր,— ասաց նա հանդիստ ձայնով.— յես բոլո՛րը լսեցի... բոլո՛րը հասկացա... Յես թևև հայրենն չեմ խնամում, բայց սիրո լեզուն, սիրո ձայնը՝ ամեն ազգի հասկանալի է...

— Վորմիզդո՛ւխտ,— բացականչեց ապշած յերիտասարդը,— այդպե՞ս դիշերը... այդպե՞ս, տարաժամ...

— Այո՛, այդպես տարաժամ յեկա քեզ մոտ՝ մի չատ կարևոր դործի համար, Սամվել, միայն համբերություն ունեցիր լսելու:

Ամբողջ մարմնով դողում էր նա: Սամվելը բռնեց նրա ձեռքից, նստացրեց յուր մոտ, բազկոցի վրա: Գիրը վոքր ինչ հանդստացավ նա, պարճավ դեպի յերիտասարդը, ասելով.

— Կոպղի՛ր դռները, մեր խոսակցությունը պետք է ատանձին լինի:

Սամվելը կատարեց նրա ցանկությունը:

— Ների՛ր ինձ, Սամվել,— ասաց նա թախծալի ձայնով,— յես խանգարեցի քո սրբազան հոդեմտալությունը... յես խլեցի քեղանից այն քանդակին բոպենները, իբր դու քո սրտի հետ պետք է խոսեիր...

Սամվելը խոսք չդտավ պատասխանելու: Նա շարունակեց.

— Սիրի՛ր նրան, Սամվել, վորին այնքան ջերմ սիրով նվիրել ես քո

սիրտը: Դու արժանի չես մի լավ կենակցի: Ինձանով բախտավոր կլինեք կինը, դու կբախտավորացնես ամեն կնոջ...

Վերջին խոսքերն արտասանեց նա հեկեկանքով:

Նա ձեռքը տարավ դեպի դլուխը, հետ քաշեց ճակատի վրա թափված գանգուրները, որ, կարծես, աշխատում էին աչքողել նրա արտասուքը:

— Լսի՛ր, Սամվել,— առաջ տարավ նա բուսնական լուսթյունից հետո:— Այդ տան մեջ դու էլիր իմ մխիթարությունը: Ամենքը չերկրպագում էին ինձ, բայց սրտով առում էին:— Չերկրպագում էին, որովհետև չես արյաց մեծ թագավորի քույրն էլի: Առում էին, որովհետև չես պարսիկ էլի, հեթանոս էլի, մի քրիստոնյա ընտանիքի մեջ ընկած: Չես իմ վոսկեղեն և գոհարեղեն չրջապատի մեջ խեղդվում էլի, որպես մի մռայլ դերեզմանի մեջ: Բայց դու, միայն դո՛ւ, ազնիվ Սամվել, քաղցրացնում էիր իմ կյանքի դառնությունը, և փարատում էիր դժբախտ ոտարուհու սխրությունները: Չեթե դու չլինեիր, չես վաղուց թոյած կլինեի այդ տունը և գնացած կլինեի իմ հայրենիքը:— Այժմ լսի՛ր, սիրելի Սամվել, թե ինչո՛ւ չեկա քեզ մոտ, այդպես դիշերով, այդպես տարաժամ:

Շվոթված չերիտասարդը, որ դեռ ևս ապշության մեջ էր գտնվում, դլուխը վեր բարձրացրեց և նայեց դղացված կնոջ բոցավառ աչքերի մեջ: Նա բռնեց Սամվելի ձեռքը, ասելով.

— Իմ հրոնը ուսուցել է ինձ՝ բարությունը բարությամբ վճարել, ոոաքինությունը առաքինությամբ: Դու միշտ բարի չես չեղել դեպի ինձ, սիրելի Սամվել: Չես չեկա պարտքս վճարելու:— Ֆո կյանքը վտանգի մեջ է... Վտանգի մեջ է և այն երկրի կյանքը, որին դու սիրում ես...

— Այդ ի՞նչ ես ասում... ի՞նչ վտանգ... բացականչեց չերիտասարդը զայրացած ձայնով:— Նա վտանգի մե՞ջ է... ասա՛, վորմիդուխտ... չես հենց այս րոպեյում պատրաստ եմ ինձ կրակի և արյան մեջ նետել և աղատել նրան... Ասա՛, ի՞նչ վտանգ...

Նա վեր թռավ բազմոցի վրայից, կանգնեց տիկնոջ առջև, անդադար կրկնելով վերջին հարցմունքը:

— Հանդստացի՛ր Սամվել,— ասաց տիկինը մեղմությամբ,— և նստի՛ր քո տեղը: Վտանգը դեռ ևս այնքան մոտ չէ, որի համար հարկավոր լիներ շտապել: Վտանգը հասնելու վրա չէ: Նստի՛ր չես րոլորը կպատմեմ քեզ:

Սամվելը նստեց, աղաչելով.

— Ի սեր աստուծո, մի՛ տանջիր ինձ, ինչ վոր ասելու չես, շուտ ասա:

Բարեսիրտ տիկինը, չկամենալով միանգամից հարվածել չերիտասարդի զղայուն սիրտը, բավական հեռվից սկսեց յուր հաղորդելու նոր տեղեկությունները:

— Դու,— ասաց նա,— այսոր քո մոր ներկայությամբ պատմեցիր ինձ իմ ամուսնի և Մերուժան Արծրունու վերադարձը Տիզբոնից,— պատմե-

ցիր և նրանց հետ պարսից յերկու զորապետների գլուխները,— պատմեցիր և այն, թե ինչ դրծեր պետք է կատարեն նրանք ձեր յերկրում,— բայց ամենագլխավորը, կա՞մ քեզ հայտնի չեր, կա՞մ ծածկեցիր ինձանից:

— Ես վոչինչ չծածկեցի քեզանից, Վռամիղուխա, ինչ վոր դիտեի, բոլորը պատմեցի:

— Ուրեմն ամենագլխավորը քեզ հայտնի չե: Լսի՛ր, Սամվել: Նախ, ի զուր եք սպասում դու կամ քո մայրը, վոր նրանք Տարոնով կմտնեն Հայաստան: Սկզրից այսանդ չեն գալու: Նրանք կմտնեն Հայաստան վարդանականի կողմերով, վորը Մերուժանի իշխանության յերկիրն է: Նրանց առաջին դրծը կլինի՝ կալանավորել հայոց բոլոր նախարարներին և չղթայակապ ուղարկել Տիլդրոն: Այնտեղից կվարեն նրանց ձեր թագավորի մոտ, վորը այժմ մի բերդում աքսորված է: Հետո նրանց յերկիրդրծը կլինի՝ կալանավորել աքսորված նախարարների կանանցը, զավակներին և պահել բերդերում խիստ հսկողության ներքո...

— Վորոնց հետ և այն հրեշտակին, վորին յես սիրում եմ... ընդհատեց Սամվելը խորին վրդովմունքով:— Այդպես չե՞, Վռամիղուխա:

— Շատ հավանական յե... պատասխանեց սիկինը տխուր ձայնով:— Բայց մյուս նախարարների ընտանիքները կկալանավորեն, նրանց թվում կկալանավորեն և Ռշտունյաց նախարարի ընտանիքը և քո հրեշտակին: Հրամայված ե՝ չխնայել ո՛չ սևին, ո՛չ հասակի և ո՛չ աստիճանի: Ամեն մի ընդդիմացող կդատաստակաոված մահվան պատժի: Կխնայեն միայն նրանց, վորոնք կընդունեն Մաղդեդանց կրոնը: Ցավ նրանք բերում են հրանց հետ այնքան զորքեր, վոր այդ բոլորը կարող են կատարել:— Մնացած ասել, վոր խաոխի պատվիրված՝ կալանավորել հայոց սիկինոքը (թագուհուն) և ուղարկել Պարսկաստան:

— Ես այդ բոլորը սպասո՛ւմ եյի... ասաց Սամվելը, դլուխը ցավակցարար շարժելով:— Բայց դու ինձ այն ասա՛, Վռամիղուխա, թե ովքանդից հավաքվեցան քեզ մոտ այդ տեղեկությունները: Դու առավոտյան վոչինչ չդիտեիր, և մինչև անդամ իմ հոր գալստյան մասին տեղեկություն չունեիր:

— Այդ իրավ է, վոչինչ չդիտեի և վոչ մի տեղեկություն չունեի: Առաջին անդամ քեզանից լսեցի, վոր իմ, ամուսինը և Մերուժանը գալիս են: Ցավ այդ չատ զարմացրեց ինձ, թե ի՞նչպես և պատահել, վոր մի այդպիսի նշանավոր տեղեկություն ինձ չեն հաղորդել Տիլդրոնից: Ես դանազան կապածներին մեջ ընկա, մանավանդ յերբ մտածեցի, վոր իմ ներքինապետը նույնպես ինձ վոչինչ չեր հայտնել, նա՛, վոր ամեն բան կարող եր ամենից առաջ դիտենալ: Ներր վերադարձա տուն, իմ բարկությունը չափ չկար. խոստ մի պատան պատրաստել տվի, հետո կանչել տվի իմ ներքինապետին:— «Ջեզ կսպեի կամ այդ ծառից»,— ասացի

նրան,— «չնքի ձմարիտը չխոստովանվես, քե ինչ տեղեկություններ ունես Տիղրոնից»:— Նա ամեն ինչ պատմեց:

Սամվելը նոր բան իմացավ և նրան սիրեց խորին զարմացում:

— Ո՞ր ներքինապետը ինչո՞վ և ինչո՞ւ այդ գործերի մեջ,— հարցրեց նա, ուշիղ նայելով սիկնոջ այլայլված երեսին:

Վորմիղդուխտը կարմրեց, դունաթափվեցավ, զարձյալ կարմրեց, զարձյալ դունաթափվեցավ, վորպես մի յերեխա, վոր հանկարծ բռնվում է գողության մեջ:

— Կներես իմ մխամտությանը, Սամվել, և կհավատաս իմ անմեղությանը,— ասաց նա արտասվախառն հեկեկանքով,— վոր այդքան սարի յես, այդ անպիտանը ծառայում է ինձ մոտ, վորպես ներքինի. բայց յես մինչև այսոր դեռ չեյի հասկացել նրա խելական պաշտոնը: Ճես միայն նկատում եյի, վոր նրա մոտ անծանոթ մարդիկ են դալիս, դնում են. նկատում եյի, վոր նամակներ և առանում, պատասխան է դրում,— և այդ բոլորը շատ սովորական եյի համարում, վորովհետև դիտեյի, վոր Տիղրոնում, մանավանդ իմ յեղբոր արքունիքում, մեծ կապեր և ծանոթություններ ունի: Բայց այսոր յես քննեցի նրա թղթերը, բանից դուրս յեկավ, վոր այդ մարդը այստեղ ևս մեծ կապեր և ունեցել: Նրա ձեռքի տակ յեղել են շատ մարդիկ, մինչև անգամ հայերից, վորոնք հայոց յերկրի ամեն կողմերից տեղեկություններ են հաղորդել նրան, քե վո՛ր տեղ ի՛նչ է կատարվում, կամ վո՛րտեղ ինչ և պատահում: Ճեվ այդ լուրերի համար նա շատ վճարել է: Ճուր հավաքած տեղեկությունները նա միշտ ծածուկ ուղարկել է Տիղրոն, և այնտեղից նոր հրահանգներ և ստացել:

— Ուրեմն նա մի ծպտյալ լրտե՞ս է յեղել մեր տան մեջ ներքինապետի պաշտոնով,— հարցրեց Սամվելը, ավելի վրդովվելով:

— Այդպես է յերևում: Նրան պատվիրված է յեղել՝ ամեն ինչ հաղորդել Տիղրոն,— կրկնեց սիկինը ցած ձայնով:

«Թշնամու գործակատարը մեր տան մեջ է յեղել և մենք այդքան ժամանակ չե՞նք հասկացել»... մտածեց Սամվելը մի առանձին ինքնա-անբավականությամբ:— «Ճեվ մենք դեռևս զանգատվում ենք, վոր մեր գործերը վատ են գնում... Մեր տանը հարս են ուղարկում, հարսի հետ հարուստ ոժիտ են գնում, և նույն ոժիտի թվում ուղարկում են մեզ լրտեսը, բազմաթիվ աղախիններին և սպասավորներին հետ... Ի՛նչ լավ խնամություն և... Պարսից թագավորի նենդավո՛ր խնամություն»...

Նա զարձավ դեպի սիկինը.

— Դու, Վորմիղդուխտ, այնքան բարեկիրթ ես, վոր յես չեյի համաձակվիլ մի ամենաիմաջր կասկածով անգամ վիրավորել քո հրեշտակային անմեղությունը: Բայց դու մտածո՞ւմ ես, քե վո՛րքան վատ և ուրիշի տան գործերը լրտեսել:

— Այդ յես դիտեմ,— պատասխանեց նա մի այնպիսի ձայնով, վորի

մնջ լսում եր սրտի խորին բարկությունը՝ իր անմխիթար ցավակցությամբ։— Այդ չես դիտեմ և դառն հետևանքները տեսնում եմ։ Ինձ համար շատ սոսկալի չե, երբ մարդկանց աչքին և թափվում, երբը հայր և մայր մաշվում են բանտերի մնջ, իսկ զավակները, վորը և անտեր, մնում են դահիճների ձեռքում։ Ճես չեմ կարող տանել այդպիսի անդթություններ։

— Բայց այդ քո չեղրոր ցանկությունն է,— նկատեց Սամվելը։

— Մի՛ նախատինք ինձ, Սամվել, չեղրորս պատճառով։ Պարսից թագավորները սիրտ չունեն։ Մարդկանց դիահիների վրա չեն հաստատում նրանք իրանց գահի պատվանդանը,— այդպես ասել և մեր խաստատասերնեբից մեկը։

Սամվելը մտածության մնջ ընկավ։ Տիկինը ընդհատեց նրա լռությունը, ասելով.

— Մի՛ տրամիր, Սամվել, իմ խոսքը հանդուստացնելու համար՝ չես հավնց այս առավոտ կիրամայիմ պատրաստել իմ ճանապարհորդության կարավանը, կղնամ Տիգրան, կբնակնամ իմ չեղրոր գահի առջև և իմ արտասուքով կմոռցնեմ նրա բարկությունը։ Ճեվ չեքե նա անդրա կլինի դեպի քրոջ արտասուքը, նույն գահի պատվանդանը արտասվորված կտեսնի յուր հարազատի արյունով...

— Ճես հավատում եմ քո անճնազոհության,— վերամիդուխտ,— պատասխանեց չերիտասարդը,— դու ավելի քան այդ բարեդութ ես։ Բայց այժմ արդեն ուշ է... Գործերը այնքան բարդված են, հանգամանքները այնքան անդառնալի ձև են առացել, վոր քո բարեխոսությունը հարկիվ քիչ կարող եր խափանել կատարվող չարիքը...

— Բայց քո կյանքը վտանգի մնջ է, Սամվել։ Ճես չեմ տարակուսում, վոր ներքինապետը, կամ վորպես դու անվանեցիր, այդ ցած լրտեսը, քո անունն ևս գանրարեմիտների ցուցակի մնջ անցկացրած չլինի...

— Ճես նույնպես չեմ տարակուսում,— ասաց Սամվելը։— չես այդ հոգսը աստուծո վրա յեմ թողնում...

Նա դարձյալ մտածության մնջ ընկավ, և բոլնական լռությունից հետո ասաց հետևյալը.

— Դու մոռանում ես, վերամիդուխտ, վոր իմ հայրը և իմ քեռին ապրնորդում են պարսից դորքերին. նրանք դեռև ինձ կխնայեն...

— Հրամայված և վոչ վոքի չխնայել, վո՛չ բարեկամի, վո՛չ ազգականի,— պատասխանեց վշտացած կինը, և սկսեց ավելի և ավելի թախանձել չերիտասարդին, վոր դեռև յուր անձը ազատելու համար, թողնե, ատ ժամանակ հետևյա դեպի մի կողմ, մինչև փոթորկի անցնիլը։

— Այդ չես քեզ չեմ նեղում, վերամիդուխտ,— ասաց Սամվելը, ժպտելով բարեսիրտ կնոջ հոգածության վրա.— դու կամենում ես ինձ վատության սովորացնել, և մի չերկչոտ դինվորի նման, կուվի մեջոցին՝ փախչել պատերազմի դաշտից։

— Մտածի՛ր, Սամվել, վոր վտանգի մեջ ե և այն եյակին կյանքը, վորին դու սիրում ես... Նկատեց տիկինը վշտալի ձայնով:

— Հենց նրա համար յես չպիտի հեռանամ կուվի դաշտից... ասաց Սամվելը և նրա աչքերը վառվեցան վրեժխնդրության բոցով:

Վորմիզդուխտը մի առանձին նախանձով եր նայում այդ մարմնացած անձնազոհության վրա, վորի մեջ այնքան վառ, այնքան անչինանալի եյին սիրո զգացմունքները:

— Սառ լինճ, Վորմիզդուխտ,— խոսքը փոխեց Սամվելը,— այդ բոլորը, ինչ վոր պատմեցիր լինճ, քո ներքինապետը յուր բերանով խոստովանվե՞ց քեզ:

— Ցես նրա թղթերի մեջից և մի նամակ գտա,— պատասխանեց տիկինը:

— Կարելի՞ յե, վոր այն նամակը լինճ ցույց տաս:

— Նամակը հենց լինճ հետ բերած ունեմ:

Նա դուրս հանեց յուր դրպանից մագաղաթի վաթոթը և տվեց Սամվելին: Ցերիտասարդը նայեց նրա վրա, և միայն ինչ մտածելուց հետո, ասաց.

— Կարո՞ղ ես այդ նամակը լինճ մոտ թողնել:

— Ինչո՞ւ չե, յեթե քեզ հարկավոր ե:

— Բայց քո ներքինապետը չի՞ հարցնի, թե ի՛նչ յեղավ նամակը:

— Մաղրո՞մ ես լինճ, Սամվել, նա ի՞նչպես կհամարձակվի այդպիսի հարցմունք անել լինճանից: Ցես կհրամայեմ հենց այն րոպեյում կախել նրան իմ բակի ծառերի մեկից: Դու չղիտե՞ս, վորքան ծառաներ կան իմ հրամանի ներքո:

Տիկնոջ մեջ յեկավ արքայադուստր թե՛ հպարտությունը, և թե՛ բարկությունը: Նա վեր կացավ, ներողություն խնդրելով.

— Ցես շատ ուշացա, աքաղաղները արդեն սկսել են խոսել...

Սամվելը նույնպես վոտքի յելավ:

— Ցես այժմ միայն ինչ հանգիստ եմ,— ասաց տիկինը, յուր քնքշությամբ լի աչքերը դարձնելով դեպի յերիտասարդը:— Թեև վոչինչ բանի մեջ չկարողացա համոզել քեզ, բայց գոնե դու այսուհետև կդիտենաս քո անելիքը...

— Շնորհակալ եմ, Վորմիզդուխտ, քո անսահման բարության և քո անկեղծ կարեկցության համար: Դու չպիտաղանց պարտավորեցիր լինճ:

Տիկինը վեր առեց յուր սփածանելիքը և դիմակը:

— Մ՛ընա, ներկը, Վորմիզդուխտ,— ձայն տվեց յերիտասարդը,— յես այն ասպիճան չհոթվեցա քո անակնկալ լինճ մոտ գալով, վոր մինչև անդամ մոռացա հարցնել, թե ի՞նչպես յեկար, կամ այժմ ի՞նչպես պետք ե գնաս:

Տիկինը ժպտաց, ասելով.

— Դու խո տեսար, վոր յես ծածկված եյի դրանց մեջ,— նա ցույց

ավելց յուր ձեռքի սև սիսաձանելիքը և դիմակը,— դարձյալ այնպես կղնամ: Ինձ իմ աղախիններից մեկին տեղը կընդունեն:

— Գոնե թույլ տուր ճանապարհ դնեմ քեզ մինչև քո բնակարանը:

— Հարկավոր չե, դրսում իմ ապառավներից յերկուսը սպասում են. նրանք կառաջնորդեն ինձ: Իսկ քո ճանապարհ դնելը կարող ե մատնել ինձ:

— Բայց ապառավները չդիտե՞ն, վոր սև սիսաձանելիքի տակ ծածկված ե իրանց սիրելին:

— Չգիտեն: Նրանք ինձ բնդունեն այսուհետ, վորպես իմ աղախիններից մեկին, և այդ կարծիքի մեջ ել կմնան: Առաջին անգամ չե, վոր իմ աղախիններից յեկել են քեզ մոտ զանազան դործերով:

Տիկինը հաղավ յուր դիմակը և ծածկվեցավ լայն շալի մեջ: Սամվելը, արագին դհուշնակությամբ՝ հայտնելով յուր չնորհակալությունը, ճանապարհ դրեց նրան մինչև նախասենյակի դուռը: Այնտեղ խավարի մեջից հայտնվեցավ Հուսիկը:

— Տա՛ր այդ կնոջը,— հրամայեց նրան,— այնտեղ, դրսում, սիրելին վորմիղդուխաի ծառաները սպասում են, հանձնիր նրանց:

Հուսիկը մատը տարավ դնելի սասմանները և կծեց:

Մի բան անցավ նրա մտքով:

Մի այլ բան անցավ Սամվելի մտքով:

— Ա՛խ, լեթե փոքր ինչ շուտ յեկած լիներ Վորմիղդուխաը...

Նա մատնեցց Իշխանյաց Գաբնդին իշխանին և յուր սիրելի Աշխենին ուղարկած նամակները:

ԼԵՓՆՈՑԻՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Սև սիսաձանելիքի մեջ ծածկված կինը դանդաղ, համբերության քայլերով անցնում եր ամբողջ վոլորապատույտ փողոցներով, հազիվ հազ կարողանալով իրան վոտքերի վրա պահել: Սամվելից բաժանվելուց հետո, դեռ նոր սիրեց նրա մեջ այն հիմնադրամ, վհատական թուլությունը, վոր տեղի յե ունենում դրդռված, բորբոքված դրության անցնելուց հետո:

Ճերմուկ սպասավորներից մեկը տանում եր նրա ոտքերից վառած լապտերը, իսկ մյուսը դնում եր նրա յետևից: Ճանապարհին նա մի բառ անդամ չխոսեց յուր սպասավորների հետ: Լուռ և անարդել ընթացքով անցնում եյին նրանք ամբողջ զանազան դուռերից, վոր դրած եյին պահապանների ղդույշ հսկողության ներքո: Լապտերի վրա կարմրին եր ստանում սիրելին Վորմիղդուխաի նշանը: Այդ բավական եր պահապաններին նախապատրաստելու համար, թե անցնողը սիրելի կանանոցինն եր:

Ամբողջ ամբոցի մեջ տիրում եր մի տարօրինակ ծանր, ճնշող լուռ-

թյուն, միայն յերբեմն աշտարակների բարձրությունից լսելի յեր լինում դիշերապահ դինվորի արթնության նշանաձայնը: Մեկի ձայնին պատասխանում եյին մյուս աշտարակներից, և լուրջությունը բոպեապես դղրդվում եր:— Այդ խոսում եր ամրոցը յուր ահարկու, յերկաթյա լեզվով:

Ծածկված կինը արդեն հասել եր յուր բնակարանին: Ցերբ մերձեցան կանանոցի դռանը, յերկու սպասավորները այստեղ կանգ առին, և կինը միայնակ ներս մտավ ներքինիների այդ վակյալ աշխարհը, ուր ոտքամպի վոտքը դնելու կայան չունի:

Ցուր քնարանը մտնելուց հետո միայն՝ նա մի կողմ ձգեց դիմակն ու ծածկոցը, և այնպես, առանց հանվելու, պառկեց յուր անկողնի վրա: Հոգնած եր նա, հոգնած եր հոգվով, հոգնած եր և սրտով: Նա աչք ածեց դեպի յուր դեղեցիկ, ղարդարուն չրջապատը: Վոչ վոք չեր յերևում: Աղախիններից վոչ վոք չհայտնվեցավ: Մեթե ամենքը քնա՞ծ եյին, մեթե այդքան անցո՞ւլ եր դիշերից: Այդ ավելի լավ եր. դոնե վոչ վոք չեր խանգարի նրան: Նա բորբոքված յերեսը թաղցրեց բարձերի վրա՝ խորը թյան մեջ, և այնպես յերկար մնաց լուռ ինքնամոռացության մեջ: Մի խոսք, սրտաուչող մրմունջ յերբեմն ընդհատում եր այդ խորհրդավոր լուրջությունը և աչքերից հոսող ակամա հեղեղը թանում եր վրա՝ բարձերը: Ինչո՞ւ յեր լաց լինում նա,— ինքն էլ չդիտեր: Լինում են այնպես բոպեներ, յերբ սրտի և դատողության հոգեբանական հարաբերությունները խզվում են, և մարդ ինքն իրան հաչիվ տալ չե կարողանում յուր անվերծանելի զգացմունքների մասին:

Նա գլուխը վեր բարձրացրեց և կրկին պղտոր աչքերով նայեց դեպի յուր դեղեցիկ չրջապատը: Ցանկանում եր խոսել, ցանկանում եր թեթևացնել ամբոխված վշտերը: Դարձյալ վոչ վոք չկար: Միակ առարկան, վոր վոքը ի շատե կենդանության նշույլ եր ցույց տալիս, եր ճրագը, վոր վառվում եր արծաթյա աշտանակի վրա: Ցերկար նայում եր նրա վրա և մըրթմրթում եր նրա հետ:— Հո՛ւր, ջերմություն՛ և նյո՛ւթ,— ինքն յուր մեջ այրվում եր, ինքն յուր մեջ սպառվում եր... Այդպես եր և նրա սիրտը:

Նա դարձյալ յերեսը թաղցրեց բարձերի խորության մեջ, դարձյալ արտասուքը սկսեց վազել նրա աչքերից: Կյոս անկյունից լսելի յեղավ մի ձայն,— նուիրական լացի ձայն: Այնտեղ լաց եր լինում քնից նոր զարթած զավակը, այստեղ լաց եր լինում անքուն մայրը: Այդ ձայնը սթափեցրեց նրան,— այդ ձայնը հիշեցրեց նրան, վոր նա մայր եր և ամուսին...

Նա ցած իջավ մահճակալի վրայից, սրբեց աչքերը և շտապեց դեպի կյոս սենյակը: Ծծմայրը քնած եր որորոցի մոտ, չեր լսում յերեխայի ձայնը: Տիկինը զարթեցրեց նրան: Ջնաթաթախ կինը գլուխը մեքենաբար վեր բարձրացրեց և կուրծքը մոտեցրեց յերեխայի բերանին: Ցերեխան լռեց: Այժմ լսելի յեր լինում նրա ախորժակով ծծելու մրմրչոցը միայն:

Տիկինը մայրական հիացմունքով կանդնած, նայում եր որորոցի վրա:

Նրա մեջ դրած էր նրա հոդին, նրա սիրտ անդրանիկ պատուղը: Հանկարծ սոսկալով նկատեց, որ ծծմայրը դլուխը խոնարհեցրեց որորոցի դատա-կի վրա և կրկին քունը տարավ: Ցերեկյուղը՝ խառն բարկության հետ՝ չարժեց նրա սիրտը:

— Դու մխանդամ այդ յերեխային կխեղդե՞ս,— ձայն տվեց նա և վա-ռեալ խթեց նրա կողքը:

Ինչպես կինոջ ահ դեմքի վրա փայլեցին նրա խոշոր աչքերի ճերմակ ապիտակուցները, և նա դղրդացավ:

— Ցնա քնած չկյ... ասաց նա և դլուխը դարձյալ խոնարհեցրեց դատակի վրա:

Ծծմայրը խաչիչիկ էր: Խաչիչիկի ջերմ կուրծքից բղխած կաթը անդադար և համարվում յերեխաների համար:

Վո՞րտեղից գորանդ,— մայրը՝ պարսիկ, ծծմայրը՝ խաչիչիկ, իսկ յե-րեխան՝ Մամիկոնյան իշխանազն...

— Նա դեռ կանդնած էր որորոցի մոտ, մինչև յերեխան կշտացավ և քնեց: Հետո խոնարհվելցավ, չքթունքը մոտեցրեց կլորիկ թշերին և հեռա-ցավ, պատվիրելով ծծմայրին, որ արթուն մնա:

Կրկին դարձավ յուր քնարանը. փորձեց քնել: Ամանց աղախիններից մեկին կանչելու, ինքը հանվելցավ, մտավ անկողնի մեջ: Փակվելցության մի անորժելի դրդռան էր այդ շալեղեն և մետաքսեղեն ճոխ անկողինը, բայց այս դիշեր, կարծես, փուշերով լցված լիներ: Նա անդադար շուռ էր դա-լիս մի կողքից դեպի մյուսը, բայց վոչ մի կողմում հանդստություն չէր դանում: Նրա ներսը ալեկոծության մեջ էր: Ամեն և անորոշ մտքերով ամբռնված էր նրա անմեղ դլուխը, որպես պարզ, լուսապայծառ հորի-զոնը հանկարծ մառլվում և ամպերի մեծին խոհակներով: Մտածում էր Սամվելի մասին, մտածում էր այն բախտավոր արարածի մասին, որին սիրում էր նա և, վերջապես, սոսկալով մտաբերեց յուր ներքինապետին և նրա վարմունքը...

«Արդյոք Սամվելը համոզվեցա՞վ, որ յես անմեղ եմ, արդյոք վա-րտավեցա՞վ նրա կասկածը իմ մասին»... մրմնջում էր նա, ներկայացնե-լով իրան այն տխուր րոպեն, երբ վո՛րքան անախորժ ապավորություն ու-նեցան յուր հաղորդած տեղեկությունները վշտացած յերիտասարդի վրա:

— Ցնա այնքան բարի յկ, նա այնքան ազնիվ և, վոր կներե ինձ, նա չէր կասկածել, վոր յես կամակից եմ յեղել իմ ներքինապետի վատությունն-երին»... Բայց դրանով իսկ չէ սրբվում իմ մեղքը: Ա՛հ, ամենով մտավ այդ տան մեջ այդ ննդավոր մարդը, յերեք վոչ իմ ամենով: Ցնա բերեցի ինձ հետ այդ տան մեջ մի լուռնա... վոչ, վոչ, յես վոչինչ չդիտեմ, ինձ հետ ուղարկեցին այդ լուռնան... Բայց դարձյալ հանցանքի ծանրությունը իմ վրա յե ընկնում»: Ցնել յես պետք է քավեմ այն, ինչ վոր ասանց իմ դիտության կատարվել է, վորպեսզի խիղճս հանդստանա... Ցնա Սամվելին համոզել չկարողացա: Նա հակառակեց իմ Տիդրոն գնալու դիտավորու-

թյանը: Այդ դեպքում ևս նա ցույց տվեց յուր անսահման բարեսրտությունը: Բայց յես պետք է դնամ, պետք է աշխատեմ ամոքել իմ յեղբոր անդորրությունները... Ցես չեմ կարող այստեղ մնալ և հանդիսատես լինել վողբալի տեսարաններին... Բայց ինչ ամուսինը... Ւ՞նչ կմտածե իմ ամուսինը:.. Նա կլսա և ինձ յուր տան մեջ չի տեսնի»...

Վերջին հարցն վրա մնաց նա:

Ցերկար մտատանջություններից հետո, նա ձայն տվեց յուր աղախիններին: Վոչ վոք չհայտնվեցավ: Վեր առեց յուր մոտ դրած ասբյա սպիտակ շալը, փաթաթվեցավ նրա մեջ և դուրս յելավ անկողնից: Այդ շալի մեջ կիսամերկ դեղեցկուհին նմանում եր մի նազելի հավերժահարսի, վոր կիսով չափ դուրս և յերևում նախշուն վոստրեկի մեջից:

Մտավ մյուս սենյակը: Այստեղ աղախինները, մինը մյուսի վրա պլուկը ըրած, խորով պառկել եյին: Ցերևում եր, նրանք յերկար սպասել եյին իրանց տիկնոջը, և այնպես քունները տարել եր: Տիկինը նայեց նրանց վրա և խղճացավ զարթնեցնել: Նա դուրս յելավ և անցավ մի այլ սենյակ: Այստեղ մի չափահաս կլին, մի յանակ նստած բազմոցի վրա, նիրհում եր: Դռան բացվելու ձայնը վոքր ինչ դգաստացրեց նրան, աչքերը բաց արավ, նայեց յուր շուրջը, և դարձյալ գլուխը խոնարհեցնելով, սկսեց նիրհել:

Տիկինը վերադարձավ յուր քնարանը:

Նա մոռացավ, թե ի՞նչ բանի համար եր կամենում կանչել յուր աղախիններին, մոռացավ և այն, թե ինչո՞ւ համար մտավ վերջին սենյակը, ուր բազմոցի վրա նիրհում եր չափահաս կլինը:

Յարխափելով անցավ նա քնարանի միջով, վորպես թե մի բան վորոնում եր: Աչքը ընկավ արծաթապատ արկղիկի վրա, վոր դրած եր պատուհանում: Այդ դեղեցիկ արկղիկը սարսափեցրեց նրան: Մի առանձին զգվանքով ձեռքը տարավ դեպի կողպեքը, բաց արեց և նրա միջից հանեց մի քանի դրվածքներ: Դրանք զանազան նամականների պատճեններ և զանազան սևագրություններ եյին, վոր այնոր ջոկել եր նա յուր ներքինապետի թղթերի միջից: Ներանցից մեկը մոտեցրեց ճրագին, սկսեց կարդալ: Նրա ուշադրությունը գրավեցին հետևյալ տողերը.

.... «Այստեղ մնացած Մամիկոնյան տոհմից յերկու յերիտասարդներ կարող են վտանգավոր լինել. մեկը՝ Վահան իշխանի վորդի Սամվելը, մյուսը նրա հորեղբոր վորդի Մուշեղը: Առաջինը, թեև անփորձ, դեռահաս մի յերիտասարդ է, բայց խելացարի նման սիրահար է թե՛ յուր թագավորին և թե՛ յուր հայրենիքին: Այդ սերը լրացնում է նրա մեջ վորձի և համարձակության պակասությունը: Քաջ է և համարձակ: Սիրված է յուր հասարակությունից և նրա ձայնին շատերը կհնազանդին: Անհաշտելի յե: Վոչինչով չե կարելի խափանել նրա հայրենասիրությունը: Այդ մոլեռանդ յերիտասարդը կարող է շատ հոդսեր պատճառել արյաց զորքերին, յեթե վաղորոք նրա մասին չխորհվի... Ցերկրորդը, Մուշեղը, առաջինի հայրենասիրության հետ՝ ունի վորձ և ընդարձակ համարձակություններ պատերազ-

մի դարձներում: Դա մի սոսկալի մարդ է: Պարկառատանը չատ կշահվի, եթե մի ամբողջ դասում անգամ նշանակելու կլինի նրա կյանքի վճարման համար, որպես դէմպղին: Մենք և դրա ազդեցությունը թե՛ աղնվական, և թե՛ հոգևոր դասակարգերի վրա: Լավ զորապետ և քաջ պատերազմող է, և վոխերիմ թշնամի արիներին...

Նա չկարողացավ շարունակել. ձեռքերը դողացին և մատիտի կտորը ընկավ հատակի վրա: Այդ միջոցին ներս մտավ շափահաս կինը, վորը մի քանի րոպե առաջ, մյուս սենյակում, բազմոցի վրա նստած, նիրհում էր:

— Ա՛խ, Վորմիզդուխտ, աչքի լույս,— ձայն ավեց նա,— դու դեռ քնած չէի՞ս:

Նա մոտեցավ, սկսեց վայելել յուր սիրելոջ հերարձակ դլուխը: Բայց նրա այլայլված դեմքը սարսափելցրեց պատավին, վորը զարհուրելով հետ քաշվեցավ և հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ... ինչո՞ւ այդքան ուշացար... ի՞նչ ասաց Սամվելը... ի՞նչ կկար... — և նա դանդաղ հարցերով չփոթեցրեց առանց դրանց ևս շփոթված Վորմիզդուխտին:

Այդ նիհար, ցամաքած պատավը Վորմիզդուխտ ազգության ասրտուն էր. յերեխայությունից անուցել էր նրան յուր դիմոտ կուրծքի վրա: Յերբ ամուսնացավ Վորմիզդուխտը, յերբ ուղարկեցին նրան հայոց յերկիրը, այդ խելացել, փորձված պատավին դրեցին անփորձ հարսի հետ իբրև խորհրդական, իբրև խնամակալ:

Պատավի հայտնվելը փոքր ինչ սփոփեց Վորմիզդուխտին: Լինում են րոպեներ, դա՛ն, հուսահատական րոպեներ, յերբ մարդ յուր տխուր մի ացխակության ժամանակ՝ սոսկանք և դոնում մինչև անգամ կատվի մեջ, յերբ հանկարծ ներս և մոնում սենյակը և կարևորագարը քաջալուում և տատապալի վիճակին:

Տիկինը անցավ մահճակալի վրա, մտավ անկողնի մեջ և կանչեց պատավին յուր մոտ:

— Նստիր այստեղ, Հուռմայլի, մոտ նստիր,— խնդրեց նրանից նվազած ձայնով:

Պատավը տեղավորվեցավ նրա բարձերի մոտ:

— Ձեռքդ դիր ճակատիս վրա, շփի՛ր նրան, շա՛տ շփիր:

Պատավը յուր չոսկրոտ ձեռքը դրեց նրա ճակատի վրա, վոր պատած էր սառն քրտինքով:

Մի քանի րոպե լուռ էր նա և բոցավառ աչքերը հածում էին սենյակի շուրջը: Հետո աչքերը խփեց և սաց պատավին:

— Խոսի՛ր, Հուռմայլի, շա՛տ խոսիր, յես լսում եմ:

Պատավը խոսք չգտավ ասելու: Տիկնոջ այդ տենդային դրությունը շվարեցրել էր նրան:

— Խոսի՛ր, Հուռմայլի, մի բան ասա՛,— կրկնեց նա, յուր թախծալի աչքերը բաց անելով և դարձնելով դեպի պատավը:— Մոռացե՞լ ես, Հու-

մայի, լինում էլին դիշերները, յերբ յես դնում որիորդ էլի, դու այդպես չինչպես այժմ, նստում էլիր իմ անկողնի մոտ, խոսում էլիր, խոսում էլիր, և քո խոսքերին վերջ չէր լինում... Անցնում էլին ժամեր, աքաղաղները կանչում էլին, յես քնում էլի, յես զարթնում էլի, և դարձյալ լսում էլի քո խոսքերի շարունակությունը... Ա՛խ, վո՛րքան լավ եր այն ժամանակը. վո՛չ հոգ կար, վո՛չ ցավ կար. ապրում էլի ինչպես մի ուրախ թռչուն, և բնավ ծանոթ չէր ինձ, թե ի՛նչ է անհանգստությունը...

Աչքերը դարձյալ վակեց նա, ասելով.

— Խոսի՛ր, Հումայի, մի բան պատմի՛ր, վոր քունս տանե...

Շվարած պառավը ձեռքը տարավ դեպի նրա կուրծքը, վոր սաստիկ զարկում եր:

— Այնտեղ կրակ կա, Հումայի, այնտեղ մի բան այրում է ինձ... մրմնջաց նա, և դարձյալ աչքերը բաց արեց:

Պառավը այժմ սկսեց վախենալ:

— Դու չես խոսում, Հումայի, դու լուռ ես... Ցնս կխոսեմ... յես ուզում եմ, խոսել... շա՛տ խոսել...

Պառավը այժմ սկսեց մրթմրթալ: Նա աղոթում եր:

Տիկինը յուր տաք ձեռքերով բռնեց պառավի ցամաք ձեռքը և հարցրեց.

— Հիշո՞ւմ ես, Հումայի, այն տարին, Աշեիշաուի տոնախմբության որը,— այդ վերջին հանդիսավոր տոնախմբությունն եր, վոր կատարվեցավ:— Մենք նստած էլինք հայոց տիկնոջ (թագուհու) ծիրանի վրանում, այնտեղից նայում էլինք հանդեսի վրա: Թագավորը մեծ քահանայապետի և դվխավոր նախարարների հետ՝ նստած էլին առանձին վրանում, մեղանից վոչքր ինչ հեռու, և դիտում էլին կատարվող մրցությունները, կատարվող խաղերը: Հիշո՞ւմ ես այդ որը:

— Հիշում եմ,— պատասխանեց ապշած պառավը:

— Հիշո՞ւմ ես և այն, յերբ սկսվեցավ մականախաղը, յերբ նախարարների յերկաթապատ վորդիները յերկու հակառակ խումբերի բաժանվեցան, և յերբ չառաչում էլին մականները և վայրկյա խաշոր գնդակները փոթորկի նման մի կողմից դեպի մյուս կողմ էլին տարվում,— այդ ջերմ մրցությյան միջոցին հայտնվեցավ մի որիորդ, վոսկեզուլն նժույգի վրա նստած: Հիշո՞ւմ ես այդ որիորդին:

— Հիշում եմ,— պատասխանեց պառավը:

— Հազարավոր ձայներ՝ խուռն ծափահարությամբ՝ վողջունեցին նրա հայտնվիլը: Թագավորը յերկար ճոճում եր յուր թաշկինակը: Նա հայտնըվեցավ, ինչպես մի դիցուհի, և յուր հայտնվելով նոր ուժ, նոր ջերմություն ներշնչեց խաղին: Գեղեցի՛կ եր այդ մանկահասակ որիորդը յուր աքանչելի զրահավորության մեջ: Կուրծքը պատած եր պողպատյա վոսկենկար լանջապանով. պղնձյա վոտքերի սաղավարտը շողշողում եր արևի ճառագայթներից, շողշողում էլին և նրա վոսկեզուլն դիսակները, վոր

ծածանվում էին յերկաթի մեջ սեղմված թիկունքի վրա: Նախշուն յերեսակալի նեղ ճեղքից հագիվ յերևում էին նրա լուսափայլ աչքերը և սլորակ, աղեղնաձև հոնքերը: Հնչում էր փողը, վորոտում էին թմբուկները և յերկաթ, ծանր մահակները նրա վարժ ձեռքում պատռում էր, ինչպես մի թևթև փետուր: Գեղեցիկ նժույգը, վորպես մի ոդաղնաց թռչուն, ճախրում էր, ահագին վոստյուններ էր գործում, և քաջազնյա որիորդի մահակի ճարպիկ հարվածներով դնդակը սլանում էր մինչև ասպարեզի վերջը... Հիշո՞ւմ ես, Թե ո՛ւմ հետ էր մրցում նա:

— Սամվելի հետ:

— Այո՛, Սամվելի հետ... Բերդը վերջացավ խաղը հայոց ախիկները (Թադուհին) հրավիրեց նրան մեզ մոտ, մեր նստած վրանում: Բուռ ձեռքով նվիրեց նրան առաջին մրցանակը— մի վոսկեղեն պեղաքանդակ Թաս: Նա մնաց մեզ մոտ, ճաշեց մեզ հետ և ճաշի ժամանակ յերգեց մի յերգ: Հիշո՞ւմ ես այդ յերգը:

— Հիշում եմ:

— Այդ մի լեռնական յերգ էր, Հումայի: Լեռնցի որիորդը յերգում էր յուր լեռներն, յուր ձորերի յերգը: Նրա անուշիկ ձայնը հնչում էր, ինչպես լեռնային զեփյուռը, վոր զարկվում է ապառաժներին, զարկվում է զարևոր յեղևիններին, սասականում է, սասականում է և ապա փոքր առ փոքր մեղմանալով, վերջը խուլ-սխրաձայն հնչյուններով հանդչում է ձորերի հեռավոր խորության մեջ... կարծես, և այդ րոպեյում զարկում է իմ սիրտներին կախարդիչ յերգի թախծալի մեղեդին, կարծես, և այժմ նայում եմ յես հափշտակված որիորդի վառված աչքերի մեջ, ուր այնքան կրակ կար, ուր այնքան հրապուրանք կար, ուր այնքան սեր կար... Հիշո՞ւմ ես, Հումայի, Թե ո՛վ էր այդ որիորդը:

— Ասում էին, վոր Ռշտունյաց իշխանի դուստրն է:

— Այո՛, Ռշտունյաց իշխանի դուստրն էր—ահարկու լեռների և մթին անտառների բախտավոր դուստրը... Նա յուր հետ բերել էր յուր լեռների քաջերին: Ո՛վ էր նայել այդ հովիվ ժողովրդի պարզ և անպաճուճ դրահավորության վրա, վոր հայտնվել էին հանդեսում իրանց այծերի մաղից գործած Թևթև ասպարներով, իրանց վոչխարների բուրդից պատրաստած կաճյա զրահներով ու սաղավարտներով և իրանց՝ նույնպես մաղից հյուսած՝ Թանձր արևնոցներով: Վատրից ցցլուն մատով ու մորթով էին պատած նրանք, բայց յերկաթի ամրություն ուներ այդ կոշտ-կոպիտ հանդերձանքը:— Կոշտ-կոպիտ էին և իրանք—լեռնականները,— բայց բոլոր հանդիսականները սարսափում էին նրանց աղեղներից, վոր յերեք հարյուր տարածություն ունեին, և նրանց նետերից, վոր մի նիզակի չափ յերկարություն ունեին: Քրոխա էին այդ քաջերը և դյուրագրգիռ, իսկ նրանց Թագուհին վայելում էր բոլոր հանդիսականների մեջ, վորպես մի լեռնային դիցուհի...

Վերջին խոսքերի մէջոցին նա յուր աչքերը փակած ուներ, կարծես, խոսում եր քնի կամ յերազի մէջ:

— Այդ քաջերը,— շարունակեց նա,— հրեղեն աչքերով և թավամազ դեմքով, թավամազ առյուծների նման, հակում եյին իրանց իշխանուհու վրա: Մահը մի ակնթարթում վճռված կլիներ այն ազատասնի յերիտասարդին, որ կհամարձակվեր վոքը ծունկն աչքով նայել նրա վրա:— Նա տարավ այդ տոնախմբության մրցությունների ժամանակ՝ յերկու վայրկյան մրցանակներ. մեկը՝ վոսկեղեն թասը, որ ընդունեց հայոց սինկնոջ ձեռքից, մյուսը—Սամվելի սիրտը...

Նա լռեց, այլ ևս վոչինչ չխոսեց:

Ցերկյուղած պատանին սարսափով նայում եր նրա դունաթափ դեմքի վրա, որ յերբեմն թոթռում եր անեղային ցնցումներով: Թոթռում եյին և նրա կարմիր շրթունքները, որ ամուր սեղմված եյին միմյանց հետ: Նա դեռ շարունակում եր խոսել, բայց խոսում եր, ա՛յլ դիտի, ում հետ, —խոսում եր յերազների հավիտականության մեջ և նրա ձայնը չեր լսվում...

Պատանին ծածկեց նրան և մինչև յուղա անքուն նստած, նայում եր յուր անուցած սանիկի վրա, որ վառվում եր տապի և քրտինքի մեջ: Ցավ խեղճ կինոջ չլցած աչքերից արտասուքը մեղմ կաթիլներով գլորվում եր ցամաք յերեսի վրա...

ԻՆՔՆԱԿՈՉՆԵՐԸ

Գիշերից քավական անցել եր: Մուշեղ իշխանի ապարանքում, մխիթարության սենյակում, որ նրա ընդունարանն եր, հայոց չորս յերիտասարդ մտածողները դեռ խորհրդի մեջ եյին: Սենյակի վարագույրները խնամքով իջեցրած եյին, դռները ներսից կողպած եյին, իսկ դրսում՝ յերկու զինված պահակներ կանգնած եյին նախասենյակի դռան աջ և ձախ կողմերում:

Մհերսոլը, ճրագի հանդեպ նստած, խորասուզվել եր յուր առջև դրված թղթերի մեջ: Կարդում եր, ինչ-վոր հաշիվներ եր անում, դարձյալ կարդում եր, և յերբեմն ձեռքը տանում եր դեպի հուղված ճակատը. յուր տարակուսանքները փարատելու համար: Այդ թղթերի թվում գտնվում եր և այն նամակը, որ Վորմիզդուխտը հանձնեց Սամվելին:

Սամվելը վոտքի վրա անցուդարձ եր անում և մի մի անգամ մոտենում, կանգնում եր, և յետևից լուռ նայում եր Մհերսոլի աշխատությանը վրա:

Մուշեղը մատներով անհանգիստ կերպով քրքրում եր յուր վոքրիկ մորուքը, որ, թավիշյա սև չրջանակի նման, բոլորում եր նրա այրական դեմքը: Նրա սեգ աչքերի մեջ նշմարվում եր անհամբերություն և խորին վրդովմունք:

Սահակ պարթևը յերբեմն վեր էր առնում յուր մոտ դրած գինու թաց և նրանով թրջում էր սրտի տապից ցամաքած շրթունքները:

Ամենքը սպասում էին Մեսրոպին:

Նա թղթերը տհաճությամբ մի կողմ նետեց և, դառնալով դեպի մյուսները, ասաց.

— Բոլորովին ապարդյուն է քրքրել այդ թղթերը և նրանցից վարեւ յեղրակացության հասնել: Մեր այժմյան դրության մեջ՝ հայհոյվը վոչ միայն կսխալեցնեն, այլ և կմոլորեցնեն մեզ: Մեր գործերը հենց սկզբից անհայհոյ են սկսվել: Այնպես էլ պետք է շարունակել: Այսինքն, կամենում եմ ասել, վոր ժամանակը այնքան նեղ է և պահանջները այնքան սոսկալի են, վոր մենք մեջտեղ չենք հանել հենը ուզելու և նոր կարգադրություններ անելու: Մեզ պետք է այժմ անել մի վճռական քայլ, թեև այդ քայլը մինչև անգամ հակառակ լիներ խոհուն և խելացի ձեռնարկության:

— Բոլորովին ճիշտ է,— ասաց Սամվելը, վոր դեռ ևս վոտքի վրա չէր:

Սահակ պարթևը վոչինչ չխոսեց:

— Այսու ամենայնիվ, մենք պետք է չափենք մեր ուժերը,— նկատեց Մուշեղը:

— Մենք չափել կամ կշռել չենք կարող այն, ինչ վոր դեռ ևս դյուրիչյուն չունի,— պատասխանեց Մեսրոպը:— Մեր ուժերի չափը կախված կլինի այն հանգամանքներից, թե վո՛րքան հաջողությամբ առաջ կտանենք գործը:

— Հաջողությունը կամ անհաջողությունը հենց այժմյանից էլ կարելի չէ նախատեսել,— ասաց Մուշեղը:

— Միայն հավանականության վրա հենվելով,— պատասխանեց Մեսրոպը:— Մենք, կրկնում եմ, անճանապարհության պետք է ընտրենք մեզ վորոշ առաջնորդ, իսկ հաջողությունը թողնենք բախտի կամքին:

Սահակ պարթևը ընդհատեց վիճաբանությունը, հարցնելով.

— Այդ «մենք»-ը մի քանի անգամ կրկնվեցավ: Բայց նախքան վորևէ քայլ անելը, չես կարծում եմ, պետք է վորոշել թե ո՛վ ենք մենք:

Տիրեց ընդհատուր լռություն: Հարցը բավական կարևոր էր: Սամվելը առաջ անցավ, խնդրելով.

— Թույլ տվեցեք ինձ խոսել:

— Խոսի՛ր, —ասաց պարթևը:

Նա խորին վոգևորությամբ կանդնեց յուր խորհրդակիցների առջև և, յուր բոցավառ աչքերը դարձնելով դեպի նրանց, խոսեց.

— Ո՞վ ենք «մենք»,— այդ հարցը, իրավ, մի շատ դժվարին հարց է, և նրա վճռելը պետք է լինի գործի սկիզբը:— Ո՞վ ենք «մենք»:— Մենք ամեն ինչ ենք: Իմ պատասխանը դուցե չափազանց հանդուգն կթվի ձեզ, բայց ես կաշխատեմ պարզել իմ միտքը: Մեր աշխարհի կառավարության մեջ տերեք բարձրագույն անձինք առանձնակարգ դեր էին խաղում.— թա-

դավորը, քահանայապետը և սպարապետը: Այդ յերեք դլխավորները այժմ չկան: Թագավորը աքսորված է Մուժիստանի Անհուշ բերդը, սպարապետը աքսորված է դարձյալ նույն բերդը, իսկ քահանայապետը աքսորված է Մկրներկրականի Պատմոս կղզին: Մեր աշխարհը մնացել է դուրկ այդ յերեք մեծ կառավարիչներից, վոր վտանդի ժամանակ կարող եյին թշնամուն դեմ դնել: Իսկ թշնամին մեր դռանը կանգնած է, ներս մտնելու վրա յե: Ո՞վ պետք է ընդդիմանա նրան: Ո՞վ պետք է պաշտպանե հայրենիքը կրակից և արյունից: Ո՞վ պետք է մաքրե պարսկական պղծությունը, վոր սպառնում է արատավորել մեր բոլոր սրբությունները: Արքայական դահը վտանդի մեջ է. յեկեղեցին վտանդի մեջ է. մեր լեզուն, մեր դպրությունը, մեր ավանդությունները, մեր աղդային բոլոր նվիրական ժառանգությունները վտանդի մեջ են: Ո՞վ պետք է պաշտպանե: Կրկնում եմ, թագավորը չկա, քահանայապետը չկա, սպարապետը չկա:— Բայց կան նրանց ներկայացուցիչները, վորոնցից յերկուսը հենց այստեղ լսում են ինձ:

Նա ձեռքը տարավ դեպի Սահակ պարթևը և դեպի Մուշեղը, և շարունակեց.

— Դո՛ւ, Սահակ, քահանայապետի վորդին ես և կարող ես վերաբերնել քո հորը: Իսկ դո՛ւ, Մուշեղ, սպարապետի վորդին ես և կարող ես վերաբերնել քո հորը: Թե՛ քահանայապետությունը, և թե՛ սպարապետությունը մեր աշխարհի սովորությամբ ժառանգական են: Մեկը սեփական և լուսավորչի տանը, մյուսը՝ Մամիկոնյանների տանը: Դրան վոչ վոք կարող և հակառակել: Մնում է թագավորի ներկայացուցիչը: Թագաժառանգը այստեղ չէ, նա պահված է Բյուզանդիայում: Բայց հայոց արիվինը— թագուհին— մեր ձեռքումն է: Նրա անունով կարող ենք ամեն տեսակ հրամաններ տալ: Կազմե՛նք մի ժամանակավոր կառավարություն, անցնե՛նք դործերի գլուխը և սկսենք դեմ դնել թշնամուն: Ցես հավատացած եմ, վոր ժողովուրդը կլսա մեր յեռակից: Նա սկզում է միայն հրամաններ լսել, իսկ յերկար չե մտածում, թե վո՛րտեղից և դալիս հրամանը:— Այժմ, կարծեմ, բավական պարզ է, թե ո՛վ ենք «մենք»...

— Մենք աղատ ժողովուրդ չունենք,— նկատեց Մեսրոպը.— մենք ունենք նախարարներ միայն, վորոնց հետ կապված են ժողովրդի զանազան մասները:

— Բոլորովին ճիշտ է,— պատասխանեց Սամվելը:— Բայց իմ ձեղ ներկայացրած նամակից յերևում է, վոր խոտիվ պատվիրված է՝ կալանավորել բոլոր նախարարներին և վարել նրանց Տիզբոն, իսկ նրանց կանանցը, դավակներին, վորպես դրավական, պահել առանձին բերդերում, ասպետ հսկողության ներքո: Այդ խոսություններից կարող ենք մենք ուղղա քաղել: Վորովհետև այդ կոտիպե նախարարներին, յերե վոչ հայրենիքի պաշտպանության համար, դոնե իրանց անձանց և ընտանիքների պաշտպանության համար, միանալ մեզ հետ և դեմ դնել թշնամուն:

— Շատ հավանական է,— ասաց Մեսրոպը:— Բայց մեր նախարար-

Ներկից վոմանք այնքան յերկչոտ են, բավական և, վոր լսեն Շապուհի պատվերը իրանց մասին, նրանք իսկույն կառնեն իրանց ընտանիքները, կփախչեն դեպի հունաց կողմը, ապահովություն գտնելու համար:

— Այդ կարող և պատահել,— պատասխանեց Սամվելը:— Թշնամին վճիռ և դրել՝ չխնայել վոչ վոքի, ով վոր կընդդիմանա: Իսկ մենք պետք է վճիռ դնենք՝ չխնայել վոչ վոքի, ով վոր խույս կտա: Ցնթե մեր նախարարներից վոմանք այնքան վատ կլինեն, վոր ընդհանուր վտանգի ժամանակ, միայն իրանց անձը և ընտանիքը պահպանելու համար, կփախչեն դեպի ոտար յերկիր,— այդ դեպքում մենք առաջինը կլինենք, վոր նրանց կմատնենք իրանց ամբոցների տյամի վրա...

Սահակ պարթևը և Մուշեղը լուռ լսում էին: Նրանք մի առանձին հրճվանքով էին նայում վոդևորված յերիտասարդի վրա, վոր ներկայանում էր նրանց առջև վորպես մի մարմնացած վրեժխնդրություն: Սամվելը առհասարակ մելամաղձոտ և սակավախոս բնավորություններից էր, բայց յերբ սկսում էր խոսել, խոսում էր յերկար և բավական զեղեցիկ: Նա շարունակեց.

— Ուշադրություն դարձրեք, սիրելիք, իմ ձեզ ներկայացրած նամակի մի այլ կետի վրա, վորտեղ հրամայված է՝ կալանավորել հայոց սիկնորը և ուղարկել Գարսկաստան: Մեր առաջին ջանքը պետք է լինի՝ ապահովել սիկնոջ անձը: Կորցնելով նրան, մենք շատ բան կկորցնենք: Նրա անունով պետք է դործենք մենք, նրա անունով պետք է շարժենք ժողովրդին: Ցես համոզված եմ, վոր տատանվող դահի վտանգը, Թագավոր-մոուսեի կորուստը, Թագաժառանգ-վորդուց զրկվելը, այդ բոլոր դժբախտ պրկածները, ավելի քան մեղանից ամեն մեկին, պետք է դրդեն սիկնորը՝ այժմյան տագնապի մեջ՝ պաշտպան հանդիսանալ Աբշարունյաց կործանվող դահին: Ցեվ նա այնքան քաջություն ունի, վոր կանե այդ:

Մեսրոպը կրկին վեր առնց Վորմիզդուխտի Սամվելին հանձնած նամակը, սկսնց լուռ կարդալ:

Նույն ակնթարթում պատից քաշ եր ընկած Մամիկոնյան վաչկի պատկերը: Իսկ պատկերի ներքև քաշ եր ընկած այդ հերոսի սուրը: Սամվելը, վերջացնելով յուր վոգևրկի ճառը, մի առանձին պատկառանքով մոտեցավ պատկերին, վեր առնց սուրը և, դնելով Սահակ պարթևի առջև, ասաց.

— Այդ սուրը այն քաջի սուրն է, վորի արիական հոգին ուշադրությամբ նայում է մեզ վրա,— նա ձեռքը տարավ դեպի պատկերը:— Քառասուն տարի հազիվ անցել է այն օրից, յերբ պարսից հետ մղած արյունահեղ կռվի մեջ ընկավ այդ քաջը և յուր մահվամբ ամբողջ Հայաստանը սուգի մեջ դրեց: Մամիկոնյան տոհմից վոչ վոք մնաց, վոր ժառանգեր հայոց ազատասիրության պաշտոնը: Ամենքը ընկան նույն կռվի մեջ: Մնաց միայն հանդուգյալի վորդին Արտավազդը, վորը դեռ մանուկ եր և յերեխա: Թագավորը (Խոսրով Բ.) և քո պապ Վրթանես հայրապետը,

Սահակ, բերել տվին մանուկ Արտավազդին Թաղավորական արքունիքը: Այնտեղ էին հայոց նախարարները, այնտեղ եր և հայոց բարձր սպասա-
րին: Թագավորը դրկեց մանուկին, իսկ մեծ հայրապետը վեր առ-
որ սպարապետական պատվանշանը և հանդիսավոր կերպով կապեց վրդու-
ղվին,— վեր առնց և հոր սուրը, որհնելով, կապեց վրդու մեջքին: Հե-
տո հանձնեցին մանուկին Շիրակա իշխան Արշավիր Կամսարականի և Այու-
նյաց Անդովիկ իշխանի (վորոնք յերկուքն էլ Մամիկոնյանների փեսաներ
էին) հոգաբարձությանը, վոր խնամք տանեն, մինչև մեծանա և հոր
սպարապետությունը ժառանգե: Ահա նույն սուրը դրած է քո առջև,
Սահակ, քո պապի բերանով որհնյալ սուրը: Բե՛ղ և վայելում, Սահակ,
վորպես հայոց հայրապետական տան սրբազան ժառանգին, վեր առնել այդ
սուրը և հանձնել իմ հոգեղեր վրդուդ Մուշեղին, հրաժարակելով նրան
հայոց սպարապետ:

Վերջին առաջարկությունը խիստ սրտաշարժ եր: Վեհաղնյա պարթևը
չկարողացավ զսպել յուր արտասուքը: Պատմության տխուր կրկնողությու-
նը նույնն եր, ինչ վոր քառասուն տարի առաջ: Մամիկոնյան Վաչեն սպան-
վեցավ պարսից դեմ մղած կռվի մեջ, և Սահակի պապը—Վրթանես հայ-
րապետը նրա անչափահաս վրդուն սպարապետ հրաժարակեց: Մուշեղի
հայրը— Վասակ սպարապետը— նույնպես սպանված եր պարսից Շապուհ
արքայից: Բայց Մուշեղը դեռ չգիտեր այդ: Նա յուր հորը դեռ կենդանի
յեր համարում և աքսորված յուր թագավորի հետ: Այժմ, ի՞նչպես պետք
եր հայտնել նրան հոր ցավալի մահը և նրա, առանց դրան ևս, վշտերով
ծանրացած սրտի վրա՝ մի նոր և անմխիթար վիշտ ավելացնել: Այդ եր,
վոր չարժեց Սահակի սիրտը: Բայց նա բարվոք համարեց լռել այդ մա-
սին: Որին, ցավակցական ղեպացմունքներով վեր առնց սուրը, արտասա-
նելով հետևյալ խոսքերը.

— Քեզ ինձ բախտավոր եմ համարում, վոր այդ հանդիսավոր բոսե-
լության, յերբ մեր հայրենիքի բախտն է վճռվում, ինձ է վիճակվում այդ
սուրը հանձնել քեզ, Մուշեղ: Դա քո նախահարց փառքն է, իսկ նրանց
արժանավոր ժառանգների՝ պարծանքը: Այո՛, Մամիկոնյան տոհմը իրա-
վունք ունի պարծենալ այդ սրով, վոր մեր աշխարհի ամեն մի ճգնաժամի
ժամանակ պաշտպան և հանդիսացել հայրենիքին: Տրդատի որերում այդ
սուրը ջնջեց Սկիռների քաջ ցեղը, վորոնք ապստամբելով իրանց թա-
գավորի դեմ, անցան Թշնամու կողմը: Տրդատի վրդի Խոսրովի որերում
այդ սուրը փչրեց մեր դարևոր Թշնամի՝ պարսից ղորությունը: Խոսրովի
վրդի Տիրանի որերում այդ սուրը մերկացավ բնիկ թագավորի դեմ, յերբ
նա սկսեց անթաղ կոտորել հայոց նախարարների անչափահաս զավակնե-
րին: Իսկ Տիրանի վրդի Արշակի որերում, վոր մեր այժմյան դժբախտ
թագավորն է, այդ սուրը, Մուշեղ, քո հոր ձեռքում, վոչ սակավ անգամ
խորտակեց Շապուհի ահագին ղորությունները: Նա մնաց միշտ անարատ
և յերբեք վատությունը, յերկչոտությունը բիծ չդրեց նրա վրա: Դրա-

մեջն և Մամիկոնյաններին մեծությունը: Միշտ անաչառ և յեղել այդ սուրբը, քե՛ դեպի ոտարները, և քե՛ դեպի յուր հարազատները: Բո հայրը, Մուշե՛ղ, այդ սրով ազատեց յուր յեղբայր Վարդանին, յերբ նա դավաճանեց հայրենիքին: Արդարությունը, իրավունքը, նեղյալի և տառապյալի պաշտպանությունը միշտ յեղել և այդ սրի բարձր, քաջաղնական դաւիսորը: Բո հայրը, Մուշե՛ղ, ղոհ յեղավ յուր անսահման հայրենասիրությանը... Բո հորը պատռված ցավալի անցքից հետո, քե՛ղ, յերանելի հոր արժանավոր որդուն, քե՛ղ միայն վայել և կրել այդ սուրը և անցնել հայոց զորքերի ղեկավը: Վատնդը մոռ և և տառապյալ հայրենիքի տխուր հառաչանքները կոչում են քեզ, Մուշե՛ղ, ընդունել այդ զենքը, վրեի մեջ պետք և դառն նա յուր վրեժխնդրությանը: Ցավ դու այնքան քաջ ես և անձնանձնվեր, վոր կարդարացնես նրա սրտատրին հուսները...

Խոբին տխրությամբ ընդունեց քաջաղնյա յերիտասարդը նախահարց սուրը, ասելով.

— Ցավ իմ տոհմի մեջ ամենադժբախտն եմ համարում ինձ, ընդունելով այդ սուրը: Իմ նախնիքը ավելի բախտավոր դառնվեցան, նրանք այդ սրով պատերազմեցին ոտարների հետ, իսկ յես պետք և պատերազմեմ իմ հարազատի հետ... Թշնամու զորքերին առաջնորդում և իմ հորեղբայրը... Թո՛ղ որհնյալ լինի նախախնամողի կամքը, Թո՛ղ նա զորությունտա իմ բազուկներին, այդ սրով մաքրել այն արատը, վոր իմ հարազատը պետք և դնե մեր տոհմի վրա...

Սամվելի դեմքը մինչև այդ բոլոն վայելում եր ուրախությունից, բայց լսելով վերջին խոսքերը, մռայլվեցավ նա: Մուշեղի ակնարկությունները վերաբերում էին նրա հորը: Սահակը նկատեց դժբախտ յերիտասարդի հուզմունքը և, դառնալով դեպի նա, հարցրեց.

— Դու միևնույնը չեյի՞ր անի, ինչ վոր ասաց Մուշեղը:

— Ցավ ավելին կանեյի... և կանե՛մ... պատասխանեց Սամվելը դառնությամբ լի ձայնով:

— Ուրեմն ամեն ինչ վերջացած և: Խոսենք գործի վրա:

Վեհաղնյա պարթևը աչք ածեց դեպի յուր խոշհրդակիցները և շարունակեց.

— Սամվելը յուր դեղեցիկ ճառի մեջ շատ ճիշտ նկատեց, վոր մենք պետք և գործենք հայոց ակնկալ անունով և պետք և նրա հրամանով շարժենք թե՛ նախարարներին, և թե՛ ժողովրդին: Այդ անհրաժեշտությունը հարկավոր համարելով, յես, նախքան Տարոն դալը վաղաբշատատում տեսնելա ակնոջ հետ: Նա ավելի քան մեղանից յուրաքանչյուրը՝ ծողովրդած և մեր աշխարհի վրկությանդործով: Նա դրեց մեր իրավունքի ներքո արքայական ամբողջ դանձը և, բացի դրանից, յուր սեփական հարստությունը, և մինչև անդամ յուր զորքերը: Նա հանձնեց ինձ յուր մատանին, իրավունք տալով, ամեն տեսակ հրամաններ կնքել նրանով:

Նա դուրս քերեց յուր ծոցից ոսկինոջ մատանին և դրեց սեղանի վրա, ասելով.

— Ժամանակավոր բարձրագույն կառավարությունը, որ առաջարկեց Սամվելը և որի հետ մենք ամենքս համաձայն ենք, պետք է հենց այս րոպեիցից կազմված համարել: Թո՛ղ Տրդատի և մեր Լուսավորչի հոր մատուռը զորացնի մեր ձեռնարկությունը: Կրոնի, ազգի, հայրենիքի փրկությունը և նրանց պաշտպանության համար ամեն զոհաբերություն հանձն առնելը՝— կլինի մեր կուսակցի նշանաբանը: Ցեղս մեծ հույսեր ունեմ, որ չենք հաղթենք, դոնե պատվով կմեռնենք...

Նա կանգ առեց և րոպեական լռությունից հետո շարունակեց.

— Ցեղս առաքելության պետք է մեկնիմ այստեղից. ինձ հետ պետք է առնեմ և Մեսրոպին: Գիշերը դեռ բոլորովին չէ անցել, դեռ բավական ժամանակ ունենք: Թող Մեսրոպը սկսե դրել հարկավոր հրամանները, որ պետք է հղել նշանավոր նախարարներին: Այդ հրովարտակների վրա կդրվին՝ նախ ոսկինոջ կնիքը և ապա մեր յուրաքանչյուրի կնիքները: Իսկ թե ո՛րտեղ պետք է կենտրոնանան մեր գլխավոր ուժերը,— այդ քո մտածելու խնդիրն է, Մուշեղ. դու ավելի հմուտ ես պատերազմի գործերում:

— Արտաշերես ամրոցում,— պատասխանեց նա:

— Ցեղս էլ նույն կարծիքին եմ,— ասաց պարթևը:— Արարատը, որ մեր աշխարհի սիրտն է, պետք է պաշտպանվի: Կորցնելով սիրտը, կկորցնենք և կյանքը...

— Սկսի՛ր դրել, Մեսրոպ,— դարձավ նա դեպի քարտուղարը, տալով նրան մի քանի առաջնակարգ նախարարների անուններ:

Մեսրոպը վեր առեց դրիչը և մագաղաթը:

Այդ միջոցին ամրոցում մի այլ տեղ նույնպես գնած չկային: Ցուր առանձնասենյակում, բարձր բազմոցի վրա, նստած եր Սամվելի մայրը, իսկ նրա ներքև, հատակի վրա, կուչ եր եկած մի փոքրիկ մարդ: Նա յուր ծնկան վրա դրած ուներ մագաղաթի թերթը, նույնպես դրում եր. և յերբեմն յուր նիհար դեմքը, նեղ աչքերով, դարձնում եր դեպի տիկինը, հարցնելով.

— Եվ ի՞նչ դրեմ...

Ցերբ վերջացրեց, յերկու նամակներ դրեց ոսկինոջ առջև, ասելով.

— Այդ մեկը իշխան Մերուժանի նամակն է, իսկ մյուսը՝ իմ ոսկրոջ՝ Վահան իշխանի նամակն է:

Տիկինը յուր ձեռքով ծրարեց ամուսնի նամակը:

ԿՆՈՋ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մյուս որը, չնայելով անձրևային խոնավ յեղանակին, Սահակ պարթևը և Մեսրոպը վաղ առավոտյան ներկայացան ոսկին Մամիկոնյանին և, «Մնաք բարյավ» ասելով, հեռացան Վաղարշ ամրոցից: Տիկնոջ [illegible]

խանձանքը, մինչև անգամ արտասուքը, անզոր չեղան դառնե մի որով ա-վել պահելու յուր համառ հյուրերին, վորպեսզի ինքը փոքր ի շատե մի-ջոց ունենար ապացուցանելու յուր զբաղեցմունքյան և հյուրասիրության խորին մնծարանքը:

Սամվելը դնաց նրանց ճանապարհ դնելու մինչև մեծաձիա իջևանը: Նա պետք է վերադառնար յերեկոյան:

Սահակի և Մեսրոպի գնալուց հետո, իշխան Մուշեղը մտածում եր փոքր ի շատե կարդի դնել յուր ընտանեկան գործերը, վորովհետև նա ևս մի քանի որից հետո պետք է թողներ Վողական ամրոցը: Բոլոր ժա-մանակը նա յուր խելքով, յուր մտքով և յուր հոգու ամբողջ յեռանդով հափշտակված լինելով միայն հայրենիքի գործերով, բոլորովին մոռացել եր յուր տունը: Այժմ միայն ներկայացավ նրան մի նոր հոգս և մի նոր պատմունք: Սպարապետի և զորավարի ինքնագոհությունը մաքառում եր նրա մեջ՝ ամուսնի և ընտանիքի հոր զգացմունքների հետ: Նա պետք է դնար: Վո՞ւր դիտե, դուցե այլ ևս չվերադառնար... Բայց ի՞նչ կլիներ յուր բացակայության ժամանակ անպաշտպան ընտանիքի դրությունը: Ո՞ւմ հանձներ, ո՞ւմ խնամակալության ապավիներ: Նա պետք է դնար Թշնա-մու հետ զորկվելու: Բայց զվխավոր Թշնամին հենց յուր տան մեջն եր: Նա տարակույս չուներ, վոր յերբ կսկսվեր պատերազմի փոթորիկը, հենց ինքը, Սամվելի մայրը, կհանձներ նրա զավակներին, նրա կնոջը պարսից զինվորների ձեռքը, և նրանց կառանչին և, երբև գրավական՝ կպահեյին, հորը զինաթափ անելու համար:

Ապագան յուր բոլոր սարսափանքով ներկայանում եր նրա աչքում: Նրան չատ հասկանալի յեր պարսից արքունիքի խորամանկ կարգադրու-թյունը, վորով խոսիվ պատվիրված եր՝ կայանավորել հայոց նշանավոր նախարարների ընտանիքները և պահել առանձին բերդերում: Ցնվ այդ պետք է իրագործվեր Մեսրոժանի և Սամվելի հոր ձեռքով: Նպատակը պարզ եր: Նրանք լավ հաշվել եյին, թե հայրերը բանակումը կլինեն, իսկ ընտանիքները տանը Թողած: Կալանավորելով ընտանիքները, նրանց յեր-կյուղով կառնձահարեն ծնողներին, զգալ տալով, թե ամեն մի հակառակ քայլ կարող եր նրանց զավակների և կանանց կյանքը վտանգի յենթարկել:

Վո՞րքան ավելի ուշադրության պետք է դարձնեյին Մուշեղի, վորպես հայոց սպարապետի, ընտանիքի վրա: Այդ մտատանջությունների մեջ տա-տանվում եր նա, յերբ սենյակի դռները բացվեցան, ներս մտավ մի ման-կահասակ կին, իսկ նրա յետևից աղախինը, վոր գրկում բռնած ուներ մի կլորիկ յերեխա:

— «Այո՛ւ... «այո՛ւ... լսելի յեղավ յերեխայի Թոթովանքը և նա, հեռվից փոքրիկ ձեռնիկները վեր բարձրացնելով, վազուներց հոր առավոտը:

Հայրը մոտեցավ, աղախնի գրկից առեց զավակին, սեղմեց յուր կուրծ-քին վրա:

Ամբողջ դիշերը անցկացրած լինելով Սահակի, Մեսրոպի և Սամվելի հետ, նա յուր կնոջը չէր տեսել։ Կինը ցանկել էր առանելու ամուսնին։

Ցերեխան դրկում իշխանը տեսավ, նստեց թավմոցի վրա, իսկ կինը կանգնած մնաց նրանց հանդեպ և, խորին զմայլմունքով նայում էր հոր խաղերին յուր զավակի հետ։ Նա յերբեմն մատը դնելցնում էր ուրախ մանուկի լեզը Թշերին, և ամեն անգամ կանչռտում էր, ծիծաղում էր նա, և այդ հրեշտակային ծիծաղի միջոցին նրա վոգբրկի բերանը Թաղչում էր դեղդ Թշերի ալիքների մեջ։

— Ցերկվանից զարմայալ մի նոր բան և սովորել,— հաղորդեց մայրը ուրախությամբ։

— Իմ դաստուկը մի՛շտ նոր բան և սովորում, մի՛շտ նոր բան և սովորում,— ձայն տվեց հայրը և վայելեց նրա խարտյաշ դանդուրները։

— Ի՞նչ և սովորել։

Մայրը զարմալ դեղի աղախինը, վորը մոտեցավ, չոքեց վոգբրկի Մուշեղի առջև, ցույց տալու նրա նոր ոյինրագործությունը։ Նա ձեռքը դրեց յերեսին, գլուխը մի կողմ Թեքեց և, աչքերը խփելով, ասաց.

— Մուշեղ, նա՛–նե՛նք։

Ցերեխան նույնպես աչքերը խփեց, գլուխը դրեց հոր կուրծքի վրա, և ձևացրեց, իբր Թե քնում է։ Բայց յերկար համբերել չկարողացավ, շուտով սկսեց ծիծաղել և աչքերը բաց արավ։

— Ա՛յ, սատանա.— նկատեց հայրը, սեղմելով նրան յուր դրկի մեջ,— նա քեզ և խաբում, դու նրան ես խաբում։

Ցերեխան, կարծես, վիրավորվելով հոր նկատողությունից, մի ձայնիկ վոստյուն դործեց նրա դրկում և յերկու ձեռիկները մեկնեց դեպի մայրը։

Մայրը առեց նրան յուր դիրկը, հեդնելով.

— Դու յերեխային դրավելու շնորհք չունես։

— Ջանձրացավ ինձանից... ասաց հայրը և նրա ուրախ դեմքի վրա անցավ սխրության մեքին մռայլը։

Կինը նկատեց այդ։

Բայց զվարճասեր յերեխան մոր դրկում ևս ձանձրացավ, սկսեց Թրչկոտել դեպի աղախինը և նրան դեպի ինքը հրապուրելու ցույցեր անել։ Աղախինը մոտեցավ։ Մայրը յերեխային հանձնեց նրան, ասելով.

— Դուրս տար դրան։

Այժմ հանդիստ եր նա, այժմ յուր ընտելացած դրկումն եր։ Նախանձկոտ հայրիկից լսելի յեղավ նրա վերջին «այո՛»–«այո՛»ն,— նրա մանկական մնաք բարյավը, վոր շարժեց հոր բոլոր սրտաբին դղրդմունքները։ Նրա դեմքը ավելի մռայլվեցավ։

Ցերբ յերկու ամուսինները մնացին միայնակ, կինը մի առանձին իրեկցությամբ նայեց յուր սիրելի յերեսին, հարցնելով.

— Դու այս առավոտ սառնիկ դունաթաի ես, յերևի, ամբողջ դիշերը չես քնել:

— Ի՞նչ դիտես, վոր չեմ քնել,— հարցրեց Իշխանը:

— Դիշերը մի քանի անգամ դուրս յեկա, նայեցի լուսամուտներին, ճրագը դեռ վառվում ես: Դու սովորություն չունես քնելու ժամանակ ճրագը վառ թողնել:

— Ուրեմն դո՞ւ ել չես քնել:

Մի քաղցր ժպիտ յեղավ Մուշեղի պատասխանը: Այդ ժպիտը այրեց նրա սիրտը: Մի դիշեր մեկն նա մեկնակ եր թողել սիրելի կնոջը, և նա անհանդիստ եր յեղել, չեր կարողացել քնել: Բայց յեթե յերկար, շատ յերկար բաժանվելո՞ւ լիներ նրանից...

Տիկինը նոտից նրա մոտ և ձեռքը առեց յուր ալեների մեջ: Նա դարձյալ դիմեց ամուսնին առաջին հարցով, վորի մասին բավականացուցիչ պատասխան չստացավ:

— Ի՞նչ և պատահել քեզ հետ, ինչո՞ւ հանկարծ տխրեցիր:

Ի՞նչպես բացատրել, թե ի՞նչ եր պատահել: Շատ բան եր պատահել: Ցնվ շատ բաներ ևս պատահելու եյին... Արդյոք կնոջ քնքուշ սիրտը այնքան ամրություն կունենա՞ր լսելու:

Մուշեղը սկսեց ավելի մեղմ կերպով.

— Տեսնո՞ւմ ես, Սաթենի՛կ, մի դիշեր մեկն բաժանվեցա քեզանից և դու անհանդիստ յեղար, բայց յեթե պատահեր յերկա՞ր բաժանվել քեզանից:

— Ցնա ավելի յերկար կտանջվեյի,— պատասխանեց կինը:

— Ցնվ դու կհամբերեյի՞ր մեր անջատմանը:

— Կսովորեյի համբերել, յեթե այդ անհրաժեշտ լիներ:

— Ի՞նչ դեպքերում դու անհրաժեշտ կհամարեյիր:

— Այն դեպքերում, վոր շատ անգամ պատահել ե. օրինակ, յեթե դու կռվելու դնայիր:

— Շուտով դնալու յեմ...

Կինը չեր սպասում մի այդպիսի պատասխանի: Նա պատրաստ եր հետ առնել յուր խոսքը, բայց արդեն ուշ եր: Նա յուր համաձայնություն հայտնեց, առանց կանխատես լինելու ամուսնի դիտավորությունը: Ցնվ մի մեծ բան կորցնողի նման, դլուխը խոնարհեցրած, արտասվալի աչքերով հածում եր հատակի նախշուն դորդերի վրա, թեև յուր կորցրածը դտնելու հույսից շատ հեռու յեր: Կնոջ այդ մոլորված, չվարված դրությունը սաստիկ ազդեց Մուշեղի վրա, վորին առաջին անգամ եր պատահում տեսնել դեռահաս ամուսնի սրտի քաջությունը: Նա դարձավ դնալ յուր սիրելին, ասելով.

— Սաթենի՛կ, շուտով կտեսվեցար, յես քեզ այդ առումնան Թուլասիրտ չեյի համարում:

— Ցնա Թուլասիրտ յեմ,— պատասխանեց նա հեկեկալով:— Բայց ի՞նչ

անեմ... յերեք տարին դու չե լրացել, վոր մենք ամուսնացել ենք, և այն որից, վոր յես այս տունն եմ մտել, քեզ մի որ անդամ հանգիստ չեմ տեսել... Դու միշտ քո նեստորով ես սրբել քո ճակատի քրտինքը... Մի՛շտ կռիվ... մի՛շտ արյուն... մի՛շտ կոտորած... Ճե՞րբ պետք է վերջ դրվի այդ արյունհեղությաններին...

— Ցերե՛կ,— պատասխանեց այրը ղռռալի ձայնով,— քանի վոր մարդկային իրավունքը միայն սրով կչափվի...

Կինը վոչինչ չխոսեց: Նա գլուխը դնում խոնարհեցրած ուներ և, կարծես, սարսափում եր նայել ամուսնի զայրացած աչքերի մեջ:

Նա չարունակեց ավելի մեղմ ձայնով.

— Ի՞նչ կանեիր դու, նաղելի Սաթենիկ, յերբ մի առավոտ, քո վաղուկ անկողնում, քո խաղաղ քունը կխռովեցներ կատաղի խուժանի վայրենի աղմուկը, և դու դեղնիկ աչքերդ բաց կանեիր, կտեսնեիր քո սիրական առաղաստը չրջապատված դաղաններով... Քո սիրելի Մուշեղին, վորի յուրաքանչյուր ժպիտը այնքան քաղցր և քեզ համար, վորի յուրաքանչյուր մեչյունը անսահման ուրախություն ե պատճառում քեզ,— քո սրտի հատորին կխլեին որորոցից և կզարկեին գետնին... Քո ծնած վոտավոր սենյակը կմերկացնեին յուր զարդերից, և քեզ վոտաբոբիկ ու հերյակաձակ կվարեին դեպի Պարսկաստան... Այնտե՛ղ, այն ոտքուկների և քըչվառների աշխարհում, ամեն որ վաղ առավոտյան, անդութ վերակացուի յերկաթյա մտրակը կգչեր քեզ՝ ուրիշ գերիների խումբերի հետ՝ դեպի արևահող Սուդայի դաշտերը: Եվ դու քո քնքուշ մատներով քաշհան կանեիր պարսիկների մեկոնի (ափիոնի) մշակությունները, վորի թույնը նրանց հրապուրանք և դիարճություն ե պատճառում: Կանցնեի՛ն տարիներ, հայրենիքի վսեմագը, սկրեչյաց կարոտը, տաժանակիր աշխատանքը, հալումաշ կանեին քո մարմինն ու հոգին, և մի որ մենավոր ճանապարհորդի կանցներ քո մոտով և ուշադրություն կդարձներ թշվառ կինդ վրա: Այդ ժամանակ քո դուռը վերակացուն, մատը դեպի քեզ մեկնելով, կասեր ուղևորին. «Դա հայոց սպարապետի կինն և և Մոկաց իշխանի աղջիկը»...

— Լսո՞ւմ ես, Սաթենիկ, թե ինչո՞ւ համար և կռիվը կամ ինչո՞ւ համար և արյունը,— վոր դրանք չլինեին:

Սաթենիկի մեջ յեկավ մոկացու արյունը. նրա յերևնակություն աչքերը վառվեցան և նա բացականչեց խռովյալ ձայնով.

— Այդ յերբե՛ք չե կարող պատահել, վոր իմ յերեխային խլեին ոտորոցից... Մինչև այդ կատարվելը շատ դիակներ կծածկեին գետինը, իսկ իմը—կլիներ վերջինը...

— Կարող և պատահել, նաղելի Սաթենիկ,— ասաց այրը տխուր ձայնով,— դժբախտության որը շատ մոտ և... Դու դեռ չգիտես, թե ի՛նչ աշխատիքը և պատրաստվում մեր աշխարհի համար... Ցեղ այս առավոտ հենց դրա վրա եյի մտածում, յերբ դու մտար ինձ մոտ: Դու պետք

և պիտենաս բոլորը, վորպեսզի միասին խորհենք մեր ընտանիքի ապահովության մասին։

Նա մի ըսա միջոց պատմեց հինգը Մերուժանի և Վահանի ուրացությունը, նրանց պարսից կրոնը ընդունելը և պարսից դորքերով դնալը Հայաստան արշավելը, նրանց կատարելու չարագործություններ, մի խոսքով, բոլորը, ինչ վոր դիտեր ինքը և ինչ վոր հարկավոր եր համարում, վոր դիտենար կինը։

— Ամո՛թ, հազար ամո՛թ,— ձայն ավեց վշտացած կինը։ Բավական չեիր արտաքին թշնամիները, այժմ թշնամին մեր միջից և առաջ դալիս...

— Այո՛, մեր միջից և առաջ դալիս... կրկնեց Մուշեղը, դլուխը ցավակցաբար շարժելով,— և այդ պատճառով մենք, միևնույն ժամանակ, պետք և մղենք յերկու պատերազմներ՝ արտաքին և ընտանեկան։ Արտաքին թշնամին, մեր դարեվոր վոսոխը, պարսիկը, այնքան վտանգ չե ապատնում, վորքան ընտանեկան թշնամին։ Իմ հորեղբայր Վահանը այնքան վատ դանվեցավ, վոր իմ հոր ապարանատուիքյանը հետամուտ լինելով, մտանից նրան պարսից թագավորի ձեռքը, և յուր հարստահարությամբ դնով ստացավ նրա իշխանությունը։ Այժմ դալիս և նա։ Ցնս տարակուսյս չունիմ, վոր այդ փոքրահոդին, պարսիկներին ավելի մեծ ծառայություն անելու համար, հենց ինքը կմատնե ինձ, քեղ և մեր բոլորին նրանց ձեռքը...

— Այդ բոլորը կմանո՞ւմ և Սամվելը,— հարցրեց կինը։

— Իմանում և,— ասաց այրը։

— Ա՜խ, ես տղա, հիմա վո՛րքան տանջվելիս կլինի... Ցնս առավոտյան իմ սենյակի լուսամուտից տեսա նրան, յերբ դնում եր Սահակին և Մեհրոսին ճանապարհ դնելու։ Ցերեսին դուն չեր մնացել, այնքան տխուր եր, այնքան մաշվել եր, կարծես, ամիսներով հիվանդ պառկած լիներ։ Այդ մի քանի որվա մեջ նա այնքան մաշվեցավ...

— Նա առատիկ զղայուն սիրտ ունի։ Ամեն մի վատություն նրան ցավ և պատճառում։

— Նա ինչ և մտադիր անելու։

— Այն, ինչ վոր մենք... պատասխանեց այրը անորոշ կերպով, և տյուր խոսքը փոխեց, ասելով.

— Դու այժմ բոլորը դիտես, սիրելի Սաթենիկ։ Ցնս յերկու որից հետո պետք և ճանապարհ ընկնենք։ Մենք պետք և աշխատենք չարությունը հենց յուր ծագման մեջ խեղդել։ Այսինքն, կամենում եմ ասել՝ դեռ թշնամին մեր յերկիրը չմտած, նրա ճանապարհը փակել։ Բայց իմ մտատանջությունը քո և իմ զավակի մասին և, թե ինչ կլինի ձեր դրությունը իմ բացակայության ժամանակ։ Դու լավ լսեցիր, թե ինչ վորոշումներ և պատրաստում Սամվելի մայրը։

— Լսեցի... Նա հին չէ, նա մի հրե՛շ է... ասաց Սաթենիկը դառնացած ձայնով:

— Այո՛, հրե՛շ է... Նրա շնորհիվ մեր ամբողջը այժմ մի հրաբուխի վրա չի հանդչում, որ ամեն րոպե պայթելու վրա է... Ճիվ այդ է, որ ինձ մոածել է տալիս՝ ձեր կյանքը փոքր ի շատե ապահով վիճակի մեջ դնել, մինչև պատերազմի փոթորիկը անցնելը: Բայց չեմ դժվարանում մի ապահով տեղ գտնել:

— Ամենաապահով տեղը հիմի մեզ համար—բանակը,— պատասխանեց հինը հանդիստ կերպով:

Հինգ պատասխանը՝ թե՛ յուր ուշիմությամբ, և թե՛ յուր այրական ներշնչմամբ՝ և՛ զարմացրեց Մուշեղին, և՛ ուրախացրեց նրան: Այդ պատասխանի մեջ տեսնում էր նա մոկացի հինգ քաջազնական սիրտը:

Այդ պատասխանը հարևանցորեն կամ անպատրաստից ասված չէր, այլ նա խորին կերպով մոածված էր: Ճերբ Մուշեղը նկարագրեց նրան գործերի անմխիթար դրությունը, խնդուն ծագեց նրա դիմում այդ միտքը, որը ավելի պարզելու համար, ավելացրեց նա.

— Դու պատմեցիր ինձ, Մուշեղ, որ Մերուժանը և քո հորեղբայրը պետք է աշխատեն ձերբակալել բոլոր նախարարների ընտանիքներին, վրոնց հետ, անտարակույս, և մեղ: Այդ դեպքում, թե՛ մեղ համար, և թե՛ բոլոր նախարարների կանանց համար՝ ավելի հարմար է՝ բանակի մեջ ապաստան դտնել: Մենք մեր որորոցներով կերթինք բանակի հետ և մեր ձեռքով կդարմանենք մեր ամուսինների վերքերը...

Հինգ ասած խորհուրդը Մուշեղին շատ նպատակահարմար երևաց: Ուրիշ հնար չկար. պետք է այդպես լիներ: Նախարարները իրանց բոլոր ուժերը կենտրոնացնելով Թշնամու դեմ, նրանց ամրոցները— նրանց ընտանիքների ապաստարանները— հեռևապես պետք է մնային անպաշտպան: Իսկ Թշնամին ամեն հնարք գործ կդներ՝ դրավելու ամրոցները: Իսկ յերթե նրանք միայն իրանց ամրոցները պաշտպաններին, այն ժամանակ պետք է առանձնանային, պետք է ընդհանուր գործությունը ջլատվեր, և յերկրի սահմանները պետք է մնային բաց Թշնամու առջև:

Բայց այժմ ներկայանում էր մի այլ անհարմարություն: Ինքը Մուշեղը յերկու որից հետո պետք է թողներ յուր ամրոցը: Ճերթե նա ընտանիքը յուր հետ տանելու լիներ, դրանով արդեն բացարձակ կերպով պետք է ցույց տար յուր դիտավորությունները, վոր ցանկանում էր դոնե առժամանակ ծածուկ պահել: Բացի դրանից, նրա վրա դրված էր և յուր մյուս հորեղբայրների և հորեղբոր վորդոց ընտանյաց պաշտպանության հոգսը, վորոնց նա յուր զավակից չէր բաժանում:

Նա կրկին դիմեց հինգ խորհրդին:

— Մենք սովորություն ունեցինք,— ասաց հինը փոքր ինչ մտածելուց հետո,— ամեն տարի ներկա դտնվել Շահապիվանի աշխարհախումբ տոնախմբությանը: Ճեվ շատ անգամ դնում եյինք տոնի սկսվելուց մի քանի

ամբա առաջ: Այնտեղ եր լինում Թադավորի բանակատեղը, այնտեղ եր լինում և ինքը Թադավորը: Մենք մեսին եյինք վայելում Ծաղկաց լեռների գեղեցկությունը, մինչև սկսվում եր առը: Այժմ այդ ուխտագնացությունը մի հարմար առիթ և մեղ այստեղից հեռանալու: Դու, Մուշեղ, կարող ես գնալ, ինչպես վճռել ես, յերկու որից հետո, իսկ մենք կհետևենք քեղ մի շաբաթից հետո:

— Շատ գեղեցիկ միտք է,— ասաց Մուշեղը ուրախանալով:— Շահապիվանի սրբավայրերը շատ հեռու չեն Արտաշերես ամրոցից, իսկ մեր բանակը գրված կլինի այնտեղ...

— «Այո՛ւ... Այո՛ւ... լսելի յեղավ նախասենյակից փոքրիկ Մուշեղի ձայնը:

Այլ և ինոջ խորհրդակցությունը ընդհատվեցավ:

Աղախինը ներս բերնց յերեխային, ասելով, Թե գրասումը չե հանգրստանում: Մայրը առեց նրան յուր գիրկը: Փոքրիկ մարդը, վոր ինքն եր գլխավորապես ծնողաց մտածության առարկան, ինքն ևս խանգարում եր նրանց մի վորոշ յեղրակացության հասնելու:

Տիկինը ակնարկեց աղախնին, վոր հեռանա:

Ներեխան, առգալով մոր գրկից, անցավ հոր գիրկը: Նա բարձրացավ գլրկի վրանները վրա և ձեռքը մեկնեց դեպի հոր յերեսը, խաղում եր նրա փոքրիկ մորուքի հետ, յերբեմն քաշքշում եր, յերբեմն մատները տանում եր դեպի նրա շրթունքները:

— Շահապիվանի սրբավայրը,— կրկնեց Մուշեղը, ամենահարմար տեղն է, վոր դու հիշեցրիր ինձ, սիրելի Սաթենիկ: Այնտեղ դու կգտնես, յերթ վոչ մեր դժբախտ Թադավորին, բայց անտարակույս, մեր ավելի դժբախտ Թադուհուն: Ո՛ր ներկայությունը կմխիթարե նրան: Այնտեղ և այժմ արքայական ամբողջ բանակը: Ցեղ Թադուհու զորքերը այնտեղից գնաց և մեսանան մեր ուժերի հետ, վոր հենապահանալու յեն Արտաշերես ամրոցում: Ուրեմն վճռված է:

Հայրը դեռ չեր վերջացրել յուր խոսքը, յերբ փոքրիկ Մուշեղը յերկու անգամ փրոթիկաց և յուր բարեղուշակ փրոթիկալով ինքից վերջին վճիռը...

ՊԱՏԱՆԻ ԱՐՏԱՎԱԶԴԸ

Ցերեկոյան մութը բոլորովին պատել եր, բայց Համվելը դեռ չեր վերադարձել Սահակին և Մեսրոպին ճանապարհ դնելուց: Նրա սենյակում, մի յնդակ նստած, սպասում եր Ծերունի Աբրահամը, իսկ սենյակի դռանը՝ յոտքի վրա սպասում եր պատանի Հուսիկը: Ցերեկուան եղ կորցրել եյին իրանց համբերությունը: Իշխանը ուշացավ, բավական ուշացավ:

Ծերունին մի քանի անգամ վեր կացավ, ուղղեց ձիթային ճրագի պատրույգը, լույսը ավելացրեց, լույսը պակասացրեց, բայց այդ պարապմունքը բավական չեղավ նրան զբաղեցնելու, և ձանձրույթից սկսեց անկյուններում դրած նիզակներն ու զենքերը համբարել։ Այդ հավիվը, կարելի չէ ասել, նա հարյուր անգամ տեսել էր, բայց դարձյալ նորից ստուգում էր։

Գատանի Հուսիկը յերբեմն ներս էր մտնում, մի վոր և է հիմարություն էր ասում Ծերունուն, բարկացնում էր նրան, և դուրս էր գալիս։

Բայց իշխանը դեռ չերևաց։

Կրկին հայտնվեցավ Հուսիկը և, կանդնելով Ծերունու առջև, յերկու ձեռքերը կանթեց կողքերի վրա, և մի առանձին հեղնությամբ ասաց.

— Գիտե՞ս, Աբրահ, ղազումը ի՛նչ ունա։

— Ի՞նչ ունաբ, սատանա,— հարցրեց Ծերունին, յուր խոժոռ աչքերը ուղղելով դեպի պատանու խորամանկ յերեսը։

— Տեսա՝ մեկը մի քանի անգամ անցավ իմ մոտով։ Ճես կուչ յեկա պատի տակին, նա ինձ չտեսավ, և պատյա տալով անցավ։ Նա պրատում էր մեր սենյակների շուրջը և անդադար նայում էր դեպի այս կողմ և դեպի այն կողմ։ Ճերբեմն մոտենում էր, կանգնում էր լուսամուտի ներքև, ականջ էր դնում։ Ճեվ վորպեսզի չնկատեն նրան, նա հեռանում էր և նորից մոտենում էր։ Ճերբ մի անգամ ևս հեռացավ, յես վազեցի դեպի խոհանոցը, այնտեղից վեր առի մի բավական խոշոր վայրի կոճղ, բերեցի, դրեցի ուղիղ այն դռի, վրա, վորտեղից նա մոտենում էր լուսամուտին։ Ճերբ կրկին անգամ յեկավ նա, վոտը դիպավ կոճղին և մի լավ դլուխկոնծի ավեց բակի սալերի վրա։ Ել չեմ խմանում, դլուխը կոտրեց, թե քիթը, բայց մի խոր «ա՛խ»— «վա՛յ» դոչեց և կպդկղալով հեռացավ։

— Ջիմացա՞ր ով էր։

— Ինչպես չիմացա, ներքինի Բադրան էր, սիկնոջ ներքինին։

— Այդ անպիտանին սպանելու յես... շան նման սատկեցնելու յես... մռմռաց Ծերունին զայրացած ձայնով։

— Նա յուր վարձը ստացավ... պատասխանեց պատանին և դարձյալ դուրս յեկավ սենյակից։

Ծերունին մնաց միայնակ։ Տխո՛ւր էր նա, տխո՛ւր վորպես արդար սրտմտություն։ Ամբողջ կես դար վկա յեր յեղել նա այդ տան լավ և վատ դործերին, տեսել էր նրա չարն ու բարին, ուրախացել էր նրա բախտավորության հետ, ցավացել էր նրա դժբախտությունների հետ,— բայց յերբեք նրա սիրտը այնպես դառնացած չէր յեղել, վորպես այդ վերջին րոպեում։ Նրան դեռ ևս բոլորովին պարդ չէր, թե ինչ է կատարվում յուր շուրջը, բայց մի խուլ, ներքին բնազդմամբ դդում էր, վոր լավ բան չի կատարվում։ Մոր լրտեսները չրջապատում են վորդու բնակարանը... վորդին մորից ծածուկ դործեր է կատարում... դիշերներն անծանոթ անձինք

մանում են տէրտոջը, դաւրս են դալիս... մարդիկ միմեանց ականջին են խոսում... Ի՞նչ կրնէ նշանակում այդ բոլոր կասկածոտութիւնները: Ծերունին ինքն իրան հարց կը տալիս, բայց նրա պարզ և անկեղծ սիրտը մնում կը առանց պատասխանի:

Այդ մտահոգութեան մէջ նստած կը նա և խոժոռ դէմքով սպասում կը, մինչև նախասենեակում լսելի կեղան ծանր վոտնաձայներ, դռները հետ գնացին, ներս մտավ Սամվելը, իսկ նրա յետևից՝ նրա յերկու ընկերները, վոր կանդնեցին դռան աջ և ձախ կողմերում:

— Բարի յերեկո, սիրելի Աբրահամ,— ասաց նա ուրախ ձայնով և մոտեցավ, ձեռքը դրեց ծերունու ուսի վրա, հարցնելով.— Ցերեկի, յերկար սպասե՞լ ստիպեցի քեզ:

Ցերեսատարդի ուրախ արտայայտութիւնը փոքր ինչ վանեց ծերունու թախծութիւնները և նա, ծանրացած դլուխը վեր բարձրացնելով, հարցրեց.

— Ինչո՞ւ այդքան ուշացար:

— Հնձող չէի բաբեհամներից ու սիրելիներից չուտով բաժանվելը, հարկավ Աբրահամ,— հերանք, խմեցինք համբուրվեցանք, բաժանվեցանք, դարձյալ մոտեցանք, դարձյալ համբուրվեցանք, և այդպես, կրկնելով ու կրկնելով, արևը մտացրինք, որը մաշեցինք...

Նա դարձավ դեպի պինակիները և ձեռքը շարժեց:

Երանք դլուխ ավին և հետացան: Ներս մտավ Հուսիկը, կանդնեց նրանց մեկի առջև:

— Հիմա ասա՛, Աբրահամ, մորս մոտ յեղե՞լ ես,— հարցրեց նա և անցավ, հոդնած կերպով պառկեց յուր դահավորակի վրա:

— Ցեղել եմ,— պատասխանեց ծերունին,— յերկու անդամ:

— Վոչ, յերեք անդամ,— ընդմիջելով ուղղեց Հուսիկը:

— Հա՛ մեղա ասասածո, յերեք անդամ,— շարունակեց ծերունին, ծուռ կերպով նայելով պատանու յերեսին.— մեկ անդամ առավոտյան, մեկ անդամ կեսորին...

— Մեկ անդամ էլ յերեկոյան, ծիծաղելով ավելացրեց Սամվելը:

— Հա՛, մեկ անդամ էլ յերեկոյան, կրկնեց ծերունին, զարմանալով, թե ի՞նչ էր ծիծաղելու բան կար այդ հաշվի մեջ:

Սամվելը փոքր ինչ համած եր, յերեք վոչ, նա յերբեք սովորություն չուներ կատակներ անել յուր դայակի հետ, վորին չափազանց հարգում եր: Նկատելով ծերունու վշտանալը, փոխեց նա յուր հեղնական յեղանակը և բոլորովին լուրջ կերպով հարցրեց.

— Ուրեմն յեղել ես մորս մոտ: Դե՛, պատմիր, ի՞նչ պատրաստություններ և տեսել իմ ճանապարհորդության համար; Ցես առավոտյան պետք և գնամ, անպատճառ պետք և գնամ...

— Մորդ ցանկությունն էլ հենց այդ է, վոր առավոտյան գնաս,— պատասխանեց ծերունին և, վեր հենալով յուր տեղից, մոտեցավ յերիտա-

սարդի գահավորակին, նստեց նրա ներքև դորդի վրա, վորպեսզի յուր ձայնը ավելի լսելի լինի։— Նա ամեն ինչ պատրաստել է տվել քո հանգստարհոդության համար։ Հինուն յերիտասարդները, միաբուռն-կապուտակ նժույգների վրա նստած, ամենքը արծաթյա դեն ու զարդով, կուղեկցեն քեզ։ Տասն դուդ մուդ-դեղնագույն ջորիներ կտանեն վրաններդը, պաշարեղենը և հանդերձեղենի ջամադանները։ Ցերկու սպիտակ ջորիներ կտանեն իշխանական կառքը։ Քսան վոսկեգույն նժույգներ պատրաստ կլինեն իբրև հետևակներ։ Այդ նժույգների փառավոր ասպազենքը տիկինը յուր գանձարանից է ընտրել։ Բացի հինուն յերիտասարդ թիկնապահներից, քեզ հետ կլինեն յոթն զինակիրներ, յոթն բազեակիրներ, յոթն բարձակապահներ (շնապահներ) և յերկու խոհարար։ Գինին, զանազան տեսակ ուշաբակները, զանազան տեսակ քաղցրավենիք և անուշեղեններ, իրանց կարգով, դարսած են առանձին արկղների մեջ։ Մոռացա ասել, վոր հինուն թիկնապահների թվում կլինի և մի սպա, վոր կտանե իշխանական դրոշը, և մի խումբ թմբկահարներ ու փողհարներ։

Այդ հաշվի մեջ Աբրահը չխալվեցավ, վորովհետև յերբեմն նայում էր մի դրվածքի կտորի վրա, վոր ձեռքումը բռնած ուներ։ Յերբ ավարտեց, Սամվելը նկատեց.

— Բավական փառավոր պատրաստություն է, միայն խի՛ստ ծանր է... Ցեռ կցանկայի, վորքան կարելի յե, թեթև լիներ իմ ասպահումբը...

— Մայրդ ցանկացել է, վոր քո հոր և քո անունին պատշաճ լինի քո ասպահումբը...— պատասխանեց Ծերունին մի այնպիսի ձայնով, վորի մեջ լսվում էր և նրա դառն տհաճություն։

— Իսկ իմ մարդիկներից ո՞ւմն է նշանակել։

— Վոչ վոքի։ Այդ թողել է քո հմտքին, ումը կամենաս, կարող ես վեր առնել քեզ հետ։

— Իսկ դու, սիրելի Աբրահ, չի՞ս գալու ինձ հետ։

— Աբրահը քեզ յի՛րբ է և միայնակ թողել, վոր այժմ թողնե։ Նրա դլուխը պետք է այդ շեմքի տակ թաղվի։

Նա ձեռքը տարավ դեպի Սամվելի սենյակի շեմքը։

Պատանի Հուսիկը կանգնած էր պատի մոտ և յուր վայրկյան աչքերով յերբեմն նայում էր յուր տիրոջ վրա և յերբեմն Ծերունի Աբրահի վրա։ Նա անհանգիստ էր, և անհամբերությամբ սպասում էր դիտենալ, արդյոք յուր տերը նրան ևս կտանի՞ յուր հետ։ Նրա սրբախոսությունն անչափ յեղավ, յերբ Սամվելը դարձավ դեպի Ծերունին, ասելով.

— Շնորհակալ եմ իմ մորից, վոր իմ մարդիկների ընտրությունը թողել է իմ կամքին։ Ցես բոլորին պետք է ինձ հետ տանեմ։ Կհրամայես, սիրելի Աբրահ, վոր ամենքը առավոտյան պատրաստ լինեն։

— Ցես արդեն պատվիրել եմ,— պատասխանեց Ծերունին։

Այդ միջոցին առաջ անցավ պատանի Հուսիկը և կարմրելով ասաց.

— Մի խնդիրք ունեմ, քանի իմ։

— Հոսի՛ր։

— Իմ ձեռ մի վոտքը պայտելուց կաղում է։

— Աբրահը հիրամայեն, վոր իմ ախոռատանից քեզ տան այն ձին, վորը դու հավանելու լինես։

Պատանու դեմքը փայլեց ուրախությունից։

Աբրահը վեր կացավ։

— Ո՞ւր,— հարցրեց Սամվելը։

— Դեռ ևս պահաս բաներ շատ կան, գնում եմ կարգի դնելու...

— Շնորհակալ եմ, սիրելի Աբրահ, յես առավոտյան վաղ, շատ վաղ գնաք և ճանապարհ ընկնեմ։

Ներսինին դլուխը խորհրդավոր կերպով շարժեց և, առանց յուր յունվը նայելու, դուրս դնաց սենյակից։

Նրա հեռանալուց հետո, Սամվելն ավելի ուրախ եր։ Ծուր ճանապարհորդության պատրաստությունները, թեև վոչ բոլորովին, բայց մասամբ ավելի նպատակահարմար եյին կարդադրված։ Նա այդքանն ևս չեր սպասում յուր մորից։ Նա սպասում եր փառավորություն, չքեղություն, բայց չեր սպասում, վոր մայրը թուլլ կտար նրան յուր մարդիկը յուր հետ տանել։ Իսկ Սամվելի մարդկանց թիվը ավելի շատ եր, քան մոր նշանակածները։

Նա այժմ վոտքի վրա անցուդարձ եր անում յուր սենյակում և, ձեռքերը յետևդով չինելով, ինչ-վոր հաշիվներ եր անում յուր դլխում։ Պատանի Հուսիկը, նկատելով նրա ուրախ տրամադրությունը, համարձակություն ստացավ մի այլ խնդիրքով ևս դիմելու յուր տիրոջը։ Բայց այս անդամ տատանվում եր նա, և նրա ճարպիկ լեզուն, վոր խոսքի յետևից մեն դալու սովորություն չուներ, այս անդամ պատռնճվել եր։ Ամոթխածության դլուխը խոնարհեցրած, յերբեմն թեքվում եր աջ վոտի վրա, յերբեմն ձախ վոտի վրա, և մի-մի անդամ ձեռքը տանում եր, ականջի յետևը քորում եր։ «Ասե՞մ, թե չասե՞մ»... այդ յերկու բառերն եյին պատրաստում նրա հուդվածդլխում։

Ցնծե Սամվելը դռնե մի անդամ նայելու լիներ խեղճ պատանու վրա, խիստ կնկատեր նրա անհանդիստ դրությունը, բայց Սամվելը հափշտակված եր յուր քաղցը խոհումներով և նրա վրա ամենևին ուշադրություն չեր դարձնում։

Մի քանի անդամ հաղար պատանին։ Նրա վերջ, խորամանկ հաղը դրավեց Սամվելի ուշադրությունը, վոր, նայելով նրա չփոթված յերեսին, հարցրեց.

— Այլ ևս ի՞նչ ասելիք ունես։

— Ի՞նչպես ասեմ... տեր իմ...աչքերը դետին ցած խոնարհեցնելով, ճրմնջաց պատանին։

— Այնպես ասա, ինչպես միշտ սովորություն ունես ասելու,— խոսեց իշխանը ծիծաղելով։— Ի՞նչից ես ամաչում։

Տիրոջ ծիծաղը ամրացրեց պատանու վստահությունը և նա հեկեկալով ասաց.

— Այսօր ամբողջ որը լաց եր լինում հնաց...

— Ո՞վ, Նվա՞րդը:

— Այո՛, տեր իմ:

— Ինչո՞ւ յեր լաց լինում:

— Նա խմացել է, վոր յես դնալու յեմ իմ տիրոջ հետ...

— Ցեվ տիրո՞ւմ է:

— Վո՛չ տեր իմ: Ցես խոսք եյի տվել...

— Ի՞նչ խոսք եյիր տվել:

— Վոր այդ որերում...

— Կալանվնք: Այդպես չէ՞:

— Այո՛, տեր իմ:

— Հիմա ի՞նչ ես ուզում.— կամենում ես մնա՛լ, պատկվե՞լ:

— Վոչ, տեր իմ, յես նրան դեռ նշան էլ չեմ տվել:

Սամվելը, մի վոքր մտածելուց հետո, հանդատացրեց նրան, ասելով.

— Դու քո խոսքին հետը այժմ կարող ես կատարել: Նշանը կտաս, իսկ պատկվելը կմնա մեր վերադառնալուց հետո: Դեռ ևս չդիտեմ, թե յերբ կվերադառնանք... Բայց յերբ էլ վոր լինի, յես քեզ անպատճառ պատկել կտամ Նվարդի հետ: Նա լավ աղջիկ է, նա այդ որերում մի քանի լավ ծառայություններ արեց ինձ, և այդ պատճառով, իմ կողմից առանձին վարձատրության արժանի յե: Ցերբ Աբրահը կգա, կասեմ նրան, վոր իմ դանձից տանե նրա համար ամենաթանգագին նշաններ:

Ծեղճ պատանին չդիտեր՝ վորպես հայտներ յուր շնորհակալությունը: Ուրախության արտասուքը աչքերում, մոտեցավ, ընկավ յուր տիրոջ վոտքերը, կամենում եր համբուրել: Սամվելը հետացրեց նրան, ասելով.

— Վեր կաց, վորքան Նվարդը լավ աղջիկ է, այնքան և դու լավ պատանավոր ես:

Այդ մինոցին դռները շառաչմամբ հետ դնացին, ներս վազեց պատանի Արտավազդը, Մամիկոնյան Վաչեի վորդին: Նա գրկեց Սամվելի պատանոցը և, դեղեցիկ դլուխը դնելով նրա յերեսի վրա, խորին հրճվանքով բացականչեց.

— Ա՛խ, յերթե դիտենայիր, Սամվել, վո՛րքան ուրախ եմ... վո՛րքան ուրախ եմ... չեմ կարող պատմել...

— Այդ ի՞նչն է և այդքան ուրախացրել քեզ,— հարցրեց Սամվելը, դժվարությամբ ազատվելով աշխույժ պատանու գրկից:

— Նստենք, կպատմեմ: Սաստիկ հոգնել եմ, սաստի՛կ...

Ցերկուքն էլ նստեցին բազմոցի վրա: Պատանին մինչև ականջները կարմրել եր: Ցերևում եր, վոր իրանց տանից մինչև Սամվելի բնակարանը անդադար վազելով եր յեկել: Մի վոքր չունչ առնելուց հետո խոսեց.

— Այս առաջին միայն ինձ ասեցին, որ դու դնալու չես հարդ դիզելու։ Մտածեցի. ինչո՞ւ պետք է Սամվելը դնա, իսկ չես չկիսի դնամ։ Իսկույն վազ տվի Մուշեղի մոտ, ձևըդն համբուրեցի, վոտքը համբուրեցի, վերջապես, նրա հաճույքները առի։ Հետո վազ տվի քո մոր մոտ. նրա էլ դլխից սկսած մինչև վոտքերը համբուրեցի։ Նա էլ իմ տվից։ Մնում էր իմ մայրը։ Դրան համբույրներով համոզել՝ վոտքը ինչ դժվար էր։ Ջոռ տվի լեղվիս։ «Դիտե՞ս, ասեցի, Մերուժանը դալիս է, վահանը դալիս է. նրանց հետ լինելու չեն պարսից թագավորի մեծամեծ դործակալները. պետք է կերակուր բանակի մեջ, պետք է ցույց տալ իրան։ Այնտեղ հավաքվելու չեն բոլոր նախարարների վորդիները։ Ճես վո՞րին եմ պակաս, թե իմ՝ նետ նետելով, և թե իմ նիզակ շարժելով»... Մի խոսքով, էլ բան չմնաց, որ չասեցի։ Դու դիտես, որ մայրերը փառասեր են լինում, մանավանդ վորդիների վերաբերությամբ։ Նա բարեհաճեց, որ չես էլ կերակամ նախարարների վորդիների մեջ և զորմացնեմ պարսիկներին։ Լավ չե՞մ սարքել։

— Վատ չե,—պատասխանեց Սամվելը,—թեև սուտեր շատ ես խոսել։

— Վոչ, ասում եմ ճիշտ, սուտ չեմ ասել, բայց մի փոքր պարծեցել եմ,— ասաց պատանին, ամելի կամրանալով։— Ի՞նչ պետք է անելի, մարդ ուդում է՝ դուրս դա, աշխարհ տեսնա, բայց դրանք, կուրը աղջկա նման, հենց սանն են պահում։ Ճես խո պատիկ չեմ, մի տարի էլ անցնի, քեխեթս դուրս կդան... Այն ժամանակ կասեն՝ «դու մարդ ես»... Հիմա ինձ մարդու տեղ չեն դնում... Այս դիշերը չեմ քնելու,— խոսքը փոխեց նա,— մինչև լույս չեմ քնելու։ Ճերը առավոտյան տեղ եմ դնալու, դիշերը քունս չի առնում։ Պետք է ամեն ինչ պատրաստել տամ, ամեն ինչ...

Այդ չասախոս պատանին, որին առաջին անդամ տեսանք Մուշեղ իշխանի պարտեղում, Համազասպ մանուկի հետ նետաձգության վորձեր անելիս,— այդ կյանքով և կրակով լի պատանին, որ ոչ ոսկով հարուստի պատճառներ ուներ մանուկներ սպանելու Սամվելի արշավանքին։ Բայց Սամվելին սկսեց անհանդստացնել այն մտքը՝ արդյոք այդ անմորճ և պարզամիտ մանուկը երան չե՞ր խանդարել... արդյոք նա մի անխուսափելի ծանրություն չե՞ր դառնա յուր համար... Այդ տարակուսանքներն էլին պատճառը, որ Սամվելը դժվարացավ պատասխանել, երբ պատանին, նրա յերիկամ ձեռքերը առնելով յուր ոսկերի մեջ, մոտեցրեց յուր շրթունքներին, հարցնելով.

— Բոլորի հաճույքյունը առացել եմ, սիրելի Սամվել, մնում ես դու, ասա՛, հոժա՞ր ես, որ յես էլ դամ քեզ հետ։

Ճերբ Սամվելը յուր պատասխանը ուշացրեց, նա ավելացրեց, ասելով.

— Ճեքն դու չհամաձայնվիս, յես առանց քեզ էլ կդնամ...

Պատանու ինքնավստահությունը փոքր ինչ չափազանց էր։ Բայց

Սամվելին հայտնի չեր նրա անասնձ, անզուսպ բնավորությունը: Իրավ, յուրաքանչյուր Սամվելը նրան յուր հետ տանելու չլիներ, նա այնպես էլ կղնար:

Մի միտք ծագեց Սամվելի գլխում. «Գուցե ինձ հարկավոր կլինի»... և խնդրեց նրան, ասելով.

— Մի՛ վշտացիր, սիրելի Աբրահամաղե, դու իմ ապահովության դարպաս կլինես, չես առանց քեզ մի քայլ անգամ չեմ փոխի, գնա՛, պատրաստվի՛ր:

Պատանին վեր կացավ և, ուրախությունից մոռանալով, մինչև անգամ, բարի գիշեր ասել, դուրս վազեց սենյակից: Նախասենյակում լապտերը ձեռին սպասում եր նրա ծառան: Նա չտապելով թողեց ծառային և անցավ: Ծառան լապտերը տանում եր նրա յետևից և դժվարանում եր հասնել:

Ճերեք որ անցել եր այն գիշերից, վոր յերկու սուրհանդակները մտան Վողական ամրոցը, բերելով Տիլբոնի բոթը:

Ճերեք որից հետո դուրս յեկան Վողական ամրոցից յերկու յեղբոր վորդիները.—

Սամվելը առավոտյան, յուր վտառավոր ապահովությամբ, հանդիպավոր կերպով,

Իսկ Մուշեղը գիշերով, միայն յերկու զինակիրների հետ, դաղտնի կերպով...

ԿԱԿԱՓԻ ՄԵՋ

ԲՆՈՒԹՅՈՒՆ, ՆԻՒԹԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԹՈՒՐՔԱՐ

Ցերիվերը լեռնային եր։

Լեռնային անընդհատ չղթաները, իրանց բազմաթիվ ճյուղավորութիյամբ, կտրատել էին անհամեատ մակերեւույթը, կազմելով մի հսկայական ցանց։ Այդ ցանցի մանր եւ անճաուկ հյուսվածքի մեջ սեղմված էին խորին ձորեր, մթին հովիտներ և նեղ դաշտեր։ Այդ ձորերը, այդ հովիտները, այդ դաշտերը ներկայացնում էին մի–մի դամբան, ուր բաժանված էին բնական սահմաններով։

Լեռնային ցանցի հյուսվածքի թիվը բազմանում եր և դամբանների թիվը։ Վերջին շատ մոտեցած եր յերկրի մակերեւույթը, այնքան շատ տրհնվում էին և դամբանները։ Այդ պատճառով, հայոց աշխարհը այն անպուտիկան յերկիրներից մեկն եր, ուր այնքան փոքր տարածության վրա՝ ուներ այնքան բազմաթիվ դամբաններ։

Դամբանները բոլորովին անջատված էին միմյանցից և համարյա դուրկ էին հաղորդակցութիյունից։ Լեռը անմատչելի պատնեշ եր դրել նրանց մեջ, խոր ձորը՝ անանցնելի խրամատ։

Մարդը մեծ դժվարութիյուններ ուներ բնութեան խստութիյունների հետ մաքառելու։

Ապառաժների կուրծքի վրայով, ներքեւում անդնդային խորութիյուն, վերեւից հաղիվ լսելի յեր լինում անցնող դեմի խուլ դղրդյունը,— վեր բնում՝ քարշ լինկած ժայռեր, ուր ամեն րոպե սպառնում էին խորտակվել և ամեն ինչ ծածկել իրանց ահարկու վիլաուակների ներքո,— բնութեան այդ սասկալի կատաղութեան մեջ, մարդը, լեռնային մարդը, միայն նա՛ կարողացել եր յուր համար ճանապարհ բաց անել և մրցել վայրենի այծյամների հետ։

Տեղ–տեղ հաղորդակցութիյունը կտրում էին մթին, անթափանց անտառները։ Նրանց մեջ մարդիկ աճում էին հսկա ծառատունկի հետ, կերակրվում էին նրանց պտուղներով, և իրանց սպասրթախիտ աշխարհի սահմաններից դուրս՝ մի այլ աշխարհ չէին ճանաչում։

Այդ անտառներին մերձենալիս, մարդիկ այնքան չէին վախենում գազաններից, որքան նրանց մեջ վորջացած քնակիչներից:

Լեռների և անտառների հորինած դժվարություններն սպասում, հաղորդակցության վերակերպությամբ, լրացնում էին դեռերը: Նրանք անցնում էին խորին, քարեղեն հատակի վրայով, և յերկու կողմից պարիսպների նման բարձր, ժայռոտ յեղերքի միջով: Սեղմված իրանց նեղ ափերի մեջ, կատաղություններից դողում, դոչում, վորոտում էին նրանք, և փրփրագեղ հորձանքներով զարկվում էին անխորտակելի ապառաժներին, վոր փոքր ինչ լայնացնեն իրանց ուղին, վոր փոքր ինչ ազատ ընթացք ստանան: Յերասխի ահարկու «սահանքները» ամեն մի ճանապարհորդի վրա սարսափ էին ձգում:

Լեռների և ձորերի անձկության մեջ՝ հայոց դեռերը անհամբեր էին նավարկության: Նրանք թուլ էին տալիս իրանց վրա նավակներ, այն ժամանակ միայն, յերբ դուրս էին գալիս կիրճերի և ապառաժների խորքից, յերբ ընթանում էին հարթ դաշտերի միջով, և յերբ խաղաղ ու հանգիստ հոսանքով մոտենում էին ծովերին:

Հայոց դեռերի հինգ մեծամեծ նահապետները— Տիգրիս, Եփրատ, Դուր, Յերասխ, Փասիս—անհամբեր էին և կամուրջների: Արհեստը դեռ անզոր էր զսպելու նրանց յուր հոյակապ կամարների ներքո: Այդ էր պատճառը, վոր Ոդոստոս կայսրի կառուցած կամուրջը Յերասխի վրա՝ համարվեցավ մի հրաշալիք, վոր առիթ տվեց Վիրգիլիոսի յերգերին: Իսկ պարսից Կյուրոս թագավորի կառուցած կամուրջը նույն դետի վրա համարվեցավ աստուածո գործ: Արտաշատ քաղաքի մոտ գտնված ամենահին կամուրջը, վոր կոչվում էր Տափերական, սկզբում տափերի մի շարված բ էր, վոր պահվում էր միայն դետի խաղաղ ժամանակը:

Հաղորդակցության վոչ սակավ արգելք էր լինում ձմեռը,— հայոց աշխարհի յերկարատև ձմեռը:

Դեռ հոկտեմբեր ամսում, շատ տեղերում, մանավանդ բարձրավանդակների վրա, թանձր ձյունը ծածկում էր հովիտները, լցնում էր ձորերի խորքերը, անհետացնում էր բոլոր ճանապարհները և կտրում էր ամեն հարաբերություններ: Ճանապարհորդները, յերկար ճողերը ձեռքներին բռնած, այնպես էին չրջում, վորպեսզի ձյունի հյուսի տակ ծածկվելու ժամանակ, ճողերի ղլուխը դրսում մնալով, խնդրակները դիտենային, վոր տակումը մարդիկ են թաղված: Այդ ճողերը ունեին և այլ հարմարություններ: Նրանց վրա հենվելով, թռչում էին խորին վիհերից, և նրանցով ձյունի տակից ծակ էին բաց անում շունչ առնելու համար:

Ձյունի վտանգին յենթարկվում էին վոչ միայն հասարակ մահկանացուները, այլ թագավորները անգամ:

Սանտրուկ թագավորը, ուղղության ժամանակ, յերեք որ և յերեք գիշեր մնաց ձյունի տակ, յուր զորակից դրկում: Ինդրակների սպիտակ շունը գտավ նրանց և հանեց նրանց մոտ այնքան ժամանակ, մինչև մար-

դիմ յեկան և դուրս հանեցին։ Տիրան Ա. Թաղեմորը բոլորովին անհետացավ ձյունի հյուսի տակ, նրան դանել չկարողացան։ Քանեռուները հուսահատան հաղարի հետ՝ հայոց յերկրով անցնելու միջոցին՝ սառցից յուր դինվորների վոտներն ու ձեռքերը, թևև ձմեռը դեռ նոր եր սկսվել։ Ցուրբ բանակի ձիաների վոտներն անդամ պատեց նա տաք պարկերի մեջ բայց հնար չեղավ ցրտից ազատելու։ Արտավազդ Ա.-ի որերում՝ հայոց ձմեռը կուտրեց Անտեռնիտա հռոմեացու զորքերից 8000 հոգի, յերբ նա վերադառնում եր պարսից արշավանքից։

Սարսափելի յեր հայոց բուքը, բորանը։

Դառնաշունչ քամին կատաղաբար տեղափոխում եր ձնային ահագին բլուրները և ոդը մթնեցնում եր սառցային թանձր փոշիով։ Այդ որհասական րոպեներում ամեն շնչավոր թագատ տեղ եր վերցնում։ Մեծ ճանապարհների վրա, վտանգավոր տեղերում, քարավանների պատսպարության համար՝ շինված եյին հատուկ պանդոկներ։ Բայց այդ փոթորիկների մեջտեղին՝ խիստ սակավ եր պատահում, վոր քարավանը ժամաներ յուր վերջնադիտյան իջևանին։ Շատ անգամ, մի քանի քայլ հեռավորության վրա, ծածկվում եր ձյունի թանձրության ներքո։

Լեռնային կողմերում, տարվա հարմարյա կես մասը, շինականները խրտնչ անասունների հետ ապրում եյին ձյունի տակ, մթին, դետնափոր խրճիթներում։ Այդ սառնակրյա խորչերում՝ թե՛ տերը և թե՛ անասունը բավական պաշար ուներ։ Բայց սովը և անասունների կատարածը միշտ անխուսափելի յեր դառնում, յերբ ձմեռը սովորականից ավելի յերկար եր տևում։ Ջուրը առանում եյին նրանք հալեցրած ձյունից, իսկ անասուններն համար ճարակ չեյին դտնում։

Գարնան արեգակը բերում եր յուր ջերմության հետ հեղեղներ։ Ղըտար, ամպհալի վտակներով լցվում եյին ձորերը և հաղորդակցությունը ավելի դժվարանում եր։ Այդ ժամանակ, սարերի սառրոտներում, տեղ-տեղ, ձյունապատ տափարակները սկսում եյին հետզհետե սեվանալ, և տարբ ծածկվում եյին աքանչելի կանաչազարդությամբ։ Միծեռնակի ճարնի հետ՝ լսվում եր նորածին դառնուկների պատանչը։ Հովիվները իրանց վրանները դնեռնում եյին ծաղկազարդ արոտամարգերի վրա։

Ժամանում եր ամառը։

Սարերի ներքևում, տափարակների վրա, հատունանում եր նուռը, թուղը, ձիթենին։ Վտակեղեգն սաթի նման փայլում եյին խաղողի վազկուլլները։ Ցնդ չիկահեր կուլսի պնասկների նման ծփում, ծածանվում եյին ծանրացած հասկերը։— Իսկ այնտեղ, վերևում, բարձրությունների վրա, դեռ նկարված եյին ձերմակ դագաթները, և լայն, թանձրախիտ ձերտերով մնում եր անշարժ սառնամանիքը ապառաժների հավիտենական խոռոչների մեջ։

Հովիտների մեջ, ցած և դուբան տեղերում, ամառնային տոթն ու տապը ավելի անտանելի յեր լինում, քան ձմեռնային ցուրտը։ Արևակիզ

այրում եր, յերկինքը կրակ եր թափում: Մարդիկ, վոր առվորած եյին ձմեռվա ցրտից պատսպարվելու համար թաղվիլ գետնափոր խրճիթներում, այժմ արևի կրակից ազատվելու համար, իրանց անասուններն հետ, հանում եյին դեպի լեռները հովասուն բարձրություններ: Ցնվ այսպես, յուրաքանչյուր տարվա ընթացքում կատարվում եր մի տեսակ դաղթականություն՝— ջերմից դեպի ցուրտը, իսկ ցրտից դեպի ջերմը: Բայց ամեն մի հասարակություն յուր գավառի սահմաններից չեր դուրս գալիս:

Բնության այս տեսակ խնամ, մխիթարից տարրեր և մխիթարից հակառակ ծայրահեղությունները առեղծեցին նույնպես խնամ և ծայրահեղ բնավորություններ: Այդ եր պատճառը, վոր հայոց աշխարհի բարքը, վարքը, սովորությունները կենցաղավարության յեղանակը, և առհասարակ նրա հասարակական կազմակերպությունը՝ յուր բոլոր յերևույթներով՝ հետևանք եր յերկրի բնական պայմանների:

Գետերը, մեծամեծ լճերը, լեռնային շղթաները՝ իրանց բազմաթիվ ճյուղավորություններով՝ կտրատեցին յերկրի մակերևույթը, առեղծելով բազմաթիվ մանր ու մանրիկներ, վորոնց յուրաքանչյուրը ներկայացնում եր մի մի գավառ, վոր բաժանված եր բնական սահմաններով:

Տրդատի որերում գավառների թիվը հասնում եր 620-ի: Իսկ Աբրշակ Բ-ի որերում նրանց թիվը հասնում եր մինչև 900-ի:

Նրանցից յուրաքանչյուրը մի-մի իշխանություններ եյին, վոր ապրում եյին իրանց տարրեր կյանքով և իրանց տարրեր սովորություններով, վորքան տարբերվում եր մի գավառ մյուսից յուր տեղական պայմաններով:

Անշարժությունը, հաղորդակցության դժվարությունը, ինչպես տեսանք վերևում, ավելի ևս զարգացնում եյին նրանց մեջ տեղական հատկանիշ առանձնությունները: Ցերկրի անփոփոխ դրությունը պահպանում եր անփոփոխ սովորությունները: Դրա հետևանքը լինում եր կրթության և հասարակության դանդաղկոտությունը: Մի գավառացին մյուս գավառացու լեզուն չեր հասկանում, թեև յերկուքն էլ յեղբայրներ եյին:

Շահերի տարբերությունը առաջ եր բերել և իշխանության տարբերություններ: Ամեն մի գավառ յուր առանձին կառավարությունը, յուր օրենքներն և ավանդություններն ուներ:

Այդ իշխանությունները կոչվում եյին նախարարություն:

Վորքան գավառներ կային, այնքան և նախարարություններ կային: Դարերի ընթացքում, դանազան քաղաքական հանդամանքների պատճառով, նրանց թիվը կա՛մ ավելանում եր, կա՛մ պակասում եր:

Նախարարությունների ներկայացուցիչները կոչվում եյին նախարար:

Ամեն մի նախարար յուր յերկրի բացարձակ տերն եր: Նրա իշխանությունը ժառանգաբար անցնում եր սերունդից սերունդ:

Նախարարների հարաբերությունները դեպի Հայաստանի արքան ստրատագական եր: Նրանք վճարում եյին արքունի դանձարանին մի վոր-

շյալ հարկ, պարտավորված եղեն վորոշ թվով զորք պահել, պատերազմի ժամանակ ուղևել թագավորին, իսկ խաղաղության ժամանակ՝ պահպանել տերության սահմանները։ Ուշադրություն նախարար հսկում եր այն սահմաններին վրա, վոր մտա եր յուր իշխանության ներկրին։

Արտաշես Բ–ը առաջինը տեղավ, վոր նախարարությունների սահմանները վորոշեց, դծերի վրա քարյա սյուներից նշաններ դրեց, և յուրաքանչյուրի ժառանգության չափը արձանագրեց արքունի դիվանագրքերի մեջ։ Իսկ Տրդատ մեծը վորոշեց նրանց պարտավորությունները ներկրի սահմանադրությունները պահպանելու վերաբերությամբ։

Ահասաբակ Հայաստանի սահմանները մտա տեղած նախարարությունները ավելի ընդարձակ և ավելի զորեղ եղեն, քան թե կենտրոնում կամ, վորպես կոչվում եր, մերձնաշխարհում դանվածները։ Սահմանագլխի նախարարներից վոմանք տերում եղեն մի քանի գավառների։

Նախարարական աններից չատերը վայելում եղեն առանձին արտոնություններ՝ թե՛ կառավարության դործերում, և թե՛ թագավորի արքունիքում։ Որինակ, թագավորի ներկրորդականը ընտրվում եր Մուրացան նախարարությունից, թագավորի հանդիսավոր թագադրության որում, թագադիր առակը ընտրվում եր Բագրատունյաց նախարարությունից, թագավորի պալատի ներքինապետը ընտրվում եր Մարդպետական նախարարությունից, զորքերի ընդհանուր սպարապետը ընտրվում եր Մամիկոնյան նախարարությունից։ Եղեն այլ նախարարություններ ևս, վորոնց արտոնական պաշտոններն եղեն զանազան պալատական ծառայություններ։

Ամեն նախարարություն, առանձին վերաբած, մի ամբողջական իշխանություն եր։ Իշխում եր տոհմի ավագը, վոր կոչվում եր նահապետ կամ տանուտեր։ Իսկ նախարարական առանձյուա ժառանգները մնայն վայելում եղեն ներկրի հասույթները՝ կամ թեշաներով և կամ հողային բերքերով։ Դարերի ընթացքում՝ իշխանական դերդաստանի անդամների թիվը հաղիվեսե բազմանալով, շատ հասկանալի չե, վոր ներկրի հասույթները անբավարար կլինեյին դոհացնելու բոլորին։ Այդ դեպքում, խնամա հաճախ եր պատահում, վոր նախարարները նոր ախրաստություններ եղեն անում, խլելով իրանց դրացիների հողերը։ Ներքին կռիվը և աբյանհեղությունը անցնում եր սերունդից սերունդ, վոր շատ անդամ պատճառ եր տալիս ամբողջ նախարարական տոհմերի բնաջինջ լինելուն։ Տրդատի վարձանվելուց հետո, Բղունյաց, Մանավազյանց և Վորդունյաց նախարարները, մեմյանց հետ պատերազմելով, համարյա թե վոչնչացրին մեմյանց ցեղերը։

Թագավորը, ըստ կալվածական ժառանգության, համարյա մի մեծ նախարար եր։ Նա սեփականել եր իրան ամբողջ Արարատը— ներկրի սերը։

Արարատը, վորպես արքայական կալվածք, անբաժանելի եր։

Արարատում բնակվում եր թագավորը և թագաժառանգը միայն։

Իսկ արքայական տան մյուս ժառանգներից վոչ վոք իրավունք չուներ Արարատում բնակվելու։ Նրանց համար վորոշված էին առանձին դավառներ։ Դա Արշակունիների մեջ որենք եր։

Հաշտենից, Աղիովտի և Առբերանի դավառները. իրանց բոլոր հասույթներով, հատկացրած էին թագավորազների կեցության համար։ Այդ երեք դավառներում նրանք այնքան բազմացել էին, վոր հողերը մինչև անգամ անբավական էին նրանց վայելչությունները ապահովելու համար։ Այդ պատճառով մի քանի բողոքում էին, թե իրանց տեղը նեղ է, և թագավորից նոր հողեր էին խնդրում։

Հայոց պատմության մեջ մի նշմար անգամ չենք տեսնում, վոր Արշակունի թագավորազները կառավարության վորևե պաշտոնում ընդունվելին։ Նրանց չենք տեսնում և դինվորական ծառայության մեջ։ Նրանք դատապարտված էին մշտական անգործության։ Նրանց ընծայել էին ընդարձակ դավառներ, տալիս էին դանձարանից առատ ռոճիկներ, վոր վայելեին, վորսորդություններով և զանազան զվարճություններով զբաղվելու համար, և մի այլ պատասխանատվություն չգտանեն։— Այդ՝ յուր ժամանակի քաղաքականություն եր, վորպեսզի դահին հետամուտ չլինեն։ Ապրելով բոլորովին մեղի և աննպատակ կյանքով, նրանց մեջ ոպանվում էին ամեն բարձր և քաջաղնական զգացմունքներ։

Ճիշ այդպես, թագավորը սեփականել եր իրան Արարատը, և թագաժառանգի հետ բնակվում եր այնտեղ՝ յուր մայրաքաղաքում։ Մյուս թագավորազները իրավունք չունեյին Արարատում բնակություն հաստատելու։ Նրանց համար նշանակված էին առանձին դավառներ։

Արշակունի թագավորազներից մեկը միայն, Արշակ Բ.-ի կեղտոր վորդի Գնելը, համաձայնվեցավ բնակություն հաստատել Արարատում (Արագած լեռան ստորոտում), և յուր վարմունքով դրգռեց Արշակի կասկածանքը, և նույն կասկածանքին զոհ գարձավ...

Թագավորազների բազմանալը մի կողմից, նախարարությունների բազմությունը մյուս կողմից, զբաղել էին երկրի մեծ մասը և ոպատում էին նրա արդյունքները ի վնաս արքունի դանձարանի։

Թագավորին մնացել եր մի դավառ միայն— Արարատը։

Մի այսպիսի պետական կազմակերպության մեջ, յուր ուժը հողի ընդարձակության և հողի վրա ապրող բնակչության բազմության չափով եր չափվում, շատ հասկանալի է, վոր նախարարների հավաքական զորությունը վո՛չ միայն կարող եր ճնշում գործ դնել թագավորի վրա, այլ նրա վիճակը ամեն րոպե կարող եր յուր ձեռքում պահել։ Զորք ամեն մի նախարար ուներ, և միանց զինվորական ուժը ավելի բարձր եր, քան Արարատյան զինվորությունը։

Մյուս կողմից, այնքան բազմաթիվ նախարարություններ, բաժանբաժան յուղած միմյանցից, վորոնց յուրաքանչյուրը հնազորոնացած եր յուր մեջ, ապրում եր յուր տարբեր շահերով, ուներ յուր վաղեմի, ա-

վանդական ինքնակալությունը,— չատ պարզ և, վոր այդ մասնատյալ իշխանությունները չեր կարող կազմվիլ մի ամփոփ, ամուր, միահնձան պետություն:

Աբշահունյաց վերջին թագավորները ղեռ մեր էլին, թե ինչ բանի մեջն և իրանց ուժարությունը, և պետությունը մի ամբողջական և ուժեղ կազմության վերածելու նպատակով, սկսեցին փոքր առ փոքր վոչնչացնել նախարարների իշխանությունը:

Դարձերի դրությունը, չբջապատող հանգամանքները և իրանց— թագավորների— հանապազ ընդհարումները նախարարների հետ, նրանց այդ բնական չավղի մեջ դրին:

Այդ դաղափարը ծագեց Աբշահունի թագավորների մեջ, սկսյալ այն որից, յերբ քրիստոնեությունը մուտք դործեց Հայաստանում: Տրդատը առաջինը յեղավ, վոր վոչնչացրեց Սլկունյաց դրեթե նախարարությունը և Տարոնը խլեց նրանցից: Բայց մեծ թագավորը, դրաղված լինելով Հայաստանի կրոնական վերանորոգության մեծ դործով, ժամանակ չունեցավ իրագործելու նրա քաղաքական վերանորոգության ավելի ծանր դործը:

Տրդատ մեծի յերեք հաջորդները՝ Խոսրով Բ., Տիրան Բ. և Աբշահ. Բ.՝ ավելի առաջ տարան նրա սկսած դործը:

Տրդատ մեծի վորդի Խոսրով փոքրը, թեև վոչ հոր հսկայական տաղանդն ուներ և վոչ նրա անպարտելի քաջությունը, բայց խելացի մարդ եր: Նախարարների վերաբերությամբ ձեռք առեց նա յերկու միջոցներ՝— խիտա և մեղմ: Խիտա եր նա, յերբ Աղձնյաց Բակուր բդեշխին սպանել տվեց, նրա ցեղը ջնջեց, և նրա յերկրամաս չատ կոտորածներ կատարելուց հետո, նրա վորդի Հնձային բազմաթիվ դերիների հետ տարաղրեց Աղձնիքից: Բայց նրա դործ դրած մեղմ միջոցները ավելի քաղաքականական էլին և ավելի կորստաբեր կարող էլին լինել նախարարների համար, յեթե Խոսրովը յերկար տևերը: Նա թագավորեց 9 տարի միայն: Նա մտադեց՝ տվող նախարարներին կապել արքունիքի հետ և պալատական զվարճություններով մեղկացնել, տկարացնել նրանց: Այդ նպատակով հրատարակեց մի նոր որենք, վոր հաղորդից մինչև տասն հաղար (մի բյուր) դորք ունեց ղ նախարարները պետք և միշտ թագավորի մոտ լինեն և նրանից հեռանան: Ցնվ վորպեսզի նրանց դրպղացնե, Խոսրովը Ցնորաբեր դիտարան տիրի մոտ հիմնեց Դուին քաղաքը, յուր արքունիքը տեղափոխեց դնաղ, իսկ քաղաքից վոչ տասնքան հեռու, Աղատ գետի ամբողջ հովիտը տնկեց ճեռատունկ անտառներով, վոր կոչեց յուր անունով Խոսրովական: Այդ անտառները լցրեց դանադան տեսակ վարսի անասուններով: Այդ անտառների մեջ հիմնեց այն չքնդ ապարանքը, վոր կոչվում եր Տիկունն: Դեղեցիկ տիկիններն մի դրախտ եր այդ հրաշալի ապարանքը յուր տանաշոր ծառաստանով, և յուր մշտանվադ ցնծություններով: Այնտեղ տարատա եր նախարարների համար ամեն տեսակ բռնակալություն, ա-

մեն տեսակ զվարճություն: Այնտեղ հրապուրանքը, պալատական մեղկությունը մաշում, սպանում էր ամեն ինքնուրույն զգացմունք: Իսկ այդ չէրկար չտևեց: Ոսորովի մահից հետո՝ նրա հղացած դաղափարը յուր հետ մեռավ:

Ոսորովի վորդի Տիրան Բ-ը հոր խաղաղ քաղաքականությանը չհետևեց: Նա անխնա ձեռքով կոտորել սկսեց մի քանի նախարարական ցեղեր. և մանավանդ չէրկու ամուր նախարարությունների առհասարակ, վորպիսիք են Արծրունիները և Ռշտունիները: Կոտորածի միջոցին Մամիկոնյան չէրկու չեղբայրներ, մերկ սրերը ձեռներին, հարձակվեցան դահիճների վրա, և կարողացան ազատել չէրկու առհասարակից չէրկու մանուկներ մեկին՝— Շավասպ և Տաճատ: Տիրանը այդ ներքին կռիվը ավելի առաջ տանել չկարողացավ, վորովհետև նրա թագավորությունն էս հոր նման կարճատև չեղավ,— 11 տարի: Իսկ յուր վարմունքով տվեց նա նախարարների իրանից հեռանալուն և յուր լքյալ և անուղնական մնալուն: Այդ անպաշտպան դրության հետևանքը չեղավ նրա պարտությունը՝ նախհամեմայիններից և ազա պարսիկներից: Վերջինները զրկեցին նրան թե՛ աչքերից և թե՛ դահից:

Տիրանի վորդի Աբշակ Բ-ը վճռեց վերջացնել այն, ինչ վոր սկսել էին յուր նախորդները: Նա բացարձակ պատերազմ հայտնեց նախարարներին դեմ: Բայց նախ քան պատերազմը սկսելը, նրան հարկավոր էր մի ամուր նեցուկ, վորի վրա հենվեր նա, այլ խոսքով, նրան հարկավոր էր մի զորեղ հուսակցություն: Նախարարներից անհնար էր այդ հուսակցությունը ստեղծել, վորովհետև բոլոր նախարարները միաբանված էին նրա դեմ: Իսկ Արտաշը միայնակ բոլոր նախարարներին հետ մաքառելու չափ ուժ չուներ: Հանճարեղ թագավորը մտածեց յուր կողմը ձգել յերեք վոչ ամբողջ ժողովուրդը, դրանք նրա միջի դժգոհներին;— նրանց, վոր հալածված և ատելված էին նախարարներից: Այդ նպատակով հիմնեց Մասիս լեռան ստորոտում մի ապաստանի քաղաք, վոր յուր անվանով կոչեց Արշակավան: Յերբ քաղաքը պատրաստ էր, հրաման արձակեց, թե ամեն վոք՝ յերեք այդ քաղաքը մտնելու լինի, կազատվի թե՛ որեներից, և թե՛ դատաստանից: Շուտով քաղաքը և նոր դավառի ամբողջ հովիտը, ուր դտնվում էր Արշակավանը, լցվեցավ լաղմաթիվ դաղթականներով: Այնտեղ ապաստան դտան նախարարներից հարստահարվածները, նախարարներից նեղվածները: Այնտեղ ապաստան դտան բոլոր դժդոհները, բոլոր բողոքողները: Այնտեղ ապաստան դտան նաև դանազան հանցավորներ, դանազան դատապարտյալներ: Յերկրի դառնությունը, յերկրի դարևոր վրեժխնդրությունը՝ բռնության և կոպիտ ուժի դեմ՝— այնտեղ դումարվեցավ: Այնտեղ դումարվեցավ մեղքը, հանցանքը, վոր առաջ էր յեկել բռնավորների անզուսպ կամայականությունից: Ամենալավը ժամանակում քաղաքը ունեցավ մինչև քսան հազար յերդ բնակիչներ:

Այդ մարդիկը ամենքն էլ նախարարների հպատակներից էին: Այդ

պշտացած և, միևնույն ժամանակ, ծայրահեղ մարդիկը Աբշաիի ձեռքում մի զորեղ ուժ էին նախարարներին դեմ դնելու համար:

Նախարարները դրացին այդ, մանավանդ յերբ ասևանում էին, վոր իրանց հպատակներից վոչ մեկն դժգոհները, այլ ամեն վոք հաճությամբ կռնդախոխվեր այն աղատ քաղաքը, ուր վո՛չ հարկ կար և վո՛չ որևէ հարձակք, այլ ամեն մարդ վայելում եր կատարյալ ապահովություն:

Թագավոր այդ, նույն իսկ նախարարների յերկրում մնացած անշարժ բնակիչները կարող էին հրապուրվել, կարող էին ամեն րոպե ապստամբվել, ասևնելով, վոր Թագավորը շնորհում և ավելի աղատություն և ավելի անդորրություն, քան թե իրանց իշխանները:

Այսոնկից ծագեցին այն արյունահեղ կռիվները նախարարների և Աբշաիի մեջ:

Գալե Աբշաիը հաղթող կհանդիսանար, յեթե նախարարները արտաքին ոգնություն չդիմեին: Նրանք դիմեցին հայոց դարեւոր թշնամուն—պարսիկին: Շապուհը ողտա քաղեց հայոց աշխարհի ներքին յերկպառակություններից և ուղարկեց յուր զորքերը: Աբշաիը անճար մնալով, խույս ավեց դեպի Կովկասյան լեռները:

Նրա բացակայության ժամանակ՝ նախարարների վրեժխնդրությունը անցավ անդթության սահմանը չափից: Նրանց ձեռնտվությամբ պարսիկները ավերեցին Անի քաղաքին, կողոպտեցին Թագավորական դանձերը, և միևչև անգամ Աբշաիանի Թագավորներին հանգստարաններին չխնայեցին, քանդեցին չիրխանները և դերի տարան արքաների նշխարները:

Այդ ժամանակ նախարարները իրանց բոլոր ուժով հարձակվեցան Աբշաիանի վրա, թե՛ այր և թե՛ կին անխնա կոտորեցին: Ապստամբի քաղաքը լցվեցավ դիակներով. արյունը հորդությամբ հոսում եր վտղոցներից: Վոզմ մնաց ծծկեր մանուկների մի մասը միայն:

Աբշաիը վերադարձավ Կովկասից, յուր հետ բերելով վրացի և այլ լեռնական զորքեր: Կրկին բորբոքվեցավ կռիվը նախարարների և Թագավորի մեջ: Նախարարները, պարսիկին հարուստ ավարով ճանապարհ դնելուց հետո, այս անգամ հուսին կանչեցին իրանց Թագավորի դեմ: Վաչեի լեռները մատեցան հայոց սահմաններին: Աբշաիը ունեցավ յուր դեմ յերեք հզոր թշնամիներ՝— հուսին, պարսիկը և յուր նախարարները...

Նա չհուսահատվեցավ, բայց դիջավ, յերբ Թագավորության հրեշտակը մեջ մտավ և դադարեցրեց արյունհեղությունը:

Դա Ներսես մեծն եր:

Մեծ հայրապետը հաշտեցրեց նախարարներին իրանց Թագավորի հետ, ոչխար դնելով, վոր ետևնհետև Թագավորը վարվի նրանց հետ ուղղությամբ, իսկ նրանք ծառային հավատարմությամբ:

Չհաշվեցան յերկու նախարարներ միայն՝ Մերուժան Արծրունին և

Վահան Մամիկոնյանը— Սամվելի հայրը։ Նրանք դնացին պարսից Շապուհ արքայի մոտ։—

Ահա՛ վերտեղից ծագեց թշնամությունը Արշակի և այդ յերկու նախարարների մեջ...

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՑԵԿԵՂԵՑԻ ՀՈԳԵՎՈՐ ՑԵՎ ՄԵՐՄՆՆՎՈՐ ԻՀԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Թագավորի լարված հարաբերությունները յուր նախարարների հետ, և նրանց մեջ ծագած ներքին յերկպառակությունները, վոր շատ անգամ ուժի եկին տալիս սոսկալի արյունհեղություններին,— այդ բոլորը նկատելով նախընթաց դլխի համառոտության մեջ։ Մենք այժմ դիտենք նրանց հետևյալ պատճառները։

Բայց հայոց պատմությունը ներկայացնում, և մի այլ, ավելի ուժով յերևույթ ևս, այն է՝ թագավորի նույնպիսի հարաբերությունները հոդևորականության և նրա բարձր ներկայացուցիչների հետ։

Այն որից, վոր քրիստոնեությունը մուտք և դործում Հայաստանում, նկատվում է մի խուլ, ներքին կռիվ թագավորի և հոդևորականության մեջ, վոր հաճախ արտահայտվում է դառն, յեղերական վախճանով։ Զարմանալին այն է, վոր այդ կռիվը սկսվում է իսկ և իսկ այն ժամանակից և նույն թագավորների որերով, վորոնք մաքառում եյին իրանց նախարարների հետ։— Դրանք Տրդատ մեծի չորս հաջորդներն են՝ Խոսրով, Տիրան, Արշակ և Պապ։

Ինքը՝ Լուսավորիչը հալածվեցավ։ Ցուր կյանքի վերջին որերը ծախսեց նա Սեպուհ լեռան այրերի անհայտության մեջ։

Նրա վորդիներից՝ Արիստակեսը սպանվեցավ Արքեղայոս իշխանից։ Իսկ Վրթանեսը, Աշտիշատի վանքում, մի հրաշքով մխայն կարողացավ յուր կյանքը աղատել խուժանի կատաղություններից։

Վրթանեսի յերկու վորդիներից մեկը, Գրիդորիսը, նահատակվեցավ Վասնյան դաշտում, իսկ մյուսը, Հուսիկը, սպանվեցավ յեկեղեցում Տիրան Թագավորի հրամանով, վորի վեհան եր։

Հուսիկի յերկու վորդիները, Պապ և Աբահապինես, մի ժամվա մեջ սպանվեցան Աշտիշատի վանքում։

Պապը յուր անդանի վրա, ճաշի ժամանակ, թունավորեց Աբահապինեսի վորդի Ներսես մեծին, վորի բազմաջան աշխատությամբ ինքը Թադևորական գահն եր բարձրացել։

Մի խոսքով, սկսյալ Լուսավորչից մինչև նրա վերջին ժառանգը, Սահակ պարթևը, այդ մեծ հայրապետական տան ներկայացուցիչներից հա-

մարդ և վոչ մեկը խաղաղ մահվամբ չվախճանվեցավ, այլ ամենքը զոհ գրծան կամ թագավորի և կամ նախարարների խստասրտությանը:

Զոհ գրծան և այդ ժամանակների նշանավոր յկեղեցականները:

Կոսրովի հրամանով Մանասէհը Ռշտունին Հակոբ Մծբնա հայրապետի յոթն սարկավագներին ընձակա լեռան բարձրությունից գահավիժել տվեց վանա ծովակի մեջ: Մերսունի հայրապետի աղաչանքն ու արտասուքը անգութ յեղան սոսքելու խստասիրտ իշխանի անդթությունը:

Տիրանը խնդրել տվեց Ներսունի Դանիել քահանային, վոր Լուսավորչի նշանավոր աշակերտներից մեկն եր:

Աբշահը հրամայեց հրապարակի վրա քարկոծել Աբշարունյաց և Բագրեւանդի յպիսկոպոս Սաղին, վորը Ներսես մեծի աշակերտը և նրա հայրապետական տեղապահն եր կ. Պոլիս գնացած ժամանակ:

Ի՞նչ եր այդ աղետավոր յերևույթների պատճառը: Արդյոք նոր կրոնի մաքառո՞ւմը և նրա սասակիկ հակառակությո՞ւնը հեթանոսական վոգնի սովորություններին և բարք ու վարքերի հետ:—

Այդպես էլ բացատրում են հայոց պատմագրները:

Տրդատ մեծից հետո, նրա բոլոր հաջորդները, բացի Վռամշապուհից, մինչև Աբշահունյաց տան անկումը, նկարագրված են վորպես վերին աստիճանի անբարոյական անձինք: Հողևորականությունը նրանց անկարգ բարք ու վարքը հանդիմանում է, իսկ նրանք զայրանալով՝ սպանել են տալիս հողևորականներին:— Դրանով և վերջանում պատմության խոսքը:

Բայց նույն պատմությունը անդիտակցաբար յերևան և հանում այնպիսի նշմարներ, վորոնք հակառակ վիճայության են տալիս, վորոնք ստիպում են կատարված չարիքները արմատը վորոնել ավելի խորին, ավելի հիմնավոր պատճառների մեջ:

Ինչո՞ւ Աբշահունի թագավորները, քրիստոնեությունը ընդունելուց հետո, վոխանակ լավանալու, վոխանակ բարքով ու վարքով ազնվանալու, ընդհակառակն, ավելի խստասիրտ, ավելի յեղեռնագործ դարձան: Քրիստոնեության բարոյական ազդեցությունը չեր կարող այսպիսի հրեշավոր արդյունքներ առաջ բերել: Վերջապես, ինչո՞ւ Աբշահունի թագավորները, դեռ քրիստոնեությունը չընդունած, ավելի բարոյական և ավելի ազնիվ եյին: Տիրան Բ., Արտաշես Բ., Կոսրով մեծը, մարդասիրության և բարձր առաքինության մի-մի ախպարներ եյին: Ցավ առհասարակ հայոց հեթանոս թագավորների մեջ՝ չի կարելի մեկին ցույց տալ, վոր բարոյապես այնպիսի այլանդակ կերպով նկարագրված լիներ, վորպես Աբշահունյաց վերջին քրիստոնյա թագավորները:

Արդյոք բարբարո՞ս եյին նրանք, վոր անխնա կոտորում եյին հողևորականներին:—

Այդ հարցը լուծելու համար՝ սկսենք նախ ցույց տալ, թե ինչ եր այն ժամանակ հողևորականությունը և վորպիսի կերպարանք եր առած հողևոր իշխանությունը:

Լուսավորիչը և Տրդատը քրիստոնեությունը Հայաստան մտցնելու ժամանակ, նրանց դժվարը չանքը յեղավ վոչնչացնել հեթանոսական հիշատակարանները և նրանց տեղը քրիստոնեականը հիմնել: Մեհյանները կործանվեցան, հին աստվածների տաճարները խորտակվեցան և նրանց տեղում քրիստոնեական վանքեր ու յեկեղեցիներ հիմնվեցան: Եկեղեցիներ հիմնվեցան նաև քաղաքներում, ավաններում և դյուղերում: Վանքերում հաստատվեցան կրոնական միաբանություններ, իսկ յեկեղեցիներում՝ աշխարհական քահանաներ: Հիմնվեցան և դպրոցներ՝ քրմերի վերդիններից և ուրիշներից յեկեղեցականներ պատրաստելու համար:

Գնաք էր այդ բոլորի դոյությունը ապահովել:

Նորընծա թագավորը, յուր անսահման քրիստոնեական ջերմեռանդությամբ, չինայեց նոր հիմնված օրթարանների դոյությունը ապահովելու համար՝ սեփականացնել նրանց, իբրև մշտական ժառանգություն, բազմաթիվ դյուղեր, ավաններ, ագարակներ և այլ անշարժ կալվածքներ: Այդ օրթարանների վրա մնացին և այն մեհենական կալվածքները, վոր վայելում էին նրանք հեթանոսական դարերում, այսինքն, յերբ տակավին կռապաշտական տաճարներ էին, իսկ հետո քրիստոնեական յեկեղեցիների փոխվելով, պահպանեցին իրանց վաղեմի կալվածքները:

Բացի դրանցից, Տրդատը յուր պետության մեջ ընդհանուր որենք հրատարակեց, վոր ագարակ տեղերում (վոչ քր դյուղերում) «չորս–չորս հոդ», իսկ ավաններում (մեծ դյուղերում) «յոթն–յոթն հոդ» լինի անխախտանելի յեկեղեցու: Ամեն մի «հոդ» մի վերացական չափ էր, վոր ստանում էր մի ծուխ, կամ մի դյուղական ընտանիք: Ուրեմն, յերեք յուրաքանչյուր ավանում «յոթն–յոթն հոդ» տրվում էր յեկեղեցուն, այդ հինչանակ՝ այնքան տարածությամբ հող, վոր բավական էր յոթն ընտանեքի համար:

Եվ այդպիսով յեկեղեցին դարձավ ամենահարուստ կալվածատերը պետության մեջ:

Հարստացան և վանքերը իրանց կալվածքներով:

Վորպեսզի վոչ քր չատե շոշափելի դաղափար ստացվի, թե վորքան կալվածքներ էին տիրապետում վանքերը, բավական է իբրև որինակ, վեր առնել նրանցից մեկը միայն: Մենք կվերցրունենք Տարոնի նահանգում Գլակա կամ Իննակյան կոչված վանքը, վորի կալվածքների մասին նրա առաջին վանահայր Զենոբ Գլակը, յուր պատմության մեջ թողել է խիստ հետաքրքիր թվանշաններ:

Զենոբ Գլակը, Լուսավորչի նշանավոր դործակիցներից մեկը, և նրա հետ կեսարիայից յեկած, աղջով պատրաստ մի չատ յեռանդուռ ազգակ էր, վոր դրեց Լուսավորչի և հիշյալ վանքի պատմությունը:

Այդ վանքը հեթանոսական դարերում, յերբ տակավին կռատուն էր, ուներ 12 մեծ ավաններ: Լուսավորիչը, կործանելով կռատունը, նրա տեղը վանք հիմնեց և նույն 12 ավանները հատկացրեց վանքին: Ահա նրանց

անուններըը իրանց յերդահամարով և յուրաքանչյուրի ունեցած զինվորական ուժով.

1. Պաւոռս, 3012 յերդ (ծուխ), 1500 հետևակ, 2200 հետևակ:
2. Տուտ, 900 յերդ, 400 հետևակ:
3. Խորնի (*Մովսես Խորենացու ծննդավայրը*), 1906 յերդ, 700 հետևակ, 1008 հետևակ:
4. Պարեխ, 1680 յերդ, 030 հետևակ, 400 հետևակ:
5. Կեղէ, 1600 յերդ, 800 հետևակ, 600 հետևակ:
6. Բազում, 3200 յերդ, 1040 հետևակ, 840 հետևակ աղեղնավոր, 680 ախոյանավոր, 280 պարսատիկավոր:
7. Միղտի, 2080 յերդ, 800 հետևակ, 1030 հետևակ:

Ախա՛ռ, վոր այդ վանքի 12 ավանդներից միայն 7-ի անուններն ե հիշում Ջենոբը, իսկ մնացյալ 5-ից հիշում ե միայն Մուշի անունը, այն ևս առանց յերդահամարի: Բայց պատմագրի այն խոսքերը, թե զրանք մեծամեծ ավաններ են, վորպես արձանագրված և Մամիկոնյան իշխանների դրքի մեջ,— կարծել են տալիս, վոր մնացյալ 5 ավանները, թե՛ իրանց ընդարձակությամբ և թե՛ բնակիչների թվով, չեն մյուսներից մեծ չլինելին, փոքր ամենևին չեյին լինի, մանավանդ, վոր նրանց մեջն ե Մուշը, վորը յերբեմն հիշատակվում ե վորպես Տարոնի բոլոր քաղաքներից մեկը: Բայց և այնպես, վերոհիշյալ 7 ավանների յերդահամարի թվանշանները ճեռքում ունենալով, դժվար չե դառնել մյուս հնդի բնակիչների յերե վոչ ճիշտ, զոնե հավանական թիվը:

Ցոքն ավանները միասին ունեն 14·378 յերդ կամ ծուխ:

Ցերե այդ դումարը բաժանենք յուրաքանչյուրի վրա, ամեն մի ավանը կունենա 2054 յերդ:

Ցերե մնացյալ հինդ ավանների յուրաքանչյուրին ևս 2054 յերդ տալու լինենք, նրանք միասին կունենան 10·270 յերդ:

Ուրեմն բոլոր 12 ավանները միասին կունենան 24·648 յերդ:

Այն ժամանակվա նահատակական դրության մեջ՝ յուրաքանչյուր զերդասան կամ յերդ կարող եր մինչև 20—30 անդամներից բաղկացած լինել, բայց յուրաքանչյուրը միայն 5 հոգուց բաղկացած համարելով, բոլոր 12 ավանների բնակիչների ընդհանուր թիվը կլինի 123·240 հոգի:

Հետաքրքիր և այդ վանական ավանների զինվորական զորությունը: Հաշիվների նույն յեղանակով առաջնորդվելով, դառնանք նրանց ընդհանուր թվին:

Ցոքն ավանները միասին ունեյին 13·308 հետևակ և ճիարվոր զորք:

Ցուրաքանչյուր ավանը կունենա 1901 զինվոր:

Այդ հաշվով մնացյալ 5 ավանները կունենան 9505 զինվոր:

Ցեվ այդպես, բոլոր 12 ավանների զինվորների ընդհանուր թիվը կլինի 22·813 հոգի:

Մի վանք այդքան ահագին դիմադրական ուժ ունենալուց հետո, շատ զարմանալի պետք չէ համարել՝ քուրմերի ա՛յն կատաղի ընդդիմադրությունը և նրանց արյունահեղ կռիվները, որ տեղի ունեցան, երբ Լուսավորիչը Տրդատի զորքերով մոտեցավ կործանելու այդ վանքը, յերբ տակավին կռատուն եր:

Քրիստոնեական տաճարի վերափվելուց հետո, Գլակա վանքը, թե՛ յուր կալվածքների ընդարձակությամբ և թե՛ յուր դիմադրական ուժով, ներկայացնում եր մի զորեղ նախարարություն,— բայց հոգևոր նախարարություն:

Ճիշ այդպես, հենց Լուսավորչի և Տրդատի օրերում վանքերն ու յեկեղեցիները գրավեցին հողերի և բնակիչների մի նշանավոր մասը:

Բայց Լուսավորչի յետանդատ հաջորդները հետամուտ յեղան ավելի և ավելի ընդարձակել յեկեղեցական կալվածքների քանակությունը, այն համեմատական չափով, ինչ չափով վոր հետզհետե բազմանում եր վանքերի և յեկեղեցիների թիվը:

Լուսավորչի հաջորդների մեջ, վանքերի շինության գործում, առաջին տեղն է բռնում Ներսես մեծը: Նրա հիմնած վանքերի թիվը, ըստ ժամանակակից պատմագրի վկայության, հասնում եր 2040-ի: Այդ թիվը կրկնի յե մինչև անգամ չափազանց համարել: Բայց սուրբ չափազանցության մեջ էլ բռնկվում և ա՛յն չափազանց ճշմարտությունը, վոր նա անհամեմատ շատ վանքեր հիմնեց:

Բազմացնելով վանքերի թիվը, Ներսես մեծը, միևնույն ժամանակ, բազմացրեց և վանականների թիվը: Նրա օրերում միայն յեպիսկոպոսների թիվը հասնում եր 1020-ի, բացի այլ աստիճանի յեկեղեցականներից:

Նրա հիմնած վանքերը զանազան նպատակների եին ծառայում: Դրանք այլ և այլ յեպիսկոպոսաբաններ, կղերանոցներ, յերկրագրանոցներ և կուսաստաններ եին, վոր ամենի եին հայոց յերկրի ամեն կողմերում: Յուրաքանչյուրի մեջ առանձնացած եր՝ աշխարհից անջատված կրոնավորների մի առանձին բազմություն և վայելում եր վանքի անդրաշ բարիքները:

Բայց մեծ հայրապետի մեծ գործը, վորի մեջ փայլում է նա յուր բարձր մարդասիրական հոգվով, վորի մեջ յերևում է նա իրրև կատարյալ ժողովրդական մարդ և ժողովրդի բարեկամ,— այդ չեր: Նա կատարյալ բազմաթիվ բարեգործական հիմնարկություններ, վորոնց մեջ խնամք և անունդ եին զանում յերկրի չքվորները, յերկրի տառապյալները: Ամենքդ չեք լինի դրանց մի քանի տեսակները հիշել:

Աղքատանոցներ, վորոնց մեջ կերակրվում եին աղքատները և չքավորները: Հիվանդանոցներ, վորոնց մեջ դարմանում եին հիվանդներին: Ուրկանոցներ, վորոնց մեջ խնամք եին տանում ուրուկներին, այսինքն այնպիսի ախտավորների, վորոնց՝ յերկրի սովորության ուժով համարելով, արտաքսում եին մարդկային բնակության, վոր չվարակեն մյուս-

ներին, և այդ թշվառները բնակում էին հեռավոր անապատներում կամ մեծ ճանապարհների վրա: Անկելացոցներ, որոնց մեջ անուն էին դրում Ծեր և աշխատության անկարող մարդիկ: Վորբացոցներ, որոնց մեջ անուցանում էին վորբ և անտերունչ մանուկներին: Այրեցոցներ, որոնց մեջ խնամք էին տանում ծերացած այրի կանանց: Հյուրանոցներ կամ ռատարատուներ, որոնց մեջ պատսպարան էին գտնում պանդուխտները, ուսարիկանները և անցորդները: Պանդոկներ, որոնք շինված էին ճանապարհների վրա, լեռնային անցքերի մոտ, և առհասարակ այնպիսի տեղերում, ուր բնակություն չկար, որպեսզի ճանապարհորդները կարողանային այդ պանդոկներում օթևան գտնել:

Թե ո՞րքան էր այդ հիմնարկությունների թիվը,— հայտնի չէ: Բայց հայտնի է այն, որ դրանք մի՛չ մեր ժամանակները և մեր նահանգում, այլ հայոց յերկրի բոլոր կողմերում տարածված էին:

Զկար այդ ժամանակ մի տղա, որ վազողներում մուրացկանության համար ձանձրացներ հասարակության. չկային մոլաշրջիկ թափառականներ, որ քաղցածության սոսկալի, ձևոք մեկնին դնել ուրիշի դրամը: Ամեն մի տղա էր, ամեն մի տղա անուն էր ստանում հասարակաց անդանից:— Ընկերական տաբներում, ուսում և Փավստոս Բյուզանդացին, — Հայոց աշխարհի բոլոր տոհմաններում բնակ ամենին չէր տեսնվում, որ աղքատները մուրացկանություն անեին, այլ այնտեղ՝ նրանց հանդիսատանալու տեղերում (աղքատանոցներում) ամեն մարդիկ մատակարարում էին նրանց պետքերը, և նրանք, ամեն բանով լիացած, կարողություն չունեին վոչ վոքից:

Նույնը կրկնում է և Մեսրոպ յերկրը.— Ընկերական տրներում Հայոց աշխարհում վոչ վոք չէր տեսնում, որ մի մուրացկան յերևնար, կամ անկարող, անընթալ և դատարկաշրջիկ մարդիկ, որ Հայոց յերկրում կային շատ ժամանակներից ի վեր,— բոլորին վերջ տվեց սուրբ Ներսեսը:

Հայոց աշխարհի մեծ բարեկարգիչը ինքը տաքինության կատարյալ տիպարն էր: Գթություն, ողորմածության որինակը նախ ինքն էր տալիս, և ապա հորդորում էր, որ ուրիշներն էլ նույնը անեն իրանց աղքատ և կարոտյալ յեղբայրներին:

Բյուզանդացին ասում է.

«Նախ ինքն էր տեսնում և ամենին նույնն էր ուսուցանում. հրամայում էր, որ առհասարակ Հայոց բոլոր աշխարհում, գավառներում և գյուղերում... աղքատանոցներ շինեն, և ժողովեն ախտավորներին, ուրուկներին, անդամալուծներին և ամեն ցավագարներին,— և նրանց համար հիմնվեցան ուրկանոցներ, դարմանանոցներ, և կարգվեցան ոսկիներ... «Այրիներին, որբերին և չքավորներին հանդատություն և անուն էր բաշխում (յուր տան մեջ) և աղքատները միշտ նրա հետ էին ուրախ լինում. յուր սեղանը բաց էր և սեղանատունը ամբողջ որը աղքատների և ուսարկանների համար մի հյուրանոց էր: Թեև բոլոր գավառներում

աղքատանոցներ հիմնեց և նրանց համար ապրուստ կարդեց... բայց յուր հավատացեալ աղքատասիրության պատճառով, յուր սեղանատան դռներն ևս միշտ բաց եղին նրանց առջև. կույրերը, կաղերը, խեղանդամները, խուլերը, հաշմանդամները, խեղճերը և կարոտյալները, նրա հետ և նրա շրջանում նստած, կերակրվում եղին: Նա ինքը յուր ձեռքովն էր լվանում ամենին, ծծում էր և պատում էր (նրանց վերքերը): Նա ինքը անձամբ ուտեցնում էր նրանց ամեն մի կերակուր, և յուր ունեցածը նրանց պետքերի համար էր ծախսում, և ամեն ուսարականներըն նրա հետ, նրա հովանավորության ներքո պատսպարված, հանգստության եղին վայելումն:

Այդ բոլորից հետո, չատ հասկանալի է այն մեծ ժողովրդականությունը, որ վայելում էր պաշտելի մարդը: Հասարակաց հայր էր կոչվում նա: Ամեն տեղ, ուր և հայտնվում էր, լռում էր աղմուկը, դադարում էր խռովությունը: Խաղաղության հրեշտակ էր նա: Վոչ միայն հայոց թագավորը, և վոչ միայն հայոց նախարարները, այլ հեռավոր կայսրները և մինչև անգամ պարսից արքան ակնածում եղին նրանից: Զորավոր ձեռքով դարձնում էր Հայոց աշխարհի կառավարության ղեռասանակը և յուր լայն, ընդարձակ հայացքների համեմատ, ուղղություն էր տալիս:

Այդ ուղղության մասին պետք է խոսվի, վորովհետև դրա մեջն եղին թագնված այն խոշ յերկպատակության սերմերը, վոր հետզհետե, աճելով, վերջը աղետալի հևիմների պատճառ դարձան հոգևոր և մարմնավոր իշխանության մեջ:

Արդեն Աշխիշատի ընդհանրական ժողովում, Ներսես մեծը, ի թիվս այլ բարեկարգությանց, կանոնական սահմանադրությամբ կարգի դրեց վանքերի խնդիրը: Նրա ծրագիրը այդ խնդրի վերաբերությամբ այն աստիճան առաձգական էր, վոր կարող էր ամփոփել յուր մեջ նրա մեծ դաղափարը՝ յուր ընդարձակ բովանդակությամբ:

Ի՞նչ էր կամենում այդ դորավոր հանճարը:—

Կազմել Հայոց աշխարհից մի մեծ վանք, մի ընդհանուր յեղբայրություն, ուր տիրեր միայն հավասարությունը, ուր սեփականության տարբերություն չլիներ, ուր աղքատը, չքավորը, տկարը, աշխատության անկարողը կերակրվեր ասուածո սեղանից:

Ժամանակակից պատմագիրը, Փավստոս Բյուզանդացին, ասում է.

«Այն ժամանակում (Աշխիշատի ժողովում) կարգեցին, կազմեցին, կանոնադրեցին, հորինեցին, և Հայոց յերկրի բոլոր ժողովուրդը դարձրին վորպես համաշխարհի (համաքաղաքացի) վանականների միաբանության մի կարգ» (ուխտ):

Մեսրոպ յերեցը ավելացնում է.

«Ներսես մեծի որերում ամբողջ Հայաստանը դարձավ իբրև մի կատարյալ անծն, վոր գնում էր ասուածո յերկյուղի յեռևից»:

Վորքան մեծ ևր ձեռնարկությունը, այնքան և ծա՞նր լինան հնարանքները...

Գուցե բոլորովին քրիստոնեական առաքինության դրացմունքներից դրդված, վորոնք այնքան վառ կային նրա մեջ, Ներսես մեծը Աշտիշատի ժողովում մեջ բերեց և ընդունել տվեց յուր կազմած ծրագիրը: Գուցե ժամանակի անդիտությունը, ժողովրդի թշվառությունը, թագավորի, նախարարների, և առհասարակ ազնվականության հարստահարությունները՝ թևևպրենցին նրան յևկեղեցու դիրքը դարձնել մի անսահման և ազահով պատսպարան, ուր բոլոր նեղյալները և կարոտյալները կարողանային ապաստան գտնել:

Ցնծ, վերջապես, գուցե վոչ կանխատեսած նախամտածությամբ, այլ միայն վողբմտածության դաղափարով վողևորված, մեծ հայրապետը դրծի սկզբում նախաձեռնեց չհարաղացավ յուր հսկայական ձեռնարկության հնարանքները, վոր այլ վոևճանի չէին կարող հասցնել, քան թե՝ ստեղծել Հայոց աշխարհից մի յևկեղեցական պետություն, խաչի սրբազան դրոշի ներքո:

Թե այդպես և թե այնպես, հողևոր-համաքաղաքացիների վանքը հիմնվեցավ: Այդ համաշխարհական վանքի վանահայրը՝ ինքը հայրապետն ևր—Ներսես մեծը: Նրա ընդարձակ տնտեսությունը հանձնել ևր նա, կրոնավորներից ընտրված, առանձին վերակացուների, վորոնց դլխավորն ևր յուր սարկավագը—Մեսրոպ, վոր հետո յևկեղեցական ձեռնադրվեցավ:

Ի՞նչ արդյունքներով ևր կառավարվում այդ վանքը:—

Դա յուր ժամանակի ամենածանր տնտեսական խնդիրն ևր, վորի լուծման մեջն ևր կայանում բուն չարժառիթը այն բոլոր կռիվների և այն բոլոր ընդհարումների, վոր տևղի ունեցան հողևոր և մարմնավոր իշխանության մեջ, և վորոնք վերջացրին Աբշահունյաց պետության ցավալի անկումը...

Վերևում հիշվեցավ, վոր արդեն Լուսավորչի որերում, յերբ վանքերի հիմնարկության սկիզբը դրվեցավ, նորահավատ Տրդատը, ընդհանուր առատաձեռնությամբ, յուր ամբողջ պետության մեջ ընդհանուր որենք դրեց, վոր ազարակներից «չորս–չորս հող», իսկ ավաններից «յոթն–յոթն հող» հատկացվի յևկեղեցուն: Բացի այդ հողերից, յևկեղեցին առանձին տասանորդ յերկրի բոլոր մշակություններից: Յևկեղեցին դրավից այլև այն մեհենական կալվածքները, վոր հեթանոսական դարերում վայելում էին քուրմերը:

Ներսես մեծի որերում, յերբ վանքերի և զանազան բարեգործական հիմնարկությունների թիվը անհամեմատ կերպով բազմացավ, նույն չափով բազմացրեց նա և յևկեղեցական կալվածքների քանակությունը, հատկացնելով նրանց նորանոր ավաններ և նորանոր գյուղեր: Ինչ վոր հիմնից նա, բոլորի դործությունը ապահովացրեց հատատուն յեկամուտներով:

Բացի հոժարակամ կտակներից, վորով ցանկացողները իրանց կալքը

թողնում էին յեկեղեցուն,— առանց կտակի էլ, անժառանգ մեռնողների որինավոր ժառանգը համարվում էր միայն յեկեղեցին, որը դրավում էր հանգուցյալի բոլոր շարժական և անշարժ կալքերը: Ցավ այդ վոչ սակավ ընդարձակում էր յեկեղեցու անհուն հարստությունը:

Ցերը Վաչե Մամիկոնյանը Խոսրով Բ-ի հրամանով ջնջեց Մանավազյան և Վորդունյաց նախարարների մնացյալ ժառանգներին, այնուհետև այդ յերկու նախարարությունները իրանց բոլոր կալվածքներով դարձան յեկեղեցու սեփականություն: Մանավազյան նահապետի յերկիրը յուր քաղքներով և դյուղերով առացավ Ալբիանոս յեպիսկոպոսը և հաստատեց յուր կառավարության ներքո դտնված յեկեղեցիներին: Իսկ Վորդունյաց նախարարության յերկիրը յուր քաղաքներով և դյուղերով դրավեց Բասենու յեպիսկոպոսը:

Ցավ այդպես, յեկեղեցին յուր բազմաթիվ վանքերով, դրավելով հողերի մեծ մասը, հետզհետե դառնում էր պետության մեջ ամենահարուստ կալվածատերը,— մինչդեռ թագավորը սեղմված էր Աբարաիր նեղ սահմանների մեջ, իսկ նախարարությունները այնքան բազմացել էին, որ իրանց դոյությունը պահպանելու համար՝ բավականաչափ հող չունեին:

Ցնթե վանքերը լինելին լոկ կղերանոցներ, որոնց մեջ անգործ աբեղաների մի սուլար բազմություն միայն սպառում լիներ յերկրի հարստությունը, տարակույս չկա, որ այդ դեպքում նրանք բոլորովին անտանելի կդառնային ժողովրդին, մանավանդ, որ քրիստոնեությունը դեռ վոչ այնքան տարածված էր Հայաստանում: Քրիստոնեության մուտք գործելուց անցել էր 70—80 տարի միայն: Այդ սուղ միջոցում նոր կրոնը չէր կարող այնքան արմատացած լինել ժողովրդի մեջ, որը, յեթե վոչ քրիստոնեական ճշմարիտ ըմբռնությամբ, գոնե հասարակության մեջ մոլեռանդություն դարդացնելով, կղերը կարողանար ժողովրդին դրավել դեպի յեկեղեցին և նրա վառտակը բաժաներ նրա հետ: Բայց հայոց վանքերի կազմակերպությունը, մանավանդ Ներսես մեծի բարեկարգություններից հետո, հարմարեցրած էր յերկրի թե՛ պահանջներին և թե՛ պայմաններին: Այս տեսակ վանքեր կարող էին դոյություն ունենալ մինչև անդամ մի հեթանոս ժողովրդի մեջ: Վանքը միացրել էր յուր դոյության հետ և՛ բարեդործական և՛ մարդասիրական նպատակ: Ուր տխրում և տարտությունը, հարստահարությունը, ուր պատանին ճնշում և անազատին,— այնտեղ այս տեսակ հիմնարկությունները ոչ՛ միայն վերկարար ապաստան են դառնում նեղյալների համար, այլ նրանց գրկումն են գըտնում թշվառները իրանց ամենամեծ մխիթարությունը: Այդ եր պատճառը, որը վանքը սիրելի յեր ժողովրդին:

Աբշակ Բ. մի ապաստանի քաղաք հիմնեց, և կարճ միջոցում այնտեղ հավաքվեցան հայոց աշխարհի բոլոր դժդոհները: Իսկ Ներսես մեծը հարյուրավոր վանքեր հիմնեց և յուր կողմը ձգեց ամբողջ Հայաստանը:

Վանքը հաց եր տալիս, կերակրում եր ժողովրդի աղքատներին, դպրո-

մանում էր նրա հիմնադիրներին, անուցանում էր նրա մարմիններին և այրիներին, ուսում և կրթություն էր տալիս նրա զավակներին: Նա առանում էր ժողովրդից և տակոսներով վերադարձնում էր ժողովրդին: Ցնվ, վերջապես, ինքը ժողովուրդը այդ վանքի կեղրոնության անդամն էր:— Ժողովուրդը գո՛հ էր, ժողովուրդը չէր տրտնջում:

Տրտնջում էր Թագավորը, տրտնջում էին և նախարարները:

Թագավորը տարաձևելով տեսավ, որ յուր պետության մեջ կազմվեցավ մի այլ պետություն—հոգևոր պետություն, որ մեզմ ձեռքով փոքր առ փոքր գրավից վո՛չ միայն հողերի մեծ մասը, այլ և յուր կողմը ձգեց ժողովրդին: Նա գտածավ ամենատարածը և ամենատրտաղան հնղինակություն, որով առջև ամեն դռներ խոնարհվում էր:

Թագավորը տեսավ, թեև շատ ուշ հասկացավ, որ այդ հնղինակությունը արդեն այն տաճման ուժ և զորություն էր առացել, որ յուր ձեռքումն էր պահում արքայական գահը:

Գուցե արհավիրքը այնքան շատ չէր պատել, գուցե Աբշահունի Թագավորները ավելի համբերող կլինային, եթե հոգևոր իշխանությունը յուր նեղ, հոգևոր սահմաններից դուրս չգար: Բայց նրանք սկսեցին համարձակ ներգոյ միջամտություն գործել և կառավարության գործերի մեջ:

Կառավանության խորհուրդը մի ընդարձակ դուռ բաց արեց հոգևորականության առջև մանելու ժողովրդի սրտի մեջ: Կառավանության միջոցով ծանոթանալով նրա գործերի հետ, հոգևորականությունը սկսեց դառավար հանդիսանալ նրա հանցանքներին և պատիժներ վերաշել: Պատիժները, որ սկզբում սահմանափակվում էին միայն եկեղեցական սպասխարանքներով, վերջը աշխարհական դառավարության ձև առացան: Ավելացրին թե՛ տուգանք և թե՛ գանահարություն (ձեձ):

Դանահարություններից ազատ էր մնում միայն ազատականությունը, իսկ տուգանքի ենթարկվում էին ամեն դասակարգի անձինք: Այսպես պատժում էր նա ամեն քրեական հանցավորներին:

Եկեղեցին միջամտելս էր լինում և այնպիսի վեճերի մեջ, որոնք սուկ քաղաքացիական գործերի բնավորություն ունեին, օրինակ, հողերի բաժանման կամ հաշիշատության խնդիրներ և այլն. Եկեղեցին միջամտելս էր լինում և հարկերի բաշխման ու հավաքման գործերում: Այդ բոլորի մեջ ներգործում էր նա մո՛չ երբեք հաշտարար–միջնորդ, այլ վերոնս իրավառեր:

Այդ բոլորը ազդակի հակատակում էին թե՛ Թագավորի և թե՛ նրա նախարարների իրավունքներին, որոնք իրա՛նց միայն ճանաչում էին յերկրի տերը և դատավորը:

Աբշահունի Թագավորը սովոր չէր, բացի իրանից, մի այլ բարձր հնղինակություն ճանաչել: Աբշահունի Թագավորը ինքը մի սրբազան նյութ էր: Նրա անձնավորության մեջ միանում էր թե՛ յերկնայինը և թե՛ յերկ-

բայինը,— թե՛ հոգևորը և թե՛ մարմնավորը: Բայց քրիստոնեությունը խլեց նրանից այդ արբաղնությունը և տվեց եկեղեցու հայրապետին: Այդ մոռանալ չեր կարող նա:

- Եկեղեցու հայրապետը համարում եր իրան կատարյալ հոգաբարձու թե՛ յուր հոտի, և թե՛ պետության: Դժվարին խնդիրներում նա չեր բանակցում ոտար պետություններին հետ և խաղաղության դաշինքներ կռում: Նա չեր դատավոր հանդիսանում, չերբ թագավորի և յուր նախարարների մեջ չերկպառակություններ եկին պատահում: Մի խոսքով, ամեն հարաբերությունների մեջ ներկա չեր նա, և յուր համարձակ ձեռքը մեկնում եր մինչև թագավորի արքունիքը, մինչև նրա ներքին ընտանեկան կյանքը...

Մի խանգամ, տարվա տոնախմբություններից մեկի ժամանակ, չերբ Տիրան թագավորը յուր ավագանիի հետ կամենում եր չեկեղեցին մտնել, նրա առջև դուրս եկավ Հուսիկ կաթողիկոսը, աղաղակելով.— «Ինչո՞ւ չես դալիս, դու արժանի չե՛ս, ներս մի՛ մտիր»... Թագավորը այլ և այնպես չկարողացավ, հրամայեց՝ բրածեծ անելով ապտանեցին կաթողիկոսին:

Արշակունի թագավորը, վոր սովոր եր հանդիսավոր զոհաբերություններին ժամանակ՝ ինքը տաճարի մեջ անձամբ կատարել արբաղան խորհուրդը և հաճեցնել յուր աստվածներին, —հանկարծ մի այլ տաճարի դռնից նրան չեն թողնում, վոր ներս մտնե, ասելով՝ «արժանի չես»... Այստեղ նա այն աստիճան խոնարհվեցավ, վոր ընդունեց մինչև անդամ ցած իջնել սուրբ բեմից և հասարակ ժողովրդի կարգում կանդնել:— Այդ տեղին և նրան արժան չեյին համարում...

Անդիրը միայն հին և նոր կրոնի համառ մաքառումը չեր: Անդիրը կատարյալ տնտեսական եր, կատարյալ տերրականական եր: Այստեղ մըրցում եյին եկեղեցու և պետության միմյանց հակառակ շահերն: Այստեղ մրցում եյին հոգևոր և մարմնավոր իշխանություններն: Այդ պատը յերես-վում է այն հանդամանքից, վոր յերբ Պասլ թագավորը յուր սեղանի վրա Թունավորեց Ներսես մեծին, նրա մահից հետո · խանդարեց այն բոլոր կարգերը և վոչնչացրեց այն բոլոր հիմնարկությունները, վոր կատուցել եր մեծ հայրապետը, և վորոնց մասին խոսվեցավ վերևում:

Սկսեց հալածել հոգևորականներին, և նրանց թիվը, վոր անհամեմատ կերպով աճել եր, պակասացրեց: Կուսաստանները փակեց, և բոլոր միանձնուհիներին, վոր ուխտել եյին աշխարհ չմտնել, հրամայեց, վոր ամուսնանան: Բոլոր բարեգործական հիմնարկությունները, ինչպես եյին՝ վորբանոցները, ուրկանոցները, անկելանոցները, աղքատանոցները և այլն, — վոչնչացրեց: Հրաման արձակեց, վոր աղքատներին և մուրացկաններին վոդորմություն չանեն, վոչինչ չտան: Այդ, նրա կարծիքով, պարզացնում եր ժողովրդի մեջ, մի կողմից, ծուլություն և ձրիակերություն, իսկ մյուս կողմից, բարձրացնում եր եկեղեցու հեղինակությունը, վոր իրան հոգաբարձու յեր ներկայացնում ձրիակերներին:

Վաչէշայինելով վերահիշյալ հիմնարկութիւնները, վաչէշայրենց նաև այն արդյունքների աղբյուրները, վորոնցով պահպանվում էին նրանք։ Նոր օրինքով արդիւնց, վոր այն «հոգևոր պտուղը» և «տասանորդները», վոր վաղ ժամանակներից հետո յուր նախորդները ստհմանել էին տալ յեկեղեցուն—այլ ևս չտան։ Բայց դրանցից, հարքունիս դրավեց յեկեղեցական հողերի մեծ մասը։ Ուրեմն՝ յուր դյուղում՝ Տրդատի հրատարակած օրինքով՝ հատկացրած «յորն հողերից» Քողեց յեկեղեցուն «յերկու հուզ» միայն, իսկ հինգը հարքունիս դրավեց։ Ցեվ այդ «յերկու հողերից» համեմատ, ամեն մի դյուղում Քողեց յերկու քահանա և յերկու սարկավագներ միայն, իսկ մնացյալներին հրամայեց, վոր գինվորական ծառայության մեջ մտնեն։ Քահանաների և սարկավագների վորդիները, յեղբայրները, աղդականները, վոր մինչև այդ ժամանակ ազատ էին հարկերից, բոլորին հնարկաւոր դարձրեց։ Ամուսնական օրենքները քեքիացրեց։ Կրոնի աղատություն ավեց, վոր ցանկացողները կարող են հեթանոսական հին սովորությունները դարձյալ դործ դնել և մինչև անդամ կուռք պաշտել։

Ցեվ, անտարակույս, ուրիշ շատ նոր կարդադրություններ կաներ յերիտասարդ թագավորը, յեթե հանկարծական նենդավոր սուրը նրա արյունը չթափեր հրավերքի սեղանի վրա...

ՑԵԿԵՂԵՑԻԿՈՆՆԵՐԻ ՋՆՆԱՋԱՆ ՏԱՐԻՐՔԸ

Անդիրն այն էր, վոր հոդևորականությունը ինքը յուր մեջ մի սերտ և դորեղ միաբանություն կազմել չէր կարող, վորովհետև նա բաղկացած էր զանազան մխիթարյան հակառակ տարերքից։ Այդ թեև մի կողմից քուլացնում էր յեկեղեցու ուժը, բայց, մյուս կողմից, հնար էր տալիս մարմնավոր իշխանությանը ոչնչա քաղել նրանց անհաշտությունից։

Ինչպես կազմվեցան այդ զանազան տարերքը։

Լուսավորչիչը, քրիստոնեությունը Հայաստանում տարածելու համար, հնարավորին բնրեց յուր հետ, իբրև ուղեկիցներ, մի խումբ ուսարաղդի կրոնավորներ։ Հետո, դործերի և պահանջների աճելու համեմատ աճեցրեց նաև ուսարաղդի կրոնավորների թիվը, հետզհետե նորերին հրավիրելով։

Մի նամակի մեջ, ի թիվս այլոց, այդպես էր դրում Լուսավորիչը Տրդատի հետ միասին Նյուսարացոց Ցեղիպտոս յեպիսկոպոսին և Աղեքսանդրոց Տիմոթեոս յեպիսկոպոսին։

... «Մանավանդ դիտեք, վոր մեր ամեն դավառների համար յեպիսկոպոսներ են պետք և քահանաներ։ Ցեվ թեպետ վոմանք (կրոնավորներ)

վանազան կողմերից յեկել և հավաքվել են այստեղ, բայց ի՞նչ են դրանք, հայոց վեց հարյուր և հսկ դավառների հետ համեմատելով. յուրաքանչյուր դավառին մի-մի կամ յերկու քահանա հաղիվ թե կընկնի: Իսկ այս յերկրի (հայոց) մանուկները դեռ դպրոցներումն են, և նրանցից դեռ վոչ վոք պատրաստ չե քահանայության համար... Ուրեմն աղաչում ենք ձեզ, մեզանից մի՛ խորշեք. այլ ամենայն վստահությամբ վուրթացեք դալ այդ մարդիկների հետ, վոր ուղարկեցինք ձեզ մոտ: Ցնվ յեթե կգաք, Հարքա և Ցնկեղյաց ամբողջ յերկիրը ձեր առվելը կդնենք. վոր վիճակում և բնակվելու կլինիք՝ այն վիճակը ձերը կլինի, և կժառանգեն նրանք, վոր ձեզանից հետո կհաջորդենք»:

Վերջին խոսքերից պարզ է, վոր ոտարազգի յեկեղեցականները, հրաժիրվելով Հայաստան, ստանում էին իրանց ցանկացած վիճակը իբրև ժառանգություն և, այնտեղ հոգևոր իշխանություն կամ կրոնական միաբանություններ հիմնելով, ծողնում էին նույն վիճակը իրանց հաջորդներին:

Թե վո՞րքան յեղավ այդ ոտարազգի յեկվորների ընդհանուր թիվը,— հայտնի չե, բայց այնքանը բավական հայտնի յե, վոր Լուսավորիչը դեռ յուր կենդանության ժամանակ կարողացավ Հայաստանի զանազան վիճակներում կարգել մինչև 400 յեպիսկոպոսներ, ի բաց առյալ յերեցները և վարդապետները:

Այդ մի խոշոր թիվ է: Աղաթանգեղոսի մեզ տված այդ թիվը՝ յեթե չափազանցություն էլ համարվի, բայց այնքանը ճշմարիտ է, վոր քրիստոնեությունը յուր հետ բերեց Հայոց աշխարհում ոտարազգի յեկեղեցականների բավական մեծ հոսանք:

Վորպես յերևում է վերևի նամակից, Լուսավորչի հիմնած դպրոցները, այնքան սուղ ժամանակում, վոր տևեց նրա առաքելական կյանքը, անկարող էին բնիկներից այնքան թվով յեկեղեցականներ պատրաստել: Իսկ հիշյալ յեպիսկոպոսները կարգվեցան այն ժամանակ, յերբ դպրոցները դեռ նոր էին հիմնվում: Ուրեմն, շատ պարզ է, վոր այդ հոգևորականները, յեթե վոչ բոլորովին, բայց, անտարակույս, մեծ մասամբ ոտարազգիներ էին՝— հույներ և ասորիներ:

Բնիկներից վոքր ի շատե նախապատրաստություն ունեին քրմերի վորդիները: Դրանք սկզբից ուսում ունեին և հետո, Լուսավորչի նոր հիմնած դպրոցները մտնելով, կարողացան շուտով քրիստոնեական կրթություն ստանալ և յեպիսկոպոսական աստիճանի հասնել: Բայց դրանց թիվը այնքան աննշան եր, վոր ոտարազգիների հետ համեմատելով խիստ զգալի փոքրամասնություն էին կազմում: 12 յեպիսկոպոսների անուններ միայն հայտնի յեն քրմերի վորդիներից, վորոնց մեջ նշանավոր յեղավ Ալբիանոսը:

Թեև դեռ Լուսավորչից առաջ Հայաստանում թաղնված քրիստոնեություն կար, և կային մինչև անգամ քրիստոնեական վանքեր, բայց այդ վանքերը ի վաղուց հետե անուշադության էին իրանց նեղ և սահմանափակ

շրջանում՝ խստակյաց արեղաներ և աշխարհից հրաժարված ճգնավորներ միայն, որոնք անընդունակ էին նոր հիմնված եկեղեցու վարչության մեջ մի՛բևե պաշտոն վարելու: Առաքելքը դարձյալ մնում էր առաքյալներին:

Բացի վիճակային եպիսկոպոսություններից, որ վարչական պաշտոն էր, նոր հիմնված վանքերի վանահայրությունն էս, Լուսավորչի օրենքում, հանճնելեցավ առաքյալի կրոնավորներին: Նրանք կազմեցին վանական միաբանություններ, ի հարկե, իրանց ազգայիններից, տիրեցին իրանց հանճնված վանքերի կալվածքներին, և այն աստիճան բնաւցան, որ դարերից վերջը, երբ հարկավոր եղավ հեռացնել նրանց, մեծ դժվարությամբ կարողացան իրանց տեղից շարժել:

Արեւմուտքում հռոմէական կայսրների հալածանքները, իսկ արեւելքում դեռ անմեղ յերկրի հրապարանքը՝ դրավեցին առաքյալի բախտաւոր կրոնավորներին մի ամբողջ հեղեղ դեպի Հայաստան, որտեղ յերկրի նորահաստատ թագավորը, քրիստոնեական վարդապետությամբ, յուր 620 գաւառները նրանց առջեւն էր դնում: Միանգամ առացած վանքը կամ վիճակը դառնում էր նրանց մշտական ժառանգություն:

Այդ առաքյալի կրոնավորները իրանց աղդակիցների միջոցով, որոնք առաջուց արդեն դաւանդված էին հայոց վանքերում, այն աստիճան ճանաչում էին Հայոց յերկիրը և նրա հարմարությունները, որ դեռ իրանք չեկած, կանխապես պայմանավորվում էին թագավորի և հայրապետի հետ, թե ո՛ր վիճակը, կամ ո՛ր վանքը կցանկանային առանալ: Այս տեղից շատ պարզ է, որ քրիստոնեության տարածելու առաքելական պատճին չէր, որ մղում էր նրանց դեպի Հայաստան, այլ լոկ շահախնդրություն, և կուսական յերկրի առատաձեռն պատրաստակամությունը, որ նրանց ապահով պատսպարան էր ընծայում յուր գրկում:

Ջենոբ Գլակը, աղդով ասորի, Տարոնի Ինակյան վանքի վանահայրը, յուր Թղթի մեջ, որ ուղղված էր ասորոց եպիսկոպոսներին, ի թիվս այլոց, այդպես է նկարագրում Հայոց յերկիրը, հրավիրելով նրանց դալ Հայաստան:

... Քեզ այդ դուք կեթե կամենալու լինիք դալ այս յերկիրը, բարությունները լի յե այս յերկիրը. անդերը դաշտաձև են, անուշ ոդով և բազմաջուր, իսկ չորս կողմում՝ լեռների վրա՝ շատ ամրոցներ կան: Այս յերկիրը բազմարոտ է և մեղրաբուխ. և որպես մանանան իջնում էր յերկինքից այնտեղ՝ հրեաների մոտ, նույնպես և այստեղ՝ այդ յերկրում իջնում է անտառների վրա և քաղցր է, ավելի քան մեղր, որ կոչում են գազալեն... Այս յերկիրը ամեն բարությունները լի յե և աջողակ և առողջարար: Իչխանները կրոնավորասեր են և չարիքներ դործելուց մաքուր. աղքատասեր են և վորբերի խնամատարներ. սիրում են հոգ տանել եկեղեցիներին և հաղարարձու լինել նրանց պահքերին:

Ահա՛ այսպես կազմվեցան կրոնավորների չորս առաքելք առաքելք:

Բնիկներից. 1. պարթևական տարրը, այսինքն՝ Լուսավորչի տոհմը, 2. քրմական տարրը, այսինքն՝ քուրմերի վերդիներից առաջացած հոգևորականությունը:

Իսկ ասպարազիններից. 3. հունական և 4. ասորական:

Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձին:

Լուսավորչի տոհմը ուներ յուր արքայական անցյալը, վոր նվիրագործված եր մեծահարուստ և վսեմ ավանդություններով, վոր ժողովրդի սրտին և հավատին շատ մոտ եյին, վոր նրա համար անմոռանալի եյին: Ժողովուրդը պաշտում եր այդ տոհմը և ընդունում եր նրան իբրև ամենաբարձր հոգևոր հեղինակություն: Այդ եր պատճառը, վոր Հայաստանը սիրում եր այդ տոհմի մեջ միայն տեսնել յուր յեկեղեցու ներկայացուցչին, նրա՛ն միայն արժան եր համարում հայրապետական աթոռը, և մինչև նրա բարեբար ձեռքումն եր վստահում տեսնել յուր ծայրագույն հովվապետի պատվանը: Այդ զգացմունքներից առաջ յեկավ այն ժառանգական կաթողիկոսությունը, վոր իջնում եր Լուսավորչի տոհմի մեջ որդվոց որդի:

Եվ այդ հայրապետական տունը, յուր դարյուրյան ամբողջ ընթացքում, մինչև արդարացրեց ժողովրդի թե՛ հավատը և թե՛ նրա վստահությունը: Նա միշտ մնաց անբիծ և անարատ, և ամենայն անձնանվիրությամբ կատարեց յուր հանճն առած բարձր հոգևորականությունը: Իսկ այդ հոգևորականությունը վորքան սիրելի, վորքան հաճելի յեր ժողովրդի համար, նույնքան ծանր եր թագավորների համար: Ամենայն անաչառությամբ ստանձնահարում եր նա թագավորների մոլությունները և նրանց կամայականություններին սահման եր դնում: Նա, իրավ, ճնշում եր գործ դնում թագավորների վրա, բայց յերբեք դահին չեր դավաճանում: Հայրենասիրությունը և արքայական թագի պաշտպանության դաստիարակը՝ այդ տոհմի ղեկուցչի առաքինություններից մեկն եր:

Լուսավորչի հայրապետական տունը, յուր վեհափառության բարձր դիրքի համեմատ, արքայավայել կացություն ուներ: Այդ տունը ավելի պայծառացավ Ներսես մեծի օրերում: Թագավորը այնտեղ մտնելու ժամանակ՝ իրավունք չուներ նետելու, մինչև հայրապետը տեղ չցույց տար: Բայց հայրապետը թագավորի արքունիքը մտնելու ժամանակ ազատ եր ամեն տեղ նետելու: Պատարագների և պանապան պաշտոնակալների մեծ ուշադրություն միշտ ներկա յեր այնտեղ: Տասն և յերկու յեպիսկոպոսներ հայրապետի անբաժան դործակիցներն եյին և խորհրդակիցները: Զորս վարդապետներ և վաթսուն յերեցներ միշտ անպակաս եյին նրա սպասքից: Աշխարհականներից մինչև հինդ հարյուր հոգի սահմանված եյին նրան: Բացի դրանցից, հայրապետը ուներ յուր այլ և այլ պաշտոնյաները, վորոնցից եյին՝ սենեկապետ, վահակալ, Դրան յեպիսկոպոս, գրչապետ, հյուրընկալ, սարկավագապետ, Դրան վարդապետ, Դրան յերեց և այլն:

Հայրապետական տունը, Լուսավորչի բոլոր ժառանգների օրերում,

վակված չեր այս կամ այն վանքի առանձնության մեջ։ Այլ նա աշխարհից չեր անջատված և աշխարհի առջև միշտ բաց եր։ Լուսավորչի ժառանգները, Աբրահամի, Իսահակի և Հակոբի նման, միևնույն ժամանակ, թե՛ ժողովրդի հայրերն էին և թե՛ դերդաստանի հայրերը։ Նրանք բնակվում էին իրանց ընտանեկան խաղաղ շրջանում։

Մենք եր վառը հայրապետի՝ երբը նա մի վորևե տեղ եր գնում։ Մի ամբողջ բանակ շարժվում եր նրա հետ։ Մի քանի հարյուր սպառազինված ձիավորները, յուր թիկնապահներից, ուղեկցում էին նրան։ Մի քանի հարյուր յեպիսկոպոսներ, վարդապետներ, յերեցներ և այլ յեկեղեցականներ, ջորիների վրա նստած, ընթանում էին նրա առջևից և յետևից։ Ինքը հայրապետը նստած եր լինում կա՛մ սպիտակ ջորու վրա, կա՛մ կառքի մեջ, վոր նուիրված տանում էին յերկու սպիտակ ջորիներ, վոր միևյն թագավորն իրավունք ուներ դարձ ածելու։ Ջորիների թամփերը և այլ հանդերձանքը զարդարած էին լինում վոսկով։ Հայրապետը սովորաբար յերևը ծածկված եր ունենում սև քողով։ Առջևից տանում էին հայրապետական դավազանը և, երբև սրբազան դրոշ,— բարձր խաչվառը։

Կենցաղավարության և արարողությունների այդքան ընդարձակ, այդքան չքնդ կազմություններ շատ հասկանալի յե, վոր ահագին ծախքերի յեր կարոտ։ Հայոց Թագավորներից հատկացրած 15 գավառների ամբողջ արդյունքները հազիվ կարողանում էին բավականացնել հայրապետական տան ծախքերը։ Բացի այդ գավառներից, հայրապետական տունը ուներ յուր սեփական կալվածքները։

Ծագելով բարձր աղնվապետական տոհմից, ինքը Լուսավորիչը բավական կալվածքներ ուներ հայոց յերկրում։ Նրա հայրը, Անակը, Պարսկաստանից գալով Հայաստան և, անձնատուր լինելով հայոց Խոսրով Թագավորին, վերջինս սիրով ընդունեց նրան, և նրա բնակության համար ընծայեց ընդարձակ կալվածքներ։ Անակի վարմունքից հետո՝ այդ կալվածքները հարքունիս դրավվեցան։ Բայց Տրդատը կրկին վերադարձրեց Անակի ժառանգներին, վորոնց ներկայացուցիչն եր Լուսավորիչը։ Այդ կալվածքների թվումն եր Աշտիշատ ավանը, նոտայքի գավառում, վոր ծառայում եր Լուսավորչի տան համար իբրև ձմեռոց, և վորը հետո վայելում էին նրա ժառանգները։

Լուսավորիչը սահակ Տրդատից նաև այն ավաններից և գյուղերից շատերը, վորոնք առաջ քուրմերի սեփականություն էին։ Այդ գյուղերից մեկն եր Թորդանը, Դարանաղյաց գավառում, վոր ծառայում եր հայրապետական տան համար վորպես ամարանոց։

Թորդանը նշանավոր եր հեթանոսական դարերում իբրև հայոց նախարարական վայրերից մեկը։ Այնտեղ կանգնած էին Աստղիկ դիցուհու տաճարները։ Բայց Թորդանը ավելի յերևելի դարձավ, յերբ նրան վիճակվեցավ լինել՝ հայոց բազմավաստակ Լուսավորչի զբոսավայրը։ Այնտեղ եր այն սրբազան այգին, վոր յուր ձեռքով մշակել եր հայոց առաքյալը։

Այնտեղ անցուցանում էր նա յուր հանդստյան ժամերը, և այնտեղ հանդիպանում էին նրա և յուր ժառանգների սուրբ նշխարները:

Սկզբում քրմական կալվածք էր և Թիլ ավանը, Ճգնեղյաց գավառում: Նա դանվում էր հռչակավոր Ճերիզայի հանդեպ: Գայլ գնալ, մնջտեղից անցնելով, բաժանում էր հայոց այդ յերկու նշանավոր սրբավայրերը—Թիլը և Ճերիզան: Առաջինի մեջ կանգնած էր Աբամաղլի գռեհկի՝ Նանեյի արձանը, իսկ յերկրորդի մեջ՝ Անահիտի վոսկյա արձանը: Վերջինը նույն արձաններ, վորի դլխին պսակ չդնելու համար՝ այնքան տանջանքներ կրեց Լուսավորիչը Տրդատից: Իսկ հետո, յերբ Տրդատը քրիստոնեություն ընդունեց, հիշյալ յերկու տաճարներն էլ կործանեց Լուսավորիչը: Թիլ ավանը առացավ նա յերբեմն մշտական ժառանգություն: Այդ ավանում դրվեցան նրա մարդիներից մի քանիսի չերիմները:

Ճնվ այդպես, հայրապետական տունը, յուր քաղաքական ծախքերը լյուցանելու համար, առանում էր 15 դավառների ամբողջ արդյունքը և, բացի դրանից, յերբեմն մշտական ժառանգություն, վաչխում էր յուր սեփական դյուղերի և ավանների արդյունքները:

Լուսավորչի տան այդքան շատ կալվածներ դրավելը՝ հետո վոչ սակավ դժգոհությունների պատճառ դարձավ նրա ժառանգների և Աբշամունեաց վիրջին թագավորների մեջ: Այդ թագավորները, վորպես հետամուտ լինում լինում նախարարների տիրած հողերը սահմանափակել, կամ բոլորովին նրանց տիրապետական իրավունքները վոչնչացնել,— նույնպես աշխատում էին, յերե վոչ բոլորովին դրավել հայրապետական տան կալվածքները, դոնե նրանց չափը դդալի կերպով փոքրացնել:

Մի անդամ Ներսես մեծը յեկել էր Տարոն յուր կալվածքներին այցելություն դործելու, դանվում էր Աշտիշատ վանքում: Միևնույն ժամանակ Հայր Մարդպետ իշխանը—թագավորի ներքինապետը—չերջում էր յուր կալվածքներին այցելություն դործելու: Նրանք հանդիպեցան միմյանց հիշյալ վանքում: Վորքան էլ Ներսես մեծին հաճելի չէր այդ սոսկալի մարդու յերեսը տեսնել, այնու ամենայնիվ, նրա բարձր աստիճանին վայել ճաչ պատրաստել տվից: Թագավորի «Հայր» էր կոչվում այդ ներքինին և, տիրելով արքայական կանանոցի վրա, տիրում էր, միևնույն ժամանակ, և արքայի սրտի վրա: Այնքան մեծ էր նրա ազդեցությունը, վոր նախարարները և՛ ատում էին նրան, և՛ դողում էին նրանից: Նրա խորհրդով էր վոչնչացնում Աբշամը ամբողջ նախարարական ցեղեր և տիրում էր նրանց կալվածքներին:

Ճաշից առաջ Հայր Մարդպետ իշխանը դռռոզությամբ ճեմում էր պղեղիկ հրապարակի վրա, վոր դանվում էր վանքի յեպիսկոպոսական սրահանքի առջև: Այստեղից լի նախանձով և բարկությամբ նայում էր նա այն աքանչելի վայրերի վրա, վոր պատկանում էին Ներսես մեծին: Նրա սիրտը լցվեցավ անհնարին դառնությամբ: Յերբ ճաշի ժամանակ փոքր ինչ արբեցավ, այլ ևս չկարողացավ յուր տհաճությունը զսպել: Սկսեց խորին

արհամարհանքով նախատել Տրդատին և ահեղաբարբ Աբշահունի թագավորներին, ասելով.— «Ի՞նչպես այսպիսի արդյունավոր տեղերը ավելցին «կանանցգահանդերձ» մարդիանց (այսինքն յիսնդեցականներին, որ կանանց նման յերկար զգեստներ էին հագնում)... Ցեղ յիմար յես, Հայր Մարդպետս, հինդանի կենամ և Թագավորի մոտ կհասնեմ, այն ժամանակ այդ բոլորը, ինչ որ կա այստեղ, փոփոխել կտամ,— ամեն ինչ հարքունեխ դրավել կտամ, և այս վանքը թագավորական պեսկաններ կդարձնեմ»...

Ներքինապետի հանդգնությունը սաստիկ զայրոյց Ներսես մեծի վրա և նա, բնավ չհինածելով նրա ազատությանը, խստությամբ պատասխանեց.— «Մեր տեր Հիսուս Քրիստոսը, որ պատվիրեց ամենեին աչք չդնել ուրիշի ունեցածին, նա թույլ չի տա ապահովությամբ հափշտակել յուր նվիրական վայրերը: Ցեղ բանաբարկուն, որ անպատկառ սպառնալիքներ և կարդում, յերբեք չի հասնի յուր չար նպատակներին, այլ յուր գործած անթիվ մեղքերը կխափանեն նրա անիրավ դիտավորությունները»...

Ներքինապետը լուռ:

Սեղանին ներկա յեր Շավասպ Աբծրունին: Ներքինապետի լրությունը, վորով վիրավորեց մեծ քահանայապետին, սաստիկ զայրացրեց յերիտասարդ իշխանին: Բայց նա զսպեց յուր բարկությունը:

Ճաշից հետո, յերբ ներքինապետը նստեց յուր կառքը, կամենում եր դնալ, իշխանը սարսափ ներշն ճանապարհ դնելու: Նրանք ցած իջան Աշտիշատի վանքի բարձրությունից, մտան Ցնդիրատի անտառախիտ ձորը: Այդ միջոցին իշխանը հրամայեց նրան, ասելով, թե այդ անտառում դեղեցիկ սպիտակ արջեր և առյուծ: Ներքինապետը դուրս յեկավ կառքից, ճի նստեց, վոր դնան վորսալու: Ցերբ վոքը ինչ հեռացան և մտան անտառի խորքը, իշխանը յեռանից նետով զարկեց ամբարտավանին և դիակը ծածկեց թուփերի մեջ...

Շավասպ Աբծրունին ոչնչը և այլ պատճառներ ներքինապետին ազատելու:

Մինչդեռ Լուսավորչի տոհմը լրված մաքառման մեջ եր մարմնավոր իշխանության հետ, Հայաստանում աճում և հետզհետե ուժ էին առնում մյուս յեկեղեցական սովերքը: Նրանց զրանալուն նպաստում եր ինքը մարմնավոր իշխանությունը, վորպեսզի թուլացնի պարթևների ազդեցությունը:

Վորքան Լուսավորչի տոհմը սիրելի յեր ժողովրդին, նույնքան նա անտանելի յեր դարձել Թագավորներին: Դուցե այդ ծանրությունը այնքան ղգալի չեր լինի, յեթե հայրապետական տունը գանվեր Արարատից դուրս՝ մի այլ գավառում: Աբշահունի Թագավորները, վորոնք, բացի Թագավորանդից, իրանց տոհմից մի այլ Թագավորական չէին ներում Արարատում ընակություն ունենալ,— հանկարծ իրանց սրտունիքի մոտ գտնում էին մի այլ տուն, մի սրբազան վիհարան, վոր վո՛չ միայն համախտ և հա-

մասնակցել էր արքայական պալատին, այլ նրանից ավելի բարձր հարգանք էր վայելում։ Թագավորից նեղվածները այնտեղ պաշտպանություն և սփոփանք էին գտնում։ Եվ այդպիսով, այդ վեհարանը ներկայացնում էր մի հակակշիռ իշխանություն, որը նույնպես մեծ արքայական պահվ բարձր նշանակություն։

Այդ անընդհատ ընդհարումները պետք էին Թագավորին այն մտքին հասցնել, որ պետք էր աղատվել Լուսավորչի տոհմի ճնշումներից և ստեղծել մի նոր կաթողիկոսություն, որը ամեն հարաբերություններում ենթարկվեր Թագավորի իրավասությանը։ Տիրան Բ.-ը առաջինը լեղավ, որ ձեռնարկեց իրագործելու այդ նպատակը։ Նրան նպաստեցին մի քանի հանգամանքներ։

Եերբ Հուսիկ կաթողիկոսը չարաչար մահվամբ սպանվեցավ նույն իսկ Տիրանից, այդ ժամանակ Լուսավորչի տոհմի մեջ չդանվեցավ մեկը, որը արժան լիներ հայրապետական աթոռին։ Վորովհետև, սպանված կաթողիկոսի յերկու վորդիները—Գապ և Աբասնադինես—ծնված լինելով նույն Տիրան Թագավորի դուստրից, և ամուսնացած լինելով նրա յերկու քույրերի հետ, արքայական տան հետ այդքան մերձ ազգակցության պատճառով, բոլորովին զինվորական կրթություն էին ստացել, և կաթողիկոսության վայել վարք չունեյին։ Իսկ Աբասնադինեսի վորդի Ներսեսը կեսարիայում դեռ ուսում էր առնում։

Ահա այդ հանգամանքներից ոգուտ քաղելով, Տիրանը փառեն կամ փառներսեհ անունով մեկին կաթողիկոս ձեռնադրել տվից, որը Աշիշատի վանքից էր։ Նա կատարելապես հնազանդվում էր Թագավորին, ամեն դործի մեջ նրա կամքի համեմատ էր վարվում, և մինչև անգամ չողոքրթում էր նրան։

Այդ ժամանակ յեկեղեցականների աղահությունը չափ և սահման չուներ։ Պատմությունը թողել է մի քանի զղվելի որինակներ, թե վորպես՝ անարգ միջոցներով այդ՝ աշխարհը ուրացած և կյանքից հրաժարված արեղաները աշխատում էին հարստանալ, դյուղերի և կալվածքների տեր դառնալ։

Հիշյալ փառեն կաթողիկոսի վորդին էր Հոհան յեպիսկոպոսը, որը ներկայանում էր վորպես մի որինակելի ագահություն։ Այդ կեղծավորը իրան ցույց էր տալիս վերին աստիճանի ճնշասեր, խստակյաց և անխռոտասեր։ Հաղնում էր ցնցոտիներ, ման էր դալիս կիսամերկ, և մինչև անդամ սանդալներ չէր հաղնում, այլ ամառը վոտները պատում էր «հեսիով» (ճիլոպով), իսկ ձմեռը «կեմով» (բուլսերից հյուսած թոկերով)։

Շուր ոտաբոտի դղեստավորությամբ շատ անգամ հայտնվում էր նա արքունիքը և սկսում էր Տիրան Թագավորի առաջ դանատյան հիմար խոսքեր ու կատակներ անել։ Պառկում էր յերես Թաթիկների վրա, իրան ձևացնում էր վորպես ուղտ, սկսում էր թռչկոտել և ուղտի նման ձայներ հա-

նել, ասելով. «Ես ուզում եմ... չես ուզում եմ... Թագավորի մեղքերը կտանեմ... դրանք իմ վրա Թագավորի մեղքերը, որ չես տանեմ»...

Իսկ Թագավորը, իւր մեղքերի փոխարէն, դնում էր նրա մեջքի վրա դյուղերի և տպարակների պարզևական հրովարտակները:

Այսպիսով հարստացավ նա և հարստացրեց իւր վանքը:

Վորքան Լուսավորչի տունը խիտ և անչափ էր դնում բարձր մարմնավոր իշխանութիւնը, դրանք այնքան քուռ և հանդուգն դարձան: Վորքան Լուսավորչի տունը ազնիվ էր և վեհանձն, դրանք այնքան ստոբաքարշ դարձան:

Շնորհավաճառութիւնը այդ խաբեբաների ձեռքում հասել էր ամենավատթար անարդութեան: Մի անգամ նույնիսկ այդ Հոհան կախիկոպոսը ճանապարհին հանդիպում է մի լավ հագնված յերիտասարդի, որ նստած էր դեղնիկ նժույդի վրա: Նժույդը հրապուրում է սրբազանին: Նա կանդնեցնում է յերիտասարդին, հրամայում և ցած իջնել ձիուց: Յերիտասարդը կատարում է նրա հրամանը:— «Ինչո՞ւ համար եկար»,— ասում է նրան կախիկոպոսը, յես պետք է քահանայութեան ձեռք դնեմ քո վրա: Զարմացած յերիտասարդը պատասխանում է.— «Ես մի ամլուկ, սպասող և չարագործ մարդ եմ, յես արժան չեմ մի այսպիսի պաշտոնեի: Ցնծ իրավ, յերիտասարդը հենց նույն ժամին վերադառնում էր ապաշխութեունից: Բայց կախիկոպոսը ուշադրութեան չէ դարձնում նրա ընդդիմադրութեանը, բռնութեամբ խլում է նրա վերարկուն, հագցնում և գաղաբաղոնդ (փարաջա) և ձեռքը դլխին դնելով, ասում է.— «Ահա՛ քեզ յերեց ձեռնադրեցի, հիմա դնա՛ քո դյուղի քահանան դարձի՛ր»: Հետո նստում է յերիտասարդի նժույդի վրա, հեռանում է, ասելով. «Այդ էլ քո՛ղ իմ վարձը լինի»...

Կաթողիկոսի վորոշին էր այդ անողը. յերիտասարդը ինչ համարձակութեուն ուներ նրան հակառակելու:

Նա ապշած, չխելոքած դնում է յուր տունը, կնոջը պատմում և ճանապարհի վրա պատահած անցքը: Կինը ծիծաղելով հիշեցնում է նրան, թե դու մինչև անդամ մկրտված չես, ի՞նչպես քահանա ձեռնադրվեցար: Յերիտասարդը ամիսների և լինում կրկին դնալ կախիկոպոսի մոտ, և դրանում է նրան յուր վանքում: Յերբ հայտնում է, թե ինքը դեռ քրիստոնյա չէ և մկրտութեուն անդամ չէ ընդունել,— այդ միջոցին կախիկոպոսը վեր և առնում մի սափորով ջուր, թափում է նրա դլխին, ասելով.— «Ահա՛ մկրտվեցար, այժմ կարող ես դնալ»...

Վոչինչ սրբութեուն չէր կարողանում անձեռնմխել այդ ագահների ընչասիրութեունը: Արշակ Թագավորի Դրան յերեցը, Մրջյունիկ անունով, կատարեց մի անօրինակ յերեսառքութեուն, վորի համար իրեն վարձ ստացավ Գոմկունք դյուղը, Տարոնի դավառում: Նա Թագավորի յերկյորդ կնոջից, Փառանձեմից, կաշառվելով, սուրբ հաղորդութեան բաժակի մեջ

թուն խառնեց և մատուց թագավորի առաջին կնոջը Վոլխովսկայային, որով և մեռավ նա:

Բարձր հոգևորականությունը մի ծայրահեղությունից մյուս ծայրահեղության մեջ ընկավ: Ի դեմս Լուսավորչի առհասի, նա ձգտում էր խլել և մինչև անդամ բռնանալ թագավորի վրա: Իսկ ի դեմս մյուս կաթողիկոսական առհասների, նա ընդունեց հլու կամակատար լինել:

Այդ մյուս առհասերից ավելի ուժ էր առացել այն սերունդը, որ մինչ կոչեցինք քրմական տարր: Դրանց մեջ նշանավոր էր Ալբիանոսի առհասը, որը սկսյալ Լուսավորչի և Խոսրով Բ-ի օրերից, պահպանում էր մանավանդ անընդհատ, ժառանգական յեպիսկոպոսությունը:

Ալբիանոսի առհասը ուներ յուր խորին անցյալը և յուր վաղեմի ավանդությունները: Աւաջ գալով քրմական ծագումից, այդ առհասի ներկայացուցիչները քրիստոնեական կրոնավորի զգեստի տակ՝ դեռ պահպանում էին այն սովորությունները, որոնք հեթանոսական բնավորություն ունեյին, դոնե իրանց հարաբերությունների կողմից դեպի թագավորը: Հին քուրմը, նոր կրոնի քահանայի կերպարանքով, դիտեր թե ինչպես պետք և վարվել թագավորի հետ: Յեվ թագավորները սկսեցին նրանց առաջ քաշել և ուժ տալ:

Այդ առհասը սկսեց համարձակ կերպով մաքառել Լուսավորչի տան հետ, որ միշտ պահպանել էր յուր անարատությունը,— սկսեց հետամուտ լինել դրավելու հայրապետական աթոռը, որ միայն Լուսավորչի տան ժառանգություն էր: Ծեսությունը, բանասիրությունը, թագավորի և նախարարների բոլոր հաճույքները կատարելը,— ահա այն դիմակը, որով նրանք մրցում էին Լուսավորչի տան հետ, և որով աշխատում էին իրանց նպատակին հասնել: Յեվ թագավորին ու նախարարներին այս տեսակ կամակատարները էին հարկավոր, և ոչ Լուսավորչի ժառանգների նման անաչառ, կրոնասեր կաթողիկոսները, որոնք, մարմնավոր իշխանության հակառակ, միշտ ներկայացնում էին մի մեծ, ընդդիմադիր ղորություն:

Շողոքորթները տարան հաղթությունը:

Ներսես մեծի ցավալի վախճանից հետո, Լուսավորչի հայրապետական աթոռը դրավեցին Հուսիկը, Զավենը, Շահակը և Ասպուրակեսը: Այդ չորսն էլ, որ մինը մյուսից հետո կաթողիկոսներ դարձան, Ալբիանոսի վորդիներից էին և քրմական ծագումից:

Այդ կաթողիկոսները մարմնավոր իշխանության բարձր ներկայացուցիչներին նմանվելու մեջ այնքան հետու գնացին, որ հոգևոր կաթողիկոսությունը դարձրին մի տեսակ նախարարություն, և նախարարների նման էին ապրում: Շրջում էին վոսկեհանձ, վոսկեսարաս ձիուցիներով, որ հոգևորականներին վայել չեր նատել: (Հոգևորականները սովորաբար ջորիներ էին նստում, կաթողիկոսը սպիտակ դուլնով, իսկ նրանից առաջ առաքման ունեցողները հատարակ դուլներով): Հաղնում էին սամուրներ,

կրնդմանի, որ հոգևորականներին արդելված էր կրել։ Հաղնում էին դիպուղություն նախոններով, ժապավիններով և ոսկեհուռ ծոպերով զարդարած հագուստներ։ Ցնծ էրանց պշնամարությունը այն ատենան ծայրահեղության հասցրին, որ էրանց անդուռ հանուչքներին բավականության տալու համար, սկսեցին մինչև անգամ դինվորական զգեստներ հագնել։ Զավիները առաջին՝ որինակը տվեց դինվորական զգեստներ հագնելու։ Նրան հետևեցին նրա հաջորդները։

Լուսավորչի տան անկումից հետո, մինչդեռ բարձր հոգևոր իշխանությունը այս տեսակ անկարգության մեջ էր, Հայաստանում լուռ ու մունջ սկսում և հետզհետե զորանում էր ուսարազդի կրոնավորների տարրը— հունակները և սուրբականը։

Թեև քրիստոնեության մուտքի սկզբում, բնիկներից պատրաստի անձինք չլինելու պատճառով, նրանց հանձնվեցան մինչև անգամ վիճակային եկեղեցապատկանություններ,— բայց վերջիհետև վիճակային եկեղեցապատկանությունը հայոց հոգևոր կառավարության մեջ ներկայացնում էր մի ուսական ինքնուրույն և ինքնակա իշխանություն, որը, բացի հայմանե որ հնազանդած էր յուր մեջ, այլ պահպանում էր մեկնուն տոհմի մեջ իրեև ժառանգություն,— այդ պատճառով, այդ պաշտոնը առնվեցավ ուսարներից և հետզհետե դարձվեցին բնիկները— սպրած հայ եկեղեցականները։

Ուսարազդի կրոնավորներն ձեռքում մնացին վանքերը, վանական մխարանությունները և անապատները։

Թե յուրաքանչյուր վանքում որքան էր դրանց թիվը,— բավական է ըսել մի որինակ, որ յերբ սուրբ Գևորկիանը Թողեց Հայոց յերկիրը և վերադարձավ Հունաստան, նա յուր ջանքերով հաստատած չաս կրոնական մխարանություններ Թողնելուց հետո, ասրավ յուր հետ միայն յուր ձեռնասուն աշակերտներից 500 հոգի։

Այդպես և նկարագրում ժամանակի պատմագիրը այդ անապատականների կյանքը.

... «Ինակիվում էին անապատներում, առանձնացած էին յերկրի քարանձավներում, ժայռերի ալրերում և խոռոչներում։ Մխայն մեկ հանդերձ ունէին, շրջում էին բոբիկ վոտներով, կերակրվում էին խոտերով, ընդեղեններով և արմատներով։ Գաղաններն նման թափառում էին լեռների մեջ, պատած էին մաշիկերով և այծի մորթիներով, և անապատներում մոլորված, ատատեծո սիրո համար, խորին նեղության մեջ, տանջվում էին ցրտից, տաքից, քաղցից և ծարավից։ Ցնծ էրանց կյանքի ամբողջ սրերը ապաշխարի համբերությամբ էին տանում, բոլորովին ունայն համարելով այս աշխարհը... և Քրիստոսների յերամների նման, քնակվում էին ապատաժնների խոռոչներում կամ քարանձավների խորքերում, առանց վրնվել կայք կամ ատացվածք ունենալու, առանց վրան խնամր կամ պատման առնելու էրանց մարմնին»։

Ոտարազգի կրոնավորները, վորոնք լցրել էին հայոց անապատները ու վանքերը, կա՛մ այս տեսակ ճգնավորներ էին, վորոնց կրոնամոլությունը հասնում էր վերին աստիճանի մոլեռանդության,— կա՛մ խիստ ամուր հաստատությամբ կազմակերպված կղերական միաբանություններ էին, վորոնք հարստահարում էին յերկրի արդյունքները հոգուստ իրանց վանքերի:

Առաջինները— անապատականները,— անձնուրացությունը, կյանքից և աշխարհի վայելչություններից հրաժարվելը՝ ընդունելով իրրև միակ փրկարար հոգևոր դաղափար, իրանց սպանիչ օրինակներով մեռցնում էին ժողովրդի մեջ ամեն կյանք, ամեն աշխույժ և ամեն ձգտումն դեպի հառաջադիմություն: Ժողովրդի մեջ վհատություն և ունայնասիրություն զարդացնելով, կտրում էին նրան թե՛ աշխարհից և թե՛ դործունեյությունից: Ի դուր չտացան նրանք «խոտռաճարակ» անունը, վորով մարդը հավասարացրել էին անասունի:

Միշտ խոնարհության քարոզելով, միշտ հեղության քարոզելով, նրանք սպանում էին ժողովրդի քաջաղնական վոդին: Թե վո՛րքան աննպաստ կարող էին լինել այդ տեսակ քարոզները ժողովրդի պահանջներին, — այդ մասին բավական է ի նկատի առնել Հայաստանի աշխարհագրական դրությունը, թե վորպիսի՛ դրացիներ ուներ նա և վորպիսի՛ բարբարոսներով էր շրջապատված նա: Մի ժողովուրդ, վոր սուրը ձեռքում, ամեն րոպե պետք է հսկեր, թե վո՛ր կողմից և դալիս թշնամին,— նրան ասում էին՝ սուրդ ցած դի՛ր, մտի՛ր քարանձավներդ մեջ, և քո հոգուս համար աղոթի՛ր... աշխարհը չարժե այնքանին, վոր մարդ նրա համար մտածեր...

Տրդատ մեծը առաջինը յեղավ, վոր հետևեց այդ խրատներին և այն սուրը, վոր հայոց դրացիների վրա սարսափ էր տարածում, ցած դրեց և մտավ Սեպուհ լեռան այրերի մեջ:

Բայց դրացիներն ավելի լավ էին հասկանում իրանց դործը: Այդ մասին պատմությունը տալիս է մեզ մի շատ ինքնուրույն և ժամանակի բնավորությանը խիստ հատկանիշ օրինակ:

Ցերբ Լուսավորչի թոռ Գրիգորիս կաթողիկոսը, քրիստոնեություն տարածելով, հայտնվեցավ Աղվանից աշխարհում, և յերբ հանդիսական յեղավ Մաղքութների Սանեսան թագավորին, յուր քարոզի մեջ, ի թիվս այլ իրատների, հայտնեց այն միտքը, թե «Աստված չէ աստծուն ավարառությունը, հափշտակությունը, սպանությունը, ագահությունը, ուրիշներին դրկելը, այլոց սեփականության աչք դնելը» և այլն: Նրան բարկությամբ պատասխանեցին. «Ցեթե չհափշտակենք, յեթե այլոց ունեցածը ավարի չառնենք, ուրեմն ի՞նչով պետք է ապրենք մենք և մեր զորքերի բաղմությունը»: Հետո թագավորը և ավագանին իրանց մեջ խորհեցին. «Դա յեկել է և այդպիսի քարոզներով կամենում է դրկել մեզ մեր կյանքի պետքերը հայթայթելու քաջությունից. յեթե դրան լսելու լինենք, և ընդու-

նենք քրիստոնեական օրենքները, այն ժամանակ հիմափանվին մեր ապրուստի միջոցները... Ցնվ ավելացրին. «Այդ հայոց թագավորի խորամանկությունն է, դրան ուղարկել և մեզ մոռ, վոր այդ ուսմունքով խափանե մեր ստացատակությունները, և մեր արշավանքները յուր աշխարհից դադարեցնեն. յեկեք դրան սպանենք, և հետո արշավենք դնալի Հայաստան և ավարով լցնենք մեր աշխարհը...

Այդպես էլ արեցին. առաւոտ մարդուն կախեցին մի հատուկ ձիու պոչից և քաց թողին Վասնյան դաշտի ստրածության վրա:

Այժմ պարզ է, թե ինչ տեսակ դրացիներ ուներ Հայաստանը: Ցնվ ազվանները դեռ ամենալավ դրացիներն էին: Իսկ հայերը սկսած և քրիստոնեական հնդուքյամբ այդ բարբարոսների հետ մրցեցին...

Ռաբադի կրոնավորների մեծ մասը, վորպես հիշվեցավ, վերևում նկարագրած անապատականներն էին, վոր իրանց սպանիչ ոգևորությով մեռնում էին ամեն կենդանության: Մնացյալները զանազան կղերական մասնաւորություններ էին, վոր դրավել էին վանքերը: Վորքան առաջիններն ստհամարհում էին կյանքը և աշխարհի վայելչությունները, նույնքան վերջիններն ամեն հնար դործ էին դնում հարստացնելու իրանց վանքերը:

Ցավալին այն էր, վոր դրանք էին հայոց վարժապետները: Այն բոլոր դպրոցներում, վոր հիմնվեցան Լուսավորչի ձեռքով, Տրդատի օրենքում, և այն բոլոր դպրոցներում, վոր հիմնվեցան Ներսես Մեծի ձեռքով, Արշակ Բ.-ի օրերում,— բոլորի մեջ սկրտվում էին հունաց և ասորոց լեզուները, բոլորի մեջ ուսումը ավանդվում էր հունաց և ասորոց դրքերով: Ուսման նպատակը լինելով՝ ծանոթացնել քրիստոնեության և սուրբ դրքերի հետ, իսկ սուրբ դրքերը դրված լինելով հիշյալ լեզուներով,— այդ պատճառով նրանք դարձան դպրոցական լեզու: Հայոց լեզուն, հայոց դիրն ու դպրությունը արտաքսվեցան հայոց ուսումնարաններից, վորովհետև դեռ սուրբ դրքերի թարգմանություններ չէին յեղած, և հայկական դպրությունը տակավին մնացել էր յուր հեթանոսական բովանդակության մեջ, և այդ պատճառով արհամարհված էր:

[1] Այդ հունական և ասորական դպրոցները, [2] վոր կառավարվում էին հույն և ասորի կղերի ձեռքով, կարող էին ավելի վտանգավոր լինել, քան թե դուրս դային վանքերի պարիսպներից և տարածվեյին ժողովրդի մեջ: Բայց վանքերի մեջ փակված լինելով, ժողովուրդը թեև չէր ոգտվում նրանցից, բայց դրնե չէր էլ վարակվում: Նրանք սպատրաստում էին միայն հոգևորականները,— ասորոց և հունաց լեզուներով կրթված հոգևորականները:

Այդ ոսար, հայի համար խորթ և անհասկանալի լեզուները սկրտակտում էին և հայոց եկեղեցիներում: Բոլոր սուրբ դրքերը, բոլոր աղոթքներն ու մաղթանքները այդ լեզուներով էին կատարվում: Ժողովուրդը վոչինչ չէր հասկանում, և վոչինչ էլ չէր չահվում յեկեղեցուց: Այդ եր

պատճառը այն խորին դանդաղկոտության, որով քրիստոնեությունը տարածվում էր Հայաստանում:

Հայոց լեզուն մնացել էր հեթանոսական հին երգերի մեջ, որ դեռ երգում էր ժողովուրդը, որ դեռ սիրում էր ժողովուրդը: Հայոց լեզուն մնացել էր հեթանոսական հին արարողություններին մեջ, որոնցից դեռ բոլորովին չէր բաժանվել ժողովուրդը: Հայոց լեզուն մնացել էր նույն իսկ ժողովրդի բերանում, որ հալածում էր ոտարազգի կղերը:

Այդ բոլորից հետո, շատ հասկանալի է, թե ինչ կործանիչ աղետություն կարող էին ունենալ այնքան բաղմաթիվ վանքերն իրանց ոտարազգի կրոնավորներով, երբ ժողովուրդը յուր հոգևոր և մտավոր կրթությունը պետք է այդ անհարազատ ձեռքերից ոպասեր:

Ոտարազգի կրոնավորները յերկար չմնացին իրանց ճգնավորական կղեվի մեջ: Հարստությունը հետզհետե խլեց այն հնդծ-բարեպաշտական դիմակը, որով ծածկված էին նրանք: Աշխարհի փառքն ու վայելչությունները արհամարհող արեղաները, որոնք առաջ ցնցոտիներով էին ծածկում իրանց մերկությունը, բոբիկ վոտներով էին չրջում, միայն սրմանոներով ու բուլյաներով էին կերակրվում,— յերբ հարստացան և հարստացրին իրանց վանքերը, սկսեցին վո՛չ միայն չափազանց շռայլ կյանք վարել, այլ բոլորովին ա՛յլ փառասիրությունների ձգտել:

Ցուր տեղում հիշվեցավ, վոր Արշակունյաց վերջին թագավորները մասամբ ուղղեցին Տրդատի սխալը, նրանով, վոր ոտարազգի կրոնավորներին թույլ չէին տալիս յեկեղեցու վարչական պաշտոններին մեջ մտնել, վորպեսի յեր վիճակային յեպիսկոպոսությունը, բայց միայն համրերում էին նրանց վանքերին, վոր մի անգամ ձեռք էին ձգել: Բուրգր հոգևոր իշխանությունը— կաթողիկոսությունը— միայն Լուսավորչի տան ժառանգությունն էր, վոր հետո ժամանակավորապես Աբբիանոսի տոհմի ձեռն անցավ: Իսկ վիճակային յեպիսկոպոսությունների պաշտոնը վարում էին նույնպես բնիկները, միայն աղոթ հայ յեկեղեցականները: Բացառություններ խիստ սակավ էին լինում:

Բայց Արտաշես Գ.-ի թագավորության վերջին որերում՝ ոտարազգի կրոնավորները հետամուտ են լինում վոչ միայն հայոց վիճակներին յեպիսկոպոսությունները դրավելու, այլ մինչև անգամ հայրապետական աթոռը իրանց ձեռքը ձգելու: Ժամանակի քաղաքական դառն հանգամանքները նպաստեցին նրանց: Արշակունյաց իշխանությունը անկման վիճակի մեջ էր. թագավորի մեջ այլ ևս զորություն չէր մնացել: Նախարարների մեջ տիրում էր անհաշտ յերկպառակություն: Նրանք ապստամբել էին Արտաշեսի դեմ, և ավելի բարվոք էին համարում ոտարի ծառը լուծը կրել, քան իրանց թագավորին խոնարհվել: Հայաստանը հոգևարքի մեջ էր: Մեռում էր վերջին հարվածը, վոր տար պարթևին և Արշակունյաց տան վերջին շառավիղը հանդչեր...

Ահա այդ տաղնապի մթնոլորտում ոտարազգի կղերը աշխատեց ոչնա-

քաղել հանդամանքներից։ Նա հայոց կաթողիկոսի ընտրության մեջ, վոր վաղեմի ավանդություններով կախված էր միայն հայոց թագավորից, հայոց նախարարներից և հայոց ժողովրդից,— խառնեց ոտարի ներգործությունը։ Սուրմակը առաջինը յեղավ, վոր այդ դավաճանության օրինակը տվեց, և պարսից Վռամ թագավորի հրամանով հայրապետական աթոռը բարձրացավ։ Նրան հաջորդեցին Բրքիշո և Շմուել ասորիները, դարձյալ պարսից թագավորից նշանակվելով։ Թե վորպիսի՛ ազահությամբ այդ մատնիչները սկսեցին այնուհետև վիճակները գրավել և յեպիսկոպոսների ժառանգությունները հափշտակել— այդ մասին պատմությունը թողել է խիստ սարսափելի օրինակներ։

Այդ դավաճանները գործեցին պարսից թագավորի ձեռքում մի անարդ գործիք. և հայոց ազատ յեկեղեցու բոլոր կարգերի մեջ խառնեցին նրա կործանիչ միջամտությունը։ Եպիսկոպոսների ձեռնադրությունը և նրանց վիճակները տալու իրավունքն անգամ՝ կախումն ստացավ պարսից թագավորից։— Հայոց կաթողիկոսը դարձավ պարսից մարզպանի ընկեր և գործակից, վորի կառավարությանը յենթարկվեցավ այդ ժամանակ Հայաստանը։

Այդ բոլոր ցավալի դեպքերը կատարվեցան այն ժամանակ, յերբ Լուսավորչի տան վերջին ժառանգը, Սահակ պարթեւը, տակավին կենդանի յեր։ Թեև ասորին պարսից բռնակալ ձեռքով հափշտակեց նրանից հայրապետական աթոռը, բայց նա արդեն յուր գործը կատարել եր— Հայաստանի վերելքյան մեծ գործը։ Նա հեռացավ ասպարեզից, բայց հաղթություններ յուր հետ տարավ։ Յուր տոհմի մեջ վերջինը լինելով, նա հասցրեց և վերջին ամենաստուգիկ հարվածը, վորով խորտակեց ոտարազգի կղերի տաղտկալի ազդեցությունը։ Մարդարեական վոգով նախազուշակելով դալոց վտանգները, նա այդ վտանգներին դեմ մի մեծ պատնեշ դրեց։ Արդարև, Արտակունյաց սրբազան գահը ընկավ, հայրապետական աթոռը պարսից վերահսկողությանը յենթարկվեցավ, բայց նա ազատեց յեկեղեցին, ազատեց ազգը։ Ինչով։ —

Մեծ հայրապետը, յուր գործակից Մեսրոպի աջակցությամբ, ստեղծեց հայոց դպրերը և նոր դպրություններ։ Հայոց լեզուն սկսեց թագավորել և՛ հայոց դպրոցներում և՛ հայոց յեկեղեցիներում։ Հայը սկսեց յուր ազգով ազոթել և յուր լեզվով կարդալ։— Եվ դրա մեջն եր ոտարազգի կղերի մահը։ Մինչև այդ ժամանակ, ինչպես տեսանք, հունաց և ասորոց դպրոցներն եյին սիրասիրում հայոց դպրոցներում. հույները և ասորիներն եյին հայոց վարժապետները. նրանց լեզուներն եյին սիրասիրում և հայոց յեկեղեցիներում։ Բայց հայկական տառերի գյուտից հետո, արտաքոցան նրանք։ Բոլոր տաբերը դրքերը թարգմանվելով մայրենի լեզվով, և՛ յեկեղեցին և՛ քե՛ դպրոցը դարձավ բուն ազգային, և աղատվեցավ ոտարազգի կղերի հոգեբարձությունից։ Իսկ նրանց դավաճանությամբ հաստատած կաթողիկոսությունը տևեց խիստ տակավ ժամանակ։

Ահա այդպես, Լուսավորչի տոհմի վերջին Լուսավորիչը, Սահակ պարթևը, սկիզբը դրեց հայոց վերածնելության «Վոսկյա դարին», վորով կրկին կենդանացավ Հայաստանը, և ընկավ խավարի թագավորությունը...

Բ. ԳԻՐՔ

ՊԵԿԸ—ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ
ՄՅՈՒՍԸ—ԱՐԵՎԵԼՔՈՒՄ



ՊԱՏՄՈՒԱԾՔ

Ամբողջ լուռ էր: Ալիքները զգուշությամբ զարկվում էին Պատմոս կղզու ապառաժոտ ափերին, վախենալով, մի գուցե խանգարեն նրա յերեկոյան խաղաղությունը: Արեգակը արդեն սկսել էր թեքվիլ դեպի յուր ղիշերային հանգստարանը: Նրա վերջին ճառագայթները մի առանձին սիրելությամբ շոշշողում էին ափերի մոտ սփռված սպիտակ խճկռիկ վրայ և, կարծես, դժվարանում էին բաժանվել այդ գեղեցիկ առարկաներից:

Այդ մենավոր կղզին անչափ ազատություն էր զգում, որ կարծես, մի վոգրիկ առնիկի նման բուռած լիներ ջրերի տակից: Շոշը վազում կրկին կուլ տար նրան, եթե նրա վրա բնակվելիս չլիներ մի սրբազան անձնավորություն:

Ջրերով շրջապատված, համարյա թե անջուր էր նա: Վո՛չ մի գետ, վո՛չ մի վտակ չէր վազում նրա շատ կանաչազարդությունը: Ինքը ծովը, յուր խռնակ և լի գոլորշիներով մթնոլորտով, վորպես մի գովարար ջերմանոց, պահում էր նրան մշտական դալարթության մեջ: Նրա անհավասար, կոնաձև մակերևույթի վրա ամեն բույս աճել, ամեն բույս բազմացել էր՝ յուր անզուսպ վայրենության մեջ: Տեղ-տեղ քմահաճ թիղենին յուր մեծ ուրմաններով քարշ էր ընկած ժայռերի ծերպերից և յուր լայն տերևներով ծածկում էր ապառաժներն ու կուրծքը: Տեղ-տեղ նռնենին ժպտում էր յուր վառ-ծիրանագույն ծաղիկներով: Տեղ-տեղ հսկա հնդկաբոյսը համբարձվում էր ամպերի հետ: Արեգակի ճառագայթները բոլորովին անզոր էին թափանցելու նրա սաղարթախիտ թանձրության մեջ, ուր պահպանվում էր խիտ ախտժոլի, խիտ արտաշարաշ զովություն: Այնտեղ էր թվում, վոր այդ կղզու առեղծման օրից՝ մարդկային բարերար վոտքը յերբեք չէր շոշափել նրա սմայությունը: Այնտեղ չկային և անասուն-

նեը: Ցերեկն ապիտակ ճաշարը վոտտոտակով հայտնվում եր յուր դարանից, յերկնքո կերպով նայում եր յուր շուրջը, և դարձյալ անհայտանում եր խիտ մացառների մեջ: Թռչուններն անդամ չեյին համարձակվում չափել ծովի անհուն տարածությունը և մերձենալ նրա անհյուրընկալ ափերին: Միայն անդադար ճնճղուկը, մի քանի տեսակ յերդեցիկ ծառերի հետ, իրանց անհանգիստ ճիչ ու աղմուկով խռովում եյին տիրող լռությունը:

Բայց կղզում բնակիչներ կային, թեև նրանց թիվը յերեք հոգուց ավելի չեր:

Ահա՛ այնտեղ, ավի մոտ, մեկը նստած և ալազների վրա և անթարթ աչքերով հառած և դեպի ջուրը: Նրա սուր աչքերը թափանցում են մինչև պարզ ու վճիտ հատակը: Այնտեղ դրած և մի կողով, ճկնորսների ծուղակի նման կազմված մի կողով: Նա նայում և այդ կողովի վրա: Քարերի բևեռներից մի բոլորակ պատնեշ և շինված նրա շուրջը, վոր ալիքներն իրանց հետ չառնեն: Այդ բոլորակի մեջ լճացել և ջուրը, վորը ծովի հետ հաղորդակցություն ունի արհեստական նեղուցով:

Մի այլ յերիտասարդ, առաջինից փոքր ինչ հեռու, նստած և նույնպես ալազների վրա և ինչ-վոր մի բան և շինում: Նրա առջև ածած են ամուր կաթքարի մեծ և փոքր կտորտանք: Նրանցից մեկը լռնած ունի յուր ձեռքում, յերբեմն լեսում և, յերբեմն հղկում և, մի այլ քարի կտորի վրա քսելով: Իսկ յերբեմն մատով փորձում և, թե վորքան ավելցավ նա նմանում եր այն նախնական մարդկիններին, վոր մի ժամանակ քարից իրանց համար զենք եյին պատրաստում: Բայց նրա պատրաստածը զենք չեր, թեև տապարի ձև ուներ: Նա գործիք եր շինում,— և տաշելու գործիք: Յերբ հոդնեցավ, ձեռքը նեցուկ տվեց դլխին, նայում եր դեպի ծովի մույթ-կապտագույն տարածությունը:

Յերկու յերիտասարդներն ևս լուռ եյին և հազիվ խոսում եյին մեմյանց հետ: Ուշադրությունը զբաղված եր յուր դործով, յուրաքանչյուրը խորասուզված եր յուր խոհումների մեջ: Նրանց թերմաշ հագուստը, վոր կրոնավորի զգեստի պատկառելի ձևն ուներ, բոլորովին կորցրել եր յուր վայելչությունը: Գետտոտոած ծվենները, յերևի, տանդի և թիլի չքնության պատճառով, կապած եյին միմյանց հետ դանադան հանդուցյուններով: Տնդտնդ ձկան սրածայր վոսկրը, քորոցի փոխարեն, կցում եր մի պատառը մյուսի հետ: Իսկ այդ վոդորմելի հագուստը մի ժամանակ ունեցել եր յուր վայելչությունը, ունեցել եր և յուր չքեղությունը: Այժմ նրանց քրքրված պատառները, կարծես, լալով սուտ լինելին միմյանց. «Յեթե մենք ել ցած թափվենք, այլ ևս ի՞նչ կմնա այդ խեղճերի վրա»...

Այդ թշվառ հագուստի մեջ անդամ՝ դեռ վայելում եր յերկու յերիտասարդների հարդելիությունը: Դու եյին նրանց խաղաղ դեմքերը, յերկնային միխիթարությամբ վառվում եյին նրանց ղլարթ աչքերը: Յերևում եր, նրանք վաղուց հաշտվել եյին իրանց աննախանձելի վիճակի հետ:

Հասակով չատ չեյին տարբերվում միմյանցից՝ յերկուսն ել քսան և

հինգ տարեկանից ավել չէին լինել: Տարբերվում էին միայն կազմվածքով ու դեմքով: Մեկը վորքան ամուր ու կազմված, մյուսը նույնքան նրբակազմ ու թույլ: Մեկը վորքան սևուկ ու դեմքով, մյուսը նույնքան ճերմակ ու, և խարտյաշ դեսակները ծածանվում էին ուսերի վրա: Առաջինի անունն ու Տիրանամ, վոր հրճատյալ ձևով կոչում էին Տիրե, իսկ մեկուրդինը՝ Ռոստամ: Այդ վերջինն ու, վոր նստած ու ապի մոտ և նայում ու կողովի վրա: Նրա խոշ աչքերը տեսնում էին, թե ինչ և կատարվում ջրի պարզ խորության մեջ:

— Վո՛րքան խորամանկ են դարձել այդ անիրավները,— ընդհատեց նա ութրող լռությունը:— Մոտենում են կողովին և, կարծես, հոտ են քաշում, պտտվում են նրա շուրջը, և դարձյալ հեռանում են: Ա՛խ, էնեն մի կատր մեկուկ լիներ, էս դրանց համար մի կարի կչչնեյի...

Նրա խոսքը ձիների մասին ու: Նա թողեց յուր բռնած դիրքը· մեկուկ, նստեց առաջինի մոտ, վորին կոչում էին Տիրե:

— Բայց իմ դարձը ոչտոր լավ և դնում, պատասխանեց Տիրեն,— էնեն այդ ել վերջացնում, մեկուկրդը տապարը կչնի... դեռ ասե չատ կա.— նա նայեց դեպի մեկուկինքը, ավելացնելով.— Բարը վատ և, շուտ և բռնում, մի որ բանեցնում ես, այլ ես մոչինչ չեն կարում, պետք և մեչտ արել... Նա սկսեց մատով փորձել տապարի սուր կողմը:

— Սրե՛ր, սիրելի Տիրե,— ասաց Ռոստամը մի տանձին փոխադրելով.— յերբ վոր բութ և լինում, այդ ատամիկ հոդնեցնում և նրան... Ա՛խ, վո՛րքան աշխատում և նա... Այսոր առավոտյան (դու դեռ քնած էիր, չնկատեցիր) անընդում եմ՝ դուրս յեկավ յուր քարանձավից, ուշիկ քայլերով անցավ մեր մոտով, վոր չխանգարե մեր քունը: Հետո դիմաց դեպի տղրյուրը, վոր մի հրաշքով բղխեցրեց, յերբ այդ կողմում խմելու ջուր չկրնք դտնում: Այնտեղ լվացվեցավ և, ծունր դնելով ափերի վրա, սկսեց կատարել առավոտյան աղոթքը: Յերբ վերջացրեց, վեր առնց տապարը, դնաց անտառը բանելու: Ցնրիկոր յես լսում էի նրա տապարի ձայնը, վոր հնչվում ու մեկ ատամանդրության հետ: Այլ ես քնել չկարողացա: Լուսը բացվեցավ, արևը ծագեց, նա դեռ աշխատում ու: Ցետ մինչև տրժյան, վոր արևը մանելու մոտ և, նա դեռ աշխատում և... Ցնմ կարողանում առանց զարտասուքի նայել նրա վրա, սիրելի Տիրե, վո՛րքան մաշվել և, վո՛րքան ուժասիկ և յեղել... Ինչո՞ւ յե այդքան հոդնեցնում իրան...

— Շատ ում ես... չա՛տ և չատում... Դիտե՞ս, սիրելի Ռոստամ, վո՛րքան ժամանակ և, վոր մենք այստեղ բանատրկված ենք... Հինգ ամիս չեն պատահել մեր աշխարհում... Ա՛խ դիտե, թե ինչ և անում քաղաքները, ինչ են անում նախարարները, և կամ այլ ես ինչ անկարգություններ և հարուցել Շահուհը... Իսկ մենք վոչինչ տեղեկություն չունենք: Հիշո՞ւմ ես, վերսիսի՛ խոսքյալ դրության մեջ թողնցինք մեր յերկիրը... Ուրտմն, ինչպես կարող և համբերել նա: Նրա սիրտը այնտեղ և — հայրենի աշխարհում: Նրա անխոնջ վարին ձգտում և մի բանի՛ անց-

նել ովկիանոսի անհուն տարածությունը, գնալ, հասնել սիրելի յերկիրը, և զարման տանել նրա վերջերին...

— Ա՛խ, յե՞րբ պիտի վերջանա այդ նավակը... ձայն ավեց Ռոստոմը և նրա դեղեցիկ դեմքը մոայլվեցավ խորին թախծությամբ:

— Կվերջանա, շուտով կվերջանա... պատասխանեց Տիրեն մի առանձին վստահությամբ:— Առաջիկա լուսինը մեզ այլևս այստեղ չի տեսնի...

Վերջին խոսքերը բալիական քաջալերեցին Ռոստոմին և նա, ձեռքը մեկնելով դեպի ընկերը, խնդրեց.

— Տո՛ւր ինձ, վորքր ինչ ողնեմ քեզ:

— Դու վեր առ այդ մյուս կտորը:

Նա վեր առեց մի կտոր կայծքար, վոր դեռ ևս հարթած չեր, սկսեց հղկել:

— Աշխատանքը նրան այնքան չի հոգնեցնում— առաջ տարավ Տիրեն, — նա խիստ փոքր է քնում, համարյա սովենևին չի քնում: Ցեռ շատ անդամ նկատել եմ, դիշերը վեր է կենում, սկսում է լուռ, մտախոհ կերպով թափառել կղզու շուրջը: Մի քանի տասնյակ անգամ պատյանները և դոքծում, հետո նստում է ծովի ափի մոտ, և անշարժ նայում է... Նայում է դեպի այն կողմը, ուր թողեց յուր կորցրած վառքը... Նայում է դեպի այն կողմը, ուր անտեր մնաց յուր հոտն ու յեկեղեցին... Ցեվ յերկար այնպես նստած է մնում, մինչև արևը ծագում է, և առաջին ճառագայթները հիշեցնում են նրան, թե ժամանակ է կրկին սկսել աշխատանքը...

Ռոստոմի դեղեցիկ դեմքը կրկին մոայլվեցավ: Դարի կտորը ձեռքից ցած գնելով, և յուր տխուր աչքերը դարձնելով դեպի ընկերը, պատասխանեց.

— Անհանգիստ է... անհանգիստ է սրտով... անհանգիստ է հոգով... Այդ դրության մեջ ի՞նչպես կարելի յե քնել: Նա մեզ մոտ աշխատում է թաղցնել յուր վշտերը, վոր մեզ ևս չվշտացնե: Նա մեզ դեռևս այնքան քնուլաևքրտ է համարում, վոր կարծում է, թե չենք կարող ցավակից լինել իրան: Ցեվ այդ պատճառով յուր մխիթարությունը վորոնում է լուռ աշտամաշուքյան մեջ...

Նա ձեռքը տարավ դեպի ճակատը, մի կողմ տարավ մաղերի խիտ հոսանքը, վոր այդ րոպեյում ծածկեցին նրա յերեսը, և ապա չարունակեց.

— Այդպես ապրել չի կարելի, Տիրե՛: Նա խիստ սակավ է ուտում, և համարյա վոչինչ չե ուտում: Դրանով բոլորովին հիվանդացնե իրան: Ցերեկ ասաց ինձ. «Ռոստոմ, վորոնիր անուտը, դուցե սունկ կգտնեաս: Ուզախ-ուզախ վաղ տվի, վորոնեցի և մի քանի հատ գտա: Բայց արդյոք կուտի՞ նա... Մի քանի որ առաջ խոսում եր թուղերի մասին: Մի ծառի վրա թուղ եյի տեսել, ամեն որ գնում եյի, ներքևից նայում եյի, արդյոք հասունացել են թե վոչ: Ծառը բարձր եր, մի ապառաժի կուրծքին դրած: Ցերեկ վաղ-առավոտյան գնացի, անհնարին դժվարությամբ վեր

բարձրացա և հասունները քաղեցի: Ցերը տերևների վրա դրած տաբա, իրան տվի, շատ ուրախացավ և որհնեց ինձ: Այսոր տեսնում եմ, ինչպես դրած եր, այնպես էլ մնացել եր, մի հատ անգամ չեր կերել:

— Ցերևի, մոռացել եր:

— Այո՛, նա այժմ խիստ շուտ է մոռանում:

— Այդ հասկանալի չե...

Ցերիու յերիտասարդների խոսակցությունը յերբեմն ընդհատվում եր խուլ տրոփյունով, որ լսելի չեր լինում անտառի խորքից: Տրոփյունը պարբերական ծանր հարվածների չեր նմանում:

— Նա դեռ բանում է:

— Այո՛, բանում է:

— Ի՞նչ ես կարծում, Տիրի՛, այդ լաստափայտը, որ նա չինում է, կարո՞ղ է մեզ հասցնել ցամաքը: Ցես վոքր ինչ...

— Դու վոքր ինչ կասկածում ես... Գիտե՞ս, Ռոստոմ, յերբե նա յուր վերարկուն տարածե ծովի վրա և ասե մեզ՝ գնացե՛ք, գնա՛նք,— չես մեծ վստահությամբ կնստայի նրա վրա և կղնայի նրա հետ: Բայց չես մի այլ բան կասեմ քեզ, Ռոստոմ, մենք այնքան հեռու չենք ցամաքից, որքան դու կարծում ես:

— Այդ դու վո՞րտեղից գիտես:

— Նա ինքն ասաց ինձ: Մի անգամ նկատեց մի քանի թռչուններ, որ գիմում եյին դեպի մեր կղզին: «Այդ թռչունները ծովային թռչուններ չեն, ասաց, դրանք ցամաքից են գալիս. ցամաքը շատ հեռու չե մեզանից»:

Ռոստոմը մտածության մեջ ընկավ:

— Այդ բոլորովին ուղիղ նշան է,— ասաց նա, ինքն ևս համոզվելով:— Բայց մեզ ժամանակ չե՞ խրճիթը դնալու:

— Գնանք, կրակ վառենք, ընթրիքի համար մի բան պատրաստենք, մինչև նա կգար,— պատասխանեց Տիրին, և սկսեց հավաքել յուր չինած քարե գործիքները:

Ռոստոմը կրկին գիմեց դեպի յուր կողովը, քաշեց ճապուկ ճյուղերից հյուսած պարանը, որի ծայրին կապած եր նա, և կողովը մոտեցրեց յերդին: Հետո ձեռքը տարավ նրա մեջ, սկսեց դուրս հանել ձկները և յցնել փոքրիկ տապակի մեջ: Ցերը դարձյալ ձեռքը ներս տարավ, դուրս հանեց յերկու խեցգետիններ: «Դուք ի՛նչպես մոլորվեցաք, ընկա՛ք այստեղ»,— ասաց, և նրանց ևս ձգեց ձկների մոտ: Ցերը այն գիշերվա ընթրիքի պաշարը արդեն հավաքել եր, նա կողովը կրկին հետ մղեց յուր տեղը և, տապատը վեր առնելով, հեռացավ ծովեզերից: Ցերիու ընկերները, շարունակելով ընդհատված խոսակցությունը, սկսեցին գիմել դեպի խրճիթը:

Անտառի այն կողմում, վորտեղից լսելի յեր լինում տրոփյունի ձայնը,

պրծում եր այն անձը, վորի մասին խոսում էին յերկու յերիտասարդները:

Դա մի բարձրահասակ մարդ եր, պատիառելի դեմքով և խորին, վեհանձնական հայացքով: Փառավոր մորուքը, վորի յուրաքանչյուր մազերը փայլում էին ու աչքի նման, ծածկում եր նրա հզոր կուրծքը: Աչքերի մեջ վառվում եր արբազան կրակ: Գեղեցի՛կ եր յեղել նա իբրև յերիտասարդ, այժմ տակավին գեղեցիկ եր մնացել յուր աչքական հասակում: Բոլոր շարժումնքների մեջ նշմարվում եր յեռանդ և վեհություն: Նրա մեջ միացած եր յերևում յերկնայինը՝ յուր արբազնական ազնվությամբ, և յերկրայինը՝ յուր բարձր աղնվասեռական վսեմությամբ: Հաղուստը, վոր կրոնավորի զգեստն էր, համարյա թե մաչված եր: Վոտներին հագել եր ծառի կեղևից պատրաստած սանդալներ: Այդ անչուք պիտոյության մեջ անդամ, նմանում եր նա այն յերկնաբնակներից մեկին, վորին դժբախտ հանդամանքները դատապարտել էին մի ստոր կյանքի...

Վարպետ ձեռքով շարժում եր նա քարե ծանր տապարը, և ահագին ծերանը թնդում եր նրա հարվածների ներքո: Տապարը ավելի քերթում եր, քան թե ուշում եր: Այսու ամենայնիվ, նրա հարվածները, վորպես անդուլ և անխոնջ համբերության, հաստատուն ծերանի վրա մեծ գործ էին կատարել:

Այդ ծերանը, վոր մի վիթխարի կետ ձուկի նմանությամբ տպավորված եր նրա առջև, յուր անուտուկ արքան և նահապետն եր: Դարեր էին անցել, վոր նա այնքան աճել, ստվարացել եր, մինչև ստացել եր յուր հրաշալական ծավալը: Ցնվ յերկար ժամանակներ գործ դրվեցան, մինչև քարե տապարը, թևև ինքը անզոր, բայց անվախտակելի և համբերատար ձեռքում, կարողացավ հատանել նրան յուր արմատից և ցած կլորել յուր բարձրությունից:

Այնուհետև աշխատում եր նա այդ ծերանից պատրաստել մի լաստանավ: Նրա փութաջանությունը այն աստիճան անդուլ եր, վոր յեթե յուր յեղունդները յերկաթից լինեյին, ամենևին գործ չեր դնի քարե տապարը: Գործը արդեն մոտեցել եր յուր վախճանին: Լաստանավային կողքերը հարթած էին. մեջը մեծ մասամբ դուրս եր փորված: Մնում եր մի քանի չարաշինների աշխատանք ևս, վոր նա բոլորովին պատրաստ լիներ: Դրանով նա վստահություն ուներ՝ դուրս գալ յուր սրբազանից, վորտեղ աքսորված եր ինքը, պատերազմել ովկիանոսի ալիքների հետ, և դնալ, հասնել այն աշխարհը, ուր պարտքը և յերկրի աղետավոր անցքերը կոչում էին նրան...

Տաշեղների կույտի հետ ընկած էին բազմաթիվ քարե տապարներ, վոր բթացել և անպիտանացել էին: Վորձքարը մաչվեցավ, բայց նրա յեռանդը, նրա տոկունությունը մնաց անխորտակելի:

Նա արդեն ավարտել եր յուր այսօրվա պարապմունքը: Տապարը դրեց

ցած. անցավ դեպի լաստաձեայի յերկաթուղիները, ուշադրությամբ զննեց փորված-քի խորությունը, և ապա վերադարձ վերարկուն, վոր ընկած եր տաշեղների վրա, ձգեց ուսերին, և դանդաղ, չափավոր քայլերով սկսեց գիմել դեպի կղզու գահավերը:

Նեղ շավիղը, վոր կազմվել եր այդ միակ մարդու վոտքի հետքերից, անցնում եր թուփերի և մացառների միջով և, վոլորվելով խոնավ, մամռապատ ապառաժների վրայով, կորչում եր սավերախիտ ծմակի մեջ: Այդ շավիղով գնում եր նա: Ցերեկն դժնիկը յուր լրբենի տատասկներով մաղլցում եր նրա վերարկուից: Ցերեկն արքայական կաղնին յուր խարտոցի պես անհարթ տերևներով զարկվում եր նրա փառահեղ դեմքին: Բայց նա վոչինչ չեր զգում: Մտախոհ կերպով անցավ այդ տարածությունը և մերձեցավ մի քարանձավի: Նրա մուտքի մոտ կազմված եր մի նստարան, հյուսած թարմ վոստերից: Բազմեցավ այդ նստարանի վրա և բազմահոգ դեմքը դարձրեց դեպի հանդչող արեգակը: Նայում եր, և նրա խորախորհուրդ աչքերը, կարծես, ձգտում էին կլանելու այն անհուն տարածությունը, վորով անցել եր ուխտերքի լուսատուն, և այժմ գնում եր լուսավորելու մի այլ աշխարհ...

Իսկ ի՞նքը:— Ինքը նույնպես մի ժամանակ մի ամբողջ աշխարհի լուսավորության արեգակն եր... Իսկ ա՞յժմ:— Այժմ մի ուժասպառ աքսորյալ այդ անբնակ կղզում: Անողոք ոխիկանտը անանցնելի պատնեշ եր դրել նրա շուրջը, և ալիքների անընդհատ հարվածները ամեն րոպե հիշեցնում էին նրան, թե դու միշտ բանտարկված կմնաս այստեղ, քանի վոր մենք կանք և կլինենք...

Քարանձավը, վորի մուտքի առջև նստած եր նա, դուրս չատ խաղաղ բնակարան կարող եր լինել մի ճգնավորի համար, վոր աշխարհը ուրացած, կյանքից ձանձրացած, նրա լուսեյան մեջ մխիթարություն կգտներ: Դուրս այնտեղ յերջանիկ կապրեր և մի ծովային աստված, վոր մերժված աստվածներին ակումբից, հալածված Ադամաղդի չանթերից, յուր վրեժխնդրությունը կլուներ այն զվարճություններին մեջ միայն, վոր կկախարդեր, կքարացներ անցնող նավերը, յերբ կհամարձակվեին մերձենալ յուր կղզուն և վրդովել նրա խաղաղությունը:

Բայց այստեղ կարո՞ղ եր յերջանիկ լինել դրծի և դաղափարի մարդը:

Վո՛րքան վիճակներին փոփոխություն...

Կար ժամանակ, վոր այդ մարդը յերիտասարդ եր, մի դեղեցիկ, վայելչահասակ յերիտասարդ, վորի նմանը չկար յուր աշխարհում: Մի արքունիքի զարդն եր նա և ուրախությունը: Ինքը արքայի հար քեռորդին լինելով, եր, միևնույն ժամանակ, և նրա անձնիշխանը: Վոսկեհուռ զգեստներով, զարհարաղարդ կամարը մեջքին, վոսկեպատյան սուրը ձեռքում, միշտ կանդնած եր լինում արքայի անաբքում, յերբ նա հանդիսավոր ընդունելություններ եր անում: Մոր կողմից թագավորազն, իսկ հոր կողմից մի աշխարհի մեծ քահանայապետի թոռն եր նա: Ցեղավ վոր, այդ աշխարհը

ղրկվեցավ յուր քահանայապետից: Հավաքվեցավ ավագանին, հավաքվեցավ ազատանին, հավաքվեցան և իշխանները: «Մեղ քահանայապետ ուռ'ւբ»,— ասում էին արքային: Արքան յուր ձեռքով հանեց վոսկեհուռ դդեստները, յուր ձեռքով արձակեց դոհարազարդ կամարը, յուր ձեռքով առեց վոսկեպատյան սուրը և, նրան ժողովրդին տալով, ասաց.— «Ահա ձեր քահանայապետի զավակը՝ Թո'ղ ձեզ քահանայապետ լինի»: Ուրախացավ ավագանին, ուրախացավ ազատանին, ուրախացան և իշխանները: Բայց յերիտասարդը հրաժարվում եր, ասելով, Թե ինքը արժան չե այդ սուրբ պաշտոնին: Ինդրում եր ավագանին, խնդրում եր ազատանին, խընդրում էին և իշխանները: Յերիտասարդը դարձյալ հրաժարվում եր: Ձլսեց արքան, ականջ չդրեց խոսքերին: Կանչեց ատիրիչին, հրաման տվեց՝ կտրել սիրուն դիսակները և գանգրահեր վարսերը, վոր զարդարում էին նրա դլուխն ու Թիկունքները: Յերբ կտրում էին, լաց եր լինում ավագանին, լաց եր լինում ազատանին, լաց եր լինում և արքան: ԳեղեցկուԹյունը ղրկվեցավ յուր չքնաղուԹյունից, պալատական վայելչուԹյունը ծածկվեցավ կրոնավորի սև ղդեստի ներքո...

Վորպես ղինվորական, նա քաջ եր և ալնիվ, վորպես պալատական, նա արքունիքի զարդն եր, իսկ վորպես հոդևորական, նա յեղավ յեկեղեցու զարդը: Իրրև մի լամ լուսապայծառ, լուսավորեց նա ամառնա տունը: Աշխարհը լցվեցավ յերջանկուԹյամբ: Ցաջ ղինվորականը դարձավ քաջ հովիվ և յուր անձը դրեց յուր հոտի վրա: Աղքատը հաց ուներ ուտելու, հիվանդը ապահով պատսպարան: Վորբը սնուցանող հայր ուներ, իսկ այրին խնամող ձեռք: Ամենուրեք Թագավորում եր դիուԹյունը, ամենուրեք սիրում եր վողորմածուԹյունը: Նեղյալների հայր յեղավ նա, և սրբեց Թշվառների արտասուքը:

Իրրև կրոնավոր, ամենածանման եր նա, իսկ իրրև քահանայապետ, եր միևնույն ժամանակ, մի բարձր պետական անձնավորուԹյուն: Մեծ յեռանդով կառավարում եր յուր աշխարհի գործերը և նրանց կանոնավոր ընԹացք եր տալիս: Կարդը նրանով եր հաստատվում, իսկ անկարգուԹյունը նրա ջանքերովն եր անհետանում: Ջորավոր ձեռքով արմատախիլ եր անում չարուԹյունը, և բարերար ձեռքով սերմանում եր առաքինուԹյունը: Վողևորված յուր աշխարհի բարելավուԹյան բարձր դաղափարով, նա յուր կենսատու շնչով վոգի և կյանք եր բաշխում նրան:

Ցեղավ վոր, յուր աշխարհի մի կարևոր գործի համար՝ յեկավ նա Բյուզանդիա: Ներկայացավ վաղես կայսրին, նրա հետ բանակցելու: Հոգևմարտ կայսրը կատաղած եր այդ ժամանակ Արիոսի մոլորուԹյուններով, և ասասիկ հալածանք եր հարուցել ուղղափառ յեկեղեցու դեմ: Նա Թողեց քաղաքական խնդիրը, վորի մասին յեկած եր մեծ քահանայապետը, և նրա հետ կրոնական վիճաբանուԹյունների մեջ մտավ: Համարձակ կերպով հանդիմանեց նա կայսեր մոլորուԹյունները և նրան դնալի ուղղուԹյուն հրավիրեց: Բարկացավ կայսրը և նրան՝ յոԹանասուն յեպիսկոպոս-

նրբի հետ՝ հրամայեց աքսորել ովկիանոսի խորքերը: Ջնեռնային պատանուն երբեմն ժամանակ՝ տասնհինգ ամիս և տասնհինգ դիշեր լողում եր նավը, և տանում եր սրբազան աքսորյալներին: Ցուրտը փչեց, բարձրացավ մրրիկ, ծովը ալեկոծվեցավ, և նավը խորտակվեցավ... Մի մակույկի մեջ ապաստանեցավ նա յուր յերկու սարկավագների հետ: Մակույկը ձգեց նրանց այդ կղզին...

Վո՛րքան ամառ, վո՛րքան ձմեռ անցել եր այն որից... այդ անբնակ կղզում տանջվում եր նա... հեռու ամբողջ հայրենիքից, հեռու սիրելի հոտից... Այժմ այն անձը, վոր մի ամբողջ ազգի հոգևոր պետն եր, վորի մեծարանքն վեհարանում հարյուրավոր պաշտոնյաներ եյին ապասավորում, մի յնտանի նստած եր անշուք քարանձավի մուտքի մոտ, վոտներից հյուսած նստարանի վրա, և լի անճկուքյամբ նայում եր հանդիպող արևելքին: Նրա սիրտը լցված եր խորին թախծուքյամբ: Դեռ ևս քանի՞ անդամ պետք և մտաներ արևելքը, դեռ ևս քանի՞ անդամ նա յուր կենսատու ճառագայթներով պետք և լուսավորեր աստուծո աշխարհը,— իսկ ինքը պետք և արդելված մնար այդ կղզում, հեռու այն աշխարհից, վորի արեգակն եր և պայծառությունը...

Քարանձավից վոչ բնչ հեռու՝ ծառերի խոռոչյան մեջ թաղնված եր մի տաղավար. դա մի խորանաձև խրճիթ եր, վոստերից հյուսած և կավով ծեփած: Այստեղ ապրում եյին յերկու սարկավագները, վոր անբաժան մնացին իրանց վարդապետից:

Նրանք արդեն վերապրածել եյին ծովեղերքից, կրակ եյին վառել, ընթրիք եյին պատրաստում: Պատրաստությունների մեջ յերևում եր քաղաքակրթված մարդը, վոր հանգամանքներից ստիպված, նախնական դրության մեջ եր ընկել: Դրանք դիտեյին, թե ինչպես պետք և վառել կրակը, դիտեյին, թե վորպիսի՛ անոթների մեջ պետք եր կերակուր պատրաստել և ինչպես պատրաստել: Բայց վո՞րտեղից գտնել անոթները: Անբնակ կղզում վո՛չ պղնձագործ կար, վո՛չ դարբին և վո՛չ բրուտ: Կրակը մի հրաշքով դուռն նրանք, և անչիջանելի պահպանում եյին, վորպես վերմղղական տուրք հուր: Իսկ անոթների տեղ դործ եյին ածում կա՛մ վոստրանների խոշոր խեցիներ, կա՛մ բույսերից հյուսած զամբյուղներ:

Փայտակույտը բորբոքված կերտոյի վառվում եր, տարածելով յուր չուրջը խիստ ախորժելի ջերմություն: Շինացած ածուխները մի կողմ եյին քաշել և նրանց մեջ ձգել եյին խոշոր խիճեր, վորոնք նույնքան տաքացել եյին, վորքան ածուխները: Խիճերի մաքուր մակերևույթի վրա, վորպես տապակների վրա, չորել եյին ձկները և խորտում եյին: Խեցգետիններն արդեն կարմրել եյին և վարդի գույն եյին ստացել: Դրանցով դրաղված եր Տիբեն: Իսկ Թոստոմը տաք մոխրի մեջ թաղել եր շտապակներ, վորոնք յերբեմն պայթում եյին և դուրս եյին թռչում, բարձրացնելով իրանց հետ մոխրի թանձր տարափ: Մինուճարները բաժանում եր նա

ճղված կեղևներից և դնում եր սաղաթի լայն դաղտակուբի մեջ, վոր ախեկյի տեղ եր ծառայում:

— Խորոված չաղանակներ սիրում ե նա,— ասաց Ռոստոմը, ինքն էս ուրախանալով, վոր նա սիրում ե:

— Խորոված կաղիններ նույնպես սիրում ե,— նկատեց Տիրեն,— բայց ավսո՛ս, վոր կաղինները դեռ չեն հասած:

— Ջուխ ամենևին չե ախորժում ուտել:

— Առհասարակ մսեղենից նա իրան հեռու յե պահում:

— Բանջարեղենը մեծ ախորժակով և ուտում, կտրելի յեր յերբեմն աղցաններ պատրաստել, բայց ի՞նչ արած, վոր աղ չկա:

— Ո՛ւ վորձը աղի մասին անհաջող անցավ:

— Ա՛յո, անհաջող անցավ: Ծովեղերքում մի փոքրիկ լճակ չկննելի, ջուրը այնտեղ բաց Թողի, մտածում եյի՝ արևի տակ դոլորշիացնելով, աղ դուրացնել: Դու ինքդ տեսար, յերբ ջուրը բոլորովին ցամաքել եր, հատակի վրա մնացել եր բավական Թանձրությամբ աղային խավ, բայց այնքան դառն եր, ինչպես լեղի: Ա՛խ, վո՛րքան ուրախ կլիննեյի, յեԹե այդ փորձը հաջողվեր:

Նա դեռ նստած եր քարանձավի մուտքի մոտ:

Քարանձավը, վորի մեջ բնակվում եր նա, այն այրերից մեկն եր, վոր բնությունը պատրաստում ե զաղանների վորջ լինելու համար: Անցքը նեղ եր, ներս մտնելու միջոցին պետք եր բավական կորանալ: Հետո հետզհետե լայնանում եր և դոդավոր խոռոչի ձև եր ստանում: Արևագալի աղոտ շողքը, նրա մուտքից ներս ցոլանալով, հազիվ կարողանում եր փոքր ինչ մեղմացնել ներսի Թախծալի խավարը: Մի կողմում դրած եր մահճակալի նման մի բան, կազմված անտառ փայտերից, վորի յուրաքանչյուր մասը կապված եր մյուսների հետ վոստերից վոլորած փոկերով: Ցամաք մամուռը, վոր տարածված եր նրա վրա, ծառայում եր իբրև անկողին: Այրի մյուս կողմում, մահճակալի հանդեպ, չորս քարե այտնակների վրա դրած եր մի սալ, վորը փոքր ինչ հարթելով, իբր Թե սեղանի ձև եյին տվել: Նրա մոտ ամբարցրած եր մի աԹոռ, վոր դրել նստարանի Թե նամանությունը և Թե կազմվածքն ուներ: Ջրով լի դդմաբուլիկը, վոր դրած եր սեղանի վրա, լրացնում եր այդ անշուք բնակարանի չքավոր հարստիների Թիվը:

Դրսից քարանձավը յուր բնական դեղեցկությունն ուներ: Մշտականաչ պատատուկները՝ իրանց խիտ հյուսվածքով, շուրջանակի տարածվելով, պահում եյին նրա մուտքը: Իսկ յերկու սպասող ուռենիներ իրանց վարսավեղ ճյուղերով հովանավորում եյին նրան: Մի զույգ յեղիպտական աղավնիներ, սպիտակ վորպես ձյուն, բույն եյին դրել ուղիղ անձավի մուտքի վերևում, սպասում խորին ճեղքվածքի մեջ: Դրանք անձավի նախկին բնակիչներն եյին, իրանց տեղը սիրով Թողեցին կղզու սրբազան հյուրին, իսկ իրանք նոր բույն չինեցին հիշյալ ճեղքվածքի մեջ, չհեռանալով նոր

դրացիից: Զազուլինները մնչում էին, և նա խորին մտահուզությամբ լսում էր նրանց մանկական մնչյունը և, կարծես, նրա տխուր դեմքի վրա կաթիլացվում էին այդ խոսքերը. «Երջանի՛կ են դրանք, որ դեռ խնամող հայր և մայր ունեն... իսկ այն բազմաթիվ որբահոցները, որ կան հիմնեցի իմ հայրենիքում, այժմ ո՞ւմ խնամակալության ներքո կան դեռևս... այժմ ո՞վ և իմ ճաղուկներիկ հոգատարը...

Արևը արդեն մտել էր, բայց հորիզոնը դեռ վառվում էր վոսկեգույն բոցերով: Լուսավորված ծովը, որպես մի չողչողուն հայելի, մխախտնված էր յերկնքի ծիրանեղույն պայծառության հետ, որի վրա տատիվում վայրում էին վերջին ճառագայթները, իրանց սուր, սլաքաձև ճանճներով: Այդ վեհ, հանդիսավոր րոպեում՝ ամեն յերեկո յերկար նստած էր լինում նա, մինչև ճառագայթները հետզհետե անհետանում էին, բոցավառ լուսավորությունը հանդչում էր, և հորիզոնի վրա տիրում էր մուգ- կապտագույն մառայլ... Իսկ այս յերեկո նույնը կատարվեցավ նրա սրտում... Նա վեր կացավ յուր նստած տեղից և սովորականից վաղ մտավ յուր քարանձավը:

Այնտեղ տիրում էր խորին մթություն: Մոտեցավ մահճակալին և ընկողմանեցավ նրա վրա: Հոգնած էր նա, աշխատում էր փորը ինչ հանդստանալ: Բարանձավի խոնավ ողը խեղդելու չափ ծանր էր: Զգացվում էր խիստ սուր բորբոսային հոտ: Ցերեկը նա տանջվում էր, մի կողքից դեպի մյուսը շուռ գալով: Ցամաք մամուռը խշրտում էր նրա ծանրության ներքո: Գլխի տակինը, բարձի փոխարեն, դրած էր մի խոշոր ծովային խոտ:

Վերջապես ներս մտավ Ռոսոամը, ձեռքում բռնած ունենալով մի վառած ջահ յեղևնի յերկար տաշեղներից: Այդ տաշեղները մոմերի նման ամբացրեց անձավի ճեղքերից մեկի մեջ, որպես քարշ ընկած ճրագ, և ինքը զբաղվեցավ հետացավ: Ինչպես յեղևինը խնկահոտ լուսավորությամբ լցրեց ամբողջ քարանձավը:

Լույսի ներկայությունը դուրս կոչեց քարանձավի խորքից յերկու այլ արարածներ, որոնք, յերկու փշատատ գնդակների նման կլորվելով, մտանցան մահճակալին: Փշերի միջից յերկարացան յերկու սուր դլուխներ, և փոքրիկ մոխրագույն աչիկներով սկսեցին նայել դեպի վեր: Նա ձեռքը ցած տարավ: Նրանք սկսեցին իրանց բարակ ընդունելով լիզել նրա մատները, կարծես, համբուրներ էին մատուցանում այն աչքին, որ ամենայն խնամքով անուցանում էր նրանց: Դրանք յերկու ընտանեցրած ոզնիներ էին, որոնք, մի գույգ արքուն պահապանների նման, հսկում էին քարանձավին, վոշնչացնելով ոձերին և այլ թունավոր միջատներին: Ուրդներն անգամ նրանց յերկյուղից համարձակություն չունեյին անձավի մեջ մուտք գործելու: Պատասխարված իրանց փշալից և վահանակիր մարմի մեջ, բոլորն հետ պատերազմում էին: Խավական էր, որ նրանցից մեկը նկատեր ոձին, խելագար կլռներ պոչից և, դլուխը ներս քաշե-

լով յուր վիշապից պատյանի մեջ, դունդ կճևանար: Ոձը, ծուղակի մեջ բռնված թռչունի նման, կսկսեր յուր մարմնով և գլխով այնքան զարկվիլ նրա փուշերին, մինչև հոգին կտար: Զվարճալի էին այդ կռիվները և, միևնույն ժամանակ, քաոմնելի:

Դարձյալ ներս մտավ Ռոստոմը, և մի սալակի մեջ, վոր հյուսած եր բուլսերից և բոլորակ մատուցարանի ձև ուներ, բերեց ընթրիքը, դրեց սեղանի վրա: Նա զարձավ դեպի յերիտասարդը, հարցնելով.

— Ի՞նչպես է Տիբեն, յերեկ իրան լավ չեր զգում:

— Բոլորովին առողջ է, տեր իմ,— պատասխանեց սարկավագը,— սրբոդջ որը բանում եր:

— Այդ դեռ չի նշանակում, վոր առողջ է: Նա հիվանդ ժամանակ ևս բանում է:— Գնա՛, հանգստացիր, ասա՛, վոր նա ևս հանգստանա:

Սարկավագը գլուխ տվեց և հեռացավ: Նա վեր կացավ մահճակալի վրայից, մոտեցավ սեղանին, նստեց նրա մոտ: Վողնիկները մերձեցան նրա հագուստի քղանցքներին և մի առանձին մտերմությամբ սկսեցին քծնվիլ: Նա վեր առեց խորոված չաղանակներից մի-մի հատ և մոտեցրեց նրանց բերաններին: Նրանք ուրախությամբ խլեցին անուշ պատառները և մեծ-մեծ ախորժակով սկսեցին կրծոտել:

Մի քանի հատ ևս ինքը կերավ: Բայց նա ավելի հոգ եր տանում յուր յերկու սեղանակիցներին, քան թե յուր մասին եր մտածում: Յերբ նրանք կշտացան, քաշվեցան իրանց խորշը և մինը մյուսի մոտ կծկվելով, սկսեցին ննջել:

Նա մնաց միայնակ, սեղանի մոտ նստած:

Ցեղվենի տաշեղները, վոր մոմի փոխարեն վառվում էին, արդեն սպառվելու վրա էին: Քարանձավի մեջ խավարը հետզհետե թանձրանում եր,— մի թանձրալի խավար, վոր զգերեզմաններին մեջ է թաղավորում: Դրսից լսելի յեր լինում ալիքների խուլ ճայնը: Ծովը անհանգիստ եր: Քամին շառաչելով անցնում եր ծառերի կատարների վրայով, վոր հեծում և հառաչում էին նրա ուժգին հարվածների ներքո:— Այդ բոլորը արթնացնում եր դեպի տխրություն, դեպի հոգեկան խորին վրդովմունք:

Նա դեռ նստած եր սեղանի մոտ և, հենված ալ ձեռքի վրա, լսում եր, թե ինչ և կատարվում դրսում:

Ցերբեք բարկությունը չեր դուրս կոչել նրա շրթունքներից մի հուսահատական բառ. յերբեք նրա առաքինի սիրտը չեր արտահայտել ամենավոջը տրտունջ անգամ յուր վիճակից: Վոգևորված յերկինային մխիթարությամբ, նա միշտ իրան բարձր եր պահել կենցաղական դժբախտ արկածների վհատությունից, և միշտ անվեհեր վստահությամբ հավատացել եր յուր աստղին: Իսկ այս դիշեր ներքին վրդովմունքը դուրս կոչեց նրա սրտի խորքից հետևյալ խոսքերը.

«Ալեքսա՛նդրոս, քո վարմունքը անհեթեթի կմնա իմ աչքում... Դու վստությամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծա-

ռայութիւնները... Քանի՛ քանի՛ անգամ մենք հետացրինք քո դէմից պատկական սոսկալի սուրը... քանի՛ քանի՛ անգամ ազատեցինք քեզ ամօթալի անկումից... Իմ հայրենիքը մի անխորտակելի վահանի պես միշտ պատրաստել է քեզ արևելեան խուժադուժների արշաւանքներից... իմ հայրենիքը կրել է բարբարոսների հարուածները և քեզ վողջ պահել... Ինչո՞ւ եր ուրեմն մեզ անել այդ:— Քրիստոնեական յեղբայրութիւնը: Մենք թողնելինք հեթանոս պատկերն և քո ձեռքը բռնեցինք: Իսկ դու միշտ դաւաճանեցիր մեզ... Մենք դաբձյալ քրիստոնեական ներողամտութեամբ մոռանում էլինք բոլորը: Իսկ դու չեկիր դղջանում, վորովհետև խարերայութիւնը քո քաղաքականութեան հենարանն եր... Վերջը քաղաքական դրծի մեջ դու խառնեցիր կրոնական խնդիրները: Կամեցար մեզ Արևոսի մոլորութիւնների մեջ ընկղմել... Ե՛ս, իմ ընդդիմադրութեան համար, դատապարտվեցա և աքսորվեցա... Բայց նախախնամութեան աչքը յերկար չի թողնի աքսորյալին այստեղ... Ենքը նա վոտք կդնի հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, ննդամո՛ր Բյուզանդիոն»...

Ենդևինի տաշեղների վերջին կայծերը պլպլացին, պլպլացին, և վերջապես, հանդան: Մեքամաղձոտ խաւարը կրկին ակրեց անճուկ քարանձաւի մեջ: Նա դեռ ևս յերկար նստած եր քարե սեղանի մոտ, և նրա տխուր մտածութիւնները թռչում էլին դեպի այն յերկիրը, վոր սիրում եր նա, և վորին նվիրված եր յուր հոգու բոլոր զորութեամբ:

Այդպիսի շատ դիշերներ, անքո՛ւն, սրատա՛ճ դիշերներ, հանդիպում էլին Գաւառոսի հզոր աքսորյալին— Հայոց սուրբ քահանայապետ Ներսես մեծին, վորին պաշտում եր Հայաստանը, վորին սպասում եր Հայաստանը...

ԵՆՈՒՀ ՌԵՐԴ

Անունը Ենուհ, ինքը լի դառնութիւններով...

Ենկրատանից դեպի Տիզրոն տանող ճանապարհի մի կողմում բարձրանում է մի սեղաձև քարաժայռ: Նրա լայն, վիմայինն տարրոնը բռնում է բավական ընդարձակ տարածութիւն, վորի վրա, վորպես մի հաստատուն պատվանդանի վրա, բնութիւնը դրել է հիշյալ քարաժայռը: Մի ափ հող անգամ անկարելի յե դանել նրա լերկ, ապառաժային մակերեսութի վրա: Մի հատ բույս անգամ չե բուսնում նրա ամուր, քարեղեն կողքերի վրա: Հարաւային բոցակեզ արեգակը այրել, թրծել է նրան, վորպես մի անոթ, վոր դրած է բրուտի մշտավառ քուրայի մեջ:

Այդպես եր այդ քարաժայռը դարերով, անհիշելի շատ դարերով առաջ:

Ենդամ վոր, մխանգամ բրիչը ուսին դրած, այդ լեռան տարրոտով

անցնում եր Ցարհադը—Պարսկաստանի մեծ քանդակագործը։ Հանկարծ վողբի խառնաձայն հնչյուններ արթնացրին նրան յուր խորին մտահուզությունից, վորի մեջ ընկղմված եր այդ րոպեյում։ Նա կանգ առեց։ Ցնրևացին վորսորդական բարակներ, յերևացին բաղեակիր ձիավորներ, և ուրախ, անհոգ ասպահումբը վոթորկի նման հայտնվեցավ, և վոթորկի նման անցավ նրա մոտով...

Մեկի պատկերի աղոտ ասվերագիծը մնաց նրա սրտում...

Այդ պատկերը խլեց նրա հանդստությունը։ Ամեն անգամ, նույն որը, նույն ժամին, նա կանգնած եր լինում այդ ճանապարհի վրա։ Սպասում եր, յուր հոգու ամենաքաղցր ղղացմունքներով ասպասում եր, մինչև հայտնվում եր սիրելի պատկերը և, մի թեթև հայացք ձգելով նրա վրա, կայծակի նման անցնում եր։

Նա կորցրեց յուր սրտի խաղաղությունը, թողեց արհեստը, թողեց ճարտարությունը, և սկսեց խելագարի նման թափառել այդ լեռների ամայության մեջ։

Անցան որեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ... Միանգամ նրատես եր նա, և դարձյալ սպասում եր։ Հայտնվեցավ նա։ Բայց այս անգամ վո՛չ վորսորդական բարակներ կային նրա հետ, և վո՛չ բաղեակիր ասպետներ։ Միայնակ եր նա, մի խումբ նաժիշտների հետ։ Ձին քշեց մոտեցավ Ցարհադին։

— «Վողջո՛ւյն քեզ, ո՛վ մեծ վարպետ,— ասաց նրան։— Ի՞նչն է կապել քեզ այդ լեռների, այդ անապատների ամայության հետ։ Ցնս քեզ մի լավ այտեղ եմ տեսնում...

— «Այն բախտավորությունը,— պատասխանեց Ցարհադը,— վոր յերբեմն մի անգամ պատկեր լուսավորում և այդ անապատների ամայությունը։

— «Մի թեթև այդքան վա՞ռ է քո մեջ սերը... հարցրեց նա ժպտալով։

— «Ո՞վ չի սիրի նրան, վոր անմահների մեջ յուր հավասարը չունի... Ո՞վ չի սիրի նրան, վորի լուսնյը կյանք և բաշխում, վորի մի հայացքը պարգևում է հավիտենական յերջանկություն... Մի թեթև դու կարծո՞ւմ ես, վոր մի լավ քարի և քերթչի հետ դրազված արհեստավորի սիրտը այն աստիճան քարացած է, վոր գեղեցկության համար տեղ չունի։

— «Այդ յես չեմ կարծում։ Նա վոր անձև քարին ձև և կյանք և տալիս, նա վոր աստ մարմարիոնից աստեղծագործում է գեղեցկության տիպարներ, ինքը չի կարող չսիրել գեղեցկությունը։— Բայց լսի՛ր, վարպետ, արյաց աղքատասեր սիրտը գրավելու համար մե՛ծ գոհեր են հարկավոր...

— «Այդ յես գիտեմ... մեծ աստվածուհիները մեծ գոհեր են պահանջում...

— «Ցնս անկարելին չեմ պահանջի քեզանից. յես միայն պետք է վորձեմ քո սերը։ Նայի՛ր, Ցարհադ, տեսնո՞ւմ ես այդ ապառաժը,— նա

ձեռքը տարավ դեպի անպաճև քարաժայռը,— դու պետք է այդ ապառաժից ինձ համար ապարանքներ հրաշակերտես, որ յես նրանց բարձրությունից նայեմ և աքանչանամ, թե ինչպես Տիգրիսը արծաթափայլ պուտյաններով զծում է Ասորեստանի դեղեցիկ դաշտավայրերը, կամ ինչպես մեզմ հողմի շնչելուց ծածանվում են Բաղիստանի բարձրադիտակ արմավինները: Ցնծ ապառաժե սրտում պետք է իմ զանճերի համար մթերանոցներ փորես, իսկ նրա առաջում՝ իմ նժույգների համար ոռնևաններ: Ցերբ այդ բոլորը պատրաստ կլինեն, այն ժամանակ յես քեզ կլինեմ...

Ասաց և հեռացավ:

Այն օրից անցան տարիներ, քարաժայռի անխորտակելի ամրության մեջ դործում էր անխոով վարպետի մուրճն ու քերիչը: Գիշեր և ցերեկ լսելի էր լինում ծանր հարվածների անլուելի ձայնը: Գործը հաջողությամբ առաջ էր դնում: Սկզբ ուժ էր տալիս մեծ արհեստավորի հանճարին, իսկ արյայ արքայադստեր դեղեցկությունը բորբոքում էր նրա յեռանդը: Կերտանց անձյակներ, կերտանց դահլիճներ, կերտանց պատկերազարդ սրահներ, և մեկուսուր քարից աքանչելի ապարանք ստեղծանց: Դահլիճների և սրահների պատերը կենդանագրեց բարձրաքանդակ նկարներով: Մի տեղ պատկերացրեց Իրանի հին հսկաների և փեհլևանների կռվերը գևերի և չար ոգիների հետ: Մի տեղ պատկերացրեց Իրանի վաղեմի արքաների փառքն ու մեծությունը, և նրանց քաջություններն ու հաղթություններն հանդիսավոր տոնախմբություններ: Գծեց քարը և նրա վրա արձանագրեց նախնական թագավորների մեծագործությունները, նրանց առաքինությունները և նրանց պարգևած բարերարությունները Արյայ աշխարհին: Այդ հրաշալիքները կատարեց նա այն նյակի համար, որին նվիրված էր յուր սիրտ բոլոր ջերմությամբ: Այդ հրաշալիքները կատարեց նա, որ միշտ հիշեցնելին նրան Իրանի փառավոր անցյալը, որ միշտ դղվեկին նրա սիրտը այն վսեմ հպարտությամբ, թե ինքը սերունդ է մի մեծ տոհմի, որ շառավիղում է առյուծներից և առյուծանման դրծեր և կատարել:

Նա յեկավ և տեսավ բոլորը:

— Այդ բոլորը շատ դեղեցիկ է,— ասաց նա,— բայց այստեղ ջուր չկա, այստեղ ծառեր չկան: Շինիր ինձ համար շատրվաններ, որ ամպերից բարձր ցայտեր ջուրը, անկիր ինձ համար ծառեր, որոնց հովանին նեղքո հանդչելի յես, և— հանդչելի քո դրկում...

Ասաց և հեռացավ:

Ամենահեռավոր վտակներն ընթացքը փոխեց նա և առաջվանից ջրամուղներով բարձրացրեց մինչև ապառաժե դագաթը: Կտրեց քարը, փորեց ավազաններ, կերտանց արծաթափայլ շատրվաններ: Անապատ ջուրը սիրվ և դիշեր դուրս եր վիժում շատրվաններից, և մարդարտյա կաթիլներով ցոդում եր չորեքկողմն կենաշատարդությունը: Կտրեց վեմը, հարթեց ապառաժը և, հետո տեղերից հող բերելով, ածեց նրա վրա: Այդ հողի մեջ անկեց ծառեր և առնշադարձեց բարձր, կախաղանաձև պարանոցներ,

վորոնք, կարծես, ոդի մեջ բուսած լինեյին: Տարիներ անցան, ա-ճեցին ծառերը և պտուղ տվեցին: Ծաղկեցան ծաղիկները և սրտաբարբ անուշհոտությամբ լցուցին բուրաստանը: Հավաքվեցան թռչունները և իրանց ուրախ ձայներով կենդանացրին շրջակայքը: Իսկ նա՛ վոր այդ դեղեցիկ դրախտի զարդն ու թագուհին պետք է լիներ, չհայտնվեցավ...

Մի որ, ձեռքը ծնոտին դրած, նստել էր վարպետը յուր կառուցած ապարանքի ստորոտում, և տխուր կերպով նայում էր դեպի մեծ ճանապարհը: Ցերեկով անցավ մի չինական, վորը տեսնելով նրան, մոտեցավ, նստեց նրա մոտ, մի փոքր հանգստանալու:

— «Վո՞րտեղից ես գալիս,— հարցրեց վարպետը:— Ցերեկի՛ քեզ, վոր այդպես ուրախ ես:

— «Տիկրոնից,— պատասխանեց չինականը.— Ինչո՞ւ ուրախ չլինել, յերբ ամբողջ աշխարհը ուրախանում է:

— «Ի՞նչ է պատահել:

— «Միթե չգիտե՞ս, վոր քաղաքում արդեն յոթն որ է, յոթն գիշեր է, վոր հարսանիք է: Գինին հոսում է վտակների պես, անուշահամ խորտիկները շատ շուտ են: Ուտում են, խմում են և ուրախանում: Ամբողջ քաղաքը ծնդում է նվագներով, և պարտղների վոտները չեն հողնում: Ցես էլ իմ բաժինը վայելեցի: Այնքան կերա, այնքան խմեցի, և այժմ այնքան եմ տուն եմ տանում, վոր մի քանի շաբաթ իմ հինգ և յերեխաներիս համար բավական կլինի:

— «Ո՞ւմ հարսանիքն է:

— «Թագավորի:

— «Ո՞ւմ հետ:

— «Անուշի հետ:

Նա այլևս չխոսեց, չանթահարի նման ցնցվեցավ, և մնաց անշարժ: Չնաո վեր կացավ և անզոր, դողդոջուն վոտներով սկսեց բարձրանալ դեպի յուր հրաշակերտած ապարանքը: Նայեց յուր շուրջը, վերջին անգամ յուր թախծալի հայացքը դարձրեց այն բոլոր շինվածքների վրա, վոր արդյունք եյին ջնմ սիրո և դեղեցիկ արհեստի: Ցեվ ապա մոտավ յուր արհեստանոցը: Այնտեղ դրած եյին նրա դործիքները: Վեր առնց մի ծանր մուրճ և դուրս յեկավ փոքրիկ հրապարակի վրա:— «Ցես ինձ դավաճանե՛ց...» ասաց, և նետեց մուրճը ոդի մեջ: Մուրճը պտտյավեցավ և ընկավ ուղիղ նրա դլխի վրա: Տաք արյունը սրսկեց այն ոքանչելիքները, վոր նրա ճարտար ձեռքի դործն եր...

Ցարհաղը չհասավ յուր նպատակին, բայց նրա սիրելի Անուշի անունը մնաց այդ քարեղեն ամրոցի վրա և կոչվեցավ Անուշի բերդ:

Այդ վիմատիպ, կոփածո ապարանքը, վոր պատրաստված եր սիրո և հավիտենական յերջանկության տաճար լինելու համար, հետո դարձավ արտասուքի և մշտական հնծության մի պժոխք: Գարսից վերջին թագա-

Ոտքերը աքսորում էին այնտեղ իրանց ձեռքը դերի ընկած մյուս թագա-
վորներին:

Կեսօր եր, բայց Աֆուչ բերդի վիմափոր նկուղներից մեկը, որմա-
պատած լուսավորության ժամանակ, դեռ պահպանում եր յուր մեջ խո-
րին մահյլ և մթություն: Վերևից, աստաստաղի մոտ, բացված եր մի նեղ
պատուհան, որ ավելի ծակի նմանություն ուներ, քան թե լուսամուտի:
Արեգակի բարակ շողքը, որ յերկչոտ կերպով ներս եր ցոլացել այդ ծա-
կից, կարծես, վախենում եր ներսի խավարից և չեր համարձակվում
մոքր ինչ ավելի տարածվել: Նկուղը ներկայացնում եր մի քառակուսի,
մոքր ինչ յերկայնաձև արկղ, քան թե սենյակ,— բայց քարեղեն արկղ:
Չար եր հատակը, քար եր աստաստաղը, քարից եին չորեքկողմի պատերը,
— մեկատար և մեղադրող քարից: Մի այլ նյութ խառնված չեր նրա վի-
մային կազմության մեջ, բացի յերկաթյա ծանր դռնից, որ դարևոր
ժանգից սևացել, մրճռտել եր, և նույն քարի մուր-աղյուսագույն յե-
րանգն եր առացել:

Յերկաթյա դռան հակառակ կողմում, հատակի մեջ, ամրացած եր
նույնպես յերկաթյա հաստ ցից: Դա նույն ցիցերի նմանություն ուներ,
որոնցից ծովեզերքում կապում են նավակներին: Բայց դրանից կապված
եր մի մարդ: Ցցի գլխին կար մի շարժական ողակ, որ միանում եր ծանր
շղթայի ծայրի հետ: Իսկ շղթայի մյուս ծայրը փակված եր յերկաթյա
սավառ անուրի հետ, որ անց եր կացրած այդ մարդու պարանոցով:
Շղթայի յերկարությունը չափում եր այն սահմանը, որի մեջ կարող եր
այդ մարդը շրջել, առանց քայլ տալու նրան մինչև դուռը հասնելու: Այդ
դրության մեջ նա նմանում եր մի առյուծի, որ փակված եր յերկաթյա
դաստակի մեջ: Ձերկու ձեռքերի բազուկները կապված եին շղթայով:
Վոտները նույնպես ազատ չեին յերկաթյա կապանքներից:

Այդ մռայլ նկուղի մեջ, նույն շղթան, նույն յերկաթյա սավառ անու-
րը մի ժամանակ կրում եր յուր պարանոցին Հռոմայեցոց Վալերիանոս
կայսրը, որ դերի յեր ընկած Շապուհ Ա.—ի ձեռքում: Ձերկնքի և արե-
գակի վորդին վարվում եր յուր ոտնատակ դերիի հետ՝ վորպես մի
քարբառոս: Ամեն անգամ, յերբ նա վորսի յեր դնում, դուրս եին բերում
դժբախտ բանտարկյալին, լվանում եին, ոծում եին, հագցնում եին
կայսերական ծիրանին, և հանդիսավոր կերպով կանդնեցնում եին արքու-
նիքի դռան մոտ: Դուրս եր գալիս արևի վորդին, կայսրը մեջքը խոնար
հեցնում եր, և նա, յուր վոտքը դնելով նրա մեջքի վրա, հենում եր
ձին: Ձեվ այդպես, ամեն անգամ նա յուր պտույտ վոտքի տակ խոնարհեց-
նում եր Հռոմը... Այդ բոլոր անարգանքներից հետո, ապանել ավից նրան
և, կաշին ախահան անելով, լցրին խոտով և, ի ցույց ամենքսն, կա-
խեցին Տիզրոնի մեծ տաճարի պատից:

Շապուհ Ա.-ը այդ յերկաթյա անուրը դրեց Վալերիանոս կայսրի պարանոցին: Իսկ Շապուհ Բ.-ը նույն անուրը դրեց մի այլ թագավորի պարանոցին, վոր այժմ դանվում էր նույն քարեղեն նկուղի մեջ:

Այնտեղ կար և մի այլ մարդ, վոր մի անկյունում, անշարժ արձանի նման, կանգնած էր քարե պատվանդանի վրա, և անթարթ աչքերով նայում էր առաջինի վրա: Վո՛չ մի մինակ, վո՛չ մի նշույլ կենդանության չէր շարժվում նրա ցամաք դեմքի վրա, վոր դեղնել և մաղաղաթի գույն էր ստացել: Մեջքին կրում էր սպարապետական վսակավատյան սուրը, վորի կոթը բռնել էր ալ ձեռքով, և վորով այնպիսի մի տպավորություն էր գործում, կարծես, ամենայն պատրաստականությամբ հակում էր բանտարկյալ արքայի կյանքի վրա:

Արքան վոտքի վրա չէր, խոովյալ կերպով անցուդարձ էր անում յուր նեղ սահմանի մեջ, և ամեն անդամ նրա շղթաները աղմկում էին նկուղի խորին լռությունը: Պարանոցի շղթան այնքան կարճ էր, վոր նա չէր հասնում, վո՛չ այն անձնասպանությանը, վոր արձանի նման կանգնած էր քարե պատվանդանի վրա, և վո՛չ յերկաթյա դռանը, վոր փակում էր նրա արդելանի մուտքը: Դա մի հաղթանդամ, հսկայասիրտ և թավամազ տղամարդ էր, վորի մորուքի և գլխի մազերը, այս բանդի մեջ ավելի անկարգ կերպով աճելով, տալիս էին նրա կերպարանքին ահռելի արտահայտություն: Նա անցավ դեպի նկուղի անկյունը, նստեց հարդի վրա, վոր ծառայում էր թե՛ իբրև ոթոց և թե՛ իբրև անկողին:

Այդ մինչդեռ յերկաթյա ծանր դուռը ճռնչալով բացվեցավ, ներս մտավ բանդապետը և նրա հետ մի ծառա: Շապկի և պատմուճանի թևքերը մինչև արմունկները ծալած, բաղուկները հոլանի, հողնեթափները առանց դուլպաների հագած, գլխին դիշերային թասակ դրած, մեկ այլ հագուստով,— այսպես անելուչք և անպատշաճ կերպով ներկայացավ նա բանդարկյալ թագավորին, կարծես, նրան ավելի վիրավորելու համար: Նա զրուկս ավեց և, կանդնելով դռան մոտ, կիսահեղնական և կիսածաղրական յեղանակով ասաց.

— Վողջո՛ւյն հայոց արքային: Հուսով եմ, վոր իմ տեր թագավորը խաղաղ քնով և անուշ յերազներով վարած լինի դիշերային խավարը: Ցնծի թո՛ղ փարատեն նրանից բարի վողիները Ահրիմանի խուլական անուրջները...

Բանդարկյալը արհամարհական կերպով նայեց նրա վրա և վոչինչ չպատասխանեց:

— Ի՞նչու չես խոսում, տեր արքա,— առաջ տարավ նա ավելի առատհակությամբ:— Հայերը յերեք ձեռքի քաշուքյան մեջ խիստ փլատ են, դոնե լեզվի քաշուքյան մեջ բավական առատ են:

Նա դարձյալ վոչինչ չպատասխանեց:

— Ցնծալի, իմ տեր թագավորը դժդոհ և յուր նվաստ ծառայից,— ասաց նա, մի քայլ դեպի առաջ վոխելով:— Ցնա կաշխատեմ ավելի հա-

ճնլի լինել իմ ու եր թագավորին: Ահա այս րոպեիս փոխել կամ փա-
ոխոր անկողինը և անուշահոտ վաճկուքյամբ հորինել կամ քո աբքա-
յական մահիճը, այնպես վոր, դու կմոռանաս Հայաստանի դեղեցիկ մե-
ոաքան ու ասբը:

Նա դաբձավ դեպի յուր հետ յեկած ծառան, հրամայեց, վոր անկո-
ղինը փոխե:

Ծառան մոտեցավ, հավաքեց անկյունում տարածված հարդը, վորը
խոնավուքյունից տամկացել եր, և թագիքի նման կպել եր հատակին:
Նրա փոխարեն դրեց նոր և ավելի ցամաք հարդ:

— Անուշահամ խորտիկներով կճոխացնեմ այսոր իմ ու եր թագավորի
սեղանը,— ասաց նա, կրկին դառնալով դեպի բանդարկյալը:— Թո՛ղ նա
չմտածե, թե արիք (պարսիկները) անհյուրասեր են, թո՛ղ նա մոռանա
այն բոլորը, ինչ վոր կորցրել և յուր արքունիքում:

Ծառան դրեց հարդյա անկողնի մոտ մի կոոր դարեհաց և մի կոտ-
բած խեցեղեն անոթի մեջ ջուր:

— Բարի ախորժակ եմ ցանկանում, վողջ լերո՛ւք, ու եր արքա,— ա-
սաց նա և, դլուխ տալով, հեռացավ:

— Լի՛րբ... այս անդամ միայն մոնչաց բանդարկյալը:

Ցերկաթյա դուռը կրկին փակվեցավ, և նա մնաց միայնակ յուր քա-
բեղեն նկուղի մեջ:

Մի քանի անդամ լուռքյամբ անցավ նա մի անկյունից դեպի մյուսը,
հետո կանդ առեց, և դարձավ դեպի քարե պատվանդանի վրա կանգնած
անշարժ արձանը.

— Լսո՞ւմ ես, Մամիկոնյան ու եր, ի՞նչպես ամեն րոպե խոցոտում են
քո թագավորին, ի՞նչպես ամեն վայրկյան դառնացնում են նրա սիրտը:
Պարսիկը, ամեն վեհանձնուքյունից դուրկ պարսիկը, սովոր և յուր ա-
մեջ վիրավորել յուր հյուրին: Ի՞նչով և մեղավոր այդ վողորմելի գեռա-
նը, որ ամեն անդամ այստեղ մոնչելիս՝ լրբենի բնջանով լուսանքներ և
հարդում: Նրան հրամայել են, նրան պատվիրել են: Ցա՛ծ և անա՛րգ Շա-
պուհ, մինչև ա՛յդ աստիճան վատուքյուն: Ցես չընկա քո ձեռքը պատե-
րազմի դաշտում, դու իմ քաղաքները պաշարելով դերի չվարեցիր ինձ:
Դու ինձ հրավիրեցիր քո մոտ երբև հյուր, և քո ասպնջականուքյունը
խաբկուքյամբ պատկեցիր: Դավաճա՛ն... Մի՞թե դրա՞ մեջն և թագավորի
և արքայից արքայի մեծուքյունը՝— ննջեցավոր բարեկամուքյամբ պատրել
յուր դրացուն և դաշնակցին, և նրան վորոգայթի մեջ ձգել... Ի՞նչեր
չեյիր առաջարկում դու ինձ, ի՞նչեր չեյիր խոստանում դու ինձ: Առա-
ջարկում եյիր քո դուստրը կնուքյան տալ ինձ, խոստանում եյիր իմ պե-
տուքյան սահմաններից մինչև քո մայրաքաղաքը Տիզբոն, յուրաքանչյուր
իջևանում մի-մի պալատ կառուցանել ինձ համար, վորպեսզի յես, քո
մոտ դալու ժամանակ, ճանապարհին իմ սեփական պալատներում մեջ իջե-
վանեյի:— Ահա՛ քո խոստումները, այդ քարեղեն նկուղը նվիրեցիր ինձ այն

պաշտոնների փոխարեն... Թո՛ղ հավիտենական անեծքով ծածկվին իմ նախաթաղները... Թո՛ղ ամոթը և մշտական ապաշավանքը լինի նրանց բաժինը... Որ ինձ այդ դրության մեջ դրեցին... Եվթե նրանց անմխիթարությունը չլիներ, կամ կյորեք չեյի ընկնի քո ծուղակի մեջ, Նենգավո՛ր Շապուհ...

Նա խոսում էր, նա թափում էր դայրացած սրտի դառնությունը, բայց Մամիկոնյան տերը չէր լսում: Նա ընկղմանեցավ նոր ուրած հարդի վրա, և չարունակեց նայել դեպի անչափ աթաձոր: Տխուր հիշողությունները զարթեցրին նրա մեջ վաղեմի դեպքը: Ներք մի անդամ ինքը մտավ Շապուհի ապատաճանը՝ արքայական նժույգները տեսնելու, այն ժամանակ ախոռապետը, պարսկական լրբությամբ, վեր առեց մի խութ խոտ և, առաջարկելով նրան, ասաց. «Հայոց այծերի արքա, տեսի՛ր այս խոտի վրա»: Լրբությունը խիստ պատժվեցավ: Այդ հղորը, որ այժմ յուր քարե պատվանդանի վրա կանգնած, խորին առնասարությամբ լսում էր բանդատեսի դառն պարսավները, քաշեց սուրը և ախոռապետի գլուխը յերկու մասն բաժանեց: Այժմ դարձյալ նա ձեռքը նույն սրի վրա յեր դրել, բայց ձեռքը չէր չարժվում...

— Մա՛ղր... խիստ կծո՛ւ կատակ... բացականչեց բանդարիկյալը խորին վրդովմունքով և վեր կացավ նստած տեղից:— Իմ աչքի առջև դրել են Հայաստանի դորությունը... նրա դինվորական և պատերազմական ներկայացուցչին... իմ աչքի առջև դրել են այն հերոսին, որ մշտական ապրատիվ մեջ էր պահում ամբողջ Պարսկաստանը... Դրել են, որ նա, իբրև հարաժամ հանդիմանություն, ամեն բոլոր, ամենն վայրկյան հիշեցնե ինձ, թե ի՛նչ եմ կորցրել յես... Բայց մի՞թե այդ քայը իմ պես պարկեշտան ատոր ներկավորության զոհը չդարձա՞վ... մի՞թե նա ընկավ պատկառանքի՞ դաշտում...

Նա ձեռքերը տարածեց, մի քանի քայլ վոխեց, աչխատում էր դրբնել անչափ արձանը: Բայց չդիմաները արգելեցին:

— Սիրելի՛ Վասակ,— դոչեց նա դորավոր ձայնով,— ամենքը դավաճանեցի՛ն ինձ, ամենքը թողեցի՛ն ինձ, բայց դու չդաժանվեցար քո Թագավորից... Դու մասնակից եյիր նրա վատքին, մասնակից յեղար և նրա դժբախտությանը... Պարտքը, պատիվը, հայրենիքի սերը մղեցին քեզ դեպի անձնազոհություն... Եվ, իբրև ճշմարիտ հերոս, դու հերոսի պես պատեցեիր քո վախճանը...

Անչափ արձանը, վորին դիմում էր նա այդ խոսքերով, հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանն էր,— Սամվելի հոր յեղբայրը, և Մուշեղի հայրը: Իսկ նրա հետ խոսողը՝ Հայաստանի արքան—Արշակ Թագավորը: Ներք Շապուհը յերկուսին էլ խաբեությամբ հրավիրեց յուր մոտ, Թագավորին աքսորեց այդ քարեղեն բերդում, իսկ սպարապետին, սպանել տալով, հրամայեց՝ կաշին ուխտահան անել, լցնել խոտով և մշտապես դնել յուր Թագավորի աչքի առջև: Այժմ սպարապետի պատուհասատանքն էր

տղի, որ կանգնած էր քարե պատվանդանի վրա։ Վաչինչ ցավ, վաչինչ դառնություն այնքան չէր խոցոտում դահաղուրկ թագավորի սիրտը, որքան այդ լուռ, անմռունչ ուրվականը, որ յուր լռությամբ ավելի աղու լեզվով հիշեցնում էր նրան յուր կորցրած փառքը։ Իրրև սպարապետ, ներկայացնում էր նա Հայաստանի զինվորական դրությունը ընկճված, սոսկաբար կրծանոված պարսկական ննջասրության ներքո։ Իսկ իրրև մի քաջ դրատվար, յուր վայելուն հաղթություններով, որ մի քանի տասնյակ տարիների ընթացքում չարունակ կատարել էր պարսից դեմ,— հիշեցնում էր, նա յուր թագավորի մեծությունը, որին ինքն էլ պատակից էր և բաժանորդ։ Իրարը կորա՛վ, բոլորը խորտակվեցա՛վ... Դառն արհավիրք, մշտական տանջանք և սխոսր հիշողություններ միայն մնացին՝ իրրև անբաժան ննջակից դժբախտ թագավորին, որ չդիմացավ Արտավազդի նման կաչկանդված էր այդ մոայլ, քարեղեն նկուղի մեջ, որ գերեզմանի պես ամեն բոլոր ճնշում էր, խեղդում էր նրան։

Նա չդիմացավ աղքատիկ ճաշին, որ բերել էին նրա համար, միայն վեր առաց խեցեղեն ամանը, խմեց ջուրը, որքր ինչ զովացնելու սրտի տասը։ Հետո անցավ, ընկողմանեցավ յուր հարդյա անկողնի վրա։

Նա զարձյալ չարունակից նայել անչարժ արձանի վրա։ Թավամած դեմքը արտահայտում էր և՛ զայրույթ, և՛ ապաշավանք։ Զայրո՛ւյթ, որ այնպես սմարդի կերպով վարվեցավ յուր հետ արյաց արքան։ Ապաշավա՛նք, որ ինքը հարթեց յուր կործանման ճանապարհը։ Միզը հանդիստ չէր։ Ամեն անգամ, որ վերջին միտքը ծագում էր նրա մեջ, նա սմրագույն մարմնով դողում էր, վորպես մի հանցավոր, որ ինքն էլ զեղ վոչ բոլորովին համոզված էր յուր հանցանքի մեջ։

Նա զեղ նայում էր արձանի վրա։ Նա զեղ մաքառում էր յուր սրտի և դրացմունքների հետ։

— Վա՛յ... հաղո՞ր անգամ վա՛յ... յես մեղավոր չեմ... բացականչեց նա, և կատաղության կրակը վառվեցավ մոայլ աչքերի մեջ։— Իմ նախաբարների անդադար խռովություններր, վերջապես, ճանճրացրին ինձ... Յես, իրա՛վ է, պատերազմ հայտնեցի նրանց դեմ, ցանկանում էլի պատժել ըմբոստ անհնազանդությունը, ցանկանում էլի վոչնչացնել նրանց, վորպեսզի, ի մի ձուլված հայոց բաժան-բաժան յեղած ուժերը, և նրանցից առնեմ մի հզոր, միահնձան պետություն։ Յես ավելի բարձր էլի դասում Հայաստանի ամբողջությունը, քան հարյուրավոր առանձնացած իշխանություններ, վորոնք, իմ նախորդների անհոգությունից, այն աստիճան բռնացել էլին, վոր ամեն անգամ ամբարտավանությամբ յեղջյուր էլին թոթափում իրանց արքայի դեմ... Յես կամեցա չափի և սահմանի մեջ դնել նրանց կամայականությունները... Իսկ նրանք միաբանվեցան և ապստամբվեցան իմ դեմ... Այդ բավական չեր, նրանք ներքին, ընտանեկան կռիվի մեջ հրավիրեցին ոտարի միջամտությունը... Պարսկին, մեր դարավոր թշնամուն, դրդեցին իմ դեմ... Յես միայնակ մնա-

ցել, և սոխալվեցա թշնամու դուռը գնալ և նրա հետ հաշտության դաշն կապել... Իսկ թշնամին ինձ ուղարկեց այստեղ...

Նա դարձյալ վեր կացավ և, դլուխը խոնարհեցրած, մի քանի անգամ անցավ նկուղի մեջ: Ներքին վրդովմունքը ալեկոծում էր նրան: Կրկին դիմեց դեպի անշարժ արձանը այդ խոսքերով.

— Դու վկա յես, Մամիկոնյան տեր, թե վո՛րքան անկեղծ էյին իմ ցանկությունները, թե վո՛րքան լարված էյի դասում յես հայրենիքի բարօրությունը... Իմ հարաբերությունները իմ նախարարների հետ այն աստիճան լարվեցան, որ յերկուսից մեկը պետք է զոհվեր, կա՛մ թագավորությունը նախարարության, կա՛մ նախարարությունը թագավորության: Ցավ բարկոք համարեցի վերջինը: Ինձ համար սուրբ էր հայոց դահի հաստատությունը, որ ժառանգել էյի իմ նախնիներից: Բայց յեթե իմ ձեռքով չկործանվեցավ նախարարությունը, անշուշտ կկործանվի նա պարսկի ձեռքով, որի թեկնածությունը մի հզոր պաշտպանություն համարեց յուր թագավորի դեմ պատերազմելու... Այդ քարևղեն նկուղի անթափանցիկ թանձրության մեջով տեսնում եմ յես, Մամիկոնյան տեր, թե ի՛նչ է անում Շապուհը Հայոց աշխարհում... Նա կոտրեց գլուխը, այժմ պետք է սկսե հոշոտել անդամները... Գլուխը աքսորեց այստեղ... իսկ Սադաստանի մեջին բանտերը կլցնեն հայոց նախարարներով... Ցավ անտեր Հայաստանը կմնա պարսկական բարբարոսության մի արձակ ասպարեզ... Նրանց կանայքը և աղջիկները կբաղմացնեն պարսից արքունիքի հարճերի և աղախինների թիվը... Նրանց դեռահաս որդիները կսկսեն ավել ածել պարսից արքունիքի մարմարյա սալահատակի վրա... Բայց իմ կի՛նը... իմ որդի՛ն...

Վերջին խոսքերը արտասանելու մեջոցին՝ նրա ամուր ձայնը դողդողաց, դողդողացին և ծնկները, և նա հազիվ-հազ կարողացավ յուր հսկայատիպ իրանը բաց թողնել հարդի կույտի վրա: Ձերկու ձեռքով բռնեց աչքերը, և արտասուքը ջերմ հոսանքով թանում էր դժբախտ թագավորի չղթայակապ ձեռքերը...

Քանի՛ քանի՛ այդպիսիները այդ վիմափոր բերդի մեջին խորշերում՝ նույն տառապանքների մեջ մաշվում, տրորվում եյին: Վո՛րքան թագավորներ, վո՛րքան թագավորազներ կլանել էր այդ բերդը և, անհագ վիշապի նման, յերբեք չէր կշտացել: Վո՛րքան ևս հեծում, հառաչում եյին նրա անդունդ, քարեղեն սրտում: Միանգամ այնտեղ ընկնողը կորչում, անհետանում էր հավիտենական մոռացության մեջ: Ի դուր չվաստակեց նա Անհուշ անունը, որ անհիշելի խավարի մեջ, որպես մթին ղերեզմանում, թաղում էր յուր դառապարտյալների սոսկալի հիշատակը...

Միևնույն քարեղեն նկուղի մեջ, միևնույն չղթաներով, որ այժմ կապված էր վրդին, մի ժամանակ կապված էր հայրը— հայոց Տիրան թագավորը: Վրդին դոնե արևի մի նշույլը տեսնում էր յուր բանդի նեղ պատուհաններից: Բայց հայրը այդ ևս չէր տեսնում: Պարսից արքան դըր-

վիճ եր նրան թե՛ աչքերից և թե՛ լույսից։ Կուրացյալ թագավորը յուր խավար չրջապատի մեջ տանում եր խավարի իշխանության դառն տանջանքները...

Վորպես մի այլանդակ հրեշ, լի ամենայն ղաչհուբանքով, կանգնած եր Անուշ բերդը յուր բարձր, քարեղեն առարտի վրա։ Նա տարածում եր յուր շուրջը մահ և սարսափ։ Թունավոր եր նրա շունչը, սպանիչ եր սպառնական հայացքը։ Վոչ վոք համարձակություն չուներ մտանել նրան, վոչ վոք չեր հանդգնում նայել անդամ նրա վրա։ Մարդիկ մի քանի մղոն հեռվից կյին անցնում, և ուղևորը չեղվում եր յուր ճանապարհից։ Ամեն հաղորդակցություն խզված եր։ Ցեղ նա, վորպես մի կղզիացած պատիժ ու պատուհաս, տպրում եր յուր մոայլ, դժոխային առանձնության մեջ։

Բայց ահա՛ մի անսովոր յերևույթ դրավեց պահակների ուշադրությունը։ Մի խումբ ձիավորներ ուղիղ մոտենում կյին բերդին։ Աչքերը վառվեցան, աղեղները լարվեցան և սրերը դղացվեցան լրանց պատյաններում։ Մի վքեր կյին այդ առաջակները։ Բայց առաջախումբը լուռ մոտենում եր, և վորքան մոտենում եր, այնքան ավելի փութացնում եր յուր համաքայլ ընթացքը։ Շեփորված բանդապետն անդամ բարձրացավ յուր դիտանոցի վրա, սկսեց նայել։ «Դուցե մի նոր հյուր են բերում»... մտածեց նա և այլայլված դեմքը վայրկ դիմական ուրախությամբ։

Ցերեկը յեր, արևը բավական խոնարհվել եր և մտնելու մոտ եր։ Ձիավորները, վորպես յերևում եր, չտապում կյին, վոր դեռ արևը չմըտած, հասնեն բերդը, վորովհետև դիշերը անհնար եր այնտեղ մուտք գործել։ Բոլոր դռները փակվում կյին և վոչ վոքի համար չկյին բացվում։

Բանդապետը դեռ չարուճախում եր նայել։ Ցերը ձիավորները բավական մոտեցան, նկատեց նա, վոր նրանցից մեկի, վորն բոլորից առաջ եր ընկած, դլխի փակիղի մեջ ցցված եր մի ինչ-վոր բան, վոր արևի ճառագայթների առջև վայրկում եր։ Նա լարեց յուր ուշադրությունը։ Տեսածը պատրված փղի ձև ուներ և մաղաղաքի փաթոքի յեր նմանում։ «Հըրեաներա՛կ»... բացականչեց նա մի առանձին ակնածությամբ, և չտապով ցած իջավ դիտանոցից։

Անցնելով բերդի բակը, հրաման ավեց յուր պաշտոնյաներին՝ ընդառաջ դնալ և հանդիսավոր կերպով ընդունել յեկվորներին։ Մի քանի րոպեի մեջ ամենքը պատրաստվեցան և դուրս յեկան բերդից։ Ցերը բավական մոտեցան, ամբողջ խումբը ծունր դրեց գետնի վրա և դլուխը լռությամբ խոնարհեցրեց արքայական հրովարտակի առջև։

Հրովարտակը յուր վոսկյա նկարներով դեռ պայլում եր յուր բարձրության վրա, բերդի ճակատին կապած։ Նա ձեռքով նշան ավեց. յերկրպագուները վեր բարձրացան և սկսեցին առաջնորդել նրան դեպի բերդը։

Ցերը հասան ղևխավոր դռանը, յեկվորները ցած իջան ձիերից։ Այդ ժամանակ միայն նա առնց հրովարտակը և, յերկու ձեռքով բռնած, մտավ յդ բանդապետին։ Վերջինը կրկին ծունր իջավ և, յերկու ձեռքերը մեկնելով, խոբին յերկյուղածությամբ ընդունեց մաղաղաթը։ Նախ համբուրեց, հետո ղլխի վրա դրեց, և ապա բաց անելով, վեր կացավ, սկսեց բարձր առողանությամբ կարդալ։

Ցերը ընթերցումը վերջացած եր, հրովարտակը կրկին հանձնեց բանդապետին, ասելով.

— Իմ տեսչությանը հանձնված բերդի դռները բաց են քո առջև, ներքինապետ տեր։

Ամենքը նստա մտան։

Մինչև այցելուներին պատշաճավոր իջևաններ տվեցին, մինչև նրանց ձիանները տեղավորեցին, արևը մտավ, մութը պատեց, ճրագները վառվեցան։

Այդ ժամանակ բանդապետը մտավ յուր հյուրի սենյակը և, ղուխ տալով, ասաց.

— Ցնա հուսով եմ, վոր տեր ներքինապետը այս դիշեր կհանդստանա ճանապարհի հոդնածությունից, և առավոտյան լուսով կտեսնե յուր թագավորին։

— Վո՛չ, բանդապետ տե՛ր, յես այս դիշեր պետք և տեսնեմ իմ թագավորին,— պատասխանեց նա անհանդիստ կերպով,— և, յերեք կարելի յե, հենց այս րոպեիս։

— Ձեր ներքինապետի համար անկարելի վոչինչ չկա, յերբ նա արքայից արքայի որհնյալ հրովարտակովն և ներկայանում,— ասաց բանդապետը անվճռական ձայնով։— Միայն տեր ներքինապետին պետք և հայտնի լինեն այդ բերդի կարգերը... պետք և վոչը լինչ...

— Հասկանում եմ... դու կամենում ես վոչը լինչ վայելուչ ղրության մեջ ցույց տալ ինձ իմ թագավորին, բայց յես կցանկանայի տեսնել նրան նույն ղրության մեջ, վորպես մինչև ապրել և այսոհետ։ Այո՛, այդ բերդի կարգերը ինձ բավական հայտնի յեն... Դու քաշվելու վոչինչ չունես, բանդապետ տեր, յեթե յես նրան ամենադժբախտ վիճակի մեջ կտեսնեմ։

Բանդապետը դարձյալ տատանվում եր անվճռականության մեջ և, վորպես մի հանգստավոր, խղճահարության ղլուխը ցած եր դրել։

— Այնուամենայնիվ,— ասաց նա,— ինձ խիստ ծանր և քո սիրտը ցավեցնել... ներքինապետ տե՛ր։

— Լսի՛ր, բանդապետ,— ասաց այցելուն բավական խրոխտ ձայնով։— Ինչ, կարծեմ, հայտնի յեղավ արքայից արքայի հրովարտակի բովանդակությունը։ Իմ թագավորի վիճակը վայելուչ դրության մեջ դնելը, և նրա վշտերը թեթևացնելը— այդ բոլորը իմ դործը պետք և լինի։ Դու միայն հրամայիր, վոր այս րոպեիս ինձ առաջնորդեն դեպի նրա կացարանը։

— Ձեւ ինքս կատաղորդեմ, ներքինապետ աե՛ր,— ասաց բանդապետը հոժարվելով:

Տանջանքի մատակարարը վերջապես խոնարհվեցավ բարձրագույն հրամանի առջև: Այն որ, վերևում մեղ Հայտնի և, նա ավելի հանդիսությամբ եր վարվել դատապարտյալ Թագավորի հետ, ցանկանում եր՝ յուր մեղքը տ՛րեւե կերպով քավել, հնարելով, որ այդ խոհ մեղքի մեջն եր նրա պաշտոնի առաքինությունը:

Մութ եր դրսում: Բոլոր դռները փակված էին: Պահապանները, սովորականի չափ վաղիների նման, ամենուրեք հսկում էին: Ներկրնքի Թռչունն անդամ դիշերային այդ պահուն չեր համարձակվի բերդի մոտով անցնել: Վոչ մոր չեր շարժվում, վոչ մոր չեր յերևում: Տիրում եր խորին, մահահրալիր լռություն:

Մի ծառա, լապտերը ձեռին, դնում եր առջևից և լուսավորում եր ոտատաժի քարափուի ամրոցքները, որ սանում էին դնալ վեր, դնալ բերդի բարձրությունը: Լուսո-ցիրկիով անդամ այդ վտանգավոր սանդուղքներով դնացողը կարող եր ամեն րոպե մոլորվիլ: Մի փոքրիկ սխալ, մի թեթև սայթաքումն կտաներ նրան դնալ ցած, դնալ անդունդը... Ծառայի յետևից դնում եր բանդապետը, իսկ նրա յետևից՝ նորնիկ ներքինապետը: Տխո՜ւր եր նա, վորպես մի ուրվական, վորին սանում էին ցույց տալու յուր սիրելու անհայտ դերեզմանը: Ի՞նչպես պետք և սիրներ նրան, ի՞նչպես պետք և հանդիսներ նրան: Արդյոք նա կունենա՞ այնքան ուժ, այնքան սրտի զորություն, վոր կարողանար զսպել յուր հոդու սիրնադողը դղրդումները:

Ներանք կանդ առին մեղ ծանոթ նկուղի դռան հանդեպ:

— Այստեղ և... ներքինապետ աե՛ր,— ասաց բանդապետը, դուռը ցույց տալով:

— Բայց արա՛,— հրամայեց նորնիկը:— Բայց յես կխնդրեյի քեղանից՝ ինձ միայնակ Թողնել իմ Թագավորի մոտ:

Բանդապետի դեմքի վրա դարձյալ յերևացին անվճռականության նշանները: Նորնիկը նկատեց այդ և, հանդստացնելով նրան, ասաց...

— Դու կարող ես ապահով լինել, վոր դրանից քեզ վոչինչ չարիք չի ծագի:

— Թո՛ղ սեր ներքինապետի կամքը կատարված լինի,— պատասխանեց բանդապետը բուն հոժարությամբ:— Բայց Թո՛ղ ներե ինձ սեր ներքինապետը ասել, յերբ նա ցանկություն ունի յուր Թագավորի հետ միայնակ լինել, յես սովորված կլինեմ դուռը փակել նրա յետևից:

— Կարող ես: Բայց յես պետք և վեր առնեմ ինձ հետ այդ լապտերը, անտարակուսա, այնտեղ լույս չկիսի լինի:

Բանդապետը կոկեց յուր դոտիից քարշ ընկած բանալիների ծանր վունջից մեկը, մոտեցավ յերկաթյա դռանը և, բաց անելուց հետո, ասաց:

— Ներս համեցիր, ներքինապետ աե՛ր: Դու կարող ես մնալ քո Թագա-

վորի մոտ, վորքան քո կամքն է: Ձերը կցանկանաս դուրս գալ, բավական է ներսից փոքր ինչ բաղխել. իմ պահապաններն այստեղ պատրաստ են. լինճ իմացում կտան, և չես կդամ, կրկին բաց կանեմ:

Նա ցույց տվեց պահապաններին խումբը, վոր կանգնած էին հատկապես այդ նկուղի պահպանության համար:

Նորեկը առեց լապտերը և սրտի սաստիկ բաբախմունքով ներս մտավ: Նրա յետևից դուռը կողպվեցավ:

Դողդողոլուն քայլերով անցավ նա, լապտերը դրեց մի անկյունում: Դահապարտյալը պառկած էր: կարծես, դժոխքը յուր ամբողջ զարհուրանքով ներկայացավ տառապյալ այցելուի առջև: Խորին տրտմությամբ նայում էր նա չղթայակապ արքայի վրա, վոր տարածված էր հարդյա անկողնի վրա, և ծանր շնչառությամբ հառաչում էր: Տեսավ դեռ չկերած ցամաք դարեհացը, վոր դրած էր նրա մոտ, տեսավ ջրի խեցեղեն ամանը, վորից տորուկներն անգամ կխիրավորվելին, յեթե առաջարկեյին նրանց: Նա աչքերը դարձրեց դեպի քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ ուրվականը: Նրա աչքերը լցվեցան արտասուքով, և հազիվ-հազ կարողացավ իրան պահել վոտքի վրա: Նրա առջև դրած էր Հայաստանը,— ընկճըվա՛ծ և անպատվա՛ծ Հայաստանը...

Նա մի քանի քայլ առաջ գնաց, բայց սոսկալով, կրկին հետ դարձավ: Ի՛նչպես վրդովել նրա հանգստությունը, ի՛նչպես խանգարել նրա քունը, վոր խոստ հազիվ անգամ և վիճակվում բանդարկյալին: Նա չարունակեց նայել նրա վրա: Ձերբեմն արձակում էր խորին հառաչանքներ, իսկ յերբեմն լսելի էյին լինում հեգնական դառն ծիծաղներ: Ձերևում էր, վոր խառն յերազներ ալեկոծում էյին նրան: Նա պառկած էր մի կողքի վրա և ալ թևքը դրած ուներ դվխի տակին: Ձերեսը դարձրած էր դեպի այցելուն: Վո՛րքան փոխվել էր, վո՛րքան այլանդակվել էր նա: Այցելուն սարսափում էր: Ի՛նչպես մոռնալ: Գուցե անրջային կատաղության մեջ՝ վեր կրարձրանար նա և, տեսնելով յուր նկուղի մեջ մի անակնկալ մարդ, կվիչքեր, կխորտակեր նրան յուր վոտքերի ներքո:

Մի՛ջահասակ մարդ էր այցելուն, ցամաքած և նիհար կազմվածքով: Ձերեսը բոլորովին դուրկ էր մազերից, վոչ մորուք ուներ և վոչ ընչացք: Ձեթե այրական հազուստը փոխվեր, մի պատառ հինոջ տպավորություն կդործեր,— մի հինոջ, վոր հարդանք և ազդում և պատկառանք: Թանպանի դռան մեջ խրած ուներ մի դաշույն, վորի դոհարաշարդ կոթը կվառով չափ յերևում էր վերևից: Հագուստը մի բարձր պաշտոնական վայելուչ ձեղուրյուն ուներ: Նրան կոչում էյին Դրաստամատ: Ներքինի յեր նա, շատ հարդված և սիրելի, և մի ժամանակ հայոց արքունիքում, բոլոր նախարարներից վեր էր դրած նրա բարձը: Անվեղ— տան իշխանն էր նա և կառավարիչ թագավորական դանձերի, վոր պահված էյին Տոպիոց գավառի Բնաբերդ բերդում:

«Վասա՛կ,— լսելի եղավ նրա ձայնը,— կազմի՛ր իմ քաջ դունդերը... դրա՛ծ առնք դնելի Արյաց աշխարհը... պատժի՛ր Շապուհի հանդգնությունը...

Նա խոսում էր քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ ուրվականի հետ:

Ներքինապետի աչքերը կրկին լցվեցան արտասուքով:

Նա մի անսովոր ցնցում զգաց, ձեռքը, վոր դրած էր դվխի տակին, դուրս հանեց և, սպառնական կերպով շարժելով, սկսեց մռնչալ.

«Հրդեհված Տիզբոնի բոցերի մեջ կխորովեմ քեզ, խարդա՛խ Շապուհ...

Մյուս ձեռքը, վոր ծանր շղթայով կապված էր առաջինի հետ, ձգեց նրան, և յերկուսն էլ չառաջևլով ընկան նրա կուրծքի վրա... Նա, կարծես թե, արթնացավ, քնեած աչքերը բաց արեց և կրկին խփեց: Այդ միջոցին ներքինապետը վատահացավ մոտենալ և, մի քայլ հեռավորության վրա կանգնելով, կոչեց.

— Տե՛ր արքա...

Նա չարթնացավ:

— Տե՛ր արքա... կրկնեց նա:

Նա գլուխը բարձրացրեց և, պղտոր աչքերը դարձնելով դեպի այցելուն, վոտքաց.

— Անամո՛թ, դոնե դու ինձ հանգստություն տուր:

Կարծում էր, վոր բանդապետն է:

— Տե՛ր արքա, ճանաչի՛ր քո ծառային... խոսեց այցելուն լալագին ձայնով:

— Իմ ծառայի՛ն... կրկնեց նա ծիծաղելով:— Դո՛ւ, անղամ, ամեն որ իմ գահիճն ելիր, իսկ այժմ ծառա՞ դարձար...

Այցելուն այլ ևս չկարողացավ զսպել յուր զգացմունքները, խնարհվեցավ, գրկեց նրա վոտները և, ջերմ արտասուքով թանալով նրա շղթաները, ազաղակեց.

— Տե՛ր արքա, ղատաստացի՛ր, նայի՛ր իմ վրա, յես քո ծառան եմ... քո սորուկը... քո նվաստ Դրաստամատը...

— Դրաստամա՛տ... բացականչեց նա, մի կողմ հրելով այցելուին:— վո՞ր ատելածը կատր ինձ Դրաստամատին, իմ քաջ և հավատարիմ ծառային... Հեռո՛ւ ինձանից խարեյություն, հեռո՛ւ դնացեք յերազական ցնորքներ... Ձեվ կորցրի իմ ամենալավ մարդկիններին, յես զրկվեցա իմ ընակեր պաշտոնյաներից... ատելած պատժի՛ց ինձ... այլևս նրանց տեսնել չեմ կարող...

— Նրանցից մեկը քո ատատումն է, տե՛ր արքա:

Դժբախտ թագավորին այնպես էր թվում, վոր յուր տեսածը և լսածը՝ յուր յերազների շարունակությունն է: Այժմ միայն ուղիղ նայեց այցելուի վրա, և ապշած կերպով հարցրեց.

— Այդ ո՞վ է այստեղ:

— Ֆո ծաուան, Դրաստամատը։

Նա չփոթված կերպով վեր թռավ, առաջ վազեց, աղաղակելով.

— Դրաստամա՛տ... վո՞րտեղից հայտնվեցար... ի՞նչպես թողեցին ինձ մոտ.... Տեր աստված, այդ ի՛նչ բախտ է... մերձեցի՛ր, սիրելի Դրաստամատ, մերձեցի՛ր, դրկեմ քեզ...

Ներքինապետը կրկին ծունր իջավ, սկսեց համբուրել նրա ոտքները։ Նա զորեղ ձեռքով բարձրացրեց նրան, ասելով.

— Այդ համբույրները չեն թեթևացնի իմ չղթաների ծանրությունը, սիրելի Դրաստամատ, պատմի՛ր, վո՞րտեղ եյիր, ի՞նչպես չկիրթ այտուղ, ի՞նչ լուր ունես...

Նա մի քանի քայլ անցավ յուր նեղ նկուղի մեջ, հետո նստեց հարդյա անկողնի վրա։ Ներքինապետը մնաց վոտքի վրա, խորին ատամանման մեջ տարուբերվելով, սրտյոք վո՞րտեղից սկսել և ի՞նչ պատմել։ Նա շատ բան ուներ պատմելու, բայց յուր տեղեկությունները այն աստիճան սրտխուռ և այն աստիճան անմխիթար եյին, վոր չկամեցավ ավելի դառնացնել յուր թագավորի առանց դրանց էլ վշտացած սիրտը։

— Ինչո՞ւ չես լուռ, Դրաստամատ,— ասաց նա, նկատելով ներքինապետի մտատանջությունը։— Դու կարծում ես, Արշակը այնքան թուլացել է սրտով, վոր չի՞ կարող տանել նոր հարվածների։ Ես ատանց քո պատմելու էլ շատ բան գիտեմ... Այդ քարեղեն բանտի միջից յես ամեն րոպե, ամեն վայրկյան տեսնում եմ, Դրաստամատ, թե ի՛նչ և կատարվում այնտեղ, Հայոց աշխարհում... Դու միայն այն ասա՛, թե ի՛նչպես թուլլ տվեցին քեզ մտնել իմ մոտ։ Այդ ինձ շատ զարմացնում է...

Ներքինապետը սկսեց պատմել, թե յուր սիրելի արքայից բաժանվելուց հետո, ինքը մնաց այն հայազունդ այրուձիի թվում, վոր պահված եր Տիզբոնում։ Այդ միջոցներում Շապուհը մի նոր արշավանք գործեց քուշանաց դեմ և հասավ մինչև նրանց հին մայրաքաղաքը։ Նրա զորքերի թվում գտնվում եր թե՛ ինքը և թե՛ հայոց այրուձին։ Տեղային արշակունի թագավորը դուրս յեկավ Շապուհի առաջ, և սկսվեցավ արյունահեղ պատերազմը։ Պարսիկները ջարդվեցան, և Շապուհը վորձեց վարկուստով աղատել յուր կյանքը։ Բայց չհաջողվեցավ, վորովհետև փախչելու միջոցին քուշաններից մի խումբ շրջապատեցին նրան և դերի բռնեցին։ Բայց ինքը, ներքինապետը, յուր հայ ձիավորներով վրա հասավ և աղատեց Շապուհին։ Ետքը վերադարձան Տիզբոն, Շապուհը ատյան կազմեց, հրապարակով հանդիմանեց յուր զորապետներին անգիտանությունը, և ցավելով դուլարանեց հայերի քաջագործությունը։

— Նույն ատյանի մեջ, տե՛ր արքա,— շարունակեց ներքինապետը,— Շապուհը դարձավ ինձ, ասելով. «Դրաստամատ, իմ կյանքով յես քեզ եմ պարտական, դու աղատեցիր ինձ անարդ դերությունից. խնդրի՛ր քեզ վարձատրություն, վաճառք, պատիվ, իշխանություն, հարստություն,— յերդվում եմ իմ նախահարց սուրբ հիշատակով, ինչ վոր խնդրելու լի-

նա, կառանաս ինձանից»: Բայց չես մո՛ւ հարստության պահանջնգի և մո՛ւ իշխանության, այլ սրբա, չես պահանջնգի միայն, որ ինձ իրավունք տան գնալ Աստուչ բերդը և տեսնել իմ սիրելի թաղավորին...

— Ցնով քեզ իրավունք տվեցի՞ն:

— Այո՛, տեր սրբա: Շատուհը չեր կարող չերևակայել, որ չես այդ չնարհը կխնդրեյի: Ցերը իմ ցանկությունը հայտնեցի, նա չերկու ձեռքով գոծեց ծնկներդը, և սարջացավ յուր խոստման մասին, ասելով. «Անհնարին բան խնդրեցիր, Դրաստամատ, վորովհետև արյոց օրենքներին հակառակ է՝ մո՛ւ միայն այցելության գնծելն Աստուչ բերդի գաստապարտյալներին, այլ նրանց մատներին անգամ: Մնդրի՛ր մի այլ բան. իմ գանձարաններդը չի չեն վոսկով և գոհարներով, ապրք և ապինք խոնարհված են իմ իշխանության ներքո, մո՛ւ չերկիրդը ցանկանալու լինես, կատմ քեզ: Ցես կրկնեցի մեհենայն խնդրքդը: Վորովհետև հրապարտկով չերդվել եր, չկարողացավ դանց առնել:

Աքսորյալի մոտյլ դեմքի վրա անցավ մի գառն ժպիտ:

— Մթթե այդպես չերդմնապա՞հ և գարձել նա... ինձ ևս չերդվեցավ... ինձ ևս շատ խոստումներ արեց... բայց վերջը գավաճանեց... Նա վարագույրը մատանիով աղ հինքց և ուղարկեց ինձ, վորը, պարսից թագավորների օրենքով, ամենահավատարիմ չերդման ուխտն է: Ինձ կանչեց յուր մոտ սերտ և հաշտության դաշն կռնելու և կրկին խաղաղության դարձի իմ աշխարհը վերադարձնելու: Բայց վոխանակը—ուղարկեց այսոհետ...

Նրա ձայնը ներքին վրդովմունքից դողդողաց, և րոպեական լռությունից հետո, կրկին գարձավ դեպի ներքինին, ասելով.

— Գոհում եմ քո անձնանվիրությունը, Դրաստամատ, դու միշտ հավատարիմ ես յեղել քո թագավորին: Ցո այժմյան վարմունքը չես կհամարեմ այն բարմաթիվ գոհաբերությունների պատիժը, վորոնցով դու շատ անգամ ապացուցեց ես քո բարձր արժանավորությունները: Ցես վստահ եմ տալիս ամենակալին, և այժմ միայն հավատացած եմ, վոր նա ինձ բոլորովին ձեռնթափ չե անել: Ցես կարող եյի իմ աշխարհից մեկնիլ, և նա ուղարկեց ինձ:

Դրաստամատը, հոգով չափ վհատավորվելով յուր թագավորի խոսքերից, հայտնեց, թե ինքը ներկայացել և այդ բերդը արքայական հրովարտակով, թե իրան իրավունք և շնորհված յուր թագավորի վճռակը արքայավայել դրության մեջ դնելու, ամեն կերպով թեթևացնելով նրա ծանրությունները, և ամեն կերպով մխիթարելով նրան:

— Այդ ինձ շատ մեծ մխիթարություն կլինի, Դրաստամատ,— պատասխանեց նա վշտալի ձայնով:— Այժմ ինձ համար մխենույն է՝ այդ հարդի վրա պառկել, թե ամենափափուկ անկողնի մեջ: Նույնպես ինձ համար զանազանություն չունի՝ ջուրը այդ կոտրած խեցեղեն անոթից խմել, թե վոսկյա բաժակից: Տանջանքը, դաժանակիր կյանքը չե մաշում ինձ:

ինձ մաշում է միայն ա՛յն, որ չես այստեղ եմ, իսկ իմ անտեր մնացած յերկիրը կեղեքվում է իմ թշնամիներից...

Վերջին խոսքերից այն աստիճան զգացվեցավ ներքինասիսը, որ մի րառ անգամ չկրտավ պատասխանելու: Աքսորյալը հարցնեց.

— Ինչո՞ւ չես լուռ, Դրաստամատ, ասա՛, ի՞նչ պիտես մեր աշխարհից, ի՞նչ է մտածում անել Շապուհը, ի՞նչ են մտածում նախարարները: Դու, թեև Տիզբոնից ես գալիս, բայց դարձյալ շատ բան լսած, շատ բան իմացած կլինես:

Նա, իրավ, շատ բան լսել և շատ բան իմացել եր, բայց միթե կարո՞ղ եր բոլորը պատմել նրան: Թուլլ տվեց, որ ինքը հարցեր առաջարկե:

— Ո՞վ է իմ զորքերի հրամանատարը:

— Մուշեղ Մամիկոնյանը, տե՛ր արքա:

Ուրախության նման մի բան փայլեց նրա տխուր դեմքի վրա և, դառնալով դեպի քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ արձանը, ասաց.

— Լսի՛ր, Մամիկոնյան տեր, վորդիդ իմ զորքերի ընդհանուր սպարապետն է այժմ: Ճես վստահ եմ, որ քաջ հոր քաջ վորդին կարդարացնի յուր առհմի հայրենասիրությունը: Ճես հիշում եմ նրան, յերբ դեռ պատանի յեր, յերբ դեռ նոր եր սկսել ձիավարել. տեսել եմ նրան մի քանի մրցությունների մեջ, տեսել եմ և կռիվներում, յերբ արդեն յերիտասարդ եր: Սմենափոքր հաստակից քաջազնական աստղը փայլում եր նրա ճակատի վրա: Հպարտ եր յուր հոր նման և մեծամիտ: Ճերը մի անգամ նրան ասեցի՝ «քեզ արքունի հավերի վրա վերակացու պիտի կարգեմ»,— նա վիրավորվեցավ և աչքերը լցվեցան արտասուքով: Այդ ժամանակ տասն և յերկու տարեկան հազիվ կլիներ:

Վորդու դուխասանքները, կարծեմ, լսում եր հայրը, և այնպես եր թվում, վոր նրա մռայլ, սպառնալի դեմքը արտասանում եր այդ խոսքերը. «Հոր արյան վրեժխնդրությունը կվոգևորե նրան, և նա յուր ծնողաց հարազատը չի լինի, յեթե հարյուրավոր պարսիկ ազանների մորթիքը խոտով չի լցնի և չի ուղարկի իբրև նվեր ատորոգի Շապուհին»...

Բանտարկյալը շարունակեց հարցուփորձը.

— Վո՞րտեղ է հայոց տիկինը (թագուհին):

— Ամրացած է Արտագերես բերդում, տեր արքա, և յուր հրամանի ներքո ունի տասն և յերկու հազար ամենաընտիր զորքեր:

— Իսկ իմ վորդիքն:

— Դեռ զտնվում է Բյուզանդիայում, կայսեր մոտ, տե՛ր արքա:

— Ինչո՞ւ չեն կանչում, ինչո՞ւ չեն թագել այնտեղ:

— Դեռ մտածում են յերկիրը խաղաղացնել պարսիկների հարձակումներից, վոր նա հետո գա, և ամենայն ապահովությամբ ժառանգե հոր գահը, տե՛ր արքա:

Բանդարիկյալը դառնացած կերպով շարժեց գլուխը, և նրա չղջանների շատ էլուները արձագանգ տվեց սրտի բարկությանը:

— Դու խնայում ես ինձ, Դրաստամատ,— կոչեց նա խրոխտ ձայնով,— դու խիստ մեղմությամբ ես հաղորդում իմ աչխարհի պատմները: Ասա՛ր ճշմարիտը, չես թող կլսեմ ամենայն ստանասրտությամբ, վորքան և տխուր լինելին քո պատմությունները:— Իմ վորդուն պահում են Բյուզանդիայում, պահում են կայսեր մոտ, վորովհետև վախենում են հարյուրի աչխարհը բերել, վորպեսզի, Շապուհի ձեռքը չընկնի, և նրան ևս հոր մոտ՝ այդ բերդում չաքսորե... Այդ չի՞ խոհությունը:— կարծեմ, այդ է:

— Այո՛, տեր արքա:

— Վո՞րտեղ է Ներսեսը:

— Նույնպես Բյուզանդիայում, տեր արքա:

Զնայելով բանդարիկյալի թախանձանքին, նա դարձյալ ծածկեց, վոր հայոց մեծ քահանայապետը աքսորված է Գաւառս կղզում:

— Ցերեկ, այն նպատակով և սպասում Բյուզանդիայում, վոր վորդուս հետ միասին վերադառնան:

— Այո՛, տեր արքա:

Նա գլուխը խոնարհեցրեց, և խառնված գլխակիների թավ հասանքը աքցեց աերբամած դեմքը: Րոպեական մտահոգությունից հետո, կրկին դարձավ դեպի ներքինին, ասելով.

— Այդ ինձ և՛ մխիթարում է, և՛ խոցոտում է, Դրաստամատ: Ցնա յերբեք Ներսեսի հետ լավ հարաբերությունների մեջ չեմ յեղել: Այժմ նա հավանաբորում է իմ վորդուն: Դա մի տեսակ վրեժխնդրություն է, և քրիստոնեական վրեժխնդրություն,—չարությամբ վոխարեն բարություն մատուցանել...

— Այդ նրա պարտքն է, տեր արքա, վորպես քրիստոսի աշակերտի:

— Ասա՛, և վորպես ճշմարիտ հայրենասերի, Դրաստամատ,— ավելացրեց բանդարիկյալը:— Ցնա թեև մի քանի անգամ հանդիպել եմ Ներսեսին, բայց յերբեք չեմ դադարել հարգել նրա մեջ մեծ մարդու ամենաարժեքավոր հատկությունները:

— Ի՞նչ է չինում Մերուժանը,— խոսքը փոխեց նա:

— Անխոնջ՛ Մերուժանը,— պատասխանեց ներքինին խորին ղղվանքով:— Շապուհից դանազան հրահանգներ է ստացել... և նրանց իր կատար ածելու մասին է աշխատում...

— Ի հարկե, վոչ լավ հրահանգներ:

— Այդ շատ հասկանալի յե, տեր արքա: Բայց յես մեծ հույսեր ունեմ, վոր հայոց նախարարների միաբանությունը կխոտանկե նրա չար դիտավորությունները...

— Նախարարների միաբանությո՛ւնը... կրկնեց բանդարիկյալը դառնացած ձայնով:— Մի՞թե կարելի՞ յե հավատալ նրանց անկեղծությանը...

— Վոչ միայն կարևոր չե, այլ պետք է հավատալ, տեր արքա: Նրանք այժմ շատ և շատ սարքացել են իրանց անխոհեմ վարմունքների մասին...

— Այն բոլոր չինաններից հետո, վոր կատարվեցան, Դրատատամատ... իրանց թագավորին կորցնելուց հետո... հայրենի յերկիրը ավերակ դարձնելուց հետո... այժմ, ասում ես, սարքացել են... Դա շա՛տ և շա՛տ ուշ է արդեն...

— Ուշ է, բայց բոլորովին անցած չե, տեր արքա: Իրանց անճնազոհությամբ այժմ կքավեն հին մեղքերը: Ինձ հայտնի յեն բավական տեղեկություններ, թե վո՛րպես նախարարությունը, հոգևորականության հետ ձեռք ձեռքի տված, պատրաստվում և պատերազմել հայրենիքի փրկության համար:

— Պատմի՛ր, ի՛նչ դիտես:

Ներքինին սկսեց մի ըստ միոջե պատմել, նախ, Շապուհի դիտավորությունները՝ քրիստոնեական կրոնը վոչնչացնելու և Հայաստանում պարսից կրակապաշտությունը տարածելու մասին: Հետո պատմեց նրա ձեռք առած մի յեղանակը յուր նպատակը իրագործելու համար, վորոնց մեջ դյուրավոր դերը պատկանում եր Մերուժան Արծրունուն: Պատմեց Շապուհի մեծամեծ խոստումները Մերուժան Արծրունուն, վորոնց կարժանանա նա, յերբ արյաց թագավորի ցանկությունները կիրառվեն: Նկարագրեց հայոց նախարարների ուխտը և նրանց պատրաստությունները՝ սպառնացող չարիքների առաջը առնելու համար և, թե՛ յեկեղեցին, թե՛ Արշակունյաց պահը, պարսից բռնապետությունից աղատելու համար: Ետը հաղորդած տեղեկությունները վերջացրեց նա խիստ մխիթարական հուսադրություններով, թե ինքը համոզված և, վոր Շապուհին չի հաջողվի յուր չար դիտավորությունները կատարել, թեև, դուցե Հայաստանը բավական վնասներ կկրե նրանից, բայց յերբեք չի նվաճվի:

Թագավորը, դլուխը խոնարհած, խորին վրդովմունքով լսում եր: Նրա թալամաղ, վոչքր ինչ թևաղուշն դևերը, ավելի մոտյ արտահայտություն եր ստացել: Այդ բոլորը, կարծես, սպասում եր նա, այդ բոլորը նախազուշակել եր նա այն որից, յերբ դժբախտ հանդամանքները նրան ձղեցին Շապուհի ձեռքը: Նա դարձավ դեպի ներքինին, հարցնելով.

— Ի՞նչպես հասան քեզ այդ տեղեկությունները, Դրատատամատ:

— Տիզբոնում յեղած ժամանակս, տեր արքա, միշտ հետամուտ եյի դիտենալու, թե ի՛նչ են մեքենայում պարսից արքունիքում: Այդ մասին յես ունեյի մի հավատարիմ անձն, վոր շատ մոտ եր գործերին, և ամեն ինչ հաղորդում եր ինձ: Հավաքած տեղեկություններս դաղտնի սուրհանդակների միջոցով՝ անմիջապես հաղորդում եյի հայոց նախարարներին, նրանց դրուշացնելու համար, և նրանցից պատասխանները եյի ստանում: Ցես ինչ վոր կարող եյի անել, արել եմ, տեր արքա, այժմ մնում է ինձ՝ դյուրացնել քո թագավորի դրությունը, և, յեթե կհաջողվի ինձ, վորի մասին մեծ հույս ունեմ, աղատել նրան յուր դառն կապանքներից...

Վերջին խոսքերը արտասանեց նա հազիվ լսելի ձայնով։
Թագավորի դեմքին վրա յերևաց մի տխուր ժպիտ։
— Դուշման եմ քո յեռանդը, Դրաստամատ,— ասաց նա,— բայց չեմ կարող համաձայնություն տալ քո անշահ վոգևորությանը։ Դու, քան թե ոյուրիշ, իմ ազատության հոգսերով պարապվելու, վորը ժամանակի և հանգամանքների գործ է, ավելի օգտակար կլինեիր այնտեղ, Տիգրանում, վորպեսզի, պարսից արքունիքին մոտ լինելով, չարունակեիր քո սկսած գործը։ Հայոց նախարարներին մի հավատարիմ ականջ և հարկավոր ունենալ Տիգրանում, և ամենահարմարը դու յես, վոր վայելում ես Շապուհի առանձին հոգը։
— Այնուամենայնիվ, իմ ուր թագավորի վիճակը... նրա աննախանձելի դրությունը... կրկնեց ներքինին դողդողուն ձայնով։
— Իմ վիճակը այժմ մատամբ դյուրացած եմ համարում, Դրաստամատ, վորովհետև քո հաղորդած տեղեկությունները բավական հանգստացրին ինձ։ Կրկնում եմ, Տիգրանում մի հավատարիմ մարդ և հարկավոր, և այդ մարդը դու պետք է լինես։ Վոկ ինձանով դրազվելը,— դա մյուս ժամանակ կթողնենք քեզանից։ Ցետ ավելին կասեմ. իմ այստեղից ազատվելը, Հայաստան դնալը և կրկին իմ կառավարության ղլուխը անցնելը, դործերը այժմյան խառն և անորոշ դրության ժամանակ,— յես մինչև անգամ մեատակար եմ համարում։ Ինչո՞ւ։ Վորովհետև յես չպիտի կարողանամ հաշտվել իմ նախարարների հետ,— իսկ այդ հայրենիքի փրկության համար անհրաժեշտ է։ Մեր մեջ այլևս վստահության կամ չկարող։ Իմ ներկայությունը կդրդրդեր մի նոր, ներքին պատերազմ, յերբ արտաքին թշնամու հետ կռվելու շատ պետքեր կան։ Ցետ կմնամ այստեղ. յես կդոհեմ լինել հայրենիքի խաղաղության։ Թո՛ղ իմ նախարարները հաշտվեն իմ վորդու հետ։ Նա նոր է նրանց համար և նրա հետ հին հաշիվներ չունեն։ Իսկ յես այստեղ կդործեմ նրանց հաջողության համար, և կպատահի առաւելագույն անօրինություն...
Ներքինին չկարողացավ դսպել յուր դառն դղացմունքները, խոնարհվեցավ և, դրկելով պատասպարտյալի շղթայակապ վոտները, բացականչեց.
— Տե՛ր արքա, մեծ և առաւելագույն աշխարհը և անբավ և նրա դիությունը, յեթե դու Հայոց յերկիրը դնալ չես ցանկանում, առավել չատ ապահով տեղեր ունես քո բնակության համար...
Դրաստամատը վեր կացավ և նրան ևս յուր հետ բարձրացրեց, ասելով.
— Ներքին չեմ ցանկանա վիճաբանական անուն ժառանգել, Դրաստամատ։ Ո՞ւր դնամ։ Հռոմայեցո՞ց մոտ։ Պարսկի բանդը ինձ համար ավելի տանելի յե, քան թե նրանց կեղծավորության պատանները։ Իմ այստեղ մնալը՝ թեև կուրախացնի իմ նախարարներին, բայց իմ ժողովրդի սիրտը կլցնի արդար վրնժխնդրության։ Իմ ժողովուրդը սիրում է ինձ։ Նա կմտածե, վոր աքսորյալ թագավոր ունի, և կթափե յուր բարկու-

թյունը անիրավ աքսորդի վրա:— Իսկ այժմյան հանդամանքներում, այդ կնպաստեր իմ յերկրի ազատությանը: Թո՛ղ Հայոց յերկիրը ազատ լինի, այնուհետև իմ տանջանքները կթեթևանան այդ մթին բանտում:

— Իսկ քո ազատությունը կմխիթարե՞ քո ժողովրդի սգավոր սիրտը...

— Լա՛վ, Դրաստամատ, չափազանց սերը քեզ յերևակայության մեջ և դրել: Մթե՞ այնքան մխամի՞տ ես կարծում պարսիկներին: Ցնե՞ն սատանային պետք լիներ մի նոր բան սովորել, անշուշտ նրանց կդիմեր: Դու պետք ե դիտեիս, այն հրովարտակը, վոր շնորհել են քեզ, և վորով անսահման իրավունք են տվել քեզ, քո թագավորի կեցությունը բարվոքելու, և նրա համար յուր բանտի մեջ արքայավայել սպրուստ տնորինելու, — մի նույնպիսի հրաման կա՛մ ստացել ե, կա՛մ անտարակույս, չուտով կստանա այդ բերդի տեսուչը: Հսկողությունը իմ վրա ավելի կսաստկացնեն, և դժուշությունը ավելի կզորացնեն: Դու կկարողանաս կատարել միայն ա՛յն, վոր քեզ իրավունք ե տված, ինձ լավ կերակրել, լավ հագցնել և ավելի մաքուր արդելանի մեջ պահել: Այդքանը միայն: Ուրեմն ի՞նչպես կարող պիտի լիներս ազատել ինձ: Կաշառել բանդապետին, կաշառել պահապաններին, անկարելի յե: Դու պետք ե մնաս այստեղ և ըսպասես հրաշքների: Իսկ քո այստեղ մնալը, մի քանի րոպե առաջ հայտնեցի, վոր ապարդյուն ե: Դու ավելի հարկավոր ես Տիզբոնում...

Ներքինին խորին տրտմությամբ լսում եր: Դաստապարտյալը շարունակեց.

— Ինձ համար մինչև անգամ խիստ ծանր ե, Դրաստամատ, ընդունել այն բարվոքումները, վոր պիտի լինեն իմ կեցության մեջ: Ինձ համար ավելի տանելի կլիներ մնալ այդ դրության մեջ, բայց ամենավոքր շնորհ չընդունել տմարդի Շապուհից: Ընդունելով նրա շնորհը, յես թեթևացնում եմ նրա հանցանքի չափը: Բայց, վորպեսզի հայտնի լինի, վոր դու մի այլ նպատակ չես ունեցել այդ բերդը գալով, յես ստիպված եմ ընդունել:

Այսպես խոսում եր վշտացած թագավորը, այսպես թափում եր սրտի դառն կսկիծները, մինչև նկուղի լուսամուտներից յերևացին վաղորդյան արեգակի առաջին շողքերը: Նա նայեց դեպի ծագող լույսը, և դառնալով դեպի ներքինին, ասաց.

— Տխո՛ւր են աղետները, շա՛տ տխուր, Դրաստամատ... թագավորը այստեղ—արևելքում... քահանայապետը այնտեղ— արևմուտքում... իսկ յերկիրը—մնացած անտեր... Բայց կա մի ելակ, վոր բոլորի տերն ե. յես նրա վրա յեմ դրել իմ հույսը...

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ

Ph
4

ՈՉՏՈՒՆԻՔ

Մի շաբաթ առաջ յերկու յեղբոր վորդինները դուրս յեկան Վողական ամրոցից: Մեկը՝ Սամվել Մամիկոնյանը: Մյուսը՝ Մուշեղ Մամիկոնյանը:

Յերկուսի ճանապարհները բաժանվեցան:

Առաջինը գնում եր Վանա ծովակի հարավ-արևելյան յեղերքով: Իսկ յերկրորդը գնում եր նույն ծովակի արևմտյան յեղերքով: Նրանք գնում եյին վտանգների և սարսափի միջով: Յերկիրը ընդհանուր հուզման մեջ եր, մի հուզմունք, վոր նման եր կատաղության: Սոսկալի յին, յերբ կատաղում և ժողովուրդը, նրա կատաղությունը նմանում և արջի կատաղության, վոր, բնանը վրդոված, աչքերը մթնատատած, նախ յուր ճաղերին և յուր վոտքերի տակ փշրում...

Մի չշուկ չար վոգու նման անցել եր Հայոց աշխարհով: Նրա խուլ, անորոշ ձայնը ամեն վոք յուր կնքոցին եր հասկանում, ամեն վոք յուր կնքոցին եր բացատրում: Բայց վորքան անհասկանալի յեր նա, այնքան ավելի վրդովեցուցիչ եր: Ցեղրայրը ձեռք եր բարձրացրել յեղբոր վրա. մինը մյուսին չեր հասկանում: Յերկիրը ալեկոծվում եր անիշխանության մեջ,— մինն, մրրկածուխ անիշխանության մեջ:

Ժողովրդի բերանում առեղծվել եր մի նոր բառ—«ուրացող»: Ո՞վ եր ուրացողը, ո՞վ չեր ուրացողը,— վոչ վոք չգիտեր: Բայց կասկածավորին քարկոծում եյին: Մառան խելք աչքով եր նայում յուր տերոջ վրա, իսկ տերը վստահություն չուներ ծառայի վրա:

Տեղ-տեղ խլրտվում եր սարսերկրյա հնձանոսությունը, վոր քրխստանելուներից հալածված, դեռևի տակ եր տալրում: Հին առասածները նոր կրոնի դեմ զոռ եյին կամենում ելնել:

Հաղորդակցությունները համարյա դադարած եյին. անցուդարձը անկարելի յեր դարձել: Անգին գյուղացիք, իրանց խրճիթները թողած, հավաքվել եյին լեռների բարձրությունների վրա, և հանապարհից անցնողների վրա քարեր եյին կլորում: Քարերը կլորվում եյին վորպես փուլ յա-

կած լեռան մի մասը, և իրանց կույտերի ներքո ծածկում էին ամբողջ կարավանները։ Բայց ո՞ւմ վրա էին կլորում,— իրանք էլ չէին գիտեին։ Սմեն վոք նրանց համար «ուրացող» եր...

Տեղ-տեղ թափառում էին զինված խումբեր։

Տղամարդիկ վազում էին կռվելու, իսկ կանայք, հասա բերդերը ձեռք-ներին բռնած, կանգնել էին պատարիկ խրճիթներէ դռանը, և վոչ վոքի թույլ չէին տալիս, վոր մոտենա այն խրճիթներին, ուր սմեն մի ռատրական կարող եր հանդիստ ասպնջականութիւն գտնել։

Այդ լեռն, աղմկալի մէջոցում, Սամվելի ասպախումբը անցնում եր Տարոնից դեպի Ռշտունիք տանող ճանապարհով։ Նրա առջևից տանում էին Մամիկոնյան տան դրոշը։ Այդ դրոշը, վոր մէշա պահպանել եր յուր անարատութիւնը, այժմ և՛ պատսպարում եր նրան, և՛ մատնում եր նրան։ Պատսպարում եր, վորովհետև սմեն վոք սովոր եր հարգանքով վերաբերվել դեպի նա։ Մատնում եր, վորովհետև նույն դրոշի ղեկավոր ներկայացուցիչը այժմ անցել եր «ուրացողների» դասը։— Դա Սամվելի հայրն եր, Վահան Մամիկոնյանը։ Ո՞մը կարող եր հասկացնել վորդին, թե ինքը յուր հոր շավղովն չէ գնում։ Կատաղած խուժանը ականջ ուներ լսելու, բայց ժամանակ չուներ դատելու։

Ճերեք որ եր, վոր նրա ասպախումբը մտել եր Ռշտունյաց լեռնային յերկիրը, վոր ծածկված եր մթին անտառներով։ Այդ անտառները կորսան մի խորին անդունդ էին, լի սմեն զարհուրանքով։ Այդ անտառներում, սկսյալ ամենահին ժամանակներից, կատարվել էին սոսկալի դարձողութիւններ։ Այստեղ Ներսովիքը կորցրեց յուր տիտանների մեծ մասը։ Այստեղից եր հզոր Բարշամերանը, վոր լցրեց Հայաստանը հրեյից դերիներով։ Այստեղից եր անդուք Մանաճիհրը, վոր արյունով ծածկեց Աստեհստանը։ Այստեղ եր «յերկաթահատաց» լեռը, վորի ստորերկրյա խավարում՝ դրծում եր մի մռայլ, սորամուտ բազմութիւն, վոր յուր յերկրի գաղների համար նետեր ու զրահներ եր դարբնում։

Այդ յերկրի մի կողմը ծվում եր Աղթամարա ծովակը, իսկ մյուս կողմում՝ պատնէշ էին դրել Մոկաց անմատչելի լեռները, իրանց դիվապնակ խոխոմներով և ձորերով։

Սամվելը դուրս յեկավ Վողական ամրոցից 300 ձիավորներով և վատասվոր պատրաստութիւնով։ Այժմ նրա ասպախումբից մնացել եր 43 հոգի միայն։ 257 հոգի կորան Ռշտունյաց անտառներում։

Սարսափելի՛ էին այդ անտառները։ Խաղաղութիւն ժամանակ նրանք անհետացնում էին մենավոր ճանապարհորդներին, իսկ խռովութիւն ժամանակ՝ կլանում էին ամբողջ դունդեր։ Այնտեղ սիրում եր հավիտենական մռայլը՝ մի մռայլ ժողովրդի հետ։ Այնտեղից անցնողը տեսնում եր միայն յուր առջևի նեղ շավիղը, վոր ծածկված եր մացառներով, տեսնում եր վերևում՝ սաղարթախիտ վոտների մթին կամարը, վորից հագիվ անգամ նշմարվում էին արեգակի ճառագայթները,— տեսնում եր յուր

ալ և ձախ կողմերում դարևոր ծառերի անթափանցելի ցանցը, վոր կենդանի պատվարի նման, պարփակում էին ճանապարհի յեղերքը: Ուրիշ վոչինչ չէր տեսնում: Բևեռ հարյուրավոր աչքեր ունենար մարդը, դարձյալ անկարող կլիներ նկատել, թե վո՛ր կողմից և դալիս վտանգը: Նրան կարելի յեր հանդիպել ամեն քայլում և ամեն րոպեյում: Ինչևէն թագնվիլ և կիսամութ ծառերի փիչուկների մեջ, և յուր դարանից նետեր և արձակում: Նա ոձի նման սողալ և մերկարմատ ծառերի տարօրեն խոռոչները, և հանկարծ հայտնվում և, նիզակը ձեռին: Նա կապիկի նման մագլցում և վոտաերի բարձր հյուսվածքի մեջ, և այնտեղից մահ և տարածում: Նա աճել և, միացել և հսկա ծառատատանի հետ, վոր նրա անմատչելի պատսպարանն և կազմում:

Կեսոր եր, յերբ Սամվելի ապաքսումբը դանդաղ ընթացքով անցնում եր այդ անտառի միջով: Նրանք ճանապարհ էին ընկել դիշերով, վորպեսզի, դեռ արևը չծագած, դուրս գան անտառից, և մյուս անգամ չհանդիպեն դարանամուտների: Մի խումբ ձիավորներ դնում էին առաջ, բավական հեռավորության վրա, ճանապարհը հետազոտելու համար: Նրա մի կողմում յուր ձին քշում եր պատանի Արտավազդը: Իսկ յետևից դալիս էին Ներսեհի Սբրակը, Հուսիկը և մի քանի թիկնապահներ: Հողնած էին թե՛ ձիաները և թե՛ ձիավորները: Բայց դարձյալ մի տեղ իջնելու և հանդստանալու պետքը չէին զդում, վորովհետև չատապում էին շուտով դուրս դալ անտառից:

Սամվելը դարձավ դեպի Ներսեհի Սբրակը, հարցնելով.

— Դեռևս յերկա՞ր պետք է դնանք:

— Բևեռ վոբշիներըը դարձյալ ճանապարհը չկորեն, չտեսավ դուրս դալանք անտառից,— պատասխանեց Ներսեհին յուր ոսվորական սառնասրտությամբ:

«Վոբշիներ» կոչում եր նա ուղեցույցներին, վոր թե՛ նվազական, և թե՛ նախատական անուն եր:

— Այդ սարի մյուս կողմում վերջանում է անտառը,— ավելացրեց Ներսեհին:

Պատասխանը դոհացրեց Սամվելին, բայց զրգռեց պատանի Արտավազդի անհանգստությունը:

— Վո՞ր սարի մյուս կողմում,— հարցրեց նա դայրացած ձայնով:— Ձևս վոչ մի սար չեմ տեսնում:

Ներսեհին վոչինչ չպատասխանեց: Նա անվստահ աչքերով չարունակեց նայել յուր շուրջը: Նրա մտահոդը դեմքը արտահայտում եր վորձված մարդու վերավորված ինքնասիրությունը, և Ներսեհու անհամբերությունը, վոր դործ ուներ մանուկների հետ: Ե՞վ սատանան մոլորեցրեց մեզ, մտածում եր նա, ի՞նչն եր ստիպում անպատճառ այդ անիծված յերկրով անցնել... մեքե ուրիշ ճանապարհ չկա՞ր... Բայց ինձ չլսեցին... և իրանք տուժեցի՛ն»...

Նեղ ճանապարհը, որով գնում էին նրանք, յերբեմն կապվում էր պատնեշի նման ամբարտակներով, բայց— միայնեղեն ամբարտակներով: Մառերը կտրել և այնպես, առանց ճյուղակոտոր անելու, դիզել էին ճանապարհի վրա: Սամվելի ասպախումբը մեծ դժվարությամբ կարողանում էր անցնել այդ տեղերից:

Ինչ-որ կատարվել էր այդ կողմերում: Շրջակայքը իրանց բնական դրության մեջ չէին: Այդ լցնում էր Սամվելի սիրտը մթին տարակուսանքներով, որ հետզհետե աճելով, վհատության կերպարանք էին առնում: «Գոնե մի մարդ յերևնար, մոտածում էր նա, գոնե մի հարցուփորձ անելի»...

— Վոչ վո՛ք չէ յերևում... խոսեց նա ինքն իրան:

— Կամենո՞ւմ ես մարդ տեսնել,— հարցրեց Ծերունին յուր սովորական բարեսիրտ ժպիտով:— Բավական է վռնչկիների կեղտանակով մխանգամ աղաղակել՝ «հա՛յ—հո՛ւյ», և կտեսնես, որ քո ձայնը կրկնվեցավ հազարավոր բերաններում, և անցավ հեռու և հեռու, մինչև անտառի խորքերը... Այդ ժամանակ դեռնի տակից, ժայռերի խոռոչներից, մացառների միջից, դուրս կհոսեն վայրենի բազմությունը... Այդ մարդիկը սատանայի նման ամեն տեղ կան, բայց վո՛չ մի տեղ չեն յերևում...

Արբակի դիտողությունը սխալ չէր: Ընդհակառակն կիրճերից և ապառաժոտ, անհավասար զառիվայրներից ազատվելուց հետո, անտառը սկսեց հետզհետե ցանցառանալ, և ծառերը սկսեցին հետզհետե մանրանալ: Վերևում բացվեցավ կապտագույն յերկինքը, իսկ ներքևում— Աղթամարը ծովակի մուգ-մանիշակագույն հայելին: Այժմ շրջակա բլուրները ծածկված էին կարճահասակ թուփերով, որը ամեն և կանաչազարդ դրրղի նման հյուսվել էին ճոխ բուսականության հետ:

Կեսորից բավական անցել էր, յերբ Սամվելի բոլորովին հոգնած ասպախումբը հասավ դղյակոր նավամատույցին, որտեղից պետք էր անցնել Աղթամար կղզին: Այն ջերմ հույսերը, այն ըղձալի վախճանները, որը մղում էին յերկուսասերղին դեպի այդ կղզին, իսկույն անհետացան, յերբ նկատեց նա, որ նավամատույցի մոտ՝ վո՛չ մի նավ չկային, այլ չէր յերևում և նավակների խումբը, որ միշտ պատրաստ պահվում էր այնտեղ՝ անցուդարձի համար:

«Ի՞նչ է պատահել»... այդ մթին հարցը տվեց ինքն իրան, և մնաց չվարյալ դրության մեջ: Նա ցանկանում էր՝ անպատճառ տեսնել այդ կղզին: Առանց այդ կղզին տեսնելու, նա չէր կարող վո՛չ հանդիստ լինել և վո՛չ յերջանիկ: Այդ կղզին տեսնելու համար, նա ծռեց յուր ճանապարհը, մտավ Ուշտունյաց անտառների մարդակուռ թավուտների մեջ, և տվեց այնքան ղոհեր, կորցնելով յուր քաջերի մեծ մասը:

Աղթամար կղզու ապառաժների բարձրության վրա կանգնած էր նույնանուն ամրոցը, որ սկսյալ ամենահին ժամանակներից, ներկայացնում

և Ռշտունյաց նախարարներին դրուքյուններ։ Բարդուխրան նահապետը ասպետները յղեալ, վոր Տիգրան Բ–ին որերում այդ ամրոցն հինքը դրեց։

Սամվելը յուր վշտահար դեմքը դարձրեց դեպի շրջակայքը։ Նրա աչքին ընկավ Ռշտունյաց իշխաններին դրած առաբանքը, վոր կանգնած էր ծովեզերքում, նավամատույցից վոքը ինչ հեռու։ Նա բոլորովին չմոքեվեցավ։ Կրակը այնտեղ մեծ դործ էր կատարել։ Կիսակործան առաբանքը դեռ ծխում էր...

— Այդ ի՞նչ ծուխ է... բացականչեց նա, և նրա աչքերը վառվեցան խորին բարկությամբ։

— Այլո՛ւմ է... պատասխանեց Ներսեհն Աբրահը, դլուխը ցավակցաբար շարժելով։— Բայց արի՛ ու իմացի՛ր թե վո՞ր առանձն է այրել։

Կրակը անարդել կերպով ճարահատում էր դեղնցիկ շինվածքները, և վոչ վոք չկար, վոր նրա հանդդնության առաջը առներ։

Ամբողջ առաբասմբը վոչ սակավ խռովության մեջ ընկավ։ Այդ յերեսուքթը տեսնելուց հետո, ամենքը լցվեցան առատիկ բարկությամբ։ Պատանի Արտավազդի մշտազվարթ դեմքն անդամ ծածկվեցավ խորին տրտությամբ։ Բայց Սամվելի մեջ սիրտ չէր մնացել։

Մինչ այդ շտապության մեջ եկին, հեռվից յերևաց մի մարդ։ Սամվելը վոքը ինչ վազի առեց։ Գոնե մի մարդ դտնվեցավ։ Նա ուղիղ մոտենում էր խումբին։ Թևքն կերպով դինված էր նա. ձեռքում կրում էր յերկար նիզակը, դոտին մեջ խրած ուներ կարճ դաշույնը, իսկ մեջքին կապել էր լայն վահանը, վոր դամած էր յերկաթյա հեղուլյաններով։ Ցերբ բոլորովին մերձեցավ նա, արևակիզ դեմքը դարձրեց դեպի խումբը, յերևի, ուսումնելու համար, թե ո՛վքեր են, հետո նիզակի ծայրը ցցեց դետնին, հենվեցավ նրա վրա և կանդնեց ուղիղ Սամվելի առջև։ Ցերխառաբդ իշխանը զարմացավ, նա չէր հավատում յուր աչքերին։

— Այդ դո՛ւ յես, Մալխաս,— հարցրեց նա հուդված ձայնով։

Ցեկիվորը նրա դյուղացին և նրա սուրհանդակն էր։ Նա վոխանակ մի խոսք ասելու, անվստահությամբ նայեց յուր շուրջը, հետո դլխարկի վոքմից մի նիշ հանեց մի ծրար և հանձնեց Սամվելին։ Ցերխառաբդ իշխանը խնդությունից դունատվելեցավ։ Այդ միակ ծրարը նրան ավելի բան ասաց, քան թե կյանք յեկվորից։ Այդ ծրարը յուր դրած նամակն էր, վոր հանձնել էր նրան, տեղ հասցնելու համար։ Այժմ կրկին վերադարձնում էին նրան։ Ուրեմն այն անձինքը, վոր պետք է առանային այդ նամակը, կա՛մ չկային... կա՛մ չէր դտել... Ցերկու մտքերն էս Սամվելի համար սպանիչ եկին։ Հայտարարվելիք վշտեր ալեկոծեցին նրա խռովյալ սիրտը։ Հայտարարվելիք հարցեր ծագեցան նրա դլխում։ Բայց նա դարձ յուր վրդովմունքը, դեռ լիովին ձուլց և, դանդաղով դեպի յուր մարդիկը, ասաց։

— Այստեղ պետք է մի վոքը հանդստանալ։

— Այդ կրակների՞ վրա,— հարցրեց Ներսեհն Աբրահը դլուխը դարմացական կերպով շարժելով։

— Այո՛, այդ կրակների մեջ,— պատասխանեց նրան Սամվելը:

Ամենքը ցած իջան ձիերից, բանակ դրեցին ամայի ծովեզրի մոտ: Այնտեղ մի քանի որ առաջ դրված եր յեղել մի այլ բանակ: Շերեփում եյին տորոված, վոտնակոխ յեղած խոտերի հետքեր, յերեփում եյին հանգած խարույկների տեղերը, վոր բոլորակ ձեռվ այրել եյին չորեքկողմի դալար բուսականությունը, յերեփում եյին արյունով ցողված քուփերը,— բայց արդյոք անասունների՞, թե մարդու արյունով...

Սամվելն առաց յուր հետ Մալխասին և դիմեց դեպի նավամատույցը: Շերբ հասան, նա դարձավ դեպի սուրհանդակը, հարցնելով.

— Այստեղ կարելի՞ յե մի նավակ գտնել:

— Վոչ, տեր իմ, տեսնո՞ւմ ես, բոլորը այրված են:

Շերեփատարդ իշխանը աչք ածեց յուր չորեքկողմը. ավաղների վրա ընկած եյին միայն կարատված պարաններ, ջարդված թիակներ և մահուկների կիսատառ մնացորդներ: Նա վախենում եր միանգամից հարցնել ամբաստիլի իրողությունը: Նա դողում եր այն պատասխանից, վոր պետի բաց աներ նրա առջև կատարված անցքերի սոսկալի պատկերը:

— Շես պետք է անպատճառ տեսնեմ կղզին,— կրկին դարձավ նա դեպի սուրհանդակը:

— Կղզում վոչ վոք չկա, տեր իմ:

Կղզին հեռու յեր ցամաքից մեկ ժամու ծովային ճանապարհով միայն: Սամվելը նայեց դեպի այն կողմը: Մերկ, ապառաժոտ կղզին, հսկայական սեղի նման, դուրս եր ցցվել ալիքների միջից, և նրա անմատչելի բարձրության վրա նկարված եր Ռյուտենյաց նախարարների ահռելի ամբոցը:— Նա նույնպես ծխում եր... և չարագուշակ ծուխը մոխրագույն ամպիկներով տարվում եր ծովային մեղմ հողմերի հետ:— Այնտեղ ծխում եր և Սամվելի սիրտը...

Նա այլևս չկարողացավ իրան պահել, հարցրեց.

— Պատմի՛ր, Մալխաս, ի՞նչ է պատահել:

— Ցավալի՛ յե, տեր իմ, շա՛տ ցավալի,— խոսեց սուրհանդակը վշտալի ձայնով:— Ի՞նչպես պատմեմ...

— Ասա՛, ինչ վոր դիտես, վոչինչ մի՛ ծածկիր:

Նա դարձյալ մնաց չկոթության մեջ:

— Ո՞վ վոչնչացրեց այդ բոլորը:

— Ձեռ հայրը, տեր իմ:

— Իմ հա՞յրը... գոչեց վորդին և, կարծես, կայծակով չանթեցին նրա ճակատը: Նա ձեռքը տարավ, բռնեց դլուխը, և մի քանի րոպե մնաց լուռ:

Մալխասը ավելացրեց.

— Ձեռ հայրը պարսիկների հետ յեկավ և կոտրանեց բոլորը...

— Ի՞նչպես յեկավ... ի՞նչպես մտավ կղզին...

Մալխասը պատմեց, թե նրանք յեկել եյին ծովային ճանապարհով.

վանա կողմից։ Դիշերով պաշարել էին կղզին, իսկ ամենքը քնած էին։ Ցնծից ցամաքի ճանապարհով չկային լինելին, ի հարկե, կպատահէին վրձիվիններին, և նրանց անասունների մեջ իրանց վարձը կատանային... Այդ վտանգից խուսա տալու համար, արշավանքը կատարել էին դիշերով և ծովային ճանապարհով։ Ցնվ իրանց անակնկալ հարձակմամբ կարողացել էին տիրել թէ՛ կղզուն և թէ՛ իշխանական ամրոցին։

Սուրհանդակի պատմութեան մեջ մի կետ ավելի զրավեց Սամվելի ուշադրութիւնը, թէ արշավանքը կատարվել եր վանա կողմից։ Ուրեմն, վանը անցել եր Թշնամու ձեռքը։ Նա փոքր ինչ զայրացած կերպով զարձավ դեպի սուրհանդակը, ասելով.

— Ցնծե դո՛ւ քեզ հանճնած նամակը յուր ժամանակին տեղ հասցնելիր, զրանցից և վոչ մեկը չեր կատարվի։

— Ցնս չուշացա, տեր իմ, յնս թագուն թռչունի թռիչքով հասա, տեր իմ, լսից մինչև իմ հասնելը, ամեն ինչ կատարված եր։

Նամակի մեջ հաղորդել եր Սամվելը ապստնացող վտանգը։ Բայց, դժբախտաբար, նա ինքն եր արել մեծ սխալը, ուշացնելով նամակը։ Այդ սխալի մեջ նա ևս մեղավոր չեր։ Ցնծե կհիշէ ընթերցողը, նրա խորթ մայրը, Վորմիղդուխտ տիկինը, նրան չատ անազան հայտնեց աղետաւոր խակութիւնը, թէ նրա հայրը սկզբից Տարոն չուխտ մտնե, այլ պետք և նախ հարձակվի Վասպուրականի քաղաքների վրա, և հետո այնտեղից պետք և անցնե Ռշտունյաց աշխարհը և այլն։

— Այժմ վո՞րտեղ է Ռշտունյաց նահապետը, Գաբրիէլն իշխանը։— ճնշեի, դիմեցի՞ն նրան։

— Վոչ, տեր իմ։ Նա դնաց Ռշտունյաց տիկնոջը վորոնելու։

— Տարո՞ն նրան։

— Հայտնի չէ, տեր իմ։ Միայն, վորպես պատմում եին ամրոցի մարդիկը, դիշերային հարձակման խառնուրդյան մեջոցում տիկինը կորավ։

— Իսկ Ռշտունյաց որիո՞ղը...

Վերջին հարցը մեջոցին, յերկնասարդի շրթունքները դողացին, նրա սիրտը սկսեց սաստիկ բաբախել։ Այդ հարցը պատասխանելին եր կախված նրա սրտի թէ՛ հանդստութիւնը, և թէ՛ նրա խաղաղ խորտակումը։ Նա հարցնում եր դեղեցիկ Աշխենի մասին, վորին նվիրված եր յուր հոգու բոլոր եյութիւնը, վորին պաշտում եր յուր սիրտ բոլոր կենդանութիւնը։

Մալխասը նկատեց յերկնասարդի խռովութիւնը,— շտապեց պատասխանել.

— Թո՛ղ հանդիստ լինի իմ տերը, Ռշտունյաց որիորդը ազատված է։ Սամվելի դնդը վայելեց անսահման ուրախութիւնը։

— Ճշմարի՞տ ես ասում... մի՛ խաբիր ինձ, Մալխաս... քեզ յերդում եմ տալիս յերկինքի և յերկրի բոլոր սուրբերով... ուղիղն ասա՛, Մալխաս... ազատվա՞ծ է նա... վո՞րտեղ է այժմ...

— Ցուր քաջերի հետ ամրացած է հայրենի անառանեքում։

— Վո՞ր անառակներում։

— Հայտնի չէ, աեր իմ, յերբեք մի տեղում չեն մնում։ Այդքանը միայն գիտեմ, որ մի քանի որ առաջ գանվում էին Արտոսի անմատչելի բարձրություններին վրա։

Սամվելը յուր դժուարությամբ լի դեմքը շրջեց դեպի յերկինքը։

— Ճնշ կլինամ, յես կգտնեմ նրան,— ասաց նա խորին վշտավորությամբ։— Վորտեղ և լինի, կգտնեմ նրան։

— Ներողություն չեմ տա, աեր իմ,— պատասխանեց Մալխասը փորձված մարդու յեղանակով։

— Ի՞նչ կա, Մալխաս, ինչո՞ւ յես վախեցնում ինձ։ Նրա համար յես ժողովքն անգամ կմոռնեմ, ամեն տեղ կգնամ...

Մալխասը իշխանի մտերիմ ծառաներից մեկն էր, և վորքան քաջ էր, նույնքան և խելացի մարդ էր։ Նա յուր անվախահաստությունը բացատրեց նրանով, թե Ռշտունիները սատիկ զայրացած են Մամիկոնյանների դեմ և վորտեղ վոր հանդիպելու լինեն, անխնա վրեժխնդիր կլինեն։ Ցեղ այդ վրեժխնդրության ամենածանր մասը, անտարակույս, կվիճակվի Սամվելին, վորովհետև նրա հոր ձեռքովն և կատարվել նրանց յերկրին հասած բոլոր վնասը։

— Հիմարանո՞ւմ ես, Մալխաս,— պատասխանեց յերիտասարդը, ընդհատելով նրա խոսքը։— Ախի՞ն, իմ սիրելին, ինձ պետք և վրեժխնդի՞ր լինի, այդ ի՞նչ ասելու բան է։

— Ախինը վրեժխնդիր չի լինի, աեր իմ, այլ նրան չրջապատող քաջերը վրեժխնդիր կլինեն։ Ցեղ նազելի որիորդը հաղիվ թե կկարողանա դպել վայրենի խուժանի կատաղությունը։

— Սխալվում ես, Մալխաս, ամբողջ Ռշտունիքը պաշտում է նրան, վորպես յուր աստվածուհուն։ Նրա մի խոսքը բավական է ամենահարելու բոլորին։

Մալխասը մտածության մեջ ընկավ։ Մտածության մեջ ընկավ և Սամվելը։ Ցերկու վախեցներ, մինը մյուսից ավելի սատիկ, մտքան էին նրա մեջ։ Առաջինը, յուր սիրելի նշանածին տեսնելու ցնծը, իսկ յերկրորդը, այն վճռական ընդատակը, վորի իրագործման համար նա ճանապարհ եր ընկած, վորի կատարումը նա հանդիսավոր կերպով ուխտել եր յուր խղճի և աստուծո առջև... Այժմ դեպի վո՞րը դիմել։ Դեպի սիրած որիո՞րդը, թե դեպի ուխտած նպատակը։ Ցերկուսն էլ թանդ էին նրա համար, յերկուսն էլ սուրբ էին նրա համար։ Բայց սիրո կրակը ավելի վառ եր յերիտասարդի սրտի մեջ։ Նա թեև չմոռաց յուր ուխտը, բայց— հետաձգեց նրան...

— Լսի՛ր, Մալխաս,— դարձավ նա դեպի սուրհանդակը,— դու պետք և գնաս, վորոնես որիորդին, դու պետք է դտնես նրան, և ինձ չուտով յուր բերես, թե վո՛րտեղ և նա։— Կարո՞ղ ես դտնել։

— Կարող եմ, աեր իմ։

— Ցնա այդ ծավիդրում կսպասեմ, և իմ հոգնած մարդիկներին վոքըր ինչ հանդստություն կտամ, մինչև դու կվերադառնաս: Ցեթե հարկավոր կհամարես, վեր ա՛ռ քեզ հետ իմ մարդիկներից մի քանիսին:

— Նրանք միայն կխանգարեն ինձ, տեր իմ: Ցես միայնակ կդնամ:

— Դու այսոր պետք է ճանապարհ ընկնես:

— Ցես հենց այս րոպեիս կդնամ: Ցեթե ասված հաջող ինձ՝ պանել արիորդին, հայտանի՞մ, թե իմ տերը ցանկանում է տեսնել նրան:

— Հայտանի՛ր:

— Իսկ ցեթե նա չհավատա՝ վոր ցես իմ տիրոջ կողմից եմ ուղարկված:

— Ցուցց տա՛ր նրան այդ մատանին:

Սամվելը հանեց մատանին, հանձնեց սուրհանդակին:

Նա դլուխ տվեց և ճանապարհ ընկավ:

ԸՐՏՈՍ

Աբասը Ռշտունյաց լեռների ազգան է: Նա Ռշտունյաց լեռների և հսկան է: Նրա սոսկալի ձորերի մեջ ցերեկը տիրում է խորին մթություն, իսկ դիշերը— անվերծանելի խավար:

Սոսկալած դիշեր էր:

Մի սարավանդի դոգավոր բարձրության վրա, դեռ չհլնված խարույկի կարմրագույն լույսը ցրելան էր հանում մի քանի մոայլ դեմքեր, վորոնք, բոլորած կրակի շուրջը, տաքանում էին: Ամառնային դիշերը այդ լեռան անհյուրընկալ դրիում, սառցնելու չափ ցրտություն և ընչում: Խարույկի շուրջը նստած մարդիկը և՛ խոսում էին, և՛ դրաղված էին իրանց դինքերով: Մեկը, քարե հեռանը ձեռին, սրում էր նիդակի բթացած ծայրը, մյուսը կարում էր կապարճի քանդված փոկը, ցերրորդը կպչում էր մաղեղեն սրեխներն իրացներ: Մնացածները, մի կողքի վրա պառկած, մի առանձին բավականությամբ նայում էին կրակին:

Խարույկից վոքր ինչ հեռու, փոխադրված իրանց ձագյա հասո վրաբաիրանների մեջ, դեռնատաբած, պառկել էին ուրիչ շատերը: Մեկերի մինից հաղիվ նշմարվում էր և վրաններն մի չարք, վոր իրանց ճերմակ հագուստներն տաղավարներին նմանություն ունեյին: Ներսը պատրաստված էին խանձր, բրդեղեն մուդ-մոխրագույն կտավեղաններից, վորոնք անձրևի ներքո այն աստիճան ամրանում են, վոր մի կտրիճ անդամ թույլ չեն տալիս ներս թափանցելու: Դրանց մեջ քնած էին կանայք և յերեխաներ:

Վրաններից մեկը յուր վրա առանձին ուշադրություն էր դարձնում: Նա առանձնացած էր մյուսներից, և յուր ընդարձակությամբ իշխում էր բոլորի վրա: Վարագույրները ցած էին թողած: Դրսի սպիտակ գույնը,

Մխախանվելով աստուածի կարմրութեան հետ, արտափայլում էր նուրբ-վարդագոյն շառավիղներով։ Ցերեկում էր, վոր ներքուստ ճրագը դեռ մարած չէր։

Նարեկացին դադարեցրեց խոսակցութիւնը դեռ շարունակվում էր։

— Ամոթի մի կաթիլ անգամ չմնաց մեր յերեսին,— ասաց նահապետներից մեկը,— դրանից հետո մենք պետք է ձգենք մեր քոլոզները և մեր հնիկների լեշակները ծածկենք մեր դլխին...

— Ինչո՞ւ,— հարցրեց մյուսը։

— Դու դեռ հարցնում ես, թե ինչո՞ւ,— պատասխանեց առաջինը։— Նրա համար վոր, մենք դրանից հետո ոդամարդիկ չենք, մենք կանայք ենք... Կորցրի՛նք մեր պարծանքը, կորցրի՛նք մեր տիկնոջը... Նրանց ամբոցները կրակի ճարակ դարձան... Իսկ մենք ազատել չկարողացանք... Աւժմ՞ այդ բոլորից հետո ապրել... Այլևս՝ ինչ յերեսով պետք է նայենք աշխարհին... Ամեն մարդ կթքի, ամեն մարդ կմրմնջի...

— Ուղիղ է ասածդ, բայց մենք ինչ դիտեինք։ Մենք մեր տանը նստած, թշնամին դուղի նման ներս մտավ և յուր ավարը տարավ։ Ցեթե այս բոլորից յերկնքից հանկարծ մի քար ընկնի մեր դլխին, մենք կարո՞ղ ենք նրա առաջը առնել։— Այդպես հասավ վորճանքը։ Ցեթե առաջուց դիտեինայինք, թշնամին չեր կարող վոտք դնել մեր հողի վրա։

— Հիմա խո դիտենք։

— Հիմա դիտենք, մեր վրեժը կառնենք, և մեր նախատինքը մեր թշնամու արյունով կսրբենք։

— Այդ դեռ «սկիզբն է յերկանց»,— մեջ մտավ մի ուրիշը, վոր բոլորից ծեր եր և, վորպես յերևում եր, կարդացած մարդ եր։— Մեծ փոթորիկը դալու յե վաղը։ Մեր իշխաններին մեր ձեռքից խլելուց հետո, մեզ անդլուխ թողնելուց հետո, կվտակեն մեր յեկեղեցիների դռները, կպատառոտեն մեր ավետարանները, վոտնակոխ կանեն մեր սրբութիւնները, և ապա կասեն մեզ. «Յանի՛ք կրակին ու սրին յերկրպադութիւն տվեցեք, դրանք են ձեր աստվածները»։ Մենք կասխլեն պարսկերեն խոսել և պարսկերեն աղոթել, վորովհետև, այդ և նրանց աստվածների լեզուն։ Մեր խրճիթները կծեփեն կովի աղբով, վորովհետև այդ և նրանց սրբութիւնը։ Մեր մեռելներին անթաղ կթողնեն, վորովհետև, այդպես և նրանց սովորութիւնը։ Ցեվ մեր տաճարները կպղծեն իրանց կրակի ծուխով ու մուխով...

— Հետո ո՞վ թուրլ կտա, ո՞վ կընդունե,— պատասխանեցին միաձայն։

— Ընդունել կտան... վոյտև ու մարակի ուժով ընդունել կտան... ասաց ծերունին, դլուխը խորհրդավոր կերպով շարժելով։

Մի յերիտասարդ, վոր կողքի վրա պառկած եր խարույկի մոտ, դլուխը բարձրացրեց, և աչքերը լայն բաց անելով ասաց.

— Ինոք չկա, յեթե մենք, ձեռքներս ծալած, նստենք մեր տանը, կբռնեն մեր ականջից, քարշ կտան կրակի մոտ ու կասեն. «դլուխդ ծռի՛ր,

դա՛ կե՛ք ու ասում»։ Բայց կես թուղթ չեմ տա, մոր նա իմ տունը մոռնա և իմ ակռանջից բռնա։

— Նա պրծնեն մտել և մեր տունը,— պատասխանեց Ծերունին։— Այդ ո՞վքեր էին, մոր կնկան և մեր տիկնոջը տարան։

— Հուբացողները»։

— «Հուբացողները» հենց մեր տան և մեր աչքաբևի մարդիկն են, մի-դանից են, մոր տասնորդում են մեր թշնամուն։

— Ով մոր «հուբացող» և, մեզանից չե, թեկուզ մեր յեղբայրը և մեր հայրը լինի։ Մենք նրանց կկոտորենք։

— Կկոտորե՞նք,— կրկնեցին մյուսները։

— Այդ կտեսնե՞նք... ասաց Ծերունին։— Բայց այժմ մեր տիկնոջ մասին մտածելու ե։ Քանի մոր Ուշտունյաց տիկինը թշնամու ձեռքումն է, Ուշտունիքը կմնա անպատվության մեջ։

— Ճիշ ասուր մեջ,— ավելացրին մյուսները։— Բայց մեր նահապետը դնացել է, յուր հետ տարել է մեր քաջերից չատերին, տասված կռվին նրան, և մորտեղ մոր դոնելու լինի տիկնոջը, կաղատան, և կվերադարձնե մեզ։ Այն ժամանակ մեծ կլինի մեր ուրախությունը։

Խոսակցությունը Ուշտունյաց տիկնոջ, Համազասպուհիի մասին եր, մորը, Աղթամարա ամրոցի պաշարման միջոցին, անհետացավ իշխանական ընտանիքի միջից։ Նրա ամուսինը, Գարեգին Նահապետը, դնացել եր մոր-տնելու կնոջը, յուր հետ տանելով յուր զորքերի մի մասը։

Խոսակցությունը ընդհատվեցավ, յերբ հեռվից լսելի յեղավ մի ձայն, մոր ավելի նման եր վազրի մռնչալու ձայնին։ Նա կրկնվեցավ մի քանի անգամ։ Ամենքը առեցին իրանց զենքերը, մոտքի յելան, և լարված ուշադրությամբ նայում եյին իրանց շուրջը։

— Մարդիկ են մոտենում,— ասաց մեկը։

— Մեր զինվորապահների ձայնն և,— ասաց մյուսը։

Բանակի մեջ տիրեց մի թեթև իրարանցում։ Շներն անդամ սկսեցին զայրացած կերծոել վրանալ։

Կես ժամ չանցած մի խումբ զինվորապահներ մոտեցան առաջիններին։ Նրանք բերում եյին մեկին, մորի թևքերը կապած եյին քամակին, իսկ մղին դրել եյին մի յերկայն պարան, մորից քաշ եյին տալիս։ Ծերևսի վրա յերևում եյին կապտատակներ, մոր առաջ եյին յեկել բուռնքներից հարմածներից։

— Իրա՞ւ ե,— դոչեցին բերողները։

— Գնաք և այրել այդ խարույկի մեջ,— ձայն ավելցին առաջիններից։

Դատապարտյալը լուռ եր, մոչինչ չեր խոսում։ Նա մի առանձին առանությամբ նայում եր թե՛ բերողների և թե՛ խարույկի մոտ դտնվածների վրա։ Նրա անշարժ դեմքը արտահայտում եր անձնասոսահ մարդու անվհատությունը։

— Գնաք և այրե՛լ,— կրկնեցին ամենքը միաձայն։

Վոմանք սկսեցին խարույկի վրա փայտեր ավելացնել: Այդ ժամանակ մի այլ դատապարտյալը բերանը բաց արեց և հանդարտ կերպով հարցրեց.

— Դուք իրավունք ունե՞ք առանց Ուշտունյաց որիորդի հրամանին սպրել ինձ:

Ամենքը նայեցին միմյանց յերեսին: Նա ավելացրեց.

— Կարելի չե՞ կես մի անմեղ մարդ ևս:

— Անմեղ մարդը դժվերով ի՞նչ գործ ունի մեր բանակի շուրջը,— հարցրին նրանից:

— Այդ ձեր գիտենալու բանը չե: Ինձ տարեք որիորդի մոտ, թող նա դատե ինձ:

— Որիորդին այժմ չե կարելի անհանգստացնել: Նա քնած է:

— Ինձ պահեցեք մինչև առավոտ, մինչև որիորդը վեր կկենա:

— Դու ո՞վ ես, վո՞րտեղացի յես, ի՞նչպես է քո անունը:

— Ցես ձեզ վոչինչ չեմ ասի:

Աղմուկը և աղաղակները հասան մինչև սպիտակ վրանը, վորի վարպետուքներից մեկը կիսով չափ բարձրացավ և կրկին ցած իջավ: Ամենքը նայեցին դեպի այն կողմը, միմյանց ասելով.

— Որիորդը դեռ քնած չե:

Մի քանի րոպեից հետո, որիորդի ծեր սպասավորներից մեկը մոտեցավ խմբին, հարցրեց, թե ի՞նչ է պատահել: Ցեղերությունը նրան պատմեցին, նա հեռացավ: Շատ չանցավ, կրկին վերադարձավ նա, հայտնեց, թե որիորդը հրամայում է, վոր լռեսին բերեն յուր մոտ: Այնպես կապած, կաշկանդած, տարան նրան:

Սպիտակ վրանը մի թեթև, շարժական պալատ եր յուր բոլոր հարմարություններով: Նա կազմված եր մի քանի մասներից, վորոնք բաժանված էին միմյանցից առանձին պարտակներով: Յուրաքանչյուր մասը վորոշված եր որիորդի պահպան սպասավորներից կացության համար, համեմատ նրանց պաշտոնին և ծառայությունների: Մի մասնում կենում էին նրա նժդեհները, մյուսում՝ նրա դայակներն ու դաստիարակները, յերրորդը յուր քնարանն եր, իսկ չորրորդը ընդունելության խորանը:

Նա դեռ քնած չեր, թեև դիշերվա կեսից վաղուց անցել եր: Միայնակ եր յուր քնարանում և, առանց հանվելու, նստած եր մի դահավորակի վրա: Բարակ շղթայով յոլունից քարշ ընկած պղնձյա Ընդը, վոր մի առապելական թռչունի նմանություն ուներ, ճարճատելով վառվում եր, և յուր աղոտ լույսը թափում եր նրա գունաթափ դեմքի վրա: Տխո՜ւր եր նա, և ավելի տխուր, քան թե մի սգավոր հրեշտակ: Վոսկեղուն գիսակները, վոր Ուշտունյաց լեռնական որիորդների դեղեցկության դվխավոր հարստությունն է, մեղմ դանդուրներով ծածկում էին նրա սիրուն թիկունքները: Աչքերի մեջ վառվում եր խորին թախծություն: Ի՞նչն եր առկոծում քնքուշ սիրտը, վոր ուրախ լինելու, և հավիտյան ուրախ լինելու համար եր ստեղծված: Նա մտածում եր... և այդ մտածություններն

Նյին, վոր խլել Նյին թե՛ նրա քունը և թե՛ հանդստությունը: Մտածում եր հայրենի ամրոցների կործանման մասին, մտածում եր կրած, անհետացած մոր մասին, վորին սիրում եր վորպիսական բոլոր տարիանքով,— մտածում եր տատապյալ հոր մասին, վոր դնացել եր պատերազմելու տարաբնելի վտանգների դեմ, վոր դնացել եր ազատելու սիրելի ամուսնին:— Յեվ, վերջապես, մտածում եր Սամվելի մասին, վորից չատ ժամանակ եր, վոր վոչինչ տեղեկություն չուներ: Ի՞նչով բացատրել նրա լռությունը: Այդ հարցի վրա խորհելիս, նա ամբողջ մարմնով դողում եր, մանավանդ յերբ մտաբերում եր, վոր կատարված բոլոր աղետների հեղինակը այն յերիտասարդի հայրն եր, վորին ինքը այնքան սիրում եր, վորի սիրով միայն իրան կատարյալ յերջանիկ և բախտավոր եր համարում: Իսկ նա՞. Սամվելը... արդյոք չի՞ փոխվել նա... արդյոք ի՞նչպես եր նայում յուր հոր գործողություններին վրա... Այդ հարցերը խելագարության չափ վրդովեցնում եյին խեղճ որիորդին, և նա, անհնարին տարակուսանքների մեջ ընկղմված, վո՛չ մի ախտիանք, վո՛չ մի դյուրություն չեր գտնում խոյական սրտին: Յերբ Սամվելը հավատարիմ կնոջ սիրած աղջկան և նրա տոհմին,— նա պետք և հակառակը յուր հորը, վոր առելով առում եր այդ տոհմը: Նա պետք և կորցներ բոլորը և դրկվեր բոլորից, միայն յուր սիրած աղջիկը շահելու համար: Բայց արդյոք, կա՞ր նա մի այդպիսի դոհ,— մի այդչափ մեծ դոհ, վորով խորտակվում եր նրա բախտը և դուցե— նրա ապագան... Յեվ ի՞նչպես բնդուներ բնությունը այդ մեծ դոհաբերությունը, դրկվելով Մամիկոնյանների նշանավոր ժառանգին հայրենյաց ժառանգությունից: Միթե՞ յուր սերը բավական եր լրացնելու այն անհուն կորուստը, վորին պետք և յենթարկվեր դժբախտ յերիտասարդը, վոր յուր բարձր արժանավորություններով՝ յերջանիկ լինելու և մի՛ չ յերջանիկ լինելու իրավունք ուներ...

Այդ դո՞ռն մտածություններից խռովության մեջն եր որիորդը, յերբ բանակում տեղի ունեցած աղմուկը գրավեց նրա ուշադրությունը:

Միայնության րոպիներում մեծ խոհումները դիտեյին ալեկոծել նրա զգայուն սիրտը, իսկ յերբ պետք եր առանձնատիր լինել, այդ ժամանակ նա ուներ յուր առանձանին և մեծապատվության վայել ըղնություն: Յերբ հանցավորին կանդնեցրին վրանի հանդեպ, նա վեր կացավ, ձայն տվեց յուր նաժիշտներին, վորոնք խմբով ներս մտան, և առաջնորդեցին նրան դեպի ընդունարանի խորանը: Իրրև ազատվոր, նա դլուխը ծածկեց մի թեթև, սեվաթուլը շղարշով և դուրս յելավ քնարանից:

Ընդունարանում դրած եր մի վտառավոր բազմոց, վորի վրա նստեց նա: Նաժիշտները չորեցան աչ և ձախ կողմերում, իսկ փոքր ինչ հեռու կանդնած եյին նրա դրանիկները: Հրամայեց չահերը վառն և վարագույրը բարձրացնեն: Ամբողջ բազմությունը, վոր կանդնած եյին վրանի հանդեպ, մի մարդու նման, խռնարհվեցան մինչև գետին, և դլուխ տվին:

Հանցավորին առաջ բերեցին: Որիորդը հարցրեց.

— Ի՞նչ մարդ ես:

Հանցավորը համարձակ կերպով ասաց.

— Իմ պատասխանը լսելու համար, թո՛ղ Ձեր ունկյաց մեծախոհ որբորդը հրամայե, որը բաց անեն իմ թևքերը:

Ամենքը կասկածանքով նայեցին նրա կերեսին, զարմանում էին անծանոթի հանդգնության վրա: «Միթե որբորդն կյանքն դեմ վտանգ անելու դիտավորություն ունի»,— մտածում էին նրանք:

— Բա՛ց արեք դրա թևքերը,— հրամայեց որբորդը:

Դրանիկներից մեկը նկատեց.

— Լեզուն բաց է, որբորդ, ինչ որ խոսելու ունի երան արդարացնելու համար, կարող է խոսել:

— Բա՛ց արեք,— կրկնեց որբորդը:

Հրամանը կատարեցին:

Հանցավորը ձեռքը տարավ ծոցը, հանեց մի ինչ-որ բան, որ վարթաթած եր կերպասի կտորի մեջ, և հեռվից բարձրացնելով, ասաց.

— Ահա՛ այդ ծրարի մեջն է իմ պատասխանը, թո՛ղ Ձեր ունկյաց մեծախոհ որբորդը բարեհաճի բաց անել և տեսնել:

Դրանիկներից մեկը մոտեցավ, առեց ծրարը և մատույց որբորդին: Մի առանձին հետաքրքրությամբ, որ երան թե՛ բերկրանք եր պատճառում և թե՛ նեղքին խռովություն, բաց արեց ծրարը: Նրա մեջից հայտնվեցավ մի մատանի: Այդ դեղեցիկ առարկան երան և՛ ծանոթ եր, և՛ սիրելի: Կրկին դրեց ծրարի մեջ և ուրախությամբ թաղցրեց յուր ծոցում: Հետո դարձավ դեպի յուրայիններըը, ասելով.

— Այդ մարդը լրտես չէ. դա մի բարի ավետարեր է. ի դուր դուք չարչարել եք դրան. թողեք այդ մարդուն մի այնպես ինձ մոտ, և դուք հեռացեք:

Ամենքը զարմանալով հեռացան, անծանոթին տարան վրանը. վարդուլը կրկին ցած իջավ: Որբորդը նշան տվեց, յուր մոտ յեղողներն նույնպես հեռացան: Ինքը և անծանոթը մնացին միայնակ: Նա հարցրեց.

— Ի՞նչպես է քո անունը:

— Մալխաս:

— Այժմ վո՞րտեղ է իշխանը:

— Բանակ է դրել Աղթամարա նավամատույցի մոտ:

«Ուրեմն նա յեկած է յեղել ինձ տեսնելուս... մտածեց նա խորին սերտությամբ,— վիսկ իմ վոխարեն տեսավ մեր ամրոցներն ավերակները... ուրեմն երան հայտնի յեն ցավալի անցքերը»...

— Վո՞րքան մարդիկ ունի յուր հետ:

— Հինուն հազի հազիվ կլինի:

— Ինչո՞ւ այդքան սակավ:

— Զղիտեմ, որբորդ:

— Թեղ ինչո՞ւ համար ուղարկեց:

— Ինձ ուղարկեց, որ վերանամ, դառնամ Ռշտունյաց մեծափառ արքային, և իմ ակրոջը խնացում տամ, թե վո՛րտեղ է պահվում նա:

Որիորդը մտածության մեջ ընկավ: Սամվելը, նրա սիրելին, նրա ուրախությունն ու կյանքը, ցանկանում էր տեսնվել նրա հետ: Այդ տեսությունը վորքան և ըղձալի լիր, այնքան և դժվարին: Վո՞րտեղ տեսնվել: Աբղջոք ի՞նքը գնա նրա մոտ, թե նրան ժամանակ նշանակե, վոր գա յուր մոտ: Սամվելն այդ վերջինն էր խնդրում: Բայց կարո՞ղ էր նրան ընդունել յուր բանակում: Աբղջոք չի՞ր հանդիսել նա անսպասելի վտանգների: Ի՞նչպես ընդուներ այն մարդու վորդուն, վոր ավերակ դարձրեց Ռշտունյաց ամրոցները, վոր դերի տարավ Ռշտունյաց տիկնոջը: Նրան լավ հայտնի լիր, թե վոր տասնյան յուր մարդիկը կատաղած էին Մամիկոնյանների և տահավարակ տարոնցիների դեմ: Ի՞նչ ասել նրանց, ի՞նչով հանդարտացնել նրանց...

Նա խորին տատանման մեջ նայեց յուր շուրջը: Նաղելի դեմքը արտահայտում էր անդուլալ անհամբերություն: Վորոնում էր մի յելք, բայց դյուրությունները պակասում էին նրան: Մալխասը ապշած կերպով նայում էր նրա վրա,— նայում էր և ուրախանում էր, վոր յուր տերը վայելում և յերկրի ամենաչքնաղ և ամենաշնորհալիկ սերը:

Նա ցած իջավ բարմոցից, մոտեցավ վրանի վարագույրին, ուշիկ կերպով բարձրացրեց նրա յեղրը, և նայեց դեպի յերկինքը: Դեռ բավական դիշեր կար: Պետք էր ոդուտ քաղել դիշերային խավարից: Վճռեց ինքը գնալ Սամվելի մոտ: Բայց տեսնվել նրա հետ վոչ թե Մամիկոնյանների բանակում, այլ— մի չիղոք տեղում:

Նա կրկին նստեց բարմոցի վրա և, դառնալով դեպի Մալխասը, հարցրեց.

— Դու ծանո՞թ ես մեր կողմերի հետ:

— Այո՛, որիորդ:

— Դու տեսե՞լ ես Մանակերտը:

— Այո՛, որիորդ: Այնտեղից Մանաճիհրը սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի յերեն սարկավագներին նետեց ծովը: Ռշտունյաց Վասակից շատ հեռու չե:

— Գետ ծանո՞թ և այն աղբյուրը, վոր բղխում է Մանակերտի տարածից:

— Այո՛, որիորդ: Այդ աղբյուրը դոյացել է սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի արտասուքներից, յերբ նրա սարկավագներին ծովը նետեցին, և ինքը լաց յեղավ: Աղբյուրի մոտ կա մի վայրենի տանձենի, վորի վտակներից կանայք շորի կտորներ են կախում, յերբ ջերմ ու տենդ ունեն:

— Լավ: Վո՞րքան ժամանակում կարող ես հասնել իշխանի մոտ:

— Ցերեկ ինձ կրկին չբռնեն, դեռ լուսյը չծագած կհասնեմ:

— Գետ չեն բռնի: Կգնաս, կհայտնես իշխանին, վոր նույն «Արտասուքի աղբյուրի» մոտ սպասե ինձ:

Նա տվեց յուր մեսրոպյան թաշկինակը աւրհանդակին, պատվիրելով.

— Այդ նշանը կկապես նիղակիդ ծայրին, և վոչ մի ոչառնդի չի մոտենա քեզ:

Նա կանչեց յուր դրանիկներից մեկին, հրամայելով.

— Տա՛ր այդ մարդուն, ասա՛, վոր դրա զենքերը տան, և չուառով ճանապարհ դնեն:

Մալխասը ծունր իջավ, համբուրեց որիորդի պատմուճանի քղանցքի ծայրը, և ասպա դուրս կեկավ վրանից:

Որիորդը մնաց միայնակ, դոհ և բախտավոր: Կրկին անգամ հանեց մատանին, և խորին հրճվանքով նայում եր նրա վրա: Ցուր վոգևորության մեջ՝ այն աստիճան հափշտակվեցավ նա, վոր մոռեցրեց մատանին յուր բոցավառ շրթունքներին, և նրա աչքերը լցվեցան ուրախության արտասուքով: Այդ լուռ, անբարբառ առարկայից լսում եր սիրելի ձայնը այն եյակի, վոր յուր համար այնքան թանգագին եր, վոր յուր համար անփոխարինելի յեր: Այդ սառն, անշունչ առարկայից ղգում եր նրա շունչի ջերմությունը, և հոգով միանում եր նրա անմոռանալի հիշատակի հետ:

Նա կանչել տվեց յուր հազարապետին, հրամայեց.

— Կպատվիրես, վոր թամբեն իմ նժույգները, տասն թիկնապահներ պատրաստ լինեն ինձ հետ դալու:

— Հիմա՞ — հարցրեց հազարապետը զարմանալով:

— Այո՛, այս րոպեիս:

ԵՐՏՍՈՒՔԻ ՍՂՔԸՈՒՐԸ

Ջնայելով, վոր արևը ծագել եր, բայց այն ձորի մեջ, վորտեղ դանվում եր «Արտասուքի աղբյուրը», դեռ տիրում եր խորին մթություն: Սարերի բարձր գագաթները դեռ նոր ջողջողում եյին առաջին ճառագայթներին նուրբ-վարդագույն լուսով: Ողի մեջ բուրում եր խիստ ախորժելի զովություն, վոր ներշնչված եր ճոխ բուսականության մեջ անուշահոտությամբ:

Շրջակայքը լուռ եր: Լուռ եր և անտառը, վոր տարածվում եր մինչև կապտատույն ծովեզերը: Լանկի յեր լինում միայն նվիրական աղբյուրի տխուր մեղեդին, վոր վողբաձայն հնչյուններով աղմկում եր տիրող լռությունը: Լանկի յեր լինում նա վորպես սգավոր արտի դառն հառաչանք: Վշտացած հայրապետի արտասուքներից գոյացած աղբյուրը և այժմ արտասվում եր...

Նրա մոտ կանգնած եր Աչխենը:

Նաղվելի որիորդի մտահույզ հայացքը դարձրած եր դեպի սգավոր աղբյուրը, վոր, սարդ արծաթափայլ վտակի նման, դուրս հոսելով մի

ժայռի ճեղքվածքից, ցած էր թափվում և, համրուկներով ու դրկվելով յուր ուղին զարդարող դուինղուկն խճերի հետ, արագ վազում էր, և յուր թախծալի չչկլչոնով, կարծես, տանում էր ամերին. «Ամառ բարյա՛վ, մենք այլ ես չենք տեսնվի»...

Մի այսպիսի մենաբարյալ ասելու համար կանգ էր և որիորդը։

Զինված էր նա։ Հոր անդրանիկը լինելով, նա փոխարինում էր և՛ տղայի և՛ աղջկա։ Այդ պատճառով ծնողքը ամեցին նրան այրական կրթություն, թեև Ռշտունյաց որիորդները իրանց քաղաքավարի հետ չեն մնում տղամարդկերից։ Դյութին դրած ուներ մանկականաց տղամարդ, մեջքը տեղել էր պողովատյա զրահի մեջ, ոչ ձեռքում կրում էր մի բնիկ նիզակ։ Այդ դինամարտության մեջ նմանվում էր նա Աքենաս-Գալլասին, որ, կարծես, կանգել էր այցելությունն տրծնելու քարացյալ Նիոբեի արտասուքներից զոյացած աղբյուրին։

Աղբյուրից փոքր ինչ հեռու, ծառերի մթին թավուտների մեջից հաղիվ նշմարվում էին մի խումբ ձիաններ, որոնց սանձարձակ թողել էին արածելու։ Նրանց մոտ յերևում էին և մարդիկ, որոնք պառկած էին խոտերի վրա։ Դրանք որիորդի հետ յեկած մարդիկն էին։

Վարպետ մի մարմնացած անհամբերություն, որի խոքին բարախտունքով, դեռ կանգնած էր որիորդը աղբյուրի մոտ և նայում էր։ Նա մեծ կարոտով անդադար նայում էր դեպի այն կողմը, որտեղից պետք և հայտնվեր Սամվելը։ Ներան հայտնի չեր հայրենի յերկրի հուզիչ դրությունը։ Նա դիտեր, որ իրանց լեռների յուրաքանչյուր քարի, յուրաքանչյուր ծառի յեռևում մի-մի մարդ էր թաղնված։ Ներան ծանոթ էր և Սամվելի անձնավստահությունը։ Ի՞նչներ չեին կարող պատահել... ի՞նչ փորձանքների չեր կարող հանդիպել նա... Ցավ այդ բոլորը ո՞ւմ համար։— Ցուր համար... Վերջին միտքը, որքան ուրախացնում էր Ներան, որքան լցնում էր նրա սիրտը մի անսահման յերանությամբ,— նույնքան և սարսափեցնում էր նրան, յերբ մտածում էր, որ Նա կարող էր յուր սիրտ դառնալ...

Հեռվից յերևացին յերիտ ձիավորներ։ Ցերբորդը, իրրև վայրկ, վազում էր նրանց առջևից վոտով։ Որիորդի դեմքը սկսեց փայլել։ Մինչեվ նրանք կմոտենային, մինչև կատուները, թեև ոչքեր են, այդ մի քանի րոպեն հավիտենականության չափ յերկար թվենցավ նրան։

Ներանք փութացրին ձիանների ընթացքը։ Այդ մեջտեղն որիորդի մարդիկը, որ հանդստանում էին ծառերի ներքո, խելոքն վոտքի յելան և, յարելով իրանց աղեղները, նետերի ծայրը դարձրին դեպի յերկիրները։ Մեկը ձայն արձակեց, այն հարցական յեղանակով, որ տալիս և անծանոթը անծանոթին, յերբ հանդիպում են ճանապարհի վրա.— «Ի՞նչ կա՞մ թե բարեկա՞մ»։— «Բարեկա՛մ»,— յեղավ պատասխանը։

Որիորդը դեռ անշարժ կանգնած էր աղբյուրի մոտ։

Ձիաններն այժմ գալիս էին բոլոր թափով, չհայելով, որ լեռնային

քարակարիատ ճանապարհի վրա՝ կարելի չէր ամեն րոպե սայթաքել, և ամեն րոպե դեպի ցած կլորվել։ Ճերը բոլորովին մոռացան, որ իրիկուն էր։ Այդ միջոցին մեկը ցատկեց ձիուց, դրկեց նրան, բացականչելով.

— Ա՛խ, Աչխեն, ի՞նչով կարող եմ մխիթարել քեզ...

— Նրանով, որ դու այժմ իմ դրկումն ես...

Ճանապարհի բոլոր ընթացքում, Սամվելը անդադար առնչվում էր այն մտածություն ներով, թե ի՞նչ դրության մեջ կգտնե յուր Աչխենին, կամ ի՞նչով կարող կլինի մխիթարել նրան, այն ցավալի անցքերից հետո, որ կատարվել էին նրա հոր տան մեջ։ Նա յուր մտքում հորինել էր սիրտ խոսքերի մի ամբողջ շարք, որոնցով պետք է աշխատեր հանդստացնել նրա վշտացած սիրտը։ Բայց այն խոսքերից և ոչ մեկը պետք չեղավ, երբ լսեց Աչխենի պատասխանը։ Սիրելի աղջիկ դրկում մոռացվեցան բոլորը։

«Արտասուքի աղբյուրից» ոչ այնքան հետու, անուշահոտ յեղևիններով ստվերախիտ հովանիի ներքո, կանաչ խոտերի վրա, սփռված եր մի դորդ։ Սամվելը և Աչխենը առանձնացան այնտեղ։ Իսկ իշխանի հետ յեկած մյուս յերիտ հոգիները, որոնցից մեկը Հուսիկն եր, մյուսը Մալխասը, դնացին որիորդի մարդիկներին մոտ։

Թե՛ Սամվելը, թե՛ Աչխենը՝ յերկուսն էլ լուռ եյին, ա՛յն սրտատրոփ լռությամբ, որ տեղի յե ունենում հոգևոկան խորին հուզմունքների ժամանակ։ Յերկուսն էլ հիացած կերպով նայում եյին մեմյանց վրա և, կարծես, խոսք եյին որոնում իրանց զգացմունքները արտահայտելու։ Սամվելը առաջինը ընդհատեց լռությունը։

— Լսի՛ր, Աչխեն, յես ինձ շատ դժբախտ եմ համարում, որ յերկար անջատումից հետո, յերբ կրկին պատահում և հանդիպել մեմյանց, յես, փոխանակ սքանչանալու քո սիրո քաղցրությամբ, փոխանակ վայելելու այն անսպառ յերանությունը, որ բաշխում և սիրված աղջիկը սիրող յերիտասարդին,— ստիպված եմ քեզի հետ խոսել վշտի և դառնության խոսքեր։ Մենք հանդիպում ենք մեմյանց, որպես յերկու ոգեվորներ։ Դու կորցրած մայր ունես, իսկ յես— կորցրած հայր։ Ես մայրը կորավ յուր առաքինության համար, իսկ իմ հայրը կորած է յուր չարագործության համար։ Մտնելով քո հայրենի յերկիրը, յես անցա կրակի և մոխիրների միջով։ Ճնշ տեսա քո քաջ նախահարց պատկառելի ամրոցների ավերակները։ Ամոթը և նախատինքը պատում է ինձ, յերբ մտածում եմ, որ այդ բոլորը կատարվել է իմ հոր ձեռքով... Այն մարդու ձեռքով, որին հարսը պետք է լինես դու...

— Ինչո՞ւ համար է այդ բոլորը, Սամվել,— ընդմիջեց որիորդը։ Դու, կարծես, վորպես մի հանցավոր, յեկել ես քեզ արդարացնելու իմ առջև։ Այն որը ինձ համար մահ կլիներ, յեթե յես ամենափոքր կասկած ունենայի քո մասին։

— Իսկ իմ կողմից հանցանքը այն կլիներ, եթե չես աշխատելի արդյունավետ քո առջև: Ես պիտի, թե վորքան բարի չես դու, Աշխեն, չես պիտի, թե վորքան բարձր ես դու հասարակ մահկանացուներից: Ինձ հայտնի չէ, վոր քո անսահման սիրտ մեջ՝ ամեն հանցանք իմ կողմից ինքն իսկ ինքյան կվճռվեանա վորպես մի դյուրավառ նյութ՝ կրակի սպառող բորբոքման մեջ: Բայց խիղճս հանդիստ չէ, Աշխեն: Ես կանխատես պիտանի դարձը վտանգը: Ես տեսնում եմ, թե վորպիսի չարադուշակ թուխպ պատմում է քո հայրենի լերկրի վրա: Ես չուտպեցի զգուշացնել թե՛ քեզ և թե՛ քո հորը: Բայց վտանգը ավելի շուտ հասավ ձեզ, քան թե իմ նամակը...

— Գուցե այդպես եր ասուծո անորինություն,— պատասխանեց որիորդը հանդարտ կերպով:— Թողնենք այդ, Սամվել: Դու ինձ այն ասա՛, թե ինչո՞ւ համար լեկար, և այժմ ո՞ւր ես գնում:

Հարցը շատ ուղիղ դրվեցավ: Սամվելը մնաց շվարյալ դրության մեջ: Ձգիտեր՝ ինչ պատասխանել: Բուռնական շփոթությունից հետո, կրկնեց նա.

— Ինչո՞ւ համար լեկա... և այժմ ո՛ւր եմ գնում... Դա չափազանց տխուր հարց է, սիրելի Աշխեն, չես դժվարանում եմ պատասխանել: Քո առջև պետք է բաց անել վարագույրը այն սոսկալի դործողություններին, վոր կատարվում են և պիտի շարունակվին կատարվել մեր հայրենյաց սվերակներին վրա: Այնուհետև դու ինքդ կհասկանաս, թե ինչո՛ւ համար լեկա, կամ ո՛ւր եմ գնում:

Փակվածք լինելով հայրենական լեռների խլության մեջ, Աշխենը չատ փոքր տեղեկություններ ուներ դրսի աշխարհից: Նրան թեև հասել եյին բոթաթեք ձայներ, բայց այդ ձայները դեռ ևս այն աստիճան անորոշ և մութ եյին՝ նրա համար, վոր տակավին մի պարզ հասկացողություն չեր կարողացել կազմել, թե ի՛նչ են կամենում անել չար մարդիկ, վոր մրրկածուփ խռովության մեջ եյին դրել լերկիրը: Սամվելն սկսեց մի քան միջն պատմել թե՛ կատարված և թե՛ կատարվելիք դործերը: Որբին դառնությամբ նկարագրեց նա յուր հոր և Մերուժան Արծրունու ուրացությունը, բացատրեց այդ լերկու դավաճանների բոլոր չար դիտավորությունները և նրանց հանձն առած ամոթալի պաշտոնը՝ քրիստոնեության վոչնչացնելու և պարսից կրոնը Հայաստանում տարածելու մասին: Պատմեց նրանց դաւանադրծության Արշակունյաց արքայական դահը կործանելու և Հայաստանում մի նոր թագավորություն հիմնելու մասին՝ պարսից դերիշխանության ներքո: Պատմեց նրանց դրած հանդիսավոր ուխտը պարսից Շապուհ արքայի առջև, և պարսիկ զորքերով Հայաստան դալը՝ Շապուհի ցանկությունները կատարելու համար: Նկարագրեց նրանց ձևոք առած բարբարոսական միջոցները, նրանց անգթությունները, իրանց նպատակին հասնելու համար: Մի խոսքով, հաղորդեց բոլորը, ինչ վոր գիտեր ինքը, և իր վոր նախատեսնում եր ինքը:

դար-

Որիորդը խորին վրդովմունքով լսում էր: Նրա վառվռուն աչքերը արտահայտում էին զգայուն սրտի թե՛ ցավը և թե՛ բարկությունը: Նրա դեղնցիկ դեմքը հարյուր անգամ փոխեց յուր գույնը, մինչև Սամվելը ավարտեց աղետալի պատմությունը:

— Իսկ այդ բոլոր չարիքների դեմ ի՞նչ են մտածում անել հայոց նախարարները,— հարցրեց նա խռովյալ ձայնով:

— Վոմանք հուրացողներից կոմն են: Իսկ հայրենի պահին և յեկեղեցուն հավատարիմ մնացողները ուխտել են՝ մի մարդու պես կանգնել, կա՛մ մեռնել, կա՛մ ազատել հայրենիքը սպառնացող վտանգից:

Հետո պատմեց նա հավատարիմ մնացած նախարարների նախապատրաստությունները, Մուշեղի ապարատեսության կոչվիլը, հայոց տիկնոջ, փառանձեմի, հրավերը՝ վերնվելու ընդհանուր քննամու դեմ, և այլն: Ուրախ պատմությունը վերջացրեց հեռվյալ խոսքերով:

— Այժմ կատեմ քեզ, սիրելի Աշխեն, թե ինչո՞ւ համար յեկա, կամ ո՞ւր եմ գնում:— Յերկու սիրելիներ դրած են իմ առջև. մեկը, վտանգի մեջ գտնվող հայրենիքը, մյուսը, վտանգի մեջ գտնվող ինը— դո՛ւ: Յերկուսն էլ ինձ համար հավասար չափով պաշտելի յեն, յերկուսն էլ ինձ համար հավասար չափով անգնահատելի յեն: Յերկուսի ձայներն էս կուշում են ինձ: Յերկար յես տանջվում էյի այն մտքով, թե դեպի ո՞րը դիմեմ: Յերկուսի համար էս յես ուխտել եմ անկեղծ անձնազոհություն: Բայց իմ զղացմունքները դժվարացնում են ինձ վճռել, թե ո՞րին պետք է նվիրել առաջին զոհը:— Ահա՛, իմ սրտագին ըղձերը, իմ ամենանվեր փափագները թափում եմ քո առջև, սիրելի Աշխեն, դու ցույց տո՛ւր ինձ ճանապարհը, թե դեպի ո՛ր գնամ:

— Դեպի հայրենիքի փրկության դործը,— պատասխանեց որիորդը վոգևորված ձայնով:— Դու ինձ արժան չես լինի, Սամվել, յեթե քո սրյունը չխառնես այն անբավ արյան հեղեղների հետ, վոր պիտի թափվին մեր աշխարհի ազատության համար: Յեվ վոչ յես արժան կլինեմ քեզ, յեթե նույնը չանեմ...

— Դո՛ւ,— բացականչեց Սամվելը, և նրա տխուր դեմքը վայրկեց անսպասո ուրախությամբ:— Թույլ տո՛ւր դրկել իմ հրեշտակին, վրեժխնդրության և արդար բարկության հրեշտակին...

Ներանք դրկվեցան:

— Աշխարհի բոլոր յերանությունները չեյին կարող այնպես մխիթարել ինձ, վորպես այդ խոսքը, վոր թռավ քո շրթունքներից, սիրելի Աշխեն:— Այդ խոսքը լցնում է իմ սիրտը մի սրբազան հպարտությամբ, վոր յես վայելում եմ հայոց քաջաղնուհիներից ամենաընտրյալի սերը:

— Կղնամ, Սամվել, անպատճառ կղնամ,— կրկնեց որիորդը ավելի ջերմ կերպով:— Իմ մայրը կորավ, հայրս գնաց վտրոնելու մորս: Զգիտեմ, կվերադառնա՛, թե վոչ: Մեր լեռնականները սաստիկ հուզման մեջ են, յես հաղիվ կարողանում եմ զսպել նրանց կատաղությունը: Ներանք

արբուսը ելքին իմ մորը: Մի մասը կվճռանեմ մեր յերկիրը պահպանութեան համար, իսկ մի մասը ինձ հետ առնելով, կդնամ և իմ խուսրով կմխանամ այն բանակի հետ, որը պիտի դուսարվի Փառանձեմ. տիկնոջ չուքը: Ի՛ղ հայոց տիկինը մի որևէրդ դորապետ ևս ունենա յուր քաջերի մէջում:— Այդ ներան կուրախացնե...

Սամվելը այժմ սկսեց ավելի յուրջ կնրպոսվ յուր համակրութիւնը հայտնել որևէրդի դիսաւորութեան վո՛չ միայն վերին աստիճանի հերոսական բնավորութիւն ունենալու մասին,— այլ բացատրեց նրա ձևոնարկութեան և՝ անհրաժեշտութիւնը, ասելով.

— Ցնեթե դու այդ մտքին չդայիր, ևս ինքս պետք և խնդրելի քեզանից այդպես անել, սիրելի Աչխեն: Թե՛ իմ հայրը և թե՛ Մերուժան Արծրունին պատրաստ Շապուհ Թաղավորից հատկապես հրահանգներ են առացել նախարարների կանանց և զաւակների մասին, որ ամեն տեղ ձերբակալեն նրանց և պահեն առանձին բնդհերում. մինչև նրանց ամուսինները անձնատուր կլինեյին: Ցնչ քո մորը այդ նպատակով են տարել: Դու մի բախտով ազատվեցար, սիրելի Աչխեն: Ցնեթե դու հորդ հետ վորսի դնացած չլինեյիր, յնեթե դու այն դիշերը, յերբ նրանք պաշարեցին ձեր ամրոցը, այնտեղ դտնվեյիր, ևս անպատճառ քեզ կորցնելու դժբախտութիւնը կունենայի, վորովհետև քեզ ևս կտանեյին: Հայոց նախարարներին հայտնի յև հիշյալ հրահանգը, այդ պատճառով շատերն իրանց ընտանիքներին հետ շտապում են ազատտան դտնել դլխավոր բանակում, հայոց տիկնոջ մոտ:

Վերջին խոսքերը, յերևի, վիրավորեցին որևէրդի անձնասիրութիւնը, և նա բավական ազդու ձայնով պատասխանեց.

— Ցնես չեմ դնում հայոց տիկնոջ բանակը ապատտանի կամ վախտաստի տեղ վորոնելու, Սամվել: Ցնես դնում եմ Ռշտունյաց վոգբրիկ ուժերը խառնելու հայոց բնդհանուր դինվորութեան հետ: Ցնեթե հարկավոր լիներ թագչել և իմ անձը միայն պահպանել,— դրա համար մեր լեռներում շատ ամուր տեղեր կան: Թե ի՛նչ հրահանգներ են առացել Շապուհից քո հայրը կամ Մերուժան Արծրունին,— այդ ևս չդիտեմ, ևս այժմ միայն յուում եմ քեզանից: Բայց այնքանը հաստատ դիտեմ, վոր յեթե նրանք ցամաքի կողմով մոտենային մեր ամրոցներին, վո՛չ միայն տիրել չեյին կարող, այլ թե՛ իրանք և թե՛ իրանց բերած պարսիկ զորքերը կանհետանային մեր լեռների մեջ: Այսպես ևլ յեղավ, բայց վոչ բոլորովին...

Որևէրդը ավելի մանրամասն տեղեկութիւններ սկսեց թշնամու արշավանքի մասին, քան թե դիտեր Սամվելը: Առաց, իրավ, հարձակման գլխերը թե՛ ինքը և թե՛ յուր հայրը, վորտորդութեան տեսքով, բացակա եյին ամրոցից, և այդ նպատակեց նրանց թշնամու ձևոքը չընկնել: Ամրոցում մնացել եր միայն մայրը փոքրաթիվ բերդապահների հետ: Թշնամին յուր արշավանքը կատարել եր յերկու կողմից, և այդ նպատակով յուր զորքերը յերկու մասն եր բաժանել: Մի մասը յեկել եր ցամաքի ճանապար-

հով, իսկ մյուս մասը ծովային ճանապարհով: Վերջինները պաշարել էին կղզին և, զորեղ ընդդիմադրություն չհանդիպով, կարողացել էին տեր մտնել ամրոցին: Իսկ ցամաքի ճանապարհով յեկածների մեծ մասը ջարդվել էին լեռնային կիրճերի և փապարների մեջ: Նրանցից խիստ սակավներին հաջողվել էր փախչել դեպի Վան:

Սամվելն այժմ միայն հասկացավ այն պատերազմական տխուր յերևույթների պատճառները, որոնք ճանապարհին տեսել էր քայլում հանդիպում և յետին նրան, և այնպես աստիճ կերպով դրավում էին նրա ուշադրությունը: Նա դրկեց որիորդին և խիստ դղրդված ձայնով բացականչեց.

— Հավատում եմ ձեր ահռելի լեռներին, հավատում եմ ձեր մթին անտառներին, հավատում եմ և ձեր լեռնականներին քաջությանը, սիրելի Աչխեն, վորովհետև իմ անձի վրա փորձեցի նրանց զորությունը...

— Ի՞նչպես,— հարցրեց որիորդը, ազատվելով նրա գրկից:

— Ձեռ վոտք դրի ձեր հողի վրա 300 հոգով, իսկ այժմ իմ մարդիկ-ներից մնացել են 43 հոգի միայն:

Որիորդը դունաթափվեցավ:

— Մի թե կարելի՞ յե այսպես անզգույշ լինել, Սամվել,— ասաց նա շփոթված ձայնով:— Ինչո՞ւ նախապես իմացում չտվեցիր ինձ քո գալուստաին: Ինչո՞ւ կորցրիր զուր քո մարդիկը:

— Ձեռ մի քանի րոպե առաջ ասացի, վոր նամակ եյի գրել, բայց նամակը քեզ չեր հասել:— Այդ Թողնենք,— խոսքը փոխեց նա,— մոռացած քառասուն և յերեք հոգին դարձյալ շատ բավական են ինձ համար՝ դնալու այնտեղ, ուր յես ցանկանում եմ...

Վերջին խոսքերը այնպիսի մի հանդուգն արտասանեց նա, վոր որիորդը սոսկալած յեղավ հարցնել.

— Ուո՞ր պիտի դնաս:

— Հորս մոտ...

— Դու տակավին նրան հա՞յր ես համարում, Սամվել,— դոչեց որիորդը, և զայրացած կերպով յերեսը շուռ տվեց:

— Այո՛, Աչխեն: Ձեռ տակավին սիրում եմ նրան: Ձեռ պետք է տեսնվելիմ նրա հետ, անպատճառ պետք է տեսնվելիմ: Ձեռ դեռ ևս հույս ունեմ, վոր իմ լացով և արտասուքով կարող կլինեմ դարձնել նրան յուր չար ճանապարհից: Իսկ յերե՛ք չի հաջողվի ինձ, այն ժամանակ...

— Այն ժամանակ ի՞նչ կանես:

— Այդ մի՛ հարցրու, սիրելի Աչխեն, աղաչում եմ քեզ, մի՛ հարցրու:

Որիորդը մնաց մտատանջության մեջ: Այսպիսի պատասխան նա չեր ազատում, և վոչ կարող եր յերևակայել, թե կա աշխարհում մի բան, վոր Սամվելը դիտե, և նրանից թաղցնում է: Նա Սամվելի սիրտը յուր սիրտն եր համարում և նրա միտքը յուր միտքն եր համարում: Ուրեմն ի՞նչն եր ստիպում նրան ծածկամիտ լինել, և ո՞ւմ մոտ,— յուր մոտ:

— Ձեռ չեմ հարցնի, Սամվել, թե դու ի՞նչ պիտի անես,— ասաց նա

վշտացած ձայնով,— բայց կասեմ, վոր մտալ մտքեր են թաքնված քո խոսքերի մեջ...

Սամվելի ժպիտը ավելի դղրդաց նրան, յերբ հեղնությամբ պատասխանեց.

— Ես էլ իմ խոսքերի մեջ ծածկյալ մտքեր կան, կարող ես հավատացած լինել, սիրելի Աշխեն, վոր նրանք մտալ չեն, այլ, ընդհակառակը, շատ պարզ ու պայծառ են... Ես այժմ այդքանով միայն կարող եմ հանդուրժացնել քեզ, վոր յերբևիցե վատ կամ անաղնիվ դրծ չեմ կատարել:— Իսկ իմ անհարժեշտ և... —

— Ի դուր ժամանակ պիտի կորցնես, Սամվել: Դու դեռ ես հույս ունես, վերջապես ասում ես, քո լացով ու արտասուքով պիտի կարողանաս դարձնել քո հորը յուր շար ճանապարհից: Բայց ինչո՞ւ չես մտածում, վոր նա ես կաշխատե քաշել քեզ յուր ճանապարհի վրա: Ես բնավ տարակույս չունեմ, վոր յերբ դու կենդրկայանաս նրան, նա անպատճառ կաւաղարկե քեզ ալակից իրան: Դու, ի հարկե, կմերժես: Այն ժամանակ, վերջապես նրան խոչընդոտ չդառնաս, կկալանավորե քեզ, կղնե բանտը, և այսպիսով կդրկե քեզ քո բոլոր ձեռնակուբյուններից, վոր ավելի կարևոր են:

— Նա այդ ասոիճան անգութ չի լինի:

— Ձեզ դրանից ավելի անգութ կլինի: Նա՛, վոր չխնայեց իմ մորը, յուր հարազատին, յուր ալյունակցին, յուր քրոջը, անտարակույս, չի խնայի և հարազատ վորդուն:

Բայց ժամանակ չես ել չեմ խնայիլ... յուր մտքում ասաց Սամվելը և, դառնալով դեպի որխորդը, ավելացրեց.

— Վատահ յեղի՛ր իմ խոհեմությանը վրա, սիրելի Աշխեն, յես մինչև այնահագը չեմ հասցնի, վոր նա ինձ բանդարկե:

Որխորդը դեռ վոչ բոլորովին հանդիստ եր:

— Ի՞նչ և մտածում քո մայրը,— հարցրեց նա:

— Իմ մայրը բոլորովին կամակից և հորս հետ: Բեզ հայտնի չե նրա փառասիրությունը, քեզ հայտնի չե և նրա տենչությունը դեպի առհասարակ բոլոր Աբշախունները: Շապուհը խոստացել և նրա յեղբորը, Մերուժանին, տալ հայոց թագավորությունը, յերթե կատարելու լինի պարսից ցանկությունները: Այդ խոստումնքը, վորի իրագործման մասին մայրս մեծ հույսեր ունի, բոլորովին խնդքից հանել և նրան: Նա այժմ պատրաստ և ամեն բանի համար, և՛ պարսից կրոնը ընդունել, և՛ քրիստոնեությունը ջնջելու հող տանել, մի խոսքով ամեն ձեռնարկություն հանձն առնել, միայն թե յուր յեղբայրը հայոց թագավոր լինի:

— Իսկ քո հորը ի՞նչ և խոստացել Շապուհը:

— Հայոց ազատասիրությունը:

— Մայրդ դիտե՞, վոր դու դնալու յես հորդ մոտ:

— Ինչպես չէիտե։ Նա ինքը կարդադրեց իմ ճանապարհի բոլոր պատրաստութիւնները, և այնքան չքեղ, այնքան փառաւոր հանդերձանքով, որ արքայավայել պետք եր համարել։ Նա ինքը կազմակերպեց իմ ամբողջ ասպետութիւնը, իմ համհարզների բազմութիւնը, որոնք կորան ձեր անտառների մէջ։ Ցեղ չես շատ ուրախ եմ, որ ազատվեցա նրանցից։ Նրանք ինձ համար մի անտանելի ծանրութիւն էին։ Պետք է ընդհակառակը լինել ձեր լեռնականներից, որ իմ բեռը թեթևացրին...

Արևը արդեն լցրել եր փոքրիկ ձորակը յուր ջերմ ճառագայթներով, որից բավական անցել եր։ Նրանք տակավին խոսում էին։ Որիորդի դերը վորոշված եր։ Բայց Սամվելինը դեռ մնում եր տարակուսական։ Աչխենը վոչինչ յերկիւղութիւն չուներ նրա անկեղծութեան մասին, դիտեր, թե վորքան ազնիվ և հավատարիմ եր նա։ Բայց վախենում եր նրա կյանքի մասին, ա՛յն կյանքի, վորի հետ կապված եր և յուր կյանքը։ Սամվելի ձեռնարկութիւնը նրան չափազանց վտանգավոր եր թվում, թեև, մյուս կողմից, նրա խելքի և քաջութեան վրա մեծ վստահութիւն ուներ։ Նա չկասեցրեց սիրված յերիտասարդին յուր նպատակներից, միայն հարցրեց.

— Դու յո՞րը կվերադառնաս։

— Այդ չեմ կարող ասել, սիրելի Աչխեն, վորովհետև չդիտեմ, թե յո՞րը կամ վո՞րտեղ կդտնեմ հորս։ Բայց հուսա ունեմ, վոր շուտով կվերադառնամ։

— Մենք վո՞րտեղ կհանդիպենք միմյանց։

— Այստեղ։ Ցեսս կրկին կգամ քեզ մոտ, և միասին կդնանք հայոց տիկնոջ բանակը։

— Ինձ շատ ցանկալի կլիներ սպասել քեզ, Սամվել, յեթե քո վերադարձը վորոշված լիներ։ Բայց յես հենց այս շարաթ պետք և պատրաստվեմ ճանապարհ ընկնելու դեպի բանակը։ Այնտեղ կտեսնվենք, յեթե աստված անորինել և կրկին տեսնվել միմյանց հետ... Վերջին խոսքերը արտասանելու միջոցին նրա ձայնը դողաց։

Սամվելը զգացվեցավ և նրա ձեռքը առեց յուր ափերի մեջ։

— Վճռավո՛ր և,— ասաց նա ներքին վրդովմունքով։— Մենք կտեսնվենք հայոց տիկնոջ բանակում։ Այն ժամանակ, յես հուսա ունեմ, սիրելի Աչխեն, յերբ առաջին անգամ կհանդիպենք միմյանց, դու կհամբուրես իմ ճակատը և կասես. «դու արժանի՛ յես ինձ»,— և այդ կլինի իմ ամենամեծ վարձատրութիւնը այն վտանգավոր ձեռնարկութեան համար, ուր հայրենյաց նախանձախնդրութիւնը մղում է ինձ... Մեր պատմանները վերջացած են։ Ցես այլևս չեմ ուշացնի քեզ, դիտեմ, վոր քո լեռնցիները անհամբեր սպասելիս կլինեն քեզ։ Գրկի՛ր ինձ, սիրելի Աչխեն, և տուր քո համբույրը և քո որհնութիւնը։ Աստված հլսե անմեղ չրթունքների ձայնը։ Ցես գնում եմ, թշնամու բանակը։ Իմ ճանապարհը և՛ կորստյան և՛ փառքի ճանապարհ է։ Քո համբույրը կվողևորե և թևս կտա ինձ, նրկ

քո արհնութիւնը կիսարատեւ ամեն արհամիրք: Գրկի՛ր ինձ, սիրելի Աչխեն...

Նրանք գրկվեցան: Ցնծալար լուռ արտասուքը հեղեղի նման հոսում էր նրանց աչքերից, բայց անզոր էր լինջացանելու այրվող սրտերի կրակը: Ցնծալար լուռ հեկեկանքը ալեկոծում էր նրանց, և Աբրատասուքի աղբյուրը իւր սիրուր հառաչանքներով ձայնակից էր լինում նրանց դառն հառաչանքներին...

ՀԱՐՑԱՍՏՈՒԹԻՒՆ

Իսկ վահանայ էր քոյրաքեր ի Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպայ, եւ էր նա կին Թարեզնի տեառն Ներսեհայ գաւառին... Իսկ անօրէնն Վահան եւ Մերուժանն հրամայ տային բնբշտակալին (մինչնաբերդին վանայ) զի նեղեսցէ զկինն, եթէ ոչ ասցէ յանձն զօրէնս Մաղդազանցն... Իբրեւ ոչ առնոյր յանձն Համազասպուհի պահել զօրէնս Մաղդազանցն, հանէին ի բաթր աշտարակին... եւ մերկացուցին զնա իբրեւ ի մօրէ, եւ արկեալ կապոտեցին, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. եւ այնպէս մեռաւ ի կախադանէն»

Փաւստոս:

Լուսինը չտապով սահում էր դէպի Սիսական բարձր դագաթները, որ ընկղմված էին խորին, թաւածալ մթութեան մէջ: Հայտնի չէ, թէ ինչո՞ւ նա այնպես զժգոհութեամբ թողնում էր այն գեղեցիկ վայրերը, ուր ամեն դիշեր նկարում էր այնքան աքանչելի պատկերներ: Նրա ներքեւում անհանգիստ կերպով ծփում էր վանա ծովակը: Նա ծփում էր վրդովմունքի սիրտհար, ինչ չուտով պիտի բաժանվի յուր սիրուհուց: Անզուսպ, տարիանքով հանչտակիվել էր նա յերկինից դէմքի գունաթափ չառաւիղները, և չդիզդիզալով գրկվում էր նրանց հետ, համբուրվում էր և, կարծես, յուր ալիքների ոխուր չընկլուսով տակից լիներ, ամբ՛ դնացիք, մի՛ թողնք ինձ խաւարի մեջ...

Բայց նա գնում էր...

Ծովակի արևելեան ափերի վրա դեռ նշմարվում էին մի հինավուրց, քաղաքի բարձր աշտարակները և առանձնաւոր չքնաղարհուեստները: Լուսնի լուսավորութեան ներքո՝ այդ վաղեմի քաղաքը ներկայանում էր վրդովմունքի պատառ կախարդ, ինչ յուր ծերութեան մեջ՝ տակաւին մնացել էր գեղեցիկ, տակաւին մնացել էր հրապուրիչ: Այնտե՛ղ, նրա ողակաւոյց պարանոցների մեջ, այնտե՛ղ, նրա բարձր, կախարանաւոր պարտեզներում,

մի ժամանակ, հայոց մի յերկաստաղեղ թագավորի սիրով, զվարճանում եր աշխարհի ամենամեծ կախարդը—Շամիրամը:

Դա վան քաղաքն եր:

Լուսինը ծածկվեցավ Սիփանի բարձրությունների մեջ և յուր յետևից թողեց մթին խավար: Այլևս չեր յերևում սիրուն քաղաքը, այլևս չեր յերևում փայլուն ծովակը: Լսելի չեր լինում միայն ալիքների խուլ հառաչանքը, վոր դիշերային լուության մեջ հնչում եյին, վորպես մի սգավորի վողբաձայն աղաղակներ:

Լուսնի լուսավորությանը փոխարինեց մի այլ լուսավորություն:

Ուղիղ այն կողմում, վորտեղ կանգնած եր քաղաքը, ոդի մեջ յերևացին բազմաթիվ հրեղեն գնդակներ: Այդ յերևույթը սկզբից այնպիսի տպավորություն եր գործում, կարծես, ամբողջ յերկինքը բոցավառված եր մի ընդարձակ հրդեհով, և աստղերը այրվելով, մեկ-մեկ ցած եյին թափվում: Բայց հրեղեն գնդակները բարձրանում եյին ներքևից և, ոդի մեջ դանազան պտույտներ գործելով, հետո ցած եյին ընկնում: Այնտեղ կատարվում եր մի հանդիսավոր հրավառություն, բայց—ղժոխային հրավառություն...

Հրեղեն տարափը, հրեղեն կարկուտի նման, շարունակում եր տեղալ: Նա հետզհետե աճում եր ավելի վուժով, նա հետզհետե ընդարձակվում եր ավելի յերանդով: Ծերբեմն շրջակայքը դղրդվում եր խառնաձայն աղաղակներից խուլ արձագանգներով: Այդ աղաղակները, վորպես մի զարհուրելի կատաղություն, լսելի եյին լինում հրային սաստիկ ժայթքումներից հետո, վորպես զայրացած յերկնքի աղաղակը լսելի յե լինում կայծակի ահռելի փայլատակումից հետո:

Վանը պաշարված եր:

Այդ կրակը, այդ հուրն ու բոցը թափվում եր դժբախտ քաղաքի վրա: Նրան պաշարել եյին վայրենի ուշուխներները իրանց դրացի սասունցիների հետ: Նա պաշարված եր այդ լեռնականներից, վորպես մի ժամանակ դժբախտ Տրոյան պաշարված եր հելլենացիներից: Նախանձախնդիր հելլենացին կռվում եր ղեղեցիկ Հնդկնեյի պատվի համար, վորին յուր թագավոր ամուսնի հյուրասեր տնից հափշտակեց անամոթ տարփածուն: Իսկ ուշուխները կռվում եյին իրանց աշխարհի սիրելի տիկնոջ համար, վորին անդութ ձևերով հափշտակեց—յեղբայրը:

Լեռնականները, տիրելով մերձակա բլուրներին, նրանց բարձրությունից հուր եյին տանում քաղաքի վրա: Նրանց հրանոթներն ապաշա հրանոթներից նախապատվելն եյին,— հասարակ պարսխոցներ խիստ պարզ կերպով շինված, բայց, չայրվելու համար, շղթաներից չկազմած: Դրանց մեջ դնում եյին կամ ծծումբով տոգորված շորի վառոդներ, կամ նավթի և այլ դյութական հեղուկների մեջ թաթախված փայտի կտորներ, վառում եյին և, պտույտացնելով ոդի մեջ, ձգում եյին դեպի քաղաքը: Վոմանք նույն պարսխոցներով նետում եյին քարեր:

Շատ չանցավ, քաղաքը նուիրակ ունեց ներսէս պատրիարքէն գրկախառնուելու։ Ջանասէր տեղւոյն բարեբաստիկ բոցեր։ Իսկ այդ բոցերը բարձրանում էին և դարձյալ հանդչում էին իրանց տեղում, առանց քաղաքի պարիսպներից դուրս դնալու։— Իրանք ներսի շինվածքների բոցերն էին, որ արդեն սկսել էին այրվիլ։

Քաղաքը պաշտպանող զորքը բաղկացած էր միայն պարսիկներից, որ բնակել էին իրանց հետ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։ Որհատական տաղնապի մէջ, այդ զորքերը այնքան հոգ չէին տանում դրսի թշնամու հետ մաքառելու, որքան աշխատում էին զսպել ներսի բնակիչներին, որոնք առատապէս խռովութիւնով դուրս էին փախչում իրանց տներից, որտեղ որ հրդեհը արդեն սկսել էր ճարակել։ Զորքը փախչում էր, մի դուռ քաղաքացիք բաց անէն քաղաքի դռները և թշնամուն ճանապարհ տան ներս մտնելու։

Բայց հրակը ավելի և ավելի տարածվում էր։ Նախ այրվեցան ախոռանոցների կտուրների վրա դիզած խոտերը, հետո մարագներն ու մթերանոցները։ Շուտիկան յուր բոլոր հարստութիւնով վառվում էր, որպես մի չորի կոյտ։ Հրակը սկսվեցավ առատձագործների խանութներից և այտեղից անցավ դեպի քաղաքացոց տները։ Մարդիկ այլևս հոգ չէին տանում հանդչեցնելու, այլ շտապում էին փախչելու։ Ոմք և դնում էին, որ կողմ և վազում էին, որոնց առջևը փակում էր հրեղէն անանցանելի հեղեղը։ Տարտափած բնակիչների հուսահատ աղաղակները, մխիթարանքի կոթծանվող շինվածքների դղրդյունի հետ, ավելի տատակացնում էին ընդհանուր զարհուրանքը։

Հրդեհի տոկալի լուսավորութիւնը յերևան հանեց մի տոկալի հրեշ, որ քաղաքի հյուսիսային կողմից, որպես մի քարացած, դալարված վիշապ, բարձրացել էր դեպի յերկինքը։ Նա հետզհետե աճում էր, հետզհետե ավելի ահռելի կերպարանք էր առնում, որքան աճում էր տիրող լուսավորութիւնը։ Հայարա հայացքով նայում էր նա դեպի յուր շուրջը հարակից հրային ծովը և, կարծես, նրա մտայղ հայացքը արտահայտում էր այդ խոսքերը. «Չնչի՞ն տարը, որքան կամենում ես կատաղի՛ր, որքան կամենում ես հեռո՛ւ տարածիր քո վայրագութիւնը, բայց դարձյալ քո ալիքները իմ բարձրութիւնը չեն հասնիլ...

Դա Վանա մինչնաբերդն էր,— այն վիմային հսկայ ամրութիւնը, որ բնութիւնը ինքն էր հրաշակերտել։ Դա այն անմատչելի ամրոցն էր, որի աքանչելիքները հայոց ավանդութիւնները շամփրամին էին ընծայում։

Ավելի մոտից նայելով, նա մի այլանդակ ուղտի նմանութիւն ուներ, բայց չոքած ուղտի, որը, որպես մի հսկայավոր ավինքար, կիսով չափ թաղվել էր ծովեզերքի ավազների մէջ։ Վիթխարի դլուխը տարածել էր դեպի արևելք, իսկ ահավոր դոմակը դեպի արևմուտք։ Նրա կրկնակի սարտանները, որ բարձրացել էին մինչև ամպերը, կրում էին իրանց վրա ահագին աշտարակներ և անառիկ ; բրդաձև մարտկոցներ։ Աչխարհի բոլոր զո-

թուքյունները անկարող էին ազդել նրա ապառաժային կողքերի վրա, վոր պողովատի կարծրություն ունեին: Նրա քարեղեն սրտում փորված էին բազմաթիվ սենյակներ, խորին անճաուներ և զանազան սրահներ ու սրահակներ, վորոնք նույնքան խորհրդավոր և նույնքան անվերծանելի էին, վորպես այդ ծածկամիտ սիրինքը:

Տարակուսի սրահակներից մեկի մեջ, ուր մի ժամանակ նստած եր Լինում Շամիրամը, և նրա բարձրությունից նայում եր դեպի Վանա ծովակի կապուտակ հայելին, նայում եր դեպի Վարագա լեռան հրաշալի տեսարանները և հիանում եր Հայոց յերկրի դեղեցկությամբ,— այժմ նույն սրահակի մեջ գտնվում եր մի այլ իշխանուհի:

Բնած եր նա, այնպիսի մի անուշ և խաղաղ քնով, վոր խիստ հազիվ անգամ բարի վոգիները պարգևում են մահկանացուներին: Նա քնած եր առանց հանվելու, յուր շքեղ անկողնի վրա: Գեղեցիկ դեմքը հրդեհի տաքությունից չառագունել եր: Բրունքի մի քանի մարգարիտներ վայլում էին պարզ ճակատի վրա, վոր պսակված եր սև գանգուրներով: Վարդագույն շրթունքները յերբեմն հազիվ նշմարելի կերպով ցնցվում էին, և մի թեթև ժպիտ յուր բոլոր հրապուրանքով վազում եր սիրուն դեմքի վրա: Մանր շնչառությունը ամեն անգամ բարձրացնում եր նրա հարուստ կուրծքը, վորի վրա հանգչում եր պարանոցի զոհարաշարդ մանյակը: Ձերկու ձեռքերի հոլանի բազուկները վոսկյա ապարանջանների հետ՝ կցած էին յերկու յերկաթյա ողակներ, վոր միանում էին մի կարճ շղթայի յերկու ծայրերի հետ: Վոտքերից մեկը նույնպես շղթայած եր: Այդ դրության մեջ՝ նմանում եր նա մի բանդարկված հրեշտակի, վորի հանցանքը հենց յուր անմեղության մեջն եր կայանում:

Հրդեհի կարմրագույն ճառագայթները, ներս ցոլանալով նրա բանդի վայն պատուհաններից, լուսավորում էին դեղեցիկ սրահակը վառվռուն, շլացուցիչ լուսավորությամբ: Այդ սոսկալի լուսավորության մեջ նա ավելի աքանչելի յեր յերևում:

Շրջակայքում տիրող աղմուկն ու խռովությունը արթնացրին նրան: Գլուխը վեր բարձրացրեց, ապշած կերպով նայեց յուր շուրջը: Մի քանի րոպե նա իրան յերազի մեջ եր զգում: Վոչինչ չեր հասկանում: Նրա ականջներին հասնում էին միայն վոտքերի խուլ տրոփյուններ, խառնաձայն աղաղակներ և հուսահատական զառն հառաչանքներ: Նրան այնպես եր թվում, վոր աշխարհի վերջը հասել եր, և տիեզերքը ընդհանուր ալեկոծության մեջ եր գտնվում: Նրա սիրտը սկսեց դողալ: Փորձեց մոտենալ պատուհանին և նայել: Բայց վոտքին կապած շղթան արգելեց: Ազմուկը ավելի սաստկանում եր, և սրահակի մեջ տիրող լուսավորությունը հետզհետե ավելի պայծառ դույն եր ստանում: Նա այժմ սարսափում եր նայելու յուր շուրջը: Ձերկու ձեռքով բռնեց աչքերը և վողբաձայն աղաղակով բացականչեց:

— Տե՛ր աստված, այդ ի՞նչ խռովություն և...

Այդ միջոցին մի անձնավորություն ծանր և հանաստուն քայլերով վեր էր բարձրանում միջնաբերդի քարակոփ սանդուղքներով, վոր փոքված էին միահատ ապառաժի մեջ: Ցերեկն էր լուռ հայացքը դարձնում էր նա դեպի շուրջը կատարվող արհավիրքը, և յերբեմն նայում էր դեպի յուր առջևի խոտորնակի սանդուղքները, վոր ձևոքի լապտերով լուսավորում էր մի ոգա, թեև լապտերի ամենևին պետք չկար: Ցերկար դնում էր նա, մինչև բարձրացավ միջնաբերդի դպրոցը, և կանգ առնց հիշյալ սրահակի դռան մոտ: Նա դլխով նշան տվեց ոգային, վոր ոգան դրսում, խոհ ինքը հանեց դրսումից մի ծանր բանալի, բաց արեց յերիտթյա դուռը և նևրս մտավ:

— Վաղջո՛ւյն, սիրելի Համազասպուհի,— ասաց նա մոտենալով սեղանոյը:— Ցևս կարծում էյի, վոր դու քնած կլինևս, յերևի, դրսի աղմուկը անհանդստացրեց քեզ:

— Այդ ի՞նչ աղմուկ ևս,— հարցրեց սեղկինը խռովյալ ձայնով:

— Ցնծութթյա՞ն աղմուկ, սիրելի Համազասպուհի: Այդ դեռ հարսանեքի առաջին դիշերն ևս,— քո հարսանեքն, սիրելի Համազասպուհի: Տնեսո՛ւմ ևս, ի՞նչպես դևղեցիկ լուսավորված և քաղաքը: Վո՛չ, դու չևս տեսնում, յևս այս բոլորից քեզ ցույց կտամ...

Նա մոտեցավ, բաց արեց սեղկնոջ վոտքի շղթան, բռնեց նրա ձևոքից և տարավ, կանգնացրեց պատուհանի մոտ, ասելով.

— Նայի՛ր...

Կարծես, դժոխքը յուր բոլոր զարհուրանքով բացվեցավ թշվառ սեղկնոջ աչքերի առջև: Նա դողդողաց, թուլացավ և ընկավ անդուր այցելուի բազուկների վրա, վորը դրկեց նրան և կրկին դրեց յուր անկողնի վրա:

Այցելուն Վահան Մամիկոնյանն էր,— Սամվելի հայրը և ուշաթափ յեղած սեղկնոջ հոր յեղբայրը:

Հոկտյատիկ էր նա և ամբարտավան, և, վորպես առհասարակ բոլոր Մամիկոնյանները, ոժտված էր շատ հանելի կերպարանքով: Նրա փոքր ինչ խիտ դեմքը արտահայտում էր հաստատամիտ մարդու քի՛ համառությունը և քի՛ անդթությունը, յերբ այդ պետք էր: Կրում էր պարտիզի նշաններ: Տեսնելով անակնկալ ուշաթափությունը բավական խոտորություն պատճառեց նրան: Նա Համազասպուհին այս աստիճան թուլասիրտ չէր կարծում, այդ էր պատճառը յուր այնպես անզդույշ վարվելուն նրա հետ:

Բայց սեղկնոջ ուշաչնացությունը յերկար չտևեց: Նա բաց արեց յուր լի սրտմտությամբ աչքերը և, դառնալով դեպի յուր հորեղբայրը, ասաց.

— Ա՛յդ եյիր ցանկանում, Վահան... Մեծն այդ աստիճան քարացա՞ծ են քո մեջ մարդկային զգացմունքները, վոր դու ծաղրում ևս հաղարավոր բնականքների լացն ու կոծը, վոր դու առ վաչինչ ևս համարում այդ թշվառների խորովվելը երանց անների ծածքերի ներքո, և նրանց թաղվելը երանց բնակարանների մոխրի մեջ...

— Ինչո՞ւ կես ինձ հանդիմանում, սիրելի Համազասպուհի,— պատասխանեց նա հանդարտ կերպով: Այդ քո ամուսինն է, որ կրակ է թափում քաղաքի վրա:

Տիկնոջ գայրացած դեմքը ավելի դառնաթախիծեցավ:

— Իմ ամուսի՛նը,— բացականչեց նա դողդողուն ձայնով:— Այդ չի՛ կարող լինել, Վահան, նա յուր կյանքում մի մրջյունի անգամ չէ վիրավորել: Բայց արա՛ իմ շղթաները, Վահան, կես այս րոպեիս կզնամ, թեև նա կե, իմ սրտի բոլոր դառնությունը կթափեմ նրա վրա...

— Այո՛, նա կե, յուր վայրենի լեռնականներով պաշարել է քաղաքը:

— Ցնեթե իմ ամուսինն է, անպատճառ ինձ համար է դրծում այդ բարբարոսությունը: Ինչո՞ւ բերնեիր ինձ այստեղ, Վահան, ինչո՞ւ խոտվեցրիր առաքինի մարդուն: Դու ավերակ դարձրիր մեր տոհմերը, և դրանով հե չկարողանալով հագեցնել քո անզգութությունը, դու քո հարազատին, քո արյունակցին գերի վարեցիր: Ինչ եր իմ հանցանքը: Ինչո՞ւ կամ կես այստեղ, այս շղթաների մեջ, այդ քարերեն բանդում, ուր ամենաթշվառ չեղեռնագործներին են միայն աքսորում: Ինչո՞ւ համար եր այդ բոլորը: Նրա համար, որ քաղի և վողորմած մարդուն դաղանության մեջ դնելիր, որ նա զար և այդ դժոխային, այդ դևվական խաղը խաղար դժբախտ քաղաքի հետ...

Նա բռնեց աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ: Նրա արտասուքը ազնեց. Մամիկոնյան իշխանի վրա, որը, զգալով սրտի խոտվությունը, բռնեց նրա շղթայակապ ձեռքը, և խիստ զղացված ձայնով ասաց.

— Այդ հարգելի ձեռքերը, որ մինչ առաջուց են կեղել քաղքեր դրծելու, այո՛, այժմ շղթայի մեջ են, և այդ շղթան դրել է կեղրայրը: Բայց մի՛ նախատիր ինձ, սիրելի Համազասպուհի: Կյանքի մեջ, մանավանդ պատերազմների կյանքի մեջ, լինում են այնպիսի դառն հանդամանքներ, որոնք հայր, մայր, քույր, կեղբայր կամ ուսար,— բոլորը հավասար են, և հավասար կերպով են պատժվում, երբ խոչընդոտ են դառնում մի մեծ ձեռնարկության իրագործմանը, որի մեջն է հասարակաց բարին, որից կախված է նրա ապագա յերջանկությունը: Մենք,— թե՛ կես և թե՛ Մերուժանը,— ծառայում ենք այդ գործին...

— Ո՞րն է այդ գործը, ո՞րն է այդ մեծ ձեռնարկությունը:

— Քեզ հայտնի կե, սիրելի Համազասպուհի, այլևս ինչո՞ւ կես հարցնում:

Տիկնոջ սխուր աչքերը փայլեցան բարկության բոցով: Նա գոչեց.

— Ամո՛թ քեզ, Վահան, որ ամոթալի գործով արատավորում ես Մամիկոնյանների պայծառ հիշատակը... Թո՛ղ այն որը ևս՛ լիներ, երբ դու աշխարհ կեկար... Թո՛ղ քո մայրը քո ծնողքն մի կտոր քար ծնած լիներ, և ոչ քեզ նման մի պատիժ ու պատուհաս հայոց յերկրի համար...

Իշխանը լուռ եր: Նրա ամբողջ մարմնով անցավ մի ցուրտ ռոքտուռ, և

հանդարտ դեմքի վրա յերևացին անորոշ ցնցումներ, որը արտահայտում էին նրա խորին վշտակիզումները:

— Դու ինձ անիծում ես, Համազասպուհի:

— Ուրիշ խոսքերի արժանի չես դու, Վահան: Նա՛, որը թողնում է մայրենի յեկեղեցին, և պարսից հեթանոսական կրոնն և աշխատում տարածել յուր հայրենիքում,— նա՛, որը դավաճանում է յուր թագավորին, և պարսից բարբարոսական իշխանությունն և կամենում հաստատել յուր հայրենիքում,— նա՛, որը կրակով և արյունով վոչնչացնում է հայրենի յերկիրը,— նա մի՛յն անիծքի յե արժանի, Վահան: Կանիծե՞ն քեզ հազարավոր մայրեր, որը պիտի զրկվին իրանց վորդիներից... կանիծե՞ն քեզ հազարավոր ամուսիններ, որը պիտի այրի մնան... կանիծե՞ն քեզ հազարավոր քույրեր, վորոնց յեղբայրները պիտի ընկնին նորքին հոխիներում... կանիծե՞ն քեզ հազարավոր մանուկներ, որը պիտի վորբ մնան... կանիծե՞ն քեզ ապագա սերունդը, քանի որ կհիշեն չար մարդու չար գործերը...

Այդ խոսքերը կայծակի նման չանիթում էին իշխանի սրտին:

— Այո՛,— պատասխանեց վշտալի ձայնով,— այդ բոլոր դժոխքը պետք է կատարվին... և յես շատ ցավում եմ, որ պետք է կատարվին... Բայց սակայն այդ դժոխքի մեղավորությունը չի լինի... Թո՛ղ նորին և ապագա սերունդը անիծե ինձ: Բայց իմ խիղճը հանդիստ է: Յես համոզված եմ, որ ինչ գործ չեմ կատարում: Ինչո՞ւ յես դու, Համազասպուհի, մոռանում անցյալը, ինչո՞ւ յես դու մոռանում պատմությունը,— ամենամոռ ժամանակների ամենալի պատմությունը: Ջերը Տիրանը, մեր այժմյան աքսորյալ թագավորի հայրը, կամենալով խաղաղ ջնջել Արծրունի և Ռշտունի նախարարների ամբողջ տոհմերը, յերբ բոլորին կոտորել տվեց, առանց խնայելու սեռի և հասակի,— ո՞վքեր էին այն յերկու մանուկները, որը միայն ապրած էին մնացել ընդհանուր կոտորածից:

— Մեկը Տաճատ Ռշտունին էր—իմ ամուսնի հայրը, մյուսը Շավասպ Արծրունին էր—Մերուժանի հայրը:

— Այո՛, այդ յերկուսը միայն կենդանի մնացին յերկու նախարարական մեծ տոհմերի բազմանդամ ներկայացուցիչներից: Բայց յերբ այդ յերկու մանուկներին էլ դահիճները բերեցին Տիրանի առջև մորթելու,— ո՞վքեր էին, որ մեկի սրտերը ճեղքում հարճակիզեցան արյան հրապարակը և ապաստանին անմեղ մանուկներին:

— Մեկը քո հայրն էր՝— Արտավազդը, մյուսը քո յեղբայրն էր՝— Վասակը:

— Այո՛, Համազասպուհի, մեկը իմ հայրն էր, մյուսը իմ յեղբայրը: Այդ յերկու մանուկներն պատճառով, նրանք թողին Տիրանի ծառայությունը, թողին իրանց հայրենի ժառանգությունը—Տարոնը, և ամբացան Տայոց լեռները մեջ: Այնտեղ մանուկներին ընծայեցին, մեծացրին, և իրանց աղջիկներին նրանց կնության տվեցին: Շավասպից ծնվեցավ Մերուժան Արծրունին, իսկ Տաճատից Գարեգին Ռշտունին—քո ամուսինը: Ընդ այս-

պես կրկին չարունակվեցան յերկու րնաջինջ յեղած նախարարությունները:

— Ցնս չեմ հասկանում, ինչո՞ւ համար ես հիշեցնում ինձ այդ բոլորը,— ընդհատեց ալիկինը:

— Նրա համար, Համազասպուհի, որ Աբշահունիների տան վրա աքյուն կա, և՝ աքյունը պետք է աքյունով մաքրվի...

— Բայց՝ որչ անմեղ ժողովրդի աքյունով:

— Ցեվ անմեղ ժողովրդի աքյունով, յերբ նա հմայարար միջամտությունն է դործում, և պաշտպան և հանդիսանում Աբշահունիների վչացած, անբարոյականացած տանը, որից յնքն վաղուց աղաւոված լինելինք, ավելի բախտավոր կլինելինք՝ թե՛ մենք և թե՛ մեր աշխարհը:

— Ցնորքնե՛ր են պատվում քո դլխով, Վահան,— ասաց ալիկինը դայրացած ձայնով:— Կիրքը, առնությունը, անդուսպ վրնժխնդրությունը կուրացրել են քեղ, և խլել են քեղանից ամեն բան, ինչ որ մարդկային է, ինչ որ աստվածահաճո յե: Ասա՛ ինձ, ի՞նչով և մեղավոր Տիրանի վորդի Աբշակը, մեր ներկա դժբախտ թագավորը, որ այժմ հնձում է Ամուշ բերդի մեծին բանդերում,— ի՞նչով և մեղավոր նա, որ յուր հայրը այսպես կամ այնպես և վարվել:

— Նրանով, սիրելի Համազասպուհի,— պատասխանեց իշխանը, դառն կերպով ծիծաղելով,— որ նրա ձեռքերն ևս մաքուր չեն արյունից: Մի՞թե անձնասիրություն ունեցե՛ր, Համազասպուհի:— Ո՞վ ապանել ավելց քո հորը, կամենում եմ ասել՝ և իմ յեղբորը:

— Աբշակ թագավորը:

— Ո՞վ կատորել ավելց մեր վեհատ Կամսարականների ցեղը և ազատ ձեռքով հավիտանեց նրանց Ցերվանդաշատ քաղաքը և Արտաշերես ամրոցը:

— Աբշակ թագավորը:— Բայց դրանով ի՞նչ ես կամենում ապացուցանել, Վահան: Ցո և Մերուժանի սպանությունը Աբշահունյաց թագավորների դեմ չե, այլ թագավորության դեմ է: Հասկանո՞ւմ ես, Վահան: Տիրանը կամ նրա վորդի Աբշակը կարող եյին վատ թագավորներ լինել: Բայց ի՞նչով են մեղավոր նրանց ժառանգները: Գուցե Աբշակի վորդի Գագիկը շատ լավ թագավոր կլինի մեզ համար:

— Սխալվում ես, Համազասպուհի, ոձից ճուկն չի ծնվի, և վոչ դայլից դառն:

— Դու յես սխալվում, Վահան: Ասա՛ քեղանից ծնվել և Սամվելը, վոր ամենապատվական յերիտասարդ է:

Հավիտ Ցե ամբողջ աշխարհում կարող եր դտնվել մի տրտած, վոր համարձակվեր այնպես յերես առ յերես և այնպես հծու կերպով նախատել այդ դառոր, անձնասեր իշխանին, և ինքը մնար անպատիժ: Բայց Վահանը վո՛չ միայն հարդում եր նրան, այլև սաստիկ սիրում եր: Ամենքը դիան բոլոր աղջիկների մեջ հայտնի յեր Համազասպուհին՝ թե՛ յուր բարձր

տաղքինությամբ և քե՛ յուր խելքով: Այդ եր պատճառը, վոր վայելում եր բոլորի սերը: Բայց իշխանը, նկատելով, վոր վիճաբանությունը խիստ կերպարանք և ստանում, դանցաուության տվեց յուր հարցադատից կըրած վիրավորանքը, ասելով.

— Սամվելը իմ վարդին չի լինի, յերե՛ ինձ չի հետևի... Բայց այդ թողնենք, մենք հետաքրքրում ենք հարցից, Համազասպուհի: Իմ բերած պատգույցները Տիրանի և Աբշահի անկարգ վարմունքների մասին, միայն այն նպատակով եր, վոր քեզ ցույց տամ, թե՛ յես և թե՛ Մերուժանը իրավացի պատճառներ ունենք Աբշահունիներին առնելու: Նույն իրավացի պատճառները ունեցիր ավելի դու՛ս, Համազասպուհի, վորովհետև Աբշահը քո հայրասպանն և: Նույն իրավացի պատճառներն ուներ և քո ամուսինը, վորովհետև Աբշահունիները կոտորել տվին նրա ամբողջ աղգատոհմը: Բայց թե՛ դու և թե՛ քո ամուսինը՝ վո՛չ միայն հավատարիմ ես մնացել ձեր նախնիքը կոտորողներին, այլ մինչև անգամ ամենայն համառությամբ պաշտպանում ես նրանց: Ով վոր նրանց պաշտպանն և, մե՛նք—թշնամին և: Ցեվ թշնամու հետ՝ մենք կվարվենք թշնամաբար: Այդ եր պատճառը, վոր յես և Մերուժանը կործանեցինք ձեր ամրոցները և քեզ այստեղ ղերի բերինք, Համազասպուհի:

— Ինչո՞ւ համար բերեցիք:

— Վոր քո ամուսինը անձնատուր լինի:

— Ահա՛ տեսնո՞ւմ ես, վոխանակ անձնատուր լինելու, նա այրում և Մերուժանի քաղաքը, և մենք այս րոպեիս դառնում ենք հրեղեն ծովի մեջ: Ձեր վայրենությամբ ի՞նչ չահեցաք, Վահան,— ավելի վոչինչ, քան թե բորբոքեցիք մի ներքին, արյունահեղ պատերազմ: Ցեվ այդ պատերազմը կշարունակվի, և ավելի դարհուրելի կերպարանք կառնա, քանի վոր դուք չեք դառնա ձեր չար ճանապարհից:— Կրկնում եմ, ինչ վոր մի քանի րոպե առաջ ասացի. աշխատել վոչնչացնելու քրիստոնեական կրոնը, աշխատել կործանելու հարազատ թագավորության դահը,— դա միայն դավաճանների և մատնիչների դործն և: Թե՛ յես և թե՛ իմ ամուսինը դավաճաններին ոչնակից չենք լինի...

— Իզուր ես այսպես մտածում, Համազասպուհի: Մենք, կամենում եմ ասել՝ թե՛ յես և թե՛ Մերուժանը, մեծ հանցանք կդործած կլինեինք, յերե՛ մեր պետությունը ա՛յն լիներ, վորպես դու յես կարծում, վոչընչացնել կրոնը: Մենք աշխատում ենք վերադարձնել մեր հին կրոնին, մեր նախահարց սիրելի սովորություններին: Մեր ժողովրդի մեծ մասը տակավին յուր հին կրոնին և հետևում, և խորհելով խորհում և քրիստոնեությունից: Ի՞նչ ավելց մեղ քրիստոնեությունը:— Այդպիսը մնայն, վոր մոտեցրեց մեղ խարեբա բուդանդացիներին, և հեռացրեց, թշնամացրեց մեղ մեր վաղեմի բարեկամ և դաշնակից պարսիկներից հետ:

— Մի՞թե կարելի՞ չե, Վահան, այդպես քաղաքական նկատումներով նայել կրոնի վրա և նրան զոհաղան չահերի խաղալիք դարձնել:— Վորով-

հետև պարսիկների հետ բարեկամանալու համար հարկավոր է փոխել կրոնը, ուրեմն պետք է փոխվի...

— Ճես դու չվերջացրի, Համազասպուհի, դու ինձ մեջտ ընդհատում ես:

— Վերջացրո՛ւ:

— Իզուր ես մտածում և ա՛յն, թե մենք աշխատում ենք կործանելու մեր արքայական հարազատ գահը: Մենք Արշակունիները մեր հարազատներո՛ն են: Նրանք մեզ համար խորթ են, անհարազատ են, վորովհետև ուսար յերկրից յեկած պարթևներ են: Նրանց միայն համբերում եյինք մենք, համբերում եյին և պարսիկները, քանի դու Պարսկաստանում նույնպես Արշակունյաց տոհմն եր տիրում: Այնտեղ ընկան նրանք և հիմնվեցավ նոր, Սասանյան պետություն: Այժմյան Սասանյանները չեն կարող համբերել, և չեն համբերում մեր քրիստոնյա Արշակունիներին: Մենք աշխատում ենք այդ դայթակղության քարը մեջտեղից վերցնել: Մենք այսուհետև միայն կունենանք մեր հարազատ թագավորը, վորովհետև Շապուհը խոստացել է տալ Մերուժանին հայոց թագավորությունը:

Տիգինոջ դեմքի վրա յերևաց մի աբհամարհական ժպիտ, և նա դեղեցիկ դլուխը շարժելով պատասխանեց.

— Թե վո՞րքան կարելի յե հավատալ խորամանկ Շապուհի նենդավոր խոստումնքներին,— այդ դու մի յերեսակաև ցնորք ե, վորով խելագար Մերուժանը միայն կարող է հրապուրվել: Այդ թո՛ղ մնա: Բայց յեթե այնպես դատելու լինենք, վորպես դու յես դատում, Վահան, ասելով, թե Արշակունիները մեր հարազատները չեն, վորովհետև ուսար յերկրից յեկած պարթևներ են,— ապա նախ մեզանից վոչ վոք հարազատ չի լինի հայոց յերկրին: Մենք, Մամիկոնյաններս, հենասյուներ ենք, քո սիրելի Մերուժանի նախնիքը ասորեստանցիք են, և այդպես, շատ նախապարսկական տներ ուսար ծագումներից են առաջ յեկած: Բայց ժամանակները բոլորին հայացրին. այժմ հայոց լեզվով են խոսում, հայոց կրոնն են պաշտում, և արյունով խառնվեցան հայերի հետ: Նույն պայմաններին յենթարկվեցան և Արշակունիները:

Իշխանի համբերությունը հատավ: Նա վեր կացավ և, կանդնելով տիկնոջ մոտ, արտասանեց հետևյալ խոսքերը.

— Դու սիրում ես վիճաբանել, Համազասպուհի, դու վիճաբա՛ն եյիր և այն ժամանակ, յերբ դեռ վոտքիկ եյիր և մեր տրոցի բակում մանկին դնդակներ եյինք խաղում: Ճես կարճ կկտրեմ քեզ հետ: Ահա՛ մեր ուխտը. քրիստոնեությունը պետք է վոչնչանա, Արշակունյաց իշխանությունը պետք է ընկնի, վորովհետև այդ է պահանջում մեր յերկրի խաղաղությունը: Մերուժանը պետք է հայոց թագավոր դառնա՝ պարսից գերիշխանության ներքո: Մենք պետք է կրոնով միանանք պարսիկների հետ՝ մեր բարեկամությունը ավելի ամրապնդելու համար: Մեր և նրանց մեջ կրոնի խորություն չպիտի լինի:

— Ի՛նչ նրանք միանան մեզ հետ,— ընդհատեց տիկինը,— ի՛նչ նրանք ընդունեն քրիստոնեությունը, դարձյալ մեր և նրանց մեջ կրոնի խրատություն չի լինի:

— Միշտ ուժարները հետևում են հղորներին: Մենք ուժար ենք, իսկ նրանք զորավոր:

— Քրիստոնեության մեջ՝ ամենափոքրը ամենից մեծն է, և ամենաուժարը՝ ամենից զորավորը:

— Այդ ցնո՛րք է. ուժարը ուժար է, զորավորը՝ զորավոր: Դու միայն այն ասա՛, Համազասպուհի, համաձա՞յն ես մեզ հետ:

— Ցերթա՛ք:

— Ով վոր մեզ հետ համաձայն չէ, մեր թշնամին է:

— Ցնա ամենևին ինձ քո բարեկամ չեմ համարում, թեև քո յեղբոր աղջկին եմ:

— Ով վոր մեզ չի հետևում, նա կպատժվի, և անկնա կիշխողը կպատժվի:

— Դրանից ավելի պատի՞ժ՝ այլևս ի՞նչ պետք է լինի:
Նա ցույց ավեց յուր շղթաները:

— Դրանից ավելի սարսափելին կա, Համազասպուհի:

— Ցնա պատրաստ եմ, Վահան:

— Լավ մտածի՛ր:

— Ցնա բոլորը մտածել և վճռել եմ...

Դրսի աղաղակները լսելի յեղան ավելի զարհուրելի հնչյուններով: Փոքրիկ սրահակը, ուր գտնվում էին նրանք, լուսավորվեցավ վառարյուսաղույն լուսով: Վիճաբանությունը ընդհատվեցավ: Տիկինը բռնեց աչքերը, բացականչելով.

— Ահա՛, Վահան, քո սպառնալյաց պատասխանը... ահա ի՛նչ ևք ցանկանում դուք—այդ կրա՛կը, այդ սբյո՛նը...

ՍԵՐՍԵՓԵԼԻ ԳԻՉԵՐՎԱ ԵՒՍՎՈՏԸ

Դևռ մութն էր, դևռ բավական ժամանակ կար մինչև առավոտ:

Մի սպիտակ ձիավոր, շրջապատած մի խումբ թիկնապահներով, անդադար արշավում էր խուսվյալ քաղաքի մի վոտքից դեպի մյուսը, վորտեղ հուզմունքը ավելի սաստկանում էր: Նա անցնում էր կրակներն մեջով, նա անցնում էր կոթծանվող շինվածքների տակով, առանց ամենափոքր յերկյուղ կամ վտանգ զգալու: Նրա ծայրահեղ անձնասահությունը տյնպիսի սպասվորություն էր գործում, կարծես, այդ վհհատանջ ձիավորի մարմինը դյուրթված կամ կախարդված լիներ, վոր անմխելի յեր

դարձել ամեն ղորութեյանց առջև: Եվ իրավ, նրա մասին մի այդպիսի կարծիք կազմվել էր հասարակութեյան մեջ:

Դա Մերուժան Արծրունին էր:

Շուր վառասիրութեյան չափ՝ վառահեղ էր ստեղծել նրան բնութեյունը, իսկ յուր անդուլ անձութեյան չափով—սոսկալի: Նրա տոհմային ասորական արյունը խառնվելով հայկականի և Ջալ-մար ամբոցի վիշապազունների արյան հետ, տվել էին նրա հզոր կազմվածքին վիշապի ահավորութեյուն: Նույն ահավորութեյան մեջ նա դեղեցիկ էր և վայելչակազմ, վորքան դեղեցիկ է լինում հոդեառ Սատանյելը:

Շուր պղնձյա ամրակուռ ղրահավորութեյան մեջ, յուր դենքերի շողշողուն փայլով, հրդեհների վառ ճառագայթների առջև, փայլում էր նա, յուր անվան համեմատ, վորպես մի արևոտակ լուսապայծառ, վոր աչք էր չլացնում:

Ամեն տեղ, ուր և հայտնվում էր նա, լռում էր աղմուկը, դադարում էր խռովութեյունը: Բայց հենց վոր անցնում էր, նրա յետևից լսելի էին լինում անեծքի խուլ մրմունջներ: Շուր սևիսական քաղաքացիքը նղովում էին նրան: Բայց կար ժամանակ, և այդ ժամանակը շատ հին չէր, յերբ նա անցնում էր այդ քաղաքի փողոցներով, մանկահասակ աղջիկները ծաղիկներ էին սփռում նրա սպիտակ նժույգի վոտների ներքո, իսկ կանայքը որհնութեյան ներբողներ էին յերգում...

Նա անցավ մեծ հրապարակը, վոր դտնվում էր յուր ապարանքի առջև: Գեղեցիկ, այունաղարդ ապարանքը այրվում էր: Բայց նա այրվում էր վո՛չ թե թշնամու կրակներից, այլ քաղաքացիների նետած կրակներից: «Ձերը մեր տները հրդեհի կերակուր են դառնում, ա՛յդ ևս թող դառնա», — ասացին նրանք և այրեցին: Նա նայեց յուր նախահարց հին բնակարանի վրա, և յերեսը սրտմտութեյամբ շուռ տվեց:

Ապարանքը դատարկ էր, վորովհետև նրա բնակիչքը և աղդականները դնացել էին ամարանոց՝ Արծրունյաց բնիկ վոստանում: Այստեղ մնացել էին մի քանի ծառաներ և սպասավորներ միայն:

Հրապարակի վրա հավաքված էր մեծ բազմութեյուն: Այրվող տների փախած կանայք, յերեխայք, աղատած կարասիներով հետ միասին, խառնաիխթոր կերպով դիզված էին միմյանց վրա: Հրդեհի լուսավորութեյան ներքո, այդ ապշած, սասանված թշվառների կուտակութեյունը ներկայացնում էր մի զարհուրելի տեսարան:

Ձերբ նա մերձեցավ՝

— Մի՛ մոտենար, Մերուժա՛ն,— ձայն տվին կանայքը:

— Չանդըրո՛ւ կրակը,— աղաղակեցին յերեխայքը:

Նա ձեռքը տարավ դեպի աչքերը: Ի՞նչ էր, վոր սրբեց այնտեղից: Միթե արտասվել կարո՞ղ էր այդ քարեղեն սիրտը: Բայց յերեխաների ձայնը վչրե՛ց քարը, խորտակե՛ց ապառաժը...

Նա դիմեց դեպի քաղաքացուներից մեկը: Այստեղ ինչ-վոր աղմուկ

կար մի խումբ քաղաքացիներ և դռները վրա հակող պարսիկ պահապան-ներն մեջ։

— Կամենում են բաց անել դռները,— զեկուցում ասին նրան։

— Կատարեցե՛ք,— հրամայեց նա։

Սկսեցին կատարել նրա սեփական քաղաքացիներին։

Նա անցավ։

Նրան ուղեկցում էր մի նշանավոր պարսիկ աստիճանավոր։ Ցերբ վտքը ինչ հետացան, նկատեց նա.

— Անհնարին կլինի յերկար պաշտպանվել, իշխան։

— Ինչո՞ւ։

— Վտրոշհևաև, այս բոպեիս ակնառուս յեղանք. Թե մե՛րսկս քաղաքացիք կամենում էին դռները բաց անել և Թշնամուն ներս թողնել։

— Դրա համար էլ չես հրամայեցի նրանց կատարել։

— Վա՞ր մենին կատարել։

— Բոլորին, յերեք այնպես կվարվեն։

— Այն ժամանակ մեզ անհնար կլինի կռվել Թե՛ քաղաքացիների հետ, և Թե՛ դրսի Թշնամու հետ։

— Ցերեք այդ անհնար կլինի, մեռնելը, կարծեմ, շատ հնարավոր է։

— Այդ սպառում է մեզ... Բայց ավելի լավ չե՞ր լինի քանի դեռևս մութն է ուժեղ քաղել դիշերապահին խավարից և, պատառելով պաշարող Թշնամու շղթան, հեռանալ քաղաքից։

— Այդ այնքան հեշտ չէ՝ Ռշտունյաց զորաններն շղթան պատառել։ — Պետք է պաշտպանել քաղաքը մինչև վերջին շունչը։ Ցերբ վտքը ինչ կլուսանա, այն ժամանակ մենք դուրս կզանք կռվելու։

Պարսիկ աստիճանավորը լռեց։ Նրանք դիմեցին դեպի քաղաքի մյուս դռները, որոնք նույնպես աստիճ հսկողության ներքո էին դրած։

Դիշերը անցավ կրակի և բոցերի դժոխային գործողության մեջ։ Իսկ առավոտյան լուսաբացին, մոխիր դարձած քաղաքի ավերակների վրա, սկսվեցավ ահռելի կռտաքածը։ Դիշերը կռծանվում էին շինվածքներ, իսկ այժմ կռծանվում էին մարդիկ...

Դեռ վաղորդյան շամանդաղը նոր էր սկսել պարզվիլ, դեռ նոր Քրոչունները իրանց ուրախ մնչյուններով սկսել էին ավետել ամենյան լուսատուի ըղձալի ծագումը, յերբ քաղաքի դռներից մեկը խորտակվեցավ։ Նա խորտակվեցավ Թե՛ ներսի բնակիչներից, և Թե՛ դրսի պաշարողներից։ Ներս խուժեց կատաղի բազմություն։

«Թո՛ղ մի կողմ ջոկվի՛ն քրխասունանները»... վորոտացին հազարավոր ձայներ։

Քաղաքի բնակիչները, մոռանալով իրանց կրած ծանր վնասը, միացան իրանց ազատող, իրանց դժբախտացնող լեռնականների հետ, և սկսեցին կատարել պարսից զորքերին։ Այժմ դործում էր նիզակն ու սուրը։ Փայլում էր յերկաթը և յուր փայլատակման հետ՝ լսվի յեր լինում յեր-

կաթոլիկ վահաններուն սաստիկ արտիւրյունը։ Կռիվը կատարվում էր փողոցներում։ Գարսիկ դրքերը՝ որ հայական տաղնապի մեջ՝ մարդ չէին,— մարդ էին, վոր մեռնելուց առաջ դուռ մի քանիսին իրանց հետ տանելին։ Մերուժան Արծրունին սպառել էր յուր լեզվի բոլոր ճարտարությունը նրանց խրախուսելով։ Հրամաններ այլևս չէին տալում։ Նա կայծակի նման անցնում էր մեկ փողոցից դեպի մյուսը, յերբ նկատում էր, վոր պարսիկները այն կողմում թուլանում են։

Այդ միջոցին մեկը միջնաբերդի բարձրությունից խոժոռ դեմքով նայում էր, թե ինչ է կատարվում ներքևում։ Վո՛րքան նայում էր նա, այնքան նրա դեմքը ավելի տխուր, ավելի հուսահատական արտահայտություն էր առնում։ Մերուժանի քաղաքացիները, մխանալով Մերուժանի թշնամիների հետ, կտտորում էին նրա Գարսկատանից բերած դրքերին։ «Վո՛րքան սխալ հասկացողություն ունենք մենք հայ ժողովրդի մասին»... մտածում էր նա, և նրա դալկացած սիրտը լցվում էր անհնարին դառնությամբ։

Այդ մարդը վահան Մամիկոնյանն էր, վորը տիկին Համազասպուհու հետ ունեցած անհաջող բանակցությից հետո, դուրս էր յեկել, դիտելու քաղաքի խռովությունը։

Դեռ արևը չէր ծագել։ Բայց վաղորդյան մթին աղջամուղջը սկսել էր առանալ, և շրջակայքը հետզհետե տեսանելի էին լինում։

Միջնաբերդի բարձրությունից նկատեց նա, վոր լեռնականներից մի սովար խումբ ուղիղ դիմում էր դեպի յուր կողմը։ Նրանց առաջնորդում էր մի հաղթանդամ տղամարդ, վոր հաղիվ յերևում էր յուր ղրահավոր և սպառազին թիկնապահների միջից։ Նա մտածեց և, միջնաբերդի աստրոտից դեպի վեր նայելով, և տեսնելով այնտեղ կանգնած Մամիկոնյան իշխանին, ձայն տվեց.

— Մամիկոնյան տե՛ր, ինչո՞ւ չես այնտեղ՝ յերկչոտ աղվեսի նման կանգնել այդ բարձր քարերի դլխին, յուր իջի՛ր, մենամարտենք և մեր կռվով վերջ տանք արյունահեղ կոտորածին։ Դու, թեև հորջորջը քո տոհմի առաքինությունը, դուռն մի՛ արատավորիր նրա քաջությունը։

— Մեզ համար չէ՝ աղնվության դասը լեռնապիից առնել, Ռշտունյաց տեր, դու, յերթե չեյիր ցանկանում հազարավոր անմեղների արյան հոսումը, դու, յերթե չեյիր ցանկանում հազարավոր անեղի կրակի ճարակ դառնալը,— դու պետք և այդ հրավերը սկզբից անեյիր, յերբ դեռ վո՛չ մի արյուն չեր թափված։ Այն ժամանակ յես պատրաստ կլինեյի դուրս գալ քաղաքից և իմ բազուկներով ուժը չափել քոնի հետ։ Բայց յերբ սկսվեցավ կռիվը այդպես ամարդի կերպով,— թո՛ղ նույն կերպով և շարունակվի...

— Լեռնացին այդ ամարդությունը քեղանից սովորեց, Մամիկոնյան տեր։ Նա վոր դողի նման մոնում և յուր քրոջ անպաշտպան ամրոցը, ու հափշտակում և նրան յուր անմատչելի ննջարանից, նա՛ իրավունք չունի խոսք խոսելու մարդամարտության մասին...

Մամիկոնյան իշխանը խոսք չէր տալ պատասխանելու. յուր վնասակար լուտանքները նեռն նման ցցվեցան նրա սրտում: Նա դարձավ դեպի բնդդատարան պարսիկ զորքը, հրամայեց, վոր պաշտպանեն բերդը:

Իսկ Գարնեցին Ռշտունին հրամայեց յուր լեռնականներին՝ հարձակում գործել բերդի վրա:

Հայոց յերիվերը, յուր լեռնային և քարքարոտ դիրքի համեմատ, յուր գործերի թվում ստեղծել էր առանձին դասեր, վոր կոչվում էին «Քարաձնացներ»: Դրանք վարժված էին անհնարին ապառաժների վրա մագլցել, այդ պատճառով, դրանց գործ էին տալիս բերդերի և ամրոցների գրավման համար, վորովհետև Հայաստանում քան մեծի մասին, չինված էին բարձր և անմատչելի ժայռերի գագաթին:

Բայց Ռշտունյաց և Մոկաց լեռնականները, քարերի հետ ապրելով և քարերի հետ անվելով, յերևելագույնից է վեր սովորած էին՝ մագնել նման վտանգ ապառաժների վրա: Դրանք «քարաձնացներ» էին: Իսկ այժմ նրանց առջև ներկայանում էր մի հսկա, ուղղաձիգ քարաբլուր, վորի հետ հեշտ չէր գործ ունենալ: Այդ քարաբլուրի գլխին կանգնած էր հզոր միջնաբերդը, և նույն բերդի մեջ պահված էր նրանց սիրելի տիկինը:

Հարձակումը գործեցին բերդի արևմտյան կողմից, վոր նայում էր դեպի ծովը: Այդ կողմից էր մեկ մուտքը, վոր բարձրանում էր սանդրահաձև սանդհաններով վրայով, վոր վերջանում էին ապառաժի մեջ: Ուր ջնարձյունը թերի էր թողել յուր ամրությունը, այնտեղ արհեստը լրացրել էր սանձին պարիսպներով և մարտկոցներով, վորոնք կարդ-կարդ բարձրանում էին մինչև քարաբլուրի գագաթը:

Ռշտունյաց «քարաձնացները» սկսեցին վեր բարձրանալ: Նրանք զինված էին յերկաթյա ճանկերով, վորոնցով մագլցում էին միապետող ապառաժների կուրծքի վրա: Այդ հանդուգն, աներկյուղ չհասասկներին վերևից դանակոծում էին նետերի անթիվ հարվածներով: Բայց «քարաձնացները» պաշտպանված էին կաշյա լայն վահաններով, վոր մեծ ամրհավաքների ձև ունեին, և կապել էին իրանց ուսերի վրա: Նետերը դիպչում էին այդ անմխիթար ապարներին, և անզոր վնասուրների նման ցած էին թռվռում:

— Քարեր նետեցե՛ք,— հրամայեց Մամիկոնյան իշխանը:

Սկսվեցավ սարսափելի քարեկարկուտը: Հարյուրավոր ձեռքեր, ծանր քարե գնդակները պարսպաճիկների մեջ գրած, պատռտացնում էին ոդի մեջ, և նետում էին դեպի ցած: «Քարաձնացների» կաշյա վահանները այժմ անզոր էին այդ վիմատին ամբակոծության դեմ պաշտպանելու համար: Քարը դիպչում էր և յուր ծանրության ուժով նրանց դեպի ցած:

Այդ միջոցին միջնաբերդի հյուսիսային կողմում կատարվում էր բոլորովին այլ գործողություն:

Ավելի քան յերկու հարյուր ձեռքեր առաջ եյին մղում մի վայտեղեն այլանդակ հրեշ, վոր յուր վիթխարի ծանրությամբ հաղիվ-հաղ շարժվում եր թանձր անիվների վրա: Նա այն տափակ սայլակների նմանությունն ուներ, վոր դործ են ածում հայ շինականները: Զանազանությունը նրանումն եր միայն, վոր շինականի սայլակը ձդում են առջևից լծած անասունները, իսկ նրա անիվները տակից շարժում եյին մարդիկ, վոր թաղնըված եյին ամրակուռ սախատակամածի ներքո և ամենևին չեյին յերևում:

Բազմաթիվ ձեռքեր բահերով ու բրիչներով հարթում եյին նրա ուղին, և հրեշը վորպես մի մարմնացած ահավորություն, դանդաղ կերպով առաջ եր ընթանում: Նրա մոտայլ, սպառնական յերևույթը սարսուռի ձդեց ընդդատահների վրա: Ամենքը իրանց ուժերը դործին դնելի նրա կողմը: Վերևից սկսեցին պարսատիկներով քարե գնդակներ նետել: Գնդակները դիպչում եյին նրա թանձր կազմվածքին, և վոտտոտելով մի կողմ եյին ընկնում: Հրեշը վոչինչ չեր զդում, այլ վորպես մի խուլ դարհուրանք, շարունակում եր յուր ուղին:

Դա սոսկալի «սիսիկիվանն» եր,— բերդերի և ամրոցների հիմքը փորող հսկա խլուրդը:

Մի քանի րոպե, վոր յերեք կողմից բարձրացրած, ուղղաձիդ և անմատչելի դիրք ուներ, այդ կողմից միայն նրա ապահովային կողքը փոքր ինչ ծեքված եր, և այդ պատճառով, ամրացրել եյին հատուկ մի պարիսպներով ու աշտարակներով:

Հրեշը մոտեցավ և, յուր ահարկու դլուխը հպարտությամբ վեր բարձրացնելով, հենվեցավ պարսպի վրա, վորպես վիպական բարձի վրա: Նրա կազմվածքի դաղտնածածուկ խորշերում թաղնված եյին բազմաթիվ մարդիկ, վորոնք դինված եյին բահերով, բրիչներով և մուրճերով: Սկսեցին փորել պարսպի հիմքը: Կրակը միայն կարող եր աղատել բերդը այդ վիթխարի թշնամուց: Վերևից սկսեցին հրային գնդակներ նետել: Նա վոչինչ չեր զդում: Նրա տափատակամածը պատած եր թանձր թաղիքներով, վոր թրջված եյին ջրով: Հրային գնդակները ընկնում եյին նրա վրա, թշշում եյին, և խեղուն հանդչում եյին, թողնելով ոդի մեջ անախորժ խանձահոտություն:

Հրեշի ներքո պատսպարված մարդիկը չարունակում եյին յեռանդով փորել պարսպի հաստահիմն սյորտը: Աշխատությունը մի մեծ ծակ, բայց ծակի առաջը փակում եր պարսպի յեռևի ամրաժը: Բերկար բրիչներն ու մուրճերը մաքառում եյին այդ ժայռի հետ, բայց արդյունավոր հետևանքի չեյին հասնում: Մտածեցին բարձրացնել քանդակի լայնությունը դեպի վեր, դուցե կարելի լիներ աղատվել ամրաժից:

Այդ դործողության միջոցին, վերևից նայում եր Մամիկոնյան իշխանը: Նրա սառն դեմքը արտահայտում եր և՛ ատելություն և՛ ծիծաղ: «Հիմարնե՛ր,— մտածում եր նա,— ի՞նչ պիտի շահեք, յերեթ խորտակելու լինեք այդ պարիսպը··· Ցավ, իրավ, վոչինչ չպիտի շահեյին, վորովհետև,

ափրելով այդ պարոպին, նրանց առջև դուրս կզար յերիզորդը, յերրորդը... վորոնք կարդ-կարգ և աստիճան առ աստիճան բարձրանում էին միմյանց յետևից, վորքան բարձրանում եր քարաբլուրը, վորի գագաթին կանգնած եր հզոր մեչնաբերդը:

Բայց իշխանին տանջում եր այն միտքը, թե լեռնականները այդ պատրաստությունները չէին կարող ունենալ. անտարակույս, նրանք վեր էին առել քաղաքից. ուրեմն, նրանք կատարելապես տերություն էին քաղաքին: Ինչ յեղավ Մերուժանը, ինչ յեղան պարսիկ զորքերը, վոր պահպանում էին քաղաքը:— Այդ հարցը ստատիկ վրդովեցնում եր նրան: Մերուժանին կորցնելով, նա խաղաս կորած և ապանված եր համարում այն դաղափարը, վորը յուր համար այնքան մեծ նշանակություն ուներ, և վորի իրագործման համար՝ նա զոհել եր ամեն ինչ...

Վոչ ստատիկ խռովության մեջ եր գնահատում և պարսիկ բնդդատաղորքը: Նրանք պարզ տեսնում էին, վոր քաղաքը գրավված եր, իսկ իրանք մնացել էին քարե գլխին, պաշարված անթիվ թշնամիներով: Նրանց գլխավորը մոտեցավ իշխանին և շնչատաղ ձայնով ասաց.

— Տադնապը մե՛ծ է, ան՛բ իմ:

— Տեսնում եմ:

— Գնաք և անձնատուր լինել, ան՛բ իմ:

— Ցերթե՛ք:

— Մի քանի րոպեից հետո ներս կխուժե վայրենի բազմությունը:

— Անկարելի յե: Դուռ, ուրեմն, այդ բնորդը չես ճանաչում:

— Ցնթե բնորդի ամրությունը կարողանա պաշտպանել մեզ դրսի թշնամուց, հետո ինչով կարող ենք պաշտպանվել մենք ներսի թշնամու դեմ — քաղցի և ծարավի: Ներանք, պաշարման մեջ պահելով մեզ, բոլորիս ստիամահ կանեն:

— Ավելի լավ:— կմեռնենք և կազատվենք...

— Ինչո՞ւ իզուր տեղը մեռնել:

— Վոր չազատավորվի արքայից արքայի դրոշի վատքը: Վոր չասեն, թե պարսիկ զինվորը յերկչոտ է:

Սպան լուռ, և դլուխ տալով հետացավ:

«Անպետ ասեն ի՛նձ.— ասաց նրա յետևից դալլացած իշխանը,— դուք քաշ եք այն ժամանակ միայն, յերբ թշնամին ձեր առջևից փախչում է»...

Մի ենուկյանը պատահեց ներքևում, քաղաքի մեջ: Ցերբ լեռնականները, խորտակելով քաղաքի դռները, ներս մտան, այդ ժամանակ պարսիկները բոլորովին վհատության մեջ ընկան: Մերուժանի բոլոր ջանքերը քաջալերելու նրանց մնացին ապարդյուն: Մի Ցնթե ընդդիմադրությունից հետո, պարսիկների մի մասը անձնատուր յեղավ, իսկ մնացածները, քաղաքի մյուս դռներից դուրս դալով, փախան:

Մերուժանը մնաց միայնակ, լքված յուր քաղաքացիներից, և լքված պարսիկներից, վորոնց վրա մեծ հույսեր ուներ: Նա վերջին անգամ յուր

վչտալի հայացքը դարձրեց դեպի մոխիր դարձած քաղաքը, ուր պարել էին, ուր լսել էին նրա նախնիքը, և, ոգուտ քաղելով ընդհանուր խռովությունից, յուր թիկնապահները փոքրիկ խումբով, դուրս չկալով քաղաքից, և անհայտացավ վաղորդյան մթության մեջ...

Իսկ այժմ վաղորդյան մթությունը բոլորովին չքացել էր, տեղի տալով նախասրտյան ախորժելի լուսավորության: Արշալույսը սկսել էր շառագունել, ներկելով հորիզոնը վոսկեգանգ ծիրանիներով: Շատ չանցավ, արևի առաջին ոչյունաղուշն ճառագայթները հանդիպեցան մի ոչյունոտ ղոթի...

Առաջին պարսպի քանդակը այն ատաճման լայնացել էր, վոր լեռնականները ներս էին մտել և այժմ սկսել էին վորել յերկրորդ պարսպի սառրտը: Հրեշը մնացել էր դրսում, նա յուր վիթխարի մարմնով այդ բացված քանդակից անցնել չէր կարող: Միջնաբերդից համարյա ընդդիմադրություն չէին ղոթում: Պարսկիները այժմ իրանց փրկությունը մի այն անձնատուր լինելու մեջ էին դտնում, թեև պաշտպանվելու ամեն միջոցներ ունեին: Մամիկոնյան իշխանը, վաղուց հասկացած լինելով այն ճշմարտությունը, թե վտանգի ժամանակ պարսիկ զինվորի վրա հույս չի կարելի դնել,— նրանց թողել էր իրանց կամքին:

Մյուս կողմից, «քարաշնաղները» մեծ հառաջադիմություն էին ղոթել: Նրանցից մեկը արդեն մագլցելով հասել էր մինչև բերդի մուտքը, և յուր դաշույնի ծայրը ցցել էր յերկաթապատ դռան վրա:

— Բա՛ց արեք,— աղաղակում էր նա,— յերեք չեք ցանկանում, վոր իմ հազարավոր ընկերների դաշույնները այսպես ցցվին ձեր սրտում:

Դռները բացվեցան: Վերևում բարձրացրին անձնատուր լինելու նշանը: Իսկ ներքևում տիրեց ընդհանուր ցնծություն բոլոր լեռնականների մեջ:

Այժմ Ռշտունյաց նահապետը, շրջապատված յուր ալազներով, հանդիսավոր կերպով մտավ բերդի ատրոսին: Նույն միջոցին վերևից ցած իջավ բերդապահների պարսիկ դլխավորը և, առաջարկելով նրան բերդի բանալիները, ասաց.

— Հաղթված Մերուժանի բերդը հանձնում եմ հաղթողների ամենահարավորյալին: Ընդունի՛ր այդ բանալիները, Ռշտունյաց տե՛ր: Այժմ թե՛ նվաստս, թե՛ իմ հրամանի ներքո դտնված բերդապահների դլուխները խոնարհվում են ձեր սրերի և ձեր մեծահոդության առջև:

Լռեի յեղան հաղթական ընդհանուր աղաղակներ, վոր կրկնվեցան մի քանի անդամ:

Ռշտունյաց նահապետը ընդունեց բանալիները, պատասխանելով.

— Ձեր դլուխները ազատված կլինեն մեր սրերից, և թե՛ դուք և թե՛ ձեր հրամանի ներքո դտնված բերդապահները՝ կվայելեք իմ կատարյալ մեծահոդությունը, յերեք ցույց կտաք, թե վորտեղ և պահված Ռշտունյաց տիկինը:

— Իսկույն ցո՛ւյց կտան... մինչևարևդին բարձրությունից լանչի յոդով մի ձայն, որը խլացավ ընդհանուր աղաղակների մեջ։

Դա Վահան Մամիկոնյանի ձայնն էր։ Դեռ մինչև կանգնած էր նա վերևում, և մի դառնությամբ դիտում էր, թե ինչ և կատարվում ներքևում։ Ցերը նկատեց բանակների հանձնվելը, այնուհետև ամեն հուբա կռած համարելով, նա դարձավ դեպի յուր մարդիկը և մի ինչ-որ խորհրդավոր նշան տվեց, և ինքը հեռացավ...

Այդ միջոցին մինչևարևդին արևմտյան կողմի աշտարակներից մեկի բարձրությունից քարշ ընկավ մի սպիտակ մարմին, որը ճյունի պես փայլում էր արևի առաջին ճառագայթների առջև։ Ամենքը նայեցին նրա վրա և ապրումնեցան...

Զոհաբերվեցավ մեկն Մամիկոնյան իշխանը։ Բայց նա վշտացավ... Յուր սխալը հայացքը դարձրեց դեպի սպիտակ մարմինը, որի բոլոր բարախմանքով նայեց նրա վրա, հետո որից աչքերի արտասուքը, և յուր դողդողուն քայլերը ուղղեց դեպի մինչևարևդին հյուսիսային կողմը։ Ամբողջ ասիղները խավարած էր նրա համար։ Նա դնում էր, բայց չդիտեր, թե ո՛ւր և դնում։ Համարյա բնազդմամբ մոտեցավ նա այն քարակույտ անձավներից մեկին, որի մուտքը փակված էր յերկաթյա դռնով։ Գրպանից հանեց մի փոքրիկ բանալի և բաց արեց դուռը։ Ներս մտավ և դուռը յուր ետևից կրկին կողպեց։ Անձավի մի խորշում, քարյա հատակի մեջ, ազուցած էր մի քառանկյունի սալ, որը յուր դռնով ամենևին չէր փորձվում հատակից։ Նա վոտքը դրեց սալի մի անկյունի վրա, և նրա ճնշումից խուփը ինքնիրան բարձրացավ։ Տակից հայտնվեցավ մի վիրապի նեղ բերանը, որից մի մարդ հազիվ կարող էր անցնել։ Նա յերկու ձեռքերը դրեց նրա բերանի յերկու շրթունքների վրա, և անհայտացավ վիրապի մեջ։ Բերանը դարձյալ փակվեցավ։

Դա մի առորևիրյա դաղտնի անցք էր, որը ծառայում էր վորպես փախստական ճանապարհ։

Համարյա միևնույն ժամանակ, յերբ Հայրը մտավ դաղտնի վիրապի մեջ, Վանա մեծ քաղաքապետներին հասավ վորդին, Սամվելը։

Առաջինը, վոր դրավից յերիտասարդի ուշադրությունը, յերկու թևավոր վիշապներն էին, վոր հսկում էին այդ դռան աջ և ձախ կողմերում։ Արհեստով այդ սքանչելի արդյունքները այժմ փչրված, խորտակված էին։ Նա ներս մտավ։ Մոխիր դարձած քաղաքը ասկավին մխում էր դեռ չհանդած կրակների մեջ։

Ներս անչքին ընկավ աշտարակի բարձրությունից կախ ընկած սպիտակ մարմինը, վոր դեռ ճյունի նման փայլում էր արևի առաջին ճառագայթներից։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա սոսկալով։

— Ռշտունյաց սինհոջ մարմինն է,— պատասխանեցին նրան։

— Ո՞վ կախաղան հանեց։

— Վահան Մամիկոնյանը:

— Դայե՛ն... բացականչեց խեղճ յերիտասարդը, աչքերը բռնելով:— Նա սպանեց յեղբորը, իսկ դու—քո քրոջը...

ՈՒՐՑՈՂԸ ՑՈՒՐ ՏԱՆ ՉԵՄՔԻ Վ.ՐԱ

Հաղամակերաի մայր յեկեղեցում սուրբ պատարագը դեռ չարունակվում էր կատարվել: Ջնայելով, վոր այսօր վոչ տոն էր և վոչ կյուրակե, բայց յեկեղեցին լիքն էր բաղմությամբ:

Բեմի հանդեպ, յեկեղեցու աջակողմյան անկյունում, չորս մարմարյա սյուների վրա, բարձրանում էր մի վերնատուն: Նրա դեպի սեղանը նայող կողմը կտրված էր վոսկեզոծ վանդակապատով: Բնհեղյա ծանր վարագույրները մեկից ծածկում էին այդ վանդակապատը և բոլորովին անտեսանելի էին կացուցանում վերնատան ներսը: Այդ դրության մեջ՝ վերնատունը մի փակված, առանձնացած մատուռի ձև ուներ:

Նրա հատակը ծածկված էր թանգագին սիցոններով, իսկ մի կողմում դրած էր փառավոր բազմոց: Մի սեղան, սուրբ պատարագի խորհրդի համար, յերբեմն ծուռ էր դնում և ազոթում էր, յերբեմն կանգնում էր և յերկրպագություն էր տալիս, յերբեմն նստում էր բազմոցի վրա և խորին ուշադրությամբ լսում էր: Նա ներկայացնում էր մի մարմնացած ջերմեռանդություն, վոր հոգվով և սրտով հափշտակված էր սուրբ պատարագի արարողություններով:

Վոչ մի ժամանակ նրա կրոնական զգացմունքները այնքան վառված չեին յեղել, և վոչ մի ժամանակ նա յուր աղերսն ու պաղատանքը այնպես սրտագին փափաքներով չէր մատուցել սուրբ սեղանի առջև, վորպես այսոր: Ծխո՛ւմ էր նա, վորպես մի աղավոր, և ջերմ արտասուքը հեղեղի նման թանում էր նրա վշտալի դեմքը:

Դա Վասպուրականի սեպհին էր—Մերուժանի մայրը:

Մատուռը, վորի մեջ առանձնացած էր նա, Արծրունիների տոհմային աղոթարանն էր: Արծրունիները, կատուցանելով Մայր յեկեղեցին, այդ մատուռը հատկացրին իշխանական տանը:

Նա վեր կացավ, յերբ սուրբ խորհուրդը ավարտվելուց հետո՝ ներս մտավ պատարագիչ քահանան և մատույց նրան սուրբ սեղանի նվիրքը: Նա ընդունեց, համբուրելով տեր Հոր աջը: Այժմ նրա վշտահար դեմքը և այն հեղ աչքերը, վորոնց մեջ փայլում էր անհուն բարություն, սառցան ավելի խաղաղ և ավելի մխիթարական դիտակցություն, վոր մեկ պատկառանք էին ազդում:— Այդ հարգելի անձնավորությունը մտացնում էր յուր մեջ՝ բարձր աղնվականի բարձր հատկությունները՝ բարեպաշտ քրիստոնյայի առաքինությունների հետ:

— Ինչպես և, տեր հայր, քո դառնը առաղջությունը,— հարցրեց նա,— ինձ ասացին, վոր շատ հիվանդ և:

— Այժմ բավական լավ և, տիկին,— պատասխանեց քահանան:— Վտանգը անցավ: Իմ դեղատոմսը յուր կյանքով պարտական և քեզ, տիկին: Ցնծե Դրան բժիշկը այնպես շուտ ուղարկած չլիներ, դուցե չես կղրկվելի իմ միակ զավակից: Առավոտ քեզ կերկար կյանք ասա, տիկին, վոր այլոց կյանքի համար այդքան հոգ ես տանում:

— Այդ իմ պարտավորությունն և, տեր հայր, բոլորը իմ զավակներն են,— ասաց նա:— Ցավում եմ, վոր այս որերում այնքան զբաղված պետք լինեմ, վոր չկարողանամ անձամբ այցելել հիվանդին:

— Նա շատ կուրախանա, տիկին: Քո բարի վուռքը բոլորովին կփառատե նրա ցավերը:

Քահանան հեռացավ, կերբ ներս մտան կերկու նաժիշտները, վորոնք սպասում էին մատուռի նախասրահում: Նրանք, բռնելով տիկնոջ աջ և ձախ թևքերից, սկսեցին ցած իջեցնել վերնատան քարյա սանդուղքներից:

Գառնաբաղից հետո ժամավորները դարձյալ մնացին կիկեղեցում, վորովհետև, Դրան ավագ կերեցը պետք և քարոզ կարդար: Բայց տիկինը չսպասեց, և տառնձին դռնով դուրս կիկավ կիկեղեցուց:

Փողոցում սպասում էր մի փառավոր պատարակ, յուր կերկու նաժիշտներե հետ մոտ նրա մնջ, և սպիտակ ջորիները սկսեցին հանդարտ քայլերով տանել: Պատարակի առջևից վառով դնում էին կերկու զինված շաթրներ կարմիր զգեստներով, իսկ յետևից՝ մի խումբ դրանիկներ, նույնպես վառով: Ցնկեղեցու դռնից սկսած, դեպի փողոցի կերկարությունը, ձգվել էին կերկու շարք աղքատներ, վորոնք խորին վախտով սպասում էին այդ բարեթնամ պատարակին: Տիկնոջ հազարապետը քսակը ձեռին մոտեցավ նրանց և առատաձեռն ողորմածությամբ բաժանեց չքավորներին սովորական դրամները:

Ծորին հարդանքով անցնում էր պատարակը քաղաքի փողոցներով, և ամեն վոք մեծ թե փոքր, հասակավոր թե կերեխա, կանգնում էին, դլուխ էին տալիս, և ամենայն սիրով վողջունում էին: Անցնում էր հասարակաց մայրը և կերկրի տիկինը: Նա, պատարակի դռնակից դլուխը մեկնելով, բոլորի վողջույնը ամենայն բարեսրտությամբ ընդունում էր:

Պատարակը կանդ առավ իշխանական հոյակապ պալատքի հանդեպ, վորի մուտքի աջ և ձախ կողմերում հսկում էին կերկու թևավոր վիշապներ: Դա Արծրունիների հասուկ նշանն էր, վոր դրված էր լինում նրանց բոլոր քաղաքների և պալատների դռների մոտ: Տիկինը ցած իջավ և, շրջապատված յուր սպասավորներով, ներս մտավ: Նա անցավ փառավոր, կանաչազարդ բակերի ճեմելիքներով, վոր հովանավորված էին դարևոր ծառերով, և մտավ յուր սենյակը: Սպասավորները հեռացան, նրա մոտ

մնացին նաժիշտները միայն, վորոնք միայն լինչ սպասելով, և տեսնելով, վոր իրանց տիկինը առանձին հրաման չունի, իրանք ևս հեռացան:

Առաջինը, վոր ներս մտավ տիկնոջ որհնությունն առնելու, նրա հարսն էր—Մերուժանի կինը: Մոր յերկու ձեռքերից քաշ եկին ընկած նրա յերկու փոքրիկ յերեխաները: Նրանք մոտեցան, համբուրեցին տիկնոջ ա-ջը: Ամեն որ այդ սովորությունն ունեին, յերբ նա վեհապատում էր յե-կեղեցուց: Տիկինը հանեց յուր բերած նշխարքը, բաժանեց, և տվեց թե՛ յերկու յերեխաներին և թե՛ նրանց մորը: Յերեխաները, վորոնցից մեկը տղա յեր, իսկ մյուսը աղջիկ, իրանց դողդոջիկ ձեռիկները դրեցին տիկնոջ ծնկների վրա և, իրանց վայլուն, հարցասեր աչքերը դարձնելով դեպի նա, հարցրին.

— Ինչո՞ւ տերտերի հացը այդպես քաղցր է լինում, մամիկ:

— Դա աստուծո հացն է, զավակներս, դրա համար այդպես քաղցր է լինում,— պատասխանեց տիկինը, փայփայելով նրանց դանդրահեր գլուխ-ները:

Նրանց մայրը վոտքի վրա կանգնած եր յուր սկեսրոջ մոտ և համար-ձակություն չուներ նստելու: Նաղելի մի կին եր նա, չափազանց ներա-կայում և քաջուշ: Նա այնպիսի տպավորություն եր դործում, կարծես, ա-ռնչից լիներ՝ մի՛ դիպուկ լինե, կփչրվիմ յես: Նա խոսում եր այն ժամանակ միայն, յերբ սկեսուրը խոսեցնում եր, և ամեն անգամ նրա սպիտակ ատամների վրա նշմարվում եր մի թեթև ժպտրություն: Նա դեռ անմեղ ո-րիորդի ամոթխածություն ուներ, իսկ հնազանդ հարսի՝ պատկառանքը:

Վաստուրականի տիկինը այրի յեր: Նրա ամուսինը, Շամատ Աբծ-րունին, շատ ժամանակ չեր, վոր վախճանվել եր: Այդ պատճառով, նա դեռ կրում եր յուր ղլխին սգավորության քողը: Զրկվելուց սկսյալ ամուս-նից, նա միտքներում եր նրան, յուր ամեն մեջ՝— իբրև մի պատրիարք, վորի հեղինակությանը ամենքը խոնարհվում եկին, իսկ յերկրի կառավա-րության մեջ՝— իբրև մի նահապետ:

Տիկինը Վահան Մամիկոնյանի (Սամվելի հոր) քույրն եր: Մամիկոն-յան տոհմերն եր և նրա հարսը— Մերուժանի կինը: Մոտ բնականությա-նները այդ ժամանակ սովորական եկին հայոց մեջ, մանավանդ նախարար-նների տների մեջ: Շատ առանձնապես Մամիկոնյան տան աղջիկները, իբրև մի շղթա, կապում եկին միմյանց հետ՝ վոչ միայն ավագ նախարարների տոհմերը, այլև Թաղավորի տունը, այլև հայրապետական տունը: Այդ տոհմի աղջիկներն եկին, վոր իրանց առաքինություններով զարդարում ե-կին թե՛ նախարարների պալատները, թե՛ Թաղավորի արքունիքը և թե՛ հայրապետի վիճարանը:

— Նախանձելիդ պատրաստ ես,— ասաց հարսը:— Ի՞նչպես կհրամայե-յիր, այրո՛ղ տան, թե սեղանառանը:

— Ուտելու բնավ անտրժակ չունեմ, սկեսրայր Վահանդուխտ,— պա-տասխանեց տիկինը:— Գիշերը շատ անհանդիստ եկի, քնել չկարողացա:

Խոհ այժմ հիմանդի պես եմ զգում ինձ. ականջներիս մեջ մի բան մրմնջում է, և ինձ այնպես է թվում, կարծես, գլուխս յուր տեղումը չլինի:

— Հանդստացիր մի փոքր. դու առավոտյան շատ վաղ վեր կացար:

— Ի՞նչպես հանդստանամ... մինչև կարո՞ղ եմ հանդստանալ...

Նա նայից հարսի դունաթափ յերեսին և սարսափից: Մի դիշերվա մեջ խնդճ կինը բոլորովին հալվել ու մաշվել եր: Ցերեկի, նա ևս չեր քնել, յերևի, նա ևս անհանդիստ եր... Ի՞նչ եր պատահել:

Այդ հոյակապ տունը, ուր միշտ ուրախ, ուր միշտ յերջանիկ լինելու համար վոչինչ թերություն չկար, այսոր այնպիսի սխուր տպավորություն եր գործում, վորպես թե, տպավորի տուն լիներ: Բոլորի դեմքերի վրա նկարված եր մի անբացատրելի տրտմություն: Մարդիկ լուռ կային, մարդիկ խորշում կային միմյանց հետ խոսելուց: Կարծես, կար մի բան, վորից վախենում կային, մի դուռե մինը մյուսին հիշեցնելով, ավելի ևս սաստկացնի նրա սրտի ցավերը...

Ցերեկ լուր առացվեցավ, վոր Մերուժանը դալիս է: Այսոր ճաշից հետո նա պետք է մտներ յուր իշխանության վոստանը: Թե՛ մոր համար՝ և թե մտուանի համար՝ ի՞նչ ավելտս, ի՞նչ բարի համբավ կարող եր այնքան ուրախալի լինել, քան թե այդ, վոր նրանց սիրելին, յերկար բացակայությունից հետո, վերադառնում եր յուր տունը: Բայց նրանք, վոխանակ ուրախանալու, սխուր կային:

Նա վերադառնում եր վորպես ուրացող, վորպես դավաճան: Ցեվ մայրն ու մտուանը պետք է դրկվեին նրան, պետք է սրբեին նրա ճակատից ճանապարհի փոշին:— Այդ ծա՞նր եր, մահվան չափ ծա՞նր եր թե՛ մոր և թե՛ մտուանի համար: Նրանց սրտին հայտնի կային վանա աղետալի անցքերը, և իրանց սրյունակից— դժբախտ Համազասպուհիի ցավալի նահատակությունը: Նրանք դիտեին և ա՛յն, թե այլ ևս ի՞նչեր պիտի ա՛ներ Մերուժանը...

Մայրը վաղուց լսած եր վորդու չար դիտավորությունները, բայց նա ամենայն զգուշությամբ ծածկում եր յուր հարսից, վախենալով, վոր խնդճ կինը, վորն առանց դրանց ևս շատ սիար եր յուր առողջությամբ, չկիսի կարողանար դիմանալ այդ հարվածներին: Բայց յերկար զաղտնիք պահել՝ անկարելի յեր, վորովհետև այսոր պետք է դար նրա մտուանը: Այդ եր պատճառը, վոր նրան վոքր ինչ նախապատրաստելու համար, յերեկ յերեկոյան կանչեց յուր մոտ և հայտնեց բոլորը:

Վանա ցավալի կործանումից հետո, վորպես հայտնի յե, Մերուժանը միայն յուր թիկնապահների փոքրիկ խմբով կարողացավ ազատվել յուր քաղաքացիների վրիժխնդրությունից: Ցեվ մտածելով, մի դուռե յուր Վոստանը մտնելու ժամանակ նույն վտանգներին հանդիպելի,— նա շտապից կես ճանապարհից հատաջադույն մի մարդ ուղարկել յուր մոր մոտ, վորպեսզի նախապատրաստվի վորդուն ընդունելու: Այստեղ, յուր տան մեջ, դիտավորություն ուներ փոքր ինչ զգաստ առնել, հանդստանալ մին-

չև հիսանելին պարսկական նոր զորքերը, վորոնց [illegible] անհամբերությամբ սպասում եր նա:

— Ճես հրամայել եյի՝ ինձ մոտ կանչել քաղաքապետին,— ասաց տիկինը:— Ճանկանում եյի իմանալ, արդյոք ի՞նչ կարգադրություններ և արել նա:

— Նա այստեղ է,— պատասխանեց հարսը:— Դեռ դու յեկեղեցուց չեյիր վերադարձել, նա շատ վաղ յեկել սպասում եր: Ի՞նչ կարգադրություններ պետք է աներ նա:

Հարցը մնաց առանց պատասխանի: Այդ միջոցին ներս վազեց մի ուրախ, վաուխուն որիորդ, վորը անդադար յուր վրա նայելով, մոտեցավ, հանգնեց տիկնոջ առջև և, յուր լի բերկրությամբ աչքերը դարձնելով դեպի նա, հարցրեց.

— Նայի՛ր, մայրիկ, այդ հագուստով լա՞վ է:

Դա Մերուժանի քույրն եր, զարդարվել եր, պատրաստվել եր յեղբորը հանդիպելու համար: Տան մեջ ամենքը տխուր էյին, նա միայն ուրախ եր: Մայրը նայեց նրա վրա, աչքերը լցվեցան արտասուքով: Նա խոսք չուտավ պատասխանելու յուր դստերը: Ի՞նչ ասեր, ի՞նչպես վշտացներ նրա մեջ այն ջերմ սերը, վոր ուներ նա դեպի յեղբայրը: Կարո՞ղ եր բայտատրել նրան, թե կյանքի մեջ կան այնպիսի հանգամանքներ, վոր բաժանում են քրոջը յեղբորից, մորը վորդուց: Որիորդը թեև մեծ աղջիկ եր, բայց այդ մասին շատ փոքր հասկացողություն ուներ: Նա լսել եր շատ բան, նրան ասել էյին բոլորը, բայց դեռ նա սիրում եր յեղբորը: Դա այն աղջիկն եր, վորին Սամվելի մայրը նշանել եր յուր վորդու համար, չնայելով, վոր Սամվելի սիրտը պատկանում եր Ռշտունյաց որիորդին—Աշխենին:

Շամասպուհին,— այսպես եր նրա անունը,— նկատելով մոր տխրած դեմքը, ընկավ նրա ծնկներին վրա և, նրա դողդողջուն ձեռքերը սեղմելով յուր բոցավառ շրթունքներին վրա, բացականչեց.

— Մայրի՛կ, սիրելի՛ մայրիկ, ինչո՞ւ յես լաց լինում, յեթե դու լաց լինես, յես էլ լաց կլինեմ...

— Մենք էլ լաց կլինենք,— ձայն տվեցին յերկու յերեխաները, վորոնք ապշած կնայում էյին այդ սրտաշարժ տեսարանի վրա:

Ցերեխաների մայրը առեց նրանց, և այրված սրտով դուրս յեկավ դահլեճից:

Տիկինը համբուրեց յուր դստերը, փայփայելով վեր բարձրացրեց, և ասաց նրան.

— Գնա՛, սիրելի զավակս, ասա՛, վոր քաղաքապետին իմ մոտ կանչեն: Ճես նրա հետ շատ կարևոր խոսելիքներ ունեմ: Պատվիրի՛ր սպասավորներին, վոր վոչ վոքի չեմ ընդունում: Իսկ յեթե ուր հայրը գալու լինի, նրան իմ մոտ թողնեն:

Որիորդը կրկին անգամ համբուրեց մոր ձեռքերը և հեռացավ:

Դահլիճում [illegible] միայն տիկինը: Վոչ մի ժամանակ նրա պայծառ խելքը այնպես մտայլված չէր լեղել, վորպես այս առավոտ: Վոչ մի ժամանակ նա այնպես անճարացած և այնպես կաշկանդված չէր լեղել անհնարին դժվարություններին մեջ, վորպես այս առավոտ: Վորքան մտածում էր, մի վորևե լեզք չէր գտնում: Մոր ղազմունքները մաքառում էին նրա մեջ: Ի՞նչպես ընդունել վորդուն,— մոլորյալ վորդուն, բայց,— սիրելի վորդուն: Դիցուք թե, ինքն հանձն առներ հաշտվել նրա հետ, այն հաստոտ, վոր յուր ազդեցությամբ կարող կլիներ ուղղել նրան, դարձնել նրան չար ճանապարհից: Բայց կարո՞ղ եր հաշտվել նրա հետ ժողովուրդը: Նա՛, վոր հայտնի պատերազմ եր սկսել ժողովրդի դեմ, կա՛մ հնազանդեցնելու նրան յուր չար կամքին և կա՛մ սրի ճարակ տալու նրան,— կարո՞ղ եր հաշտվել նրա հետ ժողովուրդը: Այդ ո՛ւմն, այդ ցավալի մաքերն էին ալեկոծում նրան, յերբ նեբս մտավ քաղաքապետը և, հեռվից մի քանի անգամ գլուխ տալով, մտատցավ, և լուռ, չվարյալ դեմքով կանգնեց տիկնոջ բազմոցի մոտ:

Ընայելով տիկնոջ մի քանի անգամ կրկնած խնդիրքին, վոր նստե, և չնայելով յուր հաստակին, այդ զառամյալ ծերունին զարճյալ կանգնած մնաց վոտքի վրա, պահպանելով ավանդական մեծարանքը դեպի հարգելի տիկինը:

— Ի՞նչ արեցիր, Գուրգեն,— հարցրեց տիկինը:

— Ամեն ինչ կարգադրված է, տիկին,— պատասխանեց ծերունին ախուր ձայնով:— Ամեն ինչ այնպես կկատարվի, վորպես դու հրամայեցիր:

Նա սկսեց մի առ մի պատմել, թե ընդունելությունը ինչ կերպով կկատարվի, կամ ինչ կարգադրություններ են յեղած:

— Դու կարծում ես, Գուրգեն, վոր անկարգություններ չե՞ն պատահի,— հարցրեց տիկինը, դեռ ևս վոչ բոլորովին հանգստանալով ծերունու տված տեղեկություններով:

— Ես վո՛չ միայն կարծում եմ, այլ հավատացած եմ, տիկին, վոր վոչ մի անկարգություն էլ պատահի: Իրավ է, մեր քաղաքացիք սաստիկ զայրացած են, բայց նրանք կղզյրանան, խակ յերբեք ոխրատան չեն լինի: Այդ յես դիտեմ, տիկին, հաստատ դիտեմ...

Վերջին խոսքերը մի ոգոցին նա յուր գլուխը մի քանի անգամ դրական կերպով շարժեց, և ապա շարունակեց.

— Ի՞նչ յեղավ տեր հայրը, ուշացավ տեր հայրը: Նրա քարոզը թեև վոքր ինչ յերկար տևեց, բայց բոլորովին հանգստացրեց ժողովրդին: Ավետարանից, մարգարեներից, առաքյալներից շատ որինակներ բերեց: Ցնծեցնող դուրս գալուց հետո, բազմություն չեր հետևում, խմբված էին բակում, դեռ ոտքացած կերպով վիճում էին: Տեր հայրը մտաննում եր այս և այն խմբին, խոսում եր, խրատում եր և հանգստացնում եր:— Այն ուրիշ բան կլիներ, տիկին, յեթե իշխանը պարսից զորքերով

մաներ յուր քաղաքը, այն ժամանակ անհնար կլիներ բնակիչներին ղըպել: Իսկ այժմ դալիս և մի քանի մարդիկներով մխայն,— և հայ մարդիկներով:

— Բայց հայությունը ուրացած մարդիկներով... ընդհատեց տիկինը դառնացած կերպով:

Ներս մտավ Դրան յերեցը:

— Ահա՛ և տեր հայրը,— ձայն տվեց ծերունին:

Այդ ալևոր քահանան, վոր դեռ պահպանել եր յուր առուչդ հասակի թե՛ յեռանդը և թե՛ կենդանությունը, իշխանական տան յերեցն եր: Նա մոտեցավ, վողջունեց և կանդնեց տիկնոջ մոտ:

— Նստի՛ր տե՛ր հայր,— ասաց նրան տիկինը:

Նա նստեց և սկսեց հաղորդել յուր արած կարդադրություններըն:

Վահանդուխտ տիկինը, յուր յերկու յերեխաների հետ, դուրս դալով դահլեճից, ուղիղ դիմեց յուր սենյակը: Յերկու յերեխաներից մեծը տղա յեր, իսկ փոքրը աղջիկ: Տղան հասկանում եր, վոր այն որ դալու յեր հայրը, և դեռ հիշում եր նրան, յերբ նա գնաց Պարսկաստան: Ծերը նրատեցին՝

— Մայրի՛կ,— հարցրեց տղան, յուր փոքրիկ թևիկներով քաշ ընկնելով նրա պարանոցից,— հայրիկը այսօր կբերի՞ ձին:

— Ի՞նչ ձի,— ասաց մայրը տխուր ձայնով:

— Չի՞ս իմանում, յերբ հայրիկը դնում եր, ասացի՝ ինձ համար մի ձի բեր, պատիկ ձի. նա պաչ արավ, ասաց՝ կբերեմ, շատ պատիկ ձի կբերեմ, ա՛յ, եսքան:— Նա ձեռքը բարձրացրեց ձիու մեծությունը ցույց տալու համար:

— Մենք ձիաներ շատ ունենք, զավակս,— պատասխանեց նրան մայրը:

— Մերոնքը մեծ են, շա՛տ մեծ են, յես պատիկ ձի յեմ ուզում, վոր ինքս հեծնեմ:

— Ծառաները կնստացնեն քեզ:

— Ցես խո Նուշիկ չեմ, վոր ծառաները բռնեն ու դնեն ձիու վրա. յես ուզում եմ ինքս նստել:

Նուշիկ փաղաքշական ձևով կոչում եյին նրա քրոջը, վորի իսկական անունը Միհրանուշ եր:

Ցեղբոր նկատողությունը, յերևի, վիրավորեց փոքրիկ Նուշիկին, վորը ծալ նման թռավ դահավորակի կողքում դրած բարձերից մեկի վրա և, կլորիկ վոտիկները շարժելով, ասաց.

— Տեսնո՞ւմ ես, ի՛նչպես հեծա:

Մայրը յերկուսին էլ դրկեց, համբուրեց, հետո հանձնեց դայակներին, վոր տանեն դրսում մեն ածեն, վորպեսզի իրան չխանգարեն: Ինքը մնաց միայնակ:

Դժբա՛խտ հանգամանքների դժբա՛խտ ամուսին... Վորդիքը ուրախ եյին հոր դալուստով, իսկ ինքը ուրախանալ չեր կարող: Նա սիրում եր

յուր ամուսնին, նա յուր մխիթարությունը միշտ նրա մեջ էր դտել: Իսկ այժմ վո՞րպես սիրել հուրացուղինն, վո՞րպես սիրել չարագործին: Այդ միտքը կատաղություն չուի ալևկոծում էր նրան,— ալևկոծում էր, վորովհետև սիրտը և միտքը չէին հաշտվում միմյանց հետ:

Յուր զավակներին հեռացնելուց հետո, նա դանվում էր հողևկան խորին տագնապի մեջ: Ներքին կռիվը, զղացմունքների սաստիկ մաքառումը՝ պրկել էին նրան տենդային հրաբորբոք դրության մեջ: Ահա՛ մի ժամ ևս... ահա՛ յերկու ժամ ևս... քաղաքի մունետիկը սիրտ քարողեր րոպեաբեր դալուստը, և ամեն ինչ սիրտ վճռվեր նրա համար...

Նրա դրությունը նմանում էր դատապարտյալի վերջին րոպեներին, վոր որհասական հուզմունքների մեջ սպասում է. ահա՛ բանդի դռները բաց կլինեն, դահիճները կմանեն, և նրան կտանեն դեպի կախաղանի վատը... Ինքը այդպես պետք է դիմեր այն մարդու դիրքը, վորին ամբողջ աշխարհը մերժում էր: Ցնծ նա պետք է վողջագուրեր յուր ամուսնին, այն ձեռքերով, վոր չաղախված էին յուր հարազատների անմեղ արյունով: Միթե նա չե՞ր լինի հայոց կանանցից ամենաթշվառը: Բայց նա սիրո՞ւմ էր... այո՛, սիրո՞ւմ էր...

Նա ձեռքը տարավ դեպի կուրծքը, սեղմից բորբոքված սիրտը, վոր փոքր ինչ հանդստություն առ ներքին վրդովմունքներին: Արտասուքը հեղեղի նման թափվում էր տատասկալ աչքերից, բայց սրտի կրակը չիջուցանել չէր կարողանում: Ցնորկար այդ դրության մեջ տանջվում էր նա:

Հանկարծ վեր թռավ և, վորպես մի խելագար, պղտոր աչքերը դարձրեց դեպի յուր սենյակի շուրջը: Աչքն ակռոով նայում էր այս կողմ և այն կողմ, և յուր անշարժ հայացքով, կարծես, մի բան վորոնում էր: Մի քանի քայլ փոխեց դեպի դուռը, բայց խոչդն կանդ առնց: Դարձյալ, վորպես մի անբևուլի զորության առաջ մղվելով, փոխեց քայլերը, մոտեցավ և, դողդողուն ձեռքը մեկնելով, կողպեց դուռը: Սկսեց՝ դիշերաշրջիկ լուսնոտի նման՝ դեղերել դեպի այս, դեպի այն անկյունները: Մոտեցավ լուսամուտներին, ցած թողեց վարադույրները: Կրկին մոտեցավ դռանը, աոուդելու, արդյոք փակվա՞ծ էր, թե վոչ: Նրա դեմքը այժմ խաղաղ էր. նա արդեն դտել էր մի միջոց, վոր կարող էր հանդստացնել իրան: Սկսեց նայել պատուհանները, սկսեց քրքրել բոլոր դարակները, վորոնց մեջ պահված էին յուր իրեղենները: Բայց վորոնածը չէր դտավ: Նրա աչքին ընկավ մի դեղեցիկ արկղիկ, վորի մեջ պահված էին յուր կարելու պարագայքը: Ուրախացավ նա, վորպես մի մարդ, վոր հանկարծ մի անսպասելի գանձ է գտնում: Վաղեց դեպի արկղիկը, բաց արեց, և նրա՛ մեջից դուրս հանեց մի փոքրիկ մկրատ: Մի քանի րոպե, այդ փայլուն գործիքը ձեռքում բռնած, հիացած հևրտով նայում էր նրա վրա: Նա դտավ ցանկալի առարկան: Դա կհանդստացներ նրան, և կվճռեր՝ նրա սրտում անվճիռ մնացած տարակուսանքը—նրա զղացմունքների անհաշտ յերկբայությունը...

Մկրտահ սուր ծայրը նախ սարսափ դեպի բարախող կուրծքը: Բայց մինչև սիրտը մխելու համար բավական կարճ էր: Հետո բաց սրսփ և մոտեցրեց յուր կոկորդին...

Այդ միջոցին, կարծես, վրկության հրնշահակը բռնեց նրա ձեռքը: Մկրտահը բարկությամբ մի կողմ նետեց, ասելով, «Վո՛չ, նա չարժե, վոր յես մեռնեմ նրա համար... Նա, այո՛, դավաճանեց յուր հայրենիքին, բայց դավաճանեց և— ի՛նձ»...

Ի՞նչ զորություն էր, վոր այդպես անսպասելի կերպով հեղափոխեց նրա միտքը: Այն զորությունը, վոր ամեն կրքերից ավելի աստիկ բռնանում է մնոջ զգացմունքների վրա— խանդոտությունը:

«Ես ճանաչում եմ նրան,— չարունակեց դառնացած կերպով,— նա՛ այնքան ցած չէր, վոր ուրանար յուր կրոնը, նա՛ այնքան անզութ չէր, վոր վտանգավոր անդր յուր հայրենիքի բախտը, և նա՛ այնքան վատասիրտ չէր, վոր նրան հրապուրեր Շապուհի խոստացած թագավորությունը... Բայց նա՛ այդ բոլորը հանձն առեց, և պարսից արքայի ձեռքում մի անարդ գործիք դարձավ,— միայն նրա քո՛ւրը ստանալու համար... Ինձ ասում էին, վոր նա սիրահարված է Շապուհի քրոջ վրա, բայց յես չեյի հավատում... Այո՛, յես չեյի հավատում, վոր նա՛ այն աստիճան անհավատարիմ կդառնար դեպի յուր յերկու զավակների մայրը, վոր յերկրորդ կին կրերե Արծրունյաց տան մեջ... Ի՞նչ կլինեի իմ զրությունը այնուհետև... Ճես պետք է պարսից արքայադստեր աղախինը դառնամ և նրա մազիկները չխոհեմ... Իսկ դեղեցիկ Վռամիղդուխտը կլինի վո՛չ միայն Վասպուրականի տիկնանց տիկինը, այլ ամբողջ Հայաստանի թագուհին... Իսկ յե՞ս... Վո՛չ, վո՛չ, չարժե մեռնել նրա համար... Իսկ նա՛ ի՞նձ համար՝ — արդեն մեռա՛ծ եր»...

Նստեց բազմոցի վրա, յերկու ձեռքով ծածկեց յերեսը, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվիլ նրա աչքերից: «Ա՛խ, Մերուժա՛ն, Մերուժա՛ն»... հառաչում եր նա, և դողդոջուն ձայնը խեղդվում եր դառն հեկեկանքների մեջ:

Մի քանի անդամ բազմեցին սենյակի դուռը: Վերջապես, լսեց նա, վեր կացավ, սրբեց աչքերը, և տհաճությամբ մոտեցավ, բաց սրսվ դուռը: Ներս մտավ աղախիններից մեկը:

— Ամենքը պատրաստվում են, տիկին,— ասաց նա,— չի՞ս հրամայում՝ հագցնել քեզ:

— Մոխրը հանդերձատունը, Սիրանուշշ, և դուրս բեր իմ սև պզեստները,— հրամայեց նա:

— Ինչո՞ւ սև, տիկին:

— Այսօր սո՛ւգն որ է, Սիրանուշշ,— պատասխանեց նա վշտալի ձայնով...

կեսօրից չորս ժամ անցել էր:

Մի խումբ ձիավորներ, փոշու ամպերի մեջ կորած, ամենայն արագությամբ արշավում էին Արևմտահայից դեպի Հաղամամիկբա տանող ճանապարհով: Վորքան մոտենում էին քաղաքին, այնքան ավելի փութացնում էին իրանց ձիերի ընթացքը: Նրանց թիվը շատ չէր. մեկը ձիավարում էր ամենից առաջ, վոր ձեռքում տանում էր մի կարմիր դրոշակ, նրա յետևից գնում էր մի սպիտակ ձիավոր, վոր բոլորի ղեկավարն էր յերևում, իսկ հետո էին ձիավորները,— ընդամենը՝ տասն և մեկ հոգի:

Այդ գնում էր Մերուժան Արծրունին, գնում էր դեպի յուր նախահարց Վոստանը— իշխանական մայրաքաղաքը— Հաղամամիկբա:

Այն կենդանի ճանապարհը, վորով անցնում էր նրա առաջավորը, և վորը ամբողջ որը լցված էր լինում յերթևեկների ուրախ բազմությամբ, այժմ բոլորովին դատարկ էր: Վոչ վոք չէր յերևում: Այդ շատ զարմացնում էր Մերուժանին: Նա անհանդիստ հերթով աչք էր ածում յուր շուրջը: Չէր վախենում հնճամիների մանդատից, վոր որվա այդ ժամուն ավելի յեռանդով էր գործում. չէր լսվում հերիաթների յերգը, վոր հիանդանացնում էր դեղեցիկ չոջակաչքը, և անհոգ հովիվի սրինգն անդամ յուել էր, վոչ ինքն էր յերևում և վոչ յուր խաշիններից: Ներան այնպես էր թվում, վոր անցնում և անապատներն միջով, ուր կյանքն ու գործունեությունը վաղուց արդեն դադարել էին:

Բայց նա այլ բան էր ապասում...

Նա ապասում էր, վոր յուր քաղաքացիք խառն բազմությամբ կդիմավորեն իրան, այդ ճանապարհի աջ և ահյակ կողմերը ծածկված կլինեն արանց և կանանց խումբերով, և բազմությունը ցնծության աղաղակներով ու հիացարանների հնչյուններով կառնե նրան մինչև յուր իշխանական սարայանքը: Բայց վոչ վոք չհայտնվեցավ: Մինչև անդամ յուր տոհմայիններից վոչ վոք չդիմավորեց նրան: Միթե յուր դալուստը հայտնի չէր նրանց: Այդ մտքին մի որ առաջ խմացում էր տվել յուր մորը: Ուրեմն ի՞նչ էր նշանակում այդ ընդհանուր բացակայությունը մարդկանց,— ա՛յդ անապատը:

Այդ միտքը վրդովեցնում էր նրան և լցնում էր նրա ալեծուխ սիրտը մի խուլ տարակուսանքով, վոր հետզհետե կատածի կերպարանք էր առնում: Հետ դառնալ՝ թույլ չէր տալիս նրա անառակման անձնասիրությունը, իսկ առաջ գնալու համար՝ վոչինչ բարիք չէր ապասում: Գուցե կհանդիպեր յուր քաղաքացիներն ապստամբությանը, գուցե գնդերը ձեռքում կդիմավորեին նրան... «Ինչ եղ վոր պատահելու լինի, փո՛ւթ չեղ,— մտածեց նա խորին արամասիրությամբ, և վճռեց առաջ գնալ:

Վերջապես, հասավ նա քաղաքապահներին: Նայեց դռան ճակատին, և տեսավ: Այդ հոյակապ դուռը,— վորի բարձր կամարները՝ ամեն մի հանդիսավոր մուտքերի ժամանակ՝ զարդացած էին լինում ծաղիկներով ու պատկերով,— այժմ ներկայացնում էր մի տխուր տեսարան: Դռան ճակատ-

որ պատած եր սև պատառաններով, իսկ վերևում փողփողում էին յերկու սև դրոշակներ: Այդպես անում էին մխայն այն ժամանակ, յերբ յերկրի իշխանի դաշտին էին ներս տանում: Իսկ այժմ ո՞վ եր մեռյալը... ո՞ւմ համար եր այդ սգավորությունը...

Սրտի խորին բաբախմունքով ներս մտավ նա:

Առջևից գնացող դրոշակակիրը ձիավորը առեց դուռից քարշ ընկած չեփորը և մի քանի անգամ հնչեցրեց: Նրան պատասխանեց կոշնակի ձայնը, վոր յերեք անգամ լսելի յեղավ Մայր յեկեղեցու բարձրությունից: Այդ ձայնը, վորպես յերկնքի սպառնական ձայնը, սարսափ պղտեց «ուրացողի» վրա...

Նա շարունակեց առաջ գնալ:

Ուրախ, աղմկալի Հածդամակերտը ներկայացնում եր մի մեռյալ քաղաք: Փողոցներում վոչ վոք չեր յերևում, չէին յերևում և անասուններ: Վո՛չ մի ձայն չեր լսվում, վո՛չ մի շշունջ անգամ չեր խռովում ընդհանուր դերեզմանական լռությունը:

Այն փողոցը, վորով գնում եր նա, և վորը ուղիղ տանում եր դեպի իշխանական ապարանքը, նրա վրա խիստ ծանր և սպանիչ տպավորություն եր գործում: Հատակը ծածկված եր մոխրով: Բոլոր տների դռները փակ էին, իսկ դռների ճակատները նույնպես պատած էին սև պատառաններով:

«Իմ քաղաքացիքը,— մտածում եր նա,— յերես են դարձրել ինձանից... նրանք իմ վրա նայել անգամ չեն կամենում... նրանք ինձ մեռած են համարում,— այո՛, բարոյապե՛ս մեռած»...

Բարկությունը խեղդում եր նրան, յերբ մտաբերում եր վաղեմի ժամանակները: Ճեղնչ էին որեր, յերջանի՛կ որեր, յերբ նա հաղթական փառքով վերադառնում եր պատերազմից, այդ փողոցի հատակը ծածկված եր լինում ծաղիկներով ու կանաչ տերևներով: Իսկ այժմ նրանց փոխարեն մոխիր եր ցանած: Դռների ճակատները զարդարած էին լինում դրոշներով, թավիշներով, դուչնզուչն կերպասներով և ամենագեղեցիկ դործվածներով: Իսկ ամբողջ քաղաքը սուգ եր ղգեցել: Կանայք և աղջիկունք, ծեր և տղա, տանիքներից ու լուսամուտներից վողջունում էին նրան: Իսկ այժմ վոչ մի ձայն չեր լսվում: Սկսյալ քաղաքաղռնից, մինչև յուր ապարանքը հասնելը, ամեն մի քայլում դոհեր էին մատուցանում նրա առջև: Ֆահանայական դասը, յուր ամբողջ սպասով, դղեսատավորված վոսկեհուռ դղեսաններով, խաչերով ու խաչվառներով առաջնորդում էին նրան, և որհնության շարականներ էին յերդում: Ինքը շրջապատված եր լինում յուր ավազներով, իսկ առջևից տանում էին իշխանական տան նժույգները, զարդարած ամենաթանդագին առապաններով: Իսկ այժմ դրանցից և վոչ մեկը չկատարվեցավ...

Նա հասավ իշխանական ապարանքը, բայց դռները յուր առջև փակված գտավ: Այդ սարսափեցրեց նրան: «Ուրեմն ինձ մերժում և և՛ իմ

տունը, և՛ իմ ընտանիքը»... մտածեց նա խորին, օրատատոչոր դառնությամբ:

Այստեղ էա նույն տխուր, նույն հուսահատական տեսարանը ներկայացավ նրա առջև: Իշխանական հոյակապ դռան փառավոր կամարները պատած էին սև պատառաններով, իսկ նրա աջ և ահյակ կողմերում վողվողում էին յերկու սև դրոշակներ:

Անհնարին խռովության մեջ՝ կանգնած եր նա հայրենական տան մուտքի առջև, և չդիտեր ի՛նչ անել: Այդ ահարկու մարդը, որի համար աշխարհում ոչինչ դժվարություններ, ոչինչ արգելքներ չկային, այժմ դանվում եր բոլորովին անել և հուսահատուր դրության մեջ: Մտածեց հետ դառնալ: Բայց ի՞նչպես հետ դառնալ: Ամոթը և նախատինքը խեղդում էին նրան: Մտածեց բաղխել դուռը: Իսկ յեթե բաց չանեյի՞ն: Եվ անպատճառ բաց չէյին անի: Այդ ատելության արհամարհանք, այդ ատելության դղրդանք նա չէր ապատում մորից և, մանավանդ, յուր կնոջից: Նրան, որ պես անատակ վորդու, թողնում էին դրսում: Դա մի ծա՛նր ապտակ եր նրա յերեսին. դա մի ո՛րան պատիժ եր նրա համար... Այդ բոլոր հանդիմանքը, այդ բոլոր ցուցմունքը ուղղակի ասում էին նրան. «Դո՛ւ արժանի չես վոտք դնելու հայրենական տան շեմքի վրա... Հուբացողի» վոտքերը կպղծո՛ն նրանց...

Նրա մարդկին և դառնում էին բոլորովին չվարյալ դրության մեջ. վոչ վոք նրանցից չէր համարձակվում մի բան ասել:

Դռան բարձրության վրա կար մի այլանդակող վերնահարկ, բայց յերեսով, վոր պատշգամբի ձև ուներ: Առջևից ծածկված եր վարագույրներով: Վարագույրները հետ դնացին, վերևում հայտնվեցավ մայրը: Տառապյալ կինը հազիվ հազ կարողանում եր իրան վոտքի վրա պահել: Նրա ձախ թևքից բռնել եր աղջիկը՝ — Մերուժանի քույրը, իսկ աջ թևքից բռնել եր հարսը— Մերուժանի ամուսինը: Վերջինի առջևում կանգնած էին Մերուժանի յերկու զավակները: Դրանց յետևում կարդով կանգնած եր իշխանական ամբողջ ընտանիքը: Ամենքը սգավորի հագուստով, ամենքը արտասվալի աչքերով: Տեսնելով նրանց, Մերուժանը ամբողջ մարմնով դողաց:

— Մա՛յր,— խոսեց նա խռովյալ ձայնով,— իմ քաղաքացիքը ինձանից յերես դարձրին, այժմ իմ հայրենական տո՞ւնն ել յուր դռները փակում և իմ առջև...

— Այո՛, Մերուժա՛ն,— պատասխանեց վերևից մայրը դառնացած հևոտով.— քո հայրենական տունը յուր դռները փակում և քո առջև, վորովհետև դու քո սրտի դռները փակեցիր թե՛ աստուծո, թե՛ քո հայրենիքի և թե՛ քո հղճի առջև... Ուրացողը, ապստամբը չի կարող մտնել այդ տունը, Մերուժա՛ն... Այն որից, վոր դու դավաճանեցիր քո յեկեղեցուն և քո Թագավորին,— այն որից պրկվեցար այդ տան դավակը լինելուց... Դո՛ւ, Մերուժան, այժմ այդ տան համար խորթ ես և ոտար, վորովհե-

տեվ դու արատավորեցիր Աբծրունիների պայծառ հիշատակը... Ուղղությունը միայն կարող է փրկել քեզ, Մերուժան... Դարձի՛ր չար ճանապարհից, դարձի՛ր քո մոլորություններից... Լսի՛ր, Մերուժան, մոր ձայնը, վոր դեռ սիրում է քեզ, վոր յուր դառն արատասուքների հետ այդ խոսքերը թափում է քո առջև... Լսի՛ր, Մերուժան, մոր ձայնը, վորովհետև նրա բերանով խոսում է ամբողջ Վասպուրականը... Ցեթե դու կամենում ես կրկին վայելել քո ընտանիքի և քո աշխարհի սերը, սնոտ և դառնաս չար ճանապարհից... Ահա՛ ուղիղ ճանապարհը, Մերուժան.— նա ձեռքը տարավ դեպի մայր յեկեղեցին և ապա շարունակեց.— Քո հայրերը, յերբ հոդնած, վաստակած տուն եյին վերադառնում պատերազմներից, նախ գնում եյին յեկեղեցին, գոհության աղոթք եյին մատուցանում, և ապա դալիս եյին իրանց ընտանիքի սերը վայելելու... Ցեթե դո՛ւ քո նախահարց հարազատ վորդին ես, հետևի՛ր նրանց որինակին... Այնտեղ, Մայր յեկեղեցում, քահանայական դասը և քո քաղաքի ծերերը սպասում են քեզ... Գնա՛, Մերուժան, նախ յեկեղեցին, հաշտվի՛ր Հիսուս Քրիստոսի հետ, ղղջա՛ քո մեղքերը, խոստովանի՛ր քո հանցանքները աստուծո տաճարի մեջ, և ապա վերադարձի՛ր,— այն ժամանակ քո տան դռները բաց կդտնես քո առջև...

— Այդ յերբի՛ք չե կարող լինել,— մռնչաց նա և յերեսը շուռ տվեց:

— Մայրի՛կ, մայրի՛կ,— վերևից լսելի յեղան յերիտասարդի ձայները.— ո՞ւր է գնում հայրիկը...

Այդ ձայները խոցոտեցին նրա սիրտը...

ԽՍՅԹ

Սոսկալի խռովության մեջ, վորպես մի խելագար, դուրս յեկավ Մերուժանը Հազամաճկերտից: Նրա ականջներին դեռ դարիում եյին մոր կծու խոսքերը և, սուր սլաքների նման, թափանցում եյին մինչև սրտի խորքը: Նրանից չեյին հեռանում կնոջ թախծալի դեմքը և սիրելի զավակների անմեղ ժպիտը, վորոնք, տեսնելով հորը, յուր տան վերնահարկի բարձրությունից՝ կամենում եյին ծոմ նման թռչել, և թևատարած նրա գիրկն ընկնել: Դեռ նրա առջևն եր սպաղեստան քաղաքը՝ յուր բոլոր տխուր և սպանիչ յերևույթներով:

Ի՞նչ եր այդ: Ցուր սրտին այնքան մոտ սլատկերները, յուր համար այնքան թանդագին եյակները այժմ, մթին ու մռայլ ուրվականների նման, հեռանում եյին նրան, հալածում եյին նրան, և ամենևին դադար ու հանգստություն չեյին տալիս:

Այնտե՛ղ, հայրենական խաղաղ ջաղթի մոտ, ուր հույս ուներ նա մխիթարություն գտնել, այնտե՛ղ, յուր ընտանիքի ջերմ գրկում, ուր վտակա-

դում եր նա վայելել մոր որհնությունը, կնոջ դվանքը և յուր դավակների սերը,— այնտեղից մերժվեցավ նա, այնտեղից արտաքսվեցավ նա, վորպես մի անառակ, վորպես մի մոլորյալ վորդի:

Կրքերի սաստիկ մաքառումը կատաղության չափ վրդովեցնում եր նրան: Վասպուրականի տերն ու իշխանը՝ այժմ նույն յերկրի ապրելիք դավակն եր: Նա՛, վոր նայում եր այդ ընդարձակ աշխարհի վրա, վորպես մի մոմի կտորի վրա, համոզված լինելով, վոր նրան ամեն ձև և ամեն կերպարանք կարող եր տալ,— այժմ նույն աշխարհից մերժվեցավ: Այո՛, մերժվեցավ, կորցնելով յուր նախնիքներից ստացած ընծ ժառանգությունը: Այն, վոր Բշնամու ահագին զորություններ չեյին կարող խլել նրանից,— խլեց մոր մի քանի խոսքը...

Ի՞նչ եր այդ:— Այդ հարցը նա անդադար տալիս եր իրան, և նրա վրդովմունքը ավելի և ավելի սաստկանում եր:

Ցուր խռովության մեջ, դուրս գալով քաղաքից, սմենևին նկատել չկարողացավ նա, վոր ինքը միայնակ է: Բավական հեռացել եր, յերբ հետ նայեց, տեսավ, վոր յուր Բիկնապահներն յուր հետ չեն: «Ներա՞նք ևս թողեցին ինձ»... մտածեց նա, և մի դառն ծիծաղ անցավ դայլայացած դեմքի վրա:

Նրա Բիկնապահները հազվագեպ բացիկ եյին: Հայրենի քաղաքի տխուր տպավորություններն ներքո, վորոնք այնքան սաստիկ ազդեցին նրանց սրտերի վրա, նրանք մոռացան իրանց իշխանին: Մյուս կողմից, յերկար տարիների բացակայությունը և ընտանեքի կարոտությունը՝ ձգեց նրանց դեպի իրանց տները:

Արեգակը վաղուց արդեն մայր եր մտել, յերեկոյան քամուց խավարը պատել եր շրջակայքը: Մերուժանը այժմ միայն դրան յուր բոլորովին լքյալ դրությունը: «Ուր գնամ»... այդ միտքը սկսեց տանջել նրան: Ցերկրի տերը յուր յերկրում մի անկյուն չեր գտնում դլուխը դնելու...

Սաստիկ հոգնած եր նա: Վանա դժբախտ անցքերից հետո, ամբողջ յերեք որ ճանապարհի վրա, յեր, առանց մի տեղ դադար առնելու: Բայց դրանից, հոգեկան ծանր տանջանքները բոլորովին վատառարեկ եյին արել նրան: Վարանում եր մի տեղ՝ փոքր ինչ հանդստանալու: Գյուղերը մտնել չեր կարող, դյուղացոց կոպտությանը չհանդիպելու համար: Ո՞ւր գնար: Ամեն տեղ գիտեյին նրա մասին, ամեն տեղից հալածված եր նա:
— Այդ բոլորը անցնում եր նրա մտքով, և նա, առանց մի վորևե վրոյշման հասնելու, շարունակում եր քշել յուր ձին, թեև չդիտեր, թե ուր և գնում: Հոգնած եր և ձին, վոր դժվարությամբ եր տեղում քայլերը:

Հոգնածության հետ սկսեց տանջել նրան և քաղցը: Ամբողջ որը վոչինչ չեր կերել: Նա, իբրև պատերազմական մարդ, սովոր եր բացօթյա կյանքին, կարող եր մի ժայռի, մի ծառի ներքո դլուխը դնել և հանգստանալ: Բայց ի՞նչ անել քաղցի հետ: Բնությունը իրանը պահանջում եր:

Մյուս կողմից, մի խուլ կասկած ալեկոծում էր նրան։ Այդ վերին աստիճանի աներկյուղ և անձնավստահ մարդը սկսել էր տատանվել։ Ինչ լեթե հետամուտ լինեն ինձ... մտածում էր նա։ Ծուռ քաղաքում, մոր յերկյուղից, վոչ վոք չհամարձակվեցավ նրա վրա քար նետել։ Մայրը, ի հարկե, ամենախիստ պատվերներ տված կլիներ այդ մասին։ Բայց ո՞վ էր արգելում մի քանի ստահակների՝ դաղտնի դուրս դալ քաղաքից և նրա յետևից ընկնել։ Նա կյանքից յերկյուղ չուներ, բայց կյանքը նրա նպատակների համար հարկավոր էր։ Այդ մտքով շուռ տվեց յուր ձիու դլուխը, և դուրս յեկավ ուղիղ ճանապարհից։

Դուրս դալով ուղիղ ճանապարհից, դիտավորություն ուներ՝ խոտորնակի շավիղներով հասնել մի ամայի տեղ, ուրքր լինչ հանդստանալ և ձիուն հանդստացնել, և ապա շարունակել յուր ուղին։ Նա աշխատում էր՝ չկորցնել դիշերային խավարը, այլ մթնով դուրս դալ յուր իշխանության սահմանից, վորը արևելյան կողմից շատ հեռու չէր։ Այստեղ ամեն վոք կարող էր ճանաչել նրան, այստեղ նա վտանգի մեջ էր։

Յերկար ձիավարում էր, բայց տակավին մշակության դաշտերի և անդաստանների միջից չէր դուրս յեկել։ Մշակությունը նշան էր մարդու ներկայության, վորից խորշում էր նա։ Վորոնում էր անապատ, ամայություն։ Տեղորյակը վորքան և ծանոթ էլին նրան, այնուամենայնիվ, տիրող խավարը արգելում էր վորոշել, թե վո՛րտեղ է գտնվում։ Նա անցնում էր անդիտակցության և տարակուսանքների միջով։ Վերջապես, դուրս յեկավ մշակված դաշտերից։ Այժմ նրա առջև տարածվում էլին խոտավետ մարդագետիններ։ Այդ արդեն նշան էր, վոր մոտենում է լեռների տորոտանքին։

Մի քանի անգամ նրա ականջներին զարկեց շան հաչելու ձայն։ Վոչինչ ձայն չէր կարող նրան այնքան ախորժելի լինել, վորպես այդ ձայնը։ Մտածեց, կա՛մ հովիվների յե մոտեցել, կա՛մ վորսորդների։ Թե՛ առաջինները և թե՛ վերջինները նրա համար անվնաս մարդիկ էլին։ Ձիու պլուխը դարձրեց դեպի այն կողմը, վորտեղից լսվում էր ձայնը։ Յերբ բավական մոտեցավ, մեկ շան տեղ՝ սկսեցին հաչել մի քանիսը։ Նա շարունակում էր դնալ, մինչև շները խմբով առաջ վազեցին և նրա ճանապարհը կտրեցին։ Անհնար էր ազատվել այդ դազաններից։ Նա յուր հետ մի այլ զենք չուներ, բացի դաշույնից։ Հասկացավ, վոր հովիվների հանդըվանի յե մոտեցել։ Բայց վիրավորել կամ սպանել հովվի շանը,— այդ նշանակում է՝ սպանել նրա յեղբորը կամ լավ բարեկամին։ Այնուհետև պետք է դործ ունենալ ուղղակի հովվի հետ։ Նա միայն պաշտպանողական դիրք բռնեց։ Կատաղի դազաններն ամեն կողմից շրջապատել էլին նրան, և ամենահանդուգն կերպով հարձակումներ էլին դործում։ Անտարակույս, պատռտպատռտ կանէլին, յեթե ձին չպաշտպաններ նրան։ Վոր կողմից վոր հարձակվում էլին, քաջասիրտ անասունը խիուչն շուռ էր դալիս և աքացի յեր տալիս։

Շներն աղմուկից, նիզակը ձեռին, մոտ վազեց մի հովիվ, վորը խաբերի մի քանի հարցրեց.

— Ո՞վ ես, ի՞նչ գործ ունես այստեղ:

Նա պատասխանեց.

— Նախ հանդստացրո՛ւ շներիդ, հետո կիմանաս, թե ինչ ում եմ:

— Իմ շները չեն հանդստանա, մինչև դու չասես թե ով ես:

Նկատելով, վոր կռվից հովվի հետ միեժելը բոլորովին աղաղդյուն կլիներ, ասաց նա.

— Ես Վորսիրանի սեպուհն եմ, վորսորդության ժամանակ մուքը վրա հասավ, մոլորվեցա և կորցրի իմ մարդիկներին:

Պատասխանը վոչ միայն գոհացուցիչ եր, այլ շատ փաղաքշական եր հովվի համար, վոր Վորսիրանի բարձրաստիճան սեպուհը, հանդամանքներից ստիպված, նրա տաղավարում դիշերային պատսպարան եր խնդրում: Նա ասատեց, շները լռեցին: Հետո մոտենալով, բռնեց ձիու սանձից ասաց.

— Հետևիր ինձ, տե՛ր սեպուհ:

Շները նկատելով, վոր իրանց մեծավորը վորպես բարեսրտությամբ վերաբերվեցավ դեպի նորեկը, իրանք ևս հանդստացան, և յուրաքանչյուրը դնաց յուր տեղը:

Տարածամ հյուրին հովիվը տարավ յուր տաղավարը, վորը այնքան հետու չեր: Իսկույն լապտերը վառեց և, տարածելով տաղավարի հատակի վրա մի թանձր թաղիք, խնդրեց նստել, իսկ ինքը մնաց վոտքի վրա՝ նրա սպասում:

— Նստիր և դու, բարի հովիվ,— ասաց նրան Մերուժանը.— մի ծածկի տակ հյուրը և հյուրընկալը պետք է հավասար բարձի վրա նստեն: Հանդամանքները ինձ բերեցին քո տաղավարը, և ես շատ ուրախ եմ, վոր լավ մարդու հանդիպեցա:

— Բայց ինձ պետք է նախ իմ հյուրի հանդստության մասին հոգալ, տե՛ր սեպուհ,— պատասխանեց հովիվը, վոտքի վրա մնալով:— Ճանապարհից յնկած մարդը ուտելու պետք կունենա:

— Ի դուր նեղությունն մի՛ կրիր,— ասաց հյուրը:— Ինչ վոր ասելիս ավել է, ինչ վոր պատրաստի կա, յես նրանով ևս կդոհանամ: Բեզ մոտ, ի հարկե, հաց կամ պանիր կլինելի, իսկ յեթե փոքր ինչ մածուն ավելացնես, դա ինձ համար ամենատաղավելիան ընթրիք կլինի: Ես երազ շատ քաղցած եմ:

Տաղավարը մի չարժական քառակուսի սենյակի նմանություն ուներ, վորի ստորին մասը կազմված եր բարակ և կլորիկ ճողերից, վորոնք միմյանց հետ կապված եյին դուրնղուրն դերձաններով հյուսվածքով, վոր զանազան նկարներ եյին ձևացնում: Իսկ ձեղունը պատած եր նուրնյնաձև դունավոր հատ կապերաններով, վոր տարածված եյին գմբեթաձև առաստաղի վրա: Դեպի ամեն կողմ նայելիս, աչքի յեր զարկում մի առանձին

չքեղություն, վոր հասարակ հովվի կացարանի համար բավական չռայլ եր։ Այդ դրդեց Մերուժանին հարցնել.

— Ո՞ւմ հոտերն են արածում այստեղ։

— Տերունի յին,— պատասխանեց հովիվը մի առանձին ձայնով, վոր արտահայտում եր նրա անմեղ հպարտությունը։

Մերուժանի դեմքի վրա անցավ մի թեթև չվոհեւթյուն, և նա յերեսը խոհուն շուռ տվեց, վոր հյուրընկալը չնկատեւ յուր խռովությունը։ «Տերունի՛»,— մտածեց նա, և մնաց չվարած։ Նա դանվում եր յուր սեփական հովիվների տաղավարում։ Հոտերը «տերունի» եյին, այսինքն՝ պատկանում եյին իշխանական տանը։ Հովիվը, ինչպես յերևում եր, չեր ճանաչում յուր տիրոջը։ Բայց մթթե չի՞ր դանվի նրա ընկերների մեջ մեկը, վոր ճանաչեր նրան։ Նա քաշվեցավ դեպի տաղավարի մթին անկյունը, ասելով.

— Այդ լապտերը վոչք ինչ հեռացրու, և ավելի լավ կանես, յերե դրսում քարշ տաս։ Իմ աչքերը սովորիկ խոցոտվում են լույսի վրա նայելիս։ Առանց դրան էլ, շուտով լույս կլինի։ Ահա՛, լուսինը դուրս է գալիս։

Հովիվը կատարեց հրամանը և հեռացավ ընթրիք պատրաստելու։ Նա յուր ընկերների ղեկավորն եր յերևում։ Իսկույն մի դառն մորթեցին, և տաղավարից վոչք ինչ հեռու կրակ վառեցին՝ քամա հանց թխելու համար։ Իսկ ղեկավորը յուր հյուրին միայնակ չթողնելու համար, կրկին վերադարձավ նրա մոտ։

Մերուժանը տակավին դանվում եր այն մտածության մեջ, թե ինչը վորոշելի մեջ եր ընկած, և թե նախախնամության կամքը մատնեց իրան այդ պարզամիտ հովիվների ձեռքը, վորոնք, վորքան բարի եյին, նույնքան ավելի անհաղորդ եյին դեպի ամեն վատություն։ Նրանց համար տերը, իշխանը վոչինչ նշանակություն չուներ, յերե աստուծո ուղիղ ճանապարհով չեր դնում։ Բայց Մերուժանը սիրում եր ճակատագրի խաղերը, և անհամբերությամբ սպասում եր, թե ինչո՞վ կվերջանա այդ դառն կատակը։

— Նստի՛ր,— կրկին դարձավ նա դեպի հովիվը։— Դու քո դործը վերջացրիր, այժմ կարող ես նստել։ Ի՞նչպես է քո անունը։

Հովիվը դժրձյալ չհամարձակվեցավ տաղավարի ներսումը նստել, այլ տեղավորվեցավ մուտքի մոտ, դրսումը, և մի առանձին բավականությամբ պատասխանեց.

— Դու իմ անո՞ւնն ես հարցնում, տե՛ր սեպուհ։— Տերերը իմ անունը Մանեճ դրեց, բայց մարդիկ Մանի յին կոչում։

— Ճես էլ Մանի կկոչեմ, այդպես ավելի լավ է։— Ասա՛ ինձ, բարի Մանի, վո՞րտեղ և այժմ քո տերը, ի՞նչ լուր ունես Մերուժանից։

Այդ անունը լսելիս՝ հովվի արևից այրված դեմքը ավելի մռայլվեցավ և, յուր խռովությունը ծածկելով, ասաց.

— Ի՞նչ դիտեմ, տե՛ր սեպուհ, այդ դու պետք է լավ դիտենաս, քեզ ճո՛րտեղ է նա և ի՞նչ է շինում... Այստեղ, այդ լեռների մթության մեջ, մեզ խեստ սակավ լուրեր են հասնում, և ինչ էլ վոր հասնում են, սխո՛ւր են, շատ սխո՛ւր... բոլորովին այլում են մարդու սիրտը...

Ցնծում էր, վոր սիրտս Մանին չէր կամենում վորսիրանի սեպուհի առջև, վորպես մի ոտար մարդու մոտ, անվայել կերպով վերաբերվել դեպի յուր իշխանը, քանի նրա մասին շատ սակավ բան դիտեր, բայց վորքան էլ և դիտեր, յուր համար սաստիկ անմխիթարական էլին:

Մոտ վաթսուն տարեկան կլիներ Մանին, բայց տակավին պահպանել էր յուր յերիտասարդական ժրությունը: Վաստուրականի լեռների հովիվները զարկրոլ են ալրում և հագիլ են ծերանում: Խոշոր մարդ էր նա, դեմքի նուիրական խոշոր գծագրությամբ, վոր արտահայտում էր անկեղծ և ամուր բնավորություն: Աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի խանձություն:

— Դու տեսե՞լ ես Մերուժանին, հարցրեց ծպտյալ սեպուհը:

— Տեսել եմ, ինչպես չեմ տեսել,— պատասխանեց նա վշտալի ձայնով:— Բայց այն ժամանակ դեռ շատ յերիտասարդ էր, ընչացքները դեռ նոր էին սկսել ածել: Հետո դնաց Պարսկաստան, այնտեղ պարսից անուրեն թագավորը խելքից հանեց նրան... Այնուհետև շատ ժամանակ է, վոր չեմ տեսել:

— Այդ բոլոր հոտերը Մերուժանի՞ն են պատկանում:

— Բոլորը, տե՛ր իմ: Ցերինքի աստղները քիվ և համբարք ունեն, բայց նրա անասունները չունեն: Այստեղ միայն արածում են նրա վոչխարների հոտերը. յուրաքանչյուր հոտը մի հազար և մի հատ. սևը առանձին, ճերմակը առանձին, և մյուս գույները իրանց կարգով: Բայց անցի՛ր, տե՛ր սեպուհ, այդ լեռան մյուս կողմը, այնտեղ կտեսնես նրա այծերի հոտերը, զարմանալ յուրաքանչյուրը դասավորված իրանց գույների և բուրդերի համեմատ: Մի փոքր հեռու դնա՛, տե՛ր սեպուհ, դեպի Ցերիմանդունիք, այնտեղ կտեսնես նրա ձիանների, ջորիների և ավանակների յերամակները, և կհիանաս նրանց վրա նայելիս: Այնտեղից անցի՛ր, տե՛ր սեպուհ, դեպի Անձևացյաց կողմերը, այնտեղ կտեսնես նրա արջառները, կովերի և յեզների նախիրները: Հետո դնա՛ տե՛ր սեպուհ, դեպի Տիգրիսի Ընդամառն ափունքը, դեպի Ջերմաձոր, այնտեղ ճահճային յեղեգնարույրների մեջ արածում են նրա դոմեշների դեր ու պարարտ խումբերը:— Մի խոսքով, ինչո՞ւ ես դուր դլուխդ ցավացնեմ, տե՛ր սեպուհ, սկսյալ Զարեվանդից մինչև Կորդիք և այնտեղից մինչև Վանա ծովակը, Մերուժանի անասուններն են արածում: Մի ունի այդքան անչափ հարստություն, վորքան նա ունի: Աստված նրան ամեն կողմից լիացրել էր, աստված նրան շա՛տ էր տվել, բայց նա չիմացավ դոհացնել յուր աստուծուն...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին ծերունու ձայնը դողալի կերպով դողդողաց:

— Գալի՞ս է յուր անասուններըը տեսնելու։

— Վոչ մի անգամ չի եկել։ Նա չդիտե, թե ի՞նչ ունի և վո՞րքան ունի։ Նա մանկությունից սկսեց միայն կռիվներով զբաղվել և յուր գործին չնայել։ Բայց այդպես չեր հանդուցյալ հայրը։ Ամեն առավոտ, աշնան ժամանակը, կգար։ Մենք առաջուց կլվանայինք, կմաքրեյինք վոչխարները, և սպիտակ, ճյունափայլ հոտերը կհանեյինք նրա առջև։ Նա կնայեր, և ի՛նչ կտար աստուծուն։ Այդ տաղավարի մեջ չատ անգամ կբակրել եմ նրան։ Կնստեր և մեծ բավականությամբ կուտեր հովվի աղքատիկ ճաշը։

— Այժմ ո՞վ է նայում այդքան հարստությանը։

— Տիկինը։ Թո՛ղ աստված նրան յերկար կյանք տա և մեր գլխից մի՛շտ անպակաս անե։ Նա խելքի և իմաստության մի մեծ ծով է։ Հանդուցյալ նահապետի մահից հետո, նա յե կառավարում բոլոր գործերը։ Կգա, կտեսնե, կուրախանա, և ամեն բանի մասին հարցուփորձ կանե։ Նա վո՛չ միայն ճանաչում է յուր բոլոր հովիվներին՝ իրանց անուններով և տեղերով, այլ ճանաչում է յուր անասուններից չատերին։ Գիտե, վորը վորքա՞ն է մեծացել, կամ վորը քանի՛ ճագ է բերել։ Նա էլ ինձ Մանի յե կանչում։ Ախորժելի յե լինում ծառային, յերբ տերը նրան ճանաչում է և յուր անունով է կանչում։ Բայց այդպես չե Մերուժանը, յերեք մոտից անցնելու լինեմ, չի լսանա, թե յես ով եմ, թեև քառասուն տարի յես նրանց անասուններին վրա կյանք եմ մաշում։ Այդ վորքր ժամանակ չե՛, տե՛ր սեպուհ...

— Ի՞նչ են անում այդքան անասունները։

— Դեռևս հարցնո՞ւմ ես, տե՛ր սեպուհ,— ասաց նա, և մի զարմացական ժպիտ անցավ նրա բարի դեմքի խորշոմների մեջով։— Ամեն շաբաթ հարյուր հատ ամենալավներից ուղարկում եմ իշխանական տան խոհանոցի համար։ Գիտե՞ս, վո՛րքան մարդիկ այնտեղ հաշ են ուտում։ Ամեն որ մի քանի հարյուր հոգի սեղան են նստում։ Այնպես ել յուղը, պանիրը, մածունը,— բոլորը գնում է իշխանական տունը։ Հետո, ընծաներ են լինում, աղքատներին են բաժանում, մատաղ են անում, բայց աստված այնքան առատություն է պարգևել, վոր այդքան ծախսվում է, և յերբեք չե սպառվում։

Մինչդեռ անծանոթ տերը և յուր հովիվը այդպիսի մտերմական խոսակցության մեջ էին, լուսինը արդեն բավական բարձրացել եր հորիզոնից, և լուռ ու խաղաղ չրջակայքը հանդչում եր սքանչելի լուսավորության մեջ։ Տաղավարի հանդեպ, փոքր ինչ հեռու, վաղվում եր կրակը, և նրա բոցափայլ լույսի մեջից յերևում էին մյուս հովիվները, վոր բոլորել էին կրակի չուրջը։ Նրանցից վոմանք փայտյա չամփուրներով զառան մեն էին խորոված, վոմանք յերկաթյա կասկարայի վրա թաքսահաց էին թխում, բայց, միևնույն ժամանակ, չէին դադարում շատա-

խոսել, ծիծաղել և դանազան զառամություններ անել իրանց վերաբերյալ հյուրի մասին:

Վերաբերյալք հայտնի էին իրանց առաքում սովորություններով, այդ պատճառով, ժողովրդի բերանում առնդված բոլոր ծիծաղելի առակները նրանց էին վերաբերում: Հավիխնելից մեկը ասաց.

— Եկեք վերաբերյալք հյուր չեղան մեկ տան մեջ. տանտիկինը աև պողոճն ու սև չամիչը խառնեց միմյանց և դրեց նրանց առջև: Պողոճներն սկսեցին ծախչել: Ընկերը ընկերին ասաց.— Ա՛սաջ այդ վատումներն ուտենք, քանի դեռ անոանները քնած ենք:

Ամենքը ծիծաղեցին և յուրաքանչյուրը սկսեց յուր յուծն ու խմացածը պատմել: Եկիկար պատմում էին նրանք, և յերբեմն առանձին-առանձին մոռանում էին ասղավաբին, հետևից հնաոքքրությամբ նայում էին վերաբերյալի հյուրի վրա, կարծես, աուղելու համար, թե ո՛րքան ճըշմարիտ էին իրանց պատմածները:

Ընթրիքի սեղանը Մերուժանի սպասածից ավելի ճոխ դնովեցավ: Փայտյա խանի մեջ դրվեցավ նրա առջև թափա հաց, պանիր, յերկու դլուխ սոխ, խոկ խորոված չամիուրներով տաք-տաք բերում էին, յերբ սպասվում էր, դարձյալ կրկնում էին: Այն մարդը, վոր հայոց Թագավորի սեղանի մոտ նախասպասիվ և առաջնակարդ նախարարի բարձ ուներ, այն մարդը, վոր պարսից Թագավորի հետ չատ անգամ մեկ թախտի վրա յեր ճաշել,— յերբեք այնպիսի ախորժակով չեր կերել, վերևում ասում եր նա հովվի պարզ սեղանից: Բարեսիրտ Մանիկ մոտ դնովեցավ մինչև անգամ դինի: Եերբ սեղանը դրեցին, նա անցավ տաղավարի մի կողմը, մառնեղոլ վորից դեսինը, և դուրս բերեց մի խեցեղեն վոտքիկ ման, ասելով.

— Ես դինին միշտ այդպես Թագում եմ, այդպես ավելի լավ և վնասակար, ա՛յր սեղան, թե՛ առանց կմնա, և թե՛ արևի տաքությունից չի քայլայի:

Մերուժանը խնդրեց նրան, վոր ինքն ևս սեղանակից լինի, վորը մեծ դժվարությամբ ընդունեց, ասելով.

— Այդ ինձ համար չնախադասվեց մեծ չնորհ և, ա՛յր սեղան: Թո՛ղ Ծերունի Մանիկ առիթ ունենա մարդկանց մոտ պարծենալու, վոր յուր կյանքում մի անգամ մի սեղանի հետ հաց և կերել:

Նա նստեց և դինու ամանը դրեց յուր մոտ:

Առաջին Թաղը Մերուժանը քամեց մինչև վերջին կաթիլը: Այդ տեսնելով, Մանիկ խրախուսվեցավ, և սկսեց թե՛ ինքը խմել, և թե՛ ավելի հաճախ մատուցանել Թաղը յուր հյուրին: Ծերը բավական խմել եյին, նա դարձավ դեպի հյուրը, հարցնելով.

— Ասա՛ ինձ, ա՛յր սեղան, դու ի՞նչ համբավ ունես Մերուժանից: Դու աշխարհն մարդ ես, դիտես նրա չարն ու բարին: Մենք կորլված ինք աշխարհից, չդիտենք, թե վո՛րտեղ ի՞նչ և կատարվում: Ճշմարիտ և ա՛յն, վոր խոսում են...

— Ի՞նչ են խոսում:

— Ի՞նչ ասեմ... դու ինձանից լավ գիտես, տե՛ր սեղուհ... լեզուս չի բռնում, որ ասեմ...

— Ես էլ ուղիղը չգիտեմ, բարի Մանի՛... շատ բան են խոսում... ո՞ր մեկին կարելի չէ հավատալ... Ես միայն այդքանը գիտեմ, որ չուտով կդա Մերուժանը և, շատ կարելի չէ, որ նա հայոց թագավոր դառնա...

Հովվի խորհրդավոր պատած դեմքը բոլորովին մռայլվեցավ. վերջին խոսքերը, ինչպես ակ ուրախացնելու նրան, որ յուր տերն ու իշխանը թագավոր և դառնալու, ընդհակառակն, ավելի տխրացրին:

— Այդ լավ չէ,— ասաց նա վշտալի ձայնով.— այդ աստուծո կամքին հակառակ բան է: Թագավորը պետք է թագավոր լինի, իսկ իշխանը՝— իշխան: Աստված ինձ կյանքը, չքնի չես մտածելի Մերուժան լինել: Ես նրա հովիվն եմ, և պետք է դոհ լինեմ իմ վիճակով:

— Բայց Մերուժանի նախնիքը նույնպես թագավորներ են չեղել,— ընդհատեց հյուրը:

— Այդ չես գիտեմ, չեղի՞լ են, թե ոչ, դուցե չեղել են: Բայց ի՞նչ ուներ նա պակաս մի թագավորից: Նա հենց յուր աշխարհի թագավորն եր: Ցերասխից սկսած մինչև Վանա ծովակը, տարածվում է նրա իշխանության չերկիրը: Մի՞թե Արշակ թագավորը այդքան չերկիր ունի՞: Ես շատ եմ թափառել, տե՛ր սեղուհ, չես շատ տեղեր եմ տեսել: Ես տեսել եմ Արշակ թագավորի ձիանների չերամակները, տեսել եմ և նրա վոչխարների հոտերը, բայց մեր ունեցածի կեսը, կեսի կեսը, չեն լինի: Ես տեսել եմ Արշակ թագավորի վորսորդության լեռները և նրա անասունների արոտամարգերը. դարձյալ մեր ունեցածի չափ չեն լինի: Այլևս ի՞նչ ուներ պակաս Մերուժանը, որ աստուծո կամքին հակառակ դնար... և թե՛ յուր հոգուն և թե՛ յուր աշխարհին մեղք ավելացներ... Դա՞ն է այդ բոլորը, շատ դա՞ն, տե՛ր սեղուհ... Ո՛ղ աստված ինքը մի վոդորմուն յուն անե, չորը խափանե և բարին առաջնորդե...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին, նա լցրեց թասը, նայեց դեպի չերկինքը, և աղոթելով դատարկեց, կարծես, որպի բոցն ու կրակը հանդցնելու համար:

Մերուժանը ղրացվեցավ: Մի խուլ խայթ սկսեց խայթել նրա սիրտը... Ցերկրորդ թասը լցրեց նա, և առաջարկեց յուր հյուրին, ասելով.

— Խմի՛ր, տե՛ր սեղուհ, դու ևս խնդրի՛ր, որ աստված չորը խափանե և բարին առաջնորդե: Մերուժանը վորպես իմ, նույնպես և քո իշխանն է: Ես նրա նվաստ հովիվն եմ, իսկ դու նրա հարգելի սեղուհներից մեկին ես: Աղոթե՛նք մեր իշխանի համար. ամենակալը կլսե մեր ձայնը:

Դողդողալեն ձեռքով ընդունեց նա բաժակը և մնաց չխոթված, տատանման մեջ: Նա պետք է աղոթեր յուր չարություններին համար, նա

պետք է աղոթեր մի մատուռում, վորին, պարսից արքայի սովև, հրապարակավ ուխտել էր չհանապարհել: Նա պետք է աղոթեր, վոր այդ մատվածը դարձներ իրան չար ճանապարհից: Նա պետք է յուր լեղվով կարդար յուր մեղքյահանը: Բայց ինչ արտով կարդար:— Դեռ չղջացած, դեռ չհաշտված արտով: Այդ խիստ ծանր էր նրա համար:— Յուր հյուրընկալը առաջին դժվարին դրության մեջ դրեց նրան: Ի՞նչպես կեղծել, ինչպես խարդավանել: Ներկար տատանմունքից հետո, վերջապես, կրկնեց նա յուր հովվի խոսքերը, և Յեսսը դատարկեց...

Նա խիստ հեռացավ անդանից: Հովիվը նկատեց նրա թախծությունը և կարեկցաբար հարցրեց.

— Դու, ան՛ծ անպուհ, վորպես ճանապարհից յնկած մարդ, յերևում ե, վոր շատ հոգնած ես: Բնա խիստ կպատրաստեմ քո անկողինը: Անուշ քունը միակ դարմանն ե հոգնածության: Քո անկողինը թեև անուշ կլինի, բայց հանդիստ կլինի, քնդ կտամ իմ վերարկուն, կփաթաթվես նրա մեջ և կքնես: Իսկ բարձի փոխարեն, այդ տոպրակը կդնես դլխիդ տակին: Նա լցված ե խիստ փափուկ խոտով, փետուրից ավելի կակուղ ե այդ խոտը:

Մերուժանը, չնորհակալություն հայտնելով բարեսիրտ հովվի հոգածությունների համար՝ ասաց.

— Թիչերը դեղեցիկ ե, Մանե, իսկ սերուն լուսինը լցեց իմ քունը: Բայց քո գինին այնքան ախորժելի յեր, վոր բորբոքեց իմ դլուխը: Կցանկանայի մի փոքր ման դալ, մի փոքր ցրվել սրտիս ամբոխմունքը: Առաջնորդիր ինձ, բարի Մանե, վոր քո հնարը կրկին չխանգարվեն ինձ:

Մերուժանը վեր կացավ, իսկ Մանին առավ յուր ցուրը, ընկավ նրա առջևը, հանդցնելով, թե դեպի վո՛ր կողմն ե ցանկանում դնալ:

— Դեպի լեռան կողմը,— պատասխանեց նա:

Նրանք անցան անտառների լուռ և խաղաղ հանդրվանի միջով և մոտեցան լեռան ստորոտին:

— Դու ինձ միայնակ թո՛ղ, բարի Մանե,— ասաց նրան Մերուժանը:— Այստեղ յես վոչ ոքից չեմ պահանջում, հետո կնստեմ մի ժայռի վրա, և նրա բարձրությունից կնայեմ, թե ինչպես լուսինը սահելով ընթանում ե թափանցիկ ամպերի տակով, և կլսեմ լեռնային վտակի անուշ ձայնը:

Պարզամիտ Մանին վոչ սակավ զարմացած եր իշխանի հանդամանքների վրա, վոր մի տատնձին հոդեմտայլության մեջ եր դրել նրան: Այդ անակնկալ փոփոխությունը վերարերում եր նա դինու աղդեցությանը: Ցնվ կամ, ա՛լ դիտե, ինչ անհայտ զդացմունքներ ալեկոծում էին նրա սիրտը: Նա յուր հյուրին թողնց միայնակ և, տալով նրան յուր սրինդը, ասաց.

— Մնացի՛ր ապահով, ան՛ծ անպուհ, վորքան և քո սիրտը կհամի, և վայելի՛ր դով դիշերի քաղցրությունը: Բայց յերբ կյանկանաս կրկին վե-

բաղառնալ իմ տաղավարը, հնչեցրու այդ սրինդը, յես կլսեմ, կգամ և կտանեմ քեզ։ Մեր չները բավական չար են, տե՛ր տեսուհ։

— Շնորհակալ եմ, բարի Մանի,— ասաց նա և ընդունեց սրինդը։

Հովիվը հեռացավ։

Մերուժանը մնաց միայնակ։ Ցերեկ նա, խորին այլայլության մեջ, թափառում էր լեռան ստորոտում, և յուր սրտի հուզմունքներին հանդուրժություն տալ չէր կարողանում։ Տխո՛ւր էր նա, այն հուսահատական տխրությամբ, որը մարդուն անհնարին չվարման մեջ է դնում։ Ցերեկը նրա հղոր կամքը այնպես ուժասպառ չէր յեղել, որպես այս գիշեր։ Ցերեկը նրա անզուսպ ինքնավստահությունը այնպես թուլացած չէր յեղել, որպես այս գիշեր։ Նա հենվեցավ մի ժայռի վրա և կանգ առավ։ Նայում էր դեպի յուր շուրջը տիրող մռայլը, որը լուսավորված էր լուսնի աղոտ լուսով։ Նայում էր դեպի թափթփված յերկինքը, որը պատած էր մոխրագույն ամպերով։ Լուսինը յերբեմն հայտնվում էր, յերբեմն ծածկվում էր ամպերի անթափանցիկ պատառների տակ։ Ցետ նրա հետ՝ խավար չրջապատը բոլորյանս լուսավորվում էր, և դարձյալ խորասուզվում էր դիշերային մթության մեջ։— Այսպես յերբեմն յերևում եյին նրան հուսո և բաղձանքների պայծառ նշույլները, և դարձյալ ընկղմվում եյին անսահմանության անվերծանելի խավարի մեջ...

Հոգնած էր նա,— հոգնած էր հոգով, հոգնած էր և մարմնով։ Նստեց ժայռի վրա։ Նստեց յուր լայնատարած իշխանության մի կտոր քարի վրա, որպես մի վիմաստական, որպես մի թշվառ արտաքոյական, որը յուր սեփական յերկրի վրա յուր վոտքը դնելու մի հատատ կտվան չուներ։ Մտաբերում էր այն որվա տխուր անցքերը, մտաբերում էր յուր մոր և յուր հոլովի կծու խոսքերը, և նրա սիրտը խոցոտվում էր դառն կսկիծներով...

Նա ցած իջավ ժայռից, կանգ առավ և, յուր լի սրամտությամբ դեմքը դարձնելով դեպի յերկինքը, արտասանեց հետևյալ խոսքերը.

«Ի՞նչը ձգեց ինձ այդ թշվառ դրության մեջ... Արդյոք փառասիրությո՞ւնը... վո՛չ, հազար անգամ վո՛չ... Հայոց դահը, Հայաստանի թագն ու դավաղանը, որը խոստացավ ինձ պարսից Շահուհ արքան, յերբե՛ք չեյին կարող հրապուրել ինձ, յերբե՛ք չեյին կարող մի անարդ դործիք դարձնել ինձ պարսից արքայի ձեռքում... Ցետ այնքան վատ չեյի, յես այնքան անսիրտ չեյի, որը վոտնակոխ անելի սուրբ պարտականությունը, և ապստամբվելի իմ թագավորի դեմ... Ցետ ավելի մեծ հոժարությամբ կընդունեյի մահը, և իմ պատիվը ինձ հետ դերեզմանն կտանեյի, քան թե իմ ճակատի վրա կընդունեյի դավաճանի սև կնիքը... Ուրեմն ի՞նչը ձգեց ինձ այդ թշվառ դրության մեջ... Արդյոք վրեժխնդրության անզուսպ կիրքը, արդյոք արյան անշեջ ծարա՞վը... Դարձյալ վո՛չ... Աբդարև, իմ հայրերը, իմ ամբողջ աղգատոհմը սրի ճարակ դարձան և անխնա կերտով խողխողվեցան Աբշակունիների ձեռքով... Ցետ սակայն մանկությունից, վրեժխնդրության սրբազան պարտքը միշտ բորբոքում էր ինձ՝ վր-

բնժշկելը լինել և դրանով հաշտվել իմ նախահարց ուրվականների հետ, որ ամեն րոպե և ամեն վայրկյան տանջում էին ինձ... Բայց չես չէր ցանկանա իմ նախահարց արյան վրեժը Աբշալումենների թագավորության կործանման մեջ դանել, և իմ դավաճանությամբ հավիտյանից զահը դնել նրանց դժբախտ ավերակների վրա... Ուրնամն ի՞նչը ձգեց ինձ այդ Թշվառ դրության մեջ... Ի՞նչը հարկադրեց ինձ՝ ուրանալ իմ ատուծուն, ուրանալ հայրենական կրոնը, ուրանալ ամեն ինչ, որ նվիրական եր ինձ համար, և չերկրպագության տալ պարսից աստվածներին... Ի՞նչը քարացրեց իմ հավատը, ի՞նչը խեղդեց իմ մեջ ազգային բոլոր սուրբ զգացմունքները... — Միայն դո՛ւ, քո սի՛րը միայն, ո՛վ Վրմիզդուխտ...

Այդ անունը արտասանելու մի ջոգին՝ նա խանարհվեցավ, ծունր դրեց գետնի վրա, կռծնա, չերկրպագության եր մատուցանում մի չերկնային ատվածուհու:

«Ճես սիրում եյի քեզ, Վրմիզդուխտ, խելագարության չափ սիրում եյի քեզ... Այդ դիտեր քո Թագավոր-չեղբայրը, և իմ այդ Թուլության սդուտ քաղեց նա... Ամեն խոստումներ, ամեն պարգևներ, ինչ վոր ա-մենաթանկ եր մարդկային միտքի և վայելչության համար,— խոստացավ նա ինձ, բայց չկարողացավ խախտել իմ հավատարմությունը՝ Թե՛ դեպի իմ հայրենիքը և Թե՛ դեպի իմ Թագավորը: Իսկ քեզ տալով, նա խլեց ինձանից բոլորը, ինչ վոր սուրբ եր ինձ համար, ինչ վոր Թանգա-գին եր ինձ համար... Ճես հանձն առի կատարելու քո չեղբոր ամենավատ ցանկությունները, միայն քե՛զ ստանալու համար, ո՛վ Վրմիզդուխտ...

Մի քանի րոպե սիրեց նրան մի խորհրդավոր լռություն. Չնչի ատուծը հեղնի նման Թափվում եր աչքերից, և խուլ ապաշավանքը ա-լեհծում եր նրա սիրտը:

«Սիրո՛ւմ եմ... չեմ կարող ապանել իմ մեջ այդ սերը»... հանկարծ բացականչեց նա, և բարձրացավ յուր տեղից:

Նա կրկին աչքերը դարձրեց դեպի յերկինքը և, յերկու ձեռքերը դեպի վեր տարածելով, դոչեց.

«Ո՛վ տեր տերանց, ո՛վ ատուած ատուծոց, ցույց տո՛ւր ինձ այն ա-նոթը, վոր կրում է յուր մեջ սիրո կենսատու կաթիլները, ցույց տո՛ւր, ո՛վ տեր, յես կփշրե՛մ, յես կխորտակե՛մ այդ անոթը, վորովհետև նրա մեջն է ամփոփված իմ բոլոր Թշվառությունը... Ինչո՞ւ դրեցիր իմ մեջ այդ անոթը. ո՛վ տեր, ինչո՞ւ վառեցիր իմ սիրտը այդ անչնչ կրա-կով.... Թո՛ղ չլիներ կնոջ սերը, Թո՛ղ հավիտյան չլինե՛ր նա, և յես ա-վելի բախտավոր կլինեյի: ... Այդ սիրո համար յես հանձն առի մի ամո-Թալի պաշտոն... Այդ սիրո համար յես կատարեցի, և պիտի շարունակեմ կատարել դժոխային բարբարոսություններ... Ճես Թուլ եմ, յես անզոր եմ, ո՛վ տեր, քո հզոր ձեռքը միայն կարող է մահացնել նրան... Աղա-չում եմ, մեռցրո՛ւ նրան, և բոլորովին ցամաք անապատ դարձրո՛ւ իմ սիրտը, վորպեսզի դադարեն իմ մեջ բոլոր կրքերը»...

Հանկարծ լռեց։ Դարձյալ արտասուքը սկսեց հոսիլ նրա աչքերից։ Դարձյալ զգացմունքները կատաղի մրրիկը սկսեց ալեկոծել նրան։ Ցերկար այդ խռովության մեջ տանջվում էր նա, մինչև խելագարի նման ձեռքը տարավ դեպի բորբոքված ճակատը, և դողդոջուն ձայնով արտասանեց.

— Վո՛չ, վո՛չ, ո՛վ տեր, չես սիրում ես... առանց նրան ինձ համար լույս և կյանք չկա... Դո՛ւ ստեղծեցիր սերը, դո՛ւ դրեցիր իմ մեջ սերը, և դո՛ւ պետք է լինես նրա զորավիգը... Նա քո արարչագործության ամենամեծ արդյունքն է... Ժամանակներից առաջ քեզ հայտնի չէր նրա և՛ կեցուցիչ և՛ մահացուցիչ զորությունը... Դու դիտեցիր, թե վորպիսի անողորմ ձեռքով պետք է ջարդեիր նա մարդկանց սրտերը՝ թե՛ դեպի բարին և թե՛ դեպի չարը... Ինձ ձգեց վերջին ճանապարհի վրա, և պետք է շարունակեմ առաջ գնալ... Թո՛ղ աշխարհի մեջ մի անարդ նշավակ դառնամ չես, թո՛ղ ապազգայի համար հավիտենական դատապարտության առարկա դառնամ չես, թո՛ղ ամեն վոք անեծքով արտասանե իմ անունը,— բայց չես սիրում ես, և կսիրեմ... Իմ անկին վտրմիզդուխտը պետք է լինի Հայաստանի թագուհին, իսկ չես պետք է դառնամ թագավոր, միայն նրա՛ն արժանի լինելու համար... Թո՛ղ արյունով վոռոգվի այն ուղին, վոր տանում է ինձ դեպի հայոց գահը... Թո՛ղ դիակներով կազմվի այն սոսկալի ամբարտակը, վոր կհասցնե ինձ մինչև այդ բարձրությունը... Բոլորը քա՛ղցր են ինձ համար, բոլո՛րը ախորժելի չեն ինձ համար, վորովհետև այդ բարձրության վրա պետք է վայելեմ նրա սերը...

Առավոտյան, դեռ արևը նոր էր ծագել, դեռ նոր հոտերը քշում էին դեպի մերձակա արոտները, յերբ Մանիկ տաղավարին մոտեցան յերկաքսպառազինված ձիավորներ։

— Այստեղից անցա՞վ մի սպիտակ ձիավոր,— հարցնեց նրանցից մեկը։

— Նա դիշերը ինձ մոտ հյուր եր,— պատասխանեց Հովիվը։

— Ի՞նչ յեղավ։

— Գնաց։

— Ցե՞րբ գնաց։

— Նա յեկավ դիշերով, և գնաց դիշերով։

— Ո՞ւր գնաց։

— Մուքին եր, չես նրա յետևից յերկար նայեցի, բայց նկատել չկարողացա, թե ո՛ւր գնաց։— Ո՞վ եր նա,— հարցրեց Հովիվը, ինքը ևս հետաքրքրվելով։

— Մերուժանը։

«Ա՛խ, յերեե դիտեիայի՛»... յուր մտքում ասաց Հովիվը և մնաց չըվարած։

«Ա՛խ, յերեե վոքը ինչ չուտ հասնեիներ»... մտածեցին ձիավորները և հեռացան։

ՉՈՊՈՒՀԸ ՋՐԲԱՂՎԱՆԻ ԵՎԵՐԿՆԵՐԻ ՄՈՏ

Ամպա յետ այսորիկ խաղաց դնաց Թագաւորն Պարսից Շապուհ ամենայն իշխանութեամբ զօրաց իւրոց եւ չոգաւ ևս յերկիրն Հայոց. եւ առաջնորդ ուներ ընդ իւր զՄամիկոնեան տոհմէն, եւ զԱրծրունեաց տոհմէն...

Երբեմն էր բանակն Շապհոյ Թագաւորին Պարսից ի դաշտն Բագրեւանդայ յաւերս քաղաքին Զարեհաւանի, ... ածին ժողովեցին առաջի Թագաւորին Պարսից զամենայն զերկրէն Ասպետից աշխարհին Հայոց. առաջի հրամայեաց տալ Թագաւորն Պարսից Շապհոյ, զամենայն այլ ի չոսի հանեալ կոխան արաբեալ փղոց. եւ զամենայն զկին եւ զմանուկ հանել ընդ ցից սայլից՝ Հաղարք հազարաց եւ բիւրք բիւրուց ասացին, զի ոչ դոյր Քիւրմ համար ասացելոցն եւ զկանայս աղաւաց՝ եւ նախարարացն զփախուցելոցն հրամայ տալ ածել յասպարէզն՝ որ էր ի Զարեհաւան քաղաքէ եւ հրամայ տալ հալանել զամենայն ազատ կանանցն, եւ նստուցանել առաջ անաւ առագաստին. եւ ինքն Շապուհ արքայ հնծեալ ի ձի, չաւակի (արշաւակի) անցանէր առ կանանսին...

Եւ զազգի Սիւնեաց տոհմին զամենայն զայր ի չոսի հանեալ կոտրեցին, եւ զկանայս ազանին, եւ զամենայն մանր մանկանին ներքինիս հրամայէր առնել, եւ խաղացուցանել յերկիրն Պարսից. եւ առնէր զայս ամենայն վասն վրէժուցն Անդուկայ, որ եղեւ պատճառ ընդ նենգեհ արքայ Պարսից:

Փաւստոս:

Մերուժանն և Վահան Մամիկոնյանն պատրաստվեցան հանդիպելու արտաքսյանց հասած Տիգրան: Այդ բոլը այն առաջնան ազդից դուռը Շապուհի վրա, վոր վճռեց՝ անճամբ անցնել յուր զորքերի դլուխը և մի մեծ արշավանք կատարել դեպի Հայաստան: Նրան այնքան չեր ցավեցնում յուր դաղութների կորուստը, վոր ընկած Վանա պարիսպների մոտ, վորքան կատաղեցնում եր այն մխիթը, վոր յուր նախատակները հայոց վերաբերութեամբ՝ հենց առաջին անդամից անհաջողութեան հանդիպեցան:

Նրա զորքերի բազմութեյունը դեռ Ատրպատական չեր հասած, բայց առաջալի չարշաւիը տարածվեցավ դեպի ամեն կողմ: Նա դալիս եր, վոր՝ տեղ մի մրրկածուփ հեղեղ, ամեն ինչ վոդդղելու, ամեն ինչ վոչնչացնելու համար: Հայոց նախարարներից չատերը՝ նրա յերկյուղից՝ թողնելին իրանց բնատնիքները, թողնելին իրանց բերդերը, և փախան դեպի դաշտային կողմեր: Իսկ մնացողները ամրացան անմատչելի լեռներում:

Հայաստանի արևելյան մասը, վոր առհմանակից եր պարսից, նա յուր առջև բոլորովին բաց դտավ: Վորտեղից և անցնում եր, յուր յետևից թող-

նում եր ավերակներ, տխուր անապատ և ամայություն։ Քաղաքներն ու ավաններըը կրակի ճարակ եյին դառնում, իսկ փախչելու անկարող բնակիչները ջերմում եյին։ Նրան առաջնորդում եյին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։

Նա մտավ Բագրեւանդ գավառը և յուր ծանր բանակը դրեց Զարեհավանի ավերակների մոտ, վոր կործանված եր նրա հառաջապահ ղորքերից։

Այստեղ դիմեց նա հայոց սիւհնոջը, փառանձամին, ձերբակալելու մըտքով, վոր այդ ժամանակ դտնվում եր Մաղկանց լեռների ստրավանդների վրա—Շահապիվանում։ Մաղկանց լեռները արքայական ամարանոցներ եյին։ Բայց մինչև նրա հառնելը, հայոց սիւհինը խուսա տվեց և տառն ու մեկ հազար ղինվորներով մտավ Ծերասխաձորի Արտաղերս բերդը։

Դժավոռ եր, այն վողբալի առավոտը, վորի մյուս որը Շապուհը պետք և չվեր պաշարելու Արտաղերս բերդը։ Այս առավոտ նրա հրամանով կատարվեցան այնպիսի դործողություններ, վոր վայել չեյին վո՛չ արքայի և վո՛չ մարդու։

Լուռ և տխուր հոսանքով վազում եր Արածանին (Ծղնիրատը) կարծես, չտեսնելու համար այն դաղանային անդթություններըը, վոր այս առավոտ պետք և կատարվեյին նրա ափերի մոտ։

Գետի մի կողմում, նպատ լեռան լանջից վրա, կազմված եյին արքայական վրաններըը, բոլորը լաջվարդի դունով, և մինը քան մյուսը ավելի շքեղ և ավելի վեհաշուք։ Վրանների դունը, միխոսանվելով լեռան կանաչադեղության հետ, ներկայացնում եյին հիանալի տեսարան։ Նրա հետ եր և յուր կանանոցը։ Պարսից թագավորները սովորություն ունեյին, յերկարատև արշավանքների ժամանակ, կանանոցը իրանց հետ տանել։ Կանանց միակ վրաններըը դրսից չեյին յերևում, վորովհետև շրջապատված եյին բարձր տարբ-փարդաններով, վոր կտավյա ոլիտակ պարսաւներից կազմված, բոլորակ վանդակապատի ձև ունեյին։

Գետեղերքի դեղեցիկ տափարակների վրա, հեռու և հեռու, տարածվում եր ընդարձակ բանակը։ Այնտեղ դետեղված եյին ղորքերի և ղորպետների վրաններըը։ Գուշնդության դրոշակներըը ծածանվում եյին, վոր նըշանակ եյին յուրաքանչյուր դունդի առանձնության։

Արքայական վրանի կոնաձև դագաթին դրած եր մի վոսկեղեն դունդ, վորի վրա փայլում եր պարսկական արքայան վարը—վոսկեձուլ, վոսկեճաճանչ արեգակը։ Այդ վրանի մեջ Շապուհը նստած եր փղոսկրյա քառակուսի թախտի վրա, վոր ղարդարած եր դեղեցիկ քանդակներով։ Այս առավոտ հագած ուներ արյունաներկ-կարմիր պատմուճան։ Այս արդեն նշան եր, վոր արյան հետ դործ պետք և ունենա։ Գլխին կրում եր փառավոր խույրը, վորի առջևի կողմից, ճակատի վրա, մարդարտաշար նռնաձևերով հյուսած եր արքայական վոսկյա գարգմանակը, վոր փողփողում եր արեգնային ճաճանչներով։ Կուրծքը, ուսերից սկսած, պատած եր գո-

հարաշարժ ասլիզակով, որը հասնում էր մինչև նույնպես դոհարաշարժ դռներին: Թևքերի վրա, արմունկներից վերև, կապված էին վոսկյա ապարանջաններ: Ներկու ականջներից բաշ էին ընկած յերկու ծառեր գնդեր: Իսկ աջ ուսից ձգած էր համայքներով լի համայիլը, որը զարդարած էր դույնզդույն խաչոր քարերով, և որը կողմնակի կերպով անցնում էր կուրծքի վրայով, և յուր յերկու ծայրերով մխանում էր ձախ թևքի տակում: Այդ համայլլի վրա զարդ էին դրել նրա մոդերը իրանց բոլոր կախարդական արհեստն ու դիտուքյունը: Յուր թախտի վրա նստած էր նա շրջած կիսրով: Դահլաղանի վոխարեն՝ յերկու ձեռքով բռնած ուներ մի յերկաթյա ծառը լախտ, գնդաձև գլխով, որը հոբիզոնական գիրքով դրած ուներ ծնկների վրա: Ներա յետևում հսկում էր Դրան դինակրատեսը, որը ձեռքում բռնած ուներ արքայական սուրը: Աջ կողմում կանգնել էր Մերուժան Արծրունին, իսկ ձախ կողմում՝ վահան Մամիկոնյանը—Սամվելի հայրը: Ներկուսն էլ նրա վիևնականներն էին, յերկուսն էլ զանվում էին կատարյալ դինավառուքյան մեջ:

Վրանից դուրս, մուտքի այս և այն կողմերում, կարգով չարված էին նրա գլխավոր զորապետները, պալատականները և այլ ավագանին: Ամենքը լուռ էին և խորին յերկյուղածուքյամբ սպասում էին թագավորի ձայնին:

Միջահասակ էր նա, թուխ դեմքով և խաչոր, վառվռուն աչքերով: Կարճ կարած սև մորուքը սիրված էր վոսկու վուշով: Դեմքի վրա նըշմարվում էր ահավորուքյուն և խստուքյուն: Նա դանվում էր այն արքայական ձորի մեջ, որը լի յեր անմոռանալի հիշատակներով, որը ամենահին ժամանակներից յեղել էր կրոններն և պաշտամունքների վորոշման: Այդ ձորով անցնում էր Արածանին—հայոց սիրելի Հորդանանը: Այդ գետի ներկրական ափերի մոտ բարձրանում էր վեհապանծ Նպատը—հայոց սուրբ Սինան,— որի այրերում մի ժամանակ ճգնում էր հայոց Լուսավորիչը, որի այրերում և հանգչում նա: Այժմ քրիստոնեուքյան թշնամի թագավորի բանակը դրած էր քրիստոնեուքյան նախկին վորոշման մեջ: Լուռ էր նա, և մտահոգ աչքերը հառած էին դեպի մի հոյակապ վանք, որը կանգնած էր նրա հանդեպ, Նպատ լեռան լանջից վրա: Գեղեցիկ վանքը, յուր դմբեթների բարձրուքյամբ, կարծես, մրցել էր կամնում չրջակա բարձրուքյուններին հետ:

— Այդ ի՞նչ վանք է,— դարձավ նա դեպի Մերուժան Արծրունին:

— Դա ս. Հոիհաննու վանքն է, տե՛ր արքա,— պատասխանեց Մերուժանը, ավելացնելով.— Այդ վանքն տեղացին էր հայոց ամենահին արքայանիներից մեկը՝ Բաղավանը, որի մեջ կանգնած էր վեհանատուր (հյուրանոց) Արամազդի մեծազանձ մեհյանը: Ամեն մի անցորդ, ամեն մի ուտարական նրա բազմաթիվ սրճանների մեջ հյուրասիրուքյուն և դիշերային հանդստուքյուն էր վայելում: Այսոնց, յուրաքանչյուր տարի, հայոց նավասարդ ամսի սկզբում, կատարվում էր վամանորիք (նոր տարու) աշխար-

հախումբ տոնախմբությունը: Ներկա չեր լինում հայոց թագավորը յուր նախարարների հետ: Որհնում էին հատունացած պտուղները և նվիրում էին հյուրասիրության աստուածուն: Մշտավառ պահվում էր նրա տաճարում վորմղղական յերկնային հուրը, և քուրմերի ահագին բազմություն սպասավորում էին սուրբ սեղանին:

Շապուհի թուխ դեմքը ավելի մռայլվեցավ, այն տպավորության ներքո, վոր այդ բոլորը, վոր այնքան նման էին, վոր այնքան զուգադաշնակ էին պարսից պաշտամունքներին,— այժմ չկային, վաղուց վոչնչացրած էին, և այժմ նրանց տեղում կանգնած էր քրիստոնեական վհատելու տեսարանը:

— Ո՞վ կործանեց այդ մեհյանը,— հարցրեց նա:

— Հայոց Գրիգոր քահանայապետը,— պատասխանեց Մերուժանը,— վորին անմտությամբ Լուսավորիչ են կոչում:

— Նա՛, վոր հայերին Մաղդեզանց լույսից հանեց և քրիստոնեական մոլորությունների մեջ ձգեց:

— Այո՛, նա, ասե՛ր արքա: Այդ կատարվեցավ այն ժամանակ, յերբ նա, նույնիսկ այդ դեռ մեջ, վոր մեր առջևում հստում է, մկրտեց հայոց Տրդատ թագավորին յուր բոլոր մեծամեծների հետ: Հայերը մինչև այսոր հավատում են, թե մկրտության ժամին յերկնքից այնպես նամանությամբ լույս ծագեց, վորի դլխին արեգնային ճառագայթներով փայլում էր խաչի նշանը, և մնաց դեռի վրա այնքան ժամանակ, մինչև ամենքը մկրտվեցան:

Լսելով Մերուժանի վերջին խոսքերը, Շապուհի դեմքի վրա անցավ ժպիտի նման մի ցնցուղ:

— Գետք է այդ վանքը կործանվի՛, ասաց նա,— և վորպես առաջ, նույնպես և այժմ, պետք է կրկին վառվի՛ նրա մեջ վորմղդական սուրբ հուրը:

— Արքայից արքայի կամքը արդեն կատարված է,— պատասխանեց Մերուժանը մի առանձին պարծենկոտությամբ:— Նրա մեջ տորուշանը պատրաստված է. և սուրբ հուրը վառվում է: Յերևի հրամիրեցի դերինեքին և առաջարկեցի, վոր յերկրպագություն տան կրակին. վոմանք ընդունեցին, իսկ շատերը համառությամբ մերժեցին: Այժմ արքայից արքայի բարձր հրամանից են կախված, թե ի՞նչ պետք է անել այդ մոլորյալների հետ:

— Բոլորին պատժել, վոր մյուսներին որինակ լինի,— ասաց թագավորը, և նրա խոշոր աչքերը վառվեցան անողոք բարկությամբ:— Արեվելքից մինչև արևմուտք պետք է տիրե Մաղդեզանց կրոնը, և ամեն ընդդիմացող մահվան չարաչար պատիժը պետք է կրե:

— Այդպես էլ կարգադրված է, տեր արքա, այժմ կսկսվի դատաստարության հանդեսը:

Մի տախտակի վրա, վոր մոտ էր դետեղերքին, անհամբերությամբ

ապառում էին վրեժը վարժեցրած ձերամներից: Փղապաններն ավելի և ավելի դրդռում էին նրանց, և ամեն մի զապաններն զարհուրելի ձայներ էին հանում: Հրապարակի մի կողմում կանգնեցրել էին այն դերիներին, որոնք մերժել էին հրաժեշտ երիտասարդությունից առ: Լուռ և թախծալի դեմքերով սպասում էին այդ թշվառ նահատակները որհասի վերջին րոպեներին: Բայց նույն թախծության մեջ նշմարվում էր մի վեհ, հոգևոր մխիթարություն:

Կարծես, Ցեղերաւի սրբազան հավիտին վճռակված էր նահատակությունների հանդիսատեսն լինել: Այստեղ նահատակվեցան Վռամյանք, այստեղ նահատակվեցան և Սուքիասյանք: Այստեղ, որպես Իսրայելի Մովսեսը Նարավ լեռան խորքերում, նույնպես և Հայաստանի Մովսեսը— Լուսավորիչը—անհայտացավ Նպատ լեռան մթին այրերի մեջ: Ամենախորին ժամանակներից այդ հավիտը մինչև մի արյունոտ հանդիսատես և յեղել կրոններին պատերազմի: Ցեղ սկսյալ Մաժան քրմապետի արյան հեղումից, մինչև Շապուհի կատաբած վերջին նահատակությունները,— նա միշտ ցոդված և յեղել սուրբերի արյունով...

Մի խումբ նվագածուներ սկսեցին հնչեցնել փողերը և դասել քրմությունները: Այդ ձայներից վղերը ավելի զվարճացան, ավելի վոգևորվեցան: Սկսեցին դիմահար ուրախությամբ պարել: Այդ միջոցին պարսից հրամբարպետ դահիճները բերում էին հայոց չափահաս և անչափահաս դերիներին, և խմբերով մծում էին վղերի առջև: Նախ ձդեցին նրանց առջև վոջիլի մանուկներին: Անպատրույն անասունները նույն զվարճալի խաղն էին խաղում իրանց զոհերի հետ, ինչ խաղ վոր խաղում և կատուն մկան հետ, յերբ ծուղակից հանելով, նրա առջևն են ձգում: Ահարկու հնճիճներով հաճոյանում էին թշվառներին և դնդակի նման դեպի վեր էին նետում: Նրանք ընկնում էին, դառն հառաչանքներ արձակելով: Դարձյալ բռնում էին, և ողի մեջ պտտացնելով, զարկում էին գետնին: Այսպես շարունակում էին դժոխային խաղը, մինչև բոլորովին անշնչանում էին: Հետո վոտքերը պակ կոխ տալով, վչրում էին նրանց բոլոր վոսկերքները և, իրրև մի տասիակացրած բամբակի հատը, կրկին բռնում էին հնճիճներով և նետում էին դեպի մեջ: Դժբախտ Ցեղերաւը հետևեսան լցվում էր դիակներով, և նրա պարզ ու հստակ ջուրը արյունի գույն էր առնում... Այսպես հաղարամյոր անճինք վղերի վոտքի կոխան յեղան:

Այդ տեսնում էր Շապուհը յուր վրանից: Այդ տեսնում էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը, վոր նեղկա էին նրա մոտ: Ցեվ նրանց զվարճությունը ավելի մեծ էր վղերի զվարճությունից...

— Հիմա այդ դատապարտյալները դժո՞խքը կղնան, թե հայոց դրախտը,— հարցրեց սրքայից սրքան ծիծաղով:

— Նրանք հավատացած են, վոր դրախտը կղնան,— պատասխանեց Մերուժանը, նույնպես ծիծաղելով:

— Այդ հիմարները,— մեջ մտավ Վահան Մամիկոնյանը,— վոչինչ

մահ այնքան ուրախությամբ չեն ընդունում, որքան մահը կրոնի համար:

— Իսկ մեր փղերը այս տեսակներին պատժելուց չեն հոգնի,— ասաց արքայից արքան:— Եվ մեր ծառաներին շատ հաճելի կլինի այսպիսիների արյան հեղումը: Ես երդվում եմ իմ հարց յերեսի պայծառ լուսով, յերդվում եմ Վորմիղդի տուրբ անունով, վոր չպիտի խնայեմ վո՛չ սեռի, վո՛չ հասակի և վո՛չ տասիճանի, և ամեն վոք՝ ապնվատահմ թե ռամիկ, չարաչար կպատժվին, յերբ կընդդիմանան մեր կամքին, վորը հղոր տասվածների կամքն է:

Այսպես խոսում էր արքայից արքան և նրա ահավոր ձայնը դղրդեցնում էր ամբողջ բանակը:

Այդ միջոցին, փղերի պատանային հանդիսասրանից վոքը ինչ հեռու, ներկայանում էր այլ բարբարոսություն: Հրապարակի վրա շտապով քարշ էին տալիս մի տեսակ չարժական մեքենաներ, վոր անիվավոր սայլակների ձև ունեին: Սայլակների յուրաքանչյուրի վրա բարձրանում էր մի յերկաթյա ձող, վոր յերկար, սրածայր ցեցերի նմանություն ունեին: Նրանց բաղմություններ իրանց ձողերով՝ հեռվից պատկերացնում էին նավահների մի խումբ, վոր խարսխած էր լինում նավահանգստում, և միայն ցցված կայմերն են յերևում: Յերբ մեքենաները կարգով կանգնացրին հրապարակի վրա, սկսվեցավ դժոխային գործողություն:

Հայոց դերձիները թվում էին և շատ ապատանի կանայք ու որբորդներ: Դրանք այն վախկոտական նախարարների կանայքն ու որբորդներն էին, վոր, Շապուհի գալուստը լսելով, չկամեցան անձնատուր լինել, այլ թողին իրանց ամրոցները անտեր, և գնացին դեպի դաշտային կողմերը: Այդ ազատանի կանայքը պահվում էին առանձին վրաններում, վոր շատ հեռու էին Շապուհի խորաններից: Թագավորական ներքինիները մտան նրանց վրանները, մերկացրին բոլորին, և այնպես մերկ ու հոլանի՝ դուրս բերեցին վրաններից, և յերկար շարքով կանգնացրին հրապարակի վրա, ձողավոր մեքենաների շուրջը:

Գարշելի՛ մի տեսարան էր այդ, վոր պարսկական անպատկառ անամոթությունը միայն կարող էր հնարել: Բայց անամոթությանը դեռ պատում էր պարսկական անգթությունը: Մերկանդամ շարքերով կանգնած էին պարկեշտասուն կանայքն ու որբորդները, և իրանց մեջտեղ յերեսնուհյուն էին տալիս այն բախտավորներին, վորոնք փղերի վոտքի կոխան էին գառնում, և դրանք միանգամից ազատվում էին Շապուհի վայրագությունից: Շատերը կանգնել էին կարողանում, ուշաթափ էին լինում և ցած էին ընկնում: Բայց ներքինիները կրկին բարձրացնում էին նրանց: Շատերը, խելագարի նման, փնտռում էին իրանց մազերը, ծվատում էին իրանց աչքերն ու յերեսը, կոծում էին իրանց կուրծքը, և լալագին ձայնով աղաղակներ էին բարձրացնում: Բայց ներքինիների մրցրակը շատացում էր նրանց մերկ մարմնի վրա, թողնելով յուր տեղում մի յերկար արյունաքամ գիծ: Նրանք լռում էին...

Դա՛ մի դա՛ռն նախատինք ևր, դա՛ մի ծա՛նր անարդանք ևր, վորով Շահուհը կամենար պատժել հայոց աղնվականներին, նրանց կանանց ու մերկանդամ կանգնացնելով յուր բանակի առջև:

Զինվորները խուռն բազմությամբ հավաքվում եյին հանդիսատես լինելու:

Հայանվնցյալ մոլեգնած-մոլկնած, չքնաղատեսիլ յուր ճերմակ-դնված մոդերով: Տերից ընդհանուր լռություն: Անցյալ նա հրապարակի վրա, ձևրքը բարձրացրեց, և, դանդալով դնալի կանանց չարքերը, խոսեց.

— Ձեր ամուսինների համառությունը ձեղ այլ նախատական վիճակի մեջ դրեց: Դուք քավում եք նրանց մեղքերը: Մե՛ծ և արյաց արքայից արքան, և անթա՛վ է նրա դիությունը: Նա ձեղ ներումն կընորհե, և դուք վերստին կվայելեք ձեր նախկին վարքն ու պատիվը, յեթե հկատարեք նրա բարձր հրամանը: Վորպես արևդակը սևռում է յուր հինաստուն լույսն ու ջերմությունը համարեն աշխարհում, այնպես և ամբողջ աշխարհը պետք է դոհության ծունր խոնարհնցնե նրա առջև: Նա յե լուսո և կյանքի աղբյուրը. նրանից է բղխում ամեն բարություն: Առանց նրան, կյանք և յերջանկություն չկա. առանց նրան, սիրում է Ահրիմանի մերին խավարը: Նրա լուսապայծառ որինակին և յերկրի վրա՝ վորմիղդական սուրբ հուրը: Ցնրկրպադություն ավի՛ք նրան, և ձեղ վերկություն կլինի: Ձնշանից, վորպես աղնվատոհմ կանանցից ավելի իրավունք ունենք պահանջել այդ, վորովհետև ձեր որինակին պետք է հետևե ամբողջ Հայաստանի ռամիկը: Իսկ յեթե դուք ևս ձեր ամուսիններին նման հկամաստվեք ձեր մոլորություններին մեջ, այն ժամանակ ձեղ համար պատրաստ կլինեն այդ սոսկալի մեքենաները,— նա ձևրքը տարավ դնալի ճոպանավոր սայլակները:— կատարեցնի՛ք արյաց արքայից արքայի կամքը, մե՛ծ և նրա զորությունը և անբա՛վ և նրա դիությունը:

— Թո՛ղ նրա զորությունը, թո՛ղ նրա դիությունը յուր հետ է կորո՛ւստ մատնվի,— աղաղակեցին կանայքը միաձայն:— Ցնվ թո՛ղ հավիտենական անեծքը լինի նրա մասն ու բաժինը: Մենք պատրաստ ենք միշտ այդպես դերի մնալ և ընդունել ամեն դատապարտություն, քան թե նրա չար կամքի և նրա անիրավ հրամանին դերին դառնալ:

— Կրկնում եմ, յերկրկնում եմ,— ձայն տվեց մոլեգնած-մոլկնածը, խնայեցի՛ք ձեր անձներին, խղճացի՛ք ձեր դավակներին: Ձեր դավակները ձեր աչքերի առջև վերերի վտանգի ենթան կլինեն, իսկ դուք այդ սայլակների վրա կդատապարտվնք չարաչար մահվամբ:

— Վոչինչ չե կարող խափանել մեր հավատը, վոչինչ չե կարող վախեցնել մեղ: Թո՛ղ կատարվի չար բռնակալի չար կամքը: Մենք պատրաստ ենք:

Տեսնելով զայրացած կանանց հաստատամտությունը, մոլեգնած-մոլկնածը դարձավ դնալի դահիճներին, հրամայելով.

— Կատարեցե՛ք...

Մոռեցան կարմրագլխան դահիճները և, կատաղի գայլերի նման, հափշտակեցին հավատավոր կանանցից չատերին և տարան, կանգնեցրին գայլակների տախտակամածի վրա: Մեքենան վորքան վարպետությամբ էր կազմված, այնքան և ահռելի չէր: Դա ներկայացնում էր պարսկական անգթությունը յուր բոլոր բարբարոսությամբ: Ցերկաթյա ճողը, վոր կայմի պես անկած էր նրա մեջտեղում, կայմի նման պարաններ ուներ: Անմեղ զոհերին կապում էին պարաններով, քաշ էին տալիս, և մի րոպեում բարձրացնում էին, և շամփրում էին սրածայր ճողի գլխին: Քառորդ ժամ չանցավ, հրապարակի ամբողջ մթնոլորտը լցվեցավ մերկ դիակներով, վոր կախված էին ողի մեջ: Բայց ավելի քան մահվան տանջանքը, զարհուրելի չէր այդ քաջ նահատակների դիմարթությունը, վորով նրանք մերձենում էին սոսկալի մեքենային: Բարձրանալով նրա գլխին, այդ առաջին աստիճանն էին համարում, վորի վրա վոտք էին դնում, դիմելու դեպի հավիտենական յերանությունը: Կնոջ արիությունը խորտակում էր անբարտավան թագավորի մեծամտությունը, վոր յուր վրանում նստած, տեսնում էր նրանց տանջանքները, լսում էր նրանց դառն հառաչանքները, և լի սանդարամետական բարկությամբ վրդովվում էր, ալեկոծվում էր, նկատելով, վոր յուր անօրինակ բարբարոսություններն անգամ մնում են ապարդյուն, մնում են առանց աղդեցության...

Նա ցած իջավ թախտից, և դուրս յեկավ վրանից: Նրա հետ դուրս յեկան Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը: Ամբողջ ավագանին, բոլոր դրանիկները, վոր կանգնած էին նրա վրանի մուտքի հանդեպ, ընկան դեմքի վրա և յերկրպագություն մատուցին:

Նա նստեց յուր ձին և դիմեց բանակը: Նրան հետևում էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը: Իսկ նրանց յետևից գնում էին արքայական թիկնապահները, ամենքը ձիավորված:

Թե՛ ինքը թագավորը և թե՛ յուր ձին վառվում էին վոսկու և զոհարների մեջ: Ձիու գաղաթի վրա փայլում էր մի ճաճանչավոր մահիկ: Բանակը դիտելուց հետո, նա դիմեց դեպի այն կողմը, վորտեղ կատարվում էր բարբարոսական գործողությունը:

Որքին ուշադրությամբ անցնում էր նա մերկանդամ կանանց չարքերի միջով և նայում էր յուրաքանչյուրի վրա: Մեկը նրանցից գայրացած կերպով ձայն արձակեց.

— Շապո՛ւհ, այդ վայել չէ մի թագավորի, վոր իրան հասարակաց հայր է կոչում: Այսպես հրապարակապես խայտառակելով պատվավոր կանանց, դու խայտառակում ես քեզ: Ես բոլոր զորությամբ, ակար կնոջ հետ այդպես վարվելով, դու ապացուցանում ես քո հոգևոր վողորմելի տկարությունը...

Նա ձիու դլուխը պահեց և, դառնալով դեպի Մերուժան Արծրունին, հարցրեց.

— Ո՞վ և այդ կինը:

— Սյունյաց Անդովիկ իշխանի սիկինն է,— պատասխանեց Մերուժանը:

Վահան Մամիկոնյանը ամոթից, թե խղճի խայթից, գլուխը քաշ ձըդեց: Սյունյաց Անդովիկ իշխանը Մամիկոնյանների փեսան եր, և այդ պատճառելի սիկինը նրա հոր քույրն եր: Այդ պատճառելի սիկինը, միևնույն ժամանակ, հայոց Թագուհու՝ Փառանձեմի մայրն եր: Վորովհետև Արշակ Թագավորը ամուսնացած եր Սյունյաց Անդովիկ իշխանի դստեր, Փառանձեմի, հետ:

Լսելով Անդովիկի անունը, Շապուհն սպառնալի դեմքի վրա անցավ մի դառն ծիծաղ:

— Դու ինձ նախատում ես, սիկին,— ասաց նա հեգնական ձայնով:— Դու ինձ նախատում ես, վոր ես Թագավորասեր չեմ վարվում: Ասյա այն վայելո՞ւչ եր, ապա այն լա՞վ եր, սիկին, վոր քո ամուսին Անդովիկ իշխանը դերի վարեց իմ նախորդ Ներսեհ արքայի ամբողջ կանանոցը, և արյուն սիկնանց—սիկնոջը հափշտակեց տարավ Սյունիք:

— Ցնծ անվախիլ չեր, Շապուհ,— պատասխանեց արիասիրտ սիկինը:— Իմ ամուսինը, իրավ է, քո նախորդ Ներսեհ արքայի կանանոցը դերի վարեց: Բայց վո՞րտեղից: Պատերազմի դաշտից, յուր մեծ հաղթությունից հետո: Իսկ դու դողի նման մտար իմ ամուսնի անտեր ու անպաշտպան ամրոցը և նրա ընտանիքը հափշտակեցիր: Եվթե իմ ամուսինը Բյուզանդիայում չդանվեր, դու այդ դողությունը անել չեիր կարող: Նա յուր դերիների հետ վարվեցավ այնպես, վորպես որին եր մի աղնիվ իշխանի: Նա Ներսեհի կանանցից վո՛չ մեկի քողը չպարզեցրեց: Իսկ դո՛ւ մեզ մերկանդամ կանչեցրել ես այդ հրապարակի վրա: Նա Ներսեհի կանանցը արքայավայել պատվով պահելուց հետո, դարձյալ պատվով հետ ուղարկեց: Իսկ դու քո կին դերիներին բարբարոսությամբ բաժանում ես այդ յերկաթյա անարդ այրուների վրա: Ամո՞թ քեզ, Շապուհ, դու ապտակելոցիր թե՛ Թագավորի մեծությունը և թե՛ մարդու առաքինությունը:

— Մի՛ նախատիր ինձ, սիկին,— ասաց նա դայրացած կերպով:— Անմտանալի յեն ինձ համար այսունկնիների հասցրած տառապանքները, և անբուժելի յեն իմ սրտում քո ամուսնի դրած վերքերը: Նա չի՞ր, վոր հրդեհեց, ավերակ դարձրեց իմ մայրաքաղաք Տիկրանը, և իմ բոլոր դանձերը տարի տանց: Մինչև այսոր Տիկրանը չի կարողանում ծառանալ քո ամուսնի հասցրած հարվածներից, մինչև այսոր իմ արքունիքի դարպասում դրված և մոխրով լի սանդը, վորը ծնծղալով վողջում են, և անիծելով ասում են. «Այսունյաց իշխաններին սերունդները, և նրանց կյանքն ու դրությունը, թո՛ղ այդ մոխրի նման վոչի դառնա... Ցնծ յես վոչի՛ կդարձնեմ...

— Այդ դեռևս սպասված դիման, Շապո՛ւհ... պատասխանեց սիկինը,

և նրա վշտալի աչքերը վառվեցան բարկութեյան կրակով։— Դու չես բոլոր հույսը դրել ես քո անդիմութեյան վրա և այդ յերկու անպատիվ մարդկանց վրա, որոնք ընկած են քո յեսևից,— նա ձեռքը տարավ դեպի Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։— Դրանք, յերկուսն էլ, դժբախտաբար իմ ազգականներն են, բայց յերեք բնավ չկենդանի, յես ավելի յերջանիկ կհամարվեյի ինձ։ Վորքան դրանք հավատարիմ մնացին իրանց հարազատ թագավորին, այնքան և հավատարիմ կմնան քեզ...

Նա լռեց, և ապա շարունակեց.

— Դու, Շապո՛ւհ, հիշեցնում ես ինձ, թե ինչպես իմ ամուսինը հրդեհեց Տիզբոնը և կողոպտեց քո հանճարը։ Այդ ճշմարիտ է։ Բայց այն ծանր վիրավորանքից հետո, որը դու հասցրիր իմ ամուսնին քո սան մեջ, քո սեղանի վրա,— նրա կատարած վրեժխնդրությունը դեռ շատ բավարար չեր։ Նա՛, իրավ է, հրդեհեց քո քաղաքը, կողոպտեց և արքունիքը, բայց քո կանանցը ձեռք չնկնեց, թեև, շատ հնչտ եր նրա համար՝ բոլորին դերի վարել Սյունիք և նրանց ձեռքով յուր ամրոցի՝ Բաղաբերդի փողոցները ավելել տալ։ Բայց նա, իբրև աղնիվ մարդ, պահվաբար վարվեցավ։ Իսկ դո՛ւ...

Վերջին խոսքը մնաց սիկնոջ բերանում։ Իսկույն դահիճները վրա հասան, նախ կտրեցին նրա լեզուն, և ապա մաս-մաս հոշոտեցին նրա մարմինը...

Կատարած Բաղավորի անդիմությունը անցավ ամեն չափից, ամեն սահմանից։ Հրամայեց՝ Սյունյաց իշխանի ամբողջ իդական սեռը կոտորել, իսկ տղաներին ներքինի դարձնել, վորպեսզի Անդովիից վո՛չ մի ժառանգ չմնա, և նրա տոհմը իսպառ բնաջինջ լինի...

ՄՐՏՈՒԹԻՒՆ

«Ապա իբրեւ եհաս սիկինն աշխարհին Հայոց, կինն Աշչակայ Բագաւորին Հայոց՝ Փառանձեմ, զորս Բագաւորին Պարսից... առնուլ ընդ իւր մարդիկ իբրեւ մեռոսան հազար՝ ազատս ընտրս սպասաւորէնս պատարագմոյս, եւ հանդերձ նոքօք դիմեաց եհաս ի բերդն Արտաշէսից՝ որ ի յերկրին Արշարունեաց... Ապա եկեալ հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդսւն նստանէին, պահ արկանէին. պատերսին պաշարեցին... Եւ նոսունն շուրջ զբերդսւն ամենք երեքտասան եւ տունուլ զբերդն ոչ կարացին, զի էրկի ամուր էր տեղին»

Փաւստոս:

Զարհուրանքի յերեւոնագործություններից հետո, Շապուհը ուղղակի դիմեց Արտաշեսի բերդը, որի մեջ ամրացած եր Հայոց Փառանձեմ սիկինը՝ արքայական դանձերի հետ։ Պարսից ընչաքաղց թագավորին այն-

քան չեր հրապուրում հայոց արքայի գահակերը, վորքան հայոց արքայի կինը: Նրան ձերբակալելով նա ամբողջ Հայաստանը ձերբակալած եր համարում: Թագավորին վազուց արդեն յուր ճանկերի մեջ ուներ նա: Մնում եր թագուհին:

Արտավազդը ուներ յուր ախուր պատմությունը: Նա Արշաբունյաց դահլան ամուր և անմատչելի բերդերից մեկն եր, վոր նախ պատկանում եր կամսարականներին: Արշակ Թագավորը խիստ ատելության միջոցներով խլեց նրանցից այդ բերդը և անվախանց իրան: Այժմ անբավությամբ հափշտակված բերդը նրա հինգ ազատասրտին եր դարձել:

Տիկինը մտավ այդ բերդը ասան և յոթն հազար հոգով, վորոնցից ասան և մեկ հազարը տղամարդիկ կային, իսկ վեց հազարը կանայք: Այդ բազմության մեծ մասը բաղկացած եր հայոց իշխանական տոհմերից, վորոնք ապահով ժամանակ միայնակ չէին ողջունի իրանց թագուհուն:

Մի քանի ամիսների համառ պաշարումից հետո, մի քանի ամիսների սաստիկ կռիվներից հետո, Շապուհը յուր բազմաքների մեջ բոլորովին հուսահատի դառնալով: Նրա դրքերի անթիվ բազմությունը, իրանց ռազմական ահարկու պատրաստություններով, վո՛չ միայն բերդը դրավել չէր կարողացան, այլ ամեն անգամ պաշարվածներից չարաչար ջարդ կերան: Արյոց արքայից արքան, վորի առջև ամբողջ արևելքն ու արևմուտքը դողում եր սարսափից, սկսեց կատաղությունից մրրկածուփ ծովի նման ալեկոծվիլ, սկսեց դաղտնային բարկությամբ փրփրել,— յերբ տեսնում եր, վոր յուր բոլոր դրությունները՝ ապարդյուն կերպով փշրվում էին, խորտակվում էին Արտավազդի անառասան ապառաժների վրա:

Ծա՛նր եր Շապուհի դրությունը: Նա ընկել եր այն սոսկալի ցանցի մեջ, ուր Ցերասիը և սրտագավազ Ախուրյանը, հատանելով լեռնային սարավանդները, և խորին կիրճերի ու խոխոմների միջով ընթանալով, վերջապես, դրկվում են, իրանց ուժերը միացնում են, բազմաթիվ անհնարին վորոգայթներ պատրաստելով հայոց թշնամիների համար: Այդ գետերի մեջին քարանձավներում մի ժամանակ վորջացած էին հայոց վիշապները և սարսափ էին տարածում դեպի ամեն կողմ: Իսկ այժմ իրանց թագուհու հետ՝ ամբացած էին հայոց հսկաները:— Հսկաները դրծ ու նենգին արևելքի ահարկու հսկայի հետ:

Այնտե՛ղ, ուր Ախուրյանը և Ցերասիը միանում են միմյանց հետ, կազմելով մի սուր լեռանկյունի, այնտե՛ղ, ուր սեղմված եր հին Ցերվանդաշատը, վորի բարձրադիր վորձաքարյա ամրության վրա վոտք դնելով, Ցերվանդը մինչև Արշակունիների դահը բարձրացավ,— այնտեղ կանգնած եր և Արտավազդը, վոչ այնքան հեռու հիշյալ բերդից: Նա կանգնած եր բանթը, կատաղությունն ապառաժների վրա, և նրա աստրառում, խորին անդունդի մեջ, վորոտում եր կատաղյա ջուրը:

Արտավազդը ծանոթ եր Հռոմին, ծանոթ եր և Բյուզանդիային: Կայսրերի կեսարը, Ոգոստոս կայսրի վորդեգիրը, նրա հզոր պարիսպների մոտ մո-

հացու վերջ սառցալ բերդի Աստոն իշխանից: Իսկ Շապուհը համառությամբ պաշարումը շարունակում եր, համոզված լինելով, որ յնթե դիմքի ուժով չկարողանա գրավել, անշուշտ քաղցը և սովը կստիպեն անձնատուր լինել: Բայց բերդի ամբարներում բավական պաշար կար:

Նա բնության մեծ հրաշալիքն եր, որի հետ մարդը մաքառելու համար՝ խիստ անզոր միջոցներ ուներ: Ժամանակի ռազմական անօթները չո՛չ հասնել և չո՛չ ազդել կարող եյին նրա անմատչելի, բարձրադիր ամրությունների վրա:

Ավելի քան բերդի ամրությունը, անխորտակելի յեր պաշարյալների յեռանդը: Անձնազոհությունը չափ և սահման չուներ: Աղատանի կանայք դիշերները պարիսպների վրա եյին պատվում: Աղատանի որբորդները անքուն հսկում եյին աշտարակներից Թշնամու ամեն մի շարժումը: Ինքը Թաղուհին յուր ձեռքով եր դարմանում յուր զինվորների վերքերը: Այր և կին վառված եյին հայրենասիրության ջերմ վոգվով, և մեկը մյուսին աշխատում եր գերազանցել: Ցեղ բոլորին վոգևորողը, բոլորի քաջությունը բորբոքողը եր ինքը Թաղուհին:

Միանգամ Շապուհը հրամայեց վճռական հարձակում գործել: Պարսից վահանակիր և տպալարապատ զինվորները բարձրացան մինչև բերդի պարիսպները: Կռվում եյին նրանք հերոսաբար, և բերդից կարկուտի նման տեղացող նետերը չեյին կարողանում զսպել նրանց կատաղությունը: Թաղուհին, զրահավորված, կանգնել եր պարսպի վրա և խրախուսում եր ամեն յուր զինվորներին: Մի նետ դիպավ նրա ուսին, ծակեց զրահը, և ցցված մնաց յուր տեղում: Զորապետներից մեկը շտապով մոտ վազեց, ձեռքը մեկնեց, որ դուրս քաշե նետը: «Ինչո՞ւ յես խղուր ժամանակ կորցնում,— նկատեց նրան Թաղուհին,— այդ հետո էլ կարելի յե հանել»: Այդ խոսքը այն աստիճան ազդեց, որ զինվորները, խորին քաջալերություն ստանալով, կրկնապատկեցին իրանց յեռանդը, և վանեցին Թշնամուն պարիսպների մոտից:

Ցերեկն դիշերով, յերեկն ցերեկով, բերդից դուրս եյին գալիս դաշնազան խումբեր և գարկվում եյին պարսիկների հետ: Այդ փոքրիկ խմբակները, հանկարծահաս կայծակի նման, չո՛չ մկան չեիոթում եյին Թշնամու ամբողջ բանակը, այլ շատ անգամ հաջողվում եր նրանց՝ դերեվինքով կամ ավարով հետ դառնալ:

Պաշարման համեցողությունը, հաջողության հավատացումը վրդովեցնում եր Շապուհին: Ալատագերսի պարիսպների մոտ նա յերկար մնալ չեր կարող: Պարսկաստանից ավելի կարևոր գործեր կոչում եյին նրան: Իսկ այնպես, առանց վո՛րևե հետևանքի հասնելու, Թողնել և հեռանալ,— այդ Թույլ չեր տալիս նրա անձնահաման գոռոզությունը: Ցերբ տեսավ, որ ուժը չե ներգործում, նա դիմեց յուր սովորական խորամանկությանը: Պատգամավոր ուղարկեց Թաղուհու մոտ, մեծամեծ խոստումներով խնդրեց, որ յերկու կողմից էս գինադուլ լինի, և Թաղուհին ցած իջնե բերդից:

դա նրա մասն, հաշտության պայմանների մասին անձամբ բանակցելու համար: Թագուհին խոստացավ մերժել, պատասխանելով, որ չեր ցանկանա մի այնպիսի խարեության մե՛ջ լինելը տեսնել և մե՛ջ խոսել նրա հետ. վերջին և դառն էր վիրավորանքը, այնուամենայնիվ, պարտեց արքայից արքան դիջով՝ դոնե հետևից խոսել նրա հետ: Ամպամանին խորհուրդ տվեց թագուհուն՝ ընդունել վերջին առաջարկությունը:

Նշանակած օրը, անբարեսիրտ թագավորը միայնակ, և միայն Մերուժանն Արծրունու և Վահան Մամիկոնյանի ասպնջականությամբ, մտանցավ բերդի առարտան: Ցնծ վորպեսզի ձայները հասնեն միմյանց, նրան թույլ տվին վոտով մինչև պարիսպները բարձրանալ: Այսանդ նրա համար պատրաստված եր մի փառավոր բազմոց, և մի խումբ պալատականներ կանգնած էին ընդունելու: Նա լիկավ, բայց ահաճությունը թույլ չտվեց նրան նստել, մնաց վոտքի վրա: Այդ միջոցին, աշտարակի վրա, չքնաղատեսիլ տուր նախապատրաստություններով, հայտնվեցավ թագուհին: Բարձրահասակ, վայելչադեղ տիկինը, տուր ավազներվ խումբի մեջ, հանդիսանում եր վորպես մի հրաշալեղ առտածուհի: Տեսնելով նրան, Շապուհը ներքևից ձայն արձակեց.

— Դո՛ւ, վոր այդքան դեղեցի՛կ ես, տիկին, քեզ համար, վոր Աբշակ թագավորը այն աստիճան խելագարվեցավ, վոր յուր դժբախտ կեղտորությունը, գնելի, արյունը թափելով, քեզ հափշտակեց նրա ձեռքից,— դո՛ւ, տիկին, տվելի նազելի կլինեիր, եթե այդ աքանչելի դեղեցկությանդ հետ՝ վոքր ինչ խելք ու խոհեմություն ունենայիր: Բայց այսունեցուն չն տված խելքը, չն տված և խոհեմությունը: Նրան տված և վայրենի կոպտությունը և անասնած հպարտությունը միայն: Նրա սիրտը, նրա միտքը, յուր լեռների ապառաժներվ նման, կոշտ և և անզգա: Այդպես եր քո հայրը՝ Անդովիկ իշխանը, այդպես եր և քո մայրը: Ցնա քո մոր մարմինը, յուր հանդուգն համարձակախոսությամբ համար, մահ-մահ հռչտակել տվի Զարեհավանի ամրոցների մոտ: Ցնա քո բոլոր ազգատոհմը ջնջեցի: Մնում են քո կեղտոյրները միայն, վորոնք դանվում են իմ դերիների թվում: Նրանց էս ապառում և նույն ցավալի վախճանը, եթե դու, տիկին, կշտրտնակես քո համառության մեջ մնալ: Ինչո՞ւ կես ամրացել այդ բարձրության վրա: Միթե այդ ապառաժները կարո՞ղ են փրկել քեզ: Մենք և արյաց արքայից արքայի դորությունը և առիւծի կե՛ս նրա բարկությունը: Նրա ահավոր չունչից լեռները մոմի նման հալվում են և ծովերը ցամաքում են: Իսկ դու, տիկին, անմտությամբ կղզիացած ես այդ քարերի դագաթների վրա, առանց մտածելու, վոր ալիքները կարթծրանան, մրրիկը կվոտքիդ կի, և այդ վողորմելի կղզին կիջնի, կանհետանա իմ բարկության անդունդ հատակի մեջ... Ինչո՞ւ կես ամրացել այդտեղ: Դրանով դու չես կարող ազատել, տիկին, վոչ քո անձը և վոչ քո կերկիրը: Ամբողջ Հայոց աշխարհը իմ վոտքի տակն է: Բավական և մի թեթև ճնշում. — և նա մոխիր կդառնա: Քեզ համար, տիկին, մի ա՛յլ հույս չկա, բա-

ոյն իմ մեծահոդությունը: Նրա վրա հենվի՛ր, և քեզ փրկություն կլինի: Եթե դու կլինես չլինելիը, ես քեզ չեմ ների: Բայց կներեմ, վորովհետև կին ես: Ցած իջիր այդ բարձրությունից, համբուրի՛ր արյուց արքայի վոտքերի փոշին, և նա վողորմած կլինի դեպի քեզ:

Թագուհին անվրդով կերպով լուռ եր: Վրդովված էին միայն նրա նախարարները, վրդովված եր և ավազանին: Այդ սպառնալիքների պատասխանը կարող եր լինել մի նետ, վոր վերևից արձակվելով, կկոնեցներ զազանին: Եվ նախարարները պատրաստ էին հարվածելու նրան, եթե միևնոյն լուռ անշարժությունը չդադեր նրանց բարկությունը: Նա չկամեցավ դավաճանին դավաճանությամբ պատասխանել, և յուր ամրոցի դռներից հյուրի դիակը հետ ուղարկել:

Նա պատասխանեց.

— Լսի՛ր, Շապուհ, դու թագավորի վհուկյան հետ՝ կորցրել ես և՛ թագավորի քաղաքավարությունը: Դու մոռանում ես, վոր խոսում ես թագուհու հետ, դու մոռանում ես, վոր խոսում ես կնոջ հետ: Դու ինձ հիշեցնում ես, Շապուհ, քո զազանային վարմունքը իմ մոր և իմ աղջահոհմի հետ, և անբարեսիրտությամբ պարծենում ես քո բարբարոսություններով: Բայց դու պետք է սարսափելիը քո կատարած յեղեռնագործությունների առջև, յեթե քո սրտում մարդկային ղգացմունքի մի մանուկիկը նշույլ մնացած լիներ: Դու սպառնում ես ինձ, Շապուհ, այն սպառնալի վախճանը, վորով դատապարտվեցան իմ տոհմակիցները: Բայց ես մտածում, վոր այդ սպառնալիքը ավելի կրորբոքեր իմ վրեժխնդրությունը և ավելի կամրապնդեր իմ համառությունը՝ ձեռք չմեկնել այն մարդուն, վորի ձեռքերը շաղախված են իմ մոր և իմ հարազատների արյունով: Դու ինձ ներումն ես խոստանում, և հրավիրում ես՝ ցած իջնել իմ ամրոցի բարձրությունից: Լավ մտածի՛ր, Շապուհ, այն բոլոր խաբեությունների հետո, վոր դու մինչև այսօր դործ ես դրել մեզ հետ,— մի՞թե կարելի՞ է մի ամենաողջ հավատարմություն՝ թե՛ դեպի քո խոսքը և թե՛ դեպի քո խոստումնաքները: Այն որից, վոր դու իմ թագավոր-ամուսնին, վոր քեզ շա՛տ և շա՛տ վտանգներից ազատել եր,— այն որից, վոր դու ննդությամբ նրան քեզ մոտ հրավիրեցիր, և քո հյուրին, և քո մեր իմ դաշնակցին, վատությամբ Անուշ բերդը աքսորելիր,— այո՛, այն որից դու դրկեցիր քեզ հայոց բոլոր հավատարմություններից: Դու Հայոց աշխարհը քո վոտքերի տակն ես համարում, Շապուհ, և ասպատում ես՝ մի հարվածով վոչնչացնել նրան: Այդ ցնորքը իրականություն կլիներ, յեթե պարծենկոտությունը, յեթե անսանձ պոռոտախոսությունը, քաջություն համարվեր: Չափազանց դուրդուրությունը խելք և քո հիշողությունը, Շապուհ: Մտաբերո՞ւմ ես, թե քանի՛ քանի՛ անդամ քո զորքերի դիակները թողել ես մեր դաշտերի վրա, իսկ ինքդ մլմածի փախել ես մեր յերկրից: Եվ յեթե քո բանակը այսօր դրած է իմ ամրոցի մերձակայքում,— այդ վո՛չ քո, և վո՛չ քո զինվորների քաջության շնորհիվն է: Այլ այդ քո ննդա-

վրուքյան և քո դավաճանության ամոթալի արդյունքն և, վոր վայելում ես դու, Շապուհ: Դու իմ թագավոր-ամուսնին խորհրդավոր կերպով հեռացրիր յուր աչխարհից, և նրա կերկերը անտեր թողնելով, քեզ համար ճանապարհ բաց արիցիր: Ցնվ վորպես ճարպիկ դողը ողում և քաղում ամեն տեսակ բաղակայություններից, նույնպես և դու մատը անպաչտպան կերկերը: Դու ավելի ցած դանվեցար քո դաղության մեջ. դու կաչառեցիր ամեն ծառաներին, և դիշերով դռները քո առջև բաց արին: Ահա՛ այդ տեսակ ծառաներից կերկուսը քեզ մոտ կանչած են,— կերկուսին ես, կրկե կաչառք, ավել ես քո քույրերին:

Նա ձեռքը տարավ դեպի Մերուժան Արծրունին և դեպի Վահան Մամիկոնյանը, և ապա շարունակեց.

— Բայց մի՛ մոռանար, Շապուհ, Հայոց աչխարհը դարձյալ անը ունի. նախ նա, վոր ամբողջ տեսնողքի տերն ու թագավորն և,— նա ձեռքը տարավ դեպի կերկինքը,— կերկրորդ, կե՛ս, վոր խոսում եմ քեզ հետ, և ապա իմ վորդին, վոր այժմ դանվում և կայսրների քաղաքում (Բյուզանդիայում): Սնոտի հպարտությունը և կուրը անձնասիրությունը մոլորության մեջ են դրել քեզ, Շապուհ: Լա՛վ մոռծիր, և ուչի կե՛ս, Շապուհ: Ցերե ամենքը կկընչվին, կերե կմնա հայոց խրճիթներում մի թուլ աղչիկ մկաց,— նա դարձյալ կպատերազմի քեզ հետ: Բայց դեռ այդ ետդը չե հասել: Դու չե՞ս տեսնում, վոր քո բոլոր զորությամբ զարկվեցար այդ ամբոցի ապառաժների վրա, և վոչինչ աղդել չկարողացար: Բայց վո՞րքան այդպիսի ամբոցներ դեռ կան մեր աչխարհում, վորոնց մեջ իմ նախապարանները դինքը ձեռքում ապաստան են քեզ: Դու ընկել ես հայոց լեռների վորոգայթի մեջ, և չատ բախտավոր կլինես, կերե դուրս գալ կարողանաս: Գնա՛, Շապուհ, հեռացի՛ր այստեղից: Գնա՛, բորբոքի՛ր քո բոլոր չարութիւնները, և ինչ բորբոքոսություններ, վոր տակավին կարող ես կատարել, մի՛ խնայիր: Քո ապատնեշները չեն կարող վախեցնել ինձ: Գնա՛: Այն բոլոր վատությունների հետո, վոր դու դործ դրեցիր, այլ ես մեր մեջ վոչինչ հաչտություն կայանալ չե կարող: Քանի վոր իմ թագավոր-ամուսինը հնծում և Անուչ բնդում,— Հայոց աչխարհը, վրնջխընդության դինքը ձեռքում, կպատերազմի քեզ հետ...

— Տեսնե՛նք... կատաղաբար մռնչաց դաղանը, և սկսեց ցած իջնել բերդի բարձրությունից:

Անցավ հաճարյա մի ամբողջ ամիս:

Պատանեկ բերդը դիմադրում եր ընդհանուր ցնծության մեջ: Փողոցները զարդարված եչին, դույնդույն դրոչակները ծածանվում եչին աչտարակների բարձրության վրա: Ինախիչների խումբ բաղմություն լցրել եր հրապարակները: Այդ և կիչ, ապա և ապիկ, պար եչին բռնել, և նախապարանների ուժդին հնչյունների յեղանակով թնդեցնում եչին դետինը:

Արքայական պալատի շուրջը հավաքված էին՝ հարուստ զենքերով ու զարդերով սճնված, զինվորականների ուրախ խումբերը:

Ցնծում Շապուհը թողեց բերդի պաշարումը և հեռացավ դնալի Զարհաստան: Այսոր բերդը առն եր կատարում:

Արքայական պալատի ընդարձակ սրահներից մեկը չքնդ կերպով զարդարված եր: Մի կողմում, յերկար սեղանի վրա, դրված էին թանդագին ղեհատներ, զեղեցիկ զենքեր ու զրահներ, և զանազան տեսակ վոսկեղեն ու արծաթեղեն անոթներ, վորոնց փայլը աչք եր շլացնում: Դրանք դուրս էին բերված թագավորական գանձարանից պարգևաբաշխության համար: Թագուհին, ամբռնալով այդ բերդում, յուր հետ բերեց և թագավորական գանձը:

Շքեղազարդ բազմոցի վրա նստած եր թագուհին և դանվում եր, որվա պատշաճին վայել, փառավոր ղեհատավորության մեջ: Այսոր հանդեսավոր ընդունելություն ուներ: Ներա չքնաղ դեմքը՝ յուր պալատականների ընդհանուր ուրախությունից՝ ավելի զվարթություն եր առացել, քնև այդ բոլոր զվարթությունը, վոր ավելի պաշտոնական եր, հաղիվ կարողանում եր աքղել այն խորին տխրությունը, վոր թագնված եր նրա դեղեցիկ աչքերում:

Այո՛, դեղեցի՛կ եր Սյունյաց աշխարհի այդ հրաշալեղ դիցուհին, և նրա դեղեցկություն եր, վոր Արշակ թագավորին կատարել տվից մի յղերական գործ, վոր միայն ծայրահեղ սիրահարություն կարող եր արդարացնել...

Գլխին կրում եր վոսքրիկ զոհարազարդ թագը, վոր բոլորակ պսակի նման՝ հավաքել եր նրա սև դանգուրները, վորոնք սիրված էին գունաթափ այտերի վրա, իսկ յետևից մանր հյուսերով ծածկել էին հարուստ թիկունքը: Սպիտակ շղարշը յուր թափանցիկ ծալքերով աքղում եր վեհափառ դլխի այդ սիրուն զարդը, վոր նրա կախարդիչ դեմքին մի առանձին վայելչություն եր ընծայում: Վոսկյա դնդերը ծածկված էին դանդուրների սև ալիքների ներքո, և միայն վառվռուն ակնների փայլը յերբեմն յերևան եր հանում նրանց ներկայությունը: Այդ թանգագին դնդերը այն առատճան ծանր էին, վոր ականջների փոխարեն, կարմրաճև ճարմանդներով քարշ էին ընկած թագի յերկու կողմից: Իսկ նրանց ծայրերը վերջանում էին զանգակաձև մինջկներով, վորոնց յուրաքանչյուրի մեջ բռնված եր մի-մի խոշոր զոհար: Մի մարգարտաշար շղթա միացնում եր դնդերի յերկու ծայրերը և իջնում եր մինչև կուրծքը: Զարհանոցին կրում եր նույնպես զոհարազարդ մանյակը, վորից քարշ եր ընկած արքայական լանջաց պատիվը, վորը ճաճանչավոր լուսնի ձև ուներ և հանդչում եր փառավոր կուրծքի վրա: Հոլանի բազուկները զարդարված էին վոսկյա ապարանջաններով, իսկ աջ ձեռքի ճկույթի վրա վայրում եր թագուհու հատուկ մատանին: Նա հագել եր ծիրանի պարեգոտ, վոր յերկար և մեղմ ալիքներով իջնում եր մինչև վոտները, վոր կրում էին նախ-

չուն, մարդատեսիլ մաշիկներ։ Մեջքը պնդած եր մի ճաճանչ վոսկյա լայն կամարով, վորի ծայրերը ասլիեից կլված եյին յերկու ահռելի վահանակներով։ Ուսին կրում եր Թեթև սամուրայների թիկնոցը, վոր պատած եր վարդագույն թավիշով։

Նրա աջ կողմում, առաջին անդում, կանգնած եր Մուշեղ Մամիկոնյանը—հայոց զորքերի ընդհանուր սպարապետը։ Հետո Սահակ պարթևը—Ներսես մեծի վորդին։ Դրանցից ներքև, իրանց ասպիճանի և տոհմային դերապանցության համեմատ, կարգով շարված եյին պանագան նախարարներ և զանազան ազատներ։ Վերջիններին թվումն եր Մեսրոպ տարոնեցին։ Իսկ ձախ կողմում, նույն կարգով, կանգնած եյին ազատաների կանայք և բնորդներ, վորոնք իրանց ամուսիններին հետ բերդն եյին մտել։ Բոլորի դեմքերի վրա նկարված եր անսահման ուրախություն, բոլորի աչքերը վայելում եյին խորին բերկրությամբ։

Հանդիսականներից վոչ վոք նստած չեր, բացի Մաշտոց յեպիսկոպոսը,—Ներսես մեծի սեղապահը, վորին նա յուր փոխանորդ կարգեց, յերբ ուղևորվեցավ Բյուզանդիա։

Դրսից լսելի եյին լինում նվաղարանների ձայներ, և ամբողջ բերդը թնդում եր ցնծության աղաղակներով։ Իսկ սրահում տիրում եր խորին լռություն։

Թագուհին դարձավ դեպի հանդիսականները այդ խոսքերով.

— Յերկարատև պաշարումից հետո, վերջապես, Շապուհը թողեց մեր բերդը։ Նրա բոլոր ահարիկու զորությունները փշրվեցան մեր ապառաժների վրա։ Բայց ավելի քան ապառաժների ամրությունը, անխորտակելի յեղավ ձեր քաջությունը, ձեր անձնազոհությունը, իմ սիրելի զորապետներ։ Տերը ուժ տվեց ձեր բազուկներին և դուք, իրրև լավ հերոսներ, հերոսաբար կռվեցաք մեր հայրենիքի վայրագ թշնամու հետ։ Դուք ապացուցիք, վոր նրա արժանավոր զավակներն եք։ Դո՛ւն եր այդ յերկարատև պատերազմի և լի ցավալի աղետներով։— Դո՛ւն եր, կրկնում եմ, վորովհետև բացի ոտաբ թշնամուց, մենք ստիպված եյինք կռվել և մեր հարազատների հետ։ Մեր թշնամուն առաջնորդում եյին մեր հայրապետները։ Վորդին կռվում եր հոր դեմ, յեղբայրը յեղբոր դեմ։ Ցնծի դրա մեջն եր ձեր հայրենասիրության բարձր վոգին, վոր դուք չխնայեցիք ձեր տոհմայիններին, և նրանց գենքերին գենքով պատասխանեցիք։ Գովում եմ ձեր առաքինությունը, և ասելս եմ իմ մայրական սրտնությունը։

Ամենքը լռությամբ ղլուխ խոնարհեցրին, արտահայտելով իրանց խորին շնորհակալությունը։ Նա շարունակեց.

— Բայց դեռ շատ դործեր են մնում մեզ կատարելու, և ամենադժվար դործեր։ Մենք թշնամուն վանեցինք մեր բերդի չորեքկողմից, բայց վո՛չ մեր աշխարհից։ Մենք պաշտպանեցինք մեր անձերը, բայց վո՛չ մեր աշխարհը։— Մեր աշխարհը, մեր սիրելի աշխարհը դեռ դրած և նրա բարբարոսության առջև։ Ցնծ ապրատություն չունենք, վոր Շապուհը, այնպես

ամոթալի կերպով հեռանալով մեր բերդի ստորոտից, պիտի կարողանա՞ արդյոք մոռանալ այդ դառն վիրավորանքը: Նա յուր մաղձն ու թույնը կթափե, անշուշտ, մեր աշխարհի մյուս անպաշտպան մնացած տեղերի վրա: Իսկ այսպիսի տեղեր առկայ չեն: Մեր նախարարներից վոմանք այնքան յերկչոտ դտնվեցան, վոր իրանց յերկիրը թողին անտեր և փախան դեպի զանազան կողմեր: Ներանց ամրոցները գրավվել և թշնամին: Ներանց ընտանիքները բանտարկված են իրանց սեփական ամրոցների մեջ, և պահվում են վորպես պատանդ: Բացի դրանցից, Զարեհավանի ցավալի արյունհեղությունից հետո, ուր Շապուհը ցույց տվեց յուր դաղանային կատարյալ վայրագությունը,— մեր դերիներից դեռ ստվար բազմություն դտնվում է թշնամու ձեռքում: Մեզ համար չե հանգստություն, քանի դեռ մեր յեղբայրները ու քույրերը դերության մեջ են դտնվում: Մեզ համար չե հանդստությունը, քանի դեռ կմնա այն անպատվության մուրը, վոր քանց Շապուհը մեր նախարարների յերեսին, ներանց կանանցը և որիորդներին մերկանդամ կանդնեցնելով յուր բանակի առջև... Դո՛ռն և, ատամնիկ դո՛ւրն ինձ՝ մի ըստ միոջե հիշել, թե վորքան անթիվ են մեր տառապանքները, և վորքան անբժշկելի յեն մեր վերքերը: Ցավս իմ հույսը դրել եմ աստուծո ողնության և ձեր հայրենասիրության վրա, ո՛վ քաջեր, և անվերկրա յեմ, վոր դուք այսուհետև ավելի մեծ յեռանդով կպատասխանեք, վոր արժանի յեք ձեր կոչմանը...

Նրա քաղցր և ազդու ձայնը, վոր մեռալի հնչյուններով արձագանգեր ատրածում ընդարձակ սրահի մեջ, նրա վոդևորից խոսքերը, վոր կրակի նման հեղվում եյին բոցավառ շրթունքներից, խորին տպավորություն դրծեցին բոլոր հանդիսականների վրա, վորոնք կրկին և կրկին դլուխ խոնարհեցրին արտահայտելով իրանց անձնանվիրության անկեղծ հավատիքը:

Հետո խոսեց յեպիսկոպոսը.

— Հայրենիքը վտանգի մեջ է, այո՛, բայց ավելի մեծ վտանգի մեջ է յեկեղեցին: Պարսկական պղծությունը արդեն մուտք է դործել մեր տաճարներում: Մեր սուրբ սեղանների վրա վառվում է վորմզդական կրակը: Մոգերով ու մոգպետներով լցված են մեր վանքերը: Միանձնուհիք հալածվում են, իսկ միանձանց բռնադատում են պաշտոն տանել կրակին: Մեր նախարարներից վոմանք, պարեից արքային ավելի հաճոյանալու համար, իրանց տներում ատրուշաններ են կառուցել: Մեր բազմաչարչար Լուսավորիչ հոր դառն աշխատանքներով հիմնած յեկեղեցին այժմ կործանվելու մոտ է: Պարսիկը չատ անգամ արշավել է մեր յերկիրը, չատ անգամ հաղթել է մեզ, և չատ անգամ հաղթվել է մեզանից: Մեր յերկիրը միշտ վողողված է յեղել անընդհատ պատերազմների արյունով: Բայց անցել են կռիվն ու կոտորածի ահեղ որերը, և արյան հետքերի վրա՝ կրկին ծաղկել և ժողովրդի կյանքը և նրա բարօրությունը: Իսկ այժմ սպանվում և յեղեղեցին, սպանվում և կրոնը, և յուր հետ դեպի հավիտենական մահ և տանում ամբողջ ժողովրդին: Որհասը մոտ է, և այդ որհասից փրկու-

թյուն չկա: Դա մի մահ է, որը հարություն չունի: Դա՛ աղի մահն է: — Դա՛ հավերժյան մահն է: Վո՛րքան աղերը, որ՛քան աղինք, անհատ վիշապի նման, կլանեց Զրադաշտի սուրբ դենը: Վո՛րքան արբուքյուններ այլմեցան նրա վառած կրակի անշեջ բոցերի մեջ: Գնաք և մարել այդ կրակը, որը արդեն սկսել է բորբոքվիլ մեր աչխարհում: Գնաք և մարել այդ հուրն ու բոցը, որը պիտի լափե մեր արբուքյունները: Այո՛, պետք մարել նրան, որը վերստին կյանք առնա մեր յեկեղեցին, որըն մեզ և կայանում և մեր աղի ու պետության կյանքը:

— Թո՛ղ որհնյալ լինի առուծո կամքը, թո՛ղ տերը ինքը պահպանե յուր սուրբ յեկեղեցին, իսկ մենք նրա ուխտապահ ընկերները կլինենք,— միաձայն դոչեց ամբողջ ավազանին:

Թագուհին վեր կացավ: Կրկին տիրեց լռություն: Ուշիկ քայլերով մոտեցավ նա յերկար սեղանին, որըն վրա դրված եյին պարզևաբաշխության համար պատրաստված իրեղեններըը: Այնտեղից վեր առավ մի սուր և, առաջարկելով յեպիսկոպոսին, ասաց.

— Սրբազան հայր, թշնամին սրով և արյունով մոցրեց յուր պղծությունը մեր սուրբ առաքելներում, մենք նույնպես սրով և արյունով պետք և մաքրենք մեր առաքելները այդ պղծություններից: Ահա՛ քեզ մի դենք, և որպեսզի առ՛ւր քո պաշտոնակիցներին, դրանով նախանձախնդիր լինել յեկեղեցու վառքին:

Յեպիսկոպոսը ընդունեց դենքը:

Հետո թագուհին վեր առավ մի վռակնհուռ վերարկու և, մոտենալով Մուշեղ Մամիկոնյանին, ասաց.

— Դու, Մուշեղ, այդ կռիվներին մեջ ապացուցիր, որ քո արժանահիշատակ հոր հարազատ զավակն ես,— ա՛յն հոր, որը յուր կյանքը դրեց յուր հայրենիքի և յուր թագավորի վրա: Գնա վայել և մեծարել այն ընծայով, որը ամենապարծն և արքայական պարգևների մեջ: Դու այժմ քո հզոր ուսերի վրա յես առնում Հայոց աշխարհի բոլոր ծանրությունը: Յես այդ արժանի ուսերը կզարդարեմ այն վերարկուով, որը մի ժամանակ կրել է իմ թագավոր ամուսինը:

Սպարապետը խորին յերախտագիտությամբ ծունր դրեց տիկնոջ առջև, և նա ձգեց նրա ուսերի վրա արքայատիպ վերարկուն:

Հետո թագուհին մերձեցավ ընծաների սեղերքին, որը առավ մի վոսկյա բաժակ, և, մոտենալով Սահակ պարթևին, ասաց.

— Գո հայրը, Սահակ, յուր հայրենիքի ամենահատաստան նեցուկն եր, և նրա սիրո համար՝ այժմ կրում և աքսորի տաժանական կյանքը: Գո վհատուտ ճակատի վրա փայլում և հոր լուսապայծառ աստղը, և այդ յերևեցավ վերջին կռիվներին մեջ: Ընդունի՛ր այդ բաժակը, և ամեն անգամ, յերբ լծակից լինես զրանով, հիշի՛ր իմ դեպի քեզ ունեցած ջերմ զգացմունքը:

Գարթևաղն յերիտասարդը ծունր դրեց և ընդունեց նրա ձեռքից դեղեցիկ բաժակը։

Այսպես առատաձեռն պարգևներով վարձատրում էր խելացի ասիկինը յուրաքանչյուրի քաջությունը, և նրա քարղըթախոս լեզվում ամենին համար կային խիստ խմաստալի դուխասանքներ, համեմատ նրանց տոհմային նշանակությանը և նրանց մատուցած ծառայություններին։ Մե՛ծ էր նրա նախարարների զոհունակությունը, և անսահման էր նրանց մխիթարական վոգևորությունը։ Տիկնոջ ամեն մի ժպիտը, ամեն մի մայրական դպացմունքներով լի հայացքը՝ նրանց նոր վոգի, նոր յեռանդ և անձնանվիրություն էր ներշնչում։ Նրանք ուրախ էին, վոր իրանց ծառայությունները վո՛չ միայն վարձատրվում են, այլ հատկացվում են, և մի այնպիսի ազնվամիտ հնոջ համակրությանն են արժանանում, վորպիսին էր հայոց ասիկինը։

Յերբ տղամարդերի պարզևաբաշխությունը վերջացավ, ասիկինը դարձավ դեպի ազատանի կանայքը, վորոնք պաշտպան ժամանակ խիստ վայելուն ծառայություններ էին ցույց տվել։ Նրա դեղեցիկ աչքերը վորոնում էին մեկին, վորը կանանց խումբի մեջ չէր յերևում։

— Իմ քաջերի թվում կար և մի որիորդ հերոսուհի,— ասաց նա։— Ո՞ւր է Աշխենը, կանչեցե՛ք այստեղ Աշխենին։

Ոշտունյաց նազելի որիորդը համեստությունից թաղնվել էր։ Մի քանի րոպեից հետո նորա մատյ նա, զինվորական չքեղ դրահավորության մեջ։ Բոլորի աչքերը դարձան դեպի դեղեցիկ, վայելչակազմ հերոսուհին։ Տիկինը ղրկեց նրան և, ճակատը համբուրելով, ասաց.

— Սիրելի՛ Աշխեն, կար մի ժամանակ, հանդստի և խաղաղության յերջանիկ ժամանակներում, մեր իշխանազն որիորդները լրանց մատների ճարտարությունը ցույց էին տալիս դեղեցիկ գործվածների մեջ, վորոնց ցով զարդարում էին նախարարների վառոլոր սրահները և մեր տաճարների սուրբ սեղանները։ Անցավ խաղաղության ժամանակը, յեկավ արյան և կատորածի տաղնապը։ Բեզ դո՛ւ, քո դժվելի որինակով, մի դեղեցիկ դաս ավեցիր քո իշխանազն քույրերին, թե յերբ հայրենիքը վտանգի մեջ է, հնոջ քնքուշ մատներն էլ, ասելի վոխարեն, պետք է նիզակ բռնեն, իսկ թելի փոխարեն, պետք է ճգնեն աղեղի ամրակենդ լարը։ Դու արդյամբ կատարեցիր այդ, և կատարեցիր հրաշալի կերպով։ Բեզ յես, սիրելի Աշխեն, ահա այդ արժանավոր կամարով պատվում եմ քո արիական մեջքը, ցանկանալով քեզ ավելի աշխուժ և զորություն։

Տիկինը յուր ձեռքով կապեց ականակուռ կամարը նրա մեջքին, իսկ որիորդը ուրախության արտասուքը աչքերում համբուրեց նրա բարեբար ձեռքը։

Մյուս կանանցից և որիորդներից չատերը նույնպես ընծաներ ստացան։ Յերբ պարգևաբաշխության հանդեսը վերջացավ, յեկեղեցական հոգևոր որհնության մաղթանքը։ Այդ մինչդեռ սեղանատան մեջ հնչեցին պա-

յատակեան նախապատրաստութիւնները, և թագուհին ամենայն սիրելութեամբ դաթեալ դնել հանդիսականները, հրամիրելոց յուր մոտ ճաշելու:

Մինչև յերեկո բազմութիւնը պալատի դուռն հանդիպ, հրապարակին վրա, անհամբերութեամբ սպասում էր նախարարներին: Ցերը նրանք հայտնվեցան, լսելի յեղան ուրախութեան բարձրագոչ աղաղակներ: Ամբոխի վոգևորութիւնը չափ չուներ: Ամեն կողմից շրջապատեցին սիրելի իշխաններին, ամեն կողմից նետվում էին, վոր ձեռքերի վրա բարձրացնեն, և այնպես տանեն, հասցնեն նրանց մինչև իրանց սրճևանները: Իշխանները համեստութեամբ մերժեցին այդ մեծ պատիվը: Բայց բազմութիւնը, դաթեալ նրանց ասլները ընկած, յերդվելով ու ցնծութեան ծափահարութեամբ տարան, հասցրին մինչև իրանց սրճևանները:

ՄՈՒՉԵՂ «ԽՈՏՈՐՆԱԿԻՆ ԽՈՏՈՐՆԱԿ»

«Ես հասանէր աղաչական զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին (Գարսէից) քաւաստն հազարաւն, եւ անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր. Ապա մինձի մահապուր թագաւորն Գարսէից Շապուհ եղողորմեալ փախչէր... Չի զբազումս կոտորէին, եւ զբազումս յաւազաց Գարսէից ձերբակալ առնէին, եւ առնուին զդահձս թագաւորին Գարսէից յաւարի, եւ ըմբռնէին զՑնկինսանց Տիկինն հանդերձ այլովք կանամբքն... Եւ զամենայն աւազանին, որս իբրեւ վից հարիւր հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, եւ ինքեւ խառով... Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ

Փաւստոս:

Արտաքերոի պաշարումը լուծելուց հետո, Շապուհը յուր զորքերի մեծ մասը հանձնեց Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին, թողնց նրանց Հայոց գրավված յերկրներում, իսկ մնացածը յուր հետ առնելով, ճանապարհ ընկավ դնելի Գարսկաստան: Ցերիու ամբողջ չաբաթ տևնց, մինչև նա հասավ Թարվնդ և յուր ծանր բանակը դրեց այդ քաղաքի մոտ:

Միևնույն ժամանակ մի քանի գունդեր, բոլորովին այլ ճանապարհով, գիմում էին դնելի պարսկական բանակը: Դրանք անցել էին Հեր և Զարեվանդ գավառները, և Կապուտան ծովակի հյուսիսային յեղերքով ավելի առաջ գնալով, արդեն հասել էին Աղե-գետի ափերի մոտ:

Այդ գունդերը կազմված էին միայն թեթև ձիավորներից, վորոնք առվելի ասպատակ-հրոսակներ էին նմանում, քան թե կանոնավոր զորքերի, թեև նրանց թիվը փոքր չէր: Գնում էին դիշերով, իսկ ցերեկները, ճանապարհից դուրս գալով, հանգստանում էին թաքթաքուր տեղերում: Զա-

ընթանդից մինչև Թարվեզ տարածված արևամերձ անապատների ամենքյան անառանելի տեղը չեր, վոր ստիպում եր նրանց դիշերով ճանապարհ գնալ, այլ դուցե մի ուրիշ նպատակ, վոր չեյին ցանկանում շատ աչքի ընկնել։ Գունդերը միասին չեյին գնում, նրանք բաժանված եյին գանազան խումբերի, վորոնց մինը մյուսից մի քանի մղոն հեռավորության ուներ։

Գիշերից բավական անցել եր, յերբ առաջին խումբը հասավ Աղե-գետի մոտ։ Գարնանային հորդությունները ժամանակ դեռը, յուր հեղհեղուկ ափերը վողողելով, բացել եր բավական լայն և խորընկած հեղեղատ, վորի մեջով հոսում եր նա։ Իսկ ալժմ ջուրը պակասելով, քաշվել եր, թողնելով յուր ափերի մոտ ընդարձակ լիլային տարածություն, վոր պատած եր ճոխ բուսականությամբ։ Այդ տարածությունը այնքան խորն եր ընկած շըրջակայքի մակերևույթից, վոր յերեք հազարավոր անձինք տեղավորվելի եյին այնտեղ, դարձյալ վերևից ճանապարհով անցնողը տեսնել չեր կարող։ Այստեղ, դետի ալ ափի մոտ, իջևանեցին նրանք, վոտքը ինչ հանգստանալու համար։ Ձիանների վոտները պնդեցին վոտնակապերով, թողեցին դետեղերքի շամբուտներում արածելու, իսկ իրանք՝ ինչ վոր ունեյին պայուսակների մեջ՝ հանեցին, կերան, հետո դլուխները դրեցին իրանց դենքերի վրա և քնեցին։ Բայց մեկը մնաց արթուն։

Վորպես մի մարմնացած անհամբերություն, թափառում եր նա դետի ափերի մոտ և, մեկնուլն ժամանակ, կրծում եր ձեռքի սպիտակ մսի կտորը, վոր յուր հետ վեր եր առել։ Գիշերային խավարը ծածկել եր շրջակայքը, և վոչինչ չեր յերևում։ Միայն հեռվից մանր, հրեղեն աստղիկների նման, նշմարվում եյին պարսկական բանակի պետ չհիջած լապտերները։ Նա անդադար նայում եր դեպի այդ կողմը։

Նա սկսեց դետի հակառակ ուղղությամբ վեր բարձրանալ, մինչև հասավ կամուրջին։ Գլուխ-լերդազուլն հոսանքով վազում եր դետը բազմաթիվ կամարների տակով, և յուր խուլ դղրդյունով աղմկում եր դիշերային լռությունը։ Նա չանցավ կամուրջը, այլ կանդնեց նրա մի կողմում, բարձր այուներից մեկի մոտ, և այստեղից թե՛ յուր աչքերը և թե՛ յուր լսելիքը յուրեց դեպի պարսկական բանակը։ Ցերկար նայում եր նա, թեև վորոշ վոչինչ չեր տեսնում, և վորոշ վոչինչ չեր լսում, բացի դետի խուլ դղրդյունից։ Բանակը դրած եր Թարվեզ քաղաքի մոտ, վոր դտնվում եր դետի ձախ կողմում, յերեք ժամվա հեռավորության վրա։

Այդ միջոցին մեծ ճանապարհի յեղրում, վոր տանում եր դեպի կամուրջը, մեկը խլուրդի նման դլուխը դուրս հանեց դետնի մեջ փորված դուրից և սկսեց դիտել յուր շուրջը։ Նրա աչքերը այն աստիճան սովորած եյին դիշերային խավարին, վոր գազանի նման, մթությանի մեջ ևս տեսնում եյին։ Նա խնդուն նկատեց այսպես մոտ կանդնած մարդուն և, յուր դետնափոր վորջից դուրս գալով, սկսեց մեծ զանգերով սողալ դեպի նա։

— Վողորմացե՛ք խեղճին,— ձայն արձակեց նա, յերբ բավարին մոտեցավ։

Այսպես մտա կանդնած մարդը ցնցվեցավ, յերբ տեսավ, վոր յուր վոտներին մոտ խլրտում եր մի անորոշ, դնդաձև մարմին:

— Ներկու որ և, վոչինչ չեմ կերել, մնում եմ սովից, վաղորմացնիք խնդրեին,— կրկնոց նա ավելի խղճալի ձայնով:

Այսպես մտա կանդնած մարդը ձգեց յուր ձեռքի ապխատած մսի կտորը, թեև ինքը նույնպես վոչ սակավ սոված եր: Նա չան նման խլեց անուշ պատառը, և խնդուն սկսեց կրծել, վոսկորներն ևս մանրելով յուր սուր ատամներով:

— Դու շատ քաղցած ևս յերևում,— նկատեց նրան այսպես մտա կանդնած մարդը:

— Ի՞նչպես քաղցած չլինել, տե՛ր իմ, յերկու որ և, վոր կամաւրջով վոչ վոք չի անցնում:

— Ինչո՞ւ:

— Ձի՞ա տեսնում, այնտեղ դրած և թաղավորի բանակը: Նրա յերկյուղից վոչ վոք այդ կողմերով չի անցնում: Ճանապարհները դատարկված են: Մարդիկ վախենում են տանից դուրս գալ և նրա զինվորներին հանդիպել: Աչերամները, սոված գայլի նման, դեսի ամեն կողմ թափառում են...

— Ներանք քեզ վոչինչ չտվի՞ն:

— Աղիծվի՞ն նրանք... յես շատ ուրախ կլինեյի, յեթե ինձ հետդ տային... Զինվորներից մեկը վերարկուս խլեց, տարավ: Ամբողջ տասն տարի՝ ինձ համար այդ վերարկուն թե՛ անկողին եր և թե՛ վերարկու... Տատցել եյի մի հայ ուխտավորից... Զղխտամ, ի՞նչ կլինի իմ դրությունը այսուհետև... Ինձ մնում և ցրտից սառչել և սրտից այրվել...

Վերջին խոսքերը մի այնպիսի խղճալի ձայնով արտասանեց նա, վոր այսպես մտա կանդնած մարդը առեց յուր ուսերից զինվորական վարպատնակը, և տալով նրան, ասաց.

— Ահա քեզ մի վերարկու:

Նա մեծ ուրախությամբ խլեց անապատելի ընծան և, որհնելով յուր բարերարին, խնդրեց.

— Ողնի՛ր ինձ, վողորմած տեր, տանել այդ վերարկուն մինչև իմ խուղը: Նա շատ հեռու չի այստեղից:

Նա սկսեց ողալով քարշ դալ դեպի յուր վորջը, իսկ անծանոթ բարերարը տանում եր նրա յետևից վերարկուն: Այդ թշվառականը ուրիշ վոչինչ չեր, յեթե վոչ, այն վողորմելի ուրուկներից մեկը, վորոնց արտաքսում են մարդկային բնակություններից, և նրանք կենում են քաղաքներից դուրս, մեծ ճանապարհների յեղերքի մոտ, դետնափոր ծակերի մեջ, և ապրում են անցուդարձ անողների վողորմությամբ:

Ցերեկ լույս լիներ, անկարելի յեր առանց սոսկալու նայել այդ այլանդակված ճիվաղի վրա: Գետքերն ու վոտքերը դուսացած եյին: Ցերկու ծայրատ մատներ միայն չարժվում եյին ձախ ձեռքի վրա: Ցերեսի վրա քթի կամ շրթունքների նշան չկար: Դուրս ցցված ատամները ամբողջանա-

յերեւում էին: Նորն ընկած աչքերը անհանգիստ կերպով վաւաշում էին մաղերը թափված, կոշտացած հոնքերի տակից: Ձայնը խռնձված եր, կարծես, կոկորդը ամբողջապես քայքայված լիներ: Նրա խուղը խակապես մի ծակ եր, որ փորել եր դևռնի մեջ: Նրանում նստել կարող եր նա, բայց ձգվելու կամ պառկելու չափ ընդարձակութիւն չուներ: Ճիվ այդ այնքան հարկաւոր եւս չեր, որովհետև նրա դնդաձև մարմինը տարածվելու տեղ եւս չուներ: Նրա ամբողջ կարասին մի խեցեղեն ջրի աման եր, որ դրած եր յուր համար հատկապես փորված մի խորշում: Նրա վողորմելի բնակարանն առանց ծածկի չեր: Ձորս յերկճղի վայրեր, քառակուսի ձևով, ցցված էին այդ ծակի չորս անկիւններում, և նրանց վրա դրած էին ուրիշ վայրերի կտորներ ու մացառներ, հետո ծեփել էին կավով: Այդ ծածկը պահպանում եր նրա խուղը թէ՛ անձրևից և թէ՛ արևից: Նա մտալ յուր վորջի մեջ, բայց անծանոթ բարերարը չհետացավ նրանից: Ցերեկն մարդկային հասարակութիւնից բոլորովին արհամարհված և բոլորովին մերժված արարածներն անգամ մի բանի պիտանի չեն լինում:

— Դու ասացիր, վոր յերկու որ է, վոչ վոք չի՞ անցել կամուրջից,— հարցրեց նրանից անծանոթը:

— Վոչ վոք, տեր իմ: Ես ամբողջ որ ու դիշեր, իմ ծակից դուրս դուրս հանած, նայում եմ: Ցերթ մի ճանճ էլ անցնի, կտեսնեմ: Միայն այս առաւոտ, դեռ բաւական մութն եր, անցան յերկու հոգի: Նրանք գնում էին դեպի բանակը:

— Դու լաւ տեսա՞ր նրանց: Ի՞նչ տեսակ մարդիկ էին:

— Տեսա, ինչպես չտեսա,— և նա սկսեց նկարագրել տեսած մարդիկներին:

— Այդ մարդիկը չի՞ն վերադարձել:

— Չեն վերադարձել: Ցերթ վերադառնային, յես կտեսնեի:

Կամուրջի այդ անքուն պահապանի հաղորդած տեղեկութիւնները փոքր ինչ հանգստացրին անծանոթին, և նա, բարի դիշեր մաղթելով Թշվառ արտաքսյալին, հեռացավ նրա վողորմելի բնակարանի մոտից: Սկսեց կըրկին դիմել դեպի ձիավորների բացօթյա իջևանը:

Սաննքը քնած էին ծառը, անդրդ քնով, վոր վայելում է ճանապարհորդը յերկար հոգնութիւնից հետո: Ձիաններից չառերը կերել, կշտացել էին, նուչնպես պառկած էին խոտերի վրա, և հռհռալով թափառմում էին, վոր տեղը ինչ կազդուրեն իրանց խռնձած մարմինը: Միակ անձնավորութիւնը, վոր յուր հանգստութեան մասին չեր մտածում, նա եր, վոր կամուրջի մոտից վերադառնալով, լուռ անցավ յուր վոջրիկ բանակի մերջով, նայից յուրաքանչյուրի վրա, հետո դնաց, անշարժ արձանի նման կանգնեց դետեղերքի մոտ: Նրա վառվռուն աչքերը հառած էին դեպի այն մասը, հրեղեն բծերը, վոր նշմարվում էին հեռվից, յերբեմն հանդչում էին, յերբեմն դարձյալ հայտնվում էին: Ճիվ նրա սիրտը, այդ կրակների

նման, վատվում եր անհնարին չկրմուքյամբ, և ավելի ու ավելի բորբոքում եր նրա անհամբերությունը:

Այդ մինոցին կամուրջով անցնում էին յերկու հոգի: Ամենամն աչալրջությամբ նայում էին նրանք հետ ու առաջ և, միևնույն ժամանակ, հաղիվ լսելի ձայնով խոսակցում էին.

— Ճիշն յեկած լինեն...

— Անպատճառ յեկած կլինեն...

— Այս դիշերվա համար ժամանակ նշանակեցին...

— Ճնվ այդ կամուրջի մոտ...

Նրանց վոտնաձայնը հասավ դետնախորի մեջ պահված ուրուկի սուր ականջներին: Նա դլուխը դուրս մեկնեց ծակից և ուշադրությամբ նայեց յուր շուրջը: «Այն յերկու հոգին եր... մոտածեց նա, և սկսեց յուր դեմդամն մարմնով դլորվել դեպի յեկվորները:

— Մի մարդ հարցնում եր ձեզ,— խոսաբ մեջից ձայն ավեց նա:

Ցնկվորները մնացին չվարած, չդիտեցին, թե վո՛րտեղից լսելի յեղավ անսպասելի ձայնը: Ուրուկը ավելի մոտեցավ: Նրանք տեսան խոսող դեմդը:

— Ի՞նչ յեղավ այն մարդը,— հարցրին նրանից:

— Այսպես, դետի ընթացքով դնաց դեպի ցած: Թո՛ղ սասված նրա գործին հաջողություն տա,— ավելացրեց նա,— թե՛ իմ սոված փորը կթափեց, և թե՛ մերկ մարմինս դրնստավորեց:

Ցնկվոր մարդիկը դետի ընթացքով սկսեցին ցած իջնել, միմյանց ասելով.

— Լավ ժամանակ հասանք...

—Բայց վո՞րտեղ դտնել սպարապետին...

Պատասխանը չուշացավ.

— Դո՞ւք եք,— լսելի յեղավ սպարապետի ձայնը, վոր դեռ կանդնած եր դետնվերքում:

— Այո՛, ասը,— ասացին նրանք մոտենալով:

Սպարապետը ուրիշ վոչ վոք չեր, յեթե վոչ, Մուշեղ Մամիկոնյանը:

— Պատմեցե՛ք, ի՞նչ տեսաք,— դարձավ նա դեպի յեկվորները:

Նրանք սկսեցին պատմել: Սպարապետը խորին ուշադրությամբ լսում եր: Նա չհամբերեց՝ մինչև վերջացնեին, սկսեց ինքը դանազան հարցեր առաջարկել.

— Դու ինձ այն ասա՛, քաղաքի վո՞ր կողմումն է բանակը:

— Քաղաքի արևելյան կողմում, կարմիր լեռան առորոտից վոտքը ինչ ցած:

— Բանակի վո՞ր կողմումն են դետեղված արքայական վրաններըը:

— Դետի վերևի կողմը, այսինքն՝ դեպի լեռան առորոտը, մի բարձրության վրա:

— Իսկ արքայական կառանո՞ցը:

— Դեպի ա՛րքայական վրաններն աջակողմը:

— Ի՞նչպես և դասավորված բանակը:

— Ինչպես միշտ՝ պայտի ձևով, որի ծայրերը հասնում են մինչև արքայական վրաննե՛րը:

— Վո՞րտեղ են պահվում հնծեալազորի ձիանները:

— Տարել են ավելի քան տասն փարսախ հեռավորության վրա արածեցնելու:

— Ե՞րբ դիտավորություն ունեն չվելու:

— Երեք որից հետո:

Մի քանի այլ հարցեր ևս առաջարկելուց հետո և բոլորի մասին մանրամասն տեղեկություններ առանալուց հետո սպարապետը դարձավ նրանց, ասելով.

— Գնացե՛ք հանգստացե՛ք:

Նրանք հեռացան: Հարցուփորձը Շապուհի բանակի մասին էր: Այդ յերկու մարդիկը ծպտյալ կերպով ուղարկված էին լրտեսելու նրա բանակը:

Սպարապետը մնաց միայնակ, և սկսեց դարձյալ անհանգիստ կերպով դեպերով ափերի մոտ: Նա այժմ դիտեր Թշնամու բանակի դիրքը, դիտեր նրա ամենամանրամասն դրությունը, և այդ տեղեկությունները բավական էին նրան, որ նրանց հիման վրա՝ կազմեր յուր վերջին ասպնձանի վառահ ձեռնարկության ծրագիրը: Նա դիտավորություն ուներ այս գիշեր հարձակվելու Շապուհի բանակի վրա: Ցավ նրա դիտավորությունը որքան յերկյուղալի յեր, այնքան և վճռական եր:

Աբտադերսի պարխսանների մոտից՝ Շապուհի կորադրության կերպով հեռանալուց հետո, սպարապետը բավական չհամարեց պարսից արքայից արքայի այդ ամրոցի պարտությունը, և վճռեց՝ թուլ չտալ նորան՝ վողջանդամ դուրս դալ հայոց սահմաններից: Նրա կատարած չարագործությունները ա՛յն ասպնձան դպալի եյին, նրա գործ դրած միջոցները ա՛յն ասպնձան վիրավորական եյին, վոր պետք եր պատժել այդ դաղանին: Նա ավերակ դարձրեց յուր անցած յերկրները, նա կոտորել տվեց յուր ձեռքն ընկած դերիները,— այդ դեռ ևս կարելի յեր տանել, Հայոց աշխարհը սովոր եր այս տեսակ հարվածների: Բայց նա. Զարեհավանի ավերակների մոտ՝ ազատանի կանանց վերաբերությամբ գործ դրած ամարդի վարմունքով՝ վիրավորեց հայոց աղնվականների պատիվը:— Այդ անկարելի յեր տանել, մանավանդ այն խոսքերից հետո, վոր Աբտադերսի առնախմբության որը հայոց թագուհին արտասանեց յուր ճառի մեջ. «Մեզ համար չի՛ հանդստություն, քանի դեռ կմնա այն անպատվության մուրը, վոր քաշեց Շապուհը մեր նախարարների յերեսին, նրանց կանանց և որիորդներին մերկանդամ կանդնեցնելով յուր բանակի առջև... Մի խոսքով ազատանի յերիտասարդներ, վոր ներկա եյին հանդեսին, հենց այն րոպեյում վճռեցին վրեժխնդիր լինել: Այդ եր պատճառը, վոր սպարապետի հրոսակները մեծ

մասը բաղկացած էր հայոց նախարարներէ վրդովնելէ, վրանք ուխտել էին վերահաստնել վիրավորված պատիվը:

Սպարապետը անցավ նրանց դլուխը, առաց յուր հետ մի քանի դունդեր, և Շապուհի Արտաշերսից հեռանալուց հետո սկսեց անմիջապես հետամուտ լինել: Նա այնքան չմոտեցավ, մինչև Շապուհը յուր զորքերի բազմությունը բաժանեց մի քանի մասների: Մի մասը հանձնեց Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանին, և մի մասը յուր Զիկ և Կարնեցի զորավարներին, թողնց նրանց հայոց զրաված յերկրները պահելու և նոր նվաճումներ անելու: Իսկ մնացած մասը յուր հետ առնելով, ճանապարհ բռնեալ դնաց Գաբռկատան: Այդ վերջին մասին հետամուտ լեղավ սպարապետը: Մինչև Թարվեզ հասնելը, նա մի հարմար տեղ, կամ մի հարմար ժամանակ չդտավ յուր դիտավորությունը ի կատար ածելու: Այժմ թշնամին յնկել, հասել էր Հայոց յերկրի սահմանապլխին: Եվեն այժմ ևս չդիմեր յուր նպատակին, այնուհետև ամեն հույս պետք էր կորած համարել: Վրա-ռոլհետև նա կանցներ սահմանը, վոտք կդներ պարսկական հողի վրա, և դործը կդժվարացներ: Ուրեմն պետք էր ոդուտ քաղել այդ դիշերից, այդ վերջին և մեկ դիշերից:

Նա շարունակում էր դնդերել դեպի ափերի մոտ, և լի սրտմտությամբ նայում էր դեպի արևելքը: Հետևն, Իսրայելի հերոսը, հրամայեց արեգակին կանդնել, մինչև վերջացնե յուր կռիվը: Իսկ Մուշեղ Մամիկոնյանը, հայոց հերոսը, կցանկանար հրամայել նրան, վոր ամենևին չդուրս դա, մինչև սկսե յուր կռիվը: Ցերեկն նրա անհամբեր աչքերը դառնում էր դեպի այն ճանապարհը, վորով յեկել էր նա: Նայում էր դեպի խավար մթությունը, և նրա մրրկածուփ սրտում անդադար կրկնվում էր այդ հարցը. «Ինչ յեղան... ինչո՞ւ այդքան ուշացան»...

Շատ չանցավ, նույն տեղում, ուր իջևանել էին նրա ձիավորները, հասան մի քանի խումբ նոր ձիավորներ: Նա վոչքր ինչ հանդստացավ-դրանց էր սպասում: Բայց այդ դեռ բոլորը չէր. դեռ հետ մնացած մի քանի խումբեր ևս կային:

Նորեկ խումբերի դլխավորը մոտեցավ սպարապետին:

— Տեղեկություններ առացա՞ր,— հարցրեց նա անհամբեր կերպով:

— Առացա,— պատասխանեց սպարապետը ուրախ կերպով:

— Ի՞նչ կա:

— Ամեն ինչ լավ է: Բայց մերոնք շատ ուշացան: Ինչո՞ւ պետք է այդքան ուշանային...

— Ցերեկ, հզան: Դեռ բավական դիշեր կա:

— Բայց այստեղից մինչև բանակը բավական ել ճանապարհ կա: Մինչև հասնենք, բոլորովին կլուսանա:

— Ավելի լավ: Գոնե հանգստանանք, թեև ինչ ենք անում, և կուր հավիտի նման խավարն մեջ չենք խաբխաբվի:

Սպարապետը ժպտաց, բայց դիվերային մթությունը թույլ չտվեց նկատել նրա հեղնական ժպիտը:

— Դու բավական վստահություն ունես քո վրա, Մեսրոպ,— ասաց նա:

— Ես վոչ թե բավական, այլ մեծ վստահություն ունեմ իմ ձիավորների վրա, Մուշեղ,— պատասխանեց փոքրիկ սպան:

Դա, իրավ, Մեսրոպ տարոնեցին էր: Ինքը կարճ, լեղուն— յերկար: Մոսակիցությունը ընդհատեցին ղանաղան խուլ հնչյունները, վոր հայտնի չեր, թե վոր կողմից եկին լսվում: Յերկուսն էլ իրանց ուշադրությունը լարեցին դեպի այդ հնչյունները:

— Շեփորի և թմբուկների ձայներ են,— ասաց սպարապետը:— Բանակի կողմից են լսվում:

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց Մեսրոպը փոքր ինչ անհանդըստանալով:

— Այդ պարսից առավոտյան ամենորյա սովորությունն է,— հանդըստացրեց Նրան սպարապետը:— Գիշերը լուսանալու մոտ է. չեխովները հընչեցնում են, թմբուկները դափում են, վոր մարդիկ զարթնեն, պատրաստվեն, ծաղող արեգակին յերկրպագություն տալու համար:

— Շա՛տ դեղեցիկ, Թող զարթնեն: Իսկապես, լավ բան չե՝ քնած մարդու վրա հարձակվիլը:

— Բայց այդ դեռ առաջին կոչնական ձայնն է: Մինչև արևի ծագելը, յերկու անգամ ևս պետք է հնչեցնեն:

Նրանք սկսեցին հետ ու առաջ շրջել դեպի ավերվ մոտ, մինչև բոլոր սպասվող խումբերը յեկան: Թե՛ սպարապետը և թե՛ Մեսրոպը՝ յերկուսն էլ վազեցին դիմավորելու: Տեսնելով նրանց, մի լարձրահասակ յերիտասարդ շտապով ցած իջավ ձիուց, և դրկեց յերկուսին ևս:

— Ես, յերևի, յերկար սպասել տվի ձեզ,— ասաց նա ներողություն խնդրելով:— Բայց այդ իմ մեղը չե: Իմ բռնած ճանապարհը սաստիկ ցեխ եր: Ձիաները հազիվ-հազ կարողանում էլին շարժվել: Յերեկվա անձրևը բոլորովին փչացրել եր ճանապարհը:

— Ուրեմն պետք է սպասել, մինչև ձեր ձիաները փոքր ինչ հանդըստանան,— հարցրեց սպարապետը:

— Անպատճառ: Սաստիկ հոգնած են:

Այդ ղվարթ վստահող յերիտասարդը Սահակ պարթեն եր— Ներոնես մեծի վորդին: Նրա ձիավորները առանձին խումբերով դեռևղվեցան առաջիններից փոքր ինչ հեռու, իսկ ինքը, սպարապետին և Մեսրոպին յուր հետ առնելով, մեկուսացան դեպի մի այլ կողմ, նստեցին դետեղբի մոտ, փափուկ խոտերի վրա: Սպարապետը հաղորդեց՝ յուր լրտեսների միջոցով ստացած բոլոր տեղեկությունները: Իսկույն կազմվեցավ մի բացօթյա պատերազմական խորհուրդ, վորը տևեց մինչև պարսկական բանակից լսելի յեղավ թմբուկների և չեխովների յերկրորդ կոչնական ձայնը: Այդ խորհրդավոր ձայնը չտապեցրեց նրանց: Այդ ձայնը կոչում եր բարեպաշտ

պրպտաշուկանոցներին դնալի աղթիք, դնալի յերկրագործություն ամենյան լուսատուին,— իսկ հայոց ուխտապահներին կոչում եր նա դնալի կռիվ, դնալի արյունհեղություն...

Երանիք վեր կացան, հրամայեցին պատրաստվել և ճանապարհ ընկնել: Շեփորների և թմբուկների յերջորդ ձայնը պետի ավետեր արշալույսի ծագումը: Վճռեցին՝ վոր դոնև այդ ժամանակ հասած լինեն նշանակած տեղը...

Կեսորից բավական անցել եր: Շապուհի բանակատեղը ներկայացնում եր խիստ ախուր տեսարան: Կիսակործան վրաններըը, իրանց տեղում անշարժ մնացած, դատարկ էին: Զինվորներ չկային նրանց մեջ, կար միայն պարծից վախեցյալներ դինվորի հագուստ կրածներ, վոր մնացել եր իրրև ավար հաղթողին: Ամբողջ բանակատեղը և նրա շրջակայքը ծածկված էին դիակներով: Արյան թացությունը ամեն կողմում սարսափ եր ազդում: Կենդանի մնացածներըը դերվել էին: Փոքր չեր և վախճանականների թիվը, վորոնց դեռ վորոնում էին:

Ինքը, արքայից արքան, չեր յերևում՝ վոչ դիակների մեջ և վոչ դերբինների թվում: Ասողներ կային, նույնիսկ պատրիկներից, վոր նա փախել հենց այն ժամանակ, յերբ առաջին հարձակումը դործեցին: Նա փախել յուր անհնազանդներից մեկի հաղուստով, վոր չճանաչվի: Զինվորների մի քանի արբնեցած խումբեր պնացել էին դեպի դանազան կողմեր բանելու նրան:

Արքայական փառավոր վրաններըը՝ իրանց բոլոր հարստությամբ՝ մնացել էին իրանց տեղում: Մնացել եր և կանանոցը, լի արևելքի և արևմուտքի դեղեցկուհիներով: Նրանց թվումն եր արյուց տիկնոց—տիկինը—Շապուհի թագուհին: Նրանց թվումն եր և Վորմիզդուխտ սրիտրդը—Մերուժան Արծրունու նշանածը: Հայ պահակների մի դինված չղթա բոլորել եր կանանոցի շուրջը, և նրան ճնշաստչելի յեր կացուցել:

Պայտաձև բանակի հրապարակի վրա կանդնացրել էին դերիներին: Նրանց մեջից ջոկում էին աղնվականներին, ինչպես վոչխարները դատում են այծերից: Ցետը վերջացրին, աղնվականների թիվը հասավ վեցհարյուրի, վորոնք դանազան տառիճանի զորապետներ և սպաներ էին:

Հրապարակի մեջտեղում, բարձր սայլացիցի ծայրին, չամփրած եր մի ճերմակապլանա մարմին: Դա մովսեսյան-մովսեսյան եր, այն հրեշը, վոր Ջարեհավանի ավերակների մոտ սայլացիցների վրա բարձացրեց հայոց իշխանաղն տիկիններին և որիորդներին: Ամենի աչքերը հառած էին դեպի այդ սոսկալի մարմինը:

Այդ միջոցին, Շապուհի արքայական վրանների մի կողմում հարած եր հայոց սպարապետի հասարակ դինվորական վրանը: Այստեղից յերևում եր

նրա հաղթության ամբողջ արդյունքը՝ յուր բոլոր բավարար պատկերներով: Ինքը, սպարապետը, նստած էր մի անչուք ճանապարհորդական բազմոցի վրա, որը բնավ չէր պատշաճում վո՛չ նրա աստիճանին և վո՛չ նրա վաստքին: Նրան շրջապատել էին յուր ղինակից սպաները, որոնց մեջ առաջին տեղը բռնել էր Սահակ պարթևը, և ապա Մեսրոպ տարոնեցին:

Լուռ էին նրանք, և բոլորի դեմքերի վրա նկարված էր մի տեսակ դայրացյալ դժգոհություն, որը տեղի չէ ունենում ջերմ հակաճառություններից հետո: Ինքը, սպարապետը, սաստիկ խոժոռված էր, և յուր անհանգիստ մատներով անդադար վոլորում էր դեղնցիկ, սևորակ ընչացքները, կարծես թե, նրանք արդելում էին բոցավառ շրթունքներին թափելու այն կրակը, որը մի քանի րոպե առաջ հեղուում էր նա յուր ղինակիցների գլխին: Վոչ սակավ խռովյալ դրության մեջ էր գտնվում և Սահակ պարթևը: Նա կթողներ և խոհուն դուրս կգար այդ վրանից, եթե ղինվորական պարտաճանաչությունը չզսպեր նրան: Իսկ փոքրիկ Մեսրոպը, ինչպես ասում են, յուր կաշու մեջ չէր պարտակվում. անդադար շարժվում էր յուր տեղում, կարծես թե, փշերի վրա նստած լիներ:

Ի՞նչ էր, որը այդպես վրդովմունքի մեջ էր դրել նրանց: Ի՞նչ էր, որ այն րոպեյում, յերբ պետք էր հաղթության ուրախությունը վայելել, որի մեջն և ղինվորի փառքը և նրա մխիթարությունը,— ընդհակառակը, ձգել էր նրանց խորին սրմտության մեջ:

Այդ բնադատյալ հուզմունքը, որը րոպեապես լուության մեջ ամբոխվում էր, անտարակույս, նորից պետք է պայթեր, եթե սպարապետի թիկնապահներից մեկը ներս չմտներ և դեկուցում չտար, թե դահճապետին բերել են: Ցերբ կանդնացրին նրան վրանի հանդեպ, սպարապետը հարցրեց.

— Դո՞ւ յես պարսից արքայից արքայի դահճապետը:

— Այո՛, նվաստս ե, տեր իմ,— պատասխանեց նա, խորին կերպով գլուխ տալով:

— Ինձ համար դործ բացվեցավ,— ասաց նրան սպարապետը ժպտալով, որը արտահայտում էր ավելի մաղձ և դառնություն, քան թե հեղնություն:— Դու, անտարակույս, կճանաչրանայիր, եթե մի որ առանց մարդիկ մորթելու մնայիր: Իսկ յես այսօր կտամ քեզ բավական մեծ պարշար: Դու միայն այն ասա՛, քանի՞ ոգնականներ ունես քո ձեռքի տակ:

— Ոգնականներս սակավ չեն, սպարապետ տե՛ր, դու միայն ինձ դործ տուր, դո՛րծ, յես ծուլ չեմ իմ պարտականի մեջ,— ասաց նա դիվական ծիծաղով, և ապա ավելացրեց.— Արքայից արքան միշտ դոհ եր իմ ծառայություններով, և տարի չեր անցնի, որը ինձ մի քանի դյուղեր և աղարակներ չպարգևեր: Հույս ունեմ, որ հայոց մեծափառ սպարապետը նույնպես առանց վարձատրության չի թողնի յուր ծառային:— Վերջին խոսքերի մեջոցին՝ նրա դաղանային աչքերում դարձյալ յերևաց դիվական ծիծաղը:

— Դու ինձանից առատ վարձատրություն կստանաս և արքայից արքա-

յի շնորհած պարգևները կմոռանաս։ Լսի՛ր, դահճապետ։ Մենք յերկար մնալու չենք այստեղ։ Մի քանի որից հետո չվելու ենք այստեղից, և մեզ հետ պետք է տանենք մեր ձերբակալած գերիներին։ Ցեմ վորպեսզի այդ բաղմությունը մեզ համար չափազանց ծանրություն չլինի, դու պետք է փոքր ինչ թեթևացնես մեր բեռը։

Դահճապետը չանթահարի նման ամբողջ մարմնով դողաց։

— Այդ քո մարդիկն էլ կարող են անել, սպարապետ տեր,— ասաց նա բռնկյալան չնորհությունից հետո։— Իսկ ի՛նչ, քա՛վ լիցի, իմ ձեռքերը չեմ թաթախի իմ աղբայինների արյան մեջ։

— Իրավ է, այդ իմ մարդիկն էլ կարող կլին անել, յեթե մեկը պետք լիներ։ Բայց այդ չէ իմ ցանկացածը։ Իմ մարդիկը սաստիկ անվարժ են կենդանի մարդկանց մորթատներ անելու և նրանց պատուճապատանքը խոտով լցնելու արհեստում։ Իսկ դու՛ք, Շապուհի ծառայության մեջ, կատարյալ վարպետ եք դարձել այդ դործում։ Ցեմ ինձ այդ է հարկավոր։ Ցի՞ վոր, կենդանի մարդիկ յուր հետ տանելը՝— այդ բավական մեծ ծանրություն է, իսկ նրանց մորթիքը տանելը՝— այդ բավական հեշտ է, և թեթև։

Դահճապետը, վոր սակայն կարծում եր, թե յուր հանճն առնելիք ծառայությունը հայերի վերաբերությամբ կլինի, և այդ պատճառով այնքան մեծ հաճություն ցույց տվեց,— այժմ, հասկանալով սպարապետի ցանկությունը, վոչ միայն դժկամակեցավ նա, այլ նրան տվեց մի տեսակ կատաղություն, վորով հանդգնություն ունենալ պատասխանելու.

— Ձնմարիտ է, տե՛ր սպարապետ, մենք, պարսիկներս, շատ վարպետ ենք այդ արհեստի մեջ։ Ցեթե դու տեսնեիր, բոլորովին հիմանայիր, թե ինչպես յես մորթատներ արեցի քո հորը և նրա պատուճապատանքը լցրի խոտով... Իմ ձեռքով կատարեցի այդ... Այժմ էս ո՛վ վոր տեսնելու լինի, չի ասի, թե սպանված է նա... Դեռ դուքը յուր տեղումն է, դեռ աչքերը նայում են, և նայում են միշտ յուր թագավորի վրա, և այնտեղ, Անուշ բերդում, մխիթարում են միմյանց... Յես իմ դործը միշտ մեծ հաճությամբ եմ կատարում, յերբ իմ ձեռքը տալիս են աղնվականներ... Իսկ քո հայրը, քեզ նման, ընդհանուր հայոց սպարապետն եր...

Դահճապետի լրությունը, վորով հիշեցնում եր նա սպարապետի հոր ցավալի վախճանը Տիզբոնում, վերին աստիճանի կծու յեր։ Բայց դժբախտ հոր մեծահոդի վորդին զսպեց յուր բարկությունը, ասելով.

— Տեսնո՞ւմ ես, այդ կինչանակից, վոր յես չսխալվեցա իմ կարծիքի մեջ քո վարպետության վերաբերությամբ։ Դու սիրում ես աղնվականներին մորթատներ անել, և յես քո ճաշակը դոհացնելու համար՝ կատամ քո ձեռքը նույնպես աղնվականներ, և դիտե՞ս վորքան,— թվով վեց հարյուր... Գնա՛, հավիտ քո արյունապուչ համաղգեստը, դնա՛, բոլորովին քո բոլոր անկերությունները և կատարի՛ր քո ըղձալի ծառայությունը։ Ինձ նույնպես շատ ցանկալի յե՝ պարսկին պարսկի ձեռքով մորթել տալ...

— Այդ չես չեմ կարող անել,— պատասխանեց նա համառությամբ:— Հրամայիր, թող ինձ մորթեն:

— Ջեզ անել կտան... ասաց սպարապետը և, դառնալով դեպի յուր դրանիկները, հրամայեց.

— Տարեք այդ մարդուն, հավաքեցեք Շապուհի բոլոր դահիճներին, և կատարել տվեցեք...

Նրան հեռացրին:

Ներկա գտնվողները անհամբերությամբ լսում էին սպարապետի խոսակցությունը դահճապետի հետ, որը վերջանալուց հետո, դարձավ նա դեպի շրջապատողները, ասելով.

— Ցես այդ բարբարոսությունը ամենայն հաճությամբ կատարել կտամ. չես այդ վեցհարյուր պարսիկ աղնվականներին մորթել կտամ, և նրանց պաճուճապատանքները կտանեմ, հնվիրեմ հայոց տիկնոջը, թող նրանցով զարդարե յուր .ամրոցի աշտարակների բարձրությունները: Այո՛, չես այդ կանեմ, և դրանով դուցե կզոհացնեմ իմ հոր անմահ հոգին, ա՛յն հոր, որի կյանքը հաղարավոր աղնվականների արժեր, ա՛յն հոր, որին Շապուհը այնպես սոսկալի կերպով մորթազերծ անել տալով, կանղնացրեց Անուշ բերդի նկուղներից մեկի մեջ, յուր աքսորյալ թագավորի աչքերի առջև: Վրեժխնդրության սուրբ պարտականությունը թույլ և տալիս ինձ անել այդ: «Ոտոտորնակին՝ խոտորնակ»,— այսպես ավանդեցին մեր հայրերը: Իսկ ա՛յն, որը դուք եք պահանջում, չես յերբե՛ք ընդունել չեմ կարող...

— Ինչո՞ւ, Մուշե՛ղ,— հարցրեց Սահակ պարթևը ղայրացած ձայնով, ինչո՞ւ չես կարող ընդունել: Եթե դու հիմնվում ես վրեժխնդրության վրա, որպես մի սուրբ պարտականության վրա, մի՛ մոռանար, որ այդ դեպքում և կատարվում է նույն սուրբ պարտականությունը. դարձյալ «խոտորնակին՝ խոտորնակ»...

— Այդ դեպքում, Սահակ, կատարվում է մի աններելի անաղնվություն մեայն: Իսկ մեզ վայել չէ այդ ստոր ճանապարհով: Մենք պետք է ազատացուցանենք, որ շատ բարձր ենք պարսիկներից:

— Մենք պետք է ազատացուցանենք և ա՛յն, թե դիտենք անաղնվությունը ըստ կարգին պատժել: Ինչո՞ւ չես դու այսպես մոռացկոտ դարձել, Մուշեղ: Դեռ շատ ժամանակ չէ անցել այն աղետավոր օրից, յերբ Շապուհը Ջաբեհավանի ամրակների մոտ՝ հայոց իշխանաղն տիկիններին և որբորդներին մերկանդամ կանղնացրեց յուր բանակի առջև: Ցեռ այդ բավական չհամարեց. շատերին սայլացիների վրա բարձրացրեց, շատերին գերի վաթեց: Ցերբ անդրամ Շապուհը իրան թույլ տվեց այդպես վարվել, այլևս ինչո՞ւ մենք պետք է խնայինք նրան:

— Ինչ որ կարող է իրան թույլ տալ պարսիկ Շապուհը, նույնը չէ կարող իրան թույլ տալ քրիստոնյա Մամիկոնյանը: Ցես մոռացկոտ չեմ, Սահակ, չես դիտեմ և հիշում եմ նրա վարմունքների բոլոր վայրագությունը: Բայց դու չես մոռնում քեզ, ամենևին ի նկատի չառնելով, որ

մեր վիճաբանության առարկան կին է: Շապուհի յեղեռնագործությունների վրեժը մենք պետք է առնենք նրա կանանցից:— Այդ ես պահանջում դու: Իսկ յես նրա բոլոր կանանցը կղնեմ պատգարակների մեջ, և ամենայն հարգանքով կուղարկեմ Շապուհի արքունիքը,— և այդ կլինի իմ ամենամեծ վրեժխնդրությունը...

Սպարապետի կծու անկարկուությունը առաջին վիրավորեց պարթևացին յերիտասարդին և նրա սեղ աչքերը վառվեցան բարկության բոցով: Նա դրից յուր պատրաստ ձեռքը ականակուռ դաշույնի վրա, և յուր լիահընչյուն, խրոխտալի ձայնով, վոր ավելի վորոտում եր քան թե խոսում, արտասանեց հետևյալ խոսքերը.

— Ձեռ հասկանում եմ, վոր մեր վիճաբանության առարկան կին է, Մուշե՛ղ: Բայց դու կարծո՞ւմ ես, վոր այն վեմ, այն սրբազան պատկառանքը, վոր կարող է ղղալ Մամիկոնյանը դեպի կինը,— դրա համար փակվա՞ծ և պարթևի սիրտը: Դու կարծո՞ւմ ես, վոր մեկայն դո՛ւ ընդունակ ես՝ քեզ այնքան բարձր պահել և չսոսրանալ մինչև կնոջ հողաթափները: Սասանիկ սխալվում ես, Մուշե՛ղ: Այս դործի մեջ՝ քո ասպետական վարվուկ ղղացմունքները ամենևին տեղիք չունեն: Ձեռ հայում եմ դործի վրա բոլորովին դինվորական տեսակետից: Մենք Շապուհի հետ պատերազմ ունենք, և այդ պատերազմը, անտարակույս, կամեր յերկար, այո՛, շատ յերկար: Նրա կանայքը մեր ձեռքումն են, վորոնց թվում է և արյաց սիկինանց-սիկինը: Կպահենք նրանց ամենայն պատվով մեզ մոտ, իբրև պատանդ, մինչեվ Շապուհը պահել և մեր նախապարանքներից չսասերն կանանցը առանձին բերդերում: Մեր վարմունքն մեջ պախարակելի վոչինչ չկա, վորովհետև դա վաղուց արդեն ընդունված դինվորական օրենք է: Բանի դեռ տևում է պատերազմը, դերիները հետ չեն տալիս:

Սպարապետը նույնպես ձեռքը դրից դաշույնի վրա, պատասխանելով.

— Այդ յես ել դիտեմ, Սահա՛կ, մինչ պետք չէ դինվորական օրենքները քեզանից սովորել: Բայց դու մի բան չդիտես, լսի՛ր, Սահակ: Դու չդիտես հայոց սիկնոջ՝ փառանձեմի, խաղաղասիրությունը: Նրա դեղեցիկ, մեղմ և քնքուշ կեղևի ներքո՝ թաղնված է մի հրեշավոր հոդի: Դու չդիտես, վոր յերեք տասնյակ այդ անմեղ կանանցը նրա մոտ, նա, անդադաձաս, բոլորին կախ կտա Արտաշերսի աշտարակներից: Նա՛, վոր դժբախտ Վռամշապուհին սպանել տվեց և հանձնեց նրանից հայոց սիկնանց-սիկնությունը, նա՛ վոր հայոց արևելյան դնդերի թագ պրատվար Վաղինակին սպանել տվեց և յուր հորը հանձնեց արևելյան դնդերի մեծ դորավարությունը. նա՛, վոր յուր հին վարձակալության համար սպանել տվեց յուր սիրուհի յեղբոր վորդի Տիրիթին,— անտարակույս չէ խնայի և Շապուհի կանանցը: Ձեռ, ի հարկե, պետք է ընդդիմանամ նրան, և դրանից կծագի մի մեծ հակառակություն իմ և նրա մեջ, վոր շատ նպաստավոր չէ լինի մեր դործերի այժմյան խառն դրության մեջ: Նա իրավունք կհամարի կատարել տալ Շապուհի բոլոր կանանցը, վորովհետև Շապուհը Զարհավանի

ավերակների մոտ սպանել տվեց նրա մորը: Ուրեմն, թե՛ աղնվությունը և թե՛ խոհեմությունը պահանջում են, որ մենք այդ կանանցը ուղարկենք պարսից արքունիքը: Իսկ յես առանց վոչ վոքին լսելու, պետք է անեմ այդ: Ցավ յեթե մեզ հարկավոր է պատանդ,— այդ պատանդը կպահենք մեր ձեռքում: Շապուհի կանանոցում դանվում է և Շապուհի քույրը, Վորմիզդուխտ որիորդը— Մերուժանի դեղեցիկ նշանածը: Մենք կպահենք այդ որիորդին, և այդ բավական է: Դու դիտե՞ս, Սահակ, որ մեր պատերազմների սկզբնապատճառը միայն այդ նազելի որիորդն է յեղել: Նրա դեղեցկությունը խելքից հանեց Մերուժանին, և նրան մոլորության մեջ դրեց: Մերուժանը վատ մարդ չեր. նա յուր սիրահարության զոհը դարձավ: Իսկ Շապուհը, ոգուտ քաղելով այդ սիրահարությունից, խոստացավ տալ նրան Վորմիզդուխտին, և դրանով հավաղացրեց Մերուժանին մի պատուհաս դարձնել հայոց աշխարհի համար: Այժմ պահելով մեր ձեռքում Մերուժանի սիրած որիորդին, միևնույն ժամանակ, մենք Մերուժանի թե՛ անձը և թե՛ սիրտը մեր ձեռքում կունենանք, Իսկ Շապուհը, առանց Մերուժանի զործակցության, վոչինչ անել չե կարող:

Այսպես ջերմ կերպով վիճում էին յերկու մեծ տոհմերի յերկու հզոր ներկայացուցիչները՝ հայոց սպարապետի վորդին և հայոց քահանայապետի վորդին: Բայց վերջինը այլևս վոչինչ չխոսեց, դժդոհությամբ վեր կացավ և դուրս յեկավ սպարապետի վրանից: Նրա հետ դուրս յեկան Մեսրոպ աստրոնոմին և մի քանի այլ իշխանազն յերիտասարդներ: Մեծամեծ պարծենի արհամարհանքը ավելի վրդովեցրեց Մամիկոնյան իշխանին: Նա դարձավ դեպի յուր սննդակապաններից մեկը, հրամայելով.

— Գնա՛ արքայական կանանոցի ներքինապետի միջոցով լսացում տուր արյաց դշխոյին, վոր յես խնդրում եմ այցելել նրան:

Նա վեր կացավ, նրան շրջապատող բոլոր սեպուհները նույնպես վոտքի յելան: Սկսեց դիմել դեպի Շապուհի կանանոցը, յուր հետ առնելով միայն յուր թիկնապահներին:

Շապուհի հարուստ կանանոցը բաղկացած եր առանձին-առանձին վրաններից, վորոնց յուրաքանչյուրի մեջ դետեղված եր նրա կանանցից մեկը՝ յուր բազմաթիվ ազախիններով և նաժիշտներով: Ներքինիների մի ստվար բազմություն հսկում եր դեղեցկության և վախկոտության այդ անմատչելի թանգարանի վրա, վոր այժմ դերության մեջ եր ընկած:

Տխուր և արտասվալի աչքերով նստած եր յուր վրանում արյաց տիկնանց-տիկինը, և յուր վոսկու ուղղարձների մեջ պատկերանում եր վորպես մի հուսահատ թախծություն: Նրա վատավոր վրանը հեշտության մի դրախտ եր, վոր հորինել եր նրա համար պարսկական պճնասիրությունը: Ցերբ ներքինապետը ներկայացավ, հայտնեց նրան, թե հայոց սպարապետը կամենում է այցելել, այդ մեջտեղին, նրա դեղեցիկ դեմքը բոլորովին դունատ-թափվեցավ, և չափազանցությունից չդիտեր՝ ինչ պատասխանել: Բարկությունը և յերկյուղը վոտիվայի կերպով սկսեցին վրդովեցնել նրան: Բարկանում

ձը, վորովհետև մի հայ զորավար համարձակվել էր նրան մի այսպիսի լուր տալ: Վախենում էր, վորովհետև ինքը նրա դերին էր... Բայց, միևնույն ժամանակ, նրան դարմացնում էր այն միտքը, թե, վորպես դերի, սպարապետը կարող էր նրան քարշ տալ յուր մոտ, իսկ այդ ի՞նչ բարեհոգություն էր, վոր սպարապետը յուր վոտքումն էր գալիս նրա մոտ: Ցերեկար մտատանջությունից հետո, ասաց նա ներքինապետին.

— Թող դա...

Հետո ավելացրեց.

— Ատուքյամբ կպատվիրես բոլոր ներքիններին, վոր վոչ մի անհարգություն չպատահի...

Ցնծ իրավ, սպարապետի կողմից սպասիկ անհոգություն էր, վոր այնպես անվրդով կերպով, մի խումբ թիկնապահների հետ, պիտի մտներ պարսից արքայից արքայի կանանոցը, ուր վոչ մի ոտար արարած մինչև այն որ վոտք չէր դրել: Բոլոր ներքինները ալեկոծվում էին զարմանալին կատարության մեջ: Ի՞նչ կարող էր արդելել այդ մոլեռանդներին, ո՞վ կարող էր զսպել նրանց կատաղությունը, թեև ամբողջ կանանոցը շրջապատած էր հայոց զինվորներով: Ներանք հենց կանանոցի շեմքի վրա կխոպոպեցին հանդուգն այցելուին, վոր համարձակվում էր մուտք գործել արքայից արքայի սրբարանը: Բայց ներքինապետի սպասիկ պատվերը հանդուգնացրեց նրանց: «Հայոց սպարապետը ճակը դիակների վրայով կանցնի և կդնա սիկնանց-սիկնոջ մոտ, յերեն դուք ամենափոքր անկարգություն անելու լինեք»,— սպառնացավ նրանց ներքինապետը:

Նա դուրս յեկավ դիմավորելու սպարապետին, իսկ մյուս ներքինները յերկու կարգով շարվեցան մինչև դռվոյի վրանի մուտքը: Սպարապետը, շրջապատված յուր թիկնապահներով, անցավ նրանց շարքերի միջով, վոր կանգնած էին, վորպես յերկու կենդանի պատեր: Թիկնապահները մնացին վրանի մուտքի աջ և ձախ կողմերում, իսկ ինքը ներքինապետի հետ ներս մտավ:

Վրանում վոչ վոք չերևաց, վորովհետև, դեռ սպարապետը ներս չմտած, թագուհին յուր բազմոցի վրայից վեր կացավ և անցավ վարագույրի յետևը, վոր յերկու մասն էր բաժանում վրանը: Ներքինապետը ձեռքով ցույց տվեց, թե այնտեղ է թագուհին, և կարող է սպարապետը խոսել: Վորքան սպարապետի համար տանրալինակ էր այդ, այնուամենայնիվ, հարգելով ընդունված սովորությունը, այլևս չնստեց, և վոտքի վրա պատասխանեց հետևյալ խոսքերը.

— Վաղջա՛ն և խաղաղությո՛ւն արյուց մեծափառ դռվոյին: Ցնս չատ ցավում եմ, վոր ներկայանում եմ այնպիսի դեպքերից հետո, վոր խիստ տհաճալի բաներ պիտի դառնամ մխիթարելու քեզ, ով մեծափառ դռվո: Բայց պետք է հաշտվենք պատերազմի սխալ արկածների հետ: Այդ դործում մենք, հայերս, այնքան հանցավոր չենք, վորքան հանցավոր է քո թագավոր-ամուսինը, ո՛վ մեծափառ դռվո: Նա դենը ձեռին

վոտք դրեց մեր յերկրի վրա, և մեզ ստիպեց նույնպես զենք բարձրացնել նրա դեմ: Բայց յես յեկա ավետելու քեզ, ո՛վ մեծահաւտ դշխո, վոր հայոց նախարարները դիտեն թշնամու վատությունը լավությամբ ընդել: Դու, իհարկե, ականատես յեղար, թե վո՛րպես վարվեցավ քո թագավորմուսանին մեր կանանց հետ՝ Զարեհավանի ավերակների մոտ: Բայց յես չեմ ցանկանա նրա չարության վոխարեն՝ չար դարձել: Ցես քեզ, մեծահաւտ դշխո, և Շապուհ արքայի բոլոր կանանցը, վոր այժմ գերի յեն իմ ձեռքում, իրանց աղախիններով ու ներքինիներով, կղնեմ ժանավարների մեջ, և եղուց ամենայն պատվով կուղարկեմ Տիգրան: Զեզ կուղեկցեն իմ ձիավորների զինված խումբերը, և ապահովությամբ կհասցնեն մինչև Շապուհի արքունիքը: Ի՛նչ Շապուհը տեսնի ձեզ, և դուցե ստրջանա, թե ինքը վո՛րքան անիրավ վարվեցավ...

Դեռ սպարապետը յուր խոսքերը չէր ավարտել, հանկարծ թագուհին վարագույրի յետևից դուրս հայտնվեցավ և, հուշտակված կերպով դեր կելով սպարապետի վոտները, բացականչեց.

— Դու մարդ չես, քո լեզվով խոսում է անմահ Վորմիզդի վոգին, վոր բոլոր բարությանց արարիչն է:

Այդ անակնկալ հայտնությունը այն աստիճան չվոթեցրեց սպարապետին, վոր նա հաղիվ-հաղ կարողացավ վեր բարձրացնել նրան և նստեցնել յուր բազմոցի վրա: Վոչ սակավ ատչության մեջ եր դտնվում և ներքինապետը, վոր ներկա յեր այնտեղ: Տիկինը մի քանի րոպե մնաց լուռ խոհության մեջ, և ապա, յուր արտասվալի աչքերը բարձրացնելով, խոսեց.

— Ի՛նչ մեծահոգություն, ո՛վ քաջ, մինչև անմոռաց կմնա իմ սրտում: Ցերբ կհասնեմ Տիգրան, իմ առաջին խոսքը այդ կլինի իմ թագավորմուսանին. «Հայոց սպարապետը յուր աղնվությամբ մի ծանր պարտք դրեց քո վրա, և այդ պարտքը միայն նույնպիսի աղնվությամբ կարող ես վճարել»...

Տիկինը այժմ միայն նկատեց, վոր սպարապետը վոտքի վրա յեր, և մի առանձին սիրով խնդրեց նրան.

— Նստի՛ր, տեր սպարապետ, քո առաքինությունը այնքան մեծ է, վոր դու իրավունք ունես վայելելու իմ ամենախորին հարգանքը:

Սպարապետը, չնորհակալություն հայտնելով, նստեց և, միևնույն ժամանակ, բացատրեց նրան, վոր դեռևս տևող պատերազմական հանգամանքները պահանջում են՝ պարսից արքայական ընտանիքից մեկին, իբրև պատանդ, պահել հայոց տիկնոջ մոտ, և ինքը, սպարապետը, աղնիվ խոսք է տալիս, վոր նրա թե՛ պատիվը և թե՛ կյանքը ամեն կերպով ապահովված կլինի:

— Վորպես հաճո յես քեզ, տի՛ր սպարապետ, այնպես արա,— պատասխանեց տիկինը խորին հոժարությամբ:— Մենք ամենքս քո ձերին ենք, և քեզ ենք պատկանում: Դու միայն չնորհում ես մեզ մեր թագա-

վրան, առանց վո՛րևէ վրկանք պահանջելու։ Ընտրի՛ր մեղանից՝ վորին վոր քո կամքը կհաճի։

— Ես վորոշել եմ Վարմիդուխտ որխորդին։

— Շատ դեղեցիկ։ Ես կհրամայեմ ներքինապետին, վոր Վարմիդուխտ որխորդին յուր բոլոր ազախիններով ու ներքինիներով քեզ հանձնե։

Սպարապետը վեր կացավ։ Ձերը նա դլուխ տալով և բարի ճանապարհ ցանկանալով կամենում եր հեռանալ, սիրինը կանդնացրեց նրան, ասելով.

— Մնում ասումածներին և մեր հայոնի, ու՛ր սպարապետ, մարդկանց ճակատագիրը և նրանց դալոցն ու ապագան։ Ո՞վ դիտե, թե եղուց ի՛նչեր կարող են պատահել։ Մարդկային բախան ու դժբախտությունը միևնույն անդուդարձներովն են յեվևջ անում։ Ես թողնում եմ քեզ մոտ մի հիշատակ, վորպես առհավատչյա իմ յերախտադիտության։ Ամեն անդամ, յերբ դու վո՛րևէ կարյաց մեջ կդանվես, ուղարկի՛ր ինձ մոտ այդ նշանը, և արյաց սիրնանց—սիրիները ամեն ջանք դործ կդնեն, ոդնության ձեռք մեկնելու քեզ։— Այդ խոսքերի հետ նա հանեց յուր մատից արքայական մատանին և առաջարկեց յուր սպասողին։

Սպարապետը քաղաքավարությամբ մերժեց, ասելով.

— Ես բարևսրտությունը, Թադուհի, ինձ համար մեծ առհավատչյա յե։

Նա կրկին ու կրկին անդամ դլուխ տվեց և դուրս յեկավ Թադուհու վրանից։

Ազատության լուրը արդեն տարածվել եր ամբողջ կանանոցում, և Շադուհի դեղեցկուհիների ուրախությունը չափ չուներ։ Ամենքը անսահման հրճվանքով որհնում եյին, վոտաբանում եյին այն մարդու կյանքը, վոր նրանց ազատություն շնորհեց։ Ցնծեն սովորությունների խստությունը չդադեր նրանց վդեհորությունը, անպատճառ, խմբովին դուրս կվազեյին իրանց վակխալ ոջխակիներից, արտահայտելու իրանց շնորհակալության խորին դդացմունքները։

Ձերը սպարապետը դուրս յեկավ Թադուհու վրանից և սկսեց դնալ յուր խլճանը, այդ միջոցին զարմացած ներքինիները՝ խուռն բազմությամբ Թավալվում եյին նրա վոդորմած վոտքերի տակ և համբուրում եյին ըղդևանների դրոշակները։ Իսկ կանանց վրաններին հետ քաշած վարագույրներից յեսևից՝ հարյուրավոր դեղեցիկ աչքեր, լի դոհունակության արտասուքներով, նայում եյին վայելչադեղ յերիտասարդի վրա, վոր յուր քաջության հետ միացրել եր այնքան հոդևկան ազնիվ հատկություններ։

Նա վո՛չ միայն բոլորին ազատություն շնորհեց, այլ չկողոպտեց և կանանոցի անթալ հարստությունը, վոր ժամանակի սովորությամբ՝ յուր սեփականությունն եր համարվում։ Նա Թողեց կանանոցը յուր ամբողջ պարադաներով անձեռնմխելի, յուր դինվորներին պատվիրելով, մի չյուղ անդամ չհափշտակել, ինչ վոր կանանոցին և պատկանում։ Նա ավելի առաջ միայն Շադուհի արքայական վրաններն հարստությունը և նրա բանակը

յուր բոլոր ռազմամթերքով: Իսկ կենդանի մնացած զինվորներին զերի վարեց:

Մուշեղի վարմունքը ընդհանուր համակրության և խորին գարմացման արձագանք գտավ Տիզբոնում: Գարսից համար մի տարօրինակ հրաշք եր այդ տեսակ վարմունքը: Շապուհը հրամայեց իսկույն վեր առնել նրա հոր պաճուճապատանքը, վոր Անուշ բերդում գրած եր Արշակ Թաղավորի առջև, և պահել Տիզբոնի մեծ տաճարում: Իսկ նրա մեծահոգության հիշատակը հավերժացնելու համար, նրա պատկերը, յուր ճերմակ ձիու վրա նստած, նկարել տվեց յուր վոսկյա բաժակի վրա, վորով միշտ ուրախություն ուներ խմել: Ցնծալ ամեն անգամ, հանդիսավոր առնախմբությունների ժամանակ, յերբ ձեռքն եր առնում այդ բաժակը, հիշում եր ազնիվ հերոսի ազնիվ գործը, և խմում եր կրկնելով. «Ի փառս ճերմակաձիուն»,— այսինքն՝ ճերմակ ձի նստողի փառքի համար:

Այդ՝ Մամիկոնյան իշխանի բարոյական վեհության արձանն եր, վոր քանդակել տվեց պարսից արքայից արքան յուր սրտի և յուր ուրախության բաժակի վրա: Բայց նա ուներ և յուր քաջության արձանը, վոր մի ժամանակ կանգնեցրին նրա համար ասորիները Միջագետքում, վոր կոչվում եր «Դուռն-Հոնի»: Ցնծության ավուրը մոտ բարձրանում եր մի ահագին քարաժայռ, վորի հարթած ճակատի վրա քանդակած եր մի ըմպատաղնված հերոս, նստած սիզապանծ նժույգի վրա, իսկ նրա վոտների տակին՝ ընկած եր մի հաղթահարված հսկա: Ձիավորը ներկայացնում եր Մուշեղ Մամիկոնյանին յուր անբաժան ճերմակ նժույգով, իսկ ընկած հրեշը ներկայացնում եր այն սոսկալի յերկուղակին, վոր յերկար ժամանակ ասպատակում եր Միջագետքը և Հայաստանի հարավային գավառները: Մի մենամարտության մեջ Մուշեղը սպանեց նրան և աղատեց յերկիրը այդ հրեշի կատարած ավերմունքներից:

Բայց նրա մեծահոգության արձանը ավելի բարձր յեղավ քաջության արձանից...

«ՃԵՐԿՈՒ ՀԱՐՑԱՑ ՓՈՔՐԱԳՈՒՅՆԸ»

«Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ տոհմովեաց գամենայն ազատազունդ մարդկանն... եւ չոգաւ հանդերձ նոքօք առ թագաւորն յունաց. նա եղոյց զպատասանս ազնաւրին Հայոց, եւ գամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, եւ խնդրեաց ի կայսերէն զթող զորդի Արշակայ թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին»:

Փաւստոս:

Մուշեղ Մամիկոնյանի հաղթական փառքով վերադարձը ընդհանուր ուրախություն պատճառեց թե՛ հայոց ասիլնոջը՝ Փառանձեմին և թե՛ նրա շուրջը խմբված ավագներին: Մի քանի որ Արտաշերսը տոնում եր այդ

պայման հաղթություն։ Տիկնոջը հաճելի չթվեցավ միայն Շապուհի կանանց վերաբերմունքը, այնուամենայնիվ, թաղցնելով յուր խորին դժկամակությունը, հենց առաջին րոպեյում, յերբ սպարապետը ներկայացավ նրան, նա զրկեց և համբուրեց յուր քաջ հերոսի արժանի ճակատը։

Թշնամուց հափշտակած ավարը սիրվոր հրամայեց բաժանել այն զինվորներին, վորոնք մասնակցել էին այդ կռիվի մեջ։ Ինքը ընդունեց միայն, յերբ թանդագին պարզև, Մուշեղի բերած վեց հարյուր պարսիկ ազնվականների պաճուճապատառանքները, վորոնց մի մասը դրեցին Արտաշեսյան աշտարակների բարձրության վրա, իսկ մյուս մասնով՝ հրամայեց նա զարդարել սպարապետի տան ճակատը։

Այդ որերում սպարապետը խնամ հաղիվ անդամ յուր տանից դուրս եր գալիս՝ բազմության ուրախաձայն խնդակցությանը չհանդիպելու համար, վորը աստիճ աղղում եր նրա անխտասեր համեստության վրա։ Ազատաներ կանայք և որիորդներ խումբերով այցելում էին նրա տիկնոջը և զաքալուսանք էին տալիս։ Ջահանան խաչը ձեռին հայտնվում եր և որհնության մաղթանք եր կարդում։

Այդ բոլորի մեջ՝ ամեն ինչ ուրախալի յեր, ամեն ինչ վերին աստիճանի զոհացուցիչ եր, միայն Մուշեղի և Սահակ պարթևի մեջ տեղի ունեցած հակառակությունը, Շապուհի կանանց վերաբերությամբ, վոչ սակավ հոգսեր պատճառեց հայոց թագուհուն։ Նրա համար խնամ ծանր եր, դրծերի դեմ բոլորովին խառն դրության ժամանակ, հայոց այդ յերկու նշանավոր տոհմերի ներկայացուցիչներին՝ միմյանց հետ անհաշտ հարաբերությունների մեջ տեսնել։ Նա մտածեց հաշտեցնել նրանց, բայց, ի նկատի առնելով յերկուսի անողոք համառությունն ևս, այդ միտքը թողեց մի ավելի հարմար ժամանակի։

Վորքան Մուշեղը, Շապուհի կանանց վերաբերմունքով, չատերին տըհաճություն պատճառեց, այնքան Վորմիզդուխտին գերի վեր առնելով, մասամբ մեղմացրեց այդ տհաճությունը։ Թագուհին վորոշեց նրա բնակության համար առանձին բաժին արքայական ապարանքում, և պահում եր խնամ հսկողության ներքո, թեև այնտեղ՝ նրա կացության համար ամեն արժանավայել բարեկարություններ պակաս չեյին։

Վոչ սակավ ուրախություն պատճառեց թագուհուն յուր յեղբայրների և մյուս ազնվականների ազատությունը, վորոնց գերի յեր տարել Շապուհը Ջաբհավանի կռտորածից հետո, և վորոնք Մուշեղի հաղթությամբ վերկություն գտան։ Այդ գերիների թվում կային չատ ելևմտական կանայք, որիորդներ, պատանիներ, վորոնց պնաք և վարելին Պարսկաստան։

Մի քանի շաբաթ անցել եր այն որից, վոր Մուշեղը հաղթական վերադարձավ մասալ Արտաշեսյան ամրոցը։ Գիշեր եր։ Բերդի մեջ ամենքը քնած էին, ամեն շարժում դադարել եր։ Անգուն եր միայն բերդի թագուհին—Փառանձեմը։ Արքայական ապարանքի սենյակներից մեկում միայնակ նըստած եր նա, իսկ նրա մոտ՝ խորին մտախոհության մեջ՝ կանգնած եր

Մուշեղ Մամիկոնյանը: Սպարապետի այրական դեմքը այս դիշեր չէր ցույց տալիս այն սովորական զվարթությունը, որ հատուկ էր նրա դիմվորական ամուր բնավորությանը: Մտախոհ էր և թափուրհին: Նա զգնվում էր յուր դիշերային ղեկսեի մեջ, որ յուր պարզությամբ մի առանձին վայելչություն էր ընծայում նրա շնորհալի իրանին: Գլուխը հերթաթակ էր, ձառանց վորևե զարդի, հոլանի բաղուկները մինչև կրունկ եկին մի դույզ վոսկյա ապարանջաններ, վորոնց ուրախ փայլը ամենևին չէր համապատասխանում տիկնոջ մռայլված դեմքին: Պղնձյա բարձր աշտանակի վրա վառվում էր արծաթյա ճրագը, և տարածում էր յուր շուրջը խիստ թախծալի լուսավորություն: Թախծալի էր և թափուրհին, վորը յերբեմն վեր էր առնում մի բաց նամակ, նայում էր, և կրկին դնում էր յուր բազմոցի վրա, թևև մի քանի անգամ կարդացել էր այդ նամակը, վոր նոր էր ստացել Բյուզանդիայից:

— Մեր գործերի այժմյան խառն դրության ժամանակ, Բյուզանդական կայսրության մեջ կատարված այդ փոփոխությունները չեն բավական նպաստավոր եմ համարում մեզ համար, Մուշեղ,— դարձավ նա դեպի սպարապետը:— Անիծյալ վաղեսը մեռել և իրան արժանի չարամահ վախճանով, նրա տեղ այժմ կայսր է դարձել առաքինի Թեոդոսը: Ես տարակույս չունեմ, վոր նա մեղ հետ լավ հարաբերություններ կունենա:

— Ես նույնպես տարակույս չունեմ... պատանիանից սպարապետը անվճռական ձայնով:

Թափուրհին շարունակեց.

— Մեզ հարկավոր է հռոմեական դաշնակցություն, Մուշեղ: Մենք մեր սեփական ուժերով, իրավ է, պաշտպանվել կարող ենք, բայց մեր յերկիրը թշնամուց խնայած մաքրել՝— հաղիվ թե: Մենք կարող ենք դրսի ուժերի և մի լավ դաշնակցի:

— Բայց դիտե՞ս, տիկին, վո՛րքան թանդ և նստում մեզ հռոմեական դաշնակցությունը...

— Գիտեմ: Բայց յես ընտրում եմ յերկու չարյաց փոքրագույնը: Մեր հարաբերությունները պարսից հետ այն աստիճան թշնամական կերպարանք են ստացել, վոր յես ամենևին հույս չունեմ, թե այսուհետև մեր և Շապուհի մեջ վո՛րևե հաշտություն կկայանա, ինչպես հույս չունեմ, վոր նա իմ ամուսնին կվերադարձնե Անուշ բերդի աքսորանքից: Մյուս կողմից, իմ վորդին գտնվում է Բյուզանդիայում, կայսրի մոտ: Նրան պետք է բերել, և յես ցանկանում եմ, վոր նա դա և հոր փոխարեն թագավոր դառնա: Առանց թագավորի Հայաստանը դանդաղիսուրյամբ և շարժվում, ինչպես մարմինը առանց դլխի: Իսկ նրան բերել և յուր հոր գահը նստացնել՝— այդ, իհարկե, առանց նորընտիր կայսրի համաձայնի և նրա հետ նոր դաշնակցության՝ լինել չե կարող: Իմ վորդին նրա մոտ պատանդ է, նրա ձեռքումն է... Ցավ յես ավելի բարվոք եմ համարում քրիստոնյա

հայրի հետ դաշնակցությունը, քան թե անոթին պարսկի հետ հաշտությունը:

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին նրա դեղնկիկ աչքերում փայլեց բարկության կրակը և նրա ձայնը դարձի կերպով փոխվեցավ: Նա հալանի ձեռքը տարավ դեպի ճակատը, հետ քաշեց սև վիսակների դանդուրները, որ անդիտակցաբար թափվել էին դունաթաի վրա:

Սպարապետը լռությամբ լսում էր, թեև այդ բոլորը դիտեր նա: Լսում էր սրտի դառն դղրդունքը անբախտ ալիկնոջ, որ կորուսյալ թագավորամուսին ուներ, և նույնպես կորուսյալ թագաժառանգ-որդի: Անցողք հանդամանքները ձգել էին Հայաստանի այդ յերկու հույսերին՝ մեկին դեպի արևելք, մյուսին դեպի արևմուտք: Թագավորը աքսորված էր Մուժաստանի Անուշ բերդում, իսկ թագաժառանգը պահված էր Բյուզանդիայի հռոմեական արքունիքում...

— Նստի՛ր, Մուշեղ,— դարձավ նա դեպի սպարապետը,— յես յերկար պետք է խոսեմ քեզ հետ:

Սպարապետը նստեց: Տիկինը կրկին վեր առեց նամակը: Այդ նամակը ստացել էր նա յոթ հարյուր Սյունյաց Անդովիկ իշխանից, որ այդ ժամանակ յոթ հարիւր որդու հետ գտնվում էր Բյուզանդիայում: Նամակի մեջ իշխանը խոսում էր ամեն յոթ մասին, քան թե հայոց գործերի մասին: Գրում էր, թե ո՛րպես նորընծիր Թեոդոս կայսրը հարգում և իրան, կամ ո՛րպես կայսրը շնորհեց իրան «պատրիկաց պատրիկի» բարձր աստիճանը, նկարագրում էր յոթ որդի հարիւրի քաջագործությունները կըռիվների մրցությունների մեջ, մեծ ուրախությամբ ավելացնելով, որ թե՛ կայսրը և թե՛ յոթ ազատանին բոլորովին հիացած են նրա ճարտկությունները: Նախանշուշկում էր որդու համար փայլուն հաստոջտիկությունը հռոմեացոց ծառայության մեջ և այլն:

— Ինչպես յերևում է, հայրս այդ նամակը շատ շտապով է գրել,— նկատեց տիկինը:— Վոչինչ չի գրում Ներսեսի մասին. արդյոք վերազարձե՞լ է նա աքսորից, թե տակավին աքսորանքի մեջ է գտնվում:

Տիկնոջ տարակուսանքը հայոց քահանայապետ Ներսես մեծի մասին էր:

— Ես կարծում եմ, որ նորընծիր կայսրը նրան չի թողնի աքսորանքի մեջ,— ասաց սպարապետը:— Թեոդոսը հայտնի է որպես մի բարեպաշտ մարդ: Նա անպատճառ վաղուց աքսորած բոլոր հոգևորականներին կազատե իրանց դառապարտությունից: Հարկավ, նրանց հետ և Ներսեսը ազատված կլինի:

— Ես էլ նույն կարծիքին եմ,— ասաց տիկինը խորին համոզմունքով,— մանավանդ, որ Թեոդոսը ստացուց ճանաչում է Ներսեսին և ստանիկ հարգում է նրան: Բոլոր պարագաները նպաստավոր են, Մուշեղ: Հայրս այնտեղ է և մեծ փառք է վայելում կայսրի մոտ. յեղբայրս այնտեղ է և մեծ հռչակ է ստացել: Այնտեղ է և Ներսեսը, որ վայելում է կայսրի առանձին համակրությունը: Դու պետք է գնաս Բյուզանդիա,

Մուշեղ, դու պետք է տանես իմ խնդակցության նամակը կայսրին, նրա դահակալության համար: Ցեվ այնտեղ, իմ հոր և Ներսեսի հետ, պետք է միջնորդես, որ իմ վորդուն ուղարկեն՝ հայոց թափուր մնացած դահը ժառանգելու:

— Ցես կզնամ, տիկին, և մեծ հույս ունեմ, որ ինձ կհաջողվի ի կատար ածել քո սրտագին բաղձանքները: Բայց ինձ անհանդստացնում է այն միտքը, թե ի՞նչ կլինի իմ բացակայության ժամանակ...

Սպարապետի հարցմունքը զգալի կերպով վիրավորեց տիկնոջ ինքնասիրությունը, և նա բավական դրդռված ձայնով պատասխանեց.

— Դու կարծում ես, Մուշե՛ղ, որ ես բացակայության ժամանակ չես կարող հայոց յերկիրը:

— Ցես այդ չեմ կարծում,— ասաց սպարապետը ատան կերպով,— յես մեծ հավատ ունեմ քո խելքի և քո քաջասրտության վրա, տիկին: Բայց մի քանի նոր հանգամանքներ, վորոնք, յերևի, քեզ հայտնի չեն, պետք է ստստիկ զժվարացնեն մեր աշխարհի դործերը: Վորմիդդուխտի մեր ձեռքը գերի ընկնելուց հետո, Մերուժանի կատաղությունը անցել է ամեն չափից: Ցես հաստատ տեղեկություններ ունեմ, որ նա, չբավականանալով յուր հրամանի ներքո դտնված պարսկական նշանավոր ուժերով, աշխատել է յուր կողմը ձդել Աղվանից Ուռնայր արքային և Լեկաց Շերդիլ արքային: Պարսից զորքերը յուր ձեռքում ունենալուց հետո, յերբ նա կմիանա այդ յերկու կիսավայրենի թագավորների հետ, կարող է այնուհետև շատ վնասներ հասցնել մեր աշխարհին: Հեռավոր թշնամին, վորպիսին է պարսիկը, այնքան վտանգավոր չէ կարող լինել, վորքան դրացին: Իսկ աղվանները և լեկերը մեր ամենամերձավոր դրացիներն են: Ցեթե ուրիշ վոչինչ դրավիչ պատճառներ էլ չունենան նրանք, ավարառության և հափշտակության փափագը բավական է, որ հրապուրե այդ գաղջնաբարո լեռնականներին՝ հեղեղելու մեր յերկրի սահմանները:

Տիկնոջ դեղեցիկ աչքերը դարձյալ վառվեցան բնիկության բոցով: Նա պատասխանեց սպառնալի ձայնով.

— Ցեթե Մերուժանը կհամարձակվի մի այդպիսի անիրավ քայլ անել, յես իսկույն Վորմիդդուխտին կտամ Արտաշերսի պարիսպներից:

— Դրանով, տիկին, դու ավելի կկատաղեցնես նրան: Վորմիդդուխտին, ընդհակառակն, պետք է կենդանի պահել, Մերուժանին միշտ այն յերկյուղի մեջ պահելու համար, որ յեթե նա չչափավորե յուր վայրագությունը, անպատճառ յուր սիրած որիորդի կյանքը վտանգի կենթարկի:

Տիկինը վոչինչ չպատասխանեց: Նա ստստիկ զայրանում եր, յերբ նրա հետ վիճաբանում եյին: Իսկ այժմ, թագցնելով յուր վրդովմունքը, մի քանի րոպե լուռ նայում եր արծաթյա ճրագի վրա, կարծես, նրա մոմայլ լուսավորության մեջն եր վորոնում, յուր մռայլված և խառնաշփոթ մտածություններն պարզվելը:

Նա մտածեց միայն լինչ զգալ տալ սպարապետին, վոր նա չրկպատող

հանդամանքների բոլոր կողմերը ճշտիվ կշռել չէիտե. և թե, կատարվում են խիստ նշանակալոր անցքեր, որոնց մասին տեղեկություն չունի, թեև, իրրև պետական ամենաբարձր անձնավորություն, պետք է նա ամենից առաջ գիտենար:

— Ցնա Մերուժանի կովկասյան լեռնաբնակներին և Աղվանից ավազակների հետ միանալուց մեղ համար, դոնե այժմ, մի առանձին վտանգ չեմ տեսնում, Մուշեղ,— ասաց նա գլուխը վեր բարձրացնելով և ուղիղ ապատրակաի վրա նայելով:— Ցնա ունեմ այլ տեղեկություններ, որոք քեզ, իրենի, հայտնի չեն: Պարսկաստանում դործերը վատ են: Ինձ հաղորդել են Տիգրանից, որ Շապուհի այնպես չուտասիրչի կերպով մեր յերկրից հեռանալու պատճառը քուշաններին արշավանքն է, որ այժմ կրկին սկսել են ասպատակել պարսից հյուսիս-արևելյան դավառները: Քուշաններին չուտով խաղաղացնելը՝ հեշտ բան չե. նրանք բավական ժամանակ կըզբաղեցնեն Շապուհին: Իսկ մենք այդ ժամանակից կարող ենք ոդուտ քաղել: Ուրեմն ա՛յն, որ ասում ես դու, թե Մերուժանը յուր կողմն և ձգել Լևկաց և Աղվանից թագավորներին, յես չեմ կարծում, որ նրանք ժամանակ գտնեն մեղ հետ գործ սկսելու: Վ.որովհետև, յեթե Շապուհը զնալու յե քուշանների դեմ, անպատճառ կկանչե Լևկաց և Աղվանից թագավորներին՝ մասնակցելու յուր արշավանքին: Այդ նրա սովորություն է, և ամեն անգամ այդպես է յեղել, յերբ նա քուշանների հետ պատերազմ է ունեցել:

Տիկնոջ քաղաքագիտական համոզմունքները և, պարագաների համեմատ, նրա դատողությունները ընթացիկ դործերի մասին, վորքան և ուրախացնում էին Մամիկոնյան իշխանին, այնուամենայնիվ, լսելով նրա տկնարկությունը յուր անուշադրության վերաբերությամբ, իրր թե յուր ապարատակաը չդիտե, թե ինչ է կատարվում Պարսկաստանում,— այդ կը-ծու տկնարկությունը դուրս կոչեց ապարատակի սառն դեմքի վրա մի անհամեստելի ժպիտ, որը ամենայն զգուշությամբ ծածկեց նա:

— Ո՞վ է հաղորդել քեզ, տիկին, այդ տեղեկությունները Տիգրանից,— հարցրեց նա մի առանձին հետաքրքրությամբ:

— Դրատատարը, մեր հավատարիմ նվերինին, դու, կարծեմ, ճանաչում ես նրան: Նա ինձ նամակ եր գրել:

— Ցե՞րբ ստացար այդ նամակը:

— Ցերեկ որ կլինի:

— Այդ տեղեկությունները ինձ հայտնի չեն, տիկին: Ցես քեզանից տվելի վաղ ստացել եմ շատ մանրամասն տեղեկություններ Պարսկաստանի վերջին անցքերի մասին: Իզուր ես մտածում, թե յես չդիտեմ՝ ինչ է կատարվում մեր շուրջը: Կարդա՛ այդ նամակը:— Նա հանեց յուր ծոցից մի տավալ ծրար, տվեց թագուհուն, և նա սկսեց անհամբերությամբ կարդալ:

Նամակը գրել եր Մանվել Մամիկոնյանը՝— ապարատակի հարազատ

ցեղերը, որ Պարսկաստանում գտնված հայկական հեծելազորքի ղեկավարն էր: Գրում էր Մուշեղին, թե Շապուհի անձամբ արշավելը Հայաստան՝ իրան ևս սաստիկ հոգսերի մեջ էր դրել. որ ու կերպ մտածում էր, մի հնար գտնել՝ այդ գաղանին հետացնելու հայոց յերկրից: Վերջապես, յերկար աշխատություններից հետո, կարողացավ հավատարիմ անձանց միջոցով՝ քուշաններին արքային դրդռել պարսից դեմ, հակացնելով նրան, թե բարեպատեհ ժամանակ և Պարսկաստանի վրա հարձակվելու, որովհետև Շապուհը յուր բոլոր զորքերով գնացել էր Հայաստան, և յերկիրը մնացել և անպաշտպան: Այսպիսով հասավ յուր նպատակին: Քուշանները սկսեցին սոպատակել պարսից հյուսիս-արևելյան սահմանները: Այդ լսելով, Շապուհը թողնց հայոց յերկիրը և շտապեց դեպի պարսից վաղեմի թշնամին: Այժմ նա գունդը և կազմում, զրդռ և հավաքում, որ գնա քուշանների դեմ: Ցեղ ինքը, Մանվելը, յուր հայկական հեծելազորքով սկսավ մասնակցել Շապուհի արշավանքին: Յուր ներկայությունը պարսից բանակի մեջ՝ միջոց կուտ իրան՝ պարբերաբար հաղորդել թշնամուն պարսից բոլոր թուլ կողմերը, և հետևապես գործը այնպես տանել, որ պարսիկները ամեն ճակատամարտում հաղթված լինեն: Հույս ունէր, որ Շապուհի բոլոր զորքերը ջարդել կուտ Խորասանի անապատներում և, դուցե, իրան Շապուհին ևս նրանց հետ ի կորուստ կմատնե... Նամակի վերջում ավելացնում էր, թե ինքը ամեն հնար գործ կդնե որքան կարելի է, յերկարաձգել պատերազմը, որպեսզի Շապուհը այդ կռիվներում ըստ բաղված լինի, իսկ Հայաստանում ժամանակ գտնեն իրանց գործերը կատարելու: Հետո չնորհակալություն էր հայտնում յուր յեղբորը, Մուշեղին, դրելով. «Հայոց տառապանքները վորքան քեզ, նույնքան և ինձ համար ցավալի էին, սիրելի յեղբայր: Գովում եմ քո սրամտությունը, միևնույն ժամանակ, և քո հետաքննությունը, վոր այդ խորհուրդը ավելցրիր ինձ: Ուրիշ ավելի նպատակահարմար միջոց չեր կարելի գտնել՝ Շապուհի ներքոգործությունը, գոնե առժամանակ, հետացնելու մեր աչխարհից, քան թե այդ, վոր բոլորովին պիտի կլանեն քե՛ նրա ժամանակը և թե՛ նրա ուժերը: Շնորհակալ եմ, Մուշեղ, այդ միտքը քեզ և պատկանում»...

— Ուրեմն դո՞ւ յես տվել Մանվելին այդ միտքը,— հարցրեց տիկինը նամակը կարդալուց հետո:

— Այո՛, յես եմ տվել,— պատասխանեց սպարապետը ցած ձայնով:

— Ցե՛րը:

— Հենց այն ժամանակ, յերբ Շապուհը յուր զորքերի բազմությամբ վտաք դրեց մեր հողի վրա:

— Ինչո՞ւ մինչև այսօր չես հայտնել ինձ:

— Դու գիտես, տիկին, վոր յես սովորություն չունեմ՝ դեռ չկատարած գործերիս մասին կանխապես խոսել: Ցնս պատասխանել, թե ի՛նչ արդյունք կունենա իմ հղացած խորհուրդը:

— Արդյունքը անհամեմատ գերազի՛կ է, Մուշեղ,— պատասխանեց տի-

դինը, և նրա թախծալի դեմքը փայլեց անսահման ուրախությամբ.— Մի ավելի քան քեզ այդ՝ նպատակահարմար արդյունք՝ ավելորդ կլիներ պահանջել: Թե՛ քո, Մուշեղ, և թե՛ քո քաջ ընկերը, Մանվելի, ջանքերը անհնարին զոհողության արժանի չեն:

Սպարապետը համակրությամբ դյուրը խոնարհեցրեց, ձեր նայում վրդովմունքով ականջ վրա, որ այդ բոլոր ընթանում հրճվում էր խորին, սրտապարտ ընկերության մեջ: Դժբա՛խտ ընկալ նա մորսին ամուսին, դժբա՛խտ ընկալ նա մորսին մայր: Դեռ պատանեկության հասակում սիրելի մորդուն բաժանվելն նրանից և, իրրև պատանդ, տարան բյուզանդական արքունիքը: Իսկ այժմ բանտարվոր էր համարում իրան մորսին թագուհի, մորսին մի տառապյալ ընկերի տեր և իշխան, որի մոտալուտ վերադարձությունը սրտախռնում էր նրան:

— Ցնա այժմ կատարյալ մխիթարված եմ համարում ինձ, սիրելի Մուշեղ,— դարձավ նա դեպի սպարապետը դողացված ձայնով,— յես այժմ բոլորովին հավատում եմ, որ հայոց աշխարհը անտեր չե: Իսախտավո՛ր և այն աշխարհը, ընդ ձեղ նման զավակներ ունի: Ես այդ հաղթությունը, սիրելի Մուշեղ, յես ավելի գերադասից եմ համարում այն փայլուն հաղթությունից, որ դու մի քանի շաբաթ առաջ կատարեցիր Թավրիզի պարիսպների մոտ: Նա արի և բազկի հաղթություն էր, իսկ դա խելքի և ազգանկան հնարագիտության հաղթություն է: Դու առանց զենքի՝ հեռացրիր վայրագ թշնամուն մեր ընկերից, նրա դեմ մի այլ թշնամի դուրս բերելով: Ցեզ մենք նրա բացակայությունից պետք է ողուս քաղենք, պետք է չտապենք՝ չուտով կարող դնել մեր գործերը: Պարագաները զարմանալի կերպով ներդաշնակվում են միմյանց հետ: Ցեզ յես ամենակարող աջն եմ տեսնում այդ բոլորի մեջ: Նույն ժամանակ, յերբ Պարսկաստանում Շապուհը զրպվում է քաչաններին պատերազմով, Բյուզանդական կայսրության մեջ մեռնում և անիծյալ վաղենը, և մենք մխիթարանակ արտասվում ենք մեր ընկերու անկրկնելի թշնամիներից: Հանգամանքները ամենքն նպաստում են մեզ, և վաղեսի փոխարեն կայսր է դառնում մեր բարեկամ Թեոդոսը, որի հետ մենք կարող ենք ամեն տեսակ համաձայնության կայացնել: Կրկնում եմ, սիրելի Մուշեղ, պետք է ողուս քաղել այդ բարեհաջող հանգամանքներից: Ամեն բան թանգ է մեզ համար: Դու պետք է դնաս Բյուզանդիա, և պետք է աշխատես, որքան կարելի չի, չուտով դնալ:

Սպարապետը, դեռ դյուրը խոնարհեցրած, լուռ մտածության մեջ էր: Տիկինը շարունակեց.

— Դու պետք է դնաս որդուս բերելու: Այժմ իմ նախարարները բոլորովին տարակուսյալ դրության մեջ են: Վոմանք վհատությունից փախան դեպի պանտան կողմեր. վոմանք անցան պարսից կողմը. իսկ մնացյորները տատանվում են անհատտատ կերպարանքների մեջ: Հարկավոր է մի միաձորիչ դյուրս, որ բոլորին ձուլե ի մի մարմին,— և այդ դու

լուծը պետք է լինի իմ վզերին: Պատրաստվիր, սիրելի Մուշեղ, և շուտով ճանապարհ ընկիր: Կայսրին հասցնելու նամակը չես իմ ձեռքով կըպրեմ: Մի նամակ ևս կգրեմ հորս, մի նամակ էլ Ներսեսին: Հույս ունեմ, վոր մեր հարցերի քահանայապետը, վոր այնքան տառապանքներ կրեց յուր թագավորի և յուր հայրենիքի համար, այժմ վերադարձած լինի աքսորանքից: Ցնծում կանեմ արքայական դանձարանը և կպատրաստեմ ամենաթանգագին ընծաներ նորընտիր կայսրին տանելու համար: Իսկ քո դեսպանախումբը դու ինքդ կկազմես, և մեր նախարարներից, մեր ազնվականներից վորին ցանկանում ես, կտանես քեզ հետ: Ցնծում չեմ, վոր դու Բյուզանդիայում պատանվոր ընդունելություն կգտնես: Թուրքը թե՛ քեզ և թե՛ քո արժանահիշատակ հորը անձամբ ճանաչում է: Նա չատ անգամ լսել է ձեր քաջությունները պարսից դեմ և չատ անգամ ուրախացել է ձեղանով:

— Ցնծ պատրաստ եմ, տիկին,— պատասխանեց ազատասիրտը խորին հոժարությամբ,— և մեծ հույս ունեմ, վոր տերը կտգնե ինձ՝ կժամանելու քո սրտագին բաղձանքները, վոր մեր ամենես բաղձանքներն են: Բայց չեմ թաղցնում հայտնել քեզ, տիկին, վոր չես տակավին մի վորոշ կեղրարության չեմ հասել, արդյոք այդ բոլոր փոփոխություններից հետո, թե՛ Պարսկաստանում և թե՛ Բյուզանդական կայսրության մեջ, ի՞նչ դիրք պետք է բռնեն Մերուժանը...

— Ցնծ կարծում եմ, այսուհետև Մերուժանի մասին չարժե մտածել անդամ, վորովհետև, վորմիզդուխտ մեր ձեռքը գերի ընկնելուց հետո, նա բոլորովին հուսահատված է, և մանավանդ զայրված է յերևում: Քանի որ առաջ ներկայացան ինձ նրա պատգամավորները, խնդրում էին, վոր յեթե Վորմիզդուխտին հանձնելու լինենք Մերուժանին, նա պատրաստ է բոլորովին դինաթափ լինել և, դալով իմ վոտքը, դղջալ յուր չարագործությունները: Միևնույն ժամանակ ապառնում էր նա, յեթե Վորմիզդուխտին հանձնելու չլինենք, նա մեր նախարարների բոլոր տիկիններին և որբորդներին, վորոնք յուր ձեռքումն են, կախ կտա նույն ամրոցների աշտարակներից, ուր պահվում են նրանք՝ պարսիկ բերդակալների հսկողության ներքո: Ցնծ, իհարկե, չհավատացի Մերուժանի վո՛չ դղջմանը, վո՛չ խոստումնքներին, և խստությամբ պատասխանեցի նրա պատգամավորներին, ասելով, յեթե նրա ձեռքում գտնված գերիների դլխից մի մազ անգամ պակասելու լինի, նա Վորմիզդուխտի մարմինը Արտաշերի պարիսպներից կախված կտեսնե: Այդ խոսքերը լսեցին պատգամավորները և դնացին: Այնուհետև Մերուժանը լուռ կացավ և վոչինչ չդրծեց:

— Բայց նրա լռությունը ավելի վտանգավոր է, քան թե նրա դործողությունը...

— Այդ կճողնենք աստուծո անորենության, սիրելի Մուշեղ, մեզ հարկավոր է այժմ քո ճանապարհորդության մասին մտածել, վոր մեր բոլոր հոգսերից ամենակարևորն է:

Կառավարման իրավունքները իրավ և, խիստ բարձրատեսիլ էին: Բյուզանդական գահը ժառանգել էր հայոց բարեկամ մի կայսր, որի հետ կարելի էր ամեն տեսակ նպատակահարմար դաշնակցություններ կապել: Իսկ պարսից թագավորը խառնված էր նոր պատերազմներով, որ կարող էին երկար ժամանակ նրա ուշադրությունը հեռացնել Հայաստանից: Բայց Հայաստանում տակավին բույն էր դրել ընտանի ոճը— Մերուժանը, — որի դյուրը պետք էր ջախջախել, որպեսզի երկիրը կատարյալ խաղաղության առնար: Այդ միտքն էր, որ անհանգստացնում էր Մուշեղին:

Թաղրիկի հաղթությունից հետո, նա դիտավորություն ուներ հարձակվել Մերուժանի վրա, և մինչդեռ այդ արշավանքի ծրագրի մասին էր խորհում, հանկարծ թագուհին առաջարկում էր նրան՝ դնալ Բյուզանդիա: Նրան խիստ ծանր էր ներքին թշնամին տան մեջ թողնելով, հեռանալ անից:

Մերուժանը հեշտ հերոսով ընկճվող մարդկիններից չէր: Թե՛ նրա քաջության և թե՛ հաստատամտության մասին մեծ համարում ուներ սպարապետը: Այդ էր պատճառը, որ յուր բացակայության ժամանակ՝ նրա աոջևը դնելու համար՝ մի հավասարակշռող մարդ չէր գտնում սպարապետը: Նա ուներ, արդարև, հայոց իշխաններից շատ քաջ և անձնանվեր պատերազմողներ, բայց նրան պակաս էին այնպիսիները, որ Արծրունյաց հնաոդադիա իշխանի ռազմական ճարպկություններն ունենային:

Ծամիկյին դեռ շատ անփորձ էր համարում նա: Այդ վոդևից յերիտասարդին սիրում էր նա՝ որպես մի աղնիվ, վեհանձն հերոս, որի մեջ արևելյան ջերմության հետ միացած էր քնքուշ զգացմունքների կըրակը: Նա կարող էր լավ զորապետ լինել, բայց չէր կարող լավ զորավար լինել: Ուրիշ վոչ մարդի վրա վստահություն չուներ նա: Ուրեմն ո՞վ պետք է պահպաներ յերկիրը, ո՞վ պետք է մաքառեր ներքին թշնամու հետ:

Այդ հոգսերը, նրա բացակայության միջոցում, յուր վրա էր առնում հայոց թագուհին: Բայց միթե կարելի՞ էր հավատալ այդ կրքերով լի կնոջը, որի մեջ ամեն հատկություններ անդուսպ ծայրահեղության եյին հասնում: Նրա մեծամտությունը և վերին աստիճանի ինքնավստահությունը կարող էր շատ բան փչացնել:

Նա ընդդեմ չէր Բյուզանդիա գնալու խորհրդին, բայց ցանկանում էր, որ յուր յերեք կատարվի յերկիրը թշնամուց ըոլորովին մաքրելուց հետո, որպեսզի, հայոց թագաժառանգը դալուց հետո, նոր խռովություններին չհանդիպիլ: Ցավ նրա կարծիքով՝ քանի դեռ Մերուժանը կենդանի էր, այդ խռովությունները չեյին պակսի, որովհետև պարսից արքայից արքան նրան էր խոստացել հայոց գահը:

Դեռ այդ սխալ տարակուսանքների մեջ էր սպարապետը, յերբ նա, ինչ ակամա, հանձն առավ թագուհու առաջարկությունը և վեր կացավ:

Թագուհին խորին դժուռնակությամբ մեկնեց նրան յուր ալը, վորը յերկու ձեռքով բռնեց նա, նախ սնդմեց յուր շրթունքներին, և ապա տարավ դնելի ճակատը: Դա մի մեծ շնորհ եր սիկնոջ կողմից դեպի յուր հավատարիմ և անձնանվեր սպարապետը:

— Դու առավոտյան դարձյալ կգա՞ս լինճ մոտ,— հարցրեց նա մի առանձին սիրելությամբ:

— Կգամ, սիկին,— պատասխանեց սպարապետը:— Մենք բոլորովին չվերջացրինք մեր խոսակցությունը:

— Մնում է միայն խոսել այն բանի վրա, թե ի՞նչ կարդադրություններ պետք է լինեն քո դնալուց հետո: Այդ կխոսենք առավոտյան:

Սպարապետը դլուխ տվեց և դուրս յեկավ անյակից: Պալատական սպասավորները առաջնորդեցին նրան մինչև սպարանքի դուռը, ուր պահվ եյին նրա ձին և սպասում եյին նրա ծառաները: Նա նստեց և ծառաները, հետ ու առաջ ընկած, սկսեցին տանել նրան դեպի յուր բնակարանը: Ճերկու լապտերներ լուսավորում եյին նրա ուղին, և լուռ մտախոհության մեջ՝ անցնում եր նա ամբողջ խորհուրդներով, վոր ընկղմված եյին դիչերային խորին մթության մեջ: Վոչ վոք չեր յերևում, բացի անքուն պահակներից, վոր յերբեմն խումբերով անցնում եյին նրա մոտով, և ի պատիվ իրանց նիղակները բարձրացնելով, դնում եյին դեպի դանադան կողմեր:

Իրրև սպարապետ, իրրև յերկրի սպահովության հոգաբարձու, նվիրված եր նա հայոց աշխարհին յուր հոդու բոլոր պորությամբ: Բայց, միևնույն ժամանակ, նա ընտանեկան խիստ դիմառատ հայր եր: Արտաքին ամբողջումն եյին նրա սիրելի զավակները և նրա սիրելի կինը: Ո՞րքան կարող եր հանձնել նրանց մի այնպիսի խռովալի ժամանակում, յերբ Արտաշեսը դրած եր մի սոսկալի հրաբուխի վրա, վոր ամեն րոպե կարող եր բորբոքվել: Այդ բերդին եյին ապավինած և հարյուրավոր իշխանազն ընտանիքներ: Այդ բերդին եր ապավինած և ինքը՝ հայոց թագուհին: Արտաշեսն նրան խիստ մեծին դուշներով եր յերևում, և նրա զգայուն սիրտը ալեկոծվում եր նույնպես մեծին տարակուսանքներով: Այդ մտատանջությունների մեջ հասավ նա յուր բնակարանը, ցած իջավ ձիուց և ներս մտավ: Նրան հանդիպեց դեռ չքնած կինը, վոր անհամբերությամբ սպասում եր ամուսնին:

— Ինչո՞ւ այդքան ուշացար,— հարցրեց նա, ուրախությամբ ընդառաջ վազելով:

— Դու դիտես, սիրելիս, յերբ մարդ Փառանձեմի ձեռքն և ընկնում, հեշտությամբ չե կարող աղատվել,— պատասխանեց սպարապետը դրկելով նրան:

Տիկինը ժպտաց:

Ընկու որից հետո, սպարապետը փառավոր պատրաստութիւններով և ամէնայն ազատագունդ համհարզներով ճանապարհ ընկաւ դէպի Իւրպանիա:

Նա ընդունեց Թադուհու առաջարկութիւնը և գնաց: Բայց Թադուհին ասաց...

12.

ՀՑՈՐ ՄՐԹՊԵՏԸ

Էին երեք յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յԱստուծոյ հասին ի վերայ զաղիականին բնդունորդացն, դի մահ անկաւ ի վերայ նորա որք ի բնդին էին, դի և Տեառնէ հասին պատուհասք... Ճանկրծանկի ի միում ժամու հարիւր այր, և ի միւսում երկերիւր, և երբ՝ դ՝ հինգ հարիւր այր մեռան... Ցորժամ սկսան, դամիա մի ոչ յերկոտեաց՝ դի սատակեցան ոտ հատարակ՝ դի էին որք իրրև մեռան հազար, և կանայք իրրև վեց հազար...

Բայց Ասց ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօքն Աստ ելն եմուտ գաղտ ի գնդս ի բերդն Հայր Մարդպետ գնդրինն, և ընդամանաց գտելինն մեծապէս... Եղ գաղտուկ, և փախեաւ... Եւ երկին (գօրակոնք Գարսից) կոտան գտելինն, և իջուցին ի բերդէն ելանելն ի բերդն ի վեր... դերեկն գրանձս Թադեւորին Հայոց որ կային ի բերդին... Զինն տու և զինն դիզեր հանակ իջուցին որք գտին յԱրտագերս բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին (ի Գարս)

Փաւստոս:

Մուշեղ Մամիկոնեանին Իւրպանդիա գնալուց հետո, Թադուհին կարգադրեց, որ իւր մոտ գտնված իշխաններից երանք, որ դաւաճաններ և բերդատերեր էին, գնային իրանց յերկիրը պահպանելու, իսկ իւր մոտ թողնց միայն արքունական ազատագունդ զորքերին և իւր վստահելիներին: Մնիներեան բերդից Սահակ պարթեւը Մեծրոպ տարեկցու հետ, մեկնեցաւ և Ուշտունեաց գաւառը, Աշխէնը, իւր հետ առնելով իւր քաջ ընտանիներին: Իսկ ազատագունդ իւր ընտանիքը տեղափոխեց Մամիկոնեանների սեփական բերդը՝ Ընձախանի, որ գտնվում էր Տայոց յերկրի անառատագոյն լեռների մէջ:

Ազատագունդ նախարարուհիները կատարվեցան: Շատ չանցալ, Մեծուժան Աբծրունին զորքերով յետևից և պաշարեց Աբատիները: Թադուհին այն ատենին արհամարհանքով էր նայում այդ պատերազմի վրա, որ տևեց անցաւ, յերբ Մեծուժանի պատգամաւորները նեղիլ յանուն էին նրան, ասելով, թե Մեծուժանը ամենայն հոժա-

քուքյամբ պատրաստ կլինի թողնել պաշարումը և հեռանալ, եթե Վոր-
միզդուխտին նրան կհանձնեն,— բայց պատգամավորները մի՛շտ ասում էին
Թադուհու խիստ պատասխանները: Կատաղած Մերուժանը ավելի ևս
ուժեղացնում էր պաշարումը, կտրելով բերդի հաղորդակցությունը ամեն
կողմից, և աշխատելով, եթե ոչնչով անհնար կլինի գրավել, գոնե
սովով ստիպել նրանց անձնատուր լինելու:

Բայց բերդը համառությամբ կանգնած էր յուր անառան ապառաժ-
ների վրա, և առ վոչինչ էր համարում թշնամու ապառնալիքները:

Երբ Մերուժանը որ ըստ որե ամրացնում էր պաշարումը, մինչդուն
ժամանակ, վահան Մամիկոնյանը յուր հրամանի ներքո յեղած պարսկա-
կան մյուս զորքերով փակել էր բոլոր ճանապարհները, վորպեսզի Թուլ
չտա, վոր հայոց նախարարները պաշարյալներին ոգնության հասնեն և Մե-
րուժանի զորքերը ցրվեն բերդի շրջակայքից:

Բայց Թադուհին դրսից ոգնություն անդամ չէր սպասում: Նա սպա-
սում էր միայն յուր վորդուն—Գաղին: Մի ամիս ևս, յերկու ամիս ևս, և
դուցե շատ ամիսներ նա կարող էր ընդդիմանալ, մինչև կհայտնվեր ըղ-
ձալի վորդին և յուր հետ կբերեր հռոմեական լեգեոնները...

Բայց Բյուզանդիայում գործերը դեռ հապաղման մեջ էին: Հայոց
պատգամավորները, ժամանելով այնտեղ, նորընտիր կայսրին յուր մայ-
րաքաղաքում չգտան: Նա զբաղված էր դրսից պատերազմներով: Այդ պա-
տերազմները, իբրև մի աղետալի ժառանգություն, մնացել էին նրա նա-
խորդից, Վաղեսից:

Վաղեսի վերջին որերում, զալանաբարս՝ գոթերը, ահագին բազմու-
թյամբ դուրս գալով իրանց մթին լեռներից, հեղեղեցին կայսրության ըն-
դարձակ զավառները և հասան մինչև Բյուզանդիայի պարիսպները: Վա-
դեսը կռվեց քաջությամբ և ընկավ քաջությամբ: Պատերազմի դաշտից նը-
րան վիրավորված տարան մի գյուղական խրճիթ: Թշնամին այրեց խըր-
ճիթը, նրա մեջ այրվեցավ և դժբախտ կայսրը:

Երբ նրա մահից հետո, Սիրմիոնում Թեոդոսը ընդունեց Գրատիա-
նոսի ձեռքից կայսերական ծիրանին,— նորընտիր կայսրին վիճակվեցավ մի
շատ դժվար դործ՝ նախ մաքրել յերկիրը կիսավայրենի գոթերից և ապա
դնալ Բյուզանդիա՝ ժառանգելու իրան հասած գահը: Ամբողջ ինն ամիս
տևեց, մինչև կարողացավ նա խաղաղացնել գոթերին, և ամբողջ ինն ա-
միս հայոց պատգամավորները սպասում էին, մինչև վերադարձավ նա
յուր մայրաքաղաքը:

Թեև Մուշեղ Մամիկոնյանը և յուր հետ յեղած ավազանին խիստ վա-
ռավոր ընդունելության արժանացան Թեոդոսից, բայց դարձյալ նրանց
խնդիրքը յերկար մնաց անկատար, վորովհետև նորընտիր կայսրը այն ա-
ռիճան խառնված էր յուր ներքին գործերով, վոր ամենևին ժամանակ
չուներ արտաքին քաղաքականությամբ զբաղվելու, մանավանդ հայոց գոր-
ծով, վոր պիտի հարուցաներ նրա դեմ, անտարակույս, մի նոր պատե-

թագի, այն ևս պարսկական ծանր պատերազմ: Այդ ևր պատճառը, վոր նա մի՛շտ հետաձգում ևր հայոց պատերազմավորների դարձը:

Ներա նախորդը, հալածանքի վարիչը, ուրիշ շատ հոգևորի հետ՝ թողել ևր նրան և կրոնական մեծ խնդիրը, վոր այդ ժամանակ հոգևոր ամբողջ կայարութիւնը ալեկոծման մեջ ևր պահել: Թեոդոսը պետք և վերաբերմնե վարչի աջակցած բարեբարտիճան հոգևորականներին, և պետք և կռվեր բազմաթիվ պաշտպանների դեմ, վորոնք վարչի պաշտպանութիւնը ստանալ աճել և զորացել էին: Մայրաքաղաքում անդադար ժողովներ էին կազմվում, վորոնց յերբեմն ինքը կայսրը անձամբ ներկա յեր գտնվում:

Ցերբ այսպես զբաղված էին կրոնական պատրվյան վիճաբանութիւններով, այնպես, Հայաստանում, Մերուժան Արծրունին ավելի և ավելի ստանկացնում ևր Արտավազդի պաշտպանը: Իսկ հայոց թագուհին մեծ անհամբերութիւնով սպասում ևր յուր վորդուն և կայսրի լուրերին...

Կայսրի խոստումներին համեմատ, Բյուզանդիայից պետք ևր ուղարկվում, վորոնք գալիս էին և, բերդի գաղտնի անցքերով մտնելով, ներկայանում էին Թագուհուն, և միշտ միևնույն լուրերն էին բերում, թե «մի փոքր ևս սպասիր, մի փոքր ևս դիմացիր, և ահա կգա քո վրդին, յուր հետ բերելով հռոմեական զորութիւններ»...

Ցեվ Թագուհին ամենայն անձկութիւնով սպասում եր... և ամենայն յեռանդով ընդդիմանում եր... Սպասում եր և նրա հետ գոնված բազմութիւնը...

Ամբողջ տասն և յերկու ամիս սպասեց նա, ամբողջ տասն և յերկու ամիս քաջութիւնով ընդդիմացավ նա: Վո՛չ Մերուժանի վայրագութիւնը և վո՛չ պարսկական զորքերի կատաղութիւնը, չկարողացան ազդել Արտաշեսի անձառելի ամրութիւնների վրա: Բայց ազդեց յերկնքի պատուհասը...

Տասն և չորսերորդ ամսում հայտնվեցավ մի նոր և ավելի կատաղի թշնամի, վորի հետ այլևս հնար չկար մարտնչելու: Դա յեր սոսկալի ժանտախտը: Աշխարհս կերպով սկսեց կոտորել պաշարյալներին: Ամեն որ մի քանի հարյուր հոգի մեռնում էին: Մի անգամ Թագուհու սեղանի մոտ, ճաշելու մեջտեղին, մեռան հինգ հարյուր հոգի: Մահվան տանջանքը խանդավառեց ամբոխի ընդհանուր կարծը: Ամեն վոք յուր կյանքի մասին եր մտածում: Թեև այդ անպատրաստ սխալ հենց հայտնվելու սկզբում՝ Թագուհին հայտնեց բոլորին, թե ով վոր ցանկանում և, կարող և Թողնել և հեռանալ, բայց վոչ վոք չկամեցավ բաժանվել նրանից: Ամենքը ուխտել էին մնալ նրա մոտ, և մեռնել նրա վտանգների մոտ: Բերդի խորքերում պահեստում համար շատ գաղտնի ճանապարհներ կային, բայց վոչ վոք ուզում չգտնվեց այդ ճանապարհներից: Իրանց սիրելի Թագուհուն հավատարիմ մնացած բազմութիւնի մեջ՝ անձնազոհութիւնի խղճը ավելի սաստիկ եր, քան թե ճարակող մահվան կատաղութիւնը: Ժամանակ չկին գտնում դե-

ակները թաղելու։ Կենդանի մարդիկ թաղման մի ջոցում՝ իրանք ևս ընկնում էին դիակների մոտ։ Ամեն վոք կանխատես վորում եր յուր դերեզմանը։ Ամեն վոք դիտեր, վոր վաղը, և դուցե մի քանի րոպեյից հետո, կարող է այլևս չլինել...

Բայց բերդի դրսում դևռ չդիտեին, թե ներսում ի՛նչ է կատարվում. Պաշարյալները և՛ մեռնում էին, և՛ պատրաստվում էին մեռնելու համար, և՛, միևնույն ժամանակ, կռվում էին արտաքին թշնամու հետ։

Ժանտախտի հետ համարյա ղուդընթաց կերպով սկսվեցավ և սովը։ Սովը զերազանցեց ժանտախտին։ Սովը մոռանալ տվեց ժանտախտի ահռելիությունը։ Հեշտ եր մեռնել, բայց շատ դժվար եր կենդանի մարդուն քաղցի կատաղության հետ մաքառել։

Բերդի պաշարման տևող և յերեք ամիսների ընթացքում՝ նրա մեջ խմբված ահագին բազմությունը ապառնց բոլոր ամբարները։ Տասն և չորսերորդ ամսում, այլևս վոչինչ չէլին գտնում ուտելու։ Բերդում վո՛չ շուն մնաց, վո՛չ կատու և վո՛չ մի այլ չորքոտանի,— բոլորը կերան։ Աղատանի կանայք, յերկանաքարը առջևում դրած, վոսկորներ էլին աղում և բաժանում էլին սովյալներին, վորոնք վոխանդիր նման ուտում էլին։ Ինքը թագուհին՝ կոշիկների և տրեխների կաշիներից՝ յուր ձեռքով ապուր եր յեփում, և բաժանում եր սովյալներին։ Դրանք ևս սպառվեցան։ Սպառվեցան նաև բերդի ապառաժների վրա բուսած մացառները, վոր ավելի վուժացնում էլին մահացուցությունը, քան թե կշտացնում էլին։ Որհասականն տաղնապը այն աստիճան կատաղության հասավ, վոր սովի խելագարության մեջ՝ վոմանք կերան իրանց զավակներին...

Այդ բոլոր սոսկալի արհավիրքների ժամանակ, յերբ մարդկային ամեն հոգեկան և մտավոր զորությունները փշրվում են, խորտակվում են վերահաս վորձանքների հարվածների ներքո,— յերբ մարդը վոգբրանում է, վոչնչանում է վտանգի ահավորության առջև,— անասան մնաց միայն թագուհին։ Մինչև յուր վերջին զինվորը կորցնելը՝ նա պահպանեց յուր հոգու բարձր զորությունը և յուր ամրոցի դռները բաց չարեց թշնամու առջև։

Նա մտավ այդ ամրոցը տասն և մեկ հազար սպատազինված զորամարդիկներով և հինգ հազար իշխանազն տիկիններով։ Ամենքը մնաան, ամենքը զոհ յեղան հայրենիքի պաշտպանության սրբության։ Կենդանի մնաց միայն թագուհին յուր յերկու մանկահասակ նաժիշտների հետ։ Կենդանի մնաց և Վռմիդուխտ որիորդը։ Տասն և յերեք ամիս անցուցին նրանք անվտանգ։ Տասն և չորսերորդ ամսում միայն՝ միաժամանակ սկսվեցան սովը և ժանտախտը։ Ցավ այդ մի ամսում վոչնչացրին ամեն կենդանություն,— այդ մի ամսում տարան տասն և յոթն հազար զոհեր...

Տասն և չորսերորդ ամսի վերջին որն եր,— վերջին աղետալի որը։

Ցերեկոյան արևամուտի դողդողուն ճառագայթները մի քանի րոպե ևս փայլ-փայլեցին ամրոցի բարձր աշտարակների կապտագույն ապակեպատ-

րի վրա, և ապա, մարդոց կյանքի վերջին նշույլների նման, խավարն հաղթեց։ Մթությունը սկսեց հետզհետե նահանջել ամբողջ պայծառ լուսավորությունը։ Տիրում էր ընդհանուր լռություն, ընդհանուր դադարկության հետ։ Տեղ-տեղ լսվում էին միայն անթաղ դիակներ, որ մնացել էին վորպես կերակուր գիշատիչներին։ Սև անդղնների անհագ լռությունը, ևս վոռնիների նման, պատռում էր այդ ալլանդակված դիակների շուրջը, և լսվելիս յուր անախորժ կռնչյունով աղմկում էր ողի մեռելային հանդստությունը։

Այդ մինոգին լսվում էին մանկահասակ որիորդների, լսվում էին դեղեցիկ Աբսամիանների նման, շրջում էին ամբողջ ահռելի դադարկության մեջ։ Ձնկուսի ուսին էր ձգած էր մի-մի արծաթյա կապարճ լի նետերով, լսվուսն էլ ձեռքում կրում էին մի-մի թեթև աղեղ։ Վորսորդության այդ սիրուն դիցուհիները հագել էին՝ սաստկի վորսորդ կանանց նման՝ վորսորդական կարճ զգեստներ։ Գլխներին լսվում դիակները պատռելու կապած ճակատի վրա, կուրծքները հիսով չափ բաց, բազուկները հոլանի, և մերկ սրունքների վրա կապել էին նախշուն, փեսուրի պես թեթև, մուկները։ Դրանք թագուհու լսվում նաժիշտներն էին։ Մեկին կոչում էին Շուշանիկ, մյուսին Հասմիկ։ Ձնկուսն էլ շուշանների նման ճերմակ էին, լսվուսն էլ հասմիկի նման հոտավետ էին։ Նրանք հասան չքնաղ բլրակի աշտարակներից մեկի մոտ։ Նայեցին դեպի վերև, հետո լուռ ժպիտով նայեցին միմյանց լսվերին։

— Թող այս լսվերկո յես առաջ վորձեմ իմ բախտը,— ասաց Շուշանիկը հագիվ լսելի ձայնով։

— Վոչ, առաջ յես,— խնդրեց Հասմիկը։

Այսպես վիճելով, մտանում էին նրանք մի ղուբդ աղավնիի, վոր նստած էին աշտարակի բարձրության վրա, և խորին հրճվանքով դուրդուրում էին միմյանց։

Շուշանիկը ղուբդության ձեռքը ատրամ դնել կապարճը, հանեց մի նետ, հարմարացրեց աղեղին և ուղղեց դնել լսվրջանիկ թռչուններին։ Լարը ճայթեց, նետը սլացավ... Բայց նետումն անցավ անհաջող... Նրան անմիջապես հետևեց Հասմիկի նետը։ Աղավնիներից մեկը, թևքերը թափահարելով, ղլորվելցավ դնալ ցած։ Մյուսը թռավ, և ողի մեջ մի քանի սխուր պտույտներ գործելով յուր սիրելի վարուժանի շուրջը, և ապա անհայտացավ լսվերկոյան մթության մեջ։

Հասմիկը վեր առնց յուր վորսը, սկսեցին առաջ դնալ, և նրանց վարվրուն աչքերը ուշադրությամբ դիտվում էին աշտարակների բարձրության վրա, ուր ամեն լսվերկո դալիս էին աղավնիները դիշերային հանդիստ դանելու։ Շուշանիկը սխուր եր, վորովհետև այդ առաջին անգամն եր, վոր նրա նետը չեղվում եր նպատակից։ Իսկ Հասմիկի դեմքը, ընդհակառակն, փայլում եր մի առանձին, ինքնագոհական ուրախությամբ։

Այսպես ամեն լսվերկո՝ այդ լսվերկու մանկահասակ աղջիկները հայտնը-

վում էին ամրոցի շրջապատքում և թռչուններ էին վոր-սում: Այդ թռչուններից պատրաստում էին իրանց սիրելի թագուհու թե՛ հաչը և թե՛ ընթրիքը: Այդ թռչուններով կերակրվում էին և իրանք:

Ցերեկոյան մթությունը սկսեց հետզհետե թանձրանալ. և դիշերային խավարը, վերջապես, ծածկեց այն սոսկալի տեսարանները, վոր այդ ո-րերում պատահերացնում եր Արտազերսը: Այլևս չէին յերևում դիակների նյուխտերը, վոր նայողին սարսուռ էին աղդում: Այլևս չէին յերևում մարդկանց լուծված, այլանդակված կմախքները, վոր անթաղ ընկած էին փողոցների վրա:— Ցերևում եր միայն մի բարձրահասակ կին, վոր վա-ռած ջահը ձեռին՝ միայնակ շրջում եր այդ դիակների մեջ: Նա նմանում եր այն Աբալեղ աստվածուհիներից մեկին, վոր մի ժամանակ, կուվից հե-տո, շրջում էին պատերազմի դաշտում, և հայոց ընկած քաջերին կյանք և անմահություն էին շնորհում: Տխուր, սրտաբեկ հայացքով աչք եր ձգում նա անբախտ զոհերի վրա, և ուշիկ քայլերով անցնում եր: Նրան-ցից շատերը մի քանի որ առաջ կենդանի էին, նրանցից շատերը նրա սի-րելիներն էին: Իսկ այժմ ընկած էին անխնամ, անտեր, զուրկ այն մի-ակ մխիթարությունից, վոր վայելում է մահկանացուն, մայր-հողի դըր-կում հանգիստ դանելով: Տխո՜ւր եր տեսարանը, մահվան չափ սխո՜ւր եր: Մոր կուրծքին կպած, հանգել եր սիրելի զավակը: Նորափթիթ որիորդը՝ խամրած, դալկացած, ընկել եր, վորպես մի նորափթիթ ծաղիկ, վոր յուր արմատից կտրում է, յուր և տապալում հնձավորի անգութ մանգաղը: Սոսկալի՛ յեր այդ հունձքը, դա անսիրտ կրողների անողորմ հունձքն եր...

Նա, ջահը ձեռին, շարունակում եր առաջ գնալ: Նրա դեղեցիկ դեմ-քը, ջահի պայծառ լուսավորության առջև, արտահայտում եր վորդեկո-ւսյա մոր անմխիթար թախծությունը: Բայց նա՛, այդ դժբա՛խտ մայ-րը, կորցրել եր յուր հազարավոր զավակներին... Նա կորցրե՛ց բոլո-րին, բայց չկորցրեց յուր սրտի վեհությունը: Նա դրկվեցավ բոլորից, բայց պահպանեց յուր կամքի յերկաթյա ամրությունը...

Նա հառաջ եր ընթանում և նրա թեթև զգեստների յերկար քղանցքնե-րը, քսվելով փողոցների անհարթ սալահատակին, դիշերային լռության մեջ՝ արձակում էին խիստ մեղմ, մելամաղձական սոսափյուն: Նա դուրս յեկավ նեղ, խորտուբորտ փողոցներից, և յուր արագ քայլերը ուղղեց դեպի յերկու բարձր աշտարակները, վոր յերկու վիթխարի հսկաների նման, կանգ-նած էին ամրոցի գլխավոր դռան աջ և ահյակ կողմերում: Ներս մտավ աշտարակներից մեկի դռնից, սկսեց վոլորտապատույտ սանդուղքներով վեր բարձրանալ: Ջահի լույսը խռովեց չղջիկների դիշերային հանգիստը, վո-րոնք սոսկալի խռմփյունով թաքնվել էին այդ հինավուրց շինվածքի մթին խորշերում: Մի ակնթարթում, վորպես մի սև թուխպ, փոթորկեցին նրանք աշտարակի դատարկությունը, և նրա խուլ կամարները թնդացին հա-րյուրավոր մաշկաթևիկների թափահարումից: Մի քանիսն իրանց սոսն,

անսահման թևերովնով պարկվեցան նրա գեղեցիկ յերեսին: Բայց նա վախենչ չդողաց, միայն ձեռքով պահպանեց ջահը, վոր չհանգչեն:

Յերբ հասավ մինչև աշտարակի կատարը, մի առանձին խնամքով վեր առնց այնտեղ դրած Հրաշները, վառնց ջահի լուսով և դրնց իրանց տեղում, նեղ լուսամուտների մոտ: Ավարտելով յուր գործը, չտատոզ ցած իջավ: Մոռնցավ ամբողջ յերկաթյա դռներին: Յերբին ուշադրությամբ զննում էր ծանր փականքները, հայում էր ամուր նիզերին, և չոշափում էր հաստ սողնակներն ու պարզունակները: Ամեն ինչ յուր տեղումն էր, ամեն ինչ կազմ և պատրաստ էր, միայն պահապաններ չկային: Նա անցավ դեպի մյուս աշտարակները:

Աշտարակների բարձրության վրա՝ տեղ-տեղ հանդիպում էր նա պիշերապահ դինվորների, վոր նիզակը կուրծքին սեղմած, պատվել էին մերկ հատակի վրա: Այդ մշտարթուն պահապանները, վոր ամբողջ դիշերը իրանց դիտանոցի դաշտից հսկել դիտելին չրջակայքի վրա,— այժմ քնած էին, և քնած էին մահվան անզգա քնով... Դո՞ւն որհատը ժամանակ նրանց՝ հենց իրանց պաշտոնավարության րոպեում...

Աչապես ամեն դիշեր, ջահը ձեռին, միայնակ, հայտնվում էր այդ դեղնցիկ, բարձրահասակ կինը, և լուսավորում էր այն բոլոր աշտարակները, վոր նայում էին դեպի պաշարող թշնամու բանակը: Այդպես անում էր նա, վոր թշնամուն կարծել տա, թե բերդում դեռ ևս մարդիկ կան, դեռ ևս ամեն ինչ յուր կարգումն է:

Այդ բարձրահասակ, դիշերաշրջիկ կինը հայոց թագուհին էր— դեղաչյա փառահեղներ: Նա այժմ յուր ամայի և անմարդացած ամբողջ թիմերն էր և թիմ նրա անքուն պահապանը, և յուր հոգու անսահման մեծությամբ լցնում էր նրա խորին դատարկությունը:

Համարյա միևնույն ժամանակ, յերբ թագուհին ջահը ձեռին չրջում էր յուր բերդի ամայության մեջ և յուր սրտի սաստիկ բարախումնքով զննում էր, վերատեսչում էր նրա յուրաքանչյուր ամրություններըն,— այո՛, հենց միևնույն ժամանակ՝ բերդում հայտնվեցավ մի այլ խուզարկու: Նա յեկավ դրսից: Նա ներս մտավ այն դաշտնի անցքերից մեկի միջով, վորնց թիմ՝ մուտքը և թիմ՝ յելքը հայտնի յեր միայն թագուհուն, և վորնց հարաբերությունը դրսի հետ՝ պահվում էր վորպես խորին դաշտնիք:

Հաղթանդամ էր այդ մարդը, և յուր անհեթեթ հագուստով, վորի լայն ծալքերը ալիքավոր խորշերով լիզնում էին մինչև վոտները, նեղկայանում էր վորպես մի մեծ, հսկայամարմին դև, վոր դիշերային մթության մեջ անգամ, յուր մթին կերպարանքությամբ՝ վորոշվում էր սիրող խավարից: Գոտուց կախ էր ընկած յերկար թուրը, վոր քարշ էր գալիս գետնով, և նա ձեռքով բռնել էր, վորպեսզի ձայն չհանե: Իսկ ուղղի վրա, հագուստներից, թագրված էր յերկասյրի նրանը: Դիշերային խավարը բարեբախտաբար աջողել էր նրա ահռելի, ծաղկահար դեմքը, վորի աղյուսագույն կաշին ծակոտկեն սպունդի նմանություն ուներ: Փոսակ և սաստիկ դար-

պացած ծնոտների վրա դուրս էին ցցված մի քանի մազեր միայն: Աչքերի մեջ վառվում էր կատաղություն, որ խառն էր նրա ինքնաբավական, դիմական հրճվանքի հետ:

Նա հեռվից տեսավ Թազուհուն, ջահը ձեռին, և ճանաչեց: Այդ միջոցին նրա ահռելի դեմքի վրա անցավ մի դառն ժպիտ, և ուռած շրթունքները արտասանեցին մի նույնպիսի դառն անեծք... Նա կանգ առեց, խավարի մեջ սպասեց, մինչև Թազուհին հեռացավ: Հետո սկսեց դպրոցի կերպով հետևել նրան:

Ամբողջ խորին դատարկությունը, դիակների խառնաշինքոր կույտերը, և շրջակայքի ընդհանուր լռությունը, որ ամեն մի փոքր ի շատ ղողանջ ունեցող մարդուն կարող էին սարսափ և սոսկում ազդել, ընդհակառակն, հարուցանում էին այդ հրեշի մեջ՝ թե՛ ուրախություն և թե՛ զարմացում: Ուրախանում էր, որ այդ թշվառ դրության մեջ էր գըտնում ամբոցը, զարմանում էր, վերջովհետև նրան դեռ պարզ չէր, թե ի՞նչ դժբախտ պատահարներից պետք է առաջ եկած լինեն այդ հանկարծակի ավերմունքը, որը ամենևին չէր սպասում: Նրան այնպես էր թվում, թե վրեժխնդրության աստուծո անողոք բարկությունը մի քանի վայրկյանում վոչնչացրել և մոխիր էր դարձրել ամեն ինչ, թեև դեռ կանգնած էին հզոր պարիսպները, թեև դեռ դիշերային խավարի մեջ աչքը կերպով նշմարվում էին սպառնալի աշտարակները: Բայց մարդիկ չէր տեսնում, և այդ էր, որ նրա անգութ սիրտը լցնում էր անսահման բավականությամբ:

Զկորցնելով Թազուհուն յուր հետախույզ տեսությունից, նա, միևնույն ժամանակ, ուշադրությամբ աչք էր ածում յուր շուրջը: Նրան հանդիպում էին դիակներ միայն: Ցեղ ամեն անգամ, յերբ այդ սառն և անշունչ մարմինները խոչընդոտ էին դառնում նրա ղեղուշ քայլերին, և յերբ խավարի մեջ մատներով շոշափում էր նրանց, մի առանձին գոհություն էր ղգում: Նա այնքան սպասեց, մինչև Թազուհին, ավարտելով յուր գործը, դիմեց դեպի արքայական ապարանքը: Այդ միջոցին նա սկսեց շրջել ամբողջ ամեն կողմերում, վորպեսզի լավ ծանոթանա նրա դրության հետ, վորը տակավին յուր համար յերկբայական էր: Մորին ուշադրությամբ հետազոտում էր մարտկոցները և դինվորանոցները. քննում էր զենքերի մեքենացները, և ամեն ինչ յուր տեղումն էր գտնում: Միայն վո՛չ դինվորներ կային, և վո՛չ այլ մարդիկ: Ի՞նչ յեղան, ուր գնացին, մինչև ամենքը մեռա՞ն,— այդ հարցերն էին պտտվում նրա խոհական գլխում, վոր ամբոխված էր մռայլ մտքերով, վորոնք նույնքան խավար էին, վորոնք նույնքան զարհուրելի էին, վորպես դիշերային ընդհանուր խավարը:

Ցերբ բոլորովին ստուգեց ամբողջ դատարկությունը, նա մոտեցավ արքայական ապարանքին: Ցերկար դեղերում էր նրա շուրջը, և յուր լսելիքներն բոլոր զորությամբ աշխատում էր լսելու, արդյոք չե՞ լսվում վորևե շշունչ ներսից: Բայց այն ուրախ, մշտածիծաղ ապարանքը լուռ

եր, լուռ եր մորթես մի խուլ և անշարժ դևրևդման։ Այդ սիրտ և կիրքնակության պալատը, այդ անուռ կերպերի և նվաղածության առաջը՝ յուր բոլոր հողևղվածք կյանքով ու սովորություններով՝ վաղուց ծանոթ եր նրան։ Նա գիտեր, թե որվա վո՛ր ժամում՝ ինչ եր կատարվում այնտեղ։ Նա գիտեր նրա ամենակալի դիշերները, ուր մինչև առավոտ դուռաններին հերթական սաղերդը և պարոնների տրուխյունը թնդեցնում էին ընդարձակ սրահները։ Իսկ այժմ ամեն ինչ մնած եր, ամեն ինչ նիրհում եր խորին, անմռունչ անշարժության մեջ։ Այդ անշարժությունը ավելի ծանր տպավորություն եր գործում տպարանքի թանձր մթնոլորտով, վոր ապացույց եր մարդու և բնակիչների բացակայության։ Եվ այդ ուրախացնում եր նրան։ Այդ տպարանքը սովոր եր ամբողջ դիշերը վառված լինել, բազմաթիվ ճրագների անշեջ պայծառության մեջ։ Իսկ այժմ վո՛չ մի սենյակ լուսավորված չեր, և վո՛չ մի լուսամուտից ճրագ՝ չեր երևում։ Մի սենյակից միայն նշմարվում եր աղոտ լույս, վորը մոտենալու տեղ եր։ Դա Թադուհու առանձնարանն եր։

Նա մի առանձին անհանգստությամբ վոտք դրեց դվխավոր դռան այտմե վրա, բայց տակավին չեր համարձակվում նորա մոտենալ։ Զգուշանում եր, դուցե տպարանքի բազմաթիվ դրանիկներից և վոստանիկներից վոմանք դեռ ևս մնացած լինեին։ Բայց միևնույն ժամանակ, նրան խրախուսում եր այն միտքը, վոր յերեն տպարանքում մարդիկ մնացած լինեին, ուրեմն ինչո՞ւ յեր Թադուհին այնպես միայնակ չէրում, կամ ինչո՞ւ յեր կատարում նա այն ծառայությունը, վոր յուր գործը չեր։ Նա յուր անվստահ քայլերը փոխեց և ներս մտավ։ Նա ներս մտավ, և խավուն անհայտացավ տպարանքի մթին ներքնոցքների մեջ...

Այդ միջոցին Շուշանիկը ու Համբիկը խոհանոցում զբաղված եյին. մեկը փնտրտում եր անուշ տպրանները, մաքրում եր, մյուսը բորբոքում եր կրակը, վոր շուտով խորովին։ Բայց նպատակը նրանց և այն յերեկո վորոշելին չորս տպրանքներ, վոր խիստ հազիվ անգամ եր պատահում։ Իրանք ևս չորս հոգուց ավել չեյին. Թադուհին, Վորմիզդուխտ որիորդը և այդ յերիկու նաժիշտներն եյին միայն մնացել բերդում։

— Այս դիշեր ճոխ սեղան կունենանք, —ուրախանալով ասաց Համբիկը։

— Եվեթե մի կասը հաց լիներ,— տխրությամբ նկատեց Շուշանիկը։

— Ա՛խ, վորքան ժամանակ է, վոր հացի յերես չենք տեսել...

Շուշանիկի բազմանքը նույնպես տխրություն պատճառեց ուրախ Համբիկին, վորը, յուր ընկերուհուն մխիթարելով, ասաց.

— Առավոտ վողորմած է, սիրելի քույրիկ, մենք արդեն ստիպել ենք առանց հացի՝ միայն մտել կերակրվել և առավոտ ամեն որ ուղարկում է մեզ համար դեղեցիկ պատրաստներ։

— Թագուհին նույնպես ստիպեց... այժմ խորոված վորսի միսը մեզ տխրեցնում է և ուտում, բայց Վորմիզդուխտ որիորդը դրվատեց...

— Նա եւ կսովորի...

Շուշանիկը կրկին ընկավ տարակուսանքների մեջ:

— Մինչեւ ի՞րը պետք է այսպես մնանք, Հասմիկ,— հարցրեց նա ցավալի ձայնով:— Ամենքը մեռա՞ն եւ հանգստացան: Մենք մխայն մեռցինք: Ցնթե մենք եւ մեռնեյինք, կազատվեյինք...

— Ինչո՛ւ մեռնեյինք,— վշտանալով պատասխանեց Հասմիկը:— Ցնթե մենք մեռնեյինք, ո՞վ պետք է ծառայեր Թագուհուն: Աստված մեզ Թողեց նրան ծառայելու համար:

— Դու չե՞ս վախենում, Հասմիկ,— խոսքը փոխեց մելամաղձոտ Շուշանիկը:

— Ինչի՞ց պետք է վախենամ:

— Ի՞նչպես ինչից: Ցնթե պարսիկները դիտենան, որ բերդում մարդ չե մնացել, և հանկարծ կոտրեն դռները ու ներս մտնեն:— Այն ժամանակ ի՞նչ կանես...

— Այն ժամանակ,— պատասխանեց Հասմիկը ծիծաղելով,— մենք մեր նետերով կկռվենք նրանց հետ և Թող չենք տա, որ մեզ մոտենան...

Շուշանիկը նույնպես սկսեց ծիծաղել, բայց յուր ընկերուհու պարզամիտ խրախճանքի վրա: Նա հասակով ավելի մեծ եր, քան վոչվնից Հասմիկը:

Մինչ խոհանոցում յերկու նաժիշտները այդ խորհրդածություններով մեջ եյին, Թագուհին վերադարձավ ապարանքը: Նա մտավ յուր առանձնասյանը, աշտանակի վրայից առեց մխակ ճրագը և խոհույն դուրս յեկավ: Հանդարտ, չափավոր քայլերով անցավ նա դահլիճ, խավարի մեջ ընկղմված, լուռ սրահները և մոտեցավ մի սենյակի դռան: Գրպանից հանեց բանալին, դուռը բաց արավ: Այդ գործողությունը թեև չափազանց դժուարությամբ կատարվեցավ, այնուամենայնիվ, ծանր դռան ճոնչյունը զարթեցրեց մի որվորդի, վոր Թախտի վրա պառկած եր:

— Ջո՛ւր եմ ուզում... ծարա՛վ եմ... յեղավ նրա առաջին խոսքերը, յերբ քնած աչքերը բաց անելով, տեսավ յուր մոտ Թագուհուն, ճրագը ձեռին: Այդ խոսքերը այնպիսի մի պարզությամբ արտասանեց նա, վորպես միամիտ յերեխան դիմում է սիրելի մորը, կամ մտերիմ ազգականին:

— Մինչեւ քեզ մոտ ջուր չե՞ն դրել,— հարցրեց Թագուհին մի այնպիսի կարեկցությամբ, վորի անկեղծ հնչյունները լսելացան նրա դիմով լի, քաղցր ձայնի մեջ:

— Շատ անգամ մոռանում են...

Թագուհին ճրագը ցած դրեց, շտապով դուրս վազեց, և մի քանի րոպեյից հետո կրկին ներս մտավ, ջրով լի արծաթյա Թասը ձեռին: Որվորդը չնորհակալությամբ առեց Թասը, չիջուց յուր ծարավը, ասելով.

— Բալական սա՛ռն է...

Այդ մանկահասակ աղջիկը Վորմիղդուխտ որվորդն եր— Շապուհ արքայի քույրը, հայոց Թագուհու դերին, իսկ Մերուժան Արծրունու հան-

դևթյալ հարնացուն: Նա սասն և յոթն տաբևկան հաղիվ կլիներ, բայց, մորանս արևելյան տաք կլիմեքի ծնունդ, վաղորոք հասունացել և կազմակերպվել եր յուր էքնադուքյան բոլոր կախարդիչ հրապուրանքով: Գեղեցկուքյան տասմածը, կարծես, նրա վրա թափել եր յուր բոլոր ճիզը՝ մահկանացուներից անմահ մի էյակ ստեղծագործելու: Նրա խոշոր աչքերի անսահման պայծառուքյունը միայն՝ բավական եր, վոր յուր մեջ ընկղմեր Մերուժան Արծրունու բոլոր խելքը, միտքը և հոգին: Նրա մեջ ա՛յն ասլճան քաղցրուքյուն և ա՛յն աստիճան մեղմ քնքշուքյուն կար, վոր հայոց Թագուհին, չնայելով վոր այնքան դառն ատելուքյուն ուներ՝ թե՛ դևոլե Շապուհը և թե՛ դևոլե ասհասարակ պարսից արքայական ազգասոհմը,— այնասմենայնիվ, վերջին որերում, վո՛չ միայն մայրական խնամք եր ասնում Շապուհի քրոջ—Վորմիղդուխտի վրա, այլ սկսել եր մինչև անգամ սիրել նրան: Վերահաս դժբախտուքյունները՝— սովը, ժանտախտը, ամրոցի ընդհանուր մահացուքյունը՝— մոռանալ տվին հայոց Թագուհուն այն անողորմ վոխակալուքյունը, վոր բորբոքում եր նրա մեջ դևոլե Շապուհի քնասնիքը: Այո՛, նա սկսեց սիրել Վորմիղդուխտին, նա սկսեց վախենալ յուր դևրիկն, վորի կյանքը և մահը յուր ձեռքումն եր: Այդ սիրո մեջ դառնում եր նա յուր հոգու մխիթարուքյունը, այն դժբախտ րոպևներում, վոր վերջին որերում վարում եր նա յուր ամրոցում: Վիճակների համանմանուքյունը առաջ եր բերել նրանց մեջ մի սեռակ փոխադարձ կարեկցուքյուն: Երկուքրդը, իրավ, դևրի էին, բայց Թագուհին մինչև դերուքյան կենքակից էր յուր պաշարյալ ամրոցի մեջ: Ամեն վայրկյան ապասում եր նրան մի նուչնալիսի վիճակ, դուցե ավելի դժնդակ, դուցե ավելի դաժանական, հնռավոր Պարսկասասանում...

Ձարակող ախտի մինոցում՝ բռնվեցավ և Նապելի որիորդը: Այդ որերում Թագուհին հանդասուքյուն չուներ: Ամրոցի դիշերներն լուսացնում եր նրա անկողնի մոտ: Ցերը պասսվեցավ, Թագուհին մխիթարվեցավ: Այնուհետև պահում եր նրան համարյա միսկանքի մեջ և թույլ չեր տալիս, վոր պարարանքից դուրս դա: Ջգուշանում եր, մի դուցե դրսի սարսափելի լուրերից աղդեցուքյունը կրկին վերադարձներ նրա հիվանդուքյունը: Որիորդը սասիկ վախենում եր մեռելներից. իսկ ամրոցի փողոցները դեռ լի եյին դիակներով:

Թագուհու մատուցած սառը ջուրը խմելուց հետո, բոլորովին սթափվեցավ նա քնից և, հանկարծ վեր թռչելով յուր տեղից, գրկեց նրա պարանոցը և յերկար րոպե չեր թողնում յուր գրկից, համբուրում եր, փայփայում եր և, միևնույն ժամանակ, լսելի չեր լինում նրա խոսք հևիհևանքը:

— Ի՞նչ և պատահել քեզ հետ, սիրելիս,— հարցրեց Թագուհին չվոթվելով:

— Ա՛խ, յեթե դիտենայիր, վո՛րքան լաց եմ յեղել... վո՛րքան լաց եմ յեղել... մրմնջաց նա լալագին ձայնով:

— Ինչո՞ւ եյիր լաց լինում, սիրելիս: Ի՞նչ ունեյիր լաց լինելու:

— Ցերազումս եյի լաց լինում... բայց հիմա ուրախ եմ... շատ ուրախ եմ... դու դարձյալ կաս... դու դարձյալ իմ մոտս ես...

Թադուհին հասկացավ, վոր սխուր յերազներ խոսվել եյին նրա զգայուն յերևակայությունը: Չամբուրեց և, սեղմելով յուր կուրծքին, նստացրեց յուր մոտ՝ բաղմոցի վրա, և ապա հարցրեց, թե ինչու յեր լաց լինում յերազում:

— Չեմ ասի... լեղուս չի բռնում, վոր ասեմ...

Ցերկար թախանձելուց հետո, պատմեց նա, թե ման եր գալիս ապարանքի բակում, տեսնում եր այնտեղ ընկած շատ մարդիկ՝ այր, կին, ծեր և յերեխա: Վոմանք մեռած եյին, վոմանք դեռ մահվան տաղնապի մեջ տանջվում եյին: Նրանց թվումն գտավ և Թադուհուն, ընկավ նրա դիակի վրա և լաց եր լինում, յերկար լաց եր լինում, բայց նա վոչինչ չեր դղրդում...

— Մեղ պատահած դժբախտությունների դառն ապալորության ներքո՝ այսպիսի սխուր յերազ ես տեսել, սիրելի Վորմիզդուխտ,— մխիթարեց նրան Թադուհին:— Մեծ և աստուծո դիտությունը, նա մեզ խնայեց մահվից, և կպահպանե այսուհետև: Հանդիստ կաց, սիրելի Վորմիզդուխտ, և սիրտդ մխշտ ուրախ պահիր:

Տալաժորությունները, իրավ, շատ ծանր եյին որխորդի քնքուշ սրտին: Բացի ամրոցի ընդհանուր մահացությունից, վորի սոսկալի աղետներին ականատես յեղավ,— նա ուներ յուր հետ սպասավորների և աղախինների մի սակավ բազմություն, վորոնք նույնպես ղոհ յեղան մահվան և նրանցից վոչ մեկը չմնաց: Այդ կորուստը ամոթիկ վշտացնում եր նրան և քնավ մոռանալ չեր կարողանում: Ինչ մեկ հաճախ տալիս եր նրանց անունները, և յերբ չեյին հայտնվում, սկսում եր լաց լինել: Այդ եր պատճառը, վոր վերջին որերում Թադուհին հրամայեց, վոր նրա անկողինը պատրաստեն յուր մոտ, յուր քնարանում, վորպեսզի այդպիսի դեպքերում հանգստացնե նրան:

— Հիմա գնանք, սիրելիս,— ասաց նրան Թադուհին, ձեռքիցը բռնելով և վեր բարձրացնելով:— Գնանք տեսնենք, Հասմիկը և Շուշանիկը մեզ համար ինչ են պատրաստել ուտելու:

Որխորդի արտասուքը այժմ ուրախության վոխվեցավ: Միծաղելով վազեց նա, խլեց ճրագը, վոր դրած եր պատուհանում և, առաջ ընկնելով, խնդրեց.

— Ճրագը յես կտանեմ, Թուլլ տուր, մայրիկ, վոր յես տանեմ: Դու ինձ վոչ մի դործ անել չես տալիս:

Վերջին որերում նա Թադուհուն «մայրիկ» եր կոչում: Թադուհին բարեսրտությամբ ժպտաց և Թուլլ տվեց, վոր ճրագը նա տանե:

Անցնելով մթին սրահների միջով, նրանք մտան սեղանատունը: Այստեղ յերկու նաժիշտները— Հասմիկը ու Շուշանիկը— արդեն պատրաստել եյին ընթրիքի սեղանը: Թանդադին սփռոցի վրա դրած եյին յերկու արծաթյա

պահներ, իսկ նրանց մեջ՝ յերեք խորոված աղավնիներ: Այլևս ուրիշ վո-չինչ չկար: Հայոց թագուհին և պարսից արքայադուստրը մոտեցան այդ աղքատիկ սեղանին և դոհունակությամբ նստեցին: Իսկ յերկու նաժիշ-ները կանդնած էին նրանց սպասում: Տեսնելով յերեք աղավնիները, թա-գուհին դարձավ դեպի նաժիշտները, հարցնելով.

— Այսոր քանի՞ հատ վորսացիք:

— Ձորս հատ,— շտապեց պատասխանել Համմիկը,— յերեքը՝ յես, մեկը՝ Շուշանիկը:

— Դու ամեն դարձում այդպես քաջ ես,— ժպտալով նկատեց թագու-հին:— Բայց ինչո՞ւ ինք այդպես անհավասար կերպով բաժանել. յերեքը բերել ես մեզ համար, մեկը միայն թողել ես ձեր յերկուսի համար:

— Մենք այդ մեկով միայն կրավականանանք,— դարձյալ պատասխա-նեց Համմիկը:— Եթե մեզ համար քիչ է մնում, այդ մեր մեղն է, վոր շատ չենք վորսացել:

— Վոչ, ինչ վոր ասում ես, պետք է հավասար բաժանել,— այդ ասելով, նա վեր առնց աղավնիներից մեկը, ավելց նրանց, իսկ յերկու-սը թողնց յուր և որիորդի համար, կրկնելով.— մենք չորս հոգի յենք, ասում չորս աղավնի յես ավել: Վերցնեք, դուք ևս ընթրեցեք:

Յերկու նաժիշտները հեռացան, թեև, ըստ սովորության, նրանք պետք է թագուհու սեղանի մոտ սպասելին այնքան ժամանակ, մինչև նա յուր ընթրիքը վերջացներ:

Վարմիդուհատը, վոր մի առանձին բավականությամբ լսում էր բարե-սիրտ թագուհու խոսքերը, մեջ մտավ և ժպտալով ասաց.

— Ձերդ վերակուրը հավասար ենք բաժանում, պետք է աշխատանքն էլ հավասար բաժանենք. մի որ մենք գնանք վորսի, մի որ Շուշանիկն ու Համմիկը: Այդպես հերթով լավ չի՞ լինի, մայրիկ:

— Լավ կլինի: Բայց դու վորսալ խանո՞ւմ ես:

— Ի՞նչպես չե: Եղուց հերթը մերն է, և դու կտեսնես իմ ձեռքի չնոր-քը: Տիղրոնում մեզ ժամանակ, յերբեմն յոդրայրս ինձ տանում էր յուր հետ վորսի, և ամեն անգամ յես դասագրիաձևոն չէի մնում: Մի որ յես նետահարեցի մի նապաստակ հենց փախչելու մեջտեղին: Ձերդ վերադարձանք տուն, յես առաջս յեղբորս դուխտանքը և մի դեղեցիկ մատանի:

— Ինձանից էլ կստանաս մի դեղեցիկ ընծա, յեթե եղուց շնորհքդ ցույց կտաս:

Որիորդը սկսեց յերեխայի նման ուրախանալ:

Սեղանի վրա դրած էր մի արծաթյա մեծ սրվակ լի գինով, իսկ նրա մոտ՝ յերկու վոսկյա բաժակներ: Ամբողջ ամեն պաշար ապահովելուց հե-տո՝ մնաց միայն գինին: Այդ ընտիր գինիները, Հայաստանի հատուկ տե-ղերից բերված, ահագին կարասներով թաղված էին գետնի մեջ, հոդի տակ: Նրանցից չատերը մի քանի տասնյակ տարիների հնություն ունեին:

Թագուհին լցրեց անուշահոտ գինին, բաժակներից մեկը դրեց յուր առ-

ջև, մյուսը որխորդի առջև: Նա փոքր առ փոքր խմում էր և անդադար ձայնով խոսում էր: Խոսում էր Տիլրոնից, խոսում էր յուր վարած կյանքի դանդաղ արկածներից պարսից արքունիքում: Ցավ վորքան խմում էր, այնքան հայկական կարմիր նեկտարը վառում էր մանուկ արյունը ուրախության կրակով, և այնքան նրա դունաթափ թշերը փայլում էին պայծառ դունով: Նա այն ատելության վոգևորվեցավ, վոր յերդեց մի հին արիական յերդ.

Բարձր ապառաժի ահռելի կուրծքին
Կպած էր ամրոց, ամրո՛ց ահագին.
Թուչունն այն տեղից՝ վախում էր անցնել,
Գաղանն այն կողմից՝ չտապում էր փախչել:

Մի լայն քամին էր, քամի՛ն համարձակ,
Վոր սլանում էր այն կողմից արագ,
Ցավ ամեն անգամ՝ տխո՛ւր, վողբալի՛,
Ցուր հետ բերում էր ձայներ սոսկալի:

Վո՛չ քար, վո՛չ աղյուս, վո՛չ վայտն անտառին,
Ջեր նյութը նորա ահեղ չինվածքին,
Ցավ վո՛չ վարպետի ճեռքը լմաստուն
Դրեց հմքերը նորա հաստատուն:

Լոկ դիակներից, արյամբ շաղախված,
Լոկ կմախքներից, կուչտերով դիզված,
Բաբելոնում էին պարիսպներ մթին,
Թա՛նձր պարիսպներ՝ մահացու բերդին:

Ցավ հրեշային բուրգ ու աշտարակ
Էին մարդկային կառափունք համակ,
Կառափունք իրար՝ վերա շարեշար՝
Ինսա քսամնելի կապելին կամար:

Ցորն էին թվով, յորն յեղբայրներ,
Ցորն էլ վիթխարի խոշ-խոշ հսկաներ,—
Ցորն պատուհաս այդ խուլ ամրոցում
Մնուցանում էր Աթմինն յուր ծոցում:

Ունելին նոքա մի քուր զեղանի,
Աչքերը սև-սև, լինքը նազանի,
Ջնջղրուքյամբ լի ծով էր նա անսահման,
Ցավ վողջ աշխարհում չուներ յուր նման:

Կասեր արեգին. «Ղուռ հանդիստ մնա՛,
Ցերեկս վայրը յերկրին լույս կտաց.
Կասեր լուսնյակին. «Այդ թո՛ղ ինձ համար՝
Վանել ղեշերի սևաթույր խավարը»:

Ցնվ ամեն կողմից՝ քաջ-քաջ հսկաները,
Ահարկու դևևը, մեծ վհուկևանները,
Գալիս եյին նորա սերը խնդրում
Ցնվ իրանց սիրտը նորան զոհ բերում:

Ցնվ ամեն անդամ՝ կույսը աննման
Տալիս եր նորանց այդպես պատասխան.
«Ցեղրայրներիս հետ մենամարտեցե՛ք,
Հաղթուեյան վառքով իմ սերն ստացեք»:

Ճոճվում եր նիզակ, կռվեյին քաջեր,
Տրուփում եր ասպար, վայրում եր սուսեր,
Ցնվ հարվածների չռինդը ուժգին
Դղրդում եր ոլը, թնդում եր վեհին:

Գոռում եր մարտը, բերում եր սարսուռ,
Փշրվում եր վահան, ղրահ ամրակուռ,
Մինչ ասպվածները, խոպան զարմացած,
Բարձր յեթնքից մնային հիացած:

Նայում եր կույսը, կո՛ւյսը աննման,
Ցնվ ուրախութեյան չկար չափ ահման,
Ցերբ յեղբայրները վառքով հաղթական
Թողնելին դաշտը՝ կռվի և արյան:

Այսպես ամեն մի այցելուն ղժրախտ,
Այսպես ամեն մի քաջ հերոս, անհաղթ,
Թողնում եր այնտեղ յուր ընկած մարմին,
Վոր նյութ եր տալիս ամբոցի չենքին:

Այսպես կառուցին հզոր պարիսպներ,
Մինչ ղենիթ հասցրին՝ բուրզ, աշտարակները,
Բայց կույսի սիրտը՝ միշտ մնաց անողոք,
Ցնվ սիրուն արժան՝ չեղավ ղեռ վոչ վոք:

Ցեվ դեռ խչխուճ ևր անդուքի թաղուհին
Այն դիակառույց՝ արյունոտ բևրդին,
Դեռ պահանջում, ևր զոհևր նորանոր,
Ջոհև՛ր սոսկալի, զոհև՛ր բյուրավոր:

Անցան տարինևր, անցան և դարևր,
Ցևրբ հայտնվեցան յոթն հսկաներ.
Ցոթն արքայի եյին քանդ վորդիք,
Մինը քան զմյուս՝— չքնաղ, դեղեցիկ:

Թաղուհին տեսավ, սիրտը թուլացավ...
Այն քարե սիրտը՝ մաշվեց... հալվեցավ...
Վո՞րին ընտրել: Վո՞ր քաջ դևղանին:—
Թողեց վոր մարտը վճռե աղետանին:

Սկավեց մարտը: Ցեղրայրնևր յոթունք
Ունեն իրանց դեմ՝ յոթն արքայազունք,—
Ուժևր հավասար, ուժև՛ր սոսկալի
Մարտնչում եյին հուսով լի ու լի:

Ցևրկարևց մարտը: Կողմևրն աննկուն
Դեռ կռվում եյին՝ յեռանդով, սոկուն,
Ցեվ անդուքի բախտը՝ դեռ վոչ մի կողմին,
Ջևր տալիս կանաչ՝ հաղթուքյան դափնին:

Ցոթն արքայազնից՝ վևց հոգի ընկան,
Վևց պայծառ արև ի սուդ պատեցան.
Մնաց մնկը միայն՝ հուժկու, քաջալանջ,
Կռիվ ևր մղում, կռի՛վ աննահանջ:

Ամրոցի կույսը այլ չհամբերևց,
Ինչպարի պես՝ բարձրից ցած վազևց,
Ցեվ յուր մերկ կուրծքը, նրանց դեմ տալով,
Նա յեղբայրնևրին այսպես բարբառևց.

«Վայել չե՛ յոթնին մեկի հետ կռվել,
Ցեվ դենք ու դրահ արատով պատել.
Դա՛ յե իմ ըղձալին,— այս քաջ ախոյան,
Իմ սևրը պատկ՝ դորա հաղթուքյանդ:

Իսկ յեղբայրները գինքը ցած ղրկեն,
Քաջի ճակատին համբուր մատուցին.
«Քե՛զ լինի, ասացին, այդ չքնաղ կույսը,
Վոր ահեղերքի յեր զարդն ու լույսը»...

Որիորդի քաղցր, լիահնչյուն ձայնը մոտ կոչեց ապարանքում թաղնված դևին, վորը դուրս գալով յուր դարանից, կամաց-կամաց մերձեցավ այն աննյակին, վորանդից լսվում եր սքանչելի յերգը: Նրա վախուկ, կարմըրաձուլ մուճակները ամենևին ձայն չեյին հանում, խնկ տիրող մթությունը նպաստում եր նրան աննկատելի լինել: Նա ուշադրությամբ ականջ եր դնում և, միևնույն ժամանակ, չարամտությամբ խնդում եր...

Բայց որիորդի յերգը թաղուհու վրա բոլորովին այլ տպավորություն գործեց: Նա այն ասելիքան դղացվեցավ, վոր ծածկեց յուր արտասուքը, վորպեսզի յերդիչը չնկատե: Եերկի խմասը, բովանդակությունը՝ թե՛ յուր և թե՛ այդ անբախտ աղջկա վիճակի հետ՝ մի զարմանալի համանմանություն ուներ, թեև նա յերգից բոլորովին անգիտակցաբար: Ցեղ ինքը որիորդը տպրում եր այդ բերդում, կատարյալ անգիտակցության մեջ: Նա չդիտեր, վոր ինքն եր այն յերկպատակության խնձորը, վորի գրավելու համար այնքան մեծ կորուստներ յեղան: Արատեղերքը լցվեցավ դիակներով: Ցեղ վորպես յերդի մեջ նկարագրված ամրոցը, նույնպես և Արատեղերքը, ներկայացնում եր հաղարավոր զոհերի մի հսկայական գերեզման: Հայտատանը վողողվեցավ արյունով, և դեռ ևս չարունակվում եր կոտորածը, և պիտի տևեր դուցե շատ յերկար... Նա չդիտեր, թե այդ բոլորի խակական շարժառիթը ինքն եր և Մերուժանի խելագար սիրահարությունը, վորի բավականությունը պետք և արյունով և զոհերով սատցվեր... Նա չդիտեր և այն, թե ինքն ի՞նչ նպատակով եր պահված այդ բերդում: Նա հիշում եր այնքանը միայն, թե ինքը դանվում եր յուր յեղբոր կանանոցում, թաղերիի մոտ թշնամին հարձակվեցավ յեղբոր բանակի վրա, այնտեղ կռիվներ յեղան, մարդիկ սպանվեցան, և իրան բերեցին այդ բերդը: Բերդի բարեսիրտ թաղուհին առեց նրան յուր խնամակալության ներքո, պահում եր յուր զավակի պես: Նա միևչև անդամ չդիտեր, թե ո՛վ եր այժմ պաշարել այդ բերդը: Նա կարծում եր, թե դարձյալ միևնույն մարդիկն եյին, վոր հարձակվեցան յուր յեղբոր բանակի վրա: Այդ բոլոր անհասկացողությունները առաջ եյին յկել նրանից, վոր թաղուհին միչև այն որ միշտ աշխատել եր դասն խակության ծածկել նրանից, վորպեսզի նրա քնքուշ սրտին ցավեր չպատճառեր:

Մերուժանի մասին դաղտիար անգամ չուներ նա, նրան յերբեք չեր տեսել, այլ լսել եր անունը միայն: Նրան չեյին ասել, թե ինքը Մերուժանի նշանածն է և մի որ պետք է նրա կինը լինի: Նա չդիտեր, այո՛, վոր այդ բոլոր տարապանքները յուր պատճառով են կատարվում, և թե

բերդի անգութ պաշարողը յուր ապագա փեսան է՝— նույն իսկ Մերուժանը։

Պարսից արքունիքում նա եյակ չէր, այլ իր եր,— այն զեղեցիկ և քանգաղեղն իրերից մեկը, վորոնցով լի յեր արքայական դանձարանը։ Ցեվ ինչպես այդ իրեղեններով պարսից արքան ասվորություն ուներ վարձատրել յուր ամուսինների ծառայությունները, նույնպես և յուր քրոջը տալով, խոստացել եր նա վարձատրել Մերուժանի դժնդակ ծառայությունները։ Այդ կլիմանար որիորդը այն ժամանակ միայն, յերբ նրա ձեռքից կբռնեյին և կհանձնեյին Մերուժանին։

Թագուհին մինչև այն որ չեր խոսացել որիորդի հետ Մերուժանի մասին, և խոսալու ցանկություն ևս չեր ունեցել։ Բայց լսելով նրա յերդը, հարևանցի կերպով հարցրեց.

— Գիտե՞ս, Վորմիղդուխտ, ո՛վ է պաշարել մեր բերդը։

— Ձեմ իմանում,— պատասխանեց նա։

— Ցեթե թշնամին ասեր՝ տալիք ինձ Վորմիղդուխտին, յես կթողնեմ և կհեռանամ»,— դու կընայի՞ր։

— Կընայի։

— Ինչու կընայիր։

— Վոր այդքան մարդիկ չմեռնեյին, վոր հաց լիներ՝ դրանք ուտեյին, և վորպեսզի դու այդքան նեղություն չկրեյիր,— ահա՛ ինչու համար կընայի։

— Ուրեմն, դու նո՞ւյնպես կվարվեյիր, ինչպես վարվեց այն ամրոցի աղջիկը, վոր իր յերդը յերդեցիր։

— Վոչ, յես այնպես չեյի վարվի։ Նա անսիրտ աղջիկ եր. նա յուր զեղեցկության համար զոհեր եր պահանջում, և վորքան բազմանում եր զոհերի թիվը, այնքան այդ անգթությունը նրան զվարճություն եր պատճառում։ Նա յուր պաշտողների դիակներից և գազաթներից յուր համար ամրոց հիմնեց։ Բայց յես այդպես չեյի անի, յես թուլ չեյի տա, վոր մի կաթիլ անգամ արյուն թանկվեր, այլ իսկույն դուրս կղայի թշնամու հանդեպ, կուրծքս կզարճանեյի դեպի նրա նետերը և կասեյի. «Ահա՛ յես, յեթե ինձ համար և կռիվը, թո՛ղ դադարի նա»։ Ցես կզոհեյի ինձ, բայց կփրկեյի այդ բերդը։

Նա խոսում եր յուր հոգու բոլոր անկեղծությամբ։ Զոհաբերության այդ դաղափարը կազմվել եր նրա մեջ վո՛չ թե ընդհանուր մարդասիրական զգացմունքից, այլ կրթության այն պայմաններից, վորոնցով, սկսյալ մանկությունից, չրջապատված եր յեղել նա։ Նրա պատանի դայակները լցրել եյին նրա գլուխը հարյուրավոր վեպերով ու հեքիաթներով, վորոնցով այնքան հարուստ եյին պարթևական ավանդությունները, և վորոնք ներշնչել եյին նրա մեջ մի տեսակ հերոսական վոգի, և վառել եյին նրա յերևակայությունը անձնազոհության զգացմունքներով։

Թագուհին, լսելով որիորդի վոգևորությամբ լի խոսքերը, խիստ ախուր ձայնով նկատեց.

— Բայց այդ բոլորը, սիրելի Վորմիղդուխա, հակառակ քո բոլոր ցանկությանն, կատարվեցան արդեն...

Որիորդը դունաթափվեցավ:

— Ի՞նչը կատարվեցավ,— հարցրեց նա չվոթիվելով:

— Այն զոհերը... այն արյունը... այն կոտորածը...

— Ի՞մ պատճառով...

— Այո՛, քո պատճառով...

Փոքր ևր մնում, վոր ուշաթափ լիներ նա: Թագուհին դրկեց նրան և, յուր կուրծքին սեղմելով, ասաց.

— Հանդստացի՛ր, սիրելի Վորմիղդուխա, քո պատճառով կատարված դժբախտությունների մեջ դու չես հանցավորը: Դրանք կատարվեցան առանց քո կամքի և հոժարության: Լսի՛ր, յես կպատմեմ քեզ ախուր երազության:

Թագուհին պատմեց որիորդին դործի խևդությունը, թե նա գերի յև այդ բերդում և պահված և երբև պատանդ: Հասկացրեց, թե բերդի պաշտպանը Մերուժան Արծրունին և, և պաշարել և՝ նրան ազատելու համար: Հասկացրեց և այն, թե ինքը՝ որիորդը՝ Մերուժանի նշանածն և, և պատրաստ պետք և նրա կինը լինել: Բացատրեց, թե ի՛նչ քաղաքական հանդամանքներից առաջ յեկավ նրա ոտարոտի հարսնախոսությունը: Նկարագրեց որիորդի յեղբոր, Շապուհ արքայի, ներկա հարաբերությունները հայոց հետ, նրա վերած պատերազմները նպատակը, թե վո՛րպես ցանկանում և նա հայոց կրոնը և թագավորությունը վոչնչացնել և Հայաստանը պարսկական մի նահանգ դարձնել և այլն: Այդ բոլորը համառոտ կերպով հաղորդելուց հետո, Թագուհին վերջացրեց յուր պատմությունը այս խոսքերով.

— Ահա, սիրելի Վորմիղդուխա, քո յեղբոր այդ խիստ նպատակը, այնինքն հայոց կրոնի և թագավորության վոչնչացնելու աշխատությունը՝ հանձն և առել Մերուժան Արծրունին, և քո յեղբայրը, երբև մի բարձր պարգևատրություն, խոստացել և քեզ կնության առել Մերուժանին:

— Այդ յերբե՛ք չեն կարող լինել,— ձայն տվեց որիորդը և նրա խոշոր աչքերը վառվեցան բարկության կրակով:— Ցնա մի այդպիսի չարագործի կինը չեմ լինի:

— Ինչո՞ւ, սիրելի Վորմիղդուխա, յեթե Մերուժանին կհաջողվի վոչնչացնել հայոց թագավորությունը, նա ինքը հայոց թագավոր կդառնա, իսկ դու— հայոց թագուհի:

Որիորդը սկսեց ծիծաղել:

— Ի՞նչ փոխարեն,— հարցրեց նա, շարունակելով յուր ծիծաղը,— յես պետք և հավիտենական քո թագը... Այո՛, դա լավ յերախտագիտություն կլիներ իմ կողմից այն բոլոր բարությունների համար, վոր դու արել

նա ինձ... Բայց հայերը, կարծեմ, այնքան ծուլ չեն, որ հեշտությամբ տան մեզ իրանց թագավորի և թագուհու թագը...

Նախաճաշկում թաղնված դեռը յուր լսելիքը ավելի մոտեցրեց դռանը։

Թագուհին հարցրեց.

— Ձի՞ որ դու ասացիր, որ յեթե դիտենաս՝ կռիվը և պատերազմը քո համար է, դու քեզ կճգնես թշնամու դիրքը։ Այժմ ահա՛ հասկացար, որ Մերուժանը քո պատճառով է պաշարել այդ բերդը։

— Այո՛, յես ինձ կճգնեյի թշնամու դիրքը կռվի և պատերազմի սկզբում, յերբ դեռ վոչ մի արյուն չեր թափվել, և յերբ կդիտենայի, որ ինձանով ամեն ինչ կվերջանար։ Բայց այժմ շատ ուշ է... դառն յեղերությունները կատարվեցան... և մենք այժմ ապրում ենք դիակների կուրտի վրա...

Թագուհին դարձյալ դիրքեց նրան և սեղմեց յուր բորբոքված կուրծքի վրա։ Նրա հարցուփորձը այն նպատակով չեր, որ համոզե որիորդին կատարելու Մերուժանի բաղձանքները, այլ ցանկանում եր ավելի լավ ծանոթանալ նրա հոգու և սրտի զեղեցիկ հատկություններին հետ, որոնք այնքան մխիթարում էին նրան։

— Եւթե ա՛յդ է Մերուժանի ցանկությունը,— շարունակեց որիորդը,— յես կատե՛մ նրան, թո՛ղ բոլոր բարի և չար աստվածները վկա լինեն, որ հավիտյան կատե՛մ նրան։ Ինձ վուշտ չէ, որ իմ յեղբայրը խոստացել է ինձ կնության տալ նրան, բայց յես ինձ կպատանեմ, և մի այդպիսի անպիտանի կինը չեմ լինի։

— Ինչո՞ւ չես լինի։

— Նրա համար, յեթե նա լավ մարդ լիներ, յուր հայրենիքին, յուր թագավորին և քե՛զ, սիրելի մայրիկ, այդքան վատություն չեր անի։

— Բայց նա սիրում է քեզ, և այդ բոլորն արել է քո սիրո համար։ Նա ցանկանում է, որ դու անպատճառ հայոց թագուհի դառնաս, իսկ ինքը՝ հայոց թագավոր...

Այդ խոսքերի միջոցին որիորդի մեջ կատարվեցավ մի զարմանալի փոփոխություն. նա վեր թռավ տեղից և, դրկելով թագուհու պարանոցը, յուր բոցավառ շրթունքներով համբուրում եր նրան և անդադար հարցնում եր.

— Դու ինձ այն ասա՛, սիրելի մայրիկ, ի՞նչ յեղավ Մուշեղը... ո՞ւր դնաց նա... ա՛խ, որքան լավ մարդ եր նա... վո՛րքան աղնիվ եր, վո՛րքան բարի յեր... Եւթե ինձ բերում եր այստեղ, ճանապարհին վո՛րքան ցանկանում էի խոսել նրա հետ... բայց նա դռնե մի անգամ չխոսեց ինձ հետ...

Նրա հարցմունքները սպարապետի մասին էին։

— Ասա՛, սիրելի մայրիկ, ո՛ւր դնաց նա։

— Գնաց Բյուզանդիա,— պատասխանեց թագուհին, հազիվ կարողանալով ազատել իրան նրա բորբոքված գրկից։

— Շո՞ւտ կդա։

— Ամեն րոպե սպասում եմ նրան։

— Ա՛խ, ինչքան հուզախառնում կես, կերբ մի անգամ ևս կտեսնեմ նրան...

Որիորդի մանուկ սրտում թաղնված եր մի կայծ, վոր հանկարծ սկսենց վառվիլ։ Թադուհին հասկացավ այդ և ժպտալով հարցրեց.

— Դու, կերևի, սիրում եյիր նրան, վորմիզդուխտ, ուղիղն ասա՛, սիրո՞ւմ եյիր։

— Չեմ թաղցնում, սիրում եյի... այժմ ևս սիրում եմ .. կես կցանկանայի նրա կինը լինել... ա՛խ, վո՛րքան ուրախ, վո՛րքան բախտավոր կլինեյի կես... Ցերբ նա այնպես մեծահոգությամբ վերադարձրեց իմ կեղծր կանանոցը Տիլրոն, այն ժամանակ կես հասկացա, վոր աշխարհի բոլոր լավ տղամարդերի մեջ նրա նմանը չկա... Հենց այն ժամանակ իմ սիրտը սիրեց նրան...

Նախասենյակում թաղնված դևը, լսելով վերջին խոսքերը, մի անսովոր շարժում զգեցնց, բայց դարձյալ մնաց յուր տեղում, և դռան վրա կանգնից անթարթ աչքերով նայում եր կերկու խոսակիցների վրա։ Որիորդը հարցրեց.

— Ինչո՞ւ դինաց սպարապետը Բյուդանդիա։

— Գնաց վորդուս բերելու...

— Ուրեմն նա կդա քո վորդու հետ, և մեզ կազատե՞ն չար Մերուժանի պաշարումից։

— Ցես այդ մասին մեծ հույս ունեմ...

Որիորդը ուրախությունից այժմ ինքը լցրեց վոսկյա բաժակները, մեկը առաջարկեց Թադուհուն, իսկ մյուսը ինքը միանգամից խմեց։ Գինու ազդեցությունը մի կողմից, վառված զգացմունքները մյուս կողմից, դրել եյին նրան մի տեսակ հուզմունքային վիճակության մեջ, և նա անդադար կրկնում եր միևնույն ցանկությունները, թե սպարապետի գալուց հետո, ինչ պիտի անե ինքը, ինչպես պետք է հայտնե յուր սերը սպարապետին, կամ ինչպես կերկուսը միասին պետք է պատժեն չար Մերուժանին» և այլն։ Թադուհին լսում եր և բարեսրտությամբ ժպտում եր։

Որիորդի հուզված վիճակությունը այն աստիճան դրաղեցրել եր Թադուհուն, վոր նա սմենևին չեր նկատել, թե դիշերվա մեծ մասը արդեն անցել եր։ Բայց նրա վոգևորությունը վոչ ում վոչ մեղմացավ, ինչպես մի աստղիկ լուսնած նվագարան, վորի քաղցր հնչյունները հեռուհեռու սկսում են թուլանալ։ Քունը մի կողմից, գինու ազդեցությունը մյուս կողմից, լցրել եյին նրա խոշոր աչքերը մի անուրժելի խումաստությամբ, վոր աստանձին հրապուրանք եր տալիս սիրուն դեմքին։ Գեղեցիկ գլուխը արդեն որորվում եր, և վերջին խոսքերը կիսատուր եյին, և ըստ մեծի մասին անհասկանալի։ Թադուհին բռնեց նրա ձեռքից, տարավ յուր քնարանը, և

պառկեցրեց անկողնի մեջ: Ցերկար նստած եր նրա մոտ, մինչև քունը բռ-
լորովին տարավ: Բայց մերթ ընդ մերթ նրա մարմնի նման կարմիր
շրթունքները արտասանում էին այդ խոսքերը. «ա՛խ, վո՛րքան սիրեմ եր
նա... ա՛խ, վո՛րքան սիրում էի նրանց...

Որխորդի ննջելուց հետո, Թադուհին կրկին վերադարձավ առաջին սե-
նյակը: Այս դիշեր, ինչպես ամեն դիշեր, նրա քունը չեր տանում: Մի քա-
նի անդամ լուռ անցավ սենյակի միջով, հետո մոտեցավ բաց լուսամուտին,
կանգնեց նրա հանդիպ: Նայում եր դեպի խորին, մահահրավեր լուսթյու-
նը, նայում եր դեպի մթին, թանձրամած խավարը: Վոչի՛նչ չեր կրկնում,
վոչի՛նչ չեր լսում: Ամեն ինչ նիրհում եր ծանր, հավիտենական անշար-
ժության մեջ: Միայն յերկինքը ցույց եր տալիս վոքր ի շատե կենդանու-
թյան նշույլ: Աստղերը վառվում էին: Նրա անթարթ աչքերը դարձան
դեպի այդ միլիոնավոր արծաթափայլ թծերը: Ցերկար նայում եր: Ի՞նչ
եր վորոնում նրանց մեջ,— ինքն էլ չդիտեր: Բայց նայում եր: Ահա՛,
հորիզոնը կամարաձև դծելով, անցավ մի չողչողուն ցոլացմունք: Մի աստղ
ընկավ... մի կյանք ևս խավարեց...

Նա հեռացավ լուսամուտից, մոտեցավ բազմոցին, նստեց նրա վրա:
Ձրագի թախծալի լույսը, ընկնելով դեղնցիկ գեմքի վրա, յերևան եր հա-
նում նրա տխուր գծերը: Վո՛րքան մաշվել եր այդ բազմահոգ դեմքը,
վո՛րքան դունաթափվել եր: Նրա մեջ չեր յերևում վո՛չ նախկին վիտա-
լանձ հպարտությունը, և վոչ նրա անողոք խստասրտությունը: Ցերևում
եր մխայն՝ մի մեղմ հեղություն, վոր արտահայտություն եր խոնարհյալ
սրտի: կարծես թե, նա հաշտված լիներ հանգամանքների դաժանության
հետ: կարծես թե, նա ընտելացած լիներ յուր անմխիթար վիճակի դաժա-
նության հետ: Ի՞նչ տանջանքներ չկրեց այդ տառապյալ կինը վերջին ո-
րերում, ի՞նչ թշվառություններ ականատես չեղավ նա: Մի ուրիշը նրա
տեղում՝ վաղուց արդեն բոլորովին հալված և հյուծված կլիներ: Բայց
նա տակավին պահպանել եր յուր հոգու զորությունը, վոր ավելի ամրա-
նում եր այն չափ հավատով, վոր ուներ նա դեպի նախախնամության ան-
սահման զթությունը:

Նա նստած եր յուր դաստրկ մենարանում, բայց նրա տխուր մտա-
ծությունները հածում էին յերբեմն դեպի արևելք, յերբեմն դեպի արևմ-
տուք: Այնտեղ, արևելքում, Անուշ բերդի մթին նկուղների մեջ, աքսո-
րված եր Թադավոր-մայրինը: Այնտեղ, արևմտաքում, բյուզանդական պա-
լատի սպանիչ վիտիկության մեջ, պահված եր Թադաժառանգ վորդին:
Ցերկուսն էլ ոտարության մեջ, յերկուսն էլ դժբախտության մեջ: Իսկ
ի՞նքը:— Ինքը նույնպես բանտարկված եր յուր անասելի ամրոցում, վոր
այժմ յուր դերեզմանն եր դարձել...

Սպասում եր վորդուն: Բայց չեկավ վորդին, ուշացավ վորդին: Վա-
ղուց եր, վոչինչ լուր չուներ Բյուզանդիայից: Ի՞նչ եր կատարվում այն-
տեղ, ի՞նչ եր վորդու համեցության պատճառը,— այդ մասին վոչինչ չգի-

տեր: Մինն թշնամին այնպես անխղճորեն չղճայով չրջապատել էր յուր բերդը, որ ոչ ոքին թույլ չէին տալիս մտանել, որ դուռն մի համբավ բերեր: Ի՞նչ էին չինում յուր նախարարները, ինչո՞ւ ոգնության չէին հասնում, որ փրկեն թշնամուն, որ խորտակեն պաշարման անխղճությունը: Եվրևի, նրանք մտածում էին, թե բերդում դեռ ևս այնքան ուժ կա, որ կարող է առանց դրսի ոգնության պաշտպանվիլ: Եվրևի, նրանք չգիտեին, թե ի՞նչ դժբախտություններ էին պատահել բերդում:—

Եվ իրավ չգիտեին:

Այդ մտածությունների մեջ կրկին վեր կացավ նա, սկսեց անցուդարձ անել դատարկ սենյակում: Այդ առաջին դիպվածն էր, որ անմատոյցած ապարանքի դատարկությունը, մի լայնարձակ վիշապի նման, սարսուռ բերավ բաց արած, սպառնում էր կլանել նրան: Մի առանձին սոսկումով նայում էր յուր շուրջը, և չէր համարձակվում դրսից բարձրացնել: Նրան այնպես էր թվում, որ բերդի փողոցներում ընկած հարյուրավոր դիակների ուրվականները պատվում էին յուր հորս կողմում, մրմռվում էին, քրթմնջում էին, և դառն անեծքներ էին թափում յուր վրա... Սարսափելով բռնեց աչքերը և հապիղ-հապ կարողացավ մոտենալ բալկոնին, և յուր վատասիրտ մարմինը թողեց նրա վրա: Ցերկար, մի սրտառուչ խռովության մեջ, տանջվում էր նա: Ինքը հանդիստ չէր: Ցնվ վո՛րքան մտաբերում էր յուր խնդացի և հեռատես սպարապետի նախազուշակությունները, որ խոսեց նա յուր ֆյոդրանդիա դնալուց առաջ, — այնքան ավելի խղճահարվում էր նա, որպես մի թշվառ հանցավոր, որ յուր համառությամբ պատճառ դարձավ այնքան չատ դժերի...

Նա յերկու ձեռքով բռնեց աչքերը, ընկավ բալկոնի վրա: Ցերկար չկրավ արտասուքը թանձում էր նրա տյտերը, յերկար անազան սպասավության հրամկը սպրում էր նրա սիրտը:

Այդ մինոցին դուռը կամաց բացվեցավ, և նախասենյակում թաղնված դևը ներս մտավ: Ինսա դուռն, սպառնական հայացք ձգելով տասպյալ հինոջ վրա անցավ նա դեպի սենյակի մի անկյունը, և ծածկվեցավ մահյլի մեջ: Այդտեղից նայում էր, և նրա թույլ չրթունքները բարախում էին ներքին ուրախությունից: Ինչ դրության մեջ էր դտնում այն հպարտ, մնծամիտ հինոջը, որի համար յերկինք հող և արտասուք չկար: Ինչ վիճակի մեջ էր դտնում այն վհհանձն, փառասեր դշխոյին, որ սովոր էր մի՛ միայն հայոց նախարարներին, այլ և թագավոր-ամուսնին յուր լեզվի աղդեցության ներքո պահել: Այժմ լքված, հուսահատված, ընկած էր նա՝ յուր շքեղ ապարանքի դատարկության մեջ, չրջապատված վշտերով ու տառապանքներով, և դուրսի ամեն պաշտպանությունից...

«Այդ դրությունը յերկար շարունակվել չէ կարող... ասաց նա, դլուխը վեր բարձրացնելով, և արտասվալի աչքերը սրբելով:— Վաղ թե ուշ թշնամին կհասկանա իմ ամրոցի դատարկությունը... Այն ժամանակ Մեծության վայրագությունը կանցնի ամեն չափից... Ես տանջանքներից

յերկյուղ չունեմ... Ցնա յերկյուղ չունեմ և մահից... Բայց ինձ հետ կմնանի մի մեծ գործ, որի համար այնքան աշխատեցի...

Նրա զորեղ ձայնը թուլացավ, դեղեցիկ դլուխը խոնարհեցրեց և, յերկու ձեռքերը փակելով, մի քանի րոպե մնաց լուռ ու անշարժ կանդնած եր, և վոխակալության մեջ: Ապա նորից թաղնված դևը դեռ անշարժ կանդնած եր, և վոխակալությամբ յի աչքերով նայում եր նրա վրա:

«Ցերբ առաջին անդամ,— չարունակեց նա,— Շապուհ արքան իմ ամուսնին խաբկությամբ հրավիրեց Տիղրոն, և պատվով պահում եր յուր մոտ իբրև հյուր,— հետո հրավիրեց և ինձ: Բայց յես, հասկանալով նենդավոր պարսկի չար դիտավորությունը, մերժեցի նրա հրավերը և չդնացի: Ցնա մտածեցի, յերթե նա իմ ամուսնին արտևելյու լինի Տիղրոնում, դոնե յես մնամ և պաշտպանեմ անտեր յերկիրը: Իմ նախատեսության մեջ՝ չսխալվեցա յես: Նա իմ ամուսնին աքսորեց Մուժաստանի խորքերում, իսկ ինձ յուր ձեռքը ձդելու համար՝ ուղարկեց Մերուժան Արծրունուն: Ատված ոդնեց ինձ, և յես կարողացա քաջությամբ պատերազմել ընտանի թշնամու հետ: Իսկ ա՞յժմ:— Այժմ ինձ չղթաներով կտանեն Շապուհի մոտ, և անիրավ պարսիկը յուր վրեժխնդրության բոլոր թունը կթափի իմ վրա...

Նա դարձյալ լուեց, դարձյալ անմխիթար վշտերը պատեցին նրան:

«Այդ իմ հոդը չե... Թո՛ղ յես կորչի՛մ, Թո՛ղ յես վոչնչանա՛մ, բայց Հայաստանը մնա... դոչեց նա վողբալի ձայնով:— Բայց յես տեսնում եմ հայրենիքի անդարձ կորուստը... Իմ աչքի առջևն և նրա ապագան... Ա՛խ, դոնե մի կողմից ոդնություն լիներ, դոնե չո՛ւտ հասներ վորդիս...

— Այդ մի՛ հուսար... սակերի միջից լսելի յեղավ թաղնված դևի ձայնը:

Թագուհին սոսկալով դլուխը բարձրացրեց, նայեց յուր շուրջը: Անակընկալ ձայնը սաստիկ խռովության մեջ դրեց նրան, մի չարագուշակ ձայն, վոր, կարծես, յերկնքից լսվեցավ: Ցերկար նրա շվարյալ աչքերը հածում եյին սենյակի շուրջը, բայց վոչինչ չեր տեսնում: Սկսեց յերկչել: Փորձեց կանչել նաժիշտներին, բայց ձայնը չեր հնազանդվում նրան:

— Այդ ո՞վ է... ո՞վ կա այստեղ... վերջապես հարցրեց նա:

Գիշերային այցելուն դուրս յեկավ յուր դարանից և լուռ կանդնեց նրա առջև: Թագուհին նայեց նրա վրա և ամբողջ մարմնով դողաց: Նրան այնպես եր թվում, վոր տեսածը յերազ է, կամ չար աստուածներից մեկը՝ այդ ահարկու մարդու կերպարանքով՝ ներկայանում է նրան: Բայց բարկությունը խլուրն վարատեց նրա յերկչությունը, յերբ ճանաչեց նրան:

— Այդ դո՞ւ յես, Դղակ,— հարցրեց նրանից:

— Այո՛, յես եմ, տիկին,— պատասխանեց նա, ավելի մոտենալով:

— Վո՞րտեղից յեկար... ինչո՞ւ յեկար... դոչեց նա զայրացած ձայնով:

— Ամբողջ բոլոր դաղտնիք անցքերը ինձ հայտնի չեն, տիկին,— պատասխանեց այցելուն անվրդով կերպով:— Բայց ես ինչո՛ւ համար կիսա մի փոքր համբերություն ունենիր, տիկին, կես խնդուքն կասեմ քեզ:

— Հնացի՛ր այստեղից: Ես միշտ առելով առում եմ քեզ, և ո՛ր դարշելի կերևույթ տեսնելու ժամանակ, միշտ ղղվելով ղղվում եմ քեզանից, իսկ այժմ—ավելի ևս...

Այցելուն սկսաց արհամարհանքով ծիծաղել:

— Հնացի՛ր. առում եմ քեզ, կերթե վազ...

Թաղուհու ղայրացած աչքերը դարձան դեպի յուր շուրջը:

— Ի՞նչ ես վտռռնում, տիկին, կերևի, մտածում ես կանչել ո՛ր ապատաղինյալ վտռռանիկների բազմությունը... Ցերևի, կամենում ես հանչել ո՛ր արյունախում դահիճների խումբերը... Նրանք չկան այժմ... Ես նրանց դիակները տեսա... Իսկ ո՛ր կերևու նաժիշտները, տիկին, պատված են հից անկյունում...

— Լի՛րբ, դու կեկար ծաղրելո՞ւ իմ դժբախտությունը...

— Վազ, տիկին, ինձ ասելած ուղարկեց քեզ մոտ...

— Հնացի՛ր, առում եմ քեզ...

— Մի՛ վրդովվիր, տիկին, կես խնդուքն կդնամ...

Նրա առնությունը ավելի վերամբարձական եր, քան Թե հանդգնությունը:

Այդ մարդը Հայր-Մարդպետն եր,— Աբշակ Թաղավորի խոշոր ավազներից մեկը, որ մշացնում եր յուր անձնասիրության մեջ մի քանի բարձր պաշտոններ: Իբրև նեռքինի, Թաղավորի կանանոցի նեռքինապետն եր: Իբրև հոդաբարձու, Թաղավորի ՀԱՅՐՆ եր կոչվում նա, պահում եր նրան մի առնական վտռռնդրության նեռքո, իշխում եր Նրա դրծերի և կամքի վրա և, միևնույն ժամանակ, նրա պալատի Թե՛ վերակացուն և Թե՛ կառավարիչն եր: Ամբողջ արքունիքը՝ յուր բոլոր պալատականներով՝ գտնվում եին նրա անմիջական հսկողության նեռքո: Իբրև բարձր աղնվական, նա Մարդպետական հարուստ նախարարության տերն և իշխանն եր: Իբրև դինվորական, նրա հրամանի նեռքո եին գտնվում Ասրպատականի սահմանապահ զորքերը: Մի խոսքով, պետության մեջ նա այն գործիչ, աղդեցության ունեցող անձնքներից մեկն եր, որից վա՛չ մեկն եին հայոց նախարարները, այլ կերևին բռնանում եր մինչև անգամ Թաղավորի վրա: Նրա իշխանությունը ժառանգական եր: Հայր-Մարդպետը ընտրվում եր միշտ Մարդպետական նախարարությունից, Թեև լինում եին կերբեմն բացառություններ:

Աբշակ Թաղավորը սկսաց ճնշել նրան, աշխատաց սահմանափակել նրա իրավունքները, և դրանով դրդռեց նրա առելությունը վա՛չ միայն յուր անձի դեմ, այլ առհասարակ Աբշակունյաց տոհմի դեմ: Ցերկար ժամանակ անուցանում եր նա այդ առելությունը յուր սրտում, և մի հարմար ժա-

մանակի յեր սպասում, վոր արտահայտե։ Այժմ ժամանակը հասած եր համարում։

Ներա նախորդը յուր հանդգնության համար՝ սպանվեցավ Մերուժանի հայր Շավասպ Արծրունուց։ Իսկ ինքը՝ Արշակ Թաղավորի դեմ յուր ուղեցած առելության հաղորդ տալու համար՝ Մերուժանի դերձակից դարձավ, և պարսից Շապուհ արքայի սիրելին։

Ահա այդ դավաճանն եր, վոր կանչած եր Արշակին հինոջ՝ Փառանձեմ Թաղուհու հանդեպ։ Ներա ահռելի դեմքը ճրագի պղտոր լուսավորության առջև ավելի սոսկալի արտահայտություն եր ստացել։ Դեռ մանկության հասակում ծաղիկը այդ դեմքի վրա մեծ հեղափոխություն եր դործել։ Նա պղտորակից ահագին քիթը, նա պլանդակից թխադույն շրթունքները, նա թողեց կաչու վրա այն խորին խորշերը, վոր ծակոտիքավոր հնչաքարի նմանություն ունեյին։

Թաղուհին դեռ լի դրդովմունքով նստած եր բազմոցի վրա և, դլուխը մտահույզ կերպով դեպի ցած խոնարհած, ամենևին չեր նայում նրա վրա։ Ներա անակնկալ հայտնվելը արդեն բացատրեց, թե ի՛նչ շար նպատակով եր յեկած։

Իսկ Մարդպետի ահարկու դեմքը, վոր սկզբում ցույց եր տալիս խիստ դառն ծաղր և խիստ մաղձոտ հեդնություն դեպի Թաղուհու վիճակը,— այդ դոռոզ դեմքը հետզհետե կատաղի կերպարանք եր ստանում, վորքան նա լսում եր Թաղուհու կծու հանդիմանությունները։ Բայց Թաղցնելով յուր բարկությունը, բաց արեց լայն բերանը, և հատու, թխադույն շրթունքները արտասանեցին հետևյալ խոսքերը.

— Հայր-Մարդպետը կարևոր տեղեկություններ ունի, թո՛ղ հայոց տիկինը ուժամանակ թողնե յուր դեղեցիկ մտածությունները և բարեհաճի լսել նրան։

Թաղուհին դլուխը վեր բարձրացրեց և դարձյալ խորին ղղվանքով ասաց նրան.

— Ցես քեղանից չատ շնորհակալ կլինեյի, Հայր-Մարդպետ, յեթե հանդիստ կթողնեյիր ինձ։ Դու արդեն հասար քո նպատակին։ Դողի նման մտար իմ ամրոցը, և ինչ վոր լրտեսելու եյիր, լրտեսեցիր։ Այժմ գնա՛, ուր վոր մտանելու յես, մտանի՛ր իմ ամրոցը։ Ցես պատրաստ եմ...

— Ինչո՞ղ հանդիստ թողնել... դու տակավին հանդստության ես սպասում... հանդստությունը այլևս քեղ համար չե, տիկին... Այո՛, խորժելի հանդստություն կլիներ՝ հանդչել հազարավոր դոհերի դիակների վերա, վորոնք հիմարացան և քեղ հետ այդ բերդը մտան... Այժմ դու քո յերկու նաժիշտներով հանդստությո՞ն ես վորոնում այստեղ... Գիտե՞ս, տիկին, թե ի՛նչ ե կատարվում քո շուրջը...

— Գիտեմ... պատասխանեց Թաղուհին հուղված ձայնով։

— Վա՛չ, բոլորը չգիտես։ Լսի՛ր, տիկին, յես խիստ հետաքրքիր նորություններ կպատմեմ քեղ։ Մերուժանը այժմ զորմանալի հրաշքներ և

դործում։ Դու խլեցիր նրանից նրա սիրելի վարմիդուխտին, իսկ նա խլեց քեզանից, հիմա հաշվի՛ր, թե ո՛րքան հողիներ։ Նա մտավ Վան քաղաքը, ավերակ դարձրեց, և բնակիչներից դերի վարեց 18·000 հայ և 5000 հրեա...

— Նա չինայից և յուր անխիղճ քաղաքացիների՞ն,— ընդհատեց Թադուհին։

— Այո՛, չինայից, դվիսավորապես այն վիրավորանքի համար, որ նրա քաղաքացիքը ցույց տվին նրան՝ Ռշտունյաց Գարեգին իշխանի հարձակման ժամանակ։ Բայց այդ դեռ բոլորը չէ, լսի՛ր, տիկին։ Վանից Մեծուժանը անցավ Աղիովտի Ջարիշատ քաղաքը, դերի վարեց 10·000 հայ և 14·000 հրեա։ Այնտեղից անցավ Բադրևանդի Ջարեհավան քաղաքը, դերի վարեց 5000 հայ և 8000 հրեա։ Այնտեղից անցավ Աբշարունյաց դավառի Ցերմանդաշատ քաղաքը, դերի վարեց 20·000 հայ և 30·000 հրեա։ Այնտեղից անցավ Արտաշատյան դավառի Վաղարշապատ քաղաքը, դերի վարեց 10·000 հայ, կոտորելով չափահասներին և միայն կանանց ու մանուկներին առնելով։ Այնտեղից անցավ Արտաշատ քաղաքը, դերի վարեց 40·000 հայ և 9000 հրեա։ Այնտեղից անցավ Գողթնյաց դավառի Նախճավան քաղաքը, դերի վարեց 2000 հայ և 16·000 հրեա։ Տեսնո՞ւմ ես, տիկին, այդ բոլորը ասրավ նա մեկ հոդուծ՝— վարմիդուխտի փոխարեն։

— Ո՞ւր ասրավ,— հարցրեց Թադուհին դարհուրելով։

— Առայժմ դերիների մի մասը հավաքել, պահել են Ցերասխ գետի աջ ափի մոտ, Արտաշատի հանդեպ, իսկ ամենամեծ մասը՝ Նախճավանի մոտ։ Սպասում են միայն քեզ, տիկին, վորովհետև Մեծուժանի ցանկությունն այն է, վոր դու քո ժողովրդի հետ միասին դնաս դեպի Պարսկաստանի խորքերը... Նա չուտով կգա քեզ հրավիրելու...

— Ցնո՞ւմ այդ ուրախացնո՞ւմ է քեզ, անղգամ։ Դրանո՞վ ես փոխարինում այն բոլոր չնորհները, վորոնցով իմ Թադավոր-ամուսինը քեզ անհայտ դրությունից բարձրացրեց և մեծամեծ պաշտոններով հագցրեց։ Ախլուրխա։ Դու քո հայրենիքի ամենադժվարին ատենային մի րոպեում, փոխանակ նրան պաշտպան հանդիսանալու, քո դավաճան ձեռքը մեկնում ես դեպի թշնամին։ Քեզ հանճնված էր քո Թադավորի տունը, նրա ընտանիքը, և դու, յեթե ամենաչնչին աղնվություն ունենայիր, պետք է քո անձը դնեիր նրա տան վրա,— բայց այժմ, ուրախանում ես այդ տան դերեվարությամբ։ Այդ բավական չէ, դու համարձակվում ես քո դաղրալի բերանով նախատել ինձ, և նախատել քո բարերար Արշակունիներին։ Այո՛, նրանք նախատելի յին, վոր քեզ նման ցած և ստոր արարածին այնպիսի բարձր պաշտոններով պատվանացրին։

— Այդ իմ իրավունքն էր, տիկին, այդ իմ ժառանգական արտոնությունն էր, վոր հասել էր ինձ իմ պապերից,— պատասխանեց նա սառնությամբ։— Ո՞վ կարող էր ջնջել Մարդպետական իշխանությունը։

— Իմ Թադավոր-ամուսինը։

— Այո՛, այդ նպատակին ձգտեց նա... Նա աշխատեց վոչնչացնել և բոլոր նախապարտությունները... բայց վոչնչացավ ինքը... Այդ Թողնենք։ Ձեռ չեմ թաղցնում, տիկին, իմատելությունը դեպի ամբաստարակ բոլոր Արշակունիները, դեռ չեմ թաղցնում և իմ ուրախությունը, վոր դու, վերջապես, պիտի պատժվես։ Քո համառության արդյունքներն են, տիկին, այդ բոլոր կործանումները։ Ելնեի դու, դեռ սկզբում Շապուհ արքան կոչեց քեզ Պարսկաստան, գնայիր,— ելնեի դու, դեռ նրանից հետո Շապուհը պաշարեց այդ բերդը, անձնատուր լինելիր,— դրանցից և վո՛չ մեկը չեր պատահի։ Դեզ կտանեին Պարսկաստան, այնտեղ կլսեիր Ամենուշ բերդում քո Թաղավոր-ամուսնի մոտ, և դրանով ամեն ինչ կվերջանար...

— Դրանով, դու կարծո՞ւմ ես, Հայր-Մարդպետ, կվերջանար Արշակունյաց Թագավորությունը,— ձայն տվեց Թաղուհին խորին վրդովմունքով։

— Այո՛, տիկին։ Ձեվ պետք է, վոր վերջանա։ Աստուծո արդար վրեժխնդրության բաժակը լցվել է, և նա պետք է թափվի...

Լսելով Հայր-Մարդպետի վերջին խոսքերը, Թաղուհու դայրացած աչքերը վառվեցան բարկության բոցով, և նա, յուր ծանր, ապառնական հայացքը ձգելով դավաճանի վրա, պատասխանեց խիստ ձայնով.

— Այդ Քո՛ղ չուրախացնե քեզ, անպիտան, Քո՛ղ չուրախանան և քո չարշահի համախոհները։ Մերուժանը իմ մի քանի քաղաքները ավերակ դարձնելով և բնակիչներին դեպի Պարսկաստան գերի վարելով,— դրանով Հայաստանը չի դատարկվի։ Իսկ ինձ էլ գերի վարելով և իմ ամուսնի մոտ՝ Անուշ բերդը աքսորելով,— դրանով Արշակունյաց Թագավորությունը չի ընկնի։ Ձեռ պատրաստ եմ։ Ձեռ գիտեմ, վոր դու այստեղից հեռանալուց հետո, պիտի մատնես պարսիկներին իմ ամբողջ դատարկությունը։ Գնա՛, հայտնի՛ր։ Քո՛ղ դան և կալանավորեն ինձ։ Ձեռ վո՛չ մահից և վո՛չ աքսորից երկյուղ չունեմ։ Բայց կդա Արշակունյաց Թագավորությունը—իմ վրդովմունը—այո՛, կդա նա Բյուզանդիայից, և Քե՛ հոր, և Քե՛ մոր վրեժը կլուծեն չարագործներից...

Մարդպետի սառն դեմքի վրա անցավ մի դառն ժպիտ։

— Այդ հուսները Քո՛ղ չմխիթարեն քեզ, տիկին,— ասաց նա, դլուխը հեգնորեն շարժելով։— Քո մեջ խոսում է սյունեցու կրակոտ արյունը և Մամիկոնյանների անդուսդ դորովությունը։ Լսի՛ր, տիկին։ Այն անքավելի մեղքերը, վոր ծանրացած են քո վրա և քո Թագավոր-ամուսնի վրա, երբեք Քուլլ չեն տա, վոր Հայաստանը ձեռնունդ ազատված լինի, և Արշակունիների դահը վերստին փրկություն դտնե։ Կրկնում եմ, աստուծո արդար վրեժխնդրության բաժակը լցված է, և նա պետք է թափվի... Ատված պահանջում և ձեղանից այն անթիվ դոհերի արյունը, վոր թափել եք դուք... Ձեռ ոտար չեմ, ինձ հայտնի յեն այն բոլոր յեղեռնագործությունները, վոր կատարվում եյին ձեր արքունիքում... Ձեռ տեսնում եյի,

և վախակությամբ լուռ կյր, վորովհետև վախենում կյր քո ամուսնից... Դու ինքդ, տիկին, արյունով առացար քո տիկնանց-տիկնությունը... կարծես, հենց այս րոպեյում, իմ աչքերի առջևն և դժբախտ վերմակազգի դիակը, վորին սպանել տվեցիր դու: Նրա մահվամբ նրա թագը հափշտակեցիր... Վո՛րքան այդպիսի դժբախտներ դոհվել են քո չար կրքերին և քո անկրավ վատասիրությանը... Դու ապատատանեցիր այդ ամբոցը, տիկին, և հույս ունեյիր, վոր այդ ամբոցը կպատան քեզ: Բայց տեսա՛ր ատուծո պատուհասը: Այն, վոր չկարողացավ կատարել թշնամու սուրը,— այն բազմությունը, վոր այնպես քո օգնությամբ ընդդիմացավ թշնամուն,— այո՛, այն ամբողջ բազմությունը չկարողացավ ատուծո ուղարկած ոսկի ու մահը: Այդ ամրո՞ցը պետք և պաշտպաններ քեզ, տիկին: Հիշի՛ր, ո՞ւմն եր պատկանում այդ ամրոցը: Նրա յերեքանյակյոր քարը ներկված և անթափառ կամսարականներով արյունով, վորոնց կատարել տվից քո ամուսինը, և անկրավությամբ հափշտակից նրանց առհամային ժառանգությունը... Նրանց հոդիները մինչև այսոր բողոքում են ատուծո արդարադատության առջև...

Ցնծ նա չարունակից մի ըստ միոջե թվել թե՛ թագուհու և թե՛ նրա ամուսնի կատարած հանցանքները, ավելացնելով.

— Ահա՛ Արշակունիների բոլոր առաքինությունները... Գետք և անպատճառ կործանվի՛ այդ անբարոյական տունը, և Հայաստանը այն ժամանակ միայն հանդստություն կվայելե...

— Պարսից լծի տա՞կ...

— Այո՛, պարսից լծի տակ, վոր ավելի թեթև և, քան Արշակունիների անատանելի բռնակալությունը...

— Կորի՛ր, չարագործ,— դոչից թագուհին և վեր թռավ նստած տեղից:— Ցնծե թագավորը և թագուհին արյուն են թափում, այդ հանցանք չե, ինչպես հանցանք չե, յերբ ատավածներն են մարդիկ կատորում: Այդ անում են նրանք, դարձյալ մարդկանց բարորության համար: Վատերին մաքրում են լավերից...

Նրա բարձրահնչյուն, խրոխտալի ձայնը նորա կոչից յերկու նաժիշտներին—Շուշանիկին և Հասմիկին,— վորոնք, յերկու զայրացած հրեշտակներ նման, նորա վազեցին և, իրանց աղեղները լարելով, ճչացին.

— Թո՛ւյլ տուր մեզ, տիկին, նետահարել այդ անպտամին...

Հայր-Մարդպետը ժպտալով նայեց այդ յերկու անմեղ արարածների վրա, և հեռացավ...

Դեռ առավոտյան լույսը նոր եր սկսել բացվել, դեռ նոր լսվում եր թռչուններին ուրախ ատաղերգը: Բայց լսվում եր և մի այլ ձայն, ատամիկ խռնաձյունի և ահարկու ձայն: Դա բերդի պարիսպների մոտ վորոտացող

չեփորների և թմբուկների ձայնն եր։ Թաղուհին լսեց բոթաթիր ձայները և խուճն վեր կացավ նստած տեղից։

Հայր-Մարդպետի հեռանալուց հետո, նա ամբողջ դիշերը լուսացրեց անքուն։ Տխուր մտախոհությունների մեջ նստած եր և, կարծես, սպասում եր։ Այժմ հասավ տաղնապի և անիմաստ դառն րոպեն...

Բայց նա արդեն պատրաստված եր այդ րոպեի համար։ Սիրտը խաղաղ եր և խիղճը հանդիստ։ Ծուր աշխարհի փրկության համար՝ նա մատնեց, վորքան կարողացավ։ Մնացյալը վերադրում եր նախախնամության կամքին։ Հանդարտ քայլերով անցավ նա դեպի սենյակի մի անկյունը և ծունր դրեց հատակի վրա։ Արտասուալի աչքերը դեպի յերկինք դարձնելով, ձեռքերը կուրծքի վրա վեպած, յերկար մնաց լուռ հափշտակության մեջ։ Աղոթում եր նա, աղոթում եր, վորպես մահվան դատապարտյալը՝ կյանքի վերջին վայրկյաններում՝ վախագում և խոսել աստուծո հետ և յուր խղճն ու պաղատանքը թափել նրա դթության առջև։

Աղոթքը բավական կաղդուրեց նրան. աղոթքը դովացրեց հրաբորբոք սիրտը։ Արտասուքը սրբեց և վեր կացավ։ Վերջին անգամ թախծալի հայացքը դարձրեց դեպի յուր չքեղազարդ մենարանի չուրջը, նայեց սիրելի առարկաների վրա, վոր մի քանի րոպեյից հետո պարսկական դինվորների ավարառության նյութ պիտի դառնային։

Նա անցավ քնարանը, վորտեղ պատված եր վարմիդդուխտ որիորդը։ Մոտեցավ նրա անկողնին, բայց դժվարանում եր խանգարել նազելի որիորդի անուշ քունը։ Ախնպես, անշարժ կանդնած, լուռ նայում եր նրա վրա։ Մտաբերում եր նրա դիշերվա խոսակցությունը, և ուրախանում եր նրա նով։ Սենյակի տոթի պատճառով՝ թեթև վերմակը կիսով չափ մի կողմ եր ձգված։ Ցերևում եր հարուստ կուրծքը, յերևում եր դեղեցիկ դեմքը, վոր աջդղված եր սիրուն դեսակների թեթև դանդուրների ներքո։ Նա մոտեցավ և համբուրեց չատախտված յերեսը։ Որիորդը չդարթնեց։ Նա դեռ կանգնած, չարունակում եր նայել նրա վրա։ Բայց մի մթին դդացմունք հանկարծ սկսեց ալեկոծել արդեն հանդարտված սիրտը։ Նրա խոշոր աչքերը վառվեցան և խաղաղ դեմքի վրա յերևացին անբացատրելի ցնցումներ։ Նա յուր դողդոջուն ձեռքը տարավ դեպի բորբոքված ճակատը, հենվեցավ պատին, վոր կարողանա իրան վոտքի վրա պահել։ Այդ դրության մեջ մնաց մի քանի րոպե։ Կատաղությունը հետզհետե սառնանում եր և հուդված սիրտը բարախում եր անհնարին խռովության մեջ։ «Դիա պետք և այն չարագործի ձեռքը չընկնի՛... մրմնջաց նա, և մի քանի քայլ վոխեց դեպի որիորդի անկողինը։ Բայց խուճն սոսկալով հետ դարձավ, և կրկին հենվեցավ պատին։

«Վո՛չ... վո՛չ... մտածեց նա յերկար տատանմունքներից հետո,— յես այդ արյունից մաքուր կպահեմ իմ ձեռքերը... Այո՛, յես վճռել եյի, յես մինչև անգամ յերդվել եյի, վոր նույն րոպեյում, յերբ Միհրուժանը վոտք կդնե իմ ամրոցի չեմքի վրա, նա պետք և յուր առջև կախված տես-

նե սիրած աղջկա դիակը... Բայց ինչով և հանցավոր այդ անմեղ աղջիկը.... Վաչ, չես դրան կհավատան կիթողնեմ, որ ավելի ասանկ Մերուժանին... Ես կարող լինել մի պատիժ այնքան դառն և այնքան դժնդակ, քան թե այն, որը Մերուժանը, որ հանձն առավ այդ դեղեցիկ աղջկա համար այնքան յերևոնագործություններ, հանկարծ իրան խորված կտանե յուր սիրտ մեջ, յերբ Վարմիդուխտը կսկսե առել նրան և մերժել նրա սերը... Նա ինձ խոստացավ այդ, և համոզված եմ, որ կկատարե...»

Նա մոռացավ, արքունացրնց որխորդին:

— Գիտեմ, թե ինչո՛ւ վաղ արքունացրիր ինձ, սիրելի մայրիկ,— ասաց նա ուրախանալով:— Դիշերը պատման դրեցինք, որ այսոր մե՛նք դնանք վրսան, և վո՛չ Շուշանիկին ու Համբիկը:

Նա դեռ չեր մոռացել դիշերվա խոսակցությունը:

— Վաչ, սիրելի Վարմիդուխտ,— պատասխանեց Թագուհին տխուր ձայնով:— Այսոր մեզ պետի վրսան... Վրսասրդները արդեն յեկել, ամրոցի դռանը կանդնել են.... Լսո՞ւմ ես փողերի ձայնը...

— Լսում եմ... ասաց որխորդը շփոթվելով:— Ինչո՛ւ համար են այդ ձայները...

— Թշնամին հասկացել է, որ ամրոցը պաշտպաններ չունի, յեկել է, որ դրավի նրան:

— Մերուժա՞նը:

— Այո՛, Մերուժանը:

Որխորդը խելագարի նման վեր թռավ անկողնից, չտապեց հագնվել: Նա այնպես հետաքրքիր, առանց զլուխը կապելու, կամենում եր վազ տալ դեպի ամրոցի դռները: Բայց Թագուհին բռնեց նրան, հարցնելով.

— Ո՛ւր ես գնում:

— Անիծյալ Մերուժանը յեկել է դրավելու այդ բլրերը իմ յեղբոր գրքերով, իմ յեղբոր գրքերը չեն կարող չհնազանդվել քրոջ հրամանին. յես գնում եմ նրանց հրամայելու...

— Ի՞նչ հրամայելու:

— Դու խնդություն կտեսնես, մայրիկ:

Ամրոցի դրսում աղմուկը և շփոթությունը հետզհետե աստիճանում եյին: Հանդիմանյալ աղաղակները խլացնում եյին շրջակայքը: Հազարավոր ձայներ կրկնում եյին միևնույն խոսքը. «Բա՛ց արեք...

— Ես իմ ամրոցի դռները չեմ բաց անի նրանց առջև,— ասաց Թագուհին արհամարհանքով:— Նրանք արժանի չեն այդ պատվին: Թող կոտրեն...

Նա դեռ բռնել եր որխորդի ձեռքից, չեր թողնում, որ գնա:

— Իզուր կանցնեն քո ջանքերը, սիրելի Վարմիդուխտ,— ասաց դրդվելով նրան:— Մեզ հանձնենք ատոուծո կամքին, ինչ որ լինելու կա, թող լինի...

Աղմուկը արքունացրնց Շուշանիկին և Համբիկին: Նրանք ճչալով այս

կողմ և այն կողմ էին վազվզում, և տակավին չէին կարողանում, թե ինչ եր պատահել:

Շատ չանցավ, արևը ծագեց և յուր լուսապայծառ ճառագայթները տարածեց դեպի ամեն կողմ: Այդ միջոցին ամբողջ բնությունը նորոգվեցավ և կատարվ բազմությունը ներս խուժեց: Նրանք վայրենի աղաղակներով դիմում էին ուղղակի դեպի արքայական ապարանքը: Ալիևումն վհատանձ կերպով ընթանում եր Մերուժան Արծրունին, իսկ նրա հետ՝ մի պարսիկ զորապետ:

Այդ միջոցին թագուհին և որիորդը դուրս չկային ապարանքի ընդարձակ, չքնաղազարդ սրահը:

— Ցնո՛ւկ, համբուրեմ քեզ, սիրելի Վռամիղդուխտ,— ասաց թագուհին վշտալի ձայնով:— Հասավ ժամը, վոր անողորմ ճակատագիրը պիտի բաժանե մեզ միմյանցից...

Որիորդը ընկավ նրա դիրկը, ասելով.

— Վա՛յ, մենք չենք բաժանվի միմյանցից. ուր վոր քեզ տանելու լինեն, յես էլ քեզ հետ կգամ:

Ապարանքի բազմաթիվ սենյակները լցվեցան զինվորներով: Վռամուխտ էին թագուհուն և որիորդին: Ամբողջ պալատը դղրդվում եր խառնաձայն աղաղակներից: Հանկարծ Շուշանիկը և Հասմիկը սարսափած դեմքով մոտան սրահը, ուր գտնվում էին նրանք:

— Գնա՛, Հասմիկ, դու ավելի սիրտ ունես, գնա տես նրանց, վոր մենք ապտոնգ ենք,— հրամայեց թագուհին:

— Ես այդ բանը չեմ տես, տիկին,— լալագին ձայնով հրաժարվեցավ նաժիշտը:

— Դու գնա՛, Շուշանիկ:

— Ես էլ չեմ մատնի իմ տիկնոջը,— հեկեկալով պատասխանեց նա:

Ներկու նաժիշտները վարեցան իրանց սիրելի տիկնոջ վոտներին, համբուրում էին, վողջագուրում էին, և վողբաձայն հառաչանքներով լաց էին լինում: «Ա՛խ, քեզ պիտի տանեն... ա՛խ, մեզ պիտի զրկեն քեզանից»... անդադար կրկնում էին նրանք և չէին բաժանվում: Թագուհին հեռացրեց նրանց, յերբ նախասենյակում լսվեցան ծանր վոտնաձայներ: Նա մոտեցավ, նստեց բազմոցի վրա, իսկ նրա մոտ նստեց և որիորդը:

Ներս մտան Մերուժան Արծրունին, պարսիկ զորապետը, մի խումբ թիկնապահների հետ: Մերուժանի գոհունակ դեմքը վկայում եր ուրախություն: Նորին հրճվանքով առաջ ընթացավ նա և, յուր ուրը դնելով որիորդի վոտների մոտ, արտասանեց հետևյալ խոսքերը:

— Այդ բոլորը կատարվեցավ քո ազատության համար, և քո սիրտ համար, նազելի Վռամիղդուխտ: Հայոց թագուհին քեզ դերի վարեց յուր ամբոցը, իսկ յես, քեզ ազատելու համար, վոչնչացրի նրա ամբոցը՝ յուր ղորքերի ահագին բազմության հետ: Հույս ունեմ, վոր դու այսուհետև

կհարցնես այդ սուրը, վոր այնքան անձնանվիրաբար դործեց քո պաշտպանության համար:

Որիորդի խոշոր աչքերը վառվեցան բարկության բոցով: Նա վոչինչ չպատասխանեց և վո՛չ արժանացրեց նայել նրա վրա: Այլ վոտքով սուրը մի կողմ հրեց և, դառնալով դնալի պարսիկ զորապետը, հարցրեց.

— Ի՞նչպես և քո անունը:

— Ալանաղան, քո ծառան,— պատասխանեց նա գլուխ տալով:

— Ո՛վ Ալանաղան, հրամայում եմ քեզ իմ յեղբոր՝ արքայից արքայի՝ անունով, հեռացրո՛ւ այստեղից այդ մարդուն,— նա ձեռքը դլխանքով ասրալ դնալի Մերուժան Աբծրունին:— Նա չպիտի համարձակվի տեսնել իմ յերեսը: Պատրաստել տո՛ւր մեզ համար առանձին պատսարակներ, յես և հայոց Թադուհին միասին պիտի դնանք Տիդրան, իմ յեղբոր մոտ:

Զորապետը, ի նշան հնազանդության, կրկին և կրկին անգամ խոնարհացրեց դլուխը, պատասխանելով.

— Այսյաց մեծավոառ որիորդի հրամանը կատարված կլինի, վորպես նրա բարձր ցանկությունն է:

Կարծես, ամբողջ ապարանքը վռաւ յեկավ Մերուժանի դլխի վրա, և նա խորտակվեցավ, փշրվեցավ նրա փլատակների ներքո: Հարվածը մեծ եր և վերքը անբուժելի: Նա այն աստիճան չփոթվեցավ, նա այն աստիճան կորցրեց յուր վհուկությունը, վոր մի բառ անգամ չդտավ պատասխանելու, յերբ պարսից զորապետը, վոր յուր ասորագրյալն եր, բռնեց նրա ձեռքից, և դուրս հանեց սրահից:

Թադուհին նայեց նրա վրա, և խղճաց...

Մյուս որը Թադուհին և որիորդը, Ալանաղանի հսկողության ներքո, ճանապարհ ընկան դնալի Պարսկաստան: Տարագրյալ Թադուհուց չբաժանվեցան և նրա յերկու նաժիշտները:

Այնուհետև պարսիկ զորքերը ամբողջ լինն որ և լինն դիշեր կրում եյին Աբշակ Թադավորի դանձերը, վոր ամբարված եյին այդ ամրոցում: Այնտեղ անշարժ մնացել եր և սովից ու ժանտախտից մեռած բազմության հարբատուները: Ձերբ բոլորովին պատարկեցին, հետո հրդեհեցին դնդեցիկ Արտագերսը...

Գ

ԳԻՐՔ



ՍՐԲԱՍՏՑՈՑՆ ԴԱՀԻՑ ՍՈՒՍԱՆՈՑ

Ինկ յայսմ ժամանակի (Մերուժանն Աբծքունը եւ Վահանն Մամիկոնեան) աւերեցին զքաղաքն, եւ զերկիրն զրնակեալսն անդ... եւ զայլ զերազինս զաւառաց զաւառաց, կողմանց կողմանց, փոքր փոքր զոչխարն ոչխարին, ածին ժողովեցին ի քաղաքն Նախճուան, ղէ անդ էր զօրաժողով իւրեանց զօրացն։

Փաւստոս։



աւերած եր, Արտաշատյան դաշտի լուսատուները տատ-վոնեներից մեկը։

Աբեւի առաջին ճառագայթներն ներքո՝ Մասեաց սպիտակափառ գագաթը փայլում եր վարդագոյն շողքերով, որ աչք եկին չացնում։ Արտաշատի պատկառելի գագաթը չեր յուզւում։ Նա դեռ պատած եր ճյունի սեռ ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ աջողում է յուր դեմքը անթափանցիկ շղարշով։ Կանանչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում եր ծիածանի ամենանուրբ գույներով։ Փչում եր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում եկին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում եկին, և դաշտի խաղաղ տարածությունը որոշվում եր աքանչելի ալեկոծությամբ։

Գեղեցի՛կ եր այդ առավոտը։

Թռչունները ուրախ-ուրախ ճախրում եկին մի թուխ-կեղի մյուսը. Դույնդուկ թխթխոնները, դույնդուկ ծաղիկների նման, ցանված եկին ոդի մեջ։ Սպիտակ արագիլը, կարմիր վոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևքերով թափահարում եր, շտապելով դեպի Արտաշատ

մորուանները: Ձեռնասուն յեղջերուները, վայրենի վիթն ու այծյամը, դուրս եկել Յոսրովի արքայական անտառներից, և ազատ, համարձակ վազվզում էին շրջակա մարգերի վրա:

Ձեր յերեւում միայն մարդը:

Սանն առավոտ, արծաթյա մեղրերի հնչյունը, վորսորդական բարակների մռնչյունը, սիքասանդ նժույգների խրխինջը, խուռումուռ էին տորմա անասունների վաղորդյան հանդիսատը: Ամեհի վարազը սարսափելով նետվում էր մթին շամբուտների մեջ, իսկ թավամազ արջը ազատանալ ուզղ էր վորոնում: Իսկ այս առավոտ չկային նրանք—չկային նախարարական խմանաղն պատանիները, վորոնց վորսորդական ուրախ ղվարճությունները մի առանձին կենդանություն էին բաշխում յերեկյան դաշտավայրին:

Սանն առավոտ թռչունը կարդում էր յուր նախարշալույսյան մեղեդին, և նրա հետ լսելի յեր լինում ժրաջան մշակի յերգը: Փայլում էր մանդաղը, յնտում էր դրծը, և վոսկեղեն հունձքը՝ յուր լիառատ բերմնավորությամբ՝ պարզևատրում էր վաստակաբեկ շինականի աշխատանքը: Իսկ այս առավոտ չկար հնձավորը, չկար և հերկավորը: Հասունացած արտը մնացել էր կիսատ և անվաստակելի արտը անդործ ընկած էր դեռ չվերջացրած ակոսների մոտ:

Սանն առավոտ սուրբ տաճարի կոշնակի առաջին հնչման հետ՝ զարթնում էր հովիվը: Վոչխարների անուշ բառանչը, արջառների ուրախ ձայնաբերությունը, կենդանացնում էին խոտավետ հովիտները խիստ ախորժելի աղմուկով: Իսկ այս առավոտ չէին յերեւում վո՛չ հովիվը և վո՛չ նրա հոտերը: Ցիրուցան գառնուկները թափառում էին սար ու ձոր, և հայրակորուսյա վորբիկների նման, կարծես, վորոնում էին հովվին:

Սանն առավոտ, յերբ ծագում էր տիրնջյան լուսատուն, նրա առաջին ճառագայթները վողջունում էին շինական աղջիկների աշխատանքը: Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, վորպես կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներ, սփռված էին լինում նրանք այդիներում, բանջարանոցներում և ագարակներում: Ցերդում էին և գործում էին: Ցնծում էին նրանց ուրախությանը ձայնակից եր լինում յերդասեր սոխակը: Իսկ այս առավոտ չէին յերեւում անխոնջ մշակուհյուններն այդ դեղեցիկ գարդերը: Այդիները մնացել էին անխնամ, ագարակները կորցրել էին իրանց սիրելի բանվորներին:

Արեգը բարձրացավ, և վորքան բարձրանում էր նա, այնքան Արարատյան ընդարձակ դաշտավայրը, վորպես մի հսկայական բուրվառ, խնկարկում էր յուր վաղորդյան անուշհոտությունը: Ամբողջ հովիտը ծխում էր, գոլորշիանում էր: Ցողաղարդ բուսականությունը հետ էր տալիս յերկրքնքին յուր ընդունած մարդարտյա կաթիլները:

Ծխում էին և դաշտավայրի վրա խիտ ու խիտ սուվազած գյուղերը: Բայց այդ ծուխը չէր նմանում այն խաղաղ, կապտագույն ծուխին, վոր

ամեն առավոտ ճաշատուրա այուսակներով վեր էր բարձրանում խրճիթների դռներից։ Այդ ծուխը, սև մառախուղի նման, ծածկել էր դյուղերը, և մերթ ընդ մերթ նրա միջից թանձրության մեջից փայլատակում էին հրային կայծեր...

Ծխում էին և ճնճաչնն քաղաքները։ Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Եղմիածնի վանքը... Նոյն թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ գեղեցկությունը...

Վոչ վոք չէր յերևում։ Ամենուրեք տիրում էր տխուր, անապատական դատարկություն։ Դատարկ էին քաղաքները, դատարկ էին դյուղերը, դատարկ էին և ճանապարհները։ Ի՞նչ էր պատահել։ կարծես թե, մի մահարեր չունչ անցել էր այդ աքանչելի դաշտի վրայով, և մարդիկին ամեն արարած վոչնչացրել էր...

Բայց ահա՛, դնալի Արտաշատ տանող ճանապարհի վրա փոշի յի բարձրանում։ Անցնում են մի խումբ ձիավորներ։ Զիանների հարուստ սպասդինք, հեծյալների թանդագին զինքն ու դրահը՝ ցույց են տալիս, վոր այդ մարդիկը հասարակ ճանապարհորդներ չեն։ Մի վայելչագեղ յերիտասարդ առաջ և ընկած, մյուսները հետևում են նրան։

Ներանք հասան Արտաշատ քաղաքի կիսախուլ պարիսպների մոտ։ Այստեղ յերիտասարդը կանգ առնց, մի քանի րոպե յուր տխուր հայացքը դարձրնց դնալի ամբարակ և տակավին ծխլող քաղաքը, և ապա ճանապարհը ծռնց դեպի Տափերական կամուրջը։ Նա գալիս էր հեռվից, շատ հեռվից, և այսպիսի հրդեհված, անմարդացած քաղաքներ շատ էր տեսել յուր ճանապարհի վրա։ Այդ էր պատճառը, վոր նրա քնքուշ սիրտը, կարծես թե, ամրացել էր, նրա վառ զգացմունքները, կարծես թե, սառել էին, և նրա թախծալի աչքերում մի կաթիլ արտասուք անկում չէր մնացել, վոր թափեր դժբախտ Արտաշատի վրա։

Տափերական կամուրջը միակ անցքն էր, վոր Արտաշատից տանում էր դեպի Արաքսի ալ ափը։ Նա հասավ կամուրջին, բայց չանցավ կամուրջը։ Այնտեղ մնկին սպասում էր, և լուռ մտախոհությամբ նայում էր դետի վրա։

Արևը տակավին փայլում էր, ծաղիկները շոշշտում էին, թռչունները դեռ չարունակում էին իրանց առավոտյան տաղերը։ Բնության այդ ընդհանուր սառնասրտության մեջ՝ վերդովված էր միայն Արաքսը։ Վորպես մի սդավոր, վորդևկորություն մայր, սղտոր հոբանքներով վորոտում էր, աղաղակում էր, հառաչում էր նա հեղհեղելով յուր կանաչազարդ ափերը։ Վորպես մի ահարկու վիշապ, փրփուրը բերանում, կատաղի կերպով առաջ էր սղվում, լայնանում էր, ընդարձակվում էր և, կարծես, վորոնում էր լափելու, կլանելու այն չարագործին, վոր այնպես անխնա ձեռքով այրեց, անապատ դարձրեց դեղեցիկ քաղաքներն ու ավանները, վոր զարդա-

ում էին յուր հրաշալի ափերը: Նրա կատաղությունը զսպում էր հակա համուրջը, վոր սեղմել էր նրան յուր բազմաթիվ կամարների ներքո:

Համուրջի մյուս կողմում, Արաքսի աջ ափի մոտ, ընդարձակ, կանաչազարդ դաշտավայրը ծածկված էր խիտ վրաններով: Ուղտերի, ձիանների, ջորիների և փղերի յերամակները արածում էին վրանների շուրջը: Ճոխորեն ճաշած խոտարուլտները առատ սնունդ էին մատակարարում այդ անասուններին: Այնտեղ դրած էր մի մեծ բանակ: Ցերիտասարդը նայում էր դեպի բանակը:

Այդ մինոցին, համուրջի հակառակ ծայրում, յերևաց մի վհայակ, վոր, յերիկար նիզակը ձեռին, ուղիղ մոտենում էր յերիտասարդի խումբին: Ցերրորդին մոտեցավ, խորին կերպով գլուխ տալով, կանգ առավ:

— Վերջապես, դու յերևացիր, Մալխաս,— դարձավ դեպի նա յերիտասարդը:— Ասա՛, ի՞նչ լուր ունես:

— Վո՛չ Մամիկոնյան տերը և վո՛չ Մերուժան Արծրունին՝ այդ բանակում չեն,— պատասխանեց վհայակը:

— Ապա վո՞րտեղ են նրանք,— հարցրեց յերիտասարդը և, միևնույն ժամանակ, նրա վշտահար դեմքի վրա նշմարվեցան անհամբերության նշանները:

— Նրանք գտնվում են պարսից գլխավոր բանակում, վոր այժմ դրած է Նախճավանի մոտ:

— Իսկ այդ ի՞նչ բանակ է:

— Դա գլխավոր բանակի մի փոքրիկ մասն է: Այստեղ հավաքել են միայն Դվինի և Արտաշատի գերիներին:

— Ո՞ւմ հրամանատարության ներքո յե գտնվում այդ բանակը:

— Պարսից Ջիկ անունով զորապետի:

Ցերիտասարդը Սամվելն էր: Նա դնում էր յուր հոր և յուր քեռու՝ Մերուժան Արծրունու մոտ:

— Հետևի՛ր ինձ,— դարձավ նա դեպի վհայակը, յուր ձիու գլուխը շուռ տալով դեպի Նախճավանի ճանապարհը: Նրա հետ ամբողջ ասպատխումբը դիմեց դեպի այն կողմը:

Նա վորոնում էր հորը, վորոնում էր և քեռուն: Վորոնում էր այնպիսի սրտով, վորպես կյանքից ձանձրացած, բայց դեռ անվճռականության մեջ տատանվող մարդը վորոնում է մահաղեղ, և միևնույն ժամանակ, ինքն իրան մխիթարում է, յերբ չէ գտնում, վոր բաղձանքը կատարե: Նույնպիսի մի անվճռականության մեջ տանջվում էր նա, սկսյալ այն որից, յերբ բաժանվեցավ յուր մորից, յերբ թողեց Վողական ամրոցը և ճանապարհ ընկավ դեպի հոր բանակը: Այն որից անցան ամիսներ, անցավ մի տարի, և ավելի: Վո՛րքան ցավալի դեպքեր պատահեցան, վո՛րքան դժբախտ հրողություններ կատարվեցան: Նա ապարդյուն կերպով կորցրեց թե՛ թանգագին ժամանակը և թե՛ այն փառքը, վոր յուր դասակիցները ստացան զանազան կռիվներում, իսկ ինքը բոլորովին անմասն մնաց: Այդ

բոլորը ավելի սաստկացնում եր նրա վշտերը և ավելի խորին կերպով խոցում եր նրա ղեկավարի սիրտը:

Բայց նա այդ ժամանակամիջոցում բոլորովին անդործ չեր: Նա դարձյալ պատերազմի մեջ եր,— մի նեղքին, բարոյական պատերազմի մեջ, որ կատաղում եր նրա սրտում, և որը ավելի սարսափելի չեր, քան դնդթի ու դրահի արհավիրքը: Նա կռվում եր յուր խղճի հետ և յուր սրտի հետ. վերք եր տալիս և վերք եր առնում: Այդ հարվածներին չդիմացավ մանուկ սիրտը, մինչև, վերջապես, նրան հիվանդության մահճի մեջ դրեց: Վանից անցնելու միջոցին, դժբախտ Համազասպուհին աղետալի վախճանը տեսնելուց հետո, նա այլևս չկարողացավ չարունակել յուր ճանապարհը: Նրան բոլորովին անդամ դրության մեջ տարան Անձավայրյաց Հոգվոց վանքը, որ յուր լեռնային անմատչելի դիրքի պատճառով՝ մեկուսացած եր պատերազմների աղմուկից: Այնտեղ՝ վանականների խնամատարության ներքո՝ թժշկվում եր նա: Երանից չբաժանվեցան յուր հավատարիմ ծառաները, որ ամեն կերպով հոգ եյին տանում յերիտասարդ իշխանի առողջությանը վերականգնելու համար: Այնուամենայնիվ, մի քանի անգամ նրա մահվան զգացողը պատրաստվեցավ: Այնտեղ մնաց նա բոլորովին անդիտակցության մեջ, և նրա չրջապատողները ամենայն զգուշությամբ աշխատում եյին թաղցնել նրանից, թե ի՛նչ եր կատարվում այդ ժամանակ հայոց աշխարհում: Բայց հիվանդը յուր կերպարյան տաղնապի մեջ՝ միշտ հայոց աշխարհի մասին եր խոսում և միշտ նրա մասին եր հարցնում:

Վո՛չ հայրը և վո՛չ մայրը ամենևին տեղեկություն չունեյին նրանից, այդ պատճառով շատ անհանգիստ եյին: Անհանգիստ եյին և բարեհամբերը: Վոսանք նրան բոլորովին կորած եյին համարում: Այդ տխուր հանդամանքների մեջ՝ կարելի չե յերևակայել Ռշտունյաց Աշխեն որիորդի վիշտը, որ հոգով և սրտով նվիրված եր յուր սիրելին: Նա մարդիկ ուղարկեց դեպի ամեն կողմ՝ վորոնելու նրան:

Բայց ճակատագիրը խնայեց մահամերձ հիվանդին, խնայեց մի նշանավոր դործի համար, որ ապագայում որինակ պիտի դառնար շատերին: Հենց որ նա փոքր ինչ առողջացավ, փոքր ինչ կազդուրեց յուր սպառված ուժերը, խնդրեց Թողեց վանքը և ճանապարհ ընկավ դեպի յուր նպատակը: Այդ ժամանակ նրան հայտնի չեր ամեն ինչ. այդ ժամանակ նրան արդեն պատմել եյին, թե ի՛նչեր կատարվեցան յուր բացակայության մեջոցին, կամ ի՛նչ դրության մեջ եյին ներկա դործերը: Տեղեկանալով բոլորը, կազմեց նա յուր ամենաստահ ծրագիրը: Առանց ժամանակ կորցնելու, նախ գնաց Հաղամաձորա, Արծրունյաց վոստանը, և այնտեղ տեսնվեցավ վաստակավոր տիկնոջ (Մերուժանի մոր) հետ: Հետո գնաց Ռշտունիք, տեսնվեցավ Գարեգին իշխանի հետ: Այնտեղից անցավ դեպի Մոզաց և Սասնո լեռնաբնակները, տեսնվեցավ և նրանց իշխաններին հետ: Թե ի՛նչ խորհուրդ ունեյին այդ տեսակցությունները,— արդյունքը կհայտնվի հետո: Նա չմտավ Տարոն, Մամիկոնյանների սեփական յերկիրը,

ղեռուշանալով, մի դուռն հանդիպել յուր մորը: Այլ յուր նպատակները կատարելուց հետո, ուղիղ ճանապարհ ընկավ դեպի Արարատ, ուր հույս ուներ դանել թե՛ հորը և թե՛ Մերուժանին: Նրա հետ եր յուր սիրելի դայակը՝ Ծերունի Աբրահը, և յուր աղջակիկը՝ պատանի Արտավազդը: Նրա հետ եյին և յուր հավատարիմ ծառաները: Նա անցավ մի շարք ավերակների մեջ հետքերի վրայով, որ թողել եյին յուր հայրն և յուր քոռերն: Նա յուր ճանապարհի վրա ակնատես յեղավ այն բոլոր շարիքներին, որ գործել եյին այդ յերկու մարդիկը: Հայց մանկլով Արարատյան դաշտը, և տեսնելով նրա թշվառությունները, Սամվելի ցավերը ավելի սաստկացան: Կատարված իրողությունները, վո՛րքան դառն եյին, ա՛յնքան ավելի հատատեցին նրա մեջ այն մթին խորհուրդը, որ վաղուց հղացած եր յուր սրտում: Հայց նա իրան շատ ուշացած եր համարում... Յուր հղացած խորհուրդը խիստ փոքր դարման և փոխարինություն կլիներ այն ահագին վնասներին, որ արդեն կատարվել եյին: Այդ եր, որ այնքան անմխիթար ապաշավության մեջ եր դրել նրան, և այնպես անողոք կերպով կեղեքում եր նրա քնքուշ սիրտը:

Յերեկոյան արեգակը դեռ մայր չեր մտել, ձիաները ճեղընթաց քայլերով հասավ նա Նախճվան քաղաքը: Գնդեցիկ, բարձրադիր բլրակի վրա, Գողթնյաց աշխարհի դվարճասեր քաղաքը ներկայացնում եր ավերակների մի սոսկալի կույտ, որ հրդեհի անխնա բոցերից հետո՝ սառցել եր խիստ մռայլ, սևաթույր տեսք: Ամեն շենք կործանել եր կրակը, ամեն շունչ սպառել եր թշնամու սուրը: Կենդանի մնացածները դերված եյին:

Քաղաքի արևմտյան ստորոտում, ընդարձակ տափարակի վրա, որ տարածվում եր մինչև Արաքսի ձախակողմյան ափերը, դրած եր պարսից դվխավոր բանակը: Սամվելը թողնց անմարդաբնակ քաղաքը, և յուր տապախոմբով դիմնց դեպի բանակը: Բոլոր վրաններից, որ ծածկել եյին տափարակի ամբողջ տարածությունը, ավելի աչքի եյին ղարկում յերկուսը, որոնք դանվում եյին միմյանց հանդեպ, յերկու հողաթումբ բարձրությունների վրա: Վրաններից մեկը յերկնագույն եր, և դվխին ծածանվում եր մի դրոշակ արծվաթև վիշապի նշանով, իսկ մյուսը շիկակարմիր եր, և դվխին ծածանվում եր մի դրոշակ արծվի նշանով: Սամվելը յուր ձին քշեց դեպի վերջին վրանը:

Դեռ չհասած, յերիտասարդի ասպատխոմբից լսելի յեղավ շեփորի ձայն, որին բանակից պատասխանեցին նույն ձայնով: Շատ չանցավ, բանակից դուրս յեկավ մի բարձր առաքճանավոր, և մի խումբ ասպանների հետ՝ դիմավորեց յեկվորներին:

— Ցես վահան Մամիկոնյանի վորդին եմ,— ասաց Սամվելը:— Ինձ առաջնորդեցեք դեպի իմ հոր վրանը:

Ներան տարան դեպի շիկակարմիր վրանը: Մինչև հասնելը, Սամվելի մեջ սիրտ չմնաց: Նա անցնում եր այն բարբարոսական բանակի միջով, որ մի քանի շաբաթվա ընթացքում ավերակ դարձրեց Հայոց աշխարհը:

ամենագեղեցիկ մասը: Նա անցնում էր այն ճշմարտ զբոսնելի միջով, որ մի ժամանակ այդ աշխարհի լեզվանիկ զավակները էին: Մահվան չափ դառն էին այն մի քանի րոպեները, մինչև հասավ նա հոր վրանը: Ի՞նչպես հանդիպել նրան, ի՞նչպես նայել նրա լեռևին:— Այդ հարցերը ավելի սարսափեցնում էին նրան, քան թե չըջապատող սխոր լերևույթները: Նա հավաքեց յուր բոլոր առնաարաուժյունը, ցած իջավ ձիուց, և խուսյն վազեց վրանի ներսը: Նրա մարդիկը մնացին դրսում:

— Ա՛խ, Սամվել... սիրելի՛ Սամվել... բացականչեց շփոթված հայրը, և անզգաց վորդուն յուր կուրծքին:

Մի քանի րոպե մնացին նրանք լուռ դրկախառնության մեջ: Հայրը շեր հավատում յուր աչքերին: Վորդու անակնկալ հայտնվելը այն սարսիճան հափշտակեց նրան, վոր մերթ յերևակայի նման հևհևում էր, մերթ համբուրում էր նրան, և սրտի սաստիկ բարախումնքից մի բառ անգամ շէր դանում յուր զգացմունքները արտահայտելու:

Նա բռնեց սիրելի վորդու ձեռքից, տարավ, նստացրեց յուր մոտ՝ փառավոր բազմոցի վրա: Այն որից, վոր հայրը գնացել էր Տիգրան, շեր տեսել վորդուն: Այն որից անցել էին տարիներ: Վարդին աճել էր, դիղեցիկացել էր, և բոլորովին այրական դեմք էր ստացել: Հայրը նայում էր նրա վրա և աքանչանում էր:

— Սամվե՛լ... Քանդագի՛ր Սամվել... անդադար բացականչում էր նա, և կրկին ու կրկին անգամ վազդատուրնելով, սիրում էր նրա դունատ դեմքը բազմաթիվ համբուրյուններով:

Վարդին դեռ դանվում էր հուզված կրքերի սաստիկ ալեկոծության ներքո, վոր նրան մի տեսակ տենդային դրության մեջ էին դրել: Բայց հայրը վերաբերում էր այդ նրա զգացված սրտին, և յերկար նրա դողդողուն ձեռքը բաց շէր թողնում յուր սիրելի միջից, և դեռ խորին գոհյունքով շարունակում էր նայել վորդու վրա: Նրա հոգին լցված էր անսահման բնկերության, և իրան յերանելի յեր համարում, վոր այնպիսի սիրուն վորդի ունի:

— Ա՛խ, յեթե քեզ դոնե մի անգամ տեսներ Շապուհ արքան,— ասում էր նա սրտային բազձանքներով,— այդ շնորհալի դեմքով, այդ վայելչակազ հասակով, նա անպատճառ քեզ հայոց ամբողջ հեծելազորի հրամանատար կկարգեր:

Այդ խոսքերը այնպիսի անսպասելի կերպով խոսվեցան, վոր Սամվելը խիստ ուշի յեկավ, և մատնեց վորոշել յուր դերը, վորպեսզի չմատնվի:

— Մի այդպիսի բարձր պաշտոն ինձ համար դեռ շատ վաղ է, սիրելի հայր,— պատասխանեց նա բռնի ժպիտով:

— Դու շատ համեստ ես, Սամվել: Բայց նայիր քեզ վրա հուր աչքով, և այն ժամանակ շատ վաղ չես համարիլ: Դու կհիացնես սարսից ամբողջ արքունիքը, յեթե դեթ մի անգամ այնտեղ հայտնվելու լինես: Բավական է, վոր դու ասպետաց կատարես Տիգրանի մեծ հրապարակի վրա, և Շա-

պուհ աղքան յուր պալատի բարձր պատուհաններից նայե քեղ վրա,— այն ժամանակ քո հոր ամենաչքեր վախտերը կատարված կլինեն...

— Դու ի՞նչ դիտես, սիրելի հայր, որ յես ասպախտի մեջ չնորհք ունեմ:

— Մայրդ գրում եր ինձ, մի՛ շա գրում եր, սիրելի Սամվել: Գրում եր քո հաջողակությունը նետաձգության մեջ, գրում եր քո քաջությունները պինաշարժության մեջ, և հորդ կարոտ սիրտը ուրախացնում եր: Ցես մը-խիթարվում եյի իմ պանդխտության մեջ, մտածելով, որ արժանավոր վորդու հայր եմ:— Ա՛խ, յես այնքան հավչտակվեցա քեզանով, որ բո-լորովին մոռացա հարցնել, թե ո՞վքեր են յեկած քեղ հետ:

Սամվելը պատմեց, թե ո՛վքեր են յեկած յուր հետ: Հայրը հրամայեց, որ բոլորին տեղավորեն պատշաճավոր վրաններում:

Հետո կրկին դարձավ նա դեպի վորդին, հարցնում եր մոր մասին, հարցնում եր քույրերի և յեղբայրների մասին, հարցնում եր, թե ի՛նչ «պատրաստություններ» և տեսել մայրը, և մի առանձին հետաքրքրու-թյամբ աշխատում եր տեղեկանալ, թե Տարոնում ի՞նչպես են նայում «դրծերի» վրա, քաղաքացիք ի՞նչ տրամադրության մեջ են, և այլն: Սամվելը հոր հարցասիրությանը բավականություն եր տալիս կա՛մ թեու-թյամբ, կա՛մ անորոշ և յերկդիմի յենթադրություններով, վորոնք կա-տարելապես չեյին գոհացնում նրա հետաքրքրությունը:

— Մայրդ նամակ չտվի՞ց,— հարցրեց նա:

— Ի՛նչպես չե՛:— Սամվելը հանեց ծոցից մոր նամակը և տվեց հորը: Հայրը նայեց նամակի թվականի վրա և զարմացավ:

— Այդ նամակը հին և, սիրելի հայր,— ասաց Սամվելը, և սկսեց պատմել յուր հետ պատահած արկածները, յուր մահամերձ հիվանդու-թյունը, Անձավացյաց Հուլվոց վանքում յերկար ժամանակ մնալը և այլն. Թագրեց Հուլվց միայն՝ յուր առողջանալուց հետո զանազան տեղեր գնալը և զանազան անձանց հետ տեսնվիլը:

— Դա կատարյալ միամտություն և, Սամվել,— նկատեց հայրը վշտա-նալով:— Դու այդքան ժամանակ հիվանդ ընկած ես լինում մի անհայտ վանքում, վո՛չ քո հորը և վո՛չ քո մորը խմացում չես տալիս:

— Ցես խմացում տալիս եյի... բայց իմ մարդիկը գնում եյին և տեղ չեյին հասնում... Դիտե՞ս, հայր, ի՛նչ աղմկալի ժամանակներ եյին... Մարդիկները դրանները ծառի տերևների նման թափվում եյին...

Սամվելը, իրավ, յուր հիվանդության մասին խմացում եր տվել, բայց վո՛չ հորը և վո՛չ մորը, այլ յուր բարեկամներին, վոր այդ միջոցում գըտ-նվում եյին Արտազերս ամրոցի մեջ, պաշարված հոր և Մերուժանի դոր-քերով: Նրա մարդիկը չկարողացան մտնել ամրոցը, և այդ պատճառով նրա հետ պատահած դժբախտությունները մնացին անհայտության մեջ: Հայրը սաստիկ տխրեց այն բոլոր տառապանքների համար, վոր կրել եր վորդին և, դրկելով նրան, բացականչեց.

— Առավոտ քեզ հրեին անդամ պարզևեց ինձ, անդին Սամվել, դո-հուքյո՛ւն և վա՛ռք նրա մեծությանը:

Նամակը թեև հին եր, այնուամենայնիվ, հոր համար շատ հետաքրքրական եր. նա իսկույն սկսեց խորին ուշադրությամբ կարդալ, խընդրելով վորդուն, վոր դնա ևից խորանում լվացվի և ճանապարհի փոշին սրբե երանից: Մի խուռբ պատանիներ, շքեղ կերպով հագնված, պատրաստ եյին այնտեղ սպասավորելու համար: Նրանք բոլորն ել աղդով պարսիկներ եյին, և չեյին ճանաչում Սամվելին: Նրա հայրը այժմ հայ ծառա չեր պահում, և վո՛չ մի հայ նրա մոտ ծառայել չեր ցանկանում: Սամվելը, հորը միայնակ թողնելով, մտավ ցույց սված խորանը, ուր ամեն պարագայք պատրաստ եյին լվացվելու համար:

Վրանը, վորի մեջ դտնվում եյին նրանք, յուր բոլոր հարմարություններով՝ ներկայացնում եր մի ամբողջ շարժական պալատ: Ժամանակի արհասը ավել եր նրան՝ քե՛ վայելուչ ձև և քե՛ շքեղություն: Դրսից, վորպես լինում եյին ամենապարզ աղնվականների վրանները, շրջակարմիր դույն ուներ, իսկ ներսից պատած եր բաց-մանիշակագույն սատինով: Ջանապան մուտքեր տանում եյին դեպի դանազան բաժանմունքներ, վորոնք առանձին խորաններ ձև ունեյին, և պատրաստված եյին այլ և այլ պետքերի համար: Դռների վրևարևն ծառայում եյին մետաքսյա վարագույրներ, վորոնց յեղերքը ղարդարած եյին ոսկեյին ծոպերով: Վարագույրները կախված եյին հատ հատ նարտանների վրա, վորոնց ծայրերից քարշ եյին ընկած վոսկեթել փունջեր: Այդ ամբողջ կազմվածքը, վոր պարսկական շատյլ ճաշակի դործ եր, ամբացած եր փայտյա վոսկեզօծ սյուների վրա, վորոնք զարդարած եյին ամենանուրբ ծաղկանկարներով: Տան ջոկրներ հագիվ կարողանում եյին տանել նրան, յերբ լուծվում եր այդ վրանը: Մի ամբողջ որ հագիվ կարողանում եյին կանգնել նրան, յերբ հարիավոր եր լինում հրեին կազմել: Այդ պատճառով, վրանը միշտ ուրոյ տաղջ տարվում եր հետևյալ իջևանը, վոր ժամանակ ունենային պատրաստելու:

Նա կազմված եր բամբակյան բարձր հողաթումբի վրա, վոր շինված եր ժամանակավորապես վրանը դերծ պահելու համար անձրևային հեղեղներից, վոր դարնան յեղանակներում խիստ հաճախ եյին պատահում այդ կողմերում: Այդ բարձր դիրքից յերևում եր ամբողջ բանակը, վոր տարածվում եր հեռու, շատ հեռու, մինչև Արաքսի ափերը, և բռնել եր կանաչազարդ տափարակի մեծ մասը: Ցևրևկոյան հիսամուսյալի մեջից, բանակի մյուս ծայրում, հագիվ յերևում եր պարսից կարևն անունով նշանավոր դրաստեսի վրանը, վորի դրբեթաճև կատարի վրա ծածանվում եյին պարսկական դրոշակներ: Իսկ Մամիկոնյան իշխանի վրանի հանդիպ՝ յերևում եր Մերուժանի յերկնադույն վրանը, Աթծրունյաց արծվաթև վիշապի վառով:

Ցերբ Սամվելը լվացվեցավ, հագուստը փոխեց և հրեին վերադարձավ հոր մոտ, նա դեռ չեր վերջացրել նամակի ընթերցումը: Ներսը չիանդարձ-

լու համար, անխոս նստեց մի կողմում, և լուռ նայում էր հոր դեմքի մթին արտահայտություններին վրա, որ մոչ բոլորովին մխիթարական էին: Դա նամակ չէր, դա մի ընդարձակ զեկուցում էր, որով Սամվելի աչալուրջ մայրը մանրամասնորեն հաղորդում էր իր ամուսնին «գործերի» դրության մասին Տարոնում:

Նամակի ընթերցումից հետո՝ հայրը դանդաղում էր մի անուակ մտահոգ տրամադրության մեջ: Կինը, ի միջի այլոց, զգուշացրել էր նրան՝ «չսա չհավատալ Սամվելին»... Կնոջ մի այդպիսի դիտողությունը բոլորովին տարօրինակ էր թվում նրան: Իրրև բարձր աղնվական, մանավանդ իրրև հայր, նա չկարևակայել անգամ չէր կարող, թե որդին կհամաթձակվիր անհնական կամք և անհնական ցանկություններ ունենալ: Նա դեռ նայում էր Սամվելի վրա, որպես նախկին չկրեխայի վրա, առանց նկատելու, որ չկրեխան աճել էր, զարգացել էր և անհնական մտածությունների տեր էր դարձել: Նրա մեջ՝ աղնվատեսական կամայականությունը՝ իր հպատակներից հետո՝ անցնում էր և որդու վրա: Այդ էր պատճառը, որ նա իր գործերի վերաբերությամբ՝ որևէ պատասխանատվություն դնել որդին չէր զգում: Նա կարծում էր, թե ինչ որ հաճելի չի կեղել իրան, նույնը, անտարակույս, պետք և հաճելի լինի և որդուն: Նա համոզված էր, թե ինչ որ ինքը արել է, կամ ինչ որ դեռ ևս դիտավորություն ունի անելու,— բոլորը նույնքան ախորժելի պետք և լինեն որդուն, որքան իրան, որովհետև գործողը հայրն է: Նրա համար բոլորովին խորթ էր այն մխոքը, թե որդին ընդունակ էր, կամ իրավունք ուներ քննադատելու հոր գործողությունները: Ուրեմն ինչո՞ւ չհավատալ Սամվելին:

Նա նայում էր կատարված իրողությունների ահավորության վրա իր անձնական նեղ տեսակետից: Ցնթե կործանվեցան քաղաքներ և հրդեհվեցան մեծաշեն ավաններ, յնթե դերի առնվեցան բազմաթիվ բնակիչներ և արյունով ներկվեցան հայրենի յերկրի դաշտերն ու անդաստանները,— չնո՞ր այդ բոլոր չարիքները չգործվեցան լոկ չարագործության համար, այլ հայանի, որոշ, և կանխատես վճռված քաղաքական նպատակների համար, որ խոստանում էին փայլուն արդյունքներ: Ցնթե հայրը կհամաներ սպասած արդյունքներին, ո՞ւմ համար եր, յնթե ոչ որդու համար, ո՞ի պետք և փայելիր, յնթե ոչ որդին:— Ահա այդպես եր մտածում հայրը, այդպես էին փառասեր իշխանի դատողությունները, և այդ պատճառով, նրան բոլորովին տարօրինակ էին թվում կնոջ նախազգուշությունները, թե «չսա պետք չէ հավատալ Սամվելին»... ինչո՞ւ չհավատալ: Մինե Սամվելը դեռ այնքան տհա՞ս եր, որ հասկանալ չէր կարող հոր բարի ցանկությունները, որ նույն իսկ որդու բախտավորության համար էին...

Բայց որդին այլապես եր մտածում. հայրենիքի կործանման մեջ որոնած փառքը՝ նա հայրենիքի դեմ դավաճանություն եր համարում: Առանց մոր նամակը կարդացած լինելու, նա արդեն դիտեր բովանդակությունը: Այդ պատճառով, երան բոլորովին հասկանալի էին հոր հուզ-

մանքը, վոր նամակի ընթերցումից հետո՝ նա ամենայն դժվարությամբ աշխատում էր թաղցնել: Բայց վորդուն պետք էր համակերպվել հոր հետ, պետք էր դրան առժամանակ կնդծել, վորը նրա համար սաստիկ ծանր էր:

Ցերեկոյան մթությունը բոլորովին պատել էր բանակը, յերբ Մամիկոնյան իշխանի վրանում վառեցին լապտերները: Այդ ժամանակ բանակի մյուս վրաններում ևս հետզհետե սկսեցին յերևնալ լույսեր, վոր խիստ տարբեր տպավորություն էին գործում Սամվելի վրա: Նա կցանկանար, վոր բնավ լույս չլիներ, և ամեն ինչ հավիտյան խավարի մեջ մնար, վոր չտեսներ այն առելի բանակը, վոր այնպես անխնա կերպով կեղեքում էր նրա սիրտը: Շրջակայքը արդեն ծածկված էին թանձր մթության մեջ, և ամենուրեք տիրում էր գերեզմանական հանդստություն: Միայն ահարկու բանակն էր, վոր յերեկոյան լուության մեջ՝ շնչում էր, վորպես մի հրեշավոր մահացություն: Ընթրիքի ժամն էր: Նա, անշարժ վիշապի նման, պատրաստվում էր կերակրվել, վոր ավելի մեծ կատաղությամբ կատարի յուր սոսկումները: Ջինվորները հավաքված էին բացօթյա խարույկների շուրջը և իրանց համար կերակուր էին պատրաստում: Իսկ դրան պետերի շրջակա խոհանոցները բուրում էին համադամ խորտիկների ախորժելի հոտով:

Միայն ընթրիքի ժամանակ Մամիկոնյան իշխանը հրամայեց կանչել յուր մոտ՝ Սամվելի հետ յեկած մարդիկներից՝ Ծերունի Աբրահամին և Աբասավղի մանուկին, վորը նույնպես Մամիկոնյան տանից էր: Ցերը նրանք մտան, աշխույժ պատանին ուրախությամբ վազեց, փաթաթվեցավ իշխանի պարանոցին, իսկ Ծերունին մնաց վոտքի վրա:

— Դու, յերևի, չգիտես պատճառը, վոր յես կղզայի Սամվելի հետ,— ասում էր նա, յուր անհանդիստ ձեռքերով փայփայելով իշխանի ուսերը:— Տեսա՞ր ինչպես յեկա:

— Դու ամենաիմաստունի հատակությունդ ևս միշտ այդպես քաջ եղիր, սիրելի Աբասավղդ,— պատասխանեց իշխանը, նստացնելով նրան յուր մոտ:— Իսկ այժմ բավական սիրուն և հասած տղա յես դարձել, ի հարկե, հիմա ավելի քաջություն կունենաս:

Այս խոսքերը ավելի դրդռեցին Աբասավղի անհանգստությունը, և ամեն ավելի նրան հարցնելու.

— Այդ բանակում պարսիկ պատանիներ կա՞ն:

— Կան: Ինչո՞ւ համար ևս հարցնում:

— Ցնա յեկել եմ նրանց հետ մրցելու, վոր ցույց տամ, թե հայ պատանիները վա՛ղքան ճարպիկ են պարսիկներից:

— Այդ դու կանես Տիզբոնում, սիրելի Աբասավղդ, Շապուհ արքայի պալատական տղաների հետ:

— Դու ինձ կտանե՞ս այնտեղ:

— Ի հարկե, կտանեմ:

Պատանին սկսեց ուրախանալ:

Կայտառ, կյանքով լի պատանին այն աստիճան հափշտակել եր իշխանին, որ նա նոր նկատեց, որ Ծերունին վոտքի վրա չեր, և դարձավ դեպի նա, ասելով.

— Նստիր, Արբակ, ինչո՞ւ չես կանգնած:

Ծերունին թոնթորալով նստեց: Նա Մամիկոնյան տան ամենահին դասակներից մեկն եր, որ ձեռքերի վրա անուցել եր վորպես իշխանին, նույնպես և նրա վորդի Սամվելին:

— Ի՞նչպես ես, Արբակ,— ժպտալով հարցրեց իշխանը:— Ամենքը փոխվել են, դու միայն մնացել ես միևնույնը, վորպես տեսել եմ մի քանի տարի առաջ: Վո՛չ ծերացել ես, և վո՛չ մանկացել:

— Արտաքին կեղևը միշտ խարուսիկ է լինում, տեր իշխան,— պատասխանեց Ծերունին յուր սովորական պարզախոսությամբ:— Միայն ասուված է իմանում, թե ներսում ի՛նչ կա... Մաղերս, իրավ է, շատ չեն ճերմակացել, բայց սրտումս այլևս կյանք չէ մնացել...

— Ինչո՞ւ, Արբակ, ի՞նչը կարող եր քեզ այդպես վշտացնել:

— Շատ բան, տեր իշխան: Աշխարհս փոխվել է... ամեն ինչ տակնուվրա չե լեղել... և նրանց հետ տակնուվրա չե լինում մարդու սիրտը... Ո՞ւր են հին ժամանակները... դնացի՛ն, այլևս հետ չեն դա...

Իշխանը հասկացավ բարեսիրտ Ծերունու վշտերը, և նրա զրույցները ներին ավելի ընթացք չտալու համար, խնդրեց խոսակցությունը, մանավանդ, վոր սպասավորները ներս մտան, սկսեցին ընթրիքի սեղանը պատրաստել:

Ճոխ ընթրիքը պարսկական շռայլ խոհանոցի ամենանուրբ արդյունքներից մեկն եր, վոր յուր վրա դարձրեց բոլորի թե՛ ախորժակը և թե՛ ուշադրությունը: Մինչև անգամ Ծերունի Արբակը, վորի համար անսովոր էլին այն տեսակ կերակուրները, մեծ ախորժակով ուտում եր: Սրծաթյա մեծ սրվակների մեջ՝ դրած էլին զանազան տեսակ ոշարակներ և գինիներ: Շքեղ հագնված սպասավորները, վոտքի վրա, վոսկյա մեծ գավաթներով մատուցանում էլին անուշ գինին, իսկ սեղանակիցները լուռ ուտում էլին և խմում: Ուտում եր և վշտալի Սամվելը:

— Դեզ ի՞նչպես են թվում այս կերակուրները,— հարցրեց հայրը:

— Ուտում եմ... ասաց Սամվելը անուշյթ կերպով, վորովհետև բավական ժամանակ է, վոր տաք կերակուր չեմ կերել:

— Ինչո՞ւ:

Սամվելի փոխարեն պատասխանեց Արտավազդ մանուկը.

— Նրա համար, վոր ճանապարհին ինչ դյուղ կամ ինչ քաղաք հասնում էլինք, տեսնում էլինք, վոր մարդիկ չկան, տները այրված են, և ամեն ինչ վոչնչացրած: Վո՞րտեղից պետք է կերակուր գտնեյինք:

Իշխանը լուռ մնաց: Պատանու պատասխանը կծու չեր, քան ամեն հանդիմանություն:

Սամվելը ընթրիքի բոլոր ժամանակը չեր խոսում: Նա մի փոքր կե-

բավ և ապա հեռացավ սեղանից: Հայրը հաճախ դառնում էր դեպի նա, աշխատում էր զրաղեցնել, հարցնում էր թախծության պատճառը, և միշտ միևնույն պատասխանն էր առանում, թե աստիկ հոդնած է, շատ դիշերներ չէ քնել, կցանկանար հանդստանալ և այլն:

Ցերը հավաքելին ընթրիքի սեղանը, հայրը հրամայեց, որ յուր տղեներալով վրաններից մեկը հատկացնեն Սամվելի կացության համար և այնտեղ պատրաստեն նրա անկողինը:

— Իմ անկողինն էլ թող այնտեղ պատրաստեն,— մեջ մտավ Արտավազդ մանուկը:

— Ցես քեզ Սամվելից չեմ բաժանի, սիրելի Արտավազդ,— ասաց Խոսրանը և գրկեց նրան:

Հայրը հատկացրեց Սամվելին առանձին ծառաներ, պատվիրելով, որ մեկը նրա ոտասում լինեն: Բայց վորդին հրաժարվեցավ, պատճառ բերելով, թե ինքը ընտելացած է յուր ծառաներին, վորովհետև նրանք գիտեն յուր բոլոր սովորությունները:

— Ձո ծառաները թիվը շատ փոքր է, Սամվել,— նկատեց հայրը:— Պարսից սովորությունների համեմատ, դու պետք է դոնե հարյուր յերկու հարյուր ծառաներ ունենաս, յեթե վոչ, անպատշաճ կլինի քեզ՝ մի վոևէ տեղ յերևնալ: Եղուց պետք է դնաս քեռուդ (Մերուժանին) տեսնելու, այլև պետք է այցելես մի քանի պարսիկ զորապետների, իբրև կարելի յե այդքան սակավ ծառաներով դնալ:

— Ցես ծառաներ շատ ունեյի, հայր,— ասաց Սամվելը հարկադրված ծիծաղով,— բայց մեծ մասը ճանապարհին կորցրի: Ցես դուրս յեկա տասից յերեք հարյուր ծառաներով, իսկ այժմ մնացել են քառասուն հոդի միայն:

— Ցես պակասած թիվը կլրացնեմ,— ասաց հայրը մի առանձին բավականությամբ:— Դու պետք է քո հորը և քո տոհմին վայել նիստ ու կաց ունենաս:

— Ցես կարող եմ յերկու ծառայով ևս դնալ Մերուժանի մոտ, ինձ շատ մարդիկ պետք չեն,— միամտությամբ ընդմիջեց Արտավազդ մանուկը:

— Դու կարող ես միայնակ էլ դնալ, սիրելիս,— ասաց նրան իշխանը ժպտալով:— Դու դեռ փոքրիկ ես: Ցերը կմեծանաս, Սամվելի չափ կդառնաս, այն ժամանակ շատ ծառաներ պետք կածես քեզ հետ:

Բանակը արդեն մրափում էր ծանր, խաղաղական քնով. լապտերները մարել էյին, և մի քանի զորապետների վրաններում միայն լույս էր յերևում: Սամվելը վեր կացավ, և հորը «բարի-դիշեր» մաղթելով, դիմեց դեպի յուր համար պատրաստված վրանը: Նրան հետևեց Արտավազդ մանուկը, համբուրելով իշխանի աջը: Ծերունի Աբրահի համար պատրաստված էր առանձին վրան, որ մոտ էր Սամվելի վրանին: Այնտեղ գնացին Սամվելն և մյուս մարդիկը:

Սամվելը խնդուն հանվեցավ, մոտավ յուր անկողնի մոջ։ Փափուկ անկողինը հրավիրում եր անուշ քուն, բայց յերկար քնել չկարողացավ նա։ Անդադար շուռ եր գալիս մի կողքից դեպի մյուսը և լուռ հոդվոց եր հանում։ Նրա մոտ պահված եր պատանի Արտավազդը։ Նա նույնպես անքուն եր, նա նույնպես անհանդիստ եր։

— Դու շատ անզգույշ ես քո խոսքերի մոջ Արտավազդ,— նկատեց նրան Սամվելը։

— Այդ վոչինչ, ես իմ բանը գիտեմ... պատասխանեց խորամանկ պատանին։

Սամվելը գարձյալ լռեց, գարձյալ նրա քունը չեր տանում։ Նույն մելոջին անքուն տանջվում եր յուր անկողնում և մի այլ անձն՝— նրա հայրը...

ՄԻ ՏՐՈՒՅՆԱԿ ՎՈՂՋԱԿԵՋ

«Սիսան այնուհետև (Մերուժանն Արծրունի և վահանն Մամիկոնեան) յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ դեղոյս ազօքից քրիստոնէիցս յամենայն կողմանս Հայոց գաւառաց գաւառաց և կողմանց կողմանցն»։

Փաւստոս։

«Եւ զորս մի անգամ գերս զամենեքին (Մերուժան) այրեր»։

Խորենացի։

Սամվելը ամբողջ գիշերը անցկացրեց տենդային անհանգստության մոջ։ Առավոտյան լուսաբացին միայն նրա քունը տարավ, բայց յերկար չտևեց, վորովհետև պատանի Արտավազդի չատախոսությունները շուտով դարթեցրին նրան։

— Վեր կաց, ի՞նչ քնելու ժամանակ է,— ասաց նա յուր սովորական կատակներով։— Ցերեկ, յերեկոյան կխամրացրի ժամանակ կհնած լինելու, մենք վոչինչ տեսնել չկարողացանք, բայց ահա՝ արեգակը ծագել է և նկարել է մեր առջև հրաշալի տեսարաններ, վորոնց վրա կարելի յե նայել, և սարսափե՛լ... Նա արդեն, դեռ արևը չծագած, մի քանի անգամ դուրս եր հանել վրանից և նայել եր նրա շուրջը։

Սամվելը քնատ աչքերը բաց արավ, բայց վոչինչ տեսնել չկարողացավ, վորովհետև վրանի վարագույրները ցած եյին թողած։ Ներսում դեռ մթություն եր խորին մթություն։ Պատանին վեր ցատկեց յուր անկողնից, բարձրացրեց վարագույրի մի կողմը։ Արևի մեղմ ճառագայթները խնդուն լցրին վրանը անորժելի ջերմությամբ։

Շատ չանցավ, ներս մտավ պատանի Հուսիկը, Սամվելի հավատարիմ ապառավորը, և հավաքեց անկողինները: Այդ ուրախ, անհոգ պատանին անցավ, դնդքերի ու հանդամանքների տարբեր տպավորության ներքո, բոլորովին կորցրել էր յուր սովորական դիմաբերությունը: Ամեն առավոտ, յերբ հետևյալ օրը նա յուր սերոջ մոտ, միշտ նրա բերանում պատրաստ էր մի նոր ծիծաղելի համբավ, մի նոր արտահայտություն, որով նա հիշաներ յուր սերոջ թեմածությունը: Իսկ այս առավոտ ներս մտավ նա տրտում դեմքով, և միայն յուր վառվռուն աչքերով նայեց Սամվելի յերեսին, տեսնելու, թե ինչ արտահայտության մեջ էր սիրելի տերը, և տպա լուռ կերպով սկսեց յուր գործը: Չդարձավ նրա յերեսին դուրն չկա... դարձավ նրա սիրտը հանգիստ չեղ... մտածում էր նա, և ինքն իրան ավելի տըխրում էր: Ամփոփելով յուր գործը, հրկին լռությամբ դուրս դնաց նա:

Ներս մտավ ծերունի Աբրահը և, գլուխ-լույա տալով, նստեց մի կողմում: Նրա վշտալի սիրտը այս առավոտ ավելի խռովված էր, քան ուրեմն այլ ժամանակ:

Սամվելը արդեն լվացվել և հագնվել էր: Ծերունին հայտնեց, թե հարը մի քանի անգամ մարդիկ և ուղարկել տեղեկանալու, արդյոք վի՞ր և հացել վորդին, թե վոչ:

— Այդպես վաղ ինձ հետ ի՞նչ գործ ունի,— հարցրեց Սամվելը:

— Նախաճաշիկ ուտելու յի հրավիրում,— պատասխանեց ծերունին:— Նրանք դինվորական մարդիկ են, վաղ վեր են կենում, և վաղ ել ուտում են: Մենք ել պետք է հարմարվինք նրանց սովորություններին:

— Ավելի լավ կլիներ, յեթե մեղ այստեղ մի բան տային ուտելու:

— Վոչ, դու պիտի դնաս հորդ մոտ,— խորհուրդ տվեց ծերունին:

— Ուղիղ և ասում Աբրահը, հարկը պահանջում է, վոր մենք դնանք այնտեղ,— հառաչանք և պատանի Արտավազդը ծիծաղելով:

Սամվելը վոչինչ չպատասխանեց: Նա այս առավոտ դանվում էր բոլորովին արտառոց վիճակության մեջ: Սկսեց լուռ կերպով նայել դեպի բանակը:

Արևը բարձրացավ, և վորքան բարձրանում էր նա, այնքան նրա պայծառ լուսավորության ներքո՝ յերևան եկին դաշտում տարածված բանակի առարիուր տեսարանները: Սամվելի աչքերը կանդ առին Մերուժանի յերկնադույն վրանի վրա: Նրա առջև բարձրանում եկին մի քանի բրդաձև բլրակներ: Այդ բլրակները կազմված եկին վո՛չ քարից, վո՛չ աղյուսից և վո՛չ հողից, այլ մի տարորինակ նյութից: Սամվելը յեկեալ նայում էր նրանց վրա, բայց վորոշել չէր կարողանում, թե ի՞նչ եկին նրանք: Արևի վառվռուն ճառագայթները վայելում եկին այն մուլդ-կարմրագույն ներկի վրա, վորով ածված եկին բլրակները: Այդ ներկը արյո՞ւն էր,— մարդկային շռայլած, անպետք արյո՞ւն... Սամվելի ամբողջ մարմինը անցավ մի դաժանելի սարսուռ, յերբ ավելի ուշադրությամբ սկսեց նայել:— Բլրակ-

ները կազմված էին մարդկային կոթևած կառույներից, վորոնց այլանդակ հուսահատությունը սարսափ էր ազդում:

— Այդ ի՞նչ կառույներ են,— դողդող յերկտասարդը, աչքերը բռնելով:

— Ի՞նչ կառույներ են... կրկնեց Ծերունին, դլուխը շարժելով:— Հայ ընտանիքի, հայ խաչնարածի և հայ յերկրագործի կառույներ են: Մերուժանը այդ կառույների յուրաքանչյուրի համար մի-մի վոսկի յի վճարել պարսիկ դինվորներին, և նրանք դնացել՝ խեղճերին դաշտերից վորսացել են, և դլուխները կտրել են: Դրանք Մերուժանի հայրենիքի ամենաթանդագին ընծաներն են, վոր նա պետք է տանե և նվիրե պարսից արքային, պարծենալով, թե հայոց աղնվականների դլուխներ են:

Ցավ իրավ, մի խումբ դինվորներ լցնում էին յերևանական մթերքը մեծ տոպրակների մեջ, վոր պետք է բանային ուղտերի վրա և տանեին Տիդրոն:

Լսելով Ծերունու բացատրությունները, Սամվելը խոպոռ չվարված մնաց: Նա դիտեր յուր հոր անգթությունը: Նա դիտեր և Մերուժանի վայրագությունը: Բայց յերևակայել անդամ չեր կարող, մարդկային բարբարոսությունը այս աստիճան վայրենության հասած: Ցավ այս բարբարոսությունը կատարել եր յուր քեռին, վորին դործակից եր և յուր հայրը...

— Ահա՛ այն անակնկալ պատասխանությունը, վորով հայրս վաղ առավոտյան հյուրասիրում է մեզ... ասաց նա դառնացած ձայնով և աչքերը վառվեցան խորին վրդովմունքով:

Սոսկալի տեսարանը ազդեց և պատանի Արտավազդի վրա, վորի պայծառ աչքերում հայտնվեցան արտասուքի խոշոր կաթիլներ:

— Այլևս ինչո՞ւ համար են դիմել այնտեղ այդ արյունաներկ դլուխները,— դողդող նա լալագին ձայնով:

— Ցույցի համար, սիրելի Արտավազդ,— պատասխանեց Ծերունին:— Մերուժանը սիրում է սարսափ ձդել, և այդ դլուխները դրել է յուր դերձնների առջև, վոր նրանց ղդալ տա, յերթե չեն խոնարհվի յուր հրամաններին, այն ժամանակ նրանց դլուխներն ևս կավելանան այդ կտրված դլուխների վրա:

— Ի՞նչ հրամաններ,— հարցրեց պատանին դայրանալով:

— Նա պիտի առաջարկե յուր դերձիներին, վոր Թողնեն քրիստոնեությունը և ընդունեն պարսից կրոնը:

— Ջարադո՞ծ,— դողդող պատանին և մնաց զարմացած:

Բանակից դուրս, ավելի ընդարձակ տարածության վրա, դետեղված էին կենդանի ընծաները— դերիները,— վորոնց Մերուժանը պետք է տաներ պարսկաստանի պարսից՝ արքային: Դրանք նույն դերիներն էին, վորոնց Թիվն ու համարը այնպես նախատական լեզվով հաղորդեց Հայր-Մարդպետը հայոց Թադևոսին— Փառանձեմին, յերբ դիշերը դաղտագողի կերպով Տաոն Արտաշեսը ամրոցը: Այդ ահագին բազմությունը, իրանց տեսի և հասակի համեմատ, բաժանված էին դանազան խումբերի: Ծուրա-

քանչյուր խումբը բաղկացած էր հինսունական հոդուց: Մի յերկար պարան, ողակ-ողակ հանդուցյններով, միացնում էր ամեն մի առանձնացած խումբի պարանոցները միմյանց հետ, կազմելով մի կենդանի չղթա: Ցեղ վորպեսզի պարանի հանդուցյնները բաց անել չկարողանային, նրանց ճուքերը սկսող կապած էին քամակի վրա: Վո՛չ մի ծեր մարդ, վո՛չ մի պառավ կին չեր յերևում այդ թշվառ բազմության մեջ: Ընկեր յերևում և փոքրիկ մանուկներ: Պարսկական անգութ սուրը ծերունիներին և մանուկների կյանքին վերջ տվից հենց իրանց տեղում: Այդ անպետք ծանրությունները իրանց հետ առնել չկամեցան, և ընտրեցին ըստ մեծի մասին յերիտասարդներին:

Գերիները պատսպարվելու համար վրաններ չունեին: Նրանք գիտնաւորած ընկած էին բացօթյա դաշտի վրա: Ցերեկը արևը խորովում էր նրանց: Իսկ գիշերը ցուրտը սառցնում էր: Նրանք բաղկացած էին հայերից և հրեաներից, վորոնց մեծ մասը Լուսավորչի որերում քրիստոնեություն էին ընդունել: Վերջիններըի թվումն էր և նրանց Զվիթա անունով նշանավոր յերեցը, վոր ինքնակամ միացավ յուր հոտի հետ: Այդ հրեաները Տիգրան Բ-ի որերում, Բարդուխրան Ռշտունու ձեռքով, գերի բնակվեցան Հրեաստանից: Տիգրանի գաղթ գորապետը նրանցով լցրեց հայոց քաղաքների պատարիւնքյունը, և բազմամարդ դարձրեց յերկիրը մի գործունյա և խելացի ժողովրդով: Իսկ այժմ, Մերուժան Արծրունին, դատարկելով նույն քաղաքները, նրանց վարում էր Պարսկաստան: Հայ գերիների թվում կային շատ յեպիսկոպոսներ, վարդապետներ, յերեցներ և յեկեղեցական այլ պաշտոնյաներ, վորոնց թիվը հասնում էր մի քանի հարյուրի: Նրանց չղթայակապ շարել էին միմյանց հետ, և դատել էին մյուս գերիներից:

Հայերը կրկին անգամ մարդ ուղարկեց կոչելու վարդանին, բայց վորդին դեռ չարունակում էր նայել հոր և յուր քեռու դործերի վրա: Սրտի և հոգու անհնարին ամրություն էր հարկավոր, վոր այդ զարհուրելի տեսարաններից հետո, մարդ կարողանար առանասիրտ մնալ: Բայց Սամվելը չուներ այդ ամրությունը: Ճանապարհին, դալու ժամանակ, տեսավ նա այն ավերակ քաղաքներն ու ավանները, վոր դեռ ծխում էին կրակի մեջ: Իսկ այժմ տեսնում էր նրանց դժբախտ բնակիչներին: Դրանց պետք և փչելին հետո՛ և հետո՛, դևսել Պարսկաստանի խորքերը: Ցեղ ո՞վքեր:— Մեկը յուր հայրը, մյուսը՝ յուր քեռին՝— Մերուժանը...

Դարձյալ կինկան կոչելու Սամվելին: Այս անգամ դնաց նա, և նրա հետ դնացին իշխանի մոտ ծերունի Արրահին ու պատանի Արտավազդը: Սամվելը աշխատում էր ուրախ ձևանալ, աշխատում էր, վորքան կարելի յե, առանասիրտ լինել: Բայց բոլոր կեղծավորությունը չեր հաջողվում նրան: Նա դասել հորը միայնակ յուր վրանում, դրաղված էր նամակագրությամբ, և չատ հավանական էր, վոր դրում էր հինդ նամակի պատասխանը: Տեսնելով վորդուն, մագաղաթյա թերթը մի կողմ դրեց, հարցնելով.

— Ի՞նչպես ես այժմ, դու դիշերը շատ անհանգիստ եյիր:

— Գիշերը բավական հոգնած եյի,— պատասխանեց Սամվելը և, մտածելով, համբուրեց հոր աչքը:

Նրա որնիակին հետևեց և պատանի Արտավազդը: Արբակը միայն «բարի լույս» ասաց և նստեց:

Նախաճաշիկը արդեն պատրաստ դրած եր այնտեղ: Իշխանը խնդրեց նրանց ճաշակել, իսկ ինքը շարունակեց վերջացնել նամակը:

Հետևից հայտնվեցավ մի սպիտակ ձկնավոր, որը վեհապանծ կերպով չորքան եր դրծում բանակի մեջ: Մի խումբ զինված համհարզներ, դեղեցիկ նժույգների վրա նստած, հետևում եյին նրան: Սամվելը տեսավ և չկարողացավ զսպել յուր ծիծաղը: Բայց նրա ծիծաղը ա՛յն աստիճան դառն և ա՛յն աստիճան մաղձոտ եր, որը յուր վրա դարձրեց հոր ուշադրությունը: Նա նամակը մի կողմ դրեց, և հետաքրքրությամբ նայեց վորդու յերեսին:

— Մերուժանը բավական չտապի՛լ և,— ասաց վորդին,— դեռ հայոց թագավորը չդարձած, թագավորի ձևեր և բանեցնում...

— Ի՞նչպես,— հարցրեց հայրը վոգր ինչ հուզված ձայնով:

— Ահա՛ այդպես... Նստած և սպիտակ նժույգի վրա... Նժույգի բաշն ու ապին ներկել և ավել վարդի գույնով... Զի՞ վոր, այդ իրավունքները վայելում եյին միայն Արշակունի թագավորներն ու թագավորազնները...

Հայրը զարմացած լսում եր: Վորդին, ավելի ուշադրությամբ նայելով Մերուժանի վրա, ավելացրեց.

— Ցնվ կարմի՛ր վարտիք ունի հագած... և կարմի՛ր կոշիկներ և կրում... դրանք ևս առանց նշանակության չեն...

Հայրը չդիտեր ի՞նչպես բացատրել Սամվելի նկատողությունները. արդյոք հեղնությո՞ւն, թե իրավ վորդին կանխատես եր դառնում Մերուժանի անսահմանությունը:

— Ինչո՞ւ յես այդ զարմացնում քեզ, Սամվել,— պատասխանեց նա համոզիչ յեղանակով:— Մերուժանին արդեն կարելի յե Հայոց թագավոր համարել: Բավական է, վոր նա այս բաղմաթիվ դերիններին հասցնե Տիգրան, այն ժամանակ Շապուհ արքան մեծ ուրախությամբ կտա նրան Արշակունիների թագը:

— Այդ ինձ բոլորովին չե զարմացնում, սիրելի հայր,— պատասխանեց Սամվելը հիսահեղնական ձայնով:— Ցնս համոզված եմ, վոր Շապուհ արքան Մերուժանի այդքան մեծ ծառայությունների համար՝ անպատճառ կտա նրան Արշակունիների թագը...

— Կտա՛... ընդմիջեց ծերունի Արբակը, վոր բոլոր ժամանակը խորին մտածմունքով լսում եր:— Կտա՛ նրան Արշակունիների թագը... Բայց այն թագը յուր գլխին դնելն է ամենամեծ դժվարությունը...

Իշխանը խնդ կերպով նայեց պատրաստոց ծերունու վրա, հարցնելով.

— Ինչո՞ւ, Աբրա՛կ։

— Նրա համար, ան՛ր իշխան, վոր այսոր կամ եղուց, հանկարծ հկայտնվի Պապը, Արշակունիների օրինավոր ժառանգը և, հավաքելով յուր շուրջը հայոց ցրիվ յնկած նախարարներին, կրկին տեր կդառնա յուր հոր անառակ մնացած գահին... Այս ճերմակ դյուրը չատ բան և տեսել, ան՛ր իշխան,— նա ձեռքը տարավ դնալի ուրուր մազերը,— այդ ևս իմ աչքերով տեսնում եմ... Այո՛, կդա Պապը և տեր կդառնա յուր հոր գահին...

Իշխանը սկսեց արհամարհանքով ծիծաղել։

— Դյուրդ,— ասաց նա,— իրավ և, ճերմակացել և, բայց կուրծքիդ մեջ դեռ յերևնալի սիրտ ևս կրում, Աբրակ։ Դիցուք թե, հայտնվեցավ դեռ անմորճ, դեռ բոլորովին յերիտասարդ Պապը։ Դիցուք թե հավաքեց յուր շուրջը հայոց ցրիվ յնկած նախարարներին։ Բայց ի՞նչ կարող են անել նրանք։ Դու կարծում ևս, վոր այդ բոլորը չե՞ նախատեսված։ Մեսրուժանը ապատաժի վրա ցանող մարդիկներից չե. նա դիտե յուր գործը։ Նա բավական մեծ խելքի տեր մարդ է։

Ներսունին, դյուրը բացատական կերպով չարժելով, ասաց.

— Ցնա նրա մեջ վո՛չ թե մեծ խելք, այլ մի կոզյակի չափ խելք չեմ դտնում, ան՛ր իշխան։ Նա կամենում է հայոց թագավոր լինել, բայց մի հնություն ժամանակ, ավերակ ու անմարդաբնակ է դարձնում այն յերկիրը, վորի թագավորը պետք է դառնա։ Դա ի՞նչ խելք է։ Մի քիթ խավարասեր բուն նման՝ նա ավերակների՞ վրա պետք է թագավորե։ Ո՞ւր է տանում այդ դերիներին, և ի՞նչի համար։

Ներսունին այն ատելության հարցված էր Մամիկոնյանների տան մեջ, վոր իշխանը չբարկացավ նրա վրա, այլ հարկավոր համարեց բացատրել յեղելությունների բուն պատճառները, և ապացուցանել, թե իրավ Մեսրուժանը մեծ խելքի տեր մարդ է, և դիտե կանխատես նախատեսել ապագան, և նրա համեմատ ընթանալ յուր գործերը։

— Հենց դրա մեջն է Մեսրուժանի խելքի մեծությունը, սիրելի Աբրակ, վոր նա դատարկից Հայոց յերկիրը,— պատասխանեց իշխանը ժպտալով։ — Ցերը կհայտնվի Պապը, նա Հայոց յերկրում վո՛չ մի նշանավոր բերդ կամ ամրոց չի դտնի, վորի մեջ կարող լինի պատսպարվել։ Բոլորը կործանեց, բոլորը վոչնչացրեց Մեսրուժանը։ Ցնչ ամրություններ ևս վոր այժմ մնացել են, դանվում են մեր բերդապահների հսկողության ներքո։ Բոլորի մեջ դրել ենք պարսկահայ զորքեր։ Նրանց մեջ պահված են և՛ դեպի Հունաստան դնացած, և՛ հռոմեացոց ազնվության դիմող նախարարների կանայքն ու զավակները։ Բավական և, վոր այդ նախարարները իրանց բերած հռոմեական զորքերով մի քանի տեղ դեպի մեր գրավված բերդերը,— խնդրեն իրանց տղան կդտնեն իրանց կանանց և զավակներին կոխ տված բերդերի աչտարակներից։ Թո՛ղ այն ժամանակ նրանք իրանց նետերը արձակեն դեպի իրանց զավակների դեմքերը։ Իսկ այն, վոր ա-

սում ես դու, թե ինչո՞ւ համար և այդ պերուհյունը,— պետք է դիտենաս, որ Մերուժանը քանիներից դատարկեց այն գավառները միայն, որոնց ժողովուրդը կարող էր ավելի հզոր հենարան լինել Արշակունյաց թագաժառանգին՝ յուր հոր գահը բարձրանալու: Մերուժանը ամայի դարձրեց միայն Արարատը և նրա շրջակա գավառները: Իսկ Աբարատը Արշակունյաց պահի ամուր պատվանդանն է: Պետք էր, և անհրաժեշտ էր, խորտակել այդ պատվանդանը, որպեսզի թագաժառանգը՝ Բյուզանդիայից Հայաստան գալու ժամանակ՝ յուր վոտքերի տակը դատարկ դաներ և ո՛չ մի հատատ կռվան չունենար, որի վրա կարող լիներ հենվիլ: Տեսնո՞ւմ ես, սիրելի Աբրամ, այդ բոլոր դործողությունների մեջ նպատակ կա, խելք կա...

— Բայց յեղեռնագործի խե՛լք... ընդհատեց Սամվելը դայրացած ձայնով:

Հայրը և՛ զարմացած, և՛ բարկացած աչքերով նայեց վորդու յերեսին: Սամվելը իսկույն զգաց յուր սխալը, զգաց, վոր ինքը դուրս յեկավ խոհեմության սահմանից: Հայրը նույնպե՛ս զգաց յուր սխալը: Կինը դրել եր նրան. «զգուշ լինել Սամվելից»... Իսկ նա չտվից դուրս բացվեցավ վորդու առջև, քան թե հարկավոր եր: Ցավ այդ բոպեյից հոր և վորդու մեջ ակավեցավ մի սեռակ կեղծ հարաբերություն:

Ամբողջ դիշերը անքուն մնալով, հոր վառ յերևակայությունը դրաղեցնում եյին այն դեղեցիկ ցնորքները, թե վո՛րպես պետք եր անորինել սիրելի վորդու ապագան: Նա մի քանի անդամ անհամբերությամբ դուրս յեկավ յուր վրանից և, լապտերը ձեռին, մոտեցավ վորդու վրանին: Ցանկանում եր ներս մտնել, ցանկանում եր նայել քնած վորդու վրա,— յերկար նայել և հիանալ նրանով: Բայց զարձյալ չկամեցավ խանդարել սիրելի վորդու քունը: Ամբողջ դիշերը նրա մտքին եր մտածում և նրանով եր ուրախանում: Ի՛նչ յերանելի հուսեր, ասես, չեր խոստանում այն վայելչադեղ, շնորհալի յերիտասարդը: Նրա մեջ կար ամեն ինչ, վոր կարող եյին հոր փափաքներին լիակատար բավականություն տալ: Ամբողջ դիշերը հրապուրվում եր նա այն փայլուն հաջողակություններով, վոր սպասում եյին վորդուն: Նրա մեջ դտնում եր՝ թե՛ ապագայի հերոսին և թե՛ ապագայի իշխանին: Պարսկական արքունիքի զարդը պետք է լիներ նա, իսկ Հայաստանի փառքը: Բայց այժմ ստրատեգնում եր նրան այն մտածությունը՝ մթնե վորդին հակառա՞կ ոլիսի դնար յուր սրտագին բաղձանքներին, մի-թե արդեն կատարված կամ կատարվելու դործերը ընդդի՞մ եյին նրան: Բացատրություն պահանջել այդ մասին՝ վախենում եր նա,— վախենում եր միանդամից դրկվիլ այն ջերմ փափաքներից, վոր յուր սրտում անուցանում եր վորդու համար: Նրա մի հակառակ բառը, նրա մի մերժողական խոսքը կարող եր վոչնչացնել ամեն ինչ: Նա դտնվում եր այն ծանր յերկընտրական դրության մեջ, վորպես մի մարդ, վոր ապատում և մահամերձ վորդու մասին մի լուր: Սառնում և նամակը, բայց չե համարձակ-

վում բաց անել: Նամակը կա՛մ պիտի ավետեր վորդու առողջությունը, կա՛մ պիտի դուժեր նրա մահը: Ի՞նչ կլիներ յուր դրությունը, յեթե այս վերջինը պատահած լիներ: Նա նույնիսկ չէր համարձակվում բաց անել Սամվելի նիրքը: Բայց յեթե վորդի՞ն բացվեր:— Այս ընդհարումից խուսափում էր նա, աշխատելով դանդ ու ժամանակ իրան քաղցր հույսերի վայելմամբ մեջ պահել:

Նա սիրում էր վորդուն, սիրում էր հոր սրտի բոլոր ջերմությամբ: Բայց այս սերը նրա մեջ նույնքան բնական էր, վորքան բնական էին նրա բաղձանքները վորդու վերաբերությամբ: Նա նայում էր վորդուն վրա՝ վո՛չ թե իրրև մի աղատ, ինքնակամ անհատի վրա, այլ վորպես մի հաջողակ միջոցի վրա, վորով մնայն ինքը պետք է փառավորվեր: Յեթե վորդին բարձր պաշտոնների հասաներ, յեթե նա կխոյլեր բարձր շրջաններում,— այդ միայը իրան էր պատկանում, վորովհետև վորդին նույնպես իրան էր պատկանում: Յեթե մի նժույգ ձեռքշալէ ժամանակ ոտնում և մրցանակը, սերն և պարծենում, և վո՛չ թե նժույգը:— Այս բնական կնոջից էր նայում նա վորդու վրա: Մի այսպիսի հայացք կազմվել էր նրա մեջ ամենադարար, վոր սասցել էր նա յուր աղնվապետական ժառանգության հետ: Ինքը նույնպես ծառայել էր յուր հոր բանակառության համար, և յուր վորդին նա պետք է ծառայեր յուր բանակառության համար: Նրա ընդդիմադրությունը կդրկեր հորը այն բոլոր յերանություններից, վոր ապագայում պետք է վայելեր նա: Այդ էր պատճառը, վոր նա դգուշանում էր՝ չհանդիպել վորդու ընդդիմադրության, և ամենայն ջանքով խուսափում էր հակաճառությունից, ապատելով, մինչև հանգամանքները ինքնրանության կպարզեին յուր մեջ ինի կասկածները:

Սամվելի վերջին նկատողությունը Մերուժանի մասին՝ սասակի խիստ էր, բայց հայրը, անուշադրության տալով, դարձավ դնալ վորդին այս խոսքերով.

— Բայց դու պետք է դնաս քեռուդ տեսնելու, Սամվել, և մորդ ծողջույնը մատուցանես նրան: Նա շատ կուրախանա քեզ տեսնելով, նա շատ սիրում է քեզ: Այս առավոտ մի քանի անգամ մարդ էր ուղարկել՝ հարցնելու քո առողջությունը: Դու դեռ քնած կլիր:

— Ուրեմն դնամ', վոր չես կենկլ եմ,— հարցրեց Սամվելը:

— Դնաս, և խնդրել էլ, վոր այսօր ճաշին յուր մոտ լինենք: Այնտեղ կլինեն և պարոնց նշանավոր դորացեանները: Դնա հարկավոր է բոլորի հետ ծանոթանալ:

Մերուժանը հեռվից անցավ նրանց առջևից:

— Ցնա հենց այս բոպեիս կդնայի քեռուս մոտ, բայց նա այժմ դրավ-ված է յերևում...

— Այո՛, նա դուրս է յեկել բանակը դիտելու... և մի քանի կարգադրություններ անելու... վորովհետև այս որերում պետք է չլինը այստեղից...

— Իսկ ինձ չե՞ս հրավիրել Մերուժանը,— մնջ մասով պատասխանեց Աբրահամը:

— Հրավիրել է, սիրելիս, առանց քեզ, ի՞նչպես կարելի չէ,— ասաց Իշխանը:— Դու էլ կլինես ճաշին, Աբրահամն էլ կլինի: Մենք միասին կը-դնանք:

— Ցնո նրա հացը չեմ ուտի,— խոսնց համառ Ծերունին, յերևոը շուռ տալով:

Իշխանը ծիծաղեց:

Սամվելը նկատեց, որ իրանց ներկայությունը խանգարում էր հորը: Վորովհետև առավոտ էր, անդադար մարդիկ էին մտնում, այս և այն գործի մասին նրա հրամանն էին խնդրում, և նա իրրև բարձր պաշտոնական անձն, պետք է բոլորին պատասխաններ և հրահանգներ տար: Այդ էր պատճառը, որ նախաճաշիկը վերջանալուց հետո, նա իսկույն վեր կացավ, և կամենում էր դուրս գալ հոր մոտից:

— Դու կձանձրանաս, մինչև ճաշ քո վրանում ապասելով, Սամվել,— ասաց նրան հայրը:— Ցնեքն կամենում ես, կպատուիրեմ ձիաներ պատրաստեն, գնացնեք Աբաքսի ափերի մոտ զբոսնելու: Ցնղանակը գոլ է, և այնտեղ գեղեցիկ տեսարաններ կան:

— Շնորհակալ եմ, սիրելի հայր,— ասաց Սամվելը:— Ցնս դեռ վոչ բոլորովին կազդուրվել եմ ճանապարհի հոգնածությունից, պետք է դնամ, մի փոքր հանգստանամ:

Գալով յուր վրանը, իրավ, Սամվելը իսկույն ընկողմանեցավ բազմոցի վրա և ծանրացած գլուխը ոտից բարձերին: Նրա դունաթափ դեմքը դարձած էր դեպի ահռելի բոնակը, և տխուր աչքերը հառած էին դեպի այն կողմը: Նա դեռ չէր մոռացել և մոռանալ էս անկարող էր, թե վորպիսի համակրությամբ հայրը նկարագրեց Մերուժանի գործողությունները, վորոնց գործակից էր և ինքը: Իսկ գործը ահեղ էր, նրա աչքերի առջևն էր: Վորքան մտածում էր նա, վոչինչով չէր կարողանում արդարացնել հորը, չէր կարողանում արդարացնել և քեռուն: Ցերկուսն էլ ներկայանում էին նրա առջև վորպես յերկու մահացու վոճրագործներ: Բայց նա սիրում էր հորը, սիրում էր և քեռուն: Նա պատրաստ էր տալ յուր կյանքը և ամեն ինչ, վոր աշխարհում թանգ էր յուր համար, դեթ այդ յերկու մարդիկը ուղղվելին և դառնային իրանց չար ճանապարհից: Բայց յերեն իրանց մոլորության մեջ մնայի՞ն:— Այդ միտքն էր, վոր ալեկոծում էր նրա խռովյալ սիրտը, այդ մտքն էր, վոր սարսափելի կերպով կեղեքում էր նրա հոգին: Վորովհետև նույնն էր մտածում հոր մասին, ինչ վոր հայրն էր մտածում վորդու մասին: Ցերկուսն էլ միմյանց կորած էին համարում, յերկուսն էլ միմյանց մոլորված էին համարում: Հայրը մի հարմար առիթ էր վորոնում բացատրվելու վորդու հետ և յուր միամիտները արտահայտելու նրան: Վորդին նույնպես վորոնում էր մի հարմար ժամ, մի հարմար րոպե, խոսելու հոր հետ և յուր բոլոր ցավերը թափելու նրա առջև: Նա չուզում

եր անել այդ, քանի դեռ բանակը չէր չարժվել յուր տեղից, քանի դեռ ճանապարհ ընկած չէր նա դնալի Գարսկաստան: Ցերը յուր դիտավորութիւնները կուշացներ, յերբ նրանք կանցնէին Արաքսը,— այնուհետև ամեն հույս կորած եր համարում...

Սամվելի մոտ նստած եր ծերունի Աբրահամը և լուռ նայում եր նրա վրա: Ինչ ծերունի, հասկանում եր անբախտ յերիտասարդի դառն վիճակը, հասկանում եր նրա խորտակված սրտի ծանր վիճքերը, և մի բառ անգամ չէր դանում մխիթարելու նրան:

Այդ միջոցին պատանի Արտավազդը կանդնած եր դրսում, վրանի մուտքի մոտ, և չդիտեր՝ ինչ անել: Վորպես մի անհանդիստ աչխուժ և անհամբերութիւն, վորպես. մանուկ հասակի անդուսպ հետաքրքրութիւն, շատ կցանկանար նա՝ ծակ նման թռչել, կամ փայլակի նման սլանալ, և մի քանի վայրկեանում չրջագայել ամբողջ բանակը, ամեն ինչ տեսնել, ամեն ինչ քննել,— բայց յուր մի այդպիսի հետաքրքրութիւնը կարող եր անվայել և մինչև անգամ կասկածավոր յերևնալ չատերին: Այդ եր, վոր նրան զսպում եր:

Նա դեռ կանդնած եր վրանի մուտքի մոտ, և այն տեղից ևս խիստ հետաքրքիր բաներ եր տեսնում: Բայց այդ բանակը չէր ներկայացնում սովորական բանակների այն ուրախ, այն զվարճալի կենդանութիւնը, վորով նա յուր ներքին վայելչութիւնը խառնում և ցասարակաց բավականութեան հետ: Գյուղացի աղջիկը, գյուղացի կինը, վառած, համարձակ, բերում են իրանց այդիների ամենալաւագոյն պտուղները այնտեղ վաճառելու: Շինականը յուր տնտեսութեան ամենալավ բերքերը այնտեղ և տանում: Դաղաքացին յուր բազմատեսակ վաճառքների մթերքը այնտեղ և թող անում, և բանակը մի կենդանի տոնավաճառի կերպարանք և ոտանում: Եմբլում և հարցասեր ամբոխը և լսում և դինվորների քաղցր յերաժշտութիւնը:— Դրանցից և վո՛չ մեկը չէր յերևում: Այդ բանակը, վորպես մի կործանող և ավերակող հրեշ, յուր շուրջը անապատ եր դարձրել, և ինքը ապրում եր խորին ամայութեան մեջ: Վոչ վոք չէր մերձենում նրան, և ամեն վոք փախչում եր նրանից: Նա կերակրվում եր այն անբավ հափշտակութիւններով, վոր ազահ ձեռքով կողոպտել եր չրջակայքից: Նա հարստացել եր այն անհուն ավարներով, վոր ավազակաբար հինհարել եր յուր ավերակ դարձրած քաղաքներից: Բայց այն մտածութիւնները չէին զբաղեցնում պատանի Արտավազդին: Նրա սուր ուշադրութիւնը դրավել եր մի այլ առարկա:

Մերձմանի վրանի առջևից դիզված կառափների ահարկու բլրակները արդեն անհետացել էին: Համաքլով մեծ տոպրակների մեջ, ուղտերի մի ամբողջ կարավանի համար բեռներ էին պատրաստել այն կառափներից: Բայց նրանց տեղում այժմ կառուցանում էին մի այլ բլուր: Մարդիկ յոռանդով աշխատում էին այնտեղ, և մի տեսակ աղյուսաձև մուգ-թխադույն նյութեր չտապով կուտակում էին միմյանց վրա: Տարօրինակ ամ-

գարտակը հետզհետե բարձրանում էր և մռայլ կերպարանք էր առնում։ Աղյուսաձև նյութերի հետ, իրրև նեցուկ, դնում էին փայտի և տաշեղի կտորտանքներ։ Ցերը վերջացրին, ամբարտակը մի ահագին խարույկի ձև առացավ։

Այդ յերևույթը զրավեց և Սամվելի ուշադրությունը, վորը ընկոդմանած տեղից բարձրացավ և նստեց։ Նայում էր, բայց վորոշել չէր կարողանում, թե ի՞նչ էր տեսածը։ Ներսունի Աբրահը նույնպես վոչ սակավ հետաքրքրված էր այդ առարտի տեսարանով։

— Ո՞վ է իմանում, գարձյալ մի առասնայական բան կլինի... առաց նա դլուխը տարակուսական կերպով շարժելով, և ձեռքը տարավ դեպի ճաղատ ճակատը՝ հովանավորելու աչքերը արևի շողքերից, վոր արդեսում էին նրան տեսնել։

Շատ չանցավ, գինվորները բերեցին մի քանի խումբ չղթայակապ, սևադեսա գերիներ, և կարգով կանդնացրին խարույկի շուրջը։ Դրանք թվով մի քանի հարյուր յեկեսկոտսոներ, վարդապետներ և յերեցներ էին։ Գլուխները քարշ ձգած, խորին տխրությամբ նայում էին սրբազան գերիները խարհրդավոր խարույկի վրա, ուր, մի քանի րոպեյից հետո, պիտի այրվեր նրանց սիրտը, նրանց հոգին...

Այնտեղ կանգնած էր և մի այլ անձնավորություն, մի ծանոթ մարդ, յուր յերկար՝ անհեթեթ հասուստով, յուր մռայլ՝ ծաղկահար գեմքով և յուր հատո՝ թխադույն չրթունքներով, վոր պատրաստ էին անիծք և հայհոյանք թափելու ամեն արդության վրա։ Նա վոխերիմ աչքերով յերբեմն նայում էր դեպի սևազգեստ գերիները, յերբեմն դեպի պատրաստված խարույկը։ Դա Հայր-Մարգսեան էր՝— առասպելի Դղակը,— վոր գազատագրի կերպով մտավ Արտաշերս ամրոցը և մտնելոց հայոց թագուհուն։

Հեռվից հայտնվեցավ ավետաբեր թագավորը— Մերուժանը,— նստած յուր ավետաբեր նժույգի վրա։ Ցերը մոտեցավ, խարույկը վառեցին թանձր, խանձահոտ ծուխը՝ յուր անախորժ ճենճերային բուրմունքով՝ տարածվեցավ ոդի մեջ, իսկ կանաչագույն բոցերը բարձրացան դեպի յերկինք։ Այրվում էր մի առակալի վողջակեզ, կրոնի և յեկեղեցու վողջակեզը...

Այդ մեկոցին Սամվելի վրանը ներս մտավ նրա հայրը։ Վորդին պատիվանքով վեր կացավ նստած տեղից։

— Այդ ի՞նչ են այրում,— հարցրեց նա վրդովված ձայնով։

— Մազաղաթ,— պատասխանեց հայրը անփույթ տոնատարությամբ։ — Դու չի՞ս դա տեսնելու։ Ցնա յեկա, վոր քեզ տանեմ։ Գնա՛նք, շատ հետաքրքիր է։

— Վոչ, յես այստեղից էլ տեսնում եմ... առաց վշտացած յերկատարդը հրաժարվելով։

— Այնտեղից կդնանք Մերուժանի վրանը։ Քեզ առաջի, վոր այսոր հրավիրված ենք նրա մոտ ճաշելու։

— Գիտեմ, բայց դեռ վաղ է... Մերուժանը ահա՛ դրաղված է յուր խաղուկով... Թող վերջացնե, յետո հետս կգամ... Իմ աչքերի վրա, ուղիղն ասեմ, սաստիկ վատ է ազդում կրակը...

— Մանավանդ մադաղաթի՛ կրակը... ավելացրեց Ծերունի Աբրահամը, դլուխը խորհրդավոր կերպով շարժելով:

Հայրը, նկատելով վորդու համառությունը և Ծերունու կծու ակնարկությունը, այլևս չսիրեց նրանց, դուրս ելավ և ինքը միայնակ դնաց դեպի խաղուկը: Նրա յետևից վազեց պատանի Արտավազդը, վոր դեռ կանդնած եր վրանի մուտքի մոտ, ասելով.

— Ցետս կգամ քեզ հետ, սիրելի Վահան, յետս չեմ վոխենում կրակից... յետս մինչև անդամ սիրում եմ կրակը...

Ծամվելը և Ծերունի Աբրահամը մնացին վրանում միայնակ:

— Մադաղա՛թ են այրում, սիրելի Աբրահամ,— կրկնեց յերկուսաստղը, դառնալով դեպի Ծերունին:— Այրո՛ւմ են մեր կործանված տաճարների սուրբ կտակարանները... Այրում են մեր յեկեղեցու դիրն ու դպրությունը, վոր մեզ պարսկացնեն... Ցնվ իմ հայրը դնում և հանդիստանա լինելու, դնում և դժարճանալու մի այդպիսի չարագործությամբ...

Ցնվ իրավ, վառվող խաղուկը ամբողջապես կազմված եր սուրբ դպրերից: Դրանք նույն յեկեղեցիներից և նույն վանքերից հափշտակված դրքերն եյին, վոր կործանեց Մերուժանը, վոր հրդեհեց Մերուժանը, և վորոնց կրակը դեռևս չեր հանդել: Գարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար՝ կործանեց նա քրիստոնեական տաճարները, վորպեսզի նրանց տեղում աստուչաններ հիմնե: Գարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար՝ այժմ այրում եր, վոչնչացնում եր նա քրիստոնեական մատյանները, վորպեսզի, նրանց վոխարեն, հայերի ձեռքը տար պարսից կրոնական դրքերը, վոր հայերը պարսկերեն կարդային, պարսկերեն ազոթեյին և պարսից լեզվով աստահայտեյին իրանց զդացմունքները...

Ծամվելը գիտեր այդ բոլոր նախապահմանյալ մեքենայությունները, իսկ այժմ յուր աչքերով տեսնում եր այն անողորմ գործողությունները, վոր պիտի հեշտացնեյին պարսից արքայից արքայի նենդավոր նպատակները իրագործելու: Դեպի դերություն եյին վարում յեկեղեցականներին, վոր անուն Քրիստոսի թե՛ յեկեղեցին և թե՛ նրա հոտը, վոր դյուրությամբ կարողանան հեղեղել քրիստոնյա ժողովուրդը: Այրում եյին կրոնական դրքերը, վոր վոչնչացնեն կրոնը: Ծամվելը այլևս համբերել չկարողացավ, դարձավ դեպի Ծերունին այս խոսքերով.

— Սիրելի Աբրահամ, ինչ վոր անելու յես, գնա՛ և արա՛... ժամանակը քեզ համար... Ինչպես վրանի վարագույրները և ինձ միայնակ թող այստեղ: Ոչ վոր հարցնելու լինեն, կասես դլուխը ցավում է, քնած է: Իսկ մի ժամից հետո կուղարկես ինձ մոտ Մալխասին:

Ծերունին տխուր մտախոհության մեջ վեր կացավ, վրանի վարագույր-

նները ցած թողեց և իսկույն դուրս գնաց։ Սամվելը մի քանի րոպե մնաց լուռ տատանման մեջ։ Նրա քնքուշ զգացմունքները, նրա վերին ատելճանի բարի սիրտը՝ բռնանում էին խնդքի և սառն մտածութեան վրա։ Մի քանի անգամ վեր առնց մաշաղաթի թերթը, կամենում էր դրել, բայց դարձյալ ցած դրեց։ Ձեռքը տարակոյսի ճակատը, վոր բորբոքվում էր տենդային կրակով։ Աչխատում էր ամփոփել յուր հիշողութիւնները, աչխատում էր վանել ա՛յն մոայլը, ա՛յն անբացատրելի մթութիւնը, վոր այդ րոպեում պատել էին նրա միտքը։ Նա վեր կացավ, վորը ինչ հետ քաչեց վարագույրի մի յեղրը, վոր լուչս լինի։ Նստեց, կրկին առնց մաշաղաթյա թերթը և գրիչը։ Սկսեց դանդաղ ձեռքով գրել։ Նա գրում էր, և ամեն մի բառի վրա րոպեներով մտածում էր։ Այդ նամակի ճշտութիւնից էր կախված՝ անվրեպ կերպով նպատակին հասցնել այն սրտառուչ խորհուրդը, վոր վաղուց արդեն խմորվում էր նրա ղլխում։ Մի սխալ քայլ կարող էր ամեն ինչ վոչնչացնել։ Նրա խորհուրդը վո՛րքան մեծ էր, նո՛ւչքան և վտանգավոր էր։ Ցեղ այդ իսկ խորհրդից էր կախված թե՛ նրա խղճի հանդստութիւնը, և թե՛ նրա հայրենիքի բախտը։ Նա գրեց առաջին նամակը և սկսեց յերկրորդը։

Նամակները արդեն վերջացրել էր, յերբ ներս մտավ Մալխասը։ Ցերեխասարդը զարմավ դեպի նա, հարցնելով.

— Դու ծանո՞թ ես Արաքսի աջակողմյան ափերի մոտ տարածվող ճանապարհների հետ։

— Ծանոթ եմ,— պատասխանեց մ՛տապատրաստ փայտակը։— Բայց մի քանի ճանապարհներ կան, վորի՞ մասին է հարցնում իմ տերը։

— Այն ճանապարհի մասին, վոր ուղիղ դեպի յեղերքովն և գնում և հասնում է մինչև Աստղապատի անցքը։

— Գիտեմ։ Դա ամենալատ ճանապարհն է և վտանգավոր։ Ցերեխն իջնում է դեպի ափերի մոտ, յերբեմն վոլորվում է ապառաժների լանջից վրայով, իսկ յերբեմն անցնում է նեղ կիրճերի միջով, և յերբեք չէ բաժանվում դեպի ընթացքից։

— Այդ իսկ ճանապարհի մասին է իմ խոսքը։ Ա՛ռ այս նամակները։ Նախ կրանես դեպի Ցերնջակ տանող ճանապարհը։ Այնտեղից, Ցերնջակա գետակի ընթացքով, կմտնես մի նեղ ձոր, վոր տանում է դեպի Ջուղայի կամուրջը։ Այդ կամուրջով կանցնես Արաքսը։ Հետո կգնաս նույն վոլորմոլոր ճանապարհով, վորի մասին խոսեցինք, և վորը Արաքսի աջակողմյան ափերով տանում է դեպի Նախավկայի վանքը, վորից շատ հեռու չէ Աստղապատի անցքը, ուր կամուրջ չկա, և մարդիկ տկանավերով են անցնում Արաքսը։

Փայտակը ուրախութիւնամբ առնց նամակները, հարցնելով.

— Իմ տերը հենց ա՞յս րոպեիս և հրամայում ճանապարհ ընկնել։

— Վոչ։ Դու կսպասես մինչև յերեկո։ Հետո, յերբ գիշերային խա-

վարը բոլորովին կպատե, այնպես ղղուշությամբ դուրս կդա բանակից, վոր քեղ վոչ վոք չտեսնե։

— Սառանան անդամ չի տեսնի,— պատասխանեց վայակը ինքնավստահությամբ։— Բայց ո՞ւր տանել այդ նամակները և ո՞ւմը հանձնել։

— Նախավկայի վանքի մոտ, Մաղարթա լեռան ստորոտում, ժայռի վրա նստած կդտնես մի կրոնավոր։ Նամակներից մեկը կհանձնես նրան։

— Վո՞ր նամակը։ Իմ տիրոջ ծառան կարդալ չգիտե։

— Այն նամակը, վոր կապած և կարմիր դերձանով։

— Իսկ յեթե կրոնավորին ժայռի վրա նստած չդտնե՞մ։

— Անպատճառ կդտնես։ Նա այնտեղ, մի սղավոր վոդնի նման, նըստած և յուր վանքի մոխիրներին վրա, ա՛յն հրաշալի վանքի, վոր ավերակ դարձրեց Մերուժանը, և անմխիթար կերպով վողբում և նրա ցավալի կործանումը։

— Հետո ի՞նչ պիտի անե իմ տիրոջ ծառան։

— Հետո կթողնես վանքը և կչարունակես ճանապարհը դեպի Սրամ քաղաքը։ Կդնաս, կդնաս, մինչև քո առջև կհայտնվի մի ծածկված պատդարակ, վորը, պղպղակները պատդարակի նման, պատած կլինի սղավորի ևս պատառներով։ Նրան ուղեկցում են լեռնականներից մի քանի զինված դռնդեր։ Այդ մյուս նամակը, վոր կապած և կտնանչ դերձանով, կհանձնես պատդարակի մեջ դտնված անձնավորությանը։

— Իմ տիրոջ ծառան չպիտի՞ դիտենա, թե ո՛վ է նա։

— Վոչ վոք չդիտե, թե ով է նա, բացի յուր զինյալ ուղեկիցներից, վորոնք նրա անձնավորությունը պահում են իրրև խորին դաղանիք։ Քեզ համար էս մի առանձին պետք չկա դիտենալու, թե ով է նա։

— Նամակը հանձնելուց հետո, ի՞նչ պիտի անե իմ տիրոջ ծառան։

— Կչարունակե յուր ճանապարհը։ Քեզ կհանդիպի Ուշունայոց Գաբրիելին իշխանը յուր զինյալ լեռնաբնակներով։ Նրան իմ կողմից կտեսես մի թուռ մկան՝ «շտապել»։

— Իսկ յեթե ուրիշ բաներ էս հարցնելու լինի։

— Ինչ վոր դիտես, բոլորը կպատմես։ Դու, կարծեմ, բավական ծանրացած պետք և լինես պարսից բանակի այժմյան դրության հետ։

— Իմ տիրոջ ծառան ամեն ինչ տեղեկացել և. դիտե պարսիկ զորքերի քիվը, դիտե՝ վո՛րքանը ձիավորներ են, վո՛րքանը հետևակներ են, դիտե քանի՛ դռնդերի չեն բաժանված և յուրաքանչյուր դռնդին ո՛վ և հրամայում։

— Այդքանը էս շատ բավական է։ Այժմ կարող էս դնալ։ Տեր ընդ քեզ։

Հավատարիմ վայակը, վոր մտքի պես արագ էր և դեպի պես ճարպիկ, վոր հոգով ու սրտով նվիրված էր Սամվելին, վոր մի՜շտ ուրախ էր լինում, յերբ նրանից մի նոր հանձնարարություն էր ստանում,— այս անգամ ավելի էս ուրախացավ, վորովհետև նրա սրտի վրա էս ծանրացած է-

յին տխուր իրողություններին դառն հարվածները, և մխիթարվում էր, վերյուր ծառայություններով դուցե կարող լիներ վրաք և շատ ոգնել դրծին:

Ներս հեռանալուց հետո, նորս մոտալ Աբրահը:

— Բարձրացրո՛ւ վարագույրները,— ասաց նրան Սամվելը:— Նայի՛ր, վոր մեր շուրջը ոտար մարդիկ չլինին:

— Վոչ վոք չկա, ամենքը հավաքվել են խարույկի մոտ, տեսնելու, թե ինչպես են այրում աստուծո տուրք դրքերը:

Մերուժանին, վարագույրները բարձրացնելուց հետո, նստեց, Սամվելը հանիլ լսելի ձայնով ասաց նրան.

— Ճես այսոր կղնամ Մերուժանի մոտ ճաշելու, քեզ էլ ինձ համար թույլտվություն չուներ անխորժ սիրտ լինի նրա ճաշը: Բայց կաշխատեմ շուտ բաղնել այդ ճաշից: Ճաշի ժամանակ խոսակցությունը այնպես կառանեմ, վոր մյուս որը, յերևիդյան, անպատճառ կարդադրվի վորսորդության համար: Արաքսի ափերի մոտ: Դու պատրաստ կլինիս ինձ հետ գալու, և կանխավոն կինախապատրաստես իմ մարդիկներին: Հասկանո՞ւմ ես:

— Հասկանում եմ... պատասխանեց Ծերունին խորհրդավոր ձայնով, և յերկյուղած աչքերը դարձրեց դեպի յերկինքը, կարծես, ամենակարող հաղորդություն էր խնդրում:

Ծերխոսորդը շարունակեց.

— Իմ մարդիկներից յուրաքանչյուրը պետք է լավ դիտենա յուր գերը, յեթե վոչ, մի ամենաչնչոքը սխալ կարող է ամեն ինչ փչացնել: Նրանք պետք է հետևեն պայմանական նշաններին, և նույն նշանների համեմատ գործեն: Իսկ թե հանգամանքները փոխվին, այդ դեպքերում դուք պետք է, հանգամանքների փոփոխության համեմատ, փոխես և նրանց գործելու յեղանակը...

— Աբրահը այդ բոլորը կարդադրել է, դու անհոդ կաց,— պատասխանեց Ծերունին, և դլխով հասկացրեց ընդհատել խոսակցությունը, վորովհետև նույն միջոցին դեպի վորդու վրանը գալիս էր հայրը:

Ներս մտավ հայրը, ասելով.

— Այժմ գնանք, սիրելի Սամվել, Մերուժանը սպասելիս կլինի մեզ, նրա հյուրերը արդեն հավաքվել են:

ՋՎԻԹԸ

«Ամեն զօրավարքն Պարսից ըմբռնէք երեք թագաւորին Արտաշատա—ենչական ի միջոյ դիւրացոյ, երբ գնան դու յս պետք է քեզ։ Եւ ոչ առնոյր զայս յանձն Ջուիթ այլ ասէր.— Ես դնաշնդ տանիր, եւ գնովիւս տարայր, դէ ոչ է ժարթ հովուի քաղուլ գնաշն իւր, այլ պարտ է հովուի դնել զանձն ի վերայ ոխարինն իւրոյ։ Եւ զայս ասացեալ եմատ ի գերութիւնն եւ խոտաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից։

Փաւստոս։

Կնաոր էր։ Մերուժանի ընդարձակ, յերկնադուշն վրանում արդէն հաւաքուած էին հիւրերը։ Իոլորից բարձր նստած էր Հայր-Մարդպանը, Իզակը, որ իւր անհնթնթ հաղուստով և վիթխարի մարմնով մի քանի մարդու տեղ էր բռնել։ Նրա աջ և ահեակ կողմերում նստած էին մի-մի ճերմակաղդամ մոգեր, յերկար, սրածայր գլխարկներով, որ, տաւշանքարի գլուխների նման, յոմնանկիւնի ձև ունէին, և յուրաքանչիւր անկիւնի մէջտեղում գունդղունդ թևերով կարված էին խորհրդաւոր նշանագրեր։ Մոգերից մէկի մոտ նստած էր Վահան Մամիկոնեանը, մեսրոպ մոտ Մերուժանը։ Իսկ Մերուժանի մոտ նստած էին Սամվելը և պատանի Արտավազդը։ Հետո, իրանց բարձի և աստիճանի համեմատ, կարգով նստած էին զանազան պարսիկ սպաներ, որոնց թիւն էր և նշանաւոր կաբեն զորապետը։ Հիւրերի մէջ չէր երևում միայն ծերունի Աբրահը։ Նա բացարձակ կերպով մերժեց Մերուժանի հրաւէրը, և չկամեցաւ մասնակցել։ Մերուժանը ամենևին չվիրաւորուեցաւ, որովհետև նրան էս հայտնի էր համառ ծերունու ստորոտի բնաւորութիւնը։

Մերուժանը զարմանալի նմանութիւն ունէր իւր քրոջ որդուն—Սամվելին։ Թէ՛ դէմքով և թէ՛ կազմուածքով նա իսկական Սամվելն էր, միայն հասակը և տարիքը նրանից աւելի զարդացած և աւելի այրական տեսք էին տալիս։ Նա իսկապես շատ դեղեցիկ մարդ էր, ուրախ, քաղցրախոս, և միշտ մեղմաղձոտ, ինչպես էր մասալ Սամվելը։ Ճերկար ժամանակ Տիզբոնի արքունիքում ապրելով, և պարսից ամենաարտօնեալ շրջանների հետ հարաբերութիւններ ունենալով, նա սեռիականել էր իրան այդ տղմի կենցաղավարութեան ամենանուրբ ձևերը։ Ամեն մի հասարակութեան մէջ նա շատ սիրելի էր և հրապուրիչ։ Պարսկական քաղաքավարութեան հետ՝ միացրել էր նա և պարսիկական խորագիտութիւնը, որ թաղցրած էր նրա դեղեցիկ, գրաւիչ և խարուսիկ դէմքի ներքո։

Իսկ այդ հրապուրիչ դէմքը, մանավանդ իւր վերջին հաջողութիւններից հետո, թևև աւելի իրաւունք ունէր վայելելու և անսահման ուրախ

լինելու, բայց, ընդհակառակն, կրում եր յուր վրա ներքին թախծության խորին դրոշմը, վորը նա ամենայն ջանքով աշխատում եր ծածկել: Այն օրից, յերբ նա Արտաշեսա ամրոցում այնպես նախատական կերպով մերժում ստացավ վորմիղդուխտից, այո՛, այն օրից նրա սրտի հետ՝ փչրվեցան և նրա ամենագեղեցիկ ցնորքները, վորոնց մեջ թե՛ յուր փառքը և թե՛ յուր յերջանկությունն եր վորոնում: Ինչե՛ր չարաց նա, ի՛նչ գործեր չկատարեց նա սիրած աղջկա համար: Նա մեղանչեց խղճի դեմ, նա մեղանչեց սրտի դեմ, նա դավաճանի անարդ անունը ժառանգեց, միայն նրա՛ն արժանի լինելու համար: Բայց նա անողորմ վոտքով կոխ տվեց բոլորը և անցավ... Յերազում եր պարսից արքայից արքայի փեսան լինել, իսկ այժմ աչխարհի մեջ ծաղր ու ծանակ դարձավ: Վորմիղդուխտը մի հարվածով խորտակեց նրա թե՛ ապագան և թե՛ հույսերը: Եվ այս բոլորը վերաբերում եր նա հայոց թագուհու կախարդիչ ազդեցությանը մի-մի որիորդի վրա: Գուցե Վորմիղդուխտը այնպես չեր վարվի, յեթե նա այնքան յերկար ժամանակ խորամանկ Փառանձեմի ձեռքում չդտնվեր,— այսպես եր մտածում նա, և վոչինչ վրեժխնդրություն այնքան դառն և այնքան ծանր չեր համարում, քան թե ա՛յն, վորով հայոց թագուհին պատժեց նրան, պաշտած աղջկա բերանով նախատելով նրա թե՛ սերը և թե՛ անախտությունը, վորոնց զոհ գարձան Թշվառ հայրենիքի այնքան նվիրական սրբություններ...

Թեև նա խոպան վհատած չեր, թեև տակավին հույս ուներ, վոր Շապուհը անպատճառ կկատարե յուր խոստումնքները,— բայց ի՞նչ յերջանկություն, կնոջ բռնի ամուսին լինել, վորը ղղվում եր նրանից, և մի յերկրի բռնի թագավոր լինել, վորը անիծում եր նրան:— Այդ մտքերը վերջին օրերում, թունավոր ուտիճի նման, սկսել եյին կրծոտել, սկսել եյին մաշել նրա սիրտը...

Սամվելի հանկարծակի հայտնվիլը՝ նրան ճշմարիտ ուրախություն պատճառեց: Նայում եր շնորհալի յերիտասարդի վրա և հիանում եր: Նրա մեջ նույն քաղցր զգացմունքներն եյին զարթնում յուր քրոջ վորդու, վերաբերությամբ, ինչ զգացմունքներով վոր հրապուրվում եր Սամվելի հայրը: Արդեն յերազում եր այն վայրկյան դերը, վոր պիտի խաղար նա պարսից արքունիքում, և կանխապես հպարտանում եր նրա հաջողակություններով: Եվ այդ ցանկալի օրը շատ հեռու չեր համարում նա, վորովհետև դիտավորություն ուներ Սամվելին յուր հետ տանել Տիղրան, թեև այդ մասին նրա կամքը դեռ չեր հարցրել, բայց համոզված եր, վոր մեծ հոժարությամբ կընդունե նա:

Խոսում եյին հույսերը, և խոսում եր ըստ մեծի մասին Հայր-Մարդ-պետը: Նրա աղդու, վարդապետական ձայնը, նրա սաեն, ծանրակչիռ խոսքերը յուր վրա եյին դարձրել բոլորի ուշադրությունը: Խոսում եր նա այն նշանավոր հարցի մասին, թե յերբ կհասանեյին Տիղրան, պետք եր ամենայն ջանքով համոզել Շապուհ արքային, վոր անպատճառ հռոմմայե-

ցոց նոր կայսրն՝ Թեոդոսի՝ հետ խաղաղության դաշն կապն և հաշտվի նրա հետ: Հաշտության արդյունքը նա բոլորովին նպատակահարմար եր համարում հայոց գործերի մասին, վորովհետև, նրա կարծիքով, յերբ Շապուհը բարեկամական հարաբերություններն մեջ կլիներ Թեոդոսի հետ, այնուհետև կայսրը այլևս հանձն չեր առնի, հակառակ Պարսկաստանի շահերին, հռոմեական զորքերով ոգնել հայերին: Եվ հայոց ուխտապահ նախարարները, կայսրի ոգնությունից զրկվելով, այնքան զորություն չեկին ունենա, վոր Արշակունյաց թագաժառանգին Խոսրովանդիսյից Հայաստան բերելին և յուր հոր թափուր մնացած գահը նստացնելին: Մերուժանը բոլորովին բաժանում եր Հայր-Մարտիկոի քաղաքական հայացքները, մտածելով, վոր հայոց հարաբերությունները հռոմեացոց հետ խզվելուց հետո, Հայաստանում ասպարեզը յուր համար միանգամայն բաց կմնար, և այնուհետև ավելի հնչտ կլիներ նպատակի հասնել: Սամվելը ուշադրությամբ լսում եր:

Խոսում եկին և յերիտ. մոգերը: Վերջիններն խոսակցության առարկան ավելի գործնական եր: Հայտնում եկին, թե յ՛երբ ավելի բարեհաճող կլիներ բանակը շարժել յուր տեղից և ճանապարհ ընկնել դեպի Պարսկաստան: Նրանց կարծիքով, դեռևս պետք եր յերկար սպասել, վորովհետև աստղները ուղևորության համար լավ նշաններ չեկին ցույց տալիս: Մերուժանը վո՛չ միայն հավատում եր աստղերին, այլ հավատում եր մինչև անգամ կախարդության, և այս արհեստի մեջ իրան բավական հմուտ եր համարում: Նա նույնպես համաձայն եր մոգերի հետ, և պնդում եր, թե անպատճառ պետք եր սպասել, մինչև յերկնք չարաշուշակ որերը անցնելին: Թե վո՛րքան ուղիղ եկին նրանց աստղաբաշխական նկատողությունները,— դա այլ հարց է, մի այն Սամվելի համար հիշյալ յերկնք որերը շատ և շատ հարկավոր եկին: Այդ եր պատճառը, վոր նրա տխուր դեմքը սկսեց փոքր առ փոքր փայլել:

Բայց հանկարծ մի աղմուկ հյուրերի ուշադրությունը գրավեց դեպի վրանի մուտքը:

— Ի՞նչ ասուծո, թույլ տվեցի՛ք Թշվառիս ներկայանալ Մերուժանին,— վչխալի ձայնով աղաչում եր մեկը, բայց ծառաները քաշքշում եկին նրան, և թույլ չեկին տալիս, վոր մտներ:

Խնդրողի աղաղակը, Մերուժանը հրամայից սպասավորներից մեկին, վոր չարդևին յեկեղեցին: Հայտնվեցավ մի պատկառելի ալևոր, կրոնավորի զգեստով, վոր, խոնարհության ոգուն տալով, հենվեցավ յուր հովվական ցուպի վրա, և կանգ առավ վրանի մուտքի առջև: Վշտահար դեմքը արտահայտում եր խորին դառնություն: Աչքերի մեջ վառվում եր աղոտ մութության կրակը, վոր խառն եր անմխիթար հուսահատության հետ: Նա ներկայանում եր, վորպես մի սպասվոր, վորից հավիտյանել եկին յուր ամենասիրելին, յուր ամենաթանգագինը: Ծերության յերկճղի դանդաղ մորսքը, վոր իջնում եր մինչև նրա մաշկեղեն գոտին, ցույց եր տա-

լիս, որ այդ բարեկրոնք հրոնամորը հայկական ծագումից չեր։ Կանխահաս ծերությունը թոլորովին արծաթաջրել եր դլխի յերկար դիսակները, բայց սև մորուքի մեջ դեռ նոր եյին նշմարվում ճերմակի հետքերը։ Առհասարակ ամբողջ կերպարանքի մեջ վեպլում եր մի առանձին վսեմություն, որ խիստ աղդու ազդեցություն եր դործում։

— Աբաչաստից մինչև այստեղ, յերևա դնանին քանլով, ես ապատին եմ յեկել, Մերուժան,— ասաց նա վողջագուրոր, բայց խռովյալ ձայնով։— Ցնկել եմ իմ աղերսը և իմ աղաչանքը թաթիկոս քո դիմելյան առջև։ Մի ամբողջ շաբաթ դանվում եյի քո բանակի մեջ, բայց արդելում եյին իմ ձայնը քո բարի ունկնդրությանը հասցնելու։ Այժմ լսի՛ր առաջվյալ ծերունուս, ո՛վ քաջդ Մերուժան։

— Ո՞վ ես դու,— հարցրեց Մերուժանը, ուշադրությամբ նայելով ծերունու վրա, որ արձանացած եր նրա առջև, վորպես մի մարմնացած, սպառնական բողոք։

— Ցես Աբաչաստի հրնաններէ յերկոցն եմ. ինձ կոչում են Զիլիթա. կարդս ընդունել եմ Ներսես մեծից։ Իմ հոտը, Հայաստանի մյուս հրնանների հետ, Տիդրան Բ.-ի որերում, դերի բերվեցավ Հրնաստանից։ Հայոց հյուրասեր աշխարհը այնպիսի մարդասիրական ասպնջականություն ցույց տվեց մեղ, որ մոռացանք մեր ուխտյալ հայրենիքը, վորը այնքան սուրբ և այնքան նվիրական է յուրաքանչյուր հրնակի համար,— մոռացանք և մեր սատվածավանդ կրոնը, վորը ամեն մի հրնակի կյանքի և փրկության ամենաարժեր խորհուրդն է։ Մոռացանք և մեր լեղուն, վորով Մովսեսը դրեց Ցհովհայի սուրբ կտակարանը։ Տրդատի որերում, Լուսավորչի ձեռքով, քրիստոնեություն ընդունեցինք, և միացանք հայերի հետ։ Այն որից սկսած մենք սորում եյինք հայոց աշխարհում, վորպես քնիկ յերկրացիներ, վայելում եյինք հավասար իրավունքներ, սիրում եյինք այս յերկիրը, և քնավ չեյինք զղում, թե մենք այստեղ ոտարներ ենք։ Ուրախ եյինք լինում նրա ուրախության հետ, և մասնակից եյինք լինում նրա վշտերին...

Նա փոքր ինչ չունչ առնց, և ապա շարունակեց.

— Խաղաղ և բարեբեր կյանք միշտ ժպտում եր մեղ, և մեր չոհմակցությունները լցված եյին աշխարհի բոլոր բարիքներով։ Մեր ձեռքումն եր յերկրի վաճառականությունը, մեր ձեռքումն եր արհեստի և ճարտարության բարվավաճումը։ Բայց դո՛ւ, Մերուժան, անխնա ձեռքով քանդեցիր մեր նոր բույնը, վորը այնքան դործերի մեծ խնամքով կազմել եյինք, վորը մեղ համար այնքան անդորր եր և ապահով։ Դու այլևայլ գործերիր այն մեծավարքիմ քաղաքները, վոր ամբողջ աշխարհն ուղիև պատծառում եյին իրանց անթույլ հարստությամբ։ Դու մինչև անդամ չխղճացար քո անխիղճ վան քաղաքին, ուր իսրայելի ասրաջդյալ վորդիները, քո նախահարց ոքերում, վայելում եյին կատարյալ յերջանկություն։ Այս անդթության դեմ կբողոքեն քո արժանահիշատակ նախնյաց վեհ հոդիները,— բողոքում է և՛ ծերունի յերեցը, վոր այժմ յուր դառն ապստամբության և վշտերից թա-

պում և քո խոստոմուքյան առջև, վերջիս մի անգլա ապաստի վրա, ո՛վ քաջդ Մերուժան։

Նա դարձյալ կանդ առեց։ Սամվելը անհանդիստ կերպով լսում էր, և հազիվ կարողանում էր յուր զղացմունքները զսպել։ Մյուսները բաց-կուքյամբ նայում էին համարձակ ծերունու վրա, և ակնարկում էին Մերուժանին, որ լռեցնեն նրա հանդգնուքյունը։ Բայց Մերուժանը թույլ տվից չարունակել։

— Այո՛, մեր նախնիքը դերի բերվեցան հայոց աշխարհը, բայց բախտավորուքյուն գտան։ Իսկ դու մարում ես նրանց դերի մի նոր դերուքյուն, դերի մի նոր, անծանոթ աշխարհ։ Գերուքյունը, հալածանքը, երբեմ և, միշտ հրեից ճակատագիրն է եղել, ակնյալ այն որից, երբ նրանք դերի էին Եգիպտոսում, փարաւոնների ձեռքում, և ապա դերի դնացին Բաբելոն, ասորեստանցոց ձեռքում։ Եվ իսկ, շատ յերկար ժամանակ, Եվրոպաի ափերի մոտ նստած, մեր հայրերը Բարձրանալ ուխտերից քարշ էին տալիս իրանց սուրբ կտակարանները, և վողբում էին կարոտյալ Երուսաղեմը։ Այն ամենանական պանդխտուքյան մեջ յերկար մաշվում էին նրանք, մինչև կյուրոսը, պարսից սատակած-րյալ արքան, ազատեց նրանց գերուքյունից և, վերադարձնելով իրանց հայրենիքը,— վերսին Երուսաղեմը յուր փառքն ու պայծառուքյունն առացավ։ Պարսից արքաների պատմուքյան հետ կապված է այդ մեծ դարձը, որի մեջ փայլում և կյուրոսի թե՛ բարձր առաքինուքյունը և թե՛ անմոռանալի մեծահոգուքյունը։ Իսկ դո՛ւ, Մերուժան, մի անշնչելի բիծ կդնես պարսից արքաների պայծառ հիշատակի վրա, եթե այդ ազգը կերկին ի գերուքյուն կվարես։ Լսում ենք, որ մեզ պետք է տանես հետևոր Սպահան։ Տա՛ր, բայց մենք չենք մոռանա մեր նոր հայրենիքը՝— Հայաստանը։ Մեր յերեխաների հետ կնստենք այնտեղ՝ Զարդա-Բուդի ափերի մոտ և, որպես մի ժամանակ Իսրայելը Բաբելոնում, կթափ կտանք Սպահանի ուռիներից մեր սուրբ Ավետարանը, և կվողբանք Մասիսը՝ մեր սուրբ Սիոնը, կվողբանք Արաքսը՝ մեր սուրբ Հորդանանը, կվողբանք Արտաշատը, մեր սուրբ Երուսաղեմը,— կվողբա՞նք և կանիծե՞նք այն մարդուն, որ մեզ տարադրեց մեր սիրելի հայրենիքից...

Վերջին խոսքերը կայծակի պես չանթեցին Մերուժանի քարացած սրտերը։ Նա սասանվեցավ, շվոթվեցավ, և յերկար մի բան անդամ չկրցավ պատասխանելու։ Ներսն շրջապատողները անհամբեր լռությամբ միմյանց յերեսին էին նայում, և ամեն վոք սպասում էր, որ նա խոսքն հրամայե՝ կա՛մ կոտրել հանդուգն ծերունու լեզուն կա՛մ հատանել անդգուշ համարձակախոսի պարանոցը։ Բայց մեծ յեղավ զարմացքը, յերբ Մերուժանը բավական մեղմ կերպով պատասխանեց.

— Ճիշ կասարում եմ պարսից արքայից արքայի բարձր հրամանը, Հարդևլի Զվիթա։ Գտանները պետք է հնազանդ լինեն իրանց տիրոջը,— այդ պատվիրում է այն Ավետարանը, որի անունով խոսում ես դու։ Այլևս ինչո՞ւ այսպես անզգույշ կերպով նախատում ես ինձ։

— Այո՛, Մերուժան, իմ Ավետարանը, որպես մի ժամանակ և քո Ավետարանը, պատվիրում է ծառաներին հնազանդ լինել իրանց տիրոջը։ Բայց դու այն ծառաններից ես, Մերուժան, որ վայելում ես քո տիրոջ թե՛ հարդանքը և թե՛ կատարյալ վստահությունը։ Ցնծե՛ դու հրամայես քո ձեռքում դտնված հրեա գերիներին՝ վերադառնալ իրանց տեղերը,— այդ մասին Շապուհ արքան յերբեք դժգոհ չի լինի քեղանից և, դուցե, շատ չնորհակալ կլինի։ Ցնծա յնկել եմ խնդրելու քո գթությունը, Մերուժան։ Ինձա՛ այդ դժբախտ ժողովրդին, պատիվ գնի՛ր Աբրահամի, Իսահակի և Հակորի սուրբ հիշատակին, և լսի՛ր ծերունի յերեցին, որ յուր արտասուքն ու աղերսը թափում է քո մեծահոդության առջև։ Աղաստություն չնորհի՛ր այդ գերիներին, և դո՛ւ, Մերուժան, կլինես մի յերկրորդ Կյուրոս, և քո անունը միշտ սրհնությամբ կհիշե Հայաստանի հրեա ժողովուրդը։

— Այդ բոլորը շատ դեղեցիկ է, հարդելի Զվիթա,— պատասխանեց Մերուժանը մի առանձին քաղցրությամբ, որի մեջ նչմարվում եր և նրա սրտի խորին դառնությունը։— Ցնա սիրով կկատարեի քո խնդիրքը, յեթե իմ թագավորին հարկավոր չլիներ քո ժողովուրդը։ Սպահանը՝ յուր շրջակա գավառներով՝ մնացել է դատարկ։ Իմ թագավորը ցանկանում է բնակեցնել այդ յերկիրը մի ժողովրդով, որի վրա կարող լիներ կատարյալ վստահություն ունենալ։ Իսկ հրեաները որքան աշխատասեր, այնքան և հավատարիմ ժողովուրդ են։ Կտաններ ձեզ այնտեղ, և դուք Սպահանում նույնքան բախտավոր վիճակի մեջ կլինեք, որքան եյիք այստեղ, Հայաստանում։ Ցնվ վորպես հայաստանցոց սիրալի ասպնջականությունը ստիպեց ձեզ մոռանալ Հրեաստանը,— այնպես և պարսից սիրալի ասպնջականությունը կստիպե ձեզ մոռանալ ձեր նոր հայրենիքը՝ Հայաստանը, միայն թե, յերբ դուք կընդունեք պարսից կրոնը, որպես այստեղ ընդունեցիք հայոց կրոնը։

— Այդ յերբի՛ք մի հուսար, Մերուժան,— ասաց ծերունին խորին վրդովմունքով։— Ցնեե հրեան հավատափոխ և լինում և քրիստոնեություն է ընդունում, դա շատ բնական է. վորովհետև նա միշտ ապատում է Քրիստոսին—յուր սիրելի Մեսիային։ Բայց արեդակ պաշտել և կրակին յերկրպադություն տալ՝ նա յերբեք հանձն չառնի։

Երկու մոդերը իրանց նստած տեղում ցնցվեցան, և նրանց թթված յերեսների վրա յերևաց մի տեսակ զայրույթ, որ պատրաստ եր հարվածելու անձնազոհ ծերունուն, յեթե Մերուժանը չընդմիջեր նրանց բարկությունը, պատասխանելով.

— Դա ապազային գործ է, հարդելի Զվիթա, յես այդ մասին այժմ քեղ հետ չեմ վիճի։ Միայն չեմ թաղցնում հայտնել քեղ, որ, վորքան և հաճելի լիներ ինձ քո խնդիրքը, այնուամենայնիվ, յես իմ թագավորի յերկրի շահերը ավելի բարձր կդատեմ քո արտասուքից։ Ցնես լսել եմ քո համբավը, և ինձ հայտնի յե, թե դու վո՛րքան սիրված ես քո ժողովրդից։

Ես քեզ աղաւնութիւն կ՚ընծրհեմ,— միայն քի՛ղ, և վո՛չ քո ժողովրդին։ Գնա՛, ուր վոր քո սրտին հաճելի կ՚ե, և վոչ վոք այսուհետև բնաւ չէ համարձակիլ նեղութիւն պատճառել քեզ։ Գնա՛, աղատ ես, Զվիթա։

— Ես կղնամ իմ դերված ժողովրդի մոտ, Մերուժան, և կ՚երթա՛ք չեմ բաժանիլ ներսից։ Հովիվը պետք է իւր հոտի հետ լինի և իւր անձը դնե նրա պահպանութեան համար...

Այս կեղտ տառապյալ ծերունու վերջին խոսքը և նա, արտասուքը աչքերում, կերտնը շուռ տվից, և հենվելով իւր հովվական ցուպի վրա, սկսեց դանդաղ ու չոփչոփոր քայլերով դուրս դալ բանակից։ Հետո բռնեց դնալ Արտաշատ տանող ճանապարհը, սկսեց դիմել դեպի պարսից մյուս բանակը, այնտե՛ղ, ուր Տաճկաստանի կամաւորի մյուս կողմում՝ պահված եր նրա սիրելի ժողովուրդը։

Ծերունու բողոքը, նրա անձնազոհութիւնը, խիստ ծանր տպաւորութիւն թողից բոլորի վրա։ Ներան աղատութիւն չնորհելին, բայց նա մերժեց։ Նա չկամեցավ բաժանվել իւր հոտից, այլ ընդունեց նրա հետ միասին լինել, և նրա հետ միասին կրել գերութեան ու պանդխտութեան տառապանքները։ Վոչինչ հարված չեր կարող Մերուժանի սրտին այնքան դդալի լինել, վորքան համառ ծերունու արհամարհանքը, վորով նա այնպես գառնացած կերպով մերժեց իրան առաջարկված չնորհը։ Այդ եր պատճառը, վոր նրա հեռանալուց հետո, Մերուժանը դանվում եր մի տեսակ անհանդիստ դիրքութեան մեջ և, կարծես, նոր եր դղում, վոր իւր պատրաստած թունավոր նետերը՝ հենց դործի սկզբում՝ ապատաժ-ներին են դիպչում, և կրկին դեպի ինքը հետ են դառնում...

Վոչ սակավ վրդովված եյին յերկու մոդերը, վոր այնտեղ նստած եյին։ Ներանցից մեկը նկատեց.

— Ո՛վ քաջդ Մերուժան, դու իղուր ես թույլ տալիս այդ սևադդեստ, այդ սևադլուխ սատանաներին հետևել իրանց ժողովրդին։ Դրանք այնտեղ, Պարսկաստանում, շատ կդժվարացնեն մեր դործը...

— Այո՛, դրանք այնտեղ հանապազ իրանց ժողովրդին մոլորութեան մեջ կպահեն,— ավելացրեց մյուս մոդը։— Պետք եր կրոնավորներին մնա-դոմայն դատել իրանց հոտից և թողնել այստեղ, վոր մեզ Պարսկաստանում չխանդարեյին...

Մերուժանը այնքան անձնասիրութիւն ուներ, վոր իւր դործողութիւնների վերաբերութեամբ, վորքան և սխալ լինելին, այնուամենայնիվ, վոչինչ նկատողութեան համբերել չեր կարող։ Լսելով մոդերի արտաուկը, պատասխանեց.

— Ես նրանք Պարսկաստանում մեղ կխանդարեն, կերթ դրդռելով իրանց ժողովրդին, նրան միշտ քրիստոնեական մոլորութեան մեջ կպահեն,— դրա համար Շապուհ արքան շատ բանտեր ու դահիճներ ունի։ Դժվար չե՝ մի քանի րոպեյում՝ բոլորին կենդանի մի դուրի մեջ թաղել և նրանց ձայները լռեցնել։ Բայց յերթ այնտեղ թողնելու լինեյինք դրանց, անատա-

բակուլա, կդժվարացնեին մեր այստեղի գործերը։ Ձե՞ վոր, մենք այստեղ ևս պետք է առաջարկենք՝ թողնել քրիստոնեությունը և ընդունել մահմեդականց սուրբ կրոնը։ Այս ևր պատճառը, վոր չես աշխատեցի, վորքան կարելի չեր, ձեռք բերել հայոց հոգևորականներին և մեր հսկողության ներքո պահել։

Մերուժանի կարծիքին հավանություն տվին թե՛ Հայր-Մարդպետը և թե՛ վահան Մամիկոնյանը՝ Սամվելի հայրը։ Դրանք ևս սինդում նլին, թե յեկեղեցին դրավելու համար՝ նախ պետք է յեկեղեցականներին դրավել, ինչպես հոտը դրավելու համար, նախ պետք է հովվին ձերբակալել։

— Ուրեմն ինչո՞ւ դու կամեցար ազատություն շնորհել այն ծերունի յերեցին,— հարցրեց Սամվելը, պառնալով դեպի յուր քեռին։

— Նա վերին աստիճանի ազդեցություն ունեցող մարդ է,— պատասխանեց Մերուժանը։— Նա պաշտոնում է յուր ժողովրդից, վորպես մի սրբություն։ Նրա ներկայությունը յուր ժողովրդի մեջ՝ կարող ևր մշտական դպատուության մեջ պահել յուր ժողովրդին։ Իսկ նրա մահը (յեթե հանգամանքները ստիպեյին մեզ վրնջացնել նրան) ավելի ևս պիտի բորբոքեր յուր ժողովրդի հավատը։ Նա կդառնար մի քաջ նահատակ, վորի անունը յերբեք չեր մոռացվի, և նրա հիշատակը միշտ կդրդռներ յուր ժողովրդին։ Կան մարդիկ, վորոնց մահը ավելի վտանգավոր է լինում, քան թե նրանց կյանքը։ Նա այն տեսակ մարդկիններից է։

Սամվելը վոչինչ չպատասխանեց, իսկ Մերուժանը նրա լռությունը համաձայնության տեղ ընդունեց։ Բայց վշտալի յերևոյթը յուր մտքում այս ևր խորհում. «Վո՛րքան ուսումնասիրել են այդ մարդկիը չարության գործը...վո՛րքան խորն են թափանցել իրանց անիրավությունների մեջ»...

Խոսակցությունը այլ կերպարանք ստացավ, յերբ Հայր-Մարդպետը, պառնալով դեպի Մերուժանը, հարցրեց.

— Ճանկալի յեր դիտենալ՝ այժմ վո՛րտեղ հասցրած կլինեն հայոց Թագուհուն։ Դու այդ մասին վո՛րևե լուր ունե՞ս։

— Ունեմ,— պատասխանեց Մերուժանը փոքր ինչ այլայլված ձայնով և, մինուլն րոպեյում, նրա դեհոնանակ դեմքի վրա անցավ մի տեսակ տխուր մթություն։— Նրանք այժմ պետք է անցած լինեն Եկեղյաց գետը. դնում են ավելի կարճ ճանապարհով...

Հայր-Մարդպետը նկատեց Մերուժանի չխոթությունը և խոսքն ատրջացավ։ Հիշեցնելով նրան հայոց Թագուհուն, հիշեցրեց, մինչդեռ ժամանակ, և նրա տիրելի Վռամիղդուխտին։ Ծերունուն էլ միասին նլին դնում Գարնկաստան, այլ խոսքով, յերկուսին ևս միասին նլին տանում Գարնկաստան։ Նրանց հետ տանում նլին և Մերուժանի խորտակված սրտի բեկորները... նրա վիրավորված զգացմունքները...

Մերուժանի թախծությունը նկատեց և Սամվելը, մտածեց փոքր ինչ ղվարճացնել նրան։ Նա դիտեր յուր քեռու բնավորությունը, դիտեր, վոր նա այն ժամանակ միայն ուրախ ևր լինում, յերբ նրա հետ խոսում նլին

յուր պինվորական դործողութիւններէն մասին, մանաւանդ յորդ դործողութիւնները բանական հայրդ վախճան կրնան տանել:

— Զարմանում եմ, սիրելի քեռի,— հարցրեց նա:— Ձես ձեր պինվորների թիվը համեմատաբար ավելի փոքր եմ դտնում, քան թե այն բազմաթիվ ավանների և քաղաքների թիվը, որ ես տեսել եմ ավերակ և սպանի տեսա իմ դալու ժամանակ՝ հանապարհորդութեան սերտին ատեն:

— Բազմութիւն ուղիղ է քո նկատողութիւնը, սիրելի Սամվել,— ասաց նա դժդոհ մարդու յիշատակով:— Մեր պինվորները տատիկ դանդաղկոտ շարժվեցան, իսկ մեր դրացիները բանական անվարժ էին հայոց յերկրի պատմութեան: Մինչև մեր հասնելը, շատ ավաններ և շատ քաղաքներ մեռնելու դատապարտ էին դտնում մեր առջև: Այրում էին և անցնում էին: Բնակիչները, լսելով մեր արշավանքի ձայնը, կանխապես թողած էին լինում իրանց բնակութիւնները, և սերացած էին լինում անմատչելի լեռներէն բարձրութիւնների վրա: Դաշտային տեղերում, ասիաբնակների վրա, մենք, իրավ է, մեծ հաղթութիւն դտանք: Բայց լեռներում մեր պինվորները բաղդատական հայտնվեցան:

Վերջին խոսքերի մէջտեղն նա նայեց պատից կախած դրասպետի յերեսին, որ ուշադրութեամբ լսում էր:

— Ուրեմն դուք շատ խոր չթափանցեցի՞ք լեռնային հողմերում,— հարցրեց Սամվելը:

— Ցավ դժվար էր թափանցել: Ձես չկամեցա արքային արքայի զորքերը խորը կատարել տալ: Ինձ համար թանդ և յուրաքանչյուր պատերիկ պինվորի մի կաթիլ արյունը: Հայերը լեռներից կռվում էին մեզ հետ մո՛չ միայն դինքերով, այլև քարերով ու փայտերով: Ցավ կռվում էին մո՛չ միայն ազատասիրութիւնը, այլև կանայքը: Այս վերջիններէ կատաղութիւնը ավելի չափազանցնում էր մեզ: Այդ էր պատճառը, որ յես բանականացա ավելի պաշտային յերկրներով, և աշխատում էի միշտ խուսափ տալ լեռներից:

— Այժմ դրասպետ՝ ո՞ր լեռներում ամփացած են վախճատական թշնամիները:

Մերսեժանին խիստ հաճելի յեր յուր քրոջ վերդու հետաքրքրութիւնը, որի մէջ նկատում էր նրա առանձին համակրութիւնը և ուրախանում էր: Նա սկսեց մի առ մի տեղեկութիւն տալ յերկրի դրութեան մասին, թե ո՛րտեղ էին էր կատարվել, կամ ո՛ր կողմերում դրասպետ կենդրոնացած էին հայոց ուժերը: Նրա խոսքերից յերևաց, որ պատերիկները մի քանի տեղերում աստիճ պարտութիւն էին կրել, և շատ տեղերում էս մուտք անդամ դործել չէին կարողացել:

— Մենք մեծ հաղթութիւն դտանք Արարատյան դաշտում, և տեղատարած այն կողմերում, որ արքունական կալվածքներ էին,— ասաց նա:

Վերադիտեմ մնացել էին անտեր... վերադիտեմ ո՛չ թագավորը

կար և վո՛չ թագուհինդ... յուր մտքում ասաց Սամվելը, և ապա ձիծաղելով նկատեց.

— Ցնվ այրեցի՛ք անպաշտպան քաղաքները...

— Գնաք եր այրել, սիրելի Սամվել, մի ուրիշ անդամ յես կբացատրեմ քեզ, թե ինչո՛ւ համար պետք եր այրել...

— Հասկանում եմ... ասաց Սամվելը, և նրա ձայնը դղալի կերպով դողաց։— Այո՛, մենք հետո կխոսենք այդ մասին...

Վահան Մամիկոնյանին չատ հաճելի չեր թվում Միհրուժանի այս տիճան մտերմական խոսակցությունը յուր վորդու հետ, և յերեն հնար լիներ, մի կերպով կդադուշացներ նրան։ Բայց ի՛նչպես կասկածավոր ցույց տալ յուր վորդուն, վորի մասին ինքն ևս հաստատ վոչինչ չդիտեր, և տակավին խարխափում եր մթին անստուգությունների մեջ միայն։

Խոսակցությունը ինքնըստինքյան ընդհատվեցավ, յերբ սպասավորները ներս մտան, սկսեցին ճաշի սեղանը պատրաստել։

Գարսիկ զորապետը չէր դրկում երան յուր տվորական բավականությունների և վոչ մեկից՝ մինչև անդամ յուր դինվորական կյանքում։ Նա յուր բացօթյա բանակում դիտե շրջապատել երան այն բոլոր վայելչություններով, վորպես տվոր և սպրել յուր տան մեջ։ Ժուժկալությունը և ռազմական խստակեցությունը անծանոթ են նրան։ Միհրուժանը յուր կրթությամբ թեև ճշմարիտ դինվոր և տակավաղես զորավար եր, բայց, հետևելով պարսից տվորություններին, նրանց կենցաղյան մինուճար ձևերը, մինուճար յեղանակն եր ընդունել։ Ցնվ այլ կերպ վարվել կարող չեր. վորովհետև նրանց հետ հարաբերություններ ուներ։

Մանկահասակ սպասավորների մի տվար խումբ շքեղ կերպով հագնված, վոտքի վրա ծառայում եյին։ Սեղանի բոլոր անոթները վոսկուց եյին և արծաթից։ Վո՛րքան հյուրերի ախորժակին բավականություն եյին տալիս անուշահամ կերակուրները, ա՛նքան ավելի նրանց դեղասեր ճաշակին բավականություն եր տալիս սեղանի փայլը, նրա փառավոր հանդեսածանքը։ Բոլոր պարագաների մեջ նշմարվում եր նրբություն և չափազանցության հասցրած շռայլություն։

Հյուրերից յուրաքանչյուրի մոտ կանդնած եր մի-մի ծաղկապատակ պատանի և, մի ձեռքով բռնած դինու արծաթյա խառնարանը, իսկ մյուս ձեռքով՝ արծաթյա թասը, մատուցանում եյին անուշահոտ ըմպելին։ Մի խումբ յերաժիշտներ, վրանի առջևում կանգնած, ածում եյին զանազան նվագարանների վրա և անդադար ձայնով յերգում եյին։

Ճաշը տևեց բավական յերկար։ Պատանի Արտավազդը, կարծես թե, սեղանների վրա նատած լիներ, անհամբերությունից սկսեց ձանձրանալ։ Նրան չեյին գրավում՝ վո՛չ դուսանների անընդհատ յերգերը և վո՛չ նվագարանների քաղցր հնչյունները,— նա բոլորովին ուրիշ ցանկություններ ուներ։ Վորսորդության գնալու մասին առաջին անդամ նա խոսք նետեց, վորովհետև նրան ամեն համարձակություն ներվում եր։

— Բնավ,— դարձավ նա դեպի Մերուժանը ժպտալով,— բանակը դեռ յոթ քանի՞ որ պետք է այստեղ մնա։

— Ցերեք որ։

— Ո՛հ, դա շատ յերկար է, ասավածս վկա, շատ յերկար է... պատասխանեց նա, դեղնցիկ յերեսը անբավականությամբ խոժոռելով։— Ի՞նչպես պետք է անցկացնենք այդ յերեք անտանելի օրերը։

— Ինչպես վոր քո սիրտը կկամենա,— ասաց Մերուժանը, փայփայելով նրա սիրուն դիակները։

Պատանին չրթունքները մոտեցրեց Մերուժանի ականջին, փսփսաց.

— Ցնթե դիտենաս, թե վո՛րքան ժամանակ է, վոր յես վոբսի չեմ դնացել, բոլորովին կդարմանաս։

— Վո՞րքան ժամանակ է, սիրելիս։

— Այն որից, վոր մեր տանից դուրս եմ յեկել։

— Դա վոչքր ժամանակ չէ, մանավանդ քեզ համար։ Դու կարծեմ, վորսորդությունը սիրում ես, Արտավազդ։

— Սաստիկ։ Ցերբ մեր տանն եյի, յնթե շաբաթը մի քանի անգամ վորսի չդնայի, ինձ այնպես կթվար, թե մի լավ բան, շա՛տ լավ բան կորցրել եմ։

Մերուժանը սկսեց բարեսրտությամբ խնդալ։

— Ցերևի, Սամվելն էս սիրում է,— դարձավ նա դեպի քրոջ վորդին։

Վորդու փոխարեն պատասխանեց հայրը.

— Սամվելը ամենափոքր հասակից սիրում եր վորսորդությունը։ Մեր սարոցի թռչունները հանդստություն չունեյին նրա ձեռքից, յերբ դեռ տասն տարեկան տղա յեր։ Իսկ այժմ չդիտեմ հետևո՞ւմ է յուր հին սովորություններին, թե վոչ։

— Ցես իմ սովորությունները հեշտությամբ չեմ փոխում,— պատասխանեց Սամվելը, ժպտալով։— Վորսորդությունը իմ ամենասրտագին զբաղմունքներից մեկն է։— Ցեվ դառնալով դեպի Մերուժանը, հարցրեց.— այդ կողմերում, Արաքսի ափերը, ասում են, խիստ հարուստ են վայրենի յերեներով։

— Այո՛, հարուստ են,— ասաց Մերուժանը, մի առանձին հեղնությամբ։— Արշակունի թագավորները Արարատում բազմացրին վայրենի յերեներ մեյան։ Ճահիճները չեյին ցամաքացնում, դիտեղերքի ինքնորոշ բուսած ծառատառնները չեյին կտրում, վորպեսզի թռչունների և յերեների ազատության համար պատսպարաններ լինեյին։

Սամվելի հայրը մեծ ցանկություն ուներ, վոր վորդուն մի վորևե ազնիվ ներկայացներ պարսիկ զորապետներին, և նրա կատարելություններից մասին փոքր ինչ զաղափար տար նրանց։ Իսկ առայժմ, քանի դեռ հրամանների հանդեսներ չկային, վորսորդությունը ամենահարմար միջոցներից մեկն եր, վորի մեջ Սամվելը կարող եր ցույց տալ յուր քաջությունը։

Սամվելը, հասկանալով հոր վախճաղները, մտածեց ուղուա քաղել նրա տրամադրությունից: Նա դարձավ դեպի Մերուժանը, հարցնելով.

— Դուք վճռել եք անպատճառ յերեք որ բանակը պահել այստեղ:

— Անպատճառ: Բացի այն, վոր ասպղնները բարի ճանապարհ չեն դուշակում, մենք դեռ սպասում ենք մի քանի դունդերի, վոր հետ են մնացել, և նրանց դոյության մասին ամենևին տեղեկություն չունենք:

— Ուրեմն, այդ յերեք որում, ինչպես լավ նկատեց Արտավազդը, անդորձության մեջ կարելի յե բոլորովին ճանճրանալ:

— Քեռիդ Թուրլ չի տա, վոր ճանճրանաս, սիրելիս,— մեջ մտավ հայրը:— Նա քեզ համար վորսորդության ամենահետաքրքրական հանդեսներ կպատրաստե Արաքսի ափերի մոտ:

— Ցեվ ինձ համար,— ընդմիջեց պատանի Արտավազդը:

— Ի հարկե, և քեզ համար,— ասաց Մերուժանը ժպտալով:— Առանց քեզ ի՞նչ ուրախություն կունենա մեր վորսորդությունը:

— Հանաքը մի կողմ,— ասաց նա ինքնավստահ պարծենկոտությամբ:— Ցես ուղում եմ այդ պարսիկներին ցույց տալ հայ տղայի քաջությունը:— Վերջին խոսքերը արտասանեց նա հայերեն, յուր վառվռուն աչքերը խորամանկ կերպով դարձնելով դեպի ներկա դտնվող պարսիկ ավազները:

Բայց Մերուժանը ծիծաղելով թարգմանեց նրա ասածը.

— Գիտե՞ք ինչ և ասում իմ փոքրիկ աղջականը. նա պարծենում և զարմացնել ձեզ յուր քաջություններով: Ցեվ յես խոստանում եմ եղուց պատրաստել տալ նրա համար վորսորդության հանդես:

— Տեսնենք, եղուց կտեսնենք,— ձայն տվին պարսիկ ավազները լուրջ կերպով:

— Բայց իմ դեմ դուրս բերեցեք իմ հասակակիցներին:

— Ի հարկե, այնպես կլինի: Մենք այժմյանից հրաժարվում ենք քեզ հետ մրցելուց: Մեր բանակում քո հասակակից տղաներ շատ կան:

Սամվելը վոչինչ չեր խոսում: Նա արդեն յուր ցանկությանը հասած եր համարում: Մերուժանը հրամայեց, վոր մյուս որվա համար վորսորդության պատրաստություններ լինեյին Արաքսի ափերի մոտ:

ԵՐԵՔՍԻ ՎՈՐՈՒԵՑԹՆԵՐԸ

«Ազա որդի մի վախանայ, անուն Սամուէլ ևհաք աստակեաց զվահան զհայր խւրա»:

Փաւստոս:

Հին Արաքսը զարմանալի վորոգայթներ ուներ: Նա և՛ զարմանալի քամահաճություններ ուներ: Անհիշելի ժամանակներից համառությամբ կռվում եր յուր անհավատար յեղերքի հետ և, կարծես, դժգոհ եր այն նեղ հովիտ

պից, վոր դծել եր նրա ընթացքի համար նույնքան քմահաճ բնությունը: Նա սիրում եր ընդարձակություն, սիրում եր աղատություն: Նեղ շավիղը վրդովեցնում եր նրան:

Ցերեկն լեռնային յերկու դուշահեռական դոտիներ միաբանվում էին, և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մեջ: Այդ միջոցին նրա կատաղությունը չափ չուներ: Ահռելի հորձանքներով զարկվում եր յուր ապառաժոտ ափերին դոռում եր, գոչում եր, փրփրում եր և մարդ, կարծես, լսում եր նրա սոսկալի վոտռոմալունքի մեջ այս ճակատագրական խոսքերը. «Ննջ՛ ե... Ննջ՛ ե... խեղդվո՛ւմ եմ»...

Ցերեկն լեռնային դոտիների միաբանությունը խախտվում եր, բաժանվում էին միմյանցից, հեռանում էին միմյանցից, և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածություն: Այդ միջոցին նրա կամայականությունը չափ չուներ: Ազատվելով յուր նեղ կիրճից, մի չար վիշապի նման, անթնա կերպով վողողում եր, հեղհեղում եր յուր հարթ, կանաչազարդ ափերը,— և կամ, մի արբեցած հսկայի նման, յերբեմն դնալի աջ եր թևքվում, յերբեմն դնալի ահյակ եր խառտրվում, և յերբեք ուղիղ ճանապարհով չեր դնում:

Նա յուր ազատությունը խելացի կերպով վայելել չգիտեր: Հանկարծ վիթխարի թևքերը բաց եր անում, խլում եր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով յուր դոզ դրկի մեջ, կղզիացնում եր նրան: Ան ժամանակ յերևակայական սիրելությամբ՝ սկսում եր վայելչացել և խնամել յուր խաղալիքը: Կղզին աճում եր, կանաչազարդվում եր, աճում էին թուփերը և վառվում էին ծաղիկները: Ցերկնքի թռչունը հյուսում եր այնտեղ յուր բույնը, վայրի անասունը անուցանում եր այնտեղ յուր ձագուկներին: Կղզին ներկայացնում եր մի դեղեցիկ վունջ, վորով զվարճանում եր նա և, ալըճնասեր յերխտասարդի նման, զարդարում եր յուր հպարտ կուրծքը: Բայց հանկարծ, կարծես, ձանձրանում եր նա, ալիքները վրրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մռնչում էին, և մի քանի րոպեի մեջ կլանում էին դեղեցիկ զարդը, և նրա հետքն անգամ չեր յերևում:

Հայոց դետերի թագավորը վարվում եր յուր հորինած կղզիների հետ նույն կերպով, վորպես հայոց յերկրի թագավորը վարվում եր յուր մեջ կղզիացած նախարարությունների հետ:

Ցեվ, իրավ, Արաքսը ներկայացնում եր յուր աշխարհի քաղաքական դրությունը: Ցերբ խորամանկ պարսիկը և ենթակայող հռոմեացին, յերկու լեռնային դոտիների նման, միաբանվելով ճնշում էին նրան, այդ միջոցին նրա ճիշն ու բողոքը սահման չուներ: Ցուր բոլոր կատաղությունը դործ եր դնում՝ ազատվելու նրանց ճնշումից: Իսկ յերբ յերկու դաշնակիցները քանդում էին իրանց միաբանությունը, բաժանվում էին, և նա ազատություն եր դանում,— այդ միջոցին սկսում եր զբաղվել ներքին յերկպառակություններով: Ամենայն անդթությամբ վոչնչացնում եր յուր

մեջ ամփոփված նախարարությունները, վորպես հրեշավոր Արաքսը լափում, կլանում եր յուր մեջ սեղմված կղզիները։

Այդ կղզիներից մեկի վրա պետք է լիներ այն որ վորսորդությունը, վոր կոչվում եր «Իշխանաց կղզի», և վորի մեջ Սյունյաց իշխաններից մեկը բաց եր թողել վայրենի անասուններ, և այնտեղ ամեն կերպով աճել, բազմացել եյին։

Արեգակը դեռ նոր եր ծագել, յերբ ուղի ընկավ վորսորդների ասպատումբը։ Ջով ու խաղաղ եր առավոտը։ Մինչև անգամ կարմրագույն քամին, վոր յերբեմն սովորություն ուներ փչել Արաքսի այդ կողմի ափերից, և բերելով յուր հետ նրա յեղերքի վրա սփռված կարմրագույն ավազները, դիտեր հաճախ լցնել ողը մի ահռելի՝ բոսորային մառախուղով,— այդ բոթաբեր քամին անգամ այն առավոտ դադարել եր։ Որը պարզ եր և դեղեցիկ։

Ճանապարհը, մինչև Արաքսի յեղերը հասնելը, պատած եր ճոխ, սիզավետ բուսականությամբ։ Կոխվներից առաջ արածում եյին այնտեղ Նախճըվանի տիրոջ իշխանական նժույգները։ Իսկ այժմ արածում եյին պարսից բանակի ղրաստները։ Տեղ-տեղ բարձրանում եյին մերկ, սրածայր բլրակներ, վորոնք իրանց հրեշավոր դույությունը պահպանել եյին, կարծես, միմիայն նրա համար, վոր ցույց տան անցորդներին, թե ինչ անողորմ խաղեր եյին խաղացել նրանց հետ վաղեմի ժամանակները։ Դարերի անձրևները վոդողել եյին այդ բլրակների հողային փափուկ մասը, և թողել եյին նրանց կաղմուվքյան կարծր, քարացած կմախքը միայն, վոր ներկայացնում եր այլանդակ պատկերներ։ Ահա՛ այնտեղ յերևում է ուղտերի մի ամբողջ կարավան։ Կորաքամակ, ծռավիզ անասունները շարված են միմյանց յետևից և, դրեթե, կախված են ողի մեջ։ Ահա՛ մյուս կողմում մի քանի աշտարակներ կարգով դրված են միմյանց վրա, բարձրանում են դեպի յերկինքը։ Աշտարակների ամբողջ շարքը կանգնած է բարակ, մաշված պատվանդանի վրա, և մարդ կարծում է, յերեթ փչելու լինի, բոլորը ցած կթափվի։ Ահա՛ մի վոտքր հեռավորության վրա՝ նկարված են ողի մեջ մարդկային սոսկալի ուրվագծեր, կարծես, քարացած հսկաներից արձաններ լինեն։ Ահա՛ մի գլարված վիշապ, հրեշավոր գլուխը վեր է բարձրացրել, և ահարկու բերանը բաց արած, սպառնում է կլանել անցորդին։ Մի ժամանակ այդ կողմերում բնակեցրած եյին Հայաստան դերի բերված վիշապազունները։ Այժմ մնացել եյին նրանց վիմային կմախքները միայն։

Մի կարմրագույն, քարացած աշխարհ եր այդ, վորով ծանր ու հանգարտ կերպով ընթանում եր վորսորդների ասպատումբը։

Նրանք հասան Նախճվանի աղմկալի գետակին, վոր աղաղակելով և յուր խճաքեթ հատակին զարկվելով, շտապով վազում եր և խառնվում Արաքսին։ Այդ կողմում բնությունը այլ տեսարան եր ներկայացնում։ Գետակի ամբողջ յերկարությամբ աճել եյին վարսավոր ուռենիներ, կարճահասակ թփեններ և զանազան վայրենի թուփեր, վորոնք միախառնվե-

զով, հորինել էին մի կննդանի ցանկապատ, վոր համարյա անանցանելի էր դարձնում Ճանապարհը։

Այդ կողմումն էին քաղաքացիների բնակնավոր այդիները։ Կռիվներից առաջ այդ հրաշալի այդիները իրանց դեղեցիկ մշակութեամբ բոլորովին արդարացնում էին ամենահին ավանդությունը, թե հայ մարդը ծանոթ եր այգեգործության հետ, սկսյալ այն որից, յերբ Նոյը Արարատ լեռան ստորոտում անկից աշխարհի առաջին այգին։ Գողթնյայց յերկրի ընտիր խաղողը ծաներ, հյութալի վողկույզներով, վառվում եր հայոց արեգակի կյանք և քաղցրություն ներշնչող ճառագայթների ներքո։ Այդ խաղողն եր զարգացնում այն ազնիվ նկուտրը, վոր վոգևորում եր Գողթնյայց յերգիչներին։ Իսկ այժմ սերևթափ, վորթակոտոր յեղած խաղողը, կարծես թե, ճմլած և ջարդված լիներ մի սարսափելի կարկուտից։ Պարսից գինվորի վոտքն եր կատարել այդ սրտաճմլոր ավերակությունը։ Կռիվներից առաջ կարմիր խնձորը, դեռահաս աղջկա կարմիր թշերի նման, ժպտում եր, ծիծաղում եր, իսկ ծանրաբարո տանձը՝ յուր ծանրությամբ դեպի ցած եր խոնարհեցրել ծառերի սաղարթախիտ վոստերը, վորոնք մի այնպիսի հանգստական տպավորություն էին գործում, կարծես թե, գլուխները ծռելով՝ վողջունում էին անցորդներին։ Այժմ նույնպես կորացած էին վոստերը, այժմ նույնպես դեպի ցած էին կախված թառամած ճյուղերը։ Բայց դա պարսից անհաղ գինվորի անողորմ ձեռքի գործն եր։ Կռիվներից առաջ դեղնաղուն դեղձը համեստությամբ թաղնվել եր ծիրանի հսկա ծառերի յերանելում, վորոնք իրանց լայն, սովերախիտ հովանավորության ներքո էին առել նրանց։ Իսկ այժմ ծարավությունից թոշնած ծիրանիները մերկացել էին իրանց հարուստ կանաչազարդությունը, և մի այնպիսի նիհար տեսք էին ստացել, կարծես թե, աշնան վերջը լիներ։ Զկար հոգատար այգեպանը, վոր ղովացներ նրանց ծարավը, վոր աղատեր նրանց վաղահաս վախճանից։

Այդիների միջից բարձրանում էին հնձանների կրկնահարկ շենքերը։ Շատ անգամ հայոց այդիների հնձանները ապաստան են յեղել անմեղ հայածյալների։ Հռիփսիմյան կույսերի խումբը յերկար պատսպարված էին Վաղարշապատի այդիների հնձաններում։ Խաղաղության ժամանակներում այդ հնձանների վերին հարկում, սկսյալ գարնան սկզբից՝ մինչև ձմեռնամուտը, բնակվում էին այգեստեր ընտանիքները։ Նրանք խնամք էին տանում այդիներին, հավաքում էին պտուղները և, միևնույն ժամանակ, վայելում էին զվարճալի ծառատտանի մաքուր և հովասուն ողը։ Այդիները մի տեսակ ամարանոցներ էին նրանց համար։ Իսկ այժմ վոչ վոք չեր յերևվում։ Հնձանները մնացել էին դատարկ և այդիները անխնամ։ Պատերազմների աղմուկը ցրվել էր բոլորին։ Վոմանք փախան, ապաստանեցին վայց—ձորի մերձակա լեռներում, վոմանք գերի ընկան թշնամու ձեռքը։

Թշնամին այժմ անցնում եր նույն այդիների միջով, վոր ավերակ և ամայի յեր դարձրել ինքը։ Այդիները բռնել էին բավական մեծ տարածու-

թյուն։ Նրանք բաժանված էին միմյանցից կավեղեն ցած պատերով, վրա-
բոնց վոլորմոլոր, ցանցատեսակ վոզոցները հորինել էին մի մեկին լա-
բյուրինթոս, ծածկված ծառերի վոստախիտ ստվերի ներքո։ Ցերկար վոր-
սորդների ասպախտումը դնում էր նույն վոզոցներով, բայց տակավին բա-
վական ժամանակ էր հարկավոր, մինչև դուրս կդային։ Շատ անգամ հայոց
այդինների այդ ահարկու լաբյուրինթոսը կլանել էր Թշնամիների ահաւին
դունդեր։ Բայց Գողթնյաց այդինների ամայի վոզոցներից այժմ համար-
ձակ անցնում էր Թշնամին։

Սամվելը նայում էր չրջակայքի տխուր տեսարաններին վրա, և նրա
դղյակն սիրտը խոցվում էր անբուժելի վերքերով։ Բայց նրա հայրը ու-
րախ էր, վոչինչ չէր ղդում, և միայն վոգևորված էր այն խորին բավակա-
նությամբ, վոր մի քանի ծանր տարիներից անջատումից հետո, առաջին ան-
գամ բախտ ուներ սիրելի վորդու հետ մասնակից լինել մի հանդիսավոր
վորսորդության։

Նրանք դուրս չեկան այդինների մեջին, վոլորտապատույտ նրբանցքներից,
և նրանց առջև բացվեցավ մշակված անդաստանների ընդարձակ տարածու-
թյուն։ Մի քանի չարաթ առաջ այդ անդաստանները ներկայացնում էին
մի սքանչելի վոսկեղեն ծով, ուր ցորյանի հասունացած արտերը՝ իրանց
լիառատ բերմնավորությամբ՝ լցնում էին յերկրագործի սիրտը անսահ-
մանն որհնությամբ։ Իսկ այժմ անքաղ և անխնամ մնալով, արևի կիզող
ճառագայթներից չորացել, այրվել էին, և ցամաքած հասկերը ցած էին
թափվել անդուր քամուց, վորպես մի մեծ կոտորածից։ Կորյակի, կատ-
վահատ դեռ կանաչ, չհասունացած արտերը, անջուր մնալով, ծարավու-
թյունից թառամել, թաղշտիկ էին և կպել դետնին։ Չկար արթուն մշա-
կը, չկար հոգատար խնամողը։ Ցերևում էր միայն արտորայքի սիրահարը՝
վողրաճան արտուտը, վոր ողի մեջ անդադար ճախրում էր միևնույն
կետի վրա և, փոքրիկ թևիկները թափահարելով, ամրասփած կերպով նա-
յում էր դեպի վոչնչացրած հունձը, և վորպես մի սգավոր վոդի, յերբեմն
դեպի ցած էր նետվում, հառաչանքներ էր արձակում, յերբեմն դեպի վեր,
էր սլանում, և դարձյալ ողի մեջ միևնույն կետի վրա ճախրելով, շարու-
նակում էր յուր տխուր, վողբալի յերդը։ Ցերևում էին և Թշնամու ջո-
կիների խումբերը, վորոնք անպատիժ կերպով ցրիվ էին տալիս հնձած
դարնի խուրձերը, և ավելի վոտնակոխ էին անում, քան Թե ուտում էին։

Նրանք անցան անդաստանները, անցան մի քանի ավերակ արվարձան-
ների և դյուղերի մոտից։ Այժմ սկսվեցան Արաքսի մերձակայքի կանաչա-
դարդ տափարակները, վոր վերջանում էին խիտ մացառներով ու վայրենի
ծառաստանով, յերբ ավելի մոտենում էին դետի ափերին։ Տեղ-տեղ ջուրը
լճացել էր, տեղ-տեղ գոյացել էին ճահիճներ։ Ձիանների սմբակներից մի
այնպիսի խուլ տրոփյուն էր լսվում, կարծես Թե, գետնի տակը դատարկ
լիներ։ Ցերբեմն այնպես էր Թվում, վոր առածդական գետինը կա՛մ բարձ-
րանում և կա՛մ ցած էր իջնում ձիանների ծանրության ներքո։ Այդ տեղե-

բում թագնված էին Արաքսի մեկին վորդաչինները և նրա սառըրիրյա սոսկալի անդունդները, վոր լցված էին բոլորովին թանձր և սև հեղուկով, վորի յերեսը, սերի նման պնդանալով, կազմել եր այն խարուսիկ, վտանգավոր ծածկոցը, վորի վրայով գնում էին նրանք: Այդ անհատակ անդունդները սովորություն ունեին՝ յերբեմն բաց անել իրանց ահարկու բերանը և, տարտարոսի նման, կլանել անցորդներին: Այս տեսակ անդունդներից մեկի մեջ, յուր ձիու հետ կորավ հայոց Արտավազդ թագավորը, յերբ նա վորսորդություն եր անում Արաքսի ափերի մոտ:

Արևը բավական բարձրացել եր, և առավոտյան զով ոդը հեղհետե լցվում եր խիտ ախորժելի ջերմությամբ: Վորսորդների ասպախումբը դեռ չարունակում եր հանդարտ և ուրախ ընթացքով առաջ գնալ:

Սամվելը նստած եր մի գեղեցիկ, վոսկեգույն նժույգի վրա, վոր այն առավոտ ընծա յեր ստացել յուր հորից: Նրա յետևից գնում եր պատանի Հուսիկը, վոր զինակիր պաշտոն եր կատարում: Նա կրում եր յուր էշխանի յերկար նիզակը, լայնալիճ ադեղը, նետերով լի կապարճը և մի յերկար, հաշյա բարակ ճոպան, վոր միաթաթած կախ եր ուղել յուր ձիու թամբից: Իսկ ինքը Սամվելը կրում եր մի սուր միայն և մի արծաթյա փոքրիկ փող, վոր քաշ եր ընկած նրա վոսկյա կամարից:

Ծերունի Արրահը, կարծես, բոլորովին մանկացել եր: Նա գոնվում եր կատարյալ գինավառության մեջ: Նա առաջ եր ընկած, և նրա յետևից գալիս էին Սամվելի քաոսասուն զինված ծառաները: Նրանցից վոմանք ձեռքերի վրա կրում էին վորսորդական բազեներ, վոմանք բռնած ունեին անհանգիստ բարակների վոկերի ծայրից, վոր կապած էին նրանց յերկար պարանոցներին: Աղտա էին թողած միայն փոքրիկ, սորամուտ սկուռներին և ահագին թավամազ դամփուններին, վորոնց վորսորդների լեզվով կոչում էին գազայլ խեղդողներ: Այս բոլոր պատրաստությունը Սամվելին ընծայել եր հայրը:

Վորսորդական հուշարարները, դեռ արևը չծագած, վաղ-առավոտյան գնացել էին դիտելու, հետազոտելու բոլոր վայրերը, վոր տեսնեն, թե վո՛րտեղ ի՛նչ յերևույթ կան:

Սամվելին ուղեկցում եր հայրը, շրջապատված յուր թիկնապահներով: Իսկ փոքր ինչ հեռու, յուր հայտնի սպիտակ նժույգի վրա նստած, գնում եր Մերուժանը, յուր առանձին խմբով: Նրանց հետ եր և պարսից կարևն ղորապետը՝ յուր մի քանի սպաներով: Վորսորդությանը չմասնակցեց Հայր-Մարգպետը:

Առջևից գնում էին մի խումբ պարսիկ տղաներ, վորոնց թվումն եր և պատանի Արտավազդը: Այդ մանկահասակ վորսորդները՝ իրանց չքնաղ զինավառությամբ՝ դրավել էին ամենքի հիացքը: Բայց բոլորի մեջ ավելի փայլում եր, ավելի աչքի յեր ընկնում պատանի Արտավազդը: Վոդևից մանուկի ուրախությունը չավ չուներ: Ծուր ոչխուժ նժույգի հետ ներկայացնում եր նա մի մարմնացած զվարճություն: Ձախ կողմից կապած ու-

ներ ուսին՝ նետերով լի արծաթյա կապարճը, իսկ աջ կողմից՝ ձգած ուներ լայնալիճ աղեղը, վոր նրա համար բավական մեծ եր։ Ձեռքում կրում եր մի թեթև նիզակ, իսկ գոտուից քարշ եր ընկած յերկասյրի սուրը՝ արծաթապատ պատյանով։

Սամվելը ընկղմված եր լուռ մտախոհությունների մեջ։ Ճերքեմն միայն հարևանցի կերպով նայում եր յուր շուրջը, նայում եր դեպի հեռուն, չատ հեռուն և, կարծես, աշխատում եր միանգամից ծանոթանալ բոլոր տեղորայքի հետ։ Նրա վշտահար դեմքը, վորպես միշտ, չեր ցույց տալիս վոչ մի բավականություն, թեև կցանկանար գոնե փոքր ինչ ուրախ ձևանալ։ Իսկ յուր տխրության մեջ անդամ սքանչելի յեր նա։ Ուրախ եր միայն նրա ամեհի նժույգը, վոր անդադար վոստոստում եր և ահագին թռիչքներ եր դործում։ Բայց նա վարժ ձեռքով այնպես հեշտությամբ դարձնում եր խստերախ յերիվարի սանձը, կարծես, մի հեղ դառնուկ լիներ։ Հայրը նայում եր նրա վրա և հիանում եր։ Նա սաստիկ փափադում եր, վոր վորդին բաժանվեր խմբից և մի թեթև ճխակաղ կատարեր այն հարթ տափարակի վրա, վոր կանաչ թավիշի նման տարածված եր նրանց առջև։ Նա մինչև անդամ ակնարկեց վորդուն, բայց Սամվելը հրաժարվեցավ, ասելով.

— Անհարմար է, հայր, վորովհետև այդ դեղեցիկ նժույգը, վոր աստր ընծայեցիր ինձ, տակավին վարժված չե իմ ձևերին, և վոչ յես ծանոթ եմ նրա բնավորության հետ։ կարող ենք չհասկանալ մեմյանց։

— Վոչ, ընդհակառակն,— պատասխանեց հայրը ժպտալով,— նա վո՛րքան դյուրագրդիռ է, վո՛րքան համառ է, ա՛յնքան և խելացի յե։ Ներան կարելի յե մտքի նման դեպի ամեն կողմ շուռ տալ։ Դա Շապուհ արքայից արքայի ախոռատան ամենաընտիր նժույգներիցն է, վոր ընծա յեր առաջել Համավերանի իշխանից։ Ճերք վերջին անդամ ներկայացա արքայից արքային իմ խոնարհ հրաժեշտը տալու, նա պարգևեց ինձ այդ նժույգը, ասելով. «Գնա՛, Մամիկոնյան տե՛ր, պայծառ Արամազդի ողնությանն եմ հանձնում քեզ, գնա՛ և այդ նժույգով կատարիր քո արշավանքը Հայաստանում, նա անպատճառ բարեբեր ու բարեհաջող աղեցություն կունենա քո ձեռնարկությունների վրա»։

Վերջին խոսքերի միջոցին՝ հայրը ձեռքը մեկնեց դեպի Սամվելի նժույգի ճակատը, հարցնելով.

— Դու դեռ չե՞ս նկատել այդ սպիտակ աստղը նրա ճակատին։— Նա ցույց տվեց բոլորակ խալը, վոր, ճերմակ աստղի նման, բնությունը նկարել եր նժույգի ճակատի մեջտեղում։

— Առաջին անդամն եմ տեսնում,— ասաց Սամվելը։

— Դա հաջողության նշան է,— կրկնեց հայրը։

— Գիտեմ՝ վորքան այդ աստղը կառաջնորդի ինձ դեպի հաջողությունը... ասաց Սամվելը յերկդիմի ժպիտով։— Բայց կարծեմ, մենք ճանհիճների մոտով ենք գնում։ Այդ կողմերում թաղթաղուկ տեղեր շատ

հան։ Կարող է պատահել, որ Շապուհ արքայի ընծայած նժույգի աստղը յուր նշանակությունը կորցնեն Արաքսի թաղթաղուկների մեջ...

— Կարող է պատահել,— ասաց հայրը, թաղցնելով յուր տհաճությունը, որ պատճառեց Նրան վորդու կծու և հեղնական ակնարկությունը։— Բայց մենք թաղթաղուկներից անցանք արդեն։

Հոր և վորդու խոսակցության միջոցին մոռեցավ պատանի Արտավազդը։

— Ես թաղթաղուկներից չեմ վախենում,— ասաց Նա ուրախ դեմքով։ — Իմ ձին, թեև հաջողության աստղ չունի, բայց անդունդների վրայից անդամ կարող է թռչել։ Սամվելը խլուր նազ է անում։ Նա դիտե միշտ այսպես թանդ ծախել յուր շնորհքը։ Տեսե՛ք, ես ի՛նչպես եմ խաղացնում իմ ձիուն։

Առանց սպասելու, որ խնդրեն Նրան, պատանին, յուր ձիու սանձը ոտտիկ քաշելով, սկսեց մտրակել և զայրացնել Նրան, որ ավելի դրդուե։ Ձին տաքացավ, բորբոքվեցավ, սկսեց ոտտիկ վոստյուններ դործել։ Նրա ահագին թռիչքները նայողի վրա սարսափ էին աղդում։ Ամեն վայրկյան կարելի էր սպասել, որ զայրացած նժույգը յուր հանդուգն հեծյալին գետին ցած կձնուե։ Բայց պատանին Նրա հետ ամուր կերպով ճուլված էր կարծես, Նրա անդամներից մեկը լիներ։ Նա այնքան ադատ և համարձակ էր պահում իրան, որ անկարելի էր յերևակայել այն ոտիճան ինքնավստահություն։

Ձերբ ձին բոլորովին բորբոքվեցավ, պատանին սկսեց դանազան ճարպիկ չրջաններ դծել տափարակի վրա։ Ձին յուր բոլոր թափով պտուտվում էր, իսկ ինքը, մեկնուլն ժամանակ, զարմանալի արագությամբ անցնում էր Նրա պարանոցով և կրկին նստում թամբի վրա։ Այդ միջոցին Նա մի արագաչարժ ճախարակ էր, որ հոլովվում էր յուր առանցքի չուրջը։ Նրան հետևեցին մի քանի պարսիկ պատանիներ, վորոնց ճարպիկությունները ևս վոչ սակավ հետաքրքիր էին։ Բայց ամենքը նսեմացան պատանի Արտավազդի գործողությունների առջև, մանավանդ յերբ սկսեց Նա յուր անհնարին նիզակախաղը կատարել։ Ձիու արարչավ վախուստի միջոցին՝ նետում էր նիզակը, և ամեն անդամ նիզակը չեշտակի կերպով ցցված էր մնում նշանակված կետի վրա, առանց յուր նպատակից վրիպելու։ Նա խոհուն կայծակի նման հասնում էր, իլում էր նիզակը և կրկին նետում էր։ Իսկ յերբ պատահում էր, որ նիզակը յուր ծայրի վրա ցրցված չէր մնում, այլ վայր էր ընկնում, այդ դեպքում, նա առանց մի բոպե կորցնելու, շուտով վրա յեր հասնում և, առանց վոտները ասպանդակներից հանելու, թամբի միջից թեքվում էր, և բարձրացնում էր ընկած նիզակը։

Ձերբևմն հետամուտ էր լինում յուր հետ մրցող պարսիկ պատանիներին, վորոնք այնպես էին ձևացնում, իբր թե խուսափում են Նրանից։ Այդ միջոցին մանկահասակ հերոսը, կարծես թե, աճում էր, մեծանում էր

նայողի աչքում, և ահարկու կերպարանք էր առանում։ Արծվի արագությամբ վրա էր հասնում, և նրա ախոյաններին խիստ սակավ անգամ էր հաջողվում՝ իրանց վահաններով հետ նահանջել նրա նիզակի ղարկը, թեև մյնասելու նպատակով չէր հարվածում։ Իսկ կերը ինքն էր վախուստա տալիս, ախոյանները նրա ճիու բարձրացրած վոշուն անդամ չէին հասնում։

Մի քանի այլ զինամարզություններ ևս կատարվեցան, մինչև ամեն կողմից լսվեցան հավանության բազմաձայն աղաղակներ. «Շա՛տ ապրի Արտավազդը, շա՛տ ապրի Արտավազդը»... Պատանին քրտնած, կարմրած, մոտեցավ խմբին։ Նրա վառվռուն աչքերը՝ ուժերի կատարից լարվելուց՝ փայլում էին մանկական վողևորության բոլոր կյանքով։

— Դու քո ղարմանալի ճարպկություններով նսեմացրիր մեր պատանիներին, Արտավազդ,— նկատեց պարսից Կարեն զորապետը։— Ասպարեզի փառքը քեզ է պատկանում։

Արտավազդը, վոր յերբեմն ցուցամոլի անմեղ պարծենկոտություն ուներ, այս անգամ ինքն ևս հասկանալով յուր գերազանցությունը, համեստությամբ պատասխանեց.

— Վո՛չ, ամեր զորապետ, ձեր պատանիները, յերևի, խնայեցին ինձ, վորովհետև յես մի նոր հյուր էի նրանց խմբի մեջ։

— Ընդհակառակն, նրանք խիստ անխնա կերպով էին մաքառում քեզ հետ, բայց դու հրաշալի քաջությամբ պաշտպանվում էիր։— Այժմ յանձնի քո ճակատի վրա վայրում է ապագա հերոսի աստղը։

— Ինչպես Սամվելի նժույգի ճակատի վրա,— ծիծաղելով ավելացրեց զվարճախոս պատանին։

— Կատակը մի կողմ,— նկատեց Մերուժանը մի առանձին նախազուշակությամբ։— Դու մի բան կդառնաս, և անպատճառ՝ լավ բան։

Բավական ժամանակ պատանին խոսակցության առարկա էր դարձել, մինչև հասան Արաքսի ափերին։ Այդ կողմերում Արաքսի ափերը ծածկված էին փափուկ, կարմրագույն ավազով։ Նույն պարարտ փափկության վրա աճել էին զանազան թուփեր և թավախիտ մացառներ, վոր կանաչ ժապավենի նման զարդարում էին նրա դեղեցիկ յեզերքը։ Ջուրը նույնպես կարմիր գույն էր առացել։ Գետը, անցնելով կարմրագույն լեռների միջով, և յուր ընթացքում քերելով նրանց կուրծքը, առացել էր և նրանց գույնը։

Այդ կողմերում Արաքսի խաղաղ և լուռ ընթացքը այնպիսի տպավորություն էր գործում, կարծես թե, ջուրը կանշնած լիներ։ Գետի մեջտեղում, դեղեցիկ ոսպիսի նման, յերևում էր «Իշխանաց կղզին», վորի վրա պետք է կատարվեր այնորիկ վորոշ արարողությունը։

Կղզին գետի ձախ կողմից ավելի մոտ էր ցամաքին, վորից բաժանված էր բավական անձուկ նեղուցով։ Վորսորդության ժամանակ գնում էին նեղուցի վրա տախտակյա շարժական կամուրջ և անցնում էին, իսկ մյուս ժամանակներում վեր էին առնում կամուրջը։ Այն որ գրած էր։ Նրա մի

ծայրը՝ ցամաքի կողմից՝ հենված էր ամուր ապառաժի վրա, իսկ մյուս ծայրը՝ կղզու կողմից՝ դրած էր արհեստական թումբի վրա: Կամուրջի տակից արընթաց կերպով վազում էր ջուրը, որը բավական խորություն ուներ: Կամուրջը այնքան նեղ էր և յերկար, որ ամեն անգամ մի ձիավոր միայն կարող էր անցնել: Այդ էր պատճառը, որ բավական ժամանակ տևեց, մինչև ամենքը անցան:

Դեռ վաղ-առավոտյան, կղզու մեջ, դեղնցիկ կանաչ տափարակի վրա, կազմել էին մի քանի վրաններ՝ վորսորդներին հանդստանալու համար: Այնտեղ Մերուժանի խոհարարները կրակ էին վառել, և նախաճաշիկի պատրաստություն էին տեսնում: Ճաշը պետք է պատրաստվեր հետո, վորպես մտից:

Ներս հասան վրաններին, ամենքը ձիերից ցած իջան, որ փոքր ինչ հանդստանան, մի բան ուտեն, և ապա սկսեն վորսորդությունը: Պատանի Արտավազդը չսպասեց մինչև նախաճաշիկը տային, խոհարի տեղ մի կտոր հաց ու պանիր և, ձեռքում ուտելով, վազեց կղզու մեջ պտտելու: Սամվելը մնաց հոր մոտ: Ծերունի Աբրահամը՝ Սամվելի ծառաների հետ՝ նըստեցին վրաններին մոտ, խոտերի վրա: Իսկ Մերուժանը, պարսից Կարեն դրացուհի ձեռքից բռնած, ճեմում էին վրաններին առջևում, և ինչ-որ հարցի մասին ջերմ կերպով խոսում էին:

Կղզին բավական ընդարձակ էր և ձվաձև: Դեռևս ընթացքի յերկարությամբ՝ սեղմվել էր նրա յերկու բաժանված ճյուղերի մեջ: Այնտեղ բնակություններ չկային: Ներսում էին մի քանի փոքրիկ տաղավարներ մեկ այն, որ այժմ դատարկ էին, և որոնց մեջ բնակվում էին առաջ կղզու պահապանները:

Դեղնցի՛կ էր կախարդական կղզին՝ յուր վայրենի չքնաղության մեջ: Վո՛րքան սեր, վո՛րքան արտասուք թափվել էր այնտեղ: Գալիս էր յերեմն Սյունյաց իշխանը, յուր հետ բերելով յուր հարճերի և յուր նվաստաժուններին բազմությունը: Նվաղարանները հնչում էին, հարճերը պարում էին, ղինին ղեղվում էր արծաթյա մեծ դավաթներով, և ամբողջ գիշերները լուսանում էին ուրախ, անհոգ, աղմկալի խրախճության մեջ: Արաքսի ամոթխած հավերժահարսուհին անգամ նախանձվում էին, տեսնելով, թե վո՛րպես անսպառ կերպով վայելվել դիտեն մարդը՝ հինգ սերը և նրա գեղեցկությունը:

Այո՛, դեղեցի՛կ էր կախարդական կղզին: Բարձր ուղղաձիգ յեղեգնաբույսերը, իրանց ճերմակ, փինջաձև կատարներով, ծածանվում էին գիշերուվա մեղմ շունչից, արձակելով մի խորհրդավոր ոտտավյուն, որ նման էր սիրարորբոք հեշտախոսության: Ուշիմ յեղջերուն, յերկար ու ճարպուկ պարանոցը մեկնած, մի առանձին ախորժակով քաղում էր յեղեղների թարմ տերևները: Նա խնդուն անհայտացավ, յերբ լսեց կոսկածավոր այցելուների վոտնաձայնը: Իսկ այնտեղ, շամբուտների խոնավ մթության մեջ, թավալվում էր ամեհի վարազը, և յուր սուն, տղմային անկողնում, դա-

ռոլտրաբ արհամարհում եր արևի կիզող ճառագայթների ներգործությունը։ Ցերեկյոտ նապաստակը, յերբեմն կանգ առնելով, յերբեմն յուր շուրջը նայելով, շտապով վազվզում եր խոտերի մեռաքսային փափկության միջով։ Իսկ վրդովված այծյամը, մամռապատ ժայռի գլխից դեռ չկոթված կերպով դիտում եր, սուզվելու, արդյոք ո՛վքեր են նորեկ հյուրերը։

Հարուստ բուսականությունը՝ հիացման շատ ճոխ եր և շռայլ։ Թարմ, հյութալի կանաչազարդության միջից, իրանց փայլուն գլխիկներով, վառվում եյին ջրածաղիկի զանազան տեսակները, վորոնք ուրիշ տեղերում՝ մեզանում ճահիճների պչրանքն են ներկայացնում։ Տեղ-տեղ բարակ ծղոտներով և յերկար թրածև տերևներով՝ բարձրացել եր վայրենի չուշանը, վոր յուր նուրբ անուշհոտությամբ լցրել եր ողը խնամ ախոյժելի բուրմունքով։ Տեղ-տեղ քյաֆուր վարդը բաց եր արել յուր շքեղ ծաղիկը, վոր ժպտում եր թավիշյա ծիրանեգույն թերթիկներով։ Զանազան կողմերում՝ թուփերը, մացառները այն աստիճան ածել եյին, վոր մի վոտք հետազոտության վրա՝ մարդ յուր ընկերին տեսնել չեր կարողանում։ Ձիաներով անհնար եր շրջել այնտեղ, վորովհետև ամեն քայլում մացառների խիտ հյուսվածքը ծածկում եր հաղիվ նշմարվող շավիղները։ Սրվելի հնչյո եր վոտով։

Ցերբ վերջացրին նախաճաշիկը, յուրաքանչյուրը առնց յուր պենքերը, և պատրաստվեցան սկսելու վորսորդությունը։ Արքուն հուշարարները՝ խուզարկու շների հետ՝ վազուց արդեն ներս եյին մտել մացառների մեջ, և սուրալով խարխափում եյին, վոր դուրս վանեն անասուններին։

Ցերբ ճանապարհ ընկան, վորսորդները բաժանվեցան մի քանի փոքրիկ խմբերի և տարածվեցան դեպի կողմը զանազան կողմերը։ Պատանի Արտավազդը միացավ Մերուժանի խմբի հետ, իսկ Սամվելը յուր հոր խմբի հետ։ Վերջինների թվումն եր և պարսից կարեն զորապետը։ Ծերունի Արքայիկը, Սամվելի ծառաների հետ, հետևում եր նրան, Պարսից մնացյալ ազատները առանձին խմբեր կազմեցին և բաժանվեցան մյուսներից։

Սամվելը յերկար, հաստատուն նիզակը ձեռին, լուռ առաջ եր գնում։ Նրա մուշտ դեմքը սովորաբար պղնձի գույն եր ստանում, յերբ զննվում եր հոգեկան ստատիկ ալեկոծության մեջ։ Այդպես եր այժմ նրա դեմքը։ Այդպես լինում եր նա կռվի ջերմ փոթորկի ժամանակ, այդպես լինում եր նա և վորսորդության դվարճալի հրապույրների ժամանակ։ Բայց դրանցից և վոչ մեկը չեր, վոր նույն րոպեներում բորբոքում եր, վրդովեցնում եր յերիտասարդական սիրտը։ Նրան խռովության մեջ եյին դրել բոլորովին այլ մտատանջություններ...

— Սամվե՛լ,— նկատեց նրան հայրը մի այնպիսի ձայնով, վորի մեջ լսվում եր ծնողական սրտի բոլոր դորովը, բոլոր ջերմությունը,— ղուշացի՛ր, յերբ վարագների կհանգիստես։ Այսոհետև վարագները սաստիկ կատաղի յեն։

— Կցանկանայի՛, հայր, վագրների հանդիպել, առյուծների հանդիպել,— պատասխանեց Սամվելը թախծալի ձայնով։— Բայց, ախո՜ռ, վոր այս-

տեղ մի՛չ վազրներ կպատահեն և մի՛չ առյուծներ: Կցանկանայի՝ դոնե Արաքսի սոսկալի նահանգներից մեկը՝ հրեշավոր գլուխը ջրերից վեր բարձրացներ, և յուր բոլոր կատաղությամբ հարձակվեր իմ վրա...

Սամվելը պարծենկոտ չեր: Այդ դիտեր հայրը: Ուրեմն ի՞նչը առիթ տվեց նրան այս տեսակ ցնորքների մեջ ընկնել: Նախաճաշիկին ժամանակ նա շատ մտքի խմեց: Այդ տեսավ հայրը: Ուրեմն դինին էս չեր կարող դրդռել նրա յիմարակայությունը: Այսուամենայնիվ, հայրը հարցրեց.

— Ցնորի, նրա համար են այդ դեղեցիկ ցանկությունները, Սամվել, վոր ցույց տաս քո քաջությունը: Բայց քո քաջությունը, անտարակույս, այս տեսակ սպացույցների կարոտ չե:

— Վոչ, հայր, դրա համար չե: Ցնա հետու յեմ ամեն վատասիրությունից: Միայն կցանկանայի կռվել... ի մա՛հ կռվել...

Հայրը սկսեց տխրել: «Նա ցանկանում է մահվան համար կռվել»... «Ի՞նչը ձանձրացրել եր սիրելի վորդու լուսապայծառ ծաղկափթիթ կյանքը... Այս մտքերը սկսեցին սարսափեցնել նրան:

Հոր և վորդու խոսակցությունը ընդհատեց հուշարարներից մեկի փող ձայնը: Սամվելը վաղեց դեպի այն կողմը, վորտեղից լսվեցավ ձայնը: Նրան հետևեցին պատանի Հուսիկը, վոր զինակրի պաշտոն եր կատարում, և յուր ծառաներից մի քանիսը:

Հայտնվողը Սամվելի փափագած վորսերից և վոչ մեկը չեր: Ուռենիների թավուտներից դուրս հարձակվեցավ մի ահագին յեղջերու, ծանր, բաղմաճյուղ յեղջյուրներով: Անխոսք կերպով նայեց յուր շուրջը և, յեղջյուրները դեպի քամակը զարձնելով, փորձում եր փախչել, բայց խիտ շները չլքպատեցին նրան: Ներանցից վոչ մեկը չեր համարձակվում մոտենալ: Սուր յեղջյուրները մի՛չ միայն վահանի դերծ նյին կատարում, այլև աշտեյի: Դեպի վո՛ր կողմը և դառնում եր նա, շները խմբով փախչում նյին նրա առջևից: Սամվելը վրա հասավ: Ցեղջերուն կատաղի կերպով հարձակում դործեց, և անշուշտ սուր յեղջյուրներով կթափեր յուր համարձակ ախոյանի վորը, եթե յերիտասարդի նիզակը չետևի կերպով չմխվեր նրա աջ ուսի մեջ: Նիզակը խոցեց միայն, բայց մահվան չափ ազդել չկարողացավ: Շները դարձյալ չլքպատեցին նրան: Սամվելը կրկնեց նիզակի դարկը: Այս անդամ դիտավ ազդրին: Ցեղջերուն, մի՛չ թե ատացած հարվածների յերկյուղից, այլ ավելի խրոչելով անակնկալ դեպքից, պատառեց շները չղթան և սկսեց փախչել: Ծառաներից վոչ մեկը չկարողացավ նրա առաջը առնել: Սամվելը հետամուտ յեղավ: Զարմանալի յեր սրարշավ անասունի փախուստը: Բայց նրանցից վոչ սակավ արագավազ եր և Սամվելը: Վաղելու սովորած եր նա սկսյալ մանկությունից, վոր նրա կրթության գլխավոր հրահանգներից մեկն եր յեղած: Հայրը, յուր ուղեկիցների հետ կանդնած, անհամբերությամբ նայում եր, վոր տեսնե, թե ինչպես կվերջացնեն վորդին յուր վորսի հետ: Այդ միջոցին յեղջերվի յերկար, ճապուկ վոտները հաղիվ-հաղ դիպչում նյին դետնին,

և յուր վաղելու սաստկության ժամանակ՝ ահագին թռիչքներ էր գործում։ Սամվելը յեռևից անդադար նետեր էր արձակում։ Նետերը թեև դիպչում էլին, բայց, փետուրյա դրիչների նման, ցցված մնում էլին նրա մարմնի վրա։ Վիրավոր անասունը չարունակում էր փախչել, յուր չաղվի վրա թողնելով հոսվող արյան կարմիր հետքերը։ Վոչ սակավ ջայրացած էլին Սամվելի ծառաները։ Նրանք չների հետ վաղեցին դեպի դանագան կողմեր, և ամեն կողմից կոբելով համառ անասունի ճանապարհը, աշխատում էլին պահել նրա առաջը, վորպեսզի, մի դուցե հասներ կղղու ափին, և նետվելով դեպի մեջ, լողալով անցներ մյուս կողմը։ Սամվելի յեռևից վազում էր միայն նրա զինակիրը՝ պատանի Հուսիկը։

— Տո՛ւր ինձ արկանը,— դարձավ նա դեպի պատանին,— յերեք վոչ, այդ անիրավը բոլորովին կհոդնեցնե ինձ։

Պատանին տվեց նրան կաշյա յերկար պարանը։ Սամվելը արկանի մի ծայրը փաթաթեց ձախ թևքին, իսկ մնացած մասը, կամք ձևավ հավաքելով աչ ձեռքում, յուր վորպես սաստիկ փախչելու միջոցին՝ ձգեց դեպի նրա դլուխը։ Արկանը փաթաթվեցավ բազմաճյուղ յեղյուրներին և անցավ նրա պարանոցով։ Այժմ ուժ էր հարկավոր պահելու կառաղի անասունին, յերբ վոչ, նա յուր յեռևից քարշ կտար հանդուգն արկանաբռնին։ Բայց Սամվելի բազուկների մեջ նրան զսպելու չափ զորություն կար։ Նա յուր արկանով այնպես կաշկանդեց ուժեղ անասունին, վորպես ճանճը կաշկանդվում է սարդի վոստայնի մեջ։ Այդ միջոցին վրա հասավ պատանի Հուսիկը և, նիզակը ուղղելով, կամենում էր խրել նրա կողքի մեջ։ Սամվելը արդելեց, ասելով.

— Թող տո՛ւր, յես դրան պետք է կենդանի տանեմ. հորս մոտ։

Հայրը տեսավ և նրա սիրտը լցվեցավ անսպառ ուրախությամբ։ Նրա մոտ կանգնած էր պարսից կարեն զորապետը։

— Ի՞նչպես յերևաց քեզ,— դարձավ նա դեպի զորապետը։

— Սքանչելի՛ յե, պայծառ Արամազդը վկա, սքանչելի՛ յե,— բացականչեց ապշած պարսիկը։— Գիտե՞ս, իշխան, յեղջերուի վորսը ավելի դժվար է, քան թե առյուծի կամ վագրի վորսը, վորովհետև, յեղջերուն արագավազ վոտներ ունի և փախչում է, բայց առյուծը կամ վագրը ամոթ են համարում փախչելը, նրանք կռվում են։ Իսկ կռվողի հետ հնձել և կռվել, կա՛մ հաղթել, կա՛մ հաղթվել։

Սամվելը, յուր վորսը յեռևից քարշ տալով, մոտեցավ հորը։

— Ցես իմ բաժինը վերջացրի,— ասաց նա քրտինքը սրբելով.— մեր ճաշի համար այժմ բավական խորոված ցու մի ունենք։

— Մի՞թե չե՞ս կամենում շարունակել,— հարցրեց հայրը։

— Կցանկանայի մի վորջր հանդստանալ. այդ անիրավը բավական հոգնեցրեց ինձ։— Նա ձեռքը տարավ դեպի յեղջերուն։

Ծառաները մոտեցան, տարան վորսը։ Սամվելը հոր հետ դիմեց դեպի

վրաններին կողմը։ Հուսիկը չդաժանվեցավ յուր իշխանից։ Իսկ պարսից կարևն զորապետը դնաց տեսնելու, թե ինչ են անում մյուս վրաորդները։

Ցերը հասան վրաններին, հայրը ցույց տվեց նրանցից մեկը, ասելով.

— Մտնենք այդ վրանը, դա մեզ համար է պատրաստված։

— Ես կցանկանայի մի փոքր չրջազայել կղզին և հիանալ նրա գեղեցկությամբ,— պատասխանեց Սամվելը։— Այդ վրանները կատարելապես ճանճրացրին ինձ։ Պարզ յերկինքը, մետաքսյա կանաչը և Արաքսի աքանչելի ափերը թողած, այժմ մինչև անգամ մեզք կլիներ փակվիլ վրաններին մեջ։

Հայրը դարձյալ նկատեց վորդու մեջ մելամաղձային դրություն։ Ի՞նչն էր անհանգստացնում նրան։ Այն որվա բոլոր պատրաստությունները՝ միայն նրան զրաղեցնելու և միայն նրան զվարճացնելու համար էին։ Իսկ վորդին, կարծես, խույս էր տալիս այդ բոլորից։ Նա վորոնում էր առանձնություն, վորոնում էր ամայի վայրերի խլություն, վոր յուր սրտի հետ խոսեր, վոր յուր հոգու հետ խորհրդակցեր։ Հայրը չթողնց նրան միայնակ դնալ, թեև Սամվելը կցանկանար միայնակ լինել։ Հայրը բռնեց նրա ձեռքից, և յերկուսը միասին սկսեցին ճեմելով դիմել դեպի կղզու այն կողմը, վոր ավելի աղատ էր մացառներից։

Հեռվից լսելի էր լինում վորսորդների փողերի ձայնը, լսելի էին լինում և խառնաձայն աղաղակներ։ Այդ միջոցին հայր և վորդի հանդարտ քայլերով անցնում էին փափուկ խոտերի վրայով, վոր, միախառնվելով դաշնղուշն ծաղիկների հետ, նախշուն գորգի նման՝ ուռված էին ներանց առջև։ Ցերկար անխոս դնում էին նրանք, մինչև հասան կղզու ափին։ Այնտեղ մի խումբ վարսավոր ուռենիներ հրավիրեցին նրանց՝ իրանց ախորժելի ստվերի ներքո։ Հայր և վորդի նստեցին միմյանց մոտ։ Գեղեցիկ էր փոքրիկ հովանոցը։ Այնտեղ ուռենիները իրանց անթափանցիկ գլխում անուցանում էին խիստ զվարթաբար զովություն, չնայելով, վոր արեգակի միջօրեական ճառագայթները արդեն սկսել էին այրել։

Հոր և վորդու մեջ տիրում էր մի տեսակ բռնադատյալ լռություն։ Ցերկուսն էլ ցանկանում էին խոսել, բայց դժվարանում էին, թե ի՞նչ խոսեն, թեև շատ բան ունեին միմյանց ասելու։ Այդ առաջին անգամն էր, վոր նրանք դանվում էին միասին, և այս տեսակ մենությունը առանձնության մեջ։ Ցուրաքանչյուրը ցանկանում էր բայց անել յուր սիրտը։ Հայրը փափագում էր մի առ մի բացատրել վորդուն յուր բոլոր դիտավորությունները, թե ինչ նպատակներ ունի նրա ապագայի մասին, կամ ավ՛րպես մտածում և անորոշել նրա բախտավորությունը։ Բացի դրանից, կամենում էր բացատրել և յուր քաղաքական նպատակները, վոր վերաբերում էին առհասարակ հայոց աշխարհի գործերին։ Իսկ վորդին նոր բացատրությունների կարոտ չէր։ Նա դիտեր և վաղուց հասկացած էր բոլորը։ Նա միայն ցանկանում էր հայտնել հորը, թե ա՛յն ամենը, ինչ վոր կատարել է նա, և կամ ինչ վոր ապագային կատարելու դիտավորություն

ունի,— անտարակույս, կտաննեն հայրենի աշխարհը ձեռքի անդառնալի կորուստ, իսկ վորդին չեր ցանկանա յուր հայրենիքի ավերակների մեջ ըմբռնել յուր վիճակը:

Մինչ հայր և վորդի սուրն հուզեատնջ լուռության մեջ եյին, վոր ամեն վայրկյան պատրաստ եր պայթելու, պատանի Արտավաղդը, կղզու մյուս կողմում հրաշքներ եր գործում: Նրա շները դուրս եյին վանել յեղեդների միջից մի կատաղի վարազ, վոր, ճյունի պես ճերմակ, սրածայր ժանիքները վայրենելով, ահարկու կռնչյունով հարձակվում եր այս կողմ ու այն կողմ, և ամեն անգամ շները խմբովին խուսա եյին տալիս նրանից, վորպես մինները կատվից:

Այդ կողմում վորսորդները ձիավորված եյին, վորովհետև ձիերի շարժման համար բավական արձակ եր տեղը: Միայն կղզու ափերի մոտ ածել եյին թավ շամբուտները, վորոնց միջից դուրս եյին գալ վարազին: Նա դարձյալ աշխատում եր նետվել դեպի յուր մթին դարանը, դեպի շամբուտները, բայց պարսիկ պատանիների յերկար շղթան բռնել եր այդ կողմը, և ամեն անգամ, յերբ մոտենում եր վարազը, նրանք նիզակներով հետ եյին մղում: Ասպարեզը թողել եյին պատանի Արտավաղդին, վոր միայնակ պետք և մաքառեր վտանգավոր վորսի հետ:

— Արտավաղդ, հեռու կա՛ց, այդպես չե կարելի,— ձայն տվեց Մերուժանը, վոր մի առանձին հետաքրքրությամբ դիտում եր պատանու կռիվը կատաղի անասունի հետ:

— Դա ի՞նչ բան և,— պատասխանեց նա յուր սովորական պարծենկոտությամբ,— յես մի անգամ իղնունյաց անտառներում մի ամեհի արջ սպանեցի:

Մերուժանը հավատաց, բայց, այնուամենայնիվ, հրամայեց պարսիկ պատանիներին, վոր ուշնեն նրան:

— Վո՛չ, աղաչում եմ,— խնդրում եր նա առաստիկ բաղձանքով,— հրամայիր՝ վոր թուլ տան՝ յես միայնակ վերջացնեմ իմ վորսի հետ: Դա իմն և, դրան յես եմ դնել շամբերի միջից:

Մերուժանը հրամայեց չմիջամտել: Պատանին դարձավ դեպի ծերունի Արբակը, խնդրելով.

— Տո՛ւր ինձ քո ձին, սիրելի Արբակ, իմը խրտչում և, վստահություն չե մոտենում: Իսկ քո պատառ ձին՝ քեզ նման ծեր և և փորձառու, այդ պատճառով խրտչելու թուլություն չունի:

Ծերունին ցած իջավ ձիուց, մրմնջալով.

— Ջո՛ւր լեղուն յերես չլիներ, դլուխդ աղռամները կտաննեին:

Պատանին ուշադրություն չդարձրեց Արբակի կծու հեգնությանը, մի ակնթարթում թռավ նրա ձիու վրա, իսկ յուր ձին տվեց նրան: Այդ միջոցին վարազը, յերկաթյա զառազդի մեջ ընկած դաղանի նման, կռնչալով, լայն ականջները թափ տալով, վազվազում եր, վոր մի յելք դտնե փախչելու, բայց ամեն կողմից հանդիպում եր պարսիկ պատանիների սար-

աին ընդլիազրութեանը: Արտավազդը միայնակ հետամուտ եր լինում: Իսկ նա, վորպես մի խուլ ահավորութիւն, յերբեմն հետ եր դառնում, և յուր բուռ, մի զուտ ոսկեայ ժանիքներով զինված կենդանի ուղղելով դեպի նրա ձին, հարձակում եր գործում, բայց Արտավազդը նիզակի սաստիկ հարվածներով դանակոծում եր նրան: Նա բարկացավ, յերբ նկատեց վոր հարվածները լավ չեյին ներգործում, և ավելի զայրացավ, յերբ նկատեց, վոր պարսիկ պատանիները արդեն սկսել եյին ծիծաղել նրա վրա:

— Սիրելի Աբրակ,— դարձավ նա դեպի ծերունին մի նոր խնդրքով,— պատշաճում եմ, չտալի՛ր, տո՛ւր ինձ քո նիզակը, իմը շատ բարակ է, վախենում եմ, վոր կոտրվի:

— Կտամ, սիրելի Արտավազդ,— ասաց ծերունին, բարեսրտաբար խնդալով,— կտամ իմ նիզակը, բայց բազուկներս քեզ տալ չեմ կարող:

Մերուժանը բացատրեց ծերունու խուլ հնդհնդիւնը.

— Աբրակի ծանր նիզակը շարժելու համար՝ պետք է Աբրակի ամուր բազուկները ունենալ, Արտավազդ:

— Սխալ յես եվ փոքրիկ դաղաններից չեմ,— պատասխանեց Արտավազդը, մի առանձին ինքնավստահութեամբ նայելով Մերուժանի յերեսին.

Պատանու պարծենկոտութիւնը այս անգամ խորին ուրախութիւն պատճառեց Աբրակին, և նա մեծ հոժարութեամբ փոխեց նրա հետ յուր նիզակը:

Նիզակը, արդարև, Արտավազդի համար բավական մեծ եր և ծանր, բայց նա այն տեսակ նիզակներ, մանավանդ ձիու վրա, դործ ածելու ճարպարութեանից դուրկ չեր: Նա միացրեց յուր դեպահաս բազուկների զորութիւնը յուր նժույգի չափազանց ուժի հետ: Առանց ժամանակ կորցնելու, յերկար նիզակի բունը առնց աջ թևքի տակ և, նրա սրածայր ծայրը դեպի ցած բռնելով, չտալից ձիուն յուր բոլոր սաստկութեամբ քշել դեպի վարագը: Ամեհի նժույգի արագաշարժ թափը բավական եր նիզակին այն սաստիկ ուժգին զարկ տալու, վորով մխվեցավ նա վարագի կողքի մեջ և ծայրը մյուս կողմից դուրս յելավ:

— Այդպես հնձա եր շամփրել դաղանին,— ծիծաղելով ձայն տվին պարսիկ պատանիները, բայց քո քաջութիւնը նիզակը դուրս քաշելու պետք է տեսնենք:

Արտավազդը խիստ ձիու դլուխը շուռ տվից և ձին, իհարկե, դուրս քաշեց նիզակը, իսկ ահագին վարագը անշարժ մնաց գետնի վրա:

Սմեն կողմից լսվեցան հավանութեան աղաղակներ: Արտավազդը թողնց վորսը, վոր խիստ քաշ տվին ծառաները, իսկ ինքը մոտեցավ հանդիսատեսների խմբին: Նրա պայծառ դեմքը փայլում եր ուրախութիւնից: Նա կրկին վերադարձրեց ծերունի Աբրակին թե՛ նրա ձին և թե՛ նիզակը, ասելով փսփսալով.

— Շնորհակալ եմ քո բարութեան համար, սիրելի Աբրակ, յերեն վոչ, այդ պարսիկ լակոտները ամբողջ պիտի ծաղրելին ինձ:

Այսպես չարունակվում եր վերսորդությունը, յերբ Սամվելը հոր հետ պետք նստած եյին կղզու ափի մոտ: Սամվելը լուռ նայում եր Արաքսի կարմրադուն հոսանքին, վոր մեղմ ալիքներով զարկվում եր կղզու ավազոտ ափերին և նրա վրա կարմրադուն արյան տպավորություն եր գործում: Հայրը պատմում եր նրան յուր նախահայածությունները և յուր դիտավորությունները, իհարկե, այն չափով միայն, վորքան կարող եր հավատալ վորդուն: Պատմում եր, թե յերբ վաստուծո հաջողությամբ հայ և հրեա գերիներին կհասցնեն Տիգրան, և յերբ ինքը բախտ կունենա մյուս անդամ վայելելու Շապուհ արքայի վողորմածության չնորհը, այնուհետև պետք և Մերուժանի հետ կրկին վերադառնան Հայաստան: Պատմում եր, թե այն ժամանակ ինքը, իբրև հայոց ընդհանուր սպարապետ, ի'նչպես պետք և կազմակերպե յուր հրամանի ներքո դտնված հայկական զորքերը: Պատմում եր և Մերուժանի դիտավորությունները, թե նա վերսին' ձև պետք և տա յուր նոր հիմնած թագավորությանը Հայաստանում: Ի'նչ-որ դառնացած կերպով խոսում եր Արշակունիների «չարագործության» և «անբարոյականության» մասին և, վոգևորվելով Մերուժանի կատարած գործերի հաջողություններով, արտահայտում եր յուր խորին ուրախությունը, վոր, վերջապես, պիտի կարողանան ազատվել Արշակունիների անտանելի լուծից, և Հայաստանը Մերուժանի հզոր դավազանի ներքո' թե' խաղաղություն և թե' բախտավորություն պիտի վայելե: Վորդին լուռ-թյամբ լսում եր, և հոր խոսքերը թունավոր նետերի նման ծակոտում եյին նրա վշտացած սիրտը:

Հետո սկսեց պատմել յուր դիտավորությունները վորդու վերաբերությամբ: Մի առանձին ուրախությամբ հայտնում եր, թե Շապուհ արքան չատ անդամ լսել և նրա մասին, գիտե նրա քաջությունները, և Տիգրանին արքունիքում արդեն ծանոթ և նրա անունը: Այժմ մնում եր միայն, վոր վորդին ներկայանա արյուց արքայից արքային, և նա անպատճառ նրան Պարսկաստանում դտնված հայկական հենելազորի հրամանատար կկարգե: Այդ ուղիով վորդին կմերձենա թե' պարսից Դուռը և թե' առհասարակ արքունիքին: Այնուհետև նրա զեղեցկությունը, չնորհքը և բարվրթությունը՝ բավական մեծ գերազանցություն են ներկայացնում, վոր արյուց արքայից արքան յուր դուստրներից մեկը նրան կնության տա, ա'յն բազմահարստատ ուժով, վոր ստանում և յուրաքանչյուր վոք, վոր բախտ և ունենում արյուց արքայական գերդաստանի վեհան լինելու և այլն:

Սամվելը համարյա թե չեր լսում: Նա ուշադրությամբ լսեց հոր պատմածների սկիզբը միայն, իսկ թե ի'նչ կլիներ վերջավորությունը,— այդ կարող եր և ինքը յեզրակացնել: Գլուխը խոնարհեցրած, ամենևին չեր նայում հոր յերեսին, և վշտալի աչքերը մեքենաբար հառած եյին դեպի մի հատ, կիսափուռ գերանի կտոր, վոր ալիքները դուրս եյին նետել ափամերձի վրա: Իսկ յերբեմն նրա ուշադրությունը դրավում եր մի տատրակի խշրտոց, վոր մերթ ընդ մերթ լսելի յեր լինում մերճակա թու-

փերի մղձից: Հայրը նկատեց այդ և, կամենալով նրա ուշադրությունը դնել ինքը դրանից, հանդիմանեց, ասելով.

— Այնտեղ, տերևի, վտրտոցներից փախած չերեներ են շարժվում:

— Վոչ, քամին և շարժում թուփերը,— անխոչընդոտ կերպով ասաց Սամվելը և շարունակեց նայել դեպի նրանի կատրի վրա:

Ցերեկվա ամենահամեղ առարկաներն անգամ մարդու մեջ քավական պրպղեցնող մտքեր են հարուցանում: Դեպի նրանի կատրի վրա նայելով, Սամվելը այս ևր մտածում. էլեին այդ հատա, փուռքյունից թեթևացած ծառորությունը դլորես ջրի մեջ, արդյոք կարո՞ղ է նա մի փոքրիկ մակուրկի ծառայություն մատուցանել... արդյոք կարելի՞ չի նրանով անցնել գետի մյուս ափի վրա...

Բայց քամին, իրավ, շարժում էր մերձակա թուփերը: Ցեղանակը, իր առավոտյան այնքան խաղաղ էր, այնքան դեղեցիկ էր, ընդհակառակն, հետևից հետո սկսեց փոքր առ փոքր մռայլվիլ: Սովորական քամին բարձրացավ և պարզ ողը հետզհետե լցվեցավ նուրբ, կարմրագույն փոշով: Այդ քամիների յերևույթը, մանավանդ տեղային հանգամանքներին անծանոթ մարդու վրա, խիստ տխուր և ահարկու տպավորություն է գործում: Հանկարծ պայծառ հորիզոնը ներկվում է բոսորային դույնով և նրան այնպես և թվում, իր յերկնքից մանր, փոշեհատիկ արյան անձրև է տեղում: Բայց Սամվելին ձգեց նա մի առանձին մելամաղձության մեջ, իր արատահայտություն էր նրա նուլնպես խռովյալ սրտի:

— Զարմանալի՛ հատկություններ ունի Արաքսը,— ասաց նա, ինքն իր հետ խոսելով.— զարմանալի՛ բնավորություն ունի և նրա խորհրդավոր չրջակայքը: Պարզ, լուսապայծառ առավոտին հանկարծ և տեղ, վհատական յերեկո՝ իր կարմրագույն մռայլով, իսկ ուրախ, անհոգ դիմրգությանը՝ խիստ սրտամաշ թախծություն... Տխո՛ւր և, տխո՛ւր... Ցնա կարծում եյի, թե կարող եմ միքր ինչ ուրախ լինել, միքր ինչ մոռանալ ինձ... Բայց ևդո՛ւր... Ցերանի՛ր թե, չար լիներ... յերանի՛ր թե, յեղեռնագործ լիներ... Դուրս ինձ ևս կիմճակիներ նույն որհասը, որ վիճակվեցավ բարի Արտաշևսի չար վորդուն... Նա կորավ վորորդության մեջոցում, նա իր ձիու հետ խորասուդ յեղավ Արաքսի մերձակա անդունդներն մեջ... Գետինը չկարողացավ ասնել չար արքայորդին, որ չափությամբ սիրեր յեղեր հայոց յերկիրը... Գետինը բաց արավ իր ահարիու բերանը և կլանեց նրան...

Հայրը ապրակավոլ լսում եր:

— Ինչո՞ւ հիշեցիր այդ տխուր անցքը,— հարցրեց նա, դողդողուն ձեռքով բռնելով միրդու ակը:

— Զգիտեմ ինչո՛ւ... յերևի, նրա համար, որ շատ հետու չենք այն յեղերքներն վայրերից, ուր պատահեց այդ անցքը: Թվում չարադործը կորավ, անհետացավ Արաքսի անդունդների մեջ, բայց հանդստանալ չկա-

բողացավ... Մահվան քաշքերը սարան, չդիմացնելն նրան մի մեծ այրի մեջ, ուր մինչև այսօր առանձնանում է նա...

— Սամվե՛լ,— դողդոջ հայրը չվերծված ձայնով։— Ի՞նչ պատահեց քեզ հետո, ի՞նչը ձղեց քեզ այդ մեծին ցնորքների մեջ։ Դու մահ ես ցանկանում, քեզ համար անտանելի չե դարձել կյանքը, այն հատակում, ինչը դեռ նոր և ակսվում քո յերջանկութեյան ծաղկափթիթը դարսնքը։ Ի՞նչ է պատկաս քեզ։ Ես հայրը պատրաստ է ծնողական բոլոր սիրով ամեն ինչ լցուցանել։ Լսի՛ր, Սամվել, դու չես հասկանում քո անտահման բախտավորութեյունը, վորն մեզ ես, և վորը յուր լիառատ բարութեյուններով դեռևս ապառում է քեզ։ Հաղարավոր իշխանաղն յերիտասարդներ պիտի նախանձվին քո ճառքին, հազարավոր իշխանաղն արիտրդներ պիտի փափաղեն քո ամուսնիքը լինելու։ Բայց դու կընտրես քեզ չքնաղներից չքնաղագույնը՝— աչյաց արքայից արքայի անմման դուստրը։

— Դրանցից և վո՛չ մեկը չե կարող բուժել այն վերքերը, վոր գրած են իմ սրտում, հայր, դրանցից և վո՛չ մեկը չե կարող վանել այն վշտերը, վոր որ ու դիշեր տանջում են ինձ։ Կյանքը, իրոք, անտանելի չե դարձել ինձ, հայր, և մահը շատ ցանկալի դիմներ ինձ, յեթե դիտնայի, վոր մահից հետո մի այլ կյանք չկա։ Բայց մարդիկ երանց վշտերը՝ երանց հետ դերեզման են տանում։ Դա ավելի անտանելի չե, քան հավիտենական տանջանքը դժոխքի խորքում...

Վերջին խոսքերի միջոցին նա յուր դունաթաղ դեմքը դարձրեց դեպի հայրը և շարունակեց մի այնպիսի ձայնով, վոր արտահայտում եր նրա հուդված սրտի խորին ալեկոծութեյունը.

— Հայր, այստեղ մենք մեկնյանք ենք, այստեղ մեզ վոչ վոք չի լսի, Թուլլ տո՛ւր ինձ խոստովանել քեզ իմ բոլոր ցավերը, իմ բոլոր տանջանքները։

— Խոսի՛ր, զավակս, բայց արա հոր առջև լցված սիրով, ի՞նչն և այսպես տանջում քեզ։ Այն որից, վոր յեկել ես դու, յես միշտ նկատում եմ քո մեջ մի տեսակ հոդևնական անհանգստութեյուն, մի տեսակ բարկություն վրդովմունք։ Մի՛ թագցրու ցավերդ, և հավատացած յեղիր, վոր հայրդ այնքան անչափ սեր ունի դեպի քեզ, վոր կարող և քո կսկիծները կարևկից լինել և քո ցավերին՝ ցավակից։

— Ի՞նչպես չցավել, հայր, ի՞նչպես չվշտանալ, հայր։ Մի սիրտ, վոր քարից լիներ կամ ված, մի հոգի, վորի մեջ մեռած լիներին ամեն մարդկային զգացմունքներ, դարձյալ չեր կարող անզգա մնալ, տեսնելով ա՛յն, ինչ վոր յես տեսա, և ինչ վոր տակավին տեսնելու դժբախտութեյունը պիտի ունենամ։ Այն որից, վոր դուրս յեկա մեր ամրոցից, այն որից, վոր Թոզի Տարոնը, մինչև այսօրեր հասանելս, յես անցա մի շարք ավերակների, մի շարք բարբարոսութեյունների միջով։ Տեսա մոխիր դարձած քաղաքներ, տեսա անմարդացած գյուղեր, տեսա կործանված վանքեր ու տաճարներ... Ամեն քայլում յես վոտք եյի կոխում արյան վրա, և իմ հայրենակիցների

ազգան վրա... Ո՛վ կատարեց այդ անգթությունները, հա՛յր, և ինչո՞ւ համար...

Հայրը բնավ չէր սպասում, որ վրդովին մի այսպիսի հարց կառաջարկեր: Նա չվոխվեցավ, պատասխանեցավ, և նրա բոլոր անձնասիրությունը խորտակվեցավ այն դառն հանդիմանության առջև, որով վրդովին արտահայտեց իւր սրտի վշտերը:

— Դու լուռ ես, հայր, դու չես պատասխանում: Ցնա հասկանում եմ քո լռության իմաստը: Բայց հայրենիքի կործանումները և բյուրավոր ազգերի լացն ու արտասուքը՝ համարձակություն են տալիս ինձ քեզ ասելու, որ այդ բոլոր անգթությունները կատարվել են ինձ անձանց ձեռքով, որոնցից մեկը իմ հայրն է՝— դու, իսկ մյուսը՝ իմ մոր ընդարձն է՝— Մկրտիչ Արծրունին...

— Մեծ գործերը մեծ զոհ են պահանջում... ընդհատեց հայրը վրդովի խոսքերը:

— Ճշմարիտ է, մեծ գործերը մեծ զոհ են պահանջում,— պատասխանեց վրդովին դառնացած ձայնով,— բայց դու, հայր, արդյոք լավ կշռե՞լ ես գործի մեծության հետ և հանցանքի մեծությունը: Վոչնչացնել հարյուրների աշխարհը, վոչնչացնել հայրենի հրոնը, յնկնզնցին, և Հայաստանի ավերակների վրա հիմնել մի պարսկական թագավորություն,— ահա՛ այս և այն գործը, որը դու, հայր, մեծ ես կոչում:

— Ինչո՞ւ պարսկական թագավորություն,— հարցրեց հայրը դայրացած ձայնով:— Մխիթ Մկրտիչը պարսի՞կ է:

— Ապա ինչ է: Թե՛ դու, հա՛յր, և թե՛ նա ուրացել եք քրիստոնեությունը և ընդունել եք պարսից Շահուշ արքայի հրոնը: Հայոց յնկնզնցիները լցրել եք պարսից մոզերով ու մոգականներով: Ամեն տեղ տիրում եք սրբանալ քրիստոնեությունը: Իմ մայրը արդեն մոխրակաշտ և զարձել է Մոմիկոնյանների հրոնասեր տան մեջ պարսից աստուածն և հիմնել: Իմ հայրական հողերն արդեն խոտում: Հայոց լեզուն հալածված է մեր տնից: Ամեն տեղ վոչնչացնում եք հայոց դրքերը, վորպեսզի պարսից լեզուն և պարսից դպրություն տարածեք Հայաստանում: Ցնրնկ իմ աչքով տեսա, թե ինչպես Մկրտիչի յնկնազուն վրանի առջև այրում եյին հայոց դրքերը:— Այդ բոլորից հետո, յերբ հոգնում և կրոնը, յերբ կոչնչում և լեզուն, յերբ վոչնչանում են ազգային սովորությունները, և յերբ, վերջապես, հայը սկսում և պարսից սովորություններով ապրել և պարսից լեզվով աղոթել, այլևս ինչ հայություն կմնա: Ցնչ ձեր հիմնած թագավորությունը՝ մխիթ կարո՞ղ և այնուհետև հայկական լինել: Նա, վոչ թե ուշ, կլուծվի, կանհետանա պարսկականի մեջ, և նրա հետ միասին աղոտվին արդյունքները հիսրչեն, կվոչնչանան...

— Ինչ վոր լինելու յե, թո՛ղ լինի, միայն Աբշակունիների թագավորության չկործի լինի,— պատասխանեց հայրը, ավելի զայրոնալով:

— Ինչո՞վ եյին վատ Աբշակունիները:

— Դու դեռ հարցնո՞ւմ ես, Սամվել։ Դու չերեխա չես, դու այնքան տարիք ունես, որ բավական է լեռն հիշես քո տեսածը միայն, որ հենց քո հասակում՝ մի՛ քանի չարագործություններ կատարեց Արշակ Թագավորը, որ քու մեղքերի համար՝ այժմ տանջվում է Անուշ բերդում։

Նա սկսեց մի առ մի թվել Արշակունիների գործերը, և ապա ավելացրեց.

— Ցնծի դու, Սամվել, դեռևս ցանկանո՞ւմ ես, որ մի այսպիսի անբարոյական և ապականված թագավորական տուն դոյություն ունենա։

— Քո և Մերուժանի վարմունքը ավելի վատթար է, հա՛յր,— ասաց Սամվելը, այժմ այլևս չհանդուրժելով նրա ծնողական պատկառանքին։— Ապականությունը ապականությամբ չեն սրբում և մի՛ չ անբարոյականությունը՝ անբարոյականությամբ։ Դրանց մաքրելու համար ուրիշ միջոցներ կան։ Արշակունիները մեզ յեղել են և այժմ կան այնպիսի պաշտելի անձինք, որոնց առաքինություններով մենք պիտի պարծենա հայոց աշխարհը։ Իսկ յերեք այդ հոյակապ ընտանիքի մեջ վերջին ժամանակներում հայտնվեցան մի քանի անբարոյական մարդիկ,— դա նրանց մասնավոր մեղքն է, որ իրանք պետք է քավեն։ Նրանց մեղքերի համար ինչո՞ւ պետք է պատժվի ամբողջ հայոց աշխարհը և հայոց հայրենիքը։ Այն ևս կասեմ, հա՛յր, որ այդ իսկ անբարոյական համարված Արշակունիները, դարձյալ մեկ կողմից, այնքան բարոյական դանվեցան, որ յերբեք չդավաճանեցին հայրենի աշխարհին և հայրենի յեկեղեցուն։ Իսկ դո՞ւք,— դու և Մերուժանը...

Վերջին խոսքերը կայծակի նման չանթեցին հոր սիրտը։ Նրա մեջ միանդամից փչրվեցան այն բոլոր յերանական հուսաները, այն բոլոր ջնջմբաշճանքները, որ ուներ վորդու վերաբերությամբ։ Նա փսխտում եր, որ վորդին մի՛ չ միայն յուր կամակիցը լիներ, այլև յուր գործակիցը լիներ։ Իսկ այժմ հայտնվեցավ նա վորպես հոր անողոք հակառակորդ,— մի հակառակորդ, վորի հետ դժվար եր կռվել, և վորին ավելի ևս դժվար եր տեղիք տալ։ Ի՞նչպես պետք եր վարվել նրա հետ։ Ծնողական սերը՝ և յուր ստանձնած գործի պարտավորությունը՝ սկսեցին սարսափելի կերպով մաքառել միմյանց հետ։ Վորի՞ն պետք եր նախապատվություն տալ։ Անհնար եր վճռել։ Նա սաստիկ տրտնջացած եր, որ աւելի տվեց վորդուն այս աստիճան բացվել յուր հետ։ Բայց արդեն ուշ եր։ Չարը այն կետի վրա յեր դրված, որ պետք եր ընտրել յերկուսից մեկը՝ կա՛մ վորդուն, կա՛մ սկսած գործը։ Բայց զրկվել թե՛ առաջինից, թե՛ յերկրորդից՝ մահվան չափ դառն եր նրա համար։ Այդ սոսկալի տագնապի մեջ եր նա, յերբ յիշտակը ավելի խառնվել եր, կարմիր քամին կատաղությամբ մոնչում եր, և յուր կարմիր փոշին անխնա կերպով սփռում եր Թչվառ հոր յերեսին, խակ նա վոչինչ չեր լսում։

— Դու յեկար նախատելո՞ւ քո հորը, Սամվել,— ձայն տվեց նա հղկան յերկար տանջանքներից հետո։

— Վա՛յ, հայր, ինս չնկա նախատելու քեզ: Ճնս ինկա ճշմարիտը, արդարը եւ իրավացին խոսելու քեզ, վորը վա՛յ այլ վոք կհամարձակվիր խոսել, բայց միայն վորդիդ: Ճնս ինկա իմ սրտի, իմ սիրտ բոլոր ցանկությամբ աղաչելու և պաղատելու քեզ, վոր դու հետ դառնաս այն ճանապարհից, վոր առնում և մեր հայրենիքը դնալ անդառնալի կորուստ, խնչ Մամիկոնյան ուհմի հիշատակը՝ դնալ հավիտենական անհնք և դատապարտություն...

Հայրը դժգոհեցավ այդ խոսքերից և քաղցրությամբ պատասխանեց.

— Այդ բոլորը խոսել և ասելս քեզ՝ զո ինչիտասարդական վառ զգացմունքը, զո մաքուր սիրտը, Սամվել, և ինս չեմ կարող չուրախանալ, վոր դու այդպես անարատ ես մնացել: Բայց սրտի և զգացմունքի դատողությունները խնամ հաղիվ անդամ լինում են ուղիղ: Դժբախտաբար, աղգերի և ժողովուրդների կենցաղավարության հարաբերական պայմանների մեջ խնամ ննդ կյանն ան՛յն արդարությունը, վոր դու կոչում ես առաքինություն, բարոյականություն: Միշտ զորնը ճնշում և, վոչնչացնում և անզորին: Ի՞նչ պնաք և ասած, վոր ինչիմն կյանքի անողոք անհրաժեշտությունները դնում են մեզ այնպնսի ճանապարհի վրա, և կատարել են ատնս մեզ այնպնսի գործնք, վորոնցից զժգոհքն անդամ կատարսվիր: Մեր բոլոր կատարածը անխուսափնլի անհրաժեշտության արդյունք և: Մենք հարվնցանք պարսիկներին, վորպեսզի ազատվենք նենդավոր հռոմեացիներից: Պարսիկները մեր դարավոր բարեկամներն են կղել: Վերջին ժամանակներում քրնստոնեությունը բաժանեց մեզ մնյանցից և մեր մնջ կրճնր մեծ անջրպետը գրնց: Դժբախտ հանգամանքները պահանջում են՝ քանդնլ այդ անջրպետը և ճնռք մնկնել հին բարեկամին:

— Բայց դուք քանդում եք վա՛յ թե անջրպետը, այլ հնմքը,— ընդհատեց Սամվելը:

— Ինավ վոչ: Լա՛վ, Սամվել, ինչիսր բացատրությունների կարտս կլնններ, ինձն ինս սկսնլի քեզ ապացուցանել, վոր մենք Հիսուս Քրնստոսի խաչը թաղնելով և մեր հին աստվածներին ինչիպատրաստելով՝ վոչննչ չնչինք կորցրնի: Ճնս քեզ կկրկնեմ նույնը, ինչ վոր մի քանի րոպե առաջ ասացի, թե մեծ գործերը մեծ զոհ են պահանջում, և մենք ստիպված եղնինք սալ այդ մեծ զոհը:

— Վո՞րն և այդ մեծ գործը, վորնն դուք զոհում եք կրոնը,՝ յնկնգնցնն,— հարցրեց Սամվելը, զարմացավ վրդովվելով:

— Հնն բռնապետության տապալումը, Արշակունիների կործանումը,— պատասխանեց հայրը: Միթե դու վո՞ջր գործ ես համարում այդ:

— Փոքր գործ չեմ համարում: Բայց ինչո՞ւ համար եք կործանում:

— Նրա համար, վոր յնթե մենք նրան չկործաննենք, նա մեզ կկործաննե: Միթե դու մոռացո՞լ ես, թե վորպնսի՛ կատաղությամբ Արշակ թագավորը և նրա հայրը սկսեցին վոչնչացնել նախարարական իշխանությունները:

— Չեմ մոռացել։ Բայց չես դադարել կասեմ քեզ, վոր Արշակունիների պատմականության առաջը առնելու համար՝ ուրիշ ավելի դյուրին միջոցներ կան։

— Վոչինչ միջոցներ չկան, բացի այն, վոր արդեն սկսվել է, և պետք է շարունակվի։ Հայոց նախարարները բաժանվել են երկու մեծ կուսակցության. մեկը, յուր առաջնորդ ունենալով Հնդկաստանին, աշխատում է պահպանել հին դրությունը՝— Արշակունիների քայքայված գահը, իսկ մյուսը, առաջնորդ ունենալով քո հորը և քո քեռուն, կամենում է, վոչնչացնել հինը և առնել մի նոր իշխանություն։ Շատ բնական է, վոր այդ ներքին կերկպառակությունը պիտի հարուցաներ և ներքին պատերազմ։ Մենք հակառակ կուսակցությունը դիմենք հռոմեական ոգնության, իսկ մենք դիմեցինք պարսկական ոգնության։ Սկսվեցավ ներքին կռիվը՝ ներքին արյունհեղության հետ։ Թե ինչով կվերջանա,— այդ աստուծո ձեռքումն է, բայց առայժմ հաջողությունը մեր կողմն է։

— Գիտեմ ձեր կողմն է։ Բայց խարուսիկ հաջողությունը թող չհրապուրե ձեզ...— վերջին խոսքերի միջոցին նա ձեռքը տարավ և բռնեց հորաջը ասելով.— Լսի՛ր, հա՛յր, ընդունի՛ր առաջարկյալ վորոշում աղաչանքը, մի՛ արատավորիր Մամիկոնյանների պատմության անունը հավիտենական ամոթով։ Դեռ ուշ չէ։ Դեռ կարելի է վնասի հնարից հետ դառնալ։ Ցրվեցե՛ք այդ անիծյալ պարսկական բանակը, վորի ներկայությունը պղծում է հայոց կերկիրը։ Հետացրե՛ք պարսիկներին։ Աղաչություն ընդհանուր հայոց տերիներին, թո՛ղ դնան իրանց անները և սրբեն աղտոտությունը։ Թո՛ղ չլինի կռիվը, թո՛ղ չլինի պատերազմը, վոր այնքան աղետներով, վոր այնքան թշվառություններով պատճառ դարձավ։ Թո՛ղ կրկին վերականգնվի հաշտությունը, և հայոց աշխարհը վայելի յուր նախկին խաղաղությունը։ Ճիշտ կընդամ Մերուժանի մոտ, նրանից էլ նույնը կխնդրեմ, կաղաչեմ, կըսաստբրեմ նրա վոտները, վոր ընդունե իմ խնդիրքը։

Հայրը վոտքի կելավ, պատնաշած կերպով ասելով.

— Ի զուր կանցնի քո՛ քո աղաչանքը, և թո՛ւ քո խնդիրքը, Սամվել։ Մերուժանը այն տեսակ մարդկիններից չէ, վոր ամեն մի համբուրի խոսքը լսե։

Արշամը կատաղի հոսանքով անցավ դեպի Սամվելի գլուխը։

— Հա՛յր... ձայն տվեց նա, և նրա խռովյալ աչքերը վառվեցան բարկության բոցով։— Ցե՞ռ եմ համբուրը։

— Այո՛, դու չես, Սամվել։ Ցեռ չկարողացար հասկացնել քեզ մո՛ւշ իմ միտքը և մե՛ջ իմ նպատակները։ Այժմ մնում է հարցնել քեզ. դու վո՞ր կուսակցության ես պատկանում։

— Այն կուսակցությանը, վոր հավատարիմ է մնացել հայրենի կենդանության և սիրելի Թագավորին։

— Ուրեմն, դու իմ վորդին չես։ Ով վոր մեզ հակառակ է, մեզանից չէ։ Մենք անխնա պատժել գիտենք այնպիսիին։

— Ցնով վո՛չ դու իմ հայրն ես։

— Այո՛վ...

— Ի՞նչ է, դավաճա՞ն...

Հայրը ձնագը տարավ դնալի յուր սուրը։ Բայց վորդու սուրը արդեն մերկացած էր։ Նա չողղոցաց և կայծակի նման մխվեցավ հոր սրտի մեջ։ Նա ընկավ, հառաչելով.

— Հայրասպա՛ն...

Վորդին, անշարժ արձանի նման կանդնած, մի քանի րոպե լուռ նայում էր արյան մեջ թավալվող հոր վրա։ Հետո սրբեց աչքերի արտասուքը, և ձնագը տարավ դեպի գոտիից քարշ ընկած արծաթյա փոքրիկ փողը։ Մոտեցրեց դողդոջուն շրթունքներին, և չարաղուշակ արծաթը դուժեց ասկալի զոհաղողություններ։

Կղզու զանազան կողմերից նույնպես լսելի եղան փողերի ձայներ...

Կաթիլը քամին խելագարի նման մանչում էր, փոթորկվում էր, բարձրացնելով ոդի մեջ թանձր, ավազախառն փոշի։ Մրրիկածուփ հորիզոնը պատած էր մուգ-ադյուսակագույն մառլոյով, վոր մթնեցնում էր արևի յերեկոյան ճառագայթները։ Քամու ուժգին հոսանքի ներքո՝ դալար թուփերը, փշալի մացառները հնձնվում, հառաչելով, կպչում էին գետնին և զարձյալ վեր էին բարձրացնում իրանց հոդմակած գլուխները։ Մոլորված, չվոխված ծառերը, հակատակ իրանց կամքի, տարվում էին ոդի մեջ, վորպես բոմբաղի փոքրիկ պատառներ։ Սրսփիչ բաղեն անգամ յուր ուժեղ թևերով զժվարանում էր ընդդիմադրել դալարացած տարրի կատաղի ալիքներին։ Մրրիկը հետզհետե ահագնանում էր, մարդ և անասուն, աղուն և թռչուն, թագչելու անդ էին վորոնում։ Այդ մինչդեռ զարմացած Արտքը խորին վրդովմունքով դուրս էր հարձակվում յուր սենյակից, տեսնելու, թե ի՞նչ արհավիրք և կատարվում յուր շուրջը։ Ջ՛չհասնաց կղզին դողում էր, տարտամում էր ամեհի կոհակներից, վոր ամեն րոպե պատրաստ էին կլանելու և անհետացնելու նրան։

Ընտիրյան ընդհանուր խռովության մեջտեղին՝ զազարից վերստորդությունը, ակամայիվ մի այլ տեսակ վերստորդություն։

Սկզբում կարծվում էր, թե վերստորդները՝ մրրիկի սաստկությունից չվոթխվեցան, ևս երբեմն մեկ-մեկ, և տարածվեցան դեպի կղզու զանազան կողմերը՝ ապաստանի տեղ դտնելու։ Վա՛չ վոք չեր յերևում։ Ջնջին յերևում մանավանդ Սամվելի մարդիկը։

Ցնորամած էր մեկն ասիտակ ձիավորը— Մերուժանը։

Նա յուր ձին փութով քշում էր դեպի վրաններն կողմը։ Մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ վրանները տեսավ տեղում և այնտեղ վոչ վոքի չտեսավ։ Մտածեց՝ դուցե քամին խորտակել էր վրանները, և մարդիկ չտա-

պել էլին փախչել, վախենալով, միդուցե կատաղած Աբաքը այնքան բարձրանար, որ ծածկեր կղզին: «Վո՛չ, այստեղ մի դավադրություն կա»... ասաց նա, և ձեռքը տարավ դեպի կշտից քսուշ ընկած զալարուղը, խնդուն հնչեցրեց: Վոչ վոք չհայտնվեցավ: Ձիու դյուխը շուռ ալեց դեպի կամուրջը: Ճանապարհին մի քանի անդամ տեսավ նա խոտերի վրա ընկած դիակները: Ճանաչեց: Վոմանք Սամվելի մարդիկներից էլին, վոմանք էրանց մարդիկներից: Ներա հպարտ դեմքի վրա անցավ մի դառն ծիծաղ: «Մահուկները մեղ վորոգայթի մեջ ձգեցին»... մտածեց նա և շարունակեց քշել ձին:

Հանկարծ քամու մռնչյունի հետ սուլեց մի այլ ձայն. մի նետ դիպավ նրա կողքին, և շառաչելով ցած ընկավ: Ներան հաջորդեց յերկրորդը... յերրորդը... վերջինը ցցված մնաց ազդրի վրա:

«Ա՛խ, յեթե դիտենայի, վոր դու հաղուստիդ տակին զրահ ունես հագած»... լսելի յեղավ մերձակա մացառների մեջից մի սուր ձայն, վոր խնդուն խլացավ քամուց:

Մերուժանը չկոթված կերտով նայեց յուր շուրջը: Ձին քշեց դեպի այն կողմը, վորտեղից սլացավ նետը: Մեծ մացառները արդելեցին նրա ընթացքը: Այդ մեջտեղին մի այլ նետ դիպավ նրա դլխին, և դարձյալ ցած ընկավ:

«Փո՛ւհ, աստանան տանե՛... լսելի յեղավ մի զայրացած ձայն,— խուլրի տակում ևս յերկաթ և թագցրած...

Մերուժանը հետ դարձավ, և յուր խորին վրդովմունքի մեջ՝ չդիտեր վո՛ր կողմը դնալ: Նա ձեռքը տարավ դեպի նետը, վոր տակավին մնացել էր ցցված ազդրի մեջ, բարկությամբ դուրս քարշեց: Արյունն սկսեց վտակի նման հոսել: Դարձյալ դառն ծիծաղը յերևաց նրա հպարտ դեմքի վրա, և դլուխը շարժելով ասաց. «Վախ մանք եյինք վորսում մացառների մեջ թաղնված անասուններին, իսկ այժմ մեզ են վորսում մացառների մեջ թաղնված դարանագործները»...

Դարանագործը վոչ այլ վոք եր, բայց միայն պատանի Արտավազդը: Ցուր ընկերների մեջ՝ նրան եր վիճակվել Մերուժանը: Բայց վողնելից պատանու բազմանքները մնացին անկատար: Նրա նետերը դիպան Մերուժանի հաղուստի ներքո թագցրած պողպատյա տախտակներին: Նա, սողալով ու խարխափելով՝ սատանայի նման անցավ թուխերի և մացառների միջով, դուրս յեկավ կղզու այն կողմը, վորտեղ կապած եր նրա ձին: Նստեց և նետվեցավ դեպի յուր ընկերները:

Այդ միջոցին, կղզու մի այլ կողմում, մրրիկի թանձր փոշու մեջ, մենամարտում եյին յերիտ. հոդի՝ Ծերունի Աբրահը և պարթից կաբեն զորապետը: Վերջինը դայրանալով ասաց.

— Բավական է, ծեր աղվես, դոնե հիշի՛ր, վոր դու մեր հյուրն ես: Ցեռ խնայում եմ հյուրին:

— Շնորհակալ եմ մարդավարությանդ համար,— ժպտալով պատաս-

խանից ծերունին։— Պատրիկը, նեղն ընկած ժամանակ, մի՛շտ մեծահոգի կ՚ձևանում...

— Դու ապահովիր իմ նժույգին և ինձ վտքի վրա թողնելը, իսկ ինքդդ կռվում ես ինձ հետ՝ ձիու վրա նստած։

— Ես խոհուն ցած կինչնամ, թող ուժերի հավասարություն լինի։

Աբրահը իջավ ցած, և յուր ձին հեռացրեց մի կողմ։ Այդ միջոցին խրտամանի պատրիկը թռավ նրա ձիու վրա, և չտապեց փախչել։

Սամվելը, յաղերական դործողությունից հետո, վերոնում էր Մերուժանին։ Ցերկար թափառում էր կղզու մեջ, և լի վրխակալությամբ՝ փնտրում էր հանդիպել նրան։ Բայց Մերուժանի փոխարեն դտավ ծերունի Աբրահին, որը, ապշած, չփոթված, նայում էր դեպի այն կողմը, ուր անհետացավ յուր յերկչոտ ախոյանը։

— Ետ դիր՛, սարսափելի կերպով խոսիր՛,— ասաց նա, դառնալով դեպի Սամվելը։— Ցերեկ տասն նիզակի հարվածք ստանայի, այդքան չեմի ցասիր։

Նա սկսեց պատմել պատրիկի յուր հետ խաղացած խաղը։

— Վնաս չունի,— ասաց Սամվելը, մխիթարելով վշացած ծերունուն։— Անտարակույս, մի այլ անդամ ևս կհանդիպենք նրան։ Այժմ հնչեցրո՛ւ փողդ, թող հավաքվին մեր մարդիկը։

Ծերունին հնչեցրեց փողը։

Սամվելի քառասուն մարդիկներից հայտնվեցան յոթին հոգի միայն։ Մնացյալը կա՛մ վիրավոր կա՛մ սպանված՝ ընկել էին կղզու զանազան կողմերում։ Ցերեխատարդը թախծալի աչքերով նայեց մնացյալների վրա, և ասաց.

— Ո՛Ւր հոգի... խորհրդավոր թիվ է...

— Իսկ մեր թշնամիներից այդքան էլ չե մնացել... հանկարծ լսելի յեղավ մի ձայն։

Սամվելը նայեց դեպի այն կողմը։ Ծպիտը յերևեցավ, նրա դիրքին ընկավ պատանի Արտավազդը։

— Ինձ չհաջողվեցա՛վ... ինձ չհաջողվեցա՛վ... տրտնջում էր նա։ Ցես ծանկցի նրա աղյուսը միայն։

— Դու չդիտես, վոր նա կախարդ է... յերկաթը և պողպատը նրա վրա չեն ազդում...

— Այդ յես իմ աչքով տեսա։ Բայց այժմ դիտեմ, թե ինչո՛ւ չեն ազդում...

Որը յերևեցավ եր. արեգակը մանելու մոտ եր։

Պատանի Հուսիկը մոտ բերեց յուր իշխանի ձին, նա հնձալ, մյուսները նուչնակով ձիավորվեցան, և դիմեցին դեպի կամուրջը։ Ցերթ անցան, Սամվելը հրամայեց վեր առնել կամուրջը, ասելով.

— Պետք է հանդիստ թողնել կղզում մնացած դիակները։ Քանդեցեք կամուրջը, վոր գազաններ ներս չմտնեն։

Մի քանի րոպեյի մեջ քանդեցին չարժական կամուրջը, ձդեցին գետի մեջ։ Ալիքները՝ մի վոգրիկ տաշեղի նման՝ անհետացրին նրան։

Ամենքը դուրս կիկան։ Կղզու մեջ մնաց մեկը միայն— Մերուժանը։

Նա կիկավ այն ժամանակ, յերբ արեգը արդեն մտել եր։ Ցերբ տեսավ կամուրջը վեր առած, յերիկթյա վանդակի մեջ ընկած դաղանի նման՝ վրդովվեցավ, բայց չվհատվեցավ։ Սկսեց դայրացած աչքերով չափել այն տարածութիւնը, վորի վրա դրած եր կամուրջը։ Տարածութիւնը բավական լայն եր, ձին չեր կարող թռչելով անցնել։ Նայեց ալևկոծված Արաքսին։ Կոհակները վրիպրալով բարձրանում եյին, դնում ահռելի կերպով վորոտում եր։ Ձին քշեց դեպի խոտվյալ գնալը։ Սպիտակ ձին պատռեց մրրկածուխ ալիքները և անցավ մյուս կողմը, ցամաքի վրա։

Վիրավոր առյուծը ազատվեցավ Արաքսի վորոշյալներից...

Մ Ա Ց Ր Ը

Հեռաքել լայր գորկիս Լեր, եւ ոչ կամեր մեխքարել՝ զի ոչ էինա։

Մատթեոս

Փոթորկային գիշերին հալոցդեց խաղաղ, լուսապայծառ առավոտ։ Բնութիւնը սքանչանում եր, վառավորվում եր յուր վաղորդյան հրճվանքով։ Թռչուններըը ուրախաձայն յերդերով վողջունում եյին ալբնկյան լուսատուն հանդիսավոր յելքը։ Ամենուրեք շնչում եր անսպառ հանդիստիւն, ամենուրեք տիրում եր անխռով գլխարեթութիւն։ Մեկայն պարսից բանակը պատած եր տխրութիւնի մթին մռայլով։

Ցերեկվա ապտակավոր անցքը արդեն հայտնի յեր բոլորին։ Ամեն մի գլխավոր գլուխը, թե ինչ եր պատահել գիշերանաց կղզում։ Դեռ լուսյակ նոր եր բացվում, յերբ բերին Սամվելի հոր՝— Վահան Մամիկոնյանի՝ մարմինը և հանդուցին յուր վրանում։

Մերուժանի յերկնագույն վրանը այս առավոտ ավելի չքնդ տեսք եր առացել արևի առաջին ճառագայթներից, վոր մի առանձին քնքշութիւնով շողշողում եյին նրա վոսկեզոծ այուններն վրա։ Բայց, այսուամենայնիվ, այս մեծափառ վրանը չեր պատկերացնում այն սովորական փայլն ու վայելչութիւնը, վոր հանդիսանում եր ամեն առավոտ, արևի ծագումից հետո։ Գալիս եյին, ներկայանում եյին բանակի բոլոր ավագներն ու առաջնորդները, վողջունում եյին իրանց հզոր հրամանատարն առավոտը, և յուրաքանչյուրը գնում եր տալիս բանակի դրության մասին։ Հետո գնում եյին նրա հյուրասիրութիւնի ճոխ նախաճաշկին։

Այս առավոտ վոչ վոք չեր յերևում։ Վրանի վարագույրները գոված

չափ միայն բարձրացրած էին, և սպասավորները վոտքի մատների վրա էին պտտում նրա շուրջը, վոր ձայն չլսվի: Ներքևում ուշիկ քայլերով մտնում էին զանազան սպաներ, և անհնարինությունից հազիվ լսելի ձայնով հարցնում էին իշխանի առողջությունը, և զարձյալ լուռ ու մունջ հեռանում էին:

Հիվանդ էր իշխանը, պառկած էր իշխանը: Նրա մեծաքայլ անկողինը շրջապատել էին մի քանի բժիշկներ միայն, վոր մի առանձին հոգածությամբ ապահովել էին դնում և դարմանում էին նրա ապրելը վերջը:

— Դուք ինձ միայն այն ասացեք,— հարցրեց հիվանդը վճռական ձայնով,— վոսկորը խա վնասված չե:

— Թո՛ղ հետու լինեն քեզանից չար Արհմինի չար պատահարները. վանմաչուք ասը,— պատասխանեցին բժիշկները միաձայն,— վոսկորը այնքան անպատա և մնացել, վորչափ մեր աչքերի լույսը: Ցնծե մի փրևե խաթար լիներ, մենք չենք բաղցնի:

— Ապա ի՞նչից և այս անտանելի ցավը... այս սրտամաշ թուլությունը...

— վերքը բավական խորն և, վանմաչուք ասը: Իսկ թուլությունը ջրանից և, վոր առատիկ շատ արյուն և կորել: «Իշխանաց կղզուց» մինչև այստեղ վոքը ճանապարհ չե, այդքան տարածության վրա՝ բաց վերքից արյունը մինչև հասել է:

— Իսկ այդ ջի՛ղը, վոր պրում է ինձ... Ցնե չատ անգամ վիրավորված եմ լեղել, բայց այդքան առատիկ ջերմ յերբեք չեմ զդացել: Ջիցի՞ թե նևրը թուևավորված լիներ:

— Թո՛ղ պայծառ Աբրամադրը մարտաւորություն չնորհե, վանմաչուք ասը,— դարձյալ պատասխանեցին բժիշկները միաձայն:— Ցնեք քո վերքի մեջ մի հյուվելի չափ թուղթի նման լինի, թո՛ղ մեր ամբողջ մարմինը վարակվի թունով: Այդպիսի բան չկա: Ջերմը մրսելուց և առաջ չեկել: Այդ քան առան ալիքները, վոր պատատելով անցար դու, և դիշերվա առատիկ քամին՝ մրսեցրել են քեզ, վորովհետև քրտնած ես լեղել: Բայց այս բոլորը ամենակարողի ողնությամբ կանցնի, և չատով կանցնես, վանմաչուք ասը:

Հիվանդի մոտ դրած եր դռվացուցիչ ոչարակ, վոր անդադար խմում եր նա՝ սրտի տապն ու կրակը հանդցնելու համար: Բժիշկների հետաքրքրությունները թեև բոլորովին չհանդստացրին նրան, այնուամենայնիվ, յերբեք չուռ տվեց դեպի բարձի մյուս կողմը և լուռ կացավ: Նա վախենում եր թունավորվելուց, յերբ վոչ, վերքը այնքան ահավորական եր նրան, վոր չեր կարող յերկյուղ ձդել նրա վրա: Մի դիշերվա մեջ՝ զարմանալի կերպով փոխվել եր նա: Գեղեցիկ դեմքը դունաթափվել եր, թառամել եր, և այրական ճակատը պատած եր խոր տխուր դալկությամբ, կարծես թե, ամխաներով հիվանդ լիներ:

Սննդակառավարիչներից մեկը հայտնեց, թե բանակի ավազներից մի քանիսը խնդրում են ներկայանալ:

— Թող գան,— հրամայեց նա:

Բժիշկները մի կողմ քաշվեցան, որպեսզի նրա մոտ՝ Հայր-Մարդկանը, կարևոր զրույցները և մի քանի այլ տեղեկություններ: Առաջին երկուսը նստեցին հիվանդի անկողնի մոտ և ահյակ կողմերում, իսկ մյուսները՝ մի փոքր հեռու: Մինչև նրանք կհարցնեին հիվանդի առողջությունը, նա ընդհատեց, ինքը հարցնելով.

— Վերադարձա՞ն մարդիկը:

— Վերադարձան,— պատասխանեց Հայր-Մարդկանը տխրությամբ:— Մամիկոնյան իշխանին չեն գտել, և նրա մասին ղեռ ոչինչ տեղեկություն չկա: Իսկ մյուսների մարմիններն արդեն բերել, հասցրել են բանակը:

Երբ բանակում լսվեցան «Իշխանաց կղզում» պատահած աղետալի անցքը, հենց դիշերով մի քանի խումբ ճեպընթաց ձիավորներ ուղարկեցին ոգնության: Բայց նրանք հասան այն ժամանակ, երբ ամեն ինչ վերջացած էր: Լուսաբացին խուզարկեցին ամբողջ կղզին, գտան սպանվածների դիակները և մի քանի կիսամեռ վիրավորյալներ միայն: Սամվելի հոր մարմինը գտան հենց յուր ընկած տեղում, և մյուսների հետ բերեցին բանակը: Բայց Հայր-Մարդկանը թագցրեց հիվանդից, վոր նրան ավելի ցավ չպատճառուի:

— Դա ինձ շատ զարմացնում է,— ասաց հիվանդը:— Ցերեկ վորդին, հրապուրելով հորը, նրան մի կողմ տարավ և յուր դավաճան ձեռքը բարձրացրեց հոր վրա (վորի մասին ամենևին տարակույս չունենամ), գոնե պետք է դանվեր նրա մարմինը:

— Գործողությունը կատարվել է Արաքսի ափերի մոտ,— նկատեց բժիշկներից մեկը,— ինչո՞ւ չմտածել, վոր հայրասպանը կարող էր հոր մարմինը ձգել Արաքսի ալիքների մեջ և անհետացնել:

— Այդ աստիճան անգթություն չէր անի Սամվելը,— ասաց հիվանդը:— Նա ընդունակ էր սպանելու, բայց վոչ հոր մարմինը անպատվելու:

— Ցավ եմ նույն կարծիքին եմ,— ասաց Հայր-Մարդկանը:— Ցերեկում է, վոր այդ հանդարտ, քաղցրաբարո և մեղմամաղձոտ յերիտասարդը՝ թե' հոր խստությունը և թե' նրա մեծահոդությունն ունի: Գործիք պատանիներից և վոչ մեկը վնասված չէ: Տղաների հետ չէ կռվեցել դործ ունենալ: Ինձ պատմում էին իրանք՝ պատանիները, ասելով, թե յերբ Սամվելի մարդիկը գաղանի նման տարածվել էին կղզու պանդան կողմերը, և ամեն հանդիպողին խոշտոդում էին, իսկ մեղ պատահելիս՝ թույլ էին տալիս փախչել:

— Տարակուսականը այն է, վոր ձին նույնպես չէ դանվել,— նկատեց Գարեն զորապետը:

— Այստեղ տարակուսելու վոչինչ չկա,— պատասխանեց Հայր-Մարդ-

պետը։— Դուցե Սամվելի մարդիկներից մեկը՝ ընդհանուր խառնակության միջոցում՝ նռան է փամփել և։

— Շատ հավանական է,— ասաց կաթին դրապետը,— ինձ հետ էս մխիթարությունը պատահեց։ Ես երբեք և ո՛չ մի պատերազմում չեմ իմ ձին կորցրած չեմ, բայց այդ կղզում կորցրի ձիս։ Կարո՞ղ եք յերևակայել, թե ինչպես։ Ինձ պատահում է Սամվելի դայակը, այն նենգավոր ծերունին, որին Աբրահ էին կոչում։ Անսպասելի հանդիպությամբ հարձակվում է իմ վրա, և նիզակի մի հարվածով ցած է գլորում իմ ձիուն։ Ես մնացի վտանգի վրա։ Ինձ մնում էր, նույնպես ցած գլորել թշվառականին և ոչնչա՛ն դարձնել նրա ձիուց։ Բայց նա այն աստիճան կատաղությամբ մենամարտում էր ինձ հետ, որ մյուս աշխարհը գնալուց հետո միայն՝ յուր ձին ինձ թողնց։

Նա սկսեց մանրամասնաբար նկարագրել յուր մենամարտությունը, որի մեջ, բացի անամոթ առախոսությունից, ինքնագովությունը ավելի մեծ տեղ էր բռնում։ Թե ի՛նչ խարեությամբ կարողացավ առանալ նա ծերանած Աբրահի ձին,— այդ մենք դիտենք։ Բայց նրա ձիով պարսից բանակը վերադառնալը, շատ հավանական չի, որ բավական փաստավոր ապացույց էր՝ հաստատելու յուր չհատարած քաջագործությունը։

Հիվանդը չէր լսում։ Նրա տենդային ջերմությամբ բորբոքված ղլուխը նույն րոպեում զբաղված էր Մամիկոնյան իշխանի անհայտանալով, որ նրա մեջ զանազան տարակուսանքներ էր հարուցանում։ Հայր-Մարդպետը, թողնելով իշխանի սպանվելը և նրա մարմինը պղտն վազ-առավոտյան բանակը բերվելը, թեև դրանով կամեցավ հիվանդին նոր ցավեր չպատճառել, բայց, այնուամենայնիվ, նրան ավելի ծանր մտատանջությունների մեջ ձգեց։ Ձիցո՞ թե վորդին կարողացավ հրապուրել, խնդրից հանել նրան, և յերկուսը միասին փախուստ տվին։ Ի՞նչ հետևանքներ կարող էր ունենալ, յեթե ճշմարիտ լիներ այդ։ Մի՞թե այդ սատիճան անհավատարիմ կդտնվե՞ր Մամիկոնյան իշխանը, որ այնքան ամուր, անքակտելի ուխտով կապված էր յուր հետ։ Կդավաճանե՞ր յուր բարեկամին և դործակցին...

Այս մտածությունների մեջ էր նա, յերբ դարձյալ սկսեց խոսել պարսից կաթին դրապետը, բացատրելով այն մխոքը, թե մեծ սխալ դործեցին իրանք, որ բանակից դուրս յեկան և վորտորդության դնացին, քանի որ մտնելից նախազդուշություն ունեին, թե պետք չե շարժվել տեղից։ Այժմ կատարվեցավ նրանց դուշակությունը, դնացին փիլիսանաց կղզին և թակարդի մեջ ընկան։

— Սխալը միայն դրանում չե, տե՛ր դրապետ,— ավելացրեց Հայր-Մարդպետը։— Բայց խոսվել մի քանի տղաներից, ահա՛ այդ և դործի ձեռնտու կողմը։

Հիվանդը վրդովվեցավ։

— Տղաները ոտարներ չեին, Հայր-Մարդպետ, տղաները մեր արյու-

նեցն էլին,— ասաց նա զայրացած ձայնով։— Դու ինքդ մեծ ուրախությամբ նրանց հետ վորսակից կլինեիր, եթե քեզ հրավիրեին։ Բայց չկամեցանք քո ներկայությամբ ծանրաբեռնել այլևս ղեկավարությունը։

Գառասլանը բավական խիստ եր։ Եվ թե մի ուրիշ ժամանակ լիներ, դուցե դառը ներքինին չեր լռի։ Բայց այս անգամ նա խնայեց հիվանդին, վորը չեր կարող խոհուն շուռ տալից, այլևս չեր նայում նրա վրա։

Մինչ Մերուժանի յերկնադույն վրանում այս անսակ սրտաբեկ խոսակցության մեջ ելին, ուր ամեն վոք, մոլորվելով սխուր տարաիուսանքների մեջ, չդիտեր՝ արդյոք պետք եր հլշատարել ընկերին, թե մխիթարել նրան, ուր ամենքը դանվում ելին մի տեսակ անորոշ, անհասկանալի վհատության մեջ,— այո՛, այդ մկրտոցին, բանակից հետու, քաղաքի կողմից բարձրավանդակներից մեկի վրա, յերկար ձորի ղլխին, ծածանվում եր մի ինչ-վոր դուշղուշյա բան, վոր զրոշակի նմանություն ուներ։ Բանակից դեռ վոչ վոք չեր նկատել այդ հանկարծակի յերևույթը, թեև վաղորդյան մառայլը արդեն չքացել եր, արևը բավական բարձրացել եր և շրջակայքը ծիրում եր օքանչելի լուսավորության մեջ։ Ավելի վառ ճառագայթներով առջև՝ ավելի աչքի յեր զարկում նա։ Իսկ առավոտյան մեղմ հովից փողփողում եր, վիսւսում եր և, մի շար վոդու նման, դուշղուշյա թևքերը բաց արած, կարծես, ձգտում եր սավառնել, ձգտում եր յուր բարձրությունից իջնել բանակի վրա, և յուր բոլոր զարհուրանքով ճնշել, վոչնչացնել նրան։ Հիվանդը առաջինը յեղավ, վոր նկատեց այդ տարօրինակ յերևույթը, և յերկար նրա անհանգիստ աչքերը հառած ելին դեպի այն կողմը։ Դրոշակի յերկրքը դրած ելին սև շրջանակի մեջ, իսկ մնջանդի նշանը նա խնդուն ճանաչեց, և ամբողջ մարմնով ցնցվեցավ։ Կայծակի հարվածքը չեր կարող այնքան սդղել նրան, վորքան այդ դունատվոր կատվի կտորը, վոր սարսափելի կերպով չանչեց նրա անմեհյան սիրտը։ «Ենդուքի պատասխանին չե դադարել ինձ հալածելուց»... մտածեց նա, և նրա դունատ դեմքի վրա յերևաց նույն դառն ծիծաղը, վոր սովորաբար հայտնվում եր տագնապի րոպեներում։ Նրա համար արդեն ամեն ինչ պարզ եր։ Նրա բոլոր տարաիուսանքները փարատվեցան, մանավանդ յերբ անհնարինների մեկը ևրս մտավ, հայտնեց, թե պատգամավորությունն է յեկել, խնդրում են ներկայանալ։

— Թող դան,— ասաց հիվանդը։

Հայր-Մարդոսեանը այլևս չկարողացավ համբերել, յերբ տեսավ հիվանդի անխոհեմությունը, վոր առանց հարցնելու, թե ինչ պատգամավորություն է, և առանց կանխատես տղեկանալու, թե ինչ նպատակով են յեկել, թույլ է տալիս յուր մոտ մտնել։

— Դու միշտ այդպես անզգույշ ես յեղել, Մերուժան,— ասաց նա խրատական յեղանակով։— Քո մեծամտությունը վո՛չ սահման անգամ քեզ վտանգի մեջ է ձգել։ Ի՞նչպես կարելի յե ընդունել մի պատգամավորություն, առանց նախապես իմանալու, թե ո՛վքեր են, կամ ի՛նչ գործի հա-

մաբ են յեկած։ Մինչև չի՞ կարող պատահել, որ նրանցից մեկը յուր դաչույնի հարվածով քեզ մի նոր վերք կպատճառե, բայց մահացու վերք, և յուր դիակը՝ փախչելու միջոցին՝ կթողնե քո վրանի դռանը։ Մինչև ասկա՞յ են պատահել այսպիսի դեպքեր։

— Շատ են պատահել,— ասաց Հիվանդը հանդարտ կերպով։— Բայց յես արդեն դիտեմ, թե ի՛նչ պատդամավորություն է։

— Վո՞րտեղից դիտես։

— Ահա՛ այն տեղից։ Նայեցե՛ք դեպի այն բարձրավանդակը։— Նա ձեռքը մեկնեց դեպի ծածանվող դրոշակը։

Ամենքն աչքերը դարձան դեպի այն կողմը։

— Դրոշա՞կ է,— ասացին միաձայն։

— Գիտե՞ք, ի՛նչ դրոշակ է։

— Զարդ չեն յերևում, բավական հեռու յե։

— Սրտաճաք մեջ վոչ վոք ինձ հետ կարողացել չե մրցել։ Ճիշտ բաղդովին պարտ տեսնում եմ։ Սուլթանի մի դրոշակ, արծվաթև վիշապի նշանով, այժմ ծածանվում է իմ վրանի դիմին։ Դա Արծրունիների տոհմային դրոշակն է։ Ինձանից հետո, բացի իմ մորից, վոչ վոք իրավունք չունի պարզել այդ դրոշակը։ Հանկարծ նա հայտնվում և մեր հանդեպ՝ ահա՛ այն բարձրավանդակի վրա։ Անշուշտ նրա մոտ՝ յուր դորքերի բազմությամբ կանգնած է իմ մայրը։ Ցնծ պատդամավորները, անտարակույս, նրա կողմից են դալիս։ Ցնծ պետք է ընդունեմ նրանց։

Ամենքի վրա տիրեց խորին ապշություն, խորին չվոթություն հետ։

Հիվանդը տոտոիկ բարկությունից, կարծես, նոր ուժ առացավ։ Մի նոր, անսպասելի ցավ վանեց նրա վերքի անտանելի ցավը, ինչպես մի թույն հալածում է մի այլ թույնին։ Նա դլուխը բարձրացրեց բարձից, նստեց անկողնի մեջ։ Սպասավորներից մեկը ձեռց նրա ուսերի վրա մեծաքայլ թևեր վերարկուն։ Հետո դարձավ դեպի յուր շրջապատողները այս խոսքերով.

— Տեսնո՞ւմ եք, հարդելի տյա՛րք, մի որ բացակա դտնվեցա բանակից, մի դիշեր դլուխս բարձի վրա դրի, և դուք չիսարոդացաք նկատել, թե ի՛նչ է կատարվում ձեր բանակի շուրջը։ Մենք պաշարված ենք թշնամիներով։ Իմ ամենամեծ թշնամին իմ մայրն է։

Ներկա յեղողները ամոթից դլուխները ցած խոնարհեցրին, խոսք չեյին դտնում պատասխանելու։ Նա դարձավ դեպի անեկապետը, կրկնելով.

— Ասա՛, թող դան պատդամավորները։

Վրանի մուտքի առջև հայտնվեցան յերեք պատկառելի ծերունիներ, հագինդամ, թավամազ մորուքներով, և վոտքից դլուխ պինված։ Նրանց խորին կերպով դլուխ տվին, մնացին վոտքի վրա։ Մերոժանը ճանաչեց յերեքին էլ։ Դրանք Արծրունյաց տան հին դորապետներից եյին։

Տեսնելով նրանց, սրամտությունը սկսեց խեղդել մեծամիտ, անձնաբեր իշխանին, վոր յուր մոր պատդամավորները դտնում եյին նրան վիրա-

վոր, և անկողնի մեջ դրած: Բայց, մինչդեռ ժամանակ, նրա հիշատացած, ատարացած սիրտը դեռ մի ներքին բաբախում, յերբ յերևան յեղան ծանոթ դեմքեր, ծանոթ մարդիկ, վոր հարուցին նրա մեջ վաղեմի մոռացված հիշողություններ...

— Ներս համեցեք,— ասաց նրանց սիրալի ձայնով:— Նստեցե՛ք:

Ներս մտան, չոքեցին վրանի մուտքի կողմում, հիվանդի անկողնի առաջև:

Հիվանդը ձեռքը տարավ դեպի յուր մոտ դրած սուն ոշարակը, լցրեց արծաթյա բաժակի մեջ, մոտեցրեց դողդողուն շրթունքներին, և ցամաքած կոկորդը զովացնելուց հետո, դարձավ դեպի յեկվորները այս խոսքերով.

— Բարով եք յեկել: Հաչա ունեմ, վոր ձեր գալուստը բարի նպատակի համար կլինի:

— Ե՛վ բարի և՛ անբարի, ո՛վ քաջդ Մերուժան,— խոսեց պատգամավորներից մեկը:— Դու, անտարակույս, ճանաչում ես մեզ: Սկոյալ քո մանկությունից ծանոյել ենք այն հոյակապ տանը, վորի պահակը լինելու պարծանքն ես վայելում դու: Մեր յուրաքանչյուրի մարմնի վրա հարյուրավոր վերքի նշաններ կան, վոր ստացել ենք բաղմաթիվ կռիվներում, վոր մեր կյանքի ընթացքում՝ մղել ենք այդ տան փառքն ու պատիվը միշտ անարատ պահպանելու համար: Վերջին ժամանակներում մեզ մոտավ չար վոգին, խանգեց մեր սիրելի աշխարհի դործերը: Մեր դաշտերը վոդողվեցան արյունով, մեր քաղաքները ծածկվեցան մոխրով: Ներքին կռիվը, ներքին պատերազմը, ընդհանրականից դարձավ մասնավոր— ընտանեկան: Վորդին ապստամբվեցավ հոր դեմ, հայրը սկսեց խողխողել յուր դավակներին: Մայրը մերժեց վորդուն յուր դուրքն ու սերը, իսկ վորդին այլևս պատիվ չդրեց մոր յերախտիքներին: Լացն ու կոծը, արտասուքն ու անլռելի հառաչանքը յեղավ վիճակը այն թշվառ դերդաստանների, ուր թագավորում եր մշտական սեր և յերջանկություն...

Հիվանդը դարձյալ ձեռքը տարավ դեպի սուն ոշարակը, զովացրեց բորբոքվող կոկորդը: Յերունի դինվորը շարունակեց.

— Այսպիսի մի յերկպատակություն ընկավ և՛ Արծրունյաց թագավորության մեջ, ո՛վ քաջդ Մերուժան: Դու, ի հարկե, չես մոռացել այն աղետալի ընդունելությունը, վոր ցույց տվին քեղ քո քաղաքացիները, յերբ մտար Հաղամանկերտ և մոտեցար քո նախահարց տան պատկառելի շեմքերին: Քո մայրը քո հոր դիակը վիակից քո առջև: Քո կինը յերեսը շուռ տվից քեղանից: Քո զավակները ասացին քեզ՝ դու մեր հայրը չես: Ցնվ դու կորացրուիր հետ դարձար ա՛յն հինավուրց տան շեմքերից, վորի տերն եյիր և իշխանը: Քո ընտանիքը նայեց քո յետևից, և արտասվեց... Նա նայեց քո յետևից, վորպես սգավոր բարեկամներն ու տոհմականները նայում են դերեզմանը դրվող դագաղի յետևից... Աճվում և հողը և մեկին դուրը հավիտյան ծածկում և հանգուցյալին յուր սիրելիների աչքերից...

Քեզ նուիրեցին մեռած և թաղուած հայրենիքը, ո՛վ քաջդ Մերուժան։ Մեռա՞ծ բարոյապես, մեռա՞ծ հոգեպես... Ցնծ այդ ևր այն ազգային պատճառը, վորով ծածկուած ևր ամբողջ Հայաստանեայքը։ Դոներդ պատած էին սև պատառաններով. պատերից քաշէ էին ընկած սև դրօշակներ։ Դու մեռա՞ծ էիր և քո քաղաքացիներն համար։ Դու ուրացել էիր ա՛յն սուրբ հրոնը, վոր պաշտում էին քո հայրերը։ Դու թշնամացել էիր ա՛յն յիշողութեա հետ, վորի վերկարար ազդանշից ծնանդ էիր առել։ Դու դաւաճանել էիր ա՛յն հայրենիքին, վորի հաստատութեան համար քո հայրերը արիւն էին թափել։— Այո՛, դու կորա՞ծ էիր քո ընտանիքի և քո քաղաքացիների համար։ Բայց քեզ չէ՞ծածկէց նրանց աչքերից վո՛չ հողը և վո՛չ դերեզմանի մթութիւնը, այլ այն ամօթը, այն նախատինքը, և այն անջնջելի արատը, վորով ծածկուած էիր դու, և վորով ծածկէցիր Արծրունիների պայծառ անունը...

Նա ձեռքը տարաւ դեպի հինգհնարով պատած ճակատը, չէնց թալատաղ Հանքերը, վոր, կարծես թե, խանդարում էին նրա բոցավառ աչքերի հրաշը, և ապա շարունակեց.

— Քո ընտանիքի արդար վրդովմունքին, քո քաղաքացիների իրաւացի բարկութեանը՝ դու պատասխանեցիր վրէժխնդրութեան կատաղի անգթութիւններով, ո՛վ քաջդ Մերուժան։ Փոխանակ ղղջալու, փոխանակ դարձի դալու, փոխանակ բարութեամբ հրկին դրաւելու նրանց սերն ու հարդանքը, դու սկսեցիր բռնութեան դործ դնել։ Անխնա կերպով այրեցիր Վանի քաղաքը, վոր քեզ և քո հայրերին ևր պատկանում։ Ցնծ անողորմ ձեռքով դեպի դերութիւն վարեցիր քո սեփական հպատակներին։ Ի՞նչ ևր նրանց հանցանքը, ի՞նչով էին մեղաւոր քո քաղաքացիները։ Նրանո՞վ, վոր չը հնազանդվեցան քեզ, նրանո՞վ, վոր չկամեցան ուրացող սեր և խչխան ունենալ։

Նա ձեռքը մեկնեց դեպի բարձրաւանդակի դագաթին պարզած դրօշակը, ասելով.

— Նայի՛ր, ո՛վ քաջդ Մերուժան, ահա՛ այնտեղ ծածանվում է քո նահապետ դրօշակը։ Ներա մոտ կանդնած է քո մայրը— ամբողջ Վասպուրականի սիրելին։ Նա դնում է քո առջև յերկու բան՝ յուր մայրական սերը և յուր հավատարիմ հպատակների զէնքը։ Վորը կամենում ես, ընտրի՛ր։ Նա, հանուն քրիստոնեութեան, հանուն ծնողական դիութեան, պատրաստ է ներել քեզ, պատրաստ է մոռանալ բոլոր ապերասալի անցքերը, յեթե դու կդրկես պարսից բանակը, կվերադարձնես հայոց դերիներին, և հաշտութեամբ վերջ կտաս նոքին պատերազմին։ Եթե այս բոլորը կատարես դու, այն ժամանակ նա յուր մայրական ձեռքը կմեկնե քեզ համբուրելու, դու դարձյալ կլինես Վասպուրականի տերն ու իշխանը, և քո ժողովուրդը ամենայն հնազանդութեամբ կխոնարհվի քեզ։ Իսկ յեթե վոչ, թո՛ղ կռիվը, թո՛ղ դարձյալ արյունը վճռե ապագայ կամքը։

Բոլոր ներկա դանվողները բարկութեունից իրանց աստմունքը կրճատ-

նում էլին և զարմանում էլին Մերուժանի համբերության վրա։ Հայր-Մարդպետը մի առանձին արհամարհանքով հարցրեց.

— Շա՞տ դորք և բերել յուր հետ վասպուրականի տիկինը։

Գատռամալորը խեթ կերպով նայեց նրա յերեսին, պատասխանելով.

— Նա բերել է յուր հետ վասպուրականի ամենալավ աղամարդկերին, ո՛վ Հայր-Մարդպետ։ Նրա հետ են և՛ արաբացոն մոկացիք, նրա հետ են և՛ յերկայնաղեղ սասունցիք, նրա հետ են և՛ սարսափելի ռշտունցիք։ Նրա հետ է և՛ մեր պաշտելի տուրք խաչի զորությունը։

Հայր-Մարդպետը խնդաց, նկատելով.

— Վասպուրականի տիկինը յուր շուրջն է հավաքել յուր դրացի բոլոր լեռնական խառնիճաղանճներին։

Մերուժանին սաստիկ տհաճություն պատճառեց Հայր-Մարդպետի մեջամտությունը և մանավանդ նրա արհամարհանքը դեպի յուր մայրը։ Մերուժանը մեծ հարդանք ուներ դեպի յուր մայրը, վոչպես մի թշնամի, վորի հետ կարելի յեր մաքառել, բայց աննկարելի յեր ատել։ Բացի դրանից, Մերուժանը՝ յուր խստասրտությամբ հանդերձ՝ դիտեր գնահատել բարձրը, վեհը և աղնիվը։ Այդ եր պատճառը, վոր մի առանձին քաղցրությամբ պատասխանեց.

— Գովում եմ մորս նախանձախնդրությունը, վոր այսպես անձնանվիրաբար պաշտպանում է յուր աշխարհի չհերը։ Գովում եմ և քո համարձակախոսությունը, ո՛վ քաջդ Գուրգեն, վոր այդքան ոնկեղծաբար հաղորդեցիր ինձ մորս պատգամները։ Հույս ունեմ, վոր իմ պատասխանն էլ նույն անկեղծությամբ կհաղորդես մորս։ Գնա, ասա՛. յեթե նա իմ համառ մայրն է, յես էլ նրա համառ վորդին եմ։ Աշխարհի կաթը ծծողը՝ պետք է վոր փոքր ի շատե աշխարհի հատկություններ ունենա։ Թո՛ղ նա չկորցնի ինձանից սոհմային հատկությունները։ Ես չեմ կամենում պախարակել, թե վո՛րքան նրա վարմունքը ինձ հետ աննկարելի յեր, յերբ յես մուտք գործեցի Հադամակերտ, և վոչ պիտի աշխատեմ չատագովել, թե վո՛րքան իմ խոնած ընթացքը ուղիղ է։ Այդ բացատրությունների ժամանակը անցել է արդեն։ Միայն այսքանը կասեմ, յեթե Արծրունիները մի դավելի կողմ ունեն,— դա է նրանց հատատամտությունը։ Թո՛ղ նա չկշտանա խախտել իմ կամքը, չկշտանա ինձ թուլամտության մեջ նետել։ Ինչ վոր ըստ կըսել եմ, պետք է անպատճառ ի կատար ածեմ։ Վոչինչ չեն կարող փոխել իմ միտքը։ Թո՛ղ վորպես ցանկանում է նա, կռիվը վորոշն մեր մեջ, թե վո՛րն է աստուծո անորենությունը։

— Բայց դու հավա՛տդ ես, ո՛վ քաջդ Մերուժան։

— Իսկ իմ զինվորները բավական առողջ են, ո՛վ քաջդ Գուրգեն։

Գատռամալորները վոտքի յելան, ասելով.

— Թեղ նույնպես ցանկանում ենք կատարյալ առողջություն։

Նրանք դուրս ավին և հեռացան։

Զարդուչակ դրոշակը, վոր այնքան սարսափ ձգնց պարթից բանակի վրա, պարզած եր այն բլրաձև բարձրավանդակներից մեկի գագաթին, ուր գտնվում էին Մերուժանի ձեռքով հրդեհված Նախճավանի ավերակները։ Դժբախտ քաղաքը դեռևս ծխում եր կրակի ու մոխրի մեջ։ Իսկ դրոշակը նրա հանդեպ ծածանվում եր, վորպես մի արդարհատս մխիթարություն։ Նա յուր բարձր դիրքից էշխում եր պարսից բանակի վրա։ Իսկ ահարկու բանակը բռնել եր տավարակի ամբողջ սարածությունը, վոր գտնվում եր բարձրավանդակի ստորոտում։

Դրոշակի մոտ կանգնած եր Վասպուրականի տիկինը և մեծ անհամբերությամբ սպասում եր յուր պատգամավորներին պատասխանին։ Նա վոտքից ցցուրա հազած ուներ ազավորի սև զգեստ։ Այս հագուստը կրում եր նա, սկսյալ այն որից, յերբ յուր վորդու, Մերուժանի, ուրացության վոդբալի բոթը լսեց։ «Նա մեռա՛վ լինի համարց... ասաց առաքինի տիկինը խորին հառաչանքով, և այն որից ուխտեց՝ չմերկևնալ այս հագուստը, մինչև վորդու կատարելիք չարագործությունները յուր բարությամբ չդարմանե։

Նրան շրջապատել էին յուր հետ յեկած լուսականների նահապետները, վորոնց թվումն էին՝ Սամվելը և Ծերունի Արբակը։ Գառանի Արտավազդը անհանգիստ կերպով այս կողմ ու այն կողմ եր ընկած, և յուր անելիքը ինքն էլ չգիտեր։ Տիկնոջ մի կողմում կանգնած եր Ռշտունյաց Գարեգին նահապետը, իսկ մյուս կողմում՝ Մոկաց Լահրամ և Սասնո Ներսեհ իշխանները։

Ջորքը բռնել եր զանազան դիրքեր։ Վասպուրականցիք տեղավորված էին այն բարձրությունների վրա, ուր գտնվում եր իրանց տիկինը։ Ռշտունցիք թաղնվել էին քաղաքի այգիների մեջ, կտրելով միակ ճանապարհը, վոր տանում եր դեպի Ցերնջակ և Ջուղայի կամուրջը։ Սասունցիք փակել էին այն ճանապարհը, վոր տանում եր դեպի Արտաշատ։ Մոկացիք բարձրացել էին Արաքսի կողմի բլրակների վրա։ Ցեղ ացպես, պարսից բանակը չորսկողմից պաշարված եր թշնամիներով։

Վերադարձան պատգամավորները, հայտնեցին Վասպուրականի տիկնոջը վորդու պատասխանը։ Տիրուհյան մեջին ամպը անցավ պատկառելի դեմքի վրա, և նրա հեղ աչքերը լցվեցան արտասուքով։

— Ցեռ ուրիշ պատասխան չեյի սպասում,— ասաց տառապյալ մայրը ցավալի ձայնով։— Հրա՛չք կլիներ, յեթե նա դարձի գար։ Բայց նա հիվա՛նդ է... նա վիրավո՛ր է...

Վերջին խոսքերի մեջ լսվեցավ մայրական սրտի զարն կսկիծը՝ յուր բոլոր հրաբորբոք վշտերով։ Նա դեռ սիրում եր վորդուն, նա դեռ խնայում եր վորդուն։ Նա պատրաստ եր ամեն ինչ տալ, միայն թե առանց հսկվի, առանց արյան՝ կարողանար հաշտվել յուր խղճի և յուր ղեպյմունքների հետ։ Նա պատրաստ եր՝ մինչև անգամ թողնել վորդուն յուր կամքին, յուր մոլորություններ մեջ, յեթե նրա վարմունքը ուրիշ շատ հա-

զրավոխրների կերտման պատճառը չդառնար։ Բայց նա տանում էր յուր հետ մի ահագին դերություն, տանում էր անհետացնելու Նրանց Պարսկաստանի խորքերում։ Այդ գերիներից շատերը ավելորդ հպատակներն էին, որոնք ծառայել էին նրան ամենայն հավատարմությամբ, որոնց պիտում էր նա յուր հարեղատ զավակների նման։ Ի՞նչպես կարելի էր զրկվել նրանցից։ Այս դառն մտածություններն մեջ տարուբերվում էր վշտալի կինը, երբ Ռշտունյաց Գարեգին նահապետը դարձավ դեպի նա, ասելով.

— Մենք չպիտի խնայենք նրան, որ չխնայեց յուր հարեղատին— իմ հնոջը, և նրան կախ տվեց Վանա միջնաբերդի աշտարակից։

Նա հիշեցրեց դժբախտ Համազասպուհու ցավալի վախճանը։

— Մենք չպիտի խնայենք նրան,— ավելացրեց Մոկաց Վահրամ իշխանը,— որ այնքան քաղաքներ մոխիր դարձրեց, որ այնքան վանքեր ու եկեղեցիներ կործանեց, որ մեր սիրելի թագավորին և մեր պաշտելի թագուհուն աքսորել տվեց, և հայոց աշխարհը ծածկեց կրակով ու արյունով...

— Արյունը պետք է արյունով լվանալ,— ընդհատեց Սասնո Ներսեհ իշխանը։

— Բեվ չարությունը՝ չարությամբ,— մեջ մտավ պատանի Արտավազդը։ Սամվելը լուռ լսում էր։

Նրա մոտ կանգնած էր ծերունի Աբրահամը, որ մի առանձին ահաճությամբ նկատեց.

— Շատ ել որ դուք կամենաք արյունը ջրով լվանալ և չարությունը՝ բարությամբ, կարծո՞ւմ եք, դրանով կխափանվի չարը։

— Ավելի կհաստատվի յուր չարության մեջ,— խոսեց Սամվելը։— Նա հրեշավոր Նեռն է, որ հայտնվել է մեր խաղաղ աշխարհում, յուր հետքերելով սով, սրածություն, մոլորություն և ավերմունք։ Ինչ որ կարող էր կատարել, արդեն կատարել է։ Ձղջում և ապաշխարանք չկա Նրա համար։ Նա տակավին պիտի շարունակե յուր ապականությունները մեր աշխարհում։ Ի՞նչպես խնայել Նրան, որ մի մազի չափ տեղիք չե թողել, որով կարելի լիներ նրան ներել։ Վոչինչ չարիք պակաս չե մնացել, որ չե կատարել նա։ Միթե կարելի՞ է խնայել Նրան։

— Ես նույնպես չպիտի խնայեմ Նրան,— ասաց սգավոր մայրը, և յուր վշտալի աչքերը դարձրեց դեպի զայրացած իշխանները։— Ես հույս ունեյի, որ իմ մոլորյալ որդին պատիվ կդներ մոր արտասուքին և կդարձներ չար ճանապարհից։ Այդ նպատակով ուղարկեցի Նրա մոտ իմ պատգամավորներին։ Ես հույս ունեյի, որ նա դոնե այժմ կդղյակ յուր մեղքերը։ Բայց, ինչպես յերևում է, ամեն ղղայմանք՝ դեպի յուր ծնողը, դեպի յուր աղգն ու հայրենիքը՝ մեռած է Նրա սրտում։ Այդ պատճառով Նա մեռած է և ինձ համար։ Ես կցավիմ Նրա վրա, բայց յերբեք չեմ ափսոսա։ Նա այլևս իմ որդին չե։ Իմ որդիքը, իմ սիրելի զավակներն են

այն բաղմաթիվ դերիններըը, վոր այժմ չղթայակապ դրած են մեր առջև, պարսից բանակում: Ցնվ վորպես դժբախտ Հռաքելը մի ժամանակ աուղի մեջ եր, մխիթարություն չեր դառնում յուր վորդիների կորստյան պատասուլ,— նույնպես և յես, իբրև մի վորդնկորուլս մայր, հանգստություն չպիտի ունենամ, մինչև իմ զավակներին աղատված չտեսնեմ: Այդ դերիները իմ զավակներն են, ձեր զավակներն են, և մեր հայրենիքի զավակներն են: Մենք պետք է աղատենք դրանց: Մենք կաղատենք վո՛չ միայն մարմիններ, այլև հոգիներ: Եվթե դրանց առնելու լինեն Պարսկաստան, այնտեղ պատրաստ են այդ թշվառների համար Շահուհ արքայի դահիճները, վոր կամ կսպանեն՝ կամ արեղաձին յերկրպադություն տալ, կամ նահատակվիլ: Այն որից, վոր ճանապարհ ընկանք, մենք ուխտեցինք աղատել դերյալներին: Մենք ուխտեցինք նահատակել թշնամուն մեր յերկրի սահմանների վրա: Տերը ոգնեց մեզ, և մենք անվտանգ սնյանք ամեն վորձանքներից, մինչև հասանք այստեղ: Թշնամին ահա՛ մեր վոտների ներքո յե: Այժմ ձեր քաջություններն և կամքն, ո՛վ իշխաններ, կատարելու մեր ամենի սրտագին բաղձանքը, վոր սիրոլ կամքն և:

— Թո՛ղ որհնյա՛լ լինի սիրոլ կամքը, թո՛ղ վհատավորվի՛ նրա անունը,— ձայն տվին վոգևորված իշխանները:

Մինչ այստեղ աուլն վոգևորության մեջ եյին, այնտեղ, պարսից բանակի յերկնադույն վրանում, Հայոց աշխարհի ընդհանուր յերկպատակության վոգին— Մերուժանը, դեռ դռնվում եր յուր չքնդ, մեռաքսյա անկողնում: Ցուր մոր պատգամավորներին ճանապարհ դնելուց հետո, յերկար նա տատանվում եր մի տեսակ անդորային տագնապի մեջ, վորի նմանը՝ մինչև այն որ՝ յերբեք չեր ծանրացել նրա ամուր սրտի և անվեհեր հոգու վրա: Ցուր բոլոր խաղը պիտի կորցներ մի քանի րոպեյում: Նրա հետ պիտի կորցներ և յուր ամբողջ բախտը: Ա՛յն վայրկյան վատահներից հետո, ա՛յն անհնարին հաջողություններից հետո, հանկարծ հաղթված լինել և հաղթված լինել մի պատանից,— այս միտքը սարսափելի կերպով վրդովեցնում եր նրան: Նա յերբեք չեր վհատվի, նա յերբեք այսպիսի մտատանջություններ մեջ չեր ալեկոծվի, յեթե առողջ լիներ: Բայց նա հիվանդ եր և տկար: Հանձնել յուր բախտը և յուր զորքերի բախտը յուր զորապետներին, վորոնց վրա կատարյալ վստահություն չուներ,— այս միտքը նա բոլորովին վտանգավոր եր համարում: Գուցե, յեթե մնացած լիներ Մամիկոնյան իշխանը, նա այդ հոգսերից ազատ կլիներ: Բայց զրկվեցավ յուր ամենալավ բարեկամից և քաջ գործակցից, վորին միայն կարող եր ամենայն վստահությամբ հավատալ: Ուրեմն ինչ պետք եր անել:

Հայր-Մարդպետը, Կարեն զորապետը, և պարսից մյուս տասիճանավորները, դեռ նստած եյին նրա անկողնի մոտ, և անհամբերությամբ սպասում եյին նրա հրամաններին: Նա զարձավ դեպի յուր տասիճանավորները այս խոսքերով:

— Այժմ յես բոլորովին հառկանում եմ Սամվելի՝ թե՛ բարեկամական

պատրվակով դալուստը մեզ մոտ և թե՛ նրա անդուր վարմունքը ճիշտ նաց կղզում»: Նա չկամ մեզ մոտ հետաքրքրելու մեր բանակի դրությունը, կշռելու մեր ուժերը, և նախ քան մեր դեմ պատրաստված պատերազմի սկսելը, վոչնչացնելու մեր զորքերի առաջնորդներին, վորպեսզի, նրանք անդուլ մնալով, ավելի հեշտ լիներ հաղթություն չահել: Ճես այժմ վոչինչ տարակուսը չունեմ, վոր նա սպանել և յուր հորը, և ինքը այս բոպեիս դանվում և իմ մոր մոտ:

— Դու կարծում ես, վոր Սամվելը քո մոր խորհրդո՞վ եր հնարել յուր դավադրությունը,— հարցրեց Հայր-Մարդպետը:

— Ճես այդ չեմ կարծում: Իմ մայրն այնքան աղնիվ կին և, վոր յեթե խաբուսիկ միջոցներով մարդիկ չեր ուղարկի մեզ դավ դնելու, և վոչ Սամվելը հանձն կառներ մի այսպիսի ստորություն: Բայց, այսուամենայնիվ, յես աներկբա յեմ, վոր նրա դալուստը մեզ մոտ, յեթե վոչ իմ մոր խորհրդով, այլ, անտարակույս, նրա գիտությամբ և յեղել: Սամվելը յեկավ մեզ մոտ յերկու նպատակով. նախ, աշխատել համոզելու յուր հորը և ինձ, վոր մենք թողնենք մեր սկսած ճեռնարկությունը և միանանք ուխտապահ նախարարների հետ, վորոնք հավատարիմ են մնացել իրանց թագավորին և հին դրությանը: Իսկ յեթե չհաջողվի նրան համոզել մեզ, այնուհետև դործ դնել յուր ատրը: Այդպես ել արավ նա: Նա յեկավ մեր մոտ՝ վորպես նպատակի դոհ, և յես չեմ կարող չնախանձվիլ նրա անձնադոհության յեռանդով, վոր հատուկ և միայն բարձր, քաջազնական հոդիներին: Ճեթե յես նրա նման մի քանի մարդիկ ունենայի, շատ բախտավոր կլինեյի...

Նա դարձյալ ընկղմվեցավ խորին մտածություններ մեջ: Բայց նրա վերջին խոսքերը վիրավորեցին Հայր-Մարդպետին: Վիրավորվեցան և պարսից ատիճանավորները:

— Հիվանդության ջերմը քեղ տենդային դրության մեջ և դրել, Մերուժան,— ասաց Հայր-Մարդպետը յուր ամուր, խրոխտալի ճայնով:— Դու քո խոսքերը չես կշռում: Մի՞թե մի ոհաս, յերազամոլ յերիտասարդի չափ համարձակ չունե՞նք քո աչքում: Դու հանդիստ կա՛ց քո մտաքոյա փափուկ անկողնում, և թո՛ղ այդ բժիշկները դարմանեն քո վերքը: Մենք կգնանք և քո թշնամիների հետ կվերջացնենք մեր դործը: Մի՞թե պարսից արքայից արքայի քաջ, կրթված զինվորները պիտի դադան մի քանի բուռն վայրենի լեռնականներից առջև:

— Գնացե՛ք,— պատասխանեց հիվանդը դայրացած ճայնով:— Հրամայեցե՛ք թմբուկները հնչեցնեն, և զորքը պատրաստվի կռվելու:

Հետո դարձավ դեպի յուր սենեկապետը.

— Ասա՛, թող պատրաստեն իմ ձին և իմ զենքերը:

Հայր-Մարդպետը սաստիկ ստրջացավ, վոր տվեց հիվանդի վրդովմունքին: Բռնեց նրա ձեռքը, աղաչելով.

— Ինայի՛ր քեզ, Մերուժան: Դու հիվանդ ես և բավական ուժոր: Դու

բոլորովին կհյուծես և խոպան կվնասաս քո անձը: Այժմ հանգիստ կաց քո վրանում, և դրանք այսօր զորքի հրամանատարությունը թող մեղ: Դու կատարելապես վերազորած կլինես քո աստիճանավորներին, քեզ այդ ծառայությունից կղրկես նրանց:

Գարսիկ աստիճանավորները նույնպես սկսեցին թախանձել, որ նա դադար չտա յուր վրանից, և յուրաքանչյուրը հայտնում էր յուր դժգոհությունը, թե ինչո՞ւ նա թերահավատություն ցույց է տալիս իրանց ծառայությունները:

— Շնորհակալ եմ ձեր կարեկցության՝ և մանավանդ ձեր հավատարմության համար,— պատասխանեց հիվանդը:— Բայց ես այժմ բոլորովին առողջ եմ զգում ինձ: Իմ զինվորները այնքան սովորած են ինձ, որ չեթե մեռնելու լինեի, դարձյալ կպատվիրեի ձեզ, որ իմ դաղարը տանեիք իմ դունդերի առջևից: Դա անպատճառ կխրախուսեր և քաջալերություն կներշնչեր նրանց:

Բնավ իրավ, պարսից բանակը արդեն սաստիկ հուզման և խորին իրարանցման մեջ էր: Ամեն մի զինվոր դիտեր, որ պաշարված է թշնամիներով: Առաջին րոպեն դուժեցրեց ջորեպանները և ձիապանները, որ բանակից հեռու դրսեռներ էին արածացնում: Նրանք հենց որ նկատեցին թշնամու մոտենալը, խուճապ հավաքեցին բոլոր անասուններին, և սկսեցին փախչել դեպի բանակը: Այդ ժամանակ արևը դեռ չէր ծագել, դեռ բավական մութն էր:

Թշնամու հարձակման րոպեը անցել էր և դերիների կարավանի մեջ: Բայց նրանց համար րոպե չէր, այլ վերկուբայն ավելորդ էր: Այդ խղճալիների ուրախությունն ու արտասուքը սահման չուներ: Շղթայակիր գերիների նման, ցնցում էին յերկաթյա կապանքները և, իրանց աղոթավոր հայացքը դեպի յերկինք դարձնելով, անհամբերությամբ սպասում էին աստուծո ուղարկած ազատիչներին:

Այդ միջոցին հրապարակի վրա հայտնվեցավ սովետակ ձիավորը՝ — Մերուժանը: Դարձյալ վհատանձ չքոմ, դարձյալ նրա ահարկու դեմքն ու դրաճը փայլում էին դյուցազնական փառքով: Ամենքին էլ նշմարվում, որ հիվանդ է: Նրա մխիթարական յերևույթը ընդհանուր վոգևորություն ներշնչեց բանակի մեջ: Զորքը սիրում էր նրան: Զկար մի զորապետ, որ նրա նման առատաձեռն կերպով վարձատրեր զինվորի քաջությունը: Նա յուր զորքի լավ բարեկամն էր և սոսկալի հրամանատարը:

Զորքը արդեն կազմ ու պատրաստ էր հրապարակի վրա: Նա դարձավ դեպի զինվորները մի քանի քաջալերական խոսքերով: Նրա ձայնը հնչում էր յուր նախկին ամբությամբ, նրա խոսքերը հեղվում էին վորոշ բացատրած սրտի աղդու քարողներ:

— Զինվորնե՛ր,— ասաց նա,— դուք մինչև այսօր ամենայն բավարարությամբ արդարացրիք այն բաղձալի հուսերը, որ դրել եր ձեր վրա՝ մեր ամենիս տերն ու թագավորը՝ արևելահայոց արքայից արքան, յերբ նա

յուր հայրական որհնութիւնքեմբ ձեզ ճանապարհ դրեց Տիգրանից դնելի Հայաստան: Ձեր քաջութիւնների փառաւոր արդիւնքն է՝ այն ահարկու բերդերն ու ամրոցները, որ գրաւեցինք մենք Հայոց յերկրում: Ձեր քաջութիւնների փառաւոր արդիւնքն է՝ այն հզոր քաղաքները, որ կործանեցինք մենք Հայոց յերկրում: Ձեր քաջութիւնների փառաւոր արդիւնքն է՝ այն անթիւ գերութիւնը, և այն անքաւ ոսկին ու հարստութիւնը, որ մեզ հետ պիտի տանենք Պարսկաստան: Պայծառ Արամազդը ողնեց մեզ, և մենք հրաշալի հաղթութիւններով պիտի թողնեցինք Հայոց յերկիրը, որ չուտով մեզ եր պատկանելու: Մեր բանակը դրած եր այդ յերկրի սահմաններն մոտ, և մի քանի որից հետո պետք է ճանապարհ ընկնէինք: Բայց հանկարծ անակնկալ թշնամին փակեց մեր ճանապարհը: Մենք այժմ պաշարված ենք կատաղի լեռնականների ահագին բազմութեամբ: Մեր բոլոր վաստակը, մեր բոլոր փառքն ու պարծանքը կորած կհամարվի, յետեն չըպատժենք հանդուգն թշնամուն, յետեն չխորտակենք նրա խոլական ամբարտաւանութիւնը: Ճեռ հույս ունեմ, ով քաջ զինվորներ, որ դուք, որպես միշտ, նույնպես և այսօր ցույց կտաք ձեր անպարտելի զորութիւնը: Ճեռ մեծ հույս ունեմ, որ դուք թշնամու դիակների վրայով ձեզ ճանապարհ կհարթեք, որով կատանաք պայծառ Արամազդի որհնութիւնը և մեր աստվածատուր արքայից արքայի շնորհը, որի խոնարհ ծառաներն ենք մենք ամենքս:

Զորքը միաձայն վորոտաց.

— Թո՛ղ որ՛նյա՛լ լինի պայծառ Արամազդը, թո՛ղ փառավորվի՛ արընչնափայլ արքան:

Այնտեղ յուր քաջերին վոգևորում եր մայրը, այստեղ— վորդին: Այնտեղ պատրաստվում եյին աղատելու դերյալներին, այստեղ պատրաստվում եյին ի տար աչխարհ վարելու: Կռիվը մոր և վորդու մեջ եր: Մայրը առաջնորդում եր Հայոց յերկրի անձնանվեր գավակներին: Վորդին առաջնորդում եր Հայոց յերկրի արյունարբու թշնամիներին: Մեկը բարձրացրել եր Հիսուս Քրիստոսի փրկարար խաչը: Մյուսը Զրադաշտի ճաճանչավոր արեգը: Կռռնը մարտնչում եր կռռնի հետ, դյուցազնները՝ դյուցազանց հետ:

Թեև Մերուժանը շատ նպաստավոր կարծիք չուներ պարսից բարձր աստիճանավորների մասին, վորպեսզի եր կարեն զորապետը, վորոնք առաջ եյին անցել ավելի տոհմային և արտոնական առավելութիւններով, քան թե անձնական արժանավորութիւններով,— բայց, այնուամենայնիվ, պարսից ստորաստիճան սպաների կարգում կային խելոպես քաջ զորագլուխներ և լավ մարդիկ: Դրանց վրա լիահույս համարմունք ուներ Մերուժանը: Միայն ւլլհավոր դժվարութիւնը նրանումն եր, վոր բանակը դրած եր մի այնպիսի տեղում, վորը ավելի ժամանակավորապես ոթևակելու իլևանի հարմարութիւն ուներ, քան թե ռազմական ամրութիւններ: Դա, ի հարկե, չեր կարող վհատեցնել Մերուժանին, յեթե նրան չսպառ-

նար մի այլ վտանգ,— ներքին վտանգ։ Այդ եր պատճառը, վոր յերբ պետք եր զորքը ասպարեզ հանել, նա հրամայեց՝ ակղբում պաշտպանողական դիրք բռնել։

Հայր-Մարդպետը սկսեց ապստիկ հակառակել նրան, պնդելով, թե պետք և ուղղակի հարձակում գործել և ցրվել Թշնամուն։

— Շատ ամոթ կլիներ,— ասաց նա,— վոր մենք մեր վահաններով ծածկվենք, և համբերությամբ սպասենք, վոր Թշնամին յուր նետերը արձակեր մեր վրա։ Նրանք մեզ, իրավ և, պաշարման դրության մեջ են դրել, բայց շատ դժվար չե՝ խնդույն ևլի նրանց պաշարման դրության մեջ վտակել։ Թշնամու ուժերը բաղկացած են ըստ մեծի մասին հեծելակներից։ Բավական և մեզ համար հրամայել մեր քաջ հեծելազորի բաղմությանը՝ հեռանալ բանակից, և չուրջանակի պտշարել նրանց։

— Ի՞նչպես հեռանալ բանակից, Հայր-Մարդպետ,— պատասխանեց Մերուժանը հուզված ձայնով։— Մեր ամենավտանգավոր Թշնամին հենց մեր բանակի մեջումն և։

— Ի՞նչ Թշնամի։

— Ահա՛ այդ գերիների բաղմությունը։ Դրանք կդառնան դեպի մեզ...

— Ինչո՞վ։

— Իրանց չղթաներով կսկսեն ջարդել իրանց պահապանների գլուխները։

— Եթե մի այսպիսի բան լինեն, մենք կհրամայենք նրանց կոտորել բոլորին։

— Վա՞ր մեկին կոտորել։ Նրանց Թիվը մեր զինվորներից պակաս չե։

Հայր-Մարդպետը մտածության մեջ ընկավ։ Մերուժանը պնդեց յուր կարծիքը, ասելով.

— Մենք յերկու դործ ունենք կատարելու. մի կողմից պետք և ղրկենք գերիներին, վոր նրանք չսպասեցնեն մեր դեմ, մյուս կողմից՝ պետք և կռվենք նորին Թշնամու հետ։ Այդ պատճառով, պաշտպանողական դիրքը, դրնե սկղբում, ավելի նպատակավոր և մեզ։

Հայր-Մարդպետը դարձյալ մնաց յուր համոզման մեջ, բայց չհակառակեց։

Մինչ այստեղ այս վիճաբանություններն մեջ եյին, Վասպուրականի զինվոր հետևյալ իշխաններն ու նահապետները, առանց խորհրդի, առանց նախամտածության, հանձնեցին իրանց մեյն աստուծո կամքին և, Մերուժանի մոր աչքը համբուրելով, առին նրա որհնությունը, հետո յուրաքանչյուրը գլխից գնալի յուր զորքը։ Տիկնոջ մոտ մնացին միայն Արծրունյաց տան գրանիկներն ու ծառաները, և մի քանի խումբ գինված հաղամարտիկներ, վոր չհեռացան նրանից։

Նա նստած եր ճանապարհորդական փոքրիկ թախտի վրա, և չորս ոգեներ, չորս ձողերից բռնած, պահել եյին նրա գլխի վրա մի փառավոր տմպհոլանի, վոր զարդարած եր վոսկեթել վուշերով ու ծո-

պերով։ Արհեստակը որդուն սկսել էր այրել, և որվա ատեր հետաքրքրեց անտանելի յեր դառնում։

Հանկարծ տիկնոջ ձերին ընկավ պատառի Արտավազդը, վոր, վախթաթիվելով նրա պարանոցին, սկսեց աղաչել.

— Թո՛ղ տուր, մայրիկ, յես էլ գնամ նրանց հետ... յես էլ կուվեմ...

— Դու հանդիստ կաց, զավակս,— պատասխանեց տիկինը, փայփայելով նրա վոսկեզօծ ատղավարտը։— Դեռևս ի՛նչ քո գործն է կուիվը։ Ձերը ատտուծով կմնձանաս, այն ժամանակ շատ առիթներ կունենաս կուվելու։

Պատանու վառվռուն աչքերում հայտնվեցան արտասուքի կաթիլները։

— Ցնա ասի՞ց եմ սակաս,— ասաց նա արտնջալով։— Ինձ միշտ կրկնում են, թե պիտի մեծանա՛ս... Հիմա խո յերեխա չեմ... բավական մեծ եմ...

Տիկնոջ վշտալի աչքերում նույնպես հայտնվեցան արտասուքի կաթիլները։ Անմե՛ղ յերեխա, մտածեց նա, մինթե քնո՛ղ էլ տանջում է հայրենիքի դժբախտության ցավը, մինթե դո՞ւ էլ զգում ես, թե ի՛նչ չարիքներ են կատարվում մեր աչխարհում...

— Հանդիստ կա՛ց, զավակս,— կրկնեց նա, համբուրելով անգուսպ պատանու գունաթափ յերեսը։— Դու մնա՛ ինձ մոտ, սիրելիս, այսուհետից կաղոթենք և հնազանդ, թե ի՛նչպես են կուվում ուրիշները։

Արտավազդի բարկությունից ուռած շրթունքները դողդողացին։ Փքեքը եր մնում, վոր նա թոդներ բերանից յուր զաղտնիքը, ասելով, թե ինչո՞ւ յեն իրան միշտ տղայի տեղ դնում, յերբ վոր նույն խակ տիկնոջ վորդին, պարսից զորքերի հզոր հրամանատարը, վոր այժմ վիրավոր է,— դա կատարվել և յուր նետերի չնորհիվ։ Բայց նա ծածկեց մանկական սրտի հրաբորբոք վրդովմունքը, և մնաց տիկնոջ մոտ։

Տիկնոջ տխուր հայացքը դարձավ դեպի պարսից բանակը, ուր մի քանի ժամից հետո պիտի վճռվեր բյուրավոր դերյալների վիճակը։ Դրանք հայր ունեյին, մայր ունեյին, տուն և զավակներ ունեյին։ Հազարավոր սրտեր պիտի ուրախանային նրանց աղատությամբ, հազարավոր սգավորներ պիտի մխիթարվեյին նրանց վերադարձով։ Այդ միտքը լցնում եր առաքինի կնոջ հոգին անսահման յերանությամբ, և յուր ալեհասկ սրտի ամենաջերմ բաբախմունքով սպասում եր կռվի վախճանին։

Բայց, միևնույն րոպեյում, նրա սգավոր աչքերի առջև ներկայանում եր վորդին,— հիվանդ, վիրավոր վորդին։ Հիվա՛նդ եր նա մտքմնապես, հիվա՛նդ եր նա և հոգեպես։ Ի՞նչը կարող եր բժշկել նրան։ Ի՞նչը կարող եր ապաստաժ սիրտը փափկացնել, և պարսկական սխոտերով ու մորուքներով վարակված հոգին՝ կրկին դեպի ուղղություն վերածել։

Վորդու հիվանդության պատճառների վերաբերությամբ դեռ ստույգ տեղեկություններ չուներ նա։ Սամվելը այդ մասին դեռ վոչինչ չեր ասել։ Նրան հայտնել եյին այսքանը միայն, թե վորսորդության միջոցին, վիթորկի ընդհանուր խառնության ժամանակ, սխալմամբ աքճակած նետի

յն հանդիպել: Իսկ Մամիկոնյան իշխանի սպանման մասին դեռ վոչինչ չգիտեք:

Մոր մի կողմում կանգնած եր նույն պատմամավորը, վորին ուղարկել եր վորդու մոտ: Դարձավ դեպի նա, հարցնելով.

— Դու լավ նայեցի՞ր նրա վրա, Գուրգեն:

— Ի՛նչպես չէ, տիկին: Համարյա մի ժամ տևեց մեր խոսակցությունը: Բոլոր ժամանակը միշտ նայում եյի նրա վրա:

— Շա՞տ եր մաշված:

— Վա՜չ այնքան: Միայն բավական դունաթափվել եր:

— Նա իմ մասին վոչինչ չհարցրե՞ց:

— Վոչինչ: Ամենևին:

— Ցավ յուր կնո՞ջ, և յուր զավակների՞ մասին:

— Դարձյալ վոչինչ:

— Ֆարասի՛ր բա,— բացականչեց տատապլյալ մայրը, ազավոր ձյուների չարժելով:— Նա ամեն ինչ մոռացել է... նա ամեն ինչ ուրացել է...

Կրկին դժբախտ կինը ընկղմվեցավ ախուր մտածությունների մեջ, կրկին դառն արտասուքը սկսեց հոսել վշատալի աչքերից:

Մյուս անդամ դարձավնա դեպի հավատարիմ ղորապետը, հարցնելով.

— Դու ինչո՞ւ չղնացիր կռվելու, Գուրգեն, դու ինչո՞ւ մնացիր այստեղ:

— Ցավս մնացի, վոր իմ ձեռքի տակ յեղած մարդիկներով պահպանեմ այդ դիրքը, ուր դանվում ես դու, տիկին,— պատասխանեց ծերունի զորապետը:

— Դու կարծում ես, վոր նա կհարձակվի և մո՞ր վրա:

— Անպատճառ: Նրա առաջին քայլը կլինի՝ դրավել այդ բարձրավանդակը և քեզ, տիկին, դերի վերցնել: Ձևուքս կկտրեմ, յեթե այդպես չանեն:

— Ի՞նչ պիտի շահե ինձ դերի վարելով:

— Շատ բան, տիկին: Նա քեզ համարում է յուր վտանգավոր ախոյանը և թշնամին:

Մեջ մտավ պատանի Արտավազդը.

— Ցավը նա կհամարձակվի վտանգ դնել այդ բարձրության վրա, յեթե առաջինը կլինեմ, վոր նրա վրա նետեր կարձակեմ:

Տիկինը դրկեց սրբազան վրդովմունքով դայրացած մանկության և համբուրեց:

Նախճավանի դեսի կողմից, սև, թուխպի նման, ոտաջ եր գալիս մի մեծ ամբոխամունք, և վո՛րքան մոտենում եր, ա՛յնքան աճում եր, ա՛յնքան սոսափանում եր: Նա դուրս յեկավ դեպի ամիերը ծածկող ծառաստանի մեջից, և արագ ընթացքով չարժվում եր դեպի պարսից բանակը: Դա

լեռնականները մի բազմություն էր, որը բաղկացած էր թեթև զինված ազգնավորներից և ռիդավորներից: Նրանց առաջնորդում էր Ինչոուկյաց Գարեգին նահապետը: Ցերբ մերձեցան, բանակից բավական հեռավորության վրա կանգ առին, մնացին անշարժ:

Մերուժանի սրծիվ հայացքը դարձավ դեպի Քշնամին: «Սկսեցինք... մտածեց նա և, դառնալով դեպի յուր մոտ գտնված համհարզներից մեկը, հրամայեց.

— Սար կարեն զորապետին, որը մի քանի դունդ քաջ ազգնավորներով և ռազմակիր ռիդավորներով դնա այդ կողմը:

Հրամանը իսկույն կատարվեցավ:

Միևնույն ժամանակ, որպես մի արագահաս փոթորիկ, որը առթում է քամու ուժգին հռռանքից, և յուր կատաղի ընթացքի մեջտեղում՝ որթում և, ավերում և ամեն մի հանդիպած խոչընդոտություն,— այսպիսի մի ահավորությամբ հայտնվեցան մի քանի խումբ ձիավորներ: Թմբուկների վրա, նախընթաց դռռումն ու դղրդումը՝ կարապետում էին հանդուգն արշավանքին: Նա սլացավ և, կայծակի արագությամբ ճեղքելով պարսից բանակի մի ծայրը, անցավ: Նա անցավ, ավերն աղմկելով և խռովության մեջ դնելով ընդարձակ բանակը, քան թե վո՛րևէ վնաս պատճառելով, և իսկույն անհետացավ մերձակա բլուրների յետևում:

Մերուժանը նայում էր:

— Իսկական հաջող կերպով կատարվեցավ խաղը,— ասաց նա ժպտալով:— Կցանկանայի դիտենալ, թե ո՛վ էր այդ համարձակ ձիավորներից առաջնորդը:

— Սամվելը,— պատասխանեցին նրան:

— Սամվե՞լը,— կրկնեց Հայր-Մարդպետը, դլուխը խորհրդավոր կերպով շարժելով:— Վատ չէ՛... Նա յուր հորից ընծա առացավ պարսից Շապուհ արքայի պարգևած վոսկեզուն նժույգը: Այժմ նույն նժույգով աղմկում է Շապուհ արքայի բանակը... Այդ նժույգը՝ յուր հպարտ ճերմակ աստղով՝ հայտնի էր, որպես բարեհաջող հատկություններով ժամանած մի ձի: Բայց նա հաջողություն չնորհեց վո՛չ թե հորը, այլ որդուն...

Սամվելի յերևույթը, իրավ, այն աստիճան ուժգին ցնցում պատճառեց պարսից ծանր, լայնանիստ բանակին, որ ամենքը առաջին իրարանցման մեջ ընկան:

— Բայց ո՞ւր կորավ նա,— հարցրեց Հայր-Մարդպետը:

— Ինչո՞ւ չես տեսնում,— պատասխանեց Մերուժանը:— Նա գաղթյալ կհայտնվի, և դուցե շուտով կհայտնվի:

Մերուժանը դեռ ամենայն սառնասրտությամբ ապասում էր Քշնամուն, ապասում էր, որ նա բավական մոտենա: Նրա արագավազ լուռեները սաբաժվել էին դեպի ամեն կողմ, դիտում էին Քշնամու շարժումը, և իսկույն լուրեր էին բերում:

Նրա սուր ուշադրությունից չվրիպեցավ, որ Սամվելը ճեղքից զարմից բանակի մ'ին ծայրը, որ կողմում դանվում էր զերիների կարավանը։ Դա առանց նպատակի չէր։ Նա հասկացավ, և խնդուն կարդաղրեց, որ գինվորները ամուր չղթայով չրջապատեն զերիներին, որպեսզի նրանք քնամաս հետ հաղորդակցություն չունենան։ Բայց չրջապատող չղթայի մեջ մնաց մի մարդ, որ դանդաղ քայլերով դեպի զերիները մեջ, և յերբեմն դադաղողի կերպով ակնարկություններ էր անում զերիներին։ Ամենը աչքը կարող էր այդ ծպտյալ անձնավորության մեջ ճանաչել Սամվելի հայանի վարպետին՝ — Մալխասին։

Կռիվը, բոլորից առաջ, սկսվեցավ դեպի Արտաշատ տանող ճանապարհի կողմից, ուր մանր բլրակների յետևում թաղնված էին սասունցիք։ Պարսից գինվորներին առաջնորդում էր Հայր-Մարդպետը։ Նրա ամեհի նժույգը վազում էր, ծալվում էր յուր վիթխարի հեծյալի անհերթեթ ծանրության տակ, որի ամբողջ մարմինը պատած էր պղնձով ու պողպատով։ Նրան մոտյան հանդիպացավ Սասնո Ներսեհ իշխանը, որ ձայն արձակից խորին արհամարհանքով։

— Աբշակ թագավորի կանանոցի ներքինապետությունը թողնելով, ո՛վ Հայր-Մարդպետ, այժմ պարսից գինվորների առաջնո՞րդ ես դարձել։ Դա, իրավ, բավական ոտարոտի յե թվում ինձ։

— Ինչո՞ւ, ո՛վ քաջդ Ներսեհ,— պատասխանեց ներքինին յուր խըռպոտ ձայնով։— Դերների վիճակությունը յերբեմն վատ չե լինում։

— Բայց կանանոցապարտ ներքինու դործը՝ պետք է կանանց հատարակության հետ լինի, ուր սիրում է մեղկ քնքշությունը, և քնավ տեղիք չունի սրյունուտ գինքը։

— Փորձենք, և դու կհամոզվես, որ կանանոցապարտ ներքինին կարող է դործ ունենալ և քաջ սասունցիների հետ։

Վերջին խոսքերի միջոցին, յերկու ախոյանները, իրանց ծանր նիզակները ուղղելով, նժույգների բոլոր թափով հարձակվեցան միմյանց վրա։ Հայր-Մարդպետի նիզակի ծայրը դիպավ Սասնո իշխանի յերկաթապատ կողքին, և քերելով անցավ։ Իսկ Սասնո իշխանի նիզակը ուղիղ դիպավ Հայր-Մարդպետի պղնձակուռ կուրծքին և, որպես ապառաժի վրա ջարկվելով, բոլորովին փշրվեցավ։ Ձինակիրը խնդուն ավեց նրան մի այլ նիզակ։ Նրանք հեռացան միմյանցից, կրկին հարձակում դործելու համար։

Զորքը, յերկու կողմից էլ, դեռ անշարժ կանդնած, անհամբերությամբ սպասում էին իրանց առաջնորդների մենամարտության վախճանին։

Ցերկրորդ հարձակումը կատարվեցավ ավելի սաստիկ կատաղությամբ։ Այս անդամ յերկուսի նիզակներն էլ հետ նահանջվեցան և, դիպչելով պողպատյա լայն վահաններին, չեղվեցան նպատակից։ Բայց նրանց վիթխարեն՝ նժույգների դրահապատ կուրծքերը՝ ուժգին շառաչմամբ ջարկվեցան միմյանց։ Հայր-Մարդպետի ձին դղրդվեցավ, ընկրկվեցավ, և ապա ծնկներն վրա ցած ընկավ։ Այդ միջոցին Սասնո իշխանը ուղղեց յուր նի-

պակը դեպի ներքինի կոհորդը: Բայց ձին խիստ վեր բարձրացավ, և հարվածը մնաց ապարդյուն:

Այսպես յերկու հզոր ախոյանները յերկար մաքառում էին միմյանց հետ, և յերկուսն էլ մնացին անպարտելի, մինչև Սասնո իշխանը ձայն տվեց.

— Քոստովանում եմ, ո՛վ Հայր-Մարդպետ, վոր Արշակ Քաջավորի կանանոցի կնամարդին, միևնույն ժամանակ, և՛ քաջ մարտիկ է:

Կռիվը սկսվեցավ յերկու կողմի զորքերի մեջ: Պարսից սպարապետները շարմանալի հարձակումներ էին գործում: Սասունցիք իրանց յերկար սրերով Քաջում էին նետերի ամբողջ տարափ: Լեռնցին, բնության քաջությունը, մարտնչում էր կրթված, կանոնավորված արհեստյան հետ: Տաղը լցված էր քանձր ոգիով: Զենքերի և զրահների բախումն ու շառաչյունը խլացնում էին ամեն ձայն: Արյունը հոսում էր վերմ վտակներով...

Մինչ այստեղ կռիվը յուր սարսափելի գործողության մեջն էր, բանակի մյուս կողմում, իրանց Գարեգին նահապետի առաջնորդությամբ, մարտնչում էին ոչտունցիք: Պարսից զորքերին կառավարում էր կարեն զորապետը:

Այդ միջոցին, Մերուժանը, չրջապատված յուր քիվնապահներով ու համհարզներով, մի արագաշարժ ճախարակի նման, անդադար սլանում էր յերբեմն այս, յերբեմն այն կողմը, դիտելու կռվի ընթացքը: Դեպի վո՛ր կողմը և դնում էր նա, կարծես, յուր հետ տանում էր արհավիրք և սոսկում: Պարսից զինվորները, նրա ներկայությամբ վոգևորվելով, հրաշքներ էին գործում:

Նա նկատեց, վոր կարեն զորապետի կողմը վոչ մոք նահանջվում էր, և ոչտունցիք արդեն սկսել էին հաղթական աղաղակներ բարձրացնել: Իսկույն սպիտակ նժույգը քշեց դեպի այն կողմը և մտավ նետերի վոհորկի մեջ: Մեծ յեղավ նրա քաջ՝ զարմանքը և քաջ՝ վրդովմունքը, յերբ հեռվից տեսավ Ծերունի Աբրահիմին, վոր նիզակը ձեռին, բոլորովին առույգ յերիտասարդի նման, մաքառում էր մի պարսիկ սպայի հետ: Նա գոչեցավ դեպի կարեն զորապետը, ասելով.

— Տեսնո՞ւմ ես, կարեն, քո սպանած Ծերունի Աբրահը այժմ հարություն է առել:

Կարենը ամոթից չվոհմեվեցավ, պատասխանեցավ: Մերուժանը հիշեցրեց նրա առավոտյան հայտնած սուտասուտությունը, վորով պարծենում էր, թե ինքը «Իշխանաց կղզում» սպանեց Ծերունի Աբրահին:

— Կալանավորեցեք այդ խաբեբային,— հրամայեց նա:— Արյուն աբքայից աբքայի զորապետին՝ վո՛րքան նվերվի չէ յերկչոտ լինել, ա՛յնքան ավելի նվերվի չէ սուտասուտ լինել:

Հրամանը խիստ կատարվեցավ:

Մերուժանի հայտնվելը նոր ուժ և նոր վոգի ներշնչեց պարսից զին-

ՙլորներին, ՙլորոնք անընդհատ քաղցրությամբ սկսեցին հետ մղել կատաղի թշնամուն:

Այդ միջոցին Մերուժանի և Գարեգինն Նահապետի ՙլոխերիմ աչքերը հանդիպեցին միմյանց:

— Մերուժան,— ձայն տվեց Գարեգինն Նահապետը,— այդ յերիտուրք անդամն է, ՙլոր մեր աշխարհի դժբախտ հանդամանքները մեզ ընդհարում են միմյանց հետ: Մի անգամ վան քաղաքում, իսկ այժմ Նախճավանի ավերակների մոտ: Այն ժամանակ դու առյծ եյիր, սպանել ուզեցիր իմ հինգը, և ՙլախար իմ ձեռքից: Այժմ հիմանդ ես, չգիտեմ՝ ինչպես պիտի վարվենք ինձ հետ:

— Իսկույն կտեսնես,— պատասխանեց Մերուժանը արհամարհանքով: — Այլևս հարցնելու պետք չկա:

Վերջին խոսքերի հետ՝ նետվեցավ նա Ռշտունյաց Նահապետի վրա, ՙլորը մի չարժում անգամ չդրժեց, ասելով.

— Ցեղս հրաժարվում եմ: Կռվել հիմանդի հետ՝ մինուճար և, ՙլորպես կռվելը դիակի հետ, ՙլորքան և արյունապարտ լիներ նա ինձ:

Մերուժանը սասանիլ զգացուցավ:

— Ո՛վ Ռշտունյաց տեր,— դղրդեց նա,— քո մեծահոդությունը ավելի միթաղորական և, քան թե քո նվազկի հարվածը, յերեն քեզ հաղորդելու լիներ վայելել այդ վայրկը: Այո՛, ճշմարիտ և, իմ հրամանով սպանվեցավ քո կինը, և սրբազան վրեժխնդրությունը պարտք և դնում քեզ վրա՝ պահանջել ինձանից քո կնոջ արյունը: Ցեղ հենց այդ իսկ պատճառով, դու պետք և չհրաժարվես ինձ հետ կռվելուց:

Նա կրկին հարձակում գործեց: Բայց մեջ մտան պարսից զինվորները, դառալով.

— Մեր արյունը թո՛ղ սահման դնեն քո և Ռշտունյաց Նահապետի մեջ: Կռիվը այժմ մեզ և պատկանում:

Մերուժանը հետ քաշվեցավ:

Կրկին սկսվեցավ կռիվը յերկու կողմի զինվորների մեջ, կրկին լսելի յեղավ զենքերի մահաբեր բարախմունքը: Վտանգ նորանոր, վտանգ սուսերամերկ, խողխողում եյին միմյանց, Ռշտունյաց յեռնարնակները պաշտպանվում եյին քաջաբար, քմխոտապատ վահաններով: Իսկ պարսիկները՝ երանց ծանր, յերկաթապատ ասպարներով:

Մերուժանը, կարդելով Կարեն զորապետի վոխարին յուր քաջ համհարզներից մեկին, և թողնելով կռիվը յուր սուսերի բորբոքման մեջ, ինքը դիմեց դեպի Նախճավանի ավերակների կողմը, ուր՝ մի բլրաձև բարձրավանդակի վրա՝ դանվում եր նրա մայրը: Նրան հետևում եյին մի քանի դաշնդ լավ զինված ձիավորներ: Թանձր փոշին, մոխրադույն ամպերի նման, պատել եր այն ճանապարհը, ՙլորտեղից անցնում եր նրա ահարկու հեծելազորը: Նա առաջ եր շարժվում ամենայն փութով, առանց կանդ առնելու, և առանց մի տեղ հանգստանալու:

Գուրգենը, վասպուրականի տիկնոջ ծերունի զորապետը, հեռվից նը-կատեց Մերուժանի արագընթաց արշավանքը դեպի իրանց բռնած դիրքը, և խոհուն չտապեց տիկնոջ մոտ: Զարմացական ժպիտը յերեսին, ալևոր դլուխը շարժելով, ասաց նա.

— Տեսնո՞ւմ ես, տիկին, յես չսխալվեցա: Ահա Մերուժանը դալիս և դեպի մեզ: Գալիս է՝ մոր և յուր սեփական հազաուկների հետ կռվելու: Ցեթե նրան հաջողվի հաղթություն տանել, անտարակույս, կտանի և քեզ, տիկին:

— Ո՞ւր կտանե,— հարցրեց տատապյալ կինը վշտալի ձայնով:

— Գաբակատան: Այնտեղ, ուր այժմ Անուշ բերդի մեջին նկուղների մեջ հնծում և հայոց թագավորը: Այնտեղ, ուր աքսորվեցավ հայոց թագուհին: Կտանե նրանց մոտ...

— Մեջե այդ ասոիճան անգութ կլինի՞ նա:

— Նրա անգթությունը սահման չունի, վորպես և սահման չունի նրա մեծամտությունը:

Մայրական դութը՝ և անադորույն վորդու պատճառած վիշտը՝ փոփոխակի կերպով սկսեցին ալեկոծել դժբախտ կնոջ սիրտը: Արտասուքը աչքերում, դարձավ նա դեպի ծերունի զորապետը, ասելով.

— Թո՛ղ որհնյալ լինի ասոուծո կամքը: Ինչ վոր անորինել և նա, չե կարող փոխել անզոր մահկանացուն: Թո՛ղ դա ապերախտը: Կռվեցնք նրա զորքերի հետ, բայց յուր վրա բնավ դենք չբարձրացնենք:

Տհաճության մռայլը անցավ ծերունի զորապետի խորշոմած դեմքի վրա, և նրա խորխմաստ աչքերը վառվեցան սրտմտության բոցով: Բայց զսպելով յուր հուզմունքը, բավական մեղմ կերպով նկատեց.

— Մենք չենք կռվում ցանկանա, տիկին, ախրատան լինել, յեթե նա սպառնած չլիներ ամեն ինչ, վոր սուրբ և մեր ամենից համար: Բայց մարանչում և մեր դոյության դեմ, մեր կրոնի դեմ և մեր պետության դեմ:

Տիկինը պատասխանեց.

— Քրիստոնեական առաքինությունը պարտք է դնում մեր վրա, Գուրգեն, չա՛տ և չա՛տ անգամ ներել մոլորյալին:

Ծերունի զորապետը դժկամակությամբ լռեց:

Այնտեղ կանգնած եր պատանի Արտավազդը, և խորին վրդովմունքով շոուժ եր տիկնոջ պատվերները: Նա չկամբերեց, ասելով.

— Իսկ յես նետեր կարձակեմ նրա վրա: Ցեվ այժմ դիտեմ, թե վո՛րպես կարձակեմ...

Փոքր եր մնում, վոր նա խոստովանելեր յուր առաջվա սխալը, վոր վատաբանեցավ «Իշխանաց կղզում», յերբ տակավին ծանոթ չեր Մերուժանի զաղանի դրահավորության մասին:

Տիկինը սխրությամբ նայեց զայրացած պատանու վրա և վոչինչ չասաց: Նրա մանուկ սրտում յես եր դալիս մանուկ Հայաստանի վրեժխնդրության վոգին:

Մերուժանը յուր ձիավորներին բաղմութեամբ արդեն մոտ եր այն բարձրավանդակի սառոյտին, վորի վրա դանվում եր նրա մայրը: Նա մի արագ պտույտ տվից, անցավ դեպի այն կողմը, վորտեղից մեկ գառիվեր ուղին տանում եր դեպի մոր դանված տեղը:

Մերուժի Գաւրիլնը, Թաղնելով տիկնոջ մոտ մի խումբ թիկնապահներ, առնց յուր հետ մնացյալ վաստուրականցիներին, և չտատով դիմից դեպի Թշնամին: Կռիվը տեղի ունեցավ Մերուժանի ճեռքով հրդեհված Նախճվանի ավերակների մոտ: Վաստուրականցիք, մի քանի րոպեյում, նրա կործանած քաղաքի քարերից՝ կանդնեցրին նրա դեմ մի ամուր պատնէշ: Թաղնվեցան պատնէշի յետևում, սկսեցին նետեր արձակել: Վոմանք պարսեռներով նետում էյին քարեր: Նրա ավերակ դարձրած քաղաքի բերդրնները նետում էյին դեպի նրա գլուխը: Մերուժանը, արհամարհելով այդ բոլորը, յուր ձիավորների խումբ բաղմութեամբ առաջ եր ընթանում: Նրա ձիավորները զինված էյին նիզակներով և սրերով մինչև: Իրրև պատսպարան, կրում էյին և ասպարներ: Գետք եր չատ մոտ տարածութեան, վորպեսզի նրանք դործ դնէյին իրանց զենքերը: Այդ պատճառով աշխատում էյին մերձենալ: Բայց վաստուրականցիք ա՛յն աստիճան կատաղած էյին, վոր վո՛չ միայն ամեն կողմից դանակոծում էյին ձիավորներին, այլ, մոռանալով իրանց տիկնոջ պատվերը, չէյին խնայում և նրա վորդուն:

Նիզակն ու սուրը, նետն ու տատասրը, չատ կարելի յեն, մինչև անգամ չազդէյին Մերուժանի ամրակուռ, պղնձապատ մարմնի վրա: Նա խնամ վարպետութեամբ զրահավորել դիտեր: Բայց հաղարավոր պարսեռներով արձակած քարերը, վոր ռումբերի նման տեղում էյին նրա վրա, կարող էյին մի քանի րոպեյում, բոլորովին քարկոծել նրան և ծածկել խճերի կույտի ներքո: Այդտեղամենայնիվ, հրամայեց յուր ձիավորներին՝ պատռել պատնէշը և առաջ անցնել:

Ձիավորները անընդհատ հարձակմամբ դրոհ տվին պատնէշի վրա, սկսեցին մի կողմից քանդել, մյուս կողմից կռվել: Ինքը Մերուժանը նետվեցավ կռվի փոթորկի մեջ: Այդ միջոցին մի քար դիպավ նրա ձիու ճակատին: Ձին ցնցվեցավ, ղողղոցաց, և ուշաթափ լինելով, ցած գլորվեցավ: Նա ընկավ այն կողքի վրա, վոր կողմումն եր Մերուժանի վիրավոր վոտքը: Ցավ խառնութեան մեջ, Մերուժանը ամենևին չզդաց, թե ինչ հատարվեցավ յուր վերքի հետ: Փախթեը թուլացավ, և վերքը սաստիկ չփվելով դառնին, արյունը սկսեց հոսել...

Մայրը հեռվից նկատեց վորդու ընկնելը: Ամրողջ աշխարհը մթնեց նրա աչքերի առջև: Վողբալի ողողակներով ցած իջավ յուր դահավորակից, և կուրծքը կռնելով, սկսեց վազել դեպի վորդին: «Ա՜ռ ողո՛րմ... անդո՛ւթ մարդիկ... ճիչ եր արձակում նա, և ողողոքուն քայլերով չարունակում եր վազել: Ներան մեծ դժվարութեամբ կարողացան պահել, հասկացնելով, թե ձին և ընկել և վոչ վորդին:

Մայրը հանպատրաստակ, յերբ տեսավ, վոր ձին, հուշի գալով, կրկին վեր բարձրացավ, և Մերուժանը զարձյալ նստեց նրա վրա։

Բայց արյունը նրա վերքից մեղմ հոսանքով դնում եր և, թամբից իջնելով, ճերմակ ձիու ճերմակ փորի վրա արդեն գծել եր մի քանի բարակ, վոլորուն վտակներ։ Թիկնապահներից մեկը նկատեց այդ, բայց կարծելով, թե ձին ընկնելու միջոցին ինքը վիրավորվեցավ, այդ պատճառով վոչինչ չհայտնեց։

Մերուժանը կանդնելուց հետո, կուխվը ավելի սաստկացավ։ Նրա ձիավորները արդեն պատրաստել եյին պատնեշի մի մասը և անցել եյին մյուս կողմը։ Վասպուրականցիք հետ եյին քաշվել, դեռ չարունակում եյին հեռվից քարեր ու նետեր արձակել։ Այդ միջոցին Մերուժանի համհարզներից մեկը նրա ուշադրությունը դարձրեց մի այլ յերևույթի վրա, ասելով.

— Բանակի մեջ խռովություն կա...

Մերուժանը նայեց դեպի այն կողմը։

— Այդ յես սպասում եյի... մռնչաց նա, և բոլորովին դունաթափվեցավ։— Այնտեղ կռվում են դերբենները...

Նա թողեց մորը, չսպասեց դեպի դերբենները։

Սամվելը, վոր առաջին անգամ մի խումբ ձիավորներով հեղքից պարսից նակի այն ծայրը, վորտեղ դռնվում եր դերբենների կարավանը,— յերկյորդ անգամին վերադարձավ նա ավելի սուվար խմբով։ Զարմանալի արագությամբ, պատառելով դերբենների շրջապատող պինվորների շղթան, չնչահավի կերպով նետվեցավ նրանց կարավանի մեջ։

— Հասավ փրկության րոպեն,— աղաղակեց նա։— Զարդեցե՛ք, փրկե՛ցեք ձեր կապանքները։

Գերբենների յուրաքանչյուրը, վորպես մի մարմնացած վրեժխնդրություն, հարձակվեցավ պահապան պինվորների վրա։ Վամանք կռվում եյին բռունցքներով, վոմանք իրանց վոտների շղթաներով։ Շատերը վաղեցին դեպի բանակը, խորտակեցին վրանները, և նրանց սյուները մահակների նման ձեռքում բռնած, հարձակվեցան պինվորների վրա։ Ամբողջ բանակը ապին ու վրա յեղավ։ Ինչպես միայն Սամխոնյան իշխանի շինականները վրանին, ուր դրած եր Սամվելի հոր դագաղը։ Ընդհանուր կատաղությունը սահման չուներ։ Կռվում եյին տղամարդիկը, կռվում եյին և կանայքը, կռվում եյին ծերերը, կռվում եյին և մանուկները։ Նրանց թվում դռնված յեկեղեցականներն անգամ խառնվեցան արյան և կոտորածի սոսկալի գործողության մեջ։ Բյուրավոր զերյաններն բյուրավոր ձեռքերը բարձրացած եյին իրանց պերիչների վրա։

Սամվելը աներևակայելի քաջությամբ չանթում եր յերբեմն այս, յերբեմն այն կողմը։ Նա այնպիսի սրընթաց թափով անցնում եր հուղված, աչկոծված կարավանի միջով, վորպես հրեղեն կայծակը անցնում է ցամաք չամբուտների միջով։ Յերբ կոտորածը արդեն հասել եր յուր սար-

ամենայն ահավորությամբ, յորմէ արյունը արդեն հոսում էր հորդ վտակներով, այդ ժամանակ ձայն արձակեց նա.

— Բավական է: Սկսեցի՛ք այժմ ձեր չղթաներով կապել ձեր գերիներին: Առաված դրանց մատնեց մեր ձեռքը: Այժմ մենք գերի կվարենք դրանց գնալ մեր յորդիները:

Մերուժանը վրա հասավ այն ժամանակ, յորբ ամբողջ բանակը սոսկալի խառնության մեջ էր, և բոլոր գերիները ապստամբված, կատաղի հերոսով մարտնչում էին: Բայց նա չկարողացավ մոտենալ ապստամբներին, վորովհետև նրա առաջը կտրեց Մոկաց Վահրամ իշխանը, վոր դեռ անշարժ սպասում էր Արաքսի թաղեթաղումների մեջ:

Մոկացիք այնպիսի մի անակնկալ կերպով դուրս էկան Մերուժանի հանդեպ, վոր նրա զայրացած զնդքն վրա յերևաց սովորական ժպիտը, այն դառն, աղետավոր ժպիտը, վոր հայտնվում էր տագնապի րոպեներում, և նա ծիծաղելով ձայն արձակեց.

— Հենց դո՛ւք էիք պակաս, ո՛վ Մոկաց լեռների դևեր ու սատանաներ:

— Կախարդները յերկյուղ չունեն դևերից ու սատանաներից,— պատասխանեց Վահրամ իշխանը:

Ցերկուսի լուսանքներն էլ հատարակաց կարծիքի մեջ հիմք ունեյին. Մոկացիք հայտնի էյին վորպես դիվահարոտ ժողովուրդ, իսկ Մերուժանը՝ վորպես կախարդ:

Բայց նրա կախարդություններն այս անգամ մնացին բոլորովին ապարդյուն...

Արևը վաղուց արդեն մտել էր, դիշերային մթությունը պատել էր պատերից խորտակվածք, քայքայված բանակատեղը: Խաղաղ էր դիշերը և լուռ: Միայն յերբեմն լսելի էյին լինում հաղթական աղաղակներ: Կռիվը մի քանի տեղերում տակավին շարունակվում էր:

Այդ միջոցին Մերուժանը խելագարի նման չղիտեր՝ վո՛ր կողմը դնալ: Նրա ականջներին զարկում էյին բոթաբեր աղաղակները, նրա սիրտը տրոփում էր սոսկալի խառնությամբ, և նա դեռ հույս ուներ, վոր կարող է վերադարձնել կորած փառքը:

Նրա թիկնապահները, նրա մտերիմ համհարզները, դիշերային մթության մեջ, կռիվների ընդհանուր չփոթության ժամանակ, կորցրել էյին նրան: Նա չէր նկատում, վոր մնացել է միայնակ:

Բայց նա ղգում էր մի տեսակ հոգնություն, մի տեսակ ապանիչ թուլություն: Ջղում էր, վոր առողջ դրության մեջ չէ: Գլուխը պտտյվում էր, աչքերի առկեը ավելի և ավելի մթնանում էր: Հաղիվ-հաղ կարողանում էր իրան պահել ձիու վրա: Արբեցածի նման չղիտեր, թե ի՛նչ է կա-

տարվում յուր հետ: Զին տանում եր նրան յուր կամքով: Սանձը արդեն ընկել եր նրա ձեռքից:

Վերջը վողեսպառ և ուժաթափ ելած մարմինը վոչ առ վոչ դեպի մի կողմն թեքվեցավ, և նա դլխիվայր կախ ընկավ ձիու կողքից: Նեղացյալ ձին կանդ առավ և մի քայլ անգամ չփոխեց: Նա դեռ այնքան տիրապետում եր իրան, վոր զդաց, թե վոտները մնացին ասպանդակների մեջ: Ձերկար մաքառում եր, մինչև կարողացավ վոտները աղատել ասպանդակներից: Ընկավ խոտերի վրա: Զին չհեռացավ նրանից:

Մի քանի րոպե մնաց ուշաթափության մեջ, անշարժ, վորպես դիակ: Զին դունչը սիրությամբ տարավ դեպի նրա դլուխը, և սկսեց յուր տամուկ ռունդներով շոշափել նրա ճակատն ու յերեսը, տեսնելու, թե ինչ պատահեց սիրելի տիրոջ հետ: Նա դարձյալ հուշի յեկավ:

Կատարված իրողությունները ներկայանում եյին նրան, վորպես մի խառնաչփոթ յերազ: Տեսնում եր թշնամու մեին դունդերը, տեսնում եր արյուններով սրերի ահարկու փայլը, լսում եր նրանց վայրենի դոռումն ու դոչյունը: Տեսնում եր և մոր սպառնական դեմքը...

«Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից»... բացականչեց նա և դլուխը վեր բարձրացրեց ընկած տեղից:— «Ցես չեմ կամենում տեսնել քո աղետավոր յերեսը»...

Նա մնաց նստած: Գլուխը սաստիկ բորբոքման մեջ եր, խոկ սիրտը, կարծես, այրում եյին կրակով: «Ա՛խ, յերեք մի կաթիլ ջուր լիներ»... ձայն արձակեց խորին հառաչանքով, և սկսեց թույլ մատներով խարխափել յուր շուրջը: Նրա ձեռքը շոշափեց մի ինչ-վոր հեղուկ, մի ինչ-վոր թացություն: Ուրախացավ: «Ահա՛ ջո՛ւր»... բացականչեց նա, և աշխատում եր ափովը վեր առնել հեղուկը: Բայց Թանձր հեղուկը մխայն թրջեց նրա ձեռքը, վորը սարսափ դեպի բոցավառ շրթունքները, և սկսեց կատաղի ագահությամբ լիզել:

Նա լիզում եր յուր սեփական արյունը, վոր լճացել եր գետնի վրա...

Սկսյալ այն րոպեից, յերբ մոր վրա արշավելու միջոցին ցած դլորվեցավ նրա ձին, սկսյալ այն րոպեից, յերբ բացվեցավ նրա վերքը, արյունը անընդհատ կերպով դնում եր: Ձիու ցնցումը, մի կողմից, անզգար հարձակումները դեպի պատերազմի դաշտի զանազան դիրքերը, մյուս կողմից, ավելի և ավելի սաստկացնում եյին արյան հոսումը: Կռվելների հրատապ ջերմության մեջ, ամբողջ որը նա այն սաստիկ հափշտակված եր յուր գործողություններով, վոր բնավ չնկատեց, թե ինչ և կատարվում յուր հետ, մինչև խլաց արյունաքամ յեղավ, թուլացավ և ընկավ...

Մինչ յերկաթյա մարդը այսպես տանջվում եր որհասական տագնապի մեջ, այդ միջոցին Սամվելը, յուր ըղձալի բաղձանքներին հասած, դերի ներին պատած, շտապում եր դեպի հոր չիկակարմիր վրանը: Նա շտապում եր պատռելու հոր դազարը, վորովհետև վախենում եր, մի գուցե լեռնականները, իրանց անզուսպ կատաղության մեջ, հարձակվելին հանդուցյա-

լի վրանի վրա, և իրանց վրեժխնդրությունը դործ դնելին նրա դիակի վրա, պատառ-պատառ անելով, և կովի դաշտի յերեսին ցրվելով: Նա դնում եր յուր վերջին պարտքը և հարդանքը մատուցանելու յուր հորը: Թեև նրա բոլոր ցանկությունները արդեն կատարվել եյին, թեև նա արժանի իրավունք ուներ լիապես ուրախ լինելու, բայց, ընդհակառակն, խիստ տխուր եր: Տխուր եր, վորովհետև պիտի հանդիպեր ա՛յն սգավոր դատարկին, վորի մեջ դրված եր յուր ճնոքով սպանված հայրը:

Բայց հոր վոխարեն, ճանապարհին հանդիպեց նրան կիսամեռ Մերուժանը:

Ցերբ Սամվելը յուր ասպախումբով անցնում եր, հանկարծ դիշերային խավարն միջից լսելի յեղավ ձիան խրխնջալու մի խիստ թախծալի ձայն, վոր, կարծես, ողնություն եր կանչում: Սամվելը դիմեց դեպի այն կողմը: Նրա աչքին ընկավ Մերուժանի հայտնի նժույգը, վոր յուր ճերմակությամբ բավական պարզ կերպով նշմարվում եր դիշերային մթության մեջ: Նա դարձավ դեպի յուր խումբը, ասելով.

— Իսկույն մի ջահ վառեցե՛ք:

Պատանի Հուսիկը վառեց ջահը:

Մերուժանը դեռ քավալվում եր յուր արյան մեջ:

Սամվելը տեսավ, և նրան տիրեց մի տեսակ ապշություն, վոր առաջ և դալիս սոսկալի ուրախությունից և սոսկալի բարկությունից: Ցած իջավ ձիուց, և մի քանի րոպե, անշարժ կանդնած, նայում եր մահամերձ հերոսի վրա, և յուր ալեսոսկի անվճռականության մեջ, չդիտեր, թե ի՛նչպես պետք եր վարվել նրա հետ՝— արդյոք կտրե՞լ վերջին չունչը, թե թողնել:

Զիանների հանկարծակի վոռնաձայնը մտքը ինչ հուշի բերեց որոշապես կանչեց:

— Ա՛յտեղ մարդ կա՞,— ձայն տվեց նա, աշխատելով դլուխը վեր բարձրացնել, վորը դարձյալ ընկավ դետնի վրա:

— Կա՛,— պատասխանեց Սամվելը:

— Ի՞նչպես վերջացավ կռիվը:

— Թշնամիները հաղթեցին:

— Հաղթեցի՞ն, բացականչեց նա, և կրկին փորձեց բարձրացնել ծանրացած դլուխը:

— Ա՛յո՛, հաղթեցին,— կրկնեց Սամվելը:

Բոթաբեր լուրը այն սոսկման ուժգին հարվածով ցնցեց նրա մտայլված ուղեղը, վոր նա բոլորովին սթափվեցավ: Մի քանի վայրկյան տիրեց նրան մի տեսակ խորհրդավոր լռություն,— հուսաբեկ սրտի և հոգեկան մաքառման դա՞ն լռությունը: Բաց արեց պղտոր աչքերը, բայց վերինչ տեսնել չկարողացավ:

— Ես Մերուժանն եմ,— վերջապես ասաց նա նվաղած ձայնով:— Ամեն ինչ վերջացած է ինձ համար... Ցանկանում եմ մեռնել, բայց մահը փախչում է ինձանից... Փորձում եմ սպանել ինձ, բայց չեմ կարողա-

նում... Ցեթե դու իմ լա՛վ գինվորներից մեկին ես, յեթե դու ուրում ես քո հրամանատարին, կատարի՛ր այդ վերջին ծառայությունը, մերկացրո՛ւ սուրդ և հանգստացրո՛ւ ինձ... Մա՛հ եմ ցանկանում, և թո՛ղ իմ սիրելի գինվորի ձեռքից առանամ նրան, և վո՛չ իմ թշնամիների...

Նա լուռց, և մի քանի րոպեյից հետո կրկին ընկավ տիեզային զառանցումների մեջ:

Սամվելը մոտեցավ, և ջահի լուսավորության առջև, հետազոտելով Թուլացած մարմինը, նկատեց, վոր արյունը հոսում էր իրան հայտնի վերքից, վոր առացել էր նա «Իշխանաց կղզում», պատանի Արտավազդի նետից: Իսկույն սկսեց կեռպով կապել վերքը և, դառնալով դեպի յուր մարդիկը, հարցրեց.

— Գինի մնացո՞լ է ձեզ մոտ:

— Իմ, ամի՛ն մեկ վոքր ինչ մնացել է,— ասաց պատանի Հուսիկը:

— Մոտ բե՛ր:

Պատանին մոտեցրեց վոքրիկ տիկը, վոր քաշլ էր ընկած նրա ուսից, և վորով կռվի ժամանակ չինուցանում էր յուր իշխանի ծարավը: Սամվելը տիկը առեց նրա ձեռքից, սկսեց գինին վոքր առ վոքր ծորել մահամերձ վիրավորի բերանը: Հետո դարձավ դեպի յուր մարդիկը, հրամայելով.

— Ցած իջնք ձիերից և, ձեր վահաններով գինելով վիրավորի վրա, պահպանեցնք դրան: Վոչ վոք չհամարձակվի մոտենալ, մինչև յես կվերադառնամ:

Պատվերը իսկույն կատարեցին:

Նա կրկին նստեց ձին, և առնելով յուր հետ յուր մարդկիններից մի մասը, շտապեց դեպի հոր չինակարմիր վրանը:

Մերունի Աբրահամը, վոր այդ միջոցին պատվում էր Սամվելի մարդկիների թվում, տեսնելով նրա մեծահոգությունը, վերձված գլուխը խորհրդավոր կերպով շարժեց, և ինքն իրան ասաց.

«Ցես չեմ հասկանում այս տեսակ գործությունները... Ի՞նչ է նշանակում գինեցան թողնել վիրավոր վիշապին»...

ՎՈՂՍԿԱՆ ԱՐՐՈՑԸ

«Ասորւոցն շինէին ի բազում աեղիս, եւ զմարդիկ հնազանդէին օրինացն Մազեղանց. եւ բազում յն քանց սեփհականն շինէին ասորւոցն, իւ՛ զորդիս եւ զազգայինս իւրեանց տային յուսումն Մազեղանցն Ասա որդի մի Վահանայ անուն Սամուէլ ևնար ասաակեաց... դմայր իւր»...

Փաւստոս:

Անցավ աշունը, անցավ և Հայոց դառնաշունչ ձմեռը:

Տարոնի ընդարձակ դաշտավայրը դեռ նոր էր սկսել կանաչազարդվիլ նորաբույս խոտերով, դեռ նոր նորեկ ծիծեռնակը ավետում էր գարնան

ուրախալի վերադարձը: Լուռ փոթորիկը, դաշտերից բզաբեր բուրաստը, և նրանց վոխարեն՝ անուշ սյուքը մեղմ ալիքներով անցնում էր Թավշապատ հովիտների վրայով, տարածելով դեպի ամեն կողմ կյանք և զորություն:

Գարնանամուտն առաջին առավոտն էր:

Վաղորյան ամբողջ այս առավոտ մի առանձին հրապուրիչ տեսք էր առացել: Պատերը և անդյակների ճակատները դրսից ու ներսից պատած էին կանաչ թուխերով ու թարմ տերևներով: Ծառանները, ազատավորները, նաժիշտանեն ու աղախինները, ամենքը տոնական հագուստներով զարդարված, ճեմքները և մաղերը կարմիր ներկած, վաղվազում էին այս կողմ ու այն կողմ, և որվա պատշաճին վայել պատրաստություններ էին տեսնում: Ամբողջ ամբողջը շնչում էր խորին, հոգեղարթ բերկրություն:

Ուրեմն առաջին ճառագայթները հետ՝ վորոտացին պալատական նվագարանները, և շարունակում էին անդադար հնչյուններով ածվիլ: Վաղորյան ամբողջ տոնում էր գարնանամուտը, վոր, միևնույն ժամանակ, էր պարսից տարեմուտը:

Դա էր հայոց սիրելի Նավասարդը, հայոց նոր տարին, վոր յուրաքանչյուր ամի՝ աշխարհահռչակ բազմությամբ՝ տոնում էր Աշտիշատի ծաղկազարդ տաճարներում: Դա հայոց համար բոլորովին խորհ և բոլորովին ուրախ մի տոն էր, վոր առաջին անգամ հաստատում էր Մամիկոնյաններն ամբողջում:

Դա պարսկական տոն էր:

Ինչո՞ր չփոխվեցան, ի՞նչ ներմուծություններ չեղան, սկսյալ այն ուրից, յորր Սամվելը թողեց այդ ամբողջ: Հին, իրանց նախնական ծեսերին ու սովորություններին հավատարիմ մնացած ծառաները ու աղախինները այլևս չկային: Վոմանք կամովին հեռացան, վոմանց հեռացրեց Սամվելի խստասիրտ մայրը: Նոր ծառաներն ու նոր աղախինները կրում էին պարսկական հագուստներ, խոսում էին պարսկերեն: Երանցից շատերը պարսիկներ էին: Հայ քահանան այլևս մուտք չուներ այդ ամբողջում: Նրա փոխարեն յուր կրոնական պաշտամունքը կատարում էր պարսիկ մոգը: Տնային վարժապետները, դաստիարակները, դայակներն անգամ, վորոնք կրթում էին մանուկներին քրիստոնեական վարդով, քրիստոնեական տառըշնորհություններով,— փոխված էին: Երանց պաշտոնը կատարում էին պարսիկ մոգերը, ուսուցանելով Մազդեղանց կրոնի հրահանգները: Կերակուրներն անգամ փոխված էին, ըմպելիքներն անգամ փոխված էին: Փոխված էր և անդյակների կահավորության, տարբ ու կարգի ձևը: Հին, տվանդական սովորությունները փոխարեն՝ տիրապետում էր նորը՝— պարսկականը: Վաղեմի, նահապետական կարգերի փոխարեն, վորոնց գեղեցկությունը հենց նրանց պարզության մեջն էր, տիրապետում էր պարսկական գեղեցկությունը, պարսկական շռայլությունը:

Ձկային նաև ամբողջ մյուս բնակիչները: Մուշեղ Մամիկոնյանի ընտանիքը տեղափոխվել էր Տարոն յերկրի Ճերմանի բերդում: Վարդան

Մամիկոնյանի այրին, տիկին Զարուհին, յուր զավակներվ հետ՝ դանվում էր նույնպես Ցերախանի բերդում: Զկար և նազելի Վռամիղդուխտը՝ — Սամվելի խորթ մայրը: Նա հենց այն ժամանակ թողեց Վողական ամրոցը և դնաց Գարսկաստան, իբրև Սամվելը հեռացավ այդ ամրոցից:

Ամրոցում մնացել էր միայն Սամվելի հարազատ մայրը՝ — տիկին Տաճատուհին, վոր այժմ միանգամայն նրա տերն ու թագուհին էր:

Նա այս առավոտ մեկնակ չորում էր ամրոցի մեծ դահլիճում, ուշադրությամբ զննում էր յուրաքանչյուր առարկան, յուրաքանչյուր մանրամասնությունը, տեսնելու, արդյոք ամեն ինչ յուր տեղո՞ւմն էր, արդյոք ամեն ինչ կա՞ր, թե մի բան պակաս էր: Նրա ամբողջ հաղուստը վայելում էր վոսկու և զոհարների մեջ: Փայլում էր և նրա սիրուն դեմքը: Մերուժանի մեծամիտ քույրը Մերուժանի դեղեցկությունն ուներ, բայց զուրկ էր յեղբոր դեմքի վսեմ արտահայտությունից:

Դահլիճը, տոնի պատշաճին համեմատ, շքեղ կերպով զարդարված էր: Հատակը պատած էր ամենաթանգագին դորդերով ու ոթոցներով: Պատերը ծածկված էին ամենանուրբ դիպակներով և մետաքսյա դուլդուլյա կերպասներով: Լուսամուտներում, հախճապակյա դեղեցիկ թաղարների մեջ, դրված էին նոր բացված ծաղիկներ և զանազան մշականաչ բույսեր: Ջրի, զինու, ուշարակների անոթներն անդամ, վոր չդրված էին սեղանի վրա, պատած էին հրաշալի կանաչազարդությամբ: Ամեն կողմում կանաչ, ամեն կողմում զալարիք, ամեն կողմում ժպտում էին ծաղիկները՝ — նորևկ զարնան բերած պարգևները: Ամբողջ դահլիճը սրսկած էր անուշահոտ վարդաջրով, և բուրում էր ախորժելի հոտավետությամբ:

Նոր տարին քաղցրացնելու համար, պատրաստված էին զանազան տեսակ նուրբ քաղցրավենիներ, վոր համեմած էին արևելյան անուշահոտ համեմներով: Տեղային պտուղներից, ընդարձակ նախուռն խաներով, դրված էին սեղանի վրա յոթն տեսակ չոր մրգեղեններ, վոր խառնել էին մեմյանց հետ:

Թեև այդ տոնը հայոց համար բոլորովին խորթ եր և նորամուտ, բայց Սամվելի մայրը, տոնի թագուհին, ամենքան ընորհք և ճաշակ ուներ, վոր կարողացել եր բավական վայելուչ ձև տալ նրան: Այդ եր պատճառը, վոր շատերը պատրաստվել էին մասնակցել, թեթև վոչ համակրելով, այլ ավելի տեսնելու բաղձանքով: Բայց կային և այնպիսիները, վորոնց թիվը փոքր չեր, վոր պատրաստվել էին մասնակցել ամենայն սիրով և հաճույքյամբ: Հեթանոսական հին սովորույթյունների և հին պաշտամունքների խորին հետքերը դեռ վոչ իսպառ ընկճված էին քրիստոնյա Հայաստանից: Իսկ վոմանք ամոթալից էին մասնակցել, յերկյուղ կրելով տիկնոջ չար վրեժխնդրությունից: Մերուժանի քույրը և՛ Մերուժանի անդթությունն ուներ, բայց զուրկ եր յեղբոր մեծահոդությունից:

Նա դեռ միայնակ ճեմում էր չքեղազարդ դահլեզի մեջ, վոր կամ ու պատրաստ սպասում էր այցելուներին, վոր պիտի ներկայանային յուր նոր

տարին չնորհավորելու։ Նայում եր չրջապատող աստիճանների ճոխության վրա և հիանում եր։ Բայց նրա հիացմունքը ա՛յնքան կարճատև, ա՛յնքան րոպեական եր լինում, որքր դառնում եր յուր սրտին, յուր ներքին ղաղմունքներին։ Վաղուց եր, որ վոչինչ տեղեկություն չուներ ամուսնից։ Տեղեկություն չուներ և վորդու՝ Սամվելի մասին։ Զգիտեր նաև, թե ինչ եր չինում յեղբայրը՝ Մերուժանը։ Շարունակ հինդ ամիս՝ դառնաչունչ ձմեռը այնպես սաստկությամբ կործել եր ամեն հաղորդակցություն, որ նրան դեռ հայտնի չեր, թե ի՞նչ աղետներ, ի՞նչ վորքայրե դրծեր եյին կատարվել Հայոց աշխարհի հյուսիսային կողմերում։ Բայց նա ներքին խոր բնազդմամբ մի բան զգում եր,— և անախորժ բան։

Նրա չրջապատողների մեջ արդեն տարածվել եր մի ինչ-որ չչունչ, մի ինչ-որ քրթմնջոց, որ ամենայն ծածկամտությամբ աշխատում եյին թաղցնել։ Այդ նկատում եր նա, և նրա ալեհասնջ սրտում ծաղում եյին դանազան կասկածալոր խոհումներ։ Մյուս կողմից, յուր հպատակների մեջ նկատում եր մի տեսակ սառնություն, մի տեսակ բռնազատյալ խոնարհություն, որ հակամայից ցույց եյին տալիս նրան։ Ի՞նչ եր նշանակում այդ։

—Նա դժվարանում եր ինքն իրան հաչիվ տալ։

Ցեղրոր, Մերուժանի, պարտության լուրը, և ամուսնի սպանման բոքը յուր հարազատ վորդուց,— դեռ նոր եյին հասել Տարոն։ Բայց, տակավին պատյալում եյին անստուգության մթության մեջ։ Վոմանք դժվարանում եյին հավատալ, վոմանք, յերե հավատում եյին, վախենում եյին մի ուրիշին հայտնել։ Բայց այնուամենայնիվ, այդ համբավները խորին ուրախություն պատճառեցին նրա հպատակներին, քանի դեռ վոչ վոք չեր համարձակվում յուր զղացմունքները արտահայտել։

Նա կատարից ավելի, քան կարելի յեր կատարել։ Այն նորամուտ և խորթ նկրտումները, վոր նրա ամուսինը և յեղբայրը չկարողացան սրով ու հրով մտցնել Հայոց աշխարհում, նա մտցրեց Մամիկոնյանների խաղաղ տան մեջ անարյուն պատերազմով,— ա՛յն տան մեջ, վոր ամենահին ժամանակներից՝ մինչև ներկայացել եր վորպես մի ճշդրիտ տիպար քրիստոնեական բարեպաշտության։ Վո՛րքան ուրախ եր, վո՛րքան դոհ եր յուր հաջողություններով։ Նա արդեն հողը պատրաստած եր համարում, և սերմը ցանած եր համարում, սպասում եր ցանկալի հունձքին։ Եվ վո՛րքան պիտի սիրեր նրան ամուսինը, յերբ յուր տունը վերադառնալու ժամանակ՝ ամեն ինչ պատրաստ կդտներ։

Բայց ի՞նչն եր դրդում այդ վատասեր հինոլը՝ նեռվիլ կրոնական խընդիրների մեջ, վոր ավելի մեծ հանճարների դործ եր։ Իսկապես, վոչինչ։ Եվ յերե նրա ամուսինը և յեղբայրը դանազան քաղաքական նպատակներով եյին առաջ տանում իրանց ապօրինի ձեռնարկությունները, նա, ընդհակառակն, նրանց նկրտումներեն անտեղյակ չուներ։ Նա չուներ նաև կրոնական հատուկ համոզմունքներ։ Բայց իրրև կին, և նորատեր կին, նա ուներ մի բան։ Նա աղնվական եր, այդ բառի բուն նշանակությամբ։ Նրա

համար՝ ինչ վոր վերևից եր դալիս, ինչ վոր վերևումն եր կատարվում,— թոլորը լավ եր: Գարսից արքայական դերդաստանի հետ ինամուքյան կապեր ունենալով, նա շատ անդամ առիթ եր ունեցել պարսից արքունիքում լինելու, և ծանոթ եր Շապուհի ընտանիքի հետ: Արքունիքը հիացրել եր նրան: Ցեվ վորպես Շապուհի կանանց հաղուստն ու զարդերը նրան դյուր եյին դալիս, նույնպես և դյուր եր դալիս նրան Շապուհի պաշտած կրոնը: Աչխատում եր նմանվիլ: Աչխատում եր, վոր յուր ղավակները նույն լեզվով խոսեյին, վորով խոսում եյին արքունիքում, աշխատում եր, վոր նրանք նույն բարձր կրթուքյունն ունենային, վոր վայել եր արքունիքին: Ինչ վոր ազգային եր, ինչ վոր հայկական եր, նրան խիստ սոսկական եր թվում և, մինչև անդամ, ամոթալի: Ինչո՞ւ միշտ կարմրել պարսիկների մոտ, ինչո՞ւ միշտ պակաս մնալ,— այդ մտքերը վրդովեցնում եյին նրան:

Նա մոտեցավ լուսամուտին, նայեց արևելակին: «Ինչո՞ւ այդքան ուշանում են... ի՞նչ և նշանակում այդ»... մտածեց ինքն իրան, և նրա անհամբեր դեմքի վրա յերևացին բարկության նշմարներ: Մինչև յուր բոլոր պատրաստությունները պետք և ապարդյո՞ւն մնային:

Սպասավորները մեկ-մեկ ներս եյին մտնում ու դուրս եյին դնում, դանազան իրեղեններ բերելով ու տանելով: Ներս մտավ և Ներքինապետը, հաճոյամոլ Բագրատը, յուր լերկ ու լուիրշ դեմքով:

Թեև Բագրատը վայելում եր յուր սիկնոջ խորին հավատարմությունը, բայց դարձյալ սիկինը յուր արիժանապատվությունից ստոր համարեց հայտնել նրան, թե կասկած ունի, մի դուցե տոնախմբությունը այն չքեղությամբ չկատարվի, վորքան ցանկալի կլիներ: Բայց խորամանկ Ներքինին ա՛յն աստիճան ուսումնասիրած եր յուր սիկնոջ բնավորությունը, վոր հենց նրա յերեսին նայելով, հասկացավ, թե ինչն և ազմկում նրա փառասեր սիրտը, և կեղծ ժպտիքը յերեսին ասաց.

— Մի քանի իրեղեններ պետք և դուրս տանել, սիկին:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև տեղ չի լինի բոլոր այցելուների համար:

— Այդ ահագին դահլճո՞ւմ:

— Բայց այցելուների բազմությունն էլ ահագին կլինի:

Տիկինը ուրախացավ: Բայց թաղցնելով յուր ուրախությունը, դարձավ դեպի Ներքինապետը, վորը ինչ դայրացած ձևանալով.

— Պետք և կարդի ու կանոնի սովորեն, Բագրատ: Հարկավոր չե, վոր ամեն մի այցելու մնա դահլճում և ավելորդ տեղ բռնե: Նրանք կգան, ընդունված բարեմաղթությունները կանեն, և իմ որհնությունը առնելով, դուրս կգան կից սենյակը, այնտեղ կսպասեն: Ցերբ կվերջանա ընդունելությունը, այնուհետև ինձ հետ միասին կգնան տարուշանը, յերկրպադություն տալու սրբազան կրակին և ներկա դտնվելու հանդիսավոր դոհաբերության արարողությանը:— Հասկացա՞ր: Գնա, տես տաճարապետին,

նա այդ կարդները լավ դիտե, թո՛ղ այնպես կարդադրե բոլոր ծեսերը, որ ամեն ինչ ըստ պատշաճին կատարվի և վայելուչ։

Ներքինապետը գլուխ տվեց, և անվերջ ժպիտը յերեսին հետացավ։

Տիկինը մնաց միայնակ։ Այժմ նա հանդիստ եր, այժմ լիապես հույս ուներ, որ առնախմբությունը փառավոր հաջողություն կդտնե։

Քառորդ ժամ չանցավ, յերբ աննկատաբերից մեկը ներս մտավ, հայտնելով, թե ավազանին և ատենճանալորները խնդրում են ներկայանալ։

Նա անցավ դահլեճի վերին կողմը, նստեց թանդաղին դահավորակի վրա։ Այդ միջոցին պալատական բարձր դրանիկները կարդով շարվեցան նրա բազմոցի շուրջը։ Ամենքը զարդարված եյին ոսկեկան հագուստներով, ամենքը զրահավորված եյին վոսկեզարդ դենքերով։

Ներս մտան ատենճանալորները և ամբողջ ավազանին։ Նրանք խորին հնարտով գլուխ տվին, և լուռ կանգնած մնացին դահլեճի պատերի մոտ։ Տիկինը մի առանձին հաճույքով զարճալ դեմքի այցելուները, այդ խոսքերով.

— Փա՛ռք և գոհությո՛ւն պարծանք Աբամազրին, որ ինձ պարգևեց յերջանիկներից ամենայերջանիկը լինելու վիճակը, և յես բախտ ունեմ, ո՛վ սիրելի ավազներ, ձեզ հետ միասին տոնելու այն մեծահանդես որը, որ տոնում և ամբողջ սիներքը։ Թոչունն ու անասունը, վայրի խոտն ու ծաղիկը, և անասուն հոգի յեղևինը, այսօր ուրախ են, վորովհետև նորին զարունը բերել և նրանց համար նոր տարի և նոր կյանք։ Մարդը նույնպես՝ պետք և յուր խնդակցությունը խառնե բնության ընդհանուր հրճվանքի հետ։ Այնպես ձմեռը յուր մահարեր առնամանիքներով, անցավ մտավ ու մտախուղի թաղալորության։ Ծաղից մեղ նոր որ յուր լուսապայծառ ջերմությամբ։ Իջավ յերկնքից արբազան հուրը, և յուր կենսարծող զորությամբ շունչ պարգևեց սառած սիներքին։ Մեռած դետերը ուժ և սառնում, քնած ծառերը զարթնում են։ Ամենուրեք շնչում և սառուցած հողին, ամենուրեք հարություն և առնում մահացած կյանքը։ Բնության ընդհանուր գործունեության հետ՝ սկսվում են և մարդու աշխատությունները։ Հերկավարը յուր արորը առնում և դաշտը, տյդեզործը սկսում և բրել խոնավ յերկիրը։ Կանաչազարդ արտաների վրա սիրվում են հովվի վոչխարները։ Աշխատանքը սկսում և յես դալ, վորպես յես և գալիս ներշնչված, վոգևորված դետինը։ Վո՛չ միայն անհրաժեշտ և, ո՛վ սիրելի ավազներ, այլ մարդու արբազան պարտքն և, վորպես բոլոր արարածներից ավելի ուշիմազույնին, և վորպես բոլոր արարածներից ավելի առատությամբ վայելողին բնության պարգևները,— վոր նա՛, նախ քան յուր աշխատությունները սկսելը, յուր գոհությունը մատուցանե այդ բոլոր բարիքները իրան պարգևողին։ Այդ խոկ նպատակով մեր արհեստավոր նախնիքը սահմանել եյին զարնանամուտի տոնախմբությունը։ Բայց մենք, մեր նախնյաց ազգնորհ հետևողներս, դադարեցինք կատարել։ Վերանո-

թագնենք արդարն ու ճշմարիտը, վերադառնանք բնականին, ո՛վ սիրելի ա-վագներ: Ահա՛ այնտեղ, անշեղ ատրուշանի մեջ, վառվում է աստվածային հուրը,— ամբողջ տիեզերքին կյանք և ջերմություն պարգևող արարչագործ զորությունը: Գնանք, և հանդիսավոր պահարկությամբ՝ մեր սերն ու դժկամությունը մատուցանենք այն զորությանը, որ անհատանելի և անքննելի աստուծո սրբազնագույն օրինակն է մեր յերկրի վրա, և թո՛ղ սրհնյալ լինի նրա վառքն ու պատիվը:

Տիկնոջ ճառը այն աստվճան խորին տպավորություն գործեց հանդիսականների վրա, որ ամենքը միաձայն կրկնեցին. «Եվ թո՛ղ սրհնյալ լինի նրա վառքն ու պատիվը»:

Այնուհետև առանձին-առանձին մոտենում էին և, ծունր դնելով տիկնոջ առջև, համբուրում էին նրա աջը, և ամենաջերմ բարեմաղթություններով՝ ցանկանում էին նոր տարու հետ և նոր բախտավորություններ:

Տիկնոջ դահավորակի աջ և ձախ կողմերում դրված էին մի-մի ափսեներ, որ բոլորակ մատուցարանների ձև ունեին: Աջակողմյան ափսեն վոսկուց էր շինված, և նրա մեջ դիզված էին վոսկյա դրամներ: Իսկ ձախակողմյան ափսեն արծաթից էր շինված, և նրա մեջ դիզված էին արծաթյա դրամներ: Այդ խորհրդավոր դրամները, իբրև նշան արծաթյա և վոսկյա բախտավորության, հատկապես կտրված էին նոր տարու առնուելով: Պարսից արքունավայել արքան միայն իրավունք ուներ նոր տարու սկզբում բաժանել յուր ավազակներին այս տեսակ դրամներ, և ընդհմին, պարգևել նրանց արծաթյա և վոսկյա բախտավորություններ: Իսկ Մամիկոնյան տիկինը, իբրև ընդհանուր Տարոնի թագուհին, ցանկանալով վոչինչ պակաս չթողնել ընդունված սովորություններից, իրան թույլ էր տվել մի այսպիսի արտառոթություն: Ցերեկ ավազակները մերձենում էին նրա աջը համբուրելու, նա ձեռքը տանում էր դեպի արծաթյա և վոսկյա ափսեները, և լի բռնով վերցնելով յուր մոտ դիզած դրամներից, խառնում էր միմյանց, և տալա ընծայում էր նրանց, վոխադարձաբար ինքըն էլ ցանկանալով նոր տարու հետ և նոր բախտավորություններ:

Սևեհյանի մանկլավիկները, վոսկյա նաչխուն սրվակներով, թափում էին այցելուների ափերի մեջ անուշահոտ վարդաջուր, վորով նրանք ուծում էին իրանց յերեսն ու մաղերը, հետո մոտենում էին անուշեղեններով սեղանին, վայելելու նոր տարվա քաղցրությունները: Այնտեղ դրված էին ամեն տեսակ բարիքներ և ամեն տեսակ զվարճալիքներ, վորոնց մեջ գլխավոր տեղը բռնում էր յոթնատեսակ չոր մրգեղենների կույտը— հայրենի յերկրի բնության բարիքը:

Մի խումբ սպասավորներ, չքնդ կերպով հագնված, վարդապսակ գլխներով, կանգնած էին, և յուրաքանչյուրն ձեռքում ուներ արծաթյա մեծ անոթներ, լի զանազան տեսակ անուշահամ ուշարակներով և դինիներով: Անդադար լցնում էին, և վոսկյա գավաթներով մատուցանում էին հյուրերին:

Դրսում նվագարանները հնչում էին։ Ցերդում էր քաղցրաձայն դուդուկը։

Այցելությունները տևեցին բավական յերկար։ Բաղմություն խումբ-խումբ ներկայանում էր և, վայելելով սիրինոջ շնորհն ու քաղցրությունը, դուրս էին գալիս կից սենյակը, ուր սիրած սպասելին՝ ներկա գտնվելու հանդիսավոր ղոհաբերությանը։ Կից սենյակում էս հյուրերի համար ամեն տեսակ մեծարանք պակաս չեր։ Այստեղ ներանք ավելի ազատ, ավելի հղկվածք կերպով անճաշակություն էին լինում իրանց բավականությունները։ Խոսում էին, ծիծաղում էին, և յուրաքանչյուրը լի ղոհունակությամբ արտահայտում էր յուր ուրախությունը։

Տղամարդերի ընդունելությունը վերջանալուց հետո, սկսվեցավ կանանց ընդունելությունը։ Այդ վերջիններին թիվը այնքան շատ չեր։ Ներկայացան միայն ամբողջում ծառայող կանայքը և մի քանի ազատիճանավորների տիկիններ։

Կրակի արբարանում արդեն սկսվել էր պաշտոնակատարությունը։

Ամբողջ այն կողմում, ուր վաղեմի ժամանակներից կանգնած էր Մամիկոնյանների տոհմային յեկեղեցին, ուր մի շարք խուցերում բնակվում էր Դրան յերեցը յուր պաշտոնյաների հետ, և կերակրվում էին իշխանական սեղանից,— այժմ նույն յեկեղեցու տեղում հինված էր մի պարսկական ատրուշան։ Սամվելի մայրը քանդել տվեց յեկեղեցին և նրա տեղում հիմնեց սա ուրուշանը։ Քրիստոնեական կրոնավորների խուցերում այժմ բնակվում էր Դրան մոդլնաը յուր մոդլերով։

Բարձր, այնպարզ տաճարի մեջտեղում, մարմարիոնյա քառակուսի սեղանի վրա, վառվում էր վորմզդական սուրբ հուրը և յուր անշեջ բոցերը տարածում էր մինչև տաճարի ընդարձակ կամարները։ Մոդլերը, դղեստավորված ճերմակ հագուստներով, և ոծված անուշահոտ յուղերով, հնչեցնում էին ձեռքներին բռնած փոքրիկ պանդակները, և յերդելով թափոր էին կատարում կրակի շուրջը։ Բաղմությունը, ծունր դրած տաճարի կամարների ներքո, լսում էր, և յերկյուղածությամբ յերկրպագություն էր տալիս։

Տաճարի մոտ պահած էին հարյուր հատ առագ ու անբիծ խոյեր, ոսկեսատկ, ճյունափայլ դեղմով և վոսկեզոծ յեղջյուրներով, վոր պիտի հաղնչին։

Այն որ բոլոր հանդիսականները պնաք և ուսնէին սուրբ տաճարի սեղանից, ճաշակելով ղոհված միս։

Ցերբ սկսվեցավ հաղման արարողությունը, հայտնվեցավ Մամիկոնյան տիկինը, շրջապատված յուր դրանիկներով վայելչակազմ բաղմությամբ։ Հանդիսավոր կերպով մերձեցավ սուրբ տաճարի սյամին, և խորին ջերմեռանդությամբ ներս մտնելով, նախ յերկրպագություն տվեց կրակին, և ապա յերեք անգամ պտուտվելեցավ սեղանի շուրջը։

Այդ միջոցին բազմության մեջ անցավ մի չշուկ, մի հանկարծակի բ–
բառանցում, որը վերջը աղմկվեցավ ուրախաձայն բացականչություններով։
Բոլորի զարմացած աչքերը դարձան դեպի այն կողմը, ուր բացվում էին
ամբոցի դռնավոր դռները։

Անհամբեր քայլերով ընթանում էր մի բարձրահասակ ներխուժարտ,
իսկ նրա յետևից՝ մի սուվար խումբ ղինված մարդիկներ։

«Սամվե՛լ»... անունը հնչվեցավ հազարավոր բերաններում, և բազ–
մությունը մի կողմ քաշվելով, ճանապարհ տվեց։

Ներխուժարտը մոտեցավ տաճարին։

«Սամվե՛լ»... կրկնեց նաև մայրը, և տաճարից դուրս վազելով, ղբր–
կեց վրդովուն։

Հանդիպումը խիստ սրտաշարժ էր և, մեկնումն ժամանակ, խիստ յե–
ղերական։

— Ա՛խ, վո՛րքան ուրախ եմ ես, վո՛րքան ներքնապես եմ ես, սիրելի
Սամվել,— ասում էր կարոտալ մայրը, դաց չկողնելով վրդովուն յուր
գրկից,— վոր դու ժամանում ես քո հայրենական ամբոցը մի այնպիսի
բախտավոր րոպեյում, յերբ քո մայրը կատարում է զարհուրամարտ մե–
ծահանդես առնախմբությունը։ Քո ներկայությունը, սիրելի Սամվել, մի
նոր վիշտ, մի նոր չուք կուտա այդ առնախմբությանը։

Անսպասելի տեսարանը ա՛յն աստիճան հուզեց, ա՛յն աստիճան սաս–
տիկ խռովության մեջ դրեց անբախտ ներխուժարտին, վոր նա բոլորովին
չկորովեցավ, և մի բառ անդամ չկարաց պատասխանելու մորը։

Մայրը բռնեց նրա ձեռքից, ներս տարավ տաճարը։

Սամվելը թախծալի աչքերով նայեց կրակի վրա, նայեց և մոգերի
վրա։ Փոխոխությունը չափազանց անմխիթարական էր։ Մտաբերեց, վոր
այժմյան առուշանը այն չկիեղեցին էր, վորտեղ աղոթել էին յուր նախ–
նիքը, և վորի սուրբ ավազանից ինքը ծնունդ էր առել։

— Մա՛յր,— ասաց նա խռովյալ ձայնով,— ներս լինձ բոլորովին դըժ–
բախտ եմ համարում, վոր վերադարձանալով իմ հայրենական ամբոցը, ա–
նին կարդ, առին սրբություն խանգարված եմ դտնում։ Ցեղն ցանկանում
ես, վոր ես քո վրդովին լինեմ, հանդցրո՛ւ այդ կրակը։

Մոր աչքերը վառվեցան բարկության բոցով։

— Ցեղս աստվածատուրն լինել կարող չեմ, Սամվել,— պատասխանեց
նա, դայրացած կերպով հրաժարվելով։ Ցեղն դու իմ վրդովին ես, սիրտք և
երկրպագություն տաս այն սրբությանը, վոր պաշտում է քո մայրը։

— Ուրեմն, ներս կոպտանեմ քո աստուծուն, մա՛յր։

— Ջնա՛ համարձակվիր, Սամվել։

Մոդերն ու մոգպետը յերկյուղից մի կողմ քաշվեցան։ Սամվելի
մարդիկը չկոչապատեցին նրանց։ Բռոմությունը ապշած կերպով նայում
էր, թե ինչով կվերջանա մոր և վրդուս կռիվը։ Տիկնոջ դրանիկներից մի
քանիսը իրանց ձեռքը տարան դեպի սրերը, և դայրացած դեմքով սպասում

Էլին նրա հրամանին։ Սամվելի մարդիկը նկատեցին այդ, իրանք նույնպես ձեռքները տարան դնալի իրանց սրերը։

Անդուռ կատաղությունը տիրոց դժբախտ վորդուն։ Նրա սպառնական դեմքը այդ րոպեյում ահռելի էր։ Նորին վրդովմունքով դարձավ դեպի մայրը, ասելով.

— Կրկնում եմ, մայր, հանդցրո՛ւ այդ կրակը...

— Անկարելի է, Սա՛մվել...

— Կրկնում եմ, հանդցրո՛ւ այդ պղծությունը, թեթև վոչ...

— Ցեթե վոչ, ի՞նչ կանես...

— Ես սրյունով կհանդցնեմ...

— Անիրա՛վ...

— Թո՛ղ մարդիկ ինձ անիրավ կոչեն, թո՛ղ մարդիկ ինձ յեղեռնապրծ կոչեն, ահա՛ այն սուրը, վոր սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը...

Վերջին խոսքերի հետ՝ նա ձեռքը տարավ դնալի մոր դլուխը, բռնեց յերկար դիսակներից, քաշ տվեց կրակի սեղանի մոտ։ Սուրը շողաց, տաք արյունը թափվեցավ սեղանի վրա...

Բակմության միջից լսելի յեղան ուրախաձայն աղաղակներ.

— Աբժանի՛ յեր...



ՅԱՆԿ

Առաջաբան . . . . . Գրիգ. Ա. ՏԵՐՏԵՐՑԱՆ

Հատաջաբան . . . . . ՐԱՖՖԻ

Ա. ԳԻՐՔ

Ներկու սուբհանգիստներ 9

Տարոնի առասպելը 13

Պուժկան 15

Մի ազատ միտք Տպռում և նրա մեջ 20

Մայրը և վարդին 28

Ներկու կեղտոր վարդիներ 36

Գաղթական 43

Վարսորդուհյուն 51

Աշխատող վանքը 57

Ներկը կերկաստարդ ուժեր 70

Խորհ մայրը 68

Անհաջող դավադրուհյուն 80

Հանդամանքները թարգմում են 90

Նոր անկնկրհյուններ 99

Լևոնայինը իշխանուհին 107

Ինքնահրջները 114

Վերջ խորհուրդը 120

Գառանի Արտավազդը 127

ՓԱԿԱԳՏԻ ՄԵՋ

Բնուհյուն, նախաբարուհյուն և քաղաքակր 131

Գեղուհյուն և կնկնկնցի, հոգիուր և տարմնավոր իշխանուհյուն 146

Ներկեցյականների գանազան տարբերը 157

Ր. ԳԻՐՔ

Գամոս 175
Անուշ բնդղ 187

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԹԱԹԱՆՎՈՒՄ ԵՆ

Ընտանիք 211
Վիքտոր 213
Արտասուքի աղբյուրը 220
Հոժարատուհի 237
Մեռած փեսի կենդանի առավոտը 245
Ուրբաթ օրը յուր սան հմքի գլխա 251
Ծոյլը 266
Շանուհը Ջարհամանի ավերակների մոտ 279
Արտաշեսը 288
Մուշեղ Վահունեաձին խոստովանի 293
Վերկուսց էրբյաց փոքրագործը 310
Հայր Մարդպետը 327

Դ. ԳԻՐՔ

Ներսեսյան դպրոցի առավոտը 363
Մի տարբինակ վաղչակեզ 376
Զվիկա 391
Առաջին վարդապետները 402
Մայրը 428
Վոզական տեղացը 456

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220030126